

Գեորգ Ա.Նեմեան

ՏՄՐԱՆՏՐԱՆԻ
ՏՄՐԱՆՏՐԱՆԻ

Ա.

— Հոս ի՞նչ գործ ունիս... Տէր սղորմիա: Դո՞ւն ես ժառ, թէ աչքերս զիս կը խարեն:

— Պէտք էր հեռաձայնէի, դիտեմ, բայց այսպէս պատահեցաւ... ես եմ. ուրիշ ո՞վ պիտի ըլլայ:

Եւ առանց հրաւերի սպասելու նստեցաւ դրասեղանին կից զետեղուած աթոռին վրայ: Դիտեց շուրջ բոլորը յետոյ, ժպտեցաւ, եւ մոռցաւ ինքզինք պահ մը: Նոյն տեղն էր, նոյն դրասեղանին մէջ, եւ օրը՝ աշխատանքի սովորական օրերէն մէկն էր կարծես: Ամէն օրուան պէս Մարդուն հետ իր առօրեայ նիստը կ'ունենար՝ նախքան աշխատանքի սկսիլը:

— Դեռ երէկ հոս էի կարծես, — աւելի մենախօսեց ժառ Առաքելեան, փորձելով ներկայ իրականութեան վերադառնալ: Գիտէր, թէ պատրանք մըն էր ունեցածը, թերեւս որովհետեւ դրասեղանակին մէջ ոչինչ փոխուած էր, ու կը մնար ճիշդ այնպէս ինչպէս ձգած էր զայն տարիներ առաջ: Նոյն դրասեղանը, նոյն բաղկաթոռը, պահարանը, հեռաձայնը, ու նոյնիսկ պատուհանին կանաչ վարադոյրը:

— Քանի՞ տարի եղաւ երթալուդ... բայց աւելի կարեւորը՝ ե՞րբ վերադարձար, եւ ինչո՞ւ հոս ես: Պտո՞յտի...:

— Ո՛չ, դժբախտաբար ոչ: Մնայուն կերպով վերադարձած ենք:

— Վերջնակա՞ն, — զարմացաւ Արամ Սարգիսեան: — Բայց ինչո՞ւ դացիր այն ատեն:

— Պէտք էր երթայի:

— Այսի՞նքն:

— Ձէի կրնար չերթալ, — բնականօրէն խօսեցաւ ժառ Առաքելեան:

— Ձեմ՝ հասկնար... խօ՞սք եղաւ ըսածդ: Բայց, նոյն խենթն ես, եւ զարմանալու իրաւունք չունիմ:

— Ուրիշ ո՞ւր կրնայի երթալ՝ եթէ ոչ Հայաստան:

— Ի՞նչ տրամաբանութիւն է ասիկա, — իսկապէս չկրցաւ իր

նախկին պաշտօնեակին ըսածը ըմբռնել երէց հայը: — Ասոր համար վերագարձար:

— Տրամարանութիւնը դորձ չունէր ասոր մէջ: Ստիպուած էի՝ նորս կամօքը պէտք էր կատարէի:

— Հօ՞րդ: — Գործատէրը ակնոցը շտկեց քիթին վրայ եւ չհշտակի նայեցաւ դիմացիներն: Մօ՛, խենթ ըլլալդ դիտէի, բայց... ողորմած հոգի հայրդ ի՞նչ մտաւ ասոր մէջ:

— Իրաւունք ունիք, ես ալ չեմ հասկնար. բայց իրականութիւնը այս է: Կեանքի մէջ բաներ կան որ կարելի չէ հասկնալ, եւ թերեւս ալ պէտք չէ հասկնալ: Պայման է: Ո՛վ կրցած է կեանքի բոլոր դաղտնիքներուն թափանցել:

— Լաւ է, եւ նորութիւն է: Քանի մը տարուան մէջ փիլիսոփայ դարձեր ես: Լա՛ւ, այս ամբողջը լաւ, ըսածդ ընդունինք: Ինչո՞ւ վերագարձար այդ պարագային:

Ժառ ժամացոյցին նայեցաւ եւ անհանդիստ զգաց: Ինկած էր նոյն ծուղակին մէջ: Նոյն հարցումը դարձեալ: Հարցում մը, որ զինք ջղազար պիտի դարձնէր վերջաւորութեան, եւ զոր Մարդէն չէր ակնկալեր յամենայն դէպս:

— Ժամացոյցին ինչո՞ւ կը նայիս:

— Ձեր ժամանակը չառնեմ...:

— Ամէն օր Հայաստանէն պիտի չվերադառնաս. մասնաւոր դորձ ալ չունիմ արդէն: Կրնանք խօսիլ. հետաքրքրական է:

Երիտասարդը ակամ ժպտեցաւ եւ տեղաւորուեցաւ բազկաթոռին մէջ: Երկար չունչ մը քաշեց յետոյ եւ խոր հետաքրքրութեամբ դիտեց դիմացիներ, որ իր կարգին զինք կը քննէր: Նոյն Մարդն էր, նոյն ակնոցը, աչքերը, ճաղատը եւ անհանդիստ ոտքերը, զորս անընդհատ կը շարժէր գրասեղանին տակ: Հինդ տարուան ընթացքին երիտասարդացած էր կարծես, փոխանակ ծերանալու, մինչդեռ ինք կնճիռներ հերկած էր ճակատին վրայ եւ աչքերուն շուրջը:

— Ամէն մարդ նոյն հարցումը կը հարցնէ, — խօսեցաւ ի վերջոյ. — Ինչո՞ւ, չեմ հասկնար: Մարդ ազատ չէ՞: Ինչպէս դացի, այդպէս ալ եկայ:

— Հա՛, անկասկած, բայց կը յիշե՞ս. երթալդ առաջ շատ փորձեցի քեզ համոզել որ հրաժարիս այդ տղայական որոշումէդ:

— Տղայակա՞ն: Առաջ երթալուս դէմ էիք, իսկ հիմա՝ վերադառնալուս: Ծիւղդ աս է որ զիս կը զարմացնէ. ամէն մարդ նոյն վերաբերումը ունի... Իսկապէս չեմ հասկնար: Ի՞նչ է ասոր դաղտնիքը:

նախկին պաշտօնեային ըսածը ըմբռնել երէց հայը: — Ատոր համար վերադարձար:

— Տրամաբանութիւնը դործ չունէր ատոր մէջ: Ստիպուած էի հօրս կամքը պէտք էր կատարէի:

— Հօ՞րդ: — Գործատէրը ակնոցը շտկեց քիթին վրայ եւ շեշտակի նայեցաւ դիմացինին: Ծօ՛, խնթ ըլլալդ գիտէի, բայց... ողորմած հոգի հայրդ ի՞նչ մտաւ ասոր մէջ:

— Իրաւունք ունիք, ես ալ չեմ հասկնար. բայց իրականութիւնը այս է: Կեանքի մէջ բաներ կան որ կարելի չէ հասկնալ, եւ թերեւս ալ պէտք չէ հասկնալ: Պայման է: Ո՛վ կրցած է կեանքի բոլոր դադանիքներուն թափանցել:

— Լաւ է, եւ նորութիւն է: Քանի մը տարուան մէջ փիլիսոփայ դարձեր ես: Լա՛ւ, այս ամբողջը լաւ, ըսածդ ընդունինք: Ինչո՞ւ վերադարձար այդ պարագային:

Ժազ ժամացոյցին նայեցաւ եւ անհանդիստ զգաց: Ինկած էր նոյն ծուղակին մէջ: Նոյն հարցումը դարձեալ: Հարցում մը, որ զինք ջղազար պիտի դարձնէր վերջաւորութեան, եւ զոր Մարդէն չէր ակնկալեր յամենայն դէպս:

— Ժամացոյցին ինչո՞ւ կը նայիս:

— Ձեր ժամանակը չառնեմ...:

— Ամէն օր Հայաստանէն պիտի չլիբրադանաս. մասնաւոր դործ ալ չունիմ արդէն: Կրնանք խօսիլ. հետաքրքրական է:

Երիտասարդը ակամ ժպտեցաւ եւ տեղաւորուեցաւ բազկաթոսին մէջ: Երկար շունչ մը քաշեց յետոյ եւ խոր հետաքրքրութեամբ դիտեց դիմացինը, որ իր կարգին զինք կը քննէր: Նոյն Մարդն էր, նոյն ակնոցը, աչքերը, ճաղատը եւ անհանդիստ ոտքերը, զորս անընդհատ կը շարժէր դրսեղանին տակ: Հինգ տարուան ընթացքին երիտասարդացած էր կարծես, փոխանակ ծերանալու, մինչդեռ ինք կնճիռներ հերկած էր ճակատին վրայ եւ աչքերուն շուրջը:

— Ամէն մարդ նոյն հարցումը կը հարցնէ, — խօսեցաւ ի վերջոյ. — Ինչո՞ւ, չեմ հասկնար: Մարդ ազատ չէ՞: Ինչպէս գացի, այդպէս ալ եկայ:

— Հա՛, անկասկած, բայց կը յիշե՞ս. երթալէդ առաջ շատ փորձեցի քեզ համոզել որ հրաժարիս այդ տղայական որոշումէդ:

— Տղայակա՞ն: Առաջ երթալու դէմ էիք, իսկ հիմա՝ վերադառնալու: Զիչդ աս է որ զիս կը զարմացնէ. ամէն մարդ նոյն վերաբերումը ունի... իսկապէս չեմ հասկնար: Ի՞նչ է ասոր գաղտնիքը:

— Ուրիշները՝ չեմ դիտեր: Իմս, կը կարծեմ, շատ բնական հետաքրքրութիւն է: — Պահ մը մտածեց Արամ Սարգիսեան, փորձելով միտքը յստկացանել, եւ ապա շարունակեց. — որովհետեւ տրամաբանական չէ, հասուն մարդու դործ չէ երկու օրը անգամ մը միտք փոխելը:

— Ի՞նչ հասունութեան մասին է խօսքը, — անվրդով ակնարկեց Առաքելեան. — եթէ հասունութիւնը լճացում է կամ կեանքէն վախճալու... ինչպէ՞ս բացատրեմ... եթէ կեանքէն վախճալու հարց է, ես այդ հասունութեան չեմ հասած տակաւին: Եւ շատ ալ յոյս ու նպատակ չունիմ հասնելու:

— Երիտասարդ ես, անշուշտ, բայց կեանքը՝ այսպէս անորոշութեան մէջ ապրելու համար շատ կարճ է: Պէտք է որոշես, եւ որոշումիդ վրայ հաստատ մնաս, ինչ որ ալ ըլլայ հարցը: Եթէ քսան տարեկան ըլլայիր, կը հասկնայի, բայց քու տարիքիդ... երեսուն հինգը անցար կարծեմ:

— Հարցը՝ որոշելէն աւելի, կեանքի մէջ փնտռածդ գտնալն է: Նախ փնտռածդ պէտք է գտնես. յետոյ որոշելը դիւրին է:

— Փնտռածդ ի՞նչ է:

— Ձեմ դիտեր:

— Բնաւ չես փոխուած, — կուշտ ու կուռ խնդաց Արամ Սարգիսեան. — փնտռածդ չես դիտեր, բայց դիտես թէ բան մը կը փնտռես: Այո՛, իրաւունք ունիս թերեւս: Երանի քեզի...:

— Ինչպէ՞ս:

— Երանի քեզի: Հա՛, մի զարմանար, ես եմ ըսողը: Ես, դեժ-բախտաբար, չեմ դիտեր նոյնիսկ թէ բան մը կը փնտռե՞մ կամ ոչ:

Ժազ հետաքրքրութեամբ զննեց խօսակիցը բայց չկրցաւ ճշդ դել, թէ զինք կը հեզնէ՞ր արդեօք Մարդը կամ լուրջ կերպով խոստովանութիւն մը կը թոյլատրէր ինքնիրեն: Եւ այդ անորոշութեան մէջ ալ, եւ անզգալարար, ըսաւ:

— Դուք ի՞նչ պիտի փնտռէք այս տարիքին... սխալ մի հասկընաք... ամէն ինչ ունիք եւ ըրած էք: Ասկէ ետք ի՞նչ կընաք ուզել կամ ընել:

— Այդպէս մի ըսեր. իւրաքանչիւր անձ իրեն յատուկ աշխարհ մը ունի. ցանկութիւններ, շլատարուած իրձեր, յոյսեր, նոյնիսկ երախայական երազներ: Բայց իմ պարագայիս... թերեւս կեանքի արդարութիւնն է կամ վճիռը, հատուցման օրէնքը: Ամէն մարդ կը կարծէ որ յաջողած մարդ մըն եմ ես, մինչդեռ ամէն կերպով ձախողած եմ: Դրամը, հարստութիւնը ի՞նչ կ'արժեն, ի՞նչ կը ներկա-

յացնեն, երբ ակնկալածիդ ճիշդ հակառակը կը պատահի քեզի: Յանկարծ օր մը կ'անդրադառնաս որ շինածդ ամբողջ ձեռքէ ելլեր է եւ արդէն ուշ է կարենալ բան մը փրկելու համար: Ինչո՞ւ այս մասին կը խօսինք սակայն... Ինչպէ՛ս հոս հասանք. ինչեւիցէ, քու մասիդ կը խօսէինք:

— Խնդրեմ, հետաքրքրական է, — չար ժպիտ մը յամեցաւ երիտասարդին դէմքին վրայ. — կ'ուզեմ լսել:

— Կը ժպտիս, հա՞, — ներողամտաբար դիտել տուաւ Արամ Սարգիսեան. — հոգ չէ, խնդա՛... խնդա՛, վնաս չունի. թերեւս պէտք է: — Եւ ինք եւս ժպտեցաւ:

— Յանցաւորը ես չեմ. ինձի համար նորութիւն էր: Եւ կամ տարիները իրենց դերը խաղացած են:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Առաջին անգամն է որ ձեզմէ այս տեսակի խօսքեր կը լսեմ. անցեալին միշտ ինքնավստահ էիք, եւ՝ յուսահատութիւնը ձեզի յատուկ չէր:

— Յուսահատութիւ՞ն, — զարմացած նախկին պաշտօնեային նայեցաւ Սարգիսեան. — չեմ կարծեր: Եթէ կ'ուզես՝ հիասթափութիւն: Կեանքէն հիասթափուած եմ թերեւս, այո՛. եւ այս տարիքին բոլորովին անտանելի է նման զգացում մը, դիտե՛ս:

Մարդուն բան մը պատահեր է, մտմտաց ժաղ, եւ փորձեց պատշաճ խօսք մը ըսել, մխիթարել թերեւս կամ կասկածները փարատել: Սակայն ինչպէ՞ս: Պատահածին մասին ոչինչ գիտէր, եթէ բան մը պատահած էր անշուշտ: Բայց եւ այնպէս անզգալարար ուղղեց անխուսափելի հարցումը:

— Բայց ինչո՞ւ:

— Երկար պատմութիւն է: Կամ աւելի ճիշդը՝ չեմ գիտեր. ճիշդ քեզի պէս՝ ես ալ չեմ գիտեր: Յանկարծ, մէկ օրէն միւսը, կեանքի մէջ ամէն ինչ պարապ կը թուի: Ինչո՞ւ: Պատասխան չունիմ եւ չեմ կարծեր որ ունենամ: Կեանքի գաղտնիքներէն մէկն ալ այս է կ'երեւի:

Ժապ խօսակիցին դէմքին վրայ հեզնական արտայայտութիւն մը փնտռեց, բայց դժուարահունիքամբ հաստատեց, թէ սխալած էր: Մարդը գինք չէր հեզներ: Յետոյ ակամայ ժպտեցաւ, թերեւս համամտութիւնը փոխանցելու համար պարզօրէն:

— Ինչեւիցէ, — վճռականօրէն բուն նիւթին վերադարձաւ Արամ Սարգիսեան. — քու մասիդ կը խօսէինք: Ուրեմն վերջնական է որոշումը:

— Որոշելու հարց չէ մնացած: Հոս ենք արդէն, եւ եթէ ուղենք իսկ, չենք կրնար վերադառնալ: Մեր ազատ կամքով դրախտէն կամ դժոխքէն դուրս եկած ենք:

— Ուրեմն այդպէս՝ դրախտ կամ դժոխք: Միջին եզր չկայ... բայց չի կրնար ըլլալ, անկարելի է: Աշխարհի վրայ ոչ մէկ տեղ, ոչ մէկ երկիր, չի կրնար երկու ծայրայեղութիւնները ըլլալ միաժամանակ:

— Ինչո՞ւ, — անզգալարար, նոյնիսկ առանց ուղեկու խօսեցաւ Առաքելեան. — կարելի է, անշուշտ որ կարելի է: Գրախտն ալ, դժոխքն ալ մենք կը ստեղծենք ի վերջոյ: Մարդէն կախում ունի:

— Քեզի համար ի՞նչ էր. դրա՞խտ, թէ՞ դժոխք:

— Իմ պարագայիս հարցը ատիկա չէր. իրականութեան մէջ քախտաւորներէն կը համարուէի, այն իմաստով որ լաւ պաշտօն մը տուին ինձի, եւ ընդհանուր առմամբ դժգոհելու պատճառ չունէի ուրեմն: Սակայն... սակայն եւ այնպէս դժգոհ էի. ոչ թէ դորձէս կամ երկրէն: Իմ տեղս չէր... կամ ըսենք՝ փնտռածս չգտայ հոն:

— Բայց փնտռածդ, Յակո՛բ, — գինք իր խակական անունով կոչելու նախընտրութիւն մը ունեցած էր միշտ Սարգիսեան, — երբ փնտռածդ դուն իսկ չես գիտեր, Յակոբ, ինչպէ՞ս կրնաս այդպիսի ճակատագրական քայլ մը առնել:

— Կարեւորը այն էր որ փնտռածս չկար հոն: Հոն չէր, վստահ էի, եւ Հայաստանի մէջ պիտի չկարենայի գտնել զայն երբեւիցէ: Այնպէս որ... ինչ ըլլալը գիտնալս շատ ալ կարեւոր չէր:

— Հետաքրքրական է: Կարծեմ կը հասկնամ քեզ: Բայց օր մը օրանց պիտի կարենա՞ս գիտնալ նայինք: Ըսել կ'ուզես, թէ օր մը կրնա՞ս գտնել փնտռածդ՝ առանց նախապէս գիտնալու թէ ինչ է:

— Վստահ եմ:

— Ինչպէ՞ս կրնաս վստահ ըլլալ:

Երկար պահ մը լռեցին: Երիտասարդը կը մտածէր, կամ չէր իսկ մտածեր թերեւս, այլ պարզօրէն կը խոկար՝ նկատելով որ իրեն համար այդ տեսակ հարց դոյութիւն չունէր: Վստահ էր: Թէ ինչպէ՞ս: Հարցումին պատասխանելու հարկ չէր զգար իսկ: Թող ինք պատասխանէր: Գործատէրը ինք եւս, յամենայն դէպս, պատասխանի մը չէր սպասեր եւ արդէն իսկ կը խոկար՝ իր կարգին: Այս տարիքին ինք գիտէ՞ր, թէ կեանքէն ինչ կ'ուզէր — կամ ուզած էր անցեալին: Ինչո՞ւ համար առեւտրական եղած էր, դրամ դիզած, հարստացած, իրեն յատուկ սկզբունքներ ունեցած եւ յամառօրէն կառչած մնացած էր իր հայութեան: Հայ ըլլալով կամ մնալով ի՞նչ իրազորածած էր,

ի՛նչ փաստած էր: Եւ ամենէն կարեւորը՝ օգտակար եղա՞ծ էր Հա-
յութեան: Կեանքի մէջ յաջողած մարդ մը կը նկատուէր — եւ փաս-
տօրէն յաջողած էր — եւ Լիրանանի մէջ դէժ յարդանք կը վայելէր՝
որպէս երկրի ամենէն փայլուն վաճառականներէն մէկը: Նիւթական
անսպառ միջոցներ եւ հնարաւորութիւններ ունէր, ու պարզօրէն
հարուստ էր: Հարուստ: Բայց այսօր առանձին եւ պարտուած կը
զլար: Տիպար, օրինակելի ընտանիք մը կազմած ու հասցուցած էր,
եւ դաւակնեցուն ու հարազատներուն համար ընդհանրապէս՝ նա-
խանձելի նիւթական ապահովութիւն ստեղծած էր: Նոյնիսկ ազգա-
կաններուն օգտակար եղած էր ու ոչինչ խնայած էր, երբ դիմած էին
իրեն: Հանդիստ էր ու հանդիստ կեանք մը կ'ապրէր: Ամէն ինչ ու-
նէր, նոյնիսկ առողջութիւն, եւ ինքզինք բախտաւոր կը համարէր:
Սակայն եւ այնպէս կեանքին մէջ պարապ մը կար. թերեզս միշտ
եղած էր այդ պարապը — վստահ չէր — եւ ինք չէր անդրադարձած:
Հիմա՞: Ուրիշ՞ յայտնուած էր այս ժաղ կոչուած փորձանքը, եւ իր
առաւօտը փճացուցած: Աշխատանքին մէջ թաղուած՝ ինքզինք մոռ-
ցած էր ու ձեռով մը կը վայելէր այս ժամը: Աշխատանքը միշտ փըր-
կած էր զինք, լեցուցած էր առօրեան եւ հեռացուցած իրմէ այս
կարգի մտորումները: Բայց իրականութիւնը այն էր, թէ ոչինչ իրա-
դորձած էր կեանքի մէջ, ոչինչ ըրած էր եւ — ամենէն սարսափելին
— ունեցած էր դիտակցութիւնը այս ամբողջին: Բայց տարիներ եւ
տարիներ շարունակած էր նոյնը ընել, այսինքն փախուստ տալ իրա-
կանութենէն՝ պահուրտելով ոսկիի ստեղծած շրջուցիչ պատրանք-
ներուն ետին:

— Վստահ եմ, — անդգալարար կրկնեց երիտասարդը, խան-
դարելով լուսութիւնը, որ հեռացուցած էր զիրենք իրարմէ պահ մը:

— Երանելի երիտասարդութիւն, — հառաչեց տարիներու բերան
տակ ընկճուած առեւտրականը: — Ինչ որ է: Լա՛ւ, ի՞նչ պիտի ընես:

— Ի՞նչը:

— Ի՛նչ կը ծրարես ընել. կամ ըսենք յստակ ծրարիք մը ու-
նի՞ս:

— Ոչ մէկ ծրարիք:

— Բայց... պէտք է որոշես, չէ՞. պէտք է բան մը ընել: Աշ-
խատանք, տուն-տեղ:

— Այդ բոլորը ոչինչ: Բնական է պէտք է աշխատիմ: Ոչ մէկ
կասկած այդ մասին:

— Սքանչելի, — դժուարակամութիւնը չկրցաւ զսպել Արամ Սար-
գիսեան. — վստահ եմ դիտես, թէ լաւագոյն պաշտօնը միշտ պատ-

րաստ է քեզի համար հաստատութենէն ներս:

— Վստահ եմ: Բայց ատոր համար չեկայ այսօր հոս:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ոչինչ: Այդ մասին մտածելու համար կանուխ է տակաւին:

— Ուրիշ բան մը կա՞յ:

— Ոչ, ոչ: Ուղեցի այցելել եւ տեսնել ձեզ, այդքան: Տարօրի-
նակ հոգեվիճակ է, դիտէք. մարդ հետաքրքիր կ'ըլլայ եւ կ'ուզէ տա-
րիներ առաջ լքածը տեսնել: Կարօտի նման բան մը:

— Կը հասկնամ, — ըսաւ երէցը, — բայց աշխատանքի սկսելու
համար ինչո՞ւ կանուխ է կ'ըսես:

— Ես ալ չեմ դիտեր, թէ ինչ պիտի ընեմ: Հոս պիտի մնա՞մ,
թէ...:

— Հպատակութիւնդ ի՞նչ է:

— Տակաւին սովեա քաղաքացի եմ: Բնական է կրնամ հոս
մնալ, որովհետեւ լիրանանեան հպատակութիւնս կրնամ վերահաս-
տատել:

— Ուրե՞մն:

— Ձեմ դիտեր: Տարօրինակ հոգեվիճակ մըն է. չեմ կրնար
որոշել, թէ ինչ պիտի ընեմ:

Արամ Սարգիսեան չգործացաւ, սակայն մտահոգ եւ շուարած
դիտեց դիմացինը երկար պահ մը, փորձելով թափանցել անոր ներ-
աշխարհէն ներս: Ի՛նչ պատահած էր այս սերունդին: Գլուխը առ-
նողը կ'երթար: Դժգոհ էին, միշտ դժգոհ էին, անորոշութեան մէջ:
Ու մեկնողները սակայն ժամանակ մը ետք կը վերադառնային, եւ
դարձեալ դժգոհ, կը մեկնէին այլ ուղղութեամբ: Օր մը Ամերիկա,
յաջորդ տարի Եւրոպա, Աւստրալիա, երբեմն Հայաստան: Խելագա-
րած էին բոլորն ալ, կամ թերեւս սարսափած: Բայց ինչէ՞ն: Լիրա-
նանի նման ազատ, բարդաւաճ եւ հանդիստ երկիր ո՞ւր պիտի կարե-
նային դանել: Ի՛նչ կը պատահէր այս ժողովուրդին:

— Կը ներես, — խօսեցաւ յետոյ, — այս սերունդը, ձեր սե-
րունդը չեմ կրնար հասկնալ այլեւս: Կեանքէն, կամ դուք ձեզմէ,
ձեր ծնողներէն ի՞նչ կ'ուզէք: Դուք ալ չէք դիտեր, վստահ եմ: Բայց
ինչո՞ւ: Աշխարհի վրայ ուր ալ երթաս՝ կեանքը նոյնն է, նոյն տաղ-
տուկը, առօրեայ մտահոգութիւնները, հացի պայքարը, աշխատանք,
յոզնութիւն ու վերջաւորութեան... մահ: Ուրիշ ի՛նչ կրնայ ըլլալ:
Մենք ի՞նչ ըրինք կը կարծէք:

— Ձեր ժամանակը, ձեր պայմանները տարբեր էին: Դուք ըրիք
այն, որ պատմութիւնը կը պարտադրէր ձեզի այդ շրջանին: Եւ յա-

Ղողեցաք, այդ իմաստով յաջողեցաք դուք, որովհետեւ ձեր առաքելութիւնը կատարեցիք ու կրցաք Հայութիւնը կենդանի պահել, վերականգնել զայն նոյնիսկ: Ատկէ աւելի ի՞նչ կրնայիք ընել: Բայց մենք... կ'ակնկալէք որ նո՞յնը ընենք: Սակայն ինչպէ՞ս, եւ ինչո՞ւ: Այդ տեսակ հարց չկայ այսօր. դուք կատարած էք այդ ամբողջը: Մերը, կ'ենթադրեմ, բոլորովին տարբեր խնդիր է. տաղնապ է, եթէ կ'ուզէք:

— Ձե՞ս խորհիր որ շափազանցութիւն է: Իւրաքանչիւր սերունդ կ'ունենայ իր հարցերը, յարմարելու դժուարութիւնները, ինքնորոշման կամ ինքնաճանաչման կոխը, պայքարը — ինչ որ կ'ուզես կռիւն զայն: Սակայն տաղնա՞պ, ինչ տաղնապի մասին է խօսքը:

— Կեանքի մէջ նպատակ մը ունենալու կամ չունենալու տաղնապը, — հանդարտօրէն խօսեցաւ Առաքելեան այնպէս՝ որ կարծես ժամեր, շաբաթներ կամ ամիսներ առաջ պատրաստած ըլլար այս պատասխանը: — Առանց նպատակի մարդկային գոյութիւնը ըմբռնելի չէ, համաձայն էք: Լա՛ւ, կրնա՞ք ըսել, թէ մեր նպատակը ինչ է կամ ինչ պէտք է ըլլայ:

— Այդ հարցումին դուք պիտի պատասխանէք: Երբ դուք չէք գիտեր, ինչպէ՞ս կ'ակնկալէք որ մենք գիտնանք:

— Իշուն պոչը — կը ներէք — հոն պահուած է: Իմ կարծիքովս ներկայ սերունդը այդ նպատակի որոնումին մէջ է. երկունքի ցաւեր կ'ապրի, եւ ատոր համար է որ անհանգիստ է, դժգոհ: Ձե՞ք խորհիր:

— Բայց այս անպատասխանատուութիւնը...:

— Ոմանց պարագային՝ թերեւս, — ընդմիջեց ժազ. — նոյնիսկ եթէ ընդհանրացնենք ձեր ըսածը, ես զարմանալի կամ դատապարտելի չեմ գտներ իրենց ընթացքը: Ըմբռնուած են... եւ շատ հաւանաբար՝ իրենք իրենց դէմ, որովհետեւ անորոշութեան մէջ են եւ դրական ոչինչ կրնան ընել: Եւ ուրե՞մն: Կը կարծէ՞ք, թէ իրենք չեն անդրադառնար, չեն գիտեր: Կը կասկածիմ. եւ ատոր համար ալ կը գիմեն միւս ծայրայեղութեան:

— Շատ բարի, սակայն իրենց դործած աւերը, պատճառած վնասները: Ամենէն աւելի իրենք իրենց կը վնասեն անշուշտ, իրենց ապագան կը քանդեն, եւ... ի՞նչ գիտնամ:

— Ատիկա անխուսափելի է. այդ իմաստով պիտի տուժեն բնական է:

— Եւ ինչպէ՞ս, — դառնօրէն գլուխը օրօրեց առեւտրականը. — դուն, օրինակի համար, — սաստ կար արտայայտութեան մէջ, —

դուն պիտի չտուժե՞ս կարծես: Այս տարիքիդ տակաւին... ապագայ ի՞նչ պիտի ըլլայ:

— Ես ըմբոստ մը չեմ, — կատակեց երիտասարդը, ներողամիտ ժպիտ մը դէմքին, — եւ ոչ ալ միւսներուն պէս անպատասխանատու:

— Այդ ըսել չուզեցի, — սկամայ խնդաց երէցը:

— Վստահ եմ: Թէեւ իրաւունք ունիք: Սակայն ի՞նչ կարելի է ընել: Ես ալ այսպէս ծնած եմ կ'երեւի:

— Եղա՞ւ, աս ալ խօ՞սք եղաւ:

— Իմ պարտադրիս մտահոգուելու պէտք չկայ, — լրջացաւ ժազ. — անօթի չեմ մնար, ոչ ալ անգործ: Ապագայ կոչուածը ատկէ աւելի բան մը չի նշանակեր ինծի համար:

— Ենթադրածէդ աւելի լաւ կը ճանչնամ քեզ, եթէ անշուշտ չես փոխուած: Բայց անկարելի է, այս տարիքին անկարելի է: Երեսունէն ետք մարդ չի կրնար փոխուել. իսկ դուն... դուն քեզ կրնաս խաբել թերեւս: Քեզ չե՞մ ճանչնար: Հօրդ մասին խօսողը ե՞ս էի քիչ առաջ:

— Ատիկա բոլորովին տարբեր հարց է: Համոզումի, հաւատքի հարց է, եթէ կ'ուզէք:

— Ուրե՞մն:

— Բայց մարդու մը ապագան, ապահովութիւնը: Գործը, ասպարէզը — ինչ որ է — ի՞նչ կապ ունի իր համոզումներուն հետ:

Արամ Սարգիսեան զարմացած նայեցաւ խօսակիցին, եւ սպառնական ցուցամատ մը ճօճեց օդին մէջ:

— Համոզումներն են որ մարդը կը շինեն կամ կը քանդեն. մարդու մը կեանքին ուղղութիւն կու տան եւ կը կազմեն անոր ապագան, կը բարձրացնեն զինք կամ կը տապալեն: Այսինքն մարդ կ'ընեն զինք կամ...:

— Այդ մասին տարակոյս մի ունենանք: Բայց ձեր ըսածը նիւթական ապահովութեան կամ յաջողութեան հետ կապ չունի երբեք. իսկ ապագայ կոչուածը, ընդունուած իմաստով, նիւթապէս կամ գործի մէջ յաջողելու խնդիր է կարծեմ: Եւ եթէ չեմ սխալիր, քիչ առաջ այդ մասին կը խօսէիք:

— Այդպէս ըսենք: Որ հիմա ըսածս չի թխտեր սակայն: Ձերար կ'ամբողջացնեն: Համոզում կամ խոհալ չունեցող մարդը տեղ չի կրնար հասնիլ, չի կրնար յաջողիլ կամ բան մը իրագործել: Այդ տեսակ մարդոց պարագային ապագայի մասին խօսիլը աւելորդ է արդէն:

— Պր. Արամ, ինծի այնպէս կը թուի որ դուք բոլոր մարդիկը

անխտիր հերոսներ կը նկատէք: Գաղափարապաշտ, հաւատքի տէր, առաքելութեան մը ծառայող խնթեր: Իրականութիւնը, դժբախտաբար, ճիշդ հակառակը կը փաստէ. մարդիկ ընդհանրապէս հասարակ, անտարբեր, խղճալի արարածներ են: Եսակեզրոն, հաճոյամու բայց վախկոտ կենդանիներ՝ հակառակ անոր որ առաւելութիւն մը ունին միւս կենդանիներուն հետ բաղդատած: Իրենց ուղեղը, բանականութիւնը:

Գրասենեակին դուռը զգուշութեամբ բացուեցաւ այդ միջոցին, եւ քարտուղարուհին թուղթերու տրցակ մը յանձնեց զործատիրոջ: Ակնոցաւոր բայց սիրուն աղջիկ մըն էր. թէեւ ամօթխած, սակայն կը քալէր իւրայատուկ նազանքով մը, որ ուշադրաւ կը դարձնէր զինք անմիջապէս: Ժազ անզգալարբար հետեւեցաւ անոր շարժումներուն, եւ երբ անհետացաւ դրան ետին, հարցուց:

— Աստղիկին խնդիրը ի՞նչ եղաւ:

— Ո՞ր խնդիրը, — մեքենական կերպով խօսեցաւ Սարգիսեան, աչքերը հեռացնելով թուղթերէն:

— Սպանութեան հարցը:

— Ա՛հ, ի՞նչ պիտի ըլլար: Տարիներ անցան վրայէն. մոռցուեցաւ—գնաց: Խեղճ աղջիկ:

— Ոճրագործը չգտնուեցա՞ւ:

— Բնաւ: Միծաղելի է... յիմարութիւն: Ի՞նչ փաստեցին:

— Ո՞վ ինչ պիտի փաստէր:

— Պատասխանատուները, սճիրը գործողները: Հայութիւնը փրկեցի՞ն անմեղ երիտասարդներ սպաննելով: Մարդիկ ազատ չե՞ն: Ինչ կ'ուզէին խեղճ աղջիկէն: Որպէս մարդ կեանքը քեզի կը պատկանի, եւ ուղածիդ պէս կը դասաւորես զայն: Կրնաս ամուսնանալ կամ չամուսնանալ, կրնաս սատանային հետ ապրիլ կամ թշնամիդ սիրել: Յիսուսի քարոզածը այս չէ՞ր: Տղան թուրք ալ չէր արդէն. Իսլամ էր, լա՛ւ, հասկցանք: Մենք աւելի լա՞ւ ենք: Փոխանակ մարդը սպաննելու թող նման ամուսնութիւններու կամ յարաբերութեանց առաջը առնեն, եթէ կ'ուզեն որ մեր տղաքը օտարներու հետ չամուսնանան: Թող ճիշդ դաստիարակութիւն տան եւ իրենց ուղած ուղղութեամբ առաջնորդեն զանոնք:

— Ինչե՛ր կ'ակնկալէք: Մենք կազմակերպուած կեանք չունինք, որ այդ տեսակ արդիւնքներու հասնինք: Պաշը—պոզուֆներ են բոլոր, նոյնիսկ մեր կղերականները: Դարերու ընթացքին Հայոց Եկեղեցին, որ կրօնական իմաստով մեզի համար նշանակութիւն չունի, այդ պարտականութիւնը ստանձնած էր եւ գէշ կամ աղէկ բաներ մը

կ'ընէր: Հիմա եկեղեցին ալ այս նոյն պաշը—պոզուֆներուն ձեռքը խաղալիք դարձեր է: Ի՞նչ կ'ակնկալէիք որ ըլլար: Ամէն մարդ իր թմբուկը կը զարնէ, իսկ ժողովուրդը լքուած է իր ճակատադրին: Եղունդ ունեցողը գլուխը կը քերէ, բայց իր դիտցած ձեւով: Եւ արդիւնքը ասկէ լաւ չի կրնար ըլլալ:

— Ինչո՞ւ ժողովուրդը կը խաբեն ուրեմն, — անակնկալօրէն ջղայնացաւ Արամ Սարգիսեան. — թող ձգեն որ ամէն մարդ իր ուղած կեանքը ապրի: Կ'ուզես հա՞յ մնալ, օտարանա՞լ, ամուսնանա՞լ, չամուսնանա՞լ, իրենց ի՞նչ, եթէ այս է իրականութիւնը: Կ'ակնկալեն որ չմեռնիս նոյնիսկ... յիմարները: Այս ընթացքով ի՞նչ պիտի փրկեն կը կարծեն:

— Իրենք զիրենք, — Ժազ Առաքելեան վերադատած էր արդէն իր նախկին դուռթխտոսութիւնը:

— Այդպէ՞ս, այդքան պա՞րզ: Եւ մենք պէտք է ընդունի՞նք այս բարբարոսութիւնը: Ժողովուրդին վրայ բռնանալու ի՞նչ իրաւունք ունին:

— Յարմարութեան հարց է աւելի. իրենց գործին այդպէս կուրայ: Թէ ոչ իրենց գործին արդեւք կ'ըլլաք. կը վտանգէք իրենց պաշտօններն ու ապահովութիւնը:

— Բայց եղբա՛յր, թող պահեն իրենց պաշտօնները, թող օդատուին, սակայն թող իրաւ գործը ընեն նաեւ:

— Ինչո՞ւ յոգնին՝ երբ առանց ատոր կրնան պաշտօնի վրայ մնալ եւ ղեկավարել աղբը:

— Աղբը ղեկավարութեան պէտք չունի՞, — աւելի եւս ջղայնացաւ երէցը ու գրեթէ պոռաց. — աղբը փրկութեան պէտք ունի, յստակ հեռանկարի մը, ապաղայի մը:

— Դուք իրենց հարցուցէք: Եթէ իրենք չըլլային, այսօր Հայութիւն մնացած չէր ըլլար արդէն...:

— Հայը հազարաւոր տարիներու ընթացքին իրենցմով չէ որ հայ մնացած է: Մեր ժողովուրդը անըմբռնելի, անբացատրելի բնազդ մը ունեցած է. ինքզինք պահպանելու, գոյատեւելու բնազդը, որ ծրարուած չէ, մշակուած չէ: Պարզօրէն այդպէս է, հայը այդպէս եղած է միշտ: Իրեն հարցուր, ինքն ալ չի գիտեր, թէ ինչ կ'ընէ կամ ինչու կ'ընէ:

— Ուրեմն իրենց պէտք չունի՞ ոչ իսկ փրկութեան համար, — շարունակեց կատակել երիտասարդը:

— Ես չըսի որ իրենք պէտք է փրկեն աղբը. փրկութեան պէտք ունի, այո՛, բայց ինքզինք կրնայ փրկել:

3063



— Միայն չլսեն ձեր այս խօսքերը :

— Իսկապէս անտանելի է, — մասամբ հանդարտած, հառաչեց Սարգիսեան, ու նիւթը փոխելով հարցուց դարձեալ. — Կ'ուզե՞ս աշխատիլ, թէ... :

— Անշուշտ, սակայն ոչ անմիջապէս : Ինչպէս ըսի, տակաւին չեմ դիտեր, թէ ինչ պիտի ընեմ :

— Լա՛ւ, որպէսզի օր առաջ կարենաս որոշել, քեզի այսքանը ըսեմ, թէ քեզի պէտք ունինք հոս : Երբ պատրաստ ըլլաս... :

— Ծնորհակալ եմ : Կրնաք վստահ ըլլալ, թէ ուրիշ տեղ պիտի չգլխաւորէի :

Բ.

Վերադարձաւ տուն : Ոչ թէ իր տունը, թէեւ, այլ աներօջը : Հոս տուն չունէր տակաւին : Կամ այլեւս : Պէյրութ, որ իր քաղաքն էր, իր ծննդավայրը՝ տուն չունէր այլեւս : Իսկ թէ պիտի կարենա՞ր հոս վերահաստատուիլ կամ ոչ՝ շատ խնդրական էր : Թափառական հայր ինքն էր, մտածեց, եւ ժպտեցաւ ակամայ :

Սեղա դիմաւորեց զինք դրան շեմին եւ հետեւեցաւ իրեն մինչեւ խոհանոց, ուր հայրը նստած կը խմէր սովորականին պէս : Նոյն խոհանոցն էր, նոյն սեղանը, աթոռներն ու նստարանը, որ սառնարան էր միաժամանակ : Ժամանակը անշարժացած էր թերեւս այս տան մէջ ու ոչինչ փոխուած էր հինգ տարուան ընթացքին : Այնպէս թուեցաւ պահ մը իրեն, թէ երբեք չէր հեռացած այստեղէն եւ երէկ հոս էր տակաւին : Իրենց առօրեայ, սովորական այցելութիւններէն մէկն էր կարծես, եւ երեկոն՝ նոյնպէս ծանօթ եւ վարժութեան վերածուած կրկնութիւն մը :

— Փառք Աստուծոյ, խոստատան եկաւ, — աներայրը բացականչեց. — նստէ՛ նայինք : Գաւաթ մը տուր, աղջի՛կ :

— Ծատ կանուխ հասունցեր է այսօր, — Ժազ աւիթը դտաւ փսփսալու Սեղային, մինչ հայրը զրաղած էր մօտակայ պահարանէն բանջարեղէն ընտրելով :

— Դուն իրմէ լաւը չես, — յանդիմանեց կինը ու նստեցաւ կողքին : — Ինչո՞ւ ուշացար :

— Ժամը քանի՞ է որ... :

— Ատու գացիր, ու մէյ մըն ալ չերեւցար : Միտքս մնաց :

— Հոս խուլիզաններ չկան, եւ ոչ ալ հայաստանեան կոնեակ : Պարապ տեղ մտահոգուերես : Այս անիծեալ երկրին մէջ օր ցերեկով խմելը անձնասպան ըլլալու պէս բան մըն է արդէն :

— Վախ-վախ-վախ-վա՛խ, — ծաղրեց Սեղա, — խեղճ մարդ, առանց կոնեակի ի՛նչ պիտի ըլլայ վերջը :

— Բնաւ հոգ մի ըներ, — կնկան յանդիմանութիւնը միշտ հաճոյք պատճառած էր իրեն. — Լիրաննի օղիին նմանը չկայ :

Հայաստանի մէջ մէկ բան սորված էր դէթ : Ոմեկ : Եւ զարմանալի կերպով՝ մտահոգուած էր նոյնիսկ չըջան մը : Ոմիչքը իր միակ մոլութիւնը դարձած էր հոն, եւ անդրադառնալով հանդերձ իր դահալէժ անկումին, չէր փորձած սահման մը պարտադրել ինքնիրեն : Ընդհակառակն՝ տրամաբանութիւնը դործի լծած էր՝ ինքզինք արդարացնելու համար եւ խիղճի ամենայն հանդարտութեամբ յանձնուած էր ըմպելիի «բարիք»ին : Բայց յիմարութիւններ չէր դործած երբեք եւ կրցած էր իշխել ջիղերուն՝ ամենէն կրիտիկական պարապաներուն խի :

Հիմա տարբեր էր արդէն : Առաջուան չափ չէր խմեր, եւ պատճառ ալ չունէր հաւանարար : Վերադառնալէն քանի մը շաբաթ ետք արդէն իսկ վերանորոգուած ու թարմացած մարդ մըն էր : Նոյն պրկուած ջիղերը չունէր, եւ աւելի հաշտ էր ինքն իրեն հետ : Թէեւ այս շաբաթներուն ընթացքին ոչինչ կրցած էր ընել ու կը մնար նոյն անորոշ վիճակին մէջ, բայց եւ այնպէս հանդարտած էր կամ խաղաղած : Ինքն իրեն դէմ չէր պայքարեր, ու յոռետեսութիւնը թօթափած՝ մարդու եւ կեանքի նկատմամբ նոր յոյսեր սկսած էր ունենալ կամ դարգացնել իր մէջ :

Հայաստանէն եկած զինուոր... :

Աներայրն էր դարձեալ, որ կէս երգելով, կէս հեղնելով խօսք կ'ուղղէր իրեն :

— Պատմէ՛ նայինք :

Այս մարդուն հանդէպ յարգանք ունէր, բայց իրեն պէս անսրբազրելի յիմար մըն էր : Յիսուն հինգ տարեկանին արդէն իսկ պարտուած ու Ֆիզիքապէս փճացած ալքոլամոլ մըն էր : Սակայն ինք կը յարգէր անոր պարտութիւնը թերեւս : Իր պարտութեան եւ տառապանքին մէջ հպարտ, յամառօրէն լուռ ու սակաւախօս ջիղերու կոյտ մըն էր : Չարմանալիօրէն կապուած էր իրեն թէեւ, ու Հայաստան ներգաղթելէն ալ առաջ փնտուած էր իր մտերմութիւնը ու բացառաբար կատակած էր միայն իրեն հետ : Հանելուկ մըն էր : Հանելուկ աղջկայ մը հանելուկ հայրը : Իր կնկան կամ զաւակներուն հետ

չէր կատակեր, ոչ իսկ կը խօսէր ընդհանրապէս: Բայց իրեն հանդէպ մասնաւոր տկարութիւն մը ուէնք եւ ամէն իրիկուն կը սպասէր իր վերադարձին՝ ճիշդ անդսպէս իր երեխայի մը նման:

— Ինչ Հայաստան, ինչ զինուոր, — Ժառ կը կենց նոյն յանկերը իր կարգին եւ առաւ ուսուց մը օղիէն:

— Դուն ալ դասալիք եղար, — գրեթէ երգեց մտաւաճառը, որ հակառակ թրքախօս ըլլալուն, երբեմն իրմէ չակնկալուած հայերէն բառեր կը գործածէր:

— Յանցաւորը այս աղջիկն է, — ամուսինը մատնացոյց ըրաւ Սեդան:

— Ատիկա խելք չունի որ արդէն. խելք ունենար այդ գերմանացիին Բիւր հետը Հայաստան չէր տաներ:

Սեդա չհամարձակեցաւ արտայայտութեամբ իսկ բողոքել, մինչ Ժառ պարզօրէն ըսաւ:

— Ատիկա իմ որոշումս էր: Եւ յետոյ, ինչ կընայինք ընել. ո՞ւր եւ որո՞ւ ձգէինք պղտիկը:

— Հիթլերին քով զրկէիք...:

— Արմէնը ամէն կերպով հայ է, — Ժառ փորձեց պաշտպանել մայրն ու զաւակը միաժամանակ: — Հայերէնէն զատ լեզու չի գիտեր եւ քեզմէ ալ, ինձմէ ալ աւելի մոլեռանդ հայ է:

— Ճշմարտ եղար նորէն, հա՛. քանի տարեկան լսկոտ է որ...:

— Հայ մեծցած է, — ընդմիջեց երիտասարդը, — հայ ընտանիքի մէջ, հայ մօր հետ, եւ ամենէն կարեւորը՝ իր կեանքին ամենէն մատղաշ ու կարեւոր հինգ տարիները Հայաստանի մէջ անցուցած է:

— Ատոր համար զինք հեռացուցիք երկրէն: Եթէ հայ է, ինչո՞ւ բաժնեցիք զինք հայրենիքէն:

— Հայու ճակատագիր...:

— Օ՛հ, հայու ճակատագրին արժանացուցած էք արդէն խեղճ երեխան, — հարբած գլուխը օրօրեց մեծ հայրը: — Դժբախտ արարած մը եւս աւելցաւ աշխարհի վրայ, չըսես:

— Եթէ հայերը բոլոր դժբախտ կը նկատես, ճիշդ է:

— Դժբախտ չեն ալ, ի՞նչ են: Մեր ապրածը կեանք է: Աշխարհի վրայ տեղ չունինք. ուր որ երթանք օտար ենք, նոյնիսկ մեր հայրենիքին մէջ:

— Ո՛չ, այդպէս չէ:

— Ինչ ըսել է այդպէս չէ: Հայաստանէն վերադարձողը դո՞ւն էիր, թէ՛ ես:

— Տարբեր հարց: Իմ դուրս գալովս Հայաստանը հայուն հայրենիքը ըլլալէ չի դադրիր:

— Ինչո՞ւ չմնացիր ուրեմն:

— Իմ տեղս չէ: Պայման չէ որ ամէն մարդ իր հայրենիքին մէջ ապրի:

— Հայուն համար պայման է:

— Թերեւս, — ակամայ զիջեցաւ Ժառ, — բայց ինձի համար Հայաստանը հոն չէ:

— Հա՛, դարձանք նոյն տեղը: Եթէ այդպէս էր, ինչո՞ւ դացիր:

— Սխալեցայ: Յանցաւորը աղջիկն է ըսի:

— Ատի Հայաստանին ինչ ըլլալը չէր գիտեր, — ամենայն պարզութեամբ զիտել տուաւ աղջկան հայրը: — Գերմանիա, Եւրոպա՝ թերեւս:

— Ես ալ այդպէս կը կարծէի, բայց դուրս եկաւ որ շատ ազդայնամուղ աղջիկ մըն է եղեր:

— Հայաստան ներգաղթելը քու գաղափարդ էր, — ինքզինք պաշտպանելու փորձ մը ըրաւ Սեդա:

— Բայց ինձի ազգային քարոզ կարգացողը՝ դուն: Ես Հայութիւնը մոռցած, անկէ հեռացած երջանիկ արարած մըն էի: Դուն արթնցուցիր զիս, դուն խանդարեցիր հանգիստս:

— Շատ ալ դէ՛ ըսան մը չըրի կարծեմ:

— Տեսո՞ր, — ամուսինը դարձաւ հօրը, — չըսի՞ քեզի:

— Հը՛մ, — դոհունակութեամբ ժպտեցաւ հայր Օհանեանը. — չըսե՛ս, հայկական բան մը մնացեր է եղեր մէջը:

— Օտարը երբ ճանչնաս բոխելը կու դայ, — բացատրեց Սեդա. — իրենց հազարը մէկ հայու հետ չեմ փոխեր: Անձնասէր, կծի, սղառտ, տգէտ ու վայրենի մարդիկ են բոլոր: Իբր թէ քարակըրթուած... ինչի՞ս քաղաքակրթուած. եւրոպացի եղան ըսելով: Իրենց մասին սխալ կարծիք ունինք մենք: Ասոնք մարդ չեն նախ եւ սոսաջ. դազան են, ուղղակի դազան: Ինչպէ՞ս չսիրես Հայութիւնը:

— Հայերուն մէջ ալ դազաններ չեն պակսիր, — ըսաւ հայրը եւ ակներեւ արտմութեամբ եւ մէկ ուսուցով պարպեց օղիի բաժակը:

— Կամաց-կամաց, ավ՛ մա՛րդ, — դիտողութիւն ըրաւ կինը, որ մտած էր խոհանոց այդ պահուն: — Ետեւէդ վաղո՞ղ կայ:

Ամուսինին դէմքին վրայ խոժոռ արատայայտութիւն մը սառեցաւ երկար պահ մը, եւ ի վերջոյ՝ փոխանակ պատասխանելու, բաժակը երկարեց կնկան եւ ըսաւ:

— Յօղուէ ասիկա:

— Բայց եւ այնպէս ամենէն գէշ հայր նոյնիսկ մարդկային բան մը ունի մէջը, — Սեղա շարունակեց ընդհատուած խօսակցութիւնը:

— Անշուշտ, մենք մարդ ենք տակաւին, եւ որոշ սրբութիւններու կը հաւատանք: Մեր կեանքնի մէջ դեռ խէյր կայ, սրբութիւն, իմաստ: Այդ աւանակները ի՞նչ բանի համար կ'ապրին... դրամ, հաճոյք, զեխութիւն:

— Նպատակ ալ չունենան, — բարձրաձայն խորհրդածեց Փազ, — աննպատակ կեանք մըն ալ ապրին, իրենց համար տարբերութիւն չ'ընեն: Իրենց երկրին մէջ են եւ գիտեն, թէ ոչինչ կ'ակնկալուի իրենցմէ: Գոհ են: Եթէ գոհ ալ չըլլան, անհող են, որովհետեւ հարց չունին, տաղնապ չունին. թերեւս՝ անձնական մտահոգութիւններ, այո՛: Բայց անձնական մտահոգութիւն ամէն մարդ ունի:

— Ատոր համար ալ քաղաքակրթուած կոչուած երկիրներուն մէջ մարդիկ սկսած են աւանակի վերածուիլ: Այսինքն հայկան, հասկնալի՞ է, հայկան:

— Երանի իրենց, — կատակեց Փազ Առաքելեան բայց յետոյ անդրադարձաւ որ խկապէս կը նախանձէր անոնց:

— Այդպէ՞ս ըսենք: Իրենց հայկան ըլլալուն կը նախանձի՞ս, — իր կարգին կատակեց աներայրը:

— Նախընտրելի պիտի չըլլա՞ր, օրինակի համար, Փրանսացի ըլլալ, կամ անգլիացի, գերմանացի — կարեւոր չէ — բայց երկրի մէջ ապրիլ՝ հող չէ թէ տղէտ ըլլաս կամ անբան:

— Ո՞չ: Հայ ըլլալը հազար անգամ աւելի լաւ է:

— Բաղդատելու խնդիր չկայ, — ուղեց միտքը պարզել Փազ. — մէկը կամ միւսը չեմ գերադասեր: Մենք ալ իրենց պէս մեր երկրին տէրը ըլլայինք աւելի լաւ չէ՞ր ըլլար: Թող գիւղացի ըլլայինք, վնաս չունի, կամ տղէտ, անուս: Ի՞նչ կարեւորութիւն ունի: Գոնէ տեղ մը կ'ունենայինք, եւ երկրէ երկիր չէինք թափառեր: Ուր ալ երթանք, օտար ենք, անբաղձալի օտարականներ, որոնք աշխարհի վրայ տեղ չունին, չեն ընդունուիր:

— Մեր տեղը Հայաստան է, — վճռականօրէն խօսեցաւ Օհանեան:

— Ո՞ւր է Հայաստանը:

— Եղած տեղը:

— Հոն Հայաստան չկայ այժօր. ատիկա անցեալին էր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես: Այսինքն թուրքը զբաւած է ըսելով, Հայաստան ըլլալէ դադրեցա՞ւ: Լսուած բան է:

— Յաւալի իրականութիւնը այս է: Մենք որքան կ'ուզենք

իրար խարենք, հակառակը պնդենք, ըսենք թէ Հայաստանը մերն է, թէ կայ, դոյութիւն ունի... իրականութեան մէջ դոյութիւն չունի սակայն, որովհետեւ Հայութիւնը հոն չ'ապրիր: Կրնա՞նք երթալ եւ հոն հաստատուիլ: Ո՞վ կ'արտօնէ:

— Արտօնութեան պէտք չունինք: Երբ ժամանակը դայ, կ'երթանք:

— Ե՞րբ պիտի դայ ժամանակը:

— Ես քեզի պէտք է հարցնեմ. երիտասարդը դուն ես: Ատիկա ձեր դործն է, երիտասարդութեան: Ի՞նչ ըրած ունիք, ինձի կրնա՞ս ըսել, բացի պարապ-սարապ պտրտելէն:

— Ես երիտասարդութիւնը չեմ ներկայացներ, — ակամայ ինդաց Փազ:

— Երեւ՞րը կը ներկայացնես հապա:

— Ես կը կործնեմ որ այդ ժամանակը բնաւ պիտի չդայ, եւ միշտ ալ այսպէս թափառական պիտի մնանք:

— Ինչո՞ւ: Գո՞ւն որոշեցիր ատիկա:

— Երիտասարդութիւնը, որու մասին խօսեցար, կեանքը վաճակելով դադարած է, եւ կամ պարապ-սարապ կը պտրտի՝ ըսածիդ պէս:

Դաւիթ Օհանեան զարմացած նայեցաւ երիտասարդ փեսային, որ հանդարտօրէն կը ծխէր հիմա, եւ յանկարծ անդրադարձաւ որ դիմացինը երիտասարդութեան վաղուց հրաժեշտ տուած ու յոգնած մարդ մըն էր: — Գոնէ դուն անկեղծ ես, — խօսեցաւ յետոյ, — սուս չես խօսիր, իրականութիւնը կ'ընդունիս եւ չես փորձեր դուն քեզ արդարացնել:

— Ինքզինքս ի՞նչ պիտի արդարացնեմ: Ես ով եմ որ, կամ ինչ կը ներկայացնեմ. հայ ըլլալս հանելուկի պէս բան մըն է ինձի համար հիմա: Ու երբեմն ես ալ կը զարմանամ, երբ մտածեմ այս մասին. ինձի համար այս տեսակ հարցեր չկային առաջ, ոչ իսկ մտքէս անցուցած էի օր մը օրանց: Հայ ըլլալը իսկապէս զարմանալի բան մըն է, անբմբռնելի... հանելուկ է, այո՛: Ո՞վ եմ ես վերջապէս:

— Լաւ որ հարցուցիր, — հեզնեց կամ կատակեց աներայրը. — մինչեւ այսօր ես ալ չեմ գիտեր: Սաքանը կրնամ ըսել, թէ քու ըրածդ խենթ մը չ'ընեն: Եւ վստահ եմ, դուն ալ չես գիտեր, թէ ինչո՞ւ կ'ընես այս բոլորը:

Առաքելեան անհանդստացաւ պահ մը, նայեցաւ շուրջը, ու յետոյ անդալարար վերցուց բաժակը եւ տարաւ չրթներուն. բայց չիմեց: Ուղեղը արագօրէն կը դործէր: Մարդը բնաւ ալ հարբած

չէր, եղբակացուց անմիջապէս եւ հազիւ կրցաւ մըթմըթալ:

— Թերեւս:

— Վստահ եմ, — չիտնայեց երէցը:

— Ի՛նչ կարելի է ընել. ես ալ այսպէս ծներ եմ կ'երեւի:

— Դժգոհելու պատճառ չունիս:

— Ինչպէ՞ս թէ:

— Գոնէ դուն քու բնական անձը ես. դուն քեզ չես խարեր, դերասանութիւն չես ընէր: Ընչու չէ՞ ըսածս: Օր մը օրանց համոզումիդ կամ կամքիդ հակառակ բան մը ըրա՞ծ ես: Ձեմ կարծեր: Եւ ատոր համար ալ դուն քեզի հետ հաշտ ես, որովհետեւ խիղճդ հանդարտ է: Համաձա՞յն ես:

— Խիղճս հանդարտ է, այո՛, բայց թէ՛ ես ինձի հետ հաշտ եմ... Ընդհակառակը՝ ես ինձի հետ կը կռուիմ միշտ: Ինքզինքս չեմ հասկնար նոյնիսկ այլեւս, ու չեմ գիտեր, թէ ինչ կը փնտռեմ կամ ի՛նչ կ'ուզեմ այս կեանքէն:

— Ես գիտեմ, — խորհրդաւոր չեշտ մը կար Օհանեսանի ձայնին մէջ. — ինքզինքդ կը փնտռես:

— Ինչու կորսուա՞ծ եմ:

— Միայն կորսուա՞ծ: Կորսնցուցեր ես, խե՛ղդ կորսնցուցեր ես:

— Գէ՞չ է: Խելքերնին չկորսնցնողները ինչ ըրած ունին, կրնա՞ս ըսել: Գոնէ ես ուրիշին վնաս չեմ հասցնէր:

— Գիտեմ, գիտե՛մ. ճիշդ ատոր համար ալ պէտք է զգոյշ ըլլաս, որովհետեւ ուրիշներ կրնան քեզի վնաս հասցնել:

— Նորութիւն պիտի չըլլայ եւ կարեւորութիւն ալ չունի, — անտարբեր կերպով ուսերը վեր քաշեց Առաքելեան: — Աշխարհի վրայ բան չի փոխուիր, — ըսաւ յետոյ եւ մտածեց, թէ ինչու ըրաւ այս վերջին ճշդումը:

— Հա՛, բան չի փոխուիր, — անմեղօրէն ծաղրեց Սեդա: — Միայն դուն կը փոխուիս, կեանքդ կը փոխուի, ապագադ կը քանդուի:

— Բայց ո՞վ եմ ես:

— Մոռցա՞ր, — չարացաւ կիներ, — անունդ Յակոբ չէ՞ր:

— Այո՛, գիտեմ, թէ դուն կը նախընտրես զիս ժառկ կոչել, որ շատ ալ կարեւոր չէ, սակայն հարցումս այդ մասին չէր:

Գիշերը ամբողջ, յետոյ, Սեդան գրկեց բազուկներուն մէջ ու սիրեց զայն երեխայի մը պէս. սիրեց, գգուեց. շոյեց ու համբուրեց

ճիշդ այնպէս ինչպէս սիրած էր զինք տարիներ առաջ՝ առաջին օրերուն, երբ նոր սիրահարած էր տակաւին: Ու չկրցաւ քննալ: Անապահովութեան ահաւոր զգացումն էր թերեւս, կամ միտակութեան, որ զինք կը նետէր անոր գիրկը՝ պաշտպանուելու համար: Եւ այս ամբողջ միջոցին, երբ Սեդա ներողամիտ ու զարմացած կը վերանար ու կը տուայտէր երանութեան մէջ, իր ուղեղը կը կրկնէր:

— Ո՞վ եմ ես:

Հայրը զինք Յակոբ կոչած էր իր հօրը անունով, իսկ ուրիշներ՝ Յակոբը փոխած էին ժառկ: Ձէր անդրադարձած, չէր մտածած իսկ այս մասին, թէ եւ այսօր պիտի նախընտրէր Արա կամ Հրայր կոչուել. Մհեր կամ Վահագն, Վարդան կամ նոյնիսկ Վաստի: Շատ աւելի գեղեցիկ անուններ էին, եւ աւելի հայկական: Բայց հարցը անունը չէր: Անուն մը միշտ կարելի էր փոխել, բայց ինքնութիւնը: Նախ պէտք է ճանչնար ինքզինք, դանէր իր իսկութիւնը ու հաստատէր զայն:

Այսօր գիտէր, թէ հայ էր ու կ'ընդունէր այս իրականութիւնը: Բայց ի՞նչ էր հայը. ի՛նչ կը նշանակէր հայ ըլլալ: Եթէ կարենար, կը ջնջէր այս ամբողջը միտքէն ու միանգամ ընդմիշտ կը ձերբազատուէր ներկայ տաղնապէն կամ տառապանքէն: Անկեղծօրէն պիտի ուզէր մոռնալ իր հայ ըլլալը, եւ հաւանաբար խիղճի խայթ ալ չունենար, բայց ուղեւր բաւարար չէր: Իրականութենէն ոչինչ կը փոխուէր: Հայ ըլլալէ չէր դադարէր: Ի վերջոյ՝ հայ ըլլալը դիտակցութեան հարց էր, թէ՛ ծնունդի, ժառանգականութեան: Անտարակոյս որ հայ ծնած էր, բայց եթէ որչէր դիտակցութեամբ եւ համոզումով փոխել իր ինքնութիւնը եւ Փրանսացի նկատել ինքզինք, օրինակի համար, Փրանսացի՞ կը դառնար: Եւ հայը մէջը կը մեռնէ՞ր ատկէ ետք: Փրանսական հպատակութիւն ալ կ'առնէր, ենթադրենք, Փրանսերէն կը խօսէր՝ փոխանակ հայերէնի, ու կը թաղէր իր անցեալը ամբողջ՝ պատմութեամբ, լեզուով, հոգեբանութեամբ, կենցաղով եւ աւանդութիւններով: Բայց ծաղո՞ւմը: Հայու դաւակ ըլլալէ կը դադրէ՞ր: Անկարելի էր: Կամ՝ անտանելի:

Անպայմանօրէն պիտի ուզէր այս հարցէն ձերբազատուել: Ոչ թէ հայութենէն կամ հայ ըլլալէն, այլ այս թնճուկէն, որ տաղնապի վերածուած էր իր մէջ: Ինչո՞ւ որպէս մարդ միայն պիտի չկարենար ապրիլ: Այս ի՛նչ բռնութիւն էր՝ մարդկութեան կողմէ իրեն պարտադրուած:

— Ի՞նչ ունիս, — Սեդայի ձայնը անդունդէ մը հասաւ իրեն կարծես:

— Գնացի՛ր դուն :

— Հերոս . գիտենք թէ քաջ ես , խիզախ , անկախ , իսկական հերոս մը , — զգալի էր որ վերաւորուած էր կիներ : — Ինքնիրեն պիտի սրուէ՛ , ինքնիրեն պիտի ստոպուի , չարչարուի ու լուծէ բոլոր հարցերը :

— Դուն փորձա՞նք եկար գլխուս , — ժառ գործեց կատակի բնոյթ տալ ըսածին բայց գիտէր , թէ իրականութեան մէջ կ'ուզէր լուսննել կողակիցը :

— Նորէն սկսաւ :

— Պիտի քնանա՞ս , թէ . . .

— Սը՛ս , կը լսեն միւս սենեակէն :

— Ուրեմն մի խանդարեր :

— Խանդարել , հա՞ , — Սեղա արժուէր սպաննական կերպով տեղաւորեց ամուսինի կողին . — ա՛ն քեզի խանդարել :

— Հիմա կը խայտառակեմ քեզ , հա՛ :

— Ինչպէ՞ս :

— Կը պոռամ :

— Հո՛գս , — երգեց կիներ բայց քաջեց արժուէր :

Եթէ այս փորձանքը չըլլար ի՞նչ պիտի ընէի , մտածեց Առաքելեան , եւ պահ մը մոռցաւ իր մղձաւանջը : Իսկապէս փրկութիւն մը եղած էր ան իրեն համար՝ իր պարզութեամբ , անմիջականութեամբ եւ տենդազին նուիրումով : Եթէ ան չըլլար , կեանքը իսկապէս անտանելի դարձած պիտի ըլլար իրեն համար , ու պիտի ձանձրանար , զգուէր եւ յուսահատէր վերջաւորութեան : Սեղան իր խաղալիքն էր , փոփոխութիւնը , ժամանցը , նեցուկը , պաշտպանը , բարեկամը , սիրականը , եւ անշուշտ կիներ : Այսինքն՝ զուակներուն մայրը : Կամ զուակին մայրը : Բայց Արմէնն ալ իր զուակն էր՝ քանի Սեղան էր անոր մայրը : Եւ իրօք սիրած էր մանչուկը՝ Նայիրիին չափ , եւ թերեւս ալ աւելի : Եւ ինչո՞ւ չսիրէր այդ անմեղ երեխան : Ինք մեծցուցած էր վերջապէս , խնամած , զուրգուրացած անոր վրայ , եւ սիրած էր , այո՛ , պարզօրէն սիրած էր՝ առանց իսկ մտածելու այդ մասին : Յարգ հարց չէր եղած իրեն համար : Առաջին անգամն էր թերեւս որ կ'անդրադառնար այս իրականութեան , որ կը զարմացնէր զինք յամենայն դէպս : Արմինը պարզապէս Արմէնի վերածած էին եւ հարցը լուծած ժամանակին , տարիներ առաջ : Եւ դէ՛թ ինք անգամ մըն ալ չէր խորհած այդ մասին : Բայց այսօր հարցը իր նրբութեամբ , եւ բարդութեամբ , ի յայտ կու դար եւ ուշադրութիւն կը պահանջէր : Արմէնը հա՞յ էր , թէ՛՝ դերմանացի : Ահաւասիկ այս էր թնճուկը :

Գերմանացիի մը զուակը , որ հայերէն կը խօսէր , հայերէն կը մտածէր , ու հայու ճակատագրով անիծուած՝ թափառական էր եւ ուրացուած առաջին իսկ օրէն : Եւ եթէ օր մը իրեն ըսող չըլլար , թէ հայրը դերմանացի էր , վստահարար կեանքը ամբողջ պիտի անցընէր եւ ապրէր որպէս հայ : Եւ պիտի ստոպուէր հայու մը նման , երկրէ երկիր թափառէր , դաշնակցական կամ հնչակեան ըլլար թերեւս , ու Հայաստան , Արարատ եւ Սասուն երազելով ալ կեանքը դժոխքի վերածէր անպայմանօրէն :

Յնորական հանելուկ մը չէ՞ր — անիմաստ , անհեթեթ : Այլ մանաւանդ՝ ծիծաղելի : Մարդ արարածը ծիծաղելի էր վերջապէս՝ ինքնիրեն համար ստեղծած բարդութիւններով : Ազգ , ազգութիւն , հայրենիք , երկիր , ծննդավայր , հպատակութիւն , հայրենասիրութիւն եւ մասամբ նորին : Ինք գէթ պիտի նախընտրէր այս բոլոր ախտերէն զերծ ըլլալ . բայց ինչպէ՞ս : Մարդկային ընկերութիւնը պարտադրած էր այս բոլորը իրեն՝ նոյնիսկ իր ծնելէն առաջ . եւ այնքան ատեն որ մաս կը կազմէր այս նոյն ընկերութեան , կամայ թէ ահամայ պիտի ընդունէր այս ախտերը որպէս նուազագոյն շարիք , եւ պիտի ընդունէր եւ իւրացնէր այս անհեթեթութիւնը նաեւ :

Բայց ո՞վ էր ինք :

Պիտի գիտնա՞ր երբեւիցէ : Պիտի կարենա՞ր ճանչնալ ինքզինք : Ի՞նչ կը ներկայացնէր , ի՞նչ կ'ընէր այս աշխարհի վրայ , եւ ինչո՞ւ հոս էր : Կամ միթէ՞ այս բոլորը յիմարութիւններ էին պարզօրէն , եւ ինք անտեղի հարցեր կը ստեղծէր միայն : Ի՞նչ կ'ուզէր կեանքէն եւ ինքնիրմէ վերջապէս :

Միշտ դժգոհ էր , անհանդարտ , ու յարատեւ որոնումի մէջ : Մարդ մըն էր , այո՛ , պարզ , մահականացու մարդ մը , այլ միլիոնաւոր մարդոց նման , բայց վստահ իսկ չէր այլեւս , թէ անոնց կը նմանէ՞ր կամ ոչ : Ոչ թէ Ֆրիդրիքապէս կամ կենցաղով — որովհետեւ քսաներորդ դարու երկրորդ կէսէն ետք մարդիկ անհամեմատօրէն եւ անբեւեակայելի կերպով նման էին իրարու եւ կ'ընէին նոյն բաները , կը մտածէին նոյն կերպով եւ կ'ապրէին նոյն միօրինակ ու սահմանափակ կեանքը — այլ իր գոյութեամբ եւ ներաշխարհին մէջ ստեղծուած բարդութիւններով : Տարիներ առաջ հասարակ եւ ինքնաբաւ պաշտօնեայ մըն էր եւ զուրկ այս կարգի մտորումներէ : Աւօրեան յլի էր միշտ նորութիւններով ու նոր ակնկալութիւններով , խանդավառութեամբ եւ վառ յոյսերով կամ երազներով : Այսօ՞ր :

Ամենազղուելին , սակայն , անորոշութիւնն էր : Չէր կրնար որոշել եւ ըստ այնմ վճռական քայլեր առնել : Շարաթներէ ի վեր նոյն

միօրինակ կրկնութիւնն էր. առաւօտուն դուրս կու գար տունէն, քանի մը բարեկամներու կ'այցելէր, հասակը կը ցուցադրէր հոս ու հոն՝ հաստատելու համար թերեւ, թէ վերադարձած էր Հայաստանէն, կը խօսէր, կը վիճէր, ու երեկոյեան տուն կը վերադառնար, աներայրին հետ օրը փակելու համար կէս հարրած վիճակի մէջ: Եւ ամէն գիշեր կ'որոշէր յաջորդ օրը լուրջ կերպով կեանքը ծրագրելու սկսիլ: Ահաւասիկ ամիս մը կ'ընէր որ հոս էր, եւ տակաւին արձակուրդի մէջ կը նկատէր ինքզինք: Ոչ թէ գիտակցաբար, այլ իրմէ անկախ, անբացատրելի պատճառներով:

Ի՞նչ կը փնտռէր սակայն: Այս իսկ էր հարցը:

Ինչո՞ւ է չէր կրնար իր նախկին բարեկամներուն կամ այլ մարդոց նման պարզ մարդ մը ըլլալ եւ բաւարարուիլ պղտիկ հաճոյքներով: Կարճ Սերոբը Ամերիկա հաստատուած էր, իմացածին համաձայն՝ Նասե՛լ՝ ուրիշ բազմաթիւ ծանօթներ: Տարիներ առաջ Միացեալ Նահանգներ ներգաղթելը դրախտէն ներս ընդունուելէն շատ աւելի դժուար արարողութիւն էր, մինչդեռ ներկայիս երկրային այս դարձուրդունքը լայն բացած, ազատ մուտքի դրութիւն մը հաստատուած էր՝ մասնաւոր հայերուն համար: Ի՞նչ էր պատճառը: Եւ մեկնողներ կային: Էութեան մէջ, ուրեմն, ասոնց կեանքը իր ենթադրածին չափ ալ պարզ չէր: Անհանդիստ, անհանդարտ կամ դժգոհ մարդը միայն տեղ կը փոխէր՝ ինչպէս ինք: Այսուհանդերձ հինգ տարուան ընթացքին ոչինչ փոխուած էր ու Լիբանահայութիւնը ընդհանրապէս կ'ապրէր նոյն ինքնագոհ եւ յանձնապատասխան կեանքը: 1973-ին՝ Պէյրութ ապրող հայը նոյնքան մը, բայց նոյնիսկ աւելի գինով էր քան ասիկ հինգ տարի առաջ: Երկրի թոյլատու պայմանները բացարձակ ազատութիւն չնորհած էին իրեն, եւ ինք առաւելագոյն չափով կ'օգտուէր այս կացութենէն: Առեւտրականը, արհեստաւորը, ուսանողը, պաշտօնեան՝ բոլորը նոյն ծուղակին մէջ էին եւ գինով: Պարահանդէսներ, ճոխութիւն, շոյլ կեանք, մսխում եւ դարավերջիկ բարքեր:

Մոռացումը, մոռնալու կարողութիւնը մարդկային կեանքի մեծագոյն բարիքներէն մէկն է: Ու հայը մոռցած էր իր անմիջական անցեալը, բայց՝ ահաւոր կերպով մոռցած:

Հայաստանէն ասոր համար վերադարձած էր:

Արամ Սարգիսեան այդ իրիկուն տունէն ներս մտաւ արտա-կարգօրէն լաւ տրամադրութեան մէջ: Վերջին շրջանին, ամիսներէ ի վեր, իր իսկ տան մէջ օտար կը զգար ու դժկամութեամբ կապ կը պահէր արտաքին աշխարհին հետ: Արտաքին աշխարհը՝ իր անձէն դուրս ամէն ինչ էր — տուն, աշխատանք, վաճառատուն, ծանօթներ, ազգականներ, կին, զաւակ: Եւ այս կը պատահէր իրեն վաթսունհինգ տարեկանին, երբ ուէէ մարդ խաղաղած ու հանդարտած պէտք է ըլլար: Իսկ ինք երիտասարդ տարիքին իսկ հաւասարակշիռ եւ գործնական մարդ մը եղած էր եւ անչեղ հետեւողականութեամբ հետապնդած էր եւ գործադրած իր առեւտրական ծրագրերնրը: Եւ յաջողած էր: Զգացական կամ երիտասարդական պատրանքներ չէր ունեցած, եւ հոգեկան ու մտային մտորումներու հետամուտ չէր եղած երբեք: Ժողին կամ իրեն իսկ ժամանակակից կարդ մը այլ մարդոց նման կեանքի մէջ բան մը, նպատակ մը փնտռելու հարց չէր ունեցած: Իտէալ, այո՛, որ հարստանալ եւ լաւ ապրիլ կը նշանակէր իրեն համար:

Բայց յանկարծ այս ամբողջը գլխիվայր շրջած էր, եւ յառաջացած այս տարիքին սկսած էր ինքզինք հարցաքննել եւ բացատրութիւններ պահանջել: Նպատակ մը փնտռել, այո՛, իմաստ՝ կեանքի մէջ, արդարացում: Ամիսներու ընթացքին դարձած էր յոռետես, դիւրագրգիռ եւ ջղային: Այս անակնկալ յեղաշրջումին բուն պատճառը դիտնալով հանդերձ, ոչ ոքի արտայայտուած էր այս մասին, ոչ իսկ կողակիցին, որու ուշադրութենէն չէր վրիպեր, բնականաբար, իր հոգեփոխութիւնը:

— Հրա՞ջք է, ինչ է, — կ'ընէր դիմաւորեց զինք դրան շեմին, ըստ իր հինաւուրց սովորութեան:

— Ի՞նչ հրա՞ջք, — չկրցաւ հասկնալ, թէ Նոյեմի ինչի կ'ակնարկէր:

- Տրամադրութիւնդ լաւ է այսօր:
- Դեռ բերանս չբացի:
- Քեզ նոր չէ որ պիտի ճանչնամ:
- Բարեբախտաբար, — Արամ Սարգիսեան ժպտեցաւ դոհունակութեամբ եւ յառաջացաւ դէպի հիւրասրահ: Տատամսեցաւ պահ մը, բայց յետոյ որոշեց նստիլ եւ շարունակել այս անակնկալ խօսակցութիւնը: Երբեմն ինքն ալ փորձութեան կը մատնուէր ու կը

չաղակրատէր, կամայ թէ ակամայ, մանաւանդ երբ զինք հետաքրքրող նորութիւններ ունենար կամ լսէր:

— Ծափէն հոս է, — ըսաւ կինը. — պղտիկներն ալ: Նորայրը զիչերը պիտի դայ առնէ զիրենք:

Ծափէ իր անդրանիկ զաւակն էր, մեծ աղջիկը, իսկ Նորայրը՝ անոր ամուսինը: Խելացի, լուրջ եւ աշխատասէր երիտասարդ մը, որ տարիներու ընթացքին այրիացած մօրն ու քոյրերուն ապրուստը հոգալով հանդերձ, յաջողած էր համալսարանական ուսումը աւարտել եւ ճարտարապետական վկայական ստանալ: Անոնց ամուսնութիւնը ինք ծրարած էր, ընտրութիւնը կատարած՝ երբ ծանօթներէ իմացած էր Նորայրի մասին, եւ գործնականօրէն՝ տղուն ձեռքը խնդրած իր աղջկան համար: Չէր սխալած: Տիպար եւ համերաշխ ընտանիք մը կազմած էին, եւ ինք՝ բաւարարուած էր անշուշտ:

— Աւելի լաւ, — խօսեցաւ անզգալարար. — տունը կենդանութեան պէտք ունի:

Նոյեմի նախընտրեց չանդրադառնալ ամուսնոյն ակնարկութեան, բայց հարկ զգաց, անոր յուսախարութիւնը կանխելու համար, բացատրել:

— Երեխաները քնացած են:

— Գիտցիր ո՞վ հանդիպեցաւ ինձի այսօր, — ու մինչ կինը հարցական կը նայէր իրեն, ինք շարունակեց. — Ժագը:

— Ժագը ո՞վ է:

— Մեր խենթը, որ Հայաստան ներգաղթեց:

— Հոս ի՞նչ գործ ունի:

— Վերջնականօրէն վերադարձած է:

— Այդ տղուն գործերուն խելքս չէ հասած երբեք: Է՞հ, ի՞նչ կը պատմէ:

— Հայաստանի մասին չխօսեցաւ, չուզեց արտայայտուիլ նոյնիսկ: Տարօրինակ երիտասարդ մըն է... բայց լուրջ, սքանչելի տղայ է:

— Այդ գեղգեկը, — հեղնական բայց բարի ժպիտ մը երեւցաւ կնկան դէմքին վրայ:

— Ատիկա ամբողջ դերսանութիւն է: Խորքին մէջ շատ լուրջ տղայ է, զօրաւոր անհատականութեան տէր:

— Ատոր համար՞ ըրածը չի գիտեր: Կը կասկածիմ որ կեանքին մէջ կարենայ բան մը ընել, տեղ մը հասնիլ:

— Մենք տեղ հասանք ի՞նչ ըրինք, — Արամ ակամայ արտայայտուեցաւ, մատնելով իր ներքին խոռվքը. — ատիկա ի՞նչ կապ ու-

նի: Եթէ կեանքի մէջ չյաջողիս, լուրջ մարդ չե՞ս ըլլար: Յաջողութիւնը ի՞նչ է վերջին հաշուով, կրնա՞ս ինձի բռնել: Անպայման պէտք է հարստանա՞ս, դրամ՞ դիզես, որ յաջողած ըլլաս: Իմ հարստութիւնս ինչ արժէք ունի այսօր, ի՞նչ կը փաստէ, ի՞նչ կը լուծէ: Որո՞ւ օգտակար կ'ըլլայ:

— Ընտանիքիդ, զաւակներուդ:

— Բերանս բանալ մի տար, Նոյեմի, Աստուածդ սիրես: Ձաւակ: Ասանկ զաւակ չունենայի, շատ աւելի բախտաւոր պիտի նկատէի ինքզինքս:

— Ձաւակներդ ի՞նչ ունին, — կինը բնականաբար պաշտպանեց զաւակները, զիտնաալով հանդերձ ամուսնոյն դժգոհութեան պատճառները:

— Դուն ինձմէ աւելի լաւ գիտես, եւ տակաւին կը պաշտպանես զիրենք: Մէկը միւսէն աւելի ապուշ, յիմար: Քու այս վերաբերմունքդ չըլլար, այս վիճակին չհասնէին թերեւս:

— Նորէն սկսար: Նախընտրելի է որ չխօսինք այս մասին: Բացառաբար լաւ տրամադրութեամբ եկար այսօր, եւ...:

— Իրաւունք ունիս, — ամուսինը մեղմացաւ յանկարծ ու խանդադատանքով նայեցաւ կնկան, որ վերջին տարիներուն իրեն չափ եւ թերեւս ալ աւելի տառապած էր, ու յոգնած: — Քիչ մըն ալ մենք անձնասէր ըլլանք, եւ մենք մեր մասին մտածենք, մեր հանդիստին, վախելքին:

Լոտթիւնը իշխեց յետոյ երկար պահ մը, եւ առանձնութեան աստոր զգացումը թեւածեց դարձեալ հսկայ հիւրասրահին մէջ: Տան ճոխութիւնը, որ ապահովութիւն ներշնչած էր իրեն անցեալին, կը ճնշէր հիմա սա ալապէս ինքնափստահ եւ ինքնագոհ վաճառականին վրայ ու կ'ընկճէր զինք: Այս յարկին տակ ի՞նչ մարդիկ հիւրասրած էր, ինչ ցուցադրութիւններ կազմակերպած: Իր հարստութեան ցուցադրութիւնը: Որ դիրք եւ հանդամանք տուած էր իրեն եւ հաստատած իր դերադասութիւնը: Մինչդեռ հիմա պարտուած կը զգար, եւ առաջին անգամ ըլլալով թերեւս կ'անդրադառնար, թէ վատնում էր այս ամբողջը — ունայն եւ անարժէք ցուցամոլութիւն: Մտային եւ հոգեկան սնանկութիւն: Փաստ որ ապարանքի նմանող իր այս տան մէջ կեանք չկար, կենդանութիւն չկար. ոչ բարեկամ, ոչ ազգական, հարազատ՝ ոչինչ: Եւ առանձին էր, նուաստացուցիչ կերպով առանձին, նոյնիսկ իր կնկան ներկայութեան: Ան ունէր իր աշխարհը, իր կնոջական զարմանալի հաճոյքները, իր ցուցամոլութիւնը, փառասիրութիւնը: Եւ ինք տեղ չունէր այդ աշխարհին մէջ. օտար մըն էր,

անծանօթ մը, խանազարող ներկայութիւն մը՝ պարզ այն պատճառով որ միջոց մը եղած էր անոր համար: Իր կեանքը, յաղթանակը ա՛յս էր ներկայիս:

Հող չէ թէ նոյնմի հպարտանար իրմով, պարծենար եւ դովքը հիւսէր՝ ծանօթին եւ անծանօթին: Սքանչելի կին եղած էր. առաւել եւս սքանչելի՝ որպէս մայր ու տանտիկին: Եւ եղած էր դեղեցիկ, ճաշակաւոր ու ներկայանալի կին մը, որ խօսել տուած էր իր մասին: Այսօր իսկ, յիսուն տարեկանին, եւ երեսուն տարուան ամուսնական կենակցութենէ ետք, կը պահէր թարմութիւնը՝ դրաւիչ եւ ցանկայարոյց ըլլալու աստիճան: Բայց եւ այնպէս բոլոր կիներուն պէս ունէր իր արտակարգ յիմարութիւնները:

— Ծաքէն ո՞ւր է, — խօսեցաւ յետոյ:

— Պղտիկներուն սենեակը: Հիմա ուր որ է, կու գայ:

Պղտիկներուն սենեակը: Տարիներ դատարկ եւ անգործածելի մնալէ ետք, վերստին նպատակի մը կը ծառայէր: Հաճոյքով կը մտնէր հոն դարձեալ, երբ թոռները իրենց տունը ըլլային, ու վը վայելէր անոնց ստեղծած մանկական աշխարհը: Ինք ալ կը մանկանար, կը փոխուէր, բայց կը տխրէր նաեւ:

Ծաքէին հետ Սալբին ալ ներս մտաւ քիչ ետք, եւ իրենց հետ՝ աղմուկն ու ծիծաղը: Հասկառակ իրենց խառնուածքներուն բացայտ տարրերութեան, մանկութենէն ի վեր մօտ եղած էին իրարու, եւ Ծաքէի ամուսնութենէն ետք նոյնիսկ պահպանած էին իրենց մըտերմութիւնը: Սալբին, որ քսանհինգ տարեկան էր արդէն, ծնած էր քրոջմէն երեք տարի ետք, բայց վաղ տարիքէն իսկ առաւելի համարձակ եղած էր եւ ինքանիստահ: Իշխող տարրը ինք եղած էր միշտ, ու կազմակերպած էր եւ առաջնորդած բոլոր խաղերն ու չարութիւնները: Ասկէ հինգ տարի առաջ, երբ որոշած էին ամուսնացնել քոյրը, միակ ընդդիմացողը ինք եղած էր, հակառակ անոր որ իր կարծիքը ուղող չէր եղած: Փորձած էր խանգարել նոյնիսկ, եւ մասամբ ալ յաջողած, նկատելով որ քրոջը վրայ անհամեմատօրէն շատ աւելի ազդեցութիւն ունէր քան ուրիշ ոեւէ անձ: Գլխաւոր առարկութիւնը այն էր թէ աղջիկ մը քսաներեք տարեկանին ամուսնանալու պատրաստ չի կրնար ըլլալ, մանաւանդ Ծաքէն, որ անփորձ էր եւ կեանքէն պիտապար՝ իր բացատրութեամբ:

— Դուն ե՞րբ եկար, — մայրերնին խօսքը ուղղեց կրտսեր աղջրկան:

— Հօրս գալէն քիչ առաջ: Չզղացի՞ր:

Արամ Սարգիսեան հաճոյքով, նոյնիսկ որոշ հպարտութեամբ,

հետեւեցաւ դուստրերուն զուարթ եւ կենդանի խօսակցութեան, թէեւ ներքուստ դառնացած էր եւ վիրաւոր: Երկուքն ալ ունէին իրենց մօր կազմն ու դեղեցիկութիւնը, եւ առաւել եւս՝ օժտուած էին համալսարանական կրթութեան ընծայած իմացական պաշարով: Երէցը, որ մտահոգութիւն չէր պատճառած երբեւիցէ, այնուամենայնիւ փրկուած կը համարէր: Սալբիի անկախութիւնը, սակայն, կը վախցընէր զինք: Ոչ թէ կը մտահոգէր, այլ կը վախցնէր: Բարեբախտաբար, թէեւ, եղբօրը նման ծայրայեղութեան չէր դիմած:

— Եղբայրդ ո՞ւր է նորէն այս օրերուն, — հարցումը ուղղեց կրտսեր աղջկան:

— Ո՞վ գիտէ: Տեղ մը camping-ի դացած պէտք է ըլլան դարձեալ:

— Չե՞ն զգուիր: Տարին անգամ մը, երկու անգամ՝ կը հասկընամ: Բայց տարին տասներկու ամիս... Ի՞նչ կ'ընեն հոն:

— Իրենց կեանքն է: Այդպէս կ'ապրին, եւ ասկէ հաճոյք կ'առնեն կ'երեւի:

— Հա՛, բայց ի՞նչ կ'ընեն հոն:

— Ուրիշներ իրենց տուներուն մէջ ի՞նչ կ'ընեն:

— Իրենց տո՞ւնն է ըսել կ'ուզես...:

— Իրենց կեանքը, — ընդմիջեց Սալբի: — Անոնք ալ կը նախընտրեն այդպէս ապրիլ:

— Մենք գէթ կ'աշխատինք նաեւ: Մեր տուներուն մէջ կ'ապրինք, այո՛, բայց գո՞րծ, պատասխանատուութի՞ւն. մեր ապրուստը մենք կը շահահինք: Ինչպէ՞ս պիտի ըլլար, եթէ մարդիկ իրենց տուներէն դուրս չգային երբեք. ինչպէ՞ս պիտի ապրէին: Աստուած վերէն պիտի իջեցնէր պէտք եղածը:

— Իրենք ալ կ'աշխատին: Իրենք իրենց կերակուրը կ'եփեն, փայտ կը կրեն, ի՞նչ գիտնամ...:

— Ատիկա մենք ալ կ'ընենք մեր տուներուն մէջ: Դրամը ո՞վ կը շահի սակայն:

— Դրամը զիրենք չի հետաքրքրեր:

— Կերակուրը ուրկէ՞ կը բերեն: Դրամը միջոց է միայն: Ինքն իր մէջ արժէք չունի:

— Չեմ գիտեր: Ինծի ինչո՞ւ կը հարցնես: Ես իրենց ներկայացուցի՞չն եմ:

— Փոքր եղբայրդ է, եւ քեզի բաւական մօտ: Եթէ ուզես, կըրնաս վրան ազդել, խօսք հասկցնել իրեն:

— Պա՛պ, դուն ալ գիտես, թէ մարդ չի կրնար զինք փոխել

ներկայիս : Ժամանակը ամէն ինչ կը լուծէ :

— Այո՛, զինք վերջնականապէս փճացնելով :

— Ձեմ կարծեր : Սորքին մէջ շատ լաւ տղայ է : Ազնիւ, բարի, զոհարերող :

— Ծիշդ ատոր համար պէտք է մտահոգուի՞նք : Ձինք կը խաբեն, կը շահագործեն, եւ վերջը շատ ուշ կ'ըլլայ : Ժամանակը իրեն դէմ կը դործէ : Տարիները կ'անցնին, եւ ինք բան մը ըրած չունի՝ բացի ինքզինք եւ մեզ խայտառակելէն : Ուսումը չչարունակեց, բայց մինչ այդ չուզեց աշխատիլ նաեւ . արհեստ մը, դործ մը չսորվեցաւ, բայց եւ այնպէս սկսաւ ինքզինք դերադաս նկատել : Երջապատը չըհանիլ . խղճալ բոլոր անանց, որոնք մարդու պէս կ'աշխատին, կը յոգնին եւ կը փորձեն բան մը իրագործել կեանքի մէջ : Այնքան մը որ սկսաւ զիս խրատել, շան քարոզ կարգալ ինծի . եւ ամէնալ որ ինծի պէս զգուշիւ հայր մը ունի :

— Ծիշդ չէ : Քեզ կը սիրէ, ու միշտ ալ պաշտպանած է քեզ, գիտե՛մ . բայց կեանքի իր ըմբռնումը տարբեր է քուկինէդ : Ըստ իրեն զուն կեանքը վատնած ես՝ միայն դրամ շահելով :

— Ես ալ սկսած եմ համոզուիլ, այո՛, որ կեանքս ամբողջ փճացուցած եմ ձեր մասին մտածելով, միայն ձեր հանդիստը, ձեր ապագան խորհելով : Այս ամբողջը որո՞ւ համար է : Ես շատ-շատ տասը կամ տասնհինգ տարի եւս ունիմ ապրելիք, եւ վերջ : Արժանապատուութիւն ունենալ, պատասխանատուութեան գիտակցութիւն ունենալ եւ դաւակներու դ մարդավայել կեանք մը ապահովելը՝ ձեր աւետարանին մէջ մեծագոյն մեղքն է եզեր : Բայց եւ այնպէս, երբ ժամանակը գայ, այս ամբողջը կը մսխէք, որովհետեւ ձեզի կը պատկանի, գիտե՛ք : Այդ կողմէն ապահով էք եւ մտահոգուելու պատճառ չունիք : Սակայն մինչ այդ կրնաք խօսիլ, նետել-բռնել, մարդ չհանիլ՝ եւ ամէն կարգի սրբութիւն ոտնակոխել : Սօսիլը դիւրին է, մանաւանդ երբ վստահ ես, թէ ապագադ ապահովուած է եւ քեզմէ ոչ մէկ ճիգ կամ զոհողութիւն կ'ակնկալուի : Կրնաք քննադատել, դատապարտել . . . :

— Ձիս ասոր մէջ մի խառներ, — բողոքեց Սայրի արդարացի կերպով . — գիտես, թէ իմ պարագայիս ճիշդ չէ ըսածդ :

— Ելի՛ր պնակները բեր եւ սեղանը պատրաստէ, — մայրը խօսեցաւ դժգոհութեամբ, — փոխանակ հօրդ հետ վիճելու : Ժամը ութը եղաւ :

— Ձգէ որ խօսի, — ըսաւ հայրը . — ինչու արդեւ կ'ըլլաս :

— Նախ ո՞վ ըսաւ որ կը վիճինք :

— Լա՛ւ, Լա՛ւ, ելի՛ր հիմա, — կրկնեց մայրը :

*

**

Վերջին շրջանին հայրը փոխուած էր : Թէեւ կը շարունակէր կատակել իր հետ ու կարծիքը առնել յաճախ որոշ հարցերու մասին, ինք գիտէր սակայն, թէ նախկին վերաբերմունքը չունէր իրեն հանդէպ : Դարձած էր դիւրագրգիւր եւ ջղային, մինչ օր ըստ օրէ ժպտալ կ'անհետանար դէմքէն : Ընդհանրապէս անտրամադիր, սկսած էր կեանքէն դժգոհիլ նոյնիսկ եւ տրանջալ : Եւ այս, նկատի ունենալով մանաւանդ հօրը բնական լաւատեսութիւնը, յատկանշական փոփոխութիւն էր : Մտահոգիչ, բայց նաեւ հետաքրքրական : Եթէ իր հայրը չըլլար, փորձուէր թերեւս սերտողութեան նիւթ դարձնել զինք՝ երեւոյթը քննելով ընկերային վերելայրուժներու լուսարձակին մէջ : Գաղափարը անհանգստացուց զինք : Ի վերջոյ հայրն էր, եւ՝ արտակարգօրէն ուշիմ, տրամաբանող եւ փորձառու մարդ մը, որ զօրաւոր անհատականութեան տէր եղած էր միշտ : Երէց եւ կրտսեր սերունդներու միջեւ բախումը անխուսափելի ըլլալով հանդերձ, հօրը ազիտութիւն կամ անհանդուրժողութիւն չէր կրնար վերագրել : Հակառակ համալսարանական ուսում չունենալուն, դարգացած ու լայնախոհ մարդ էր, եւ կըցած էր ժամանակի պարտադրած փոփոխութիւններուն հետ քայլ պահել՝ շրջապատը զարմացնելով անշուշտ :

Հայրը ինք քաջալիրած էր զիրենք, օրինակի համար, որ տունէն ներս փակուած շմնային, եւ դրեթէ պարտադրած իրենց որ ուսանողական եւ այլ միութիւններու անդամակցէին : Ընկերներով երբ տուն եկած էին, շատ աւելի դոհ մնացած էր, եւ հաճոյքով հետեւած իրենց երիտասարդական խանդավառութեան : Ազատամիտ մարդ էր պարզօրէն — պարզ, բնական, իրատես եւ ինքնավստահ : Իսկ իրեն նկատմամբ մասնաւոր տկարութիւն մը ունեցած էր միշտ եւ հանդուրժած իր բոլոր անկարգութիւններուն : Նոյնիսկ երբ եղբօրը Մուշեղին յիմարութիւնները սկսած էին զինք մտահոգել եւ աւելի պահպանողական դարձնել : Ամիսներէ ի վեր, սակայն, ըմբոստացած էր եւ ճիշդ դառնացած երեխայի մը նման, կը մերժէր խօսիլ կամ կատակել : Մանաւանդ՝ էտկարին եւ իր միջեւ սերտացող կապը նկատելէն ետք : Բառ իսկ չէր արտայայտած այս մասսին, բայց ինք վըստահ էր, թէ գլխաւոր պատճառը այս էր : Էտկարին հանդէպ իր ըզգացածը : Սէրը : Որ կը զարմացնէր զինք քանշուշտ, ու կը բարդա-

ցընէր իր կեանքը: Անցեալին երբ կարգ մը այլ երիտասարդներու հետ մտերմացած էր, հայրը չէր առարկած երբեք, չէր խնդ անդրադարձած:

Այս անդամուանը իրաւ սէր էր սակայն եւ հայրը, ըստ երեւոյթին, ենթադրեալացարար կը զգար ատիկա: Բայց ինչո՞ւ պէտք է հակադրուէր: Ազատամտութեան սահմանը ա՞յս էր: Անկեղծ սէ՞րը: Ուրեմն սիրելը միայն ընդունելի չէր, հանդուրժելի չէր. կարելի էր վայելել, հազար ու մէկ տղայ խաղցնել եւ չմեղադրուիլ երբեք: Բայց իսկապէս սիրել — արտօնուած չէր: Իրեն համար այս ամբողջը նշանակութիւն չունէր անշուշտ, այնքան ատեն որ ինքզինք կը ճանչնար եւ զգացածը ինք գիտէր: Բայց հայրը չէր կրնար վերաւորել, չէր ուզեր: Որովհետեւ ոչ միայն կը սիրէր զայն, այլ նաեւ կը յարգէր: Հօրը զաւակը ըլլալ, այսինքն Արամ Սարգիսեանի աղջիկը, բախտաւորութիւն էր. եւ ինք ունէր ասոր գիտակցութիւնը, եւ բախտաւոր կը համարէր ինքզինք ու պատիւ կը զգար: Յարգուած մարդ էր ու բացառիկ վարկ կը վայելէր ամէնուրեք, թէ հայկական եւ թէ օտար շրջանակներու մօտ: Կաթողիկոսը զինք աւելի կը մեծարէր, քան ինք՝ Կաթողիկոսը: Նոյնն էր պարագան բազմաթիւ այլ ազգային եւ պետական գէմքերու, որոնք կը զիմէին իրեն յաճախ, երբ պէտք ունենային իր խորհուրդին կամ օժանդակութեան:

Սենեակին մէջ փակուած դասերը կը պատրաստէր — եթէ կարենար անշուշտ: Ժամը տասը անցած էր արդէն եւ այս մէկ ժամուան ընթացքին զրեթէ ոչինչ կրցած էր վերջացնել: Ոչ իսկ մէկ պարտականութիւն: Դասերը պատրուակելով սենեակ քաշուած էր, որովհետեւ մթնոլորտը անշնչելի սկսած էր դառնալ իրեն համար, թէեւ պիտի ուզէր Ծաքէին հետ շաղակրատել տակաւին: Ինչե՞ր ունէր անոր պատմելիք: Միակ անձը, որու հետ կրնար խօսիլ, Ծաքէն էր: Մայրը նոյնիսկ անհաղորդ, անմատչելի դարձած էր իրեն համար, եւ չէր կրնար վստահիլ անոր: Մնողքը հակառակորդ ճակատը կը ներկայացընէին այլեւ: Ժպտեցաւ կամ զարմացաւ ու փորձեց կեղերոնանալ եւ կարդացածը հասկնալ: Վերջին տարին էր, եւ շատ աւելի լուրջ եւ ծրարագրուած կերպով պէտք էր աշխատէր, որպէսզի արժանանար Մագիստրոս տիտղոսին: Մինչ այդ, թէեւ, թեզին կամաքը նոյնիսկ չէր կրցած պատրաստել տակաւին: Իսկ թեզը զրելը ամենէն դժուար մասն էր: Հեղինակ պիտի ըլլար, գիրք պիտի գրէր. ոչ թէ պատահական որեւէ գիրք, այլ գիտական ուսումնասիրութիւն: Աւելորդ ժամավաճառութիւն էր: Իր կատարելիք ուսումնասիրութիւնը ոչ հիմք պիտի ունենար եւ ոչ մեկնակէտ. նոր միտք կամ տեսութիւն չունէր արտա-

յայտելիք, այլ մինչեւ այսօր սորվածը — ինչ սորված էր՝ ինք ալ չէր գիտեր — պիտի փորձէր նախասահմանուած կաղապարի մը մէջ ներկայացնել իր դասախօսներուն: Որոնք բոլոր նոյնպէս թեզեր գրած էին ժամանակին, համապատասխան վկայական ստացած, եւ այսօր նոյնը ընել կու տային ուրիշներուն: Պիտի նախընտրէր ծիծաղելի այս զուեշտին մասին գրել, քննել, ուսումնասիրել ու մերկացընել արդէն իսկ մերկ ու խղճալի իրականութիւնը: Փաստել, թէ կեղծիք էր այս ամբողջը, ժամավաճառութիւն, վատնում, եւ վերջապէս՝ նահանջ: Ոչ իրենք, եւ ոչ ալ իրենց դասախօսները սեփական կարծիք ունէին. մտաւորականներ չէին պարզօրէն: Ուղի մըն է որ կը խաղային՝ իրենց մէջ յաւակնութիւններ զարգացնելու համար: Կամ թերեւս՝ իրենք իրենց համար վարկ ու գիրք կ'ապահովէին՝ իրենք զիրենք եւ ներկայ ընկերութիւնը խաբելով: Այս մասին կ'արժէր զըրել: Նորութիւն կ'ըլլար: Յանկարծ հեռաձայնին ընկալուչը վերցուց եւ սկսաւ մեքենականօրէն թիւեր գարձնել:

- Էտկար, դո՞ւն ես, — անդէրէն խօսեցաւ:
- Այո՞:
- Ի՞նչ կ'ընես:
- Կը սերտեմ, — տղան եւս անդէրէն խօսեցաւ: — Այս տարին վերջանար: Յոգնեցայ այլեւս, զգուեցայ:
- Ես չկրցայ աշխատիլ, եւ կ'երեւի պիտի չկարենամ:
- Ինչո՞ւ:
- Ձե՞ս գիտեր: Նոյն պատմութիւնն է: Դուն ինչպէ՞ս կրնաս կեղերոնանալ:
- Այդ մասին չեմ մտածեր:
- Եւ կ'աշխատիս, — Սալբի դժգոհութիւն արտայայտեց: — Իրաւունք չունիս:
- Ծատ ազնիւ ես, — Էտկար բարձրաձայն խնդաց: — Ինչո՞ւ: Ձե՞ս ուզեր որ յաջողիմ:
- Բայց ինչպէ՞ս կրնաս աշխատիլ, երբ ես չեմ կրնար:
- Դուն սերտելու պէտք չունիս: Հանճար ես:
- Հանճարը դուն ես, որ զգացում չունիս: Հանճարեղ մարդիկ միայն իրենց կամքին կ'իշխեն եւ զգացումներէ չեն տարուիր:
- Եթէ կ'ուզես, չեմ աշխատիր, — կատակեց Էտկար:
- Կ'ուզեմ դուրս ելլել:
- Ելլենք: Հիմա՞:
- Բայց չեմ կրնար. — Սալբի բարձրաձայն մտածեց յետոյ:
- Ձեմ գիտեր, չեմ կրնար:

— Ինչպէս որ կ'ուզես : Ինչո՞ւ :

— Քոյրս հոս է, երեխաներուն հետ : Ամուսինը, հայրս, մայրըս : Ով դիտէ ինչ կը մտածեն :

Ձարմանալի ազջիկ է, մամտաց էտկար ընկալուչը տեղը զնելէ ետք : Փորձանք : Սիրելի փորձանք մը : Որպէս հայ ազջիկ արտակարգ երեւոյթ էր : Անկախ, բարոստ եւ այդ իսկ առումով՝ չափազանցօրէն զբաւիչ : Գեղեցկութենէն աւելի իր այս զբաւելութիւնն էր որ համարած էր զինք : Եւ ընտանաբար՝ սիրահարած : Սալբի անտարբեր չէր մնացած իր զգացումներուն նկատմամբ, եւ իրեն յատուկ եղանակով մը փոխադարձած էր սէրը : Ոչ մէկ խոստում կամ խոստովանութիւն. բայց իր ձեւով զգացուցած էր իրեն, թէ կը սիրէր զինք : Կը սիրէ՞ր : Ինք այդպէս համոզուած էր դէթ : Թէեւ բռտեր կամ նախադասութիւններ չէր գործածած ան սէրը արտայայտելու համար, այլ միայն վիճած էր հետը : Չնաչխարհիկ զաղափարներ արտայայտած էր, կատակած էր եւ ուրախացած : Եւ ինք ժամանակի ընթացքին սորված էր այս լեզուն եւ բաւարարուած՝ իրեն ընծայուած նուազագոյնով, եւ երջանիկ նկատած էր ինքզինք : Ներդաշնակ եւ համեմատելի սէր մըն էր : Բայց նաեւ տարօրինակ : Ձրացական զեղումներ չէին ունեցած, անքուն գիշերներ չէին անցուցած, եւ զազտագոյի հանդիպումներ չէին ծրագրած : Ուրախ, քաջ եւ աշխարհին բացուած սէր մըն էր պարզօրէն : Եւ հետեւաբար՝ առողջ :

Երբեմն ինք եւս չէր կրնար հաւատալ, թէ այսքան երջանիկ ու բախտաւոր կրնար ըլլալ : Ու կը վախնար, կը մտահոգուէր : Սալբի ընտանեկան շրջանակը իրեն համար բոլորովին անձանօթ աշխարհ մըն էր ուր օտար եւ առանձին կը զգար միշտ : Հարստութիւնը, ճոխութիւնը, խօսուած լեզուն, ու մանաւանդ Պր. Սարգիսեանի վերաբերմունքը իրեն հանդէպ՝ կ'անհանդուատացնէին զինք :

*
**

— Սալբի՛, — Մուշեղի ձայնը լսեց, հաղիւ աչքերը փակած : Կը փորձէր զինք արթնցնել, թէեւ սենեակը կը մնար խաւարի մէջ :

— Հոս ինչ գործ ունիս այս ժամուն, — հարցուց, առանց տեղէն շարժելու :

— Սը՛ս : Տնեցիները արթնցնելու պէտք չունիս : Մարդ չի գիտեր որ հոս եմ :

— Եթէ քեզ գող կարծէի... ինչո՞ւ գող-գող սենեակս կը մըտնես գիշեր ատեն :

— Ուրիշ միջոց չկար :

— Սա լոյսը վառէ : Ո՛չ, աթոռին վրայէն գիշերազգեստս տուր նախ :

— Լոյսը վառելու պէտք չկայ, — Մուշեղ մութին մէջ փնտոեց եւ դտաւ գիշերազգեստը : — Ուշադրութիւն կը զբաւէ :

— Խենթացե՞ր ես, ինչ է : Տան մէջ տեսնուելէ կը վախնա՞ս : Գաղտնիքներ չկան այս տան մէջ :

— Ո՛չ : Պիտի երթամ : Բեզմէ խնդրանք մը ունիմ միայն :

— Ժամը քանի՞ է :

— Տասներկու ժամ կ'անցնի :

— Լա՛ւ, լոյսը վառէ, — քրոջը ձայնը անհամբերութիւն մատնեց :

— Պէտք չկայ :

— Դէմքդ կ'ուզեմ տեսնել : Նայիմ ինչի կը նմանիս այս օրերուն : Գիտես, թէ այս տեսակ յիմարութիւններ չեմ սիրեր : Կ'ուզես հետս խօսիլ, լաւ, բայց զաղտնի պահելու պէտք չունինք :

— Ժամանակ չունիմ : Պիտի երթամ :

— Գնա՛ ուրեմն : Քանի այնքան կարեւոր գործ ունիս : Ինչ եկեր հոս ժամանակ կը կորսնցնես :

— Դրամի պէտք ունիմ :

— Ես ալ պէտք ունիմ, — Սալբի արագ ստուժ մը կատարեց, եւ ակնթարթի մը մէջ սենեակը ողողուեցաւ լոյսով :

— Ինչ պիտի ըլլայ, երբ այսպիսի պարթուա, փճացած կեանք մը ապրիս :

— Գոնէ ինքզինքս չեմ խարեր : Վիճակիդ նայէ՛. ճիշդ հերկելի կը նմանիս : Հայելիին մէջ դուն քեզ չե՞ս գիտեր երբեմն :

— Արտաքինը անձը չի ներկայացնէր : Փճացած մարդու մոլորութիւն. հազուստ-կապուստ, արդու-զարդ : Ես ինձի չեմ սիրահարուած, — խօսեցաւ Մուշեղ, ու պահ մը տատամսելէ ետք, աւելցուց. — քեզի պէս :

— Բեզի պէս աղուոր տղայ մը, — քոյրը կարեւորութիւն իսկ չընծայեց ըսածին : — Մեղք չէ՞ : Այս մաղը, մօրուքը, աղտոտութիւնը, ցնցոտիները : Դուն քեզմէ չե՞ս քանի :

— Միայն մարդիկ, որոնք ծածկելիք բան մը ունին, կը ծպտուին, եւ իրենց արտաքին երեւոյթը կը փոխեն :

— Ա՛խ, իմ հերոս աղբարիկս, — անկեղծ խանդաղատանքով ծպտեցաւ Սալբի, — քաջութիւն կը պահանջէ ըրածդ, դիտեմ : Բայց չե՞ս անդրադառնար որ այս արտաքինով դուն ծպտուած ես արդէն :

Հարց է, թէ ի՞նչ կը փորձես ծածկել: Քեզի պէս երիտասարդ մը ծածկելիք ի՞նչ կրնայ ունենալ: Ինչէ՞ որ կ'ամ չնաս. երիտասարդութենէ՞ որ, խելքէ՞ որ, թէ առողջութենէն:

— Մեր կեանքէն: Այս մտխուժէն, շոտալուծութենէն:

— Ճակտի քրտինքով շահուած դրամ է: Հայրդ ամբողջ կեանքը աշխատած է, փոխանակ ուրիշներուն վստահելու կամ ուրիշներուն վրայ բեռ ըլլալու:

— Ըսել կ'ուզես թէ ես բեռ եմ, — ըմբռնեց կրտսեր եղբայրը, անկարող ինքզինք զսպելու:

— Եթէ համաձայն չես իր ըրածին, կենցաղին, կեանքի ըմբռնումին, կամ ինչ որ է՝ սա քեզ անհանդուատացնողը, պէտք ունի՞ս դուն քեզ եւ զինք խայտառակելու, վարկաբեկելու:

— Դո՞ւն ալ... ճիշդ իրենց պէս մտածելու սկսած ես:

— Համաձայն չես՝ բողոքէ՛, ընդդիմացի՛ր: Տեսակէտ արտայայտէ եւ ծրարիր ներկայացուր: Հայրդ խելացի եւ իմաստուն մարդ է, եւ վստահ եղիր որ մտիկ կ'ընէ, նկատի կ'ունենայ: Համոզէ՛ զինք:

— Յամառ մարդ է, — պաշտպանողականի անցաւ Մուշեղ:

— Փորձեցի՞ր: Եւ յամենայն դէպս իր կեանքն է, իր մտայնութիւնը, կեանքի ըմբռնումը, հարստութիւնը: Դուն պիտի ուզէ՞՞ր որ իր կամքը քեզի պարտադրէ. պարտադրած է: Բայց նախ փորձէ խօսիլ հետը, համոզէ:

— Անիմաստ է: Յամառ է ըսի:

— Յամառը դուն ես: Եւ ոչ միայն յամառ, այլ նաեւ յիմար: Այնքան մը, որ ըմբոստութիւնն ու աղտոտութիւնը իրարու հետ կը շփոթեն: Ըմբոստանալու համար պէտք է անպայման աղտո՞տ ըլլաս: Թէ ոչ այս ալ համոզումի եւ ըմբռնումի հարց է... կեանքի վարդապետութիւն մը, որ աղտոտ ըլլալ կը քարոզէ, այսինքն՝ մարմինը փճացընել: Ձե՞ս խորհիր որ կարելի է մաքուր ըլլալ եւ սեփական տեսակէտ ունենալ: Եւ կամ պէտք է ընդունինք որ բոլոր ձեզի պէս մտածողները աղտոտ են:

— Հեզնանքը տկարութեան փաստ է, — հանդարտօրէն դիտել տուաւ ըմբոստը:

— Կը նկատեմ որ խօսքի վարպետ դարձած ես նաեւ: Հետաքրքրական է: Գէթ բան մը սորված ես: Իրականութիւնները քանի մը բառով խեղաթիւրելը դիւրին դործ չէ, պէտք է ընդունիլ: Բայց եթէ կը կարծես որ բառախաղ ընելով, խուսափողական ակնարկութիւններով հարց մը կը լուծես, կը սխալիս: Իրականութենէն բան չի փոխուիր: Դուն քեզ կը խաբես միայն... որ կը նշանակէ, թէ դուն քեզ

խաբելու պէտք ունիս, պահանջը կը զգաս:

— Այս շան քարոզը մտիկ ընելու ստիպուած չեմ:

— Ստիպող չկայ: Քեզի ո՞վ ստիպեց որ դիշեր ատեն այցելես ինծի: Ես ստիպուած եմ դիշեր ատեն խանգարուելու, նազը քաշելու. բայց դուն... Օ՛, պարոնը ստիպուած չէ:

— Ի՞նչ պատահած է քեզի: Տան մէջ միակ անձը, որ կը հասկընար զիս, դուն էիր: Գէթ այդ տպաւորութիւնը ունէիր: Սխալած եմ եղեր:

— Որովհետեւ քեզ կը հասկնամ, — բառերը հատիկ հատիկ սկսաւ արտասանել Մալբի եւ դիշերազգեստով մտաւ անկողին, — այդ չի նշանակեր որ համաձայն եմ բոլոր ըրածներուդ: Անկախութիւնդ, մտածելու ազատութիւնդ՝ կ'ընդունիմ, կը հասկնամ. եւ չեմ վիճիր հետդ այդ մասին: Բայց ես ալ ունիմ իմ անկախութիւնս, իմ համոզումներս: Ձես ուզեր լսել, ատիկա քու գիտնալիքդ է. բայց չես կըրնար արդիւլել որ ես ալ իմ ըսելիքս ըսեմ:

— Առաջ այսպէս չէիր սակայն:

— Առաջ չէի խօսեր, այո՛, որովհետեւ չէի ուզեր քեզ վերաւորել եւ կը յուսայի որ կը փոխուիս ժամանակի ընթացքին եւ ինքզինքդ կը վերադառնես:

— Ըսել կ'ուզե՞ս, թէ կորսուած եմ, — ներդաժտարար ժպտեցաւ եղբայրը: — Կը ցաւիմ: Իսկապէս ցաւ կը պատճառէ: Մինչդեռ ես կը խորհիմ որ փրկուած եմ, ազատագրուած:

— Ինչէ՞ն ազատագրուած ես: Պատասխանատուութիւններէ՞ որ: Այսպէս անհոգ, անպատասխանատու, ծոյլ կեանք մը վարելով ազատագրուած կ'ըլլաս: Կը պարտադրես որ կրկնեմ, թէ դուն քեզ կը խաբես միայն. եւ այդ ալ՝ ծուլութիւնդ, անպատասխանատուութիւնդ արդարացնելու համար: Բայց ուրիշները չես կրնար խաբել. օրինակ՝ ծնողքդ: Գաղափար ունի՞ս, մտածա՞ծ ես երբեք, թէ որքան կը մտահոգուին քեզմով: Ազատագրութի՞ւն է ասիկա, թէ անձնասիրութիւն:

— Ինչո՞ւ պէտք է մտահոգուին: Իրենց համար բեռ մը պակաս:

— Եթէ բեռ ես, կամ դուն քեզ բեռ կը նկատես, ոչինչ կրնամ ըսել: Մտածելու քու եղանակդ է: Բայց իրենց համար բեռ չես, այլ հարազատ որդի, սիրելի դաւակ: Եւ որովհետեւ կը սիրեն քեզ՝ կը մտահոգուին: Կրնա՞ս սէրը արդիւլել, իրաւունք ունի՞ս: Իրենք քու զգացումներուդ կամ համոզումներուդ արդելք եղա՞ծ են երբեւիցէ: Այո՛, սէրը պատասխանատուութիւն կ'ենթադրէ. եւ իրենք կ'ընդունին այդ պատասխանատուութիւնը, փախուստ չեն տար քեզի պէս: Տարբերութիւնը այս է: Եւ բնականաբար եւ մտահոգուին: Իսկ դուն,

քու անձնասիրութեանդ մէջ, կը հեղնես իրենց զգացումները:

— Ծնողները միայն անձնասէր կ'ըլլան, — Մուշեղ սկսաւ բռնուն կերպով վիճիլ: — Որովհետեւ կը սիրեն քեզ, սրովհետեւ պէ՛տք է սիրեն, կ'անտեսեն գոյութիւնդ, զգացումներդ, քեզ: Դուն գոյութիւն չունիս իրենց համար, այլ միայն իրենց սէրը, կամ սիրելը, որ անձնասիրութիւն է ինքնին:

— Քեզ՝ իրենք իրենց համար չեն սիրեր: Այլ պարզօրէն կը սիրեն, որովհետեւ իրենց զաւակն ես: Բնութիւնը դուն չէ որ պիտի փոխես: Ինչ ալ ընես, իրենց զաւակն ես, եւ պիտի սիրեն քեզ: Վստահ եմ, թէ դուն ալ դիտես այսքանը, սակայն յամառութիւնդ կը պարտադրէ որ պարզ իրականութիւնները նոյնիսկ ուրանաս:

Յանկարծ բոլորովին անձանօթ մարդ մը տեսաւ դիմացը: Գիտէր, թէ եղբայրը Մուշեղն էր, բայց չէր ճանչնար զայն: Ոչ թէ այսօր, հիմա միայն, այլ միշտ չէր ճանչցած սա նիհար, խրտուիլակի վերածուած երիտասարդը, որու հետ անցուցած էր ամբողջ մանկութիւնն ու պատանութիւնը: Ինքնամփոփ, զըռչ ըռչ բայց չար տղայ մըն էր իր երբեմնի խաղընկերը, որ այս քսաներկու տարեկան ծերունին չէր: Զարմանալի է, ծերացած էր, կամ ինք ծեր կը տեսնէր զայն: Ուսերը կքած, գլխահակ, կորաքամակ ծերունի մը: Սարսափելի էր: Ինչ պատահած էր իրենց: Իր իսկ եղբայրը չէր ճանչնար, ու կը փորձէր յիշել հիմա երբեմնի երիտասարդը, որ երկու տարուան մէջ հիմնովին կերպարանափոխուած էր:

Եւ նախընտրեց լռել ուրեմն: Սիրտը չբանալ անձանօթի մը: Հաշիւ չպահանջել անկէ, եւ ոչ ալ բացատրութիւններ տալ կամ առնել: Ու խղճաց անոր: Պէտք էր օգնէր, ներսզամիտ ըլլար եւ թափանցէր անոր ներաշխարհէն ներս: Վերջին հաշուով ապուշ չէր այս տղան, եւ ոչ ալ խելագար. ընդհակառակն՝ արտակարգօրէն ուշիմ եւ կանխահաս հանելուկ մըն էր, որ զարմացուցած էր ուսուցիչներն ու շրջապատը եւ բոլորին հիացումին արժանացած: Իրմէ շատ աւելի զարգացած էր, որովհետեւ անկուշտ ընթերցող մը եղած էր, եւ վաղ տարիքին անսպաս գիտութիւն ամբարած էր այդ փոքր ուղեղին մէջ: Բայց այսօր իր օգնութեան պէտք ունէր: Ինք որքան ալ ըմբոստ եւ անկախ մտածող էր, բայց լայնախոհ էր նաեւ, եւ ուրեմն համբերութեամբ, ներողամտութեամբ պէտք է վարուէր բոլորին հետ: Իր առաւելութիւնն էր, իր զօրութիւնն էր ասիկա:

— Որքան դրամի պէտք ունիս, — հարցուց յետոյ, երբ նկատեղ որ Մուշեղ եւս լուծ էր:

— Ինչ որ կրնաս տալ: Եթէ հիմա չունիս, վաղը կամ միւս օր կարգադրէ:

— Դրամապանակիս մէջէն ուղածիդ չափ վերցուր:

— Այդքան հար՞ուստ ես:

— Դրամը քուկդ է նաեւ: Հօրդ վաստակած դրամն է, որ ինծի չի պատկանիր միայն: Ես չեմ աշխատիր, դիտես:

— Բայց այսքան դրամ, — քրոջը պայտուակը, զոր բացած էր արդէն, նետեց մահճակալին վրայ. — այս ի՞նչ շոտյութիւն է, ի՞նչ մսխում:

— Ինչո՞ւ պիտի չըլլայ: Երբ ունիս, պիտի ծախսես: Ուրիշէն չենք դողցած, որ խղճի խայթ ունենանք: Արդար վաստակով չաւած է, եւ նախընտրելի է որ դործածենք, փոխանակ վրան թուխի նստելու:

— Աղուոր պատկեր էր, — խնդաց Մուշեղ: — Համաձայն եմ. այս պարագային համաձայն եմ: Նախընտրելի է դործածել, նպատակի մը ծառայեցնել:

— Ի՞նչ պիտի ընես որ:

— Ընկեր մը ունիմ. համալսարան է, բայց մինչեւ այսօր դասադիրքերը չէ կրցած գնել տակաւին:

— Կը ճանչնա՞մ:

— Անշուշտ, բայց գիտնալու պէտք չունիս: Նախկին դասընկերներէս մէկն է:

— Դուն ուսումդ ինչո՞ւ չես շարունակեր:

— Աւելորդ ժամավաճառութիւն է:

— Թերեւս: Կրնաս արտասահման, Եւրոպա կամ Ամերիկա ուսանիլ: Քեզ դոհացնող համալսարան մը կրնաս գտնել:

— Ինչ ուսանելու համար:

— Ատիկա դուն պիտի որոշես, — շուսահատեցաւ Սալբի: — Իմաստասիրութիւն, ուսողութիւն, առաջուան պէս: Նախընտրած նիւթերդ ասոնք չե՞ն:

— Ինչե՞ր պիտի ուղէի ընել:

— Ուրե՞մն:

— Անիմաստ է, — մրթմրթաց եղբայրը. — տիպոսները զիս չեն հետաքրքրեր:

— Այսօր: Ասկէ հինգ կամ տասը տարի ետք կրնայ պատահիլ որ զղջաս, երբ պէտք ունենաս: Եւ բնական է շատ ուշ կ'ըլլայ: Այսօր այսպէս կը զգաս կամ կը մտածես. ի՞նչ դիտես, թէ զալ տարի նոյնը մնացած պիտի ըլլաս: Մարդ ես, կրնաս փոխուիլ:

— Այն ատեն կ'որոշեմ :

— Ինչո՞ւ գործնական չես ըլլար, — յամառեցաւ քոյրը, դիտնալով հանդերձ, թէ ապարդիւն փորձ մըն էր կատարածը : — Ուզածդ ըրէ այսօր, բայց նաեւ ապագային պատահելիք հաւանական փոփոխութիւններու հաշիւը ըրէ :

— Գործնական ըլլալ՝ ներկայ ընկերութեան բոլոր սխալները ընդունիլ կը նշանակէ : Անոնց պէս նիւթապաշտ ըլլալ, պատեհապաշտ ըլլալ :

— Ի՞նչ կը թելադրես որ ընեն մարդիկ : Եթէ ամէն մարդ քեզի պէս որոշէ չաշխատիլ . . . :

— Ո՛վ ըսաւ որ չեմ աշխատիր, — ընդմիջեց Մուշեղ. — ձեր ողբերգութիւնը այս է արդէն : Աշխատանք բառին պոչը բռնած էք եւ առիթ չէք տար որ մարդ մտածէ : Այս կերպով աշխարհին վերջը կըրնաք բերել : Կը մոռնաք որ մարդ արարածը բանականութիւն ունի եւ անոր կեանքը իմացական պէտք է ըլլայ առաւելարար, եւ ոչ թէ անասնական : Կ'ուզէք որ հասարակ կենդանիներու պէս ապրինք եւ գըրաստային աշխատանք տանինք : Ինչո՞ւ : Ի՞նչ իրադործած ըլլալու համար : Քիչ մը աւելի ուտելո՞ւ, թէ մէկ զգեստի փոխարէն տասը ունենալու : Աշխատելու դէմ չեմ, պայմանաւ որ Ֆիզիքական զոյգութիւնս պահպանելու ծառայէ ատիկա : Աւելին վնասակար կ'ըլլայ : Մտածած ես երբեք, թէ աշխատանք կոչուածը կրնայ մարդկութեան դիտուն փորձանք դառնալ օր մը :

— Հետաքրքրական է, — Սալբի անկեղծօրէն հետաքրքրուեցաւ : — Ինչ կերպով :

— Ձե՞ս խորհիր որ ներկայ մարդը իր ունեցածին մէկ տասներորդովը, մէկ հարիւրերորդովը կրնայ ապրիլ : Այս առատութիւնը որո՞ւ համար է, ինչի՞ կը ծառայէ : Եղած-չեղածը մէկ ստամոքս ունինք, ու որքան ալ շատ ուտենք, որոշ քանակէ մը աւելին չենք կըրնար սպառել : Բայց մեզի պէտք եղածին տասնապատիկը կը դնենք : Ու երանի բաւարարուինք . . . մեր աչքը միշտ ուրիշին զնածին կամ ունեցածին վրայ է . կ'ուզենք ուրիշներէն աւելի ունենալ, ուտել, հագուել, վայելիլ, եւ ետ չմնալ : Յիմար, սարսափելի արշաւի մը վերածուած է այս ընչաքաղցութիւնը : Եւ կարենալ քայլ պահելու համար՝ պէտք է աշխատիլ, այսինքն պէտք եղածէն աւելի աշխատիլ եւ քայքայել մեր առողջութիւնը, խարել, քծնիլ, դողնալ, կողոպտել մեզի նմանները : Որ ի՞նչ ըլլայ : Կուի, պատերազմ, սճիր : Երանի կարենանք գործածել այս բոլորը, պէտք ունենանք կամ ոչ : Մեծ մասը կը թափուի, կը փճանայ :

— Հակառակ ծայրայեղութեան դիմելը նոյնքան մը սխալ է, կ'ենթադրեմ :

— Անպայման :

— Քու, կամ ձեր վերաբերմունքը ինչպէ՞ս պէտք է բացատրել ուրեմն : Ինչո՞ւ չէք աշխատիր՝ դէթ նուազագոյն չափով :

— Մեր ընդվզումին հետեւանքն է : Երբ ջղայնանաս, ամէն ինչի ճիշդ հակառակը կ'ընես :

— Մինչեւ ե՞րբ ջղայնացած պիտի մնաք : Յուսամ տարիներ չի տուեր, — ժպտեցաւ քոյրը :

— Ես իմ մասին կրնամ խօսիլ միայն :

— Ձիս ատիկա կը հետաքրքրէ արդէն :

— Ինչեր կ'ուզեմ ընել, — բարձրաձայն մենախօսեց եղբայրը :

— Բայց բան մըն ալ չես ըներ :

— Ատիկա չի նշանակեր, թէ պիտի չընեմ օր մը :

— Ե՞րբ :

— Իմ կեանքս է : Ինչո՞ւ այդքան տակնուվրայ կ'ըլլաս : Դուն կեանքդ ուզածիդ պէս կ'ապրիս, կը վայելես, ուզած երիտասարդիդ հետ կը պտըտիս :

— Դուն քու ուզածիդ պէս չե՞ս ապրիր :

— Լա՛ւ, վիճելու պատճառ չունինք ուրեմն : Ես քու գործերուդ կը խառնուի՞մ :

— Օղտակար կրնայ ըլլալ, եթէ կարծիքդ յայտնես երբեմն, — Սալբի դիմեց ուզմամբարութեան :

— Օ՛, այդքան լայնախոհ դարձած ես : Լաւ ուրեմն, ինչո՞ւ պատահած երիտասարդին հետ դուրս կ'ելլես :

— Ես ըրածս դիտեմ եւ անձիս տէր կրնամ ըլլալ : Բայց իսկապէս կը զարմացնես դիս . քեզմէ չէի ակնկալեր :

— Եղա՞ւ, — յաղթական ժպտեցաւ Մուշեղ : — Կարծիքս ուղեցիր, ու հազիւ բերանս բացած . . . :

— Երանի դուն ալ աղջիկներու հետ դուրս ելլես, սիրես, սիրահարուիս : Աւելի մարդկային է քան քու չոր արամբանութիւնդ : Փոխուիս թերես, կը բուժուիս :

— Ըստ քեզի՞ ես հիւանդ եմ, անչո՞ւչտ :

— Բայց բնական չէ, մարդկային չէ՛ — վիճեցաւ աղջիկը. — քսաներկու տարեկան ես, եւ մինչեւ այսօր աղջիկ մը չէ եղած կեանքիդ մէջ : Կը կասկածիմ նոյնիսկ որ կին մը համբուրած ես :

— Դուն խելքդ թոցուցեր ես կարծեմ :

Ու տղան կանգնեցաւ ոտքի, որոշած ըլլալով մեկնիլ :

— Գիշեր բարի :
— Ըսածներու մասին մտածէ, — յիշեցուց քոյրը : — Գիշեր
բարի :

Դուրսը, փողոցին մէջ, աւելի ազատ շնչեց : Սալբիի վերջին ակ-
նարկութիւնը, թէեւ, կը հնչէր ականջին մէջ տակաւին, եւ կը հեռե-
ւէր իրեն : Կ'ուզէր մոռնալ, ջնջել միտքէն այդ նախադասութիւնը եւ
ձերբազատուիլ անոր պատճառած վրդովումէն : Որքան ճիշդ ընէր,
սակայն, մտածումները աւելի կը խորասուզուէին նիւթին մէջ, եւ ինք
կ'անհանդատանար՝ բնականաբար : Պէտք է ընդունէր, յամենայն
դէպս, թէ մտածած էր երբեմն այս մասին, եւ ստորադասութեան ըզ-
գացումներ ունեցած էր նոյնիսկ : Աղջիկ մը սիրելու եւ անկէ սիրուե-
լու պահանջը զգացած էր յաճախ, եւ ի՞նչ գերերջանիկ պահեր երեւա-
կայած էր. բայց իր ճանչցած բոլոր աղջիկները՝ որպէս եզրօր մը
վարուած էին իր հետ, եւ ազատօրէն խոստովանած իրենց գաղտնիք-
ները : Այդքան : Ժպտեցաւ եւ սկսաւ աւելի արագ քալել : Թէեւ Նոյեմ-
բերեան պայծառ գիշեր մըն էր, բայց ցուրտը սկսած էր զգալի դառ-
նալ եւ թափանցել ոսկորներէն ներս : Պէտք է վայրկեան առաջ սենեակ
հասնէր եւ մասնակցէր գիշերային զրոյցին :

Ամերիկեան Համալսարանի մերձակայ թաղամասերուն մէջ
վարձուած ուսանողական սենեակ մըն էր, ուր կ'ապրէին քանի մը
ընկերներով : Ամէն գիշեր, զրեթէ մինչեւ արեւածագ, կը խօսէին, կը
վիճէին ու կը կատակէին երբեմն, երբ սպառէին օրուան նիւթերը :
Իտէալ կեանքը այս էր իրեն համար. մտերմութեան մէջ, կը հազորդ-
ուէին իրարմով, զերծ ամէն կարգի պատրանքներէ եւ փառասիրու-
թենէ, ու կ'ապրէին խոնարհ եւ ժուժկալ կեանք մը : Իւրաքանչիւրը իր
կարողութեան համաձայն մասնակցութիւնը կը բերէր հաւաքական
այս բջիջին, եւ այսպէս՝ կը բաժնէին իրենց միջեւ ծախսերն ու աշ-
խատանքը : Իւրաքանչիւրը պարտականութիւն մը ունէր, ըստ իր Փի-
զիքական կամ մտային կարողութեան : Այլապէս հաւասար իրաւունք-
ներ կը վայելէին բոլորը, եւ ոչ ոք գերադաս կը նկատէր ինքզինք : Սա-
ղաղ եւ ներդաշնակ կեանք մըն էր, հարուստ իր պարզութեամբ եւ ի-
մացական անկախութեամբ : Բացարձակապէս ազատ, ազատազրուած
մարդիկ էին, նկատելով որ ձերբազատած էին իրենք զիրենք ընկերու-
թեան պարտադրած կալանքներէն—նախապաշարումներէ, զգացական
եւ սեռային կաշկանդումներէ եւ ասոնցմէ բխող կեղծ բարոյական
ըմբռնումներէ :

Սենեակը խճողուած դատու, ըստ ընկալեալ սովորութեան : Գրե-
թէ ամէն գիշեր տղաքը բարեկամներ կամ բարեկամուհիներ կը բե-
րէին իրենց հետ՝ աւելի ջերմ եւ մտերիմ մթնոլորտ մը ստեղծելով :
Ասոնք յաճախ կը գիշերէին իրենց մօտ, երբ զրոյցը երկարէր, ու կը
քնանային գետնը փռուած խշտեակներու կամ թաղիքներու վրայ :
Թէեւ հաճելի սակայն նաեւ անտանելի կացութիւն մը կը ստեղծէր
այս խճողումը, ու քնանալը անկարելի կը դառնար գրեթէ : Ամառը
տարբեր էր անշուշտ, որովհետեւ սենեակի մը մէջ փակուած չէին ըլ-
լար, ինչպէս հիմա, այլ քաղաքէն դուրս բաց դաշտի մը մէջ կամ սա-
րալանջերու վրայ կը տնկէին իրենց վրանը եւ կայք կը հաստատէին
հոն՝ բնութեան եւ ազատութեան մէջ : Հեռու քաղաքներու եւ մարդոց
խճողումէն : Ամառնային գիշերները կը նախընտրէր ինք. ուզած ատեն
վրանէն դուրս կրնար քնանալ, եւ՝ ոչ խանդարուիլ, ոչ ալ խանդա-
րել ուրիշները :

Շուրջ կէս ժամ իր անկողինն վրայ նստած մնաց, փորձելով հե-
տելի խօսակցութեան, ու յետոյ պառկեցաւ, որովհետեւ պառկած վի-
ճակի մէջ աւելի լաւ կրնար տրամաբանել սովորաբար : Կ'ուզէր կեղ-
րոնանալ եւ ըլլալ տղոց հետ. բայց չլսեց իսկ անոնց խօսածը, եւ ինքն-
իրմէ դժգոհ՝ կրցաւ ծխել միայն, հայեացքը սեւեռած դիմացի պա-
տին :

Դ.

Ժագ Առաքելեան բացառաբար կանուխ արթնցաւ այդ օր, եւ ա-
կամայ նստեցաւ անկողինն մէջ : Սեղա հանդարտօրէն կը քնանար տա-
կաւին, թէեւ երկխաները իրենց անկողիններուն մէջ չէին : Նայեցաւ
ժամացոյցին եւ հաստատեց որ այդքան ալ կանուխ չէր. ժամը ութը
կ'անցնէր, եւ ուրեմն Արմէնը դպրոց գացած պէտք է ըլլար արդէն :
Իսկ Նայիրին՝ մեծ մօրը խնամքին յանձնուած : Դժգոհեցաւ, որովհե-
տեւ ամէն ինչ կարգին էր, ամէն ինչ կատարուած : Կողքին քնացող
կինը, զոր տարօրինակ կերպով կը սիրէր, իր կինն էր — երիտասարդ,
գեղեցիկ, ցանկալարոյց ու միշտ թարմ, կենսուրախ, զուարթ, ու հա-
մակ նուիրում — եւ այս կեանքը իր կեանքն էր : Ինք՝ ինքն էր, այո՛,
բայց նաեւ ինք չէր : Որովհետեւ տուն չունէր : Տարիներ առաջ, նախ-
քան Հայաստան ներգաղթելը, երբ առանձին ապրող երիտասարդ մըն
էր, ունէր իր սեպհական տունը՝ հոգ չէ թէ փոքր ու խոնարհ : Իր
կեանքին եւ ճակատագրին տէրն էր՝ ազատ, անկախ եւ ինքնավար :

Հոս՝ անկողնին մէջ շարժելու նոյնիսկ ազատութիւն չունէր: Ոչ ոք
կը կաշկանդէր զինք. ընդհակառակն՝ Սեդայի ծնողները ճիշդ չէին
խնայեր որ հանգիստ եւ ազատ զգային տան մէջ՝ հանդերձ ընտան-
եօք: Բայց ապարդիւն:

Այս պահուն, օրինակի համար, անընկճելի փափաք կը զգար
կինը դողատացնելով արթնցնելու: Եւ կարելի չէր: Կ'ուզէր կատակել,
պոռալ՝ ներքին խռովքը հաւասարակշռելու համար թերեւս: Եւ չէր
կրնար: Իսկ իր պարագային հրամայական պահանջ էր, անհրաժեշտու-
թիւն՝ ինքն իր անձը ըլլալը: Որ՝ ուզած ատեն ուզածը ընել կը նշա-
նակէր: Երգել, լալ կամ կոտիլ կնկան հետ: Լալու փափաք նոյնիսկ
կ'ունենար երբեմն: Առանց պատճառի:

— Կը բաւէ քնանաս, — շոյեց տիկնոջ մերկ ուսը, որ սկսած էր
զինք անհանգստացնել:

Սեդա բացաւ կիսախուր աչքերը եւ ժպտեցաւ իրեն ամէն ան-
գամուան պէս — անխուսափելիօրէն կը ժպտէր, երբ արթնցնէր զինք,
փոխանակ դժգոհելու կամ տրտնջալու: Եւ կատակեց:

- Սուրճ մը եփէ՛, խմենք:
- Հրամանքդ: Կ'ուզե՞ս որ վարտիքով դուրս ելլեմ:
- Եթէ քաջ ես:
- Պէտք է տուն մը գտնենք, — նիւթը փոխեց ժառ:
- Ատկէ առաջ պէտք է դորձ մը գտնես:
- Երէկ Պր. Սարգիսեանին հանդիպեցայ, նախկին վարպետիս:

Առաջարկեց որ քովը աշխատիմ դարձեալ:

- Լո՞ւրջ, — կինը ուրախութեամբ նստեցաւ անկողնին մէջ: —
Հայրենիքի դաւաճաններ չի նկատեր մեզ ուրեմն: Զարմանալի է:
- Խելքը գլուխը մարդ է: Պէ՞տք է ընդունիմ:
- Ի՞նչ ըսել կ'ուզես:
- Մինչեւ կեանքիս վերջը պաշտօնեայ չեմ ուզեր մնալ:
- Ի՞նչ կրնաս ընել: Առեւտուրի մասի՞ն կը մտածես:
- Հարցը ինչ կրնամը չէ, — ամուսինը ծաղրեց զինք. — ինչ
կ'ուզեմն է:
- Ի՞նչ կ'ուզես ընել:
- Զեմ գիտեր:
- Զգիտնալը ալ բան մըն է, — Սեդա ծաղրեց իր կարգին:
- Փիլիսոփայ պիտի ծնէիր դուն, գիտե՞ս:
- Կրնաս եւ շաշխատիլ: Ազատ կ'ըլլանք եւ ուզածնիս կ'ընենք:
- Գործիդ կու գայ: Ի՞նչ, օրինակի համար:

— Կը ճամբորդենք, կը պտըտինք, կը սիրաբանինք: Նախընտ-
րելի չէ՞:

— Ուրիշ հետաքրքրութիւն չունիս արդէն: Մարդ պիտի չըլ-
լա՞ս, աղջիկ:

— Խենթ:

— Ելի՛ր, ելի՛ր սուրճ մը եփէ ուրեմն, որ խելքս գլուխս դայ:

— Աշխատելու ի՞նչ պէտք ունիս, — յամառեցաւ կինը: — Հայ-
րըս բաւարար կը շահի...:

Ու խնդալով դուրս ելաւ ննջասենեակէն:

Ժառ Առաքելեան յօրանջեց, զիտեց պահ մը երկար սրունքները,
եւ դժգոհ ինքնիրմէ կամ սրունքներէն, որոշեց հագուել: Անպիտան
արարած մը դարձած էր, եզրակացուց: Մոյլ, մեղի, թուլամորթ: Հա-
յաստան, ուր առիթ ունէր դորձէն բացակայելու եւ ծուլանալու, շատ
աւելի աշխոյժ էր եւ եռանդուն: Պատուհանէն դուրս նայեցաւ ու տե-
սաւ նոյն նեղլիկ փողոցը, որ պիտի խեղդուէր կարծես: Արեւը հա-
զար ու մէկ խաղ կը խաղար հոն հասնելու համար, ու երբեմն կը հաս-
նէր, ինչպէս այսօր, նոյեմբերի այս օրով: Տօնական օրեր էին ասոնք
իրեն համար, որովհետեւ վերադառնալէն ի վեր կը վայելէր Պէյրութի
արտակարգ այս դարունը: Այո՛, նոյեմբերի մէջ դարուն էր հոս —
գեղեցիկ, հաճելի, զմայլելի եւ կենարար դարուն մը: Առաջին քանի
մը օրերուն տեղատարափ անձրեւ թափած էր երկինքէն — պարզօրէն
թափած — ու լուացած մաքրած էր քաղաքը, որ ամառնային աղտ եւ
քրտինք կը հոտէր: Ատկէ ետք սակայն, արեւը վերադարձած էր յաղ-
թական, եւ մինչեւ հիմա կը յամենար տակաւին: Մինչդեռ Երեւանի
մէջ ձիւնը իջած էր հաւանաբար հիմա ու ծածկած քաղաքն ու շրջա-
կայքը ամբողջ իր ճերմակ տխրութեամբ: Զիւնը եւս ունէր իւրայա-
տուկ դրաւչութիւն մը, բայց ինք չէր կրցած սիրելի դայն՝ նոյնիսկ Ա-
րարատի գողաթին վրայ, ուր յավերժացուցած էր իր գեղեցկու-
թիւնը:

Բայց անդորձ եւ անդրաղ թափառելէն ալ յոգնած էր: Ծիշդ է,
եւ գիտէր, թէ հիմնական փոփոխութիւն մը տեղի կ'ունենար իրմէ
ներս՝ զինք մատնելով աննախընթաց շփոթի կամ անորոշութեան:
Պարզապէս չէր կրնար որոշել եւ վճռական քայլ մը առնել: Նախ՝ չէր
գիտեր, թէ ինչ կը պատահէր իրեն եւ ինչու այսպէս դժգոհ էր: Եր-
ջանիկ, կամ դէթ ուրախ ըլլալու բազմաթիւ պատճառներ ունէր:
Մքանչելի կին մը ունէր. ընտանեկան համերաշխ կեանք, սքանչելի զա-
ւակներ, առողջութիւն, եւ աշխատանք՝ երբոր ուզէր: Իսկ ամենէն կա-
րեւորը՝ պատանեկան օրերէն սկսեալ միշտ իր ուզածը բրած էր, այ-

սինքն ապրած էր: Առանց մտածելու, ծրարելու կամ՝ անկարելի երազներ որոճալու: Մինչդեռ հիմա... ուղեղը անտեղի կերպով դործելու սկսած էր: Եւ բնականաբար՝ համ-հոտ չէր ձգած կեանքին մէջ:

Յանկարծ զգաց որ արտակարգ եռուղեռ մը կար դուրսը, միջանցքին մէջ: Փսփսուք, լաց, ուրախութեան խեղդուած ճիչեր եւ անբնական խանդավառութիւն մը՝ առտուան այդ ժամուն համար: Երբ ննջասենեակէն դուրս ելաւ, նկատեց որ Սեդան՝ սուրճի դաւաթնեքով բեռնաւոր ափսէն ձեռքին մէջ, անշարժ ու կարծես հմայուած, կը դիտէր բարձրահասակ ու գեղանի կիներ, որ կանգնած կը մնար իր եւ մօրը միջեւ:

— Լաւ, ներս անցնինք, — ըսաւ Սեդա: — Սուրճ խմե՞ր ես, — հարցուց քրոջը յետոյ:

— Թոյն մը ըլլար, խմէի վերջանայի:

— Եթէ կ'ուզես կարգադրեմ, — լրջօրէն խօսեցաւ ժառ:

— Ձեռն փոխուած, — խնդաց Ալիս ու չորցուց աչքերը՝ ձեռքին մէջ պատրաստ պահուած թաշկինակով:

— Հա՞: Փոխուելու ալ նպատակ չունիմ: Քեզի պէս անխեղճ եմ, որ փոխուիմ: Մեծցեր, հասունցեր, կին դարձեր ես, եւ ատոր համար ալ կու լաս կ'երեւի: Առաջ աւելի լաւ չէի՞ր: Պզտիկ, ամէկոտ ազջիկ մը:

— Է՛հ, իմ ալ բախտս այս է եղեր:

— Ծիչդ ի՞նչ պատահեցաւ, — հարցաքննեց զինք տիկ. Եղիս:

— Ազջիկ, ի՛նչ պիտի ըլլար: Ամէն օրուան պէս քէօք սարխոյ տուն մտաւ առտուան շորսին, եւ իրեն հարցում մը հարցուցի ըսելով, աշխարհ տակնուվրայ քրաւ: Պոռալ, կանչել, հայհոյել, սպառնալ: Դրացիները բոլոր դուրսնիս հաւաքուեցան նորէն:

— Պզտիկները ի՛նչ եղան. ո՞ւր են հիմա:

— Տունն են, ի՛նչ պիտի ըլլայ. խեղճերուն վախը տեսնէիր:

— Եւ այդպէս ձգեցիր եկար:

— Քնացած են հիմա: Ինքն ալ. ճիշդ դիակի պէս:

— Ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլայ, — մայրը ինքնիրեն ուզողեց հարցումը թերեւս:

— Ինծի համար վերջացաւ այլեւս:

— Ի՛նչ տերաք բռներ է նորէն:

— Ձե՞ս դիտեր: Երբ խաղալու սկսի, խելքը կը կորսնցնէ, որովհետեւ միշտ կը վնասէ: Ձեմ յիշեր որ օր մը չահած ըլլայ:

— Ձէ՞ որ երգում քրած էր...:

— Ասիկա ոչ առաջին անգամն է, ոչ ալ վերջինը, — ըսաւ ազջիկը:

Աշխարհը որքա՞ն պզտիկ է, խոկաց ժառ, ընկղմած սոֆային մէջ, ուր ինքն իր մէջ կձկուած, ամփոփուած՝ կ'ուզէր գետնամոյն ըլլալ: Մարդոց անձնական կեանքի դազանիքներուն կամ մանրամասնութիւններուն չէր ուզեր ծանօթանալ, ու հիմա եւս չէր ուզեր լսել այս ամբողջը: Պարզօրէն անհանդիստ կը զգար, կը տխրէր, կ'ընկճուէր: Այո՛, պզտիկ աշխարհ մըն էր՝ ամէն մարդու համար: Մարդիկ իրենք զիրենք բանտարկած էին իրենց անձնական կեանքին մէջ, ու ողբերգութիւններ կը բեմադրէին տիւ եւ դիշեր: Իւրաքանչիւրը իր ձեռով: Եւ աշխարհը՝ բոլորին համար, այս էր: Անձնական կեանքի մը նեղ ու սահմանափակ բանտը, ուրկէ դուրս չէին կրնար ելլել: Երբեմն՝ չէին ուզեր: Եւ բնականաբար ատկէ դուրս ոչինչ կը տեսնէին:

Մինչդեռ աշխարհը այնքա՞ն մեծ էր: Ոչ թէ աշխարհադրակահօրէն միայն: Այլ մարդկային կեանքի առումով: Բայց անհատը չէր կրնար տեսնել, ընդունիլ ասիկա: Այս մտորակի բոլոր երկիրներուն մէջ, ուր կ'ապրէին բազմահազար միլիոններով մարդիկ — սպիտակամորթ, սեւամորթ, դեղնամորթ — մարդկային կեանքի հաւաքական բնոյթը կը վրիպէր անոնց գիտակցութենէն: Կամ թերեւս կը գիտակցէին անոր իրողութեան, բայց չէին կրնար ընդունիլ, ու կը թաղէին զայն անձնական կեանքի մանրութիւններուն մէջ: Որ տիղմ էր, ճահիճ:

Ալիսի ամուսինը, օրինակի համար, Արշակ կոչուած երեսնամեայ երիտասարդը, զոր հազիւ կը ճանչնար: Կամ նոյնինքն Ալիսը, որ ասկէ հինգ կամ վեց տարի առաջ մեկամաղձոտ բայց անմեղ ու միամիտ պարմանուհի մըն էր: Վեց տարուան կարճ ժամանակամիջոցին մէջ ինքն իր բանտը ստեղծած էր արդէն եւ արգելափակած ինքզինք ասկէ ներս: Ունէր իր անձնական կեանքը — ամուսին, ձախող ամուսնութիւն մը, վէճ, կռիւ. անհաստականութիւններու բախում, անգիջողութիւն, նիւթական մտահոգութիւններ, Ֆիդիքական պահանջներ, երիտասարդ եւ գեղեցիկ կնկայ ունայնամտութիւն, եւ անիրաւուած ըլլալու գիտակցութիւն: Երիտասարդ էր եւ գեղեցիկ: Իսկ ամուսինը, ըստ երեւոյթին՝ անփորձ եւ մոլորած յիմար մը, որ նոյն ծուղակին մէջ էր: Ան ալ ունէր իր բանտը՝ իրեն պարտադրուած հաւանաբար, նկատելով որ տղէտ բայց հարուստ ծնողներու զաւակ էր: Պատահաբար հարստացած կոչկալաճառ մարդու մը անդրանիկ որդին՝ որ տարիներէ ի վեր արդէն կը նկատուէր հօրը վաճառատան անփո-

խարինելի սիւնը: Ինքն իրեն համար՝ աշխարհը ինքն էր — իր քմահաճոյքները, ինքնալստահութիւնը, առեւտրական փորձառութիւնը, մոլութիւնները, անսպառ դրամ, հարստութիւն, հիացողներ, աղջիկ, կին, գիշերային կեանք, քաղաքի սեւ մասամբ նորին:

Այո՛, աշխարհը այնքան՝ ողորկ էր եւ այնքան՝ մեծ:

Ինք եւս իր անձին բանտարկեալը չէ՞ր: Որո՞նք էին սա երեք կիները, օրինակի համար, որոնք նստած աշխարհի մը ճակատագիրը կ'որոշէին: Իրեն անծանօթ աշխարհի մը, ուր տեղ չունէր ինք: Որովհետեւ ինք ունէր իր աշխարհը, որ նոյնքան մը անմտաչեւի էր ուրիշներուն համար: Անհաւատալի էր: Անհանդուրժելի: Այսպէս փակուած, բարդ ու անհաղորդ մարդ մը չէր ինք. չէր ուզեր ըլլալ: Կ'ուզէր ազատօրէն շնչել, ժպտիլ մարդոց, կատակել, մաս կաղմել անոնց կեանքին՝ որպէսզի իրենք եւս դուրս գային իրենց բանտերէն եւ ժպտէին իրեն: Ժպտէին իրարու: Այլապէս կեանքը անտանելի էր: Անիմաստ:

— Դրախտ կամ դժոխք, տունդ է, — լսեց աներոջ ձայնը. — կեանքդ, զաւակներդ: Ի՞նչ կրնաս ընել:

— Բայց անկարելի է, մարդ չի կրնար ապրիլ հետը: Մարդ չէ որ... անձնատէր հրէջ մը:

— Կը փոխուի օր մը, կը զգուի: Երիտասարդ է: Պէտք է համբերես, եւ մտաւհ եղիր որ վերջաւորութեան դուն շահաւոր կ'ըլլաս:

— Ե՞րբ: Ծերանալէ՞ հետք:

— Ինչ ալ խելօք տղայ էր: Ի՞նչ պատահեցաւ իրեն յանկարծ:

— Քանի մը սրիկայ բարեկամներ գտեր է, եւ ամուսնանալէն առաջ չըրածը հիմա սկսեր է ընել, — բացատրեց Ալիս: Առաջին երկու տարիներուն հոյակապ էր, կը յիշես: Երբեմն ես ալ չեմ հաւատար. մարդ այսքան կը փոխուի՞ եղեր:

— Պատճառը ի՞նչ է սակայն, — հետաքրքրուեցաւ քոյրը:

— Երկարութիւն: Անպայման պէտք է պատճառ մը ունենայ:

— Թերե՞ւս կին կամ աղջիկ կայ խնդրին մէջ:

— Ատիկա հնչ: Հարցուցած ալ չունիմ այլեւս: Բայց բուն խնդիրը ատիկա չէ, որովհետեւ մասնաւոր կնկայ մը բռնուած չէ: Այդ բարեկամներուն եփած ապուրն է: Մօրուքին կը խնդան, դուն այսպէս ես, դուն հերոս ես, դուն այր մարդ ես կ'ըսեն, եւ ուզածնուն պէս կը կողոպտեն զինք:

— Այդքան անխելօք է, — թերահաւատութեամբ հարցուց Սեդա:

— Ունայնամտութիւն է, ոչ թէ անխելութիւն: Ըսել պիտի տայ

որ ինքն ալ էրիկ մարդ է: Ուզածնին կ'ընէ, ուզածնուն պէս կը դարձնեն զինք:

— Քանի այսքանը կըրցած ես հասկնալ, — շարունակեց յորդորել մայրը, — դո՛ւն աւելի համբերող պիտի ըլլաս, աւելի խելացի:

— Որ ի՞նչ ըլլայ:

— Աղջիկս, զաւակներդ եւ տանդ խաղաղութիւնը շատ աւելի կարեւոր են քան քու հանդիսող: Դրամը ինք կը շահի, ինքն ալ կը մտիտէ. իր դիտնալիքն է: Մինչեւ այսօր անօթի մնացի՞ր երբեք. զաւակներդ բանէ մը զրկուեցա՞ն:

— Եթէ այսպէս շարունակէ, այդ օրն ալ կը տեսնենք: Խուսարբ վերջ չունի:

— Հայրը դիտուն վրայ է դեռ...:

— Բարեբախտաբար:

— Ուրեմն դուն ալ կ'ընդունիս որ ժամանակաւոր բան մըն է ատիկա, եւ պէտք է համբերես: Այնպէս որ քանի ուշ չէ, ելիր եւ տունդ վերադարձիր, որ զաւակներուդ տէր ըլլաս: Ով դիտէ խեղճերը հիմա արթնցած, ի՞նչ վիճակի մէջ են:

— Ինծի համար վերջացած հարց է ըսի:

— Բան մըն ալ չէ վերջացած, — մօրը ձայնին մէջ սաստ կար:

— Հայրդ եթէ իմանայ, կաթուած կ'ունենայ: Լաւ որ աւելի կանուխ չեկար, իր երթալէն առաջ:

— Այդքանը հաշիւ ըրի: Արդէն եթէ իրեն համար չըլլար, մինչեւ հիմա շատոնց տունը ձգած կ'ըլլայի:

— Ապրիս: Ես քեզ խելացի եւ քաջ աղջիկ մը կը ճանչնամ: Դուն քեզ եւ մեզ խայտառակելու պէտք չունիս: Ոչ ալ ամուսինդ: Իմաստուն կինը տունը ինք կը կատարէ կ'ըսեն:

— Ձեզի համար խօսիլը դիւրին է: Չարչարուողը ես եմ:

— Դուն առաջին ամուսնացողը չես, եւ ոչ ալ վերջինը պիտի ըլլաս:

— Ինչո՞ւ դիս ամուսնացուցիք ուրեմն:

— Ի՞նչ կ'ուզէիր որ ընէինք:

Ալիս նախընտրեց քալելով վերադառնալ տուն, թէեւ Պուրճ Համուտէն նահր էլ Մոթ՝ կէս ժամուան ճամբայ ունէր կարելիք: Օդը պայծառ էր բարեբախտաբար, եւ փողոցները՝ խճողուած սովորականին պէս: Հիմա, թէեւ ջղային եւ ընդվզած, ներքնապէս դոհ էր սա-

կան, եւ զարմանալիօրէն՝ ուրախ նոյնիսկ : Տուն կարենալ վերադառնալու դադարաւոր կը հանդարտեցնէր զինք եւ ինքնալստահութիւն կը ներշնչէր իրեն. իր տան մէջ աւելի ապահով էր եւ ինքնիշխան՝ նոյնիսկ ամուսնոյն ներկայութեան : Եւ առաջին անգամ ըլլալով թերեւս զգաց, որ ծնողներուն մօտ օտար մըն էր : Մինչդեռ իր տան մէջ... Արշակը ինչ ալ ընէր, ինք աւելի ազատ էր հոն. ի վերջոյ տան տէրը ինքն էր :

Պատահական անցորդներէ կամ անծանօթներէ դիտուելը միշտ մասնաւոր հաճոյք մը պատճառած էր իրեն, ու հիմա եւս կը զգար որ մարդիկ կը հետեւէին իրեն՝ դադարազուրկ նայուած քներով : Իր դեղեցիութեան դիտակցութիւնը նոր չէ որ կ'ունենար բնականաբար, սակայն անոր վերահաստատումը այսօր նոր յոյս եւ կեանք կը ներշնչէր իրեն : Տակաւին երիտասարդ էր եւ գեղեցիկ, հոգ չէ թէ երկու դաւակի մայր էր արդէն : Քոստանոյ տարեկանին մահկանացուն կնքած էին — ամուսինն ու անոր ծնողները, ինչպէս նաեւ իր ծնողքը — եւ զինք անպէտք, սպառած, վերջացած իր մը կը նկատէին : Քուրջի կտոր : Ձոր կրնային թափել կամ մոռնալ անկիւն մը : Բայց ինք մոռցուելու նպատակ չունէր : Մայրը զինք վռնտած էր դրեթէ : Պէտք չունէր, իրենց ալ պէտք չունէր : Յանցաւորը ինքն էր յամենայն դէպս : Սեղային նման ինքն ալ պէտք էր տունէն հեռանար, օտար երկիրներ թափառէր, որպէսզի արժէք ունենար եւ գնահատուէր :

Տանեօթ տարեկանին իր հայերէն լեզուի ուսուցիչը սիրած էր եւ երանութեան օրեր ապրած : Բայց Սեղայի օրինակը — անոր ամուսնութիւնն ու փախուստը տունէն — զինք սարսափի մասնած էր եւ ըստաննած իր այնքան գեղեցիկ սէրը : Հօրը տառապանքն ու լուռութիւնը այդ օրերուն տունը դժոխքի վերածած էին, եւ տիրող պայմաններուն մէջ չէր համարձակած իսկ արտայայտուիլ իր սիրոյն մասին : Եւ՝ տառապած էր ինք եւս, իր հետ չարչարելով նաեւ Պր. Տարօնեանը, որ իրեն համար մինչեւ այսօր Պր. Գեղամ Տարօնեան էր : Տարօնեանի երիտասարդ մըն էր. զուարթ, համարձակ բայց լուրջ ու ինքնավստահ մաշ մը, որ երեսուն տարեկանին արդէն Սփիւռքի լաւագոյն դըրագէտներէն կը նկատուէր : Միջահասակ ու նիհար, ջղուտ, պիտաւոր, խորհրդաւոր ու մեղրագոյն աչքերով, որոնց ժպիտը հմայած էր զինք առաւելաբար : Անոր աչքերուն սիրահարած էր, այո՛, կամ ժպիտին, որ իւրայատուկ գրաւչութիւն մը ունէր : Այլապէս սիրուելիք ոչինչ ունէր : Բայց իր անձն էր որ զինք հետաքրքրական եւ սիրելի կը դարձնէր՝ բոլորին անխտիր : Ինչե՛ր լսած էին իր մասին : Գինեմոլ գրողի համբաւը իրմէ առաջ հասած էր դպրոց այդ տարուան վերա-

մուտին, եւ մինչեւ այսօր կը յիշէր տակաւին թէ ինչ անհամբեր խանդավառութեամբ սպասած էին անոր դասարան մտնելուն : Յուսախար չէին եղած : Առանց զիբքի կամ տեարակի յայտնուած էր յանկարծ, ձեռքերը դրականներուն մէջ, եւ ուղղուած էր դէպի քարետախտակ ու մանր գեղեցիկ գիրերով անունը գրած էր հոն, եւ յետոյ միայն խօսած՝ իր մնայուն ժպիտը դէմքին :

— Ասիկա իմ անունս է : Մօտ օրէն ես ալ ձեր անունները կը սորվիմ, հոգ մի ընէք :

Ու պահ մը դիտելէ ետք զիրենք, հարցուցած էր :

— Ինչո՞ւ չէք խօսիր :

Դասարանը ամբողջ ազլահար եւ մաքնիտացած, աւելի եւս պայանձած էր : Ծփոթած՝ իրարու նայուածքները խուզարկած էին, ու դասարանի ամենէն համարձակ տղաքը նոյնիսկ քաջութիւն չէին ունեցած բառ իսկ փսփսալու :

— Հասկնալի է, — շարունակած էր յետոյ, — կ'ուզէք ինձի հաւատացնել, թէ լուրջ ու տիպար դասարան մըն էք : Բայց ես դիւրաւ չեմ խարուիր : Ձեր մասին բաւական ծանօթութիւն քաղած եմ արդէն, եւ կը յուսամ որ զիս յուսախար չէք ընել : Կենդանի եւ ազմկայարոյց աշակերտներու հետ գործ ունենալ կը նախընտրեմ :

Աւարտական դասարանը քսաներկու աշակերտներէ բաղկացած էր այդ տարի, լաւ կը յիշէր, ու բոլորն ալ առաւել կամ նուազ շարժուած էին : Նկատելով որ փայլուն դասարան մը եղած էր իրենցը տարիներու ընթացքին, անօրէնութիւնն ու ուսուցչական կազմը ներողամտութեամբ կը վարուէին իրենց հետ, ու թոյլատու կը դատուէին յաճախ : Նիհար ու ջղուտ այս նորեկ ուսուցիչը, սակայն, յաջողած էր քանի մը վայրկեանի մէջ պայանձուի մասնել զիրենք բոլոր :

— Լա՛ւ, քանի դուք չէք խօսիր, — ժպտած էր յետոյ բարութեամբ, — ես կը խօսիմ :

Եւ սկսած էր առաջին դասը : Առանց յառաջարանի կամ մուտքի : Եւ առանց դասադիրքի : Դաս չէր, այլ ներշնչեալ քարոզ. բայց՝ կենդանի, զուարթ, համեմուտ ու պատկերաւոր հեղեղ մը բառերու եւ նախադասութիւններու, որոնք կը վերացնէին զինք, կը գեղեցկացնէին դրեթէ : Եւ այսպէս՝ ամէն օր, կամ շաբաթը չորս օր, մինչեւ դպրոցական տարեշրջանի վերջը, շարունակուած էր այս հարգութիւնը՝ ներշնչելով ու խանդավառելով զիրենք : Հայերէն լեզուն, որ տարիներու ընթացքին ամենէն անտեսուած նիւթը նկատուած էր դպրոցին մէջ, յանկարծ ժողովրդականութիւն դտած էր :

Ինք զէթ հաճոյքով սկսած էր շարադրութիւններ գրել, հակառակ անոր որ շարադրութիւն կոչուածը կ'ատէր: Նիւթ մը մշակելով զարգացնել չէր կրցած սորվիլ երբեք, սակայն յաջողած էր ներաշխարհը պեղել, փորփրել ու պարզել զայն իր այնքան սիրած ուսուցիչին: Այնքան, որ վերջաւորութեան իր շարադրութիւնները վերածուած էին սիրային եւ զգացական զեղումներու արձանագրութեան:

— Այս բոլորը շատ բարի, շատ զեղեցիկ, — ըսած էր իրեն օր մը Պր. Տարօնեան, — բայց շարադրութիւնը ո՞ւր է:

Կէսօրուան դադարի ժամն էր, երբ անակնկալօրէն յայտնուած էր ան բակին մէջ, ու նկատելով զինք, մօտեցած էր իրեն եւ սկսած խօսիլ՝ առանց յառաջարանի, ըստ իր սովորութեան: Նախ չէր հասկըցած, թէ ինչ բանի կ'ակնարկէր, բայց ենթադրելով որ իրմէ այդ շարթուան շարադրութիւնը կը պահանջէր, զարմացած բայց մտահոգ՝ ըսած էր:

— Երէկ յանձնեցի ձեզի սակայն...:

— Անշուշտ: Թէ ոչ պիտի չխօսէի Ձեզի այդ մասին: Շատ զեղեցիկ նախադասութիւններ կը կազմես, կը վերլուծես, կը բացատրես, բայց շարադրութիւն չես գրեր:

— Գրել չեմ սիրեր:

— Ինչո՞ւ:

— Շատ դժուար է, Պարոն. իմ գործս չէ:

— Քանի այդքան լաւ կրնաս վերլուծել եւ զգացածդ արտայայտել, կը նշանակէ թէ կրնաս գրել: Եւ՛ ենթադրածէդ շատ աւելի լաւ:

— Ատիկա բոլորովին տարբեր է, — զգացած էր թէ կը շիկնէր, բայց շարունակած էր. — այն որ բերանացի չեմ կրնար ըսել ձեզի, գրաւոր կ'արտայայտեմ: Աւելի դիւրին է: Ուղղակի ձեզի պիտի չկարենայի ըսել այդ բոլորը:

— Ուրեմն այդպէս: Հիմա ըրածդ ի՞նչ է կը խորհիս:

— Հիմա կրնամ խօսիլ... այս պահուս կրնամ. ինչպէ՞ս՝ չեմ գիտեր: Որովհետեւ ամէն ինչ գրած եմ արդէն. գաղտնիք չէ այլեւս:

— Քանի՞ տարեկան ես, — հարցուցած էր յանկարծ ուսուցիչը:

— Տասնեօթ: Ինչո՞ւ:

— Բաւական համարձակ ես, մանաւանդ տարիքդ նկատի առած: Կ'անդրադառնա՞ս, թէ ինչի մասին կը խօսիս:

— Ի՞նչ կը խորհիք: — Համարձակութիւնը չէր դաւաճանած իրեն: — Զիս երեխայ կը նկատէք թերեւս:

— Երբեք: Աղջիկ մը այս տարիքին հասուն կ'ին է արդէն: Եւ

ճիշդ ատոր համար պէտք է զգուշացնեմ Ձեզ:

— Ինչո՞ւ:

— Հակառակ անոր որ հասուն կ'ին կարելի է նկատել Ձեզ, բայց զգացումներէդ տարուած ըլլալով՝ երեխայէ մը տարբեր չես այսօր:

— Ձեզի համար՝ թերեւս:

Փորձած էր ժպտիլ, ներքին խռովքը ծածկելու համար, բայց զգացած էր որ աչքերը կը խոնաւնային:

— Կը տեսնե՞ս որ երեխայ ես, — ըսած էր Պր. Գեղամ:

— Զգացում ունենալը մե՞ղք է, — հազիւ կրցած էր բառերը արտասանել: — Զեր գիրքերուն մէջ սիրոյ գովքը կ'ընէք, սիրողներուն վիճակէն կը հասկնաք:

— Ես իրենց վիճակը կը հասկնամ, այո՛, բայց իրենք զիրենք չեն հասկնար: Յամենայն դէպս հետաքրքրական է. ըսել կ'ուզես, թէ գիրքերս կարդացած ես:

— Զարմանալի՞ է:

— Ո՛չ: Բայց հետաքրքրական է, եւ հաճելի:

Մինչ ինք ժպտած էր երախտագիտութեամբ, Պր. Տարօնեան անակնկալօրէն լքած էր զինք հոն՝ առանձին եւ չփոթած: Ու քալած էր, առանց իսկ ետեւ դառնալու, ու հեռացած՝ ձեռքերը գրպաններուն մէջ:

Յաջորդ օրը սակայն գիրքերէն մէկական օրինակ նուիրած էր իրեն, բոլորն ալ ստորագրուած՝ պարզ մակագրութեամբ մը: Շնորհակալութեամբ եւ սիրով:

Շարաթներ ամբողջ, յետոյ, այդ երկու բառերը կարդացած էր հարիւրաւոր անգամներ՝ իւրաքանչիւր գիրքի մէջ ստուգելով եւ վերստուգելով անոնց իրականութիւնը: Յուսալով թերեւս՝ ծածկուած իմաստ մը, գաղտնիք մը կամ խորհուրդ գտնել անոնց մէջ: Իր կեանքի ամենէն երջանիկ օրերն էին — երանութեան եւ նուիրումի շրջան մը, երբ աներեւակայելի զոհողութեանց պատրաստ կը զգար ինք՝ զինք: Ինչեր պիտի ընէր, ի՞նչ երազներու պիտի մատչէր:

Թէեւ այդ ամբողջ շրջանին Պր. Տարօնեանի վերաբերմունքը իրեն նկատմամբ ոչ մէկ կերպով փոխուած էր: Ոչ ակնարկութիւն, ոչ գաղտագողի նայուածքներ, ոչ իսկ մասնաւոր ուշադրութիւն կամ հողածութիւն՝ իրեն նկատմամբ: Կը կատակէր անշուշտ իրեն հետ, ինչպէս կատակած էր միշտ իր եւ կարգ մը այլ աշակերտներու հետ, եւ այդքան: Մինչ ինք օր ըստ օրէ աւելի եւ աւելի անձնատուր կ'ըլլար իր զգացումներուն, շնաշխարհիկ մեկնութիւններ տալով անոր իւրաքանչիւր բառին կամ արտայայտութեան: Ամիսներ ետք միայն

պիտի գիտակցէր, թէ զօրաւոր կամքի տէր մարդ եւ մեծ դերասան էր այնքան անտարբեր թուող Պր. Տարօնեանը :

Անհաւատալի էր : Իսկապէս կը սիրէր զինք — այնպէս բարի, անմեղ ու միամիտ սիրով մը, որ ինք իսկ զարմացած էր : Եւ ամենայն պարզութեամբ, առանց խորհրդաւոր ակնարկութիւններու, արտայայտուած էր այդ մասին, երբ առանձին մնացած էին օր մը հանդիսասրահին մէջ : Դպրոցին աւանդական թատերական ձեռնարկը կը պատրաստէին, եւ ինչպէս անցեալին, այդ տարի եւս աւարտական դասարանը ստանձնած էր հանդիսութեան պատասխանատուութիւնը : Երանելի օրեր էին : Ուրախ, խանդավառ, խենթ : Մանաւանդ իրեն համար : Սիրահարուած էր, եւ ուրեմն՝ զինով : Եւ ինչպէ՞ս ուրախութեամբ զինով չըլլար, երբ սիրած անձին հետ էր միշտ ամիսներ տեւող փորձերուն ընթացքին :

— Այսօր դուն եւ ես միայն դեր պիտի խաղանք կարծեմ, — խօսած էր ուսուցիչը, երբ նկատած էր որ դասընկերները ուշացած էին : — Միւսները ո՞ւր են :

— Աւելի լաւ կ'ըլլայ, — խնդացած էր ինք ուրախութեամբ, իրեն ընծայուած առիթը օգտագործելով :

— Կը սխալիս : Մենք դեր երբեք պէտք չէ խաղանք :

Զարմացած նայած էր ուսուցիչին, որ բացառաբար ջգային կ'երեւէր : Թէեւ դէմքը, սովորականին պէս հանդարտ ու զուսպ, ոչինչ կը մտանէր :

— Կեանքին հետ կատակ պէտք չէ ընել, — ըսած էր յետոյ : — Կը պատժէ :

— Ձեմ կատակեր :

— Ուրեմն ըրածդ դերասանութիւն է միայն :

— Այդպէ՞ս կը խորհիք : Լաւ է, գոնէ բան մը նկատած էք : Ինչո՞ւ զիս կը չարչարէք, — աւելցուցած էր ինք յետոյ :

— Շատ չարչարուածի երեսոյթ չունիս : Թռչունի պէս կը ճռուողես միշտ, ու հանդարտ չես կենար :

— Երբ դուք ներկայ էք՝ այո՛ : Ուրախութենէս հաւանաբար :

— Ուրախութիւնը կը չարչարէ՞, — չարունակած էր զինք չարչարել Պր. Գեղամ :

— Դ՛ուք զիս կը չարչարէք, ոչ թէ ուրախութիւնը :

Լրջացած էր յանկարծ, ու ձեռքերը զրպաններուն մէջ, սկսած էր քաշել նստարաններուն միջեւ : Բայց յետոյ եկած եւ կանգնած էր ճիշդ դիմացը, բեմին մօտ, ու հանդարտօրէն հարցուցած :

— Գիտե՞ս, թէ քանի տարեկան եմ :

— Թերեւս, մօտաւորապէս : Կարելո՞ր է :

— Մեր միջեւ տարիքի հսկայ անջրպետ մը, տարբերութիւն մը կայ. բայց աւելի կարելորը՝ դուն շատ անփորձ ես, եւ ասկէ առաջ թերեւս չես սիրած : Մինչդեռ ես յաճախ յուսախար եղած եմ, եւ ուրեմն աւելի փորձառու եմ, աւելի գիտակից : Իմ տարիքիս՝ տրամաբանութիւնս կրնամ դորձածել, իսկ դուն՝ չես կրնար : Ո՛չ, չես կրնար, որովհետեւ շատ փոքր ես այս ամբողջը հասկնալու, դատելու եւ զգացումներդ հաւասարակշռելու համար : Մտածեցի՞ր երբեք, թէ կրնամ այս հարցին լրջօրէն մօտենալ եւ աւելի դորձնական ակնկալութիւններ ունենալ :

— Բայց ես ձեզ անկեղծօրէն կը սիրեմ :

— Տարակոյս չունիմ : Ըսելու պէտք չունիս. աչքերուդ, արտայայտութեանդ մէջ կը կարդամ ատիկա : Ես ալ քեզ կը սիրեմ անշուշտ, նկատած պէտք է ըլլաս : Թէեւ իրաւունք չունիմ. թէ որպէս ուսուցիչդ, եւ թէ տարիներու տարբերութիւնը նկատի առած : Ատիկա այլ հարց : Բուն ըսելիքս . . . :

— Կարելորը ատիկա գիտնալս է, — ընդմիջած էր ինք շնչահատ : — Ատկէ աւելի բան չեմ ուզեր :

— Մտող վէրքին վրայ դիրք : Ճիշդ է, դուն ատկէ անդին չես կրնար անցնիլ, որովհետեւ սէրը քեզի համար եթերային բան մըն է. զգացում՝ առաւելաբար : Մինչդեռ իմ պարագայիս կրնայ տարբեր հարցի վերածուիլ : Լուրջ հետեւանքներ ունենալ :

— Ձեմ հասկնար :

— Ես պատանի չեմ, եւ ոչ ալ նախկին երիտասարդը : Բայց ինչո՞ւ կ'ըսեմ այս բոլորը քեզի . . . կը տեսնե՞ս թէ փոքր աղջիկ մը ինչե՞ր կրնայ ընել, ինչ աւեր դորձել :

— Աւե՞ր :

— Յամենայն դէպս այս խենթութիւնը հոս իսկ, եւ հիմա վերջ պէտք է գտնէ, — վճռականօրէն խօսած էր Պր. Տարօնեան :

— Ի՞նչը վերջ պիտի գտնէ, — ուրախութիւնը ահռելի անտրամադրութեան վերածուած էր ակնթարթի մը մէջ : — Ի՞նչ ըսի որ, ի՞նչ ըրի :

— Դ՛ու : Ես է որ խելքս կորսնցուցեր եմ կարծեմ : Լա՛ւ, գնա դասընկերներդ դախի հիմա :

— Բայց իրաւունք չունի՞մ գիտնալու : Յանցանքս ի՞նչ է :

— Դուն շատ խելօք, աղուոր ու մանաւանդ խելացի աղջիկ մըն ես, եւ ուրեմն պէտք է խօսք մտիկ ընես : Հաճիս գնա միւսները կանչէ :

— Չեմ երթար, — ըմբոստացած էր ինք՝ առանց իսկ անդրադառնալու իր կատարածին:

Բայց փոխանակ ջղայնութենէն լալու կամ յուզուելու, ժպտած էր յամառօրէն ու մազաչափ իսկ չէր շարժած տեղէն:

Մինչ այդ ակնկալածին ճիշդ հակառակը պատահած էր: Պր. Տարօնեան, զուարճացած եւ ինքզինք զսպելու անկարող, սկսած էր յարձրածայն խնդալ:

— Իրաւ փորձանք ես եղեր, — կրցած էր խօսիլ ի վերջոյ. — ի՛նչ կարելի է ընել:

*
**

Իսկապէս անմեղ ու միամիտ, փոքր ազնիւ մըն էր այն ատեն: Հիմա, նոր միայն կ'ըմբռնէր ուսուցիչին ըսածը: Գեղեցիկ երազ մըն էր այդ ամբողջը, անվերադարձօրէն կորսուած, չքացած երազ մը, զոր կարելի չէր վերստեղծել: Բայց իր կեանքի միակ հարստութիւնն էր, միակ գեղեցկութիւնը, որու վրայ կը դուրդուրար, եւ անաղարտ կը պահէր զայն մինչեւ այսօր: Մաքուր, հրաշալի սէր մը եղած էր, ինչպէս զինք սիրողը: Այդ տարօրինակ, հպարտ բայց խոնարհ մարդը կամ տղան — տղայ էր իրակասնութեան մէջ՝ իր հասունութեամբ ու տարօրինակութիւններով հանդերձ — որ խնամած, զիեցուցած էր իր սէրը, կատարելութեան հասցնելու համար զայն: Ոչինչ պահանջած էր կամ ակնկալած, ու միայն տուած էր իր էութենէն մաս առ մաս, եւ առանց սակարկութեան: Եւ աննշմար կերպով դուրս քալած էր իր կեանքէն, երբ ամուսնացուցած էին զինք, հազիւ տասնութը տարին աւարտած: Չէր դանդատած: Բացատրութիւն չէր պահանջած: Ու եղած էր գերազանցօրէն փափկանկատ՝ պատահական հանդիպումներէ խուսափելով: Մինչդեռ ինք ուզած էր տեսնել զինք այդ շրջանին, եւ ինքզինք մխիթարել հաւանարար:

Ամուսնանալէն ետք, վերջին շորս տարիներուն ընթացքին, հանդիպած էին անշուշտ քանի մը անգամ՝ հանդիսութեանց կամ տօնակատարութիւններու ժամանակ: Ու զարմացուցած էր զինք դարձեալ՝ իր վեհանձնութեամբ ու սրամտութիւններով: Կարծես ոչինչ պատահած էր, ոչինչ քանդուած: Նոյն զուարթ եւ ինքնավստահ մարդն էր, ու զարմանալիօրէն՝ չէր վշտացած, կամ դէժ կրցած էր իշխել իր զգացումներուն վրայ:

— Ինչպէ՞ս ես, Ալպիական Մանուշակ, — կը հարցնէր իրեն

ամէն անգամ, ճիշդ այնպէս ինչպէս կ'ընէր անցեալին, դասարանին մէջ կամ դասարանէն դուրս:

Ալպիական Մանուշակ կոչած էր զինք առաջին իսկ օրէն, եւ իր բուն անունը չէր դորձածած երբեք: Ու երբ քանիցս ինք հետաքրքրուած էր, թէ ի՛նչ էր կամ ո՛վ էր ալպիական մանուշակը, դոհացուցիչ պատասխան չէր ստացած երբեք: Սուսափողական ակնարկութիւններ ըրած էր ան միայն կամ կատակած: Երկրորդ կիսամեայէն ետք, երբ սկսած էին Սովետահայ Գրականութիւն սերտել, ինք լուծած էր հանելուկը բայց ոչ մէկ նմանութիւն դտած էր իր եւ Ակսէլ Բակունցի Մանուշակին միջեւ:

Այդ հանդիպումներէն մէկուն ընթացքին, երբ յարմար պատահութիւն ստեղծուած էր, եւ վստահ ըլլալէ ետք թէ կրնար ազատօրէն խօսիլ, ամբողջ քաջութիւնն ու իզական պջրանքը ի գործ դրած էր եւ հարցուցած:

— Ինչպէ՞ս կրնաք ներել ինձի:

Ոչ զարմացած էր, եւ ալ չփոթած: Ընդհակառակն՝ այն տպաւորութիւնը ձգած էր վրան, թէ երկար ժամանակ սպասած էր այդ հարցումին, եւ ուրեմն դոհունակութեամբ ընկալած էր զայն եւ ըսած:

— Երեւան կու դայ որ նոյն երեխան ես տակաւին, եւ ամուսնանալէդ երկու տարի ետք իսկ չես կրցած ըսածս ըմբռնել:

— Չեզ երբեք պիտի չկարենամ հասկնալ: Առաջին անգամն է, այդ օրերէն ի վեր, երբ առիթ կ'ունենամ ձեր հետ խօսելու, բացատրելու, սիրտս պարպելու, իսկ դուք... ի՛նչ կրնամ ըսել: Այնքա՞ն արհամարհելի դարձած եմ ձեզի համար:

— Կրկնել պիտի տաս, — խօսած էր ան ակներեւ խանդաղատանքով, — նոյն փոքր ազնիւն ես, ու զարմանալիօրէն չես փոխուած: Իսկապէս զարմանալի է, անհաւատալի: Ամուսնանալէ եւ մայր ըլլալէ ետք նոյնիսկ, այս աշխարհին մաս չես կաղմեր տակաւին: Կ'երազես, կամ երազի մէջ կ'ապրիս ու չես անդրադառնար որ իրական կեանքը տարբեր է. չոր, դաժան, անհրապոյր:

— Այս բոլորը ե՞ս պատճառած եմ ձեզի:

— Դուն, եթէ կամենայիր նոյնիսկ, այս բոլորին պատճառ չէիր կրնար ըլլալ: Իրական կեանքը, անկախ քեզմէ, ինձմէ եւ բոլոր մարդերէն, այսպէս է: Եւ տարբեր չի կրնար ըլլալ: Աշխարհը ոչ դուն ստեղծեցիր, ոչ ալ ես: Իսկ թէ դուն բանի մը պատճառ դարձած ես... ի՞նչ ըսել կ'ուզես:

— Բայց վերաբերմունքս արգարանալի չէր...:

- Ուրիշ ի՞նչ կրնայիր ընել :
- Ըսել կ'ուզէ՞ք, թէ ինձմէ կ'ակնկալէիք, — բողոքած էր ինք. — այդ տպաւորութի՞ւնը ձգած եմ ձեր վրայ :
- Ոչ թէ քեզմէ : Շատ բնական էր պատահածը : Օր մը պիտի ամուսնանայիր ի վերջոյ : Ձե՞ս խորհիր :
- Կրնայի չամուսնանալ :
- Ի՞նչ փաստելու համար :
- Սէրը փաստի կը կարօտի՞ :
- Ի վերջոյ խելացի խօսք մը ըսիր, — կատակած էր դարձեալ :
- Բայց եւ այնպէս ամուսնացար : Եւ՝ սխալ չես ըրած : Անկեղծ :
- Կամքիս հակառակ ամուսնացուցին զիս :
- Պատճառ մը ունեցած պէտք է ըլլան : Անգոստիի դարձած էիր կ'երեւի :
- Անգոստիին քոյրս էր :
- Քո՞յրդ, — հարցական նայած էր իրեն, ըստ երեւոյթի՞ն չ'իտթած :
- Գերմանացի երիտասարդի մը հետ փախած էր այն ատեն : Ծնողքիս կամքին հակառակ ալ ամուսնացաւ հետը վերջաւորութեան :
- Քրոջդ վրէժք քեզմէ լուծեցին ուրեմն, այս անգամ կամքիդ հակառակ քեզ ամուսնացնելով :
- Կը դարմանամ որ հայրս ինքզինք չսպաննեց : Շատ հպարտ եւ մոլեռանդ հայ է :
- Կը հասկնամ, — Պր. Տարօնեան լրջացած էր յանկարծ :
- Բարեբախտաբար բաժնուեցան յետոյ, եւ Սեդան սքանչելի հայ երիտասարդի մը հետ ամուսնացաւ ատկէ ետք : Վստահ եմ որ պիտի հաւնէիք զինք :
- Քեռա՞յրդ : Ի՞նչը այդպէս խորհիլ կու տայ քեզի :
- Շատ տարօրինակ, ինքնատիպ ու քաջ տղայ մըն էր : Խենթ չըլլար քրոջս հետ չէր ամուսնանար :
- Ինչո՞ւ անցեալ եղանակով կը խօսիս իր մասին : Չըլլայ որ անկէ ալ բաժնուեցաւ . . . :
- Ո՛ր, — զուարճացած ընդմիջած էր ինք : — Հայաստան ներգաղթեցին, դեռ հազիւ ամուսնացած : 1968-ին էր կարծեմ :
- Հոյակապ : Իսկապէս հետաքրքրական երիտասարդ մը պէտք է ըլլայ : Պէտք է ըսել որ հանդերձ ընտանեօք հետաքրքրական էք յամենայն դէպս :
- Խենթ, կատարեալ խենթ էր :
- Քեզի պէս քենի մը ունեցողը, ու քրոջդ ալ պէս կին՝ ուրիշ

ի՞նչ կրնայ ըլլալ : Նմանն զնմանն դտանէ :

— Ուրեմն ըստ ձեզի ես խե՞նթ եմ, — ուրախութեամբ հարցուցած էր, մասամբ խաղաղած : Այդ պահուն, կը յիշէր, ինքզինք վերադարձ էր եւ հաստատած, թէ սէրը կենդանի էր տակաւին իր մէջ : Եւ անցեալի երանութեան օրերէն մէկը ապրած էր դարձեալ : Աշխարհի ամենէն երջանիկ կիներ էր այդ օր :

**

Երբ տուն հասաւ, ամուսինը հազուած իրեն կը սպասէր : Չարմացաւ : Վերջին շրջանին մինչեւ կէսօր կը քնանար, մանաւանդ երբ գիշերը ուշանար :

— Ուրիշ՞ կու գաս, — հարցուց իրեն :

— Գնում ընելու դուրս ելայ :

— Այսպէս հազուած-չըուած :

— Ինչպէ՞ս պատահեցաւ որ կանուխ կը մեկնիս այսօր, — Ալին նպատակաբարմար նկատեց նիւթը փոխել : Այլապէս այլ սուտեր եւս յերիւրելու հարկադրանքին տակ պիտի ըլլար :

— Պզտիկները այսպէս անտէր անտիրական կը ձգես, յետոյ ալ կ'ակնկալես որ քնանամ : Երկու ժամ է իրենցմով դրաղած եմ : Բայց առտուան այս ժամուն ի՞նչ զնում է, ատիկա կրնամ հասկնալ :

Պատասխան չունենալով, Ալին ուղղուեցաւ դէպի ննջասենեակ, բայց ամուսինը հետեւեցաւ իրեն, եւ շարունակեց :

— Կրնամ հասկնալ : Ինչո՞ւ չես պատասխաներ :

— Գիշերուան խայտառակութիւնը կը բաւէ : Կուուելու ատրժակը բացուեր է վերջերս : Ի՞նչ ունիս, ի՞նչ կ'ուզես ինձմէ :

— Պիտի ըսե՛ս, թէ ուր էիր :

— Տունէն դուրս ելլելու իրաւօ՞ւնք ալ չունիմ այլեւս :

— Առտու կանուխէ՞ն, երբ ամէն մարդ քնացած է : Մարդիկ ի՞նչ կը խորհին :

— Այդքան մտահոգուած ես : Գիշերը, երբ դրացիները գլխուս հաւաքեցիր, այդ մասին չմտածեցիր : Մեր ինչ ըլլալը գիտեն արդէն . այնպէս որ մտահոգուելու պէտք չունիս :

— Պիտի գիտնամ, թէ ուր գացած էիր, — Արչակ ձայնը բարձրացուց եւ աւելի մօտեցաւ իրեն :

— Պոռալու մի սկսիր նորէն, եթէ չես ուզեր դրացիները հոս հաւաքել, — Ալին բաճկոնը հանեց եւ գրկեց թամարը, որ լալու սկսած էր : — Պզտիկներուն մեղքքիր գոնէ :

— Չզայցում ունենայիր, դիրենք առանձին չէիր ձգեր:

— Քեզի ի՞նչ եղեր է: Հայրերնին չե՞ս: Այսօր ալ, անդամուան մը համար, դուն հոգ տանէիր իրենց:

— Որ դուն փողոցները սլքտաս:

— Քեզմէ սորվեցայ: Ասիկա կեանք է. մինչեւ ե՞րբ կը կարծես որ կրնամ համբերել: Ամէն օր մինչեւ լոյս քեզի պիտի սպասեմ, որ բարեհաճիս տուն դալ՝ կորսնցուցած գումարներուդ հաշիւը ինձմէ պահանջելու համար: Կը կորսնցնես, յետոյ ալ ջղայնութիւնդ իմ գլխուս կը պայթի: Եթէ կը խորհիս որ ասոր համար ամուսնացայ, կը սխալիս: Ուրիշ կին մը ըլլար...

— Ի՞նչ պիտի ընես, — ամուսինը գոռաց յանկարծ. — հը՛, ի՞նչ պիտի ընես: Եստ-չատ ծնողքիդ կը վերադառնաս. աւելիին արժանի չես արդէն: Երազիդ մէջ տեսնէիր, կրնայի՞ր հաւատալ որ այս տեսակ բախտ պիտի ունենայիր: Կեանքիդ մէջ այս ճոխութիւնը տեսած էիր:

— Ճոխութիւնը, հարստութիւնը ի՞նչ պիտի ընեմ, երբ տունը դժոխքի վերածուած է: Ո՞վ կ'ուզէ, կրնայ դժոխքի մէջ ապրիլ:

— Ձեռ հանիր, դուն գիտես: Կրնաս գլուխդ պատերուն զարնել: Դժոխք: Ի՞նչդ պակաս է, ինչէ՞ն զրկուած ես: Ուզածիդ պէս եւ ուզածիդ չափ կը ծախսես. ամէն օր նոր հագուստ, նոր կօշիկ, պտոյտ, պարահանդէս: Դեռ ի՞նչ կ'ուզես:

— Բան չեմ ուզեր: Բայց գլուխս ալ պատերուն զարնելու պէտք չունիմ: Եթէ այսպէս շարունակուի, ես ընելիքս գիտեմ: Այն ատեն կրնաս դուն գլուխդ պատերուն զարնել, մինչեւ որ խելքդ վերադառնաս:

— Ձախը անցուցիր կարծեմ, — Արշակ անակնկալօրէն խոյացաւ կնկան վրայ եւ սկսաւ անխնայ կերպով հարուածել: — Ես քու դասդ կու տամ... տեսնենք ով պէտք է խելքը վերադառնէ:

Այս միջոցին Թամար սկսաւ ճշալ դարձեալ, մանաւանդ երբ մայրը հարկադրուած վար դրաւ. դինք դիրկէն: Հայրը, աւելի եւս ջղայնացած, վերցուց երեխան գետնէն ու նետեց մահճակալին մէջ, ու պոռալով, սպառնալով, ուղղուեցաւ դէպի խոհանոց ուր շարունակեց պոռպոռալ եւ հայհոյել՝ մինչեւ որ հանդարտեցաւ մասամբ: Վայրկեաններ ետք միայն անդրադարձաւ որ խոհանոցին մէջ էր ու յիշեց թէ ինչու մտած էր հոն: Երկու դեղահատ կլլեց, եւ առանց ետին դառնալու դուրս եկաւ տունէն:

Գրան փակուելը լսելէ ետք Ալիս սթափեցաւ եւ քննեց շուրջ-բոլորը: Թամար լուծ էր արդէն ու կը ժպտէր իրեն, մինչ Գրիգոր կողքին կանգնած լուռ կ'արասուէր: Հագիւ չորս տարեկան, վա-

ղահաս ու դերզայուն մանչուկ մը դարձած էր անդրանիկ զաւակը, որու ներկայութիւնը զգալի չէր ըլլար տան մէջ սովորաբար: Անկիւն մը քաշուած, ինքնիրեն կը զրադէր, խորասուզուած իրեն յատուկ մտածումներու կամ մանկական երազներու մէջ, ու հազուադէպօրէն կը խօսէր՝ իր արտակարգ հարցումներէն մէկը հարցնելու համար: Իսկ հիմա, չես գիտեր ինչպէս, յայտնուած էր յանկարծ ու կը բողբէր կարծես:

Ի՞նչ պատահած էր: Քանի մը վայրկեանի մէջ աշխարհը դըլ-խիվայր շրջած էր իրեն համար, եւ հիմա վստահ գիտէր, թէ կեանքը նոյնը չէր կրնար ըլլալ ասկէ ետք: Ահռելի զղացում էր: Ունայնութեան վիճ մը, կամ անիմաստութեան խորխորատ մը գոյացած էր իրմով, իր շուրջ: Ձէր լացած, չէր փորձած իսկ Արշակի հարուածներէն խուսափիլ՝ անզղալարար անձնատուր եղած իր մէջ ստեղծուող յուսահատութեան, որ վիրաւորանք էր աւելի:

Եւ առանձին զգաց:

Ե.

1973 թուականին Լիբանան կը յղփանար անգիտակից, ինքնամոռաց վիճակի մը մէջ: Տնտեսական բարդաւաճումը իր հետ բերած էր անխուսափելի բոլոր փորձութիւնները — զեխութիւն, բարոյական սկզբունքներու դահալէժ նահանջ եւ դարավերջիկ մոլութիւններ, որոնք ժողովուրդը կ'առաջնորդէին դէպի եսակեղրոն ուրացումը մարդկային ընկերութեան բոլոր արժէքներուն: Իւրաքանչիւր լիրանանցի կ'ապրէր ինքիրեն համար. նոյնիսկ զրկուածները: Թէեւ այդ շրջանին Լիբանանի մէջ զրկուածներ չկային, հակառակ անոր որ կային աղքատ ու խոնարհ մարդիկ, ինչպէս նաեւ բեռնակիրներ: Մասնաւոր դատակարար մը կը կազմէին սակայն բեռնակիրները, որոնք ուսուցիչի մը կամ քարտուղարի մը ամսական ոոճիկին տասնապատիկը կը շահէին: Բայց ուսուցիչ, պաշտօնեայ, արհեստաւոր, բեռնակիր եւ աղքատաւաճ՝ բոլորն ալ սեպհական ինքնաշարժներ ունէին եւ իրենց շահածէն շատ աւելի կը ծախսէին:

Աշխարհի այլ երկիրներուն մէջ պատահածը — յեղափոխութիւն, պատերազմ, թշուառութիւն, տաղնապներ, սնանկութիւն — գիրենք չէր հետաքրքրեր: Նոյնիսկ դրացի եւ մօտակայ երկիրներու

մէջ կատարուածին չէին անդրադառնար, հակառակ անոր որ մեծ հետաքրքրութեամբ եւ հետեւողականօրէն կը հետեւէին միջազգային քաղաքական լուրերուն: Ոչ միայն Արարական Աշխարհի, այլ ամբողջ Միջին Արեւելքի ամենէն ազատ եւ յառաջողէմ մամուլը կ'ապրեցնէին իրենց երկրին մէջ ու կը դուրսդուրային անոր անկախութեան վրայ: Բայց խզի ամենայն հանդարտութեամբ կը ծախէին իրենց իսկ կատարելագործած հրատարակութիւնները՝ առաւելագոյն դիմը վճարողին: Իսկ այս դիմերը վճարողները օտարներ էին ընդհանրապէս, եւ ասոնք անհաւատալի գումարներ կը յատկացնէին յաճախ Լիբանանի մէջ թերթի մը տիրանալու համար:

Գրամը կը հոսէր, ինչպէս կ'ըսեն, ու լիբանանցին կը լողար առատութեան մէջ՝ կամովին յանձնած ինքզինք կատողած հոսանքին: Յարատեւ խրախճանքի մէջ էր Լիբանան՝ իր անհամար գինետուներով, քաղաքներով, ճաշարաններով, հաճոյքի կեդրոններով ու պաշտօնական կամ զազանի հանրատուներով: Եւ լիբանանցին, բնականաբար, գինով էր՝ հաճոյքով եւ ինքնախարէութեամբ:

Ժագ Առաքելեան կը խոկար ինքնաշարժին մէջ, որ դիմը մայրաքաղաքի կեդրոնական հրապարակը կը տանէր: Աղմուկն ու եռուզեռը, ինչպէս նաեւ ինքնաշարժներու խճողումը թմբեցուցած էին դիմք եւ անջատած անմիջական իրականութենէն: Հմայուած էր կարծես կամ վերացած, եւ այդ վիճակին մէջ՝ կը զմայլէր անհաւատալի այս հրաշքին, որ Լիբանանն էր: Առանց ճիգի, առանց զոհողութեան, անգիտակցաբար եւ թերեւս ակամայ անկախութիւն ստացած էին երկրի մը մէջ, զոր բնութիւնը օժտած էր բազմապիսի առաւելութիւններով եւ շնորհած անոր իր լաւագոյն բարիքները: Գեղեցիկ բնաշխարհ, սքանչելի կլիմայ եւ աշխարհագրական կարեւոր դիրք մը՝ շրջանին մէջ: Ու բախտաւոր եղած էին լիբանանցիները նոյնիսկ անկախութենէն ետք, որովհետեւ երկիրը հարստացած էր ինքնարբարար: Պետութիւնը կամ բնակչութիւնը չէր ծրագրած եւ իրագործած տնտեսական այս բարգաւաճումը, այլ պատահած էր պարզօրէն՝ զարմացնելով զիրենք եւ աշխարհը ընդհանրապէս:

Նախանձի տարօրինակ, անբացատրելի զգացում մը անհանդրստացուց զինք եւ վրդովեց ներաշխարհը: Նահատակաց հրապարակ հասնելէն առաջ իջաւ ինքնաշարժէն եւ նախընտրեց քալել, որպէսզի սթափէր եւ թօթափէր վրայէն թմբութիւնը՝ յուսալով ձերբազատուիլ սահմուկեցուցիչ այս հողեմիճակէն: Նախանձելու իրաւունք չունէր: Բնական չէր, եւ ոչ ալ տրամաբանական՝ իրեն համար: Բայց եւ այնպէս ինք, լիբանանցի ըլլալով հանգերձ, զրկուած էր նմանօրինակ

բախտաւորութենէ մը: Աշխարհի վրայ ամէն մարդ հայրենիք մը ունէր, ու Հայն ալ ունէր իր հայրենիքը անշուշտ: Բայց հոն տեղ չունէր: Այս մօլորակի մարդկային միակ ազգը, որ իր հայրենի հողին վրայ չէր ապրեր՝ հայ ազգն էր: Միակ բացառութիւնը: Եզակի պարագան: Սովետական Հայաստանը չէր մոռցած անշուշտ: Ու հոն դացած էր, ներգաղթած, յուսալով իր ինքնութիւնը դանել, վերահաստատել: Բայց ձախողած էր: Հայեր կ'ապրէին հոն, այո՛, եւ հողը հայկական հող էր — Հայաստանի մէկ մասը — սակայն ձախողած էր: Ոչ ինքզինք դատած էր, եւ ոչ ալ փնտռածը:

Յամենայն դէպս ներկայ Հայաստանը ոչ մէկ կերպով կարելի էր Լիբանանի հետ բազդատել: Հոն՝ Հայր դերմարդկային ճիգերով եւ նուաստացուցիչ զրկանքի մէջ ապրելով կը փորձէր պահպանել երկրին զոյութիւնը՝ պատմական իրականութեան մը կառչած մնալու համար թերեւս: Որովհետեւ եղածը ամբողջ պատրանք մըն էր, խարուսիկ երազ, որ կար եւ չկար: Եւ զարմանալի չէր ուրեմն, որ տեղացիները դուրսդուրային անոր վրայ եւ հրաշքներ գործէին՝ զայն իրականութեան վերածելու համար: Հողբերանական վիճակ էր հաւանաբար՝ ժողովուրդի մը համար, որ դարեր շարունակ ստրկութեան մէջ ապրած էր իր իսկ հողին վրայ: Արդարեւ, հողին տէր ըլլալու գիտակցութենէն զրկուած ժողովուրդ մը միայն կրնար այս տեսակ հողեմիճակ ստեղծել ինքն իր մէջ, եւ ընդունիլ պատմութեան իրեն պարտադրած անարդարութիւնը:

Մինչդեռ լիբանանցին իր տգիտութեան, անզգայութեան, իր քունին մէջ իսկ ինքնալուստահ էր, ու կասկածներ չունէր երբեք: Եւ այդ իսկ պատճառով, թերեւս, կ'ապրէր երջանիկ տգիտութեան մէջ: Ո՞րը նախընտրելի էր սակայն: Անբան անասուններու վերածուած են այս մարդիկը, խորհեցաւ Ժագ, եւ չուզեց պատասխանել ինքն իր հարցումին: Բայց նախանձի զգացումը չկրցաւ արմատախիլ ընել իր մէջէն, եւ զարմացաւ:

Հայաստան ներգաղթելէն առաջ երջանիկ արարած մըն էր, եթէ նոյնիսկ անբան անասուն չէր: Անհող, ինքնարաւ եւ յանձնապատան երիտասարդ մըն էր, ու Լիբանանի միւս բոլոր երիտասարդներուն նման կը վայելէր կեանքը՝ գերծ ամէն կարգի մտահոգութենէ: Թէեւ առանձին ու որբ մեծցած տղայ՝ լաւատես եղած էր միշտ ու յաջողած էր համալսարանական վկայական ստանալ եւ պատասխանատու պաշտօն մը ունենալ ժամանակի ընթացքին: Բնական ինքնալուստահութեամբ մը եւ առանց երկընտրանքի ծրագրած էր կեանքը, եւ յաղթական յառաջացած էր տարուէ տարի, եւ չէր անդրադարձած իսկ,

թէ ինչ կ'ընէր կամ կ'իրագործէր: Այդ ամբողջը բնական եւ անխուսափելի թուող հոլովոյթ մը եղած էր, եւ այսօր իսկ չէր հարցաքնններ նմանօրինակ անհրաժեշտութեան մը ենթադրատակցական բնոյթը:

Մինչդեռ այսօր:

Նախ Աստղիկի ողբերգութիւնը, ու միաժամանակ Սեդայի վերաւոր աղգասիրութիւնը զգաստութեան կոշած էին զինք, եւ կեանքը ամբողջ յեղաշրջած: Կուրօրէն գերմանացի երիտասարդի մը թեւերուն մէջ նետուած հայ բայց լիրանանցի պարմանուհիի մը աղգային զիտակցութիւնը, կամ զնովզումը՝ հրահրած էր իր մէջ անցեալի մոխիրներուն տակ թաղուած կրակը, որու գոյութիւնը կ'անդիտանար այն ատեն: Այդ խորուած բայց անպարտ ու պէտք աղջկան պարզ ու անսեթեւեթ դուարթութիւնը, որ անընկճելի ըմբոստութիւն էր խորքին մէջ, հիացում պատճառած էր իրեն ու պարզօրէն՝ դերի վարած էր զինք: Ու սիրած էր այնպէս ինչպէս ոչ ոք սիրած էր, կը խորհէր, ու մինչեւ այսօր համոզուած էր, թէ իրենցը իսկական սէրն էր — ինքնարուեստ, անմար եւ յաւիտենական: Չնախատեսուած, չծրագրուած սէր մըն էր, որ իրենց մէջ երեւան բերած էր իւրաքանչիւրին իսկութիւնը. իրենց անձերուն անպեղելի ու խորախորհուրդ գաղտնիքները: Գարեթէ ի վեր ու դարերու ընթացքին իրենց մէջ արմատներ արձակած անմեկնելի խորհուրդ մը, որ մարդկային անզիտակից ձգտում էր, նպատակասլաց նուիրում:

Եւ այդպէս՝ վերադարձած էր իր գոյութեան ակունքներուն՝ անզգալարար, նոյնիսկ ակամայ: Եւ իր սիրոյն մէջ բախտաւոր ըլլալով եւ ինքզինք բախտաւոր համարելով հանդերձ, դարձած էր զժողով եւ անկայուն մարդ մը: Նախկին ինքնապատահութիւնը կորսնցուցած, այս հսկայ աշխարհի վրայ ինքնիրեն համար տեղ կը փնտռէր: Կամ՝ ինքզինք կը փնտռէր: Այո՛, հաւանարար ինքզինք կը փնտռէր միայն, ուրիշ ոչինչ: Գաղափարը մասամբ հանդարտեցուց զինք, եւ զժուարին հարց մը լուծած ըլլալու գոհունակութեամբ, շարունակեց քալել զէպի կեղրոնական հրապարակ՝ ուղղութիւնը վերադառած մարդու վճռականութեամբ: Ուրեմն անդտանելի, անմատչելի կամ անըմբռնելի բան մը փնտռելու հետամուտ չէր: Ի վերջոյ կեանքի մէջ չէր կրնար այդ տեսակ՝ անիմանալի ձգտում ըլլալ: Որեւէ ձգտում կամ մղում պէտք էր սահմանելի, առարկայականօրէն շօշափելի հանդրուանի մը հասնելու ճիգ ըլլար: Այլապէս մարդ ոչինչ կրնար իրագործել, եւ կատարածը ամբողջ անորոշութեան մէջ խարխափումի կը վերածուէր:

Տարիքն ու փորձառութիւնը ինչե՛ր կ'ընեն, ժպտեցաւ յետոյ,

բայց կաշկանդուած զգաց: Փաստօրէն նախկին ժպտը չէր. ծերացած էր կամ գէթ ծերացած մարդու պէս կը զգար, կը մտածէր ու կը տրամարանէր: Երեսունհինգ տարեկանին այս ինչ անէծք էր: Այս ի՞նչ լըջութիւն: Կ'ուզէր իր նախկին անձը ըլլալ եւ վերադառնել դուարթութիւնը, որ աւելի մարդկային յատկութիւն մըն էր, աւելի բնական:

Յամենայն դէպս իր ներկայ վիճակէն զժողով էր: Երջանիկ ամուսնութիւն մը կնքած եւ համերաշխ կեանք մը ունենալով հանդերձ, իր առօրեան իմաստէ պարպուած էր: Ուզած ատեն կրնար լուսադոյն պաշտօնը ապահովել եւ մարդավայել կերպով ընտանիքը ապրեցնել: Բայց զժողով էր: Անհանգիստ՝ անձնատուր եղած ըլլալով ներքին անբացատրելի խռովքներու: Ի՞նչ պատահած էր իրեն: Աշխարհը անսահման, անձայրածիր բանտ մըն էր, եւ ինք՝ այդ հսկայ բանտին մէջ՝ ուղղութիւնը կորսնցուցած կալանաւոր: Տարօրինակ բանտ, արդարեւ, ուր ինքնիրեն համար փոքր անկիւն մը կ'ուզէր ապահովել, եւ սահմաններ քաշել ինքն իր շուրջ, որպէսզի ազատագրուէր, վերադառնէր իր ինքնութիւնը:

Այս էր իր բանտը, որ սահմաններ չունէր:

Մինչդեռ ինք կ'ուզէր սահմաններ քաշել, դառնել, եւ սահմանել ինքզինք ի վերջոյ: Այսինքն՝ սահմանելով եւ սահմանափակելով ինքզինք, ազատագրուէր ու դուրս գար աշխարհի բանտէն, եւ ազրէր որպէս ազատ, իր ինքնութեան ծանօթ եւ անոր հետ հաշտ մարդ: Կարելի՞ էր: Կամ՝ կարելի պիտի ըլլա՞ր:

Այլապէս պիտի չկազաղէր: Եւ պիտի չկարենար ապրիլ երբեք:

Եւ ակամայ, մտածեց յետոյ, թէ ինչ կ'ընէր հոս, կամ որեւէ տեղ — աշխարհի վրայ:

Որոշած էր: Պէտք է երթար եւ Պր. Արամին իմացնէր, թէ նախկին պաշտօնին կ'ուզէր վերադառնալ: Ասկէ աւելի ժամավաճառ ըլլալը իմաստ չունէր այլեւս: Հանգիստ եւ ապահով գործ էր, եւ վարձատրութիւնն ալ գոհացուցիչ էր՝ գէթ անցեալին: Վստահարար տրամաբանական յաւելում մըն ալ կ'ընէր Մարդը, եւ ամսականը կը պատշաճեցնէր ներկայ պայմաններուն: Վերջին հինգ կամ վեց տարիներուն ընթացքին ապրուստը զգալի կերպով սղած էր, եւ հացին գինը նոյնիսկ՝ կրկնապատկուած: Առժամապէս գէթ, մինչեւ որ վերջնականապէս որոշէր թէ ինչ պիտի ընէր, զբաղում մը կ'ըլլար

նաեւ այս գործը, եւ կրնար վրայէն թօթափել ներկայ անորոշու-
թիւնը:

Բայց փոխանակ վաճառատուն երթալու, ուղղուեցաւ դէպի
Պար ժաֆոպ, ուր կը յաճախէր երբեմն անցեալին՝ բարեկամներու
հետ: Նահատակաց հրապարակին ճիշդ կեդրոնը, շարժանկարի սրահ-
ներուն կից, փոքր գինետուն մըն էր այս վայրը, ուր քաղաքի ամե-
նէն ընտիր եւ թարմ գարեջուրը կարելի էր խմել: Թէեւ առտուան
ժամը տասն էր, եւ այս ժամուն խմելու սովորութիւն կամ պատճառ
չունէր: Հայաստանի մէջ տարբեր էր: Հոն՝ արեւածագին նոյնիսկ կա-
րելի էր խմելու սկսիլ. եւ՝ պատրուակներ միշտ կային: Յամենայն
դէպս վճռական քայլերով մտաւ գինետունէն ներս եւ դրակց գարե-
ջուրի տակառին ետին պահուելու ամբողջութիւն մէկը: Ապա գարե-
ջուրի խոշոր բաժակ մը սպասարեց փոքրիկ Ալիին, մինչ անտարբեր
նայուածքով մը կը քննէր շուրջ-բոլորը՝ ծանօթներու հանդիպելու
յոյսով թերեւս: Զարմանալիօրէն նոյն դէմքերը տեսաւ, նոյն յաճա-
խորդները, զորս ճանչցած էր հոս անցեալին, տարիներ առաջ: Ոչինչ
փոխուած էր կարծես, ու ժամանակը անշարժ մնացած էր հոս, ինչպէս
այս մարդիկը, որոնք դրակած էին նոյն տեղերը, իրենց նախընտրած
սեղաններուն շուրջ: Ու նոյն աղմուկն էր, նոյն արարական երաժշտու-
թիւնը, որ կը խանդարէր յաճախ՝ փոխանակ մթնոլորտ ստեղծելու:

— Ա՛յ դո՛ւն ես, Էմմի, — Սերորի ձայնն էր, վստահ էր, թէեւ
չէր տեսներ զինք:

— Ես չեմ, — դուրսը բարձրացուց եւ նայեցաւ կողքին կանգ-
նած վաղեմի բարեկամին: — Դուն հոս ինչ կ'ընես, ծօ', կարճ:

— Իմ հոս ըլլալս այնքան զարմանալի չէ որքան քու...:

— Ամերիկան չկրցա՞ւ կլլել քեզ:

— Ինչու ես խեղճ եմ: Եթէ հոն մնաս, կը կորսուիս, հետքդ
ալ գտնող չ'ըլլար:

— Դուն ալ ուղածդ չես գիտեր:

— Ձէ, չէ', Էմմի, green card-ս առի եւ դուրս ելայ: Տարին
անգամ մը կ'երթամ կու դամ, մինչեւ որ նայինք ինչ կ'ըլլայ:

— Ձհանեցա՞ր:

— Հոս փառաւոր գործ ունիմ. հանդիստ, լեցուն ամսական:

— Տարող ի՞նչ էր ուրեմն, — ժառ չզարմացաւ բայց հարցուց:

— Ինչո՞ւ գացիր:

— Ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար: Վազ անցիր հիմա... ատիկա չէ
ալ, դուն հոս ի՞նչ գործ ունիս: Ատ երկրէն կը ձգե՞ն որ դուրս ելլէք:

— Ձեն ձգեր:

Սերոր չփոթած նայեցաւ բարեկամին, որու դէմքին վրայ ան-
վերծանելի քմծիծաղ մը սառած էր: Նոյն ժառն էր. չէր փոխուած:
Քաջալերուած, ինք եւս կատակեց:

— Քեզ պաշտօնով դրկեցին հոս:

— Հա', քեզի պէս սրիկաները լրտեսելու եկայ:

— Որքա՞ն ժամանակ է հոս ես:

— Մէկ ամիսէն աւելի: Գիտնայի Պէյրութ ես, կը հանդիպէի:

— Ինչ տեսակ լրտես ես, որ հոս ըլլալէս լուր չունիս:

— Եթէ հո՛ս իսկ չտեսայ քեզ... բայց կարճ ես, ի՛նչ պիտի
ըլլայ:

— Ներսը չէի: Դուրսը նկատեցի եւ հետեւեցայ քեզի: Ուզեցի
վստահ ըլլալ: Թէ ոչ այս ժամուն գինետունները ի՛նչ գործ ունիմ:

— Խե՛ղճ, — ժպտեցաւ ժառ Առաքելեան: — Ի՞նչ պիտի խմես:
Գարեջուրը լաւագոյնն է կարծեմ: — Եւ անկեղծ ուրախութեամբ
դիտեց բարեկամը, որ ապշահար կը դիտէր զինք՝ իր կարգին:

— Անկարելի է, — խօսեցաւ յետոյ Սերոր, — դեռ չեմ կրնար
հաւատալ: Այս ինչ աշխարհ է եղեր, պէ': Տարի՞ստ եկած ես:

— Հա', ծօ', մարդ իր երկիրը տալիստ կու դա՞ր:

— Ձղջացիր, հա՞: Ըլլալիքը ատիկա էր արդէն: Կի՞ն, դա-
ւա՞կ:

— Բոլորն ալ հետս են: Դուն ամուսնացա՞ր:

— Ինչպէ՞ս: Այս երկրին մէջ ամուսնանալու համար հարուստ
պէտք է ըլլաս այլեւս:

Խօսակցութիւնը ինքնարեւոյն ընդհատուեցաւ, եւ իւրա-
քանչիւրը խորասուզուեցաւ իրեն յատուկ մտածումներու մէջ: Իրա-
րու ըսելիք կամ հարցնելիք չունէին հաւանաբար, որովհետեւ նոյն
ծուզակին մէջ էին՝ հոգ չէ թէ մէկը Հայաստան ներգաղթած էր եւ
վերադարձած, իսկ միւսը՝ Միացեալ Նահանգներ: Հարցումները ա-
ւելորդ էին, անտեղի: Փաստ որ երկուքն ալ կը գտնուէին Պէյրութ,
ու միասին կը խմէին դարձեալ: Հինգ տարուան ընթացքին ոչինչ
պատահած էր թերեւս, կամ իրենց համար այդ հինգ տարիները չէին
եղած երբեք, եւ իրենք կը մնային նոյն տեղը՝ ժամանակին եւ միջո-
ցին մէջ: Եւ ոչինչ փոխուած էր կարծես նաեւ, թէեւ երկուքն ալ
գիտէին, թէ անջրպետ մը դոյացած էր իրենց միջեւ — տարիներու
եւ փորձառութեանց անջրպետը: Այդ իմաստով բացարձակ անձանօթ-
ներ դարձած էին, հոգ չէ թէ խօսէին ու կատակէին հին մտերիմնե-
րու պէս՝ անցեալին մէջ վերապրելու յոյսով թերեւս:

— Ծրագրերդ ի՞նչ է, — Սերոբ խօսեցաւ ի վերջոյ. — Լիբա- նա՞ն պիտի հաստատուիս :

— Անկեղծօրէն չեմ գիտեր : Որոչա՞ծ եմ այդ մասին չմտածել, չխօսիլ :

— Էմմի՛, քեզի բան մը ըսե՛մ : Ինչո՞ւ Ամերիկա չես երթար : Քեզի համար լաւագոյն տեղը հոն է :

— Երբ ժամանակը գայ, կը խորհիմ :

— Իրաւունք ունիս : Ո՞վ գիտէ ինչ օրեր ապրեցար :

— Բնաւ կապ չունի, — Ժառ ուզեց միանգամ ընդմիջտ կանխել բոլոր հաւանական ենթադրութիւնները. — Հայաստան վիճակս չատ լաւ էր :

— Ուրե՞մն : Բայց քեզմէ կ'ակնկալուի : Պէտք է խոստովանիմ որ ներգաղթելը զիս աւելի զարմացուց ժամանակին : Որո՞ւ մտքէն կ'անցնէր :

— Պատճա՞ռ : Քանի ինձմէ կ'ակնկալուի եղեր :

— Այո՛, բայց Հայաստան ներգաղթելը... չեմ գիտեր : Երբ այլեւս գաղտնիք չէր մնացած, եւ ամէն մարդ գիտէր, թէ ներգաղ- թողներուն ինչ պատահած էր :

— Այդ բոլորը ես ալ գիտէի : Մի մոռնար որ հօրեղբօրս ըն- տանիքը հոն է, եւ անհաւատլի բաներ պատմած էին ինձի, երբ գացի եւ տեսայ զիրենք 1967-ին : Գիտնալով գացի, պատրաստուած, եւ ատոր համար ալ յուսախար չեղայ :

— Ինչո՞ւ չմնացիր ուրե՞մն, — Սերոբ հարցուց, իսկապէս զար- մացած :

— Տեղս չէ :

— Չգացած պէտք է սերտէիր : Հասկա եթէ չարտօնէին որ դուրս ելլես : Բախտաւոր ես եղեր :

— Իրենց հոգն էր :

— Ըսել կ'ուզես, թէ դժուարութիւն չտուի՞ն :

— Եւ ինչպէ՞ս, — Ժառ խօսեցաւ պարզօրէն : — Հոգիս բերանս բերին : Բայց եւ այնպէս իրենց ճիւղերուն է... :

— Հասկնանք : Թէ կ'ըսես, որ հոգիդ բերանդ բերին, եւ թէ կ'ըսես որ իրենց ճիւղերուն է :

— Ճիշդ այդպէս : Մարդիկը մեզի պէտք չունին, բայց նաեւ չեն ընդունիր որ իրենց քաղաքացին դուրս ելլէ :

— Սովետական հպատակ ես հիմա, — հետաքրքրուեցաւ Սե- րոբ : — Բայց չեմ հասկնար. եթէ իրենք իրենց վրայ այնքան վստա- հութիւն ունին, ինչո՞ւ չեն արտօներ որ սովետ քաղաքացին ուզած

ատեն իր նախընտրած երկրին մէջ ապրի :

— Յայտնի է որ սովետական իրաւակարգին մասին զաղափար չունիս : Մեզի պէս պաշտ-պոգու՞մ մարդիկ միայն այսպէս կը մտածեն :

— Ինչո՞ւ պաշտ-պոգու՞մ, Էմմի՛. մենք այս երկիրներուն մէջ այսպէս մեծցած ենք, եւ մեզի համար բնականը այս է : Որ աւելի ճիշդ է անշուշտ : Ի վերջոյ մարդ ազատ պէտք է ըլլայ :

— Ազատութիւնը ի՞նչ է, կրնա՞ս ըսել ինձի : Հիմա մենք ազա՞տ ենք :

— Կասկած ունի՞ս :

— Ոչ թէ կասկած : Գիտեմ, թէ ազատ չեմ :

— Ինչպէ՞ս :

— Ուզածս կրնա՞մ ընել, ուզածիս պէս կրնա՞մ ապրիլ, շար- Ժիլ, գործել, երկրի մը մէջ հաստատուիլ :

— Ո՞վ կ'արգիլէ :

— Կեանքը, ժամանակը, պայմանները, քաղաքականութիւնը, պետութիւնները... կեանքը ամբողջ : Ազատութիւն : Ինքնախարէու- թիւն է, մարդուն մտքին մէջ ստեղծուած հոգեբանական պատրանք : Կը կարծես որ դուն ազա՞տ ես : Պարապ խօսք : Եթէ յանկարծ ուզես այս մարդոցմէն մէկը ծեծել, կրնա՞ս :

— Խօ՛ւք եղաւ ատկիւս, — առարկեց Սերոբ :

— Ազատ ըլլալ՝ ուզած ատենդ ուզածդ ընել կը նշանակէ, ճի՞շդ է : Այդ մարդիկը կրնա՞ս լաւ մը տփել, օրինակի համար : Չես կրնար : Պարապ խօսք է ուրե՞մն : Որովհետեւ իրաւունք չունիս մարդ ծեծե- լու, ինչպէս իրաւունք չունիս ուզածդ ընելու՝ առանց ուրիշները նկատի ունենալու : Որ հակասական է : Կամ ազատ ես եւ ուզածդ կրնաս ընել, կամ՝ քանի չես կրնար ընել, ազատ չես ուրե՞մն : Ազատութիւն դոյութիւն չունի. խօսք է միայն :

— Բայց ինչո՞ւ մարդ պիտի ծեծեմ : Ինչ տեսակ օրինակ է տուածդ : Ազատութեան սկզբունքը բնութեան դէմ է նախ եւ առաջ : Իսկ դուն ազատ ըլլալդ փաստելու համար կ'ուզես ոյժ գործածել :

— Ես այդ տեսակ բան փաստելու հարց չունիմ, — Ժառ անզգա- լարար բարձրացուց ձայնը, — որովհետեւ ինձի համար ազատութեան հարց չկայ : Բառը իմաստ չունի : Ինչպէ՞ս կրնամ դոյութիւն չու- նեցող բան մը փաստելու փորձ ընել : Դուն է որ կը պնդես, թէ ազատ ես, մինչդեռ ես ճիշդ հակառակը... :

— Ոչ թէ քու ազատ ըլլալդ փաստելու, — ընդմիջեց Սերոբ. — ազատութեան զաղափարը ջրելու համար :

— Նոյնն է : Օրինակը դուն տուր :

— Ես ուզածս կրնամ ընել :

— Լսենք : Ի՞նչ, օրինակի համար :

— Նախընտրած երկրիս մէջ ապրիլ :

— Վստա՞հ ես : Ատիկա բաղձանք է միայն : Պատահած է որ Ամերիկա հաստատուելու բաղձանք ունեցած ես, եւ երբ դիմած ես, ընդունած են քեզ : Բայց իրենք որոշած են, ոչ թէ դուն : Կրնային եւ մերժել : Ատոր մէջ քու ազատութիւն կոչածդ դեր չունի, այլ իրենց որոշումը : Ազատ ըլլալուդ համար չէ որ ամերիկեան քաղաքացի ըլլալու իրաւունք ստացած ես . իրենք ատիկա յարմար նկատած են՝ թելադրուած իրենց հաշիւներէն : Կրնա՞ս Անդլիա երթալ եւ հոն հաստատուիլ, կամ ուրիշ որեւէ երկիր : Ինչո՞ւ չես պատասխաներ : Եթէ ազատ ես, զնա՞ :

— Ամէն երկիր իր օրէնքները ունի, սնտեսական կամ քաղաքական հաշիւները :

— Շատ ճիշդ, — ժպտեցաւ ժապ :

— Ատիկա չի նշանակեր, թէ մենք ազատ չենք մեր ապրած երկիրներուն մէջ : Ըսածս շատ ալ լաւ կը հասկնաս : Կը խօսինք, կը քննադատենք, կը վայելենք, եւ ամենէն կարեւորը՝ վախի մէջ չենք ապրիր :

— Անշուշտ որ ըսածդ կը հասկնամ, եւ այս բոլորը կ'ընդունիմ : Բայց տարբերութիւնը ի՞նչ է, կրնա՞ս ըսել : Որոշ երկրի մը մէջ կրնան քննադատել, խսկ ուրիշ երկրի մը մէջ՝ ոչ : Կացութիւնէն ի՞նչ կը փոխուի : Միշտ կը մնանք կեանքի եւ տուեալ երկրի մը պայմաններուն գերինք : Այնպէս որ՝ նոյնն է : Անոնք հոն վախի մէջ կ'ապրին, մենք ալ այլ երկիրներու մէջ մեզի յատուկ բաղձաթիւ վախեր ունինք : Ի՞նչ եղաւ, ի՞նչ է տարբերութիւնը : Մարդ արարածը ամէն տեղ նոյնն է՝ եւ անցեալին, եւ ներկայիս :

— Մեղուցիք մեզ, վերջացուցիր :

— Դուն արդէն մեռած ես :

— Շատ հետաքրքրական է, բայց ես պէտք է մեկնիմ, — ըսաւ Սերոր ու կանգնեցաւ ոտքի. — զործ ունիմ : Յետոյ կը տեսնուինք :

Բարեկամին մեկնելէն ետք տարօրինակ կերպով հանդարտ զգաց : Ոչ միայն հանդարտ, այլեւ զոհ, ուրախ : Խմբիքի ազդեցութիւնն է արդեօք, խոկաց ժապ, բայց յամեցաւ ու սրունքները երկարեց կողմնակի՝ աւելի հանդիստ նստելու համար : Անբացատրելի

չըջաղարձ մըն էր . դեռ կէս ժամ առաջ անտրամադիր վիճակի մէջ մտած էր հոս, կեդրոնանալու կամ փոխուելու յոյսով : Եւ տրամադրութիւնը այնպէս փոխուած էր, որ ինք եւս չմտած՝ հաղիւ կրնար ինքզինք զսպել : Պարզօրէն ուրախ էր : Ինչո՞ւ : Ոչ մէկ արամաբանական պատճառ, պատահար, յայտնութիւն : Թերեւս որովհետեւ ողջ էր, առողջ, երիտասարդ, ամուսնացած ու զաւակներու տէր : Կամ թերեւս որովհետեւ մարդ էր . ու մարդ արարածը կրնար ուրախ ըլլալ նաեւ երբեմն : Առանց պատճառի, այդպէս, անբացատրելի կերպով :

Գարեջուրի երրորդ բաժակը ազսպրեց եւ որոշեց վայելել այս պահը, կարելի եղած չափով երկարաձգել զայն : Եւ սկսաւ երազել : Իր նախկին անձը պիտի ըլլար, անմիջական անցեալը պիտի մոռնար, պիտի աշխատէր, վայելէր ու երջանկացնէր Սեդան, որ այնքան մտահոգ էր՝ զիտէր : Իր սեպհական տունը կ'ունենար, կը կահաւորէր զայն, ինքնաշարժ մը կը դնէր եւ մարդու պէս կ'ապրէր այլեւս : Կը խնայէր եւ ժամանակի ընթացքին անձնական գործ մը կը սկսէր, եւ ինք եւս կը հարստանար : Կը հարստանա՞ր : Զառանցելու սկսար արդէն, սաստեց ինքզինք, բայց խնդաց : Կեանքի մէջ ամէն ինչ կրնար ընել . սակայն հարստանալը իր գործը չէր, իր կարողութիւնէն վեր էր : Եւ ինչո՞ւ պէտք է հարստանար : Հայաստանի մէջ նոյնիսկ մեծահարուստներ կային, յիշեց յետոյ, եւ փորձեց կեդրոնանալ : Կը գիտնուի՞նա՞ր : Գարեջուրով մարդ կը գիտնուի՞նա՞ր : մանաւանդ ինք, որ տակաւնբով կոնսակ խմած էր վերջին հինգ տարիներուն : Բայց ինչպէ՞ս կրցած էին հարստանալ այդ մարդիկը, եւ ինչո՞ւ :

Ոչ երկիրը կրցած էր ճանչնալ, եւ ոչ ալ այդ երկրի ժողովուրդը : Խուժան, աւազակ, կոշտ, անտաշ, բայց հայրենասէր ու շարքաշ : Իւրաքանչիւրը կերպ մը դտած էր, ու կ'ապրէին՝ զիրար կողոպտելով : Բոլորը, առանց բացառութեան՝ բանուորէն սկսեալ մինչեւ մտաւորականներն ու ղեկավար տարրը : Բայց կ'ապրէին, առանց զիտնարու, թէ ինչ կը պատահէր իրենց կամ ինչ կ'ընէին . ու բոլորը մնայուն խրախճանքի մէջ էին, որովհետեւ ուրիշ ոչինչ կրնային ընել : Խրախճանքը լաւազոյն զբաղումն էր — հեշտ, անմեղ, անվնաս : Եւ առիթ չէր պահուեր՝ ցերեկ ըլլար կամ զիշեր, ամառ կամ ձմեռ : Իրենց կենցաղին մաս կազմած էր այլեւս, եւ արժանապատուութեան հարցի կը վերածէին այդ ուղղութեամբ նկատուած որեւէ թերացում :

Եւ փորձած էր ըմբռնել, վերլուծել անօրինակ եւ հաւաքական այս խենթութիւնը, բայց եւ այնպէս հետեւած էր անոնց օրինակին եւ կազմած՝ խմելու վարժութիւն կոչուածը : Կեանքէն հինգ տարի

վատնած էր այդպէս, առանց անդրադառնալու, թէ օրերը, շաբաթները ու ամիսները քառասմբակ կը սուրային, մինչ ինք կը յամենար իր անդիտակից ուրացումին մէջ: Այո՛, ուրացած էր, թէեւ անդիտակցարար՝ երազ, իտէալ, նպատակ, եւ այն առհաւական մղումը, որ զինք հասցուցած էր անձանօթ այդ երկիրը, ուր հարազատ չէր կըրցած զգալ երբեք: Անհաւատարի էր, անըմբռնելի, բայց իրականութիւնը այն էր որ օտար զգացած էր միշտ, ինչպէս ուրիշ որեւէ երկրի մէջ, եւ տաղնապած էր: Իրաւացի կերպով: Որովհետեւ Հայաստան մեկնած էր՝ իր վերջին հանգրուանը գտած մարդու մը ինքնավատահուժեամբ: Յուսախար չէր եղած, նկատելով որ Հայաստանի բնաշխարհը հմայած էր զինք, բայց ինքնավատահուժիւնը ջախջախուած էր: Ինչո՞ւ: Այո՛, ինչո՞ւ: Պատասխանը ո՛վ պիտի տար: Յամենայն դէպս՝ ոչ ինք: Իրմէ անկախ էր, անբացատրելի, անիմանալի հանելուկ մը: Հօրը խոստացած երկիրը չէր ատիկա: Տարակոյս չունէր, թէ Հայաստանի մէջ կը գտնուէր — վկայ՝ հողը, աշխարհազրուութիւնը, Հայկական Պար կոչուած լեռնաշղթան, Սեւանը, Երեւանը, զլուզերը, եւ մանաւանդ Հայութիւնը, որ ամէն տեղ էր — բայց հօրը իրեն խոստացած երկիրը չէր: Հայրը դեր չունէր ատոր մէջ թէեւ, ոչ ալ ինք:

Եւ ուրեմն խմած էր այդ ամբողջ միջոցին եւ վայելած՝ ի վերայ ամենայնի: Ուրիշ ի՛նչ կրնար ընել: Անդիտակից դոյութիւն մըն էր, գրութիւն մը, գոր մինչեւ այսօր չէր կրնար ըմբռնել: Ինք չկար չոն, չէր եղած, թէեւ աշխատած էր ու վայելած, եւ ապրած էր շատ սովորական կեանք մը, ինչպէս բոլոր բնակիչները այդ երկրին: Կանոնաւորաբար գործի գացած էր ամէն օր, առանին մտահոգութիւններ հետապնդած, կերած, խմած ու հիւանդացած էր նոյնիսկ: Կնկան հետ պառկած էր ամէն դիշեր, գաւակ ունեցած էր, Արմէնի գասերուն հսկած էր, ընտանեկան յարաբերութիւն մշակած՝ կարգ մը սքանչելի մարդոց հետ, եւ... ամէն ինչ ըրած էր:

Բայց օտար զգացած էր:

Եւ՝ օտարական մը նկատուած էր:

Թէեւ բարեացակամութեամբ վարուած էին իրենց հետ, եւ եղած էին փափկանկատ: Փորձած էին նոյնիսկ երկիրը գովել իրենց, առաւելութիւններն ու նուաճումները թուել՝ զիրենք համոզելու համար կարծես: Ե՛ւ պաշտօնական, ե՛ւ պատահական մարդիկ — ծանօթներ, պաշտօնակիցներ, բարեկամներ: Որպէս թէ իրենք աչք կամ խելը չունէին: Որ զարմացուցած էր զինք առաջին իսկ օրէն, եւ շեշտած իր մէջ անհարազատութեան զգացումը:

Փաստօրէն այդ ժողովուրդը չէր կրցած ճանչնալ: Չարմացուցած էին զինք, սիրած, յարգած, հիւրասիրած ու պատուած, բայց նաեւ խրտչեցուցած էին: Այս ամբողջը՝ եթէ ոչ կեղծ կամ արուեստական, անպայմանօրէն սակայն անբնական էր: Իրականութիւն, որ մըտածել տուած էր իրեն, եւ վերջաւորութեան յանգած էր այն եզրակացութեան թէ իրենք եւս չէին ճանչնար իրենք զիրենք: Վստահ չէին, թէ որոնք են իրենք այդ երկրին մէջ, կամ ինչ կը ներկայացընէին: Երկրին տէրերն էին՝ անտարակոյս, որովհետեւ Հայկական հողի վրայ ապրող հայեր էին, եւ ատոր դիտակցութիւնը ունենալով հանդերձ, վստահ չէին:

Բայց կ'ապրէին: Ինչպէս այլ մարդիկ կ'ապրէին ուրիշ երկիրներու մէջ: Ու դիտակցէին կամ ոչ՝ իրենց սեպհական հողին վրայ զօրաւոր էին, հոգ չէ թէ ամէն կարգի գաւեր նիւթուէին իրենց դէմ: Հողին վրայ ըլլալու իրականութիւնը իրենց զլխաւոր ոյժն էր, հզօրագոյն զէնքը, որ կը վիժեցնէր տեսանելի եւ անտեսանելի բոլոր սաղրանքները: Ու նախանձած էր նոյնիսկ անոնց, եւ մինչեւ այսօր ալ կը նախանձէր տակաւին: Սակայն իր տեղը չէր: Այդ հողը կը պատկանէր անոնց, եւ ոչ թէ իրեն: Շատ ուշ ըմբռնած էր այդ իրականութիւնը, բայց երբ անդրադարձած էր, չէր կրցած ներել ինքնիրեն: Ու մինչեւ այսօր այս պարզ բացատրութիւնը չէր ուզեր տալ մարդոց, բոլոր անոնց, որոնք կը մեղադրէին զինք դասալքութեամբ: Ոչ ոք պիտի հասկնար զինք, համոզուէր, հաւատար: Եւ ի վերջոյ՝ մարդոց բացատրութիւն տալու հարկադրանքին տակ ջէր: Ազատութիւնը եթէ իմաստ մը ունի, այս էր իրեն համար. համոզում ունենալու իրաւունքը: Որո՞ւ պիտի կարենար բացատրել ատիկա, երբ հայ մարդը կը նախընտրէր հաճելի, զգացական խօսքեր լսել, քան թէ ճշմարտութիւններ իմանալ եւ ընդունիլ:

Իր երկիրը ո՞րն էր սակայն: Լիրանո՞նը: Թերեւս հոս աւելի իրաւունքներ ունէր, որովհետեւ Պէյրութ ծնած էր: Փաստօրէն Լիրանանի մէջ աւելի հարազատ կը զգար, եւ ինքզինք տեղացի կը նրկատէր: Հայ ըլլալով ու մնալով հանդերձ լիբանանցի էր նախ եւ առաջ: Իրականութիւնները պէտք էր ընդունիլ եւ ինքնախարէութեամբ չապրել: Սակայն նաեւ հայ էր: Ուրանալը ի՛նչ իմաստ ունէր, ի՛նչ կը փոխէր վացութեանէն: Կամ նոյնիսկ՝ մոռնալը, անտեսելը: Հայ ըլլալն ալ իրականութիւն էր, եւ այդ եւս պէտք էր ընդունէր ուրեմն: Երկուութիւնը կը բխէր ճիշդ ասկէ: Այլ ժողովուրդներ նոյնպիսի հարց ունէի՞ն արդեօք: Հայաստանի Հայութիւնը, օրինակի համար: Նոյնիսկ անոնք, այս կարգի տաղնապ չունէին: Ուրիշ ժողովուրդներ,

հետեւարար, ազգային պատկանելիութեան թնճուկ չունէին, որովհետեւ անհերքելի, ընդոծին ճշմարտութիւն էր իրենց համար անգլիացի կամ Փրանսացի ըլլալը — օրինակ: Եւ ուրեմն փաստելու հարց չունէին. ոչ ալ այս կամ այդ իրականութիւնը կամ չփոթը հերքելու կամ հաստատելու տագնապ: Եւ ճիշդ այդ պատճառով ալ իրենց համար շատ աւելի դիւրին էր որպէս մարդ սպրիլ նախ եւ առաջ, քան որպէս անգլիացի կամ Փրանսացի:

Այդպէս աւելի ճիշդ էր, աւելի տրամաբանական, մարդկային: Մարդ արարածը միայն այդ կերպով կրնար ներքին խաղաղութեան մատչիլ եւ որպէս պարզ, մահկանացու մարդ սպրիլ: Զերծ ամէն կարգի բարդոյթէ եւ ազգային կամ ցեղային կաշկանդումներէ:

Եւ ինք, այսինքն ժառ կամ Յակոբ Առաքելեան կոչուած մարդը, կ'ուզէր մատչիլ այդ խաղաղութեան եւ ձերբազատուիլ այս կարգի կաշկանդումէ, որ կը սահմանափակէր մարդկայինը իր մէջ, կը նուաստացնէր:

Զ.

— Գոյրս զաւակները առած տուն վերադարձած է նորէն:

Առանց նախարանի յայտարարեց Սեղա, որ անակնկալօրէն յայտնուած էր գրասենեակին մէջ, մինչ ժառ զարմացած կը դիտէր դինք:

— Այս լուրը յայտնելու համար եկած ես հոս, — հարցուց ամուսինը, զուարճացած արտայայտութիւն մը դէմքին:

— Խնդիրը լուրջ է, — կինը յայտնօրէն կատակելու տրամադրութիւն չունէր:

— Այսի՞նքն:

— Առտու մայրս մեզի եկաւ տակնուվրայ վիճակի մէջ: Մինչեւ հիմա հօրմէս գաղտնի պահած են ամէն ինչ: Ի՞նչ պիտի ընենք:

— Նախընտրելի է որ իմանայ: Գաղտնի պահելնիդ իմաստութիւն է, կը խորհիս: Լաւ կ'ըլլայ որ իրականութիւնը գիտնայ:

— Հա՛, որպէսզի փորձանք մը բերէ գլխուն: Վերջերս սկսած է շատ խմել նորէն, ուշաթափ ըլլալու աստիճան: Յաջորդ օրն ալ անհանգիստ կ'ըլլայ եւ գործի չի կրնար երթալ:

— Իմաստ չունի: Մինչեւ ե՞րբ կրնաք գաղտնի պահել: Օր մը չէ

օր մը պիտի իմանայ: Մանաւանդ որ այս անգամ ինդիրը լուրջ է կ'ըսես: Եթէ որոշած է տուն չվերադառնալ...:

— Մօրս պատմածին համաձայն՝ վերջացած հարց է: Ես քոյրըս կը ճանչնամ. եթէ միտքը բան մը դնէ, աշխարհը ամբողջ դինք չի կրնար համոզել: Մեռնիլը նոյնիսկ գիտնայ, տեղի չի տար:

— Մինչդեռ խելօք աղջիկ մը կ'երեւի, — ժառ կանգնեցաւ ոտքի, ու պահ մը այդպէս կանգնած մնալէ ետք, նստեցաւ գրասենեակին վրայ, ճիշդ կնկան դիմաց:

— Շա՛տ... այնքան խելօք է որ, կրնայ ամենէն համբերատար մարդը նոյնիսկ խենթացնել իր յամառութեամբ: Այս պարագային թէ՛ եւ չես ալ կրնար մեղադրել:

Ամուսինը չպատասխանեց: Նստած տեղէն նայեցաւ պատուհանէն դուրս, երկար պահ մը դիտեց տեղացող անձրեւը, անզգալաբար ժամը ստուգեց յետոյ, ու խօսած ըլլալու համար հարցուց:

— Այս ժամուն եւ այս անձրեւին քաղաք ինչո՞ւ իջած ես:

— Օրերէ ի վեր երեխաներուն համար գնում պիտի ընեմ, բայց անձրեւը առիթ չէր տար: Մայրս երբ եկաւ, առիթէն օգտուիմ ըսի: Այս անձրեւն ալ դադրելիք չունի այլեւս: Օրերէ ի վեր, շունչ չմնաց վրանիս:

— Դեկտեմբերը վերջանալու վրայ է: Մինչեւ ասկէ չարաթ մը առաջ գրեթէ անձրեւ չսեսանք. այս ի՞նչ տեսակ ձմեռ է: Լիբանանի ձմեռը մոռցած էի, գիտե՞ս:

— Կամ բնաւ չ'անձրեւեր, եւ կամ աշխարհը կ'ողողէ:

— Սքանչելի կլիմայ է, ինչ կ'ուզես ըսէ: Եւ տեղացիները այս երկրին յարզը չեն գիտեր:

— Գանդատած չունիմ, — ըսաւ կինը: — Ի՞նչ պիտի ընենք, — կրկնեց քիչ ետք, մոռցած երկիրը եւ կլիման:

— Ժամը չորսը անցաւ արդէն: Եթէ ժամ մը համբերես, միասին կը վերադառնանք ու ճամբան կը խօսինք:

— Ուշ կ'ըլլայ: Հայրս գործէն չվերադարձած պէտք է այդ աղջիկը հեռացնենք հոնկէ:

— Ինչպէ՞ս, եթէ չ'ուզեր վերադառնալ:

— Մեր տուն կրնամ տանիլ դինք առժամապէս, — Սեղայի արտայայտութիւնը հաւանութիւն կը պահանջէր ամուսինէն:

— Արտօնութիւն առնելու պէտք ունի՞ս:

— Մինչեւ նայինք ինչ կ'ըլլայ: Ատկէ ետք Աստուած ողորմած է:

— Լաւ է, գոնէ տան մէջ կենդանութիւն կը տեսնենք:

— Այո՛, — ժպտեցաւ կինը, — չորս պղտիկով կատարեալ խնթանոց մը կ'ուեննանք: Եթէ կրնաս հանգիստ ըրէ ատկէ ետք:

— Քեզի համար փոփոխութիւն կ'ըլլայ, — կատակեց ժառ, — եւ ասկէ ետք չես զոռիր:

— Ամէն ինչ կատակի կը վերածես:

— Լըջութիւնը քեզի չի վայլեր: Երբ ներս մտար չճանչցայ քեզ դրեթէ:

Սեղա երախտագիտութեամբ բռունցքի հարուածներ տեղացուց ամուսնոյն ուսերուն, եւ առանց բառ մը եւս արտասանելու շտապեց դրասնեակէն դուրս: Ուրախ էր որ ժառ նախկին պաշտօնը ընդունած կ'աշխատէր արդէն: Ուրախ էր որ երկու շաբաթէ ի վեր տեղափոխուած էին ծնողքին տունէն, եւ նոր կեանք մը սկսած հոս, փոքր յարկարածի մը մէջ: Եւ դո՛հ էր, երջանիկ: Ամուսնոյն եւ զաւակներուն հետ: Աւելի ոչինչ կ'ուզէր: Եւ ճիշդ է որ զուարթ էր միշտ՝ շուրջիններուն նախանձը զրգոելու աստիճան: Բայց քրոջը դժբախտութեան նկատմամբ չէր կրնար անտարբեր մնալ: Ինք շատ աւելի դժբախտ եղած էր չրջան մը, այո՛, սակայն յետոյ այնքան բախտաւոր ամուսնութիւն մը ունեցած էր, որ այդ ամբողջը չէր յիշեր իսկ այսօր: Կըրնար երեւակայել, թէ քոյրը ինչ կը զգար, մանաւանդ որ խառնուածքով իրմէ բոլորովին տարբեր էր — զգայուն եւ յոռետես: Իսկ մայրը, խուճապի մասնուած, շաբաթներէ ի վեր Ալիսին նոյն լուծումը կը պարտադրէր: Ամուսնական յարկէն չհեռանալ, եթէ նոյնիսկ դժոխքի վերածուէր այդ յարկը: Անոր մտահոգութիւնը կը հասկնար, եւ ինք եւս կը տաղնապէր, երբ փորձէր հօրը անդրադարձը երեւակայել՝ եղելութիւնը իմանալու պարագային: Բայց ատիկա իրենց իրաւունք կու տա՞ր Ալիսը զոհելու: Ի վերջոյ ան ալ մարդ էր, եւ իր իրաւունքները ունէր: Մարդ իր ազատ կամքով դժբախտութիւնը կրնա՞ր ընդունիլ: Մանաւանդ երիտասարդ տարիքին: Ինչ իմաստ ունէր: Եւ վասըն ինչի՞: Հօրը խնայելու համար: Լուծում չէր: Ժառին ըսածը աւելի տրամաբանական էր հաւանաբար: Նախընտրելի էր հօրը պարզել ամէն ինչ, քան թէ աղջիկը զոհել: Հայրը կրնար համաձայն չըլլալ իսկ իրենց այս ընթացքին: Ինչ իրաւունք ունէին այսպէս յիմարօրէն վարուելու երկուքին հետ ալ:

Կինը ճամբելէ ետք ժառ Առաքելեան քաղեց գրասենեակին մէջ, չափեց հասակը՝ պատուհանին դիմաց կանգնած — այդպէս, բան մը ըրած ըլլալու համար — ու հաստատեց, թէ հանդարտած էր եւ դո՛հ: Ինքնավստահութիւնը վերադառած՝ մասամբ: Քենիին եւ քենեկալին այս վերջին սիրապարծութիւնը չէր վրդոված զինք նոյնիսկ, ու մը-

նացած էր անտարբեր, անհողորդ: Իրականութեան մէջ սկսած էր ճանձրանալ անոնց անվերջանալի վէճերէն եւ կռիւներէն, որ իրենց առօրեային մաս կազմած էին այլեւս: Օր չէր անցներ, որ անոնց մասին չխօսէին: Միշտ նորութիւն մը կար, նոր յայտնութիւն, բարդութիւն, յաւելումներ, մանրամասնութիւններ, եւ այս բոլորին մեկնաբանութիւնը: Հետաքրքրական իսկ չէր այլեւս: Այլ հարց որ մարդոց ընտանեկան վէճերը աշխարհի ամենէն անիմաստ վատնումը կը նըկատէր: Պարզօրէն՝ յիմարութիւն: Իսկ իրեն համար՝ ժամավաճառութիւն:

Գուռը զոռուցութեամբ բացուեցաւ, ու ներս մտաւ մօրուսաւոր, թափթփած արտաքինով ու նիհար երիտասարդ մը, որ ժպտեցաւ իրեն, բարեւեց եւ հարցուց:

— Զրագա՞ծ ես:

Երիտասարդին դէմքը ծանօթ էր — վստահ էր — բայց ժառ չկրցաւ յիշել, թէ երբ եւ ուր տեսած էր զինք: Եւ թէ եւ չփոթի մատնուած, քաղաքավարօրէն հետաքրքրուեցաւ:

— Կրնա՞մ օգտակար ըլլալ:

— Զիս չճանչցա՞ր, — քայլ մը եւս մօտեցաւ երիտասարդ անծանօթը:

— Կը ճանչնա՞մ ըսել կ'ուզես... կը ներես, այս արտաքինով: Դէմքդ ծանօթ է, բայց չեմ կրնար յիշել, կը ներես:

— Ես Մուշեղն եմ, — ամօթխածութեամբ ժպտեցաւ տղան:

— Վա՛յ... Պր. Սարգիսեանին տղա՞ն: Այս ինչի՞ նմաներ ես: Անշուշտ մեծցած ես ու կարգին երիտասարդ դարձած: Բայց այս ի՛նչ մաղ-մօրուք է:

— Զարմանալի՞ է:

— Իրականութիւնը այն է որ չճանչցայ քեզ, — ժառ փորձեց կացութիւնը փրկել, անդրադառնալով որ սխալ մը գործած էր անոր արտաքինին ակնարկելով:

— Եթէ ժամանակ ունիս, կ'ուզեմ կարծիքդ առնել որոշ հարցի մը մասին:

— Հաստատութիւնը ձերն է, ժամանակս ալ...:

— Հայրս կրնայ համաձայն չըլլալ, — ընդմիջեց Մուշեղ:

— Հայրդ շատ լայնախոհ մարդ է: Իմ պարագային դէթ բարեկամներուս ինծի այցելելուն առարկութիւն չէ ըրած երբեք. իսկ իր գաւկին պարագային, կ'ենթադրեմ որ աւելի թոյլատու կ'ըլլայ:

— Քեզի խօսելիքիս մասին կրնայ համաձայն չըլլալ:

— Ինք լուր ունի՞, — ժառհարաց ակամայ, յայտնապէս չը-
փոթած :

— Ո՛հ: Կարեւոր չէ: Երբ ժամանակը գայ, եւ եթէ որոշեմ,
զինք տեղեակ կը պահեմ անշուշտ:

— Գաղտնիք չէ յուսամ:

— Գաղտնիքներ չունիմ, — անմեղ հպարտութեամբ մը շեշտեց
Մուշեղ Սարգիսեան: — Բայց ուղեցի կարծիքդ առնել նախ:

— Եթէ սիրահարուած ես եւ կ'ուզես ամուսնանալ, սխալ հաս-
ցէի դիմած ես, — կատակեց երէցը:

Երիտասարդը սրգոզած նայեցաւ խօսակիցին, բայց երբ հաս-
տատեց, թէ պարզօրէն կը կատակէր ան, եւ ոչ թէ կը հեղինէր, հա-
մարձակութիւն ունեցաւ ըսելու:

— Դժբախտաբար, կամ չես գիտեր, թերեւս բարերախտաբար,
չեմ սիրահարուած:

— Ես քու տարիքիդ քանի մը անգամ սիրահարուած էի ար-
դէն: Բայց մեր ժամանակ տարրեր էր: Չեզի համար այնքան պարզ է
որ... մեր դժուարութիւնները, մեր ունեցած արգելքները չունիք
դուք:

— Չեմ գիտեր: Յամենայն դէպս այդ տեսակ խնդիր չունիմ:
Կը խորհիմ որ հայրս շատ ալ դժգոհ պիտի չըլլար, եթէ յանկարծ ո-
րոշէի ամուսնանալ:

— Այս տարիքի՞դ: Պատճառ մը պէտք է ունենայ ուրեմն: Ըսա-
ծէդ հետեցնելով պէթ: Բայց ինչո՞ւ:

— Իր կարծիքով՝ դիս փրկելու համար:

— Փրկուելու պէտք ունի՞ս, — ժառհարաց, խորհրդաւոր
ժպիտ մը դէմքին:

— Իր կարծիքով, այո՛: Իրեն համար ես կորսուած եմ, փճա-
ցած: Անտակ որդի մըն եմ: Ուսումս չչարունակեցի, արհեստ մը չը-
սորվեցայ, եւ ըստ իրեն զինք խայտառակեցի՝ այսպէս անպատասխա-
նատու կեանք մը վարելով:

— Կը ներես, բայց կրնա՞մ հարցնել, թէ անպատասխանատու
կեանք մը վարել ի՞նչ կը նշանակէ: Ինչու ի՞նչ կ'ընես:

— Ոչինչ: Այո՛, ես կը խորհիմ որ սխալ ոչինչ կ'ընեմ: Ընդհա-
կառակը՝ իմ կարծիքովս ըրածս ճիշդ է:

— Բայց ըրածդ ի՞նչ է:

— Անձն ըլլալ, — հանդարտօրէն խօսեցաւ Մուշեղ, բայց դժ-
գոհ իր իսկ պատասխանէն, փորձեց մանրամասնել: — Նախ ինքզինքս

ճանչնալ, կեանքը հասկնալ, որոշ հարցեր պարզել, եւ անշուշտ՝ ես
ինծի հետ հաշտ ապրիլ:

— Դուն քեզի հետ հաշտ չըլլալու պատճառ մը ունի՞ս:

— Ինչպէ՞ս բացատրեմ: Ես ինծի հետ հարց չունիմ անշուշտ,
բայց կ'ուզեմ ազատ ըլլալ եւ ուզածս ընել: Հօրս չեմ կրցած հասկցնել
ասիկա, կամ ինք չ'ուզեր հասկնալ: Իսկ ինծի համար կարեւոր է որ
հասկնայ զիս, որպէսզի խիղճս հանդարտ ըլլայ: Կեանքիս մէջ մարդ
չեմ վիրաւորած, չեմ կրնար, չեմ ուզեր: Իր պարագային... կրնա՞ս
երեւակայել. հայրս կը սիրեմ, ու ես զինք կ'ըմբռնեմ, իր մտահո-
գութիւնները կրնամ ըմբռնել, եւ ճիշդ ասոր համար չեմ ուզեր ան-
տեղի տառապանք պատճառել իրեն: Իմ մասին մտահոգուելու պէտք
չունի, որովհետեւ ըրածս գիտեմ, եւ փճացած երիտասարդ մը չեմ
իմ կարծիքովս. մինչդեռ ինք ճիշդ հակառակը կը խորհի եւ այս տա-
րիքին ինքզինք կը դժբախտացնէ՝ զիս անկարգ, անհնազանդ եւ ան-
պատասխանատու նկատելով: Եւ ասիկա ինծի մեծ ցաւ կը պատճառէ
անշուշտ, մանաւանդ որ ստիպուած եմ սկզբունքներէս չչեղիլ եւ սկը-
սածս շարունակել:

— Դարձեալ պէտք է հարցնեմ, թէ ըրածդ ինչ է:

— Կ'ուզեմ ազատ ըլլալ եւ մեր ընկերութեան պարտադրած յի-
մարութիւններուն չենթարկուիլ: Համալսարանական ուսումս չչա-
րունակեցի, որովհետեւ համալսարանը ինծի տալիք կամ սորվեցը-
նելիք չունէր այլեւս. իսկ պարզօրէն մարդոց ըսել տալու համար, թէ
համալսարանական տիտղոս մը ունիմ՝ չեմ ուզեր ուսանիլ: Զիս չի
հետաքրքրեր. եւ շատ ալ տարբերութիւն չ'ընեմ, թէ տիտղոս ունեցած
եմ կամ ոչ: Իսկ մարդոց ըսածը կամ ըսելիքը զիս ընաւ չի հետաքրքը-
րեր: Ես ուրիշներուն համար չեմ ազրիր, չեմ կրնար, եւ ոչ մէկ պատ-
ճառ ունիմ իրենց ակնկալածը ընելու: Ճիշդ ասոր դէմ է որ կը պայ-
քարիմ, մինչդեռ հայրս կը պնդէ որ ընկերութեան ընդունած կերպով
յաջողած մարդ մը ըլլամ:

— Կ'ուզե՞ս որ հօրդ հետ խօսիմ, — ժառհարաց միամտաբար:

— Ո՛հ: Ես այս մասին չէ որ կ'ուզէի հետը խօսիլ:

— Ինչպէս որ կ'ուզես:

— Տարիէ մը ի վեր, երկար-բարակ մտածելէ ետք, այն եզրա-
կացութեան յանգեցայ որ ես պէտք է կղերական ըլլամ: Ազդիս եւ
մարդկութեան միայն այս կերպով կրնամ ծառայել, համոզուած եմ:

— Եւ հայրդ համաձայն չէ՞:

— Իրեն չեմ ըսած տակաւին: Հարցը ատիկա չէ... կրնայ հա-

մաճայն չըլլալ, չեմ գիտեր: Ես աւելի բուն հարցին մասին կարծիքը կ'ուզեմ:

— Ինչո՞ւ իմ կարծիքս, — զարմացաւ երէցը:

— Հինգ տարի Հայաստան ապրեցար:

— Ի՞նչ կ'այ ունի:

— Էջմիածինը Հայաստան է ի վերջոյ:

— Ձեմ հասկնար: Քու կղերական ըլլալ ուղեղ եւ էջմիածնի Հայաստանի մէջ գտնուիլը...

— Հոն կ'ուզեմ ուսանիլ, — Մուշեղ հարկադրուած զգաց ընդմիջելու, անդրադառնալով որ շփոթի մատնած էր խօսակիցը:

— Եթէ նպատակդ ծառայել է, շատ ալ կարեւոր չէ թէ ուր կ'ուսանիս: Յամենայն դէպս չեմ խորհիր որ կրնամ ես որեւէ կերպով օգտակար ըլլալ այս պարագային: Բնաւ դադարուած չունիմ. եւ ամենէն կարեւորը՝ քեզի կախեալ է ատիկա, քանի դուն միայն գիտես, թէ ինչն է որ քեզ կը մղէ այդ կոչումին:

— Այդ մասին տարակոյս չունիմ: Որոչո՞ւ եմ արդէն: Ըսի՛ երկար-բարակ մտածած եմ, եւ գիտեմ թէ ինչ կ'ընեմ կամ ինչու կ'առնեմ այս քայլը: Հայաստանի մասին կ'ուզեմ իմանալ քեզմէ. հոն կղերական ըլլալու կարելիութիւններուն մասին, դժուարութիւններուն, արդելքներուն:

— Թէ էջմիածին ինչ տեսակ կղերականներ կը պատրաստեն՝ անկեղծօրէն չեմ գիտեր: Գաղափար չունիմ, որովհետեւ բնաւ չեմ հետաքրքրուած:

— Այսինքն հաւատացեալ չե՞ս:

— Ոչ: — Ժապ ժպտեցաւ, ներողամտութիւն հայցող արտայայտութիւն մը դէմքին: — Կը ցաւիմ:

— Խնդրեմ: Կը հասկնամ, կրնամ ըմբռնել, եւ չեմ զարմանար: Կը յուսամ սակայն որ իմ հաւատացեալ ըլլալս քու կարգիդ դուն կ'ըմբռնես եւ զարմանալի չես գտներ:

— Երբեք: Կրնամ նախանձիլ նոյնիսկ: Մարդոց համոզումները միշտ յարգելի եղած են ինծի համար, հոգ չէ թէ ես տարակարծիք ըլլամ իրենց հետ կամ չբաժնեմ իրենց համոզումները: Մանաւանդ՝ հաւատքի պարագային:

— Երանի ամէն մարդ քեզի պէս քաջ եւ անկեղծ ըլլայ, ու միաժամանակ՝ լայնախոհ: Հաւատքը այս կարգի յատկութիւններու վրայ հիմնուած է առաւելաբար:

— Բարոյական սկզբունքները պէտք չէ կրօնական հաւատքի հետ շփոթել, — Առաքելեան անհրաժեշտ նկատեց ճշգումը կատարել:

— Կ'ընդունիմ: Բայց արդիւնքը նոյնն է: Կամ՝ միաքը, նըպատակը:

— Թերեւս: Երբեմն՝ այո՛:

Երբեմնի ծաղրածուն տխրութեամբ գիտեց կրտսեր Սարգիսեանը, որ այնքան նման էր հօրը, մանաւանդ իր ընդհանուր կազմուածքով եւ շարժուձեւերով, եւ սկիւմայ շարունակեց:

— Հայաստանի մէջ միայն կղերականներու պէտք չունին:

— Համաճայն չեմ: Պետութիւնը կրնայ դէմ ըլլալ, բայց ատիկա զիս չի հետաքրքրեր: Կը բաւէ որ էջմիածինը կայ եւ կը դործէ. կոչում ունեցողը իր դործը կրնայ կատարել:

— Կրօնքը նաեւ աւանդութիւն է, վարժութիւն: Հայութեան պարագային՝ մեր բարքերուն մաս կազմած է: Հոս տակաւին ճիշդ է ասիկա. մեր եկեղեցի երթալը, կրօնական տօները, ծէսերը, արարողութիւնները: Բայց Հայաստանի մէջ յիսուն տարուան ընդմիջումէ մը ետք, այդ վարժութիւնը կորսուած է: Իրենց բարքերուն մաս չի կազմեր այլեւս:

— Ատիկա կրնայ ճիշդ ըլլալ, — Մուշեղ խօսեցաւ ողբերուած: Բացայայտ էր որ իր նախընտրած կալուածին մէջ էր եւ դո՛հ: — Թերեւս եկեղեցի երթալու վարժութիւնը կորսնցուցած են, այո՛, բայց հաւատքը տարբեր բան է: Իրապէս հաւատացողը եկեղեցի երթալու պէտք չունի: Ոչինչ, ոչ ոք կրնայ արդելք ըլլալ անոր հաւատալուն: Ճիշդ ատոր համար է որ հաւատքը չի մեռնիր:

— Հաւատացեալի մը պարագային ըսածդ ճիշդ է: Մտկայն ան, որ հաւատք չունի, այդ տեսակ հարց չունի: Եւ Սոլիստական Միութեան մէջ նախկին իմաստով հաւատացեալներ չեն մնացած, որովհետեւ իրենց ուրիշ բան քարոզած են, ուրիշ բան սորվեցուցած: Կրօնական հաւատքը իրենց անձանօթ է, որովհետեւ անոր ծանօթանալու առիթ չեն ունեցած: Պարզօրէն հաւատալու հարց չեն ունեցած, որ հաւատացեալ ըլլան կամ չըլլան:

— Բայց հաւատացեալներ կան:

— Հաւանաբար: Ձեմ գիտեր: Հաղարէն մէկ: Թերեւս անոնք, որոնք յեղափոխութենէն առաջ ծնած են կամ դաստիարակուած:

— Եթէ նոյնիսկ չկան, — վիճեցաւ Մուշեղ, — Հաւատքի պէտք ունին սակայն:

— Վերջին ըսածդ բոլորովին տարբեր բան եղաւ: Ըրածդ հաստատում մըն է, որ կրնայ վիճելի ըլլալ: Եթէ նոյնիսկ ընդունինք... ենթադրենք որ ես քեզի համամիտ գտնուեցայ. մարդ արարածը հաւատքի կամ հաւատալու պէտք ունի թերեւս: Բայց կախում ունի, թէ

ինչի՛ պէտք է հաւատայ: Ատիկա պէտք է որոշել նախ:

— Բնականաբար Աստուծոյ: Անոր բարութեան, ամենակարող ըլլալուն: Միակ եւ ճշմարիտ Աստուածը ըլլալուն:

— Կը ներես, — ակներեւ յուսախարութեամբ խօսեցաւ ժառ, — ըսածդ տգէտ բայց մոլեռանդ կրօնականի խօսք եղաւ:

Չարմանալիօրէն երիտասարդ Սարգիսեանը ժպտեցաւ միայն, փոխանակ վիրաւորուելու կամ ընդվզելու, եւ հանդարտօրէն շարունակեց վիճիլ:

— Համոզումով արտայայտեցի այդ միտքը: Ըսածիս խորապէս կը հաւատամ: Յուսամ այն տպաւորութիւնը չունիս որ թութակի պէս տրված խօսքերս կը կրկնեմ: Ինծի համար հաւատքի հարց է: Տգէտ կրօնական մը կրնայ առանց ըսածը հասկնալու նման խօսքեր խօսիլ վամ կրկնել, բայց ատիկա իրականութենէն ոչինչ կը փոխէ: Ըսուածը բացարձակ ճշմարտութիւն է:

— Քու տարիքիդ... զիս իսկապէս կը զարմացնես: Քանի՞ տարեկան ես:

— Քսաներկու:

— Անկեղծութեանդ կը հաւատամ ու կրնամ հիանալ միայն: Մօտեցումդ շատ լուրջ է. հարցը փիլիսոփայական մակարդակի վրայ նկատի ունիս անշուշտ, եւ հասած ես որոշ եզրակացութիւններու: Որ համոզում կը նշանակէ, եւ ուրեմն՝ հաւատք: Կ'ընդունիմ: Բայց թէ այս տեսակ հաւատքի պէտք ունի Հայութիւնը, մանաւանդ Հայաստանի մէջ, բոլորովին տարբեր խնդիր է եւ շատ վիճելի: Գէթ ինծի համար:

— Վերջապէս զիս հասկցող մը դտնուեցաւ: Ուրախ եմ, իսկապէս: Եւ վստահ եմ որ կրնաս ինծի օգտակար ըլլալ, չեմ սխալած: Եթէ նոյնիսկ կարծիքներու փոխանակութեան ծիրէն ներս մնայ միայն ատիկա:

— Հայրդ պէտք է հպարտ զգայ որ քեզի պէս զաւակ մը ունի:

— Ծնորհակալ եմ, — Մուշեղ մըթմըթաց, յայտնապէս շփոթած եւ անհանդիստ: — Բայց ի՞նչ ըսել կ'ուզես:

— Քեզի պէս լուրջ, գիտակից, մտածող, սեպհական համոզում ունեցող բայց նաեւ լայնախոհ աղայ մը ունի: Իսկապէս բախտաւոր մարդ է:

— Ծիշդ է, թէ հայրս հարուստ է եւ հարուստի մտայնութիւն ունի, բայց լաւ մարդ է եւ բախտաւոր ըլլալու արժանի է: Դժբախտաբար սակայն ես իրեն համար հիրքի մըն եմ պարզապէս:

— Չե՞ս, — ժպտեցաւ ժառ: — Այս արտաքինով եւ ապրելա-

կերպով՝ հաւանաբար: Հայր մը իր գաւկին համար միշտ լաւագոյնը կը բաղձայ:

— Էի: Սկիզբը այդ շարժումով տարուած էի եւ կուրօքէն կը հետեւէի իրենց բոլոր ըսածներուն եւ ըրածներուն: Ժամանակի ընթացքին, թէեւ, անդրապարձայ որ մեծ մասամբ կեղծիք էր, արուեստական ըմբոստութիւն:

— Ուրե՞մն:

— Իրենց հետեւիլս օգտակար եղաւ ինծի: Արթնցուցին զիս եւ կրցայ սեպհական աչքերովս տեսնել ամէն ինչ: Ներկայ գիտակցութիւնս այդ իրականութեան կը պարտիմ:

— Բայց ո՛չ իրենց: Հարցերուն մէջ դուն է որ լրջօրէն կը խորանաս: Մինչդեռ իրենք...

— Իրենց մասին չեմ գիտեր, — ընդմիջեց երիտասարդը, — եւ կարեւոր ալ չէ:

— Կրնաս դուն քու անձը ըլլալ ուրեմն, քանի իրենց պէտք չունիս եւ գիտես արդէն, թէ կեղծիք է առաւելաբար՝ մանաւանդ այս արտաքինը, մազը, մօրուքը, թափթփածութիւնը: Պատկեր է, ցուցադրութիւն: Համոզումի տէր մարդը ցուցադրութիւն կազմակերպելու պէտք չունի: Աւելի ճիշդը՝ պատրանքներով չ'ապրիր, եւ ոչ ալ կը ստեղծէ գանոնք:

— Առաջ պէտք էր տեսնէիր զիս:

Կուշտ ու կուռ խնդացին, եւ երէցը ըսաւ:

— Այդպէ՛ս: Չըսե՛ս, կատարեալ խենթանոցէն փախածի կը նմանէիր:

— Թերեւս: Ես պիտի չկարենամ դատել անշուշտ:

— Այլիկ մը սիրա՞ծ ես երբեք, — անակնկալօրէն հարցուց ժառ Առաքելեան: — Ուրեք աղջիկ, որեւէ առիթով: Դիտեմ, ըսիր, թէ ներկայիս ս:յը տեսակ հարց չունիս: Իսկ անցեալի՞ն:

— Չարմանալի հարցում է: Ինչո՞ւ կը հետաքրքրուիս: Եւ պէ՞տք է պատասխանեմ:

— Հետաքրքրութիւն չէ: Դուն է որ կը զարմացնես զիս, ըսի քիչ առաջ: Քու տարիքիդ... երիտասարդական այս կարգի զգացումներով պէտք է տարուած ըլլաս աւելի: Ի՞նչ է կարծիքդ:

— Կարծիք չունիմ, որովհետեւ փորձառութիւն չունիմ:

— Չե՞ս խորհիր որ կեանքը պէտք է ապրիլ նախ, ճաննալ զայն, փորձառութիւն ունենալ, որպէսզի կարենաս մարդկութիւնը յուզող հարցերով կամ տաղնապնեքով զբաղիլ: Տառապիլ, եթէ պէտք ըլլայ. գիտնալ, թէ կեանքի մէջ ինչ դժուարութիւններ կան, մար-

դոց ինչեր կը պատահին, ի՛նչ տեսակ կարիք կ'ունենան :

— Մրադրուած կերպով կարելի՞ է տառապիլ :

— Առանց տառապելու վարելի՞ է մարդկութիւնն ու անոր կարիքները ճանչնալ — իր կարգին հարցուց ժառ : — Ինչպէ՞ս կրնաս որոշել, թէ մարդիկ կրօնական հաւատքի պէտք ունին, օրինակի համար : Երբ տառապիլ կ'ըսեմ, ծրարուած կերպով Ֆիզիքական կամ հոգեկան շարժարանքի ենթարկուիլ ըսել չեմ ուզեր : Մարդ ըլլալ՝ ըսել կ'ուզեմ : Իսկ մարդ ըլլալ կեանքը ճանչնալ կը նշանակէ, այսինքն այդ դժոխքին մէջ տասկուիլ : Մարդը ինքնին տառապանքի բոյն է, ուր տիեզերական բոլոր ուժերը իրենց խաղերը կը խաղան :

— Յիսուս եւս մարդացաւ, բայց առանց արուեստական միջոցներու դիմելու :

— Ըստ Աւետարանին պէթ՝ Յիսուս Աստուծոյ տառապանքը կը կրէր իր մէջ : Իսկ մարդանալով մարդկութեան տառապանքը ամբողջ ուղեց թեթեւցնել, բաժնել : Աստուծոյ կամքն էր : Իսկ Աստուծոյ տառապանքը, զոր Յիսուս կրեց, մարդկութեան տառապանքն էր ի վերջոյ :

— Քու մեկնարանութիւնդ իմ ըսածը կը հաստատէ : Մարդկութիւնը այդ հաւատքին պէտք ունի ուրեմն :

— Ունի կամ ունէր : Ունենալէն ետք սակայն կորսնցուցած է զայն : Ինչո՞ւ :

— Շատ ճիշդ : Կարեւորը այդ հաւատքը իր մէջ վերահաստատելն է :

— Ձե՞ս կարծեր որ հաւատք կոչուածը օգտակար չեղաւ իրեն, հարցերը չլուծեց, եւ մարդը մնաց նոյն անել, դատապարտուած վիճակին մէջ :

— Ատիկա իր իսկ թերահաւատութեան հետեւանքն էր :— Մուշեղ խօսեցաւ անխառն կարեկցութեամբ : — Ճիշդ այս է ողբերգութիւնը :

— Քեզի պէս ուշիմ տղայ մը այս տեսակ ընդհանրացումներ պէտք չէ ընէ : Քրիստոնէութիւնը երկու հազար տարուան պատմութիւն ունի, իսկ ատկէ առաջ Մովսիսականութիւնը, ինչպէս նաեւ արեւելեան կրօնքները : Առաւելագոյնը չորս կամ հինգ հազար տարի : Մեր արձանագրուած պատմութիւնը ատկէ անդին չ'անցնիր, բայց այս շրջանին իսկ, հինգ հազար տարի առաջ, օրինակ, մարդ արարածը Աստուծոյ կամ անոր դոյութեան մասին զաղափար չունէր : Այսինքն հաւատքի հարց չունէր : Սակայն դիտենք, թէ հարիւր հազարաւոր տարիներէ ի վեր մարդը կը շրջի այս մոլորակին վրայ՝ կը

ծնի, կ'ապրի ու կը մեռնի, հող չէ թէ ինչ վիճակի մէջ : Նոյն մարդն է, նոյն դատապարտուած արարածը, որ իր իսկ պայմաններուն գերին է. եւ ասոր մէջ ինք գեր չունի : Ինչպէ՞ս կարելի է թերահաւատութիւն վերադրել իրեն՝ պատմութեան որեւէ շրջանին : Ընդհալառական բնութեան եւ տիեզերքի զաղանիքները, խորհուրդը ըմբռնելու յոյսով ան ուղեց հաւատալ գերագոյն ոյժի մը, որ կը վարէր այս ամբողջը : Եւ հաւատաց : Աստուածներու կամ Աստուծոյ : Բայց եւ այնպէս չկրցաւ լուծել իր հարցերը, հասկնալ ինքզինք կամ բնութեան զաղանիքները, եւ մնաց նոյն դատապարտուած, մահկանացու արարածը :

Մուշեղ Սարգիսեան սառած արտայայտութեամբ խօսակիցը կը դիտէր, ու երբ ան լուեց, չանդրադարձաւ նոյնիսկ, թէ պէտք է խօսէր : Երկարածաւոր լուծիւնը սթափեցուց զինք յետոյ, ու խօսեցաւ :

— Ինձի համար անակկնալ մըն է : Ձէի գիտեր, թէ այսքան լուրջ կրնաս ըլլալ որոշ հարցերու մէջ :

— Ձիս ի՛նչ կը կարծէիր, — Առաքելեան խնդաց, իսկապէս զարմացած :

— Կը խնդրեմ որ սխալ չմեկնես ըսածս : Քեզ ճանչցած եմ որպէս զուարթ, կատակասէր եւ կենսուրախ երիտասարդ մը, որ աւելի կեանքը վայելելով դրաղած է միշտ :

— Ասկէ հինգ կամ վեց տարի առաջ դուն հազիւ պատանի մըն էիր, եւ զիս ճանչնալու առիթ ալ չէիր ունեցած կարծեմ : Այսինքն իսկապէս ճանչնալ : Ձիս կը տեսնէիր հոս երբեմն, եւ այդքան :

— Անչուշտ, իրաւունք ունիս : Սակայն իրականութիւնը այն է որ կը նախանձէի նոյնիսկ... միշտ աղջիկներով եւ բարեկամներով շրջապատուած էիր :

— Լաւ նշան է, — ներողամտաբար կատակեց երէցը. — քեզմէ յոյս պէտք չէ կտրել ուրեմն : Քանի աղջիկներն ու կեանքի վայելքը կրնան քեզ հետաքրքրել :

— Շատ շնորհակալ եմ : Թէեւ պիտի ուզեմ շարունակել այս խօսակցութիւնը, սակայն իրաւունք չունիմ քեզմէ աւելի ժամանակ խլելու : Յուսամ զիս հետաքրքրող բուն հարցին մասին կրնանք աւելի մանրամասնորէն խօսիլ օր մը :

— Անպայման : Այսօր դրաղած չըլլայի, կը շարունակէինք : Պէտք է տուն հասնիմ :

*

**

Դժբարդը արարած մըն ալ այս, մըթմըթաց Յակոբ Առաքելեան, եւ դրասենեակէն դուրս ելաւ: Եւ ուզեց մոռնալ զայն, ջնջել մտքէն, չյիշել անոր անմեղութիւնը կամ միամտութիւնը: Ծատ կանուխ, տակաւին հազիւ երիտասարդ, սկսած էր հարցումներ հարցնել, կեանքն ու պոյութիւնը հարցաքննել: Եւ տազնապիլ, որովհետեւ հասած էր որոշ եզրակացութիւններու: Եւ ուրեմն դատապարտուած էր: Ինքզինք դատապարտած էր: Անկարելի էր որ խաղաղ, բնական կեանք մը ունենար այս տղան, եզրակացուց եւ որոշեց չմտածել անոր մասին: Գէթ հիմա, երբ կ'աճապարէր ու կ'ուզէր վայրկեան առաջ տուն հասնիլ՝ այլ փոթորիկ մը դիմադրուելու համար:

Ներքնապէս ուրախ էր թէ եւ, որովհետեւ տան մէջ կենդանութիւն պիտի գտնէր եւ պիտի կարենար դրադիլ: Վերջին շրջանին սկսած էր ձանձրանալ, նկատելով որ միօրինակ առօրեայի մը հոսանքին մէջ ինկած, կծիկի մը պէս մէյ մը տան պատերուն կը զարնուէր եւ յետոյ վաճառատան պատերուն: Եւ այսպէս շարունակ, ամէն օր, առանց դադարի: Փոփոխութիւն չկար կեանքին մէջ, նախկին բարեկամներն ու շրջանակը կորսնցուցած էր հինգ տարուան բացակայութենէ մը ետք, եւ ամենէն պոռկոյն՝ զինք երէցներու կարգին կը դասէին այլեւս: Համեմատարար խաղաղած էր անշուշտ, բայց չէր պարտուած: Այլ խօսքով՝ երիտասարդ էր, եւ երիտասարդ կը զգար:

Իրաւունք ունէ՞ր սակայն ուրիշներու դժբախտութեան մէջ իրեն համար դրադում որոնելու: Եւ այս պարադային ուրիշը օտար մը չէր, այլ Սեղայի քոյրն ու անոր զաւակները, ընտանիքը: Ամուսինը կրնար փճացած յիմար մը ըլլալ — անպատասխանատու, անձնասէր, վատ կամ ստորին — բայց մարդ էր, եւ օգնութեան պէտք ունէր թերեւս: Ո՞վ դիտէր, թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս, ի՛նչ պայմաններու բերումով շեղած էր կամ մոլորած եւ գերին դարձած իր մոլութիւններուն: Ինք գէթ շատ լաւ տպաւորուած էր անկէ, ու համակրած էր նոյնիսկ անոր: Ներկայանալի, զեղադէմ, ինքնավստահ ու քաղաքավար երիտասարդ մըն էր. իսկ իր հետ առաջին իսկ օրէն մտերմացած էր եւ վարուած հարազատի մը պէս:

— Քու մասիդ բաւական լսած եմ, — ըսած էր իրեն, երբ հանդիպած էին առաջին անգամ օղակայանին մէջ, Հայաստանէն վերադարձին: — Յաճախ կը խօսին քու մասիդ, նախանձս գրգռելու աստիճան, — աւելցուցած էր յետոյ եւ խնդացած:

— Յուսամ գէշ բաներ չես լսած, — կատակած էր ինք իր կարգին:

- Ինչպէ՞ս պիտի նախանձէի, եթէ այդպէս ըլլար:
- Ձեռ գիտեր: Հեռուէն թմբուկին ձայնը հաճելի կը հնչէ:
- Ուրիշներէն ալ լսած եմ, միայն մերիշներէն չէ:
- Այդքան նշանաւոր մարդ մը ըլլալս չէի գիտեր: Լաւ որ վերադարձած եմ, չըսե՛ս:

Այդ գիշեր միասին խմած էին յետոյ, կատակած, ու նոյնիսկ երգած՝ Սեղայի հայրը զարմացնելու աստիճան: Առաջին իսկ օրէն նկատած էր, թէ Արշակի նկատմամբ անոր վերաբերմունքը վերապահ էր, դրեթէ թշնամական: Եւ զարմացած էր: Աւելի ուշ յանցաւոր զգացած էր նոյնիսկ:

Երբ տուն հասաւ, կիները երեխաները քնացնելով զրադած էին: Քանի մը անգամ ննջասենեակ մտաւ, փորձեց կատակել, ու երբ նկատեց որ իրեն ուշադրութիւն դարձնող չկայ, բաժակ մը օդի լեցուց եւ անցաւ ճաշասենեակ, ուր աւելի հանդիստ կը զգար սովորաբար: Հոս սեղան մը եւ քանի մը աթոռ կային գէթ, մինչդեռ հիւրասենեակը դատարկ էր տակաւին: Բայց դո՛հ էր, ու գանգատելու պատճառ չունէր: Մինչեւ մէկ տարի տունը կահաւորուած կ'ըլլար, եւ ատկէ ետք... ինչ: Հարցում իսկ չկար մտքին մէջ:

— Օ՛, մարդուն մէկը ինքզինք կարկաղեր է արդէն, — Ալիս ներս մտաւ քիչ ետք եւ նստեցաւ սեղանին դիմացի կողմը:

Ժառ, զմայլած, նայեցաւ քնիին ու կրցաւ ժպտիլ միայն: Անտեղի, անիմաստ, յիմար ժպտ մըն էր, գիտէր: Ալիսի զեղեցկութիւնը ցնցեց զինք կամ սթափեցուց ու չկրցաւ հաւատալ, թէ ասկէ առաջ չէր նկատած զայն: Վերջին երկու ամիսներուն տեսած էր զինք յաճախ, բայց ըստ երեւոյթին առիթ չէր ունեցած այդ վայրի զեղեցկութիւնը մօտէն դիտելու: Տարիներ առաջ կը յիշէր, երբ ամօթխած պարմանուհի մըն էր ան, նոյնքան մը զեղեցիկ էր եւ ուշադրաւ: Բնութիւնը ինքզինք զերագանցած էր սակայն եւ այդ պարմանուհիէն կերտած՝ դրեթէ անկարելի կատարելութիւն մը: Կին արարածը: Ամբողջական, շքեղ, պարզօրէն՝ զեղեցիկ զիցուհի մը: Ամէն կերպով կին էր, իր բոլոր մանրամասնութիւններով: Դէմքը, շրթները, քիթը, կանաչ ու վայրի աչքերը, բարեճեւ ու բացարձակ ներդաշնակութեամբ կազմաւորուած իրանը, սլացիկ հասակը, ու տակաւին պչրանքը, շարժումները՝ բոլոր զիրար կ'ամբողջացնէին: Անկարելի էր: Անբնական: Բայց ինչո՞ւ անբնական: Ընդհակառակն՝ բնութեան յաղթանակն էր: Ճշմարտութիւնը անոր:

— Բաժակ մը կ'առնե՞ս, — հարցուց՝ այդպէս, պարզապէս խօսած ըլլալու համար :

— Քիչ յետոյ, ընթրիքին հետ :

— Երեխաները քնացա՞ն :

— Ի՞մի՛ններս քնացուցի, — պատասխանեց Ալիս : — Չըլլալիք օր մըն էր :

Ժապի մտածումները այլ ուղղութեամբ ընթացան մինչ այդ, եւ փոխանակ խօսակցութիւնը շարունակելու, օղիի բաժակէն ուժպ մը առաւ անդալարար, սրունքները անհանդարտօրէն տեղափոխեց սեղանին տակ եւ յանձնուեցաւ մտորումներուն : Գեղեցիկին հրաշքը հմայած էր զինք միշտ, բայց չէր կրցած մեկնել դայն ու թափանցել անոր դադանիքին : Ի՞նչն էր, որ կրնր վեղեցիկ կ'ընծայէր, օրինակե համար : Աչքե՞րը, թարթիչնե՞րը, ժպի՞տը, թէ մարմնին այլ առանձնայատկութիւնները : Գիծերու եւ գոյներու համադրութիւն : Բայց երբեմն մանր, աննշան թուող աչքեր շատ աւելի դրաւիչ էին ու խօսուն — պարզօրէն գեղեցիկ : Ինչպէ՞ս : Մանրակազմ աղջիկ մը կրնար նոյնքան հրապուրիչ ըլլալ, որքան սլացիկ ու գեղակերտ հասակով կին մը : Ի՞նչ էր դադանիքը :

Իսկ խորհուրդներուն խորհուրդը՝ գեղեցկութեան անխուսափելի յաղթանակն էր : Ամենէն վատ մարդն իսկ կը նուաճէր, կը հպատակեցնէր իրեն, եւ աներեւակայելի յեղաշրջում կ'իրագործէր երբեմն : Կը դրաւէր, կը կլանէր մարդը, ու շնախատեսուած կերպով կը ներգործէր անոր վրայ : Առանց ազդարարութեան, անակնկալօրէն, ու յաճախ՝ առանց պատճառի : Բայց ի՞նչ պատճառ : Գեղեցկութիւնը ինքնանպատակ էր ի վերջոյ — անկախ, անբացատրելի, ու մանաւանդ՝ ճշմարիտ : Ըշմարտութիւն, որ բացարձակ էր, անհերքելի :

Ասոր առաջին անգամ գիտակցած էր, երբ անակնկալօրէն դէմ յանդիման դանուած էր Արարատի վեհանիստ գեղեցկութեան հետ : Հոն էր՝ որպէս անկարելի բայց բացարձակ գոյութիւն, որ կը վերածուէր միտքի, որ հանդարտօրէն կը մեծնար, կը տարածուէր, կը բարձրանար ու կը մնար երկինքէն առկախ, առանց բաժնուելու սակայն երկրէն : Ահռելի պատկեր էր — գեղեցկութիւնը ահռելի կրնա՞յ ըլլալ — ահաւոր. որ երկիւղ պատճառած էր իրեն, նուաճած էր զինք, վերջացուցած : Ու պահ մը ավար դրացած էր, նկատելով որ ծունկերը կը կթոտէին, մինչ աչքերը մշուշի պատառ մը կը տեսնէին միայն՝ իրմէ խոյս տուող հորիզոնին վրայ : Կարճատեւ պահ մը միայն, որմէ ետք վերադատած էր ինքզինք, ու հմայուած՝ փորձած էր ըմբռնել խորհուրդը այդ երեւոյթին, բռնել գեղեցկութիւնը ու

յաւերժացնել դայն իր ներաշխարհին մէջ :

Նոյն երկիւղն էր որ կլանած էր զինք հիմա, եւ չլմած էր, հմայուած թերեւս : Ոչ թէ պարզ իմաստով հմայուած, այսինքն չլացած Ալիսի գեղեցկութեամբ. այլ կախարդուած էր կարծես եւ իր անձէն դուրս ելած էր դարձեալ : Գիտէր, թէ հոն էր, իր տան մէջ, բայց ներկայ չէր նաեւ, որովհետեւ ինք ուրիշ տեղ մըն էր հիմա, ուրիշ աշխարհի մը մէջ : Եւ այս ինքը իր Ֆիզիքական գոյութիւնը չէր, այլ բուն ինքը, որ անուն չունէր, ոչ իսկ ինքնութիւն, որ կը ճանչցուէր Յակոբ Կամ Ժապ Առաքելեան անունով : Այլ իր գիտակցութիւնն էր, որ ուրիշ տեղ էր հիմա :

Մարդուն իսկական գոյութիւնը այս առօրեայ կեանքը չէր ուրեմն, ոչ ալ նիւթական աշխարհը, որուն մաս կը կազմէր : Գեղեցկութիւնը ինքնին նիւթականօրէն ըմբռնելի չէր, նիւթ չէր. ատոր համար նիւթական յատկանիշ չունէր, բովանդակութիւն չունէր : Ինչպէս դադափարը, որեւէ մտածում, որ գոյութիւն ունենալով հանդերձ, մարմին չունէր : Նիւթական աշխարհին մաս չէր կազմեր : Այս իմաստով մարդը անժամանակ, անակիցը եւ անվախճան գոյութիւն կրնար ըլլալ միայն, եւ ուրեմն՝ տիեզերականօրէն յաւերժական : Այսինքն՝ տիեզերքին մաս կը կազմէր. կամ ինքն իսկ էր տիեզերքը : Զարմանալի չէր, հետեւաբար, որ գեղեցկութեան գիտակցութիւնն ալ իր էութեան մէջ ընդելուզուած ըլլար, որովհետեւ մէկ էր ճշմարտութիւնը — անբաժան եւ անխորտակելի ամբողջութիւն :

Ալիսը, օրինակ, այդ ամբողջութեան մէկ մասնիկն էր : Ինչպէս նաեւ անոր գեղեցկութիւնը, որ իրմէ անկախ էր : Այս չէ՞ր միթէ գաղանիքը : Խաղաղած ու հանդարտ, նայեցաւ անոր յետոյ ու նկատեց որ ան եւս խորասուզուած էր մտածումներու մէջ : Ախրսոսաց : Քենիին առօրեայ կեանքին մանրամասնութիւնները կամ բարդութիւնները կ'աղարտէին այդ գեղեցկութիւնը, կը նսեմացնէին դայն ու նիւթական տարագ մը կը հագցնէին անոր : Ի՞նչ վատնում էր, մտածեց Առաքելեան ու խօսելու փորձ մը եւս ըրաւ :

— Ի՞նչ որոշեցիք :

— Անկարելի է, — ըսաւ Ալիս : Ընդհատուած նախադասութիւն մը կը շարունակէր կարծես : — Ասկէ աւելի չեմ կրնար դիմանալ այլեւս : Ինչ կ'ուզէ թող ըլլայ :

— Ի՞նչ պիտի ընես :

— Մարդու պէս պիտի ապրիմ. հանգիստ, խաղաղ : Զարչարուելու համար չեմ ստեղծուած :

— Զաւակներուդ ապագան, երջանկութիւնը :

— Մեր տունը դժոխքի վերածուած է: Դժոխքի մէջ մարդ եր-
ջանիկ կրնա՞յ ըլլալ: Զաւակներս կրնան միայն փճանալ, եթէ մեր
կեանքը այսպէս շարունակուի:

— Զարմանալի է, — քեռայրը մրթմրթաց. — խելքը գլուխը,
կարգին երիտասարդ կ'երեւի:

— Օտարներու հետ այդպէս է. քերպիւղի մէջմունն:

— Ես օտա՞ր եմ:

— Իրեն համար՝ այո՛: Քանի անգամ հանդիպած էք որ:
Յետոյ, քեզ կը յարդէ, կը սիրէ կրնամ ըսել:

— Ճիշդ ատ է որ կը զարմացնէ զիս: Ես ալ զինք կը հաւնիմ:
Լաւ տպաւորութիւն ձգած է վրաս:

— Ըսի, չէ՞: Մարդոց հետ վարուիլ, սիրաշահիլ գիտէ: Լե-
զուն բերնին մէջ կը դառնայ:

— Կրնա՞մ հարցում մը հարցնել:

Երիտասարդ կինը հարցական նայեցաւ քեռայրին ու չպատաս-
խանեց:

— Քեզ կը սիրէ՞, — Ժազ հարցումը ուղղեց յամենայն դէպս:

— Այո՛: Գէթ կը սիրէր: Բայց ի՞նչ կարեւորութիւն ունի: Սի-
րողը կինը չի ծեծեր:

— Չես գիտեր: Նախանձի հարց չի՞ կրնար ըլլալ:

— Ինչո՞ւ պիտի նախանձի: Ինչ ըրած եմ որ... եթէ ուրիշ
մարդ մը ըլլար խնդրին մէջ, կը հասկնամ: Եթէ նոյնիսկ ուրիշ մը
սիրէի, — Ալիս շարունակեց, — ակամայ մտածելով Գեղամ Տարօն-
եանի մասին, — պիտի չկարենայի անհաւատարիմ ըլլալ:

— Դուն կը սիրե՞ս զինք:

— Երբ հետը ամուսնացայ, կարծիքս առնող չեղաւ: Ամուսնա-
ցուցին: Բերանս չբացի, չգանդատեցայ ու ոչ մէկ ատեն պարտակա-
նութիւններու մէջ թերացայ: Առաջին երկու տարիներուն սքանչելի
էր. կրնամ ըսել նոյնիսկ որ գոհ էի, որովհետեւ յաջող ամուսնու-
թիւն մըն էր:

— Բայց չես սիրած զինք:

— Պայմա՞ն է: Ամուսնական կեանքի մէջ զգացական սէրը տեղ
կամ դեր չունի: Եթէ համերաշխ, ներդաշնակ կեանք մը ունենաս, կը
վարժուիս ու կրնաս սիրել նոյնիսկ ամուսինդ:

— Հասուն կին դարձած ես, — Ժազ ժպտեցաւ գոհունակու-
թեամբ: — Փորձառու, խելահաս, իմաստուն: Ինչպէ՞ս կը պատահի
որ չես կրցած սանձը ձեռքերուդ մէջ պահել: Տունը շինողն ալ, քան-
դոզն ալ կինն է, կ'ըսեն:

— Մեր տունը իր բարեկամները քանդեցին: Հասարակ փողո-
ցային մարդիկ, բոլորն ալ խաղամոլ: Մինչեւ այսօր դեռ չեմ կրնար
հասկնալ... ուրիշ ուր. ինչպէ՞ս հանդիպեցաւ իրենց, ո՞վ պատճառ
եղաւ:

— Դեռ նոյն նիւթին վրայ ես, — Սեդա ներս մտաւ ու խօսեցաւ
յանդիմանական շեշտով մը: — Զյուզեցա՞ր: Եթէ այսպէս շարու-
նակուի, մօտ օրէն ջղային խանդարում պիտի ունենաս:

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Զխօսի՞մ: Մարդը հետաքրքրուեցաւ.
չպատասխանե՞մ: Գիտնալու իրաւունք չունի՞: — Ու դառնալով Ժա-
զին, Ալիս շարունակեց. — Գառնուկի պէս մարդը զազանի վերածե-
ցին: Տակաւին չեմ կրնար հաւատալ. իրեն պէս բարեկերթ, զարգա-
ցած երիտասարդ մը... մարդ ինչպէս կը փոխուի եղեր:

— Ի՞նչ ուսում ունի, — հետաքրքրուեցաւ քեռայրը:

— Երկրորդականը աւարտած է, բայց շատ խելացի է, գործին
մէջ ճարպիկ... ու շատ լաւ շրջանակ ունէր: Սիրուած, յարգուած:
Դրամ ըսես, հարստութեան մէջ վը լողան, ոսկի կը կտրեն: Գոնէ
դրամի պէտք ունենա՞ր. ի՞նչ մոլութիւն է եղեր ասիկա, ի՞նչ հիւան-
դութիւն է: Աշխարհի ամենէն գէշ հիւանդութիւնը:

— Լա՛ւ, լա՛ւ, — սաստեց քոյրը, — կը բաւէ. եկուր սա ընթ-
րիքը պատրաստենք, որ պատառ մը ուտենք:

— Հանդիստ ձգէ՛ կինը: Թող խօսի. ի՞նչ կ'ուզես իրմէ: Նախ-
ընտրելի է որ խօսի, հանդստանայ:

— Այս ընթացքով կրնայ միայն հիւանդանալ:

— Ներողութիւն, տղթո՛ր, — կատակեց Ժազ. — քանի այդ-
պէս է, ինձի այս թոյնէն բաժակ մը եւս կու տա՞ս, — ըսաւ եւ օղիի
բաժակը փոխանցեց տիկնոջ:

— Նորէն մի սկսիր, — Սեդա թեւերուն մէջ օղակեց ամուսնոյն
վիզը. — զբաղելիք ուրիշ բան մը գտիր: Ես քու խաղալիքդ չեմ, —
սպառնաց, թեւերուն օղակը աւելի սեղմելով:

— Յանձնուեցայ, վե՛րջ:

Ալիս ամօթխածութեամբ դիտեց քոյջ եւ ամուսնոյն անմեղ,
մանկական սիրուբառուքը եւ ուղղուեցաւ դէպի խոհանոց:

— Ի՞նչ որոշեցիրք, — Առաքելեան կրկնեց հարցումը, այս ան-
գամ խօսքը ուղղելով կնկան:

— Ի՞նչ պիտի որոշենք: Առայժմ կացութիւնը այս է: Յամառու-
թիւնը բռներ է նորէն:

Է,

Արտաշէս Պալեան վճռական կերպով բախեց խնամիրներու տան դուռը եւ սպասեց : Կինը, Սաթենիկ, որ ահամայ կ'ընկերակցէր իրեն, նոյնքան վճռական կ'ուզէր երեւիլ, բայց յանցաւոր կը զգար նաեւ : Ծանօթ ըլլալով տղուն եւ հարսին վերջին ամիսներու կեանքին եւ վէճերուն, եւ վստահ ըլլալով որ Ալիսի հայրը եւս տեղեակ չէր, ինչպէս իր ամուսինը, ինքզինք արդարացնելու կերպի մը մասին կը մտածէր աւելի, քան թէ բուն ազգտին մասին : Եւ ազէտ մը կրնար պատահիլ միայն, որովհետեւ Դաւիթ Օհանեանէն ուրիշ ոչինչ կարելի էր ակնկալել : Առաջին օրէն չէր սիրած այդ մարդը եւ տարօրինակ, անբացատրելի վախ մը ունեցած էր անկէ : Հինգ տարիէ ի վեր, այս ամբողջ միջոցին, ժպիտ չէր տեսած մարդուն դէմքին վրայ եւ կարգին նախադասութիւն մը չէր կրցած փոխանակել անոր հետ :

Տիկ. Եղիսը սրգոյցած արտայայտութեամբ մը, գրեթէ սարսափահար, դիմաւորեց գիրենք ու չկրցաւ խօսիլ : Ու կանգնած մնաց դրան սեմին, գիրենք ներս հրաւիրելու փափկանկատութիւնը նոյնիսկ մոռցած :

- Ո՞վ է, — լսուեցաւ ամուսնոյն ձայնը խոհանոցէն մինչ այդ : — Զպատասխանե՞ս :
- Արչակի ծնողքը :
- Թող ներս, հոս հրամեն :

Արտաշէս Պալեան ակներեւ դժգոհութեամբ ուղղուեցաւ դէպի խոհանոց, վայրկեան առաջ աթոռ մը գտնելու յոյսով : Վաթսուն տարեկանին հազիւ կրնար կրել հսկայ մարմին ծանրութիւնը : Ամբողջ կեանքին ընթացքին չէր հիւանդացած, եւ այս տարիքին ալ սքանչելի առողջութիւն մը ունէր, բայց հարիւր քիլօ ծանրութիւնը դժուարութեամբ կը պտրտցնէր այլեւս : Հասակն ու յաղթանդամ մարմինը իր հպարտութիւնը կազմած էին անցեալին, մինչդեռ ներկայիս՝ այդ հպարտութիւնը իր պատիժը դարձած էր :

- Երիտասարդները ուր են, — հարցուց Դաւիթ Օհանեան, երբ հիւրերը տեղաւորուեցան վերջապէս :
- Ես ձեզի հարցնելու եկայ, — խօսեցաւ կօշկավաճառը, խոժոռ արտայայտութիւն մը դէմքին : — Գոնէ Ալիսը : Խորհեցայ որ հոս պէտք է ըլլայ :
- Հո՞ս պիտի գար :

— Չեմ գիտեր, — Արտաշէս Պալեան պատասխանեց շփոթած, ու հարցական նայեցաւ կնկան :

- Կարծեցինք որ ձեզի եկած է, — ըսաւ վերջինը :
- Այս ժամո՞ւն, — Դաւիթ նայեցաւ ժամացոյցին, եւ ինք եւս շփոթած, փնտոեց Եղիսը ու նկատեց որ անհետացած էր : — Ժամը ութը կ'անցնի արդէն :

- Հոս չէ կ'ըսես, — կակաղեց Սաթենիկ. — երէկ ո՞ւր անցուցին ուրեմն :
- Եղի՛ս, — մտալաճառը դոռաց յանկարծ, — ո՞ւր կորսուեցար : — Զիս պիտի խենթացնէ՞ք, ի՞նչ է, բոլորդ : — Ու նկատելով կնկան այլափոխուած դէմքը խոհանոցի մուտքին, խօսքը ուղղեց անոր. — Ինչի՛ մասին կը խօսին ասոնք :

Արտաշէս Պալեան կռահելով որ աղջկան հայրը տեղեակ չէր եղելութենէն, ու յուսալով դարձանել կացութիւնը, ըսաւ :

- Երէկ առտու պզտիկները անկելով հեռացած է տունէն եւ մինչեւ հիմա չէ վերադարձած :
- Ո՞ւր են, — Դաւիթ հարցումը ուղղեց կնկան, համոզուած արդէն, թէ տեղեակ էր ան :

- Սեղային քով :
- Գաւաթ տո՛ւր, ի՞նչ կեցեր ես :
- Յետոյ հանդարտօրէն լեցուց օղին բաժակներուն մէջ, եւ իր բաժակէն ումպ մը աննիլէ ետք միայն խօսեցաւ :

- Արչակը ո՞ւր է :
- Չեմ գիտեր, — ըսաւ տղուն հայրը : — Յերեկին խանութն էր անշուշտ : Ես այսօր, կէսօրէ ետք, լուր ունեցայ :
- Խնդիրը ի՞նչ է ճիշդ : Ըսա՞ւ քեզի :
- Կոռած են, ի՞նչ պիտի ըլլայ :
- Ատիկա խօսք չ'ուզեր : Տէրտէր ըլլալու պէտք չկայ այդքանը հասկնալու համար : Ինչո՞ւ կ'ուռած են, ատ կ'ուզեմ գիտնալ :
- Ես ալ չեմ գիտեր : Մեր պարոնէն բան մը չկրցայ հասկնալ. ըսի թերեւս Ալիսը կը խօսեցնեմ :

- Լա՛ւ, կիները խելք չունին ըսենք, — բարձրաձայն մենախօսեց Օհանեան. — Յակորը ինչո՞ւ առեր, նստեր է գիրենք : Խելացի տղայ է կը կարծէի :
- Յակորը յանցանք չունի, — Եղիս համարձակեցաւ խոստովանիլ : — Ես չուզեցի որ լուր ունենաս, մինչեւ որ կարգադրութիւն մը ընէի :
- Ի՞նչ կարգադրութիւն պիտի ընէիր, — հեղնեց ամուսինը :

— Մենք քեզի չափ խելք չունի՞նք: Որո՞ւ զաւակն է շան աղջիկը:

— Աղջիկդ յանցաւոր չէ, — պաշտպանողականի անցաւ մայրը, — բայց հակառակ ատոր ուղեցի առանց աղմուկի կամ խայտառակութեան կարդադրել, խօսք հասկցնել իրեն:

— Եթէ յանցաւոր չէ, ի՞նչ խօսք պիտի հասկցնես:

— Կին է. թող բերանը գոցէ նստի: Ամուսինը երիտասարդ է, եւ այս տեսակ բաներ կը պատահին: Ո՞ր երիտասարդը խենթութիւն չ'ընէր:

— Ի՞նչ է բրածը, — Արշակի հայրը անկեղծօրէն հետաքրքրուեցաւ: — Դուն լուր ունի՞ս, Սաթենի՛կ:

— Ինչպէ՞ս լուր պիտի ունենար: Աղջիկը ինքն ալ շուարած էր... ես չէի ձգեր որ խօսի կամ գանգատի: Բայց դանակը ոսկորին հասաւ կ'երեւի:

— Ի՞նչ է խնդիրը, պիտի չհակնա՞նք: — Դաւիթ, համբերութիւնը սպառած, բռունցքը ուժղնօրէն զարկաւ սեղանին:

— Ամէն օր մինչեւ առտու փողոցներն է, ու տունը գալէն ետք ալ՝ կռիւ, վէճ, խայտառակութիւն:

— Ո՞վ: Արշա՞կը:

— Կին մը մինչեւ լոյս փողոցները ի՞նչ դործ ունի: Ամուսինը անշուշտ, ոչ թէ աղջիկդ:

— Եւ ատոր համար տունը ձգեր հեռացե՞ր է:

— Մէկ ամիս չէ, երկու ամիս չէ: Տարին անցաւ, եւ ես նոյնիսկ յուսահատելու սկսայ: Բան մըն է, կ'անցնի, կը փոխուի կ'ըսէի. աղջիկն ալ այդ յոյսով լռեր էր: Բայց վերջաւորութեան հարցը փոխւեցաւ, ու վէճը եղաւ կռիւ, կռիւը եղաւ ծեծ եւ... Ի՞նչ գիտնամ: Աղջիկդ ինձմէ աւելի լաւ կը ճանչնաս. անգամ մը սիրտը չկտրուի: Գոնէ յանցանք ունենա՞ր: Վա՛յ որ բերանը բանայ եւ գանգատի:

— Վստա՞հ ես:

— Կոնակը կասկապոյտ է: Գօտիով մարդ կի՞ն կը ծեծէ: Չխօսիմ ըսի, բայց գիմացուելիք չէ: Մայր եղիբ եւ դիմացիր:

Եղիս Օհանեան չկրցաւ շարունակել: Արդարեւ նկատած էր որ ամուսինը ջգային նոպայ մը կ'անցընէր դարձեալ ու ճիզ կ'ընէր ինքզինքը գսպելու, ալ զիստը սեղմած մատներուն աքցանին մէջ: Ակընթարթի մը մէջ կրնար սեղանը տապալել, խոհանոցը գլխիվայր շրջել ու ջարդուփռուր ընել ամէն ինչ, եւ կամ հայհոյելու սկսիլ: Որ չարեաց փոքրագոյնն էր:

Պալեաններու ուշադրութենէն չվրիպեցաւ անակնկալ ջգադրբութիւնը վատահամբաւ սա մարդուն, որ գիտէին, թէ կրնար

բռնկիլ յանկարծ եւ անդամանելի արարք մը գործել: Արշակի եւ Ալիսի հարսանիքին պատահածը թարմ էր տակաւին իրենց յիշողութեան մէջ: Սաթենիկի պատահական եւ խորքին մէջ անմեղ ակնարկութիւնը բաւարար եղած էր որ բորբոքէր յանկարծ եւ փճացնէր հարսնեւորներուն տրամադրութիւնը: Ատիէ հաք ոչ ոք կրցած էր գսպել զինք, եւ չէին յաջողած փրկել հարսանեկան խրախճանքը, որ վերածուած էր տեսակ մը յուղարկաւորութեան:

Լուսթիւնը, որ կը պրկէր բոլորին ջիղերը, երկարաձուլեցաւ, ճնշեց ու մթնոլորտը դարձաւ անշնչելի: Մինչեւ որ Դաւիթ խօսեցաւ ի վերջոյ, հազիւ լսելի ձայնով:

— Ինչ նստեր էք դեռ: Հիմա խօսելիք չունինք:

**

— Հաւնեցա՞ր ըրածդ, — Եղիս խօսեցաւ խոհանոց վերադառնալէ ետք, երբ նկատեց որ ամուսինը հանդարտած էր: — Մարդ տունէն կը վռնուէ՞ չաբերբեր:

— Պէտք էր դուրս նետէի զիրենք:

— Աղջկանդ վիճակը ի՞նչ պիտի ըլլայ. այդ մասին մտածեցի՞ր:

— Դուն մտածեցիր եւ այս վիճակին հասցուցիր զինք: Չի՞ բաւեր: Ասկէ աւելի գէշ կրնա՞ր ըլլալ:

— Մտողքը ի՞նչ յանցանք ունին:

— Թող իրենց զաւակը կրթեն:

— Այդպէ՞ս պիտի կրթես:

— Ես օր մը օրանց քու վրադ ձեռք բարձրացուցե՞ր եմ: Ինչպէ՞ս կ'ուզես որ յարգեմ զիրենք: Կին ծեծողը մարդ չէ: Տկար, վատ մարդիկ միայն կին կը ծեծեն:

— Ատիկա փեսայիդ պիտի ըսես, ոչ թէ ծնողքին:

— Նոյնն է: Այդ սրբիկան կը համարձակի՞ր դիմացս ելլել: Հետերնին եկած ըլլար, այս հարցը այսպէս չէր վերջանար արդէն. հիմա դուն գնա՛ աղջիկը հոս բեր, պզտիկներն ալ միասին:

— Աղջիկէն ի՞նչ կ'ուզես գիշերուան այս ժամուն:

— Պիտի չհասկնա՞նք, պիտի չխօսի՞նք: Կ'ուզես որ հո՞ն ձգեմ զիրենք: Միւսներո՞ւն ալ կհանքը պէտք է տակնուվրայ ընենք անպայման:

— Աս ի՞նչ բախտ է եղեր, — քրթմնջաց կինը ու պատրաստուեցաւ մեկնելու:

Դաւիթ Օհանեան քննեց շուրջ-բոլորը, յուսալով թերեւս փո-

փոխութիւն մը նկատել հոն, բայց տեսաւ նոյն խոհանոցը, որ իր պատրաստարանը եղած էր վերջին տասը տարիներուն: Նոյն մերկ ու գունաթափ պատերը, ճաշասեղանը, սնտուկ-սառնարանը, որ նստարան էր նաեւ, ու փոքր պահարանը: Եւ անշուշտ՝ ինք: Այս խոհանոցին մաս կը վիզմէր այլեւս՝ նոյնքան տփփոյն եւ անխփոխ: Աշխատանքէն վերադարձին կը մտնէր ուղղակի խոհանոց, կը լուսացուէր եւ կը դրաւէր իր սովորական տեղը պատուհանին կից: Եղիս այդ միջոցին պատրաստած կ'ըլլար ընթրիքը, որ իրեն համար ժամեր տեւող արարողութիւն էր: Աւելի կը խմէր քան թէ կ'ուտէր եւ այդ ամբողջ միջոցին հազիւ քանի մը բառ կ'արտասանէր, երբ պահանջ մը ունենար: Աղջիկներուն ամուսնանալէն ետք դարձած էր աւելի սակաւախօս, նկատելով որ տունը ամայացած էր ու պարպուած իր կենդանութենէն: Եղիսը իրմէ աւելի սակաւախօս էր, եւ յամենայն դէպս՝ խօսելիք չունէին ընդհանրապէս: Վերջին քանի մը ամիսներուն թէեւ, եւ մինչեւ երկու շաբաթ առաջ, տունը վերակենդանացած էր, երբ Սեղան վերադարձած էր Հայաստանէն եւ բնակած իրենց հետ՝ հանդերձ ընտանեօք: Իրիկունները Յակոբին հետ կը խմէր, ու ժամեր անընդհատ կը խօսակցէին, կը կատակէին, ու կ'երգէին նոյնիսկ երբեմն: Ոչ միայն տունը վերակենդանացած էր, այլեւ նաեւ ինք, եւ սկսած էր կեանքը վայելել դարձեալ՝ շրջապատուած դաւակներով եւ թոռներով: Ու զարմանալիօրէն թոռներէն ամենէն աւելի սիրած էր Արմէնը, որ չափազանց ուշիմ եւ կանխահաս տղայ մըն էր:

Երկու ամսուան ընթացքին այնքան փոխած էին իր կեանքն ու առօրեան, որ անտանելի կերպով առանձին սկսած էր զգալ անոնց փոխադրուելէն ետք: Տարիներու ընթացքին առանձնութիւնը իր էութեան մաս կազմած էր ու չէր գանդատած երբեք: Բայց ներկայիս, անոնց հեռանալէն ետք, խախտած էին իր նախկին հաւատարակչութիւնն ու անդորրը, եւ առանձնութիւնը՝ դարձած էր անհանդուրժելի, անընդունելի պատիժ: Այս մասին չէր արտայայտուած թէեւ, փորձելով միաժամանակ վերահաստատել իր նախկին անդորրն ու վարժուիլ այս նոր զրկանքին:

Եւ հետեւաբար՝ հանդարտ էր ու նոյնիսկ ուրախ այս պահուն, փոխանակ ջրադրվիտ եւ դայրացած ըլլալու: Քիչ ետք կու գային բոլոր, ու որքան ալ Ալիսի ներկայ վիճակը մտահոգիչ ըլլար ու դառնութիւն պատճառէր իրեն, առժամապէս կը փրկուէր գէթ սա նորագոյն պատիժէն ու կը մխիթարուէր թերեւս: Տունը ազմուկով կը լեցուէր, եւ եթէ պատահէր որ Յակոբն ալ գար, ուրախութիւնը կը կրկնապատկուէր: Լուս բայց չէն ու կատակասէր երիտասարդ մըն

էր — ճիշդ իր ուղածին պէս մարդ: Իսկական այր մարդ. քաջ, խելացի, պատասխանատու, անկեղծ եւ ազնիւ: Վստահ չէր, թէ այս յատկութիւններուն համար կը սիրէր զինք, բայց կը սիրէր: Նոյնիսկ իր դաւակներէն աւելի: Վերջին հաշուով ան ալ իր դաւակն էր: Յամենայն դէպս անոր անձը, որ իւրապատուկ հմայք մը ունէր անպայման, կը սիրէր: Պարզօրէն՝ զինք չսիրել ակնարելի էր:

— Ելի՛ր, պատրաստուէ՛ նայինք, — Եղիս Օհանեան խօսքը ուղղեց կրտսեր աղջկան ու խորհրդաւոր կերպով նայեցաւ միւսներուն:

— Ո՞ւր:

— Հայրդ քեզ կ'ուզէ:

— Ո՞վ կայ հոն, — Ալիս հարցուց, ենթադրելով որ զինք հաշտեցնելու փորձ մը պիտի ընեն վերստին: — Իրենցմէ եթէ մարդ կայ... Եթէ զիս տունը զրկելու համար է, չեմ գար:

— Մարդ չկայ: Հայրդ վճռեց զիրենք:

— Ո՞վ եկած էր, — աղջիկը թերահաւատութեամբ նայեցաւ մօրը: — Ի՞նչ եղաւ որ:

— Հայրը եւ մայրը:

— Վաճառե՞ց, — ժպտ, որ մինչեւ քիչ առաջ նստած կը մրափէր զրեթէ, արթնցաւ յանկարծ: — Բայց ինչպէ՞ս:

— Գաւիթին համար ինչպէս չկայ: Պատահածը իմանալէն ետք, մէկ վայրկեան չտեսեց: Գետնին տակ անցայ, բայց ի՞նչ կրնայ ընել: Լաւ որ ուրիշ խնդիրներ չըրաւ. կրնար աշխարհը տակնուվրայ ընել եւ խայտառակել մեզ:

— Ուղղակի վճռե՞ց, — ժպտ հարցումը կրկնեց եւ սկսաւ բարձրաձայն խնդալ:

— Ի՞նչ ալ խնդալիք բան է, — աները յանդիմանեց բայց չկըրցաւ ժպտը զսպել:

— Մքանչելի է, — փեսան շարունակեց խնդալ, — սքանչելի: Բայց դեռ չեմ կրնար հաւատալ: Ի՞նչ ըրին:

— Մարդիկը խօսելու առիթ չունեցան: Պապանձումն Զաքարիայի: Ինչպէս դուրս ելլելին չգիտցան... Ի՞նչ պիտի ընէին, ի՞նչ կրնային ընել:

— Լաւ ըրեր է, — ըսաւ Ալիս, թէեւ դէմքին վրայ ուրախութեան նշոյն իսկ չկար:

— Ի՞նչ նստեր ես, — աճապարեց մայրը. — պատիկները ո՞ւր են: Ըսաւ որ միասին բերես:

— Քնացուցի: Ըսել կ'ուզես, թէ փոթորիկը անցա՞ւ:

— Փոթորիկ—մոթորիկ չկայ: Լաւ որ այսպէս եղաւ: Երբոր լըսեց խնդրին մէջ ծեծ կայ, մարդուն խելքին եկաւ: Հայրդ կը ճանչնաս:

— Վստահ էի: Թէեւ ժամանակի ընթացքին սրտին պիտի մեծնայ. Աստուած պիտէ, թէ ինչե՛ր պիտի պատահի այն ատեն:

— Այսքանին ալ փառք տանք,— Եղիս Օհանեան մըթմըթաց, մասամբ մխիթարուած բայց նաեւ մտահոգ:

Ժապ անակնկալօրէն ոտքի կանգնեցաւ, թէեւ կը խնդար տակաւին, եւ ըսաւ:

— Նախընտրելի է որ ձեր հետ գամ: Ձեզ առանձին զրկելը շատ ճիշդ պիտի չըլլայ կարծեմ: Կու գա՞ս,— դարձաւ ապա կնկան:

— Լաւ կ'ըլլայ որ երթաս: Երեխաները չեմ վրձար առանձին ձգել: Ձուչանաս միայն:

— Հա՛, լաւ կ'ըլլայ, տղաս. գիտես հայրերին որքան կը սիրէ քեզ: Իր լեզուէն միայն դուն կը հասկնաս:

Ը.

Նոյն նկուղին մէջ էին դարձեալ, բայց դէթ հիմա առանձին չէր: Խուճար ու մեղամազձոտ աչքերով սքանչելի սա տղան, որ Հայաստանի բանաստեղծութեան նորագոյն յոյսն էր, գինով էր արդէն բայց զգաստ՝ սովորականին պէս: Նաթաշայի ձայնը կը դարձուէր նըկուղի պատերուն, եւ արձագանգի կամ աղմուկի վերածուած, կը վերադառնար ու կը բախէր ներկաներու ականջներուն: Յաճախորդներէն ոմանք այս աղմուկին կամ երգին համար վու գային հոս, կը յամենային ժամերով, իրենք ալ կ'երգէին երբեմն՝ խանդավառ կամ այլեւս գինով, ու կը զուարճանային անշուշտ: Գեղամ Տարօնեան չէր խսկ յիշեր, թէ երբ եւ ինչպէ՛ս սկսած էր յաճախել այս վայրը, բայց տարիներու ընթացքին դարձած էր Քաւի մնայուն եւ բոլորին ծանօթ ու սիրելի դէմքերէն մէկը:

Քաւը, ինչպէս կը թելադրէր անունը, պարզօրէն ստորերկեայ նկուղ մըն էր — մութ, խոնաւ ու վատաբոց: Հոն հասնելու համար նախ պէտք էր գտնել նեղլիկ փողոցը, ապա իջնել սանդուղներէն վար աչքերն ու ոտնդերը լայն բացած, մինչ դաշնակին միօրինակ ու խեղդուած դանդաղ կ'առաջնորդէր յաճախորդներուն քայլերը դէպի ձախ, ուր հսկայ ճոնչացող դրան ետին պահուրտած էր պառը: Այդ դուռնէն անդին կ'իջնէր Նաթաշան, որու քաղցր ժպիտը կը բացուէր

գրան հետ, ու կը փակուէր նաեւ անոր հետ: Արտակարգօրէն զեղեցիկ, հրեշտակային անմեղութեամբ զմոտուած դէմք մը ունէր ան, թէեւ հսկայ իրանն ու անբնական գլխութիւնը կ'ազարակէին այդ զեղեցիկութիւնը՝ տիրութեան քող մը իջեցնելով անոր դէմքին վրայ: Բայց եւ այնպէս միշտ զուարթ էր եւ խանդավառ: Եւ՝ բոլորին սիրելին էր, բոլորին պաշտամունքի առարկան:

Սովետական Միութենէն տարիներ առաջ դուրս եկած ուսուցիչիկ մըն էր Նաթաշա, որ անցեալ չունէր, կեանքի պատմութիւն չունէր: Ոչինչ զիտէին իր մասին, ու ոչ ոք կը համարձակէր հարցնել իրեն կամ հետաքրքրուիլ նոյնիսկ: Պէյրութի գիշերային կեանքի հանելուկն էր, հանրածանօթ դադանիքը: Իր ասպարէզին մէջ ուսուսեր չէին եղած երբեք այս երկրին մէջ. անդլիացի, սպանացի, յոյն, իտալացի ու նոյնիսկ եուզոսլաւ աղջիկներ՝ այո՛: Բայց ուսուս՝ երբե՛ք:

Բանաստեղծը կ'երագէր թերեւս, կամ կը քննարկ, բայց անոր ներկայութիւնը բարերար դեր կը կատարէր եւ ապահովութիւն կը ներշնչէր Գեղամին: Տարիներէ ի վեր այս վայրին մնայուն յաճախորդը ըլլալով հանդերձ, Տարօնեան հաղուադէպօրէն կը խօսէր ներկաներուն հետ կամ կը մասնակցէր անոնց խրախճանքին եւ կատաղութեան: Արդարեւ կատաղութիւն էր երբեմն անոնց զինարփուքը — անզրտակից պոթիւում: Կ'երգէին, կը պոռային, կը կատակէին ու կը կոտէին նոյնիսկ երբեմն: Թէեւ բոլորն ալ մասնաւոր սէր ու յարգանք կը տածէին իրեն հանդէպ ու կը գիմէին իր խորհուրդին կամ միջամտութեան, երբ վէճերը բարդանային: Այլապէս չէին խանդարեր գինք ու լուխան միայն կը հաղորդակցէին իր հետ: Եւ ինք քաշուած իր անկիւնը, նստած բարձրագիւր աթոռակին վրայ, կը խմէր հանդարտօրէն ու կը յամենար այդպէս ժամերով: Բայց եւ այնպէս առանձին կը զլար միշտ, հակառակ անոր որ հարապատ տան մը մըթնոլորտը ստեղծած էր ինքն իրեն համար հոս:

— Բարեկամդ ս՞ով է,— կողքին տեղ գրաւեց գերմանուհի Հիլտան, որու հետ կը կատակէր երբեմն: Ժամանակի ընթացքին իրենց միջեւ անբացատրելի մտերմութիւն մը ստեղծուած էր, եւ այդ իսկ պատճառով իր հոմանունին կը նկատէին զինք ոմանք:

— Ռուս լրտես է,— Գեղամի լրջութիւնը ինքնին ծիծաղելի էր:

— Շատ ուսուցիչի նմանիւր,— Հիլտայի ժպիտը տարակուսանքէ աւելի գոհունակութիւն արտայայտեց: Ըսել կ'ուզէր, թէ կը հասկընար զինք: — Այսպէս սեւ տխուր աչքերով ուսուս... կեանքիս մէջ չեմ տեսած:

— Ինչո՞ւ: Դուն գերմանացի ըլլալով ուսուսերը պէտք եղածին

պէս չե՞ս ճանչնար՝ ըսել կ'ուզես : Չէ՞ որ մոնկոլական ծագում ունին :

— Նաթաշան չլսէ :

— Չե՞ս նկատած : Իսկապէս կը զարմացնես զիս : Նաթաշան ինք մոնկոլական գեղեցկութիւն չունի՞ : Այտոսկրները, կամար յօնքերը, աչքերուն խորութիւնը :

— Ուրախ եմ որ տրամադրութիւնդ լաւ է այսօր, — ըսաւ աղջիկը. — կրնամ հետդ խօսիլ գոնէ : Բարեկամդ անգլերէն գիտէ՞ :

— Ո՛ր : Ռուսերէն. եւ անչուշտ՝ հայերէն : Չե՞ս հաւատար : Լա՛ւ, ծանօթացնեմ ձեզ : — Ու դառնալով բանաստեղծին, մշտեց զայն. — Սուրիկ, ծանօթացի՛ր, Հիլտա Մաղիկեանն է, դերմանուհի գիժ, որ քեզի սիրահարուեցաւ կարծեմ :

Սուրիկ սթափած, համբուրեց իրեն երկարած վախ ու վարդազոյն ձեռքը եւ կմկմաց :

— Անշանքէ :

— Հիմա հաւատացի՞ր : Ռուսը միայն կնկայ ձեռք կը համբուրէ :

— Բայց Ֆրանսերէն գիտէ կ'երեւի :

— Քանի մը շարաթ եւս հոս մնայ, բոլոր կարեւոր բաները կը սորվի : Մի մոռնար որ Ֆրանսերէնը սիրոյ լեզուն է :

— Գիժը դու ես, — Սուրիկ խօսեցաւ շփոթած : — Ի՛նչ ես ձեռք առնում : Մաղիկեանն ի՛նչ դերմանացու ազգանուն է :

Հիլտա բարձրաձայն խնդաց, թափանցած ըլլալով հարցին հուժեան, եւ անգլերէն բացատրեց :

— Այո՛, այո՛, անունս Մաղիկեան է : Այս բարեկամիդ շնորհակալ պէտք է ըլլամ :

— Ի՞նչ է ասում :

— Ծնորհակալ է որ զինք հայ մկրտած եմ :

— Սա էլ ազգային դործ է երեւի, հա՞ : Հայերէն սովորեցրե՞լ ես դէ՞թ :

— Կը հասկնայ, վստահ եղիր, — եւ խօսքը ուղղելով աղջկան, Գեղամ հարցուց. — Ճիշդ չէ՞ :

— Այո՛, — Հիլտա հայերէն պատասխանեց, հաստատական կերպով գլուխը շարժելով :

Այս միջոցին Նաթաշան մօտեցաւ իրենց եւ աջ թեւով օղակեց Տարօնեանի ուսերը :

— Ի՞նչի պէտք է վերագրել սքանչելի տրամադրութիւնդ, — հարցուց մանկական անկեղծ խանդավառութեամբ :

— Իրեն պէտք է հարցնես : Ռուսերէն կրնաս խօսիլ հետը : Մայրենի լեզուէն աւելի լաւ գիտէ :

— Հայաստանէ՞ն է, — բացականչեց Նաթաշա եւ անմիջապէս սկսաւ ռուսերէն շաղկերատել Սուրիկին հետ :

— Եւ բանաստեղծ :

Նաթաշա չլսեց իսկ ըսածը : Բայց Հիլտա երգեց :

— Օ՛ր, ատոր համար այսպէս մեղամաղձոտ է :

— Ատիկա քու երեւակայութիւնդ է, — Գեղամ խօսեցաւ չարութեամբ. — Ենթադրածէդ աւելի իրապաշտ է եւ գործնական :

— Քեզ բնաւ պիտի չկարենամ հասկնալ : Օր մը բանաստեղծ կը բերես հետդ, օր մը բեռնակիր, օր մը անգլիացի, ուրիշ օր մը ռուս, ու բոլորին հետ ալ հարազատ եղբոր մը պէս կը վարուիս :

— Ծատ բնական է : Մարդ եմ : Թէ՛ ոչ կեանքը անտանելի պիտի ըլլար :

— Գիտեմ, թէ յոռետես ես :

— Ե՞ս : Կեանքը լիովին կը վայելեմ : Անպայման յիմարութի՞ւն պէտք է ընեմ որ լաւատես կոչուիմ : Կեանքը վայելելու եւ ըմբռնելու դանազան կերպեր կան : Օրինակ դուն . . . :

— Բայց բնաւ չես ժպտիր, — ընդմիջեց Հիլտա : — Միշտ դըժգոհ ես, միշտ ջղային :

— Դուն դէ՞թ պէտք չէ այսպէս խորհիս : Ձիս ուրիշներէն շատ աւելի լաւ կը ճանչնաս : Բայց ինչո՞ւ իմ մասին կը խօսինք :

— Ահաւասիկ : Կը տեսնե՞ս : Անմիջապէս պատեանիդ մէջ կը կծկուիս ու թոյլ չես տար որ մարդ մօտենայ քեզի :

— Սխալ : Իմ անձս շատ հետաքրքրական չեմ դռներ, եւ հետեւարար կը նախընտրեմ ուրիշներուն մասին խօսիլ : Օրինակ դուն . . . :

— Ամէն ինչ պատմած եմ քեզի, — աղջիկը ընդմիջեց դարձեալ :

— Ամբողջ կեանքիս պատմութիւնը գիտես. մինչդեռ ես քու մասիդ ոչինչ գիտեմ : Նոյնիսկ՝ թէ ի՛նչ կ'աշխատիս, ո՞վ ես, ի՛նչ կ'ընես : Անչուշտ յայտնի է որ շատ դարդացած մարդ ես :

— Հիմա անդործ եմ : Բաւարարուած ես :

— Լո՞ւրջ : Ինչո՞ւ :

— Ես ալ պիտի ուղէի գիտնալ :

— Յետոյ կը խօսիմ հետդ, — Հիլտա ճարհատ սպասնաց իրեն. — աւելի ուշ դասդ կու տամ :

— Ո՞ւր կ'երթաս, — Գեղամ ժպտեցաւ :

— Ուրիշ յաճախորդներ կան : Արդար չէ :

— Բաժակ մը կրնաս առնել :

— Երբ ուրիշներու կրնամ ծախսել տալ, — դերմանուհին նախադասութիւնը առանց ամբողջացնելու եւ թիթեռնիկի մը սկս թռչկոտեցով թարեցաւ ուրիշ երեսասարգի մը վրայ:

Մովորական, ամէն իրիկուն կրկնուող յանկերդ էր: Միօրինակ, անիմաստ, յոգնեցուցիչ: Բայց վարժութիւնը նաեւ փրկութիւն էր: Անհրաժեշտ շարիք: Յամենայն դէպս եթէ չըլլար այս վարժութիւնը կամ շարիքը, կեանքի մէջ ընկիւղ պիտի չունենար: Այսինքն պիտի չկարենար գրել: Ասիկա իր դպրոցն էր, իր համայնարանը, ուր դիտութիւն կամբարէր ու կը սորիէր սիրել մարդն ու մարդկութիւնը: Իր տկարութիւններով, թերութիւններով, երազներով եւ յոյսերով: Ամէն մարդ աշխարհ մըն էր, տիեզերք մը: Ինչպէս Հիլտան, որ պարզ ու կենսունակ այլիկ մըն էր: Բայց նաեւ հանելուկ մըն էր՝ հող չէ թէ դադանիք չունենար իրեն համար: Եւ կամ Նաթաշան: Ո՞վ էր: Ինչ կ'ընէր հոս: Ինչո՞ւ հոս:

Մեծադոյն հանելուկը ինքն էր թէեւ: Ինքզինք լաւապէս ճանչնալով հանդերձ, ամէն օր նոր մարդ մըն էր — վերանորոգուող, անակնկալներով ինքզինք զարմացնող մարդ մը: Վաղ տարիքին, հասկնապատանի, սկսած էր դիրք դողնալ դպրոցէն, գրատուներէն, ընկերներէն, կամ ազգականներու տուներէն, որովհետեւ դիրք գնելու գրամ չունէր: Բայց պէտք է կարգար: Եւ նկատելով որ դիրք մը կարենալ կարդալու համար յաճախ պէտք է դնէր զայն, կը դիմէր իրեն մատչելի միակ միջոցին: Կարելիին եւ հնարաւորին: Այլապէս պիտի գրկուէր իր միակ հաճոյքէն — ընթերցանութենէն: Եւ այն ատեն իսկ զարմացած էր կամ զարմացուցած ինքզինք, որովհետեւ պատահամբ սկսած էր դիրքի գողութեան, բայց շարունակած էր նոյն կերպով դիրք հայթայթել ինքնիրեն: Ինք գող չէր եղած ու մինչեւ այսօր ոչ զէմ էր գողութեան, բայց դիրքերու պարագային՝ ներած էր ինքնիրեն: Նոյնիսկ՝ արդարացուցած էր ինքզինք: Ի վերջոյ դիրքի մը իրաւական տէրը ընթերցողն էր, եւ ոչ թէ պատահամբ անոր տիրացողը:

Նոյնպէս պատահարը գրելու սկսած էր, ու զարմացած էր դարձեալ: Գրելու մասին չէր մտածած երբեք, որովհետեւ իր պարագային ընթերցանութիւնը բոլորովին անկախ էր գրելէն: Պարզօրէն՝ մէկը միւսին հետ կապ չուէր: Կարդալը իր մոլութիւնն էր: Մինչդեռ գրելը առաքելութիւն մը զարձած էր իրեն համար: Աւելի ուշ անշուշտ, երբ հաստատած էր, թէ տաղանդ ունէր, որոշած էր գրելու սկսիլ: Մինչեւ այսօր կը շարունակէր գրել, առանց յաւակնութեան կամ ակնկալութեան: Իսկ այսօր, երեսունեթ տարեկանին, եթէ փոր-

ձէր իսկ, պիտի չյաջողէր վերջ դնել քսան տարի առաջ պատահարը սկսուած այս աշխատանքին: Արդարեւ, իր գրելը բոլորովին անկախ դրութիւն մըն էր, իրմէ անկախ իրականութիւն, որ չէր հպատակեր իրեն: Առանձին գոյութիւն մը, որ ինքն իր մէջ կատարեալ էր եւ բացարձակ:

Եւ այս իսկ պատճառով՝ իր կատարածին վիտակցութիւնը չունէր: Կը գրէր, որովհետեւ իր գրականութիւնը ինք կրնար մշակել միայն: Գործ մը աւարտելէ ետք կը դարձանար նոյնիսկ, նկատելով որ տուեալ դրութիւնը — պատմուածք, վէպ, ակնարկ — ինքզինք կը գրէր, մինչ ինք որպէս հաղորդակցութեան կամ փոխանցման գործիք կը ծառայէր: Իրը՝ գիրը թուղթին յանձնելու մեքենական աշխատանք էր միայն: Ու որքան ալ պնդէին, թէ արտակարգ տաղանդ ունէր, թեւաւստութեամբ կը փորձէր ինքզինք արդարացնել, կամ գէթ պաշտպանել: Բայց ցարդ չէր յաջողած գէթ քանի մը մարդ համոզել, թէ ինք դեր չունէր իր գրածին մէջ: Եւ՝ անարդարօրէն կեղծ համեմատութիւն վը վերագրէին իրեն: Վերադրում՝ որ կը ջղայնացնէր զինք, կը վիրաւորէր նոյնիսկ:

Յամենայն դէպս կը մնար վարժութիւնը, որ բարերար դեր կը կատարէր: Տեսակ մը զբաղում էր, ժամանց: Սքանչելի, հոյակապ խաղ մը: Մարդ արարածին մէջ խաղալու պահանջը ընդոծին էր, ու նոյնքան կենսական որքան ուտելու պահանջը: Չափահաս մարդիկ եւս, մանաւանդ չափահաս մարդիկ, կը խաղան ու կը կազմեն երբեմն մոլութիւններ: Ֆիզիքական խաղերու կարգին կան նաեւ այլ խաղեր, ինչպէս խօսիլն ու մտածելը, երեւակայինն ու բաց աչքերով երազելը: Խօսակցութիւնը — չըսելու համար շաղակրատութիւնը — խաղ մը չէ՞ միթէ. կամ գէթ՝ ժամանց: Իր ալ խաղը կամ մոլութիւնը այս էր: Գրականութիւնը: Որու արդիւնքը շատ աւելի գոհացուցիչ էր ու հաւաստարկչող քան միւս բոլոր խաղերունը:

Այս ամբողջը գիտնալով հանդերձ, կը ձանձրանար: Յաճախ մտածած էր այլ զբաղումներ եւս ճարելու մասին, սակայն ուրիշ ոչինչ կըրցած էր զինք նոյնքան հետաքրքրել: Ոչ իսկ դրամը, որու անհրաժեշտութիւն մը ըլլալը վաղ տարիքին իսկ ըմբռնած էր: Դրամը կըրնար հաճոյք մը ըլլալ անշուշտ, մանաւանդ՝ կրնար հաճոյք գնել: Բայց իր փնտաւածը հաճոյք չէր, այլ ձանձրոյթը զարմանելու կերպ: Իսկ ամենէն կարեւորը՝ դրամ գիզելը խաղ մը չէր, այլ պարզօրէն՝ գերութիւն: Իսկ ինք կը մերժէր գերի դառնալ: Կին արարածը նոյնիսկ որու հանդէպ մասնաւոր տկարութիւն ունէր, չէր կըրցած զինք գերի վարել:

Չանճրոյթն էր որ կը բերէր զինք հոս, գիտէր, եւ թերեւս նաեւ՝ կրնէրու հանդէպ ունեցած տկարութիւնը: Անոնց ներկայութիւնը, մարմինը, բոյրը: Եւ հոս, այս կարգի աղջիկներու հետ, սիրելու կամ սիրուելու, եւ ընդհանրապէս զգացական հարցեր չկային: Զիրար չէին խաբեր, անհիմն կամ ակամայ խոստումներ չէին տար, եւ փոխադարձ համաձայնութեամբ կը վայելէին բնութեան հրաշալիքները իրենց մէջ: Կնկայ մը մարմնին ջերմութիւնը, անոր հպիւլը, սեռային յարաբերութիւնը՝ անխուսափելի անհրաժեշտութիւններ էին իրեն համար: Բացարձակ ճշմարտութիւն: Բնութեան իր մէջ հաստատածը ուրանալ՝ անբարոյութիւն պիտի ըլլար. ինչպէս՝ Ֆիզիքական ցանկութեան հոգեկան նշանակութիւն տալ:

Այսուհանդերձ իր կեանքը թերի, չամբողջացած, անաւարտ որեւէ դործի կը նմանէր: Պատճառը իրապաշտ ու լաւատես ըլլալով հանդերձ, դուարթ կամ ուրախ մարդ մը չէր: Թերեւս՝ որովհետեւ ուրախանալու պատճառներ չունէր: Շատ միօրինակ կեանք մը եղած էր իրը — աշխատանք, դաս, դպրոց, պարտականութիւններ, ընտանեկան մտահոգութիւններ եւ պարտաւորութիւններ, եւ... այդքան: Հիւանդ-կախ հայր մը, որ տարիներէ ի վեր անդործ էր. ջղային եւ ի ծնէ դժգոհ մայր մը, երկու քոյր, եւ երկու եղբայր: Քոյրերը բարեբախտարար ամուսնացած էին: Եղբայրները — երկուքն ալ արդէն երիտասարդ — հազիւ իրենք իրենց ծախսերը կրնային հոգալ, եւ կ'այրէին բոլորովին տարբեր աշխարհի մը մէջ: Կը սիրէր զիրենք թէեւ, ու կը նախանձէր նոյնիսկ անոնց: Փաստօրէն՝ աւելի բընական, պարզ ու հաւատարակչուած կեանք մը կ'այրէին: Ընկերներ ունէին, ընկերուհիներ, շրջանակ, եւ միշտ զրազած էին, միշտ խանդավառ: Պտոյա, վայելք, պարահանդէս, խրախճանք, սիրահարութիւն, աղջիկ, աղջիկներ:

Իրենց տարիքին այլ երազներ ունէր ինք — գրականութիւն, ուսում, համալսարան, ազգային եւ հասարակական դործ, հայրական դատ, բնագրաւուած հողեր, Արեւմտեան Հայաստան, հայրենիք, հայրենասիրութիւն, նորագոյն սերունդի դաստիարակութիւն: Եւ՝ առիթ չէր ունեցած սիրահարելու. ոչ իսկ՝ փոփոխ սեռին ժամանակ տրամադրելու: Ու երբ փոքր, անմեղ այդ աղջիկը սիրած էր զինք ու մոլորեցուցած գրեթէ, յանցաւոր զգացած էր միայն ու մեղադրած էր ինքզինք: Աշակերտուհի մը սիրելու կամ անկէ սիրուելու իրաւունք չունէր երբեք. եւ մինչեւ այսօր տակաւին չէր կրնար ներել ինքնիրեն: Այդ սէրը կամ պատմութիւնը անխուսափելի միակ վախճանին յանդամ էր յամենայն դէպս՝ զինք միանգամ ընդմիշտ ազա-

տադրելով: Այլիս կոչուած փորձանքը ամուսնացած էր նոյն տարուան ամառը ընդհանրական անմիջապէս ետք: Առանց ազդարարութեան, առանց յուզիչ տեսարաններու կամ բեմադրութեան: Անոր հարսանիքին նոյնիսկ ներկայ եղած էր, եւ նկատուած էր այդ օրուան պատուոյ հիւրը: Ու զարմանալի կերպով փոխանակ վրդովելու կամ նախանձելու, նորապսակ ամուսին հանդէպ խանդաղատանք զգացած էր միայն:

Եւ ինչպէս միշտ՝ զարմացուցած էր ինքզինք: Արդարեւ այդ ամբողջը չէր ծրարած, ոչ իսկ նախատեսած էր:

Ատկէ ետք, թէեւ, կարելի եղած չափով խուսափած էր անոնց հանդիպելէ:

Խմբիչքի երրորդ բաժակէն ետք սովորաբար կ'ուղղուէր դէպի տուն: Նախաշան, սակայն, ձերբակալած էր Սուրբիկը, եւ հետեւաբար այս իրիկուն մեկնելու մասին մտածելն իսկ աւելորդ էր: Բաժակ մը եւս ապսպրեց եւ պատրաստուեցաւ իր արտակարգ զիջերներէն մէկը անցընելու: Գիտէր, թէ այս ընթացքով արեւածագին միայն կրնային դուրս գալ հոսիէ, եթէ մինչ այդ այլ անակնկալներ չպատահէին: Նախաշա կրնար գինովնալ, ինչպէս կը սպասուէր քանի մը շաբաթը անդամ մը, եւ զիրենք բռնի տուն առաջնորդել՝ շարունակելու համար խրախճանքը: Մինչ այդ ինք եւս հասունցած կ'ըլլար, ու հլու եւ հնազանդ, ոչխարի մը պէս, կը հետեւէր անոր: Կենսուրախ եւ ընկերային աղջիկ մըն էր, ու մեծապէս բաւարարուած կը զգար՝ իր յաճախորդներէն ոմանք տան մէջ հիւրասիրելով, երբ այդօրինակ տրամադրութեան մէջ ըլլար: Կարելի չէր հակառակել կամ մերժել, որովհետեւ չափազանց զգայուն էր, ու գինովութեան մէջ՝ անզուպելի: Կրնար վերաւորուել, լալ, ճշալ ու կոուել նոյնիսկ:

Սուրբիկի հետ անոր խօսակցութիւնը կ'երկարէր մինչ այդ, ու շրջապատը բոլորովին մոռցած, յաճախորդներուն ուշադրութիւն չէր դարձնէր իսկ: Նկատելով որ ուսուցէն կը խօսէին, Գեղամ դադափար չունէր, թէ ինչը զիրենք այսպէս կ'ընեմ էր: Բացայայտ էր, սակայն, թէ վայրկեանէ վայրկեան անոնց խանդավառութիւնը կ'աճէր, կը բոցավառէր ու կը վերածուէր բարձրադաղակ ուրախութեան եւ ծիծաղի: Սուրբիկը նոյնիսկ անզուպելի դարձած էր: Նոյն խոհուն եւ զղոյշ տղա՞ն էր այս, թէ... կամ թերեւս զինով էր սարգապէս: Ինք աւելի լաւ վիճակի մէջ չէր յամենայն դէպս: Այս այն բացառիկ օրերէն էր, երբ կրնար երգել, կատակել եւ վայելել անշուշտ իւրաքանչիւր վայրկեանը:

— Բարեկամդ ենթադրածիս չափ ալ բոմանտիկ չէ եղեր, —

Հիլտա փսփոսաց ականջին ու խորհրդաւոր կերպով ժպտեցաւ : — Այսօր նշանաւոր օր մը պիտի ըլլայ կարծեմ :

— Դժգո՞հ ես :

— Երբեք :

— Կամ թերեւս կը նախանձիս :

— Այսօր քովէդ պէտք չէ հեռանամ, — ըսաւ աղջիկը եւ տեղաւորուեցաւ Գեղամի կողքին :

— Ինչո՞ւ :

— Կրնայ հետաքրքրական ըլլալ : Առաջին անգամն է որ քեզ այս տեսակ տրամադրութեան մէջ կը տեսնեմ :

— Մտահոգուա՞ծ ես :

— Չարութեան պէտք չկայ : Գիտես, թէ ինչ ըսել կ'ուզեմ : Ես ալ լաւ տրամադրուած եմ կ'երեւի... քանի խոստովանութիւն է ուզածդ : Կամ թերեւս զինով եմ :

— Սքանչելի : Ի վերջոյ քեզ զինով պիտի տեսնեմ : Կրնայ վտանգաւոր ըլլալ սակայն :

— Շա՛տ : Գինով եղած ատենս մարդ կ'ուտեմ :

Գեղամ Տարօնեան նայեցաւ աղջկան աչքերուն մէջ եւ անզգալարար շոյեց անոր այտերը : Անմիջապէս քաշեց ձեռքը սակայն եւ հարցուց :

— Ի՞նչ ունիս :

— Ուրախ եմ, չե՞ս տեսներ : Ասկէ առաջ ալ անգամ մը շոյած ես այտերս, ճիշդ նոյն ձեւով, մատներու թեթեւ հպումով : Տարօրինակ է, շատ մեղմ ու բարի մարդ մը պէտք է ըլլաս : Մտաներդ այդպէս կ'ըսեն ինծի : Վստահ եմ, կը զգամ... :

Գեղամ շտիպեցանցուած լրջութեամբ քննեց մատները եւ խօսքը ուղղեց անոնց :

— Ձիս մատներու պէտք ունէի՞ք :

— Ինչ կ'ուզես ըսէ : Որքան ալ փորձես ծածկել, ուրանալ՝ նոյնն է : Ձգացողը կը զգայ : Ձեռքերդ խաբել զիս : Մանաւանդ զիս :

— Փորձենք, եթէ կ'ուզես :

— Ձեռքերդ :

— Շատ միամիտ ես, — հեղեական արտայայտութիւն մը դժադրուեցաւ երիտասարդին դէմքին վրայ : — Եթէ կը խորհիս որ հետս այսպէս խօսելով զիս խաղի պիտի բերես, կը սխալիս :

— Անկեղծ : Ըսածիս մէջ յետին նպատակ չկար :

— Հիմա կ'ընդունի՞ս որ քեզ կրնամ խաբել եղեր : Անմիջապէս լրջացար, կամ ըսենք՝ վիրաւորուեցար :

— Այո՛, որովհետեւ քեզմէ չեմ ակնկալիր : Ձիս կը ճանչնաս ու գիտես, թէ այդ տեսակ հնարքներու չեմ դիմեր. մանաւանդ քու պարագայիդ :

— Բարեբախտաբար : Բայց խարուեցար :

— Ինչո՞ւ շատ կը խմես այսօր, — Հիլտա նախընտրեց նիւթը փոխել :

— Այս օրը նշանաւոր օր մը պիտի ըլլայ ըսիր քիչ առաջ : Երբեմն կը պատահի : Որքան խմեմ՝ այնքան աւելի կը ծարաւնամ :

— Եւ վերջաւորութեան կը փլիս :

— Կրնայ պատահիլ : Բայց այնքան ատեն որ պահանջը կը զգամ ու կը վայելեմ, ես ինծի չեմ զլանար այդ հաճոյքը : Հոգ չէ թէ վերջաւորութեան գիտակցութիւնս կորսնցնեմ : Ի վերջոյ ամէն օր այս տեսակ պահանջ չեմ զգար :

— Քեզ զինով չեմ տեսած սակայն :

— Ես ալ չեմ տեսած զինովութիւնս : Բայց քանի մը անգամ գիտակցութիւնս կորսնցուցած ըլլալս գիտեմ, որովհետեւ յաջորդ օրը երբ արթնցած եմ՝ ոչինչ յիշած եմ նախորդ գիշերուան անցուղարձերէն : Աւելի ճիշդը՝ գիշերուան որոշ մէկ մասէն ետք... թէ եւ միշտ ալ տուն հասած եմ, եւ այդ է որ դարձացուցած է զիս, կամ մտահոգութիւն պատճառած :

— Պէտք է մտահոգուիս եւ ուշադրութիւն ընես : — Աղջկան ձայնին մէջ սաստ կար : — Կրնայ շատ վտանգաւոր հետեւանքներ ունենալ :

— Այսօր ապահով եմ սակայն :

— Շատ ապահով մի զգար : Քիչ մըն ալ եթէ այսպէս շարունակես, կրնաս ակնկալածէկ շատ առաջ դուն քեզ այդ վիճակին մէջ գտնել :

— Ըսել ուզածս այն էր, թէ կրնամ քեզի վստահիլ :

— Անշուշտ : Եթէ հոս ըլլամ սակայն :

Գեղամ հարցական նայեցաւ աղջկան, որ հարկ զգաց միտքը ամբողջացնելու :

— Ասիկա կրնայ երկարիլ, թերեւս մինչեւ լոյս : Նախաշան, գիտե՛ս : Ժամերով կրնայ խմել այսպէս, եւ եթէ կրնաս, սպասէ :

— Միտսին կը սպասենք :

— Որ ի՞նչ ըլլայ :

— Բանաստեղծը հոս առանձին չեմ կրնար ձգել, — Գեղամ Տարօնեան հարկադրուած բացատրեց : — Եւ յետոյ կը խօսինք. հաճելի է : Կը զբաղինք, թերեւս ալ կը գինովնանք, չես գիտեր :

— Կը նախընտրեմ ուրիշ տեղ մը ըլլալ, եթէ անպայման պէտք է գինովնալ:

— Յետոյ, աւելի ուշ: Ուզած տեղդ կ'երթանք: Հիմա սակայն ստիպուած ենք հոս մնալ... եւ յամենայն դէպս հոս աւելի լաւ է առայժմ: Մինչ այդ դուն պէտք է խմես կարծեմ: Իրաւունք չունիս... Թէ՛ նպատակդ իսկապէս զիս գինովցնե՞լ է:

— Արդէն գինով ես:

— Աւելի լաւ: Պէտք է խմես ուրեմն, որ ինծի ընկերակցիս, զիս առանձին չթողուս:

— Քեզ քնաւ այսպէս չեմ տեսած, — խօսեցաւ Հիլտա, յայտնապէս չփոթած: — Տարօրինակ է: Ենթադրածէս բոլորովին տարբեր մարդ ես եղեր:

— Առիթը պէտք չէ փախցնես ուրեմն: Ով դիտէ անգամ մըն ալ երբ այս տեսակ տրամադրութեան մէջ կ'ըլլամ: Ի՞նչ կ'ուզես խմել:

— Ես չուտ կը գինովնամ:

— Ստախօս: Խմելը յաճախ դիտած եմ:

— Այդ խմածս թէ՛յ է, — լիահագագ խնդաց աղջիկը:

— Գաղտնիք չէ: Թէ՛յ խմած օրերուդ մասին չէ խօսքս: Այսօր, թէ՛ւ, թէ՛յ խմել արգելուած է քեզի:

— Կտկար, — լսուեցաւ Նաթաշայի ձայնը յանկարծ: — Դաշնակը ինչո՞ւ լուած է: Նուագէ, խնդրեմ, նուագէ:

Եւ ինք սկսաւ երգել:

Վոլկա՛, Վոլկա՛:

Դաշնակահարը անմիջապէս հետեւեցաւ Նաթաշայի գինով երգեցողութեան, փորձելով քայլ պահել անոր շափերը խախտող երգին հետ:

Սուրիկ պահ մը զմայլած դիտեց կողքին երգող հսկայ աղջիկը, որու աչքերը խոնաւցած էին արդէն, եւ ինք եւս յուզուած թերեւս՝ ձայնակցեցաւ անոր: Նաթաշա քաջալերուած, թեւը նետեց բանաստեղծին ուսերուն շուրջ, եւ սկսան օրօրուիլ միասին ու կատարել զուգերգ մը, որ այլ ներկաներու կարգին՝ զիրենք եւս զարմացուց:

Գորգավաճառ Հմայիակը, յիսունը անց գէր ու շատախօս մարդ մը, որ այս տան մնայուն անդամներէն մէկը կը նկատուէր, խմիչք ապսպրեց բոլոր ներկաներուն՝ առանց բացառութեան: Եւ աւելի եւս խանդավառուած, ինք սկսաւ երգել քիչ ետք, պնդելով որ միւսները հետեւին իրեն: Ամուսնացած, զաւակներու եւ թոռներու տէր ու նիւթական նախանձելի դիրքի հասած առեւտրական մըն էր Հմայիակ

Գասարեան: Խորքին մէջ լուրջ ու հաւասարակչիւ, յարգանք կը պարտադրէր շուրջիններուն — հոս կամ այլուր — բայց երբեմն կը մանկանար այսպէս ու դուրս կու դար իր պատեանէն՝ երգելու, դուարձանալու եւ խաղաղելու համար թերեւս:

— Ազգակիցդ հասուննալու սկսաւ, — Հիլտա խօսեցաւ կարեկցարար: — Չեմ կրցած հասկնալ, թէ ասո՛ր ցաւը ինչ է: Հոյակապ մարդ է սակայն. ազնիւ, քաղաքավար, առատաձեռն, ու քիչ մըն ալ շատախօս:

— Անպայման ցա՞ւ մը պէտք է ունենայ, — Գեղամ հարցուց: — Ասոր ալ հաճոյքը այս է թերեւս:

— Այս գործին մէջ մենք մեր յաճախորդներէն աւելի փորձառու ենք: Ձեզի համար զանազանելը դժուար է թերեւս, բայց մեզի համար... շատ պարզ է: Մարդիկ անմիջապէս իրենց գոյնը կու տան:

— Ո՞վ գիտէ ինչ տեսակ կրն ունի:

— Այս տարիքէ՞ն ետք... թոռներ ունի կ'ըսեն:

— Մարդը յիսունէն ետք կատար է. ի՞նչ կրնաս ընել:

— Ո՞չ: Շատ լուրջ մարդ է: Այդ տեսակ հետաքրքրութիւն չունի: Կրն, աղջիկ մտքէն իսկ չ'անցնիր հաւանարար:

— Ձեր յաճախորդները զրեթէ առանց բացառութեան հայեր են, — երիտասարդը դիտել տուաւ յանկարծ: — կրնա՞ս ըսել, թէ ինչու:

— Միայն մե՞ր յաճախորդները: Եթէ հայերը չըլլան, այս շրջանի բոլոր գինետները, գիշերային վայրերը կը փակուին:

— Ուրեմն խմենք: — Տարօնեան զղջաց այդպիսի հարցում մը ուղղած ըլլալուն համար:

— Դուն ինչո՞ւ չես երգեր, — աղջիկը անզգալարար խմեց, եւ սկսաւ եզանակին հետ օրօրուիլ:

— Ինծի համար դեռ կանուխ է: Անպայման պէ՞տք է վրաս խնդաս: Ես ոչ կրն ունիմ, ոչ ալ թոռներ:

— Լա՛ւ, պարենք ուրեմն:

Եւ առանց առիթ տալու որ Գեղամ խօսէր, քաշեց զինք թեւէն ու զրեթէ գիրկընդխառն սկսան պարել: Երբտասարդը, անմեղ քմծիծաղ մը դէմքին, թոյլ տուաւ որ Հիլտա առաջնորդէ զինք, հոտուրտայ ու մարմինն ջերմութիւնը փոխանցէ իրեն: Չզլխիչ բոյր մը ունէր, հաճելի, եթերային: Բարձրահասակ, կանաչ խոշոր աչքերով գեղունի մըն էր իրեն փաթթուած սա կրնը, որու փարթամ ու ցանկալարոյց մարմինը ընչահեղձ կ'ընէր զինք: Դժգոհ չէր սակայն, մանաւանդ այս տրամադրութեան մէջ, որովհետեւ անոր կուրծքերուն,

որովայնին ու գիտերուն ալեկոծ ծովուն մէջ պարտադրաբար կը լողար, ինքզինք յանձնած անոր քմայքներուն: Արդեօք խկապէ՞ս գիտով էր աղջիկը, մտածեց յետոյ: Ի՞նչ պատահած էր: Թէեւ զուարթ ու մարդամօտ, սովորաբար լուրջ, հաւասարակշիռ ու զուսպ էր սակայն:

— Գո՞հ ես, — Հիլտա փսփսաց քիչ յետոյ:

— Շատ:

— Ես ալ: Երկար ժամանակ է ի վեր այսպէս չեմ պարած: Պարէն աւելի զգացումն է, մօտիկութիւնը:

— Անակնկալ է, — Գեղամ խոստովանեցաւ:

— Անխուսափելի էր: Ի վերջոյ պիտի պատահէր, գիտէի: Բայց ուրախ եմ որ պատահեցաւ:

— Ի՞նչ պատահեցաւ:

— Քեզի հանդէպ զգացածս: Տարիներէ ի վեր այսպէս չեմ զգացած:

Գեղամ Տարօնեան նախընտրեց չմտածել աղջկան սիրային կամ զգացական գեղումին մասին, նկատելով որ ինք ոչինչ կը զգար: Յանկութիւն՝ այո՛: Մարմինը կ'այրէր, կը պատժէր զինք: Եւ ուրեմն ըսաւ, չփոթը ծածկելու համար թերեւս:

— Զարմանալի աղջիկ ես:

— Ինչո՞ւ:

— Այսքան ժամանակ է հոս կու գամ, ու նուազագոյն կասկածը նոյնիսկ չեմ ունեցած: Ոչինչ նկատած եմ:

— Աղջիկներով շատ չես հետաքրքրուած, որ նկատես կամ անդրադառնաս: Ես գէթ այն տպաւորութիւնը ունեցած եմ որ հանդըստանալու կու դաս հոս:

Նաթաշա բացականչեց յանկարծ:

— Օ՛, ասոնց նայէ: Սքանչելի, հոյակաւ'ալ: — Ու խօսքը ուղղելով դաշնակահարին, հրահանդեց. — այսօր կանուխ կը փակէք գիտե՛ս որ ժամուն: Առկախ հաշիւները գանձելու չմոռնաս:

— Օ՛, մեզ լքելու իրաւունք չունիք, — Հմայեակ Գասրաբեան գանդատեցաւ, նկատելով որ Նաթաշան մեկնելու կը պատրաստուէր:

— Կրնաս մեզի ընկերակցիլ, եթէ փափաքիս: Խուճրը որքան մեծնայ այնքան աւելի ըսաւ:

— Հաճոյքով: Բայց ո՞ւր կ'երթաք:

— Պարելու:

— Զեղաւ: Քանի երիտասարդները պիտի սրարեն, խանդարելու իրաւունք չունիմ:

— Ո՛չ, ո՛չ, մեր հետ պիտի դաս: — Նաթաշա վճռականօրէն յառաջացաւ դէպի գորգավաճառը եւ ըսաւ. — հաշիւը վաղը կը վճարես: Հիմա ժամանակ չկորսնցնենք:

Կէս գիշերը անց էր արդէն, ու ներկաները բոլոր՝ առաւել կամ նուազ չափով հարբած: Գուրսը պայծառ բայց ցուրտ գիշերը աւելի եւս հրահրեց զիրենք, ու փողոցը վերակենդանացաւ բացականչութիւններով: Այլ գիտատուներէ դուրս եկած մարդիկ կամ յապաղած անցորդներ հետաքրքրութեամբ հետեւեցան իրենց խանդավառութեան, մինչ ծաղկավաճառ մանուկներու խմբակ մը ամբողջ պաշարեց զիրենք: Հմայեակ իւրաքանչիւրէն փունջ մը ծաղիկ զնեց, ու հակառակ աղջիկներու սաստիւն եւ զանգատներուն, սախեց որ ընդունին բոլոր ծաղկեփունջերը: Սուրիկ մօտեցաւ Գեղամին ու հարցուց:

— Ո՞ւր ենք գնում:

— Վերջաւորութեան կարծեմ Նաթաշային տունը պիտի գրտնենք մենք գմեկ:

— Ես սրանից վախենում եմ:

— Անվտաս աղջիկ է, նոյնիսկ խեղճ:

— Հանգիստ չի թողնում, եւ անընդհատ խօսում է Ռուսաստանից:

— Կարօտը քեզմէ պիտի առնէ կ'երեւի:

— Ախր, ես զզուել եմ սրանցից:

— Պր. Տարօնեան, եթէ չեմ խանդարեր, — խօսեցաւ Հմայեակ Գասրաբեան, — հայրենակիցը Հայաստանէ՞ն է:

— Այո՛: Բայց անունս ինչպէ՞ս գիտցաք:

— Եթէ չեմ սխալիւր գրող Գեղամ Տարօնեանն էք:

— Հանրածանօթ մարդ ես, էլի:

— Քանի գրողներով հետաքրքրուած էք, ներկայացնեմ: Հայաստանի բանաստեղծներէն՝ Սուրիկ Վարդանեան: Պր. Հմայեակ Գասրաբեանը քաղաքիս յուսուցոյն գորգավաճառներէն է, — Գեղամ սպա դարձաւ Սուրիկին:

— Օ՛, շատ ուրախ եմ: Շատ, շատ ուրախ եմ: Թերթերուն մէջ կարդացած էի, թէ Պէյրութ կը գտնուիք: Այսօր բախտաւոր օրերէս մէկն է:

— Ինչո՞ւ, — Սուրիկ հարցուց զարմացած:

— Նախ որովհետեւ ձեզի ծանօթացայ: Երկու հայ գրողներու հետ ըլլալու պատիւը ունիմ: Ամենէն կարեւորը՝ այս գիշերը միասին

պիտի անցընենք, եւ առ ալ... ինծի մեծ զոհունակութիւն կը պատ-
ճատէ:

— Բայց մենք ամէն օր կը հանդիպինք,— Տարօնեան գրեթէ
յանցաւոր զգաց:

— Այսօրը տարբեր է: Ասկէ առաջ ձեզ չեմ ուզած խանդարել,
որովհետեւ... մարդ ենք: Ամէն մարդ իր սրտածառները կ'ունենայ:
Գիտեմ, օրինակ, թէ ձեր բուն անունով չեն ճանչնար ձեզ հոս:

— Անունս իրենց համար ի՞նչ նշանակութիւն ունի: Իրենց հա-
մար մենք բոլորս զոհեր ենք:

Ինքնաշարժը կը սպասէր արդէն, եւ Նաթաշա անհամբեր դար-
ձած էր:

— Հայերէն խօսելու չսկսին,— բարձրաձայն գանգատեցաւ
Հիլտային, որ համբերութեամբ կը սպասէր թեւերն ու գլուխը հանդ-
չեցուցած ինքնաշարժի դեկին վրայ: — Շուրջերնին մարդ չեն տես-
ներ:

— Սրան կարելի՞ է վստահել,— Սուրիկ գլուխով ցոյց տուաւ
գերմանուհին, ապա մտաւ ինքնաշարժէն ներս ու տեղ գրաւեց Նաթա-
շայի կողքին:

— Երկու քայլ տեղ է,— ըսաւ Գեղամ: — Պր. Հմայակ, Սու-
րիկին քով նստեցէք, ինչդեմ: Որպէսզի ապահով զգայ: Ես ասոր կը
հսկեմ:

Հինդ վայրկեան ետք Նաթաշայի յարկարաժնին մէջ էին ար-
դէն: Փոքր բայց կռիկ, արդիական ճաշակով կահաւորուած տուն
մըն էր: Գեղամ առանց ժամանակ կորսնցնելու ուղղուեցաւ դէպի
խոհանոց եւ բերաւ խմիչքն ու բաժակները, տեղաւորեց հիւրասեն-
եակի փոքր սեղանին վրայ եւ տանտիրոջ պարտականութիւնը ստանձ-
նած, սկսաւ սպասարկել: Սուրիկ ապշահար զինք կը դիտէր, մինչ
զորպաւճառը, ինքնագոհ ժպիտ մը դէմքին, տանտիրուհին գովքը
կը հիւսէր:

— Էս պաշտօնը սազում է քեզ,— բանաստեղծը կատակեց.—
ոնց որ սրա համար ծնուած լինէիր:

— Դուն խմելուդ նայէ՛: Քեզի համար մասնաւոր վտակա բե-
րի: Ռուսի տուն է ի վերջոյ:

Գեղամ Տարօնեան գիտէր, կը զգար, թէ իր եղակի օրերէն
մէկն էր այս: Տարին քանի մը անգամ կը պատահէր, երբ արամա-
դրութիւնը անակնկալօրէն կը բարեփոխուէր: Անգուպելի կը դառնար,
չնախատեսուած կերպով զուարթ ու շատախօս, եւ՝ ինքզինքն ու շուր-
ջիները կը վարձացնէր իր սրամտութեամբ կամ անմեղ խաղերով:

Պարզօրէն կը չարանար եւ կը սկսէր աներեւակայի ճնարքներու դի-
մել շուրջիները զուարճացնելու համար: Եւ այս կը հանդարտեցնէր
զինք, կը խաղաղեցնէր, եւ գիշերը կրնար հանդիստ քնանալ: Յաջորդ-
օրը, թէեւ, նոյն վերապահ եւ ինքնամփոփ մարդը կ'ըլլար՝ բնա-
կանաբար:

— Պիտի չպարէ՞ք,— սպառնական արտայայտութեամբ մը
գիտեց սեղանակիցները եւ ապա խոնարհութիւն ըրաւ գերմանուհին
առջեւ: — Կ'արտօնէ՞ք:

— Օ՛ր, այս ինչ պատիւ,— աղջիկը ուրախութեամբ բացական-
չեց, փաթթուեցաւ իրեն եւ համբուրեց այտերէն: — Այս արամա-
դրութեանդ մէջ ճիշդ երեխայի կը նմանիս:

— Ատո՞ր համար համբուրեցիր զիս:

— Երեխաները միայն այտերէն կը համբուրեն:

— Կը սխալիս: Երեխաները անշուշտ որ այտերէն կը համբու-
րեն: Բայց ատիկա նաեւ անկեղծ սիրոյ արտայայտութիւն է:

— Այսօր դոնէ սիրուելիք ես:

— Ի՞նչ դուն ուտուելիք ես,— Գեղամ հայերէն խօսեցաւ:

— Ի՞նչ ըսիր:

— Ըսի որ գիտով եմ:

— Աւելի լաւ:

Թէ ատկէ ետք ի՞նչ պատահեցաւ, չէր յիշեր: Երբ աչքերը
բացաւ, ընդարձակ եւ հանդատաւէտ անկողնի մը մէջ գտաւ ինքզինք:
Անծանօթ սենեակ մըն էր, անծանօթ իրեր, վարագոյրներ, անու-
շահտութեան բազմաթիւ ու բազմապիսի սրուակներ, կնոջական զար-
դեղէններ, ներքնազգեստ, կրծկալ ու շղարչներու աշխարհ մը ամ-
բողջ: Կողքին պառկողը Հիլտան էր անշուշտ: Դէմքը, որ մասամբ
ծածկուած էր արձակուած ոսկեթել մազերով, մեղմ ու հանդարտ
արտայայտութիւն մը ունէր: Թերեւս երջանիկ:

Գեղամ փորձեց յիշողութիւնը վերականգնել. եւ որպէսզի կա-
րենար կեղբոնանալ, նստեցաւ ակնոզնին մէջ ու նկատեց որ մերկ
էր: Զուշուրթեամբ ձեռքը երկարեց եւ գտաւ ծխախոտի տուփը. դա-
նիկ մը վառեց յետոյ ու նայեցաւ ժամացոյցին: Ժամը տասը կ'անց-
նէր: Տունը մասհողուած պէտք է ըլլային: Բայց սպասեց եւ յամե-
ցաւ: Մասնաւոր դործ չունէր: Ժամը երկուքին աշխատանքի պէտք
է ըլլար, եւ ուրեմն ժամանակ ունէր: Քաղաքական օրաթերթի մը
խմբագիր ըլլալու առաւելութիւններէն մէկը: Երկու տարի է ի վեր
քաղաքի միակ անդլերէն հրատարակութեան խմբագրական կազմին

մաս կը կազմէր, եւ օրական հինգ կամ վեց ժամ աշխատելով կը ստանար ուսուցչական ամսականին եռապատիկը: Հանդիստ աշխատանք էր՝ մեքենական բայց հետաքրքրական եւ գոհացուցիչ:

Տարօրինակ աղջիկ էր, մասնեց յետոյ: Հպարտ կոչուելու շափինքնամփոփ եւ վերապահ: Բայց քաղաքավար եւ պարտաճանաչ: Գիտէր, թէ իր գործին բերումով պէտք էր հաճոյակատար ըլլար եւ հանդուրժէր ամէն կարգի եւ տեսակի մարդոց յիմարութիւններուն եւ երբեմն՝ լրբութեան: Բայց զիտէր նաեւ զանոնք իրմէ հեռու պահել՝ առանց վշտացնելու: Եւ յանկարծ... այս ծուղակը, զոր փնք չէր լարած յամենայն դէպս: Գեղամ վստահ էր, թէ ծուղակին մէջ ո՛վ ինկած էր: Հիւտա՞ն, թէ ինք: Կրնա՞ր այսքան խորամանկ ըլլալ սա հրեշտակային դէմքով վազը: Իր կանաչ աչքերով եւ գեղակերտ մարմինով՝ վազրի ալ կը նմանէր: Գեղեցիկ, առինքնող բայց հպարտ:

Սրկառեթը ճգնեց մոխրամանին մէջ եւ որոշեց քննալու փորձ մը ընել: Այլապէս մտածումները կրնային փորձութեան մասնել զինք, նկատելով որ երկար ժամանակ անտարբեր չէր կրնար մնալ կողքին հանդիսող տաք եւ այրող մարմնին նկատմամբ: Եթէ միայն կարենար յիշել, թէ ի՞նչ պատահած էր նախորդ գիշեր: Բայց ապարդիւն: Tabula rasa, խօսեցաւ ինքնիրեն եւ սահեցաւ դէպի վար, աւելի վար, մինչեւ որ անկողինը սկսաւ օրօրել զինք:

— Ի՞նչ ըսիր, — Հիւտա հարցուց, աչքերը դժուարութեամբ բանալով:

— Tabula rasa:

— Հայերէ՞ն կը խօսիս դարձեալ:

— Ո՛չ, լատիներէն:

— Գիշերը խօսածդ թէ եւ լատիներէնի չէր նմաներ:

— Գիշերը ե՞րբ:

— Հոս, անկողնին մէջ: Վստահ եմ որ շատ աղուոր, հաճելի խօսքեր էին ըսածներդ, բայց դժբախտաբար հայերէն չեմ գիտեր: Շատ հետաքրքրական եւ հաճելի էր սակայն: Կեանքիս մէջ այս տեսակ խենթ գիշեր չեմ անցուցած... ամէն կերպով հետաքրքրական եւ գոհացուցիչ: Խնդարէն պիտի ճաթէի վերջաւորութեան:

— Ի՞նչ ըսի, — Գեղամ հետաքրքրուեցաւ՝ լրջօրէն մտահոլւած: — Ինչի՞ մասին կը խօսէինք:

— Ես գիտեմ: Հայերէն չեմ հասկնար ըսի:

— Ի՞նչը այդքան խնդալիք էր ուրեմն: Եւ ի՞նչ գիտես, թէ հայերէն էր խօսածս:

— Ուրիշ լեզու չէր կրնար ըլլալ: Այդքանը կրնամ զանազանել:

Բայց իսկապէս հոյակապ էր. անզուպելի դարձած էիր, խենթ, ուրտիս, կատարեալ ծաղրածու մը:

— Ե՞րբ եւ ինչպէ՞ս հոս եկանք:

— Ըսել վ՛ուզես, թէ չե՞ս յիշեր: Անկարելի է, — Հիւտա երկտասարդին դարձաւ, եւ արժուկին վրայ բարձրացնելով մարմինը, շարունակեց. — Ինձմէ աւելի արթուն էիր եւ խօսածդ ալ գիտէիր: Ոչ մէկ կասկած այդ մասին:

— Եթէ շարունակես այդ գէնքերովդ ինձի սպառնալ, գիտցածս ալ կը մոռնամ:

— Ի՞նչ գէնք:

Աչքերով ցոյց տուաւ աղջկան ստինքները, որ կախուած էին հիմա զոյգ մը հասուն դեղձի նման:

— Վախնալ՞ ո՞ւր սկսար յանկարծ: Երէկ գիշեր շատ քաջ էիր թէ եւ, եւ դեղձ ուտելու մասին կը խօսէիր անընդհատ:

— Դեղձի չե՞ն նմանիր. գոյնով, մեծութեամբ:

— Եւ դեռ կ'ըսես, թէ խօսածդ չես յիշեր: Գիշերը նոյնը ըսիր:

— Ատիկա կը նշանակէ թէ ուղեղս ինձմէ անկախաբար կը գործէ: Բայց եթէ հայերէն կը խօսէի... ինչպէ՞ս գիտես թէ դեղձի մասին խօսեցայ:

— Այո՛, բարի եղար այդ մասը թարգմանելու սկիզբը, — Հիւտա ժպտեցաւ ու գլուխը հանդէպուց Գեղամի կիսամերկ կուրծքին վրայ: — Բայց լուրջ, ըրածներդ չե՞ս յիշեր:

— Ի՞նչ ըրի:

— Ինչե՞ր: Աւելի լաւ է յամենայն դէպս: Թէ եւ չեմ հաւատար:

— Ասկէ առաջ ալ պատահած է ինձի, — Տարօնեան փորձեց համոզել աղջիկը, որ զինք կը հոտուրտար հիմա. — գիտակցութիւնս, կամ աւելի ճիշդը՝ յիշողութիւնս կը կորսնցնեմ, հակառակ անոր որ ուղեղս կը շարունակէ կանոնաւորաբար գործել:

— Բայց անկարելի է: Այնքան արթուն էիր, այնքան սրամիտ, պատրաստարան, ու միտքդ՝ պայծառ, արագ:

— Մարդկային ուղեղը քնացած ատենդ ալ կը գործէ: Բայց յիշողութիւնը տարբեր խնդիր է:

— Ուրեմն չես յիշեր, — գերմանուհին կրկնեց թերահաւատութեամբ: Ախոսանքը զգալի էր արտայայտութեան եղանակին մէջ իսկ: — Յաւալի է:

— Ինչո՞ւ:

— Շատ բան կորսնցուցիր: Բացառիկ փորձառութիւն մըն էր, եղալի, կատարեալ ներդաշնակութիւն: Սակաւաթիւ մարդիկ կրնան

կնկալ մը այսքան հաճոյք պատճառել... իսկ յետոյ ալ կ'ըսես, թէ չես յիշեր: Ինչպէ՞ս կրնայ պատահիլ: Բայց դուն նոյնքան եւ աւելի կատարած էիր:

— Ծատ ազնիւ ես:

Հիշտա համբուրեց Գեղամի աչքերը:

— Ծատ զեղեցիկ աչքեր ունիս:

— Վրա՞ս կը խնդաս: Ես կին չեմ...:

— Լուրջ: Խորունկ, խորհրդաւոր, գմայլելի: Ձեմ գիտեր զաղտնիքը ինչ է. թերեւս ալ զեղեցիկ չեն, բայց մարդ դրաւելու յատկութիւն մը ունին... զիս գոնէ զինաթափ ըրած են:

— Չըսիր, թէ ինչ ըրինք զիշերը:

— Անկողնին մէջ ինչ կ'ընեն: Խոստովանիմ որ ինծի համար ալ անակնկալ էր. բնաւ մտքէս չէր անցներ: Սակայն այնքան բնական կերպով պատահեցաւ որ... առանց ծրագրելու կամ նոյնիսկ խօսելու այդ մասին՝ երկուքս ալ, վստահ եմ, ատոր պահանջքը ունէինք: Միասին ըլլալու, սիրելու, սիրուբանելու, եւ զիրար վայելելու: Հաղուադէպօրէն այսպէս բնական, ինքնարուխ եւ անմեղ պահանջը ունեցած եմ: Ինծի համար բացառիկ էր, նորութիւն, որովհետեւ գործիս բերումով քանած եմ այս ամբողջին. մարդոցմէ, նոյնիսկ ես ինձմէ: Այնքան զղուելի, վարկաբեկիչ կը դառնայ, որ ամբողջ զեղեցիկութիւնը կը կորսնցնէ: Կը հասկնաս ինչ ըսել կ'ուզեմ:

— Թերեւս: Ես կին չեմ ըսի, ոչ ալ քու գործը կ'ընեմ կամ փորձառութիւնդ ունեցած եմ: Իրաւունք ունիս, — Տարօնեան եղբայրացուց վերջաւորութեան:

— Փորձառութիւնը ամբողջ նորութիւն էր ինծի համար: Ու վերջաւորութեան՝ հայերէն խօսիլը մանաւանդ: Այնքան ճիշդ էր, բնական, եւ ատոր համար ալ հաճելի, սիրելի: Եթէ հայերէն չխօսէիր, նոյն գոհունակութիւնը, նոյն յազեցումը չունենայի թերեւս: Իսկապէս զարմանալի էր, բայց ճիշդ: Հանելուկ մը պարզապէս:

— Բոլոր անկեղծ զգացումները մայրենի լեզուով միայն կ'արտայայտուին: Ինծի համար շատ հետաքրքրական երեւոյթ է անշուշտ, մանաւանդ իմ պարագայիս, որովհետեւ ուրիշներու ներկայութեան, այսինքն ոչ-հայերու հետ մայրենի լեզու չեմ գործածեր երբեք: Նոյնիսկ երբ շուրջս հայեր ըլլան: Այնպէս որ բան մը կը նշանակէ, մանաւանդ երբ ենթադրուած կը կատարուի ատիկա: Խօսողը ես չէի հաւանարար, այլ իսկական անձ:

— Կարծեմ կը հասկնամ ըսել ուղածը: Օտարներուն, դրսեցի-

ներուն ներկայացող մարդը միշտ տարբեր է բուն անձէն: Ծատ հետաքրքրական է յամենայն դէպս:

— Ուրախ եմ որ այդպէս պատահեցաւ, — բարձրաձայն խորհրդածեց հայրը: — Վստահ եմ որ հիմա զիս աւելի լաւ կը ճանչնաս: Թէ ոչ այս ամբողջը նշանակութիւն պիտի չունենար ինծի համար: Սովորական, պատահական բան մը պիտի ըլլար. բարձրութիւ ալ զիշերներէն կամ յարաբերութիւններէն մէկը:

Աղջիկը փաթթուեցաւ իրեն, սեղմեց, ճգմելու աստիճան սեղմեց զինք եւ ամբողջ էութեամբ սառարաց, ցնցուեցաւ ու յետոյ ուժասպառ՝ ժպտեցաւ:

— Կարելի՞ է, — հարցուց ապա:

— Ի՞նչը:

— Եթէ այսպէս շարունակուի, կրնամ սիրահարիլ քեզի:

Երիտասարդը չպատասխանեց, որովհետեւ մարմինը կ'այրէր: Ցանկութեամբ բոցավառած, միտքը կը սուրբար այլ ուղղութեամբ: Սիրելու ժամանակ չունէր թերեւս, որովհետեւ իրենց մարմիններուն ազերսը Ֆիզիքական էր — շօշափելի, զեղեցիկացող արշաւ դէպի բացարձակ չիջում կամ սպառում: Մարմինը կ'այրէր, կ'այրէր, եւ ինքզինք չէր կրնար զսպել այլեւս: Ասկէ աւելի չէր կրնար դիմանալ: Բայց ինչպէ՞ս դիմանար, երբ Հիշտա կը ժպտէր իրեն այսպէս, ու երբ անոր կուրծքերը կը լուսային, կ'օծանէին շրթները, այտերը, աչքերը: Շրթները, այտերը, աչքերը: Իսկ ինչպէ՞ս լռեցնէր ձեռքերը, որոնց լեզուն, հրաշալի լեզուն, չէր հասկցած երբեք: Ձէր կրցած սորվիլ ու թափանցել անոնց զաղտնիքին: Առանձին, անկախ, ինքնիշխան էին անոնք ու չէին հպատակեր իրեն: Մանաւանդ հիմա: Եւ զարմանալի չէր ուրմեն որ ինք ենթարկուէր անոնց ու հետեւէր իւրաքանչիւրի զեղբերումներուն՝ կեդրոնացեալ լարումով: Ու մասնակցէր արշաւանքին, որպէսզի բաժնէր անոնց ցնծութիւնը:

Եթէ բանաստեղծ ըլլար, քերթուած մը կը գրէր — հիմա իսկ, այս պահուն, երբ մարմնով ու հոգուով կը սաւառնէր — ու կը հանդըստանար: Իրեն անձանօթ, եզակի զգացում մըն էր, կամ յայտնութիւն: Ամէն վերպով բաւարարուած էր — Ֆիզիքապէս եւ հոգեպէս — բայց նաեւ դժգոհ էր: Իժգոհութիւնը իր էութեան մաս կը կազմէր, գիտէ՞ր, որովհետեւ տարիներու ընթացքին ինք իսկ դիսցուցած էր զայն: Բայց այս պահուն եւս: Խորքին մէջ ժուժկալ, իրապաշտ մարդ մըն էր. պատրանքներ չունէր եւ չէր ունեցած երբեւիցէ: Բայց տարօրինակ, անբացատրելի այս հոգեվիճակը չէր լքեր զինք, որքան ալ փորձէր ձերբազատուիլ անկէ: Իրականութիւնը այն

էր որ դժգոհելու պատճառ չունէր: Իր ուղածը ըրած էր միշտ: Ուսում, դորձ, պաշտօն, գրականութիւն: Պատասխանատու պաշտօն մը ունէր եւ եկամուտը լիովին կը բաւարարէր զինք: Իսկ ամենէն կարեւորը՝ կատարած աշխատանքէն դո՛ւ էր: Ու վայելած էր կեանքը, տարիները, աշխատանքը, ուսուցչութիւնը (երբ ուսուցիչ էր), եւ չէր զրկած ինքզինք: Անթիւ եւ անհամար վայելքի գիշերներ անցուցած էր՝ վատահամբաւ դառնալու աստիճան: Սիրած էր կիներն ու գինին, ինչպէս պիտի ըսէր Օմար Պայեսամ, ու չէր զղջացած երբեք: Բայց Պայեսամի իմաստութիւնը այդ սահմանին վրայ ալ վերջ գտած էր իրեն համար, որովհետեւ ատկէ անդին կը սկսէր ունայնութեան վիճը, որ անխուսափելի էր, անուրանալի: Ինք չէր ստեղծած կամ երեւակայած զայն, իրականութիւն էր պարզօրէն:

Հիշատ, որու ազգանունը նոյնիսկ չէր գիտեր, արտակարգ բող մըն էր: Բո՞ղ: Այո՛, ինքզինք խարելու պէտք չունէր. ճիշդ է թէ պատահած մարդուն հետ վճարովի անկողին չէր մտներ, սակայն... բարձր գասակարգի բող մըն էր ի վերջոյ: Այս երկրին մէջ արտիստ կը կոչէին զիրենք, այսինքն արուեստագէտ: Հեղինակ էր, թէ թիւրիմացութիւն: Յամենայն դէպս արտակարգ արտիստ մըն էր՝ ամէն կերպով: Գեղեցիկ բայց խոնարհ, քաղաքավար, լուրջ եւ զգայուն, բայց նաեւ զուսպ: Աղջիկ, որու կտրելի էր վտտա՛լը, սիրահարիլ, ու նոյնիսկ մտերմանալ անոր հետ: Ամենէն կարեւորը այն էր թէ այլ մարդոց նման մարդկային զգացում ունէր եւ կրնար իսկապէս սիրել, կապուել սիրած մարդուն եւ հաւատարիմ ըլլալ անոր: Վստահ էր:

Բայց բացարձակ օտար մըն էր: Ոչ թէ ազգութեամբ: Անոր գերմանացի ըլլալը նշանակութիւն չունէր իրեն համար: Եւ անձանթներ չէին անչուշտ: Ծուրջ երկու տարի առաջ հանդիպած էր անոր առաջին անգամ, եւ ժամանակի ընթացքին բարեկամներ դարձած էին ու սորված էին յարգել զիրար: Զարգացած աղջիկ էր, համալսարանական, ընթերցասէր, որ զինք հաճելի խօսակից մը կ'ընծայէր: Ու հակառակ անոր որ կը փնտռէին զիրար ու յաճախ ժամերով կը շաղակրատէին, Հիլտա օտար էր իրեն համար: Պարզօրէն տարբեր անձ մը, որ հարազատ չէր, եւ չէր կրնար ըլլալ՝ ըստ երեւոյթին: Իրարու կողքին մերկ պառկած էին հիմա, բայց գիտէր թէ անոր ներկայութեան մերկ պիտի չկարենար պտրտիլ՝ օրինակի համար: Մինչդեռ ինքն իրեն հետ, երբ առանձին ըլլար, մերկ չէր զգար երբեք:

- Նախաճաշ կ'ուզե՞ս, — Հիլտա հարցուց քիչ հտք:
- Սուրճը կը նախընտրեմ առայժմ:

- Անչուշտ, բայց նախաճաշը կարեւոր է:
- Ակնթարթի մը մէջ ոտքի էր արդէն, եւ առանց մերկութիւնը ծածկելու փորձ ընելու, քալեց ննջասենեակէն դուրս եւ ըսաւ:
- Տեղէդ չչարժի՛ս:
- Ես հագուեմ միւս ալ:
- Ո՛չ, նախաճաշը անկողին պիտի բերեմ:

Մարմարեայ արձան մըն էր կարծես: Կատարեալ, բացարձակ ներդաշնակութիւն, զոր չէր նկատած անկողին մէջ: Անկարելի էր, մտածեց, եւ տարօրինակօրէն գլխաց անոր: Վատնում էր: Նախանձեցաւ նոյնիսկ: Այսքան կատարելութիւն՝ անտանելի էր պարզապէս: Բայց անդրադարձաւ յանկարծ, թէ Հիլտա մերկութիւնը ծածկելու հարց չունէր իրեն պէս, ու յանցաւոր զգաց: Ամչցաւ: Ան աւելի անկեղծ էր հաւանաբար, աւելի բնական, պարզ եւ անմեղ: Մինչդեռ ինք...: Բնական չէր սակայն, տրամաբանական չէր: Ինք պերճաղիճ չէր, որ մարմինը ցուցադրէր: Յուցադրուելիք մարմին մը ունենա՞ր գէթ. չորցած ծառի կը նմանէր — կարծրացած, նիհար ու հողմահար: Եւ յետոյ ի՛նչ իրաւունք ունէր երիտասարդութիւնը այսպէս փճացնելու: Այս աղջիկը ո՞վ էր, ի՛նչ կը ներկայացնէր իրեն համար: Ոչ մէկ ակնկալութիւն կրնար ունենալ անկէ, եւ ոչինչ կրնար տալ անոր: Ոչինչ կրնար խոստանալ: Ի՞նչ ունէր, որ ի՛նչ տար: Ինքզինք: Բայց ինչպէ՞ս: Միծաղելի էր: Իսկ ան կրնար լրջօրէն կապուել իրեն, ակնկալութիւններ ունենալ, սիրել զինք, կամ գէթ զգացումներով տարուել: Իրաւունք չունէր: Եթէ ուզէր իսկ, պիտի չկարենար կեանքը կապել անոր: Կրնար այդ շքեղ մարմնին գերին դառնալ (որ շատ հաւանական էր), կրնար հմայուել անոր անձով, որ յարգանք կը պարտադրէր. բայց եւ այնպէս իրեն արտօնուած չէր այս կարգի յարաբերութեան մը մասին մտածելն իսկ:

Թ.

Գիշերը, սովորականին պէս, Գեղամ Տարօնեան իր անկիւնը գրաւած, կը խմէր Քալիֆ մէջ: Թէեւ կէս գիշերը անց, նախորդ գիշերուան մթնոլորտը չկար սակայն: Նախաշա յոգնած էր եւ անտրամադիր, իսկ Հիլտա զբաղած էր այլ յաճախորդներով: Երրորդ բաժակը ապսպրած էր արդէն ու կը սպասէր: Գիտէր, թէեւ, թէ վերջին բաժակը պիտի չըլլար այս: Հիլտա քստորդ ժամը անգամ մը

կու դար ու քանի մը նախադասութիւն կը փոխանակէր իր հետ, կը տնտնար, բացայայտօրէն զժողովս որ զինք հիւրասիրող յաճախողները կը յամենային, եւ ահամայ կը վերադառնար անոնց՝ քաղցր ու հմայիչ ժպիտը դէմքին: Գեղամ դիտէր, թէ պիտի սպասէր անոր, եթէ նոյնիսկ ժամեր տեւէր այս խեղկատակութիւնը: Բարեբախտաբար առանձին էր:

Հոս ի՛նչ գործ ունիս, հարցումը յանկերդի պէս կրկնուեցաւ: Փոխանակ հոս ժամեր, գիշերներ վատնելու, օգտակար աշխատանք մը կատարես չ'ըլլա՞ր: Բայց ի՛նչ կրնաս ընել: Հարստանալու ոչ նպատակ ունիս ոչ ալ կարելիութիւն, որ երկրորդ կամ նոյնիսկ երրորդ պաշտօնի մը հետամուտ ըլլաս: Իսկ ամէն օր կանոնաւորաբար կը դրես, ընթերցանութեանդ մէջ չես թերանար, ծնողքիդ եւ այլ պարտականութիւններու պէտք եղած ժամանակը կը տրամադրես: Անբուժելի ես սակայն, ի՛նչ կարելի է ընել: Միշտ զժողովս ես ու կը տատապիս ձանձրախտէ: Հիւրայի մարմինը դադարէ՞ր չունի քեզի համար այլեւս. մերկացուցած ես գայն եւ ըմբռնանա՞ծ անոր գեղեցկութիւնը: Մինչդեռ նախապէս երեւակայութեամբ կը մերկացնէիր զինք ու կը զբաղէիր երբեմն: Այդ միջոցին, երբ տարուած կ'ըլլայիր անմեղ ժամանցովդ, սքանչելի դիւտեր կ'ընէիր, մտածումի եւ խօսքի պատկերներ կը ստեղծէիր, ու յայտնութիւն մը կատարած մարդու գոհունակութեամբ տուն կը վերադառնայիր:

Յետայտորիկ այդ ժամանցէն ալ զրկուած ես այլեւս: Նաթաշան կը ժպտի քեզի, թէ եւ անտրամադիր է եւ ջգային: Ինչո՞ւ: Պէտք է խօսիս անոր հետ, որպէսզի փոխես տրամադրութիւնը: Գիտես, թէ խօսակցութիւնդ հաճելի է իրեն համար, բայց այսօր կենցաղափարութիւնդ կը դաւաճանէ քեզի: Զգուշանալու սլաճառ ալ ունիս անշուշտ, որովհետեւ չես յիշեր թէ ի՛նչ պատահեցաւ երէկ գիշեր: Ժպտող, թէ եւ, խրախուսիչ է եւ կը քաջալերէ քեզ: Ինչո՞ւ կը ժպտիս, շան ազդիկ: Բարեբախտաբար կը մօտենայ եւ կ'ըսէ:

- Բանաստեղծը ո՞ւր է:
- Չտեսայ այսօր:
- Դիտողութիւն ըրին հաւանաբար:
- Գեղամ հարցական նայեցաւ աղջկան:
- Դեսպանատունէն, — միտքը պարզեց վերջինը: — Վստահ եմ:
- Չափազանցութիւն է:
- Ո՛չ, ո՛չ, ես մերթնները կը ճանչնամ:
- Չերիննե՞րը:

- Սովետական սրտեմը:
- Երէկուան միջոցը չկայ այսօր, — Գեղամ նախընտրեց նիւթը փոխել:

— Սքանչելի գիշեր մըն էր: Հոյակապ: Իսկապէս շատ գոհ մնացի: Երբեմն պէտք է փոխուի մարդ, խենթութիւն ընէ. թէ ոչ կեանքը անտանելի կը դառնայ: Պէտք է ըսել որ զարմացուցիր զիս: Այսքան պատրաստարան եւ կատակասէր ըլլալդ չէի գիտեր:

Ըսաւ եւ ժպտադէմ՝ ներս մտնող զոյգը դիմաւորեց Նաթաշա: Բարեբախտաբար: Թէ ոչ անել կացութեան պիտի մատնուէիր, պատրաստարան տիա՛ր, աղատ չունչ քաշեց Տարօնեան: Այլ հարց որ մարդու հետ խօսելու տրամադրութիւն չունիս՝ ի բաց առեալ Հիւտան: Ուրիշ բան ալ տեսած չունիս արդէն, ու միտքդ եւ ուշադրութիւնդ ամբողջ իր վրայ կեդրոնացած է: Ի՛նչ պատահեցաւ: Մուղակին մէջ ինկար: Հաճելի ծուղակ մըն է թէ եւ, մանաւանդ մարմինն անտեսանելի սուսայնը, որու մէջ ազատ կամքովդ հիմա իսկ պիտի ուզէիր տապալակիլ: Չարչարուիլ, խաչուիլ այդ գեղակերտ խաչին վրայ, որպէսզի յարութիւն առնես վերստին եւ աստուածանաս: Այսինքն՝ ձերբազատուիս մարդկային կաշկանդումներէն եւ յամենաս աստուածային մտութիւններովդ — հին աստուածներուն նման: Եւ դառնաս գերին գեղեցկութեան արձանին, որ Հիւտայի մարմինն է այսօր: Գոյութեան հացը: Զհաց մեր հանապազօր տուր մեզ այսօր:

Տարիներէ ի վեր Տէրունական աղօթքը չէիր յիշած, տիա՛ր վարժապետ: Դասալիք, հաւատուրաց վարդապետ: Նկուղներու բնակիչ: Այլ տեսակի ճգնաւոր ես այսօր, այո՛, եւ հոսկէ դուրս պիտի չդաս մինչեւ որ աղօթես անոր գեղեցկութեան տաճարին մէջ: Անոր, որ ուրիշներու կը ժպտի հիմա, կը կատակէ անոնց հետ, կը մատուցուի անոնց՝ կամայ թէ ահամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Մինչ դուն կը սպասես: Պիտի սպասես: Յնոր տնօրինութիւն: Ահաւասիկ քեզի նոր կարգ եւ կանոն, ընկերային կարգ ու սարք, նոր հասարակարար, այսինքն՝ հպատակութիւն: Պիտի հպատակիս անոր, այո՛, բանիւ եւ գործով:

- Տէ՛ր, անցոյ զայս բաժակ յինէն:
- Ի՛նչ կ'ընես, — Հիւտա կեցաւ կողքին դարձեալ:
- Կ'աղօթեմ:
- Միշտ անկարելի բաներ կը գտնես ըսելիք:
- Անկեղծ:
- Հոս եկեղեցի՞ է:
- Հեթանոսական տաճար:

— Պիտի սպասե՞ս ինձի :

— Կամայ եւ ախմայ, — Գեղամ կկոցեց աչքերը :

— Ուրախ եմ :

— Անշուշտ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես, — աղջիկը շփոթեցաւ :

— Պէտք է ուրախ ըլլալ : Թէ ոչ ապրիլը իմաստ չունի, չ'ու-
նենար, չ'արժեք :

— Այս ըսողը դո՞ւն ես :

Երիտասարդը շուրջը քննեց, ժպտեցաւ խորհրդաւոր կերպով,
թելադրելու համար թէ իրմէ զատ մարդ չկար հոն, եւ ըսաւ :

— Ի՞նչ կը խորհիս : Ուրիշ մը չէր կրնար ըլլալ. եւ կամ բուն
անձն էր, այն որ ինձմէ անկախ է :

— Իսկապէս տարօրինակ մարդ ես : Ժամերով առանձին կը
նստիս, կը խոհաս կամ կ'ներագես :

— Ուրախ ըլլալու համար պէտք է խօսի՞լ անպայման, պոռա՞ւ, մի
միտոսութի՞ւն ընել :

— Ձեմ զարմանար : Երէկ լաւագոյն փաստը տուիր :

— Կարօտցայ քեզի :

Հիշատայի դէմքը պայծառացաւ, աչքերը կենդանացան, ու վեր-
ջաւորութեան խնդաց, մինչ շրթները բառեր կազմելու դժուարու-
թիւն ունեցան : Բայց կրցաւ խօսիլ ի վերջոյ :

— Կրնաս իսկապէս կոմիկ ըլլալ :

— Խնդալիք բան մը չըսի : Ծատ լուրջ եմ :

— Զիչդ ասոր համար ըսածդ կը խնդացնէ :

— Երկար պիտի սպասե՞նք տակաւին, — Գեղամ կարեւորութիւն
չընծայեց աղջկան ըսածին :

— Ձեմ խորհիր :

Դուն չես խորհիր, ինքնիրեն խօսեցաւ կամ հեզնեց Տարօնեան,
բայց ես ինչե՞ր կը մտածեմ : Մինչ աղջիկը ոստոստելով հեռացաւ,
զինք առանձին լքելով զարձեակ : Ես կը խորհիմ որ քեզ պէտք է կա-
պել նախ եւ առաջ, եւ արգելափակել անշուշտ : Գերմանացիները
բոլոր կապուելու արժանի են՝ ըստ իս : Հետաքրքրական կ'ըլլայ :
Ձե՞ս խորհիր : Բայց չի կրնար պատահիլ, որովհետեւ հայրդ Հիթ-
լերի գերմանական բանակին մէջ սպայ եղած է, ինչպէս նաեւ մոլե-
ռանդ նացի՝ քու իսկ վկայութեամբ : Իսկ իմ հայրս... նախընտրելի
է շմտածել այդ մասին :

Նախընտրելի է նաեւ իմ մասին շմտածել, որովհետեւ ուզածիս
հիշդ հակառակը կ'ընեմ : Ընդհանրապէս : Որոշած էի հոս չզալ այ-

սօր, որպէսզի փաստէի ես ինձի թէ կամքի տէր եմ : Եւ անշուշտ ան-
համբեր եմ հիմա, բայց դժայլելի համբերութեամբ մը կը սպասեմ :
Ես կամքի տէր եմ, այո՛, ինչ փոյթ որ մարմնիդ գերին դարձուցած
եւ զիս : Կրնամ մարմնիդ ծառայել փոխանակ նպատակի մը ծառայե-
լու, եւ յագեցնել ծարուղ, կիրքդ, ցանկութիւններդ, ինչպէս նաեւ՝
իմ ցանկութիւններս : Այսքանը կարողութեանս սահմաններէն ներս
է — տարակոյս մի ունենար : Խոնարհարար կ'ընդունիմ իրականու-
թիւնը : Որովհետեւ ես զիս չեմ կրնար խարել, եւ բնականաբար չեմ
ալ ուզեր քեզ յուսախար ընել : Պարզօրէն կը սիրեմ ծիծերուդ համը,
զիստերուդ ու կոնքերուդ... համը դարձեալ, այո՛, միայն համը, ու
կը սիրեմ խածնել, կըրծել, ուտել՝ սովէն ինչ : Ամէ՛ն :

Կրնան դատապարտել զիս, կրնան մեղադրել, քարոզել, բարո-
յական դասեր տալ, ափսոսալ, ցաւիլ ու ողբալ եւ անարգանքի սիւնին
դամել զիս վերջաւորութեան : Ի՞նչ փոյթ : Փաստօրէն քու մարմինդ
աւելի իրական է եւ անկեղծ քան անոնց խօսքերը. մարմնիդ չի իտ-
բեր, չի ստեր ու կը հպատակի մարմինիս, հոգ չէ թէ ես ալ հպատա-
կիմ քեզի : Այս ամբողջին մէջ կեղծիք չկայ, խարերայութիւն չկայ՝
պէթ այնքան ատեն որ կը տեսէ, կը շարունակուի : Ատկէ ետք, երբ
մարի կրակը ու հանդի, խարելու կամ խարուելու հարց չի կրնար
ըլլալ դարձեալ :

Ամիսներէ ի վեր այսքան դո՛ւ ու հանդարտ չեմ զգացած, եւ
ուրեմն կրնամ յստակօրէն մտածել, տրամաբանել եւ ըլլալ աւելի
իրապաշտ : Երազել թերեւս : Որ նոյնքան անհրաժեշտ է, նոյնքան
իրական : Երազել որ քեզ կը սիրեմ, օրինակի համար, որովհետեւ
չեմ կրնար սիրել : Կը ներես, քեզ չեմ կրնար խարել : Պիտի փափաքէի
թէ եւ սէրս խոստովանիլ քեզի — եթէ սիրէի : Մանկապարտէզ : Կը
սիրեմ, կը սիրես : Յոգնած, չարչարուած բառ մը : Խնդաթիւրուած,
խոշտանդուած սրբութիւն : Բայց ինչպէ՞ս կը սիրեն գերմանացի բող
մը : Եւ կարելի՞ է : Յամենայն դէպս — կարելի ըլլայ կամ ոչ — ես
հոս եմ հիմա եւ կը սպասեմ : Ի՞նչ է ասոր գաղտնիքը : Կեանքը ինքնին
թերեւս : Անոր գեղեցկութիւնը, անմիջականութիւնը, եւ անխուսա-
փելի հակասութիւնները :

Բարեբախտաբար Հմայեակ Գասբարեան ներս կը մտնէ ու կու-
գայ կը կանգնի կողքիդ : Այս տեսակ մը տուն է ի վերջոյ, եւ տան
անդամները միշտ զիրար կը փնտռեն, կը գտնեն :

— Գիտէի, թէ հոս պիտի ըլլաս, — կ'ըսէ :

— Ուրիշ ո՛ւր կրնամ ըլլալ :

Բարձրաձայն կը խնդայ ու հագիւ կրնայ զսպել ինքզինք, մինչ

Նաթաշա կը սպասարկէ՝ առանց ապսպրանք ստանալու: Միշտ նոյն խմիչքը կը գործածէ գորգավաճառը:

— Անկեղծութիւնդ սքանչելի է: Մեր ալ վիճակը այս է: Ինչ կրնանք ընել:

— Դժգոհ չեմ, — Գեղամ ժպտեցաւ. — ասկէ աւելի հաճելի ժամանց ո՛ւր կրնամ գտնել:

— Ամուսնացած չե՞ս:

— Այդ սխալը չեմ գործած տակաւին:

— Իրաւունք ունիս, — խնդաց բայց տխրեցաւ Հմայեակ Գասրաբեան. — ընտանիք պէտք է կազմես թէեւ, զաւակ ունենաս: Զաւակ ունենալու պէս բան չկայ աշխարհի վրայ:

— Օր մը պիտի ամուսնանամ անշուշտ:

— Յուսամ: Թէեւ կրնայ ուշ ըլլալ, մանաւանդ քեզի պէս անձի մը համար:

— Վարժապետներու աղջիկ չեն տար ըսել կ'ուզես:

— Ղուրպան եղեր են: Պատիւ պէտք է զգան: Բայց դուն ուսուցչութենէն հրաժարած ես արդէն: Ծիշդ չէ՞:

— Իմ մասին բաւական ծանօթութիւն ունիս, — իտկապէս զարմացաւ նախկին ուսուցիչը:

— Անշուշտ: Գրականութիւնդ շատ կը սիրեմ, կը հաւնիմ:

— Հետաքրքրական մարդ ես, կը ներես:

— Խնդրեմ, — ընդմիջեց գողավաճառը. — ներելու ի՛նչ հարց կայ: Ազատ զգա՛:

— Հարուստ, զաւակներու եւ թոռներու տէր, այս նկուղին մնայուն յաճախորդը եւ գրականութեան սէր: Ձեմ հասկնար:

— Զարմանալի ի՛նչ կայ ասոր մէջ:

— Քու հարստութիւնը ունեցող մարդիկ իրենց դրամին եւ անունին վրայ կը դողան:

— Ատիկա իրենց ողբերգութիւնն է: Դուն ինչո՞ւ պիտի կարենաս ազատ եւ անկախ զգալ, իսկ ես պիտի գրկուիմ ատկէ: Որովհետեւ հարո՞ւստ եմ: Կը մերժեմ, չեմ ընդունիր:

— Ուրախ եմ: Մեր մեծահարուստներէն յոյս պէտք չէ կտրել ուրեմն:

— Ատիկա չեմ գիտեր: Ես մեծահարուստ չեմ: Պատահամար հարստացած եմ, այո՛, բայց մեծահարուստ չեմ: Լաւ գործ ունիմ, լաւ կը շահիմ, բայց չեմ հետաքրքրուած: Ատոր համար ալ շահածս կը ծախսեմ, կը վախելեմ: Որքան ծախսես, այդքան կը շահիս:

— Արդեօ՞ք:

— Անպայման: Անձնական փորձառութեամբ գիտեմ:

— Երանի քեզի: Ուրիշներ նոյնքան բախտաւոր չեն:

— Բախտը կրնայ դեր ունենալ, բայց համոզումի հարց է ասելի: Եթէ ամէն ինչ բախտի ձգես, բան մըն ալ չես կրնար ընել: Ոչ կ'աշխատիս, ոչ ալ աւելորդ ճիգ կ'ընես: Ես, օրինակի համար, որովհետեւ ամբողջ շահածս կը ծախսեմ, միշտ ծախսածիս տեղը կ'ուզեմ լեցնել: Բացը դոցել:

— Կ'ընդունիս որ բաց մը կը գոյանայ ուրեմն:

— Եթէ այդպէս չըլլայ, կեանքը վերջ կը դառնէ, կը կենայ: Ատկէ ետք աշխատելու պէտք չես ունենար անշուշտ: Եւ կեանքը կը վերածուի դժոխքի: Նախընտրելի չէ՞ ծախսել ուրեմն: Աւելի հետաքրքրական կ'ըլլայ, կեանքը՝ աւելի տանելի. ընելիք մը կ'ունենաս դէթ:

— Բաւական համոզիչ տեսութիւն է, — Գեղամ բարի նախանձով գիտեց խօսակիցը, որու անկեղծութեան կասկածելու պատճառ չունէր: — Իսկ ծախսել ի՛նչ կը նշանակէ քեզի համար:

— Ծախսել կը նշանակէ ծախսել: Բառին ամբողջական իմաստով: Այսինքն չինայել. գործածել դրամը, փոխանակ վրան թուխսի նստելու: Դուն չե՞ս կրնար ծախսել, ուրիշին տո՛ւր: Ուրիշ մը կրնայ պէտք ունենալ, գործածել: Դրամը պէտք չէ կապուած մնայ. անիմաստ է:

— Այդպէ՞ս, — թերահաւատութեամբ հարցուց խմբագիրը, — պատահած մարդուն տա՞լ:

— Ամէն մարդու դրամ պէտք չէ տալ, որովհետեւ կան մարդիկ, որ չեն հասկնար ըրածդ. սխալ կը մեկնեն, վրադ կը խնդան: Անշուշտ նաեւ կան մարդիկ, որոնք դրամին արժէքը չեն գիտեր: Ասոնք ոչ մէկ ատեն դրամ ունենալու իրաւունք չունին, եւ չեն ալ կրնար ունենալ արդէն: Իսկ այն, որ արժէքը գիտէ, ամէն կերպով իրաւունք ունի դրամ ունենալու:

— Ասոր բարեգործութիւն անունը կարելի է տալ միայն:

— Ծախսելու կերպ մըն է: Կրնաս փոխ տալ, օգնել. պայման չէ որ նուիրես: Տալու կամ նուիրելու ձեւերը կան անշուշտ. երբեմն անուղղակի կերպով, առանց զգացնելու կու տաս: — Նկատելով որ երիտասարդին բաժակը պարպուած էր, Հմայեակ հարցուց. — Ի՞նչ է խմածդ: Կրնամ բաժակ մը հրամցնել քեզի:

— Հարցումը աւելորդ էր կարծեմ, — Տարօնեան խնդաց, — մանաւանդ դրամի գործածութեան մասին տեսակէտդ իմանալէ ետք:

— Հա՛ այդպէս: Սուրիկը ո՞ւր է: Ինչ տղայ է, պէ՛: Բռնես սրտիդ մէջ խոթես զինք:

— Բանաստեղծ է, — կատակեց Գեղամ բայց յետոյ լրջացաւ. — Հայաստանի ամենէն տաղանդաւոր բանաստեղծներէն է:

— Որպէս մարդ, որպէս հայ՝ ըսել կ'ուզեմ:

— Հայաստանի մէջ սքանչելի նոր սերունդ մը հասած է: Հայրենասէր, գիտակից, պատասխանատու:

— Իրենց ոտքին տակ հող ունին. երկրին տէրերն են: Սեպհա-կան հողի ոյժն է:

— Իսկ մենք հոս կը փճանանք, կամ կը փճացնենք մենք զմեզ, — խոստովանեցաւ գրողը:

— Դուն քու պարտականութիւնդ լիովին կը կատարես: Մինչդեռ Հայութեան մեծ մասը հաճոյքի ետեւէն կը վազէ արտասահմանի մէջ:

— Բողբրուն ծառայելով կը կատարեմ պար...:

— Շատ ալ լաւ կ'ընես, — ընդմիջեց երէցը. — մէկը միւսին հետ չփոթելու պէտք չկայ: Մարդ չե՞ս, երիտասարդ չե՞ս: Պիտի կապե՞ս խերն անիծածս:

Գեղամ Տարօնեան՝ յայտնապէս անակնկալի եկած, բարձրա-ձայն խնդաց, թեւերը օդին մէջ պարզած:

— Եթէ կամենամ իսկ, չեմ կրնար:

— Պրաւօ՛: Անկեղծութիւնը կը սիրեմ:

— Բայց ասիկա վերջ չունի:

— Պէտք է ամուսնանաս, ըսի քիչ առաջ:

— Ձեմ ուզեր, չեմ կրնար՝ մանաւանդ այս տարիքէս ետք: Գիտեմ, գիտե՛մ, պիտի հարցնես, թէ ինչո՛ւ: Ամուսնութիւնը կը կաշկանդէ, բարդութիւններ կը ստեղծէ. իսկ իմ պարագայիս կրնայ գրականութեանս արդեւ ըլլալ: Դժուարութիւններու դուռ բանալ:

— Քեզ հասկցող, գրականութիւնը սիրող ազջիկ մը կը զբտնես: Բարեբախտաբար հայ ազջիկներուն մէջ լաւերը կան դեռ, հակառակ անոր որ մեր երիտասարդութիւնը սկսած է փճանալ, այլասերել Լիբանանի մէջ: Յուսահատութիւն կու գայ վրայ երբեմն. ինչ էինք, ինչ եղանք:

— Հարցը աւելի ընտանեկան է, — Գեղամ հարկադրուած բացատրեց: — Ես պէտք է ծնողքիս հետ ապրիմ, տան ապրուստը հոգամ: Այսօր ո՞ր ազջիկը կ'ընդունի: Եւ չես ալ կրնար մեղադրել. ժամանակը, կեանքի ըմբռնումները փոխուած են: Ներկայ պայմաններուն մէջ ազջիկ մը իրաւունք ունի այդքանը ակնկալելու: Այդպէս

դաստիարակուած են. իրենց զիտցածը այս է: Նահապետական կեանքի մասին դադափար չունին... այսօրուան աշխարհին մէջ կարելի չէ յամենայն դէպս:

— Համաձայն չեմ: Այնպէս ալ կարելի է որ, եթէ միայն անձնասէր չըլլան:

— Ներկայ մարդը անձնասէր դարձած է դժբախտաբար:

— Մարդ արարածը միշտ անձնասէր եղած է, նորութիւն չէ: Կարելորդ դաստիարակութիւնն է: Պէտք է հասկցնել իրենց որ նահապետական կեանքը օրհնութիւն է, առաւելութիւններ ունի, աւելի մարդկային է: Եթէ կարծիքս կ'ուզես, անձնասէր մարդը պէտք է այդ անսակ կեանք մը նախընտրէ, իր գործին կու գայ, իր շահերը կը պաշտպանէ:

— Նոյն եղրակացութեան յանդեցանք: Դաստիարակութիւն կ'ըսես: Կարգին ազգային դաստիարակութիւն չենք կրցած տալ իրենց: Ալ ուր մնաց...:

— Դժբախտաբար ճիշդ է ըսածդ — կարծես ակամայ համակերպեցաւ երէցը:

— Եւ ինձի պէս անձ մը, այսինքն գրողը, կոչումով ուսուցիչը հարկադրուած ուսուցչութենէն կը հրաժարի: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր դպրոցները ազգային դաստիարակութեամբ չեն հետաքրքրուած այլեւս, այլ պարզօրէն յաջող աշակերտներ արտադրելով: Առեւտրական հաստատութիւններ են կարծես, որ ստեղծուած են պետական քննութիւններուն լաւագոյն արդիւնքը բերող աշակերտներ արտադրել: Եւ այս իրադրութեամբ համար կը զոհն եւ հայերէն լեզու, եւ Հայոց պատմութիւն, եւ ազգային կրթութիւն:

— Յաւալին այն է որ քեզի պէս գիտակից մարդիկ կը հրաժարին, այսինքն անձնատուր կ'ըլլան:

Տարօնեան, զարմացած կամ դուարճացած, նայեցաւ խօսակիցին եւ հարցուց:

— Ի՞նչ կ'ակնկալէիր որ ընէի:

— Պէտք է պայքարէիր:

— Ինչպէ՞ս:

— Ձեմ գիտեր, բայց պէտք է պայքարէիր: Գրողը, մտաւորականը, ուսուցիչն ու դաստիարակը ես չեմ, որ կարենամ հարցումիդ պատասխանել: Ատիկա քու գործդ է, քու առաքելութիւնդ:

— Վերջացա՞ւ: Ինձի նման քանի մը խեղճ ու կրակ ուսուցիչի պարզիւն զոհողութեամբ ա՞՞զգէ կը փրկուի: Միւսները դեր չունին. այս նոյն առաքելութենէն իրենց բաժին չ'իյնա՞ր: Ազգային իշ-

խանութիւնները, ծնողները, դուն օրինակի համար: Ես առածին ձայնով ի՛նչ կրնամ ընել, ի՛նչ կրնամ փոխել, երբ ամբողջ դրութիւնը, մեր ազգային կրթութեան կարգն ու սարքը հիմնայապատակ քանդած են: Ըստ իրենց՝ յառաջդիմական մարդիկ են, որովհետեւ ժամանակին հետ քայլ կը պահեն, ներկայ կեանքի պարտադրած պայմաններուն եւ փոփոխութիւններուն կը յարմարին եւ մեր կրթական ծրագիրը կը պատշաճեցնեն այդ պայմաններուն: Իսկ ինձի պէս մարդիկ կ'ըլլան յետամնաց, տգէտ, յետադիմական, ազգայնամոլ:

— Երանի ամէն հայ քեզի պէս ազգայնամոլ ըլլայ:

— Ես ազգայնամոլ չեմ: Խալթ են կերեր, — Գեղամ սկսաւ ջղայնանալ: — Բայց եթէ ազգային գերագոյն շահերը պաշտպանելու համար, ազգայնամոլ պիտի կոչուիմ, պատիւ ունիմ:

— Մեր միակ յոյսը Հայաստանն է: Հոն՝ ուղես, չուզես հայ կը մեծնաս ու հայ ալ կը մնաս:

— Հայաստանն ալ իր դժուարութիւնները ունի: Ռուսական ազդեցութիւն, մշակոյթ, ճնշում: Զորն ասեմ, զորն խոստովանիմ: Ասոնք իրենց հարցերն են յամենայն դէպս, եւ ոչ մէկ կերպով մեր հետ կապ ունին: Եթէ այսպէս չըլլար խօսք, մեզի օգտակար պիտի չկարենային ըլլալ, այնքան ատեն որ հոս ենք, օտարութեան մէջ:

— Անչո՛ւշտ: Ատոր համար կ'ըսեմ որ մեր միակ յոյսը Հայաստանն է: Պէտք է հոն հաստատուիլ, ներգաղթել: Փրկութեան միակ կերպն է:

— Ասոնք նախկին գացողները չկրցան պահել: Ներգաղթողները բոլոր կը վերադառնան, եւ բան մը չեն կրնար ընել կամ չեն ուզեր ընել: Այնպէս որ՝ ի՛նչ իմաստ ունի: Նոր, նոր գաղափարներու պէտք ունինք: Զախողած փորձեր կրկնելը ժամաւաճառութիւն է, մսխում՝ մանուանդ մեզի համար, մեր պայմաններուն մէջ: Ժամանակը մեզի դէմ է, չմոռնա՛նք:

— Բայց ուրիշ լուծում չկայ:

— Դուն Հայաստան կ'երթա՞ս, կը ներգաղթե՞ս, — Գեղամ հարցուց յանկարծ:

— Պէտք է ներգաղթեն նախ աղքատները, խեղճերը, կորսուելու կամ փճանալու դատապարտուած հայեր:

— Աղքատ կամ խոնարհ խաւի մարդիկ աւելի կը դիմանան. անոնց ձուլումը շատ աւելի անհաւանական է քան միւսներունը: Ի վերջոյ աղքատ ընտանիքներու դաւակները չէ որ կը կորսուին կամ կ'այլատարին, որովհետեւ յաճախ իրենց կամքին հակառակ նոյնիսկ կառչած կը մնան մեր բարքերուն եւ աւանդութիւններուն: Մի՛նչդեռ

հարուստի դաւակը միշտ փորձութեան ենթակայ է. աւելի ա՛ն վտանգուած է:

— Բայց հարուստը Հայաստան չ'երթար, պէտք չունի, — ըսաւ դորգավաճառը:

— Իշուն գլուխը հոն պահուած է արդէն: Կ'ընդունիմ, կը հասկնամ որ հարուստը ներգաղթելու պէտք չունի: Անիմաստ է նոյնիսկ, օգտակար չէ. նպատակի չի ծառայեր, եւ հարց չի լուծեր: Իսկ աղքատը Հայաստանին բն կրնայ ըլլալ միայն:

— Ի՛նչ հասկցանք:

— Ըսածս այն է որ Հայաստան մեր հարցը չի կրնար լուծել: Եթէ իրենք իրենց տէր կարենան ըլլալ, մեծ դործ կատարած կ'ըլլան. հոն եղածը կը փրկեն դէթ:

— Եթէ այդպէս է, այսինքն եթէ Հայաստան չի կրնար օգտակար ըլլալ, ո՞վ պիտի ... ո՞վ կրնայ:

— Մե՛նք:

— Մենք կ'ըսես, — բորբոքեցաւ Հմայեալը Գասրաբեան, — մինչ առաջին նահանջողը դուն ես:

— Այո՛, մենք ըսի: Յոգնակի: Առանձին անհատը ոչինչ կրնայ իրագործել: Մեզի հաւաքական եւ ծրագրուած դործ կատարելու գիտակցութիւնը կը պահի, կամքը:

— Ամէն մարդ նոյնը կ'ըսէ, բայց տեղէն շարժող չկայ:

Յուսահատութեան նոյն անտանելի զբաղումը ճնշեց վրան, ու Գեղամ Տարօնեան ինքնիրմէ դժգոհ, մտածեց թէ ինչո՞ւ կը խօսէր այս մասին: Ինչո՞ւ կը վիճէր այս այլապէս համակրելի մարդուն հետ: Տարիներէ ի վեր այս նոյն անել հարցականին առջեւ կանդ առած, ինքն իրեն հետ կը կուտէր, ինքն իրեն դէմ կը պայքարէր՝ դառնացած, լուռ, վերաւոր: Այս մարդը իր անցեալն էր, իր խի՞ղճը: Ի՛նչ կ'ուզէր իրմէ ... այդ ալ այդ դժոխքին մէջ: Ո՞վ էր ինք, ի՛նչ կը ներկայացնէր: Ինք իր պարտականութիւնը կը կատարէր, կը գրէր, կը դասախօսէր նոյնիսկ երբեմն: Փախուստի իր կերպը, վճռեց ահամայ: Ինքզինք չէր կրնար արդարացնել, որքան ալ փորձէր պատճառաբանել: Սակայն սա Հմայեալ Գասրաբեան կոչուած դորգավաճառ հայը, որ իրմէ հաշիւ կը պահանջէր, ի՛նք ինչ կ'ընէր: Եւ՛

— Դուն ի՛նչ կ'ընես, — հարցուց անզալարբար:

— Իրաւունք ունիս: Բոլորս հաւասար չափով պատասխանատու ենք:

Գասրաբեանի անկեղծութիւնը կամ պարզութիւնը հանդուստայուց զինք, ու նոյնիսկ ժպտեցաւ: Բնական, պարզ, միամիտ, երե-

խայի նման մարդ մըն էր: Ոչ չքմեղանք կար ըսածին մէջ, եւ ոչ ինքնապաշտպանութեան կամ ինքնարդարացման ճիգ: Ան թէեւ ամուսնացած էր, ընտանիք կազմած, զաւակներ եւ թոռներ հասցուցած, եւ՝ կատարած իր պարտականութիւնը: Անուղղակի կերպով, անզիտակցարար կամ բնականաբար ծառայած էր: Եւ հայ մնացած էր՝ հակառակ իր հարստութեան: Մոլեռանդ հայ: Ազգային հարցերով հետաքրքրուած հայ, որ ծանօթ էր մեր դրականութեան ու կը հետեւէր նոյնիսկ նորերու գործերուն: Մանօթ էր ի՛ր դրականութեան, Սուրբիկի, ու վստահարար՝ միւս բոլորին:

Իսկ ինք ի՛նչ ըրած էր ցարդ: Ի՛նչ կերպով ծառայած էր: Գրած էր, կը գրէր: Բայց խուսափած էր միւս բոլոր պատասխանատուութիւններէն, ու փոխանակ ամուսնանալով ընտանիք կազմելու, կեանքը կը փճացնէր այս վատառողջ նկուղներուն մէջ: Ինչո՞ւ կը գրէր յամենայն դէպս, որո՞ւ համար: Ինքն իրեն համար միայն թերեւ: Որովհետեւ ուրիշ ոչինչ կրցած էր կամ ուզած էր սորվիլ, եւ գրած էր՝ նկատելով որ ուրիշ ոչինչ գիտէր: Բայց Հայութիւնը գրականութեան պէտք ունէ՞ր յամի Տեառն 1974-ին: Հայութիւնը, մանաւանդ Սփիւռքը, դրականութեամբ պիտի չփրկուէր, կարելի չէ՛ր փրկել: Եւ ի՛նչ դրականութիւն: Աղքատ, խեղճ, անջիղ եւ աննկարագիր՝ ճիշդ դայն երկնողներուն նման:

Վերջին երկու հազար տարիներուն գէթ՝ հայ մշակոյթը մեր գոյութիւնը պահպանած ըլլալով հանդերձ, պիտի չկարենայ փրկել մեզ այսօր: Եթէ նոյնիսկ նոր յաղթանակներ արձանագրէ: Որովհետեւ գոյութեան պայքարին բնոյթն իսկ փոխուած է: Իսկ մենք մեզի հետ կը խօսինք միայն, մենք մեզի համար՝ անտեսելով աշխարհն ու ներկայ իրականութիւնը: Եւ կ'ակնկալենք որ աշխարհը լսէ մեզ, հասկնայ, զնահատէ ու ծունկի դայ մեր առջեւ: Մինչդեռ մենք ծունկի ենք արդէն — ապիկար, անզօր, տկար, ստրուկ: Բայց չենք ընդունիր իրականութիւնը ու կը յոխորտանք: Վերածնած, նուաճումներ արձանագրող հայրենիք ունինք... «Սեղանն է առատ, դիմացն Արարատ»: Մինչդեռ ոչ սեղանն է առատ, իսկ Արարատն ալ՝ դիմացն է, այո՛, պարտադրուած սահմանէն անդին կալանաւոր: Բայց վերածնած է հայրենիքը: Ընդունինք կամ ոչ: Հայրենիք, որ կը ծառայէ առաւելարար ուրիշին՝ հլու եւ հնազանդ: Եւ անշուշտ... նոր նուաճումներ կ'արձանագրէ — ո՛վ կրնայ կամ կ'ուզէ ուրանալ — բայց ինքզինք կը սպառէ նաեւ, ինքզինք կ'ուրանայ: Հերոսարար կամ ստրկամտութեամբ: Քրիստոնէական նուիրումով ու ներողամտութեամբ: Աշխարհի առաջին քրիստոնէայ ժողովուրդը, եւ այսօր՝ վեր-

ջինը նաեւ: Միակը: Իսկական քրիստոնէական հաւատքով կամ ոչ-խարամտութեամբ:

Վերածնած ենք նաեւ Սփիւռքի մէջ, այսինքն չենք թաղուած, ու հայկական անուններ կը գործածենք տակաւին կարգ մը երկիրներու մէջ: Ու հայերէն նոյնիսկ կը խօսինք այս նոյն երկիրներուն մէջ, ու հոս եւս նուաճումներ կ'արձանագրենք: Գործարաններ կը հիմնենք, տուեալ երկիրներու ճարտարարուեստը կը զարգացնենք, դիտնականներ եւ արուեստագէտներ կը նուիրենք անոնց, հարստութիւն կը դիզենք, եւ անպայմանօրէն՝ կ'ըլլանք բժիշկ, երկրաչափ, փաստաբաւ, խանութպան: Բիւր հազարներով: Եւ արուեստներ ու գրականութիւն կը մշակենք անշուշտ: Այլապէս ինչպէ՞ս պիտի ունենայինք մշակոյթ: Որու պէտք չունինք այսօր, գէթ առժամապէս: Մեր ունեցածը եթէ կարենանք ծանօթացնել աշխարհին, ծախել այսինքն, շատ աւելի օգտակար գործ կատարած կ'ըլլանք: Իսկ անպայմանօրէն պէտք ունինք մշակութայինէն տարրեր զէնքերու, որոնցմէ կախեալ պիտի ըլլայ մեր փրկութիւնը, մեր գոյութիւնը:

Այլապէս գրելը իմաստ չունի, չի՛ կրնար ունենալ: Կարելի չէ՛ նախ եւ առաջ: Ինչպէ՞ս գրել ժողովուրդի մը համար, որ գոյութիւն չունի: Այս ընթացքով հարիւր տարի ետք հայերէն ո՞վ պիտի կարդայ: Եւ ո՛ր երկրին մէջ: Ամերիկայի՞, Գանատայի՞, Աւստրալիո՞յ, Ֆրանսայի՞, թէ՛ Ռուսաստանի մէջ: Հայաստանի մէջ ընականաբար: Բայց ո՞ւր է Հայաստանը: Այն փոքր հողամասը, զոր որպէս Հայաստան պարտադրած են մեզի, մեր Հայաստանը չէ: Օտարին ստեղծածն է ատիկա՝ օտարին համար: Հայոց հայրենիքին լուսանցքը նոյնիսկ չէ ատիկա: Բայց կ'ակնկալեն մեզմէ որ ապրինք լուսանցքի վրայ. այլ մանաւանդ կը պարտադրեն: Եւ մենք պէտք է շնորհակալ ըլլանք ասոր համար, եւ ուրախանանք որ կը փառարանեն մեր հայրենասիրութիւնը, մարդասիրութիւնը, եւ անշուշտ՝ մեր իսկական, անսխալական քրիստոնէայ ըլլալը:

Նախընտրելի է սխալիլ անգամուան մը համար եւ մերժել այս բոլորը:

Մերժել՝ դրականութիւն եւ արուեստներ մշակելու միամտութիւնը, մշակոյթը, քաղաքականութիւնը, ողորմութիւնը, ստրկամտութիւնը, Քրիստոնէութիւնը եւ միւս բոլոր վարդապետութիւնները:

**

Ուչ գիշերին, ժամեր ետք, Հիլտայի մարմինն գեղեցկութիւնը

կամ մշակութային արժէքը սերտած ատեն, զգաց եւ հաստատեց անոր
զերակայութիւնը: Պայքարեցաւ անոր դէմ, յողնեցաւ, քրտնեցաւ,
տքնեցաւ ու հսկեց՝ անոր ուժասպառ անկումէն ետք իսկ, բայց պար-
տուեցաւ: Գեղամ Տարօնեան կոչեցեալ հայ զրոյը, մտաւորականը,
ուսուցիչը, ըմբոստը պարտուեցաւ՝ պայքարելով հանդերձ: Մինչ ան
խաղաղօրէն ննջեց՝ ապահով եւ ինքնավստահ: Բաւարարուած: Յաղ-
թական:

Հիլտա հրեշտակի նման կը քնանար, մինչ ինք կը հսկէր: Ի՞նչ
միամիտ պատկեր, մտածեց Գեղամ: Ո՞ր երանելին ըրած էր այս
զիւտը եւ կինը նմանցուցած հրեշտակի: Իսկ ինք ի՞նչ էր: Սատա-
նա՞յ: Երանի: Միծաղելի էր: Ըստ իրեն ինք, այսինքն Սաղայիլը,
նուաճած էր այս հրեշտակը եւ հպատակեցուցած դայն իրեն: Բայց ան
կը քնանար, մինչ ինք սարսափահար կը դողար: Փաստօրէն, բառացի
իմաստով, այսինքն բառին իսկական առումովը կը դողար: Ինչո՞ւ:
Ինչ պատահած էր իրեն: Կը վախնար անոր մարմնին հպումէն: Ան, որ
զիտապատ ինկած էր ու յանձնուած իրեն, հոս, այս անկողնին մէջ,
ուր ինք կ'ըլլէր: Կ'ըլլէր: Բայց կ'ուզէր դուրս գալ, հեռանալ փոր-
ձութեան եւ ճակատումի այս դաշտէն, որ անոր քաղցրարոյր ան-
կողնին էր, զիտէր: Այո՛, կը սարսափէր անոր մարմնին հպումէն,
որովհետեւ չէր կրնար զիմանալ, ու կ'այրէր բայց կը դողար՝ ճիշդ
տենդահար կամ զիւահար մարդարէի մը պէս:

Ինք՝ նորօրեայ մարդարէ: Որ բարձրացած անոր մարմնին ան-
հասանելի կատարներուն վրայ, կը դողար կատաղութենէն, յուսա-
հատութենէն, ու կը փրփրէր, կը յորդէր անդսպելի հեղեղի մը պէս
ու կը փշրուէր անոր լանջերուն վրայ:

— Գեղմէ վախնալու սկսայ, զիտե՞ս, — խօսեցաւ հրեշտակը
քիչ ետք եւ համբուրեց զինք այտերէն:

- Դուն սատանայէ՛ն չես վախնար:
- Ի՞նչ կը խօսիս:
- Հետաքրքրական կ'ըլլայ յամենայն դէպս:
- Գինա՞վ ես:
- Միայն զինո՞վ: Սատանան ես եմ, չե՞ս զիտեր:
- Բայց քեզմէ վախնալու սկսայ, թէ եւ կ'ըսես, թէ սատանա-
յէն չեմ վախնար: Ինչպէ՞ս կ'ըլլայ:
- Խօսքով, — Գեղամ ժպտեցաւ մութին մէջ, մասամբ խաղա-
ղած:
- Ի՞նչ ըսել կ'ուզես:
- Ես քեզմէ պէտք է վախնամ, — խոստովանեցաւ սատանան. —

դուն խօսքով միայն կը վախնաս: Իրականութեան մէջ վախի մասին
գաղափար չունիս:

— Ինչո՞ւ ինձմէ կը վախնաս, — լրջօրէն հետաքրքրուեցաւ
աղջիկը:

- Եթէ այսպէս շարունակուի, զերիդ կը դառնամ:
- Գիտե՞ս ինչը կը սիրեմ մէջդ: Անկեղծութիւնդ:
- Ուրեմն կ'ընդունի՞ս ըսածս:
- Ուրախութեամբ: Այդպէս աւելի ապահով կը զգամ: Բայց
եւ այնպէս վախցնելիք ես:
- Ինչո՞ւ:
- Գաղանի կը նմանիս: Գաղանի ախորժակ ունիս:
- Կամ մարդկային տկարութիւն:
- Առողջութեան նշան է, — եղբակացուց Հիլտա եւ ապա հար-
ցուց: — Ի՞նչ դորձ կ'ընես որ այսպէս առողջ ես:
- Քաղաքին կ'իները կը հալածեմ:
- Լուրջ: Ի՞նչ կ'աշխատիս:
- Պաշտօնեայ եմ, — խուսափելու լաւագոյն ճիշդ ըրաւ Գե-
ղամ. — մեծ հաստատութեան մը մէջ:
- Ժազոպը ճիշդ անունդ չէ անշուշտ:

Հարցաքննութիւնը սկսաւ, մտածեց երիտասարդը: Ռազմա-
վարութեան պէտք է զիմեւ: Կողմնակի դարձաւ անկողնին մէջ, մինչ
քիթը փնտոնեց աղջկան ստինքները: Հոտուրտաց: Սպասեց: Անմա-
հալութեան պտուղները: Իրը թէ իրմէ կը վախնար, բայց հիմա կը
ժպտէր: Կը զգար, վստահ էր: Որովհետեւ մարմինը ամբողջ ցնծու-
թեան մէջ էր: Ախորժակ, ախորժակի մասին կը խօսէր: Ինչպէ՞ս
պիտի կարենար յազեցնել այս վազը: Մինչդեռ զինք զազան կոչած
էր:

- Ձեւ ուզեր ըսել, — խօսեցաւ վազը, — բայց ես զիտեմ
արդէն:
- Ի՞նչ զիտես:
- Անունդ:
- Անշուշտ: Եթէ չգիտնայիր, պիտի զարմանայի: — Պէտք է
շարունակէր ռազմավարութիւնը:
- Գեղամ ի՞նչ կը նշանակէ:
- Լեռնաշղթայի մը անունն է:
- Ստախօս: Ինչպէս ալ կը հնարես անմիջապէս:
- Անկեղծ: Իմ անունս ալ Գեղամ է անշուշտ: Բայց հետա-
քրքրական է զիտնալ, թէ ինչպէս դու շահեցիր:

Հիլտա խնդաց, թերեւս վերաւորուած: Եւ ըսաւ:

— Կեղծաւորութիւնը չի վայլեր քեզի: Նախ համոզիչ չէ, որովհետեւ կեղծել չես գիտեր: Անուն մը ինչպէ՞ս կարելի է գուշակել:

— Որմէ՞ իմացար, — Գեղամ հարցուց պարտուած:

— Երէկ գիշեր բարեկամներդ հարիւրաւոր անդամներ կրկնեցին անունդ: Անկարելի է որ մոռնամ: Մինչեւ հիմա ականջներուս մէջ կը հնչէ... դեղեցիկ անուն է պէտք է ըսել. երաժշտական, նուրբ, հաճելի, գրաւիչ: Ասկէ առաջ չեմ լսած. թերեւս այդ է պատճառը:

— Մականունս ալ գիտես ուրեմն:

— Ի՞նչ կը խորհիս: Ի՞նչեք իմացայ քու մասիդ: Անշուշտ: Գեո ինչե՞ր գիտեմ: Պարոն բանաստեղծ:

— Բանաստեղծը միւսն է, Սուրբիկը: Ես բանաստեղծ չեմ: Կը սխալիս:

— Բայց կը հասկնամ. իրաւունք ալ ունիս թերեւս: Հիմա կը հասկնամ, թէ մեր հայ յաճախորդները ինչու պաշտօնապէս կը վարուին հետդ:

— Երեւակայութիւն է: Ոչ ոք կը ճանչնայ զիս: Բարեբախտաբար: Եւ ես բանաստեղծ չեմ ըսի:

— Համեստութիւնդ գնահատելի է, — Հիլտա խածաւ զինք ծոծրակէն, — բայց ինչ կարելի է ընել. զիս չես կրնար խարել: Ինձմէ կէթ պէտք չէ ծածկէիր:

— Հակառակ անոր որ դուն իմ մասին ամէն ինչ գիտես, իսկ ես անունդ նոյնիսկ չեմ գիտեր, Օրբորդ Մաղիկեան:

Աչքերը բաց պահելու ճիգ ըրաւ, բայց քնացաւ՝ իր իսկ բաներուն երաժշտութեանը յանձնուած: Հիլտա զարմացած դիտեց զինք մութին մէջ, պահ մը ենթադրելով որ կը կատակէր, եւ յետոյ խանդաղատանքով ծածկեց ուսերը սա տարօրինակ մարդուն, զոր կը պաշտէր — հիմա վստահ էր այլեւս:

Ժ.

Մուշեղ Սարգիսեան հիւրասրահի բազկաթոռներէն մէկուն մէջ ընկղմած, քրոջը կը սպասէր: Մայրը քանի մը քայլ անդին, թէեւ թաղարններով զբաղած, գոհունակութեամբ զինք կը դիտէր աւելի, ու չէր կրնար հեռանալ կերպարանափոխուած եւ զրեթէ անճանաչելի

զարձած զաւկին մօտէն: Սովորականին պէս նիհար ու նուրբ, իր նախկին Մուշեղն էր ան դարձեալ, բայց զարմանալիօրէն փոխուած էր նաեւ՝ սափրուելէ եւ ամբիւրեւելէ ետք: Երկարած մազն ու մօրուքը եւ այդ աղտոտ զգեստը վրայէն նետելէն ետք, անձանօթ երիտասարդ մը կը տեսնէր անոր մէջ հիմա: Երկու տարուան ընթացքին՝ թափթըփած, աղտոտ, խղճարի խրտուելիակ մը տեսնելու վարժուած էր ըստ երեւոյթին, եւ զարմանալի չէր ուրեմն, որ չճանչնար այս Մուշեղը: Իսկականը, հարազատը:

Ապրիլ ամիսը թէեւ հասած իր աւարտին, թաց էր տակաւին անընդհատ տեղացող անձրեւէն, որ կ'ողողէր Պէյրութի փողոցները, եւ դարունը կը դարձնէր հեռաւոր, անհասանելի երազ մը: Նոյնի Սարգիսեան նայեցաւ պատուհանէն դուրս, ուր պարտէզը ծաղկած կը պսպար՝ հակառակ տեղացող անձրեւին: Նարնջենիները բնութեան քմայքներուն անձնատուր, իրենց սպիտակ ծաղիկները կը թափէին զմայլելի համբերութեամբ մը, եւ իրենք եւս կը սպասէին ուշացող արեւին: Պատկերը աւելի եւս ընկճեց զինք: Կ'ողջէր խօսիլ տղուն հետ, յայտնել անոր իր զգացածը, ուրախութիւնը, մտածումները: Այնքա՞ն ըսելիք ունէր. բայց Մուշեղ բողբոլի տարբեր աշխարհի մէջ էր: Չէր իսկ նկատեր զինք հաւանաբար: Տարիներու ընթացքին փոխուած, սակաւախօս երիտասարդ մը դարձած էր, եւ ինք կորսնցուցած էր իր մէկ-հատիկ որդին: Միշտ լուռ եղած էր ան — ինք նամփոփ, քաղաքավար ու երկչոտ — բայց վերջին երկու տարիներուն անդարձօրէն հեռացած էր իրմէ՝ օտարութեան վիճ մը ստեղծելով իրենց միջեւ: Նոյն քաղաքավար, փափկանկատ ու մեղմ տղան էր, ու կը խօսէր իր հետ բնականաբար, սակայն կը խուսափէր նաեւ իրմէ: Գիտէր, կը զգար: Համոզուած էր, թէ ան զինք սիրելով հանդերձ, իր խօսածներով չէր հետաքրքրուած. յաճախ չէր լսեր իսկ ըսածը, կամ չէր հակնար: Այնքան խղճարի, հատարակ անձ մը դարձած էր ինք անոր համար: Ու միայն զիրքերը կրնար մեղադրել հիմա: Գիրքերը իր որդին զողջած էին իրմէ, քանդած զայն, փճացուցած, օտարացուցած:

— Որո՞ւ կը սպասես, — մօտեցաւ անոր եւ հարցուց, այլեւս ինքզինք զսպելու անկարող:

Տղան հարցական, յանդիմանող աչքերով նայեցաւ մօրը: Ի՞նչ ըսել կ'ուզէր, ինչի մասին կը խօսէր:

— Ձեմ գիտեր, — ըսաւ: — Անպայման մարդո՞ւ մը պէտք է սպասեմ:

— Տարօինակ բաներ կ'ըսես, — ակամայ խնդաց մայրը: — Սո-

վորաբար մեզմէ մէկը տեսնելու համար կու գաս տուն:

Մուշեղ յիշեց, թէ Սալբիին կը սպասէր, բայց ըսաւ:

— Վերջացաւ: Ասկէ ետք տունն եմ այլեւս:

— Օ՛, սքանչելի, — անակնկալօրէն յուզուեցաւ Նոյեմի Սարգիսեան: — Հայրդ երբ լսէ, աշխարհի ամենէն ուրախ մարդը պիտի ըլլայ, վստահ եմ:

— Սալբին ինչո՞ւ ուշացաւ: Ժամը հինգը վ'անցնի արդէն:

— Հաւանաբար գրադարանն է: Յաճախ հոն կը մնայ մինչեւ ուշ տուն, դասերը պատրաստելու համար: Ուր որ են երկուքն ալ կու գան քիչ ետք. կէս ժամէն հայրդ ալ հոս կ'ըլլայ:

— Թերեւս առաջ եթէ քեզի խօսիմ աւելի լաւ կ'ըլլայ:

— Ի՛նչ կայ որ, — մայրը հարցուց մտահոգուած:

— Որոշեցի կղերական ըլլալ:

— Դո՞ւն: Վարդապետ այսինքն:

— Վանք պիտի մտնեմ: Տխուղսը զիս չի հետաքրքրեր: Գոհ չե՞ս:

— Ինչո՞ւ գոհ պիտի չըլլամ, տղա՛ս, բայց քեզի պէս... Ի՛նչ պատճառ ունիս վանական ըլլալու:

— Կոչումէն աւելի լաւ պատճառ: Կը զգամ, համոզուած եմ, թէ ծառայելով միայն կրնամ փրկել ինքզինքս:

— Ինչէ՞ն պիտի փրկես դուն քեզ: Փառք Աստուծոյ, խելքը-դլուխը, խելացի, բարեկիրթ, պատուաւոր երիտասարդ ես, մարդու վնասակար չես եղած մինչեւ այսօր:

— Ես ինձմէ, — Մուշեղ փորձեց կատակել. — ըստ ձեզի դէթ փրկուելու պէտք ունիմ:

— Գիտես, թէ ըսածդ ճիշդ չէ: Մոտիքէդ աւելի ոչ ոք կրնայ սիրել քեզ:

— Կասկած չեմ ունեցած երբեք: Յամենայն դէպս կատակ էր. կը կատակէի, մա՛մ: Բայց չե՞ս ուզեր որ տղադ կղերական ըլլայ:

— Անկեղծօրէն ոչ:

— Գոնէ դուն... քեզմէ չէի ակնկալեր: Քեզի պէս հաւատացեալ կի՞ն մը: Թէ սխալած եմ արդեօք:

Տիկին Սարգիսեան յիսուն տարիներու բերք զգաց յանկարծ, եւ առաջին անգամ ըլլալով թերեւս յուսահատեցաւ: Որդին իրաւունք ունէր հաւանաբար: Ինք կրթած էր զինք, աղօթել սորվեցուցած, անձամբ հսկած էր անոր կրօնական դաստիարակութեան՝ հարիւրաւոր առականը պատմելով ու կրկնելով հին եւ նոր Կսակարաններէն: Հետեւողականօրէն, մինչեւ պատանեկան տարիքի հասնիլը:

Ինչպէ՞ս բացատրէր իրեն, թէ մայր մը կրնար անձնասէր ըլլալ նաեւ, հաւատացեալ ըլլալով հանդերձ: Իր մէկ-հատիկ մանչ զաւակն էր, միակ յոյսը, երազը, սկարութիւնը՝ կեանքի մէջ: Հաճոյքը: Այո՛, այս տարիքին իր միակ հաճոյքը, նպատակը, երջանկութիւնը՝ իր զաւակներն էին, իր ընտանիքը: Կեանքի մէջ ուրիշ ի՛նչ ունէր: Ինչպէ՞ս բացատրէր իրեն, թէ կի՞ն մը յիսուն տարեկանէն ետք առանձին կը զգար, կը սկսէր վախնալ ու մխիթարութիւն փնտռել:

— Հօրդ միակ որդին ես, — խօսեցաւ ի վերջոյ ակամայ. — յաջորդը, ժառանգորդը: Գործին ո՞վ տէր պիտի ըլլայ, որո՞ւ պիտի մնայ:

— Այդ բոլորը զիս չեն հետաքրքրեր: Ոչ գործը, ոչ հարստութիւնը... Եթէ յոյսերնիդ վրաս գրած էք, կը ցաւիմ որ յուսախար պիտի ընեմ ձեզ:

Մուշեղ կանգնեցաւ ստեղծի, նայեցաւ պատուհանէն դուրս, եւ ստուգելէ ետք թէ անձրեւը դադրած էր, ուղղուեցաւ դէպի տան արտաքին դուռը:

— Ո՞ւր կ'երթաս:

— Ձեմ ուշանար: Բարեկամ մը պէտք է տեսնեմ:

— Հօրդ խօսի՞մ, — խորհրդաւոր ժպիտ մը կար մօրը աչքերուն մէջ:

— Մէկ-հատիկ ես, — երախտադիտութեամբ դրկեց մայրը ու համբուրեց անոր այտերը: — Շատ շնորհակալ կ'ըլլամ: Գործս կը զիւրացնես այս կերպով:

Արցունքները զրան փակուելուն կը սպասէին ըստ երեւոյթին: Տան մէջ առանձին էր, եւ ազատօրէն կրնար լալ ու պարպուիլ: Թեթեւալ: Ազատ արձակել զպացումները, լալ, լա՛լ, հանդարտիլ եւ ուրախանալ ի վերջոյ: Ուրախութեան արցունքներ էին ասոնք, դիտէր, եւ շնորհակալ էր որ կը հոսէին այսպէս քաղցրութեամբ ու զինք լեցնելով բերկրանքով: Տարօրինակ: Ի՛նչ երջանկութիւն էր ասիկա:

Մուշեղ աճապարանքով մտաւ զրասնեակէն ներս ու նկատելով որ ժազը հոն չէր, քարտուղարուհիին հարցուց:

— Ո՞ւր է:

— Հօրդ հետ դուրս ելաւ: Ժամագրութիւն մը ունէին կարծեմ:

— Պիտի վերադառնա՞ն:

— Ձեզ խորհիր, — քարտուղարուհին դիտեց այս կերպարանա-
փոխուած, գեղեցկացած խենթը, որ ամէն օր նոր անակնկալով մը
կու գար, ժամեր կը խօսէր, կը ներշնչուէր, լուռ կը նստէր երբեմն,
երբ Պր. Առաքելեանը զբաղած ըլլար, ու նոյնիսկ կ'օգնէր իրեն ան-
հրաժեշտութեան պարագային: Բայց աւելի յաճախ կը կարդար, ա-
ռանց վրդովելու կամ անհանգստանալու, մինչեւ որ ժազ վերջացնէր
աշխատանքը: Անոնց խօսակցութիւնը այնքան հետաքրքրական էր,
որ կամայ թէ ակամայ կը մոռնար աշխատանքը ու կը հետեւէր անոնց
զրոյցին, որ վէճի կը վերածուէր երբեմն:

— Օ՞րը գտաւ:

— Ես կրնամ օգտակար ըլլալ, — աղջիկը հարցուց չարու-
թեամբ, բայց աչքերը չկրցաւ հեռացնել անոր աչքերէն, որոնց գերին
դարձած էր ամիսներու ընթացքին: Մանաւանդ այսօր արտակարգ
փայլ մը ունէին. տազնապահար, բոցափառ, անհանդարտ ու գեղե-
ցիկ: Ուշադրաւ երիտասարդ մը դարձած էր պարզօրէն:

— Գաղափար մըն է, — Մուշեղ պատասխանեց ակներեւ գո-
հունակութեամբ:

— Սիրով: Ի՞նչ կրնամ ընել:

— Հետո դուրս ելլել:

Շուշանիկ Բարսեղեան թերահաւատութեամբ քննեց երիտա-
սարդին արտայայտութիւնը եւ հաստատեց, թէ չէր փատակեր: Բայց
անհաւատալի էր: Ձինք չէր նկատած իսկ մինչեւ այսօր. ու վստահ
էր, համոզուած, թէ կին արարածով չէր հետաքրքրուած երբեք:

— Մասնաւոր ծրագիր մը ունի՞ս, — հարցուց յետոյ:

— Տեղ մը կը նստինք, կը խօսինք: Պէտք է խօսիմ, կարծիքդ
առնեմ:

— Ի՞մ կարծիքս: Ինչի՞ մասին:

— Կարծիքդ կը յարգեմ, — Մուշեղ Սարգիսեան խօսեցաւ խան-
դալառուած: — Լուրջ աղջիկ ես, գիտեմ, ու քեզ շատ կը հաւնիմ:
Քալե՞նք:

Քարտուղարուհին անզգաբար, առանց կարենալ դատելու,
մեքենականօրէն փակեց դրասենեակը, ստուգեց, թէ միւս բոլոր դռո-
ները կղպուած էին, եւ հետեւեցաւ գործատիրոջ որդւոյն: Իսկապէս
խենթ էր, ակամայ մտածեց յետոյ, երբ սանդուղներէն վար փիջ-
նէին, թէ պարզապէս տարօրինակ տղայ մը: Կամ արդեօ՞ք իրեն հան-
դէպ մասնաւոր զգացում մը ունէր զոր գաղտնի պահած էր մինչեւ
այսօր: Կարելի՞ էր: Բայց հաւանական չէր. նայուածքը այնքան բարի
էր միշտ, այնքան անմեղ:

— Երանի ժազը հոս ըլլար. զինք պէտք էր տեսնէի: Մուշեղ
չարունակեց խօսիլ անվրդով: — Հոյակապ մարդ է, գիտե՞ս: Բայց
դուն իր հետ կ'աշխատիս. աւելի բաւ պէտք է ճանչնաս զինք: Նա-
խանձելի ես: Կը նախանձիմ քեզի, անկե՛ղծ. ինչո՞ւ կը խնդաս:

— Նախանձելուդ: Կրնաս մեր հետ աշխատիլ, եւ այն ատեն
միշտ միասին կ'ըլլաս եւ ուղածիդ չափ կը խօսիս հետը, կը կշտանաս:

— Գործին արդելք կ'ըլլամ: Ձե՞ս կարծեր: Բնաւ մտքէս չէր
անցած, զարմանալի է: Թէեւ հարս կրնայ ուրախ ըլլալ միայն: Սա-
կայն կարելի չէ:

— Ինչո՞ւ, — Շուշանիկ անկեղծօրէն հետաքրքրուեցաւ: Անդ-
բարդաճաւ որ իր փափաքն էր այս, եւ պիտի ուզէր անոր կողքին ըլլալ
միշտ, ներկայութիւնը վայելել:

— Առեւտուրով չեմ հետաքրքրուած, եւ օգտակար չեմ կրնար
ըլլալ յամենայն դէպս:

— Կը սորվիս: Քեզի պէս ուշիմ երիտասարդ մը...:

— Չ'ըլլար, — բարձրաձայն մենախօսեց Մուշեղ: — Ձեմ հե-
տաքրքրուած ըսի:

— Ձեր հաստատութիւնն է: Շահդ կը պահանջէ որ գործը ձեռք
առնես, աէր ըլլաս:

— Դո՞ւն ալ, — երիտասարդը կարեկցութեամբ քննեց կողքին
քալող աղջիկը, որ իրենց պաշտօնեան էր:

— Պատանեկան երազներով տարուած ես մինչեւ այսօր, հա-
կառակ անոր որ երիտասարդ ես արդէն: Առեւտուրով չհետաքրքրուիլ,
նիւթականը արհամարհել՝ ասոնք բոլոր տղայական խօսքեր են: Քանի
մը տարի ետք կը փոխուիս, վստահ եմ:

— Քանի՞ տարեկան ես:

— Աղջիկներու տարիքը չեն հարցներ:

Փողոցը երեկոյեան այդ ժամուն խճողուած էր, եւ դժուարու-
թեամբ կրնային քայլ պահել իրարու կողքին: Սկիզբար վաղք մըն էր
որ զիրենք եւս կը քչէր հոսանքին հետ ու կը հեռացնէր երբեմն ի-
րարմէ:

— Ո՛ւր կորսուեցար:

— Այսպէս քալելով տեղ չենք կրնար համնիլ, — ըսաւ Շուշա-
նիկ, — եթէ նպատակ ունինք տեղ հասնելու անշուշտ:

— Ինքնաշարժ մը առնենք: Թերեւս տարիքով փնձմէ աւելի մեծ
եւս, — ընդհատուած խօսակցութիւնը շարունակեց Մուշեղ, — աւելի
հասուն. եւ քու մտածածդ քեզի համար ճիշդ է հաւանաբար: Բայց

մարդիկ իրարու չեն նմանիր, տարբեր հետաքրքրութիւններ կրնան ունենալ:

Կանգ առին մինչ այդ եւ սպասեցին լուռ համաձայնութեամ մը:

— Մարդիկ բոլոր կ'ուզեն երջանիկ ըլլալ, — ըսաւ քարտուղարուհին, որքան ալ իրարմէ տարբեր ըլլան:

— Իսկապէս խելացի աղջիկ ես: Ըսածդ շատ ճիշդ է, տեղին: Ձե՞ս կարծեք որ կրնամ այլ կերպով երջանիկ ըլլալ: Ճիշդ ասոր համար ընտրած ուղիս պէտք է հետեւիմ:

— Յուսարար կ'ըլլաս: Ունեցածդ պատրանք է: Կղերական ըլլալով աշխարհը պիտի փրկես կը խորհիս:

— Կարդ մը մարդիկ կրնան իսկապէս հաւատք ունենալ, — երիտասարդը խօսեցաւ ինքնաշարժին մէջ:

— Ոչ ոք արգելք կ'ըլլայ քեզի որ հաւատաս: Սակայն պէ՞տք է ատկէ դուրս սմէն ինչ ուրանալ, չտեսնել, չընդունիլ: Կեանքի մէջ ուրիշ իրականութիւններ ալ կան, գիտե՛ս: Հաւատք ունիս ըսելով դուն քեզ զրկելու, անձնասպան ըլլալու պէտք չունիս: Տրամաբանական չէ: Մանաւանդ այս տարիքիդ: Դուն քեզի առիթ տուր, ժամանակ տուր, կեանքը ճանչցիր, որպէսզի կարենաս բազդատել, զանազանել եւ յետոյ որոշել:

— Իմս նուիրուելու, ծառայելու փափաք է: Եւ յետոյ՝ կեանքը ինչպէ՞ս կը ճանչնան: Պէտք է անպայման մե՞ղք դործեմ, շոյալուծութեան, զխուժեան մէջ՞ ապրիմ, որ ատկէ ետք խելքս գլուխս գայ: Ի՞նչ տեսակ տրամաբանութիւն է ասիկա:

— Աւելի լաւ կ'ըլլայ: Որ չզղջաս յետոյ:

— Կեանքը ինչպէ՞ս կը ճանչնան:

— Ապրելով, — Շուշանիկ պատասխանեց քաջալերուած, — եւ ոչ թէ պահուրտելով, փախուստ տալով:

— Շատ քաջ աղջիկ ես, պէտք է ընդունիմ, եւ անկեղծ: Ըսել կ'ուզես, թէ ինձի քաջութիւն, համարձակութիւն կը պակսի, եւ ասոր համար փախուստ կու տամ կեանքէն. քու սահմանումովդ՝ կը պահուրտիմ:

— Այս տարիքիդ դուն պէտք է քանի մը աղջիկ խաղցնես, պտըտիս, վայելես:

— Դուն համաձայն պիտի ըլլայի՞ր, — Մուշեղ հարցուց զարմացած: — Իմ մասիս ի՞նչ կարծիք պիտի ունենայիր այնն ատեն:

— Շատ դրսեմ:

— Կը կասկածիմ: Ձիս անբարոյական երիտասարդ մը պիտի

նկատէիր հաւանարար: Պիտի ուզէ՞ր այդ աղջիկներէն մէկը ըլլալ, օրինակի համար:

— Փորձէ եւ կը դիտնաս:

— Բայց դիտե՞ս թէ ինչ կը նշանակէ ատիկա, — երիտասարդը հարցուց անխառն վրդովումով: — Ես քեզ քոյր մը կը նկատեմ. ասոր համար կրնամ հետդ ազատօրէն խօսիլ:

— Շնորհակալ եմ, — ժպտեցաւ աղջիկը ներողամտարար. — թէ ոչ պիտի չկարենայիր խօսիլ ուրեմն: Այս կը փաստէ արդէն, թէ աղջիկներու նկատմամբ անտարբեր չես:

— Ո՞վ ըսաւ որ անտարբեր եմ:

— Ուրեմն: Ինչո՞ւ կը խարես դուն քեզ ու փախուստ կու տաս, դերասանութիւն կ'ընես:

— Դերասանութիւն, — յանցաւոր աշակերտի մը պէս խօսեցաւ տղան: — Բայց ոչ մէկ աղջիկ վարեւորութիւն տուած է ինձի մինչեւ այսօր: Հետս ճիշդ եղբոր մը պէս վարուած եմ:

— Ի՞նչ կ'ակնկալէիր: Երբ դուն իրենց հետ այդ կերպով վարուիս...

Ինքնաշարժէն դուրս եկան Համրա պողոտայի ճիշդ կեդրոնը ու պահ մը անորոշութեան մէջ քալելէ ետք, մտան Սթրանտ սրճարանէն ներս: Ներքին բաժնին մէջ մեկուսացած սեղան մը դրաւեցին, լուռ համաձայնութեամբ կամ մեղսակցութեամբ, եւ սկսան խնդալ: Աւելի ճիշդ՝ Շուշանիկ անակնկալօրէն եւ առանց պատճառի, խնդաց յանկարծ, իսկապէս խնդաց — բարձրաձայն, եւ ինքզինք զսպելու անկարող — եւ Մուշեղ բնականաբար հետեւեցաւ անոր:

— Երկու շարածճի երեխաներու չե՞նք նմանիր, — քարտուղարուհին խօսեցաւ հանդարտելէ ետք, մինչ աչքերը կը շորցնէր ափին մէջ ճգմուած թաշկինակով: — Խնդալիք չէ՞: Բնութիւնը մեզմէ աւելի զօրաւոր է ի վերջոյ:

Մուշեղ Սարգիսեան առաջին անգամ ըլլալով նկատեց անոր անխաղոյն գեղեցկութիւնը: Սեւ աչքերը, յօնքերը, թարթիչները, մազը, ու նոյնիսկ դէմքը: Թուիս աղջիկ մըն էր: Բայց սիրուն, գրաւիչ, միլվէլի պիտի ըսէր մայրը: Իգտական նազանքով յորդուն, գլգլացող աղջիկ մը: Մայրը ի՞նչ պիտի մտածէր, ակամայ անդրադարձաւ յանկարծ: Կրնար եւ գոհ ըլլալ: Խելացի, լուրջ, զարդացած, ու սիրուն հայ աղջիկ մըն էր: Ճիշդ իրենց ուզածին պէս. հայ, լուրջ, գեղեցիկ, կատարեալ կին: Մարմինը, հասակը, կուրծքերը, մէջքը, կոնքերը. ճիշդ իրենց ուզածին պէս: Կրնար եւ սիրահարիլ: Առաջին անգամ ըլլալով աղջիկ մը իրեն այսքան կարեւորութիւն կու

տար, կը ժպտէր, կը խօսէր, եւ իր զգացումներուն հաղորդակից կը դարձնէր զինք: Կը սիրէր թերեւս: Եւ այնքան անկեղծ էր, պարզ, անմիջական ու բարի: Ճիշդ բան էր. բարի աղջիկ մըն էր: Վստահ էր:

— Չե՞ս նախանձիր, — խօսեցաւ յանկարծ, — եթէ ըսածիդ պէս քանի մը աղջիկ խաղցնեմ:

— Հետաքրքրական կ'ըլլար:

— Ինձի հանդէպ ի՞նչ կը զգաս:

— Կը մեղքնամ, — չարացաւ աղջիկը, բայց յետոյ աւելցուց. — շատ կը հաւնիմ: Սեւացի տղայ ես. ազնիւ, քաղաքավար... հակառակ հարուստի գաւակ ըլլալուդ:

— Եւ այսքան ժամանակ է ես լուր չունիմ նոյնիսկ:

— Ժազէն զատ մարդ չես տեսներ շուրջդ: Դուն անոր սիրահարուած ես: Այնպէս որ...:

— Ձիս միակ հասկցողը ան է, թէեւ շատ մը հարցերու մէջ համաձայն չենք: Սեւացի մարդ է, շատ հետաքրքրական, սկզբունքի տէր, անխախտ, ուղղամիտ:

— Այո՛, ան ալ քեզի պէս կորսուած է: Եւ չես կրնար չսիրել զինք: Ուղղակի կը դրաւէ, վստահութիւն կը ներշնչէ, եւ յետոյ վրազ կը խնդայ՝ ինքն իր վրայ խնդացած ատեն: Կը հասկնա՞ս ինչ ըսել կ'ուզեմ: Իր գալէն առաջ գրասենեակը դժոխք էր ինձի համար: Հիմա հաճոյքով դործի կ'երթամ:

— Քեզի նախանձելու իրաւունք ունիմ ուրեմն:

— Մեղք որ ամուսնացած է:

Մուշեղ զարմացած նայեցաւ աղջկան: Կրնա՞ր այսքան անձնասէր ըլլալ: Թերեւս ալ սիրահարած էր ժազին. անհաւանական չէր: Ինչպէ՞ս մեղադրել: Օրական ութը ժամ նոյն սենեակին մէջ ըլլալ եւ չսիրահարել: Աշխարհ խենթանոց է, մտածեց յետոյ, ու մարդիկ բոլոր՝ խղճալի վիճակի մէջ: Ինք, օրինակի համար: Եւ այս աղջիկը, որ ստիպուած էր աշխատիլ եւ ծնողքը սպրեցնել թերեւս: Եւ ժազը, ինչո՞ւ չէ, որ Հայաստանէն արտագաղթելով հանդերձ, չէր կրնար ընդունիլ որ դասալիք էր: Ոչ թէ չէր կրնար կամ չէր ուզեր, այլ պարզօրէն չէր ընդուներ: Բայց եւ այնպէս ինքզինք պաշտպանելու վրամ արդարացնելու փորձ չէր ընէր: Եւ կը մերժէր խօսիլ պատճառներուն մասին: Եւ անհաւատալի, գերմարդկային համբերութեամբ մը կը հանդուրժէր բոլոր մեղադրանքներուն, տեղի եւ անտեղի ակնարկութիւններուն: Եւ կը տառապէր, վստահ էր: Տարօրինակ մարդ էր: Ժամերով կրնար քու մասիդ խօսիլ, զգալ, մտածել, տազնապիլ

քեզի հետ. բայց երբ իր մասին խօսէիր, կ'անհանդուտանար ու կը լուէր միայն:

— Ի՞նչ կ'ուզես խմել, — հարցուց, երբ սպասեակը մօտեցաւ իրենց: — Եւ կամ եթէ կ'ուզես ուտել:

— Գարեջուր:

Երկու դարեջուր սպասեց եւ յետոյ խօսքը ուղղեց Շուշանիկին:

— Համարձակ աղջիկ ես:

— Առաջին անգամ չէ որ երիտասարդի մը հետ դուրս կ'ելլեմ:

— Ժազին մասին ըսածիդ կ'ականարկեմ: Ամուսնացած ըլլալուն:

— Անմեղ կատակ մըն էր: Երբեմն այդ զգացումը ունեցած եմ թէեւ, պէտք է անկեղծ ըլլամ: Ինչու սուտ խօսիմ: Այս ամբողջը բան չի նշանակեր անշուշտ, որովհետեւ ճիշդ իրեն պէս խենթ ու խելառ կիւն մը ունի, եւ շատ սիրով են: Իրարու այնքան յարմար, այնքան ներդաշնակ. եւ շատ համբերալիս են: Հազար ամուսնութենէն մէկը այսքան կատարեալ չի կրնար ըլլալ: Երբեմն գրասենեակ կու գայ. իրենց ալ այցելած եմ քանի մը անգամ: Շատ զուարթ կիւն է, ուրախ, կատակասէր, կեանքով լեցուն, կենդանի, լաւատես:

— Ժազին պէս լուրջ է նաեւ: Նոյն հետաքրքրութիւնները ունի՞, ըսել կ'ուզեմ:

— Չեմ խորհիր: Պարզ աղջիկ մըն է: Կարծես այս աշխարհին մէջ չ'սպրիւր ու լուր չունի թէ ինչ կ'անցնի, կը դառնայ:

— Երանի իրենց, — Մուշեղ մրթմրթաց:

— Քեզի համար ի՞նչ տարբերութիւն կ'ընէ: Դուն կ'զերական պիտի ըլլաս:

— Ամէն մարդ կ'ուզէ երջանիկ ըլլալ ըսիր քիչ առաջ: Նախանձ չէ, այլ իրենց նմանելու իրձ. մանաւանդ իրեն: Երանելի մարդ է. խաղաղ, ինքն իրեն հետ հաշտ ու դոհ:

— Այն սպաւորութիւնը ունէի որ դուն երջանկութիւնը քու կոչումիդ մէջ դտած ես, հաւատաքիդ:

— Կը յուսամ դտնել: Մինչդեռ ինք... ինքզինք այնքան լաւ կը ճանչնայ որ. ճիշդ ատոր համար խաղաղ է, ինքնախտահ եւ սկզբունքի տէր:

— Հիմա յայտնի եղաւ: Ըսել կ'ուզես, թէ դուն քեզ չես ճանչնար: Այսինքն կորսուած ես, չփոթած: Գոնէ անկեղծ ես: Բայց ժազն ալ քեզի պէս վորսուած է:

— Չեմ գիտեր, — խոստովանեցաւ երիտասարդը. — ես ալ չեմ գիտեր այլեւս:

— Ուրեմն հաւատքը այնքան ալ կարեւոր չէ քեզի համար: Փախուստի կերպ մըն է, պահուրանելու:

— Այս բառը շատ կը սիրես: Պէտք է ըսել որ գեղեցիկ պատկեր մըն է դործածածդ. պարզ ու խօսուն, որ կը յստակացնէ, պարզ ու յստակ դադարի մը կու տայ:

— Հասկցուեցաւ: Բայց հետաքրքրական է գիտնալ, թէ ինչէն փախուստ կու տաս, ինչէն դժգոհ ես, կամ ինչն է որ քեզ այսպէս շուարեցուցած է:

— Շուարած: Ձեմ ընդունիր: Դժգոհ՝ այո՛: Մեր կեանքէն, ներկայ ընկերութենէն, մարդկութեան խղճալի վիճակէն, անարդարութենէն:

— Մարդկութիւնը միշտ այս վիճակին մէջ եղած է, — Շուշանիկ համբերութեամբ տրամարանեց. — կեանքը միշտ այսպէս եղած է. անարդար, բարդ, դժուար: Մեր ժամանակին յատուկ չէ միայն:

— Արդեօ՞ք: Մարդկային ամենէն ազնիւ զգացումները նոյնիսկ սրբապղծուած են: Սէրը, օրինակի համար: Առաջ, վստահ եմ, սէրը նուիրական եւ սուրբ զգացում մըն էր. մաքուր գեղեցիկ, սքանչելի: Ինչպէ՞ս բացատրեմ: Սիրելը մարդ արարածին ազնուազոյն զգացումն էր, հարստութիւնը, որու համար մարդիկ իրենց կեանքը կը զոհէին: Մինչդեռ ներկայիս: Նոյնիսկ ներկայ երիտասարդութիւնը, որ ըմբոստացած է եւ՝ անաղարտ, գերագոյն սիրոյ կը հաւատայ, նոյն մեղքը կը գործէ: Սէրը Ֆիզիքական, նիւթական առարկայի մը վերածած են: Իրենց կիրքերուն, ցանկութիւններուն գոհացում տալու ամենէն դիւրին կերպն է, գիտե՛մ: Ես իրենց հետ եղած եմ. երկու տարի իրենց հետ ապրած եմ: Գիտեմ: Շրջան մը փորձեցի եւ զիս համոզել, թէ այդ է ճիշդը, ճշմարիտ սէրը. եւ թէ մնացածը խարկանք է կամ պատրանք: Բայց յետոյ անդրադարձայ որ եղածը պատահապաշտութիւն է, անբարոյութիւն: Մենք բոլորս զիրար կը խարէինք, զիրար կը գործածէինք...:

— Հետաքրքրական է: Ինծի համար միշտ բարդ հանելուկ մը մնացած է ձեր, հիբրիներու կեանքը, ըմբոսումները ըսենք: Թէեւ ձեզի սերնդակից կրնամ նկատուիլ, բայց չեմ կրցած հասկնալ, կը ներես: Եւ բնական է չեմ հասկնար, թէ ինչ ըսել կ'ուզես երբ զիրար գործածելու մասին կը խօսիս:

— Ժամերով սիրոյ, արդարութեան, հաւասարութեան մասին կը խօսէինք, զրոյցներ կ'ունենայինք, եւ ամենայն լրջութեամբ, բայց յետոյ միասին անկողին կը մտնէինք՝ ազատ սիրոյ անունով:

— Միասին կը պահէիք այսինքն: Ի՞նչ կայ ասոր մէջ: Ա-

նողջապահականորէն վնասակար է անշուշտ:

— Ձոյգեր, ոչ թէ բոլորս միասին, — Մուշեղ ստիցուեցաւ բացատրել: — Ձոյգ-զոյգ: Կը հասկնա՞ս ինչ ըսել կ'ուզեմ:

— Դո՞ւն ալ:

— Ես ընկերուհի մը չկրցայ գտնել:

— Եթէ գտնէիր, նո՞յնը պիտի ընէիր, — աղջիկը սկսաւ զուարճանալ:

— Այն տուն՝ այո՛: Հաւանաբար ընէի: Այդպէս համոզուած էինք, եւ շատ բնական էր մեզի համար:

— Այսօ՞ր:

— Մինչեւ այսօր աղջիկ մը չեմ համբուրած նոյնիսկ: Ալ ուր մնաց հետը պահելի:

— Բայց բաւական համարձակ ես...:

— Ազատ մտածող եմ, եւ մտածածիս մասին ազատօրէն կ'արտայայտուիմ: Այդքանը կրնամ ընել, կ'ընդունիմ: Աւելի օգտակար է. կ'ազատագրէ այսինքն:

— Յամենայն դէպս ուրախ եմ: Ուրախ եմ որ այս խօսակցութիւնը ունեցանք: Հիմա աւելի լաւ կը ճանչնամ քեզ, կը հասկընամ, կը զլամ քեզի հետ: Օր մը շատ աղուոր մարդ կ'ըլլաս. օրինակելի, սքանչելի մարդ մը, եթէ նոյնիսկ վարդապետ ըլլաս:

— Եթէ չըլլամ:

— Տիպար ամուսին մը կ'ըլլաս:

— Հետս պիտի ուզէ՞ր ամուսնանալ:

Շուշանիկ Բարսեղեան, որ մեկնելու կը պատրաստուէր, անշարժացաւ եւ ուշի ուշով քննեց զիմացինը:

— Իրաւ երեսայ ես եղեր, — ըսաւ յետոյ եւ տխուր արտայայտութիւն մը դէմքին, կանգնեցաւ ոտքի:

**

Այդքան կանուխ տուն երթալը տարօրինակ թուեցաւ իրեն: Պահ մը տազնապեցաւ նոյնիսկ: Տունը ի՛նչ պիտի ընէր: Ժամը ութին չէր կրնար քնանալ անշուշտ: Մնողքին հետ ժամ մը, առաւելագոյն երկու, ստիպուած պիտի նստէր այսօր: Եղաւ ժամը տասը: Յետո՞յ: Երկու տարուան ընթացքին նոր վարժութիւններ կազմած էր. Կէս գիշերէն առաջ քնանալը համարեա անկարելի էր. մինչ այդ սակայն այդ ժամերը անզրաղ կարելի չէր անցընել: Օրուան ամենէն հետաքրքրական մասը իրենց համար գիշերային հաւաքոյթներն էին

— Կրօյցները, խանդավառութիւնը, ծուխն ու գինին եւ ստոնց հե-
տեւող սանձարձակ վերացումը, որ կը ներշնչէր գիրենք, կ'ազա-
տադրէր: Տան միօրինակ կեանքը, մթնոլորտը ամբողջ՝ անհան-
դուրժելի պիտի ըլլար:

Տուն երթալու դադարուն խի տարօրինակ թուեցաւ իրեն,
անտրամաբանական: Մանաւանդ այս ժամուն:

Մական ընկերներուն շէր կրնար վերադառնալ այլեւս: Որո-
շած էր: Այս վիճակով եւ արտաքինով շէր ալ կրնար երթալ արդէն.
տարօրինակ պիտի դար, ինչպէս անկոչ հիւր մը: Օտար պիտի դար,
եւ իր ներկայութիւնը անբաղձալի պիտի նկատուէր հաւանաբար:
Կրնային կասկածիլ, վերապահութիւն ունենալ: Մուխ մը ըլլար՝
հիմա կը քաշէր, ու կը հանդարտէր թերեւս, եւ աւելի ինքնավստահ
քայլերով կը մտնէր տուն: Հաւասարակշռութիւնը կը վերադառնէր:
Բայց հաշիւ չունէր քովը. շէր ուզած վերցնել:

Մուշեղ, անորոշութեան մատնուած, շարունակեց թափափիլ
եւ յետոյ անգիտակցաբար ուղղուեցաւ դէպի համալսարան: Հոն
կրնար գրադիլ քիչ մը, ծանօթներու հանդիպիլ, զրուցել: Մատե-
նադարան կը մտնէր, եթէ պէտք ըլլար: Արագացուց քայլերը, նկատե-
լով որ հիմա գիտէր, թէ ինչ պիտի ընէր: Աստղագարդ երկինք մը
կ'աճապարէր՝ իրեն հակառակ ուղղութեամբ: Ուրախացաւ: Ամպերը
նահանջած էին ի վերջոյ, պայծառ ու դեղեցիկ, խկապէս գարնա-
նային օր մը խոստանալով վաղուան համար: Յանկարծ նկատեց Սալ-
բին եւ Էտկարը, որոնք հանդարտօրէն կը քայլէին նոյն մայթին վրայ,
ու կը յառաջանային դէպի իր կողմ: Չճանչցան զինք: Դանդաղեցուց
քայլերը եւ սպասեց, եւ ստիպուած կեցաւ յետոյ, երբ մօտեցան
իրեն: Ժպտեցաւ, յամառօրէն, առանց յուսահատելու:

— Հէ՛յ, — հարկադրուած բողոքեց:

— Մուշե՛ղ, — ճշաց քոյրը. — Աստուած իմ, հրա՞ջ է, ի՛նչ
է: Ո՞ւր այսպէս:

Էտկար աղչահար զինք կը դիտէր, դէմքին ժպիտ թէ հեզ-
նանք՝ չկրցաւ որոշել: Համալսարանի ամենէն փայլուն ուսանող-
ներէն կը նկատուէր այս շէկ ու համակրելի տղան, բայց ինք միայն
հակակրանք կը զգար անոր հանդէպ: Փորձած էր տրամաբանել,
դատել ու հաւասարակշռել այս զգացումը իր մէջ բայց շէր յաջողած:
Նախա՞նձ: Հաւանաբար: Բնաւ չէր կրցած ներել Սալբին, որ մտեր-
մացած էր այս արարացած յոյն երիտասարդին հետ. բայց նաեւ՝
չէր կրցած ներել ինքնիրեն: Համակրելի, դեղադէմ ու շատ խելացի
տղայ մըն էր ի վերջոյ: Եւ զգացածը չէր կրցած արդարացնել երբեք:

— Համալսարան կ'իջնէի: Դո՞ւք ուր կ'երթաք:

— Տուն: Այսօր ուշացայ քիչ մը:

— Միասին կ'երթանք ուրեմն, — եղբայրը առաջարկեց անմի-
ջապէս: — Ամբողջ օրը տունն էի. երեկոյեան դուրս ելայ:

— Օ՛, ի՛նչ պատահած է:

Տունը տօնական մթնոլորտի մէջ էր: Ճաշարահին մէջ ար-
տակարգ ճաշասեղան մը իրենց կը սպասէր: Հայրը, զուարթ քմծի-
ծաղ մը դէմքին, դիմաւորեց զիրենք բայց չխօսեցաւ: Գոհունակու-
թիւնը չկրցաւ ծածկել սակայն, եւ շարունակեց ինքնիրեն ժպտիլ՝
զաւակներուն ուշադրութիւնը դրաւելու աստիճան: Բաժակ մը օդի
լեցուց յետոյ ինքն իրեն համար եւ դրակեց իր սոփորական տեղը,
ժամացոյցին տակ: Սալբի չկրցաւ ինքզինք զսպել ու խօսեցաւ:

— Շատ պաշտօնական ենք այսօր:

— Ինչո՞ւ ուշացար, — հարցուց մայրը, որ այդ պահուն ներս
մտաւ:

— Քննութիւններուն մէկ ամիս մնաց: Թեզիս մէջ նոր վո-
փոթութիւններ պէտք է ընեմ, որպէսզի դոհացնեմ զիրենք: Միծա-
ղելի եղաւ այլեւս. գոնէ իրենք իրենց ուզածը գիտնան: Ի՞նչ պա-
տահած է ձեզի այսօր:

— Տարին անգամ մը միասին կրնանք ընթրել կարծեմ, —
նոյնմի Սարգիսեան ինքնագոհ ժպիտով մը նայեցաւ ամուսինին:

— Շաքէին հեռաձայնեմ, — խանդավառուեցաւ Սալբի. — Ըման
կազմով ընթրենք, քանի այդպէս է:

— Պէտք չկայ, — ըսաւ հայրը:

— Շուշանիկը, մեր քարտուղարուհին, հետաքրքրական աղ-
ջիկ է եղեր, — Մուշեղ խօսքը ուղղեց հօրը: — Այսօր դրասնենակ
հանդիպեցայ, յետոյ միասին դուրս ելանք:

— Այո՛: Շատ աշխատասէր եւ վստահելի աղջիկ է: Պաշտօն-
եաներու կողմէն բախտաւոր ենք բարեբախտաբար: Երանի կարենամ
աւելի օգտակար ըլլալ այդ աղջկան. դժբախտ արարած մըն է, ամէն
կերպով:

— Զաւակներուդ կողմէն բախտաւոր չես, ըսել կ'ուզես, —
Սալբի ըսաւ հօրը, քաղցրօրէն ժպտելով:

Արամ Սարգիսեան ահամայ խնդաց եւ դարձաւ աղջկան, որ
գրաւած էր կողքի աթոռը:

— Այդպէ՞ս: Լաւ որ ձեր ըրածին գիտակցութիւնը ունիք դոնէ:

— Սքանչելի դաւակներ ունիս, — սաստեց կինը: — Հիմա այս խօսքերուն առեւեր չէ:

— Ինչո՞ւ դժբախտ է ըսիր, — հարցուց տղան:

— Մեզի չի վերաբերիր: Անձնական եւ ընտանեկան հարցեր են: Ամբողջ ընտանիքին բեռը իր վրայ է, եւ ատոր համար ալ չեմ կարծեր որ ամուսնանայ: Թէեւ ասկէ երկու տարի առաջ նշանուեցաւ անգամ մը... Իսկական ողբերգութիւն էր:

— Մենք ի՞նչ ունինք, — յամառեցաւ աղջիկը, — ի՞նչ ըրած ունինք:

— Աղջիկս, կը սպասեմ որ դուն յայտնես ինձի ատիկա: Քու շրթներէդ լսեմ, որովհետեւ գիտես: Աւելի հանդուրժելի կ'ըլլայ, եւ նուազ վիրաւորական: Բայց ինչպէս մայրդ ըսաւ, այսօր ատոր ժամանակը չէ: Տե՛ս, այս փորձանքը մարդու նմանած է վերստին, եւ այդքան ալ յոռետես ըլլալու պատճառ չունինք ուրեմն: Յուսանք որ ամէն ինչ իր բնական ընթացքը գտնէ: Եւ կը գտնէ, վստահ եմ: Այսօր կեանքիս ամենէն ուրախ օրերէն մէկն է. բացատրելու պէտք չունիմ կարծեմ:

Եւ անդալարար բաժակը տարաւ շրթներուն ու մէկ ումպով պարպեց զայն:

— Գա՛, մա՛րդ, — հին վարժութեամբ մը դժգոհութիւնը արտայայտեց Նոյեմի Սարգիսեան: — Խելքի՞դ եկաւ, ի՞նչ է:

— Դուն ալ բաժակ մը լեցուր եւ խմէ՛, — փոխանակ վիրաւորուելու կամ ջղայնանալու, խնդաց ամուսինը:

— Ինչո՞ւ վիրաւորական, — Սալբի հարցուց, կորսնցուցած իր բնական զուարթութիւնը:

— Դուն դէ՞թ այս հարցումը հարցնելու իրաւունք չունիս: Գաղտնիքներ չենք ունեցած, մեր մտածածն ու զգացածը յայտնած ենք իրարու միշտ, եւ դերասանութիւն չենք ըրած ասկէ առաջ: Իսկ հիմա ինձի կ'ողողես հարցում մը, որու պատասխանը գիտես արդէն:

— Բայց քու վերաբերմունքդ փոխուած է, պապա՛. առաջին անգամն է որ հետս օտարի մը պէս կը վարուիս, — Սալբի փղձկեցաւ յանկարծ, — եւ քեզմէ հեռու կը վանես կարծես:

Չկրցաւ շարունակել եւ անմիջապէս չորրորդ արցունքները: Ամենէն աւելի ինք զարմացաւ սակայն, որովհետեւ մանկութենէն ի վեր չէր լացած երբեք. պատճառ չէր ունեցած: Միշտ զուարթ ու համարձակ եղած էր, եւ առաւելագոյն ազատութիւնը ինք վայելած էր տան մէջ: Բան մը փոխուած էր ուրեմն: Չգալուն դարձած էր հաւանաբար: Բայց ինչո՞ւ: Պատճառ մը պէտք է ըլլար: Վստահ

գիտէր, թէ հայրը դինք նոյնքան կը սիրէր... իր մէջ պէտք է փնտռէր բացատրութիւնը հետեւաբար:

— Լալը քեզի չի վայլեր, — մեղմացաւ հայրը, — յատկապէս նշական նորութիւն է թէեւ: Մէջդ բան մը փոխուած է կ'երեւի:

— Բան մըն ալ չէ փոխուած:

— Չգալուն դարձած ես:

— Առաջ զգալուն չէի այսինքն:

— Ոչ այս կերպով:

— Կը բաւէ՛, — միջամտեց Նոյեմի:

— Չդէ որ խօսի աղջիկը:

— Ասկէ առաջ ալ տղաք ճանչցած եմ...:

— Երիտասարդներու ծանօթանալն ու անոնց հետ պտըտիլը մեղք մը չէ, — Արամ Սարգիսեան յարմարագոյն նկատեց նոյնքան անկեղծ ըլլալ. — սիրելը մեղք չէ: Ես ձեզ քաջալերած եմ որ ձեր ընկերներն ու բարեկամները տուն բերէք, որպէսզի աւելի ազատ ըլլաք, չծածկէք ձեր զգացումները ու մարդավայել կերպով սիրէք ու յարաբերիք մարդոց հետ: Ծակատարաց: Առանց վախի կամ դաղտնապահութեան: Ծածկելիք բան մը ունեցողը միայն գաղտնի կը պահէ իր զգացումները, սէրը: Եւ երբ կը ծածկես սէրդ, այսինքն ազատ չես զգար զայն վայելելու, կը նշանակէ թէ սխալ է եղածը, որու դուն նոյնիսկ կ'անդրադառնաս: Ուրե՞մն: Եթէ դուն համոզուած ըլլայիր, այս հոգեվիճակին մէջ պիտի չըլլայիր:

— Առաջին օրէն թշնամական վերաբերմունք ունեցած ես իրեն հանդէպ. այնքան մը որ տղան հոս գալու կը վախնայ:

— Զարգացած, համալսարանական, խելացի աղջիկ ես. եւ վստահ եմ որ զիս ատկէ աւելի լաւ կը ճանչնաս: Թշնամիներ չունիմ, չեմ ունեցած, եւ չեմ հաւատար... Թշնամական զգացում կոչուածը ինչ է, չեմ գիտեր: Թշնամին կ'ատեն: Բայց ես չեմ կրնար ատել, շատ լաւ գիտես, աղջիկս. մանաւանդ այս պարագային: Քու սիրած տղան ես չեմ կրնար ատել: Վերապահութիւնը տարբեր խնդիր է:

— Ինչո՞ւ շարունակ սիրոյ մասին կը խօսիս: Ես իսկ վստահ չեմ: Ի՞նչ է սէրը: Մինչեւ այսօր չեմ սիրած, չեմ գիտեր թէ ինչ կը զգան երբ կը սիրեն: Ես այդ տեսակ աղջիկ չեմ, պապա՛, դուն գիտես: Բայց կը հաւանիմ. մտերիմ բարեկամներ ենք... չեմ գիտեր:

— Աւելի լաւ:

— Որովհետեւ հայ չէ, — Սալբի խօսեցաւ, վերադառած ինքնազնայնութիւնը, — պէտք չէ՞ հաւանիմ դինք, պէտք չէ՞ բարեկամանամ: Նոյնիսկ եթէ սիրեմ: Մարդը մարդ է՝ հայ ըլլայ կամ արար:

օտարներուն մօտ երբեմն շատ աւելի լաւ մարդիկ կան :

— Անտարակոյս :

— Ուրե՞մն : Ինչո՞ւ այս այլամերժութիւնը : Օտարները այս տեսակ բարդոյթ չունին . աւելի լայնախոհ են , աւելի ազատամիտ , մարդկային :

— Շատ լաւ կը հասկնամ , դիտե՛մ : Եւ իրենց պարագային ճիշդ է , բնական . որովհետեւ տարբերութիւն չ'ըներ , կորսնցնելիք չունին : Մեզի համար նոյնը չէ :

— Հայկական այս նեղմտութիւնը չեմ կրցած ըմբռնել երբեք :

— Ժամանակ է որ ըմբռնես : Անհատը հաւաքականութենէն աւելի բարձր չէ , — հօրը ներդրամիտ , համբերող արտայայտութիւնը , որ մաս կը կազմէր անոր էութեան , անհետացաւ դէմքէն : — Համալսարանին կամ փողոցներուն մէջ ձեր սորվածն ու լսածը նախ պէտք է մարտէք , եւ յետոյ քարոզէք ուրիշներուն : Նիւթ մը առանց լաւապէս ուսումնասիրելու , ինչպէ՞ս վճիռ կ'արձակես : Համալսարանին մէջ այսպէ՞ս կը դաստիարակեն ձեզ . մտածել , դատել նոյնիսկ չեն կրցած սորվեցնել : Այս կերպով թեղզ պիտի պաշտպանես : Ինչ կ'ուզես որ մտածեմ : Նեղմտութիւն . . . Եթէ նեղմտութիւն է , պէտք է անոր պատճառները փնտռես , հասկնաս եւ յետոյ վճիռ արձակես : Որովհետեւ դուն քու ժողովուրդէդ աւելի բարածր չես , ու չես կրնար ըլլալ : Աւելի իմաստուն չես : Երբ հաւաքականութիւն մը ամբողջ , ժողովուրդ մը նախընտրած է այս նեղմտութիւնը , պատճառ մը ունեցած պէտք է ըլլայ : Եւ աշխարհի չորս կողմը , ուր որ կը գտնուի , նոյնն է . նոյնիսկ Ամերիկայի մէջ : Դուն քեզի հարցուցած ես թէ ինչու այսպէս եղած է կամ այս ուղին ընտրած :

— Ազգապահպանում , եւայլն , ասոնք հինցած խօսքեր են :

— Ինչո՞ւ : Ուրիշ ազգեր իրենք զիրենք չե՞ն պահպաներ : Բնականաբար : Բայց իրենք զիրենք պահպանելու համար պայքարելու պէտք չունին , ինքնապաշտպանութեան դիմելու պէտք չունին : Իրենց երկիրներուն մէջ , իրենց սեպհական հողին վրայ պաշտպանուած են , զօրաւոր . եւ այդ տեսակ պայքար մղելու հարց չունին : Մինչդեռ մեր դոյութիւնը վտանգուած է , դէ՞թ այսքանը կ'ընդունի՞ս : Յրանսացին երբ օտարին հետ կ'ամուսնանայ , զայն կը շահի , իսկ մենք օտարին հետ ամուսնանալով կը կորսուինք : Նոյնիսկ հոս , Լիբանանի մէջ : Եթէ դուն , օրինակի համար , սա էտիար կոչուածին հետ ամուսնանաս , պիտի կարենա՞ս զաւակներդ հայ պահել :

— Ինչո՞ւ հայ պահել :

Արամ Սարգիսեան ապշահար դիտեց իր հարազատ դուստրը ու

չուզեց հաւատալ տկաններուն , բայց ըսաւ :

— Որովհետեւ հայ ենք :

— Բայց մարդ ենք՝ նախ եւ առաջ :

— Այս քու էտիարդ , — ջղայնացաւ հայրը , — պիտի ուզէ՞ր իր ծաղումը ուրանալ եւ հայ ըլլալ , օրինակի համար : Ան ալ մարդ է նախ եւ առաջ :

— Բայց պատճառ չունի , պապա՛ :

— Ի՞նչ տեսակ արամարանութիւն է ասիկա : Ան պատճառ չունի , իսկ դուն ունիս : Կրնա՞ս այս հանելուկը լուծել ինծի համար : Թէ պարզօրէն՝ հայուն հայ ըլլալն ու մնալը նոյնքան իրաւացի չես նկատեր : Այսքա՞ն ստորագաս կը համարես Հայութիւնը :

— Ինչե՞ր կ'ըսես , — վերաւորուեցաւ աղջիկը :

— Ի՞նչ կ'ուզես որ ըսեմ : Երբ դո՛ւն ինծի այսպէս կը խօսիս : Իմ հարազատ աղջիկս :

Մուշեղ դժգոհ չէր : Զինք բոլորովին մոռցած էին : Պահ մը նոյնիսկ թմրեցաւ եւ դժուարութեամբ կրցաւ աչքերը բաց պահել : Անյայդ ախորժակով կերած էր մօրը պատրաստած ճաշերէն եւ դոհունակութեամբ հաստատած էր , թէ այս ուտելու աւելի մարդկային կերպ մըն էր , աւելի առողջապահական : Ամիսներու ընթացքին կարգին ճաշ մը չէր կերած : Թերեւս կարենար հանգիստ քնանալ նոյնիսկ :

— Գիշեր բարի , — ոտքի կանգնեցաւ յանկարծ :

— Ո՛ւր , — սրտատրոսի ձայնով մը հարցուց մայրը :

— Թմրեցայ : Յոգնած եմ կ'երեւի :

— Սենեակդ պատրաստած եմ :

— Յուսամ կրնամ քնանալ : Եւ կամ թերեւս լաւ կ'ըլլայ որ քալեմ քիչ մը :

— Այս ժամուն ո՛ւր պիտի քալես : Դուրս ելլել չկայ : Վիճակիդ նայէ մէյ մը . վրադ միս չէ մնացած : Կմախք , կմախքի վերածուած ես :

— Նստէ՛ նայինք , Հայր Մուրր , — ժպտուն եւ ինքնազոհ , միջամտեց հայրը : — Քրոջդ հետ խօսելու յաճախ առիթ կ'ունենամ : Խելքիդ ի՞նչ փչեց յանկարծ որ մազմօրութէդ հրաժարեցար :

— Փոփոխութիւն : Ժաղին զազափարն էր . եւ ճիշդ է յամենայն դէպս : Զգուեցայ :

— Ուրախ եմ : Նկատած էի որ վերջերս Ժաղին հետ բաւական ժամանակ կ'անցընես : Դո՛ւն ալ սիրահարուած ես իրեն , թէ ուրիշ պատճառ մը ունիս :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Ամէն մարդ կը սրահարուի այդ տղուն : Ձինք ճանչցողը միայն կրնայ սիրել զինք :

— Ի՞նչ տղայ : Հասուն, խելացի, իմաստուն, կեանքը վերջացուցած մարդ է :

— Անչո՞ւշտ : Երբ քու աշխատելու սկսաւ հազիւ քու տարիքդ ունէր : Ինծի համար նոյն տղան է :

— Սիրահարուելու իրաւունք չունի՞մ :

— Քեզի պէս խենթ մըն ալ ինքն է : Քեզմէ աւելի խենթ է, հոգ մի ընէր : Վաղը տեսնես կ'որոշէ Ամերիկա երթալ, կամ քեզի պէս՝ կղերական ըլլալ :

— Հաւատացեալ չէ : Այնպէս որ . . . :

— Իսկ դուն . . . հաւատացեալ ըլլալուդ համա՞ր կ'ուզես կղերական ըլլալ : Ի՞նչ կապ ունի . . . ամէն հաւատացող վարդապետ կ'ըլլայ :

— Ինծի համար ծառայելու միակ կերպն է : Հաւատքը կրնայ երկրորդական ըլլալ նոյնիսկ :

— Կը նախընտրեմ որ կղերական ըլլաս յամենայն դէպս, փոխանակ ապագադ քանդելու :

Մուշեղ անակնկալօրէն սթափեցաւ եւ թերահաւատութեամբ խուզարկեց ծնողներուն արտայայտութիւնները : Խորհրդաւոր հանդարտութիւն մը կը թեւածէր կարծես սենեակին մէջ, զինք մխրճելով անորոշութեան մէջ : Դա՞նք էր, խա՞ղ, թէ զիւանադիտութիւն : Հայրը պարզ եւ ուղղամիտ մարդ մըն էր, սակայն մայրը կրնար զիւանադիտութիւն խաղալ եւ կնոջական հնարքներու դիմել : Թէեւ չփոթանքի մասնուած, ուրախութիւնը յաղթանակեց, եւ ըսաւ :

— Համաճա՞րն ես :

— Ձեմ կրնար դէմ ըլլալ : Քու կեանքդ է . . . եւ քու տարիքդ . . . չեմ զարմանար : Դուն քեզ աւելի լաւ պէտք է ճանչնաս եւ կարենաս որոշել : Ընտանեկան նկատումները զանց առած, գիտես թէ կրնամ միայն հպարտ զգալ : Եւ, ինչպէս ըսի, կը նախընտրեմ որ վարդապետ ըլլաս, քան հիփրփի :

— Անմիջապէս դիմեմ ուրեմն :

— Ես Վեհափառին հետ կը խօսիմ : Իրեն համար մեծ անակընկալ մը պիտի ըլլայ անշուշտ :

— Դուն իրմէ աւելի խանդավառ ես կարծես, — յուշեց նոյնմի Սարգիսեան : — Քիչ մը շունչ թող առնէ, հանգստանայ, կ'ազդուրուի :

— Որոշած եմ էջմիածին դիմել, — հազիւ լսելի ձայնով մը մըթմրթաց տղան :

— Ինչո՞ւ էջմիածին, — հայրը հարցուց, սկներեւ դժգոհութեամբ :

— Հոն աւելի պէտք ունին : Հայաստանի մէջ կրնամ իսկապէս օգտակար ըլլալ, ծառայել, մինչդեռ հոս . . . չեմ գիտեր :

— Այս ալ ժաղի՞ր դադարիարն է :

Մուշեղ լիահազադ խնդաց : Մտածումն իսկ զուարճացուց զինք, եւ երեխայի մը պէս չարացած, ըսաւ :

— Երանի : Հայաստանէն արտագաղթողէ մը կարելի՞ է այս կարգի խորհուրդ ակնկալել :

— Ինչո՞ւ կը ծաղրես :

— Ձինք որքան կը յարգեմ, Կը սիրեմ, — լրջացաւ երիտասարդը, — սակայն եւ այնպէս Հայաստանէն իր վերադարձը չեմ կըրցած հասկնալ, բացատրել :

— Տղա՛ս, ուրիշները դատելու իրաւունք չունին : Ասիկա ականջիդ օղ ըրէ . մարդը մի դատեր երբեք : Երկրորդի մը անձը չես կրնար ըլլալ, անոր ներաշխարհէն ներս չես կրնար թափանցել երբեւիցէ : Վճիռ արձակելէ առաջ, պատճառներուն պէտք է ծանօթանալ, ստուգել եւ ըստ այնմ տեսակէտ կազմել, բայց ոչ թէ դատել :

Գիշերը, անկողնին մէջ, Մուշեղ երկար ժամանակ չկրցաւ քնանալ ու Շուշանիկին մասին մտածեց միայն : Ուրախ ըլլալու ամէն պատճառ ունէր, բայց ընկճուած եւ անտրամադիր, այդ ածուխ աղջկան իրականութեամբ փորձեց ինքզինք մխիթարել : Անոր մասին մտածելը կը հանդարտեցներ զինք, յոյս կը ներշնչէր ու կը հաւասարակշռէր ներքին խռովքը մասամբ : Հայրը ինչո՞ւ դժբախտ կոչած էր զայն : Ուրախ, կենսուրախ աղջիկ մը կ'երեւէր : Եւ համարձակ, ինքնամոտան : Ոչ մէկ աղջիկ իր հետ այսպէս վարուած էր . . . լրջօրէն խօսած հետը, կարեւորութիւն ընծայած իրեն, զգացումները արտայայտած : Այո՛, վստահ էր, թէ իրեն հանդէպ բան մը կը զգար, կը սիրէր թերեւս նոյնիսկ : Գաղափարը երանութեան ալեկոծ ծովու մը մէջ սուզեց զինք, եւ գրեթէ շնչահեղձ, վերմակը նետեց վրայէն ու դարձաւ անկողնին մէջ դարձեալ :

Ժագ Առաքելեան գրասենեակին մէջ նստած կ'երագէր: Գարնանային տենդն էր կ'երեւի կամ անսպասելի արեւը, որ բարեհաճած էր ծաղիլ այս առաւօտ եւ շրջապատը ողողել իր կենարար ջերմութեամբ: Աշխատելու տրամադրութիւն չունէր: Նամակներու եւ տեղեկագրերու արցակը յանձնած էր Շուշանիկին ու բացատրած անոր, թէ ինչպէս պէտք է դասաւորէր ըստ երկիրներուն եւ յաճախորդներուն: Բայց Շուշանիկ փոխանակ աշխատելու, զինք կը դիտէր: Փորձանք մըն ալ այս էր, թէ եւ անոր ներկայութիւնը աշխատանքի ժամերու միօրինակութիւնը տանելի կը դարձնէր: Ուշիմ, սրամիտ եւ արագաշարժ ազնիւ մըն էր, որու ուշադրութենէն ոչինչ կը վրիպէր: Աստղիկի գեղեցկութիւնը չունէր անշուշտ, բայց ուշադրաւ ըլլալու չափ սիրուն էր, եւ անկէ աւելի պերճախօս: Աւելի զարգացած եւ շափահաս, լուրջ հետաքրքրութիւններ ունէր նաեւ, եւ հաճելի խօսակիր մըն էր ընդհանրապէս: Երբ խօսելու արամադրութիւն ունենար:

Հիմա, թէ եւ, միայն զինք կը դիտէր, ու կը յամառէր լուռ մնալ: Թերեւս ան ալ կ'երագէր: Իր տարիքին երագելու շատ աւելի պատճառներ եւ իրաւունք ունէր: Բայց իբր երագ չէր: Արեւն էր: Գարունը: Այս եղանակին անդսպելի կը դառնար, անհանդիստ, ու չէր կրնար սենեակի մը մէջ փակուած մնալ: Պէտք է անպայման դուրս դար, թափառէր, քալէր արեւին տակ ու ժպտէր ընտելեան, վայելէր զայն: Մանկութենէն մնացած վարժութիւն էր: Կամ աւելի ճիշդը՝ հօրը իրեն կտակած անէծքը: Այս եղանակին միշտ միասին դուրս կը հանէր զինք, քաղաքէն դուրս, դէպի սարալանջերը ու կը խօսէր իւրաքանչիւր ծաղիկի եւ տերեւի հետ, կը խօսէր արեւին հետ ու կը հրճուէր՝ ճիշդ երեխայի մը պէս: Կը խօսէր յետոյ իրեն, կը պատմէր, կը բացատրէր ամէն ինչ, ամենայետին մանրամասնութիւն իսկ, իրենց ծաղիկներուն ու լեռներուն մասին: Կը նկարագրէր Սասնոյ լեռները, անտառները, վայրի ծաղիկները, կարկաչահոս աղբիւրները, ամպերու մէջ մխացող գազաթիւերը, ու վերացած՝ կը սկսէր երգել իրեն անհասկնալի լեզուով մը: Իրեն, ժագին համար տարօրինակ աշխարհ մըն էր: Տարօրինակ, բայց իրական, կենդանի, հոգ չէ թէ ստեղծուէր երեւակայութեան մէջ: Իրական էր՝ որովհետեւ հօրը ահեղ կարօտը կը գեղեցկացնէր զայն, կը վերստեղծէր: Եւ ինք բնագոյարար, կամ կախարդուած, կը հետեւէր անոր՝

գազաթէ գազաթ, գիւղէ գիւղ, Դաւիթի Բերդէն մինչեւ Սասանի կամուրջ, ու Սեւ Սարէն մինչեւ Սուրբ Աղբերիկի վանքը, եւ մինչեւ Մարութայ սար: Այս անունները, եւ ասոնց նման հարիւրաւոր այլ անուններ, կախարդական հմայք մը ունէին իրեն համար, եւ ամէն անգամ որ հայրը յիշէր զանոնք, մարմինը կը փշաքաղուէր ու լալու անբացատրելի, անգոսպելի պահանջ մը կ'ունենար: Բայց չէր լար, որովհետեւ հայրը կը կշտամբէր զինք ու դժգոհած կը սաստէր:

— Երէ՞ն կնկոտց պէս կու լաս, տղա՛յ:

Հայաստան ներդաղթած էր հաւանարար այդ կախարդական աշխարհը վերագտնելու ակնկալութեամբ: Չէր յիշեր հիմա, բայց հմայուած էր այն ատեն, կամ գիտով: Եթէ փորձէր իսկ վերլուծել իր այդ շրջանը, պիտի չկարենար մեկնել կամ բացատրել պատահածը: Կիրգայի գերեզմանատան մէջ առաջին անգամ իրեն յայտնուող Արարառը մեծ գեր ունեցած էր անշուշտ, ու վերագարձուցած իրեն հին օրերու կախարդանքը — մանկութեան երազները, բիրականայ աղբիւրներու քաղցրութիւնն ու մարախլապատ լեռներու կարօտը: Ներաշխարհին մթին խորութիւններուն մէջ անթեղուած կրակի պէս անմար մնացած կարօտը, որ հօրը գոյութիւնն էր իր մէջ: Անոր կարօտը: Եւ լեռներունը:

Հայաստան հասնելէ ու հաստատուելէ եւ առաջին քանի մը շարաթիւերու արբեցումէն ետք, չէր կրցած ամոքել այդ կարօտը սակայն, ու տալնապահար որոնումի ելած էր՝ դանելու համար այդ ողին, որ հմայած էր զինք ու հասցուցած հոն — իրեն անծանօթ աշխարհ մը: Ողին չկար, ու երկիրը իսկապէս անծանօթ էր, օտար՝ իրեն համար խորթ: Իր փնտռածը չէր, իր երագածը: Հօրը երկիրը չէր. ոչ ալ լեռները: Բայց չէր յուսահատուած, ու շարունակած էր իր որոնումները մինչեւ որ հասած էր Արագածի լանջերուն, ուր գտած էր հօրը հայրենակիցները: Նոյն դէպ ու դառնացած մարդիկն էին, նոյն լեռնցիները, որոնց հանդիպած էր Սփիւռքի մէջ — Պէյրութ, Հալէպ, Պաղատա, Քամշի: Նոյնքան անգիջող, յամառ ու դժբախտ լեռնցիները, որոնք կը մերժէին մնայուն կայք հաստատել եւ ընտելանալ այդ հողին, որու խորթ գաւակները կը համարուէին: Ժամանակի գիտակցութիւնն իսկ կորսնցուցած, միշտ մեկնելու պատրաստ վիճակի մէջ եւ առանց յուսահատելու, կը սպասէին իրենց վիճափոր տուններուն առջեւ՝ նայուածքները սեւեռած սահմանէն անդին, Արարառէն ալ անդին:

Բայց զրկարաց ընդունած էին զինք, ու տարիներ ամբողջ, եւ հետեւողականօրէն, նոյն պատմութիւնը պատմել տուած էին իրեն,

հարցուցած, հետապնդած՝ կորսուած հարազատներու հետքը դանկ-
լու յոյսով: Անմար, միամիտ յոյսով: Իրենց համար շնաշխարհիկ
արարած մըն էր ինք, թէեւ հարազատ, եւ ատոր համար ալ կրկնա-
պէս սիրելի: Եւ ապշահար կը դիտէին զինք, կը քննէին, կը շոյէին,
կը դպչէին ու չէին կրնար հաւատալ, թէ միւս աշխարհէն եկած հա-
րազատ, հայրենակիցի մը զաւակն էր: Ինք, որ այնքան տարբեր էր
իրենցմէ՝ լեզուով, բարոյութեամբով, դաստիարակութեամբ, ու
նոյնիսկ հազուածքով:

Չարմանալի մարդիկ էին: Թէեւ քաղաքներու մէջ իր ճանչ-
ցած միւս Սասունցիներուն նման միամիտ էին ու բարի, սակայն
ասոնք տարբեր էին: Միւսներէն շատ աւելի տառապած ըլլալով հան-
դերձ, իրենց հինաւուրց կեանքը կ'ապրէին դեռ այս լեռներուն վրայ,
ինչպէս ապրած էին իրենց հայրերն ու նախնիքները դարերով: Ժուժ-
կալ, աշխատասէր, շարքաշ, եւ նաեւ անտաշ: Երբեմն նոյնիսկ՝
կոշա: Այլամերժ ու կասկածամիտ՝ բոլոր օտարներուն նկատմամբ:
Եւ օտարները՝ այլ հայեր էին իրենց համար. այսինքն ոչ-Սասունցի-
ները: Ստալինեան շրջանի բռնութիւնը այլ կերպ չէր կրնար անդ-
րադառնալ իրենց վրայ, զիրենք մղելով բնական ինքնապաշտպա-
նութեան: Արագածի անհիւրընկալ ժայռերուն ապաւինած, նախընտ-
րած էին մեկուսացումը, եւ իրենք զիրենք դատապարտած կամաւոր
բանտարկութեան: Իրենց գիւղերէն վար չէին իջած ամբողջ երեսուն
տարի, ու դառնացած, լուսթեան պատ մը քաշած էին իրենց շուրջ:
Բոլոր կապերը խզած էին արտաքին աշխարհին հետ — իրենց ծա-
նօթ եւ մատչելի միակ աշխարհը, որ Սովետական Հայաստան կը
կոչուէր — ու գեղամութեամբ միայն, եւ ակամայ, պետական կամ
պաշտօնական մարմիններ ընդունած էին երբեմն եւ հաղորդակցու-
թեան մէջ մտած անոնց հետ:

Երբ ինք դատաւ զիրենք, 1968-ի ամբան, հօրը տարեկից կամ
ժամանակակից կրէցներ չէին մնացած գրեթէ: Բայց իրենց զաւակ-
ներուն ու թոռներուն փոխանցած էին ամէն ինչ — անցեալ, պատ-
մութիւն, տոհմային եւ աւանդական բոլոր ժառանգութիւնները,
Սասնոյ լեռներուն պաշտամունքը, միամտութիւնը, բարութիւնը,
եւ անշուշտ՝ այլամերժութիւնը: Երիտասարդներն ու պատանիները
նոյնիսկ ծանօթ էին իրենց գերդաստաններու կամ տուններու — ինչ-
պէս իրենք սովոր էին ըսել — դարաւոր պատմութեան, յիշատակու-
թեան արժանի դէմքերուն եւ դէպքերուն, եւ ընդհանրապէս՝ իրենց
հետու եւ մօտ բոլոր հարազատներուն: Թալինի շրջանի աննշան գիւ-
ղերէն մէկուն մէջ ծնած ունէ պատանի գիտէր, թէ Պէյրութի, Հա-

լէպի, կամ Ամերիկայի մէջ ինչ ազգականներ ունէր: Հօրեղբորոր-
դիներ, մօրեղբորորդիներ, հօրաքրոջ զաւակներ, եւ ասոնց բոլորին
զաւակներն ու հարսերը կամ փեսաները՝ անուններով ու մասնաշառ-
կութիւններով:

Տարօրինակ, արտակարգ մարդիկ էին իսկապէս: Անտաշ, նա-
խամարդը յիշեցնող լեռնցիներ, որոնց տուններուն մէջ այնքան հարա-
զատ զգացած էր, որ զարմացած էր ինք եւս: Օճախ բառին իմաստը
այն ատեն հասկցած էր, եւ պապենական օճախ նկատած էր անոնց
իւրաքանչիւրին տունը: Սեղային նկատմամբ թէեւ փափկանկատ ու
վերապահ, որովհետեւ օտարի աղջիկ էր, սակայն անոր հետ վար-
ուած էին ճիշդ այնպէս ինչպէս կը վարուէին իրենց աղջիկներուն եւ
հարսներուն հետ — նոյնքան խիստ ու պահանջկոտ, բայց նաեւ ան-
հաւատալի խոնարհութեամբ: Այս վերաբերմունքը շարժուցած էր
Սեղան, բնական է, բայց նաեւ հմայած էր զինք վերջաւորութեան:
Իսկ երբ որոշած էին Լիրանան վերադառնալ, զլիսաւոր դժուարու-
թիւնը՝ զայն անոնցմէ բաժնելը եղած էր:

Բայց վերադարձած էին:

Որոշելը շատ հեշտ եղած էր, որովհետեւ անակնկալօրէն հա-
սած էին այդ կորակացութեան, առանց իսկ մտածելու այդ մասին:
Պատահմամբ, օր մը, երբ երեսները դուրս հանելու կը պատրաս-
տուէր, հարցուցած էր Սեղային:

— Կ'ուզե՞ս Պէյրութ վերադառնալ:

— Անկարելի է:

— Եթէ կարելի ըլլայ...:

— Դուն գիտես: Դուն որոշէ:

— Փորձ մը ընենք գէշ չ'ըլլար:

Այն ատեն միայն, հաստատելէ ետք, թէ լրջօրէն կը խորհէր
այդ մասին, Սեղա հետաքրքրուած էր:

— Ինչո՞ւ յանկարծ:

— Շատ պարզ է, չէ՞: Ինձի պէս անձ մը հոս չի կրնար ապրիլ:

— Գալէդ առաջ պէտք է հետաքրքրուէիր, սերտէիր:

— Ճիշդ: Սխալած եմ, կ'ընդունիմ:

— Այդքան պարզ: Աշխարհի մեծագոյն երեսան ես: Անկեղ-
ծութիւնդ եթէ չըլլար, ո՞վ գիտէ ինչ կը պատահէր քեզի:

Տասնհինգ ամիս տեւած էր վերադարձի արտօնութիւն ստանա-
լը: Բազմաթիւ ուրիշներու հետ բախտաւոր եղած էին — եթէ կարե-
լի էր բախտաւորութիւն նկատել ատիկա — եւ օր մըն ալ, երբ յուսա-
հասած էր այլեւս, կանչած էին զինք Ուլիք եւ յանձնած իրեն անհր-

բաժնեշտ թուղթերը: Անկարելի, անհաւանական երազ մը կը թուէր այդ ամբողջը հիմա: Տակաւին մինչեւ այսօր, երբ անդրադառնար երբեմն, չէր կրնար հաւատաւալ, թէ ինք ապրած էր վերջին այս վեց-եօթ տարիները եւ կատարած այս բոլորը — ամուսնութիւն, ներ-դադթ, արտադադթ: Երազ էր: Ո՞ւր էր գիտակցութիւնը այս ամբողջ միջոցին:

Ու կարծես ոչինչ փոխուած էր: Նոյն գրասենեակին մէջ էր, նոյն պաշտօնին վրայ, եւ կը շարունակէր իր առօրեայ միօրինակ կեանքը: Աստղիկի փոխարէն Շուշանիկը նստած էր դիմացը հիմա, եւ տակաւին դինք կը դիտէր՝ նոյն կեդրոնացեալ արատայայտու-թեամբ: Հարկադրուած խօսեցաւ:

— Ի՞նչ ունիս:

— Կը մտածէի, — սթափեցաւ քարտուղարուհին: — Երէկ Մու-չեղը հանդիպեցաւ նորէն. երթալէդ ետք: Երբ գիտցաւ որ պիտի չը-վերադառնաս, զիս դուրս, սրճարան հրաւիրեց: Չկրցայ մերժել:

— Մարդ չ'ուտեր: Թէեւ զարմանալի է: Ես կը կարծէի որ կին արարածը գոյութիւն չունի իրեն համար. չի տեսներ, կամ չի նկա-տեր:

— Շատ աղուոր, ներկայանալի երիտասարդ մը եղած էր:

Առաքելեան հարցական նայեցաւ պաշտօնակիցին:

— Սափրուած, ածիլուած, մաքուր ու կոկիկ:

— Չըսե՛ս, պատրաստուած եկած էր ուրեմն: Վա՛յ լակոտ, վա՛յ: Հետաքրքրական է: Յետո՞յ:

— Ժա՛դ, — Պր. Արամի դէմքը տեսնուեցաւ դրան ճեղքին մէջ, — վայրկեան մը կու գա՞ս:

Յարակից սենեակին մէջ դործատէրը փոխանակ առաւօտեան առօրեայ աշխատանքին լծուելու, գոհունակութեամբ ժպտեցաւ իրեն եւ ըսաւ:

— Կեանքիս ամենէն երջանիկ օրերէն մէկը ապրեցայ երէկ: Շնորհակալ եմ:

Երիտասարդը շփոթանքի մատնուած, եւ ակամայ պապանձած, բացատրութեան սպասեց:

— Ձեւ կրնար երեւակայել որքան երախտապարա եմ, — շա-րունակեց Մարդը, ու նկատելով որ դիմացինը ոչինչ կը հասկնար խօ-սածէն, փորձեց լուսարանել: — Մուչեղին համար ըրածդ:

— Ի՞նչ պատահած է: Ես տեղեակ չեմ:

— Մարդու կարգ անցեր է վերստին: Խելքը տուն կանչած եւ... անհաւատալի է: Անառակ որդին տուն վերադարձաւ:

— Իմացայ: Երէկ հոս հանդիպած է մեր դուրս ելլելէն ետք. Շուշանիկը ըսաւ, — ու փոխանակ յայտնելու, թէ քարտուղարուհին հետ սրճարան գացած են յետոյ, Ժազ պաշտպանեց կրտսեր Սարգիս-եանը: — Բնաւ անառակ չէ եղած, եւ կորսուած չէր յամենայն դէպս: Շատ լուրջ եւ ուշիմ տղայ է:

— Երանի չըլլար: Ուշիմութիւնը դիտուն փորձանք պիտի ըլ-լայ օր մը: Հիմա ալ միտքը դրեր է կղերական ըլլալ. եթէ կրնաս, հասկցի՛ր:

— Լուր ունիմ:

— Ըսաւ, ըսաւ որ հետզ-խօսած է այս մասին: Շատ ուրախ եմ որ քեզ ճանչնալու առիթ ունեցաւ, եւ ինչպէս ըսի, երախտապարա եմ: Ուրիշ ի՞նչ կրնամ ըսել: Այսքանին ալ փառք: Ի՞նչ է վարժիքդ:

— Բախտաւոր պէտք է համարէք դուք ձեզ: Սքանչելի դաւակ մը ունիք:

— Չէ՛, կղերական ըլլալուն մասին այսինքն:

— Երկու շաբաթ փոքրագոյնն է, դէթ առայժմ: Նախընտրելի չէ՞:

— Կղերական ըլլալը չարիք կարելի չէ նկատել. ընդհակառա-կը, սրտիս ալ կը խօսի: Բայց մէկ հատիկ մանչ դաւակ է:

— Ձեր մտահոգութիւնը կը հասկնամ. կը զգամ: Բայց չէք դի-տեր. ժամանակը ինչե՛ր կրնայ փոխել:

— Կը կասկածիմ: Որոշած է Հայաստան դիմել, էջմիածին: Հոն հասնելէ ետք, ի՞նչ փոփոխութիւն կրնաս ակնկալել:

— Աւելի լաւ, — համոզուած շեշտով մը խօսեցաւ Առաքել-եան: — Հոն հիասթափ ըլլալը աւելի հաւանական է, աւելի դիւրին:

— Ինչո՞ւ, — Արամ Սարգիսեան հարցուց միամտարար, եւ ա-ռանց իսկ մտածելու:

— Մուչեղը իսկապէս հաւատացեալ, համոզուած, եւ ամենէն կարեւորը՝ զաղափարապաշտ տղայ է: Իսկ հոն, կը կասկածիմ որ անկեղծօրէն հաւատացող մը գտնուի:

— Ինչ հաւատքի մասին է խօսքդ:

— Քրիստոնէական հաւատքի, բնականաբար: Միւսը գոյու-թիւն չունի արդէն:

— Միւսը ի՞նչ է:

— Համայնավարութիւն:

— Երբեմն իսկապէս զարմանալի բաներ կ'ըսես, Յակոբ: Ե-թէ Սովետական Միութեան մէջ համայնավարութիւն չկայ, ո՞ւր կայ:

— Անկեղծօրէն չեմ դիտեր: Բայց հոն չգտայ ես: Բնական է խօսքը կայ, աղմուկը, քարոզչութիւնը, պատասաները, նկարները, խոստումները: Իսկ այս բոլորը ոչինչ կը փաստեն. ոչ համայնափարութեան եւ ոչ ալ ընկերափարութեան դոյութիւնը:

— Մարդիկը հրաշքներ դորձած են: Աշխարհի ամենայնամբէնաց երկիրը յիսուն տարուան մէջ հզօր պետութեան վերածած են:

— Ուրիշ հզօր պետութիւններ ալ կան, անցեալին եւս եղած են: Համայնափարութեան պէտք է վերադրել:

— Տրամաբանելու նոյն ծուռ եղանակը, — խնդաց Արամ Սարգիսեան: — Անպայման հակասութիւններով պիտի խօսիս: Մէջդ ծուռ բան մը կայ, ի՞նչ խօսք:

— Իրագործումը ոչ ոք կրնայ ուրանալ: Ճարտարարուեստ, գիտութիւն, զինուորական ոյժ, նոյնիսկ խաղաղութիւն կոչուածը... բայց այս բոլորին մէջ համայնափարութիւնը դեր չունի, չէ ունեցած: Պետութիւնը՝ այո՛: Մարդկային զանգուածներու բազուկը, կամքը, դոհողութիւնը:

— Ուրիշ երկիրներու մէջ նոյնը չէ պատահած սակայն: Մարդիկ նոյն դոհողութիւնը չեն ըրած. ինչո՞ւ:

— Կրնայ ըլլալ, թէ եւ շատ վիճելի է: Պատճառները ուրիշ տեղ պէտք է փնտռել յամենայն դէպս: Ընկերային, հասարակագիտական, տնտեսական եւ այլ բազմաթիւ պատճառներ կան: Հաւանաբար որովհետեւ ստիպուած էին, իրենց պայմանները կը պարտադրէին: Եւ պէտք չէ մոռնալ վարչամեքենան, դրութիւնը, հնգամեայ ըլանները:

— Լաւ որ դուն կ'ըսես:

— Համայնափարութիւնը տարբեր բան է սակայն: Կեանքի վարդապետութիւն է աւելի, ապրելու եղանակ, երջանիկ կեանքի խոստում, հաւասարութիւն, արդարութիւն, բարօրութիւն:

— Եւ այս բոլորը չկան հոն, ըսել կ'ուզես:

— Խոստումը կայ անշուշտ, — երիտասարդը պատրաստուեցաւ իր սենեակը վերադառնալու: — Ինչո՞ւ այս մասին կը խօսինք:

— Ո՛չ, ոչ, նստէ՛: Քանի սկսանք, շարունակենք: Հետաքրքրական է: Ի վերջոյ մեր հայրենիքն է:

— Սքանչելի երկիր է: Ժողովուրդը նոյնպէս, իր բոլոր հատուածներով: Բայց կապ չունի. հարցը Հայաստանին չի վերաբերի միայն, այլ ամբողջ Սօվետական Միութեան: Ափսոս: Մարդկութեան մեծագոյն երազն էր, միակ յոյսը:

— Ձեմ հասկնար:

— Համայնափարութիւնը թերեւս կարենար փրկել մարդկու-

թիւնը: Հարիւրաւոր տարիներ ետք առաջին լուրջ փորձն էր:

— Լրջօրէն կը հաւատա՞ս:

— Համոզուած եմ, թէ կրնար յաջողիլ:

— Ատոր համա՞ր Հայաստան գացիր, — երէցը հարցուց վարանքով:

— Երբ ներգաղթեցի երեսայ չէի: Այդ թուականին գաղտնիք չէր մնացած արդէն: Աշխարհը ամբողջ իմացած էր, գիտէր. ամէն ինչ պարզուած էր: Ստալինեան շրջանի բռնութիւնը, զրկանքը, հրէշային ոճիրները, հալածանքը... ո՛վ չէր գիտեր:

— Ինչո՞ւ գացիր ուրեմն:

— Այս մասին խօսած ենք ասկէ առաջ, եւ բացատրած եմ ձեզի կարծեմ: Անիմաստ կրնայ թուիլ, անհասկնալի՝ ուրիշներուն համար: Կարելորդ իմ պարագաս չէ սակայն: Հայր Հայաստան կ'երթայ, որովհետեւ իր երկիրն է. ուրիշ տեղ չունի: Հազար տարի հայրենիք, պետականութիւն, Հայաստան երազած ենք: Եւ երբ իրականացաւ երազը, երբ հայկական պետութիւն ունեցան՝ սեպհական, հայրենի հողի վրայ, բնական էր որ ուզէին հոն վերադառնալ, հաստատուիլ: Բոլոր ներգաղթողները չէի՞նք գիտեր կը խորհիք:

— Այո՛, ես ալ դիմած էի 1947-ին: Եւ եթէ կարգս գար, ներգաղթած պիտի ըլլայի անշուշտ: Ի՞նչ օրեր էին: Մէկ տարի առաջ մոռնանցած էինք, ներգաղթի ամենէն տաք օրերուն, բայց ո՛վ կը մըտածէր այդ մասին: Տեսակ մը գինովութիւն էր: Մինչեւ այսօր չեմ կրնար որոշել, թէ մեր չեթալը բախտաւորութի՞ւն էր կամ... բայց ինչ ալ ըլլայ, դացողը պէտք չէ վերադառնայ:

Ժազ անհանդիստ դգաց, եւ անդրադարձաւ որ սկսեալ կերպով ինքնապաշտպանութեան պէտք է դիմէր: Բայց ակնարկութիւնը իրեն չէր ուղղուած, մտածեց յետոյ, եւ ուրեմն՝ ինքնապաշտպանութեան հարաց չէր կրնար ըլլալ: Ինքզինք պաշտպանելու կամ արդարացնելու պարտաւորութիւն չէր զգար յամենայն դէպս, հող չէ թէ ինչ խորհէր գիմացինը: Եւ անսկնկալ անտարբերութեամբ մը խօսեցաւ:

— Ամէն մարդ նոյնը կ'ըսէ, նոյնը կը մտածէ: Ես ալ կրկնած եմ յաճախ: Այո՛, մի գարմանաք: Վերադառնալէս ետք իսկ նոյն համոզումը ունիմ: Ձեր ըսածը ընդունելով հանդերձ, նոյնքան կարեւոր է ընդունիլ, որ պէտք է պատճառ մը ըլլայ: Ի՞նչ է պատճառը: Այս մարդիկը ինչո՞ւ կը վերադառնան: Բոլորն ալ խելադարեցա՞ն յանկարծ, թէ բոլորին մէջ հայրենասիրութիւնը ցամքեցաւ մէկ օրէն միւսը: Ձի կրնար պատահիլ: Ասոնց մէջ անպայման սրտցաւ, հայրե-

նասէր, գաղափարապաշտ մարդիկ պէտք է դառնուին: Ինչպէ՞ս բացատրել: Չէ՞ք խորհիր որ պատճառ մը կայ:

— Խօսք չ'ուզեր: Դժգոհութիւն: Հայու նկարագիրն է: Տեղ մը կ'երթան, կը հաստատուին, ու եթէ գոհ չ'մնան, գլուխնին կ'առնեն կը քալեն:

— Թերեւս Հայութիւնը ինձմէ աւելի լաւ կը ճանչնաք, եւ հաւանաբար ձեր ըսածը ճիշդ է: Ձեզ գիտեր: Սակայն ինչո՞ւ պէտք է դժգոհին: Պատճառ մը պէտք է ըլլայ դարձեալ, չէ՞:

— Ո՛վ դժգոհութիւն չունի: Աշխարհի վրայ անթերի երկիր, կատարեալ կեանք չկայ: Մենք դժուարութիւններ չունինք: Մենք դրախտը մէջ կ'ապրինք:

— Բայց դժոխքի մէջ ալ չենք:

— Եղա՞ւ: Մարդիկը չեն ապրիր, չեն աշխատիր: Կեանքը կը շարունակուի հոն, չէ՞:

— Ապրիլ կայ, եւ ապրիլ կայ, — Ժաղ թէ եւ ընդլցած, մեղմօրէն դիտել տուաւ:

— Տեղ մը աւելի լաւ կ'ապրին, ուրիշ տեղ ալ աւելի գէշ: Ի՞նչ կարելի է ընել: Ճակատագրիդ հետ պիտի հաշտուիս:

— Խնդիրը այդքան ալ պարզ չէ: Այդ ուղղութեամբ մենք չէ որ Հայաստանի ժողովուրդին դաս պիտի տանք: Հակառակ ամէն դժուարութեան, իրականութեան հետ հաշտուած են, ու գանդատած չունին: Սակայն ներգաղթողը հայրենիք վերադառնալու երազով կ'երթայ հոն, իր սեպհական հողին վրայ ապրելու ակնկալութեամբ ու... ճիշդ հակառակը կը պատահի: Երկրորդ կարգի քաղաքացի նոյնիսկ չեն նկատեր զինք. օտարի տեղ կը դնեն, կ'արհամարհեն, կ'անտեսեն, կը վիրաւորեն, ստորագաս արարած մը կը նկատեն զինք պարզօրէն: Մինչդեռ հոս, օտար երկիրներու մէջ, հաւասար իրաւունքներ կը վայելենք: Ինչպէ՞ս կ'ակնկալէք որ հաշտուին այս իրականութեան հետ:

— Արդարացի պատճառ մը ունին կ'երեւի ներգաղթողներուն չվստահելու:

— Պր. Արամ, այս հարցը այսօր զիս չի հետաքրքրեր վերջին հաշտով, եւ իմ դուրս դալս այս ամբողջին հետ կապ չունի անշուշտ: Բայց ժամանակ է որ մենք, Հայութիւնը այսինքն, թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ, սորվինք սեւին սեւ ըսել, եւ ճերմակին՝ ճերմակ: Սովետական Հայաստանի մէջ ներգաղթողներուն վերաբերեալ սխալ բան մը կայ. ընդունինք ասիկա: Հարցը շատ պարզ է, եւ ուրեմն չբարդացնենք զայն անտեղի պատճառաբանութիւններով եւ

ինքնախարէութեամբ: Այո՛, շատ պարզ հարց մը, որ կապ չունի երկրի վարչակարգին կամ համայնավարութեան հետ: Չփորձենք ծածկել իրականութիւնը, եւ ընդունինք որ Հայաստանի մէջ ներգաղթողներուն հետ ճիշդ կերպով չեն վարուած մինչեւ այսօր: Խորքին մէջ եթէ մտածես, այնքան ծիծաղելի է որ, կը զարմանամ երբեմն: Այսքան պարզ հարց մը կը բարդացնենք, կը մեծցնենք: Ինչո՞ւ: Ի՞նչը ծածկելու կամ արդարացնելու համար:

— Ըսի, չէ՞: Պատճառ մը պէտք է ըլլայ կ'երեւի: Ներգաղթողներուն չեն վստահիր հաւանաբար:

— Ասոր մէջ ներգաղթողները դեր չունին, յանցանք չունին, եւ իսկապէս անմեղ են: Ի՞նչ պիտի կարենային ընել, եթէ նոյնիսկ հրէշներ ըլլային: Ծիծաղելի է: Կրակ ըլլան՝ իրենք զիրենք կ'այրեն: Հըսկայ Սովետական Միութեան մէջ ոչինչ կը ներկայացնեն, եւ ոչինչ կրնան ընել: Անվստահութիւն: Ինչո՞ւ պիտի չվստահին: Ի՞նչ ըրին այս մարդիկը. Կրնա՞ք օրինակ մը տալ, փաստ մը: Կարելի չէ, որովհետեւ բան մը չեն ըրած, չեն կրնար ընել:

— Ներգաղթողներուն մասին ինչո՞ւ այսքան դէշ կարծիք կազմուած է ուրեմն:

— Ես ալ կ'ուզեմ գիտնալ: Մինչեւ հոս, Սփիւռքի մէջ, ներգաղթողները սեւցնելու ճիշդ մը կայ: Ինչո՞ւ: Բայց ոչ ոք կրնայ գէթ մէկ օրինակ տալ անոնց կատարած արարքներէն, գործած ոճերներէն: Ի՞նչ է դադտիքը: Ծատ պարզ: Չեն կրնար տալ, որովհետեւ այդ տեսակ բան չէ պատահած: Տիպար քաղաքացիներ են բոլորն ալ, առանց բացառութեան:

— Հայաստանէն ինչո՞ւ կը հեռանան ուրեմն: Ինչո՞ւ կ'ուզեն դուրս գալ: Այսքանը բաւարար պիտի ըլլար զիրենք դատապարտելու, դատարիք նկատելու: Չվստահելու:

— Այս վիճակին կը հասցնեն զիրենք, կ'իրաւադրեն, կը ստորագասեն, կը հալածեն, կը սեւցնեն, ու յետոյ դաւաճան կը կոչեն զիրենք, երբ ուզեն ազատիլ այս բոլորէն: Ի՞նչ հրէշային հեղինակ է: Բայց կը զարմանամ որ դուք եւս այս բոլորը առանց հարցաքննելու կ'ընդունիք, կ'իրացնէք: Եթէ ձեզի պէս անձ մը նոյնիսկ կրնայ տարուիլ եւ իյնալ նոյն ծուղակին մէջ, կը նշանակէ թէ իրենց ծրագրերին մէջ յաջողած են արդէն: Եւ այս մասին խօսիլը աւելորդ է ուրեմն:

Արամ Սարգիսեան սրբողած, վիրաւոր արտայայտութեամբ մը նայեցաւ երիտասարդ խօսակիցին, բայց ակնարկութիւնը անոր անկեղծութեան վերադրելով, ներողամտաբար հարցուց:

— Ի՞նչ ծրագրի մասին է խօսքդ :

— Իրականութիւնները հիմնովին շրջելու, խեղաթիւրելու իրենց ճիգը : Գիտեն, թէ թերացած են, իրենք յանցաւոր են, բայց յանցանք չեն կրնար ընդունիլ : Կը մերժեն : Որովհետեւ իրենք անսխալական են, չեն կրնար սխալիլ : Արտօնուած չէ իրենց եւ ուրեմն՝ փոխանակ դորձուած աւերը դարմանելու, աւելի կը բարդացնեն զայն :

— Ինչպէ՞ս պիտի դարմանեն : Եղածը եղած է արդէն :

— Ատկէ աւելի դիւրին դորձ չկայ : Հայրենադարձ հայերը իրենց հաւատար կը նկատեն, նոյն իրաւունքները չեն զլանար անոնց, եւ վերջ կը դնեն ամէն կարգի խտրականութեան : Ատկէ ետք ոչ մէկ ներգաղթող Հայաստանէն հեռանալու մասին կը մտածէ :

— Դուն ըսածիդ կը հաւատա՞ս :

— Ըսել կ'ուզէ՞ք, թէ դուք ալ չէք հաւատար որ կրնան վեհանձն ըլլալ եւ հաւատար իրաւունքներ շնորհել ներգաղթողներուն, — ժպտեցաւ ժառ :

— Այսքա՞ն թերահաւատ դարձած ես, — գործատէրը ժպտեցաւ նոյնպէս :

— Բնա՛ւ : Սակայն ինքզինքս չեմ կրնար խարել : Երբ սեւին ճերմակ կ'ըսեն, ինչպէ՞ս կ'աղնկալէք որ հաւատամ իրենց : Այս հոգեվիճակէն դուրս պէտք է դանք, եւ իրենց բոլոր ըսածները բացարձակ, անհերքելի ճշմարտութիւն չնկատենք : Հայաստանը բոլոր հայերուն համար սիրելի է, նուիրական : Բոլոր հայերուն հայրենիքն է, ինչպէս իրենք եւս կ'ըսեն ու կը պնդեն : Եթէ այդպէս է, իրենց բոլոր ըսածները կ'ըլլու, ընդունելու պէտք չունինք : մանաւանդ երբ կը ստեն : Ի վերջոյ այդ երկրին տէրերը իրենք չեն միայն, հոգ չէ թէ իրենք հոն ապրին եւ մենք հոս, եւ բնական է ուրեմն, որ մենք ալ մեր խօսքը ունենանք, Եւ պէտք եղած ատեն՝ հաշիւ պահանջենք իրենցմէ նոյնիսկ : Այսինքն՝ մեզի պարտադրուած ստորակայութիւնը թօթափենք մեր վրայէն, եւ սեպհական տեսակէտ ունենանք եւ արտայայտենք՝ անհրաժեշտութեան պարագային : Ուրիշ կերպ չի կրնար ըլլալ : Ինծի համար այսպէս է գէթ : Ատոր համար վ'ըսեմ որ ինքզինքս չեմ կրնար խարել : Սակայն թերահաւատ չեմ դարձած, այլ միայն իրենց բոլոր ըսածները չեմ կրնար ընդունիլ տակաւին : Գէթ ներկայիս :

— Հետաքրքրական է : Մասամբ համաձայն եմ նոյնիսկ քեզի : Բայց պետութիւնը իրենք են, մի մոռնար :

— Ատրկա չի նշանաակեր որ երկրին բացարձակ տէրերն են, իսկ մենք՝ իրենց ծառաները :

— Այդքան բորբոքելու պէտք չունիս, — Պր. Արամ փորձեց

հանդարտեցնել զինք. — կեանքը այսպէս է դժբախտաբար :

— Նիւթէն շեղեցանք կարծեմ, — ժառ յանցաւոր զգաց : — Մուշեղը բոլորովին մոռցանք :

— Կարծիքդ ուզեցի առնել միայն : Իսկապէս չնորհակալ եմ : Եթէ դուն չըլլայիր . . . :

— Մուշեղը շատ խելացի տղայ է : Եթէ ինք այդ գիտակցութեան հասած չըլլար, ես չէի կրնար օգտակար ըլլալ իրեն : Իրականութեան մէջ մասնաւոր բան մը չըրի. կը խօսէինք միայն : Եւ պէտք է ըսել որ ինծի համար նոյնքան հաճելի էր :

— Յուսանք որ այս նոր հիւանդութենէն ալ վը փրկուի : Կրօնական ըլլալը ո'ւրիշ հանեց : Ուրիշ բանի մը չէ՞ր կրնար բռնուիլ : Սիրահարուիլ, կամ աղջկայ մը բռնուիլ :

Երբ իր սենեակը վերադարձաւ, Մուշեղ հոն էր արդէն եւ իրեն կը սպասէր : Շուշանիկ դորձի լծած էր զինք մինչ այդ, ու միասնաբար կ'աշխատէին : Կին արարածը ամենակարող է, մտածեց ժառ եւ դիտեց զիրենք դոհունակութեամբ : Զինք ճանկերուն մէջ առած էր արդէն եւ ով գիտէ ինչ ծրագրերն էր կը մշակէր : Ժամանակ չէին կորսընցուցած յամենայն դէպս — երկուքն ալ : Ամիսներու ընթացքին հազիւ քանի մը նախադասութիւն փոխանակած էին, մինչդեռ վերջին մէկ օրը, կամ այդ պտոյտը, բաւարար եղած էր որ զիրար դարպասելու սկսին : Հրաշալի էր : Բնութիւնը ամենազօր էր, անյաղթահարելի : Փաստօրէն Մուշեղի Աստուածը պարտուած էր, գէթ առժամապէս, եւ Մարդուն հացին իւղ քսած :

— Մերկացած չե՞ս զգար, — հարցումը ուղղեց տղուն եւ դրանց տեղը :

— Ինչպէ՞ս կուհեցիր, — Մուշեղ ապշահար նայեցաւ իրեն : — Իսկապէս, կարծես մերկ եմ. անբնական բան մը կայ վրաս : Տարօրինակ զգացում է : Կարծես ամէն մարդ զիս կը դիտէ :

— Դժգո՞հ ես :

— Տարօրինակ զգացում է, բայց ուրախ եմ, թեթեւցած : Բնաւ այսպէս չեմ զգացած :

— Ուշադրութիւն, շարքը կը խանդարես հիմա, — Շուշանիկ ձեռքերը տեղաւորեց նամակներու տրցակներուն վրայ : — քեզի գործ վստահիլը խոհեմութիւն չէ : Պիտի խօսի՞ս, թէ պիտի աշխատիս :

— Հոգ մի ընեք :

— Ի՞նչ որոշեցիր, — Առաքելեան ներողամտաբար նայեցաւ քարտուղարուհիին :

— Հայրս առարկուի թիւն չըրաւ իսկ : Եթէ դիտնայի, ամիսներ առաջ աղատած կ'ըլլայի այս մտահոգութենէն, եւ այսքան ժամանակ ալ չէի կորսնցնէր :

— Քանի անգամ ըսի քեզի :

— Դեպքանատուն պիտի երթայի, բայց նախ քեզ տեսնեմ ըսի : Ի՞նչ կը խորհիս :

— Որոշած ես արդէն, չէ՞ :

— Էջմիածին դիմելս որքա՞ն ճիշդ է սակայն :

— Մինչեւ հիմա դուն էիր պնդողը, — ժազի դէմքին վրայ խորհրդաւոր ժպիտ մը ուրուադժուեցաւ : — Ի՞նչ պատահեցաւ յանկարծ :

— Սխալ բան մը կայ, չեմ գիտեր : Ձէի ակնկալեր որ այսքան դիւրին ըլլար : Տակը բան մը կայ : Հայրս գիտ չի խաբեր սակայն :

— Ինչի՞ մասին կը խօսիս : Եթէ միտքդ փոխած ես, քաջութիւն ունեցիր ընդունելու : Աղէտ չէ, ոչ ալ մեղք : Ընդհակառակը, եթէ առանց համոզուած ըլլալու առնես այս քայլը, կրնայ պատահիլ որ զղջաս յետոյ, ապագային :

— Կասկածամիտ մարդ ես :

— Մինչեւ այսօր չեմ ստան քեզի, եւ միշտ անկեղծ եղած եմ հետդ : Պատճառ չունիմ ասկէ ետք կեղծելու, կամ մտածածս ծածկելու քեզմէ : Մտածում մըն էր, կասկած մը, եթէ կ'ուզես : Եւ անկեղծօրէն միտքս պարզեցի, մտածածս ըսի քեզի :

Շուշանիկ, թէեւ կեղբորնացած կերպով կ'աշխատէր, բացայայտ էր սակայն որ մասնաւոր ուշադրութեամբ կը հետեւէր խօսակցութեան : Արտակարգ ոչինչ կար անշուշտ, նկատելով որ միշտ ալ հետաքրքրութեամբ հետեւած էր իրենց զրոյցներուն, բայց այսօր քիչ մը աւելի ուշադիր էր — ուշադրութիւն դրակելու շափ : Եւ կամ ինք կ'երեւակայէր :

— Վաղը երթամ հետաքրքրուիմ մէյ մը, — Մուշեղ ըսաւ եւ շարունակեց ընդհատուած աշխատանքը :

— Վաղը Մայիս 1 է : Դեպքանատունը փակ կ'ըլլայ :

— Կրնամ այսօր երթալ այդ պարագային : Դեռ ժամանակ կայ հազիւ ժամը տասն է :

Տնտնաց սակայն, ձեռքը եղած աշխատանքը վերջացնելու պատրուակով, եւ ի վերջոյ մեկնեցաւ ակնյայտ դժկամութեամբ : Երկու պաշտօնակիրները հետեւեցան անոր իւրաքանչիւր շարժումին, անգիտակցաբար եւ խորատուղուած մտածումներու մէջ, մինչեւ դրան փակուիլը : Ու միայն ասկէ ետք անոնց նայուածքները փրճու-

ւեցին գիրար, ընկրկեցան պահ մը, խուսափեցան իրարմէ եւ վերջապէս փոխանակեցին լուս խոստովանութիւն մը :

— Տղան հմայած ես, — աղջիկը խօսեցաւ, բուն մտածածը ծածկելու յոյսով : — դպրոցական հնազանդ աշակերտի պէս կը հետեւի բոլոր ըսածներուդ :

— Ենթադրածիս պէս բարի եւ խելօք կատու մը չես եղեր : Դուրս եկաւ որ շատ խորամանկ ու վտանգաւոր կատու մըն ես իրականութեան մէջ, եւ քեզմէ պէտք է դուրսանալ : Խեղճ տղան մուկի պէս խաղցնելու սկսած ես արդէն : Ի՞նչ խաղցնել... առանց ժամանակ կորսնցնելու չարչարանքի անցած ես : Աճապարելու պէտք չունիս շատ անփորձ է, եւ դիւրին դիւրին չի կրնար փախուստ տալ :

Շուշանիկի սեւ ու փարփլուն աչքերը շողեր արձակեցին, բայց չիկնեցաւ ու չփոթած հազիւ կրցաւ կմկմալ :

— Երեխայ է : — Յետոյ բարձրաձայն աւելցուց : — Միտքդ ծուռ է, ի՞նչ պիտի ըլլայ :

— Երեխաները չարչարել աւելի դիւրին է :

— Մեծերէն ի՞նչ խել տեսնեմ որ... :

— Յամենայն դէպս կրնայ օգտակար ըլլալ : Եւ չես գիտեր, թերեւ Մարդուն գործին ալ կու գայ :

— Տրամադրութիւնդ լաւ է այսօր : Բայց կատակը մէկդի, այսքա՞ն դէժ վարձիք ունիս իմ մասիս :

— Ինչո՞ւ դէժ, աղջիկ : Քեզմէ աւելի լաւ հա՞րս պիտի գտնեն : Վարպետդ հին, պահպանողական մարդ է, եւ քեզ ալ կը սիրէ, կը հաւնի :

— Լաւ միջոցդ կ'ըլլաս, — ըսաւ Շուշանիկ ու լռեց յետոյ : Նախընտրելի էր վերջ տալ այս խօսակցութեան, մտածեց, եւ սկսաւ մեքենայրել :

ժԲ.

Դաւիթ Օհանեան խոհանոցին մէջ նստած կը խմէր տակաւին, թէեւ կը դգար որ մարմինը ծանրացած էր եւ իրեն չէր հպատակեր այլեւս : Առաջին անգամը չէր որ կը պատահէր ասիկա եւ գիտէր, թէ կրնար լուրջ հետեւանքներ ունենալ : Ասկէ շուրջ երկու ամիս առաջ, Մայիսին, երբ սովորականէն աւելի խմած էր դարձեալ, նոյնպիսի անշարժութեան մը մատնուած էր մարմինը, բայց յաջորդ օրը

վերագրած էր ինքզինք եւ, թէեւ ուշ, աշխատանքի դացած էր նոյնիսկ: Քիչ առաջ փորձած էր ոտքի կանգնել, բայց յետոյ փոխած էր միտքը եւ բաժակ մը եւս օղի խմած: Կէս գիշերը անց պէտք է ըլլար — Ալիսն ու երեխաները վաղուց քնացած էին արդէն — եւ ասկէ աւելի պէտք չէ ուշանար: Առաւօտուն ի՛նք պէտք է բանար խանութը, նկատելով որ Կիրակի էր: Երկու կրասեր գործաւորներուն շարաքական արձակուրդի օրն էր Կիրակին. իսկ Օննիկ, որ ամէն օր արեւածագէն առաջ կը բանար խանութը, բացառաբար պիտի ուշանար այդ օր: Մտահոգուեցաւ պահ մը եւ հայհոյեց: Եթէ լրջօրէն հիւանդանար, անդամալուծուէր՝ ի՛նչ պիտի ընէր: Բժիշկը զգուշացուցած էր զինք: Բայց փոխանակ դարձան մը գտնելու, պնդած էր թէ պէտք է խմիչքէն հրաժարէր: Ձէր կրցած այդ հայվանիմ հասկցնել, որ առանց խմիչքի չէր կրնար ապրիլ ինք: Բայց եթէ անդամալոյծ ըլլար...

Մեռնիլը նախընտրելի էր: Նախ՝ չէր կրնար անկողնին մէջ պառկած մնալ: Իսկ անդամալոյծ վիճակի մէջ՝ սարսափելի էր: Կը նախընտրէր անձնասպան ըլլալ: Ապրելու իրաւունք չունէր արդէն: Ամիսներ առաջ ինքն իր հաշիւը մաքրած պէտք է ըլլար, եւ վերջ տուած այս խայտառակութեան: Կը հանգստանար, կը խաղաղէր: Ձանձրացած էր, զգուած, յուսախար՝ կեանքէն, ինքնիրմէ, զաւակներէն: Մանաւանդ ինքնիրմէ, որովհետեւ կատարեալ յիմար մը եղած էր, խնթութեան տուած ինքզինք, եւ փոխանակ շինելու՝ քանդած էր միշտ: Մօրը իրեն համար ծրագրածին եւ ցանկացածին ճիշդ հակապատկերը եղած էր: Եւ անոր կանխահաս մահուան պատճառ դարձած: Մայրը ուզած էր բարձրագոյն ուսում տալ իրեն, նկատելով որ զարգացած կին էր — այն սակաւաթիւ հայ կիներէն, որոնք երկրորդական ուսում ստացած էին քարտէրէն առաջ — բայց ինք նախակրթարանը նոյնիսկ չէր աւարտած: Ուզած էր յետոյ որ պատուարեր արհեստ մը սորվէր, իսկ ինք տարիներ անգործ թափառելէ ետք, հազիւ մսավաճառ կրցած էր ըլլալ: Ճակատագրին հետ հաշտուած, ամուսնացուցած էր զինք, թոռներուն կարգին ուսում տալու ակնկալութեամբ: Եւ թէեւ յուսախար որ մանչ թոռներ չէր ունեցած, ազնիւներուն վրայ կեդրոնացուցած էր ամբողջ ուշադրութիւնն ու սէրը ու հսկած անոնց կրթութեան եւ ուսումին: Ինք ամուսնանալէն ետք եւս շարունակած էր խմել. սկիզբը տունէն դուրս, բարեկամներու կամ կուսակցական ընկերներու հետ, ու յետոյ, տարիներ ետք՝ տունը: Եւ ասկէ ետք տարիները անցած էին, եւ ինք չէր անդրադարձած նոյնիսկ: Երբ արթնցած էր, զաւակները երի-

տասարդ էին արդէն: Կեանքին մեծագոյն ցնցումը ունեցած էր, որովհետեւ իր ինքնամփոփ ներաշխարհին մէջ ինք ապրելու կը պատրաստուէր տակաւին՝ լաւագոյն օրերու ակնկալութեամբ: Յիսուն տարեկան հազիւ կար այն ատեն, բայց տարիքը չէր որ աշխարհը գլխիվայր շրջած էր, այլ այն գիտակցութիւնը, թէ զաւակները առանձին եւ անկախ անհատներ դարձած էին եւ սկսած էին ապրիլ իրենց կեանքը: Եւ ի՛նչ եռանդով, ի՛նչ կատաղութեամբ:

Սեղայի չնախատեսուած եւ անակնկալ ըմբոստութիւնը պատուած էր վարագոյրը եւ իրեն դէմ ցցած զղուելի իրականութիւնը: Զգաստացուցած էր զինք, ուշքի բերած. բայց ուշ էր արդէն: Քսան տարիէն աւելի՝ հոգեկան կամաւոր բայց անդիտակից կղզիացուածի դատապարտած ըլլալով ինքզինք, ժամանակին հետ քայլ չէր կրցած պահել: Հսկայ անջրպետ մը ստեղծուած էր իր եւ զաւակներուն միջեւ. իր եւ աշխարհին միջեւ: Եւ այդ հեռաւորութենէն՝ չէր կրցած հասնիլ անոնց, չէր կրցած հասկնալ զիրենք: Եւ ոչ ալ իրենք՝ զինք:

Սեղայի այդ գերմանացի սրիկային հետ ամուսնանալը ընդվզեցուցիչ եւ անհանդուրժելի ըլլալով հանդերձ, մանրամասնութիւն էր միայն ատկէ ետք: Տառապած էր անշուշտ, դառնացած, եւ պատժած էր ինքզինք: Առանձնութեան պատ մը քաշած էր այս անգամ իր շուրջ եւ խզած յարաբերութիւնները արտաքին աշխարհին հետ: Բայց աւերը գործուած էր արդէն: Վիճը օր ըստ օրէ աւելի խորացած եւ զինք անջատած էր իրականութեան աշխարհէն: Թէեւ փորձած էր վերագտնել, դարձանել ինքզինք՝ վերստին ապրելու յոյսով, մանաւանդ Սեղայի նախախնամական փրկութենէն ետք, բայց հնարաւոր չէր եղած: Եթէ Հայաստան ներդաղթած չըլլային, թերեւս կարելի ըլլար ատիկա, թերեւս պատահէր հրաշքը: Հիմա ուշ էր:

Անիմաստ կեանք մըն էր յամենայն դէպս, եւ ապրելու իրաւունք չունէր այլեւս: Ոչ հաճոյք ունէր, ոչ յոյս: Կեանքէն ոչինչ կրնար ակնկալել ասկէ ետք, մանաւանդ որ կորսուած տարիները կարելի չէր վերականգնել, վերադարձնել ու զեռոյն սկսիլ դարձեալ: Յիսունվեց տարեկան էր: Մեր չէր, բայց վերջացած էր: Ոչ թէ Ֆիլիքապէս — թէ Ֆիլիքապէս իրեն ի՛նչ կը պատահէր, չէր գիտեր — այլ ապրելու կարողութեամբ: Ապրելու կամք չունէր, պատճառ չունէր: Յուսահատած էր: Պարզօրէն՝ այս աշխարհի վրայ ընելիք չունէր այլեւս: Եւ ձանձրացած էր, կը ձանձրանար, կը ձանձրանար: Բաժակը օղի լեցուց, կիսախուր աչքերով դիտեց զայն, սպասեց. սպասեց որ միտքը փոխէր եւ փոխանակ խմելու, անկողին մտնէր: Բայց միտքը չփոխեց: Կ'ուզէր խմել, ոչ թէ քնանալ: Ուզածը ըրած

էր միշտ, ու հիմա անակնկալօրէն պիտի շփոխուէր անշուշտ եւ հրա-
ժարէր խմբիցէն: Եղիս զինք չէր խանդարեւր բարեբախտաբար. ան
ալ քնացած էր հաւանաբար: Աւելի լաւ: Սքանչելի կէն մըն էր —
լուս, աշխատասէր, համբերատար, պատուաւոր: Երեսուն տարի
ամբողջ ոչինչ պահանջած էր իրմէ, իսկ ինք շարձարած էր միայն
զայն, չարձարած ու կեանքը դժոխքի վերածած:

Բաժակի բովանդակութիւնը ցմբուր խմեց բայց չյագեցաւ: Ու
վերստին լեցուց զայն: Առաւօտուն խանութը եթէ չբացուէր, աշ-
խարհի վրայ ի՞նչ պիտի փոխուէր: Ոչինչ: Ինչո՞ւ ինքզինք խան-
դարէր ուրեմն, ու մտահոգուէր այսպէս յիմարօրէն: Զաւակներուն
չա՞փ ալ անձնասէր չէր կրնար ըլլալ: Անոնք իրենց ուզածը կ'ընէին,
կ'ապրէին, կը վայելէին, կը պտըտէին: Ալիսը նոյնիսկ: Սրճարանի
մը մէջ տեսած էր զինք կէսօրէ ետք, երբ ինքնաշարժով հոնից կ'անց-
նէր պատահամբ: Այնքան ուրախ էր, այնքան տարուած քովը նստած
երիտասարդով, որ զինք չնկատեց իսկ: Երիտասարդին դէմքը ծա-
նօթ էր, բայց չկրցաւ յիշել, թէ ով էր: Հասարակ սրիկայ մը թե-
րեւս: Իր աղջիկը, իր հարազատ, սիրելի, շփացուցած աղջիկը, զա-
ւակները տունը ձգած, անձանօթ երիտասարդներու հետ կը սլքտար:
Ա՞յս էր պատճառը արդեօք: Ասո՞ր համար յամառած էր ու բաժ-
նուած այդ չըլլալիք ամուսինէն: Յանցաւորը ինք էր սակայն: Աղ-
ջրկան կամքին հակառակ ամուսնացուցած էր զինք, երբ տակաւին
աշխարհէն լուր չունէր: Երեխայ էր, անփորձ, անմեղ եւ այնքան
տաքարին սակայն: Անոր դժբախտութեան պատճառ դարձած էր —
ինք, ուրիշ ոչ ոք: Ինչպէ՞ս ապրէր տակաւին: Ինչո՞ւ: Իրաւունք
չունէր: Ալիսը չէր կրնար մեղադրել, հաշիւ կամ բացատրութիւն
պահանջել անից: Ամուսնացած, գուակներու տէր, իրեն հաւասար
կին էր — ազատ, անկախ: Եւ ուրեմն չէր կրնար բռնանալ անոր
վրայ: Բայց նաեւ չէր կրնար հաշտուիլ գաղտնիարին հետ եւ ընդու-
նիլ կատարուածը: Իր հարազատ աղջիկը: Փողոցները սլքտար այսպէս
պատահած երիտասարդին հետ: Լուսահոգի մայրը ողջ ըլլար, ի՞նչ
պիտի մտածէր արդեօք. ի՞նչ պիտի ընէր: Ալիսը աչքին լոյսն էր,
հպարտութիւնը անոր: Մայրը ողջ մնացած ըլլար, աղջիկներուն
ճակատագիրը բոլորովին տարբեր ըլլար թերեւս:

— Դաւիթ, — կ'ինը խոհանոց մտաւ աչքերը շփելով. — առտու
եղաւ: Ի՞նչ նստեր ես դեռ: Այս վիճակով դործի ինչպէ՞ս պիտի եր-
թաս:

— Վերջացաւ, հիմա կ'ելլեմ. դուն զնա քնացիր, — խօսեցաւ
ամուսինը, եւ յիշեց թէ մարմինը չէր հպատակեր իրեն: — Ես դուր-
սը, սոֆային վրայ կը քնանամ:

*
**

Ալիս տակաւին արթուն էր, երբ մայրը խոհանոց մտաւ: Իրենց
սովորական յանկերպն էր: Ամէն գիշեր նոյն պատմութիւնը կը
կրկնուէր. նոյն արարողութիւնը, խօսքերը, դիտողութիւնները, մօրը
մեղմ եւ զգոյշ ոտնաձայնը միջանցքին մէջ, ու վերջաւորութեան՝
անխուսափելի վէճը: Այդ գիշեր, թէեւ, չվիճեցան ու մայրը քիչ
ետք ննջասենեակ վերադարձաւ, եւ լուսութիւն տիրեց դարձեալ:

Յուլիս ամսու խոնաւ ու հեղձուցիչ օ՞դն էր, թէ իր արտակարգ
ուրախութիւնը, որ արդեւք կ'ըլլար քնանալուն: Գրեթէ մերկ պառ-
կած էր անկողնին մէջ ու ծածկոցն ալ նետած վրայէն. բայց ապար-
դիւն: Մարմինը կ'այրէր, կ'եռար, կամ կը շոգիանար վարծես: Թէեւ
մարմինէն աւելի միտքն էր, որ արթուն կը պահէր զինք, կը խռովէր,
կը հրաբէր երեւակայութիւնը: Կեանքին մէջ այսպէս չէր զղացած
երբեք: Մարմինին գիտակցութիւնը չէր ունեցած, չէր նկատած զայն,
գիտնալով հանդերձ թէ դեղեցիկ էր: Մինչդեռ հիմա իր իսկ իրանը
կ'անհանգստացնէր զինք, շօշափելի իրականութիւն կը դառնար եւ
ուշադրութիւն կը դրաւ: Կամ ուշադրութիւն կը պահանջէր: Ան-
համբեր կը դառնար, կ'ըմբոստանար՝ զինք մտահոգելու աստիճան:
Ամուսնացած կին էր, բայց ցանկութիւն կոչուածը ցարդ անըմբռնելի
մնացած էր իրեն համար, եւ նողկանքով միայն հանդուրժած էր
ամուսնոյն ֆիզիքական պահանջներուն:

Հիմա ուրախ էր սակայն: Ուրա՞խ: Հիւանդ էր, կատղած,
կամ խելագարած: Այսքան երջանիկ ըլլալու իրաւունք ունէ՞ր: Ինչ-
պէ՞ս հաւատար: Ի՞նչ կը պատահէր իրեն: Անոր հանդիպիլն ու հետը
խօսիլը այսքա՞ն պէտք է ներդարձէր վրան: Բնական չէր: Ճիշդ է,
թէ անոր հանդիպելու ակնկալութեամբ դացած էր շրջանաւարտից
միութեան խրախճանքին, եւ յուսախար չէր եղած: Իրականութեան
մէջ նախկին ուսուցիչները եւս հրաւիրելու գաղտնիքը իրն էր. եւ
յաջողած էր ծրարդին մէջ ու հասած իր նպատակին: Բայց այս հե-
տեւանքը չէր նախատեսած: Դժգոհ չէր. ընդհակառակն՝ ուրախ էր
ու նոյնիսկ յաղթական կը զգար: Հաւասարակշռութիւնը հիմնովին
խախտած էր սակայն: Ուրախութի՞ւն էր այս, թէ յուզում: Ժամերէ
ի վեր անկողնին մէջ պառկած՝ ե՛ւ կու լար, ե՛ւ կը խնդար: Բայց
կու լա՞ր, թէ կը խնդար: Սէրը ա՞յս էր միթէ: Պիտի խենթեանար
հաւանաբար — յուզումէ՞ն, թէ ուրախութեանէն՝ չէր գիտեր: Ան-
կարելի էր: Եթէ այսպէս շարունակուէր, երջանկութիւնը պիտի
զգետնէր զինք: Զէր կրնար գիմանալ, եւ անպայմանօրէն կը հիւան-

դանար, վստահ էր: Այսքան յուզումի չէր կրնար դիմանալ:

Այս ի՛նչ անդրադարձ էր սակայն՝ այսպէս անակնկալօրէն: Պր. Գեղամը առջին օրէն սիրած էր, միշտ սիրած էր, եւ հոգեկան ցնցում չէր ունեցած: Ընդհակառակն՝ սէրը զօրացուցած էր զինք, կեանքին իմաստ տուած էր ու մասամբ հաւատարակչուած ամուսնութեան ստեղծած հիասթափութիւնը: Ասկէ առաջ ինչո՞ւ այսպէս չէր զգացած: Ի վերջոյ երեսայ չէր, ու Պր. Գեղամն ալ չէր փոխուած — հրաշքով մը դերմարդկային յատկութիւններով օժտուած արարած մը չէր դարձած: Նոյն մարդն էր. առաջուան պէս հանդարտ ու լուռ բայց՝ սրամիտ եւ ինքնավստահ: Սաղաղ: Աշխարհի ամենաերջանիկ մարդն էր կարծես: Արդեօ՞ք: Աչքերը, այդ աչքերը, որ այնքա՛ն հմայած էին զինք ժամանակին, ինչո՞ւ տխուր էին ուրեմն: Ուշադրութենէն չէր վրիպած: Ժպտար տակաւին կենդանի էր անոնց մէջ, բայց տխուր ժպտաւ մըն էր, եւ ոչ թէ նախկին հաղորդական ու հմայիչ բոցը:

— Ալպիական Մանուշակ — մօտեցած էր իրեն սովորականին պէս, երբ տակաւին սեղանները կը պատրաստէին, — ինչպէ՞ս ես:

Վրդովումը չէր կրցած ծածկել ինք, ու փոխանակ պատասխանելու, կռթնած էր մօտակայ սեղանին, մարմինին մէջ անակընկալօրէն տարածուող թուլութիւնը կասեցնելու համար: Բարեբախտաբար կրցած էր ժպտիլ, մինչ ան շարունակած էր:

— Ի՞նչ անխմաստ հարցում: Իրաւունք ունիս չպատասխանելու: Ի՞նչ ունիս:

— Անհանգիստ եմ քիչ մը:

— Նախընտրելի է որ տուն երթաս ուրեմն:

— Ո՛չ, — տազնապի մատնուեցաւ անմիջապէս եւ զղջաց ըսածին համար. — խնդիր չէ, հիմա կ'անցնի:

— Վստա՞հ ես: Կ'ընկերակցիմ քեզի, եթէ կ'ուզես. եթէ անպատեհութիւն մը չկայ:

— Եւ ինչպէ՞ս, — կատակեց, ինքզինք վերադառած մամասը: Բայց չկրցաւ խարել դիմացինը, եւ ուրեմն շարունակեց: — Ներկաները ի՞նչ պիտի մտածեն:

— Շատ-շատ կը մտածեն որ քեզ առեւանգեցի:

— Կրնա՞ք:

— Եթէ կ'ուզես...:

— Բայց լուրջ, չեմ ուզեր տուն երթալ, մանաւանդ այսօր: Ամէն օր չէ որ ձեզ տեսնելու առիթ կ'ունենամ:

— Նոյն երեսան ես տակաւին: Ե՞րբ պիտի մեծնաս: Գիտնայի, չէի դար:

— Միշտ պէտք է ներկայ ըլլաք մեր հանդիպումներուն, — խօսեցաւ ինք եւ զարմացաւ իր իսկ համաձարկութեան:

— Պատճա՞ռ: Ես չըջանաւարտ չեմ:

— Որպէսզի ձեզ տեսնելու առիթ ունենամ:

Պր. Տաարօնեան իսկապէս լրջացաւ այդ պահուն եւ ուշի ուշով նայեցաւ ճիշդ աչքերուն մէջ:

— Չեմ հասկնար, — ըսաւ յետոյ. — եթէ կատակ է, քիչ մը տարօրինակ է. իսկ եթէ լուրջ ես, պէտք է մտահոգուելու սկսիմ:

— Շատ լուրջ եմ, եւ մտահոգուելու պէտք չունիք: Սեղքս չեմ թոցուցած: Սօսածս գիտեմ, զգացածս ալ... ծածկելու պատճառ չունիմ, եւ չեմ ուզեր ծածկել:

— Կրնա՞մ քեզ տուն հասցնել: Ծամբան կը խօսինք:

— Ո՛չ: Եւ կամ, եթէ կ'ընդունիք, կ'երթանք տեղ մը կը նրստինք. սրճարան մը, ծովեզերք: Սօսելու ժամանակ կ'ունենանք դէթ:

— Քալենք ուրեմն: Գնա՛ սուտ մը դլտորէ, համոզէ զիրենք որ անհանգիստ ես: Կը սպասեմ:

— Սուտ խօսելու պէտք չունիմ: Ըստ ձեզի ես հիւանդ եմ արդէն: Ինչ կ'ուզեն թող մտածեն:

Ինքնաշարժին մէջ շխօսեցան դրեթէ: Բայց ինք դո՛հ էր, ուրախ: Կամ թերեւս գինով, որովհետեւ այդ տրամադրութեան մէջ ոչինչ կը լսէր կամ կը տեսնէր: Յաղթական ընկողմանած էր իր սիրած մարդուն կողքին, թէեւ ամբողջ մարմինով կը դողար: Երազին մէջ տեսնէր իսկ, պիտի չկարենար հաւատալ: Ոչ թէ անոր հետ ըլլալուն, այլ իր խենթութեան: Տարբեր անձ մըն էր այդ պահուն — ըմբոստացած, ընդվզած, անկաշկանդ, խելակորոյս: Հոգը չէր: Մարդիկ ինչ կ'ուզէին թող մտածէին. նոյնիսկ Պր. Գեղամը, ինք: Այսպէս լուռ ու մտահոգ չէր տեսած զինք: Սնդակիք էր: Վախցած էր կարծես ու պապանձած: Հետաքրքրական էր, հաճելի: Յետոյ խղճաց անոր եւ պահ մը ուզեց վիզին փաթթուիլ եւ ներողութիւն խնդրել անկէ: Բացատրել ամէն ինչ, խոստովանիլ, ու խնդրել որ հասկնար զինք, ներէր: Բայց չհամարձակեցաւ: Ինչ չնաշխարհիկ դաղափարներ կ'ունենար երբեմն: Բայց պէտք էր վերջ տալ այս լուրթեան, եւ ուրեմն ըսաւ:

— Ի՛նչ կը մտածէք:

— Քու մասիդ: Թէ ինչ պատահած է քեզի: Անկեղծօրէն՝ չեմ

Հասկնար : Այսքան տարի ետք յանկարծ . . . բան մը պատահած պէտք է ըլլայ :

— Լուր չունի՞ք : Ըսի , չէ՞ . յանկարծ անդրադարձայ որ պէտք է տեսնեմ ձեզ : Միշտ : Ամէն օր , եթէ կարելի ըլլայ : Պէտք է տեսնեմ , խօսիմ . թէ ոչ . . . :

Ձերցաւ շարունակել : Թէ ոչ ի՞նչ : Ինք ալ չէր գիտեր : Կամ չգիտեի՞ս էր եւ ինքզինք նոյնիսկ չէր հասկնար այլեւս : Ի՞նչ կը փորձէր ընել : Իրականութեան մէջ շատ անմեղ փափաք մը ունեցած էր : Պր . Տարօնեանը տեսնելու , եւ թերեւս՝ հանդիպումին իր մէջ ստեղծելիք անդրադարձը գիտնալու : Բայց այս կարգի արդիւնք մը չէր նախատեսած : Ձգացումներուն չէր կրցած իշխել եւ այդ անմեղ փափաքը վերածած էր ձախաւեր արկածախնդրութեան մը : Կամ արդեօք ինքզինք կը խարէր , եւ այս ամբողջը ենթագիտակիցին մէջ նախատեսած էր արդէն . ծրարած՝ որ ինքնիրեն այս առիթը ընծայէր : Ինքզինք ազատ արձակելու պատրուակ մը ունենար , եւ ձերբազատուէր իր նախկին անձէն : Ազատագրուէր իր իսկ անձէն , որ չին օրերու պարմանուհին մնացած էր եւ չէր աճած երբեք , չէր հասունցած : Գիտէ՞ր այս ամբողջը , թէ այդ պահուն կ'երեւակայէր պարզօրէն :

Ծովեզերեայ սրճարանը մանկութիւնը յիշեցուց իրեն : Հայրը կը բերէր գիրենք հոս — այս նոյն սրճարանը — երբ հազիւ հինգ տարեկան էր : Հայրը այն ատեն բոլորովին տարբեր մարդ էր : Կը խմէր , ճիշդ է , բայց ոչ այնպէս ինչպէս վերջին տասը տարիներուն : Աւելի ըզներային էր , աւելի մարդամօտ , ու կը կատակէր նոյնիսկ երբեմն իր կարգ մը բարեկամներուն հետ : Այո՛ , բարեկամներ ունէր , կուսակցական ընկերներ , որոնց հետ ժամերով կը վիճէին այս նոյն սրճարանին մէջ , մինչ Սեդան եւ ինք կը խաղային ծովափին :

— Յուսամ ծանօթ մարդիկ չեն տեսներ մեզ , — ըսած էր Պր . Գեղամ , խուզարկու աչքերով շուրջը քննելէ ետք :

— Այդքան մտահոգուած էք :

— Խենթութեան պէտք չկայ : Գուն եւ ընտանեկան յարկի սրբութիւնը , պատիւը շատ թանկագին էք ինծի համար : Անտեղի կերպով ընտանեկան տրամ մը ստեղծելու հարկ չկայ : Երբ խորքին մէջ ոչինչ կայ մեր միջեւ :

— Ամուսինէս բաժնուեցայ , — անհրաժեշտ նկատեց յայտնել իրեն , — այնպէս որ մտահոգուելու պատճառ չունիք :

Պր . Տարօնեան իր ակնկալած անդրադարձը չունեցաւ : Դէմ-

քին վրայ արտայայտութիւնը չփոխուեցաւ նոյնիսկ , ու երկարատեւ լռութենէ մը ետք հարցուց միայն :

— Ե՞րբ :

— Հինգ ամիս եղաւ դրեթէ :

— Ինչո՞ւ :

— Ամուսնացող մարդիկ ինչո՞ւ կը բաժնուին :

— Ձեմ գիտեր : Վերջնակա՞ն է :

— Ինծի համար՝ այո՛ :

— Լաւ տղայ մը կ'երեւէր : Ամերիկացիներն ու եւրոպացիները կէս ճամբան պիտի ձգենք կարծեմ : Եւ դեռ ազգապահպանումի մասին կը խօսինք :

— Ազգապահպանումը ի՞նչ կապ ունի ասոր հետ , — դարմացած հարցուց ինք :

— Հայ ազգի դոյութեան կորիզը ընտանիքն է : Ձե՞ս խորհիր :

— Այդ բոլորը գեղեցիկ խօսքեր են : Դժբախտ ամուսնութիւն մը ունեցողը , սակայն , իր դժոխքին մէջ առանձին կ'այրի , ու մարդ լուր չ'ունենար , եւ ոչ ալ ազգը փրկութեան կը հասնի իրեն : Կը լքեն զինք , կ'անտեսեն . իր հարազատները նոյնիսկ :

— Քոյրդ ալ անգամ մը ամուսնալուծուած էր կարծեմ : Եթէ չեմ սխալիր , դուն ըսած էիր :

— Քրոջս պարազան բոլորովին տարբեր էր : Եւ երկրորդ ամուսնութեան մէջ այնքան բախտաւոր եղաւ : Գրեթէ անհաւատալի է : Հակառակ ասոր որ Հայաստան ներդադրեցին ու հինգ տարի հոն մնալէ ետք վերադարձան , տակաւին մինչեւ այսօր այնքան հաշտ են , այնքան երջանիկ , սիրով : Երբեմն կը նախանձիմ իրենց :

— Ժամանակին կարծեմ ըսիր , թէ խենթ է այս քու քեռայրդ , չէ՞ : Իրաւունք ունիս եղեր :

— Ինչո՞ւ : Որովհետեւ լաւ ամուսին մըն է :

— Իսկապէս , շատ հետաքրքրական մարդ պէտք է ըլլայ : Հինգ տարուան մէջ . . . բայց ինչպէ՞ս արտօնած են որ դուրս ելլէ : Գրեթէ անկարելի է :

— Այդ մասին խօսելէ կը խուսափի :

— Ձեմ դարմանար : Եթէ կարելի ըլլար , պիտի ուզէի ծանօթանալ , ճանչնալ զինք :

— Իրմով աւելի հետաքրքրուած էք քան . . . :

— Քեզ կը ճանչնամ արդէն , — ի վերջոյ ժպտեցաւ Պր . Տարօնեան , — եւ մինչեւ այսօր չեմ կրցած հասկնալ :

— Ես ալ չեմ հասկնար երբեմն : Թէեւ հիմա ինքզինքս կը

ճանչնամ դէժ եւ գիտեմ, թէ ես ալ իրաւունքներ ունիմ: Արարելու, երջանիկ ըլլալու իրաւունք: Քսանչորս տարեկան եմ արդէն, եւ նոր միայն արթնցած եմ՝ ամուսնանալէ եւ երկու զաւակ ունենալէ ետք:

— Ծնողքդ ի՞նչ կը մտածեն այս բոլորին մասին:

— Գիտեմ, թէ հայրս յանցաւոր կը զգայ, եւ ամէն օր քիչ մը աւելի կը խմէ: Եթէ ինք չըլլար, ասկէ շատ առաջ այս քայլը առած կ'ըլլայի: Միակ մտահոգութիւնս ինքն է արդէն, մինչեւ այսօր: Հակառակ իր բոլոր թերութիւններուն, բարի եւ ազնիւ մարդ մըն է, մանաւանդ որպէս հայր:

— Եւ... ի՞նչ կը ծրարես, ի՞նչ որոշած ես ընել:

— Գործ մը կը զտնեմ, կ'աշխատիմ: Կ'ուզեմ ազատ ըլլալ, անկախ, եւ կեանքս ուղածիս պէս ապրիլ:

— Որ թարգմանի՞ր, — ուսուցիչը մտահոգուած նայեցաւ իրեն:

— Ձեզ տեսնել երբեմն:

— Ուրի՞շ:

— Հանդիստ ու խաղաղ կեանք մը ապրիլ:

— Ծատ միամիտ ես տակաւին: Այնքան դիւրի՞ն է կը կարծես:

— Ուրիշ բան չեմ ուզեր: Ձեզ սիրած ըլլալու դժուարութիւնը կը բաւէ:

— Վստա՞հ ես:

— Ի՞նչ տարօրինակ հարցում, — զգաց որ շիկնեցաւ: — Կեանքիս մէջ այսքան վստահ չեմ եղած: — Ձեմ ակնկալեր որ հասկնաք, կամ նոյնիսկ հաւատաք: Դժուար է բացատրել. չեմ կրնար: Ես զգացածս գիտեմ սակայն... ձեր հետ կապ չունի նոյնիսկ: Կեանքի մէջ միակ թանկագին, արժէք ունեցող հարստութիւնն է ինծի համար:

— Կը հաւատամ: Ուրիշ մը ըլլար ըսողը, չեմ գիտեր, թէ ինչ պիտի մտածէի: Բայց արդար չէ: Կեանքը միայն զգացում չէ. ոչ ալ անմեղ, մաքուր սէր: Կրնաս հիասթափ ըլլալ:

— Ձեզմէ՞:

Պր. Գեղամ, զարմացած բայց ժպտուն, նայեցաւ ճիշդ աչքերուն մէջ դարձեալ, եւ ըսաւ:

— Նաեւ ինձմէ: Ձես գիտեր: Ի վերջոյ զիս չես ճանչնար: Գպրոցական անփորձ աշակերտուհի մըն էիր այն ատեն, եւ այդ տարիքին, գիտես, աշակերտուհիներ յաճախ կը սիրահարին իրենց ուսուցիչներէն մէկուն կամ միւսին: Եւ յետոյ ամէն ինչ կը մոռցուի անշուշտ, եւ կ'ամուսնանան:

— Ինծի չէք ներած ուրեմն: Հիմա կը հասկնամ, եւ չեմ մեղադրեր ձեզ: Սակայն փաստը այն է, որ ես չեմ մոռցած: Միշտ

սիրած եմ ձեզ, հակառակ անոր որ ամուսնացայ, ճի՛շդ է:

— Բայց եւ այնպէս չես ճանչնար զիս: Իմ մասին ի՞նչ գիտես: Ես շատ ազատ կեանք մը ապրած եմ, եւ այնքան ալ բարի պտուղ մը չեմ եղած:

— Մեր խօսածին հետ ինչ կապ ունի: Բնական է որ ուրիշ աղջիկներ, կիներ ճանչցած պէտք է ըլլաք, յարարեալ, թերեւս սիրած նոյնիսկ: Բնաւ զարմանալի չէ: Մանաւանդ ձեզի պէս անձ մը, գիտեմ: Բայց սէրը այս բոլորին հետ կապ չունի. իմ ձեզ սիրելս ինձմէ՛ նոյնիսկ անկախ է: Սէրը այդ տեսակ հաշիւներ չ'ըներ, չի կրնար ընել:

— Անընդհատ սիրոյ մասին կը խօսիս, բայց չես հարցներ, թէ ես ի՞նչ կը զգամ, ի՞նչ կը մտածեմ: Ի՞նչ պատահած է ինծի: Քու տարիքիդ կարելի է սիրել տակաւին, իսկապէս սիրել: Եւ երանելի են անոնք, որոնք կը սիրեն, գիտեմ: Կեանքի մեծագոյն հարստութիւնն է, ինչպէս կ'ըսես: Բայց դուն քեզի հարցուցի՞ր երբեք, թէ վերջին վեց տարիներուն ընթացքին, երբ քու սէրդ կը կազմաւորուէր ու կը հասուննար, ի՞նչ կերպով կրնամ փոխուած ըլլալ ես: Կամ մտածած ես երբեք, թէ կրնամ քեզմէ տարբեր ըլլալ եւ զգալ՝ թէ՛ որպէս այր մարդ, ե՛ւ որպէս երէց, նախկին ուսուցիչդ: Մարդոց միջեւ տարբերութիւններ կան. բնախօսական տարբերութիւններ, տարիքի, խառնուածքի, համոզումներու: Դուն բախտաւոր ես որ այսքան անկեղծօրէն մարդ մը կը սիրես եւ ուրիշ ոչինչ կը տեսնես, ուրիշ ոչինչ կը հետաքրքրէ քեզ, որովհետեւ պարզ ու բնական, անմեղ ու բարի, շիտաթարուած աղջիկ մըն ես: Մինչդեռ ես քեզի պէս պարզ մարդ մը չեմ, ու զժգոհ եմ միշտ: Ինչէ՞ն: Ես ալ չեմ գիտեր: Ես ինձմէ ընդհանրապէս, կեանքէն, մեր ճակատագրէն:

— Գիտեմ, այս բոլորը գիտեմ ու կը հասկնամ: Թէ ոչ ձեր անձը պիտի չըլլայիք. ճիշդ այդ անձն է որ սիրած եմ ես, կը սիրեմ: Ինչպէ՞ս բացատրեմ: Ձեմ ակնկալեր որ ինծի պէս սիրէք, ինծի նմանիք... պարտաւորութիւն զգաք: Ասիկա ի՞մ ուրախութիւնս է, ի՞մ իրաւունքս: Ձեր հետ կապ չունի ըսի: Ձէ՞ք խորհիր որ մարդ կրնայ սիրելու պահանջ ունենալ:

— Սիրուելու նաեւ, — ընդմիջեց Պր. Տարօնեան:

— Եթէ սիրուի նաեւ՝ շատ աւելի լաւ, կատարեալ կ'ըլլայ: Իսկ ես վստահ եմ, թէ կը սիրէք զիս, սիրած էք՝ ձեր ձեռով: Թէ ոչ հոս, հետս պիտի չըլլայիք հիմա: Կը ճանչնամ ձեզ... ոչինչ կը պահանջեմ յամենայն դէպս: Դուք սորվեցուցած էք ինծի ասիկա. ձեզմէ սորվեցայ անհաշիւնորէն սիրել:

— Ես ձեզի հայերէն լեզու կը դասաւանդէի :

Չկրցաւ խնդուքը զսպել : Նոյն սրամիտ մարդն էր . ամենէն լուրջ խօսակցութիւնը մէկ բառով , փոքր ակնարկութեամբ մը կը շրջէր , կը փոխէր եւ իր ուզած ուղղութեամբ կ'առաջնորդէր : Այդ պահուն եւս քմծիծաղ մը դէմքին , կը զուարճանար հաւանաբար : Եւ իր ալ տրամադրութիւնը կը փոխէր անշուշտ : Քաջալերուած , հետեւաբար , եւ աւելի ինքնավստահ , ըսաւ :

— Բոլորս ձեզի սիրահարուած էինք :

— Բայց միայն դուն սիրել սորովեցար , ըստ քեզի :

— Ուրախ եմ ,— իզական ամբողջ պէրանքը ի դործ դրաւ .— եւ չեմ զղջացած :

— Կը նախանձիմ քեզի : Երանի ես ալ կարենամ նոյնը ըսել , կամ զգալ :

— Չղջացած էք այսինքն :

— Չե՞ս խորհիր որ պէտք է տուն երթաս ,— Պր . Գեղամ հարցուց , փոխանակ պատասխանելու :

— Ո՛չ : Կանուխ է : Ո՛վ դիտէ անգամ մըն ալ երբ կը տեսնեմ ձեզ :

— Կը տեսնես , հոգ մի ըներ , թէ եւ այս ամբողջը սխալ է : Վայրկեան մը , մի աճապարեր : Գաղտնաբար չեմ ուզեր հանդիպիլ քեզի այս տեսակ վայրերու մէջ . բաւական աղտոտած են մեր կեանքը արդէն , եւ ոտնակոխած մեր սրբութիւնները : Ես պիտի չըլլամ հայ կին մը , մանաւանդ քեզ , մոլորեցնողը : Այնպէս որ լաւ կ'ըլլայ որ լրջօրէն մտածենք եւ ըստ այնմ ծրագրենք ամէն ինչ :

— Աւելի լաւ ,— յուզուեցաւ յանկարծ եւ զգաց որ սիրտը ուժգնօրէն կը բարախէր : — Սեղան ալ , քոյրս , առաջին օրէն տուն բերաւ ժազը : Հիմա իսկ կրնանք երթալ , եթէ կ'ուզէք :

— Քրոջը պարագան տարբեր էր : Օտար մըն էր նախկին ամուսինը , որ զինք փողոց նետած էր պարզօրէն :

— Դուք ինչպէ՞ս գիտէք :

— Լրտեսներ ունիմ ,— ժպիտը երեւցաւ դէմքին վրայ դարձեալ : — Առիթ տուր որ մտածենք յամենայն դէպս :

Ի՞նչ պիտի մտածէին , ինքնիրեն հարց կու տար տակաւին : Բայց ի՞նչ ըսել կ'ուզէր , ի՞նչի մասին պիտի մտածէին : Եթէ միայն կարենար քննալ : Սենեակը փոքր էր , ու միակ պատուհանը , զոր բաց կը պահէր այս եղանակին , բացուած էր բակի նմանող երկու քառակուսի մեթր տարածութեան վրայ , ուրկէ օդ չէր դար :

Ինչու ատաղ , երբ պատանեկան երազներով տողորուած պնդած էր որ այս սենեակը իրեն յատկացուի — Սեղայի ամուսնանալէն ետք անշուշտ — ի՞նչ երանելի օրեր ապրած էր : Իսկ ներկայիս , որքան ալ փորձէր մոռնալ իր սեպհական տան ննջասենեակը , սկսածայ կը բազմապէս դայն այս խեղճութեան հետ : Տարիներ ինչպէ՞ս ապրած էին այս տան մէջ : Երջանկութիւնը նոյնիսկ չարչարանք է , եզրակացուց , ու փաթթուեցաւ բարձին :

Չէր կրնար հաւատալ : Մէկ օրուան մէջ կեանքը յեղաշրջուած էր : Օրեր , շաբաթներ մտածած էր , չսփած , կշռած , բազմաթիւ անգամներ ինքզինք համոզած էր ու յետոյ՝ տարհամոզած . բայց յուսացած էր , ինքն ալ այլեւս շփոթած , ու երազած էր միայն : Փորձած էր անշուշտ այս ամբողջը երեւակայել , բայց աւելի՛ տաղնապած էր : Մինչդեռ հիմա այնքան խաղաղ էր , ապահով , ինքնավստահ ու երջանիկ : Իր բոլոր մտավախութիւնները անտեղի էին ուրեմն . շաբաթներ անընդհատ ինքզինք շարչարած էր ու կասկածներ անուցած երեւակայութեան մէջ : Իրաւունք չունէր : Ինչպէ՞ս արտօնած էր ինքնիրեն : Չէ՞ որ աշխարհի ամենէն ուղղամիտ եւ բարի մարդն էր Պր . Գեղամ : Գէթ իրեն համար : Կը ճանչնար զինք , ու միշտ վստահ եղած էր : Բայց ինք անարգարօրէն կասկածած էր . անոր վրայ ունեցած հաւատքը խախտած էր եւ անտեղի կերպով շարչարած ինքզինք :

Օ՛ , անտանելի էր : Չէր կրնար հաւատալ : Արդեօք կ'երագէ՞ր , թէ կ'երեւակայէր դարձեալ : Կրնա՞ր իրական ըլլալ : Ի՞նչն էր այս երջանիկ կիներ , իրե՞ն պատահած էր ասիկա : Իր պաշտած մարդը ազատօրէն պիտի կարենար սիրել . տեսնել զինք , պաշտիլ հետը , տուն բերել ու ծանօթացնել ծնողներուն , բոլորին : Իսկապէս կարելի պիտի ըլլա՞ր . անհաւատալի էր : Մինչեւ այսօր անունը նոյնիսկ չէր յիշած ռեւէ անձի , ոչ իսկ Սեղային , որու կրնար վստահիլ : Իր կեանքին մեծագոյն եւ միակ զազանիքը եղած էր — իր զազանի սէրը , որ չարչարած էր եւ ուրախացուցած զինք միաժամանակ :

Իրենց ճակատագիրն էր կարծես : Սեղան ալ դժբախտ եղած էր սկիզբը , առաջին ամուսինին հետ , բայց յետոյ այնքան ներդաշնակ ու բախտաւոր ամուսնութիւն մը կնքած էր : Արդեօք ինքն ալ . . . իրե՞ն ալ նոյնպիսի ճակատագիր մը սահմանուած էր : Կրնա՞ր պատահիլ : Բայց ամուսնութեան մասին չէր մտածած երբեք , ու հիմա իսկ , թէ եւ հաճելի ստեղծանք զազապարը տարօրինակ կը թուէր : Պր . Գեղամին կիներ ըլլալ , կեանքը ամբողջ ապրիլ անոր հետ եւ մասնակից դառնալ անոր բոլոր խենթութիւններուն : Բաժնել երազները ,

ձգտումները, եւ հայ դրողի մը արժանաւոր կրնը ըլլալ: Հաւատալ անոր իտէալներուն ու նոյն նպատակին ծառայել: Կերազէր դարձեալ: Ինք ինչպէս նոյն նպատակին պիտի ծառայէր, երբ դրակա-նութեան մասին ոչինչ գիտէր, եւ ոչ իսկ հետաքրքրուած էր: Ինչ կարելորութիւն ունէր. անպայման գրո՞ղ պէտք է ըլլար: Կամ դրա-կանութիւնը սիրէ՞ր: Վստահ էր, թէ ժապը եւ ան մտերիմ բարե-կամներ կ'ըլլային, նկատելով որ նոյն հետաքրքրութիւնները ու-նէին, լրջութիւնը, խորութիւնը: Նկարագրով եւ խառնուածքով ալ նման էին իրարու — ծուռ, դէզ, անկախ եւ սկզբունքի տէր: Զիրար լաւապէս պէտք է հասկնային:

Միջանցքին մէջ բան մը կը շարժէր: Լսողութիւնը սրեց եւ հետեւեցաւ ձայնին, որ աղմուկի սկսած էր վերածուիլ: Պահանջին լոյսը մարած էր թէեւ, եւ հայրը քնացած պէտք է ըլլար ուրեմն: Զգուշութեամբ ու վախով նստեցաւ անկողինին մէջ, փորձելով խա-ւարին մէջ իրերը զանազանել նախ, ու յետոյ քալեց եւ ուղղուեցաւ դէպի դուռը, զոր փակ կը պահէր գիշերը միշտ: Մատները պատին վրայ քալեցին ու դտան ելեկտրական լոյսի կոճակը, ու փոքր հպու-մով մը լուսաւորեցին սեննակը: Երբ դուռը բացաւ ի վերջոյ եւ դուռը դուրս երկարեց, հազիւ սոսկումի ճիշդ կրցաւ խեղդել Վո-կորդին մէջ: Հայրը անշարժ վիճակի մէջ դետին փռուած էր, պող սալալատակին վրայ, ու բարձրաձայն կը խոկար: Աչքերը բաց էին թէեւ, ու վստահ էր հիմա, թէ չէր քնանար ան: Հոնդիւն էր աւելի, քան թէ խոմրոց, ու կարծես պիտի խեղդուէր, վերջանար՝ այդ վայր-կեանին իսկ: Սարսափահար ու չփոթած, ծունկի եկաւ անոր անշարժ մարմինին քով, ու թէեւ կիսամերկ վիճակի մէջ, փորձեց բարձ-րացնել զայն ու խօսիլ հետը:

— Հայրի՛կ, ի՞նչ ունիս, հայրի՛կ:

Ցնցեց զայն, ապտակեց յետոյ, ու դարձեալ փորձեց բարձ-րացնել մարմինը իր թեւերուն մէջ, ու երբ համոզուեցաւ որ պիտի չկարենար տեղէն շարժել կապարի պէս ծանրացած այս մսեղէն զան-դուածը, մայրը օգնութեան կանչեց: Ընչդ այդ պահուն գլխուն վե-րեւ նկատեց մայրը, որ քնաթաթախ աչքերով եւ սպառնալի գիւղ կը դիտէր:

— Ի՞նչ կեցեր ես: Զեռքէ պիտի ելլէ մարդը:

Եղիս Օհանեան այն ատեն միայն անդրադարձաւ, թէ ինչ կը կատարուէր, եւ առանց բառ իսկ արտասանելու, ծռեցաւ եւ փորձեց վերցնել ամուսնոյն գլուխը:

— Ուսերէն բռնէ, դուն ուսերէն վերցուր, որ կարենանք սա սոֆային հասցնել դոնէ:

— Այս ինչ փորձանք է, — վախցած ու դունատ շնջաց մայրը, մեծ դժուարութեամբ ամուսինը սոֆային վրայ պառկեցնելէ ետք: — Ինչպէ՞ս շլտեցիր, — ինքզինք կշտամբեց յետոյ. — քուս տարեր է եւ չեմ գրացած: Քիչ մը պակաս խմէ գինք չեն ճանչնար: Ամէն գիշեր նոյն պատմութիւնը... ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլայ չեմ գիտեր: Բայց այսպէս չէր եղած բնաւ:

— Ինչպէ՞ս վախցայ, — խօսեցաւ Ալիս. — ինչո՞ւ պինք ա-ռանձին ձգեր ես: Զե՞ս գիտեր, թէ հսկող եթէ չըլլայ, մինչեւ լոյս կը խմէ:

— Ես գիտե՛մ: Իմս ալ մարմին է, աղջի՛կս, չգիմացայ ու քիչ մը հանդիստ ընեմ ըսի: Նստելու ոյժ չկար վրաս: Ամէն գիշեր, ա-մէն գիշեր...:

**

Կիրակի առտու անկողինին մէջ պառկած, ժառ կը յամենար տակաւին, կուրծքին վրայ նստեցուցած Նայիրին, որ ուրախութեան ճիշեր վարձակէր: Կէս ժամէ ի վեր կը խաղար աղջկան հետ, բայց չէր կրցած բաւարարել զայն. ու հակառակ անոր որ զանազան հնարք-ներու դիմած էր, չէր յաջողած անոր ուշադրութիւնը վրիպեցնել եւ քանի մը վայրկեան դադար գողնալ անկէ: Իրականութեան մէջ դժգոհ չէր, որովհետեւ երեխաներուն հետ խաղալը իր հաճոյքներէն մէկն էր. սակայն շատ միօրինակ դարձած էր այս խաղը, եւ սկսած էր յողնիլ: Ժամը տասը կ'անցնէր արդէն ու թէեւ մասնաւոր դործ կամ պարտականութիւն չունէր, կ'ուղէր ածիլուիլ ու պող ջուրի լո-գանքով կաղդուրել հանգստարեկ մարմինը:

— Գնա՛ մօրդ ըսէ թող սուրճ եփէ, — փորձ մը եւս ըրաւ, — եւ բաղնիքը պատրաստէ յետոյ:

Հրաչք էր պատահածը: Նայիրի ցատկեց վրայէն ու ոստոս-տելով քալեց դէպի դուրս: Եթէ կրնաս հասկցիր, գոհունակութեամբ հետեւեցաւ աղջկան քայլերուն: Ասոնք ալ իրենց նոպաները ունին, մրթմրթաց ու խորասուզուեցաւ մտածումներու մէջ: Իրենց յատուկ ներաշխարհ, տրամադրութեան լաւ կամ գէշ պահեր: Քմահաճոյք: Ընչդ իրեն պէս: Բոլոր չափահաս երեխաներուն նման: Անբացատրելի կերպով անարամադիր էր ինք այսօր, օրինակի համար՝ ու նկատե-լով որ Կիրակի էր, զբաղելու կամ ինքզինք մոռնալու միջոց մը չէր

կրնար դռնել: Կրնար կարգալ անշուշտ, բայց այս տրամադրութեան մէջ ընթերցանութիւնը նոյնիսկ տաժանք էր: Հանդիպակաց շէնքի պատշգամներուն մէջ զբացուհիները ցուցադրութեան մրցում մը սարքած էին դարձեալ, ու ժրաջան մըջիւններու պէս բայց աննպատակ, անընդհատ կ'երթեւեկէին: Ոմանք հաղուած ու շարուած արդէն, իսկ ուրիշներ՝ թափանցիկ զիշերադրեստներով իրենք զիրենք մերկացուցած: Այս դունազեղ պատկերն իսկ ընկճեց զինք, ու ջղային կանգնեցաւ ոտքի: Պատուհանէն նայեցաւ միւս կողմ, հակառակ ուղղութեամբ, բայց տեսաւ ուրիշ պատշգամներ, ուրիշ շէնքեր: Հայկական թաղամասերու զիրար զրկած, իրարու մէջ կորսուող այս շէնքերը անհանդուստացուցած էին զինք միշտ: Ինչպէս Երեւանի նորակառոյց շէնքերը, որ նոյնքան խճուղուած էին եւ անընտելի: Թէեւ հոն այսպիսի դունազեղ պատկերներ չկային. բայց կար միօրինակութեան ճշուղ մթնոլորտը, որ խլած էր իրմէ իր բնական լուստեսութիւնը: Ինչպէ՞ս Հայաստան փոխադրուած էր դարձեալ. կեանքին այդ շրջանը պիտի չկարենար մտահան ընել ըստ երեւոյթին, պիտի չկարենար ջնջել իր ներաշխարհէն ու խաղաղիլ:

Երբորդ Մաս կոշուած շրջանի նորակառոյց շէնքերէն մէկուն մէջ փոքր յարկաբաժին մը յատկացուցած էին իրենց: Եէնք, որ առ նուազն յիտուն ընտանիք կը պատասպարէր: Տեսակ մը պատասպարան էր, ճիշդ է, խառնարան, կամ թանգարան: Ամէն տեսակ հայ կարելի էր դռնել հոն — Հայութիւնը ներկայացնող բոլոր հին ու նոր նմոյշներ — տեղացիներէն սկսեալ, մինչեւ դաւառացիներն ու հայրենադարձ սփռութեան յարկաբաժինը, լիբանահայերն ու պարսկահայերը: Հայկական թանգարան: Բայց դո՛ւ էր եւ ուրախ, մանաւանդ սկիզբը, որովհետեւ այս բոլորը ճանչնալու, անոնց հետ հասարակաց կեանք մը ապրելու լուսադոյն եւ ամենէն հեշտ կերպն էր: Ժամանակի ընթացքին վարժուած էր նոյնիսկ երեխաներու բարձրացուցած աղմուկին ու հաճոյքով հետեւած անոնց խաղերուն կամ անկարգութեանց, բայց շէնքերը ընկճած էին զինք՝ իրենց անհրապոյր, միապաղաղ միօրինակութեամբ:

Մանաւանդ ձմեռը: Այդ միօրինակութիւնը մուսլ արտաքին մը կը զգենուր: Ինչպէս քաղաքացիները բոլոր: Մարդիկ կը քաշուէին իրենց պատեաններուն կամ վերարկուներուն մէջ, ու լուս եւ անխօս — գրեթէ անհարկ — կը շտապէին փողոցներուն մէջ: Կը վազէին՝ չստուելու համար: Հարկադրուած չըլլային պիտի նախընտրէին իրենց տուներէն դուրս չլալ բնաւ: Տան մէջ պաշտպանուած էին, ապահով, տաք եւ ուրախ նոյնիսկ: Ամէն մարդ իր տան մէջ

ստեղծած էր իւրապատուկ աշխարհ մը՝ տարբեր դուրսի աշխարհէն, ուր անձնական կեանք չկար: Դուրսը իրենք եւս տարբեր մարդիկ էին. իրենք իրենցմէ՝ տարբեր, խորթ, օտար, անհարապատ: Ներսը՝ ընտանիքի անդամներով, դաւակներով եւ կոնեակի բարերար օժանդակութեամբ կը ստեղծէին իրենց յատուկ, դուրս անձնական կեանք մը եւ կը վայելէին անշուշտ: Ամէն մարդ իր գրախտը ստեղծած էր՝ գրախտաւայր Հայաստանի մէջ:

Հայաստան երկիր գրախտաւայր: Բանաստեղծը ուրիշ երկիր մը նկատի ունէր հաւանաբար, երբ կը կատարէր այս ընտրուումը: Թերեւս՝ Արարատէն անդին, միւս կողմ մնացած հողամասը, բուն Հայաստանը: Տեղացիներուն համար, յամենայն դէպս, այդ տեսակ հարց կամ վարկած չկար: Անոնք աւելի իրապաշտ էին, աւելի գործնական: Իրեն պէս ապաժաման մարդիկ միայն հայկական գրախտի մը հետամուտ էին: Եթէ չզտնէին իսկ, իրենց երեւակայութեան մէջ կը ստեղծէին զայն եւ երազը կը վերածէին իրականութեան: Մինչդեռ իսկական իրականութիւնը սա զիմացի շէնքերուն նման չոր ու անհրապոյր բան մըն էր: Անհաւանական չէր որ կարգ մը մարդիկ այս շէնքերուն մէջ զեղեցիկութիւն տեսնէին: Ինք՝ հակառակը կը տեսնէր: Երազն ալ, մանաւանդ երազը, ենթակայ էր նոյն օրէնքին, ենթակայական նախասիրութեանց: Ամէն ինչ յարաբերական էր ի վերջոյ, եւ ուրեմն՝ արեւմտահայուն երեւակայած գրախտը նոյնքան մը իրական էր իրեն համար, որքան միւսներուն գրախտը՝ իր երբեմնի հարեւաններուն: Իւրաքանչիւր անհատ սեպհական գրախտի մը պէտք ունէր վերջապէս: Այլապէս ապրիլը անկարելի կը դառնար, անիմաստ: Ինչպէս իր կեանքը ներկայիս: Որովհետեւ հօրը գրախտը կորսնցնելէ ետք, չէր կրցած զայն փոխարինող նորը գտնել:

Ճիշդ ատոր համար է որ Սոփիտական Հայաստան ներգաղթելէ եւ առջին քանի մը ամիսներու զինսփութենէն սթափելէ ետք, խարուած զգացած էր յանկարծ: Բայց չէր դառնացած, չէր ընդլիզած, որովհետեւ անդրադարձած էր միաժամանակ, թէ ինքզինք խարած էր առաւելարար: Նախկին որբը, որու ծաղրածուի մը պատմուճանը հազցուցեր էր տարիներու ընթացքին, գլուխ ցցած էր դարձեալ այն ատեն ու հաշիւ պահանջած իրմէ: Բայց չէր կրցած համոզել զայն ու նախկին գուարթութիւնը վերադարձնել անոր, թէեւ ինք փորձած էր հաշտուիլ իր կեանքի նոր իրականութեան հետ եւ տեղացիներուն պէս իրապաշտ ըլլալ: Այն ատեն միայն ծաղրածուն վախճանած էր, իր այս արարքը դաւաճանութիւն նկատելով: Եւ կամ՝ անձնասպան եղած էր, զինք առանձին ձգելով օտար աշխարհի մը մէջ, ուր որեւէ ատեն

աւելի պէտք ունէր իր զուարթախոհութեան: Նախկին ժպտադէմ, կատակասէր ու լաւատես ժաղը դարձած էր անճանաչելի, ու մնացած էր այդպէս՝ մինչեւ այսօր:

Երբեմն ինք եւս չէր ճանչնար այս նոր մարդը, որ խնդալը նոյնիսկ մոռցած էր: Եւ կ'արգահատէր, կը խղճար անոր, որովհետեւ ինքնամոփոփ եւ անհաղորդ խլեակ մըն էր ան, որու ինքնութիւնը ծանօթ չէր իրեն: Տխուր կամ մեղամաղձոտ մարդոց հանդէպ դուրս զգացած էր միշտ, եւ կարելի եղած չափով փորձած էր խուսափիլ անոնցմէ: Խնդուքը, խնդալու կարողութիւնը հմայած էր զինք, ու գոյութեան մեծագոյն հրաշքը նկատած էր դայն, մարդկային կեանքի միակ յաղթանակը: Ժպիտը միայն, իսկական ժպիտը, եւ անոր ետին պահուրտած ուրախութիւնը, ճշմարիտ էր իրեն համար: Ուրախութիւնն էր միակ ճշմարտութիւնը, որովհետեւ կ'ազատագրէր, կը բերեղացնէր մարդը ու կը հասցնէր դայն լինելութեան զերագոյն գաղաթին: Առանց անոր՝ մարդը գերի էր, ստրուկ, խեղճ, ու պարտուած արարած մը: Արգահատանքի արժանի տղրուկ: Իսկ ինք կը նախընտրէր փճանալ, վերածուիլ սոսկ նիւթի, քան թէ գոյութիւնը քարչ տալ որպէս նողկալի տղրուկ: Կամ ստրուկ: Նոյնն էր:

Ննջասենեակէն դուրս եկաւ ու փոխանակ հիւրասրահ մտնելու, ուր սովորաբար կը խմէր սուրճը, ուղղուեցաւ դէպի խոհանոց: Խօսակցութեան ձայնը հոնկէ կու գար: Չէր սխալած: Սեղա հոն էր դեռ, ափսէն ձեռքին մէջ, բայց կողքին կանգնած էր Ալիսը, յայտնապէս յոգնած եւ ուժասպառ: Գէմքը այլափոխուած էր, ու դրեթէ անճանաչելի դարձած: Երբ զինք նկատեց, փղձկեցաւ եւ սկսաւ լալ, մինչ ինք դարձացած նայեցաւ տիկնոջ:

— Ի՞նչ պատահած է նորէն:

— Հայրս, — Սեղա, սառած արտայայտութիւն մը դէմքին, փորձեց խօսիլ: — Հայրս մեռած է:

— Ինչպէ՞ս թէ, — անզգալաբար հարցուց ժապ, բայց սթափեցաւ յանկարծ ու նախադասութիւնը չկրցաւ աւարտել:

— Անկողինին մէջ մեռած գտած են զինք:

— Երէկ իրիկուն քովն էի... շատ լաւ էր, թէեւ քիչ մը անտրամադիր:

— Մինչեւ լոյս խմած է, ու վերջն ալ միջանցքին մէջ ինկած է ուշակորոյս վիճակի մէջ:

— Անկողինին մէջ գտած են ըսիր:

— Վերցուցինք զինք, — բացատրեց Ալիս, — բայց այն ատեն ողջ էր... կը շնչէր, կը հազար: Գիշերը, ժամը երեքը կ'անցնէր կար-

ծեմ: Ինչ որ եղած է... ատկէ ետք վերջացած է կարծեմ: Դեռ մինչեւ ժամ մը առաջ կը կարծէինք որ կը քնանար: Երբեմն կը պատահէր: Այն գիշերը որ շատ խմէր, առտու դժուարութեամբ կ'արթընցնէինք զինք, բոլորովին թմրած կ'ըլլար:

— Վստա՞հ ես թէ, — պահ մը յուսաց երիտասարդը, — վստա՞հ էք թէ չէ քնացած:

— Իժիշկը տեսաւ զինք, քննեց:

ԺԳ,

Սիրելի Հայրենակիցներ, Տիարք եւ Տիկնայք, ազնիւ բարեկամներ եւ հարազատներ՝ ի սփիւռս աշխարհի:

Ձեզաւ: Ձեր հետ ի՞նչ գործ ունիմ, կամ դուք ի՞նչ դեր ունիք ասոր մէջ: Յամենայն դէպս պէտք է խօսիմ եւ թերեւս դուք միայն հասկնաք զիս: Սովորաբար ես ինձի կը խօսիմ: Թէեւ գիտեմ, թէ դրածներս նոյնիսկ չէք կարդար, որովհետեւ զբաղած էք ապրելով: Որ աւելի ճիշդ է: Դուք կ'ապրիք. ես կ'երագեմ: Միշտ այսպէս եղած է, այսպէս ալ պիտի մնայ ըստ երեւոյթին: Բայց ի՞նչ կարելի է ընել: Ես ալ ձեզի պէս անսրբազրելի եմ: Կամ պիտի գրեմ, կամ պիտի խօսիմ: Մինչ դուք գմայլելի անտարբերութեամբ մը պիտի շարունակէք արհամարհել մեր միտքի գոհարները:

Ուրեմն խօսիմ: Ես ինձի հետ գէթ, քանի կացութիւնը նոյնն է: Ուրիշ ոչինչ կրնամ ընել արդէն: Իրականութիւնը այն է որ ժամերէ ի վեր այս խաղը կը շարունակեմ՝ առանց եզրակացութեան մը յանդէլու: Մինչ այդ կը սպասեմ սա գերմանուհիին, որ ոռու Նաթալային համար հայ երիտասարդներու քսակները կը պարպէ՝ քաղցրօրէն ժպտելով անոնց: Երբեմն ինձի ալ կը ժպտի զաղտազողի, ամէն անգամ որ առիթը ընծայուի իրեն: Թէեւ ես հոս պէտք չէ ըլլամ այսօր — գէթ այդպէս որոշած էի — սակայն ատիկա հին պատմութիւն է արդէն: Ամէն առտու վճռական որոշում կ'առնեմ, ու երեկոյեան կը համոզեմ ես զիս, թէ շարեաց փոքրագոյնը այս է, եւ բնականաբար կը վերադառնամ փարախ: Այսօրը, թէեւ, բացառութիւն պէտք է ըլլար:

Արդարեւ կէսօրէ ետք բոլորովին տարբեր, ինձի անձանօթ աշխարհի մը մէջ էի: Ի՞նչ երանութիւն էր ատիկա — անհաւատալի, անկարելի բերկրանք, արբեցում: Պէտք է ընդունիլ, որ ասկէ առաջ

այսպէս չեմ զգացած երբեք, եւ անկեղծօրէն մտահոգուած եմ: Ի վերջոյ այս կարգի զգացական ցնցումներու չեմ վարժուած ես, ու մինչեւ հիմա չեմ կրնար հասկնալ թէ ի՛նչ պատահեցաւ այդ քանի մը ժամերուն ընթացքին: Տարբեր անձ մըն էի. վերացած, կամ մանկացած, գինով ու խանդավառ անշուշտ, եւ անկաշկանդ: Մասնաւոր ճիգ պահանջեց ինձմէ՝ փողոցներուն մէջ չվազելը: Կրնայի եւ բանաստեղծութիւն գրել այդ հոգեվիճակին մէջ: Պարզօրէն անբնական էր:

Բայց բարեբախտաբար հոս եմ հիմա, եւ կրնամ ամէն օրուան պէս խմել եւ տրամաբանութիւնս դործածել: Այլ հարց որ բացառութիւն պէտք է ըլլար այս օրը: Այլպէս պիտի չկարենայի վերագտնել հաւասարակշռութիւնս, եւ շատ անբաղձալի վիճակի մը մէջ պիտի գտնէի ինքզինքս հաւանաբար: Եւ յետոյ՝ ո՞ւր կրնայի երթալ: Գիշերը ամբողջ անկողինիս մէջ երազելով անցընէի: Ես այդ տեսակ շարժարանքի չեմ գիմանար, եւ ոչ ալ կը հաւատամ... ես զիս պատժելու կողմնակից չեմ եղած երբեւիցէ. իսկ այս տարիքիս՝ երբե՛ք:

Կրնամ ժպտիլ նոյնիսկ — նախընտրելի չէ՞ — եւ քիչ ետք կարենամ կատակել իսկ թերեւս: Բայց Հիլտան եւս կը ժպտի: Դո՛ւն ինչու կը ժպտիս: Ի՞նչ ատաջ ժպտեցաւ, թէ ես: Ի՛նչ ծուղակ է ասիկա: Ինձի պէս անճարակ վարժապետ մը այսքան բարդ խնդիր մը ինչպէ՞ս պիտի կարենայ լուծել: Գերմանացի հոմանուհի մը, եւ հայ երիտասարդուհի մը անկեղծ եւ մաքուր սէրը: Սակայն Հիլտան ալ անկեղծ է, եւ զարմանալի կերպով՝ հաւատարիմ: Ընդհանրապէս հպարտ եւ անմատչելի — ուրիշներու նկատմամբ — իսկ քու հետդ՝ հլու եւ հնազանդ: Ստրուկ: Դուն եւս չես հաւատար ու երբեմն կը տաարկուսիս նոյնիսկ, թէ դուն ես սա ամենակարող բռնատէրը, որու կամակատար գերին դարձած է ան: Իրաւունք ունի՞ս դաւաճանելու անոր, եւ ամուսնացած ու երկու զաւակի տէր կին մը սիրել: Բայց քու առաջին եւ միակ սէրդ եղած է... յիմարութիւն: Դուն ե՞րբ սիրած ես, որ հիմա զիս կը խաբես: Անձնասիրաբար վարուած ես հետը բոլոր անոնց, որոնք քեզ անկեղծօրէն սիրած են կամ սխալը դործած են քեզի համակրելու: Ծիգիքականէն անդին չէ անցած քու սէրդ, ու միշտ կրցած ես սիրել անոնց մարմինները միայն: Անկեղծօրէն, յափշտակութեամբ, մոլեղնօրէն: Ու հաշիւ չես ներկայացուցած երբեք, եւ ոչ ալ հաշիւ պահանջած ես անոնցմէ:

Բայց ես միայն պիտեմ, թէ ինչպէս սիրած եմ: Պէտք ունեցած եմ սիրելու, պաշտպանուելու՝ որպէսզի կարենամ սպաննել ու նայնութեան սարսափը ինձմէ ներս: Օր մը, տարիներ առաջ, ար-

թընցայ յանկարծ եւ անդրադարձայ որ կեանքը իմաստ չունի: Հագիւքանհինգ տարեկան էի այն ատեն եւ ինքզինքս հասուն, պատասխանատու, գիտակից անձ մը կը նկատէի: Երազներ ունէի, նպատակ, իտէալ — ծառայելու, նուիրուելու վճռակամութիւն: Մշակած գրականութիւնս լաւագոյն փաստն էր: Պայծառ, միամիտ, լաւատես, ինքնաբուխ եւ ինքնակամ: Հիմա երբ կը կարդամ այդ էջերը, կը զարմանամ ու կը հիանամ այդ տղուն, որ ես էի, ու կը նախանձիմ անոր: Ի՛նչ պատահեցաւ ատկէ ետք՝ ես ալ չեմ գիտեր: Ձեմ յիշեր: Իրականութեան մէջ ոչինչ: Մահ կամ կորուստ չէի ունեցած. ոչ ճախորդութիւն, ոչ դժբախտութիւն, ոչ իսկ հիասթափութիւն: Բայց կեանքը իմաստ ունենալէ դադրած էր: Կամ ըսենք՝ անիմաստ կը թուէր ինձի ամէն ինչ: Առանց պատճառի՝ այդպէս, մէկ օրէն միւսը: Մարդիկ կ'աշխատէին, կ'ուսանէին, կը տքնէին, պայքար կը մղէին, գիւտեր կ'ընէին — նոր նուաճումներ, յաղթանակներ, բժշկագիտական եւ առողջապահական յառաջդիմութիւն, որ կը ձգտէր մարդուն կեանքը երկարելու, անմահացնելու զայն թերեւս — նոր քաղաքներ կը հիմնէին ու կը քանդէին հիները: Նոր քաղաքակրթութիւն, նոր մշակոյթ, տնտեսական բարդաւաճում, առատութիւն, հանդիսա կեանք, բայց նաեւ մրցակցութիւն, առեւտուր, շուկայ, դրամ եւ պատերազմ: Պատերազմներ: Այս բոլորը իմանալով եւ ընդունելով հանդերձ, անխուսափելի հարցումը կը կրկնուէր անբնական — վասն ինչի՞:

Այո՛, վասն ինչի՛:

Եթէ չկատարուէին այս բոլորը, ի՛նչ պիտի պատահէր: Մարդիկ, ինչպէս նաեւ միւս բոլոր կենդանիները պիտի ծնէին, ապրէին ու մեռնէին սովորականին պէս: Ու թերեւս աւելի երջանիկ ըլլային իրենց տգիտութեան մէջ: Կարենային՝ վայելել ընտելութիւնն ու անոր բազմապիսի հրաշալիքները — արշալոյսի մը խոստումը, հողին բոյրը: Լեռներու խորախորհուրդ վեհութիւնը: Ու տիեզերքը, իր կատարելութեամբ եւ զազանիքներով, պիտի մնար նոյնը: Ո՛վ պէտք ունէր անմահութեան: Ո՛վ պէտք ունի: Եւ ուրե՞մն:

Վասն ինչի՛:

Ցարդ պատասխան մը չունիմ: Սակայն գոյութիւն ունիմ տակաւին, ու բանականութիւնս կը շարունակէ դործել եւ կրկնել հարցումը իւրաքանչիւր քայլափոխի — երբ կը զրեմ, կը կարդամ, կը խօսիմ, կ'ուտեմ, ու նոյնիսկ երբ կը սիրաբանիմ: Որ սարսափելի է:

Մինչդեռ որպէս զրոյղ, մանուսնդ հայ զրոյղ, առաքելութիւն մը նշանակած եմ ես ինձի, եւ զայն վերածած նպատակի: Իմաստ տը-

ւած եմ անոր, ուրախացած եմ երբեմն, խանդավառուած, եւ ստեղծած պատարանք մը անշուշտ: Արդարեւ հարցը վը մնայ նոյնը: Այս ամբողջը ենթակայական է բնականաբար, եւ ոչինչ կրնայ փոխել իրականութենէն: Գաղափար մըն է՝ առաւելագոյն պարազային, եւ ուրեմն՝ փախուստի կերպ մը: Երանի օգտակար ըլլար սակայն, եւ կարենայի փախուստ տալ իսկապէս. այսինքն խարէի ես զիս:

Վասն ինչի՞ թէ եւ:

Մարդուն գոյութիւնը, կամ գոյութիւնը ինքնին, մարդ արարածի գիտակցութենէն, հասկացողութենէն վեր ճշմարտութի՞ւն մըն է արդեօք: Բացարձակ: Ինքն իր մէջ ամբողջական, կատարեալ բայց անհասանելի: Եւ եթէ այդպէս է, եթէ ճիշդ է այս, ինչի՞ արդիւնք է մեր տարակուսանքը կամ թերահաստութիւնը: Եթէ կեանքը իմաստ ունի, պէտք է մեր էութեան մաս կազմէ, պէտք է զգանք զայն մեր մէջ, ապրինք: Ու զօրանանք անով, փոխանակ տկարանալու եւ անտեղի հարցումներ ուղղելու մենք մեզի: Անտեղի՞: Այսքան անխուսափելի իրականութիւն մը, որ յանկերզի նման կրկնուող սա հարցումն է, ինչպէ՞ս կրնայ անտեղի ըլլալ կամ նկատուիլ:

Կին արարածին զեղեցկութիւնը միայն փրկած է զիս այս սպառնալիքէն ու հաւասարակշռած անդոհանքս: Ամէն անգամ որ նազելաշուք, փափկասուն օրիորդի մը մարմինին հրաշքը կը յայտնուի աչքերուս, հմայուած եւ խանդավառ՝ կը մոռնամ այդ սարսափելի հարցումը եւ վը սկստիմ շնչել դարձեալ, ապրիլ: Առժամեայ կերպով գէթ ամէն ինչ բնական կը թուի, թէ եւ ոչ անպայմանօրէն իմաստալից: Եւ երախտապարտ կը զգամ որ բնութիւնը շնորհած է մեզի այս բարիքը: Իդական զեղեցկութիւն կոչուած հրաշալիքը: Անոր մարմինին քաշողական ոյժը, աղերսանքը: Ու չեմ յազեցած, չեմ յագենար. աչքերս միայն այդ զեղեցկութիւնը կը փնտռեն — էգ մարմինի մը ընծայած ապահովութիւնը — ու կը հալածեն բոլոր զեղեցիկ կիները: Այսուհանդերձ չեմ կրցած լուծել զազանիքը ու թափանցել այս հրաշքի խորհուրդին: Անոր ահեղ ոյժը կը զգամ, անտարակոյս, կ'ապրիմ զայն, կը վայելեմ, բայց չեմ կրնար բռնել: Եւ ամէն անգամ որ հասնիմ անոր, զպչիմ՝ խոյս կու տայ ինձմէ, կը հալի կարծես, կ'անէանայ: Որպէսզի յայտնուի վերստին այլ աղջկայ մը մէջ: Եւ այսպէս՝ ամէն օր, ամէն օր, տարիներէ ի վեր:

Ես միայն գիտեմ, թէ ինչպէ՞ս սիրած եմ: Այո՛:

Ալիսի սէրը, թէ եւ, տարբեր հանելուկ է: Նախ իր սէրը, ոչ թէ իմս: Իրեն հանդէպ իմ զգացածս եւ իսկ չեմ կրնար բնորոշել, որովհետեւ Ֆիզիքական է: Որ զարմանալի է. ես գէթ չեմ կրնար ըմբռնել:

Բացառիկ եւ ուշադրաւ զեղեցկութիւն մը ունենալով հանդերձ — նըկատած եմ ու հաստատած, գիտեմ — իր մարմինը չէ որ կը տեսնեմ, այլ զինք: Ինչպէ՞ս: Չեմ գիտեր: Ասկէ առաջ այս տեսակ զգացում չեմ ունեցած, այնպէս որ... չեմ կրնար գիտնալ. այսինքն զի՞նք կը սիրեմ: Կամ՝ կը սիրեմ: Բառը այս իմաստով նորութիւն է ինձի համար: Բայց հիմա գէթ իրականութիւն է: Կրնամ սահմանել զայն, կամ զանազանել:

Իր սէրը սակայն տարբեր է, վստահ եմ: Անգիտակից. կոյր, խենթ ու անկաշկանդ, անհաւասարակչիտ: Եւ այդ իսկ պատճառով՝ վստանաւոր: Նկատաւի ունենալով մանաւանդ, որ անգամ մը անիրաւուած ըլլալու գիտակցութիւնը ունի: Վերաւորուած, անտեսուած, քմահաճօրէն դորձածուած: Ի՞նչ վստանում է, ի՞նչ անարդարութիւն: Յաւի՞լ, թէ խղճալ: Միծաղելի չէ՞: Ինձմէ աւելի քաջ է, ինքնավըստահ, համարձակ. կատարեալ կին՝ իր բոլոր առանձնայատկութիւններով:

Սիրելի հայրենակիցներ, այս բոլորը ինչպէ՞ս պէտք է մտահան ընել: Մոռնալ: Ներողութիւն, ոչ թէ մոռնալ, այլ տարբեր նիւթերու մասին մտածել քիչ մըն ալ: Հմայեակը ո՞ւր է այսօր: Ինչո՞ւ չի դար: Հոս եթէ ըլլար, կը շաղակրատէր, կը կատակէր քիչ մը, ու կը զբաղէինք:

— Ժամը քանի՞ է, — Հիլտա կանգնած էր կողքին:

— Երկուքը կ'անցնի:

— Անօթի եմ: Դո՞ւն:

— Այսքան թէյ խմելէ՞ ետք:

Աղջիկը ժպտեցաւ:

— Ի՞նչ ունիս, — հարցուց յետոյ:

— Մպասելէն զգուեցայ, — ստեց Գեղամ:

— Կանուխ եկար այսօր: Հիմա կ'երթանք: Ե՛ս ինչ պէտք է ըսեմ: Ասկէ աւելի նուստացուցիչ դորձ չեմ կրնար երեւակայել:

— Դուն կը զբաղիս գէթ: Գանդատելու իրաւունք չունիս: Ո՛վ կը ստիպէ որ աշխատիս:

— Ուրիշ ի՞նչ կրնամ ընել: Լիրանանի մէջ մնալու միակ կերպն է:

— Ինչո՞ւ Գերմանիա չես վերադառնար:

— Գիտե՞ս, թէ ինչի մասին կը խօսիս, — Հիլտա հարցուց մտահոգուած: — Գերմանիոյ մեր կեանքին մասին զազափար ունի՞ս:

— Նուստացուցիչ դորձ է ըսիր: Գէթ կը փրկուիս:

— Այս չարչարանքը նախընտրելի է: Ձոհողութիւնը կ'արժէ:

Երկիրը, կլիման, դրամը, մարդիկը: Գո՛ւն: Այս բոլորը միաժամանակ ուրիշ ոչ մէկ երկրի մէջ կրնամ գտնել: Բաղմաթիւ այլ երկիրներու մէջ աշխատած եմ. Յունաստան, Իտալիա, Եգիպտոս, Սուրիա, Թուրքիա: Նոյնը չէ: Լիրանան միակ տեղն է ինձի համար:

— Աշխատելու պէտք ունի՞ս:

— Ամէն մարդ պէտք է աշխատի: Ապրուստս ինչպէ՞ս պիտի ապահովեմ:

— Կ'ամուսնանաս, — Գեղամին շատ բնական թուեցաւ լուծումը:

— Մեր մօտ կ'իններն ալ կ'աշխատին: Այնպէս որ բնաւ տարբերութիւն չ'ըներ: Հազարէն մէկ՝ թերեւս:

— Եւ ուրեմն կը նախընտրես շամուսնանալ:

— Կ'ուզե՞ս որ ամուսնանամ, — աղջիկը լրջօրէն հետաքրքրուեցաւ:

— Անչո՛ւշտ: Կ'ուզեմ որ երջանիկ ըլլաս:

— Եթէ համոզուած ես, թէ ամուսնութիւնը երջանկութեան բանալին է, դուն ինչո՞ւ...:

— Այր մարդու պարագային տարբեր է, — ընդմիջեց երիտասարդը. — կացութենէն ոչինչ կը փոխէ: Դարձեալ պէտք է աշխատի, ընտանեկան պարտականութիւններով ծանրաբեռնէ ինքզինք:

— Եթէ երջանիկ պիտի ըլլայ, կ'արժէ: Պարտականութիւն ունենայն ալ հաճոյք է ի վերջոյ. գուակ ունենալ, դաստիարակել զանոնք:

— Երբեմն խկապէս կը զարմացնես զիս:

— Ինչո՞ւ: Չե՞ս հաւատար: Կամ թերեւս զիս հասարակ, միւսներուն նման հասարակ պատի աղջիկ մը կը նկատես:

— Օ՛հ, հարցը լրջացաւ կարծեմ: Գիտես, թէ ըսածդ սխալ է, եւ ուրեմն... ի՛նչ նշանակութիւն ունի յամենայն դէպս:

— Ո՛չ, — Հիշտա յամառեցաւ. — վերաբերմունքդ միշտ այսպէս եղած է... որ վիրաւորական է:

Գեղամ զուարճացած զիտեց զինք: Հիշտայի անձին անձանօթ մնացած մէկ մասը կը յայտնուէր յանկարծ, ու զարմանալիօրէն զրթգոհ չէր: Առաջին անգամն է որ կը պոթթկար այսպէս, կը մատնէր ինքզինք: Ինք յոգնած էր սակայն, անտրամադիր — մանաւանդ այսօր — ու դերասանութիւն խաղալու կարողութիւն չունէր: Այլապէս կը քաջբէր զինք, կը շարժարէր, ու կը զբաղէր: Փոփոխութիւն մը կ'ըլլար:

— Ինչո՞ւ չես պատասխաներ, — աղջիկը շարունակեց, թէ եւ աւելի մեղմ չեղտով մը:

— Եթէ կ'ուզես անպայման ամուսնացնել զիս, — երիտասարդը յաջողեցաւ կատակել, — պատրաստ եմ:

— Նիւթը մի փոխեր:

— Կամ թերեւս ես պէտք է քեզ...:

— Քեզի ամուսնացիր ըսող չեղաւ: Այր մարդոց մասին բան մը ըսիր, ես ալ կարծիքս յայտնեցի. բայց անմիջապէս յարձակողականի անցար: Կ'ուզես ամուսնացիր, կ'ուզես... ինձի ի՛նչ:

— Բայց քու մասիդ կը խօսէինք, ոչ թէ իմ, — Գեղամ համբերութեամբ խօսեցաւ, ու յետոյ խորամանկ ժպիտ մը դէմքին, աւելցուց. — կ'ուզե՞ս ամուսնանալ:

— Հիմա ալ ծաղրելու սկսար:

— Բնա՛ւ: Շատ զգայուն դարձած ես այսօր: Եթէ կ'ուզես, չեմ խօսիր: Բայց քալենք, հոս չկենանք այլեւս: Թէ ոչ բաժակ մը եւս պիտի ապսպրեմ:

— Ինչ կ'ուզես ըրէ, — դերմանուհին քալեց եւ ուղղուեցաւ դէպի յարակից սենեակը, որ ե՛ւ խոհանոց էր, եւ լուացարան:

Գեղամ պահ մը տնտնաց, զգուշութեամբ քննեց շուրջ բոլորը, ու հաստատակէ ետք, թէ ոչ ոք անդրադարձած էր պատահածին, հաշիւը պահանջեց Նաթաշայէն, որ դրաղած էր այլ յաճախորդներու հետ, վճարեց եւ անկատ դուրս եկաւ:

Պէյրութի վատահամբաւ խոնաւութիւնը այնքան թանձրացած էր, որ կարելի էր բռնել զայն գրեթէ, զգալ, հպիլ անոր: Ֆինիսի փողոցին վրայ գիշերային սովորական խճողումը կենդանի էր տակաւին: Ուղղուեցաւ դէպի ծովեզերք, որոշած ըլլալով ման գալ քիչ մը, տուն երթալէ առաջ, եւ մտածել կեդրոնանալ: Աշխարհի ամենէն ապահով քաղաքն էր. գիշերուան յառաջացած այս ժամուն առանձին կ'ին մը նոյնիսկ կրնար անվախօրէն թափառիլ եւ գերծ մնալ ամէն կարգի վրտանդէ: Քանի մը վայրկեանի մէջ սակայն մարմինը ամբողջ թրջուած էր արդէն. նախընտրելի էր տուն երթալ եւ պաղ ջուրի ցնցուղին տակ երազել: Մանկութենէն ի վեր իր հաճոյքներէն մէկը եղած էր ջուր կոչուածը, որ զուարճացուցած էր զինք երբեմն, բայց աւելի յաճախ՝ հանդարտեցուցած: Անլուծելի թուող հարցեր լուացած էր ու մաքրաջրած՝ զինք ձերբազատելով անտեղի մտահոգութիւններէ:

Տուն երթալու գաղափարն իսկ վրդովեց զինք, ինչպէս միշտ, ու շարունակեց քալել աննպատակ կերպով: Քսան տարիէ ի վեր նոյն տան մէջ կը բնակէին, այս նոյն թաղամասին մէջ — ասկէ քանի մը փողոց դէպի ձախ — ուր անցուցած էր նաեւ մանկութիւնը: Մայրը

վատահարար արթուն էր հիմա, եւ զանգատելու պիտի սկսէր անմիջապէս որ ներս մտնէր: Միակ կիներ, որուն հանդէպ անտարբեր եղած էր, իր հարազատ մայրն էր. բնաւ չէր կրցած հանդուրժել անոր շատախօսութեան, որ հօրը դժբախտութեան պատճառ դարձած էր: Վատահ էր: Եւ եթէ ինք քաջութիւն չէր ունեցած ամուսնանալու, գլխաւոր պատասխանատուն նոյնպէս մայրն էր: Պարզօրէն քաջութիւն կը պահանջէր անոր ազջիկ մը ծանօթացնելը. մանաւանդ՝ ազջիկայ մը ձեռքը խնդրելու մասին խօսելը: Կաթուածահար կ'ըլլար թերեւս, եթէ ամուսնալուծուած եւ երկու զաւակի տէր կ'իւն մը բերէր տուն: Տո՞ւն բերէր:

Չառանցելու սկսար դարձեալ: Ո՛ր տունը, եւ ինչպէ՞ս: Դուն նոյնիսկ կարդին մահճակալ մը շունիս հոն: Իսկ ծնողքէդ բաժնուելը պարզապէս հնարաւոր չէ: Բայց լրջօրէն ամուսնանալու մասին սկսած ես մտածել: Երկու զաւակով կ'իւն: Կը շնորհաւորեմ: Ինչո՞ւ կ'աճապարես: Այդ խենթ ազջիկը քեզմէ ակնկալութիւն չունի նոյնիսկ թերեւս: Սէրը կոյր է: Քու ինչդ սիրած է ի միջի ալլոց: Եթէ միա՞յն դադարփար ունենար, թէ ինչ կարգի յիմար մըն ես: Անդործնական, վախկոտ, անխտասհելի: Դուն կրնաս կի՞ն ապրեցնել, ընտանեկան պատասխանատուութիւննե՞ր յանձն առնել:

**

Մինչեւ կէսօր սպասեց եւ ապա դուրս ելաւ տունէն: Ալիս խոտացած էր հեռաձայնի, բայց ըստ երեւոյթին առիթ չէր ունեցած: Կամ... ի՞նչ: Աւելի լաւ: Այսպէս աւելի հանգիստ էր, աւելի խաղաղ: Քսան ժամէ ի վեր մտային անդորրը ամբողջովին խախտած էր եւ մտանուած անօրինակ անորոշութեան մը: Տազնապի: Մինչեւ երէկ անհող եւ երջանիկ արարած մըն էր: Այո՛, նոյնիսկ երջանիկ: Մտահոգութիւն չունենալը խաղաղութիւն չէ՞ր պարզեւեր: Փողոցին մէջ, երբ բաւական հեռացած էր տունէն, հաստատեց, թէ Ալիսի չըհեռաձայնելը առաջին իսկ վայրկեանէն հաւանական թուած էր իրեն: Ակնկալած էր, կամ նախատեսած էր, որ կրնար զղջալ, սթափիլ ան յանկարծ եւ չհեռաձայնել երբեք: Նախազգացումը չէր խարած զինք:

Կարեւորը այն էր, սակայն, որ ինք դո՛ւ էր: Եթէ հեռաձայնէր՝ ի՞նչ պիտի ընէր: Ո՛ր կրնար տանիլ զինք, ի՞նչ կրնար խօսիլ հետը: Ուսուցիչի եւ աշակերտուհիի, անընական թուող յարաբերութիւն մը կը մնար իրենց միջեւ, գէթ իրեն համար, եւ ահամայ կը վարուէր

անոր հետ ճիշդ այնպէս՝ ինչպէս պիտի վարուէր դասարանին մէջ: Իրեն համար աշակերտուհի մըն էր ի վերջոյ, հող չէ թէ ամուսնացած կ'իւն ըլլար, եւ իրմէ աւելի հասուն՝ թերեւս:

Քայլերը արագացուց եւ ուղղուեցաւ դէպի Քասր-էլ-Պահար, ուր կ'անցընէր առտուան քանի մը ժամերը, խմբադրատուն երթալէ առաջ: Թէեւ այսօր Կիրակի էր եւ գիշերային հերթի վրայ կ'ըլլար: Ինք այսպէս նախընտրած էր եւ դասաւորած, Կիրակի գիշերը կարենալ լեցնելու համար: Այս կերպով նաեւ Շարաթ օր կրնար իր շարաթական արձակուրդը առնել եւ ազատ ըլլալ: Շրջանի միւս բոլոր գիշերներուն եւ կապելաներուն նման, Քաւը եւս յիսկ կ'ըլլար Կիրակի գիշեր, եւ ինք կը մնար... փողոցներուն մէջ: Անցեալին, երբ ուսուցիչ էր, կէսօրէ ետք կու դար հոս, ծովեզերեայ իր սրճարանը, ուր կը դրէր, կը կարգար, կ'աշխատէր ու կը կատակէր երբեմն սրճարանի կարգ մը մնայուն յաճախորդներուն հետ:

Նին ու խարխլած բայց ընդարձակ եւ ապահովութիւն ներշնչող սրահ մըն էր առաւելաբար այս սրճարանը, որ կանգուն կը մընար տակաւին բաց ծովուն վրայ՝ դարասկիզբէն ի վեր: Սրահին մէջ երբ քալէիր, ներբաններուդ տակ կը զգայիր անհանգիստ ծովը, որ կը մզկտար, կը մուշտար, կը զայրանար երբեմն ու կը փշրէր արեւունը՝ Քասրը ձեռամբարձ շալկած սիւներուն վրայ: Ու նոյնքան մը հին եւ իւրայատուկ մթնոլորտ մը ունէր այս ժամադրավայրը, որ անցեալ օրերու իր փառքը կը յուշէր կարծես յաճախորդներուն, որոնք քաղաքի զանազան եւ հեռաւոր շրջաններէն կու դային միջեւ հոս հանդուստանալու կամ սիրտիւնելու համար:

Սուրճ ապսպրեց եւ փխաւ թղթատել օրաթերթը, զոր դնած էր քիչ առաջ: Իր առօրեայ հաճոյքներէն մէկն ալ այս էր: Գաւաթ մը սուրճը խմած ատեն յամենալ ու, կանխամտածուած ծուլութեամբ թերեւս, կարդալ օրաթերթը, որ նորութիւն չէր պարունակեր սովորաբար: Ամէն օր նոյն յանկերգն էր. նոյն վէճերը, հակամարտութիւնները, սուտերը, սպառազինում բայց նաեւ խաղաղութեան կոչեր, եւ երբեմն՝ ոճիր, կողոպուտ, սպանութիւն: Մասնաւոր հետաքրքրութեամբ կը հետեւէր տեղական լուրերու աչս սիւնակին, նկատելով որ վերջին երկու տարիներուն սկսած էր լախտիլ երկրի ներքին ապահովութիւնը:

Թէեւ տակաւին խոնաւութիւնը զգալի էր, սակայն առաւօտունը դովազած էր օդը մասամբ, ու հիմա հաճելի էր նստիլ հոս, պատուհանին դիմաց եւ ներծծել ծովին ազի բոյրը: Մովը չէր տեսներ սովորաբար, չէր նկատեր իսկ, այլ կը զգար աւելի, կը շնչէր ու կը կազուր-

ուէր: Ամառ թէ ձմեռ այս սրճարանը կազդուրման կայան եղած էր իրեն համար — երկրորդ տուն մը, կամ օթեւան: Կու գար հոս, կը թարմանար, կը վերանորոգուէր ու կ'երազէր յաճախ, երբ խանդարող չըլլար զինք: Խանդարողները իրեն նման մնայուն յաճախորդներ էին, ընդհանրապէս երէց եւ անդորձ մարդիկ, որոնք նոյն ընտանիքին անդամները կը նկատէին զիրար: Հայ կամ արար չէին այս յարկին տակ, այլ մեծ ընտանիքի մը հարազատները: Իրենց ժամանակը նարտ խաղալով կ'անցընէին, բայց երբ յոգնէին կամ ձանձրանային, կը սկսէին վիճիլ կամ զիրար ձեռք առնել:

Գեղամ Տարօնեան հաճոյքով, բայց կարելի եղած չափով առանց միջամուխ ըլլալու, կը հետեւէր իրենց տղայական խաղերուն, երբ ինք եւս յոգնած ըլլար կամ անկարող՝ սկսուած դորձ մը շարունակելու: Այդ օր իր հասնելէն առաջ բուռն վէճի մը կ'ընկեր քակած էին արդէն, ու հիմա կը փորձէին իր ալ ուշադրութիւնը դրաւել:

— Անանկ չէ՞, հա՛, անանկ չէ՞, Պր. Գեղամ, — մօտակայ սեղանէն կարթը իր ուղղութեամբ նետեց Փրանսական բանակի նախկին կամաւոր Մարտիրոս Երզնկացեանը: — Այս ախմախին դուն խօսք հասկցուր:

Թէեւ վաթսուներ անց, սակայն նիհարակազմ, գեղադէմ ու դանդաղահեր երիտասարդ մըն էր Մարտիրոս Երզնկացեան, որ Յուլիոսի այս տաքին իսկ փողկապը բծախնդրութեամբ կապած էր դարձեալ, եւ անհանգիստ չէր զգար ըստ երեւոյթին: Անդորձ կամ ախմայ հանդերսեան կոչուած երէցներու այս աւազանիին ամենէն եռանդուն անդամն էր ան, որովհետեւ նրաթականով ապահով, մասնաւոր մտահոգութիւն չունէր: Երկու գաւառները — տարիներ առաջ Միացեալ Նահանգներ հաստատուած եւ հոն ալ ամուսնացած — ամէն ամիս կանոնաւորաբար հարիւրական տղար կը զրկէին իրեն, հետեւողականօրէն պնդելով որ Լիբանան մնար ինք: Իր վերջին տարիներու միակ դառնութիւնը կամ դանդաղատ այս էր: Բնաւ չէր կրցած ըմբռնել, թէ ինչու կը յամառէին զինք հոս պահել, երբ զիտէին թէ իրենցմէ զատ հարազատ չունէր աշխարհի վրայ:

Ախմախը Մարտիրոսին տարեկից, բայց արտաքինով զէթ խեղճ ու խոնարհ մարդ մըն էր: Մարտիրոս ու ինք կը կազմէին սրբճարանի անբաժան զոյգերէն մէկը, բայց մնայուն տարակարծութեան մէջ էին միշտ, մանաւանդ ազգային հարցերու պարազային: Այսօր եւս նրաթը, որ արդէն իսկ վերածուած էր վէճի, ազգային էր անխուսափելիօրէն, կամ բնականաբար: Այլապէս այսքան սուր բընոյթ ստացած չէր ըլլար վէճը: Բարեբախտաբար կէսօրուան այդ ժա-

մուն — Կիրակի յետմիջօրէին սրճարանը ամայի կ'ըլլար սովորաբար — ընտանիքին միւս անդամները չէին ժամանած դեռ. թէ ոչ իրենց կողմնակի եւ զիրար խաչաձեւող ակնարկութիւններով կրնային խկապէս խանդարել զինք:

— Ի՞նչ է հարցը, — Տարօնեան հարկադրուած հետաքրքրութիւն ցոյց տուաւ:

— Տղան ինչո՞ւ կը խանդարես, — խօսեցաւ Ռուբէն որ ախմախ կոչուած էր քիչ առաջ: — Լիբանանէն աւելի լաւ երկիր չկայ մեզի համար:

— Հոս ապագայ չունինք, վերջացա՛ւ, — ըսաւ Մարտիրոս, — ոչ ալ տեղ: Օր մը չէ օր մը, առաջին առիթը որ անցնի ձեռքերնին, մեր հաշիւը կը մաքրեն ասոնք:

— Այս տարիքէդ ետք ի՞նչ ապագայի մասին կը խօսիս: Մեր դորձը վերջացած է: Բայց Հայութի՞ւնը: Ո՛ր երկրին մէջ կրնանք այսքան ազատ ըլլալ, դպրոցներ սրահել, թերթեր հրատարակել, կուսակցութիւնները ապրեցնել. այսինքն կուսակցական, ազգային գործ կատարել:

— Կուսակցութիւն-մուսակցութիւն. պարապ բաներ են ասոնք: Ի՞նչ ազգային գործ, ի՞նչ բան: Ամէն մարդ զլխուն ճարին թող նայի:

— Ամէն մարդ զլխուն ճարին կը նայի, — ջղայնացաւ Ռուբէն, — բայց ազգին ճարին ո՞վ պիտի նայի: Եթէ ամէն մարդ քեզի պէս մտածէ . . . :

— Վերջացած խնդիր է. ազգ-մազգ: Հայութեան ո՞վ կարելութիւն կու տայ, եւ ինչո՞ւ պիտի տան: Թէ իրենց երկիրներուն մէջ պիտի ապրինք, եւ թէ հայկականութիւն պիտի խաղանք: Ո՞վ կ'ընդունի: Եթէ մեր երկրին, Հայաստանի մէջ մեզ հաշուի առնող չկայ: Դեռ ի՞նչ կ'ուզես:

— Ձէ՛, Ամերիկայի մէջ մեզ հաշուի կ'առնեն, — հեղնեց խեղճ արտաքինով երէցը:

— Գոնէ մարդու պէս կրնաս ապրիլ:

— Հոս իչո՞ւ պէս կ'ապրինք:

— Քիչ մըն ալ աւելի, — մասնաւոր հաճոյքով մը արտայայտուեցաւ նախկին կամաւորը:

— Գնա՛, որ հասակդ տեսնեմ: Այս ազգայի կեանքդ հոն երազիկ մէջ կրնաս տեսնել նայիմ: Զաւակներդ նոյնիսկ երես կը դարձրնեն . . . թող տանին. ինչո՞ւ չեն տարեր քեզ մինչեւ հիմա:

Մարտիրոս Երզնկացեան զայսքան զիտեց խօսակիցը բայց

չկրցաւ խօսիլ, պաշտպանել զաւակները կամ ինքզինք: Անոնց դէմ արտայայտուողը, դատապարտողը ինք եղած էր միշտ, եւ հիմա պիտի չկարենար պաշտպանել կամ արդարացնել զանոնք անշուշտ:

Գեղամ Տարօնեան զոհ էր որ այսպէս ալ վերջ դատած էր վէճը: Կը յուսար որ հանդիսա կը ձգէին զինք այլեւս, եւ այլ նիւթերու շուրջ կը շաղակրատէին ու կը մոռնային զինք: Ինք դէթ կ'ուզէր մոռնալ այդ ասկերախտ նիւթը, որ բիւզանդական վէճի մը պէս լուծում չէր ընդունիր, բայց չէր հանգեր նաեւ ու հանդիստ տար իրեն:

— Հեռաձայնէն քեզ կ'ուզեն, — սպասեակը սրտաց արարերէն, փորձելով ուշադրութիւնը դրաւել ձեռքի շարժումներով:

Տունէն միայն երբեմն, անհրաժեշտութեան պարագային, կը հեռաձայնէին հոս: Ինչ կրնար պատահած ըլլալ, մտածեց, եւ ուղղուեցաւ դէպի սպասարկութեան սեղանը, ուր գետեղուած էր դործիքը: Վերցուց ընկալուչը, տատամսեցաւ պահ մը, բայց խօսեցաւ ի վերջոյ:

— Այո՛: Ո՞վ է:

— Ես եմ, — հայերէն հարցումին անդերէն պատասխան մը տացաւ: — Ինչո՞ւ չսպասեցիր երէկ զիշեր:

Գեղամ յիշեց, թէ Հիլտային ինք տուած էր սրճարանի հեռաձայնին թիւը ասկէ քանի մը ամիս առաջ, երբ բաւականաչափ մտերմացած էին արդէն: Անպայմանօրէն ուղած էր թիւ մը ունենալ, բացատրելով որ կրնար պէտք ըլլալ օր մը: Նախընտրած էր այս թիւը տալ անոր, տնեցիներուն — մանաւանդ մօրը — հարցապնդումներէն խուսափելու նպատակով:

— Մինչեւ ժամը երկու սպասողը ո՞վ էր, — հանդարտօրէն հարցուց:

— Ատոր համա՞ր փախուստ տուիր յետոյ:

— Յիշողութիւնդ թարմացնելու պէտք չունիմ: Իսկ եթէ յարմար նկատած ես չիշել, յետոյ կը խօսինք:

— Յետոյ ե՞րբ: Նեղուեցա՞ր:

— Եթէ քեզի պէս երեխայի ըլլայի:

— Այս իրիկուն պիտի տեսնե՞մ քեզ:

— Այսօր Կիրակի է:

— Գիտե՞մ, — Հիլտայի ձայնը տարօրինակ հնչեց: Սովորաբար զուսպ էր եւ հաւասարակչիւ: — Գործէն վերադառնալէդ ետք կը սպասեմ:

Պահ մը մերժելու փորձութիւն ունեցաւ Գեղամ: Այդպէս՝

քմահաճօրէն թերեւ: Երեխայական թուեցաւ զաղափարը, եւ ուրեմն ըսաւ:

— Ժամը երկուքէն ետք հազիւ:

— Կը սպասեմ: Ուրեմն չես նեղուած:

— Յտեսութիւն:

— Ո՛չ, սպասէ՛, — գերմանուհին գրեթէ ճշաց: — Կարօտցայ քեզի:

— Հիւա՞նդ ես, — շարացաւ երիտասարդը բայց մասնուեցաւ չնախատեսուած շփոթի մը: Նախախնամութեան վերադրած էր նախորդ զիշեր պատահածը եւ ասկէ ետք չէր մտածած իսկ Հիլտայի մասին:

— Անտանելի ես, — եղբակցուց աղջիկը բարձրաձայն խնդալով, ու փակեց հեռաձայնը:

Տարօնեան չկրցաւ աշխատիլ: Խոնավութիւնն էր, թէ կիրակնօրեայ յետիջօրէին ամայութիւնը այս շրջաններուն մէջ: Կամ թերեւս՝ Հիլտայի հեռաձայնը: Օրաթերթը քանի մը անգամ թղթատած էր արդէն ու երկրորդ սուրճ մը ապսպրած: Բայց չկրցաւ կեդրոնանալ, եւ երկար ժամանակ նստած մնաց այդպէս, թուղթերն ու գրիչը սեղանին վրայ: Տարօրինակ ապրում էր: Գրականութիւնը կամ գրելը իրեն համար շատ բնական արարք մըն էր: Իր առօրեային մաս կը կազմէր: Կը նստէր եւ գրելու կը սկսէր ճիշդ այնպէս ինչպէս ուրիշ որեւէ աշխատանք կը կատարէր: Նիւթը պատրաստ էր միշտ, անսպառ, որովհետեւ կեանքը կը շարունակուէր՝ ամէն տեղ, ամէն մարդու մէջ: Կեանքը ինք գրականութիւն էր — անսկիզբ եւ անվախճան: Նիւթ փնտռելու հարց չունէր, որովհետեւ նիւթը ամէն տեղ էր, ամէն մարդու մէջ, եւ բնականաբար՝ իր մէջ նաեւ: Զարմանալի կերպով հիմա չէր կրնար գրել սակայն: Մինչեւ ժամը հինգ ինչ պիտի ընէր: Գաղափարը անհանգստացուց զինք: Հետը զիրք մը ունենար, կը կարգար գէթ, կը դրադէր: Անտանելի կեանք մըն էր իրը, մտածեց յետոյ, յանձնապաստան, լճացած: Մտնում էր: Զանձրանալէն զատ ինչ կ'ընէր: Եւ միշտ դժգոհ էր: Կը գրէր անշուշտ: Սակայն գրող ըլլալէ առաջ մարդ էր, եւ որպէս մարդ՝ ոչինչ կ'ընէր: Ամուսնացած չէր, զաւակ չունէր. ոչ խաչալ, ոչ նպատակ, ընկերային հետաքրքրութիւններ, ոչինչ: Առաջ ուսուցիչ էր գէթ, եւ փոխանակ ձանձրանալու, կը ծառայէր: Զանձրանալու առիթ կամ ժա-

մանակ չէր ունենար: Կանգնեցաւ ոտքի եւ հանդարտօրէն քալեց սրճարանէն դուրս: Փողոցներուն մէջ այս ժամուն թափառելը անկարելի էր, բայց տուն չէր ուզեր, չէ՛ր կրնար երթալ:

Հիլտայի զէմքին վրայ զարմանքը ծամածռութեան վերածուեցաւ, երբ նկատեց զինք զբան սեմին, ու բացականչեց: — Աչքերուս չեմ կրնար հաւատալ:

— Զբազմ՞ծ ես, — Գեղամ դուռը փակեց եւ պահ մը շուարած կեցաւ միջանցքին մէջ:

— Ո՛չ, երբե՛ք: Ասկէ աւելի մեծ անակնկալ մը չէիր կրնար ընել: Ինչպէ՞ս ես չմտածեցի: Բայց ինչպէ՞ս պատահեցաւ որ որոշեցիր ցերեկ տան հոս գալ: Իսկապէս անհաւատալի է:

— Տունդ զով է, գիտես, իսկ դուրսը...:

— Ասկէ առաջ զով չէ՞ր: Այս մեքենան միշտ հոս եղած է... Բայց ցերեկին գալով իսկապէս զարմանալի է: Զվախեցա՞ր:

— Գիշերը չվախցողը ցերեկին վախնալու պէտք չունի կարծեմ, — կատակեց Գեղամ:

— Նախադասութիւնները ուղածիդ պէս կը շրջես: Լա՛ւ, ի՛նչ կեցեր ես. ներս չանցնի՞ս: Ինչ լաւ ըրիր որ եկար: Ես ալ շուարած էի, թէ ինչ պիտի ընեմ: Էտնային հեռաձայնեցի որ միտսին ծով երթանք, բայց կ'երեւի անտրամադիր էր, կամ զբաղած, չեմ գիտեր:

Բաց կապոյտ, պարզ շրջագոյն մը հագած էր Հիլտա, ու դէմքը մաքրած էր գիշերային շարձէն ու իւզերէն: Մտքը անխնամ կերպով հաւաքած էր ծոծրակին վրայ ու բացած չքեղ պարանոցը, որ աւելի եւս կը շեշտէր ուսերուն լայնանիստ գեղեցկութիւնը: Այս արտաքինով, զերծ իր սովորական արգուղարգէն, փոքր ազնկայ մը վերածուած էր, ու մանկական անմեղութեամբ ալ կը ժպտէր հիմա:

— Խե՛նթ, — ըսաւ յետոյ ու փաթթուեցաւ սիրած տղուն: — Անգամ մըն ալ այդ տեսակ խենթութիւն չես ըներ: Գիշերը ամբողջ չեմ քնացած: Իբրև խենթ ես եղեր. հարբա, անգութ: Խիղճդ քեզ չտանջե՞ց:

— Ո՛չ ես երեխայ եմ, ոչ ալ դուն: Գնա ըսիր, ես ալ գացի: Հարցերը բարդացնել չեմ սիրեր, գիտե՛ս: Ի՛նչ կայ ասոր մէջ:

— Ըսել կ'ուզես, թէ չե՞ս վշտացած:

— Քանի՞երորդ անգամն է որ կը հարցնես այս հարցումը: Պէ՞տք է վշտանամ: Եթէ հաճոյք կը պատճառէ քեզի ատիկա, հասկընանք: Թերեւս պատճառ մը ունիս, հոգեբանական պահանջ՝ զիս վերաւորուած տեսնելու:

— Հարցերը բարդացնել չեմ սիրեր կ'ըսես, եւ յետոյ ան-

կարելի բաներ կը վերագրես ինծի, եւ իրական բարդութիւն կը ստեղծես այս անգամ: Զիս չիտթի մտանելու աստիճան. չեմ կարծեր որ ըսածդ կը հասկնամ նոյնիսկ: Բայց ինչ ալ ըսես, կարեւորութիւն չունի, քանի ես անձս կը ճանչնամ:

— Ես ալ կը ճանչնամ, — հիւրասենեակին մէջ իր սովորական տեղը դրաւեց Գեղամ, կողքի պատուհանին վարադոյրը բանալէ ետք: — Թէ ոչ հոս չէի ըլլար հիմա:

— Ուրախ եմ որ եկար, — ամենայն պարզութեամբ երախտագիտութիւնը արտայայտեց զերմանուհին, ու նոյն պարզութեամբ հարցուց: — Ծաշա՞ծ ես:

— Ո՛չ, բայց անօթի չեմ:

— Երբոր կերակուրի մասին խօսիմ քեզի, անօթի չեմ կ'ըսես: Ե՞րբ կ'ուտես. կամ՝ կ'ուտե՞ս արդեօք: Ես ալ չեմ ճաշած:

— Կը նախընտրեմ խօսիլ, հանգստանալ:

— Կը խօսինք, — Հիլտա քաշեց զինք թեւէն ու բարձրացուց բազկաթուէն: — Խոհանոց քովս կը կենաս, մինչեւ որ պէտք եղածը պատրաստեմ: Հոն կը խօսինք. քալէ՛: Ամբողջ կէսօրէ ետքը մեր արամադրութեան տակ է... յուսամ հոս պիտի մնաս:

— Պէտք է ըսել որ դժգոհ չեմ: Հաճելի մթնոլորտ, զովութիւն, խմիչք, զովացուցիչ, ճաշ եւ քեզի պէս...:

— Շատ մի խօսիր, — ազնիկը թոյլ շտուաւ որ շարունակէ, եւ դէպի խոհանոց առաջնորդեց զինք:

— Կը նախանձիմ քեզի:

— Կրնաս գալ եւ հետս ապրիլ, քանի այնքան նախանձելի կը գտնես կեանքս:

— Երանի կարելի ըլլար:

— Գիտեմ, գիտե՛մ, — զանդատեցաւ կամ մլաւեց Հիլտա. — նորէն սկսելու պէտք չունինք:

— Անկեղծ:

— Ի՛նչ կը նշանակէ այս «անկեղծ»ը. չեմ հասկնար: Ինչո՞ւ չես զար ուրեմն: Պատասխանելու պէտք չունիս: Ո՛չ, մի պատասխաներ:

— Թերե՞ւս ուրիշ ըսելիք ունիմ: Պիտի չկարենա՞մ խօսիլ: Ինչպէ՞ս կ'ակնկալես որ հետզ ապրիմ, երբ խօսելու նոյնիսկ արտօնութիւն չես տար:

— Ըսելիքդ նորութիւն չի կրնար ըլլալ, — հասկացողութեամբ ժպտեցաւ ազնիկը. — բայց խօսէ, քանի արտօնութեան պէտք ունիս:

— Կ'ուզե՞ս որ հետդ ապրիմ իսկապէ՛ս, — Գեղամ հարցուց, անակնկալօրէն լրջացած :

— Ինչո՞ւ կը հարցնես :

— Որովհետեւ ես կ'ուզեմ :

Հիլտա թերահաւատութեամբ նայեցաւ խօսակիցին, պահ մը մոռցած թէ ստանարանէն ինչ պիտի հանէր, բայց ինքզինք վերադառաւ յետոյ, մինչ աչքերը տխրեցան, եւ վերջապէս վրցաւ խօսիլ :

— Բայց չես կրնար :

Տարօնեան յանցաւոր դպաց, ամչցաւ, ու չկրցաւ ստել : Ձղջաց պահ մը, չփոթեցաւ ու պատրուակ մը փնտոցեց խոհանոցէն դուրս ելլելու, սակայն ըսաւ :

— Ձեմ դիտեր : Կ'ուզեմ . . . :

— Բայց չես կրնար, — կրկնեց դերմանուհին : — Բացատրելու պէտք չունիս. կը հասկնամ, գիտեմ :

— Արդար չէ :

— Արդա՞ր : Շատ բնական է : Ես կը հասկնամ գէթ. ըսի՛ չէ՞ : Եւ դո՛ւ եմ, անկե՛ղծ : Այսքանէն ալ դո՛ւ եմ. ասկէ աւելի ի՛նչ կրնամ պահանջել : Կարեւորը զգացածդ է . . . :

— Ինչպէ՞ս կրնաս դո՛ւ ըլլալ, երբ դիտես, թէ սիրած անձը չի կրնար . . . ինչպէ՞ս պարզեմ միտքս. միայն որպէս այցելու կու գայ քովդ, չի կրնար հետդ ապրիլ, չ'ուզեր նոյնիսկ :

— Դուն կ'ուզես. կարեւորը ատիկա է : Թէ չես կրնար՝ տարրեր խնդիր է :

— Անձնասիրութիւն չէ՞ : Ինծի նման մարդու մը ինչպէ՞ս կարելի է ներել : Ձե՞ս անդրադառնար, որ միայն երբ քեզի պէտք ունենամ, կու գամ քովդ :

— Բայց միշտ կու գաս, — յաղթական ժպտեցաւ Հիլտա, — որ կը նշանակէ, թէ միշտ պէտք ունիս : Եւ . . . ո՛չ, ըսելու պէտք չունիս որ միայն Ֆիզիքական պահանջ է. պոչաւոր սուտ մըն է : Դուն ալ գիտես, ես ալ գիտեմ : Եթէ Ֆիզիքական ըլլար, մինչեւ հիմա փոխուած կ'ըլլայիր :

— Ենթադրենք որ ճիշդ է ըսածդ : Եւ եթէ ճիշդ է, երկուքս ալ պիտի նախընտրենք բաժնել մեր կեանքը, միասին ըլլալ միշտ :

— Երբ կարելի չէ . . . :

— Ըսել կ'ուզես, թէ տարբերութիւն չ'ընե՞ր :

— Կ'ընէ, անշուշտ կ'ընէ, բայց ի՛նչ կրնամ ընել :

— Կրնաս ուրիշի մը հետ ապրիլ :

— Պատճառ չունիմ : Եթէ կը խորհիս որ անպայման մարդու

մը հետ պէտք է ապրիմ, կը սխալիս : Կը նախընտրեմ ազատ եւ անկախ ըլլալ : Նոյնիսկ եթէ ամուսնանամ օր մը, պիտի ուզեմ անկախութիւնս պահել : Քեզի համար ըմբռնելի չէ. դուք արեւելքցիներդ, մեզի պէս չէք մտածեր. ձեր ըմբռնումները, սովորութիւնները, կենցաղը՝ տարբեր են :

— Ինչո՞ւ Լիրանան կը մնաս ուրեմն, — Տարօնեան լրջօրէն հետաքրքրուեցաւ :

— Այս երկիրը կը սիրեմ : Անշուշտ երբ եկայ, գաղափար չունէի. պէտք էր տունէն, այսինքն հօրմէս հեռանայի : Անկախութիւնս գտնէի : Այնքան ատեն որ հոն էի, անկարելի էր : Հայրս շատ խիստ, դժուարահաճ, ջգային մարդ է : Գերմանիայէն դուրս զինք չի հետաքրքրեր, թէ ի՛նչպէս կ'ապրիմ, ի՛նչ կ'ընեմ. հաւանաբար գաղափար իսկ չունի : Հոն մնալու պարագային, սակայն, պէտք էր իրեն ենթարկուէի : Դժբախտաբար ստիպուած եմ այս զգուելի գործը ընել հոս : Թէ ոչ . . . :

Հիլտայի դէմքին վրայ առաջին անգամ ըլլալով դառնութեան նշոյլ մը նկատեց Գեղամ, բայց աւելի անոր հօրը մասին մտածեց : Յաճախ կը խօսէր ան հօրը մասին, ու թէ եւ անկէ փախուստ տուած էր, Գեղամ գիտէր, թէ տարօրինակ կերպով կ'ապուած էր անոր եւ իրեն համար աշխարհի ամենէն կատարեալ մարդն էր :

— Ի՛նչ պիտի խմես, — հարցուց աղջիկը :

— Այս ժամուն եւ այս օգին, զարեջուր՝ անշուշտ :

— Թէ ոչ հոս հանդիստ եմ, անկախ, եւ նիւթապէս ապահով : Լաւ կը շահիմ, եւ այս երեք տարուան ընթացքին բաւական դրամ խնայած եմ արդէն :

— Իսկապէս նախանձելի ես, — մենախօսեց երիտասարդը : — Աշխարհի վրայ սակաւաթիւ մարդիկ միայն կրնան այսպէս ինքնաբաւ եւ ինքնագոհ ըլլալ : Ժուժկալ, քիչով գոհացող եւ իրապաշտ . . . իրենք իրենց հետ հաշտ : Գործնական, պարզ :

— Ամէն ինչ ունիմ : Ինչո՞ւ դժգոհ պիտի ըլլամ : Սիրոյ մէջ նոյնիսկ բախտաւոր եմ :

Յետոյ ճաշեցին, եւ ամբողջ ճաշի տեւողութեան պատահական խօսքեր միայն փոխանակեցին : Արտակարգօրէն խաղաղ ու հաճելի ժամ մըն էր երկուքին ալ համար : Խօսելու պէտք չունէին իրականութեան մէջ, որովհետեւ լռութեան մէջ կը հաղորդակցէին՝ իրարմով յորդուէն, հասկացողութեան գերազոյն աստիճանին հասած : Գոհ էին, բաւարարուած, եւ ուրախ : Հիլտայի պարզ ու անմեղունակ ինքնավստահութիւնը վարակիչ էր ըստ երեւոյթին, որովհետեւ Գե-

զամ ինք եւս աւելի հանդարտ կը զգար եւ մոռցած էր արդէն, թոթափած էր վրայէն երկու ժամ առաջուան անտրամազբուծիւնը: Մոռցած էր իրենց տան անշնչելի մթնոլորտը, մօրը յաւիտենական գանգաւանները, դժգոհութիւնը, ու նոյնիսկ՝ Ալիսը, որու հեռաձայնելուն սպասած էր մինչեւ կէսօր:

**

Յառաջիկայ ամիսներուն ընթացքին Տարօնեան ժամանակին մեծ մասը, աշխատանքի ժամերէն դուրս, անցուց շիշտա Մադիկեանի, իր կողմէ հայ միտրուած գերմանուհի սիրականին հետ, անոր տան մէջ:

ԺԴ.

Մուշեղ Սարգիսեան հօրը վաճառատան մնայուն եւ անխուսափելի դէմքերէն մէկը զարձած էր: Ամէն օր կանոնաւորաբար, բայց իր նախընտրած ժամերուն, կը ներկայանար գրասենեակ, կ'աշխատէր միւս բոլոր պաշտօնեաներուն նման, եւ կը մերժէր վարձատրութիւն ստանալ: Հայրը հաստատութեան մէջ մասնաւոր պատասխանատուութիւն մը, պաշտօն մը ստեղծած էր զաւելին համար, եւ վստահած իրեն այդ բաժանմունքը: Եւ յուսախար չէր եղած: Ընդհակառակն՝ ան զարմացուցած էր զինք նոյնիսկ — իր զազափարներով, նախաձեռնութեամբ եւ առեւտրական խիզախութեամբ:

Օրուան մեծ մասը, սակայն, կ'անցընէր ժաղին եւ Շուշանիկին հետ զրուցելով: Անսպառ հետաքրքրութիւն ունէր, ու նկատելով որ իրեն վստահուած գործը օրական երկու ժամէն աւելի չէր պահանջեր իրմէ, մնացած ժամանակը ամբողջ կը տրամադրէր ընթերցանութեան կամ — երբ ժաղ ազատ ըլլար — կարծիքներու փոխանակութեան: Մուշեղ այսպէս կ'որակէր այլազան նիւթերու շուքի խօսելու իր անյապ փափաքը, թէեւ Շուշանիկ շատախօսութեան կը վերադրէր ատիկա: Այսուհանդերձ ան հետաքրքրութեամբ կը հետեւէր իրենց զրոյցներուն, բայց հպուստիքաբար միայն կարծիք կը յայտնէր:

Ամիսներու ընթացքին ժաղ Առաքելեան վարժուած էր իր աւորեայ պարտականութեանց լրացուցիչ մէկ մասը նկատել այս զրոյցները, եւ երբեմն ինք յարուցած էր վէճերը: Արդարեւ վէճի կը վե-

րածուէին երբեմն իրենց խօսակցութիւնները: Մուշեղ արտակարգօրէն ուշիմ եւ խոնարհ ըլլալով հանդերձ, կրնար յամառ ըլլալ նաեւ՝ հեռուողականօրէն պնդելով տեսակէտի մը վրայ: Նոյնիսկ եթէ Շուշանիկը ըլլար վերապահութիւն արտայայտողը, յամառօրէն կառչած կը մնար իր համոզումին, թէեւ ճիշդ չէր խնայեր զայն չվշտացնելու համար: Երէցը հետաքրքրութեամբ կը հետեւէր անոնց յարաբերութեան հորովոյթին — երկիմաստ ակնարկութիւններուն, յաճախակի տարակարծութեանց, վերիվայրումներուն, եւ ընդհանրապէս՝ քօղարկուած սիրարանութեան: Հաճելի էր ականատես ըլլալ նոր սիրոյ մը փթթումին, որ կը յիշեցնէր իրեն անցեալի խնթութիւնները, երիտասարդական անսանձ խանդավառութիւնը, սէրերը, վայելքը:

Հիմա եւս, Հոկտեմբերի այս օրով, թերեւս ակամայ ունկ կը դնէր անոնց կողմնակի փափուքին ու կը զուարճանար: Գազտնի խօսակցութիւն մը չէր, վստահ էր, որովհետեւ յաճախ այսպէս կը փսփոսային, երբ ինք զրազած ըլլար եւ չուզէին զինք խանդարել: Մուշեղ գազանիք չուէր. ոչ թէ որովհետեւ անզոյժ էր, այլ պարզօրէն՝ անտարբեր: Գազտնապահութեան անհրաժեշտութիւնը չէր բարձրներ, եւ յամենայն դէպս ծածկելիք չուէր: Իրեն խօսած էր նոյնիսկ Շուշանիկին մասին եւ կարծիքը առած այլազան ստիճաններով: Ու խոստովանած էր, թէ կը սիրէր զինք եւ չէր գիտեր, թէ ինչ պէտք է ընէր: Ամուսնանա՞ր, թէ կղերական ըլլար: Այսքան պարզ:

— Ինչո՞ւ իրեն չես հարցներ, — ըսած էր ինք:

— Ձի հասկնար: Ձեմ խորհիւր որ բարձրէ, թէ ինչի մասին կը խօսիմ: Իր կարծիքը ինչպէ՞ս կրնամ առնել, երբ ներքին կոչումի մը զազափարը ծիծաղելի կը թուի իրեն: Պատրանք է, ըստ իրեն:

Եւ այսպէս՝ անընդհատ: Անոր հեռուողական հարցապնդումները կը յովնեցնէին զինք երբեմն, մանաւանդ երբ նոյն հարցին շուք շարունակէր շարաթներով խօսել եւ անդրադառնալ անոր: Մուշեղի միակ թերութիւնը թերեւս այս էր. համբերութիւն սպառող կրկնութիւնները: Բայց ժաղ կը հանդուրժէր այս զարտուղութեան, նկատելով որ անոր ներկայութիւնը անխուսափելի, բնական անհրաժեշտութիւն մը զարձած էր գրասենեակին մէջ: Եւ բացառաբար երբ բացակայէր, քանի մը շարաթը անգամ մը, թէ ինք եւ թէ Շուշանիկ կը մտահոգուէին եւ ամբողջ օրը կը մնային անտրամադիր, անմիթար վիճակի մէջ:

Այսօր տարբեր էր թէեւ, որովհետեւ Մուշեղի ներկայութիւնը զգալի էր: Կէսօրուան ճաշի ժամն էր արդէն եւ Շուշանիկ մեկնելու

կը պատրաստուէր, իսկ կրտսերն Սարգիսեան կը շարունակէր խօսիլ ու չէր անդրադառնար, թէ արդեւք կ'ըլլար աղջկան: Ժառ՝ Հայաստանի մէջ կազմած վարժութեամբ մը կէսօրներուն չէր ճաշեր եւ առանց ընդմիջումի կը շարունակէր աշխատիլ, կամ դուրս կ'ելլէր երբեմն մօտակայ սրճարաններէն մէկուն մէջ հանգչելու համար:

— Տուն պիտի երթա՞ս, — Մուշեղ հարցուց, երբ քարտուղարուհին դրասեղանը կարգի դրած, կ'ուղղուէր դէպի դուռը:

— Չեմ գիտեր, — հարկադրուած, անորոշ պատասխան մը տուաւ Շուշանիկ Բարսեղեան:

— Սպասէ՛, — Ժառ միջամտեց. — հոս մօտերը տեղ մը կը ճաշենք: Եթէ ազատ էք անշուշտ:

— Հոյակապ, — խանդավառուեցաւ Մուշեղ: — Ես ճաշարան մը գիտեմ: յաճախ հոն կը ճաշեմ վերջին շրջանին:

— Բայց դուն կէսօրին չես ճաշեր, — բողոքեց աղջիկը, խօսքը ուղղելով երէցին:

— Օղբ հաճելի է, եւ փոփոխութիւնն ալ՝ օգտակար:

Կոկիկ ու հանդարտ ճաշարան մըն էր: Բաւական ընդարձակ, երկրորդ յարկի վրայ, ուրկէ կարելի էր տեսնել կեդրոնական շուկայի խճողուած փողոցները: Պատշգամին կից տեղաւորուած սեղաններէն մէկը զբաւեցին, մինչ սպասեակը ներկայացուց ճաշացուցակը եւ համբերութեամբ սպասեց:

— Իրենց լաւագոյն ճաշը կ'ուզէ՞ք փորձել, — խօսեցաւ Սարգիսեան. — ոչխարի միտով եւ մածուենով պատրաստուած շատ համով բան մըն է: Ես գրեթէ միշտ ատկէ կ'ուտեմ:

— Երեք պնակ սպասարէ, քանի այդպէս է, — ըսաւ երէցը եւ դարձաւ քարտուղարուհիին. — համաձայն էս: Եղաւ: Խմի՞չք: Խմիչքի պէտք չկայ:

Մուշեղ նոյն միջոցին ուղղուեցաւ դէպի կողմնակի դռներէն մէկը, ուր պատին տակ միայնակ սեղան մը գրաւած էր քառասուն կամ քառասունհինգ տարեկան մարդ մը: Միջահասակ, նիհար ու ճմռթկուած դէմքով անձանօթը նայեցաւ իրենց քիչ յետոյ, ցաւազարի մը պէս խնդաց ու բարձրանալով տեղէն հետեւեցաւ երիտասարդ առաջնորդին, որ զինք բերաւ եւ ծանօթացուց իրենց:

— Աշոտ Ուրֆալեան: Դեղադործ: Ծի՞չդ եմ:

— Դեղերու ցրուիչ:

— Հոս ծանօթացած եմ, — շարունակեց Մուշեղ: — Լաւ բարեկամներէս մէկն է:

— Ամէն տեղ ալ բարեկամներ ունիս, — կատակեց Ժառ ու

յետոյ խօսքը ուղղեց դեղերու ցրուիչին: — Ուրֆացի՞ ես:

— Անարժանաբար:

— Ինչո՞ւ անարժանաբար, — Առաքելեան չկրցաւ զսպել ինքզինք:

— Որովհետեւ պատիւ մըն է ուրֆացի ըլլալը:

— Ձէի գիտեր:

Հեղինակը չվերպեցաւ խօսակիցին ուշադրութենէն: Մարդը կամ հիւանդ է եւ կամ ալ ինքնահաւան սպուշ մը, մտածեց Ժառ Առաքելեան, եւ յանցաւոր զգաց: Փոխանակ հեղինելու, կիներ զինք հասկնալու, ճանչնալու փորձ մը ընել: Կը նախազգար, թէ եւ, որ իրենց անմեղ այս ժամանցը, կէսօրուան դադարը միասին անցընելու հաճոյքը, պիտի փճանար: Փճացած էր արդէն: Գէթ ինք հանգիստ պիտի չզգար եւ ազատօրէն պիտի չկարենար խօսիլ եւ կատակել: Ուրֆալեան, մինչ այդ, անրնական քմծիծաղ մը դէմքին, զինք կը քննէր:

— Մուշեղ բաւական պատմած է քու մասիդ, — խօսեցաւ քիչ ետք: — Ուրեմն այդ նշանաւոր մարդը դուն ես:

— Նշանաւոր:

— Անշո՛ւշտ: Ինչե՛ր լսած եմ քու մասիդ:

— Մուշեղէ՞ն:

— Ձէ՛, ուրիշներէ նաեւ:

— Հետաքրքրական է, — Ժառ մրթմրթաց, փորձելով թափանցել անոր ականարկութիւններուն իմաստին: — Բայց զիս չես ճանչնար իսկ:

— Պայման է: Փաստ որ քեզի ծանօթանալէ առաջ, կեանքիդ ամբողջ պատմութիւնը գիտեմ արդէն:

— Ի՞նչ պէտք է հասկնամ այս քու ըսածէդ:

— Ձափանիչ կտրած մարդ ես: Առաջին անձն ես, եւ միակը, որ հինգ տարուան մէջ կրցած է Հայաստան ներգաղթել եւ արտագաղթել: Բըբոբ է:

— Օ՛, եթէ այդ է, ոչի՛նչ: — Առաքելեան, թէ եւ անակնկալօրէն վրդոված, յարգալիբ ձայնով մը խօսեցաւ: — Ես ալ կարծեցի դադանիքներու տիրացած ես:

— Ուրիշներու դադանիքներովը չեմ հետաքրքրուած, — Աշոտ Ուրֆալեանի դէմքը այլանդակուեցաւ յանկարծ: — Անձնական կեանքդ զիս չի հետաքրքրեր:

— Իմ մասիս կը խօսէիր, եթէ չեմ սխալիր:

— Ոչ թէ անձնական կեանքիդ:

— Ի՞նչ է տարբերութիւնը :

— Շատ լաւ գիտես, — Ուրֆալեան խնդաց դարձեալ խելագարի պէս :

Անախորժ լռութիւն մը տիրեց, եւ նոյնիսկ Շուշանիկ, որ իզական բնազդով այս կարգի անեւ կացութիւն մը հեշտութեամբ կը դարձանէր, խօսելու կամ նիւթը փոխելու ճիգ չըրաւ : Մուշեղ նոյնպէս պապանձած էր ու յանցաւոր տղու մը պէս, չուարած, նայուածքը կը պտըտցնէր դէմքէ դէմ, յուսալով որ վերջ կը դռնէր այս տաղտկալի վիճակը : Գեղազործին չափազանց հետաքրքիր եւ շատախօս ըլլալը գիտէր, ու սովորաբար ինք առիթ կը ստեղծէր որ ան խօսէր եւ իր արտառոց վճիռները արձակէր : Սակայն այսօրուան արտառոցութիւնը ինք եւս չէր կրցած նախատեսել : Կատարուած իրողութիւն մըն էր սակայն, եւ իր պարտականութիւնն էր ուրեմն փրկել կացութիւնը :

— Պր. Ուրֆալեան, — ըսաւ, — միշտ կ'ուզէիք ծանօթանալ իրեն եւ... :

— Այո՛, — ընդմիջեց Ուրֆալեան, — որովհետեւ կ'ուզէի գիտնալ, թէ ինչո՞ւ դուրս եկած է հայրենիքէն :

— Այլ խօսքով, — Ժազ անզգալարար խօսեցաւ բայց յարմարազոյն նկատեց չչարունակել :

— Այլ խօսքով ի՞նչ :

— Հայրենիքի դաւաճան մը կ'ուզէիր տեսնել, ճանչնալ :

— Ես այդ տեսակ բան չըսի : Գուն ես ըսողը :

— Անչո՞ւշտ : Ըսելու պէտք չունիս : Ի՞նչը քեզի ենթադրել կուտայ որ այս հայրենիքի դաւաճաններէն աւելի լաւ հայ ես :

— Գոնէ ես հայրենիքէն չեմ հեռացած :

— Բայց նաեւ Հայաստան հաստատուելու քաջութիւն չունիս, — հանդարտօրէն խօսեցաւ Առաքելեան, — հակառակ անոր որ այսքան հայրենասէր ես : Ինչո՞ւ չես երթար եւ հոն ապրիր :

— Երբ ժամանակը դայ :

— Ե՞րբ է ժամանակը, ըստ քեզի :

— Ես երբ ներգաղթեմ, մնայուն կերպով կը մնամ հոն : Գուրս ելլելու մասին չեմ մտածեր :

— Կան մարդիկ, որ քեզմէ տարբեր են կ'երեւի : Ինչո՞ւ կ'ուզես որ ամէն մարդ քեզի նմանի :

— Ազգային գիտակցութիւն կոչուած բան մը կայ, — Աշոտ Ուրֆալեանի աչքերը հիւանդագին դոհունակութեամբ մը կը ժլպտէին : — Չեմ ակնկալեր որ ամէն մարդ ինծի նմանի, բայց այս

պարագային տարբեր է : Կ'ակնկալես որ ամէն հայ այդ գիտակցութիւնը ունենայ :

— Շատ դիւրին է վճիռ տալը, մանաւանդ երբ դուն քեզ դուրս կը պահես. ամբողջ կացութենէն : Ուրիշները դատելու ի՞նչ իրաւունք ունիս, երբ անոնց փորձառութիւնը չունիս, երբ անոնց կեանքը չես սպրած, եւ չես ուզեր ալ ապրիլ :

— Պայման չէ որ իրենց կեանքը ապրիմ կամ փորձառութիւնը ունենամ, որպէսզի կարենամ դատել : Այս հարցը անձնական բնոյթ չունի, այլ հաւաքական, ազգային : Կամ ազգային գիտակցութիւն ունիս, կամ չունիս : Եթէ չունիս, ցաւալի է. դատապարտելի :

— Ի՞նչ է այս գիտակցութիւնը, — Ժազ խօսեցաւ նոյն համբերութեամբ, — ըստ քեզի :

— Ազգը եւ հայրենիքը գերադաս նկատել : Այսինքն անձէդ առաջ ազգիդ մասին մտածել, եւ ամէն ինչ զոհել, եթէ պէտք ըլլայ. հանգիստ, նիւթական, դործ :

— Համաձայն եմ : Բայց ինչո՞ւ եթէ պէտք ըլլայ միայն : Քու պարագայիդ պէտք չես նկատեր կ'երեւի : Ինչո՞ւ դուն ամէն ինչ չես զոհեր եւ Հայաստան չես փոխադրուիր : Երկիրը մեր բոլորին պէտք ունի. դուն ալ կրնաս օգտակար ըլլալ, եւ գոնէ մէկ ընտանիք աւելցընել հոն :

— Օր մը, եթէ բախտ ունենամ, պիտի երթամ անշուշտ :

— Քեզմէ կախեալ է. եթէ իսկապէս անկեղծ ես, կը դիմես եւ այսօր իսկ կը ներգաղթես : Բայց կը նախընտրես բախտի կապել ազգային գիտակցութիւնը կամ հայրենասիրութիւնը : Այդպէս աւելի յարմար է, աւելի ձեռառու. եւ դիւրութեամբ պատասխանատուութիւնը վրայէդ նետել : Ո՛վ կրնայ քեզ մեղադրել, այնքան ատեն որ բախտ չես ունեցած : Այս երկիրներուն մէջ հանգիստ եւ սպասով, կը սպասենք որ Հայաստանի Հայութիւնը միայն զոհողութիւն ընէ եւ մեզ հրաւիրէ հոն, որ փառաւորուինք : Եւ յետոյ զիրենք կը մեղադրենք, քանի չեն կրնար : Իրենցմէ հաշիւ կը պահանջենք, կը դատապարտենք, որովհետեւ մեզի վայել դրախտ մը չեն տրամադրեր : Գուն, ըստ երեւոյթին, կը սպասես որ այդ դրախտը ստեղծեն նախ : Մինչդեռ ներգաղթողները հրաւիրի չսպասեցին ու դացին, որովհետեւ իսկապէս հայրենասէր էին :

— Ինչո՞ւ կ'արտապաղթեն ուրեմն, — Ուրֆալեան հարցուց հեզնանքով : — Հայրենասէր մարդը երկիրը չի լքեր, չի հեռանար :

— Գոնէ դո՛ւն իրաւունք չունիս իրենցմէ հաշիւ պահանջելու : Իրենք իրենց հայրենասիրութեան փաստը տուած են ներգաղթելով :

Իսկ դուն ի՛նչ ըրած ես: Հոս նստած կը քննադատես միայն: Եթէ հայրենասէր ես, եւ քանի հայրենասիրութեան փաստն ալ ըստ քեզի՛ ներկայ Հայաստանի մէջ ապրիլն է, պէտք է ներգաղթես եւ շփերադառնաս:

— Ուրեմն կ'ընդունիս որ դուն չես: Քանի վերադարձած ես արդէն:

— Բնաւ պիտի չուզեմ քեզի՛ պէս հայրենասէր ըլլալ, — Առաքելեան չինայեց ալլեւս: — Կը նախընտրեմ թուրք ըլլալ, քան թէ քեզի պէս հայ:

— Ինչո՞ւ կը ջղայնանաս, — դեղերու ցրուիչը դժուարեաններէ մտնեցաւ, — եւ ցեխարծակումի կը սկսիս: Տկարութեան նշան է: Մարդ վիրաւորելով ի՛նչ կը փաստես, ի՛նչ կը շահիս:

— Քեզի որեւէ բան փաստելու հարց չունիմ: Քու եւ քեզի պէս մարդոց մասին կարծիքս յայտնեցի պարզօրէն: Պարտականութիւն մը կը կնատեմ ատիկա:

— Ձեմ արտօներ որ այս թոնով խօսիս հետս: — Ուրֆալեան տփգունած նայեցաւ Մուշեղին:

— Ներողութիւն: Եթէ չես հաւնիր, կընաս ազատ զգալ, — Ժաղկողմնակի թեքեցաւ, որպէսզի սպասեակը կարենար պնակները տեղաւորել սեղանին վրայ:

— Յանցաւորը ես եմ արդէն:

Ուրֆալեան կոպտութեամբ քաշեց աթոռը տակէն եւ առանց բռն մը եւս արտասանելու հեռացաւ:

— Ինչո՞ւ այսքան ջղայնացար, — Շուշանիկ զգուշութեամբ հարցուց քիչ ետք:

— Այս կարգի սրիկաներու հետ ուրիշ կերպով կարելի չէ վարուիլ: Իրենց լեզուն կը հասկնան միայն. վիրաւորանքի լեզուն: — Յետոյ դառնալով Մուշեղին մեղմացած խօսեցաւ: — Ապրանքին ինչ ըլլալը չէի՞ր դիտեր:

— Ծնորհքով մարդ կ'երեւէր. լուրջ, խելացի եւ ազգային հարցերով հետաքրքրուող: Ի՞նչ դիտեամ:

— Ա՛խ, այս ազգային հարցերը:

Ամբողջ յետմիջօրէն Ժաղ անցուց երգելով: Որ զարմանալի չէր: Երբ անտրամադիր ըլլար կամ ջղային, անզգալարար երգ մը կը մթթմթար եւ չէր խօսեր: Հարցումներու նոյնիսկ չէր պատասխա-

ներ: Ամէն ինչ քանդուած էր, վերջացած: Ի՞նչ կ'ընէր հոս, այս սենեակին կամ հաստատութեան մէջ: Ամէն օր նոյն յանկերզը, կրկնութիւնը, նոյն դէմքերը — ծանօթներ, անծանօթներ, յաճատորդներ — շատախօսութիւնը, կատակները, ու ժպտելու եւ քաղաքավար ըլլալու հարկադրանքը: Տաժանակիր աշխատանք: Յանկարծ այս հարցումը: Ի՞նչ կ'ընէր հոս: Ոչ թէ միայն զբասնեակին մէջ, այլ այս երկրին մէջ: Տարի մը անցած էր ահաւաստիկ որ վերադարձած էր, եւ ինք տեղեակ չէր կարծես: Մինչդեռ հոս մնալու կամ հաստատուելու նպատակ չունէր երբեք: Ազգային հարցեր, ազգային կեանք, ազգային դիտակցութիւն, Հայութիւն, ներգաղթ, արտագաղթ, հայրենիքի դաւաճաններ, ջոջեր, դեկավարներ, զեխութիւն, զեղծարարութիւն... զգուած էր այլեւս: Հայրենիքի դաւաճան: Ո՛ր հայրենիքը եւ ի՛նչ դաւաճանութիւն: Նախ ինք հա՞յ էր: Եւ փթէ նոյնիսկ էր՝ չէր ուզեր ըլլալ: Հասարակաց ի՛նչ կապ ունէր ասոնց հետ: Ծառ զգայուն դարձած էր, կամ դիւրագրգիւր: Ինք պարզօրէն վերադարձած էր, ճիշդ այնպէս ինչպէս դացած էր: Հաւատարմութեան կամ հայրենասիրութեան հարց չունէր — ի՛նչ դաւաճանութեան մասին էր խօսքը: Գացած էր, որովհետեւ երկրին անունը Հայաստան էր: Ձգուած էր այլեւս: Եթէ երբեք ներգաղթած չըլլար, դաւաճան պիտի չնկատուէ՞ր: Աշխարհի բոլոր երկիրներուն մէջ թափառող հայերը, որոնք իրենց հայրերուն երկիրը չէին յիշեր իսկ, դաւաճաններ չէի՞ն: Ինք դաւաճան կը նկատուէր, որովհետեւ ուզած էր հօրը երկրին մէջ ապրիլ: Բայց սխալած էր՝ ներկայ Հայաստանը չփոթելով հօրը երկրին հետ, եւ չէր ուզած մնալ հոն: Ինչպէս չէր ուզեր մնալ հո՛ս: Սակայն այս մարդիկը, որ ամենագէտ էին, հայրենասէր, Հայաստանի եւ հայկական իրաւունքներու պաշտպան, իրենք եւս, իրենց ձեռով Սովետական Հայաստանը կը չփոթէին իրենց նախահայրերու բուն երկրին հետ: Եւ կը պնդէին, թէ այդ է միակ Հայաստանը: Իրենք դէ՞ չէր հայոց պատմութիւնը իրմէ աւելի լաւ սերտած պէտք է ըլլային, որովհետեւ ինք վաղ տարիքէն որք մնալով, հայկական կրթութիւն չէր ստացած: Հայկական նախակրթարան մը չէր աւարտած նոյնիսկ, եւ ապրած էր ու կազմաւորուած առաւելարար օտար միջավայրի մը մէջ:

Այո՛, Լիբանան եւս չէր ուզեր մնալ: Թէեւ չէր գիտեր թէ ուր պէտք է երթար: Այս եւ միւս բոլոր երկիրներուն մէջ տեղ չունէր. ոչ թէ որպէս հայ, այլ որպէս մարդ նոյնիսկ, որովհետեւ խորթ կը զգար, անհարազատ: Ամէն տեղ, ամէն երկրի մէջ օտար մըն էր, եւ օտար կը նկատուէր: Կամ ինք այդպէս կը զգար: Բարդո՞յթ: Հա-

ւանարար: Իրականութիւն էր սակայն: Երբեմն նստած տեղը, նա կնկալօրէն եւ առանց պատճառի, ցնորք կը թուէր իրեն ամէն ինչ, ու չէր կրնար ըմբռնել, թէ ինչ կ'ընէր հոն: Ինքնիրեն անծանօթ, տեղւոյն եւ ժամանակին մէջ անշօշափելի, անիմանալի կրկներեւոյթ մը, որ խոյս կու տար իրմէ: Ինչպէս երէկ դիշեր, երբ պատշգամին վրայ նստած կը խոկար: Կամ կ'երազէր — վստահ չէր: Արդարեւ չէր մտածեր, չէր զգար ու չէր անդրադառնար իսկ, թէ ինք հոն էր, կար: Հոն էր պարզօրէն — ժամանակէն եւ միջոցէն դուրս — որովհետեւ Ֆրիդրիքայէս կենդանի էր ու նստած պատշգամին վրայ: Անդիտակից այդ վիճակին մէջ էր, երբ անդրադարձաւ յանկարծ, թէ իր հոն ըլլալու իրականութիւնը անըմբռնելի էր, անիմաստ: Ու տեղւոյն վրայ նոյն հարցումը արձագանդեց ուղեղին մէջ:

— Ի՞նչ կ'ընես հոս:

Թէեւ Սեդան եւ երեխաները ներսն էին, եւ ամէն ինչ իրական էր: Տունը, շէնքը, փողոցը, քաղաքը եւ ինք, որ նստած էր դուրսը՝ պայծառ եւ աստղազարդ երկինքի մը տակ: Երկինքը եւս իրական էր, հող չէ թէ շօշափելի իրականութիւն մը չըլլար: Երկինք դոյրութիւն չունի, արդարեւ, այլ անհունին կապոյտը: Կամ սեւը՝ դիշերուան այդ պահուն: Սակայն երկինք կոչուածն ալ իրական էր, ինչպէս Սեդան եւ երեխաները, որ ներսն էին: Ինչպէս նաեւ ինք: Բայց այս բոլորը իրական ըլլալով հանդերձ, կը մնային անիմանալի, ու խոյս կու տային իրմէ: Ի՞նչ կ'ընէր հոս: Որեւէ տեղ՝ տուեալ պայմանի մը կամ պայմաններու մէջ: Եւ որո՞ւ հետ ի՞նչ կապ ունէր: Հայրութեան: Մարդկութեան հետ: Մարդո՞ց, կրնէրո՞ւ, երեխաներո՞ւ, աղաւաններո՞ւ, բարեկամներո՞ւ, թէ հայոց հետ: Ինքզինք կը ճանչնար այսօր, որովհետեւ կին եւ երեխաներ ունէր. ինչպէս նաեւ Սեդայի մայրն ու քոյրը, որոնք իր ընտանիքը կը կազմէին ներկայիս: Դաւիթ Օհանեանի մահէն ետք միշտ միասին էին — իր կամ աներոջը տան մէջ:

Ալիս, որու ամուսինը զաւակներով չէր հետաքրքրուած իսկ իրենց բաժանումէն ետք, ուսուցչական պաշտօն մը ապահոված էր նախակրթարանի մը մէջ եւ արդէն կ'աշխատէր քանի շաբաթէ ի վեր: Ծիծաղելի կամ ողբալի ամսաթոշակով մը: Մեծահարուստ Արշակ Պալեանի երիտասարդ եւ դեղանի տիկինը ուսուցչուհի եղած էր՝ զաւակներուն ապրուստը հոգալու համար: Վեց կամ եօթը տարի առաջուան գուարթ եւ անհող պարմանուհին՝ պատասխանատուութիւններով եւ նիւթական ապահովութեան տաղտուկներով ծանրաբեռնուած կին մը դարձած էր: Բարոյալքուած, յոռեաես եւ սակա-

ւախօս: Կեանքը այսքա՞ն դաժան էր, խորհեցաւ Ժազ, թէ ինք խելագարելու սկսած էր պարզօրէն: Այս քանի մը տարիներուն ընթացքին այնքա՞ն բան փոխուած էր, եւ ինք բազմաճառ ընտանիք մը ունէր հիմա: Բայց դո՞ւ էր, եւ այդ իսկ պատճառով թերեւս՝ լիովին բաւարարուած: Զարմանալի՞ էր: Յամենայն դէպս անհաւատալի կը թուէր երբեմն, անհեթեթ: Ինք, որ արմատներ չունէր այս աշխարհի վրայ, ինքնութիւն ունեցած էր յանկարծ, այսինքն՝ ընտանիք, պատասխանատուութիւն: Ուրիշ ամուսնացած մարդ չէր. պատահական ամուսին մը կամ հայր մը չէր:

Այս ամբողջը շատ դեղեցիկ էր, շատ ճիշդ, բնական. այնքան մը, որ բախտաւոր կը համարէր ինքզինք, որովհետեւ կեանքը իմաստ դեցած էր, լեցուցած էր իր առօրեան: Գէթ առժամապէս: Սակայն չհասկցուելու եւ մարդոց բացատրութիւն տալու հարկադրանքն էր որ կը խախտէր այս դեղեցիկ անդորրը, հաւասարակշռութիւնը: Որո՞նք էին այս մարդիկը եւ ի՞նչ կ'ուզէին իրմէ: Հայ մարդը հայրենասիրութիւն կոչուածը բերնի ծամոն դարձուցած էր ու դիշեր ցերեկ կը խօսէր միայն այդ մասին: Սօսիլը բաւարար էր ըստ երեւոյթին՝ ինքզինք արդարացնելու, միտթարելու կամ նոյնիսկ խարելու համար: Որովհետեւ տարօրինակ, հիմ չունեցող խախուտ պոռոտախօսութիւն էր ասիկա, այս կարգի հայրենասիրութիւն մը, զոր մէկ կերպով կարելի էր մեկնել: Հայր կը փորձէր անբաղձալի իրականութիւն մը ծածկել ինքիրմէ: Պարտուած ըլլալու դիտակցութիւնը, որ հաճելի չէր երբեք:

Հայր պարտուած էր, ծունկի եկած, բայց չէր կրնար ընդունիլ ասիկա: Պիտի շուգէր անշուշտ: Ամէն ինչ խլած էին իրմէ — հող, երկիր, հայրենիք, պետականութիւն, ազատութիւն, իրաւունք, ապահովութիւն, պատկանելիութեան զգացում — եւ ստրկացուցած զինք: Օսմանեան լուծի տակ որպէս ստրուկ ապրելը, բազդատած ներկայ վիճակին հետ, շատ աւելի դիւրին էր, տանելի: Այն ատեն իր սեպհական հողին վրայ էր տակաւին, եւ ստրկութիւնը Ֆրիդրիքական բնոյթ ունէր: Այսօր, թէեւ ազատ կը նկատէր ինքզինք, իսկապէս ստրկացած էր սակայն՝ միտքով, մտածումով, համոզումներով, հոգեբանութեամբ: Որովհետեւ ընկճած էին միտքը, եւ պարտադրած իրեն հոգեբանութիւն մը, որ հզորագոյն զէնքն էր իրենց ձեռքին մէջ՝ զինք վերջնականապէս զղետնելու համար: Ֆրիդրիքայէս տակաւին կանգուն, նոյնիսկ վերապրած, բայց փճացած էր իրականութեան մէջ, որովհետեւ յաջողած էին զինք համոզել, թէ ասկէ աւելին արժանի չէր: Թէ՛ ա՛յս ճիշդ էր եւ արդար իրեն համար, եւ ուրեմն՝

պէտք է երախտապարտ ըլլար: Եւ երախտապարտ էր, բաւարարուած, շնորհակալ: Եւ այս ամբողջը ընդունած էր, անդիտակցաբար թե-
րեւս, եւ ճիշդ ատոր համար չէր կրնար ընդունիլ, թէ պարտուած էր:

Որովհետեւ այս պարտութիւնը յաղթանակ մը կը նկատէր: Կը վիճէր, կը յոխորտար, եւ ինք կը պնդէր այլեւս, թէ նուաճում-
ներ արձանագրած էր ու շրջած պատմութեան անիւր: Աշխարհը
նուաճած էր եւ իր մշակոյթն ու մարդկային առաքինութիւնները տա-
րածած ամէնուրեք: Այսինքն՝ խոնարհ էր, հանդուրժող, ծառայա-
սէր, մարդասէր, եւ անպայմանօրէն՝ խաղաղասէր: Համբերող, նե-
րողամիտ: Մարդկութեան լաւագոյն օրինակը տուած էր — իր լայ-
նախոհութեամբ եւ ալլասիրութեամբ: Մտաւայած էր ու նուիրուած
իր սպրած բոլոր երկիրներուն մէջ, հող չէ թէ զինք անբաղձալի
օտարական մը նկատէին, անարդէին եւ ստորադասէին: Ի վերջոյ
շնորհակալ պէտք է ըլլար. չէր կրնար մոռնալ ատիկա: Պատրաստ
էր ամէն զոհողութիւն ընելու, ամէն կարգի պիտակ ժպտադէմ եւ
յօժարակամ կերպով ընկալելու — առեւտրական, խորամանկ, ա-
ղուէս, խելացի, աշխատասէր, ընդունակ, հաւատարիմ եւ օրինա-
կելի քաղաքացի — եւ նոյնիսկ հպարտանալու: Սկսած էր այս բոլոր
բացասականօրէն տարազելի յատկութիւնները իւրացնել անօրինակ
չքմեղանքով մը եւ ինքն իր դովքը հիւսել: Հաւատալով, թէ իսկա-
պէս բացառիկ, եզակի, աննման, տիպար մարդն էր, որ միւս բոլոր
մարդոց նախանձը կը շարժէր:

Ինչպէ՞ս կարելի էր չհպարտանալ, երբ անհերքելի իրականու-
թիւն էր այս ամբողջը: Աշխարհի վրայ ամէն տեղ մարդիկ իրենք,
բոլոր ժողովուրդները, կը հաստատէին այս իրականութիւնը: Իրենք
կ'ըսէին ու կը շնորհաւորէին զինք — բարի նախանձով մը անշուշտ:
Տիպար, օրինակելի քաղաքացին էր հայը. լուս, շարքաչ, ազնիւ,
հնազանդ եւ անվնաս արարած մը: Ինչպէ՞ս կարելի էր չհպարտա-
նալ: Եւ բնականաբար, արժանի ըլլալու համար այս վստահութեան,
արդարացնելու համար զայն, պէտք էր նախանձախնդիր ըլլալ որ-
պէսզի չաղարտէր հայ անունը: Այսինքն՝ բծախնդրօրէն կատարել
իրմէ ակնկալուածը. չզանդատիլ, նուազագոյնով դոհանալ, հար-
ցում չուղղել ոչ ոքի, չհարցաքննել, եւ մանաւանդ՝ շնորհակալ ըլլալ
որ կ'սպրէր տակաւին: Ամենէն կարեւորը այս երախտապարտութեան
դիտակցութիւնն էր. երբեք չմոռնալ, երբե՛ք՝ որ պէտք է երախտա-
պարտ ըլլար եւ մնար՝ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Մնացածը դիւրին էր: Անխուսափելի: Իրեն այս տրուած էր,
նուազագոյնը — փոր մը հաց հոս, Սփիւռքի մէջ, ու շերտ մը հող

հոն, նախահայրերու երկրին մէջ — զոր պահպանելու համար պատ-
րաստ էր ամէն միջոցի դիմելու: Քծնելու, կամակատար դործիք
դառնալու, եւ երկրպագելու բոլորին անխտիր: Ե՛ւ հոս, ե՛ւ հոն:
Ի վերջոյ կարեւորը այս նուազագոյնը պահպանելն էր: Ուրիշ ի՛նչ ու-
նէր աշխարհի վրայ:

Այս էր ազգային դիտակցութիւն կոչուածը:

— Ի՞նչ ունիս:

Սեղա կէս ժամէն աւելի համբերած էր, մինչ ժագ տուն վե-
րադառնալէ ետք լուացուած էր ամէն իրիկուան պէս, ու փոխանակ
երեխաներուն հետ դրաղելու, ինչպէս սովոր էր ընելու ամէն օր,
օղի լեցուցած էր բաժակին մէջ ու փոքր սեղանը պատշգամ փոխա-
րած՝ առանց բառ մը արտասանելու այս ամբողջ միջոցին:

— Զղուեցայ, — Առաքելեան հանդարտօրէն բայց ակամայ
պատասխանեց տիկնոջ:

— Նորութիւն չէ: Բան մը պատահած պէտք է ըլլայ սակայն:

Կինը չհեռացաւ քովէն, ու մնաց կանգնած հոն, պատշգա-
մին վրայ, թէեւ ընթրիքը պէտք է պատրաստէր տակաւին: Այդ օր
բացառաբար ուշացած էր, կէսօրէ ետք անկոչ այցելուներ հիւրասի-
րած ըլլալով: Ժագ չէր նկատած իսկ, եւ ինք թէեւ գոհ անոր անու-
շաղբութենէն, մտահոգուած էր յանկարծ, ու վարանքով կը փորձէր
դուշակել պատահածը կամ թափանցել ամուսնոյն մտածումներուն:

— Զերինները ո՞ւր են այսօր, — հարցուց վերջինը քիչ ետք:
Կ'ուզէր նիւթը փոխել, որոշ էր:

— Տուն: Ուրիշ ո՛ւր կրնան ըլլալ:

— Արմէնը դրկէ՛, թող հոս դան:

— Ի՞նչ ունիս, — Սեղա կրկնեց հարցումը, — չըսիր: Այս
տրամադրութեամբ... խօսելու նոյնիսկ սիրտ չունիս. մերիններէն
ի՛նչ կ'ուզես:

— Շուրջ մարդ կ'ուզեմ տեսնել, կենդանութիւն: Թերեւս քիչ
մը փոխուիմ: Առաքելութիւն մը ունի՞ս:

— Նախ պիտի ըսես, թէ հարցը ի՛նչ է:

— Այս երկրէն պէտք է հեռանալ:

Կինը չզարմացաւ: Թերեւս դիտէր արդէն, կամ կը նախազգար:
Յայտնութիւն չէր յամենայն դէպս, եւ ոչ ալ անակնկալ: Ամուսինը
այնքան լաւ կը ճանչնար, որ եթէ այս յայտարարութիւնը չընէր,

պէտք է մտահոգուելու սկսէր: Եւ ուրեմն պարզօրէն հարցուց:

— Ի՞նչ պատահած է դարձեալ:

— Ոչինչ:

— Ամէն տեղ նոյնն է: Ի՞նչ իմաստ ունի: Հոս ապրեր ենք կամ ուրիշ երկրի մէջ, ի՞նչ է տարբերութիւնը:

— Գիտեմ, — ժառ խօսեցաւ մեքենարար: — Գիտնալս ի՞նչ օգուտ ունի սակայն, — բարձրաձայն խորհրդածեց յետոյ. — սխալ բան մը կայ, չեմ գիտեր: Թերեւս սխալը իմ մէջն է, կամ... ի՞նչ է կարծիքդ:

— Ես ալ նոյնը կը զգամ երբեմն: Ամէն մարդ այս տեսակ պահեր կ'ունենայ: Մարդ ենք: — Սեղա մտածեց, փորձելով հասկնալ հողեկան այս վիճակը, մարդկային անբացատրելի եւ մնայուն դժգոհութիւնը, տրտունջը, ու վերջաւորութեան հարցուց. — Ի՞նչ պատահած է մեզի: Առաջ որքան ուրախ էինք, կը խնդայինք, կը կատակէինք. ամենէն աննշան խօսքը նոյնիսկ, սովորական դէպք մը, արտայայտութիւն մը՝ կը բաւէր որ ուրախանայինք, զուարճանայինք: Ամէն ինչ հաճելի էր, պարզ, բնական: Հարցերը չէինք բարդացներ ու բնական, հաճելի կեանք մը կ'ապրէինք, կը վայելէինք: Քեզ երբ ճանչցայ, ի՞նչ տեսակ աղջիկ էի, կը յիշե՞ս: Հակառակ անոր որ կեանքս դժոխքի վերածուած էր այն ատեն:

— Անխելք աղջիկ մըն էիր, — ժպտեցաւ ամուսինը: — Շատախօս, թուփիկ:

— Դուն աւելի լաւ ապրանք մըն էիր կարծես, — կինը դէմքը ծամածոց մանկունակ անմեղութեամբ մը: — Բայց աւելի լաւ չէ՞ր այն ատեն:

— Եօթը տարի առաջ էր: Իսկ եօթը տարի առաջ, — նկատելով որ կինը նստելու կը պատրաստուէր ժառ չկրցաւ նախադասութիւնը ամբողջացնել: — Մի տեղաւորուիր, — ըսաւ յետոյ, — ինչ որ պիտի պատրաստես, պատրաստէ՛, ու մինչ այդ ձերիններուն լուր զրկէ ըսի:

— Մերիններէն չձանձրացա՞ր:

— Իմ անունս Սեղա չէ:

— Ղուրպան եղեր ես:

Ձանձրացած էր, այո՛, բայց ոչ թէ Սեղայի ծնողքէն, այլ ինքնիրմէ: Ո՛չ, զղուած էր աւելի: Իր անտրամադրութենէն, անորոշութենէն, միօրինակ կեանքէն, անբացատրելի եւ անտեղի այս յոռետեսութենէն, որ դիւրապարզիւ դարձուցած էր զինք: Սեղա իրաւունք ունէր: Ի՞նչ պատահած էր իրենց: Նախապէս իւրաքանչիւր վայրկեանը վայելքի պահ մըն էր իրեն համար, ուրախանալու առիթ

մը. մինչդեռ հիմա, ժպտիլը նոյնիսկ ճիգ կը պահանջէր: Եւ եթէ այսպէս շարունակուէր, աշխարհի ամենէն հակակրեւի մարդը կրնար դառնալ: Հայաստան, ուր ամէն ինչ խորթ թուած էր իրեն, կամ ուր ինք դէթ օտար զգացած էր, շատ աւելի ուրախ էր, հաւասարակշիռ — հաշտ ինքնիրեն, կեանքին եւ շրջապատին հետ: Թէեւ հոն եւս այս նոյն անհանդարտութիւնը գլուխ ցցած էր վերջաւորութեան եւ նուաճած զինք: Պէտք է դուրս գար այս հողեվիճակէն, թէ ոչ կրնար խելագարիլ... եթէ չէր խելագարած արդէն: Բնական մարդ մը այս վիճակին մէջ չ'ըլլար, միշտ դժգոհ չի կրնար մնալ: Ումպ մը տուաւ օղիէն, փորձեց ծամել հեղուկը, բայց ապարդիւն: Պրանսացի բարեկամ մը, առեւտրական մեծ հաստատութեան մը ներկայացուցիչը, ժամանակին ըսած էր իրեն, թէ խմիչքը պէտք է ծամել՝ առաւելագոյն չափով լմբոշինելու համար դայն: Օղիի պարագային այս տեսակէտը գործադրելի չէր ըստ երեւոյթին:

Մօտ օրէն պիտի չկարենար ինքզինք ճանչնալ: Շատ լրջացած էր: Երեւակայեալ, որ ժառ Առաքելեանը շինդար, չկատակէր: Մինչդեռ ամէն պատճառ ունէր գոհ եւ՝ ուրախ ըլլալու: Հանդիստ եւ ապահով պաշտօն մը ունէր, սիրուած էր, յարգուած. եւ ամենէն կարեւորը՝ ընտանիք մը ունէր հիմա: Մեծ ընտանիք մը, որ իմաստ կու տար կեանքին: Բայց անհանդարտ էր, դժգոհ, կորսուած: Պէտք է հեռանար այս երկրէն, որպէսզի խաղաղէր, եւ գտնէր փնտռածը՝ թերեւս: Ո՛ւր պիտի գտնէր սակայն, ո՞ր երկրին մէջ: Հայու խառնուածք, ըսած էր Արամ Սարգիսեան: Որ թերեւս ճիշդ էր: Նկատի ունենալով մանաւանդ անոր ճակատագիրը — աքսոր, կոտորած, տեղահանութիւն, եւ իր հայրենի հողէն հեռու, օտար երկիրքներու տակ օթեւան փնտռելու հարկադրանքը: Մինչեւ ե՛րբ սակայն: Հայաստանի մէջ նոյնիսկ փնտռած խաղաղութիւնը չէր գտած: Հարազատ չէր զգացած: Ինչո՞ւ: Ներկայ Հայաստանն ալ օտար երկիր էր: Իրականութիւնը այն էր, որ իր փնտռածը չէր գտած հոն, խաղաղութիւնը չէր վերագտած, հարազատ չէր զգացած: Եւ վերջ: Ինչ կ'ուզէին թող ըսէին. կարեւոր չէ, թէ ի՞նչպէս կը թարգմանէին պատահածը: Իրականութիւնը այս էր: Ինչպէ՞ս կրնային երկրէն դուրս ելլողները հայրենիքի դաւաճան կոչել: Ո՛վ կրցած էր մտնել անոնց մորթին մէջ եւ ըլլալ անոնց անձերը, զգալ անոնց զգացածը. այդպիսին՝ փնտռուածը չգտնելու տխրութիւնը, տառապանքը ապրիլ: Իրենք նոյնը չէին ընէր հոս: Իրենց կորսնցուցածը չէին փնտռեր: Եւ ատոր համար չէ՞ որ երկրէ երկիր կը թափառէին՝ յարատեւօրէն դժգոհ, տխուր, անհանդիստ: Հայրենիքի դաւաճաննե՞ր էին

բոլորը: Չէ՞ որ իրենք ալ նոյնքան մը շուտրած, անմխիթար հայեր էին՝ ուրացուած աշխարհէն եւ մարդոցմէ: Այլապէս ինչպէ՞ս կարելի պիտի ըլլար ըմբռնել, բացատրել հայուն տխրութիւնը, որ իրենց հետ կը պարտցնէին երկրէ երկիր: Տխրութիւն, որ մաս կազմած էր իրենց էութեան, եւ զոր վերածած էին երգի, արուեստի, մշակոյթի:

Հայաստանի մէջ նոյն վիճակին մէջ էր Հայութիւնը: Ո՛չ միայն ներգաղթողները, այլ բոլորը անխտիր: Բուն Հայաստանցիները եւս: Այլ հարց, թէ որո՞նք էին այս Հայաստանցիները, կամ բնիկները, ինչպէս կը կոչէին իրենք զիրենք: Բնիկներ չկային հոն, որովհետեւ պատմական Հայաստանի այս փոքր հողամասին վրայ բնակութիւն հաստատած հայրերէնները եկուորներ էին բոլոր: Այո՛, իրենց հայրենի հողին մէկ մասին վրայ վերահաստատուած եկուորներ, որոնք Հայաստանի այլ շրջաններէն վտարուած, հասած էին հոն եւ ապաստան գտած: Հրաշքով կամ դիպուածով փրկուած այդ հողամասին վրայ փորձած էին վերականգնել պահպանուած նուազագոյնը, ու յաջողած էին մասամբ: Բայց օտար զգացած էին նաեւ ու շարունակած էին երազել կորսուածին մասին, փնտռել զայն՝ դիտակցարար եւ անդիտակցարար: Օտար կը դառնին, այո՛, իրենք զիրենք երկրին տէրերը նկատելով հանդերձ: Իրենցմէ անկախ էր այդ զգացումը, որովհետեւ իրենց երկրին մէջ հայրենասիրութեան դասեր կու տային իրենց՝ բոլորովին անձանօթ մարդիկ:

Հայրենիքի դաւաճաններ:

Հայրենիքի դաւաճաններ էին ուրեմն բոլոր անոնք, որոնք աչքերնին սեւեռած էին սահմանէն անդին, դէպի Արեւմտեան Հայաստան: Խորհրդային Հայաստանի մէջ ապաստան գտած Հայութիւնը ամբողջ: Կարելի՞ էր: Ի՞նչ հեզնանք էր, ի՞նչ անարդանք:

Դաւաճան էր ուրեմն Երեւանի Պետական Համալսարանի այն պատուական դասախօսը, որու ծանօթացած էր ու վայելած անոր մտերմութիւնը: Իմաստուն բայց խոնարհ այդ գիտնականը, որ մէկ վիշտ ունէր միայն կեանքի մէջ — պատմական Հայաստանի կորուստը: Ու միւս բոլոր գիտնականները, դասախօսները, մտաւորականները, գրողները, արուեստագէտները, պետական եւ կուսակցական գործիչները, որոնք բոլոր նոյն ցաւը կը դիտեցնէին: Կարելի՞ էր:

Բայց ինք իր կեանքին քանի մը լաւագոյն տախտիկները ապրած էր հոն, օտար զգալով հանդերձ, եւ վերջաւորութեան հեռացած էր անշուշտ: Այդ տարիները հարուստ էին ոչ թէ նիւթական շուկանքով, այլ այդ մարդոց զեղեցկացնող տառապանքով, ներշնչեալ ու վարա-

կիչ հայրենասիրութեամբ: Անոնցմէ սորված էր սիրել հօրը երկիրը, ճանչնալ զայն ու նախընտրել: Ձանազանել իրենց երկրէն, որ իրն էր նաեւ: Եւ եթէ անոնք չըլլային, չլուսարանէին զինք, վտասարար հոն պիտի ըլլար տակաւին ու պիտի շանդրադառնար նոյնիսկ իր կորսւնցուցածին: Աւելի լաւ կ'ըլլար թերեւս, մտմտաց յետոյ, դէթ կը խնայուէր իրեն այս տառապանքը: Ու հոն մնալով կրնար երկրին օգտակար ըլլալ: Հոս ի՞նչ կ'ընէր: Ի վերջոյ մնացածը այդ կտոր մը հողն էր — ներկայիս միակ շօշափելի, իրական Հայաստանը:

Ջղայնացած կանգնեցաւ ոտքի, զինք անհանգստացնող մտածումները վանելու յոյսով, եւ պատշգամէն քալեց դէպի խոհանոց: Միջանցքին մէջ էր տակաւին, երբ լսեց աներոջ ձայնը:

— Տունը այր մարդ չկար ըսելով, տղամարդութիւնը բռնէր էր: Դաւիթը ողջ ըլլար ալ, եւ ինք քաջութիւն ունենար այդ դուռէն ներս մտնելու:

— Գինով էր, — ըսաւ Ալիս ու լսեց, երբ զինք տեսաւ խոհանոցին մէջ:

— Ո՞վ գինով էր:

— Արշակը ծնողքիս գացեր է, — բացատրեց Սեդա:

— Առանց ամչնալու, — ըսաւ մայրը. — երես ունի եղեր Խեյրսը:

— Ուզածը ի՞նչ է, — հետաքրքրուեցաւ Փազ: — Ինչո՞ւ հոս կեցեր էք, — հարցուց յետոյ. — ես ալ զուրսը նստած կը սպասեմ:

— Ձաւակները եւ կինը կ'ուզէ եղեր, — Եղիս Օհանեան տաօրինակ կերպով ժպտեցաւ: Տղեղ, թունաւոր ժպիտ մըն էր, որ փեսային ուշադրութենէն չվրիպեցաւ:

— Պզտիկները ի՞նչ ըրին, — հարցուց այս վերջինը:

— Վախերնին տեսնէիր, — պատասխանեց աները. — իրեն չըմօտեցան նոյնիսկ: Գոնէ ինք հետաքրքրուէր, նկատէր զիրենք: Ձաւակները կ'ուզէ եղեր...:

— Գինովութենէն աչքերը բանալու ոյժ չկար վրան, — Ալիսի դէմքին վրայ պժգանքի՞ արտայայտութիւն էր երեւցածը, թէ կարեկցութեան՝ չկրցաւ որոշել քեռայրը:

Աթոռները խոհանոցէն փոխադրեցին պատշգամ, ուր ամբողջովին մթնցած էր արդէն: Քոյրերը ճաշաեղանը պատրաստելով ըզբաղեցան յետոյ, մինչ մայրերնին փորձեց հանդարտեցնել երեխաները, որոնք աղմկելու սկսած էին՝ հազիւ զիրար վերագտած:

— Ի՞նչ եղաւ յետոյ, — Փազ չկրցաւ զսպել հետաքրքրութիւնը. — ե՞րբ պատահեցաւ ասիկա:

— Քիչ առաջ: Դեռ կէս ժամ չեղաւ: Ձգեց դնաց, ինչ պիտի ըլլայ: Պոռաց, կանչեց, սպառնաց... վաղը կը զղջայ, հոգ մի ընե՛ր. այսօր դիմով էր: Ձաւակներով աշնքա՞ն մտահոգուած է կը կարծես: Հանգիստը, աղատութիւնը կը խանդարուի. դիմովութեան մէջ ո՛վ դիտէ խելքը ինչ փչեց:

Մինչեւ ուշ գիշեր խօսեցան քենեկալին անակնկալ այցելութեան մասին, չափեցին, կշռեցին, զայրացան, խնդացին երբեմն, բայց չկրցան սպառել նիւթը: Թեր եւ դէմ կարծիքներ արտայայտեցին, քննելով Ալիսի տուն վերադառնալու կարելիութիւններն ու անպատեհութիւնները, եւ եզրակացութեան մը չյանգեցան բնականաբար: Ժապ համոզուեցաւ թէեւ, որ Ալիսի համար փակուած հարց էր: Կեանքին այդ հատուածը փակած էր: Վերջնականապէս:

ԺԵ.

Սելքը տուն կանչէ, Գեղամ, եւ վերջ տուր այս կատակերգութեան: Տարիներ ետք տակաւին նոյն պատանեկան խաղը կը խաղաք, կամ ինք կը խաղայ, ու դուն տակամայ կը քաջալերես զինք: Քիթէդ ամուր բռնած, ուղած ատեն ուղած ուղղութեամբ կը քաշէ քեզ, ու չլու հնազանդ կը հետեւիս անոր, ենթարկուելով իր բոլոր քմահաճոյքներուն: Տկարութի՞ւն է, թէ յիմարութիւն: Երբեմնի այդ փոքր ու ամօթխած աշակերտուհիդ, հասուն կին դարձած, իր բոլոր գէնքերը կը փորձէ վրայ, իսկ դուն ասպետական հովեր առած կը ներես անոր ամէն անգամ ու կ'արտօնես որ միահեծան բռնակալի մը պէս հրահանգներ արձակէ եւ դուն կամակատար դերին դառնաս անոր: Առանց չքմեղանքի, իրականութիւնը ա՛յս է: Կը բաւէ որ ձայն տայ, բարեհաճի յիշել քեզ, հեռաձայնէ, եւ արդէն պատրաստ ես խաղը վերստին սկսելու: Այս անգամ ինչո՞ւ յիշած է արդեօք քեզ: Թէ ձանձրոյթը փարատելու համար է լսի: Իսկ դուն չե՞ս ձանձրացած: Նուաւտացուցիչ չէ՞: Առաջին օրէն սանձը ձեռքը տուիր, եւ բնականաբար դերերը շրջուեցան: Ինք կատուն է, իսկ դուն՝ մուկը: Այդ թիզ մը աղջիկը, որ կը պապանձէր ներկայութեանդ՝ իր բոլոր դասընկերներուն նման: Ա՛ռ քեզի հանելուկ: Հետաքրքրական է, չէ՞: Վա՛յ շան աղջիկ, վա՛յ:

Եկուր, ետ դարձիր, եւ ինք թող սպասէ այս անգամ: Ամուսնացած կիներու հետ ինչ գործ ունիս, մանաւանդ ա՛յս ամուսնա-

ցած կիներ, որ ամուսինէն բաժնուած է: Ինչ նպատակ կը հետապնդէ: Ամիսներ առաջ քեզ առեւանգեց, տարաւ անգամ մը ու յետոյ անյայտացաւ, հակառակ անոր որ խոստացած էր հեռաձայնել: Ի դուր սպասեցիր յաջորդ օրը, յաջորդող միւս բոլոր օրերուն ընթացքին, յետոյ շարաթներ, ամիսներ... եւ երէկ յանկարծ յիշեց քեզ: Ի վերջոյ հնչեց հեռաձայնը եւ պատահամբ դուն վերցուցիր ընկալուչը: Ամիսներ չէին անցած կարծես, եւ դուն այդ հեռաձայնին կը սպասէիր հոն, ճիշդ նոյն վայրկեանին: Ինքն էր, իր ձայնը, խնդուքը:

Գորոցին առջեւ աշակերտները խճողուած, նեղլիկ փողոցը վերածած էին մարդադաշտի: Վազվզող երեխաներուն դէմ անպաշտպան, սեւազգեստ բայց սլացիկ հասակով ուսուցչուհի մը կը հսկէր, կամ կը սպասէր՝ գիրքերը կուրծքին սեղմած: Քիչ ետք, երբ ինքնաշարժը աւելի մօտեցաւ դպրոցի մուտքին, դարձաւ ու նկատելով զինք, քալեց դէպի ինքնաշարժը: Ալիսն էր: Սեւերուն մէջ՝ աւելի գեղեցկացած, տպաւորիչ: Ժպտեցաւ, սպասեց որ դուռը բանայ Գեղամ, ու ներողամտ նայուածք մը պարտցնելէ ետք շուրջը, աշակերտներուն, ուսումնով մը տեղաւորուեցաւ կողքին ու գիրքերը նետեց նրատարանին վրայ:

— Բարի կէսօր: Ուշացա՛ր:

— Ճամբաները խճողուած են, — Գեղամ խօսեցաւ, մտածելով աւելի անոր սեւ զգեստին մասին, — մի մոռնար որ Շարաթ է եւ կէսօր:

Փողոցէն դուրս ելան եւ մտան զլիսաւոր ճանապարհի խճողումին մէջ: Քանի մը վայրկեան այդպէս աննպատակ յառաջանալէ ետք, Տարօնեան հարցուց: — Դէպի ո՞ւր, Ալպիական Մանուշակ:

— Տուն: Մեզի երթանք:

— Ձեր տո՞ւն: Այս ժամո՞ւն: Առաջուրնէ ինչո՞ւ չըսիր: Ինքնակող հիւր չեմ եղած երբեք, մանաւանդ ճաշի ժամերուն: Յետոյ... ծնողքդ զիս չեն ճանչնար, գիտե՛ս:

— Լաւազոյնն է: Ես ալ չէի գիտեր, թէ մեզի պիտի երթանք: Ժամանակին դուն ըսիր, չէ՞, որ նախընտրելի է գաղտագողի չհանդիպել:

— Ժամանակին: Հիմա... բաներ փոխուած են կ'երեւի: Ուսուցչութիւն, սեւ զգեստ: Ամուսի՞նդ սպաննեցիր:

Ուսուցչուհին խնդաց, բայց յետոյ, երբ Գեղամ նայեցաւ աչքերուն մէջ կատակին գործած տպաւորութիւնը ստուգելու համար, ահաւոր տխրութիւն մը տեսաւ հոն: Քիչ անց, իր խուզարկող նայուածքին տակ, աչքերը յորդեցան, եւ տխրութիւնը վերածուեցաւ ար-

ցունքի: Գեղեցկացնող արցունքի. արդարեւ այդ խնդացող, լացող ու տխուր աչքերը այնպիսի ներդաշնակութիւն մը կը ստեղծէին որ դիտողը կրնար հիանալ միայն:

— Ներողութիւն, — չփոթած ըսաւ երիտասարդը: — Սեւ հագնիդ պատճառ մը ունի ուրեմն:

— Հայրս մեռաւ. ճիշդ այն օրը, որ միասին դուրս ելանք: Նոյն գիշերը:

— Ինչո՞ւ զիս տեղեակ չպահեցիր:

— Պէ՞տք էր, — մենախօսեց Ալիս. — չեմ գիտեր: Զուգեցի քեզ անհանգստացնել:

— Ես ալ ի՞նչ ենթադրութիւններ ըրի:

— Ի՞նչ ենթադրութիւն:

— Նախ ուզեցի ես զիս համոզել, կը ներես, որ խենթութեանդ անդրադարձար եւ որոշեցիր վերջ տալ...:

— Քեզի համար խենթութիւն է ուրեմն, — Ալիս ընդմիջեց, յայտնապէս զուարճացած: — Այսքան տարի ետք չես ուզեր հաւատալ, եւ կատակ կը թուի քեզի, խենթութիւն: Բայց թերեւս իրաւունք ունիս: Անկեղծօրէն սիրողը ուրիշի մը հետ չ'ամուսնանար:

— Սենթութիւն չէ՞, — Գեղամ նախընտրեց շարունակել կատակը ու յետոյ ըսաւ. — Եթէ ձեզի պիտի երթանք, պէտք է ուղղութիւն տաս ինձի:

— Տորայի բոլորակին երբ հասնիս, աջ պիտի դառնաս: Ատկէ անդին քանի մը թաղ է: Սիրելը խենթութիւն է ուրեմն, ըսա քեզի: Ի՞նչ տեսակ գրող ես: Մարդկային զգացումները արժէք չունի՞նք քեզի համար:

— Եթէ մարդ արարածին զգացումները կարենայի հասկնալ, գրելու պէտք չունենայի հաւանարար: Որովհետեւ չեմ կրցած, եւ այն յոյսով որ կը հասկնամ օր մը, կը շարունակեմ գրել: Թերեւս դուն կը լուծես գաղտնիքը եւ կը փրկես զիս այս չարչարանքէն:

— Պիտի չփոխուիս երբեք, — ներողամտարար կշտամբեց ուսուցչուհին. — ամէն ինչ կատակի կ'առնես: Հոսկէ դէպի աջ: Ո՞չ, միւս փողոցը: Գրելը չարչարանք է քեզի համար:

— Կատակ: Գրելը շատ հաճելի աշխատանք է կը խորհիս:

— Շարադրութիւն գրելը ամենէն դժուար պարտականութիւնն էր ինձի համար: Բայց գրողը...:

— Զեզի այդպէս հաւատացուցած են, — լրջացաւ գրողը յանկարծ: — Մեր գրողները մանաւանդ: Իրենք գիրենք մէկական սուրբ, մէկական աստուած ներկայացուցած են. առաքելատիպ, անձնազոհ:

բայց առանձնաշնորհալ ջուրմեր, որոնց փառքը պէտք է հիւսել, խոնարհիլ անոնց մեծութեան առջեւ, երկրպագել:

Նախկին աշակերտուհին, որ ինք ուսուցչուհի էր ներկայիս եւ կը հաւատար թէ կոչումի մը կը ծառայէր, թերահաւատութեամբ նայեցաւ կողքին նստած մարդուն, որ իր երազներուն հերոսն էր, եւ բողբոջեց:

— Դասարանին մէջ, եթէ չես յիշեր, տարբեր բան խօսած ես մեզի: Գրականութիւնն ու գրողները սիրել սորվեցուցեր, իսկ հիմա...:

— Գրականութիւնը՝ այո՛: Գրողները նոյնպէս: Բայց ոչ թէ մեր ներկայի շառլաքաները: Վաշխատու, աւազակ, ամբարտաւան սրիկաներ բոլորն ալ... գոնէ տաղանդ կամ վաստակ ունենային:

— Ինչպէ՞ս կրնաս ընդհանրացնել: Զի կրնար ճիշդ ըլլալ, որքան ալ ուղեմ հաւատալ քեզի:

— Իրաւունք ունիս, ես ալ չեմ ուզեր հաւատալ: Դժբախտաբար իրականութիւն է սակայն. միակ բացառութիւնը թերեւս, — Գեղամ նախընտրեց անուն չտալ թէեւ, ու բաւականացաւ ինքզինք յանդիմանելով. — Ինչո՞ւ այս մասին կը խօսիմք:

— Հետաքրքրական է:

— Այս էջը հոս կրնամ կապել:

Ուսուցչուհին պահ մը շփոթած, քննեց արտայայտութիւնը, բայց հասկցաւ յետոյ, խնդաց:

— Ինքնաշարժը: Անշուշտ:

— Պուրճ Համուտի մէջ ես, մի մոռնար: Անվնաս մարդիկ են, թէեւ հետաքրքիր, այո՛:

Աղքատ եւ տխուր տուն մըն էր: Օրուան այս ժամուն նոյնիսկ լոյսը հազիւ կը մտնէր ներս, տժգոյն պատկեր մը պարզելով աչքերուն առջեւ: Նեղ միջանցք մը, որու աջ պատը վիրաւոր էր իրարու քով բացուած դռներով, ուր սենեակները պէտք է ըլլային: Մտան առաջին սենեակէն ներս, ուր միակ պատուհանին տակ նստած էր սեւազգեստ կին մը, ծունկերուն վրայ սիրունիկ աղջնակ մը: Թէ՛ վիշտ, թէ՛ երեխան ունէին Ալիսի աչքերը, որ ուշի ուշով դիմք կը քննէին հիմա:

— Մայրս է, — ներկայացուց աղջիկը. — ճատիկն ալ օրիորդ թամարն է:

Ճատիկը սահեցաւ մեծ մօրը ծունկերէն վար եւ զգուշութեամբ մօտենալով իրենց, փաթթուեցաւ մօրը քղանցքին, առանց աչքերը անձանթէն հեռացնելու սակայն:

— Պր. Գեղամն է, — շարունակեց Ալիս. — հայերէնի ուսուցիչս, գիտե՞ս :

— Անշուշտ, — ոտքի կանգնեցաւ տիկին Օհանեան : — Ուրախ եմ : Աղջիկները յաճախ խօսած են ձեր մասին :

Գեղամ անհանդիստ զգաց յանկարծ եւ աթոռ մը փնտռեց : Նըստեցաւ յետոյ երեք սոփաներէն մէկուն վրայ, դրան մօտ : Ի՞նչ կ'ընէր հոս : Այս տան մէջ, ուր կը ճանչնային զինք ըստ երեւոյթին, կամ գէթ խօսած էին իր մասին : Յաճախ : Որո՞նք էին աղջիկները : Ի՞նչ կը ներկայացնէր արդեօք իրենց համար : Չնայտարհիկ արարած մը, Ալիսին նախկին ուսուցիչը, թէ հաւանական թեկնածու մը : Կամ թերեւ՝ իրենց աղջկան բարեկամը պարզօրէն : Հետաքրքրական կ'ըլլար ճանչնալ մարդը, հայրերնին : Անոր շունչը, ճնշող ներկայութիւնը մինչեւ հիմա զգալի էր տան մէջ :

— Ի՞նչ ունեցաւ հայրդ, — հարցումը ուղղեց աչակերտուհիին, որ կողքին նստած էր արդէն, սոփային վրայ :

Աղջիկը նայեցաւ մօրը, տատամսեցաւ, բայց պատասխանեց :

— Անձնասպան եղաւ :

— Այդ ի՞նչ տեսակ խօսք է, — մայրը ուսուցիչէն աւելի ցընցուեցաւ :

— Վստահ եմ :

— Եթէ ներկայ չըլլայիր դո՞նէ : Գետնէն դո՛ւն վերցուցիր զինք, դուն տեսար զինք առաջին անգամ :

— Գիտնալով ըրաւ, — յամառեցաւ Ալիս. — ամէն զիշեր, ամէն զիշեր, մանաւանդ վերջին շրջանին, մինչեւ լոյս կը խմէր : Ինչո՞ւ : Եթէ նպատակը ատիկա չըլլար... քանի անգամ ըսաւ արդէն, չե՞ս յիշեր :

— Գինովութեան մէջ ամէն տեսակ խօսք կը խօսէր. կարծես նորութիւն էր :

— Կեանքին մէջ չէր գինովցած. ինձմէ աւելի լաւ գիտես :

— Ի՞նչը ենթադրել կու տայ քեզի որ, — խօսեցաւ Գեղամ բայց զղջաց : — Պատճառ մը ունե՞ր, — միտքը պարզեց յետոյ :

— Քիչ առաջ դուն ըսիր որ մարդկային զգացումները չես կըրցած հասկնալ, բացատրել :

Գրողը ակամայ ժպտեցաւ, թէեւ ժպտիլը անպատշաճ էր տրեւալ պայմաններուն մէջ, ու յարմարագոյն նկատեց լռել : Աղջիկը յիմար չէր ի վերջոյ. ընդհակառակն՝ չափազանց ուշիմ էր, եւ խորաթափանց մտածումներ ունէր : Քիչ առաջուան իր պատահական ակնարկութիւնը լաւապէս ըմբռնած էր, եւ ատոր հաստատումը կ'ընէր

հիմա : Բան մը կ'ուզէր հասկնել թերեւս :

— Ճաշը ի՞նչ է, — Ալիս նիւթը ինք փոխեց, խօսքը ուղղելով մօրը : — Յուսամ անօթի պիտի չձգես մեզ :

— Ե՞րբ անօթի մնացած էք, — յանդիմանեց Եղիս Օհանեան : — Բայց քանի ճաշի հիւր պիտի բերէիր, ինչո՞ւ սկիզբէն չըսիր. առտու, դպրոց չգացած դո՞նէ :

— Պր. Գեղամը հիւր չէ, — մասնաւոր զոհունակութեամբ մը խնդաց աղջիկը :

Մինչ մայրը ուղղուեցաւ դէպի խոհանոց, Տարօնեան վերցուց թամարը գետնէն ու խօսեցաւ :

— Երիտասարդ մայր մը ունիս : Բաւական դժուար պէտք է ըլլայ իրեն համար :

— Ձգացական կին չէ : Ինքն իր մէջ ամփոփուած, լուռ եւ զարմանալի կին մըն է : Ձի խօսիր, չի գանդատիր, ու յաճախ ներկայութիւնը չենք զգար նոյնիսկ : Այնպէս որ, չեմ գիտեր : Պատիկները զինք զբաղած կը պահեն անշուշտ, մանաւանդ այս ճատիկը, որ ինձմէ աւելի իրեն կապուած է :

— Հայրդ ի՞նչ տեսակ մարդ էր :

— Հպարտ, յամառ եւ խիստ : Պէտք է ըսել որ ես իսկապէս չեմ ճանչցած զինք, հակառակ անոր որ ինձի հանդէպ մասնաւոր տրեւարութիւն ունէր : Ինքն իր պատեանին մէջ քաշուած, զրեթէ մարդու հետ յարաբերութիւն չունէր : Մանկութենէս ի վեր, կը յիշեմ, այս խոհանոցէն դուրս չէր ելլեր : Ամէն իրիկուն գործէն վերադարձին, կը լուսացուէր ու կը քաշուէր իր անկիւնը եւ ինքն իրեն կը խմէր : Հիւր չէր ընդուներ ու կը մերժէր ունէ ազգականի այցելել, եթէ նոյնիսկ մահ պատահէր : Մօրս ընտանիքին հետ իսկ յարաբերութիւնները խղած էր :

— Հետաքրքրական մարդ եղած պէտք է ըլլայ :

— Չեմ գիտեր : Թէեւ խիստ, սակայն շատ բարի սիրտ մը ունէր : Իր ներկայութեան կը զողայինք, բայց մեր ուզածն ալ կ'ընէինք, մեր ուզածը կ'ունենայինք : Կը բաւէր որ մեծ մայրս խօսէր իրեն. ամէն ինչ կը կարդադրուէր : Մօրը մէկ խօսքը երկու չէր ըլլար : Ամէն մարդ կը զողար իրմէ, բայց լուսահոգի մեծ մայրս ինչպէ՞ս կը պոռար վրան. իսկ ինք կը խնդար, միայն կը խնդար ու հաճոյք կ'առնէր կարծես : Իր կեանքին միակ հաճոյքն էր թերեւս... ուրիշ ատեն խնդալը չեմ տեսած արդէն : Տխուր եւ առանձին մարդ մըն էր, մանաւանդ մեծ մօրս մեռնելէն ետք : Ատոր համար ալ խղճի խայթի պէս բան մը կայ մէջս հիմա, ամիսներէ ի վեր : Հօրդ մահը, կամ ունէ

հարազատի մահը ցաւ կը պատճառէ անշուշտ, ու զազափարին հետ չես կրնար հաշտուիլ երբեք. բայց ցաւելով եւ կորուստը զգալով հանդերձ, ես աւելի խղճի խայթ է որ ունիմ: Յանցաւոր կը զգամ ու չեմ կրնար ներել ես ինծի, որ փոխանակ զինք ուրախացնելու, տառապանք պատճառած եմ իրեն:

— Ի՞նչ կրնայիր ընել: Կամ՝ ի՞նչ կերպով տառապեցուցած ես զինք կը խորհիս:

— Կրնայի ամուսինէս չբաժնուիլ: Կրնայի այդ շարժարանքը կրել եւ երջանիկ ըլլալու պատրանքով ուրախացնել զինք: Քրոջս պարագային, օրինակի համար, այնքան փոխուեցաւ, երբ դերմանացի ամուսինը ձեռք եւ հայու մը հետ ամուսնացաւ: Եւ յաջող ամուսնութիւն մըն էր, ամենէն կարեւորը ատիկա էր: Այնպէ՞ս ուրախ էր, գոհ, գրեթէ երջանիկ. կը զգայինք, կը տեսնէինք, հոգ չէ թէ ինք չարտայայտուէր: Մանաւանդ այս վերջին տարին, իրենց Հայաստանէն վերադառնալէն ետք: Բայց յետոյ իմ խնդիրս մէջտեղ ելաւ, եւ ամէն ինչ տակնուվրայ եղաւ:

Լուռութիւն տիրեց: Ալիս յուզուած էր դարձեալ ու ճիգ կ'ընէր արցունքները զսպելու: Գեղամի ուշադրութենէն չվրիպեցաւ, բայց խօսելու կամ աշակերտուհին միթարելու փորձ չըրաւ: Այլ սպասեց որ հանդարտի ան, խաղաղի, ու մինչ այդ խաղաց Թամարին հետ: Նախընտրելի էր որ լար թերեւս, քամէր, պարպէր ներքին խռովքը, որ պէտքի ձերբազատուէր զինք ընկճող այդ զգացումէն: Յանցանքի զխտակցութենէն:

— Ատոր համար խուսափեցայ քեզմէ, — Ալիս շարունակեց, մասամբ ինքզինք վերադատած: — Մեղաւոր կը զգայի, ու սիրելու զգացումը նոյնիսկ անքաւելի մեղք մը կը նկատէի, ոճի՛ր: Ինչպէ՞ս կրնայի սիրել, երբ հօրս մեռնելուն պատճառ դարձած էի: Իրեն պատճառած տառապանքս անձնասպանութեան մղած էր զինք, իսկ ես սիրած ըլլալու վայելքը կ'ապրէի: Անտանելի էր, անկարելի. ահռելի զգացում էր... այդ շրջանին եթէ կարենայի մարդու մը վստահիլ, խօսիլ, խոստովանիլ ու պարպել սիրտս, թերեւս այսքան չաղէէր վրաս: Բայց չէի կրնար, չէի համարձակեր:

— Ինծի կրնայիր խօսիլ գէթ:

— Վախցայ: Քեզ պատահամբ տեսնելու զազափարն իսկ կը սարսափեցնէր զիս: Կը կարծէի, զիտէի, թէ պիտի տկարանամ. եւ այդ հոգեվիճակիս մէջ նման մեղանչում մը ո՞վ զիտէ ի՞նչ կերպով պիտի անդրադառնար վրաս:

— Հիմա նոյնը չե՞ս զգար, — Գեղամ հարցուց, հետաքրքրու-

թենէ մղուած լոկ. — յանցաւոր չե՞ս զգար:

— Ժամանակի բարեբար ազդեցութիւնը. ժամանակը ամէն ինչ կը մեղմացնէ, կը դարմանէ, կը մոռցնէ նոյնիսկ: Բայց չէի անդրադարձած, չէի դիտեր, մինչեւ որ ասկէ քանի մը օր առաջ Արշակը հոս եկաւ: — Երբ նկատեց որ ուսուցիչը հարցական իրեն կը նայէր, Ալիս բացատրեց. — ամուսինս այսինքն, զինով ու զգուելի վիճակի մը մէջ հոս եկաւ, եւ ինչե՞ր ըրաւ: Այդ ցնցումը սթափեցուց զիս կարծեմ, լուաց, մաքրեց ամէն ինչ: Յանկարծ անդրադարձայ որ մեղաւոր կամ յանցաւոր զգալու պատճառ չունիմ... այդպիսի հրէշի մը հետ ի՞նչ պէս պիտի կարենայի ապրիլ: Ուրեմն ես յանցանք չունէի, չէի կըրնար ունեցած ըլլալ: Խիղճս հանդարտ էր, մաքուր, խաղաղ: Ի՞նչ ապրում էր, ի՞նչ թեթեւութիւն:

— Գուռն է կարծեմ, — երիտասարդը, որ օտար զգալու սկըսած էր յանկարծ այս տան մէջ, սթափեցուց խօսակիցը: — Եթէ ձեր դուռը զանդ մը ունի:

Ալիս դժկամութեամբ բարձրացաւ տեղէն եւ քալեց դէպի դուռս, խորասուզուած մտածումներու մէջ: Տարօնեան անըմբռնելի կերպով անհանդիստ զգաց — առանձին, օտար, դրսեցի: Այս երիտասարդ, դեղանի կիներ իր Ալպիական Մանուշակն էր, ճիշդ է, եւ իր ազատ կամքովը եկած էր հոս, բայց տան սգաւոր մթնոլորտը կը ճընչէր վրան: Կամ տունի մը մէջ ըլլալու գիտակցութիւնն էր թերեւս որ կ'անհանգստացնէր զինք: Իրեն անձանօթ տուն մըն էր, եւ մթնոլորտը՝ խորթ: Իր սեպհական տան մէջ իսկ խորթ կը զգար, եւ չէր կրնար հանդուրժել ընտանեկան կեանքի կաշկանդող զգացումներուն: Հոս ալ ընտանիք մը կ'ապրէր, ապրած էր տարիներէ ի վեր, մանաւանդ Ալիսը, որուն երազները այս պատերուն բանտին մէջ սաղմնաւորուած էին, կաղմաւորուած ու հասունցած: Եւ այդ երազներուն մաս կաղմած էր ինք՝ որպէս կենդանի իրականութիւն, որպէս շընչող էակ, զոր ապրեցուցած էր իր հետ այս նոյն տան մէջ: Եւ ուրեմն օտար մը չէր, չէր կրնար ըլլալ, որովհետեւ ինք եւս ապրած էր հոս՝ իր կամքէն անկախ: Առանց իր գիտութեան, ինքնիրմէ առաջ: Ի՞նչ պէս կրնար օտար զգալ ուրեմն:

Իրականութիւնը այն էր որ ամէն տեղ օտար կը զգար ինք: Հոս դալը սխալ էր ուրեմն, ոչ թէ իր հոս ներկայ ըլլալը: Ալիս առաջարկած էր, եւ ինք չէր մերժած. որ շատ բնական էր, որովհետեւ կ'ուզէր հետը ըլլալ: Զէր խորհած իսկ այդ մասին: Թէ ինչո՞ւ: Թերեւս ջղայնացած էր, կամ ընդվզած էր: Կ'ուզէր միանգամ ընդմիշտ դուրս գալ իրեն անձանօթ եւ զիրար խաչածեւոյ զգացումներու բանտէն, եւ

լուծել այս հարցը: Ի՞նչ հարց: Պրդին եւ անլուծելի հանելուկի մը վերածուած էր Ալիսի հետ ունեցած իր յարաբերութիւնը: Ըսենք, թէ ազջիկը կը սիրէր զինք: Համոզուած էր, որովհետեւ անոր անկեղծութիւնը փաստի չէր կարօտեր այլևս: Պատճառաւոր, թերեւս նոյնիսկ բնախօսական կազմուածքով, զգացականօրէն սիրելու հակամէտ էր: Սիրելու այլ կերպ մը ըմբռնելի չէր իրեն հաւանաբար — Ֆիզիքական կամ մտային կապ մը չէր, այլ հոգեկան առաւելարար: Մինչդեռ ինք, ուրիշներու զգացումները զնահատելով հանդերձ, եւ Ալիսի պարագային՝ զայն սիրելով հանդերձ, զգացական խառնուածք չունէր, որ կարենար երազային սէր մը ստեղծել երեւակայութեան մէջ ու Բոմէոյ եւ Ժիւլիէթ խաղալ: Իսկ ան՝ չէր խաղար, այլ կ'ապրէր: Արդար չէր, ճիշդ չէր: Ինք ուզէր իսկ, պիտի չկարենար նոյն կերպով սիրել զայն, երազել, տառապիլ ու երջանկութիւնը դռնել այդ հիւանդագին ինքնամոռացումին մէջ: Երջան մը ետք պիտի սկսէր կինը տեսնել անոր մէջ եւ... Ի՞նչ պիտի պատահէր ասկէ ետք: Անկարելի էր: Գաղափարը վրդովեց զինք:

— Գոյրս է, — սենեակ վերադարձաւ Ալիս:

— Ես լաւ կ'ըլլայ որ երթամ:

— Ո՞ւր: Հիմա ժաղն ալ պիտի դայ, քեռայրս: Կը ծանօթանաս: Կ'ուզէիր ճանչնալ զինք:

— Անյարմար է: Ետք օրով կը խանդարեմ: Վստահ եմ, թէ պիտի նախընտրեն ազատ զգալ: Ուրիշ օր մը, երբ աւելի լայն ժամանակ ունենամ, կրնանք երկար-բարակ խօսիլ դէթ: Այսօր դորձ ունիմ:

— Ետք օրերը չես աշխատիր ըսիր, — Ալիսի ձեռքը հանգչեցաւ ուսին: Երկչոտ աղերսանք կար ձեռքի հպումին մէջ, որ աւելի եւս վրդովեց զինք:

— Ճիշդ է: Ժամադրութիւն մը ունիմ սակայն:

— Իրաւունք չունիս. խոստացար: Ի՞նչ ժամադրութիւն է ասիկա:

— Յետոյ կ'իմանաս, — Գեղամ ոտքի էր արդէն, — երբ եւ եթէ արդիւնք տայ: Ծառ կարելոր ժամադրութիւն է:

— Ի՞նչ պիտի մտածեն հիմա:

Տարօնեան ներողութիւն հայցող արտայայտութեամբ մը, եւ կողմնակի քայլերով, յառաջացաւ դէպի դուռը, եւ վերջին պահուն քնքնութեամբ շոյեց Ալիսի այտերը դաստակով, ու ժպտեցաւ:

— Կ'ըսեն, թէ խենթ է: Բարեւ խօսէ՛:

— Ե՞րբ պիտի տեսնեմ քեզ, — հարցուց կինը:

— Հեռաձայնէ՛:

— Ո՛չ, հիմա պիտի խոստանաս:

— Երբոր կ'ուզես:

— Գալ Ետք օր, նոյն ժամուն, — հրամայեց Ալիս մանկունակ ժպիտ մը դէմքին. — եւ ուղղակի հոս կու դաս: Հոս ալ պիտի մնաս, որպէսզի միասին ճաշենք:

— Ուրիշ հրաման ունի՞ս:

— Այո՛:

— Հրամայէ:

— Չմոռնաս: Թէ ոչ ձեռքէս չես ազատիր:

— Վստահ եմ, — լուսագոյն տրամադրութեամբ հրաժեշտ առաւ երիտասարդը ու մեկնեցաւ:

Աճապարելու պատճառ չունէր: Ժամադրութիւնը ժամը չորսին էր, Քասր-էլ-Պահարի մէջ: Երկու տարի է ի վեր կը փորձէր զբական շարաթաթերթի մը հրատարակութեան համար արտօնագիր ստանալ, եւ ի վերջոյ յաջողած էր: Գործակատարը լման թղթածրարը պիտի յանձնէր իրեն այսօր, Տեղեկատուութեան Նախարարութիւնէն համապատասխան հաստատագրով մը, եթէ անչուշտ մետասաներորդ ժամուն նոր բարդութիւն մը խանդարած չըլլար: Տարիներու իր երազն էր, որ պիտի իրականանար: Իր սեպհական զբական հանգչեւր պիտի ունենար, եւ իր ըմբռնած կերպով ու բացարձակ ազատութեան մէջ շարժում պիտի ստեղծէր: Անկախ կողմերէն ու կուռակցական եւ քաղաքական հոսանքներէն: Լիրաններ սփիւռքահայութեան ազգային եւ մշակութային կեանքի կեդրոնը դարձած էր, մանաւանդ վերջին տասնըհինգ տարիներուն, բայց զբականութիւնը տարուէ տարի աժգունած էր, փոխանակ զարգանալու եւ ծաղկելու: Գրական մթնոլորտ նոյնիսկ չէր մնացած, հակառակ անոր որ զոյգ մը զբական հանգչեւ եւ քանի մը շարաթաթերթեր կը հրատարակուէին հոս վաթսուներկան թուականներու սկիզբէն ի վեր:

Պիտի յաջողէ՞ր:

Բոյր բարեկամներն ու երիտասարդ գրողները ցարդ քաջալերած էին զինք ու հաւաստիացուցած, թէ ամէն կերպով զօրավիդ պիտի կանգնին իրեն եւ օժանդակեն՝ ամէն կերպով: Անոնց ամբողջական այս պատրաստակամութիւնը մնացած էր խօսքի սահմանէն ներս, վստահ ըլլալով հաւանաբար, թէ ինք առանձինն կրնար հրաշքը իրագործել: Ինք թէեւ ոչ միայն նոյնքան վստահ չէր, այլ կը տարակուսէր նոյնիսկ: Կը վստահէր իր տաղանդին, փորձառութեան,

բծախնդրութեան եւ մանաւանդ աշխատելու եւ յարատեւելու կամքին . բայց անտեսակա՞նք : Իր գլխաւոր մտահոգութիւնը, միակ խոցելի կողմը նիւթականն էր : Յարդ ոչ ոք մասնակցած էր ծախսերուն , ոչ իսկ մտածած էին այդ մասին , եւ ինք լուրեւայն հոգացած էր այդ ամբողջը , հազարաւոր օսկիները — դանաղան տուրքեր , փաստարանի եւ գործակատարի վարձատրութիւն , կաշառք , եւ մասամբ նորին : Այսքանին կրցած էր դիմանալ , եւ հեշտութեամբ , որովհետեւ ուսուցչական ոռճիկ չէր իր ստացածը այլեւս : Բայց իր եկամուտը սահմանափակ էր նաեւ , դէթ՝ շարաթաթերթ մը հետեւողականօրէն եւ առանց ընդմիջումի հրատարակելու համար : Մանաւանդ առաջին ամիսներուն : Յամենայն դէպս ինք վճռած էր 1975-ի Յունուարին հրատարակութիւնը սկսիլ :

Ինքնաշարժներու խճողումը համեմատաբար նուազած էր այդ ժամուն , եւ վերադարձը դիւրացուցած մասամբ : Պուրճ Համուտէն դուրս եկած էր արդէն եւ կ'ուղղուէր դէպի քաղաք : Հայկական թաղամասերու խճողումն ու սարդի օստայնը յիշեցնող ծուռումուռ եւ նեղլիկ փողոցներու ցանցը անհանդստացուցած էին զինք միշտ , ճընշած ջիղերուն վրայ , բայց տարօրինակ հպարտութիւն մը զգացած էր նաեւ՝ ամէն անգամ որ մտած էր այդ թաղերէն ներս : Տիրող խեղճութիւնն ու լարիւրինթոսը ճիշդ հակառակ անդրադարձը կ'ունենային իր վրայ , թերեւս որովհետեւ հոն ամէն ինչ աւելի հայկական էր՝ թափթփածութեամբ եւ անկարգութեամբ իսկ : Տուները , դպրոցները , խանութներն ու վաճառատունները , սրճարանները , աղտոտութիւնը , աղմուկը , եւ անշուշտ՝ տգիտութիւնը : Բայց այս խեղճութեան եւ տգիտութեան մէջ՝ Հայութեամբ հպարտ եւ դիտակից նոր սերունդ մը աճած էր : Չարմանալի երեւոյթ էր : Ի՞նչ էր դադանիքը , հարցուց ինքնիրեն , դրեթէ բարձրաճայն :

Եւ ցաւ զգաց , որ այս հալոցէն դուրս ապրած էր ինք եւ առիթ չէր ունեցած բաժնելու անոնց կեանքն ու տաղնապները , դժուարութիւնները , վախը , անգիտակից պայքարն ու հերոսութիւնը : Իրենք իրենց մէջ ամփոփուած , կձկուած եւ այլամերժ հաւաքականութիւն մը կազմած էին եւ ստեղծած հայկական կեթթոն , որ անպատեհութիւններու կողքին ունէր նաեւ իր առաւելութիւնները : Ալիսի նման աղջիկներ հոս կազմուած էին , հասկ նետած , դեղեցկացած ու դարպասած իրենց սիրած երիտասարդները : Անվախօրէն ու կիրքով՝ հակառակ զիրենք կաշկանդող անհանդուրժողութեան եւ ժամանակավրէժ պարքերուն : Հրաշք էր : Իրեն համար դէթ՝ հանելուկ մը , որ կը մնար անմեկնելի : Հրաշալի դադանիք մը , որու մասին պիտի ու-

ղէր գրել անպայմանօրէն , ու տալ անոնց կեանքը , առօրեան , սէրերը , երազներն ու յոյսերը , տառապանքն ու յուսախաբութիւնները , եւ յաղթանակը՝ բնականաբար : Այս հրաշալի յարութիւնը : Արձանադրել զայն , բռնել ու յանձնել թուղթին , յաւերժացնելու համար անոր իրականութիւնը : Գեղեցկութիւնը : Չարմանալիօրէն ցարդ ոչ ոք փորձած էր այս հարստութիւնը օգտագործել , մշակել ու դրականութեան վերածել զայն , ոչ իսկ սակաւաթիւ այն դրողները , որոնք դարբնուած էին նոյն հալոցին մէջ : Պուրճ Համուտի հարազատ զաւակները :

Թերեւս հոն պէտք է ապրէր : Պէտք է Պուրճ Համուտ փոխադրուէր եւ հաստատուէր հայկական կեթթոյին ճիշդ կեդրոնը : Չարմացաւ որ մինչեւ այսօր չէր մտածած այս մասին : Ինչո՞ւ : Իր յանձնապաստան եւ զգուելի կեանքէն փրկուած կ'ըլլար , փարատած իր ձանձրոյթը , եւ վստահաբար՝ դարմանած մնայուն դժգոհութիւնը : Կարելի չէր սակայն : Գոնարութիւնները անհամար էին — ամենէն դժուարը պիտի ըլլար ծնողքը համոզել , մանաւանդ մայրն ու եղբայրները : Յուսահատութիւնը ճնշեց վրան դարձեալ եւ զգաց որ կը ջղայնանար : Երկու ժամ ունէր տակաւին , բայց փոխանակ տուն երթալու , ուղղութիւնը փոխեց եւ քշեց դէպի Հիլտայի բնակարանը : Հոն կրնար հանդստանալ դէթ :

Գերմանուհին ակներեւ դստունակութեամբ դիմաւորեց զինք եւ արտայայտեց զարմանքը :

— Ի՞նչ պատահեցաւ : Չէ՞ որ դրադած պիտի ըլլայիր կէսօրէ ետք : Ուրախ եմ որ եկար թէեւ . ձանձրանալու սկսած էի արդէն :

— Ժամադրութիւնս ժամը չորսին է : Եթէ մարդը խոստումը յարգէ եւ արտօնագիրը յանձնէ այսօր , իրիկունը կը տօնենք : Կեանքիս ամենէն երջանիկ օրերէն մէկը պիտի ըլլայ :

— Ձեռ կրնար երեւակայել որքան ուրախ եմ : Բայց կը դարմանամ որ այսքան ժամանակ դադանի պահած ես :

— Գաղտնի՞ : Այնքան ատեն որ շօշափելի արդիւնք չկար . . . ես նոյնիսկ չէի հաւատար : Պարզօրէն անհաւանական կը թուէր : Հոս Լիբանան է , մի մոռնար , եւ նոր հրատարակութեան մը արտօնութիւն ստանալը՝ դրեթէ անկարելի :

— Նախանձելի ես , — բարձրաճայն մտածեց աղջիկը եւ զղջաց :

— Ինչո՞ւ :

— Իտէալ մը ունիս , երազ մը որ իրականանալու ամէն հաւանականութիւն ունի : Սակաւաթիւ մարդիկ այսքան բախտաւոր կ'ըլլան :

— Բախտաւոր , — բացականչեց Գեղամ : — Գիտե՞ս , թէ ինչ

արժամ է ինձի ասիկա, եւ ինչ պիտի արժէ սսկէ ետք: Բախտ: Ինչ բախտ: Կամենալու, ուզելու եւ հետապնդելու հարց է, ոչ թէ պատահականութեան: Եւ այս պարագային պարտականութիւն է. այնքան հաճելի կամ շահարեւ ձեռնարկ չէ հայերէն շարաթաթերթ մը հրատարակելը: Մանաւանդ գրական շարաթաթերթ:

— Ինչո՞ւ կ'ընեն ուրեմն:

— Գրող եմ, մի մոռնար: Եթէ անհրաժեշտ չըլլար, թերեւս չմտածէի իսկ այդ մասին:

— Ըսածս հաստատեցիր արդէն: Իտէալ մը ունիս կեանքի մէջ, չէ՞. կարեւորը ատիկա է:

Տարօնեան յանցաւոր զգաց: Եւ ուզեց խօսակցութեան նիւթը փոխել անմիջապէս: Նոյն սխալը գործած էր դարձեալ: Հիշտա միշտ կը գանդատէր, թէ հակառակ անոր որ ամէն կերպով գոհ էր կեանքէն, դժբախտ կը նկատէր ինքզինք, որովհետեւ իտէալ չունէր: Համայնարանական եւ գարգացած ազջիկ, բնարած ասպարէզը նոյնքան չէր վրդովեր զինք, որքան աննպատակ կեանք մը ապրիլը: Այդ գործը ընելը շատ բնական էր իրեն համար, նկատելով որ լաւ կը վարձատրուէր եւ ինքզինք լաւ կը ճանչնար: Սովորական պառնի ազջիկ մը չէր եւ բարոյական ըմբռնումներու բարդոյթ չունէր երբեք: Պառնի մը մէջ մատուցող ըլլալը ուրիշ որեւէ աշխատանքի նման գործ մըն էր պարզօրէն: Ամ չնալու կամ ստորադաս զգալու հարց չունէր. ասոր գիտակցութիւնը նոյնիսկ չունէր, որովհետեւ ըստ իրեն արդար եւ պատուաբեր վաստակով ապրուստը կ'ապահովէր եւ մարդավայել կեանք մը կ'ապրէր: Բայց եւ այնպէս կը գանդատէր որ անիմաստ կեանք մըն էր իրը:

— Մինչդեռ ես, — Հիշտա շարունակեց ընդհատուած մտածումը. — կեանքս ինչ իմաստ ունի:

— Ուրիշներ քեզմէ տարբեր չեն: Անպայման պէտք է իտէալ մը ունենալ: Պատահած էր որ ես գրող եղած եմ, եւ բնական է որ այդ տեսակ իղձ մը ունենամ: Գործիս, կոչումիս մաս կը կազմէ:

— Բառը ինքնին տարբերութիւնը կը սահմանէ արդէն: Գուն կոչումի մը կը հաւատաս, նուիրուած ես անոր:

— Բայց իմ գործս է, — ընդմիջեց Գեղամ: — Ամէն մարդ իր գործը կ'ընէ, եւ իր կեանքը կ'ապրի անշուշտ: Ստիպուած չէ ուրիշին նմանելու, կամ այլ մարդոց հետ բաղդատելու ինքզինք:

— Մարդ համոզելու սքանչելի կարողութիւն ունիս, — գերմանուհին վաթթուեցաւ սիրած երիտասարդին եւ երախտազիտու-

թեամբ նայեցաւ աչքերուն մէջ: — Եթէ դուն չըլլայիր, ինչ պիտի ընէի: Ճաշած ես, — հարցուց յետոյ:

— Կը նախընտրեմ հանգչիլ:

— Ներողութիւն, պէտք չէր հարցնէի:

Եւ մտան խոհանոց:

Կեանքին ամենէն երջանիկ օրերէն մէկն էր, այո՛, բայց փոխանակ ուրախ, խանդավառ ըլլալու, տարօրինակօրէն լարծուն հոգեվիճակի մը մէջ էր: Տխուր կամ անտրամադիր չէր, ոչ ալ յուսախար կամ հիասթափ: Պարզօրէն անտարբեր էր, պարպուած, հետաքրքրութիւնը կորսնցուցած: Շարաթաթերթի մը արտօնատէրը ինքն էր այսօր, նոյն ինքն Գեղամ Տարօնեանը, որ մինչեւ հիմա չէր կրնար հաւատալ տակաւին, թէ յաջողած էր այս թուղթի կտորը ձեռք ձգել: Որ կը նշանակէր, թէ յետայսորի կրնար իր ուղածին պէս թերթ հրատարակել եւ նոր շարժում ստեղծել. երիտասարդ սերունդ մը հասցնել եւ ուղղութիւն տալ անոր — քաջալերել, առաջնորդել եւ սփռնաբան գրականութիւնը վերակենդանացնել: Ըշմարտութիւնները հրատարակել, եւ մտերիմ, սրտբաց զրոյցի նստիլ Հայութեան հետ: Ոչ թէ այս կամ այն կողմին, արեւմտահայուն կամ արեւելահայուն հետ, այլ բուն իսկ Հայութեան, որ իրեն համար մէկ էր եւ անբաժանելի: Բոլոր կողմերէն եւ հոսանքներէն, կուսակցական եւ անձնական հաշիւներէն վեր՝ լուրջ եւ պատասխանատու խօսք ըսել, եւ մտքը դնել միշտ վէրքին վրայ, ի հարկին՝ ցաւելով եւ ցաւցնելով: Միակ կերպն էր: Հայկական ներկան քարչահոտ ճահիճի մը վերածուած էր՝ իր դարավերջի բարքերով, նահանջով, պարտուողականութեամբ, քաղքենիութեամբ եւ կեղծ առաջնորդներու եսակեղրոն շահախնդրութեամբ եւ ազգակործան մոլուցքով: Ժամանակը հասած էր, որ Հայութիւնը այս բոլորը ըսէր ինքնիրեն, բարձրաձայն ըսէր, եւ լսէր ինքզինք, որպէսզի իր իսկ ձայնը սթափեցընէր զինք, համոզէր եւ ազատազէր ինքիրեն պարտադրած բռնութեանէն: Կարելի՞ էր, եւ ուչ չէ՞ր արդեօք:

Բայց ինք այս նպատակով, եւ համոզուած, ճամբայ ելած էր: Ինչո՞ւ ուրեմն չնախատեսուած այս բեկումը: Ո՛չ, բեկում չէր, ոչ ալ վարանում, այլ վախ: Միամիտ չէր եղած երբեք, ու հիմա եւս պատրանքներ չունէր: Հրաչքներու չէր հաւատար, ու գիտէր, թէ առանձինն հրաչք մը պիտի չկրնար իրագործել: Կարեւորը հաւատքն

էր սակայն, ու զժողովարդոյն պայմաններու մէջ իսկ հաւատքը չէր խախտած երբեք: Էսկանը՝ հաւատքին փարած, առաքելութեան նուիրուիլն էր, սկսիլը: Ամէն մարդ իր կարելին կ'ընէր, եւ եթէ անկեղծ էր ինքնիրեն հետ, համոզուած — խիղճը հանդարտ — արդիւնքներով մտահոգուելու պատճառ չունէր: Իրաւո՛ւնք չունէր: Ի՛նչ պատահած էր ուրեմն: Պարզ անդրադարձ էր թերեւս: Կատարուած, յաջողած դործի մը գաղաթնակէտէն պահալէ՛ք անկում, որ անծանօթ զգացում մը չէ՛ր իրեն: Պատրանաթափ ըլլալու պէս բան մը: Բայց պատրանքներ չունէր, չէր ունեցած: Եւ իր հետապնդածը պատրանք մը չէր երբեք: Հաւատքը պատրանք չէր կրնար ըլլալ: Երկու յստակ, իրարմէ տարբեր եւ զանազանուող իրականութիւններ էին:

Կողքին, պառի բարձրագիւր աթոռակին վրայ հերոսաբար բազմած մօրուսաւոր երիտասարդը կը շարունակէր խանդավառութիւնը ծամել տակաւին: Ժամերէ ի վեր լորձնաշուրթն նոյն յանկերզը կը նուագէր իրեն. կը ծրարէր, որոշումներ կ'առնէր, տպարաններու հետ կապեր կը հաստատէր, մերժուելիք նիւթերու եւ յօդուածներու ցանկը կը պատրաստէր, խմբագրականներ կը դրէր, իրեն եւս թելադրելով որ նոյն միտքով եւ մտահոգութեամբ խմբագրականներ գրէր: Եւ բնականաբար առիթ չէր տար որ կեդրոնանար եւ մտածումները դասաւորէր: Այս պատմական օրը վայելէր, տօնէր, եթէ կարելի ըլլար անշուշտ: Ի՛նչ տրամադրութեամբ եկած էր հոս, եւ ի՛նչ եղած էր: Յանցաւորը ինքն էր սակայն: Կրնար ուղղակի տուն ճամբել զինք ժամադրութենէն անմիջապէս ետք, բայց ուղած էր միասին անցընել այդ օրը, ուրախութիւնը բաժնելու համար թերեւս անոր հետ: Գործով խանդավառ, գէթ արտաքինապէս հաւատաւոր թուող երիտասարդ մտաւորական մը, որու առաջին քայլերը ինք առաջնորդած էր, քաջալերած, ցուցմունքներ ըրած, եւ վերջապէս՝ փորձած էր դրել սորվեցնել անոր: Գործակատարը, որ կարեւոր դեր ունեցած էր արտօնագիրը ապահովելուն մէջ, ան ծանօթացուցած էր իրեն եւ հետապնդած զինք ամիսներու ընթացքին, եւ բնականաբար ներկայ դանուած էր այս օրուան հանդիպումին նաեւ:

— Ես խումբ մը կազմած եմ արդէն, — իմացուց իրեն Սեդրակ, շարունակելով բժականդրութեամբ պատրաստուած ծրագիրը ներկայացնել: — Բոլոր դործերը կ'ընեն. տպարան, խմբագրատուն, ամէն տեղ կը հասնին. դուն յոգնելու պէտք չունիս: Ծարաթական կանոնաւոր հանդիպումներ, խմբագրական ժողով, աշխատանքի բա-

ժանում, եւ արդէն մեքենան կը գտնայ: Ձեռ գգար իսկ:

— Խմբագրատուն չունինք, — Գեղամ փորձեց յիշեցնել, յուսալով գէթ այս մասին կարծիքը յայտնել, — եւ ունենալու ալ հաւանականութիւն չկայ:

— Պէտք է վարձենք, — որոշեց խօսակիցը: — Առանց խմբագրատունի չ'ըլլար: Ո՛ւր պիտի հանդիպինք, ո՛ւր ժողով պիտի դուժարենք, ծրագրենք, դասաւորենք եւ կեդրոն մը ունենանք ի վերջոյ... կարեւոր է: Թէ ոչ մեր վրայ կը խնդան, եւ բան մըն ալ չենք կրնար ընել:

— Մեր նպատակը դրական շարաթաթերթ մը հրատարակել է, — վճռականօրէն խօսեցաւ Տարօնեան, բայց չկրցաւ «իմ նպատակս» ըսել եւ փակել հարցը:

— Ատիկա ամէն մարդ կրնայ ընել: Կարեւորը ծրագրուած աշխատանք տանիլն է:

— Ի՛նչ աշխատանք:

— Ազդային, գաղափարական, — մատնեով մօրուքը սանտրեց Սեդրակ Պաղտասարեան:

— Անհրաժեշտ է, — լրջօրէն հետաքրքրուեցաւ գրողը, բայց յետոյ անդրադարձաւ որ ծիծաղելի էր գաղափարը, կամ գէթ միամիտ, եւ ուրեմն ըսաւ. — զրականութիւնը այլ նիւթերու հետ չչփոթենք: Այդ տեսակ աշխատանք ընել ուզողը կուսակցութեան մը անդամ կ'ըլլայ, կամ ինք կուսակցութիւն մը կը հիմնէ եւ յարմար դատած կերպով կը ծառայէ: Ես... ծիծաղելի է. յաւակնութիւններ չունենանք եւ մենք զմեզ չխաբենք, ոչ ալ ժողովուրդը: Մեծ թիւով փրկիչներ ունի արդէն այս խեղճ ու շփրկուելիք ժողովուրդը:

— Ես այդ տեսակ բան չըսի, — Պաղտասարեան դիւանագիտական դիմակ մը անցուց գէմքին, որոշած ըլլալով զիջում մը ընել առժամապէս: — Միտքս այն է, որ այս տղաքը դործի լծենք:

— Ի՛նչ տղաք են ասոնք, եւ ի՛նչ դործի պիտի լծես: Ձեմ հասկընար: Գրոց-բրոց տղաք են եթէ...:

— Ամէն տեսակը կայ մէջերնին: Գործնական, ճարպիկ, գաղափարապաշտ, գործով խանդավառ երիտասարդներ են: Մանաւանդ որ մեծ համարում ունին վրագ:

— Ձիւ կը ճանչնա՞ն, — զարմացաւ Գեղամ. — կամ ես կը ճանչնամ գիրենք:

— Անշուշտ որ կը ճանչնան, թէ ոչ... իրենցմէ երկուքը գէթ պէտք է յիշես: Անգամ մը միասին հանդիպեցանք քեզի. Սորոսովն ու Մելքոնը, չէ՞ս յիշեր:

Ա.

Պէջրութի Միջազգային օդանաւակայանէն դուրս ելաւ երեկոյեան ժամը հինգին, նայեցաւ շուրջը եւ սովորական խճողումը չնկատեց: Այս Նամուն սպասման սրահը արեւելեան պազար մը կը յիշեցնէր — այն տարբերութեամբ որ ցուցադրութեան ելած կիները մեծամասնութիւն կը կազմէին հոս: Բծախնդրօրէն շարուած, պըճնազարդուած եւ իրենց զգեստներովն իսկ մերկացած լիբանանեան մայրաքաղաքի փոփկասուն տիկիներն ու օրիորդները մասնաւոր հմայք մը կու տային օդանաւակայանին, ուր չըջազայելու կու դային կարգ մը երիտասարդներ: Հաճելի քանի մը ժամ անցընելու լաւագոյն վայրն էր:

Այսօր թէեւ արտակարգօրէն փոխուած էր պատկերը: Ո՛չ միայն սպասման սրահը, այլ չըջազայքը տմբողջ ամայի էր, ու պատահական քանի մը ինքնաշարժ կը տեսնուէին քիչ մը անդին, ուր հարիւրաւոր թաքսիներ հերթի կը սպասէին սովորաբար: Անհետացած էին նաեւ կոտուղան բեռնակիրները, եւ ուրեմն ժող Առաքելեան հարկադրուած վերցուց ճամբորդական երկու պայուսակները ու արտնջալով բարձրացաւ դէպի գլխաւոր մուտքը, ուր կը յուսար ինքնաշարժ մը գտնել:

Ապրիլ ամսու 15-ն էր, ու կը վերադառնար Բարիդէն, ուր կը գտնուէր երկու շաբաթէ ի վեր: Պր. Սարգիսեան հետզհետէ հաստատութեան ղեկը կը յանձնէր իրեն, յուսալով դահացնել զինք եւ միտքը փոխել: Առիթով մը յայտնած էր անոր, թէ կ'ուզէր հեռանալ Լիբանանէն եւ հաստատուիլ այլ երկրի մը մէջ: Շարաթներ, յետոյ, խօսած էին այս մասին, կարծիք փոխանակած, վիճած, ու վերջապէս Մարդը յաջողած էր զէթ առժամապէս համոզել զինք. գժկամութեամբ տեղի տուած էր ինք, մանաւանդ երբ նկատած էր, թէ Սարգիսեան իսկապէս պէտք ունէր իրեն: Ոչ թէ որպէս պաշտօնեայ միայն, այլեւ որպէս սրտցաւ եւ գլխաւից բարեկամ: Բարեկամներ չէին կրնար ըլլալ անշուշտ, նկատի առած տարիքի տարբերութիւնն

ու դործատիրոջ եւ պաշտօնեայի յարարերութիւնը: Վաթսունհինգ տարեկանէն ետք Մարդը սկսած էր յոռետես դառնալ եւ զանգատիլ յաճախ: Զարմանալի կերպով առանձին կը զգար նաեւ, հակառակ անոր որ ծանօթներու եւ բարեկամներու լայն շրջանակ մը ունէր եւ բազմազարդ էր միշտ: Տարիքի բերումով յոգնած էր նաեւ հաւանաբար, եւ որոշ չափով հետաքրքրութիւնը կորսնցուցած: Վերջին շրջանին կը խօսէր նոյնիսկ ինքզինք հանգստեան կոչելու մասին, բայց նկատելով որ Մուշեղին չէր կրնար վստահիլ տակաւին, նախընտրութիւնը կ'երթար հաստատութիւնը ծախելուն: Մինչ այդ գործը պէտք էր շարունակուէր սակայն, եւ հետեւաբար ժառը ծանրաբեռնուած էր նոր պատասխանատուութիւններով — արտաքին յարարերութիւններ, ճամբորդութիւն, ներկայացուցած ընկերութիւններուն այցելութիւններ, եւն: Առաքելեան հաճոյքով ստանձնած էր այս ամէնը, մանաւանդ ճամբորդութիւնները, որովհետեւ Եւրոպան եւ եւրոպական շուկան ճանչնալու եւ սերտելու առիթ կ'ընծայէր իրեն: Ապագային իր սեպհական առեւտուրը հաստատելու հնարաւորութիւններ կը ստեղծէր, եւ բնականաբար չէր կրնար դժգոհիլ: Թէեւ կը մնար հոգեկան նոյն անորոշ վիճակին մէջ, եւ չէր կրնար որոշել, թէ ինչ պէտք էր ընէր կամ ո՛ւր հաստատուէր:

Կացութիւնը բնական չթուեցաւ իրեն, ու շուարած սպասեց օդանաւակայանի մուտքին, յուսալով ինքնաշարժ մը ճարել ի վերջոյ: Քիչ անց երեկոն հազաւ իր սեւ զգեստը եւ ժառ Առաքելեան սկսաւ մտահոգուիլ: Պայուսակները հետը չըլլային ներս կը մտնէր եւ կը հետաքրքրուէր, թէ ինչ պատահած է: Յամենայն դէպս որոշ էր, թէ բան մը պատահած էր. այլապէս այս ժամուն ամայացած չէր ըլլար այս վայրը:

— Թաքսի, Պուրճ Համմուտ, — խօսեցաւ գրեթէ ուրախ, երբ բաւական ետք ինքնաշարժ մը մօտեցաւ ու շարժավարը հարցական նայեցաւ իրեն:

— Շա՛ւ, այս աշխարհէն լուր չունի՞ս, — հեղնեց շարժավարը: — Միւս կողմ անցնիլ անկարելի է:

— Միւս կողմը ո՞րն է:

— Պուրճ Համմուտ:

— Ուզածիդ չափ կը վճարեմ, — ըսաւ ժառ:

— Երանի: Վտանգաւոր է:

— Վտանգաւոր: Ինչ կայ որ...:

— Այս աշխարհի վրայ չե՞ս ապրիր: Ուրկէ՞ կու գաս, որ հստ

պատահածներէն լուր չունիս: Աշխարհը տանկուվրայ եղած է, եւ դուն ինչ կայ կ'ըսես:

— Քաղաք պիտի չերթա՞ս, — ժառ հարցուց ջղային: — զիս քաղաք հասցուր: Ատկէ անդին ես դիտուս ճարին կը նայիմ:

— Անկարելի է: Քեզ մինչեւ Ռաս Պէյրութ կրնամ տանիլ, եթէ կ'ուզես: Տասնհինգ ոսկի:

Առաքելեան չպատասխանեց իսկ: Պայուսակները ինք վերցուց եւ տեղաւորեց սնտուկին մէջ ու յետոյ բազմեցաւ շարժավարի կողքին: Սիկառեթ մը վառեց, ինքնազոհ եւ յողթական, միտքէն հայհոյելով հանդերձ շարժավարին, որ եռապատիկ սակ պահանջած էր: Ուրիշ ելք չունէր զիտակցաբար պիտի կողոպտուէր: Բայց ասոր ալ փառք պէտք է տար: Համրա հասնելէ ետք, տուն հասնելու կերպ մը կը գտնէր:

— Ի՞նչ պատահած է, — հարցուց քիչ ետք:

— Աշխարհ իրարու անցած է:

Լիրանանցիի յատուկ պատասխան, մտածեց ժառ: Եթէ կրնաս հասկցիլ, թէ ինչ ըսել կ'ուզէ: Առաւելադոյն բառերով բան չըսելու մասնաւոր կարողութիւն, որ մարդը ջղայնացնելու կը ծառայէ միայն: Բայց եւ այնպէս չյուսահատեցաւ եւ փորձ մը եւս ըրաւ:

— Ո՞ւր:

— Հո՛ս, ո՛ւր պիտի ըլլայ:

Քառասունը անց, չորցած մարմինով ու թափթփած մարդ մըն էր: Խօսած արարեքէնն ու առողանութիւնը ընդհանրապէս, իսլամ ըլլալը կը մատնէին:

— Լիրանանի՞ մէջ:

Շարժավարը չպատասխանեց, ու դժգոհ եւ ջղային դուրսը ճօճեց: Առաքելեան եզրակացուց որ անիմաստ էր, սպարդիւն այս մարդուն հետ խօսիլը, եւ ինք եւս լռեց: Բայց մարդը պայթեցաւ յանկարծ:

— Այն Րըմմանէ քսանէն աւելի պաղեստինցի սպաննեցին երկու օր առաջ:

— Ո՞վ:

— Քրիստոնեաները:

— Ինչո՞ւ, — ժառ ուզեց պատճառը իմանալ, ընդլզուով շեշտ մը դնելով ձայնին մէջ: Ի վերջոյ որպէս հայ ինք եւս քրիստոնեաներու կարգին կը դասուէր այս երկրին մէջ, եւ պատասխանատու կը նկատուէր ուրեմն հիմա: Կամ դէթ իրմէ կ'ակնկալուէր որ այդպէս զգար:

— Շնութիւն, ի՛նչ պիտի ըլլայ: Բոլորն ալ անմեղ մարդիկ, օթոպիւսով իրենց եկեղեցիին քովէն անցած ատեն, կրակ կը բանան վրանին:

— Առա՞նց պատճառի:

Մարդը արհամարհական նայուածքով մը մեծարեց զինք, հարցումը պատասխանի մը արժանի չնկատելով: Պաղեստինցի դաղթականներուն եւ տեղացիներուն միջեւ բախումները յաճախակի դարձած էին վերջին տարիներուն, եւ այս ալ նմանօրինակ դէպք մըն էր հաւանաբար, եզրակացուց Առաքելեան ու խոհեմութիւն համարեց բաւարարուիլ այսքանով: Կարեւորը տուն հասնին էր, մանաւանդ տուեալ պայմաններուն մէջ, ու քանի այս երանելին չէր ուզեր խօսիլ, նախընտրելի էր աւելի եւս չզրզուել զինք:

Նշանաւոր եւ այս ժամուն սովորաբար խճողուած Համբա պողոտան նոյնիսկ ամառացած էր, ու պատահական կամ յայտնաբերուած անցորդներ միայն կ'աճապարէին, վայրկեան առաջ տուն հասնելու համար թերեւս: Հրացանաձուլութեան ձայներ կը լսուէին երբեմն, սակայն մտահոգութեամբ պատճառ չունէր, որովհետեւ այս ձայները իրենց աօրեային մաս կազմած էին, մանաւանդ 1973-էն ի վեր: Հայաստանէն նոր վերադարձած այն ատեն, անբնական թուած էր իրեն զէնքերու ազատ եւ յաճախակի դորձածութիւնը հոս, թէ եւ անցեալին եւս զէնքը ազատ խօսքի իրաւունք վայելած էր Լիբանանի մէջ: Բայց ոչ նոյն տարողութեամբ:

Մտաւորապէս մէկ ժամ ետք, եւ արդէն իսկ խուճապի մատնուած, յաջողեցաւ թաքսիի մը շարժովարը համողել որ զինք քաղաքի արեւելեան կողմը անցընէ: Պահ մը, ճարահատ, խորհած էր շրջանի պանդոկներէն մէկուն մէջ գիշերել, բայց տատամսած էր, նկատելով որ պիտի չկարենար Սեդային իմացնել, թէ ապահով հասած էր: Տունը հեռաձայն չունէր: Կրնար Պր. Սարգիսեանին հեռաձայնել անշուշտ, սակայն վասն ինչի՞: Կարեւորը տունն էր: Հոն կը սպասէին իրեն: Վերադարձի թուականը անորոշ մնացած ըլլար, մտահոգութեամբ պատճառ չէր ունենար:

Յօգնած էր յամենայն դէպս, եւ ամբողջ օրը փառաւոր ընթրիքի մը ակնկալութեամբ երազած էր: Ճրանսա անօթի չէր մնացած բնական է. ընդհակառակն՝ լաւազոյն ճաշարաններուն մէջ զրեթէ բոլոր ժողովուրդներու ճաշերը փորձած էր: Բարից միջազգային մեծ խոհանոց մըն էր ի վերջոյ: Սակայն իրենց ճաշերը տարբեր էին. համով-հոտով, կծու, թթու, համեմուած՝ մատները հետը ուտելիք կերակուրներ: Լիբանանի անմասն, անփոխարինելի հացով: Վստա-

հարար տունը ճաշասեղանը պատրաստած, իրեն կը սպասէին:

— Վստահ էի, որ ձեւ մը կը գտնես եւ կու դաս,— Սեդա ինքնախտահ եւ ժպտուն դիմաւորեց զինք: — Բայց անկեղծ ըլլամ, երբ ուշացար մտահոգութեամբ սկսայ:

— Ինչո՞ւ պիտի չդայի,— ժաղ կ'կոցեց աչքերը, փորձելով միամիտ արտայայտութիւն մը տալ դէմքին:

— Գիտեմ, հերոս ես դուն:

— Առիթ տուր որ մարդը շունչ առնէ,— ըսաւ մայրը, որ կանդնած աղջկան կողքին, երեսները զսպելով զբաղած էր աւելի:

— Ազատ արձակէ այս դազանները:

Հերթով դրկեց ու համբուրեց չորսն ալ, եւ ապա մայրերը: Ինք իր մայրը հազիւ կը յիշէր, բայց հոս, իր տան մէջ, երեք մայր կար հիմա: Անակնկալօրէն յուզուեցաւ ու զարմացած, փորձեց ըմբռնել, թէ ի՛նչ պատահած էր իրեն յանկարծ: Այս կարգի զբացում չէր ունեցած ասկէ առաջ. զբացական երբեք չէր եղած իրականութեան մէջ: Ուրե՞մն: Վազահաս ծերութիւն, մտածեց ու ժպտեցաւ: Բարեբախտաբար: Որովհետեւ բոլորն ալ զինք կը դիտէին:

— Ի՞նչ է,— հարցուց կ'ինը բնազդաբար:

— Բաղնիքը պատրաստ է:

— Այո՛: Մինչեւ ելլես սեղանը պատրաստած կ'ըլլանք:

— Ծիչդ ի՞նչ է խնդիրը,— ամուսինը հարցուց յետոյ:

— Կարծեմ այս անգամ լուրջ է,— պատասխանեց Ալիս, որ քրոջմէն աւելի իրազեկ էր ըստ երեւոյթին: — Փաղանդաւորները, լսածիս համաձայն, մեծ կոխներու կը պատրաստուին: Ամէն մարդու բերնին մէջ է:

— Բերանդ խէյրի բաց,— յանդիմանեց մայրը:

— Լսածս է: Դպրոցը ամէն մարդ սկսած է այս մասին խօսիլ. նոյնիսկ անօրէնը, որ սովորաբար չի խօսիր եւ կարծիք չի յայտնար, եթէ վստահ չըլլայ:

— Ուզածնին ի՞նչ է,— հետաքրքրուեցաւ ժաղ:

— Պաղեստինցիներուն դասը տալ:

— Որ ի՛նչ ըլլայ: Պաղեստինցիները այս երկրին մէջ են եւ հոս ալ պիտի մնան, այնքան ատեն որ երկիր չունին: Ո՛ւր կրնան երթալ:

— Թող խելօք կենան ուրեմն:

— Քաղաքականութիւնը մեր գլուխէն վեր բան է,— ներողամտաբար ժպտեցաւ քեռայրը,— մանաւանդ միջազգային քաղա-

քականութիւնը: Ո՛վ գիտէ ինչեր կան տակը: Յուսանք որ Լիրանանի գլխուն չի պայթի:

— Ըստ ոմանց պայթած է արդէն:

— Այդ օթոպիւսի ինչդէն դուրս բախումներ եղա՞ն:

— Եւ ինչպէ՞ս: Երեք օրէ ի վեր դանազան շրջաններու մէջ կռիւններ կան:

— Հետաքրքրական է, — Ժազ մըթմըթաց եւ քալեց դէպի ննջասենեակ:

Մեզ հանդիստ պիտի չթողուն, անդրադարձաւ Ժազ Առաքելեան, երբ յողնած մարմինը սկսաւ հանգստանալ ջուրի կազդուրիչ հոսանքին տակ: Նախ Սուրիա, յետոյ Իրաք, Եգիպտոս, եւ այսօր ալ՝ Լիրանան: Հայութիւնը ուր պիտի երթայ, ո՛ւր ապաստանի. այս երկիրներուն մէջ մասամբ պատասպարուած էր եւ ինքզինք վերադատած: Քսան տարուան ընթացքին, Պարսկաստանէն մինչեւ Սուսան, շուրջ հինգ հարիւր հազար հայ հաշուող այս երկիրները ցնցուած էին յաջորդաբար ու հայկական Մփիւռքն ալ ցնցած իրենց հետ: Արտահայաստանեան այս օճախները քայքայուած էին մէկ առ մէկ, մինչ Հայաստանի կառավարութիւնը, անտարբեր կամ անկարող, հետեւած էր միայն, ու վերջաւորութեան յաջողած էր Մփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէ մը հիմնել: Կարծես Մփիւռքի Հայութիւնը մշակութային կապի պէտք ունէր: Կոմիտէ մը, որ բացի մշակոյթէն ամէն տեսակ հարցով զբաղած էր: Որո՞ւ մշակոյթը ծանօթացուցին որո՞ւ: Մինչ Մփիւռքը պաշտպանութեան պէտք ունէր միայն — հողածու ձեռքերու եւ իմաստուն ղեկավարութեան:

Փոխանակ պաշտպանելու եւ առաջնորդելու այս ժողովուրդը, հայրենասիրութեան դասեր տալու սկսան անոր: Բոլորին անխտիր: Ե՛ւ կրտսերներուն, ե՛ւ երէցներուն. ձախին եւ աջին, հարուստին եւ աղքատին: Աղքատը, որ հայրենասիրութենէն աւելի դոյութիւնը պահելու պէտք ունէր: Որ երկրի մը պէտք ունէր, հայրենիքի: Ու երբ փնտուկ այս երկիրը կամ հայրենիքը, դատապարտեցին զինք: Դաւաճանութեամբ մեղադրեցին: Եւ փոխանակ այս դաւաճանները դարձի բերելու, հալածեցին դանոնք երկրէ երկիր, ու փրկած եղան Մփիւռքը: Որու վերջին եւ միակ բերդը, Լիրանանը, ինչպիսի վրայ էր արդէն: Յետո՞յ:

Կեցցէ՛ ազատ եւ անկախ Հայաստանը:

Ապրիլի 24-ը մօտ էր ու կը պատրաստուէին մեծ շուքով տօնելու զայն: Այո՛, տօնական խանդավառութիւն կը տիրէր ամէն տեղ,

Լիրանանէն մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա, եւ Եղեռնի Վաթսունամեակը պիտի նշուէր միասնական ողբով: Միջ-կուսակցական յանձնարարներ կազմուած էին, եւ հայրենասիրութեան նոր արշաւը սկսած էր արդէն: Ամերիկեան գլխարկներով եւ սիկառներով նորարոյս կուսակցական զեկափարներ հանդիպումներ կ'ունենային համերաշխ մթնոլորտի մէջ, ու կը շոյէին եւ կը փառարանէին զիրար: Ժողովուրդը կրնար գլխուն ճարին նայիլ եւ դիմազրուել բուն վտանգը: Իրենք զբաղած էին ժողովներով եւ յօդուածաշարքերով, որ անպայմանօրէն պիտի փրկէին այս յետամնաց ժողովուրդը եւ ազատագրէին Հայաստանը:

Ճիշդ վաթսուն տարի առաջ պատմութեան մեծադոյն ոճիրը դործուած էր, եւ մարդկութիւնը մոռցած էր արդէն զայն: Ոչ միայն մոռցած էր, այլեւ կ'անդիտանար: Միայն վաթսուն տարի, որ պատմութեան համար ակնթարթ մը նոյնիսկ չէր, ու մոռցուած էր արդէն վաթսուն դարու կեանք եւ մշակոյթ ունեցող Հայութիւնը: Որ զարմանալի չէր, որովհետեւ ամենէն առաջ մենք մոռցած էինք ատիկա: Մենք զմեզ չէ որ մոռցած ենք, այլ մեր անցեալը, պատմութիւնը, իրաւունքները: Եւ այս՝ հակառակ հիմնուած դպրոցներուն, նորակառոյց եկեղեցիներուն եւ բազմահարիւր օրաթերթիներուն, շաբաթաթերթիներուն եւ ամսագրերուն: Այս բոլորը կ'ընենք մենք զմեզ խարելու համար թերեւս, կամ առաւելագոյն պարագային՝ մեր մոռացումը արդարացնելու, պատճառարանելու համար: Թող ոչ ոք համարձակի ըսել, թէ ազգը պահպանելու ճիշտ չենք ըրած, հայերէն լեզուն մեր գաւակներուն չենք սորվեցուցած, կամ մեր մշակութային աւանդութիւնները չենք պահպանած: Այս բոլորը ըրած ենք — ի՛նչ խօսք — բայց մոռցած ենք ամենէն էականը, մեր գոյութեան իրաւունքը: Այնքան մը, որ ոչ միայն չենք համարձակիր մարդկութեան յիշեցնելու ատիկա, այլ կ'ամշնանք նոյնիսկ: Ի՛նչ կը ներկայացնենք, որ աշխարհը զբաղեցնենք մեր մանրուքներով:

Մինչդեռ հոս, այս նոյն երկրին մէջ, ուր որպէս հիւր ընդունուած են, պաղեստինցիները աշխարհին կը պարտադրեն իրենց մանրուքները: Քաջաբար, առանց ամշնալու: Ասոնք ապրելու աւելի իրաւունք ունին քան մենք, եւ կ'ապրին անպայմանօրէն: Կը գոյատեւեն եւ կը տիրանան իրենց իրաւունքներուն: Կ'ունենան իրենց երկիրն ու պետութիւնը ու կը սկսին ազգաշինութեան: Ներկայիս ազգ չեն, բայց օր մը կ'ըլլան, որովհետեւ ազգութիւնը հայրենի հողի վրայ, սեպհական երկրի մէջ կը կերտուի միայն: Իսկ մենք յիմարօրէն, եւ յամառօրէն կը շարունակենք ատկաւին ազգ պահպանել

օտար հոգի վրայ, անհիւրընկալ երկիրներու մէջ: Եւ բնականաբար Մովսէսական Միութիւնը, որու մաս կը կազմէ մեր փոքր ու անդամահատուած Հայաստանը, կ'օգնէ, զօրավիգ կը վանդնի անոնց, բայց կ'անդիտանայ մեր իրաւունքները ու չ'օգնէր մեզի: Որ բնաւ զարմանալի չէ: Ի վերջոյ մենք պահանջ չենք ներկայացներ, եւ ուրեմն... թէեւ կը սիրենք կրկնել, թէ միայն ողուս մեծ ազգէն պիտի դայ մեր փրկութիւնը: Եթէ ողուս ազգ մնայ մինչ այդ: Աշխարհի ամենէն ազնիւ, խեղճ ու ոչխարամիտ ժողովուրդը, որ իր իսկ հայրենիքին մէջ չ'ուր եւ հնազանդ դերին է օտարներուն: Թաթարներուն, հրեաներուն, վրացիներուն, եւ անշուշտ՝ օտարացած ռուսերու, որոնք ազգութեան զարգացումը ստորադաս կը համարեն, եւ բայց կը ծառայեն օտար ազգերու: Ինչպէս հրեաներուն, օրինակի համար:

Փորձեց վանել այս մտածումները միտքէն եւ սկսաւ երգ մը սուրբ: Զուրը կը խանդարէր, բայց ժառ յամառեցաւ:

Ասէք լեռներ, լացէք լեռներ

Ինչու ա՛յս երգը, ջղայնացաւ: Զէր մտածած. պարզօրէն սկսած էր երգել, եւ շրթներուն վրայ այս երգն էր հիմա: Ինքնաբերաբար յայտնուած էր, բարձրացած ընդերքէն, եւ իրեն անծանօթ մնացած զգացումներ կը պեղէր հիմա իր մէջ: Յաճախ լսած էր երգը, ներզաղթելէն առաջ իսկ, ու մանաւանդ վերջին տարիներուն, բայց չէր երգած երբեք: Անտանելի, անբնական տխրութիւն մը կը ճնշէր վրան: Հիմնովին փոխուած էր, զիտէր, եւ անճանաչելի դարձած: Ինք նոյնիսկ չէր ճանչնար այս նոր մարդը, որ անընդհատ որոնումի մէջ էր, ու կը խանդարէր, տակնուվրայ կ'ընէր կեանքը: Առաջ այսպէս չէր, թէեւ տխրութիւնը իր էութեան մաս կազմած էր միշտ: Ընդոճին, բնական տխրութիւն մըն էր ատիկա, զոր յաջողած էր հաւասարակշռել, չէզոքացնել նոյնիսկ, եւ իշխել ինքնիրեն եւ ափսոսանքի վրայ: Ասիկա տարբեր էր. իրեն ծանօթ տխրութիւնը չէր: Ընդվզում էր աւելի, կամ թերեւս՝ յուսահատութիւն: Բայց յուսահատելու իրաւունք չունէր: Պատճառ չունէր: Ընդհակառակն՝ երջանիկ ըլլալու ամէն պատճառ ունէր, եւ երջանիկ էր: Ի՞նչ էր այս հակասական շփոթը ուրեմն:

Երեսունեօթ տարեկանին — ամուսնացած, զաւակներու տէր, պատասխանատու պաշտօն մը ապահոված եւ ինքնաբաւ — յոռետես մարդ մըն էր: Անըմբռնելի կերպով: Երջանկութեան արդիւնքը ա՛յս էր: Ամէն ինչ ունէր: Պաշտօն, տուն, դրամ, դոհացուցիչ եկամուտ, ընտանիք, ազգականներ, հարազատներ, բարեկամներ, ու զեղեցիկ

կին մը, որ իսկական կեանքի ընկեր եղած էր իրեն: Հասկցող, նուիրուած, զուարթ, պարզ ու ժուժկալ բայց նաեւ կատարեալ կին՝ Ֆրիդրիխանով: Իրեն պէս անդապելի դազան մը կըրցած էր դոհացնել ու հանդարտեցնել զինք: Փաստը այն էր, որ ամուսնանալէն ի վեր ուրիշ կնկայ մասին չէր մտածած, պէտք չէր ունեցած: Մինչդեռ անցեալին, անկուշտ ու անյաղ, կեանքը հաճելի արկածախնդրութիւններու երիզի մը վերածած էր, եւ չէր անդրադառնար նոյնիսկ թէ աշխարհի վրայ ատիկ դուրս իրականութիւն մը կար: Թերեւս ուրիշ կիներ դարպասելու պէտք է սկսէր դարձեալ... ծիծաղեցաւ եւ տարբեր երգ մը սկսաւ սուրբ:

Գիշերը, թէեւ, Սեղան փաթթած պառկեցաւ, ու մոռցաւ աշխարհի միւս բոլոր կիները:

Բ.

Առաւօտուն բնական կերպով կըրցաւ դրասենեակ հասնիլ, հակառակ անոր որ Սեղա զգուշացուցած էր զինք եւ պնդած, թէ ճամբաները ապահով չէին: Զայնաստիւռէն լուրերու հաղորդումը լսելէ ետք աւելի ինքնախտահ կերպով դուրս ելաւ տունէն, եւ փաստօրէն արտակարգ ոչինչ նկատեց: Ապահով եւ շատ բնական կերպով կըրցաւ հասնիլ քաղաք եւ կեդրոնական հրատարակէն քալել դէպի դրասենեակ ամէն օրուան պէս: Նոյն խճողումը, ազմուկը, ինքնաշարժներու անհամար եւ անվերջանալի շարքերը, եւ բնական է՝ Լիրանանի պայծառ եւ զեղեցիկ առաւօտը Ապրիլի կիսուն:

— Շատ բան կորսնցուցիր, — Մուշեղ զիմաւորեց զինք ուրախ եւ ողբերգուած:

— Շատ խանդավառ կ'երեւիս, — զուարճացած, կատակեց ժառ Առաքելեան եւ հարցուց. — այսքան կանուխ ի՞նչ դործ ունիս հոս:

— Մասնաւոր, քեզ տեսնելու համար կանուխ եկայ:

— Հայրդ հո՞ս է:

— Ոչ տակաւին: Քանի օր է դրասենեակը փակ էր: Հայրս մտահոգ է յամենայն դէպս, եւ ըստ երեւոյթիս որոշ բաներ լսած է: Անհաւատալի էր. այս տեսակ բախում... ասկէ առաջ մանր-մունր դէպքեր կը պատահէին. այս անգամ իրական պատերազմ էր: Երկու կողմերն ալ կանոնաւոր զինուած, զէրքեր, յարձակում, նահանջ՝ քանի ճակատի վրայ:

— Ճիշդ ի՞նչ լսած է հայրդ :

— Շատ դէ՛ չ պիտի ըլլայ : Քաղաքացիական պատերազմ , ան-
խշտանութիւն . Լիբանանի ապագան վտանգուած է , եւ կրնայ ըլլալ
որ Լիբանան չմնայ :

— Քարտէսէն պիտի ջնջե՞ն : Երկիրը եղած տեղը կը մնայ . չեն
կրնար վերցնել եւ հո՛ւր . . . բան մը չմնաց :

— Բաժանում : Պիտի բաժնեն , եւ այն ատեն Լիբանան չի մնար .
զանազան երկիրներու մաս կը կազմէ , եւ վե՛րջ :

— Այնքան դիւրի՞ն է :

— Ամերիկեան ծրագիր է որպէս թէ . ուրիշներ ալ կ'ըսեն ,
թէ սոփետական ծրագիր է : Խելքս չի հասնիր բայց եթէ ուզեն կրնան
ընել :

— Թերեւս ալ համաձայնարար կը դորձեն ,— երէջը բարձ-
րաձայն խորհրդածեց : — Ինչո՞ւ չէ . իրենց համար ի՞նչ կարելորու-
թիւն ունի :

— Բայց զգուելի է ,— Մուշեղ ընդվզեցաւ յանկարծ ,— սար-
սափելի . ի՞նչ իրաւունք ունին :

— Եթէ ըսածներդ ճիշդ են , Հայութիւնը նոյնքան մը վտան-
գուած է : Սփիւռքի վերջը կը նշանակէ ատիկա , կազմալուծումը :
Առանց Լիբանանի հայկական Սփիւռք դոյութիւն չունի : Երբ սիրտը
վերցնես կամ կեցնես , մարմինը կը մեռնի , կը փճանայ :

— Թերեւս պատճառ կ'ըլլայ որ Հայութիւնը ամբողջ Հայաս-
տան կեդրոնանայ : Ի վերջոյ մեր երկիրը ունինք :

— Ինչպէ՞ս ,— Ժադ անզգայարար հեզնեց բայց ամչցաւ :

— Ստիպուած են : Երբ հայրենիք մը ունինք , բնականաբար հոն
պիտի երթանք : Իրենց պարտականութիւնն է : Սփիւռքի Հայութեան
ո՛վ աէր պիտի ըլլայ թէ ոչ :

— Միամիտ մի ըլլար : Զարգացած , խելացի ազայ ես , եւ թէեւ
անփորձ , սակայն քու տարիքիդ զաղափար մը պէտք է ունենաս :
Նախ դորձնական չէ , եւ ոչ ալ կարելի : Եթէ նոյնիսկ Հայաստանի
կառավարութիւնը ուզէ մեզ հոն փոխադրել — որ շատ վիճելի է —
ի՞նչը քեզի ենթադրել կու տայ որ այս քաղքենիացած ժողովուրդը
պիտի ուզէ հոն հաստատուիլ : Եւ Սփիւռքը միայն լիբանահայութիւն
չէ , մի մտոնար : Միւսներուն ի՞նչ պիտի պատահի :

— Անոնք վտանգուած չեն :

— Առանց Լիբանանի անոնց դոյութիւնը շատ խնդրական կ'ըլ-
լայ : Առանց լիբանահայութեան Սփիւռք չկայ . դժբախտաբար ա-
սիկա իրականութիւն դարձաւ . վերջին քսան տարիներուն : Որով-

հետեւ միւս բոլոր երկիրներուն մէջ նոյն ազատութիւնը չէինք վա-
յելեր . այլ հարց որ այդ երկիրները իրենք ամէն կարգի ցնցումի
ենթարկուեցան : Իսկ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ապագայ չունինք
արդէն . ոչ թէ ապագայ . . . այսօր իսկ ոչինչ կը ներկայացնենք հոն :

— Շատ յոռետես դարձած ես :

— Կամ իրատես : Անտեղի կերպով լաւատես ըլլալով , կամ այս
պարագային ինքնախարէութեամբ , մեր հարցերուն զարման չենք
կրնար դանել : Ատիկա զիտակցարար ծուղակին մէջ իյնալ կը նշա-
նակէ : 1915-ի կրկնութիւնը կրնայ ըլլալ . այն ատեն ճիշդ այս սխալը
գործեցին : Շատ ինքնավստահ , ապահով , չկրցան դալիք աղէտը նա-
խատեսել . այսինքն իրապաշտ ըլլալ եւ իրականութիւնը տեսնել ,
ընդունիլ եւ ըստ այնմ պատրաստուիլ՝ կարենալ առաջըր առնելու
համար :

— Ըստ քեզի ի՞նչ պէտք է ընել ,— Մուշեղ հարցուց ընկճուած :

— Չեմ գիտեր :

— Եղա՞ւ :

— Ի՞նչ կրնաս ընել ,— ջղայնացած հարցումը ինքնիրեն ուղղեց
Առաքելեան .— փախչի՞լ : Բայց դէպի ո՛ւր : Ինչպէ՞ս : Քառորդ մի-
լիոն մարդ ո՛ւր կրնաս տանիլ , եթէ նոյնիսկ կազմակերպուած ըլլաս
այդ տեսակ հերոսական քայլ մը առնելու : Եւ՝ պէ՞տք է տանիլ : Չէ՞
որ Լիբանանը մեր միակ յոյսն է :

— Ուրե՞մն :

— Ինծի ինչո՞ւ կը հարցնես : Ես ոչ ազգային , ոչ ալ քաղա-
քական մարդ եմ : Յամենայն դէպս ըսածդ շատ անհաւանական է :
Բաժանում , եւայլն , եղածը ամբողջ պզտիկ կտոր մը հող է . ի՞նչը
պիտի բաժնեն :

Ինքնիրմէ ջղայնացած էր աւելի : Նոյն հարցումն էր , նոյն հա-
նելուկը , որ կը մնար անպատասխան : Եւ հիմա այս բարի , խոնարհ
ու միամիտ բայց հետաքրքիր փորձանքը կը կրկնէր զայն իրեն՝ զինք
աւելի եւս յուսահատեցնելու համար : Մուշեղը ինկած կենդանիի մը
կը նմանէր :

— Կը ներես ,— շարունակեց յետոյ .— ջղայնանալու իրաւունք
չունիմ : Մեր անզօրութեան հետեւանքն էր թերեւս : Դուն կրնաս
հարցումիդ պատասխանել :

— Մէկ լուծում կայ ,— Մուշեղ խօսեցաւ յանցաւոր թոնով
մը : — Արեւմտեան Հայաստանը պէտք է մեզի վերադարձնեն : Միակ
կերպն է : Միայն հոն կրնանք երթալ , միայն հոն ապրելու իրաւունք
ունինք : Ուրիշ որեւէ տեղ ապագայ չունինք :

Առաքելեան, զարմացած կամ հիացած, քննեց սենեակին մէջ երթեւեկող երիտասարդը եւ հաստատեց, թէ խորապէս զգացուած վրդովումի արդիւնք էր անոր արտայայտած միտքը, որ խորքին մէջ այնքան պարզ էր: Անհաւանական կը թուէր, անկարելի — չնաշխարհիկ զաղափար մը — բայց պարզ, արամարանական, նոյնիսկ անխուսափելի: Ինչպէս չէր կրցած ինք տեսնել այս պարզ իրականութիւնը, յանդիլ նոյն եզրակացութեան: Եւ անդրադարձաւ յանկարծ, թէ ինք տարիներու ընթացքին այս զգացած էր միայն, ենթադրատակցարար թերեւս, բայց չէր մտածած երբեք այս մասին: Հարցումը, զոր ուղղեց, անխուսափելի էր թէեւ:

— Ո՞վ պիտի վերադարձնէ:

— Թուրքերը:

Շատ պարզ, բնական պատասխան մը, որ հանճարեղ միտքի կամ խոր վերլուծումի պէտք չունէր: Ամենապարզ իրականութիւնները յաճախ անմատչելի կը մնան սովորական մարդոց, ու միայն չխաթարուած, անաղարտ մնացած երեխաներ կրնան տեսնել զանոնք: Առանց ճիշդի, եւ բնականօրէն: Եւ Մուշեղ, իր միամտութեամբ եւ բարոյական անխախտ համոզումներով, անմեղ երեխայ մըն էր անչուշտ: Բարի, ազնիւ, անկարելի տղայ մը, որ անպայմանօրէն դժբախտ կ'ըլլար օր մը. կամ դէժ՝ հիասթափ: Ժաղ Առաքելեան ատոսաց եւ ըսաւ:

— Իրաւունքը չի արուիր. կ'առնուի: Յաճախ կրկնուած խօսք է ասիկա, բայց իրական է, ճիշդ: Ոչ ոք քեզի երկիր կը վերադարձնէ, եթէ...:

— Պէտք է առնել ուրեմն, — ընդմիջեց Մուշեղ Սարգիսեան. — պայքարիլ, կռուիլ՝ եթէ պէտք ըլլայ: Մեր երկիրն է ի վերջոյ, մեր հայրենիքը:

— Անկասկած:

Երէջը ուրիշ ոչինչ կրցաւ ըսել: Հաստատումը այնքան ճիշդ էր, որ մտածելու պէտք չունեցաւ նոյնիսկ: Ճշմարտութիւնը փաստի չի կարօտիր, խորհեցաւ, եւ որոշեց աշխատանքի լծուիլ: Մովորականէն աւելի կանուխ եկած էր դրասենեակ տեղեկագիրը պատրաստելու համար, եւ այս փորձանքը ժամավաճառ ըրած էր զինք դարձեալ: Բայց հարցուց:

— Ինչպէ՞ս:

— Աղատադրական պայքար պէտք է մղել: Շատ պարզ է: Հայրենիքներ ինչպէ՞ս կ'ազատագրուին: Երկրորդ Համաշխարհային Պատերազմին Փրանսացիները ի՞նչ ըրին, երբ Փրանսան դրաւուեցաւ:

կամ յոյները, արաբները ի՞նչ ըրին, պաղեստինցիները, օրինակի համար:

— Անոնք բոլոր իրենց հողերուն վրայ էին: Իսկ պաղեստինցիները... նոյնպէս իրենց հողին վրայ են վերջին հաշուով: Մեր պարագային՝ ո՞ր պետութիւնը պիտի արտօնէ որ շարժինք եւ իրենց երկիրներուն մէջ յեղափոխութիւն սկսինք:

— Արտօնութեան պէտք չունինք: Մեր բացարձակ իրաւունքն է: Որպէս մարդ...:

— Բայց ուրիշներո՞ւ հայրենիքին մէջ:

— Որպէս մարդ, — ընդհատուած նախադասութիւնը ամբողջացուց Մուշեղ, — ըմբոստանալու իրաւունք ունինք՝ աշխարհի վրայ որեւէ տեղ: Մենք ալ այս մոլորակին բնակիչներն ենք, եւ եթէ իրենք յարմար նկատած են որ այս աշխարհին վրայ երկիր չունենանք, ասիկա իրենց գիտնալիքն է: Մենք ալ մեր գիտցածը կ'ընենք: Ի վերջոյ եթէ իրենց մեզի պարտադրած լուծումը ընդունինք, յեղափոխութեան հարց չունինք արդէն: Արտօնութեան մասին խօսիլը անելորդ է: Իրենք մեղմէ արտօնութիւն առի՞ն, երբ դաւադրաբար մեր հայրենիքը վաճառեցին:

— Այս տեսակ մտածումներով ինչպէ՞ս կը երական պիտի ըլլաս, — կատակեց ժաղ. — կրնաս շատ վտանգաւոր մարդ մը դառնալ:

— Վտանգաւոր: Չեմ հասկնար: Յիսուս ինք յեղափոխական մը չէ՞ր: Ի վերջոյ ինք եւս այն ատեն տիրող անարդարութեան դէմ ըմբոստացաւ: Աստուծոյ թաղաւորութիւնը արդարութեան վրայ հիմնուած է, եւ ոեւէ հաւատացեալ նախ պէտք է արդար ըլլայ. անհրաժեշտութեան պարագային պէտք է պայքարի անարդարութեան դէմ:

— Եթէ քու քարոզելիք Քրիստոնէութիւնը այս պիտի ըլլայ, ըսելիք չունիմ:

— Ես ուրիշ նիւթի մասին կ'ուզէի խօսիլ հետդ, — փորձանքը հանդիստ պիտի չթողուր զինք ըստ երեւոյթին, աշխատելու առիթ պիտի չտար:

— Չխօսի՞ս, — ըսաւ ժաղ, երբ նկատեց որ երիտասարդը կը տատամսէր: Չղջացած էր կարծես ու միտքը չէր ամբողջացուցած. կամ թերեւս բուն ըսելիքը արտայայտելու քաջութիւնը կը կապսէր իրեն:

— Որոշեցի ամուսնանալ:

Անիմաստ ժպիտ մը կար Մուշեղի դէմքին վրայ: Ուրախութիւն էր, թէ մտատանջութիւն: Յամենայն դէպս վրիպած արտա-

յայտութիւն մըն էր, զոր դժուար էր մեկնել, հասկնալ: Տղան խ-
կապէս խեղճ է, խորհեցաւ Առաքելեան, ու յիշեց կրտսեր Սարգիս-
եանի մասին կատարուող յաճախակի ակնարկութիւնները: Թէեւ
հրաժարած էր իր բոլոր արտառոցութիւններէն ու շատ վայելուչ եւ
ուշադրաւորէն ներկայանալի երիտասարդ մը դարձած էր: Իսկ ա-
մենէն ուշադրաւր՝ հօրը դորձին նկատմամբ ցուցարեւած անոր հե-
տաքրքրութիւնն էր: Այս եւս սակայն — որ այնքան ալ զարմանալի
չէր — կը վերադրուէր անհասարակ շիտ կամ տարօրինակ ըլլալուն:
Համալսարան վերադառնալն ու քանի մը ամսուան մէջ ուսումը ա-
ւարտելը եւ իմաստասիրութեան տիրոջ ստանալը նոյնիսկ կը
դասուէր նոյն արտառոցութիւններու շարքին: Բարձրագոյն միջիննով
եւ մասնաւոր յիշատակութեան արժանանալով վկայուած էր, եւ հա-
մալսարանի տնօրէնութեան ուշադրութիւնը կեդրոնացուցած իր
վրայ: Առաջարկած էին զինք Եւրոպա կամ Ամերիկա լաւագոյն հա-
մալսարաններէն մէկուն մէջ ուսումը շարունակելու համար արտա-
սահման ճամբել, բայց ինք անդրդուելի մնացած էր ու մերժած,
պատճառարանելով, թէ հօրը պէտք է օղնէր: Մինչ այդ, թէեւ, էջ-
միածինէն պատասխանի կը սպասէր:

— Ուրեմն կզերական ըլլալէն վերջնականապէս հրաժարած ես:

— Եթէ ամուսնանամ, այո՛:

— Վստահ չե՞ս այսինքն, — շփոթած, հարցուց ժազ:

— Ես վստահ եմ: Կարելորդ իր վստահ ըլլալն է:

— Շուշանի՞ կը:

Հաստատական կերպով գլուխը շարժեց Մուշեղ:

— Այս ամբողջը բացակայութեանս, երկու շաբթուան ընթաց-
քի՞ն եփեցիք, — խորհրդաւոր բայց անմեկնելի արտայայտութիւն մը
ուրուագծուեցաւ Առաքելեանի գէմքին վրայ: — Հեռանալուս կը
սպասէիք:

— Համաձայն չե՞ս, — կրտսերը շիկնեցաւ: — Բայց ըսածդ
ճիշդ չէ: Բան մըն ալ չէ եփած: Շուշան ըսածս կատակի կ'առնէ.
վրաս կը խնդայ նոյնիսկ:

— Ըսել կ'ուզես, թէ ամուսնութիւն առաջարկած ես եւ ինք
մերժած է:

— Կ'ըսէ, թէ ինք պիտի չամուսնանայ, չի կրնար:

— Կնոջական սպիտակութիւն է ատիկա, — խնդաց երբեմնի
ծաղրածուն բայց յետոյ բարձրաձայն մտածեց. — Թերեւս իր պար-
կեշտութեան պէտք է վերադրել: Եթէ քեզ չի սիրեր, բնաւ զարմա-
նալի չէ ըսածը: Շատ փափկանկատ է, պէտք է խոստովանիլ, եւ քեզ

չվիրաւորելու լաւագոյն պատասխանը գտած է:

— Բայց կը սիրէ, վստահ եմ:

— Ի՞նչ փաստ ունիս: Կին արարածը ճանչնալն ու հասկնալը
աշխարհի ամենէն դժուար գործն է: Քու իմաստասիրութիւնդ նոյ-
նիսկ չէ կրցած լուծել այս հարցը:

— Սէրը փաստի չի կարօտիր: Վստահ եմ:

— Քու սիրելի՞ թերեւս: Բայց իր քեզ սիրելուն ինչպէ՞ս կըր-
նաս վստահ ըլլալ:

— Գիտեմ, կը զգամ. — ինքնավստահ կերպով պատասխանեց
Սարգիսեան:

— Փորձեցի՞ր զէթ:

Երիտասարդը յայտնապէս շփոթած, հարցական նայեցաւ խօ-
սակիցին, եւ վերջաւորութեան կմկմաց:

— Ձեմ հասկնար: Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Համբուրեցի՞ր, — պարզօրէն հարցուց ժազ. — փորձեցի՞ր
սիրել զինք եւ անդրադարձը ստուգել, կամ զէթ սերտել, պեղել զգա-
ցածը: Եթէ քեզի հանդէպ բան մը կը զգայ, անպայմանօրէն կը
մատնէ ինքզինք, սրբան ալ դերասանութիւն ընէ: Անկեղծօրէն սի-
րողը՝ սիրուելու, շոյուելու պահանջ կ'ունենայ եւ ուրեմն չի զի-
մազերք. ընդհակառակը՝ ինք կը փափաքի:

— Իրաւունք ունիս: Ըսածդ կը հասկնամ, որովհետեւ ես ճիշդ
նոյնը կը զգամ. փորձով գիտեմ: Բայց ինչպէ՞ս պիտի համբուրէի
զինք: Փափաքը ունեցած եմ. ուզած եմ սիրել, զգուել, համբուրել
զինք, սակայն չեմ համարձակած:

— Ինք ալ կ'ուզէ, վստահ եղիր, եթէ քեզ կը սիրէ անշուշտ:
Այլապէս իմաստ չունի արդէն: Շնորհիւն կ'ըլլայ, Ֆիզիքական հա-
ճոյք, որ սիրողի մը համար նշանակութիւն չունի:

— Ճիշդ ատիկ կը վախնամ: Եթէ սխալ թարգմանէ ըրածս եւ
Ֆիզիքական հաճոյք կարծէ... ինչպէ՞ս պիտի կարենամ ես ինծի
ներել:

Դուրը մեղմօրէն բացուեցաւ եւ Շուշանիկ Բարսեղեան ուրա-
խութեամբ բացականչեց, երբ պաշտօնակիցներուն ներկայութիւնը
հաստատեց:

— Ես ալ կարծեցի որ մարդ պիտի չզտնեմ հոս: Բարեբախտա-
բար ճամբաներն ալ ապահով էին: Բարի եկած ես, — յիշեց յանկարծ
եւ հարցուց. — Ե՞րբ եկար:

— Երէկ իրիկուն: Սոստանակութիւն էր: Մինչեւ տուն հասայ
հոգիս բերանս եկաւ: Սրիկաները... երեւակայեցէք որ բնաւ լուր

չունէի: Ուրեմն երկու օր է գրասենեակը փակ էր: Լաւ որ եկար. աշխարհ մը գործ ունինք:

Մուշեղ անցաւ իր սենեակը ու խանդավառութեամբ պատրաստուեցաւ աշխատելու: Հանգիստ էր հիմա, խաղաղած, եւ աւելի ինքնավստահ: Ժապի ըսածը ճիշդ էր: Պէտք է փորձէր: Ի վերջոյ ի՞նչ կը կորսնցնէր: Ինք վստահ էր արդէն, աչքերը զինք չէին խաբեր: Թերեւս ալ Շուշան ատոր համար չեմ-ու-չեմ կը խաղար եւ աւելի դրական, աւելի համոզիչ փաստի մը կը սպասէր: Իսկ ինք միայն կը խօսէր, ամիսներէ ի վեր խօսած էր միայն, խանդավառուած, ներչնչուած ու երագած՝ մոռնալով, անտեսելով դիմացիներն զգացումները: Ինք իր զգացումներով տարուած էր ու բնաւ չէր մտածած ազնկան մասին: Մինչ ան մեծ ակնկալութեամբ սպասած էր հաւանարար ու յուսախար եղած էր թերեւս: Աղջիկ էր վերջին հաշուով, եւ առաջին քայլը առնողը պիտի չըլլար բնականաբար, մանաւանդ որ դադափարը իրը չէր: Յիմար, ապուշ, ջղայնացաւ ինքնիրմէ: Ո՛վ գիտէ Շուշան ինչ կը մտածէր իր մասին. բնաւ դարմանալի պիտի չըլլար որ իրական ապուշ մը նկատէր զինք, խենթ մը՝ առաւելագոյնը:

Բայց ինք ապուշ չէր, ոչ ալ խենթ: Գիտէր, թէ ամէն մարդ խենթութիւն կը վերագրէր իրեն, ու դադանարար, կողմնակի կը ծիծաղէին երբեմն: Միայն Ժագ կը հասկնար զինք, եւ օր մը օրանց չէր վերաւորած կամ խնդացած վրան: Ընդհակառակն՝ ամենայն լրջութեամբ կը խօսէր հետը, եւ կարեւորութիւն կ'ընծայէր իրեն: Նոյնիսկ այսօր շատ բնական նկատած էր իր ամուսնանալու որոշումը, եւ չէր հարցաքննած զինք կամ առարկած: Հակառակ անոր որ իրաւունք ունէր, որովհետեւ մէկ տարիէն աւելի միայն վարդապետ ըլլալու, ծառայելու մասին խօսած էր անոր: Իրեն համար, թէեւ, հակասական ոչինչ կար ասոր մէջ. կ'ուզէր ծառայել եւ պատրաստ էր կեանքը ամբողջ նուիրելու: Ամուսնութիւնը արդեւ չէր կրնար ըլլալ: Պատահած էր որ սիրած էր ճիշդ այն միջոցին, երբ վերջնականապէս որոշած էր ու սահմանած կեանքին ուղղութիւնը, նպատակը: Ինք չէր ծրարած, ոչ իսկ մտածած էր ազնիկ մը սիրելու մասին, բայց պատահած էր: Ու սէրը, իր փորձառութեամբ, ոչ կարելի էր ընկճել, եւ ոչ ալ արգիլել: Ուրե՞մն:

Յանցաւոր զգաց յետոյ: Երկիրը այս վիճակին մէջ, հայրը լրջօրէն մտահոգուած, անտրամադիր եւ ընկճուած. իսկ ինք անձնասիրաբար իր զգացումներով տարուած էր միայն եւ անտարբեր մնացած էր շուրջը պատահածին: Իրական ողբերգութիւն էր: Պաղեստին-

ցիներուն սահմանուած ճակատագիրը, եւ անխուսափելի աղէտը, որ կը սարսռար երկրին ընդհանրապէս: Եթէ հօրը ենթադրութիւնը ճիշդ էր: Հիմ մը պէտք է ունենար անշուշտ, վստահելի աղբիւրէ քաղած պէտք է ըլլար տեղեկութիւնը: Այլապէս այսքան մտահոգուելու պատճառ չունէր, ոչ ալ իրաւունք: Հայրը նիւթապաշտ ու եսակեղրոն մարդ մը չէր եղած երբեք, որ իր հարստութեան վրայ դողար յանկարծ՝ այսպէս անակնկալօրէն: Գրեթէ այդ վիճակին մէջ էր, ու լուրջ տաղնապի մատնուած: Իսկ ինք սէր կը հորովէր ու երջանկութիւն կ'երարդէր: Մինչ անդին մարդիկ կը մեռնէին, կը սպաննուէին, ու ոմանք իրենց կեանքը կը զոհէին: Ազատագրական պայքար կը մղէին, հոս իսկ, այս երկրին մէջ. իւրաքանչիւրը իր ձեւով, որոշ նպատակի մը համար: Պաղեստինցիները, Լիբանանցիները, ու նոյնիսկ հայերը: Երիտասարդ տղաք, հայ երիտասարդներ բաներ մը սկսած էին ընել, թուցիկներ ցրուել, ինքնաշարժներ եւ թրքական հաստատութիւններ ականահարել: Իսկ ինք կը խօսէր միայն: Սօսքի վարպետ էր, գիտէր: Գիշ առաջ, օրինակի համար, Ժագը հմայած էր իր անմիջական տրամաբանութեամբ, ազատագրական պայքար մղելու գիւտով: Կեանքին մէջ չէր մտածած իսկ այդ մասին, թէեւ անկեղծ էր, երբ կը խօսէր:

Ինք ո՛ւր, ազատագրական պայքարը ո՛ւր: Իսկական յեղափոխական, դադափարի մարտիկ կրնա՞ր ըլլալ. ո՛չ թէ խօսքի վարպետ, այլ նուիրեալ մարտիկ, ուխտեալ յեղափոխական, որ կեանքը զոհելու պատրաստ ըլլար: Կեանքը զոհելու պատրաստ էր, անդադարձաւ յետոյ, բայց ինչպէ՞ս: Այս տարիքին զէնքի մասին դադափար չունէր, եւ պարզ ատրճանակ մը նոյնիսկ չէր տեսած: Գործածելը տարբեր խնդիր: Ձեռքն առնելու քաջութիւն իսկ չունենար հաւանարար: Ձէնքի գործածութիւնը իրենց կրթութեան, իրենց կեանքին մաս չէր կազմած: Իրենց զէնքերը թուղթէ շինուած էին — գիր, գրականութիւն, ուսում, դասագիրք, համալսարան, բժշկութիւն, երկրչափութիւն, անձնական ապահովութիւն, եւ բնականաբար՝ ձուլումի դէմ պայքար, ազգապահպանում, հայրենասիրութիւն: Դժբախտաբար, սակայն այս բոլորը միասնաբար զէնքի մը ոյժը չունէին. ատրճանակ մը շատ աւելի համոզիչ միջոց էր, շատ աւելի զօրաւոր էր քան խօսքը, օրինակի համար: Իսկ Հայութիւնը ամբողջ վաթսուս տարի խօսքի վստահած էր միայն ու հայրենասիրութիւն քարոզած՝ ինքնիրեն առաւելաբար: Փոխանակ աշխարհէն զէնքի ոյժով իրաւունք պահանջելու, ինքնիրեն հայրենասիրութիւն քարոզած էր:

Ուրիշ ի՞նչ կրնային ընել, խորհեցաւ յետոյ: Ինք ի՞նչ կրնար ընել, օրինակի համար: Ահաւասիկ նստած կը մտածէր, պատահաբար անդրադարձած ըլլալով իրականութեան, եւ թերեւս կ'ուզէր բան մը փոխել: Ի՞նչ: Ահամայ ժպտեցաւ եւ անհանգիստ զղաց: Ի՞նչ կրնար փոխել, եւ ինչպէ՞ս: Հօրը առեւտրական հաստատութեան մէջ, զբասեղանի մը ետեւ հանգիստ նստած կ'երազէր, ու կ'ակնկալէր որ հրաչքներ պատահէին հաւանաբար: Իր ստացած դաստիարակութիւնը ասկէ աւելին չէր կրնար իրադործել: Գաղափար իսկ չուներ թէ ի՞նչպէս կարելի էր փոխել ինչ որ կ'ուզէր փոխել: Ի՞նչ կ'ուզէր փոխել յամենայն դէպս — այդ նոյնիսկ չէր գիտեր: Յեղափոխութիւն: Բայց յեղափոխութիւն մը ինչպէ՞ս կը սկսէին: Այս մասին ոչինչ սորվեցուցած էին իրենց դպրոցին մէջ, չէին յիշած իսկ անոր անհրաժեշտութիւնը: Թերեւս կրնար իրեն պէս մտածող տղաք գտնել եւ շարժում մը սկսիլ. հետաքրքրական կ'ըլլար: Իրական շարժում, յեղափոխութիւն, պայքար, կռիւ, գէնք ու զինավարժութիւն, անքուն դիւելներ, դոճողութիւն, ու բնականաբար՝ զինեալ բախումներ թշնամիին հետ: Զինուորական զործողութիւններու կը մասնակցէր, քարոզչական աշխատանքի կողքին, ու մարդուած խումբեր կը մտցնէին Թուրքիա: Ոչ թէ Թուրքիա: Այդ հողամասը Թուրքիոյ կցուած ըլլալով հանդերձ, արուեստականօրէն ստեղծուած այդ երկրին մաս չէր կազմեր: Հազարաւոր տարիներու կեանք ունեցող Հայաստանը յիսուհիսնգ տարուան մէջ չէր կրնար փոխուիլ, հոգ չէ թէ անունը փոխած ըլլային: Հայկական լեռնաշխարհը հայ ժողովուրդի դարաւոր հայրենիքն էր, ուր ապրած էին հայերը չորս հազար տարիէն աւելի — աշխարհի վրայ միակ տեղը, որ իրենց կը պատկանէր, կամ իրենք կը պատկանէին անոր: Պարզօրէն՝ Հայոց հայրենիքն էր, Հայոց երկիրը: Եթէ միայն կարենար այդ տղոց հետքը գտնել: Գաղանի կազմակերպութիւն մը կազմուած էր արդէն, յիշեց յետոյ եւ աւելի զարկ տուաւ երեսակայութեան:

*
**

— Ի՞նչ է այս կացութիւնը, — ժառ հետաքրքրուեցաւ, երբ սովորական ժամուն մտաւ Պր. Սարգիսեանի սենեակը իրենց առօրեայ խորհրդակցութեան համար:

— Շատ գէշ: Եւ հետեւանքն ալ շատ աւելի գէշ պիտի ըլլայ: Ասիկա սկզբնաւորութիւնն է:

— Ինչպէ՞ս այսինքն:

— Պատահական դէպք մը չէր եղածը: Կանխամտածուած արարք էր, վստահ եմ: Լաւապէս պատրաստուած, ծրարուած... Իրենց պատրուակ մը պէտք էր, առիթ մը: Եթէ Կիրակի օրուան եկեղեցւոյ պատրուակը չըլլար, ուրիշ օր մը ուրիշ պատրուակ մը պիտի գտնէին եւ անպայման պիտի ընէին իրենց ընելիքը:

— Ըստ երեւոյթին պաղեստինցիները նոյնքան մը պատասխանատու են: Իրենք զրգոած են, տօնակատարութիւնը խանգարել փորձելով:

— Անհաւանական չէ, — վերապահութեամբ արտայայտուեցաւ Արամ Սարգիսեան. — բայց ատիկա պատճառ մը չէր որ ջարդ կազմակերպէին: Եթէ պատրաստուած չըլլային այս տեսակ հետեւանք չէր կրնար ունենալ: Եկեղեցական արարողութեան ընթացքին այդ զնդացիները ուրիշ՞ մէջտեղ ելան:

— Բայց ինչո՞ւ: Ի՞նչ պատահեցաւ յանկարծ:

— Յորդանանի մէջ պատահածը կը յիշես: Բայց հոս չէիր, Հայաստան էիր այն ատեն. լսած կ'ըլլաս թէ եւ: Նոյնը հոս պիտի փորձեն ընել եւ պաղեստինցիներու զործունէութեան վերջ տալ:

— Կառավարութիւնը դեր ունի՞ ասոր մէջ:

— Չեմ խորհիր: Լիբանանի մէջ կացութիւնը տարբեր է: Եթէ հոս պետութիւնը փորձէ նման քայլ մը առնել, աշխարհ տակնուվրայ կ'ըլլայ... տարակարծութիւն կը ստեղծուի եւ ներքին հարցերու դուռ կը բանայ: Մի մոռնար որ Լիբանանի բնակչութիւնը միատարր չէ. իսլամ, քրիստոնեայ, զանազան փոքրամասնութիւններ, ներքին հակամարտութիւններ:

— Չեն կրնար յաջողիլ ուրեմն, — ժառ վճռեց: — Պաղեստինցիներուն, պաղեստինեան դիմադրութեան հետ չեն կրնար չափուիլ: Ճարահատ մարդիկ են, եւ մեր ենթադրածէն շատ աւելի զինուած են:

— Իշուն պոչը հոն պահուած է արդէն: Փաղանգաւորները հաշտ աչքով չեն կրնար դիտել այս ամբողջը անչուշտ, եւ կ'ուզեն օր առաջ վերջ տալ պաղեստինցիներուն երկրին մէջ ստեղծած անհաւասարակչութեան:

— Դժուար: Շատ ուշ է:

— Ճիշդ ատոր համար վտանգաւոր է կացութիւնը, որովհետեւ փաղանգաւորները նոյնպէս սկսած են զինուիլ: Թէեւ ուշ, սակայն լուրջ կերպով աշխատանքի լծուած են եւ իրենց երիտասարդութիւնը կը մարզեն: Վստահելի աղբիւրէ իմացած եմ:

— Անհաւատալի է: Փաղանգաւորները... քաղաքական կուսակցութիւն մը ինչպէ՞ս կրնայ յանկարծ զինեալ ոյժի վերածուիլ եւ

պատերազմելու սկսիլ: Ասիկա պատերազմ կը նշանակէ, իսկ լիբանանցի երիտասարդը, մանաւանդ քրիստոնեայ զարդացած դասը այդ տեսակ բանի ատակ չէ: Հանդիստ, փափուկ, խաղաղ կեանքի եւ վայելքի վարժուած երիտասարդութիւն է:

— Բարին Աստուծմէ, — մըթմըթաց երէցը. — մեզի չի վերաբերիր անշուշտ, բայց չենք կրնար անտարբեր մնալ: Այս երկրի հրապատակներն ենք, ու որքան ալ խօսք չունենանք, մեր ճակատագիրը իրենց կապուած է: Ամենէն աւելի մենք կրնանք վնասուիլ եւ կորսընցընել մեր բոլոր ձեռք բերածները: Այս երկրին մէջ վայելած մեր ազատութիւնը ուրիշ ոչ մէկ տեղ կրնանք դտնել. դպրոց, եկեղեցի, մամուլ, դրականութիւն, թատրոն, կուսակցական եւ քաղաքական ազատ գործունէութիւն... մեր սեպհական երկիրը ըլլար կարծես: Սփիւռքի մէջ Լիբանանի ստացած կարեւորութիւնը պատահական չէ: Դիպուածով չէ որ վերջին քսան տարուան ընթացքին մեր ազգային եւ մշակութային կեանքի կեղորոնը դարձած է:

Լուսն եւ փորձեց կեղորոնանալ: Քանի օր է, թէեւ, իր բնական եւ հաւասարակշիռ դատողութիւնը կորսնցուցած էր: Ձէր կրնար մշտածունմները դասաւորել սովորականին պէս եւ եզրակացութիւններու յանգիլ: Արոշումներ առնել եւ գործադրութեան անցնիլ: Ի՞նչ պիտի պատահէր. խաղաղութիւնը պիտի վերահաստատուէ՞ր արդեօք եւ մարդիկ բնականօրէն իրենց գործն ու կեանքը պիտի կարենային շարունակել, թէ կացութիւնը պիտի վատթարանար: Եւ ի՞նչ պէտք է ընէր այդ պարագային: Պէ՞տք է հարստութիւնը երկրէն դուրս հանէր: Բայց ինչպէ՞ս: Դրամազլուին ու հարստութիւնը ամբողջ անշարժ կալուած էր կամ վաճառելի ապրանք:

— Նոր ապսպրանքներ ըրի՞ր, — հարցուց յանկարծ:

— Բաւական: Հետաքրքրական նորութիւններ կային, անհաստատիօրէն յարմար դիներով: Առիթ էր, մանաւանդ որ ապրանքը մեր շուկային համար բացարձակ նորութիւն է: Առանց գժուարութեան կրնանք սպասել եւ ժամանակի ընթացքին ներկայացուցչութիւնը առնել: Մարդիկ պատրաստ են ամէն դիւրութիւն տալու, նոյնիսկ րեկլամի ծախսերը հոգալու:

— Ապրանքին որա՞ կը:

— Առաջին կարգի, — ժազ խանդավառ ընդմիջեց: — Գերմանականին հետ շատ դիւրութեամբ կը մրցի՝ թէ որակով, թէ դիւնրով: Ֆրանսական ֆրանքի եւ գերմանական մարքի տարբերութիւնը մեծ դեր պիտի ունենայ անշուշտ: Եւ շատ աւելի զանազանութիւն ունին, որ ինքնին առաւելութիւն մըն է:

— Այո՛, — հաստատական կերպով դուրսը շարժեց Արամ Սարգիսեան: — Յուսանք միայն որ աշխարհ տակնուվրայ չ'ըլլար:

— Շատ յոռետես կ'երեւիք:

— Լսածներս շատ քաջալերական չեն: Այս տարիքէս ետք տարածուելու, գործը ընդարձակելու իրաւունք չունիմ, եթէ նոյնիսկ երկրի պայմանները լաւ ըլլային: Դուն չըլլայիր, դիտե՛ս, ասկէ տարի մը առաջ արդէն հաստատութիւնը ծախելու մասին սկսած էի մտածել: Բարեբախտաբար քեզի կրնամ վստահիլ, ու Մուշեղն ալ մէկ օրէն միւսը փոխուեցաւ... բայց: Այս ամբողջը տարբեր բան է, եւ անկեղծօրէն՝ մտահոգ եմ: Անձնական չէ միայն մտահոգութիւնս. աւելի հաւաքական է: Մեր վիճակը ի՞նչ պիտի ըլլայ, եթէ բան մը պատահի, եթէ իսկապէս բռնկի կացութիւնը:

— Կը հասկնամ, բայց այդքանը չափազանցութիւն է կարծեմ, — սկսեց արտայայտուեցաւ Ժազ, որովհետեւ Մարդուն մտաւախութիւնը իրն էր նաեւ, եւ ինք աւելի յոռետես էր նոյնիսկ: Բայց պարտականութիւն համարեց վերապահութիւն արտայայտել եւ լատես երեւիլ:

— Յակոբ, ես տարադրութիւն, ջարդ եւ աքսոր տեսած մարդ եմ: Լաւ եւ դէշ օրեր ապրած եմ, երկու համաշխարհային պատերազմ տեսած եմ, ու դիտեմ, թէ քաղաքականութիւն կոչուածը ի՞նչ զզուելի բան է: Այդ սրիկաները կշտանալ չեն դիտեր... քիթս լաւ հոտեր չ'առնեմ յամենայն դէպս: Յուսանք որ ես կը սխալիմ, — անզգալաբար աւելցուց յետոյ Պր. Սարգիսեան եւ զարմանալի կերպով ժպտեցաւ:

— Կ'ուզէ՞ք, ապսպրանքները կեցնենք:

— Ոչ, ո՛չ, կեանքը պէտք է շարունակուի. չի կրնար կենալ, եւ պէտք չէ՛ կենայ:

— Լման տեղեկապիւրը այս երկու օրուան մէջ կը պատրաստեմ: Մինչ այդ դիպուած գործերս ալ պէտք է կարգի դնեմ, դասաւորեմ ու կրցածիս չափ մաքրեմ ամէն ինչ: Ըլլալիք բաւական աշխատանք կայ. մանր մունր գործեր, յանձնուելիք ապսպրանքներ, դիտէ՛ք:

— Պէտք եղածը դիտցածիդ պէս ըրէ: Յուսահատելու իրաւունք չունինք, ինչ ալ ըլլայ:

*
**

Կէսօրուան ճաշի դադարին Մուշեղն ու Շուշանիկը միասին դուրս ելան, ինչպէս կը պատահէր յաճախ վերջերս, ու քալեցին դէ-

պի կեղրոնական շուկան, Պապ Իտրիսի ուղղութեամբ: Կապոյտ գծաւոր չըջազգեստը մասնաւոր հմայք մը տուած էր աղջկան, ու թերեւս նաեւ դեր ունէր անոր բացառիկ տրամադրութիւն ունենալուն մէջ այսօր: Գարնան պէս ուրախ էր եւ պայծաս, ու կը շողշողար ճիշդ ապրիլեան արեւին պէս, որ ողողած էր փողոցները: Ընդհանուր մթնոլորտը, թէեւ, փողոցներուն մէջ, զգալիօրէն ճնշիչ էր: Արտակարգ, անսովոր հանդարտութիւն մը կար, տեսակ մը զգուշութիւն, որ վարակած էր բոլոր անցորդները անխտիր: Միակ բացառութիւնը Շուշանիկն էր:

— Շատ ուրախ ես այսօր, — աղնարկեց Մուշեղ, ներքնապէս գոհ եւ նոյնիսկ երախտապարտ:

— Կը պատահի: Դժգոհ ես:

— Ընդհակառակը: Կապոյտը շատ կը վայլէ քեզի, դիտե՞ս:

— Շնորհակալ եմ, — բարի հեղնանք կար աղջկան արտայայտութեան մէջ: — Այս տեսակ բաներ կը նկատե՞ս եղեր:

— Միասին ճաշե՞նք, — հարցումը հաստատական, ինքնավրատահ շեշտ մը ունէր:

Շուշանիկ պատասխանելու հարկ չզգաց, որովհետեւ իր ալ փափաքն էր ատիկա, ու վստահ էր, թէ Մուշեղ կը հասկնար: Կուսած էր արդէն:

— Ժազին ամէն ինչ յայտնեցի, — ըսաւ Մուշեղ, երբ ճաշարանին մէջ իրենց նախընտրած սեղանը դրաւեցին, պատշգամին վրայ բացուող պատուհանին կից:

— Ի՞նչ յատնեցիր, — աղջիկը հարցական նայեցաւ սեղանակիցին, որ ուշադրաւ երիտասարդ մը դարձած էր:

— Մեր մասին: Պօսեցայ իրեն:

— Իրական խենթ ես եղեր: Ի՞նչ ըսաւ, — Շուշանիկ հետաքրքրութիւնը չկրցաւ զսպել սակայն:

— Թեւադրեց որ համբուրեմ քեզ, — անմեղօրէն պատասխանեց երիտասարդը:

— Ան քեզմէ աւելի խենթ է արդէն: Բայց ինչո՞ւ պէտք է համբուրես եղեր, ըստ իրեն:

— Որպէսզի քեզ սիրելիս փաստեմ:

— Դուն քեզի՞, թէ ինձի համար:

Մուշեղ Սարգիսեան շփոթեցաւ, անդրադառնալով միաժամանակ, թէ ճշգրիտ կերպով չէր թարգմանած ժազի միտքը: Ի վերջոյ ինք յայտնած էր անոր, թէ Շուշանիկ կատակի կը վերադրէ ամբողջ եղածը, եւ ան թեւադրած էր որ աւելի դործնական ըլլար եւ անձամբ

հաստատէր, թէ կը սիրէր զինք կամ ոչ:

— Ըսածս կատակի կ'առնես միշտ, — ըսաւ յետոյ:

— Լըջացի՛ր, — շարաճճի ժպիտը երեւցաւ աղջկան դէմքին դարձեալ: — Քեզի քանի անգամ ըսի որ այդ մասին չխօսիս: Մարդիկ զիրար կը սպաննեն, իսկ դուն...:

— Ատիկա պատճառ մը չէ որ քեզ չսիրեմ: Մեր հետ ի՞նչ կապ ունի: Նախընտրելի է սիրել, քան պատերազմել:

— Ո՞ր ըսածիդ կ'ուզես որ հաւատամ: Օր մը կ'ուզես վարդապետ ըլլալ, օր մը ամուսնանալ. ուրիշ օր մըն ալ կրնաս նոր զիւտ մը ընել:

— Դուն չըլլայիր, ամուսնանալու մասին պիտի չմտածէի երբեք: Քեզ անկեղծօրէն չսիրէի... Ի՞նչ ամուսնութիւն, ի՞նչ բան: Ես չծրագրեցի ի վերջոյ:

— Սիրողը անպայման պէտք է ամուսնանա՞յ:

— Չեմ դիտեր, — լըջօրէն պատասխանեց Մուշեղ: — Ամուսնանալը կարելոր չէ անշուշտ. բայց... ըսել կ'ուզես, թէ ազատ սիրո՞յ կը հաւատաս:

— Ի՞նչ է տարբերութիւնը: Եթէ որոշես անձի մը հետ ապրել, ամուսնացած կ'ըլլաս արդէն:

— Երբեմն իսկապէս կը դարձացնես զիս: Ես կը կարծէի որ ազատ սիրոյ դէմ ես:

— Չըսի, թէ համաձայն եմ, — Շուշանիկ փորձեց տրամաբանել, ինք եւս շփոթած: — Նախընտրելի է ամուսնանալ, բնական է, եթէ սիրած ես եւ կ'ուզես սիրածիդ հետ ապրել: Պայտասակուելու կամ շարձարուելու ի՞նչ պէտք ունիս:

— Ուրե՞մն:

— Բայց դուն երեխայ ես դեռ:

— Գրեթէ նոյն տարիքը ունինք: Քսանչորս տարեկան եմ արդէն, ու դուն ալ՝ ըսենք քսանվեց:

— Մարդուն հասունութիւնը տարիներով չի չափուիր, — բացատրեց լըջացած քարտուղարուհին, — այլ փորձառութեամբ: Դուն այնքան միամիտ ես, այնքան անփորձ, անմեղ: Իմ մասին ի՞նչ զիտես: Չիս չես ճանչնար իսկ: Ոչ անցեալս, ոչ ընտանիքս, պարագաներս, չըջանակս, ազգականներս:

— Կը սխալիս: Քեզ կը ճանչնամ: Խեղք ունիմ, աչք, դիտելու եւ դանադանելու կարողութիւն: Քեզ կը սիրեմ, ճիշդ է, բայց կը հաւնիմ նաեւ: Շատ լաւ յատկութիւններ ունիս: Հայրս նոյնիսկ կը հաւնի քեզ, կը դովէ. ու հայրս զիւրին-զիւրին մարդ չի հաւնիր: Հա-

մաճա՞յն ես : Աշխատասէր ես , լուրջ , գիտակից , պատասխանատու . . . մի ընդմիջներ . զոհարերուող : Անպայման պէտք է պարագանե՞րդ ճանչնամ : Ի՞նչ պիտի փոխէ իրականութենէն . ժամանակը կու դայ , կը ճանչնամ . բայց չեմ կարծեր որ ատիկա քու անձիդ վրայ անդրադարձ ունենայ , կամ աւելի ճիշդը՝ իմ մէջն բան մը փոխէ քեզի նկատմամբ , եթէ նոյնիսկ ծնողքդ . . . տարբեր մարդիկ ըլլան :

— Իմ մասին ոչինչ գիտես , — պարզօրէն կրկնեց Շուշանիկ , բայց բացատրելու հարկ չգրաց :

— Ի՞նչ պէտք է գիտնամ :

— Թերե՞ւս ուրիշ մը սիրած եմ անցեալին :

— Ոճի՞ր է , — անկեղծօրէն զարմացաւ Մուշեղ . — չատ բնական է , մարդկային :

— Ձե՞ս նախանձիր :

— Եթէ ներկայիս սիրէիր , թերեւս :

— Ի՞նչ գիտես , թէ չեմ սիրեր :

— Քեզ կը ճանչնամ ըսի :

— Իսկապէս երեսայ ես եղեր :

Այդ իրիկուն , թէեւ , երբ Մուշեղ երեսայի մը անմեղութեամբ համբուրեց զինք զրատենեակին մէջ , Շուշանիկ փաթթուեցաւ անոր ու զգուեց , սիրեց՝ ճիշդ այնպէս , ինչպէս կը սիրեն մանուկ մը : Ու փորձեց յուզումը ծածկել սակայն , չմասնել ներքին խռովքը :

— Հիմա համոզուեցա՞ր որ քեզ կը ճանչնամ , — ուրախութեամբ հարցուց երիտասարդը յետոյ :

Շուշանիկ Բարսեղեան , զուարճացած , ժպտեցաւ միայն , փոխանակ պատասխանելու եւ ուզեց վայրկեան առաջ դուրս ելլել հոնկէ , կեղբոնանալ , մտածել : Այսքան ուրախ , այսքան երջանիկ ըլլալու իրաւունք չունէր : Երջանի՞կ կը զգար , թէ յուզուած էր պարզօրէն : Ճիշդ է , թէ տարօրինակ կերպով կը սիրէր այս խենթը — կարելի չէր չսիրել զինք — բայց յուզուած էր հիմա աւելի , քան թէ սիրային զգացումներով տարուած : Մոլորական իմաստով սէր մը չէր ասիկա իրեն համար վերջին հաշուով , ու չէր գիտեր նոյնիսկ , թէ ինչ կը զգար : Սէ՞ր : Անշուշտ : Տարօրինակ սէր մըն էր թէեւ , անբարունելի , իրեն անձանութ , նոր զգացում մը : Արամը այսպէս չէր սիրած մինչդեռ : Աւելի բուռն կերպով փարած էր անոր , գերին դարձած դրեթէ , բայց այս կարգի զգացում չէր ունեցած երբեք : Հանդարտեցնող , ազնուացնող , վստահութիւն ու խաղաղութիւն ներշնչող զգացում էր ասիկա , եւ ոչ թէ սիրային տենդ : Բայց իրաւունք չո՞ւնէր , այսքան բախտաւոր ըլլալու իրաւունք չունէր . արժանի չէր :

Յանցաւոր պիտի զգար միշտ , գիտէր , եւ պիտի չկարենար ներել ինքնիրեն :

Մանաւանդ՝ պիտի չկարենար Մուշեղը խաբել , պիտի չուզէր խաբել : Եւ ինչո՞ւ : Ի՞նչ իրաւունք ունէր այսքան բարի եւ ուղղամիտ երիտասարդ մը իր յիմարութիւններուն զոհը դարձնելու : Արամի նման սրիկաներու մեղքը անմեղ ու միամիտ երիտասարդնե՞ր պէտք է քուէին : Անկարելի էր : Ինք տառապած էր , դառնացած բայց վերջաւորութեան հաշտուած էր իր ճակատագրին հետ եւ ընդունած իրեն վիճակուած առանձնութիւնը : Վիրաւորանքը : Այնքան անակնկալ եւ ծանր եղած էր վիրաւորանքը , որ ամիսներ շարունակ չէր կրցած սթափիլ հարուածին ուժգնութենէն , ու ճիշդ ցաւազարի մը կամ լուսնոտի մը պէս՝ տարբեր , անիրական աշխարհի մը մէջ ապրած էր : Ու լրջօրէն մտածած էր անձնասպանութեան մասին — բացարձակ առանձնութեան մէջ , լքուած , անմխիթար — բայց քաջութիւնը պակասած էր իրեն : Բարեբախտաբար զգացական չէր եղած երբեք ու վաղ տարիքէն , կը յիշէր , դատողութիւնը միշտ իշխած էր զգացումներուն վրայ . եւ այն ասան ալ արամարանութիւնը յաղթանակած էր ի վերջոյ եւ զինք փրկած , դուրս քաշած էր յուսահատութեան անդունդէն :

Յետոյ սորված էր ապրիլ վերստին , վերածնած էր պարզօրէն , ու բոլորովին նոր աչքերով գիտած էր աշխարհը , որ հիմնովին փոխուած էր իրեն համար : Աւելի իմաստուն դարձած էր , ներողամիտ բայց ինքնամփոփ : Առաջուան պէս չէր խնդար կամ կատակէր , ու կը խրբուէր ամէն կարգի մտերմութենէ : Իրականութեան մէջ ոչ ոքի հետ կրցաւ մտերմանալ ատկէ ետք եւ խուսափեցաւ իր ամենէն մօտ եւ անկեղծ ընկերուհիներէն նոյնիսկ : Ոչ մէկուն կրցաւ կամ ուղեց խօսիլ , ոչ իսկ մօրը , որ պիտի չհասկնար զինք բնականաբար , ու դատապարտէր նոյնիսկ թերեւս : Եւ այսպէս՝ իր տառապանքը սեպհական մենաշնորհ մը եղաւ , եւ ժամանակի ընթացքին վերածուեցաւ դառնութեան : Փորձեց այս դառնութիւնը եւս հաւասարակշռել իր մէջ , չէզոքացնել զայն , բայց դատողութիւնը ձախողեցաւ այս պարագային , չկրցաւ իր բարեբար դերը խաղալ : Ճիշդ սակայն յաջողեցաւ գէթ վրէժխնդրութեան զգացումը հակակշռի տակ պահել եւ խնայել իրեն հաւանական անկում մը , ստրկացում մը : Ու փրկուած էր այդ կերպով :

Եւ այսօր կարծես հարիւրաւոր տարիներու հեռաւորութենէն կը դիտէր իր նախկին անձը , ու կը զարմանար : Հետաքրքրական , ուրախ եւ լաւատես աղջիկ մըն էր , քիչ մը անխելք ու պարծենկոտ : Ունայնամիտ : Իր աղջիկ ըլլալը , իզականութիւնը առաւելութիւն մը նը-

կատած էր միշտ ու գերադաս զգացած ընդհանրապէս : Աստուած զինք
կին ստեղծած էր, ու վաղ տարիքէն այս զիտակցութիւնը հպարտու-
թիւն պատճառած էր իրեն : Բնական էր, ուրեմն, որ երիտասարդներ
դասնային շուրջը եւ մեծարէին զինք՝ ուշադրութեան արժանանալու
տակնալութեամբ անշուշտ : Արամ այս երիտասարդներէն մէկն էր —
այդքան : Սակայն յետոյ աւելի յաճախ սկսած էին հանդիպիլ, հակա-
ռակ անոր որ ինք կը շարունակէր անտեսել զինք, չարչարել : Տղուն
իրեն հանդէպ ունեցած տկարութիւնը հաճոյք կը պատճառէր, կը
վերահաստատէր իր գերադասութիւնը : Բարձրահասակ, սեւ խոշոր
աչքերով ու թաւ յոնքերով, համակրելի երիտասարդ բըն էր այն ա-
տեն : Ինք աշխատելու սկսած էր արդէն, հարկադրուած ըլլալով հա-
մալսարանական ուսումը կիսաւարտ թողուլ եւ օգնութեան հասնիլ
հօրը, որ տարիներու ընթացքին հազիւ կրցած էր ընտանիքը սպրե-
ցընել : Վարպետ դերձակ էր, բայց սեպհական դերձակատուն մը չէր
կրցած ունենալ երբեք, ու մնացած էր ամասկանաւոր պաշտօնեայ, եւ
ընականարար նիւթական դժուարութեան մէջ եղած էր միշտ : Ընտա-
նիքին անդրանիկ գաւակը ըլլալով, իրեն բաժին ինկած էր պատաս-
խանատուութեան բեռը մասամբ վերցնել, երբ վերջին տարիներու
կեանքի սղութիւնը խախտած էր իրենց նիւթական նուազագոյն ա-
պահովութիւնն իսկ : Արամ համալսարանը կ'աւարտէր այդ տարի, եւ
որոշած էր արդէն Ամերիկա մեկնիլ մասնագիտանալու համար : Ու-
նեւոր ընտանիքի գաւակ, իրեն նման պարտաւորութիւններ չունէր, եւ
կրնար նոյնիսկ ամուսնութեան մասին մտածել : Եւ փաստօրէն ամուս-
նութիւն առաջարկած էր, հանգիստ եւ երջանիկ, ապահով կեանքի մը
հեռանկարը խոստանալով իրեն : Ելեկարադիտութիւն ուսած էր, եւ
Միացեալ Նահանգները միտակ երկիրն էր ուր մասնագիտութիւնը կըր-
նար կատարելագործել : Երկու տարի ետք կը վերադառնար եւ կը
պսակուէին : Շատ պարզ էր :

Համոզած էր զինք, կամ ինք ուզած էր համոզուիլ, եւ ատկէ
ետք իրենց յարաբերութիւնը կիսապաշտօնական բնոյթ ստացած էր :
Արամ ծնողքին ներկայացուցած էր զինք, ու երբեմն միասնաբար այ-
ցելած էին անոնց, Շատարեւեաններուն : Հարազատի մը նման ընդու-
նած ու սիրած էին զինք ու քաջալերած որ աղատ զգայ տան մէջ : Հայ-
րը, Արմենակ Շատարեւեան, պատկառազրու մարդ մըն էր — ծայր
աստիճանի բարեկիրթ, քաղաքավար բայց հպարտ եւ ինքնապատահ
նահապետ մը — որ Լիբանանի հայ իրականութեան մէջ ճանչցուած
էր ու հանրածանօթ որպէս ազգային անձնաւորութիւն : Ինք այդ ըն-
տանիքին հարսը պիտի ըլլար, տան մէկ անդամը : Բաւարարուած էր

եւ ինքնիրմէ դո՛ւ : Յաղթանակ մը տարած էր, ինքզինք յարմարագոյն
կերպով տեղաւորած : Ատկէ ետք իսկապէս սկսած էր սիրել Արամը
ու ենթարկուիլ անոր բոլոր քմահաճոյքներուն : Գերին դարձած էր
պարզօրէն : Գերերը շրջուած էին, ու մինչ Արամ աւելի ինքնապատահ
եւ պահանջկոտ դարձած էր, ինք օր ըստ օրէ տկարացած էր եւ անձ-
նատուր եղած ժամանակի ընթացքին : Վերջաւորութեան ան կ'իշխէր
եւ ինք կ'ենթարկուէր միայն՝ կորսնցուցած ըլլալով իր գերադասու-
թեան զգացումը : Ի վերջոյ անկեղծօրէն կը սիրէր այդ տղան, ու սէ-
րը — անշուշտ — հաշիւ չէր ճանչնար, չէր ընդուներ :

Իսկ վերջին շարաքներուն, Արամի Ամերիկա մեկնելէն առաջ,
բոլորովին կորսնցուցած էր ինքզինք ու մասնած տկարութիւնը իր
յաճախակի պոսթիւկով, զգացական զեղումներով եւ անզուպիլ
արցունքներով :

Գ.

Յունիսը եկած էր արագահարուածներու շփոթով : Մայիս ա-
միսը համեմատաբար խաղաղ անցած էր, ու լիբանանցիները, թէ եւ
թերահաւատութեամբ ընկալած էին այդ խաղաղութիւնը, վերադար-
ձած էին իրենց առօրեայ կեանքին եւ սկսած էին շնչել վերստին : Սա-
րուսիկ խաղաղութիւն մըն էր արդարեւ, եւ ամէն մարդ զիտէր, թէ
կողմերը կազմ ու պատրաստ կը սպասէին առաջին ազդանշանին : Զին-
եալ երիտասարդներ կ'երեւէին փողոցներուն մէջ յաճախ, իրենց վը-
րայ կեդրոնացնելով ուշադրութիւնը քաղաքացիներուն, որոնք բնադ-
դական խորամանկութեամբ կը փորձէին անտարբեր երեւիլ ու չնկա-
տել հիմնական այս փոփոխութիւնը մայրաքաղաքին մէջ : Ու թէ եւ
ցերեկը քաջաբար կը շրջադայէին այս կամ այն փողոցին ու քաղաքի
զանազան շրջաններուն մէջ, զիտէին սակայն, թէ ապահովութիւն չը-
կար այլեւս երկրին մէջ : Որովհետեւ զրեթէ ամէն զիշեր, առանց
բացառութեան, կը լսէին զէնքերու տրաքոցը, հեռաւոր թաղամա-
սերէն իրենց հասնող պայթումներու խլացնող ազմուկը ու սուրացող
ինքնաշարժներու սարսափ եւ ահ սփոթող կաղկանձը :

Շարաթ զիշեր էր, ու Գեղամ Տարօնեան համբերութեամբ կը
սպասէր որ լսէին զէնքերը եւ ինք կարենար դուրս գալ Սեդրակ Պաղ-
տասարեանի տունէն, ուր կը գտնուէր ժամերէ ի վեր՝ հարկադրա-
բար : Ու կը ձանձրանար : Ակամայ հետեւած էր հոն հաւաքուած երի-

տասարդներու զրոյցին, մինչ Սեդրակ բազկաթուռի մը մէջ ընկողմանած, վարած էր վիճաբանութիւնը: Քանի մը շարաթը անգամ մը ներկայ կը գտնուէր անոնց հերթական հանդիպումներուն, ու կը ճանչնար արդէն տղաքը բոլոր: Խանդավառ ու նուիրուած պատանիներ էին — իրենց խանդավառութեամբ գէթ — կամ երիտասարդներ, որոնք Սեդրակի առաջնորդութեամբ կազմած էին շարաթաթերթին շրջանակ կոչուածը: Թէ ինչու՞ չէր գիտեր, ու չէր հետաքրքրուած իսկ: Իրեն համար յաւելեալ տագնուկ էր, անտեղի պատասխանատուութիւն, թէ եւ անուրանալի կերպով օգտակար կ'ըլլային թերթի ցրուումին եւ առաքման աշխատանքներուն:

Ու հիմա ծուղակը ինկած կը սպասէր, մինչ Տիկ. Պաղտասարեան կը շարունակէր շաղակրատել ու հիւրասիրել զինք: Շնորհալի ու տանտիրին, շատ աւելի համակրելի կ'ըն մը պիտի ըլլար, եթէ ինչպէր ինքնիրեն եւ ուրիշներուն, եւ նուազ խօսէր՝ մանաւանդ հանդիպումներու ընթացքին: Հազիւ քսանհինգ տարեկան աղջիկ մըն էր, սակայն քառասունը անց ու բանգէտ անտեսուհի մը տալուորութիւնը կը թողուր: Իսկ Գեղամ ստիպուած էր քաղաքավար ըլլալ եւ հանդուրժել, յուսալով որ ամուսինը օգնութեան կը հասնէր ի վերջոյ եւ կը փրկէր զինք: Բայց Սեդրակ ինքնազու՞ վիճակի մէջ վերացած, մատներով ցանցառ մօրուքը կը սանտրէր, կը շոյէր, կ'ոլորէր անընդհատ, ու կը ժպտէր: Ըստ երեւոյթին գոհ էր տիկնոջ հիւրասիրութենէն, կամ այդ օրուան հանդիպումէն: Իսկ ինք գիշերուան այդ ժամուն պէտք է միւս կողմ անցնէր տակաւին ու հասնէր տուն, եթէ բախտաւոր ըլլար անշուշտ: Քաղաքը կողմերու բաժնուած էր արդէն, գէթ մայրաքաղաքի բնակիչներուն միտքին մէջ, եւ ինք եւս նոյն տրամաբանութեան ենթակայ էր հիմա: Միւս կողմը Պէյրութի արեւմտեան շրջանն էր, ուր կը բնակէին իրենք, իսկ ինք կը գտնուէր արեւելեան շրջանին մէջ, Հայաչէն կոչուած թաղամասին բարձունքին:

— Ինչո՞ւ չես խմեր, — խօսակցութիւնը ընդհատելով, հարցուց յանկարծ Մարալ Պաղտասարեան:

— Խմելու տրամադրութիւն ձգեցի՞ն: Դեռ պէտք է մինչեւ տուն քշեմ:

— Այս ժամէն ե՞տք: Խոհեմութիւն չէ: Այս գիշեր հոս կը մնաս. մինչեւ վաղը Աստուած ողորմած է:

— Ո՞ւր պիտի երթաս, — Սեդրակ սթափեցաւ եւ վճռականօրէն խօսեցաւ. — Հոս կը մնաս: Անկողին մը կ'ընանք տրամադրել քեզի, — ժպտեցաւ, — եթէ մեր համեստ տունը ուղես պատուել անշուշտ: Հանդիստ սրտով կը խմենք ու կը խօսինք:

Համեստ տունը շատ սուղ ու ճաշակաւոր կահաւորում մը ունէր, ինչպէս նաեւ ճոխ սեղան մը եւ առատ խմիչք: Փորձութիւն էր: Բայց Գեղամ հանդիստ չէր զգար՝ պարզօրէն որովհետեւ չուայլօրէն կահաւորուած տուներու մթնոլորտին վարժ էր: Այլապէս ալ մթնոլորտը հաշտ չէր իրեն, ու կը նախընտրէր վիճակուն մը մէջ խմել յամենայն դէպս, քան հոս: Իր սեպհական տան մէջ իսկ հանդիստ չէր զգացած երբեւիցէ, իսկ հոն խմելը՝ անկարելի, անխմաստ ժամախաճառութիւն նկատած էր:

— Սքանչելի տղաք են, չէ՞, — Սեդրակ կրկնեց իր յանկերզի վերածած հարցումը կամ հաստատումը:

Գեղամ Տարօնեան պատասխանելու հարկ չզգաց, որովհետեւ խօսակիցը իր կարծիքին պէտք չունէր, զիտէ՛ր, այլ միայն կը կրկնէր իր բազմիցս ու զանազան առիթներով կատարած հաստատումը:

— Ձե՞ս խորհիր, — այս անգամ միւսը պատասխան պահանջեց սակայն:

— Անշուշտ:

— Տարիներ տրամադրած եմ եւ ուղածիս պէս թրծած եմ զիրենք: Շատ կարգապահ եւ հնազանդ տղաք են, եւ մէկ խօսքս երկու չեն ընեն:

— Ասոնց մէջ դրական հետաքրքրութիւն կամ շնորհ ունեցողներ չկա՞ն, — Գեղամ հարցուց բնականաբար: — Ձիս ատիկա կը հետաքրքրէ:

— Կարելոր չէ, — ըսաւ Սեդրակ: — Ասոնք բոլորը գործելու պատրաստ երիտասարդներ են: Երբ ժամանակը գայ, կը տեսնես:

— Ի՞նչ գործի մասին է խօսքդ:

— Երիտասարդութիւնը, ինչպէս գիտես, ընդվզած է ու պատրաստ է ամէն ինչ քարուքանդ ընելու, յեղաշրջելու մեր իրականութիւնը:

— Անպայման քանդելով պէտք է յեղաշրջել: Ես կը խորհէի որ մենք շինելու հետամուտ ենք, դարձաններ գտնելու, գործնական առաջարկներ ներկայացնելով մասնակցելու մեր վերականգնումին:

— Ձի բաւեր: Հինը պէտք է հիմէն քանդել, որպէսզի սխալ հիմերու վրայ չկանգնենք մեր շինելիքը:

— Այդ հիմերը բաւական հաստատուն են թէ եւ շատ աւելի զօրաւոր քան մեր պատրանքներու վրայ կանգնելիք խախուտ սիւները: Փոխարէնը ի՞նչ ունիս տալիք, ներկայացնելիք. նախ ատիկա պէտք է ճշդել, ստուգել, եւ յետոյ քանդել՝ եթէ պէտք ըլլայ: Վաթ-

սուն տարի այդ հիմերուն վրայ կանգուն մնացած է հայ տունը, իսկ դուն այսօր մէկ հարուածով կ'ուզես հիմնադրուակ քանդել զայն: Ինչո՞ւ: Աւելի լաւը, աւելի կատարեալը ունի՞ս տալիք: Հայ դարոցը, եկեղեցին, կուսակցութիւնները կրնան թերացած ըլլալ, թերացած են — ես պիտի չըլլամ դորձուած սխալները արդարացնողը — բայց պահպանած են եղածը, հայը հայ պահած են օտարութեան մէջ: Մեր մանուկներուն հայերէն սորվեցուցած են ու կը սորվեցնեն մինչեւ այսօր:

— Բայց մեզ հասցուցած են այս վիճակին:

— Դուն աւելի լաւը կրնամ ընել. ըրէ՛: Ո՞վ կ'արդիլէ: Կրնան շնորհակալ ըլլալ միայն, վստահ եղիր: Հիները կատարեցին իրենց պարտականութիւնը, որ մեզ չի դժացներ այսօր: Շատ բարի, եւ զարմանալի չէ: Բայց մենք եւս կատարենք մեր պարտականութիւնը: Անոնք կորսուելու դատապարտուած զաղթականները պահպանեցին, փրկեցին, ու Հայութիւնը յարութիւն առաւ, դոյութիւն ունի այսօր՝ ի հեճուկս մեծ ու փոքր պետութիւններու հրէշային վերաբերմունքին: Մենք այս պահպանուածին, փրկուածին վրայ պիտի շարունակենք կանգնել նորը՝ սրբազրելով, տաշելով, փոխելով ու յղկելով, որպէսզի կանգուն մնայ չէնքը: Ոչ թէ քանդելով: Այն չէնքը, որ փուլ դալու վտանդին ենթակայ է, կը քանդեն, որպէսզի առաջը առնեն հաւանական կամ անխուսափելի վտանգի մը: Բայց մեր չէնքը այդ վիճակին մէջ չէ. ընդհակառակն՝ շատ աւելի ամուր հիմերու վրայ է քան, ըսենք, յիսուն տարի առաջ:

— Ծիշդ ատոր համար պէտք է քանդել հինը, — վիճեցաւ Սեդրակ. — որովհետեւ մեր գլխուն վրայ պիտի փլի եւ մեզ թաղէ աւերակներուն տակ: Մեր պարտականութիւնը, որու մասին կը խօսիս, այս է:

— Ատիկա ենթադրական եւ քմահաճ վճիռ է: Քու ըսելովդ, որովհետեւ քու դորձիդ այդպէս ըսել կու գայ, իրականութիւնները չեն փոխուիր: Իրականութիւնը կը մնայ իրականութիւն եւ անհրաժեշտ: Սփիւռքահայութիւնը այսօր շատ առողջ եւ կենսունակ վիճակի մէջ է, աւելի քան որեւէ ատեն վերջին վաթսուն տարիներուն ընթացքին: Բայց եթէ որոշես ուրանալ, կրնաս անշուշտ. սակայն իրականութենէն ոչինչ կը փոխուի: Եթէ կը կարծես որ ուրանալով կրնաս չունեցածդ փաստել կամ հաստատել, կը սխալիս: Ծիշդ այնպէս ինչպէս կ'ընեն նորելու քանի մը երիտասարդներ, որոնք կ'ուզեն անպայմանօրէն գրող ըլլալ, եւ որովհետեւ անտաղանդ են եւ չեն կրնար ստեղծագործել, մեր գրական աւանդութիւններն ու ամ-

րողը գրական ժառանգութիւնը ուրանալով կը կարծեն իրենց տաղանդը հաստատած ըլլալ: Յաճախ հարց կու տամ ես ինձի, ու երբեմն կասկածի լուրջ պահեր կ'ունենամ, փորձելով վերատեսուելեան ենթարկել զիտցածս եւ համոզումներս եւ կ'ուզեմ տեսնել, կարգալ իրե՛նց գրածը: Բայց դուրս կու գայ որ ոչ գրած են, ոչ գրականութիւն ունին այս երիտասարդները, ոչ ալ գրելու կարողութիւն: Պարզօրէն ըսելիք չունին, որովհետեւ իրենց բուն նպատակը գրող ըլլալ է, եւ ոչ թէ գրել: Սակայն առանց գրելու գրող չես կրնար ըլլալ: Կը զարմանամ որ այսքան պարզ իրականութիւն մը չեն կրնար հասկնալ, ըմբռնել: Իրենց պարագային, թէեւ, հասկնալի է, չեն կրնար գրել, եւ ուրեմն գրող չեն: Եթէ կրնաս, ասիկա իրենց հասկըցուր սակայն: Իրենք որոշած են որ գրող են, եւ վե՛րջ: Գրելու ի՛նչ պէտք ունին: Այդ կերպով՝ անցեալի ժառանգութիւնն ալ կրնան չեղեալ հռչակել եւ լուծել հարցը:

— Գրականութեան պարագային տարբեր է: Մեր գրականութիւնը կայ, դոյութիւն ունի, արձանագրուած է, շօշափելի իրականութիւն:

— Նոյնն է: Քու թելադրածդ տարբեր բան մը չէ: Որովհետեւ ընելիք չունիք, բան մը բրած ըլլալու համար կ'ուզէք քանդել եղածը՝ ուրանալով, կոխկոտելով, սրբապղծելով: Ձեր նպատակը եթէ օգտակար ըլլալ է, ծառայել է...

— Աշխարհի վրայ հիմնական փոփոխութիւններ կը կատարուին այսօր, — Սեդրակ Պաղտասարեան չկրցաւ հանդուրժել այլեւս, եւ հեղնական արտայայտութեամբ մը ընդմիջեց. — իսկ մենք նստած կ'երազենք, եթէ չենք քննար իսկ: Ընկերային եւ համամարդկային շարժումներ կան. բողոք, ցոյց, ընդվզում, յեղափոխութիւն՝ ներկայ կարգերը տապալելու համար: Արդարութիւն վերահաստատելու եւ իրաւապրկուած զանգուածները պաշտպանելու, փրկելու համար:

— Աշխարհը թերեւս փոփոխութեան պէտք ունի, ի՛նչ խօսք: Անարդարութի՞ւն. անշո՛ւշտ: Իրաւազրկուած զանգուածներ՞: Անպայման, եւ նորութիւն չէ յամենայն դէպս: Իրաւազրկուածներ միշտ եղած են, եւ ասկէ ետք ալ միշտ պիտի ըլլան: Ընկերային հարցեր, ընկերային տաղնապներ. կը հասկնամ, կ'ընդունիմ: Աշխարհը այսքան դէժ վիճակի մէջ չէ եղած, եւ Արեւմտեան քաղաքակրթութիւնը զահալէժ անկումի մէջ է: Ամէն ինչ փտած է իրենց մօտ եւ սկսած է նեխիլ. բարքեր, աւանդութիւններ, բարոյական, անտեսութիւն, արժէքներ, ամէն ինչ: Ասոնք իրենց հարցերն են, իրենց տաղնապները: Եւ կապիկի պէս զիրենք ընդօրինակելու պէտք չունինք, ո-

բովհետեւ մենք իրենց ընկերային կամ դասակարգային հարցերը չունինք: Մերը գոյութեան խնդիր է, մեր գոյութիւնը պահպանելու եւ իրաւունքներուն տիրանալու հարց: Քաղաքական հարց, եթէ կ'ուզես: Յեղափոխութեան պէտք ունինք, այո՛, բայց միայն մեր քաղաքական իրաւունքները պաշտպանելու, խելիւ համար: Այսինքն Արեւմտեան Հայաստանը ազատագրելու համար, այդքա՛ն: Անարդարութեան մասին կը խօսին, ու չես ուզեր յիշել պատմութեան մեծագոյն անարդարութիւնը, որ դործադրուեցաւ Հայութեան դէմ: Եւ կ'ուզես որ զիրենք ընդօրինակենք ու մեր չունեցած ընկերային հարցերուն համար պայքար մղենք. այսինքն քանդենք մեր բարքերն ու արժէքները, որ փտած չեն: Քանդենք մեր չէնքը, որ ամուր եւ հաստատուն հիմերու վրայ կանգնած է: Իրենք իրենց կարգերը քանդելու պէտք ունին թերեւս, բայց մենք՝ ո՛չ: Երբեք: Եթէ որպէս մտաւորական այսքանը պիտի չկարենանք տեսնել ու զանազանել, կրնանք միայն վնասել մեր ժողովուրդին: Կը դառնանք վտանգաւոր տարրեր, որոնք զնդակահարուելու արժանի են:

Գեղամ թէեւ հանդարտօրէն, բառերը հատիկ հատիկ արտասանելով կը խօսէր, սակայն զգալի էր որ ջղայնացած էր: Մարալ Պաղտասարեան, որ հմայուած կամ զարմացած զինք կը դիտէր, անզգալարար ըսաւ:

— Պր. Տարօնեանի ըսածը շատ ճիշդ է եւ տեղին: Մեր գլխաւոր հարցը ատիկա է:

— Այդքանը ո՞վ չի գիտեր, — ամուսինը ակներեւ դժգոհութեամբ խօսքը ուղղեց տիկնոջ: — Բայց ատիկա պատճառ մը չէ որ անտեսենք միւս բոլոր հարցերը: Կոյր պէտք է ըլլալ, կամ գոնէ միամիտ, չըսելու համար տղէտ:

— Ուրիշ հարց չունինք, — բաժակը ցմրուր պարպեց ու ոտքի կանգնեցաւ Գեղամ: — Ասկէ աւելի սպասելը իմաստ չունի կարծեմ: Գիշեր բարի:

— Բայց վտանգաւոր է, — անկեղծօրէն մտահոգուեցաւ Տիկ. Պաղտասարեան: — Վաղը, ցերեկ ատեն, աւելի ապահով եւ առանց վախի տեղ կը հասնին:

— Եթէ ժամդ հասած է, նստած տեղդ ալ մահը կու գայ կը գտնէ քեզ, — ժպտեցաւ զրոզը, ձեռքերը գրպաններուն մէջ, եւ ուղղուեցաւ դէպի դուռ:

— Բայց իրաւ խենթ է կղեր, — Մարալ դարձաւ ամուսնոյն, երբ առանձին մնացին: — Կեանքը վտանգելու ի՛նչ պէտք ունի:

— Խենթ չէ, ապուշ է, — թեւը օդին մէջ շարժեց ամուսինը, —

յամառ ապուշ մը: Ինքնահաւան: Ինքզինք ամենազէտ, անսրբագրելի կը կարծէ ու մարդարէի հովեր կու տայ ինքնիրեն:

— Ինչո՞ւ այդպէս կ'ըսես: Մարդուն ըսածը ճիշդ է: Եւ յամենայն դէպս ակնեղծ է, եւ հաստատ համոզումներու տէր մարդ: Քեզի նոյնիսկ, որ քեզ այդքան կը սիրէ, առանց բառերը ծամծմելու ըսելիքը ըսաւ:

— Եւ դուն գոհ ես անչուշտ: Ատիկա լաւագոյն փաստն է որ ինքզինք անսրբագրելի կը նկատէ:

— Դուն ալ զարմանալի ես երբեմն, Սեդրա՛կ: Դեռ երէկ մէկ, այսօր կրկու, տարբերիչ չես նայիր, ու կ'ուզես Տարօնեանի պէս զրոզի մը հետ չափուիլ:

— Մեր միջեւ շատ-շատ տասը տարի կայ: Զինք ի՛նչ կերպով դերազաս կը դարձնէ ատիկա: Ժամանակակից կեանքի մասին դադափար իսկ չունի. լուր չունի թէ աշխարհի վրայ ինչ կ'անցնի կը դառնայ:

— Դո՛ւն լուր ունիս միայն, — կինը հեզնեց բարութեամբ. — կը մոռնաս որ առաջին քայլերդ ինք առաջնորդած է, ուղղութիւն տուած քեզի: Աշխարհը վերջացուցած, խելացի, ուշիմ, լայն հետաքրքրութիւն ունեցող մարդ է, եւ ամենէն կարեւորը՝ փորձառու: Խօսածը զիտէ, եւ յայտնի է որ անսպառ պաշար ունի: Գրածներէն յայտնի է: Ինչի մասին ալ զրէ, կը զգաս որ հմուտ է եւ կրնայ ամենէն պարզ ձևով վերլուծել եւ հարցերուն խորքին թափանցել:

— Տաղանդաւոր զրոզ է, խօսք չ'ուզեր, — զիջեցաւ ամուսինը: — Ատիկա իր դերելու կարողութիւնն է: Բայց եւ այնպէս աշխարհէն լուր չունի. չ'ուզեր տեսնել, ընդունիլ որ մարդկային ընկերութիւնը յուզող բազմաթիւ հարցեր կան, որ կեանքը փոփոխութեան ենթակայ է միշտ: Զի հասկնար, թէ քայլ պահելու համար պէտք է ընդհանուր մարդկութեան եւ աշխարհի վրայ տեղի ունեցող փոփոխութիւններուն հետեւիլ: Ազդային նեղ ծիրէ մը ներս կը տեսնէ ամէն ինչ, եւ չ'ուզեր ատկէ դուրս դալ:

— Վատա՞հ ես: Յստակ կերպով ըսաւ, չէ՞: Մենք այդ կարգի հարցեր չունինք, մեր հարցերը չեն ատոնք: Ինչո՞ւ կը պնդես որ Հայութիւնը իրեն չվերաբերող, իրեն խորթ հարցերու միջամուխ ըլլայ: Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ պատահածը մեզի ի՛նչ: Անոնք իրենց երկիրներուն մէջ կ'ապրին — հանդիստ եւ ապահով — բայց իրենց տունը իրենց գլխուն փլած են, ու հիմա կ'ուզեն դուրս գալ ապկէն: Մեզի ի՛նչ: Մենք նոյն վիճակին մէջ չենք: Բարոյական, ընկերային եւ տնտեսական տաղնապներ չունինք, որովհետեւ

մեր արժէքները ոտնակոխ չենք ըրած, մեր ընտանեկան կեանքը չենք քանդած, եւ իրենց պէս անձնասէր չենք: Մինչդեռ իրենք... մարդիկ իրարու հետ կապ չունին այլեւս. հասարակաց կեանք չունին, եւ ամէն մարդ կ'ապրի ինքնիրեն համար՝ բացարձակ առանձնութեան մէջ: Անշուշտ որ պիտի դժգոհին եւ պիտի ուզեն յեղաշրջել իրենց կեանքը: Մենք մեր ի՞նչը յեղաշրջենք: Պր. Տարօնեանին ըսածին պէս, յեղաշրջելիք մէկ բան ունինք:

— Աստուածը սիրես, գլուխէդ վեր նիւթերու մասին մի խօսիր: Խելքդ չի հասնիր, եւ ինձի քարոզելու, դաս տալու ելած ես:

— Ձէի գիտէր, որ միայն քու խելքդ կը հասնի, — ըմբոստացաւ Մարալ, որ ամուսինէն շատ աւելի ուսում ունէր: Համալսարանաւարտ էր, մինչ Սեդրակ հազիւ երկրորդականը աւարտած, ստիպուած եղած էր աշխատիլ: Ընկերութեան մը մէջ բուսական պատասխանատու պաշտօն ունէր ներկայիս եւ լաւապէս կը վարձատրուէր: — Կիները, ըստ ձեզի, — չկրցաւ շարունակել եւ անցաւ խոհանոց:

**

Դուրսը հրացանաձգութեան ձայնը աւելի զզալի էր, ու որքան հեռանար էշրէֆիէէն, ձայնը աւելի կը սաստկանար, թէեւ ուղղութիւն չէր կրնար ստուգել տակաւին: Ելեկտրական ընկերութեան մօտ զինեալ երիտասարդներ զգուշացուցին զինք, թելադրելով իրեն ուղղութիւնը փոխել:

— Եթէ կ'ուզես ողջ մնալ, — կատակեց զինեալ պատանի մը, — ետ դարձիր:

— Ո՞ր ճամբան ապահով է, — հարցուց Գեղամ:

— Դուն եւ բախտդ, — պատասխանեց խումբին պատասխանատուն: — Պուրճը որոշապէս վտանգաւոր է: Եթէ անպայման պէտք է անցնիս, թանգարանի ճամբան փորձէ:

Շնորհակալութիւն յայտնեց եւ վերադարձաւ եկած ճամբով: Անշուշտ պէտք է անպայման անցնիմ, ինքնիրեն կատակեց Գեղամ Տարօնեան: Կ'ուզես որ փողոցը զիշերեմ: Սրիկաներ: Հազիւ չունչ առնելու սկսած էինք... չըսես, մարդոց նպատակը գէշ է եղեր: Հանգիստ պիտի չթողուն մեզ. աւելի կատողած են ու քաղաքը պատերազմական ճակատի վերածած: Շան լակոտներ, քաղաքին մէջ պատերազմ կ'ըլլա՞յ: Եթէ այսպէս շարունակուի, հոս ապրիլը անկարելի պիտի ըլլայ: Ինչպէ՞ս կ'ակնկալէք որ աշխատինք, գործի երթանք, պատառ մը հաց ուտենք, թերթ հրատարակենք: Այո՛, մա-

նաւանդ թերթը, յիշեց յանկարծ, ի՞նչ պիտի ըլլայ: Այս պայմաններուն մէջ հայկական շարաթաթերթ ինչպէ՞ս կը հրատարակեն ու կը հասցնեն դասն բաժանորդներուն, եթէ իմ տուն հասնիլս նախ եւ առաջ բուսական վիճելի հարց դարձած է այս պահուն:

Յունիսի վերջաւորութեան, Շարաթ օրուան կէս դիշեր, եւ ինք ճակատի վերածուած քաղաքի մը ամայի փողոցներուն մէջ առանձին: Հերոս: Վախի մասին գաղափար չունէր, որովհետեւ կեանքին մէջ վախնալու պատճառ չէր ունեցած թերեւս, բայց հիմա տարօրինակ, անբացատրելի զղացում մը կ'անհանդուատցնէր զինք: Եթէ յանկարծ... դետը եզերող մայրուղիին վրայ ուրիշ քանի մը ինքնաշարժ նկատեց եւ հանդարտեցաւ մասամբ: Ուրեմն վտանգ չկար: Եւ կամ իրեն նման մոլորած երջանիկներ էին: Դուն եւ բախտդ, ըսած էր երիտասարդը: Դուք եւ ձեր բախտը, կրկնեց, խօսքը ուղղելով միւս ինքնաշարժներուն:

Ըստ երեւոյթին ինք եւ միւսները բախտաւոր էին այս գիշեր, որովհետեւ անվթար անցան սահմանը, եւ ինք գէթ ծիծաղեցաւ՝ յիշելով քիչ առաջուան մտավախութիւնը: Սահման բառը խորթ հնչեց, բայց Գեղամ հաստատեց, թէ նոր իրադրութեան մը հետ հաշտուելու սկսած էր արդէն: Փաստօրէն սահման մը ստեղծուած էր մայրաքաղաքին մէջ — անտեսանելի բայց իրական բաժանման գիծ մը — որ քաղաքը երկուքի կը բաժնէր եւ օր ըստ օրէ տեղ կը դրուէր պէյրութիցիներու զիտակցութեան մէջ: Լաւ նախընթաց մը չէր: Չափազանցելու պէտք չունիս, յանդիմանեց ինքզինք, եւ շտապեց դէպի Ֆինիսի փողոց: Սովորական բախումներ են, եւ քանի մը ամիսը անդամ մը պիտի կրկնուին, այնքան ատեն որ պաղեստինեան հարցը առկախ կը մնայ: Դժբախտաբար միակ տուժողը Լիրանանը պիտի ըլլայ, որովհետեւ կաղմակերպութիւնները բոլոր հոս կեղբոնացած են, եւ ոչ ոք կրնայ զիրենք տեղերնէն շարժել: Ասկէ քանի մը տարի առաջ թերեւս կարելի ըլլար, ներկայիս լիրանանեան բանակը նոյնիսկ անզօր է, նկատի առած մանաւանդ անոր ներքին բաժանումները: Այնպէս որ... ի՞նչ: Ասիկա վերջ չունի, եւ ասկէ ետք հոս ապրիլն ալ համ չունի: Մնայուն կերպով այս պայմաններուն մէջ ապրիլը պարզօրէն անկարելի է: Ի՞նչ պիտի ընես: Դուն այլ մարդոցմէ աւելի լաւ չես: Երկիրը ամբողջ եթէ դիմանայ, դուն ալ կը դիմանաս:

Ֆինիսի փողոցը նոյնպէս ամայի էր, եւ սովորական խճողումը չկար: Մազկալմաճառ երեխաները նոյնիսկ անհետացած էին, ու գիւնետուները՝ մեծ մասամբ փակ: Աննախընթաց երեւոյթ էր, նոյնիսկ

տխուր: Այս թաղամասը, դրկուած իր գիշերային կենդանութենէն, տխուրութիւն կը բերէր, կ'ընկճէր: Ինչ պիտի ընէր, եթէ այս շրջանը այսպէս փակ մնար: Մանկութենէն ի վեր իր աշխարհը Ֆինիսի փողոցն էր, ուր միայն հարազատ, բնական կը զգար: Չլուսահատեցաւ եւ քալեց դէպի Գաւ, իջաւ սանդուղներէն վար ու նկատեց որ միջանցքը լուսաւոր էր: Մանկավարժուած, ածապարեց եւ մտաւ ներս: Միակ յաճախորդը, դորդավաճառ Հմայեակը, կը կատակէր նախաշալի հետ, որ դարմանալիօրէն լաւ տրամադրութեան մէջ կ'երեւէր:

— Լաւ որ եկար, — Հիլտա բաժակը լեցուց, առանց ապուղբանքի սպասելու: — Մտահոգուելու սկսած էի: Մինչեւ այս ժամը չեկար:

— Գործ ունէի: Միւս կողմէն հիմա անցայ:

— Երեւակայէ, ես հոս, եղած տեղս վախի մէջ եմ: Բայց խնթութիւն չէ՞ր ըրածդ:

— Գաղափար չունէի: Անկեղծօրէն, ճամբայ ելլելէ ետք, պահ մը վախցայ: Բայց դեռ ողջ եմ, — ժպտեցաւ Գեղամ, աղջկան ապահովութիւն ներշնչելու համար թերեւս: Եւ անդրադարձաւ որ արտակարգ գոհունակութիւն մը սկսած էր ծաւալիլ իրմէ ներս: Պարզօրէն՝ ուրախ էր: Որ բնական չէր անշուշտ:

— Ես լրջօրէն սկսած եմ վախնալ: Թաղերուն մէջ քալելը նոյնիսկ ապահով չէ՛. հոս, օրինակի համար, այս ժամուն, փողոցները ամայի, ամէն տեղ փակ, իսկապէս վախնալիք է:

— Վախնալու պատճառ չունիք: Ներսը ձեզի ինչ կրնայ պատահիլ, մանաւանդ այս կողմերը կոխ չկայ: Բայց քանի մը օր դուք ալ հանդիսա ընէք, դէ՛ չ'ըլլար, մինչեւ որ կացութիւնը հանդարտի:

— Նայինք: Գործ ալ չկայ արդէն: Միայն բարեկամիդ եւ քեզի պէս խնթիւր կու գան երբեմն, ու հազիւ բաժակ մը խմած, կը փախին: Այսօր կանուխ պիտի փակենք արդէն:

— Ինչո՞ւ շրջան մը չես հեռանար, — թելադրեց երիտասարդը: — Արձակուրդ տուր դուն քեզի, ու դնա՛, ճամբորդէ, պտըտէ քիչ մը, հանդատացի՛ր:

— Ինչպէ՞ս: Երթալիք տեղ չունիմ:

— Գերմանիա: Տուն. հայրդ կը տեսնես, բարեկամներ, հարազատներ, երկիրդ՝ ի վերջոյ: Չե՞ս կարօտցած:

— Շատ, — խոստովանեցաւ Հիլտա, — մանաւանդ որ երեք տարիէն աւելի կ'ընէ որ հոսկէ չեմ հեռացած: Երթալիք տեղ չունիմ սակայն. ո՛չ տուն, ոչ ազգական: Տունս հոս է, կեանքս ալ, գործս ալ:

— Ամիս մը կրնաս երթալ: Տունիդ ինչ կրնայ պատահիլ: Ոսկեղէններդ, եւ եթէ տունը պահուած դրամ ունիս, դրամատուն մը կը դնես, եւ վե՛րջ: Յարկարածինդ պիտի շողանան անշուշտ, եւ ոչ ալ տեղէն փոխադրեն զայն: Իսկ գործն ալ, նախաշան կայ:

— Այդ տեսակ մտահոգութիւն չունիմ: Տունս շատ ապահով է: Տանէրը, դռնապանը՝ շատ վստահելի մարդիկ են, ու չէնքն ալ... գող չի մտնիր: Չեն կրնար:

— Ուրե՞մն:

— Ո՞ւր պիտի երթամ: Յարկարածինն պատերուն կամ կահուորուսին չեմ սիրահարուած: Տունս է. կը հասկնաս, թէ ինչ ըսել կ'ուզեմ, եւ հոն միայն հանդիսա եմ, երջանիկ: Երթալիք տեղ չունիմ, եւ չեմ ուզեր հեռանալ յամենայն դէպս: Պատճառ չունիմ: Ուրիշ որեւէ տեղ՝ հանդիսա չեմ, օտար կը զգամ, եւ օր առաջ կ'ուզեմ հոս վերադառնալ:

— Քեզի իրանանհան հպատակութիւն պէտք է տան:

— Երանի: Թերեւս չես հաւատար, ոչ ոք կը հաւատայ, բայց միայն այս երկրին մէջ հարազատ կը զգամ:

— Վարժութեան հարց է, — լրջացաւ Գեղամ: — Բայց իրատեսք ունիս. այս երկրին պէս երկիր չկայ: Աստուած շտալ եղած է եւ ամէն կարգի բարիքներով օժտած է զայն:

— Գիտե՞ս, թէ առաջին անգամն է որ Աստուծոյ մասին կը խօսիս, — ըսաւ աղջիկը. — դարմանալի է:

— Այո՞նքն: Իրաւունք չունի՞մ:

— Հետաքրքրական է: Քեզի պէս անհաւատ մարդ մը:

Հայը դուարձացած քննեց խօսակիցին արտայայտութիւնը, ու պահ մը շփոթեցաւ: Կը կատակէ՞ր, վրան կը խնդար, թէ... բայց նոյն անմեղ արտայայտութիւնն էր: Ողջաց յետոյ անոր, ու ներդամտարար ըսաւ:

— Չեմ գիտեր, թէ հաւատացեալ ըլլալ ինչ կը նշանակէ քեզի համար, բայց եթէ կրօնքի մասին կը խօսիս, ըսելիք չունիմ: Թէեւ քրիստոնեայ ծնած եմ, կամ զիս քրիստոնեայ նկատած են, որովհետեւ ծնողքս հայ առաքելական եկեղեցւոյ կը պատկանին, բայց այդ ամբողջը նշանակութիւն չունի: Կրօնքի կամ կրօնքներու դէմ չեմ, որովհետեւ մարդկութիւնը առանց կրօնքի կարելի պիտի չըլլար գոյել: Հաւատքը ուրիշ բան է: Չեմ կրնար այդքան միամիտ ըլլալ:

— Ըսել կ'ուզես, թէ ես միամիտ եմ:

— Միայն միամիտ: Չարմանալին դուն ես, իրական հանե-

լուկ մը: Զարգացած, համալսարանական, եւրոպացի աղջիկ մը, որ ինքզինք ազատագրուած կը նկատէ... եւ ե՛ս բարեբախտաբար: Բայց նաեւ հաւատացեալ ես, ու երանելի ես ճիշդ ասոր համար: Ես միայն կրնամ նախանձիլ:

— Հաւատքը ազատամտութեան արդեւիք չէ: Իրականութեան մէջ կապ չունին իրարու հետ: Առաջինը կեանքի բժրունում է, մինչդեռ հաւատքը մեր դոյութեան իմաստն է: Առանց անոր կրնանք կորսուիլ, փճանալ, եւ դժբախտ ըլլալ անշուշտ:

— Ըսի, կը նախանձիմ քեզի: Ներքնապէս հանդարտ ես, խաղաղ, ու նոյնիսկ երջանիկ, որովհետեւ կը հաւատաս:

— Քանի այդպէս կը խորհիս, դիտե՛ս, ինչո՞ւ...:

— Երանի կարենայի հաւատալ, — կանխեց Գեղամ. — բայց ուղիւր չի բաւեր: Դժբախտաբար այդքան միամիտ չեմ կրնար ըլլալ, ըսի՛: Ինձի համար ուշ է:

— Երբեք ուշ չէ, կ'ըսէ անգլիական առածը:

— Անգլիացիներուն համար ճիշդ է թերեւս առածը: Իսկ ես անգլիացի չեմ, ի՛նչ կարելի է ընել: Հետաքրքրական է սակայն. ինչո՞ւ իմ հաւատացեալ ըլլալս կամ չըլլալս այդքան պէտք է մտահոգէ քեզ:

— Շատ բարդ մարդ մըն ես, գիտե՛մ. բարի, սկզբունքի տէր, ուղղամիտ, բայց նաեւ դուն քեզ կը պատժես, կը չարչարես, կը զրկես, եւ առանձնութեան մէջ կը տառապիս:

— Ճիշդ չէ: Ամէն մարդ առանձին է, եւ այս կամ այն կերպով կը չարչարուի կամ կը տառապի: Բայց ես ալ ունիմ իմ համոզումներս, ու ներքնապէս հանդարտ եմ, հաշտուած կեանքի իրականութեան հետ: Ոչ քեզի պէս անշուշտ: Թերեւս ես աւելի իրապաշտ եմ, եւ առանձնութեան մէջ չեմ տառապիր յամենայն դէպս: Հետք եղած ատեն, օրինակի համար, բնաւ առանձին չեմ զգար:

— Մեր ամենէն հաւատարիմ յաճախորդները, — հետուէն բացականչեց Նաթաշա: — Եթէ դուք ալ չըլլայիք ի՞նչ պիտի ընէինք:

— Քաղաքի ամենէն խաղաղ եւ ապահով վայրն է հոս ներկայիս, — բարձրաձայն խօսեցաւ Հմայեակ, որպէսզի բոլորն ալ լսեն:

— Այդքան ալ վստահ չեմ, — Նաթաշա խնդաց:

— Բարեկամութիւն արտակարգօրէն լաւ տրամադրութեան մէջ է այսօր, — կողմնակի փոփոսաց Գեղամ:

— Մարդու խելք չի հասնիր: Վայրկեան մը ջղային է, ու քիչ ետք յանկարծ՝ ուրախ: Բայց այսօր, ճիշդ է, պէտք եղածէն աւելի ուրախ է: Կարծես այս կացութենէն շատ դո՛ւ է:

— Ձեռ գիտեր, — ակամայ ժպտեցաւ Տարօնեան, — թերեւս դո՛ւ ըլլալու պատճառ մը ունի:

— Շատ կասկածամիտ ես, — յանդիմանեց Հիլտա:

— Դուրսը մարդիկ կը մեռնին, երկիրը տակնուվրայ է, իսկ ինք... իրաւունք չունի՞մ:

— Դժբախտ աղջիկ մըն է եւ առանձին: Աշխարհի վրայ մարդ չունի, ու նկատելով որ մշակուած միտք չունի, ստորադաս, անիրաւուած կը զգայ: Բարբոյթ է, գիտե՛մ, բայց եւ այնպէս ցաւալի է: Երբեմն իսկապէս կը խղճամ իրեն: Ինձմէ նոյնիսկ կը նախանձի, ու կը կոտորի յաճախ, հակառակ անոր որ գիտէ, թէ զինք կը սիրեմ ու կը հասկնամ վիճակը: Բայց յետոյ ալ կը զղջայ ու կը փաթթուի, կը համբուրէ զիս:

— Կ'ուզեմ հաւատալ, որովհետեւ դուն ես ըսողը: Ի վերջոյ դուն աւելի լաւ կը ճանչնաս զինք:

— Մեզի չի վերաբերի, — վճռականօրէն խօսեցաւ զերմանուհին, նիւթը փակուած համարելով:

— Խմբագրականներուդ կը հետեւիմ, — Հմայեակ Գասարեան միացաւ իրենց, մինչ Նաթաշա խոհանոց մտած էր: — Լաւ են, բայց մեր իրականութենէն կտրուած են կարծես, մանաւանդ այս պայմաններուն մէջ: Երկրին մայրը կու լայ, իսկ մենք ալ մեր սարար կու լանք միայն: Որքա՞ն ճիշդ է:

— Կ'ընդունիս դէթ, որ տարտ մը ունինք, — անվրդով եւ ինքնազուտահ կերպով զիտել տուաւ խմբագիրը: Մեր ցաւը նոյնքան մեծ է, եւ ինձի համար՝ նոյնքան կարեւոր. շատ աւելի կարեւոր:

— Մերը հին ու երկար պատմութիւն է:

— Ատիկա չի նշանակեր որ պէտք է մոռնանք զայն, անտեսենք: Եթէ կ'ուզես, ճիշդ այս պատճառով վաթսուէն տարիէ ի վեր ոչինչ կրցած ենք ընել: Երբ կարգը մեր հարցին դայ, միշտ երկար պատմութիւն նկատած ենք, դժուար, անկարելի: Ինչո՞ւ: Այս չեմ կրցած ըմբռնել երբեք, եւ ճիշդ ասոր դէմ է որ կը պայքարիմ: Ո՞վ պիտի բացատրէ, ո՞վ պիտի տայ պատասխանը: Օր մը քաջութիւնը պիտի ունենանք ընդունելու, թէ պարտուած ենք ու դարձած ներքինի, ստրուկ: Ու պիտի կարենանք թօթափել մեր վրայէն այս զղուելի ստրկամտութիւնը, եւ նախ եւ առաջ մենք մեզ համոզել, թէ մեր դատը նոյնքան արդար է, եթէ ոչ արդարագոյնը:

— Կ'ընդունիմ, կը հասկնամ, բայց այս պայմաններո՞ւն մէջ:

— Թերեւս այս պայմանները աւելի իրաւունք կու տան մեզի որ մենք մեր մասին մտածենք նաեւ: Արթնալու, քանի ուշ չէ, եւ

մեր ապագային մասին մտածելու, մեր դոյութեան, իրաւունքներուն, հայրենիքին: Միշտ պատճառարանութիւն մը կը գտնենք բուն հարցէն, պատասխանատուութենէն խուսափելու: Մինչեւ ե՞րբ: Ժամանակը ե՞րբ պիտի դայ: Ուրիշներն ու անոնց իրաւունքները միշտ աւելի կարեւոր են, աւելի արդար: Կը ներես, իմ տարտա աւելի մեծ է, աւելի կարեւոր եւ արդար, եւ այնքան ատեն որ իմ ցաւերս չեմ ամոքած, ուրիշներու հարցերովը զբաղելու կամ մտահոգուելու տրամադրութիւն չունիմ երբեք: Պէտք չունիմ, իրաւունք չունիմ: Օտարները մեր մասին մտածած ունի՞ն, կարեւորութիւն տուած ունի՞ն, որ ես իրենց դատին մասին մտածեմ՝ մոռցած իմս: Արդարամտութիւն եղաւ ասիկա:

— Բայց, Պր. Տարօնեան, մենք այս երկրի քաղաքացիներն ենք, եւ պարտաւորութիւններ ունինք՝ ինչպէս միւս բոլոր լիբանանցիները: Չենք կրնար անտարբեր մնալ եւ խուսափիլ մեր պատասխանատուութիւններէն:

— Երբե՞ք: Անտարբեր չենք: Հայութիւնը կողմ չէ, եւ պէտք չէ՛ ըլլայ, որովհետեւ երկու կողմերն ալ սխալ ընթացքի մէջ են: Ճշմարտութիւնը եթէ կ'ուզես, ճիշդ ուղղութիւնը մերն է. իրենց անիմաստ հակամարտութենէն երկիրը կրնայ տուժել միայն: Եւ ճիշդ ատոր համար մենք պէտք է պայքարինք այս յիմար եղբայրասպանութեան դէմ: Պէտք է հաւասարակշռող դեր կատարենք, հաշտութեան ելլը ըլլանք, միջոցը՝ փոխանակ նոյն սխալին մէջ իյնալու:

— Տեսակէտ մըն է, — զիջեղաւ Հմայեակ Գասրարեան: — Բայց ով կարեւորութիւն կու տայ մեզի:

— Լաւ որ դուն կ'ըսես: Թէեւ այս չի նշանակեր, թէ պէտք չէ փորձենք: Իսկ ասիկա իմ դործս չէ, որովհետեւ ես անհատ մըն եմ միայն, եւ ոչ թէ կազմակերպութիւն կամ կուսակցութիւն:

— Բայց թերթ կը հրատարակես, եւ ուրեմն հաւաքական պատասխանատուութիւն վերցուցած ես: Դուն քու անձը ներկայացնելէ դադրած ես, եւ պարզ անհատ մը չես այլեւս: Եւ ուրեմն՝ ստիպուած ես... քու դործը է նաեւ:

— Անշո՛ւշտ: Եւ պատրաստ եմ: Տեսակէտ կրնամ յայտնել, եւ դրած եմ ալ այս մասին: Բայց իրականութիւնը այն է որ կուսակցութիւնները կը ներկայացնեն մեզ այս երկրին մէջ... իսկ ասոնք ալ մանրուքներով զբաղած են, ըստ իրենց աւանդութեան: Ենթադրենք որ դրեցի, պոռացի եւ այս տեսակէտը արտայայտեցի. ի՞նչ արժէք ունի, այնքան ատեն որ անհատ դրողը կամ մտաւորականը տեսակէտ յայտնելու իրաւունք չունի՞ ըստ իրենց: Իսկ տեղացին հայերէն չի

կարգար դժբախտաբար, եւ ուրեմն՝ ձայն բարբառոյ յանապատի: Որո՞ւ պիտի ուղղեմ խօսքս, երբ կարգացող պիտի չըլլայ: Գրելը մոռնանք, ու պահ մը դուն եւ ես երթանք ու կողմերուն հետ փորձենք խօսիլ: Մեզ կ'ընդունի՞ն կը խորհիս: Երբե՞ք: Չո՞վ, ի՞նչ կը ներկայացնէք, պիտի հարցնեն:

— Կուսակցութիւն կ'ըլլանք, — գորղավաճառը կատակեց:

— Եղածները կը բաւեն: Նախընտրելի է երեքը մէկի վերածել, փոխանակ չորրորդ մը աւելցնելու: Մէկ կուսակցութիւն, կազմակերպութիւն, մարմին, կամ ինչ որ է, որ ամբողջ Հայութիւնը ներկայացնէ եւ կարենայ անոր անունով բանակցիլ, տեսակէտ պարտադրել, աշխարհի բոլոր երկիրներուն մէջ, դատ հետապնդել: Ժողովուրդը ինքն ալ բաժան-բաժան չ'ըլլար այն ատեն, ու կը բոլորուի այդ մարմինին կամ կազմակերպութեան շուրջ ու կը զօրացնէ զայն:

— Այս տեսակ դործ մը Հայաստանի կառավարութիւնը միայն կրնայ ընել, եւ որպէս պետութիւն բանակցիլ ու պաշտպանել մեզ, հետապնդել մեր հարցերը: Տէր ըլլալ մեզի:

— Որ չ'ընեն: Դժբախտաբար: Որովհետեւ Հայաստանի կառավարութիւնը պետութիւն չէ նախ եւ առաջ, պետական մարմին չէ, այլ կառավարող մարմին մը պարզապէս, ու Հայաստանի բնակչութիւնը կառավարելու համար նշանակուած է միայն:

— Բեղմէ չէի ակնկալեր, — բորբոքեցաւ Գասրարեան, — ուրիշներ երբ կ'ըսեն, թիրեւս կարենամ ներել. տգէտ կամ կողմնակալ մարդոցմէ կրնամ ակնկալել: Բայց քեզմէ... Հայաստանի դոյութիւնը ուրանալ կը նշանակէ ասիկա:

— Խորհրդային Հայաստանը ոչ ոք կրնայ ուրանալ, — հանդարտօրէն տրամաբանեց Տարօնեան. — իմաստ չունի, որովհետեւ ուրանալով դոյութիւն ունենալէ պիտի չդադրի երկիրը: Հարցերը չչփոթենք սակայն. երկիրը բան մըն է, իսկ պետութիւնը տարբեր:

— Դաշնակցականի խօսք է, դաշնակցականի տրամաբանութիւն: Չեմ ներեր, չեմ կրնար:

— Ես դաշնակցական չեմ, ու կը կասկածիմ որ այսօրուան Դաշնակցութիւնը կապ ունի անցեալի Հ.Յ.Դ.ին հետ: Եթէ ունենար, ես անպայմանօրէն դաշնակցական կ'ըլլայի:

— Նոյն կուսակցութիւնն է, — ջղայնութիւնը չկրցաւ զսպել գորղավաճառը եւ արհամարհանքով հայեացքը սեւեռեց խօսակիցին վրայ. — աս քու ըսածդ խօսք է միայն:

— Կը խորհիմ որ ըսածս շատ ալ լաւ կը հասկնաս: Նոյնն է

այն իմաստով որ անունը կը դործածեն, ու ձեռով մը ժառանգած են ե՛ւ անունը, եւ անցեալը, որ իրենց գլխաւոր դրամադուրին է: Բայց իրենք նոյնը չեն, դաշնակցական չեն՝ այլ խօսքով: Անունով դաշնակցական են, այո՛, որովհետեւ նախկին Հ.Յ.Գ. — ի անունին եւ պատմութեան ժառանգորդներն են՝ պարզ այն պատճառով որ այսօր իրենք են այդ կաղմակերպութենէն մնացած կուսակցութեան անդամները: Կուսակցութիւն մը կայ այսօր, ճիշդ է, բայց նախկին յեղափոխական կազմակերպութիւնը չկայ:

— Իմ խօսքս ասոնց մասին է: Եւ դուն ճիշդ իրենց պէս կ'ուրանաս ներկայ Հայաստանի դոյութիւնը:

— Ատոր պատասխանը տուի արդէն: Գոյութիւն ունեցող բան մը ուրանալը իմաստ չունի, եւ ի միջի ալոց, ներկայ Գաշնակցութիւնը Սովետական Հայաստանը կ'ընդունի, կը ճանչնայ՝ որպէս Հայոց երկիր: Իսկ ես պիտի չըլլամ ուրացողը բնական է. իմ բառս պարզօրէն այն է, թէ Հայաստանի ներկայ կառավարութիւնը պետական մարմին չէ: Փաստ որ իրաւասութիւն չունի Հայութեան անունով, նոյնիսկ Հայաստանի անունով, որեւէ երկրի հետ բանակցելու կամ Հայութիւնը ներկայացնելու: Այլ հարց որ մեզ, այսինքն սփիւռքահայերս, բնա՛ւ չի ներկայացներ:

— Իրենցմէ զատ ոչ ոք կրնայ ներկայացնել:

— Իրենք իսկ կը մերժեն: Թէ ոչ այսօր պիտի ունենայիր քեզ ներկայացնող կառավարութիւն, որ պիտի պաշտպանէր քեզ, պիտի կարենար զբաղել հարցերովդ: Ո՛ւր է: Եւ ինչո՞ւ անտէր ես եւ անպաշտպան, եւ՝ այս խայտառակ վիճակին մէջ: Իրապաշտ ըլլանք եւ ընդունինք իրականութիւնները, հոգ չէ թէ ցաւ պատճառեն մեզի: Ատկէ կրնանք շահիլ միայն, եւ թերեւս կարենանք աւելի ողջախոհ կերպով մտածել ու դարման գտնել մեր ցաւերուն: Դաւաճանութիւն չէ, ոչ ալ ուրացում: Գիտակից ըլլալու եւ այդ գիտակցութիւնը ընդունելու քաջութիւն է, եթէ կ'ուզես: Ու գիտակից մարդիկ միայն, պատասխանատուութիւն ընդունող մարդիկ կրնան արդիւնքներու յանդիլ:

— Ասոնք բոլոր նոյն քիչէ խօսքերն են: Դեսպան չունինք, դեսպանատուն չունինք, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մէջ Հայաստանը ներկայացուցիչ չունի, եւ ուրեմն պետութիւն չենք: Ասիկա ուրացում չէ ալ, ի՞նչ է: Հզօր Սովետական Միութիւնը կը ներկայացնէ մեզ, որովհետեւ այդ հզօր պետութեան մաս կը կազմէ Հայաստանը: Զի՞ բաւեր:

— Ո՛չ, չի բաւեր: Որովհետեւ Սովետական Միութեան համար

Սփիւռք դոյութիւն չունի, ոչ ալ սփիւռքահայութիւն: Մարդիկը տեղեակ իսկ չեն, թէ Հայաստանէն դուրս հայեր կան:

— Տեղեակ են, — ձեռքերով օղբ ծեծեց Գասարեան, — եւ ինձմէ ալ, քեզմէ ալ աւելի լաւ դիտեն, թէ ի՞նչ կ'անցնի, կը դառնայ:

— Անկասկած: Իրենց լրտեսական դործակալութիւնը միայն: Ատկէ անդին՝ ոչինչ: Պրեժնեւը կը խորհիս որ երազին մէջ մե՞զ կը տեսնէ, եւ մեր պատճառով անքուն զիչերնե՞ր կ'անցընէ:

— Ուրիշ մտահոգութիւն չունի կարծես:

— Վստահ եմ, թէ բազմաթիւ մտահոգութիւններ եւ պարտականութիւններ ունի. անյետաձգելի եւ աւելի կարեւոր խնդիրներ: Պաղ պատերազմ, տաք պատերազմ: Այդ բոլորը զիս չեն հետաքրքրեր, այնքան ատեն որ միայն Հայութեան համար ժամանակ չունի, եւ դուն իսկ կ'արդարացնես անոր բազմազբազ ըլլալը: Աշխարհի ամենէն հեռուոր անկիւնին մէջ՝ Սովետական Միութեան հետ ոչ մէկ կապ ունեցող ցեղախումբի մը համար ժամանակ ունի, անոնց դոյութեանէն լուր ունի ու պաշտպան կը կանգնի անոնց: Բայց երբ հերթը Հայութեան դայ, նիւն՝: Ինչո՞ւ: Եւ յետոյ կ'ըսես որ մեր պետութիւնն է ու մեզ կը ներկայացնէ: Նրանի բաժնի ճիշդ ըլլար, եւ Սովետական Միութիւնը իսկապէս տէր կանգնէր մեզի, ստանձնէր մեր դատը եւ ինք հետապնդէր: Կրնա՞ս երեւակայել, թէ ինչ հրաշք կը պատահէր:

— Աղէտ կրնայ պատահիլ:

— Աղէ՞տ, — ցնցուեցաւ Տարօնեան:

— Անշո՛ւշտ: Մեզի համար կ'ուզես որ աշխարհին գլխուն փորձանք բերեն, խաղաղութիւնը վտանգեն, եւ երբորդ համաշխարհային պատերազմ մը սկսին:

— Եթէ պէտք ըլլայ, ինչո՞ւ չէ: Այնքան ատեն որ անարդարութիւն կայ, եւ անիրաւուած ժողովուրդներ կան, աշխարհի վրայ խաղաղութիւն չի կրնար ըլլալ: Իրենք այսպէս կ'ըսեն, եւ իրենց դործին եկած ատեն փառաւորապէս կը դործածեն այս պատճառաբանութիւնը: Ի վերջոյ՝ ուրիշներ մեզմէ աւելի լա՞ւ են: Այլ ժողովուրդներ աշխարհի խաղաղութիւնը կը վտանգեն, եւ անոնց իրաւունք կը տրուի. մենք... երբե՛ք իրաւունք չունինք: Կը ներես, արտօնէ՛ որ տարակարծիք ըլլամ եւ ասիկա երկու չափի եւ երկու կշիռի դրութիւն նկատեմ: Ինչ որ ճիշդ եւ արդար է այլ ժողովուրդներու համար, ճիշդ պէտք է ըլլայ նաեւ մեզի համար:

— Իրենք մեզի չափ խելք չունի՞ն կը կարծես:

— Անշուշտ որ ունին, եւ մեզմէ շատ աւելի փորձառու են:

Այդ խելքը դործածելով է որ մեզ քնացուցած են եւ մեր շահերուն հակոտնեայ լուծումները ընդունել տուած են մեզի: Իրենց յառաջ քշած բոլոր պատճառարանութիւնները (աշխարհի խաղաղութիւնը չլիտանդել, ժամանակը չէ, յարմար առիթին սպասել, եւն.) իւրացուցած ենք, եւ իրենցմէ աւելի մոլեռանդօրէն կը դործածենք մենք մեզի դէմ: Եւ եթէ իրենց մնայ, այսինքն եթէ թոյլ տանք որ իրենց խելքը դործածեն, մեզի համար բնաւ ժամանակ պիտի չըլլայ, յարմար առիթը բնաւ պիտի չստեղծուի: Քեզի պէս բարի ու պարզամտ մարդիկ միշտ համբերութիւն պիտի քարտղեն մեզի, մինչեւ որ համբերելու հարց չմնայ, աշխարհի վրայ հայ չմնայ: Ատիկէ ետք հարցը լուծուած կ'ըլլայ արդէն:

— Քու կարծիքովդ ի՞նչ պէտք է ընեն, — ճարահատ խնդաց Հմայեակի Գասբարեան:

— Մեզ ապուշներու տեղ չդնեն, — Գեղամ քմծիծաղով մը պատասխանեց երէցի խնդուքին: — Հասկնան, համոզուին որ ասկէ աւելի չեն կրնար խարել մեզ այլեւ: Եւ հաշտուին այն զաղափարին հետ, թէ մենք ալ կրնանք ըմբոստանալ եւ հաշիւ պահանջել:

— Բաւական վտանգաւոր մարդ ես եղեր: Քեզմէ պէտք է զլուշանալ:

— Որովհետեւ ըսածս ճի՞շդ է: Փախուտ չկայ. օր մը դէմ յանդիման պիտի դռնուին այս իրականութեան հետ: Նոր սերունդը կրնայ անակնկալի բերել զիրենք եւ ստնակոխ ընել ամէն ինչ: Իրենց հաշիւները բոլոր տակնուվրայ ընել:

— Ա՛յ կը տուժէ: Իրենց համար ի՞նչ տարբերութիւն կ'ընէ աշխարհի հզօրացոյն ոյժը...

— Ինչ ալ ըլլայ, մենք ասկէ աւելի չենք կրնար տուժիլ: Որքան ալ հզօր ըլլան, իրենք աւելի պէտք է մտահոգուին: Ճանճը փոքր է բայց սիրտ կը խառնէ, կ'ըսէ առածը: Կամ, եթէ կ'ուզես, փիղին եւ մրջնիկն օրինակը յիշենք: Փիղը կենդանիներուն մէջ ամենէն հսկան է, իսկ մրջնիկը՝ ամենէն մանրը. սակայն երբ այս վերջինը փիղին պոչին տակ մտած է եւ սկսած իր աշխատանքը, փիղը ոչինչ կրցած է ընել: Ներողութիւն, կատաղութիւնէն կամ անզօրութիւնէն դեմնաքարչ ասպայած է:

— Կուզես որ մրջնիկն ըլլանք:

— Իրենց համար ենք արդէն: Մեզի մրջնիկի չափ ալ կարելորութիւն առած չունին... բայց խեղճ փիղին պէս զաղափար չունին, թէ ի՞նչ վիճակի կրնանք հասցնել զիրենք՝ անդամ մը որ դործի լծուինք:

— Շատ լաւատես ես, — եզրակացուց Գասբարեան, — բայց դժբախտաբար իրականութիւնը հեքիաթ կամ մասալ չէ: — Ու ժամը ստուգելէ ետք, ըսաւ. — ուշացանք: Ով դիտէ դուրսը ինչե՛ր կը պատահին, իսկ մենք հոս կ'երազենք:

Գորգավաճառին մեկնելէն ետք Հիլտա, որ ճանճբանալով հանդերձ համբերութեամբ հետեւած էր իրենց հայերէն խօսակցութեան, հարցուց:

— Ինչի՞ մասին կը խօսէիք: Առաջին անգամն է որ բարեկամդ այսքան ջղազրգիւտ կը տեսնեմ: Պահ մը մտահոգուելու սկսայ նոյնիսկ, մանաւանդ որ դուն ալ կը վիճէիր դրեթէ: Կեանքիդ մէջ այսքան չես խօսած թերեւս. դո՞նէ հոս, քանի տարուան ընթացքին, այսօրուան չափ չես խօսած:

— Այսօր վիճելու տրամադրութիւն ունիմ, — կատակեց Գեղամ: — Կամ աւելի ճիշդը՝ կռուելու:

— Վայրկեան առաջ հոսկէ հեռանանք ուրեմն:

— Կը սպասեմ:

Այս ընթացքով ամէն մարդու հետ պիտի կռուիս, ընկեր Տարօնեա՛ն, եւ օր մըն ալ չուրջդ մարդ պիտի չմնայ: Ինքնիրեն հետ կը կռուէր հիմա, մինչ կը սպասէր դերմանուհիին, որ իր միակ փրկութիւնն էր, փրկութեան լաստը: Եթէ դուն ալ չըլլայիր, ի՞նչ պիտի ընէի: Այս ամբողջ դառնութիւնը, զայրոյթն ու յուսախարութիւնը ինչպէ՞ս պիտի կարենայի տանիլ, եթէ չպարպէիր յորդած բաժակը ամէն դիշեր: Բայց ի՞նչ բաժակ: Եթէ միայն զիտնայիր, թէ ի՞նչ յիմար մարդ է սիրականդ, որ այնքան քաղաքավար է, այնքան փափկանկատ: Միայն ես ինձի հետ քաղաքավար չեմ կրնար ըլլալ, ու չեմ կրնար սորվիլ, թէ կեղծեղն ալ օգտակար է երբեմն: Եւ ուրեմն ես զիս չեմ կրնար խարել, այսինքն հաշտուել որոշ իրականութիւններու հետ եւ ծակ դուրսով չպտըտիլ: Երբ քեզի անկարելի է կ'ըսեն, ինչո՞ւ չես հասկնար, ու երբ մի երազեր կ'ըսեն՝ կը զայրանաս: Մարդը իրաւունք չունի՞: Դուրսը ինչեր կը պատահին, իսկ դուն հոս նստած կ'երազես: Գինետան մէջ աղավաբի կը խմես, ինքնամատոյց սա դերմանուհիին հրապոյրներուն անձնատուր, ու հերոսաբար վճիռ կ'արձակես: Իսկ ինք ի՞նչ կ'ընէ: Գէթ քեզի պէս չ'երազեր, եւ աւելի դործնական է: Այնքան դործնական, որ ինք քեզի կը պոռայ, թէ ցնորք է խօսածդ, լուսնոտ մարդու դառանցանք: Հասկցա՞ր, Պր. խմբադի՛ր: Թերթ հրատարակել չէ միայն հարցը, այլեւ՝ հաշիւ ներկայացնել բոլորին: Այլապէս կը ճգմեն քեզ, կ'ոչնչացնեն: Ինչպէ՞ս կը համարձակիս երազել, տեսիլ ունենալ եւ միամտաբար դրել

նոյնիսկ այդ մասին: Դուն ո՞վ ես, ի՞նչ կը ներկայացնես, որ տեսիլ կ'ունենաս եւ ճշմարտութիւնը կը յայտարարես՝ առանց խպնելու: Յիմա՛ր: Ձե՞ս ամէնար: Չգացում չունի՞ս, խիղճ չունի՞ս, ու մանաւանդ՝ խելք: Ճիշդ է, եթէ խելք ունենայիր, թերթ չէիր հրատարակեր արդէն, եւ կամ սիրայօժար կը յանձնէիր զայն աւելի զործնական երիտասարդներու: Ինչո՞ւ չես կրնար ընդունիլ, թէ քառասունին հասած ես արդէն, այսինքն ծերացած: Աշխարհի վրայ մարդկութիւնը յուզող ընկերային ի՞նչ հարցեր, շարժումներ կան, իսկ դուն վարժապետի պէս նոյն միտքը կը կրկնես, հա՛ կը կրկնես: Մերը հին պատմութիւն է. դուն դէժ աչքանը հասկցած, ըմբռնած պէտք է ըլլայիր, զոռամա՛ծ վարժապետ: Գրող ես, շատ բարի: Կօշիկէդ վեր ինչո՞ւ կ'ելլես սակայն: Գրականութիւնը բան մըն է, քաղաքականութիւնը... բայց ես քաղաքականութեան հետ ի՞նչ զործունիմ: Մո՛, ես ձեր... շանորդինե՛ր, ձեր քաղաքականութեամբ զիս կազապարի մէջ՝ պիտի դնէք կը կարծէք: Իրականութիւնները տեսնելն ու ճշմարտութիւնը ընդունիլը քրէական յանցա՞նք է, եւ կամ ձեր տրամաբանութեամբ՝ պարզամտութիւն: Սրիկանե՛ր: Ձեր լայնախոհութեամբ կամ այլախորութեամբ կրնաք այս ժողովուրդը հազար տարի եւս քնացնել: Աշխարհի միակ խաղաղասէր ժողովուրդը պիտի կերտէք, եւ զայն դնէք թանգարան: Ես խաղաղասէր չեմ, կը ներէք, եւ պիտի չըլլա՛մ: Որովհետեւ թանգարան կոչուածը չեմ սիրեր, ու թանգարանային լուծումներու չեմ հաւատար: Կը մոռնա՞ք որ թանգարանը տեսակ մը դամբարան է, պատմութեան դամբարան: Ո՛չ թէ թանգարան: Հայութիւնը կ'ուզէք մոմիայի՞ վերածել, ու հայերէն լեզուն սեպագիր արձանագրութեա՞ն: Ձէ՞ք խորհիր, որ աշխարհը մեծապէս կը տուժէ, երբ հայերէնի նման լեզու մը կը կորսուի կամ կը դառնայ մեռեալ լեզու: Աստու չէ՞: Լատիներէնին ախոս չէ՞, օրինակի համար, կամ հին յունարէնին: Քաղաքակրթութեամբ մարդկութեան երկու ամենէն կատարեալ լեզուները իջեցուցած են դամբարան, եւ մարդկութիւնը ի՞նչ շահած է: Ու ոսկեղնիկ դրարարը, որ նոյնպէս իջեցուցած են դամբարան, անփոխարինելի կորուստ չէ՞: Մարդկութեան համար մանաւանդ: Ա՞յս է ձեր մարդասիրութիւնը: Ես կը նախընտրեմ երազել, քան թէ ձեզի պէս մարդասէր ըլլալ: Դո՞ւրսը: Այո՛, մահու եւ կենաց կռիւ է ոմանց համար, ու զէնք բարձրացնողները բոլոր երազի մը համար կը կռուին հիմա: Իսկ մենք: Մեզի արգիլուած է երազել:

Ի՞նչ կ'ընէր հոս, Գեղամ մտածեց յետոյ, երբ Հիլտա կաղմ ու պատրաստ կանգնեցաւ դիմացը: Այնքան մօտ, ծանօթ, մտերիմ բարեկամուհի մըն էր այս աղջիկը, որ ձեռով մը իր էութեան մաս կը կաղմէր — անխուսափելի, տուեալ իրականութիւն մը, որքան ինք էր՝ ինքնիրեն համար: Բայց նաեւ օտար մըն էր: Ո՛չ միայն ազգութեամբ, այլ որպէս մարդ: Բացարձակ անծանօթ մըն էր: Մտերիմներ էին շուրջ երկու տարիէ ի վեր, բայց ուրիշ անձ մըն էր ան — պարզօրէն օտար, անծանօթ: Յաճախ կ'ունենար այս անդրադարձը, մանաւանդ վերջին շրջանին, եւ կը տապնապէր: Որովհետեւ իր պարագային, զիտէր, մեկուսացման նախանշան էր: Կեանքին մէջ ոչ ոքի հետ կըրցած էր մտերմանալ եւ անձ մը հարազատ նկատել: Իր հարազատները նոյնիսկ — հայրը, եղբայրները, մայրը: Միրած էր, կը սիրէր, ու կ'ընդունէր անոնց իրականութիւնը, կապը, պատասխանատուութիւնները, բայց առանձին անհատներ էին անոնք իրե համար — իրմէ անկախ, իրմէ դուրս — տարբեր մարդիկ՝ պարզօրէն:

Հիլտայի հետ իր մտերմութիւնը ինքնաբերաբար կաղմաւորուած, փթթած ու հասունցած հանելուկ էր կամ հրաշք, որու մասին չէր մտածած երբեք: Ժամանակ չէր ունեցած մտածելու, որովհետեւ այնքան բնականօրէն պատահած էր, որ չէր անդրադարձած նոյնիսկ: Գեղամ Տարօնեան, որ միշտ ինքնամփոփ, վերապահ, դրեթէ այլամերժ մարդ մը եղած էր, դերմանացի այս աղջկան հետ հանգիստ զգացած էր — ազատ, անկաշկանդ եւ ուրախ: Կրցած էր խընդալ, կատակել անոր հետ, եւ զարմացած էր անշուշտ: Ինքզինք զարմացուցած էր այլ խօսքով, նկատելով որ այս խնդացող, ազատագրուած մարդը չէր ճանչնար: Ձէր դժգոհած բնականաբար, եւ Հիլտային հետ ինք եւս մեծ գոհունակութեամբ յայտնաբերած էր սա միւս մարդը, որ իր իսկական անձն էր: Ու չէր կրցած հաւատալ: Անոր մէջ այնքա՞ն պարզութիւն կար, այնքա՞ն մանկուսակ ուրախութիւն, որ տխրած էր երբեմն, տապնապած՝ կորսուած տարիներու հաշտոյն:

Եւ անշուշտ՝ ինքզինք չէր հարցաքննած երբեք, հաշիւ չէր պահանջած եւ անտեսած էր բոլոր տեղի եւ անտեղի ակնարկութիւնները, որ ուղղուած էին իրեն երբեմն ծանօթներու կամ բարեկամներու կողմէ: Ու բացատրութիւն չէր տուած երբեւիցէ՝ զիտակցարար կամ անզիտակցարար: Իրեն համար այդ տեսակ հարց չկար: Ալիսի սէրը նոյնիսկ չէր անդրադարձած այս մտերմութեան վրայ — չէր խանդարած կամ խախտած անոր բնական գեղեցկութիւնը: Ո՛չ Ալիսին

խոստովանած էր այս մասին, եւ ոչ ալ Հիլտային խօսած էր երկրորդ կնկայ մը մասին: Պահանջ չէր զգացած պարզօրէն: Աւելի ճիշդը՝ անհրաժեշտութիւն չէր զգացած, որովհետեւ դիտակցութիւնը չէր ունեցած նմանօրինակ խոստովանութեան մը: Իրարմէ բոլորովին տարբեր եւ անկախ, եւ երկուքն ալ անխուսափելի իրականութիւններ էին:

Բայց տարօրինակ կը զգար հիմա դարձեալ, ու կը տխրէր: Ինքզինք չէր կրնար վերլուծել այլեւս եւ մեկնել այս անակնկալ փլուզումը: Սանդալաութեամբ եւ փոխուելու, հանգստանալու անկնկալութեամբ եկած էր հոս, հակառակ տիրող անապահով կացութեան եւ վտանգին: Բազմազրազ, լեցուն օր մը եղած էր այս Շարաթը, եւ դո՛ւ չէր ընդհանուր առմամբ: Իր առօրեայ դրական աշխատանքը կատարած էր, Ալիսին հետ կրցած էր քանի մը ժամ անցընել, ու յետոյ ներկայ եղած էր նոյնիսկ տղոց հերթական հանդիպումին: Ու վերջաւորութեան հասած էր հոս՝ իր օրը եզրափակելու: Ամէն ինչ կատարեալ էր, անթերի: Կրնար խաղաղ գիշեր մը անցընել ու քանի մը ժամ քնանալ: Այս հիասթափութիւնը չէր նախատեսած թէ եւ: Իր պարզազոյն բացատրութեամբ՝ հիասթափութիւն էր այս պահուն զգացածը: Ինչո՞ւ: Ո՞վ էր սա դերմանուհին, ինչո՞ւ կ'երթար անոր հետ, եւ մինչեւ ե՞րբ: Վերջ չունէր եւ տեղ չէր կրնար հասցնել զինք: Ինքզինք կը խարէր, թէ Հիլտան: Իրաւունք չունէր. այսքան անձնասէր չէր կրնար ըլլալ:

— Քալե'նք, — խօսեցաւ աղջիկը ի վերջոյ: — Ժամը մէկ եղաւ դրեթէ:

— Անթի՞ր ես:

— Վստահ եմ որ ճաշարանները բոլոր փակ են: Տունը պատառ մը կ'ուտենք:

— Իսկապէս վախնալիք է, — հոգեբանօրէն փափոց Գեղամ, երբ փողոց ելան: — Անհաւատալի է. Շարաթ գիշերով Ծինիսին այս վիճակին մէջ: Տխրութիւն կը պատճառէ, գիտե՞ս:

— Ես աւելի վախ կը զգամ: Հոսկէ տուն, այս երկու քայլը բնաւ պիտի չուզէի առանձին քայլել: Յուսամ այսպէս չի մնար. թէ ոչ անտանելի է:

— Ձի կրնար երկար տեւել: Ասկէ ետք ամիսը անգամ մը այս տեսակ խանդարում մը պիտի ըլլայ, որովհետեւ միշտ դէպքեր կամ բախումներ պիտի պատահին: Շրջան մը դէթ. անխուսափելի է: Մինչեւ որ լուծում մը գտնեն եւ հաշտեցնեն երկու կողմերը:

— Յուսանք: Թէ ոչ վախէս կը մեռնիմ ես:

— Ի՞նչ տեսակ դերմանացի ես, — Գեղամ կատակեց: — Շատ հետաքրքրական է, — լրջացաւ յետոյ — ես որ գիտեմ, քաջ եւ ինքնավստահ աղջիկ մըն ես:

— Այս տեսակ պայմաններու մէջ առանձին աղջիկ մը միշտ անապահով կը զգայ: Ձինեալ այր մարդը հրէշի կը վերածուի, մանաւանդ երբ երկրին մէջ օրէնք, կառավարութիւն չմնայ:

— Երկրին մէջ օրէնք ալ կայ, կառավարութիւն ալ: Ըսածդ հետաքրքրական է թէ եւ. մարդ արարածին մասին մեծ համարում չունիս ըստ երեւոյթին:

— Դժբախտաբար: Իսկապէս ցաւալի է: Մարդուն նուազագոյն առիթը տուր, եւ արդէն դադանի կը վերածուի: Ձեւ կրնար երեւակայել, չես ուզեր հաւատալ... Գերմանիոյ մէջ պատահածը, օրինակի համար, պատերազմէն առաջ եւ պատերազմի միջոցին:

— Դուն այն ատեն ծնած իսկ չէիր հաւանաբար, — զարմացաւ Գեղամ:

— Ի՞նչ կարեւորութիւն ունի: 1942-ին ծնած եմ, բայց յետոյ ամէն ինչ իմացած եմ, գիտեմ: Պարզօրէն սարսափելի է, եւ ես կ'ամջնամ միայն ու մինչեւ այսօր չեմ կրնար հաւատալ:

— Հայրդ ի՞նչ կը մտածէ այս մասին, — հետաքրքրեցաւ Տարօնեան, թէ եւ գիտէր, թէ խոհեմութիւն չէր ըրածը: — Որքան կը յիշեմ, հայրդ նացի եղած է, ըստ քեզմէ իմացածիս:

— Հայրս հիւանդ, անհաւատարակ ըլլաւ մարդ մըն է այսօր, եւ ճիշդ այս պատճառով հաւանաբար: Համոզումներով նացի մըն է տակաւին, բայց վստահ եմ որ ճիշդ ինձի պէս կը զգայ այսօր եւ չի կրնար այն ատեն դործուած ոճիրները ըմբռնել կամ արդարացնել: Գէթ ներքնապէս, իր ներաշխարհին մէջ:

— Քանի՞ տարեկան է:

— Օ՛հ, վաթսուներեքին մէջ պէտք է ըլլայ հիմա, — յարկաբաժինին դուռը բացաւ Հիլտա: — Լուռ, առանձին մարդ մըն է:

— Ատոր համար չես ուզեր Գերմանիա երթալ:

— Հայրս կը սիրեմ, բայց չեմ կրնար հետը ապրիլ:

— Կը հասկնամ: Նիւթը փոխենք, եթէ չես ուզեր այս մասին խօսիլ:

— Քու հետդ կրնամ: Պատճառ չունիմ նիւթէն խուսափելու յամենայն դէպս: Թէ եւ պիտի նախընտրէի քու հօրդ, ծնողքիդ մասին խօսիլ: Դուն իմ մասին ամէն ինչ գիտես, մինչդեռ ես գաղափար իսկ չունիմ, թէ ծնողքդ ողջ են կամ ոչ:

— Ողջ են: Գիտնալիք, հետաքրքրական ոչինչ կայ իրենց մա-

սին : Պարզ, սովորական մարդիկ են : Իսկ զիս կը ճանչնաս : Իրականութեան մէջ զիս ոչ ոք այնքան լաւ կը ճանչնայ, որքան դուն : Ոչ իսկ ծնողքս կամ եղբայրներս :

— Շատ դաղտնապահ մարդ ես, գիտեմ, խորհրդաւոր ըլլալու աստիճան : Ուրեմն եղբայրներ ունիս. հետաքրքրական կ'ըլլայ ճանչնալ զիրենք :

— Ո՛չ դաղտնապահ եմ, ոչ ալ խորհրդաւոր, — խնդաց Գեղամ եւ դրակեց իր սովորական տեղը հիւրասենեակին մէջ ու խորասուզուեցաւ դարձեալ մտածումներու մէջ, մինչ Հիլտա խոհանոց անցաւ :

Եթէ միայն գիտնաս, դերմանուհիին հետ խօսեցաւ իր առանձնութեան մէջ : Գաղտնապահ : Աշխարհի ամենէն սրտաց մարդն եմ, եթէ ըսածիս կամ խօսածիս կարեւորութիւն տուող ըլլայ : Դուն դէժ ախպէս պէտք չէ խորհիս : Յանցաւոր չես թէ եւ : Ինչպէ՞ս կրնամ ակնկալել որ զիս հասկնաս, երբ աղակիցներս նոյնիսկ ամէն կարգի յիմարութիւն կը վերադրեն ինծի : Անոնք հայ են, ու զիս լուսնոտ կը կարծեն՝ ամէն անգամ որ Վանի կամ Պիթլիսի մասին խօսիմ կամ դրեմ : Իրենց համար ես անգործնական ապուշ մըն եմ, հիւանդ, մոլեռանդ, աղապանամուլ : Որովհետեւ պարզ իրականութիւններու մասին կը խօսիմ : Ի՛նչ տեսակ աղապանամուլ եմ, որ մինչեւ այսօր քեզի Հայութեան կամ հայկական դատի մասին չեմ խօսած : Բայց նաեւ այլասերած եմ, որովհետեւ օտար բարեկամներ ունիմ ու կը յարաբերիմ անոնց հետ : Տղէտ եմ եւ աշխարհէն կտրուած, ինչպէս իրենք կը ընտրուին, այսինքն իրապաշտ չեմ : Ալիսը նոյնիսկ, որ հայ աղջիկ մըն է, հայու կին, հայ զաւակներու մայր, հայկական դպրոցի մը մէջ ուսուցչուհի, եւ հայ գրողի մը սիրահարած է, պարզօրէն կը խորհի որ կը զոռանցեմ՝ երբ Արեւմտեան Հայաստանի եւ մեր իրաւունքներուն մասին խօսիմ : Ձիս այնքան կը սիրէ, որ հմայուած եւ հաւատարմութեամբ կը հետեւի բոլոր դրածներուս, նոյնիսկ խօսածներուս, բայց ոչինչ կը հասկնայ : Ուրեմն ինչպէ՞ս կրնամ ակնկալել որ դուն հասկնաս : Եւ յետոյ զիս դաղտնապահ, խորհրդաւոր մարդ կը կոչես : Արարատը, Արաքսը, Կարսն ու Վանը, Ղարաբաղն ու Սասունը քեզի ի՛նչ կ'ըսեն, եթէ նոյնիսկ գիտնաս ասոնց ինչ ըլլալը : Դուն մեզաւոր չես, բայց ես ինչպէ՞ս կրնամ լուսնոտ ըլլալ, երբ քեզի նոյնիսկ չեմ յայտնէր այս բոլորը :

— Ի՞նչ պիտի խմես, — Հիլտայի ձայնը հասաւ խոհանոցէն :

— Ամենէն ծանր խմիչքը ի՞նչ է :

— Ինչո՞ւ, կ'ուզես գինովնա՞լ :

— Ոչ, կ'ուզեմ քնանալ :

— Դուն որքան խմես, այնքան կը սթափիս, մանաւանդ այս ժամէն ետք, — աղջիկը բարձրացուց ձայնը :

— Աւելի լաւ չէ՞ : Գէթ քեզի համար :

— Այո՛, շատ անուշիկ կ'ըլլաս այդ վիճակին մէջ : Եւ հայերէն խօսելու կը սկսիս :

— Ես դեր չունիմ ատոր մէջ, — Գեղամ դժկամութեամբ կանգնեցաւ եւ քալեց դէպի խոհանոց :

— Վոտկա՞, — հարցուց աղջիկը :

— Գէջ գաղափար չէ :

— Ո՞վ դեր ունի :

— Դուն : Որովհետեւ հայերէն չես գիտեր : Գաղտնապահ եմ ըսիր. գաղտնիքներս ծածկելու լաւագոյն կերպը չէ՞ : — Բայց յետոյ Տարօնեան ինքն իրեն մտածեց. — երանի քեզի : Երջանիկ արարած :

— Ի՞նչ ունիս, — Հիլտա լրջօրէն մտահոգուեցաւ :

— Հայ ժողովուրդին մասին ի՞նչ գիտես :

— Գրեթէ ոչինչ : Պէ՞տք է գիտնամ : Կարեւորը մարդն է, եւ ես նոյնիսկ ծնողքիդ մասին չեմ հետաքրքրուած, որովհետեւ քեզ կը ճանչնամ : Միւսները բոլոր մանրամասնութիւններ են, որ շատ ալ արժէք չունին : Ընտանիք, աղք, անցեալ, պատմութիւն՝ ասոնք յաւելեալ ծանօթութիւն կու տան, այդքա՛ն : Մարդը մարդուն հետ կ'ապրի, եւ մարդ է՝ նախ եւ առաջ, ոչ թէ հայ կամ դերմանացի :

— Ինչ հետաքրքրական աշխարհ է, չէ՞. դերմանացի մը այսպէս մտածէ : Աշխարհէն կարելի է յոյս ունենալ ուրեմն :

Գերմանուհին չվիրաւորուեցաւ. ոչ իսկ կարեւորութիւն ընծայեց ըսածին : Բարեկամին անկապ եւ երբեմն անտեղի ակնարկութիւններուն վարժուած էր այլեւս, ու երբեմն չէր հասկնար իսկ ըսածը : Որ զինք աւելի հետաքրքրական կը դարձնէր : Կատարեալ հանելուկ մըն էր — լուս, սակաւախօս, բայց անակնկալներով լեցուն եւ սրամիտ մարդ մը : Եւ բնականաբար պատասխանելու հարկ չզգաց նոյնիսկ :

Իսկ հայը հիացաւ, նախանձեցաւ այս յանձնապատան աղջկան, եւ ուզեց հաւատալ իր իսկ ըսածին, թէ՛ աշխարհէն յոյս պէտք է ունենալ տակաւին : Բայց չխօսեցաւ : Երանելի աղջիկ է, մտածեց, միամիտ եւ ժուժկալ : Սակայն նաեւ՝ սահմանափակ, անտարբեր : Ինքնիրեն համար փոքր աշխարհ մը ստեղծած էր եւ կը մերժէր ատկէ դուրս ելլել եւ տեսնել միւս, իրական աշխարհը : Մուտք դործել ուրիշներու կեանքէն ներս, եւ իսկապէս ճանչնալ մարդը քանի ըստ

իրեն մարդը ինքն էր կարելուր: Անտարակոյս: Բայց ինչպէ՞ս կարելի էր ճանչնալ զայն: Ինք, օրինակի համար, այսինքն Գեղամ Տարօնեան կոչուած հայ դրողը, որ նախապաշարումներ ալ չունէր եւ տարիներու ընթացքին սորված էր ըլլալ լայնախոհ, ինչո՞ւ եղած էր այսպէս անհաշտ եւ անզիջող: Ինչո՞ւ այսպէս դառնացած էր եւ չէր կրնար ներել աշխարհին: Նոյնիսկ իր ազգակիցներուն:

Ամէն մարդ կ'ապրէր, իսկ ինք միայն կը կոռէր՝ առաւելաբար ինքնիրեն հետ: Եւ որքան տարիները յառաջանային, այնքան աւելի կը կարծրանար, փոխանակ խաղաղելու եւ ընդունելու կատարուածը: Տարիքն ու փորձառութիւնը պէտք է հասունցնէին զինք, իմաստուն դարձնէին. բայց կը մնար նոյն յիմարը: Այսինքն՝ իմաստուն չէր կրնար ըլլալ եւ հաշտուիլ իրականութեան հետ — ընդունիլ Հայութեան պարտադրուած լուծումը: Չընդունելով ոչինչ կը փոխուէր կացութենէն, զիտէր, բայց ինք պարզօրէն չէր կրնար հաշտուիլ զաղափարին հետ: Որքան ալ փորձէր ինքզինք համոզել, տրամաբանել, զգաստութեան կոչել իր մէջ վրէժի ցցած երիտասարդը, որ երիտասարդ չէր այլեւս, կը մնար, այո՛, նոյն յիմարը: Ու երբեմն կը զայրանար նոյնիսկ, կատաղութիւն կու գար վրան, փոխանակ համոզուելու, երբ պատահածին դիտակցութիւնը անակնկալօրէն յատկանար, վերադառնար իրեն՝ մինչ ինք կը կրկնէր, կը կատարէր այդ ապարդիւն փորձը: Որ ինքզինք խաբելու ճիգ էր նաեւ — նահանջ, պարտութիւն, դաւաճանութիւն: Նմանօրինակ պայմաններու մէջ զիտակից որոշումով մը կ'ուզէր ընդունիլ պարտութիւնը եւ խաղաղիլ, բայց կը յանդէր ճիշդ հակառակ արդիւնքին:

Ինչպէ՞ս կարելի էր ընդունիլ պարտութիւնը: Եւ ինչո՞ւ: Ինչ փաստած ըլլալու համար: Որպէսզի կատարուէր մարդկութեան կամքը: Ո՞ր մարդկութիւնը, ինչ մարդկութիւն է ասիկա: Այնքան ատեն որ մարդկութիւնը իմ մասին չի մտածեր, ես բնաւ պէտք չունիմ անոր, եւ ուրեմն՝ մտածելու ի՞նչ հարց: Իմ ցաւս իր ցաւը չէ, որովհետեւ չի զգար զայն. եւ քանի այսպէս է աշխարհի օրէնքը, ես ինչպէ՞ս զգամ ուրիշներուն ցաւը: Իմ ցաւս աւելի մեծ է, աւելի կարելուր, որովհետեւ ե՛ս կը զգամ զայն, ե՛ս կը դիեցնեմ, մինչ մարդիկ, որոնք չեն ուզեր լսել իսկ իմ ցաւիս մասին, կը փորձեն իրենցը պարտադրել ինծի՝ պահանջելով միաժամանակ որ իմ ուրանամ: Բայց իմ ցաւս աւելի մեծ է, որովհետեւ ես կը զգամ եւ իրենք չեն զգար զայն: Այս պարզ իրականութիւնը ըմբռնել այնքան՞ դժուար է: Եւ յետոյ՝ ես կը կոչուիմ յամառ, ազգայնամոլ, Փաշխտ: Նոյնիսկ Փաշխտ, որովհետեւ չեմ ենթարկուիր իրենց Փաշիգմին, միտ-

քի եւ հողի բռնութեան: Այսինքն չեմ ըլլար ոչխարամիտ, սարուկ, եւ ստորադաս չեմ զգար: Բոլորը անխափր՝ վարժուած են հայր ստորադաս նկատելու, ու երբ կը խախտի իրենց հաստատած օրէնքը, կ'ընդվզին, կը զայրանան, ու ցեղամոլութիւնը քեզի կը վերադրեն: Չեն կրնար հանդուրժել, որ հայը թօթափէ վրայէն ստրկամտութիւնը եւ իրենց հաւասար նկատուի: Հաւասար զգայ:

— Ի՞նչ ունիս, — Հիշտա կրկնեց հարցումը:
Գեղամ սթափեցաւ, անզգալաբար ժպտեցաւ եւ ըսաւ:
— Պէտք է խմեմ:
— Բայց ինչո՞ւ: Դուն քեզի թշնամի՞ ես: Առողջութիւնդ պիտի փճացնես այս կերպով: Այդ ձերուկը ինչ խօսեցաւ քեզի, որ այսքան ազդուած ես:
— Ազդուած՞:
— Ներս մտնելիդ ի վեր չես խօսած դրեթէ: Լուր ունի՞ս թէ...

— Ըսել կ'ուզես, թէ այնքան շատ կը խօսիմ սովորաբար:
— Իմ հետս կը խօսիս դէթ, եւ շատ աւելի լաւ տրամադրութեան մէջ կ'ըլլաս ընդհանրապէս:
— Գիտեմ, եւ ստոր համար երախտապարտ եմ քեզի:

Այդպէս ալ Գեղամ Տարօնեան չկրցաւ քնանալ այդ դիշեր: Նախ շարունակեց խմել, մինչ Հիշտա շուրջը դարձաւ, կատակեց, խօսեցաւ ու նոյնիսկ զինք մխրճեց խօսակցութեան մէջ՝ իրեն յատուկ մեղմ ու հրաշագործ ազնուութեամբ: Պահ մը վերադառաւ նոյնիսկ զուարթութիւնը, եւ որքան խմեց այնքան սթափեցաւ ու մոռցաւ ամէն ինչ — մարդկութիւնը, Սեղրակ կոչուած երանելին, Հմայեակ Գասբարեանը, Հայութիւնը, Լիբանանը, լիբանանցին, դուրսի բախումները, եւ նոյնիսկ՝ իր ցաւը: Կատակեց, խնդաց, ու նկատեց որ Հիշտա եւս կը խնդար: Լիահագագ, կուչտ ու կուռ, կարծես ուրախութիւնը ինք հնարած ըլլար: Ու դո՛հ մնաց, խաղաղեցաւ, դուրս եկաւ իր անձէն, դրիեց, սիրեց սա աղջիկը, որ իր միակ փրկութիւնն էր, փրկութեան լաստը: Աշխարհի վրայ միակ արարածը, որ կրնար ուրախացնել զինք, հանդարտեցնել. որու մարմինը կը բերեղացնէր, կը կատարելագործէր իր մարմինը: Եւ կը սիրէր այդ մարմինը, մերկութիւնը, գեղեցկութիւնը, որ հրաշագործ էր անոր ազնուութեան նման: Ֆիզիքական ցանկութիւն չէր ասիկա, այլ դեղեցիկի պաշտամունքը: Եւ անոր մարմինը կամ մերկութիւնը չէր որ կը պաշտէր, այլ այդ մերկութեան խորհուրդը, որ կը վերացնէր զինք, կ'ազատագրէր՝ իր իսկ անձէն: Անմեղ երեխայի մը կը վե-

րածէր զինք եւ իր անհրապոյր կեանքը կը լեցնէր, իմաստ կու տար անոր վերստին, ամէն անգամ, ամէն անգամ:

Բայց եւ այնպէս դիշերը չկրցաւ քնանալ: Քովը, անկողինին մէջ քնացող մերկութիւնը հարազատ էր իրեն, բայց աղջիկը, ինք, օտար մըն էր: Եւ առանձին էր դարձեալ՝ սիրելի բայց օտար աղջկայ մը հետ, եւ անոր անկողինին մէջ: Ահաւոր առանձնութիւն մըն էր՝ անհանդուրժելի, անտրամարանական, վայրազ եւ բազմաձայն: Բազմապատիկ առանձնութիւն մը, որ կը խանդարէր, կը շարշարէր զինք: Կուզէր քնանալ ու հանդիլի, պարզ ու սահմանափակ մարդ մը ըլլալ. այլ խօսքով՝ դործնական, յանձնապաստան խրտուիլակ մը, մեքենայ մը, որ միտք չունէր, մտածում չունէր, եւ ոչ ալ երազ: Չմտածէր պարզօրէն, եւ ապրէր միայն միւս բոլոր մահկանացու արարածներուն պէս: Այս պարազային՝ քնանար: Ու լռէին ձայները բոլոր, իր մէջ բարբառող բոլոր՝ ձայները:

7.

Սեպտեմբերի սկիզբը մայրաքաղաքի ապահովութիւնը հիմնականօրէն խախտած էր արդէն, եւ ապրիլը անկարելի դարձած դրեթէ: Իսկական պատերազմ էր, կամ դէթ՝ քաղաքացիական պատերազմ, որ առօրեայ խօսակցութեան նիւթ էր այլեւս: Եւ չէր կրնար չըլլալ, որովհետեւ զինեալ բախումներն ու արիւնյակողութիւնը իրենց առօրեային մաս կազմած էին: Կոխները կը մղուէին զանազան ճակատներու վրայ, եւ ամէն օր նոր թաղամաս մը կ'աւելնար ցանկին վրայ. ամէն օր շրջան մը կը բռնկէր, կը տաքնար — իրենց նորագոյն բառամթերքի ամենէն դործածական բառերէն մէկը — կը տաքնար, կը ճարձատէր եւ անմեղ զոհեր կը խլէր: Անակնկալօրէն ծուղակին, այսինքն կրակի դօտին մէջ բռնուած քաղաքացիները, որոնք մեռնելէ ետք կը վերածուէին թուանշաններու: Սպաննուողները մարդիկ չէին — մեռնելէ ետք մարդ ըլլալէ կը դադրիս արդէն — այլ ցուցակազրական տախտակի մը քանակական հաշուարկումներու կշիռին մէջ նետուած անշունչ եւ անմարմին թիւեր:

Կեդրոնական շուկայի կարգ մը մասերը քանդուած էին, որոշ վաճառատուներ՝ կողոպտուած, իսկ քանի մը շէնքեր նոյնիսկ հըրկիղուած էին: Այսքանը մինչեւ Սեպտեմբեր, եւ այս միջոցին, երբ խարուսիկ խաղաղութիւնը կը վերահաստատուէր զինադուլէ մը ետք,

քաղաքացիները բնականաբար կը վերադառնային իրենց աշխատանքին՝ աւելի ճանճրոյթէ կամ հետաքրքրութենէ մղուած երբեմն: Օրեր կամ շաբաթներ տուներուն մէջ փակուած մնալէ ետք, դուրս կ'ըլլին ու կատարուածը կամ քանդուածը տեսնելը անհրաժեշտութիւն կը դառնար: Արդէն իսկ վարժուած էին եւ համոզուած, թէ մնայուն եւ անընդմէջ աշխատանք պիտի չունենային այդ միջոցին, բայց չէին կրնար յուսահատիլ: Մահը իր ճամբով, կեանքն ալ իր ճամբով: Իրենք ողջ էին տակաւին, եւ ուրեմն՝ պէտք է շարունակէին իրենց կեանքը կարելի եղած չափով բնական ընթացքի մէջ պահել — աշխատիլ, իրենց տան եւ զաւակներուն ապրուստը հողալ, անհրաժեշտ անդեղէնը ապահովել, եւ ապրիլ ի վերջոյ:

Տաքը թէեւ մասամբ մեղմացած, տան մէջ օդը հեղձուցիչ էր սակայն, եւ Արամ Սարգիսեան դժուարութեամբ ինքզինք կրնար զսպել: Տասը օր կ'ընէր ահաւասիկ որ տան մէջ փակուած էր դարձեալ, ու դադափար իսկ չունէր, թէ վաճառատունը ի՞նչ վիճակի մէջ էր: Բարեբախտաբար կեդրոնական շուկայէն դուրս էին իրենք, բայց նոյն շրջանին մէջ յամենայն դէպս: Ոչ ինք կրցած էր հասնիլ հոն ոչ Մուշեղը, եւ ոչ իսկ Ժազը, որ ասկէ առաջ երբ ընդհարումներ եղած էին, միշտ յաջողած էր կերպով մը երթալ եւ անձամբ հաստատել, թէ հաստատութիւնը գոյութիւն ունէր տակաւին: Այսինքն չէր այրած կամ կողոպտուած: Եւ այդ միջոցին կրցած էին բոլոր կարեւոր փաստաթուղթերն ու թղթածրարները տուն փոխադրել, ուր առժամապէս դէթ աւելի ապահով էին: Այս անգամ անկարելի եղած էր չըրջանին մօտենալ, եւ օրեր լման՝ տունէն իսկ չէին կրցած դուրս ելլել: Բախումները ամիսէ ամիս, տեղափոխուելով, հասած էին իրենց, եւ հիմա ամենէն վտանգաւոր ճակատներէն մէկը կը նկատուէր Քանթարիի ամբողջ թաղամասը: Ինք թէեւ անհանդարտ եւ ջգային, սկզբած էր աւելի ընտանիքին ապահովութեամբ մտահոգուիլ, որովհետեւ ամէն կարգի դրոյցներ սկսած էին շրջիլ: Անմեղ մարդիկ իրենց տուններուն մէջ խոշտանդուած էին, սպաննուած, ու երբեմն նոյնիսկ անհետացած: Երխտասարդ աղջիկներ եւ կիներ բռնաբարուած էին, եւ երբ ատիկա հնարաւոր չէր եղած, ենթարկուած էին լիտի վերաբերմունքի իրենց հարազատներուն իսկ ներկայութեան:

— Ընկերութեան հեռաձայնեցին, — Սալըի ուրախ եւ խանդավառ մտաւ հիւրասրահ, ուր նստած էր հայրը: — Գրասենեակը Աթէնք պիտի փոխադրեն, եւ մեղ ալ հոն պիտի տանին:

Արամ Սարգիսեան անմիջապէս չըմբռնեց աղջկան ըսածը, բայց երբ կրցաւ կեդրոնանալ եւ լսած նախադասութիւնը կրկնել միտքին մէջ, հարցուց:

— Եւ... ի՞նչ պիտի ընես: Պիտի երթա՞ս այսինքն:

— Աւելի լաւ չէ՞: Մինչեւ երկիրը հանդարտի՝ զոնէ վախի մէջ չեմ ապրիր:

— Իրաւունք ունիս, բայց օտար երկրի մէջ, օտար քաղաքի մէջ առանձին աղջիկ մը: Դուռն քեզի ինչպէ՞ս տէր պիտի ըլլաս. պիտի դիմանա՞ս:

— Պապա՛, — յանդիմանական եղանակ մը կար Սալբիի ձայնին մէջ, — կը մոռնաս որ երիտասարդ, հասուն աղջիկ եմ: Եւ յետոյ, առանձին պիտի չըլլամ: Ընկերութեան բոլոր պաշտօնեաները նոյն պանդոկին մէջ պիտի ըլլանք, միասին:

— Ընկերութիւն մը եւս, — մըթմըթաց Սարգիսեան. — այսպէս եթէ շարունակուի, երկրին մէջ օտար ընկերութիւն պիտի չմնայ, եւ երկրի տնտեսական կացութիւնն ալ... կրնաս երեւակայել:

Սալբի համալսարանը աւարտելէ անմիջապէս ետք պաշտօնի ընդունուած էր Ամերիկեան ընկերութեան մը կողմէ, եւ երկու տարուան ընթացքին բաւական պատասխանատու դիրքի մը հասած էր արդէն: Իր ուսումն ու ստացած վկայականը ոչ մէկ կապ ունէին կատարած դործին հետ, բայց ըստ երեւոյթին վարչական կարողութիւն ունէր, որ յաճախ շատ աւելի կարեւոր էր քան վկայականը՝ այս կարգի մեծ ընկերութիւններու մօտ: Ու հայրը գիտէր, թէ սիրուած էր ան եւ գրեթէ անփոխարինելի դարձած՝ այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Անոր աշխատելուն չէր ընդդիմացած երբեք, թէեւ պիտի նախընտրէր օր առաջ ամուսնացած տեսնել զայն, եւ աւելի խաղաղ ջուռ մը քնանալ գիշերները: Բայց ըսաւ:

— Երանի կարենանք եղբայրդ հեռացնել, քանի փորձանք մը չէ բերած զլիսուն: Զինք զսպելը անկարելի պիտի ըլլայ: Այս տեսակ օր մը, երեւակայէ՛ ժամերէ ի վեր անհետացած է, եւ կրնայ տուն չգալ նոյնիսկ: Ուրիշներ զլուսնին դուրս երկարելու կը վախնան, իսկ մեր հերոսը... չես գիտեր ինչ դործի վրայ է:

— Իրականութիւնը եթէ կ'ուզես, չըջան մը բոլորդ ալ պէտք է հեռանաք հոսկէ: Այդ կերպով զինք ալ փրկած կ'ըլլաք եւ անտեղի վտանգներէ հեռու կը պահէք:

— Բայց ինչպէ՞ս, աղջիկ'կս:

— Երկիրը այս վիճակին մէջ, վաճառատունը գրեթէ միշտ դոց, իսկ դուն՝ ջղային: Ի՞նչ իմաստ ունի: Հոս մնալով ի՞նչ պիտի կարենաս ընել, ի՞նչը պիտի փրկես: Եթէ բան մը պատահի, եւ եթէ նոյնիսկ հոս ըլլաս, ի՞նչ կրնաս ընել: Գէթ կեանքերնիդ կը փրկէք:

— Զայները մօտենալու սկսան դարձեալ, — նստած տեղէն պա-

տուհանէն դուրս նայեցաւ հայրը: — Պիտի չձգեն որ հանգիստ ճաշ մը ուտենք: Վերջին լուրերը ի՞նչ են: Յոյս մը կա՞յ, թէ նոյն խեղկատակութիւնն է. երկու օրը անգամ մը զինադուլ կը հռչակեն...:

— Հիմա, ժամը մէկին լուրերը կ'առնենք: Ա՛խ, երանի դուք ալ հոս չմնաք. ի՞նչ ըսիր, հայրիկ: Այսպէս, օրական քանչորս ժամ դուք սուտերու տակ, ես ինչպէ՞ս պիտի կրնամ երթալ: Եթէ բան մը պատահի...:

Սալբի շուղեց հաւանականութեան մասին մտածել, եւ դադարը միտքէն վանելու համար դուրս ելաւ հիւրասենեակէն: Պէտք է մայրը համոզէր, որոչեց: Տիկ. Սարգիսեանը միայն ամուսնոյն հետ կրնար խօսիլ: Փափեցաւ եւ ուղղուեցաւ դէպի խոհանոց:

Ինչպէ՞ս ջղային չըլլար, խոկաց հայր Սարգիսեանը: 1925-էն ի վեր, ճիշդ յիսուն տարի, այս երկրին մէջ էր, եւ այս ամբողջ միջոցին յիսուն օր տունը անգործ եւ անզրաղ չէր մնացած: Մինչդեռ վերջին քանի մը ամիսներուն անպիտան արարածի մը պէս փակուած կը մնար հոս՝ յաճախ շարաթիւրով: Տունէն կարենար դուրս ելլել, ինքզինք զրաղած կը պահէր, եւ այսպէս կամ այնպէս՝ օգտակար գործ մը կը կատարէր: Առտուրնէ մինչեւ իրիկուն մէկ սենեակէն միւսը, մէկ պատուհանէն յաջորդը երթեւեկելով՝ ցաւազարի մը վերածուած էր: Եւ ինք միամտաբար հանդստեան կոչուելու մասին մտածած էր չըջան մը: Ասիկա օգտակար դաս մըն էր յամենայն դէպս: Եթէ միա՛յն վերջ գտնէր այս անմարդկային վայրագութիւնը: Հեռանալ... ո՛ւր պիտի երթար, եւ ի՞նչ ընելու համար: Իր տեղը, երկիրը, տունը, կեանքը՝ ամէն ինչ հոս էր: Ասկէ դուրս ոչ մէկ տեղ կրնար հանգիստ զգալ, եթէ նոյնիսկ դրախտային դրութիւն մը ստեղծէին իրեն համար: Իր դրախտը հոս էր՝ այս պայմաններուն մէջ իսկ: Միայն չըլլար այս բանտարկութիւնը, որ օր ըստ օրէ անհանդուրժելի կը դառնար: Զաւակները կարենար հեռացնել՝ աւելի հանգիստ պիտի զգար անշուշտ, եւ վստահ էր, թէ այս ահամայ բանտարկութիւնն ալ հանդուրժելի կը դառնար այն ատեն: Սալբին այս կերպով կը փրկուէր եւ զոհ էր, որքան ալ դէմ ըլլար անոր օտար երկրի մը մէջ առանձին ապրելուն: Կը մնար Մուշեղը, զոր զսպելը անկարելի պիտի ըլլար: Էջմիածինէն պատասխանը գար, անոր ալ կեանքը կ'ապահովուէր: Թէեւ Մուշեղ, ինք, հետաքրքրութիւնը կորսնցուցած էր, եւ առաջուան պէս գիմուսը չէր հետապնդեր ըստ երեւոյթին: Ինք դժգոհ չէր, բնական է, բայց ո՛վ գիտէր ի՞նչ նոր խենթութեան հետամուտ էր: Քանի մը ամիսը անգամ մը նորութիւն մ'ը ունէր, յայտնութիւն մը — մէկը միւսէն աւելի ճանաչարճիկ, ար-

տակարգ — եւ իր նախկին խանդավառութիւնը կը մոռնար, բայց աւելի բուռն կերպով կը փարէր նորին՝ հաւասարակչութիւնը կորսնցնելու աստիճան:

Հրացանածղութիւնը սաստկացաւ անակնկալօրէն, այնքան մը, որ կարծես վարը, իրենց փողոցին մէջ կը կատարուէր ամէն ինչ: Դժկամութեամբ բայց մտահոգ բարձրացաւ տեղէն եւ քաղց դէպի պատշգամ, որ կը նայէր փողոցին: Կեցած տեղէն Կեդրոնական Դրամատուն տանող ճամբուն մէկ մասը միայն կրնար տեսնել, սակայն այդ մասին մէջ գէթ ոչ շարժում կար, ոչ զինեալ, եւ ոչ իսկ մոլորած շուն կամ կատու: Փամփուշտները թէեւ կը պայթէին ականջներուն մէջ: Ի՞նչ հանելուկ էր ասիկա:

— Հոս ի՞նչ կեցեր ես դա մա՛րդ, — Նոյեմիի ձայնը լսեց ու դարձաւ անոր ուղղութեամբ: Հիւրասենեակի դրան մէջ կեցած, կրնր ապշահար գինք կը դիտէր: — Փորձա՞նք պիտի բերես մեր գլխուն:

— Հոսկէ բան երեւցած չունի, — երեխայի մը նման փորձեց ինքզինք արդարացնել:

— Պատշգամ չելլե՞ս, — կատակեց կինը, հաւանարար ջգայնութենէն, — թերեւս բան մը կը տեսնես:

— Զիս Քաջ Նազարը կարծեցիր:

— Կատակելու ալ ի՞նչ սիրա ունիս:

— Լաւագոյնը կարծեմ ճաշելն է, — խօսեցաւ Արամ Սարգիսեան — քիչ մը կը դրաղինք գէթ եւ կը մոռնանք: Իրենք կրնան իրենց կռիւը շարունակել մինչ այդ:

— Եթէ այս կողմ անցնիս, ճաշելու առիթ կ'ունենանք... բան մը չպատահած:

— Նկատեցի՞ր որ բախումներու ժամանակ, երբ ներսը բանտարկուած ենք, սովորականէն աւելի սկսած ենք ուտել: Զարմանալի է, փոխանակ ախորժակ փախցնելու, ախորժակնիս կը բացուի կարծես:

— Այո՛, նկատած եմ, սրովհետեւ սառնարանը պարապ է: Ըսիր, չէ՞, ուտելը մեր միակ զրաղումը եղած է:

— Ուրիշներ, միջոց չունեցողները ի՞նչ վիճակի մէջ են արդեօք: Ով գիտէ ի՞նչ խեղճ ընտանիքներ կան. անօթի, ծարաւ, պատառ մը հացի կարօտ:

— Պատերազմի բարիքները, — Նոյեմի յայտարարեց հեղինակաւոր շեշտով մը եւ անյայտացաւ միջանցքին մէջ, երբ նկատեց որ ամուսինը հեռացաւ պատշգամէն:



ճաշէն ետք, մինչ Նոյեմի շէնքի դրացուհիները հաւաքած կը փորձէր մթնոլորտ ստեղծել, Արամ Սարգիսեան հաւատարմարար նստեցաւ ձայնասփիւռի կողքին եւ սկսաւ կայանէ կայան ուստոստելով լուր որսալ: Առօրեային մաս կազմած էր այս գրազումը, որ տուեալ պայմաններուն մէջ անհրաժեշտութիւն էր նաեւ: Առտուն ժամը վեցին կը սկսէր Լոնտոնի կայանէն, ապա կ'անցնէր Մոնթէ Քարլօ, վերջաւորութեան հասնելու համար Պէյրուի, Դամասկոս, յետոյ Կիպրոս, եւ այսպէս՝ մինչեւ ուշ գիշեր, երբ յոգնած եւ պարտասած, լաւագոյն ակնկալութիւններով կը մտնէր անկողին ու կը յուսար յաջորդ օրը արթննալ եւ դործի վերսկսիլ: Բայց ահաւասիկ շարաթ մը կ'ընէր որ ամէն առաւօտ յուսախար կ'ըլլար ու նոյն յանկերգը կը կրկնէր՝ կամայ թէ ակամայ:

Կէս ժամէ ի վեր գինքերը լուած էին թէեւ, եւ քաջալերուած ու լաւատես՝ աւետարել լուրի մը կը սպասէր ձայնասփիւռէն: Բայց բոլոր կայանները որոշած էին արաբերէն սիրային երգեր պոռալ՝ ջղազար քաղաքացիները օրօրելու համար թերեւս: Աշխարհ տեղեակ չէր կարծես, ոչ իսկ Լիբանանի ռատիոկայանը, թէ երկրին մէջ արիւն կը հոսէր եւ երիտասարդներ կը սպաննուէին դուրսը: Աշխարհի հո՞գն էր, դառնօրէն եզրակացուց յետոյ: Անմեղ եւ աշխատասէր ժողովուրդ մը ամբողջ երբ կը ջարդուէր ասկէ վաթսուն տարի առաջ, աշխարհ կամ՝ մարդկութիւնը ի՞նչ ըրաւ: Միամիտ լիբանանցիներ: Ո՛չ, ախմախ լիբանանցիներ, ինքզինք սրբազրեց եւ մտահոգ նայեցաւ ժամացոյցին: Ժամը երեք կ'անցնէր եւ Մուշեղ չէր վերադարձած տակաւին: Ո՛ւր կ'երթար, ի՞նչ կ'ընէր՝ ոչ ոք գիտէր. ոչ իսկ քոյրը, որու ամէն ինչ կը յայտնէր: Եւ ինք Սալբիէն կ'իմանար սովորաբար անոր վերաբերեալ բոլոր նորութիւններն ու անակնկալ որոշումները: Սալբիէն իմացած էր, օրինակի համար, թէ որոշած էր Շուշանիկին հետ ամուսնանալ: Որոշած էր: Այդքան պարզ, անմիջական, դործնական բայց մանկամիտ: Իր միամտութեան, բարութեան պէտք է վերագրէր աւելի: Նոյն վճռականութեամբ որոշած էր կղերական ըլլալ, եւ ամենէն զարմանալին՝ սիրահարած եւ ամուսնանալ որոշած ըլլալով հանդերձ, այդ զաղափարէն չէր հրաժարած տակաւին: Եթէ կրնաս հասկցիր: Իսկապէս չփոթած սերունդ մըն էր ի վերջոյ:

— Լուրջ կերպով կը սիրէ՞, — հարցուցած էր այն ատեն աղջկան:

— Մուշեղը գիտես, կը ճանչնաս: Թերեւս զգացածը չի կրնար

ընտրուել նոյնիսկ : Ձմռաննք որ ասկէ առաջ չէ սիրած , եւ այս տեսակ հետաքրքրութիւն չէ ունեցած նոյնիսկ : Պարզօրէն ներշնչուեր է նորէն :

— Աղջիկը զինք կը սիրէ՞ դէ՞թ :

— Ինք կ'ըսէ , թէ կը սիրէ :

— Չարմանալի է : Ծատ լուսկեաց , մութ աղջիկ մըն է , եւ պատճառ ալ ունի այդպէս ըլլալու : Մուշեղը չի դիտեր թերեւս , բայց սիրային մեծ յուսախարութիւն մը ունեցած է անցեալին , եւ պէտք է ըսել որ քաջարար կըրցած է զիմանալ եւ հաւատարակչութիւնը վերադառնել : Մանրամանութիւնները դիտեմ . . . տղուն հայրը լաւ կը ճանչնամ : Գուն ալ կը ճանչնաս , ո՛չ , դիտնալու պէտք չունիս . կարելոր չէ յամենայն դէպս : Բայց լուրջ , շնորհալի աղջիկ է եւ վստահ եմ , թէ սքանչելի , տիպար կ'իմ մը կ'ըլլայ : Եթէ այդ սրիկան . . . :

— Ինչ նշանակութիւն ունի , — ընդմիջած էր Սալբի :

— Հարցը ատիկա չէ , աղջիկիս : Մուշեղը , թէեւ քսանչորս տարեկան , երեսայի պէս բան մըն է տակաւին : Որքան ուշիմ , բայց այս կարգի հարցերու մէջ աշխարհէն լուր չունի : Իրեն համար իր անմեղ ներշնչումներէն մէկն է հաւատարար , ինչպէս ըսիր : Մինչդեռ աղջիկը , որ եղբորմէզ ալ մեծ է տարիքով , տառապած , հատուն , անգամ մը յուսախար եղած է արդէն : Եւ պատասխանատուութիւններ ունի . համեստ ընտանիքի մը անդրանիկ գաւակն է , եւ տան բեռը մեծ մասամբ իր վրայ է :

— Աւելի լաւ : Կը նշանակէ , թէ դիտակից , պատասխանատու աղջիկ է :

— Ամէն կերպով : Եւ սիրուն է , պէտք է ըսել , ներկայանալի :

Բայց ո՞ւր էր , ե՞րբ դուրս ելած էր , ինչպէ՞ս աննկատ կերպով սպրդած էր եւ անհետացած : Աստուած իրեն մէկ մանչ գաւակ տուած էր , եւ ան ալ՝ խենթ : Սովորական խենթ մը չէ , այլ բացառիկ , ուշիմ , խելացի փորձանք մը : Կատարեալ բանաստեղծ , ցրուած , բացակայ :

Խենթը կամ բանաստեղծը այդ ժամուն երանութեան մէջ էր : Ժապ Առաքելեանի տան մէջ , ընտանեկան ջերմ մթնոլորտի մը կախարդանքովը հմայուած , մոռցած էր ամէն ինչ եւ երեսայի մը պէս ուրախ էր հիմա : Հոս կեանք կար , մարդիկ կային , կիներ , երեսաներ , կենդանութիւն , եւ անշուշտ՝ ժապը , զոր շարաթէ մը ի վեր չէր տեսած :

— Այս ժամէն ետք չեմ կարծեր որ կարենաս միւս կողմ անց-

նիլ , — խօսեցաւ Առաքելեան . — լաւ կ'ըլլայ որ տուն հեռաձայնես եւ իմացնես իրենց որ հոս պիտի մնաս : Մտահոգուած կ'ըլլան հիմա :

— Մնալիք տեղ ունիմ : Բարեկամի մը քով . վերջին շրջանին յաճախ հեար կ'ըլլամ : Ուրկէ՞ կ'ընամ հեռաձայնել :

— Վարը , նպարավաճառին քովէն :

— Ո՞վ հետս վար կ'իջնէ , — Մուշեղ զիմեց երեսաներուն , որոնք շրջապատած էին զինք : — Հիմա կու գամ , — ըսաւ եւ անպարեցի դէպի դուրս , երեսաները բոլորը հետը տանելով :

— Ինք իրենցմէ աւելի պզտիկ է , — Ալիս խնդաց դոհունակութեամբ : — Ուրեմն այս տղան Արամ Սարգիսեանի գաւակն է . ինչ հակասութիւն :

— Այս տղան , — քեռայրը բացատրելու կամ Մուշեղը պաշտպանելու հարկադրանքին տակ զգաց ինքզինք , — շատ բացառիկ իմացականութեան տէր , Ամերիկեան Համալսարանի ամենէն փայլուն շրջանաւարտներէն է :

— Այս ի՞նչ վիճակ է հոպա . ճիշդ տերվիշի կը նմանի :

— Առաջ պէտք է տեսնէիր , ասկէ երկու տարի առաջ : Հիբբլե-Աերու խմբակի մը մէջ ինկած , երկար մագ-մօրուքով , ցնցոտիներու մէջ , Քրիստոսի շրջանէն մնացած հոգաթափ մը ոտքին , եւ գրեթէ միշտ անօթի :

— Անօթի՞ :

— Ունեցածը ընկերներուն կը յատկացնէր : Գիրք չունեցողին գիրք կը գնէր , կրթաթոշակը չվճարողին օգնութեան կը հասնէր , ի՞նչ գիտնամ . . . ոմանք ալ կը շահագործէին անշուշտ :

— Ինչո՞ւ պիտի չընէ , քանի դրամ ունի : Հօրը չըրածը ինք կ'ընէ հաւանարար : Սքանչելի է :

— Երանի՞ հօրմէն դրամ առնէր : Կը մերժէր : Հայրը հազար ու մէկ ձեւի կը դիմէր , անուղղակի միջոցներով միայն կ'ընար դրամ տալ իրեն : Մօրը միջոցաւ , բայց աւելի յաճախ՝ քրօջը , որու հետ շատ մտերիմ է :

— Ի՞նչ կ'ընէ՞ հիմա , — հետաքրքրուեցաւ Գեղամ Տարօնեան , որ պատահմամբ ներկայ էր նոյնպէս : — Ուսումը կը շարունակէ՞ :

— Ո՛չ , որոշած է կղերական ըլլալ , եթէ մինչ այդ չամուսնանայ : Մնողը , համալսարանի դատախօսները՝ ինչ որ ըրին , չկրցան համոզել զինք : Ըստ իրեն համալսարանը իրեն տալիք չունի :

— Հաւանարար ճիշդ է , — կուշտ ու կուռ խնդաց Գեղամ . — իրեն պէս ուշիմ եւ կանխահաս տղայ մը . . . :

— Թերեւս , բայց շատ անդործնական է : Երազային աշխարհի

մը մէջ կ'ապրի, եւ մէկ վայրկեանէն միւսը յանկարծ կը տեսնես որ նոր գիւտ մը ըրած է:

— Անփորձ իտէալիստ մըն է այլ խօսքով:

— Ձեմ գիտեր, — բարձրաձայն խորհրդածեց ժառ.— իտէալիստ է, բայց աւելի իր միամտութիւնն է կարծեմ, բարութիւնը: Չարութիւն երբեք չկայ մէջը: Չարութիւն ինչ ըլլալը չի գիտեր հաւանարար, թէեւ ժամերով կրնայ հետդ վիճիլ այդ մասին, որպէս զուտ իմաստասիրական հարց:

Պատշաճը նստած կը զրուցէին, ու ժառ անբացատրելի կերպով դռն էր եւ խաղաղ, հակառակ անոր որ կացութիւնը օր ըստ օրէ կը վատթարանար: Իրենց թաղամասը համեմատաբար հանդարտ էր եւ ապահով, եւ մտահոգութիւն մասնաւոր պատճառ չունէր՝ դէժ առժամապէս: Մինչդեռ քաղաքի կեդրոնը դժոխքի վերածուած էր, ուր քանի մը ճակատի վրայ, նաւահանգիստէն մինչեւ մեծ պանկողներու շրջանը, կանոնաւոր կռիւներ կը մղուէին: Հետաքրքրական էր գիտնալ, թէ Մուշեղ ինչպէ՞ս կրցած էր դուրս գալ իրենց շրջանէն եւ այս կողմ անցնիլ: Իսկական փորձանք էր: Ճիշդ ժամանակը դուրս էր՝ Պուրճ Համուտ բարեկամներուն այցելելու: Իսկ Գեղամ այս երկրորդ օրն էր որ հոս էր, եւ չէր կրնար տուն վերադառնալ: Նախորդ գիշեր մեծ դժուարութեամբ, ժամեր թախանձելէ ետք, համոզած էին զինք ի վերջոյ որ իրենց մնար: Քենիին եւ աներոջ հետ եկած էր՝ զիրենք հասցնելէ ետք արեւմտեան կողմ անցնելու մտադրութեամբ: Վերջին շրջանին յաճախ հանդիպած էր անոր Սեդայենց տան մէջ եւ արդէն գիտէր, թէ Ալիս ձեռքով-ոտքով սիրահարած էր անոր: Սեդա ճիշդ այս բառերով նկարագրած էր կացութիւնը, կամ՝ քրոջը զգացածը իր նախկին ուսուցիչին հանդէպ: Համակրելի երիտասարդ մըն էր յամենայն դէպս — լուռ, ինքնամփոփ, կարծես միշտ դժգոհ — եւ առաջին իսկ օրէն մտերմացած էին: Իրեն տարեկից էր, թեքեւ մէկ կամ երկու տարի աւելի երէց, բայց արդէն իսկ ճանչցուած մարդ էր ան՝ իր գրականութեամբ եւ ծայրայեղ զաղափարներով: Որ շատ ալ ծայրայեղ չէին, ըստ իրեն, որովհետեւ անհերքելի իրականութիւններու վրայ հիմնուած եզրակացութիւններ էին: Եւ քաջութիւնը ունէր այս իրականութիւնները ընդունելով յայտարարելու: Ինչ կը վերաբերի անոր գրականութեան, ժառի համար դադարնիք մը կը մնար, որովհետեւ ոչ ինք գրականութեամբ հետաքրքրուած էր, եւ ոչ ալ Գեղամ այդ մասին խօսելու պատրաստակամութիւն ցոյց տուած էր երբեւիցէ:

— Եղաւ, — Մուշեղ յաղթական վերադարձաւ, առաջնորդուած

կրտսերներու բանակին կողմէ: — Իրաւունք ունիս, ծնողքս մտահոգութիւն սկսած էին արդէն: Մանաւանդ հայրս, բայց հանդարտեցաւ, երբ իմացաւ որ հոս եմ:

— Չարմանալի է, հա՞: Եւ այս խելքով կ'ուզես ամուսնանալ, ընտանիք կազմել, զաւակ ունենալ: — Ժառ պիտի շարունակէր տակաւին, եթէ կ'ինք չընդմիջէր:

— Հանդիստ ձե՞լ տղան:

— Բայց ի՞նչ տղայ է:

— Չաւա՞կ, — Մուշեղ խօսեցաւ ինքնիրեն: — Ի՞նչ զաւակ: Ե՞ս այսինքն:

— Որոշած ես ամուսնանալ, չէ՞:

— Եթէ ինձի կարեւորութիւն տուող ըլլայ:

— Ատիկա տարրեր, — ժպտեցաւ Առաքելեան, ինչպէս նաեւ միւսները: — Ամուսնացողը զաւակ կ'ունենայ, եթէ չես գիտեր:

— Անշուշտ, բայց կապը ի՞նչ է, չեմ հասկնար:

— Երբ հայր ըլլաս, կը հասկնաս, եւ այն ատեն թերեւս կարենաս ըմբռնել, թէ հայրդ ինչ կը զգայ:

— Գիտեմ: Թէեւ զաւակ ունենալու մասին չէի մտածած երբեք: Հետաքրքրական կ'ըլլայ, — Մուշեղ Սարգիսեան շփոթած ժպտեցաւ, երբ նկատեց որ ներկաները բոլոր կը խնդային, նոյնիսկ երեխաները: — Դուք ինչո՞ւ կը խնդաք, — ապա դարձաւ անոնց:

— Ինչո՞ւ մազ ունիս, — հարցուց Նայիրի, որ Մուշեղի գալէն ի վեր անոր մօրուքով հետաքրքրուած էր միայն: Արդարեւ առաջին անգամն էր որ զինք մօրուքով կը տեսնէր, եւ բնականաբար կ'ուզէր բացատրութիւն ստանալ: Այսքան ժամանակ է մազ չունէր դէմքին վրայ, ճիշդ հօրը նման:

— Աձիլե՞մ, — մօրուսաւորը զուարճացած հարցուց, ու երեսխայն գլխու հաստատական պատասխան մը ստացաւ: — Շատ լաւ, վաղն իսկ: Կ'ըլլա՞մ:

— Ճատի՛կ, դուն ասդին անցիր, — սաստեց մայրը:

— Այս կողմերը ի՞նչ դորձ ունիս, — հարցուց ժառ, — եւ ատալ այս պայմաններուն մէջ:

— Հոս աւելի հետաքրքրական է: Հայութիւնը այս կողմն է, եւ աւելի կենդանութիւն կայ, դորձունէութիւն, աշխատանք: Տունը փակուած մնալով որո՞ւ օգտակար կ'ըլլամ:

— Դո՞ւն ալ Հայութիւնը պիտի փրկես:

— Այսօր կատակելու տրամադրութիւն ունիս. լաւ նշան է: Ամէն օր հոս պէտք է գամ:

— Ի՞նչ գործունէութիւն, ի՞նչ աշխատանք, — հետաքրքրուեցաւ Գեղամ Տարօնեան:

— Զինավարժութեան կը մասնակցիմ, — ակներեւ ինքնագոհութեամբ արտայայտուեցաւ Մուշեղ, փորձելով տպաւորել արձակադիրը, որու նոր ծանօթացած էր: Անոր ըսելիք ինչե՞ր ունէր, եթէ միայն առիթ տրուէր իրեն: Դիմացինը տեղեակ չէր, բայց վերջին երկու տարիներուն ինք ուշի ուշով հետեւած էր անոր բոլոր գրածներուն, եւ լրիւ կը բաժնէր անոր տեսակէտները: Մասնաւորապէս Հայութեան գոյութեան եւ Արեւմտեան Հայաստանը ազատազրելու անհրաժեշտութեան մասին յստաջ քշած թեղը:

— Կուսակցակա՞ն ես, — հարցուց Տարօնեան:

— Ո՛չ, թէեւ առաջարկեցին: Շրջանի երիտասարդութիւնը ամբողջ սկսած են մարդել:

— Հետաքրքրական է: Նպատակը ի՞նչ է:

— Հայկական թաղամասերու պաշտպանութիւնը:

— Ես ալ պահ մը խորհեցայ որ զբաղանքս քայլ մը առած են ի վերջոյ, — գրողին արտայայտութիւնը մթազնեցաւ յանկարծ: — Դեռ նոյն տեղն ենք, նոյն ինքնախարէութեամբ սերունդներ կը քննարկենք:

— Համաձայն չէ՞ք: Մինչդեռ ես կը խորհէի որ ձեր քառորդածն է որ կը կատարուի:

Երէջը անսկիզբաբարձն լարեց ուշադրութիւնը եւ երկար պահ մը քննեց երիտասարդ խօսակիցը, փորձելով թերեւս թափանցել անոր ներաշխարհէն անդին, ու մեկնել կատարած ակնարկութիւնը: Յայտնի էր որ արթուն եւ իրապէկ տղայ մըն էր, եւ ուրեմն ըսաւ:

— Հայկական թաղամասերու, Հայութեան պաշտպանութեան դէմ չեմ կրնար ըլլալ անշուշտ: Եւ ոչ միայն հոս, այլ ամէն երկրի մէջ, ամէն տեղ, եւ միշտ: Բայց ատիկա նպատակ է: Այնպիսի վիճակի մը մէջ պէտք է ըլլանք, որ Հայութիւնը պաշտպանելու պէտք չունենանք: Այսինքն Հայութիւնը ինքնիշխան ըլլայ, ապահով եւ անկախ՝ իր երկրին մէջ: Այդ ուղղութեամբ պէտք է աշխատել միայն մնացածը ժամափառութիւն է, վատնում:

— Կը հասկնամ, կ'ընդունիմ: Բռնագրաւուած հողերը ազատագրելու մասին է ձեր խօսքը. ձեր գլխաւոր մտահոգութիւնը ատիկա է, գիտեմ: Բայց մինչ այդ պէտք է մեր գոյութիւնը պահենք, չէ՞ք: Մանաւանդ ներկայ պայմաններուն մէջ: Ամէն տեսակ վտանգ կը սպառնայ մեզի. հոս, աշխարհի վրայ ամէն տեղ:

— Մեր գոյութիւնը ոչ մէկ կերպով վտանգուած է: Հայերէն

լեզուն կենդանի է, թէ Սովետական Հայաստանի, եւ թէ Սփիւռքի մէջ: Ժողովուրդ մը, որ իր լեզուն կը գործածէ, կը խօսի, կը գրէ, գրականութիւն կը մշակէ, ամէն կերպով ողջ է եւ ողջ կը մնայ: Իսկ ժողովուրդ մը ամբողջ յանկարծամահ չի կրնար ըլլալ անշուշտ: Ազգային գիտակցութիւն ալ ունինք, հակառակ մեր բոլոր յիմարութիւններուն... Ի՞նչ մնաց: Տնտեսապէս եւս ողջ ենք եւ կենսունակ: Այս բոլորը իրագործուած են, իրականութիւն են արդէն: Ազգը պահպանուած է, գոյութիւնը կրցած է պահել: Ուրե՞մն: Ի՞նչ ազգապահպանումի հարց է ասկէ ետք: Միակ գործը, միակ նպատակը՝ այս գոյութիւնը պահպանած ժողովուրդը իր երկիրը վերադարձնելն է: Ուրիշ հարց չունինք, ուրիշ առաքելութիւն: Այնպէս որ, եթէ պէնք պիտի վերցնես, այս նպատակին համար միայն պէտք է գործածես դայն, եւ ոչ թէ այս ափերուն վրայ մեր կեցութիւնը յաւերժացնելու համար: Եթէ մեր նպատակը օտար երկիրներու մէջ ապրիլ պիտի ըլլայ, նախընտրելի է որ Հայութենէն հրաժարինք եւ այդ երկիրներուն հարազատ գտակները ըլլանք: Այսինքն արար, Փրանսացի, ամերիկացի: Եթէ Հայաստան պիտի չվերադառնանք, Ամերիկայի մէջ, օրինակի համար, որպէս հայ ապրիլը ի՞նչ իմաստ ունի, ի՞նչ յիմար գաղափարի կը ծառայէ: Հակասական չէ՞, ծիծաղելի չէ՞:

— Անշուշտ, — խորապէս ազդուած խօսեցաւ Մուշեղ. — ոչ մէկ կասկած այդ մասին: Ես պատրաստ եմ:

— Հիմա ալ Ֆետայի պիտի ըլլաս, — Ժազ կատակեց գարձեալ: — Դուն ալ շուարած ես կարծեմ: Ասոր այս տեսակ նիւթերու մասին մի խօսիր, միտքը գաղափար մի՛ դնէր: Ձեռ գիտեր, կ'ելլէ այս նոր կազմակերպութեան կ'անդամագրուի եւ ուրմը պայթեցնելու կը սկսի:

— Ընդհանրապէս մը ըրած կ'ըլլայ:

— Կը խորհի՞ս, — լրջացաւ Առաքելեան:

— Համոզուած եմ, — Գեղամ խօսեցաւ հանդարտօրէն. — միակ կերպն է: Ուրիշ ընտրութիւն չձգեցին մեզի: Հոս նստած ի՞նչ կ'ընենք. դուն, ես, բոլորս: Վազը, առաջին առիթը որ ներկայանայ, մեզ հոսկէ դուրս կը դնեն: Այսօր իսկ թէ՛ իսլամը, թէ՛ քրիստոնեան մեզ դաւաճան հայ կը կոչեն, որովհետեւ իրենց պէս ապուշ չենք ըլլար եւ երկրի կործանումին չենք ստատեր: Պատճառը ի՞նչ է. մեզ օտար կը նկատեն: Եւ օտար ենք, այնքան ատեն որ Լիբանանի մէջ ապրելով հանդերձ հայ կը մնանք: Հայ եթէ կ'ուզենք մնալ, մեր երկրին մէջ հայ ըլլանք: Իսկ երկիրը... խնդիրը հոն է որ չեն ալ

արտօներ որ մեր հայրենիքին մէջ ապրինք : Գուն լաւագոյն փորձա-
նութիւնը ունին : Ներկայ Հայաստանի մէջ նոյնիսկ մեզ օտար կը
նկատեն — ընդունինք իրականութիւնը, հոգ չէ թէ ցաւ պատճառէ
— եւ ի վերջոյ պատմական Հայաստանի այդ փոքր հողամասը մեր
երկիրը չէ, եւ մարդիկը իրաւունք ունին : Մեր բուն երկիրը Արեւ-
մբլտեան Հայաստանն է : Հայաստան ներգաղթեցիր եւ հոն ջկրցար
ապրիլ. ինչո՞ւ : Քեզ վտարող եղա՞ւ : Ո՛չ : Ծառ պարզ է : Քու հայ-
րենիքդ չէ ատիկա :

— Իմս ճիշդ օրինակը չէ : Իմ ներգաղթելս սխալ էր :

— Ծառ ճիշդ, որովհետեւ արեւմտահայ ես, եւ եթէ պիտի
ներգաղթես, Արեւմտեան Հայաստան պէտք է երթաս : Բայց չես
կրնար, որովհետեւ բռնազրաւուած է : Ի՞նչ պէտք է ընել : Այս հար-
ցումին պատասխանը մեր բոլոր խնդիրներուն լուծումին կ'առաջնոր-
դէ մեզ : Պատասխանը յստակ է. երկիրը ազատագրել :

— Քանի մը ռումբ պայթեցնելով Հայաստանը կ'ազատա-
գրուի՞, — Ժպտի ձայնը արհամարհական շեշտ մը ունէր զրեթէ : —
Գիտենք, թէ անցեալին ինչ պատահեցաւ : Եւ այն ատեն մեր հողե-
բուն վրայ էինք դեռ : Մեզի ո՛վ կարեւորութիւն կու տայ : Ուզածիդ
չափ ռումբ պայթեցուր. իրենք չեն լսեր նոյնիսկ :

— Կարեւորը միտքն է, այդ գիտակցութեան հասնելը : Հաս-
կընալ, համոզուիլ, ընդունիլ՝ թէ մեր միակ եւ կարելի ընելիքը այդ
է : Ոյժի տեսակը, քանակը, եղանակը՝ այդ բոլորը ծրարութի մաս
կը կազմեն : Նախ՝ գիտակցութիւնը, որ կը պակսի մեզի դժբախտա-
բար :

— Նորութիւն չէ : Տարիներէ ի վեր կը լսենք այս նոյն եզա-
նակը :

— Այո՛, եղանակի վերածած են, յանկերգի : Այս երգը կ'եր-
դեն մեզի, որպէսզի քնանանք : Եւ այդ իմաստով յաջողած են, պէտք
է ընդունիլ : Բայց բառերը ի՞նչ արժէք ունին, երբ համոզումը բա-
ցակայ է, չգոյ :

— Գրաբար խօսելու պէտք ունի՞ս, — համակրանքը արտա-
յայտելու լաւագոյն կերպն էր այս շեղումը : — Պարզ հայերէն չխօ-
սի՞ս, — ըսաւ Ժպտ. յետոյ : — Ստարեւ, յանկերգ, չգոյ. ինչպէ՞ս
կ'աւանդակես որ ըսածիդ հետեւինք : Թարգմանի պէտք պիտի ունենանք
կարծեմ :

— Երանի գրաբար դիտնայի, — Ժպտեցաւ Գեղամ. — շատ գե-
ղեցիկ լեզու է :

— Եւ կ'ըսես, թէ չես գիտեր :

— Որոչ զազափար մը ունիմ : Ի վերջոյ նոյն լեզուն է : Քերա-
կանութիւնը, բառակազմութիւնը, արմատները :

— Ըսել կ'ուզէք, թէ իրենց ըսածին չեն հաւատար, — Մուշեղ
չկրցաւ համբերել. — մեր ղեկավարներուն կ'աւանդէք անշուշտ :

— Ոչ միայն չեն հաւատար, այլ չեն գիտեր, թէ ի՞նչի մասին
կը խօսին : Այդ ամբողջը անցեալէն մնացած դրամագլուխ է : Յիսուն
տարի ետ են, եւ մեր նոր պայմաններու հրամայականը չեն ուզեր
տեսնել : Մինչդեռ հարցը այնքան պարզ է... տուեալ իրականու-
թիւններ կը վերլուծես, եւ եզրակացութիւնը շատ յստակ կը դառնայ :
Հայ ենք, հայ կ'ուզենք մնալ, բայց չենք ըսեր, թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս :
Հայ մնա՞լն է մեր նպատակը : Եւ եթէ նոյնիսկ ասիկա որպէս նպա-
տակ ընդունինք, Հայաստանէն դուրս հայ մնալը ի՞նչ իմաստ ունի,
որո՞ւ կը ծառայէ : Հայութեան : Մարդկութեան : Ի՞նչ յաւակնու-
թիւն : Եթէ նպատակ է, դայն իրադրո՞ծելու մէկ միջոց կայ. մեր եր-
կիրը վերադառնալ : Եւ միայն այն ատեն իմաստ կ'ունենայ :

— Ժպտին գիտողութիւնը ճիշդ է թէեւ : Մեզի ո՛վ կարեւորու-
թիւն կու տայ, ի՞նչ ոյժ ունինք, նկատի առած մանաւանդ ներկայ
աշխարհը : Եւ ի՞նչ կրնանք ընել այս պայմաններուն մէջ :

— Կրանք արժանապատուութիւն ունենալ եւ մարդկութեան
հասկցնել, թէ մենք ալ իրենց հաւասար իրաւունքներ ունինք : Ինչ որ
արդար կը նկատեն իրենք իրենց համար, պէտք է արդար ըլլայ նաեւ
մեզի համար : Աշխարհի վրայ գերադաս եւ ստորադաս մարդիկ կամ
ազգեր չկան, եւ պէտք չէ ըլլան : Իսկ ոյժը մեզմէ կ'ախեալ է. մենք
պիտի ստեղծենք : Եւ չմոռնանք, ոյժի զանազան տեսակները կան —
ղէնք, դրամ, հարստութիւն, խելք, գիտութիւն, որ բոլորը մատչելի
են մեզի : Ներկայ դարուն եւ իրադրութեան մէջ նախկին իմաստով
բանակները արժէք չունին. եւ աւելին՝ շատ խոցելի դարձած են նոյ-
նիսկ, որովհետեւ ոյժի ըմբռնումը հիմնովին փոխուած է, ինչպէս
նաեւ գործածութեան եղանակները : Վիեթնամը լաւագոյն օրինակն
է : Այսօր քանի մը հարիւր հոգի կրնան քանի հարիւր հազար հաշ-
ուող բանակ մը ծունկի բերել :

— Քանի հարցը այսքան լրջացաւ, պէտք է խմենք կարծեմ, —
ըսաւ տանտէրը եւ դարձաւ տիկնոջ — բաժակները կը բերե՞ս :

— Ի՞նչ պիտի խմէք :

— Դեռ կանուխ է : Ուիսքին բեր. առանց կերակուրի օդի չի
խմուիր :

— Ես չեմ խմեր, — ըսաւ Մուշեղ :

— Գարեջուր մը կրնաս առնել :

— Շնորհակալ եմ. չեմ կրնար:

— Ինչո՞ւ, — հետաքրքրուեցաւ Գեղամ:

— Ձեմ սիրեր, չեմ կրնար: Կը գինոյնամ:

— Փորձա՞ծ ես, — հարցուց Սեդա:

— Մէկ անգամ:

— Շուշանիկին հետ կը խմես սակայն, — ժպտակեց չարութեամբ:

— Ստիպուած, — խնդաց երիտասարդը, — եւ միայն դարեջուր, որու մէկ բաժակը կը թմբեցնէ զիս: Հաճոյքով չեմ խմած երբեք. իսկ հիմա ստիպուած չեմ:

— Ենթադրուածին չափ ալ բարի պտուղ մը չես եղեր, — ներողամտաբար յանդիմանեց Առաքելեան:

— Ձեր կարծիքով ուրեմն գինեալ պայքարի պէտք է գիմել, — Մուշեղ չլսեց իսկ, կամ չուզեց լսել կատարուած ակնարկութիւնը: — Բայց ինչպէ՞ս:

— Ուրիշներ ինչպէ՞ս կ'ընեն, — Տարօնեան ուղղեց իր սովորական հարցումը եւ յետոյ ինք պատասխանեց: — Կը կաղմակերպուիս, ծրագիր կը պատրաստես եւ գործի կը լծուիս: Պաղեստինցիները ինչպէ՞ս սկսան կը խորհիս. ասկէ տասը տարի առաջ տակաւին ոչինչ ունէին, իսկ այսօր...:

— Պաղեստինցիները արարական երկիրները ունին իրենց կողքին, — Մուշեղ կրկնեց յաճախ արտայայտուած տեսակէտը, — թիւ ունին, ազդեցութիւն ունին:

— Իրենք գիրենք ունին միայն, իրենց գիտակցութիւնը, վրձնակամուրթիւնը: Արարական երկիրները ինքնարեւարար ոչինչ պիտի ընէին, եւ մինչեւ այսօր ալ ոչինչ կ'ընեն յամենայն դէպս: Եթէ կարենան, իրենք իսկ կը խեղդեն, կը վերջացնեն հարցը: Եւ եթէ այսօր ակամայ, հարկադրաբար զօրավիգ կը կանգնին պաղեստինեան դատին, ատիկա պաղեստինցիներուն պէտք է վերադրել եւ ոչ թէ միւս արարներուն: Պարտադրեցին՝ ճնշում բանեցնելով, կատարուած իրողութեան առջեւ գնելով գիրենք: Պաղեստինցի ժողովուրդի կամքն էր, իրենց նախաձեռնութիւնը, գիտակցութիւնը: Քաղաքական հեռատեսութիւն ունենալու եւ հնարաւոր բոլոր միջոցները օգտագործելու իրապաշտութիւն է պարզօրէն: Ոյժի գանադան տեսակներ կան ըսինք, եւ պաղեստինցիներուն մատչելի ոյժ մըն է այս, զոր կրցան տեսնել, ստեղծել՝ եթէ կ'ուզես: Իրենց գիտն էր, իրենց հնարքը, կամ հնարած գէնքը:

— Ցաւալի իրականութիւնը կը մնայ այն, որ մենք արարա-

կան աշխարհ մը չունինք: Եւ առանց պետական, գիւտնաբերական նեցուկի կարելի չէ դատ հետապնդել: Պետութիւններու մօտ դատերնիս պաշտպանող, մեղ ներկայացնող, երկրի մը կամ երկիրներու պէտք ունինք: Պետութիւններ, կամ գէթ մէկ պետութիւն, որ կարենայ միջազգային սեղանի վրայ դնել մեր հարցը, պարտադրել՝ եթէ պէտք ըլլայ: Պաղեստինցիները արարական երկիրները ունին, մենք... այդպիսի գէնք մը ինչպէ՞ս պիտի կարենանք ստեղծել, կամ հնարել՝ ինչպէս կ'ըսէք:

— Ճիշդ բանն է, — բաժակը շրթներուն յամեցաւ Գեղամ: — Եթէ լսելքերնիս գործածենք, կը հնարենք: Ինչո՞ւ անպայմանօրէն կ'ուզես մեր պարագան պաղեստինցիներուն հետ բաղդատել, կամ անոնց եւ մեր միջեւ դուռահակ մը քաշել: Մեր դատը իրենցինքն կը տարբերի, եւ բնականաբար պէտք է մտածել տարբեր լուծումներու մասին: Կերպերը, կարելիութիւնները միշտ կան, պայմանաւ որ փնտոող ըլլայ. եւ պարագայէ պարագայ կը փոխուին անշուշտ: Մերը կրնայ, եւ հաւանաբար պէտք է որ բոլորովին տարբեր ձեւ մը ունենայ: Նոր զիւտ մը, մեր պայմաններուն, մեզի մատչելի հնարաւորութիւններուն պատշաճօղ միջոց մը կամ միջոցներ:

— Բայց արարական աշխարհին նման պատրաստ, արդէն իսկ գոյութիւն ունեցող իրականութիւն մը ինչպէ՞ս կրնանք ստեղծել:

— Ձե՞ս խորհի՞ր որ բառերդ զիրար կը հակասեն: Գոյութիւն ունեցող իրականութիւն մը ստեղծուելու կարիք չունի: Այն, որ գոյութիւն չունի, պէտք է ստեղծել, երբ պէտք ունենաս: Եւ պայման չէ որ նմանօրինակ գրութեան մը, ձեռնառու միջոցի մը հետամուտ ըլլանք: Ըսի, չէ՞, մերը կրնայ բոլորովին տարբեր միջոց մը ըլլալ: Սովետական Միութիւնը, օրինակի համար: Ատիկէ աւելի հզօր ո՞յժ, գոյութիւն ունեցող իրականութիւն:

— Այսինքն Սովետ Միութեան գիմել:

Ժպտ գարմացած գլուխը բարձրացուց, ակնոցը ցուցամատով վեր հրեց եւ ասպահար քննելէ ետք խօսակիցները, ըսաւ:

— Ատիկա քաղաքական միամտութիւն է:

— Պաղեստինցիները երբ գործի անցան արար պետութիւններու կարծիքը առին, — Տարօնեան իր իսկ հարցումը ժխտող զլիսու շարժում մը ըրաւ: — Եթէ անոնց մնար, բնականաբար ճիշդ հակառակը պիտի ընէին նոյնիսկ: Ձիրենք կատարուած իրողութեան առջեւ պէտք է դնել... ի վերջոյ ներկայ Հայաստանը Սովետական Միութեան հանրապետութիւններէն մէկն է: Այդ իմաստով ստիպուած են, բայց եթէ ճնշում բանեցնող, պարտադրող չըլլայ՝ յաւիտեանս յաւիտենից կրնանք սպասել:

— Ամէ՛ն :

Ներկաները բոլոր ծիծաղեցան, եւ երբեմնի ծաղրածուն քաղաքիւրուած աւելցուց :

— Վերջին ըսածդ դոնէ ճիշդ է : Իրենց համար Սովետական Հայաստանէն դուրս Հայաստան չկայ : Թէ ոչ նացիոնալիստ կը կնքեն քեզ :

— Դժբախտարար ճիշդ է ըսածդ : Եւ մեր գլխաւոր դժուարութիւնը, եթէ կ'ուզէք, այս է : Երբ մերինները նոյնիսկ դաւաճանութիւն կը նկատեն ուրիշ Հայաստանի մը մասին խօսելը : Այսինքն՝ Արեւմտեան Հայաստանը պահանջելը՝ ներկայ Հայաստանի իրաւակարգին դէմ ուղղուած դաւ կը համարեն : Կայ ու չկայ այս հայրենիքն է... եթէ ուշադրութիւն ըրած էք, կը նախընտրեն հայրենիք բառը դործածել : Հայութեան մէկ ու միակ հայրենիքը, որ մեր քեթին ալ, բերնին ալ կը բաւէ կ'երեւի :

— Քանի այդպէս է, — Մուշեղ վերապահութիւնը արտայայտեց, յայտնապէս չիտթած, — Սովետ Միութեան վրայ ինչպէ՞ս կարելի է յոյս դնել :

— Պայման չէ, եւ ոչ ալ իրենց դիմելու պէտք ունինք : Որովհետեւ չեն ընդառաջեր : Իսկ քաղաքականութիւնը, զոր դիտութիւն մը կը նկատեն, իր օրէնքները ունի, ինչպէս նաեւ իր դադարիքները : Այս օրէնքներէն կամ ձեւերէն մէկը կացութիւններ ստեղծելն է. պարզ խօսքով՝ խառնելը, խանգարելը : Առ ի չզոյէ խնդիր կը ստեղծես, բարդութիւններ, դժուարութիւններ կը յարուցանես եւ այնպէս կ'ընեն որ ուզած կողմը միջամուխ դարձնես : Այս սրբադային՝ ըսենք Սովետական Միութիւնը :

— Այդպիսի ծուղակի մէջ չեն իյնար, — առարկեց ժառ :

— Ծուղակ լարելու խնդիր չկայ : Իրենց կամքին հակառակ զիրենք շահադրող կամ իրենց վերաբերեալ հարց մը կը ստեղծես : Ծուղակ լարելը խաղի բերելու պէս բան մըն է, մինչդեռ իմ ըսածս իրական, քաղաքական նշանակութիւն ունեցող խնդիր մը ստեղծելու մասին է : Մեծ եւ հզօր պետութիւն են, եւ ամէն ինչի իրենց մօտեցումը քաղաքական է : Ձեն կրնար անտարբեր մնալ եւ քաղաքականօրէն չմտածել, երբ այդպիսի կացութիւն մը կը ստեղծես :

— Ի՞նչ, օրինակի համար, — կրտսեր Մարգիսեանը շրջապատէն անջատուած էր կարծես եւ ինքնիրեն կը խօսէր :

— Թուրքիոյ եւ իրենց միջեւ թշնամութիւն կը սերմանես, բախումի մը պատճառ կը դառնաս, պատերազմի կը մղես զիրենք, իրարու կը ձգես՝ ինչպէս կ'ըսեն ժողովրդական արտայայտութեամբ :

— Ինչպէ՞ս :

— Այդ մասը այլեւս... երբ լրջօրէն դործի ձեռնարկող ըլլայ, նմանօրինակ բոլոր հարցումներուն պատասխանները՝ մտածելով, սերտելով ու ծրարելով կը դոնեն : Երբ քաղաքականութեամբ դրադիս, այս կարգի դործերու մասնադէտը կը դառնաս, կը սորվիս, գիտես կ'ընես : Դուն իսկ կը զարմանաս երբեմն : Ամէն ինչ մտածելով կ'ըլլայ. որեւէ հարցի մասին երբ մտածելու սկսիս, անպայմանօրէն լուծում մը կը դոնես : Ինչպէս դործի մէջ, առօրեայ կեանքի մէջ :

— Չզգուեցա՞ք, — Սեղա հարցուց կամ դանդաղեցաւ, այրերուն ուշադրութիւնը տան միւս անդամներուն վրայ եւս կեդրոնացրնելու մտադրութեամբ : — Քաղաքականութենէն զատ նիւթ չկա՞յ : Քաղաքականութիւնը չէ՞ որ երկիրը այս վիճակին հասցուց : Մարդիկ զիրար կը բզկտեն, եւ դեռ մենք նստած քաղաքականութիւն կը հողովնենք : — Ու նայեցաւ քրոջը, որ երկու ժամէ ի վեր անտրամադիր նստած՝ կարծես ախմայ կը հետեւէր խօսակցութեան :

— Այո՛, թերեւս լաւագոյն օրինակն է, — անվրդով շարունակեց զրոյցը : — Որո՞ւ միտքէն կ'անցնէր որ Լիբանանի մէջ պիտի բեմադրուէր ասիկա : Եւ այս պատճառ մըն է որ լուրջ կերպով մտածենք մենք մեր մասին, դաս առնենք, օրինակ առնենք : Թերեւս այս ողբերգութիւնը օգտակար կ'ըլլայ մեզի, եւ կ'արթնանք ի վերջոյ : Անկիւնադարձ մըն է ասիկա, պատմական պահ մը, որ մեր ճակատադիրը ամբողջ կրնայ փոխել, եթէ պահը օգտադործել ղիտանք : Լաւագոյն առիթն է՝ մեր կրաւորականութիւնը, ինքնադոհութիւնը վերաքննութեան ենթարկելու : Թերեւս սթաիինք եւ զիտակցինք, ըմբռնենք մանաւանդ, թէ հոս ապագայ չունինք, եւ թէ մեր զգացած ապահովութիւնը պատրանք մըն էր միայն : Եւ ոչ միայն հոս. Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ շատ աւելի ապահով չենք :

— Կը ներես, — Մուշեղ խօսքը ուղղեց Տիկ. Առաքելեանին, — մէկ հարցում միայն, եւ յետոյ կը լռեմ : — Եւ ապա դարձաւ Տարօնեանին. — Սովետական Հայաստանը մեր հայրենիքը չէ՞ք նկատեր :

— Մեր երկրին մէկ մասն է. այդքա՛ն : Հայութեան հայրենիքը ամբողջ Հայաստանն է, եւ ոչ թէ անոր մէկ մասը : Հայրենիքը դադարի մըն է, չմոռնանք, ոչ թէ Փիղիքական իրականութիւնը երկրի մը. անոր միտք եւ իմաստ տարու հողեկան, հողբանասկան պահանջ մը՝ եթէ կ'ուզես : Այնպէս որ, ինչպէ՞ս ներկայ Հայաստանը կրնայ մեր հայրենիքը ըլլալ. հայրենիքը հողամաս չէ, եւ ուրեմն՝ Արեւմըտեան Հայաստանը եւս առանձինն մեր հայրենիքը չի մարմնաւորեր : Ամբողջութեան դադարիսն է որ միտքի կը վերածենք եւ հայ-

բննիք անուճը կու տանք անոր : Իսկ աւելի նեղ, սահմանափակ իմաստով, բնականաբար ինչ որ ունինք այսօր այդ կտոր մը հողն է, կոտորակը : Ո՞վ կրնայ ուրանալ : Եւ հրաշքի համազօր բան մըն է, ընդունի՛նք, անհաւատալի բախտաւորութիւն մեզի համար : Մինչեւ 1918 հոն Հայաստան անուճով երկիր մը չէ եղած, այլ ցարական կայսրութեան հարաւային ծայրամասի նահանգներէն մէկը, եւ ատկէ առաջ՝ Պարսկաստանի մաս կազմած է, մինչեւ 1828 : Այսօր ալ Պարսկաստանի հիւսիս արեւմտեան եռանկիւնը կազմող հողամասը ամբողջ հայկական է, բայց դժբախտաբար պարսկական հող կը նկատուի : Այդ տեսակ պահանջ մը ներկայացնես այսօր, մարդիկ քեզ յիմարի տեղ կը դնեն : Ո՞վ լսած է, ո՞վ կը հաւատայ : Եթէ կրնաս իրենց հասկըցուր, բացատրէ, թէ պատմական Հայաստանի մաս կը կազմէ, ինչպէս միւսը, զոր ուստերը պարսիկներէն գրաւեցին շուրջ հարիւր յիսուն տարի առաջ : Ատկէ առաջ, հարիւրաւոր տարիներ պարսկական իշխանութեան տակ էր, ու յետոյ ալ անցաւ ուսական իշխանութեան տակ : Ո՛չ Հայաստան կար, ու ոչ իսկ անուճը : Հայեր կ'ապրէին հոն, ճիշդ է, ինչպէս պատմական Հայաստանի միւս բոլոր ու նոյնպէս գրաւուած շրջաններուն մէջ, եւ ինչպէս մինչեւ այսօր հայեր կ'ապրին Պարսկաստանի այդ եռանկիւնին վրայ : Պատմութիւնը կամ բախտը հազար տարուան մէջ մէկ անգամ ժպտեցաւ մեզի, եւ Հայութեան պետութիւն մը պարտադրուեցաւ այդ կոտորակին վրայ : այսինքն պատահականորէն Հայաստանի Հանրապետութիւն անուճով երկիր մը ստեղծուեցաւ հոն : Այդ տեսակ երկիր չկար, չէր եղած, ու Հայութեան կարծիքը աւնող ըլլար՝ այդ առիթն ալ կորսնցնէին հաւանաբար : Որովհետեւ մեր յեղափոխութիւնը, որ ութսունական թուականներուն եւ երկրէն դուրս ծնունդ առաւ, նկատի ունէր Օսմանեան Կայսրութեան իշխանութեան տակ դոնուող Արեւմտեան Հայաստանը, եւ ոչ թէ այսպէս կոչուած Ռուսահայաստանը : Իսկ ամենէն ողբերգականը կամ ծիծաղելիին այն էր, որ անկախութիւն կամ պետութիւն չէր որ կը պահանջէին — ազատ եւ անկախ Հայաստանի մը դադափարը չէին ունեցած իսկ — այլ բարեկարգութիւն՝ Օսմանեան Կայսրութեան արեւելեան նահանգներուն մէջ : Յամենայն դէպս հրաշք մըն էր, կամ ըսենք անակնկալ մը, որ այնքան արագ պատահած էր որ այն ատենուան հայ ղեկավարները իրենք ալ չէին կրնար հաւատալ եւ ճիշդ ատոր համար ալ մուխը մարեցին, ձգեցին : Թըրքերէն առածը դիտէ՛ք ինչ կ'ըսէ. — չտեսը մանչ մը ունեցեր է, քաշեր . . . :

— Դուն ալ մեր մուխը մարեցիր, վերջացուցի՛ր, — բարձրա-

ձայն խնդաց ժաղ : — Ամէն ինչ նոյն ջուրով լուացիր, մաքրեցիր, ու բան չմնաց :

— Ինչո՞ւ, այդ ամբողջէն ծնունդ առաւ Սովետական Հայաստանը : Բան մը մնաց ի վերջոյ : Բարեբախտաբար : Այսքանին ալ պէտք է փառք տանք :

— Եղա՞ւ : Քիչ առաջ ըսածնե՞րդ հապա, — նոյն տրամաբանութեամբ շարունակեց Առաքելեան :

— Բայց պէտք չէ այսքանով բաւարարուիլ, որովհետեւ մեր բուն փնտռածը ասիկա չէր, չէ՛, եւ չի՛ կրնար ըլլալ : Ես պիտի փափաքէի նոյնիսկ հարիւր տարի առաջուան մեր կացութեան մէջ ըլլալ. այսինքն մեր հողերուն վրայ՝ հող չէ թէ անկախութիւն կամ պետութիւն չունենանք : Ժողովուրդ մը իր սեպհական հողին վրայ միայն կը դիմանայ, կ'ապրի ու կը դոյատեւէ, եթէ նոյնիսկ օտար իշխանութեան տակ ըլլայ : Հազար տարի մեր երկրին մէջ ազգապահպանութիւն հարց ունէ՞րք : Երբե՛ք : Առանց անդադառնալու, առանց մասնաւոր ճիշդի կամ ծրարի հայ մնացինք, եւ երկիրն ալ մեր գոյութեամբ իսկ պահպանեցինք : Ծատ պարզ է : Ատոր համար ես միշտ կ'ըսեմ ու կը կրկնեմ, թէ մէկ հարց ունինք : Մեր երկիրը վերադառնալ, եւ ամէն ինչ իր բնական լուծումը կը պանէ արդէն : Այսօրուան համար կը բաւէ կարծեմ, — ներողութիւն հայցող արտայայտութեամբ մը ներկաները դիտեց Գեղամ. — շատ խօսեցայ, կը ներէք : Իրիկուն եղաւ արդէն, եւ ես դարձեալ հոս մնացի :

— Երէկուան պատմութիւնը չսկսինք, — ժաղ դժգոհեցաւ. — այս ժամէն ետք եւ այս պայմաններուն մէջ միւս կողմ չես կրնար անցնիլ :

— Ձեմ դիտեր, բայց իմս թերթի դործ է եւ չեմ կրնար բացակայիլ : Երէկ նոյնիսկ, իրաւունք չունէի :

— Թերթը կեանքէդ աւելի կարեւոր է :

— Այս պայմաններուն մէջ այս կողմ պէտք չէր անցնէի : Մարդոց ինչ բացատրութիւն պիտի տամ : Անձնական գործով այս կողմ կը գտնուէի : Մարդիկը պաշտօն մը վստահած են եւ կ'ակնկալեն որ պաշտօնիդ վրայ ըլլաս, եւ ոչ թէ անձնական գործերով դրաղիս : Եթէ կրնաս իրենց բացատրէ, թէ քու սեպհական շարաթաթերթիդ որրազրութիւնները ընկու եկած էիր : Ձիրենք չի հետաքրքրեր :

— Երանի նպատակի ծառայէ՛ր, — ի վերջոյ խօսեցաւ Ալիս. — Թերթը ծալեցինք, հասցէներն ու դրոշմաթուղթերը փակցուցինք, բայց չկրցանք նամակատուն հասցնել :

— Այո՛, այս ընթացքով, եթէ այսպէս շարունակուի, Թերթը

հրատարակելու իմաստ չունի: Ես կը հրատարակեմ եւ ես ալ կը կարգամ:

Մուշեղ Սարգիսեան ոտքի էր արդէն, որոշած ըլլալով մեկնել, եւ ըսաւ:

— Ծատ շնորհակալ եմ, իսկապէս հաճելի էր: Ես դոնէ կընամ երթալ, որովհետեւ բարեկամս կը սպասէ հիմա:

— Միասին կ'իջնենք, — Տարօնեան ձեռքի շարժումով թելադրեց որ սպասէ:

— Ո՞ւր, — տանտէրը կանգնեցաւ ոտքի:

— Նախ հեռաձայնեմ, յետոյ կը մտածենք: Կացուցինքն լուր ալ չունինք. ճամբաները ինչ վիճակի մէջ են, կարելի՞ է անցնիլ... Թերեւս երկար շրջան մը ընելով, դիւղերու ճամբով կընամ յաջողիլ: Բայց նախ հեռաձայնեմ, դադարար ունենամ, թէ ինչ կ'անցնի կը դառնայ: Մենք հոս հանդիստ նստած ենք, իսկ բախումները կը շարունակուին հաւանաբար:

— Լաւ, ես կ'ընկերակցիմ քեզի, — Ալիս հսկելի դեր ստանձնեց:

Գեղամի դէմքին վրայ մանկունակ ժպիտ մը ուրուադժուեցաւ, ու ձեռքերը դրպաններուն մէջ քալեց դէպի արտաքին դուռը, ուր ստիպուած սպասեց միւսներուն: Վստահ էր, թէ Ալիս խօսելիք ունէր իրեն, որովհետեւ սովորաբար վերջին վայրկեանին, երբեմն փողոց հասնելէ ետք միայն, կը հետեւէր իրեն եւ աճապարանքով կ'ըսէր ըսելիքը: Առանձին ըլլալու առիթ չունէին վերջին շրջանին, նկատելով որ շարքով անգամ մը հազիւ կը տեսնէր զինք՝ մօրը եւ երեխաներուն ներկայութեան: Եւ քնականաբար կը տառապէր, որովհետեւ նկատելի կերպով զգայուն դարձած էր, երբեմն նոյնիսկ՝ ջղային: Մինչդեռ ինք կը խորհէր որ դո՛հ եւ ուրախ պէտք է ըլլար. ի վերջոյ իրենց յարաբերութիւնը պաշտօնական բնոյթ ստացած էր եւ յաճախ միասին կ'ըլլային:

— Ըսէ՛ նայինք, — խանդաղատանքով խօսեցաւ, երբ հեռաձայնելէ ետք նկատեց որ համբերութեամբ կը սպասէր նպարտվածառին խանութին առջեւ:

— Ի՞նչ պիտի ըսեմ:

— Այսպիսիան Մանուշա՛կ, պիտեմ թէ ըսելիք մը ունիս, — ուսուցիչը բռնեց ձեռքէն: — Ի՞նչ է, չխօսի՞ս:

— Այդ պատի աղջիկը ո՞վ է, — Ալիս հարցուց, առանց յառաջարանի:

Տարօնեան չգարձացաւ, թերեւս որովհետեւ ժամանակէ մը ի

վեր կը սպասէր այս հարցումին: Բայց շփոթեցաւ եւ պահ մը չկրցաւ խօսիլ: Ի վերջոյ ըսաւ:

— Քիչ մը քալենք: Ատոր համա՞ր է որ երկու օրէ հետո չի խօսուիր: Որմէ՞ իմացար:

— Ի՞նչ կարեւորութիւն ունի: Այնքան ատեն որ քեզմէ չեմ իմացած... եթէ դադարի չպահէիր, այսքան դժուարիս պիտի չերթար:

— Իրաւունք ունիս: Եթէ իրականութիւնը ըսեմ, պիտի չհաւատաս թէ եւ: Անհրաժեշտ չնկատեցի, որովհետեւ... վայրկեան մը: Ծատ լաւ, սքանչելի աղջիկ մըն է, բայց վստահ էի, թէ պիտի չկարենամ բացատրել քեզի. յամենայն դէպս նշանակութիւն չունի, ո՛չ, եւ դադարի պահելու հարց չկայ: Պարզապէս չկրցայ յայտնել քեզի, հակառակ անոր որ կ'ուզէի: Պիտի չհաւատայիր, պիտի չըմբռնէիր ըսածս: Եւ յետոյ... չեմ գիտեր, ինչպէ՞ս բացատրեմ: Զիս իսկապէս կը ճանչնաս, վրաս վստահութիւն ունի՞ս:

— Պիտի ուզէի ունենալ... ունէի: Բայց ասկէ ետք:

— Նայէ՛, — ժպտեցաւ Գեղամ, — այս աղջիկը տարիներէ ի վեր կը ճանչնամ, ինծի շատ մօտ եւ մտերիմ անձ մը եղած է, եւ ամէն կերպով կը յարգեմ զինք: Կարծածիդ պէս հասարակ բող մը չէ, հակառակ անոր որ պատի մէջ կ'աշխատի:

— Բացառի՞կ բող մըն է:

— Զարութեան պէտք չկայ: Տե՛ս, ամէն ինչ անկեղծօրէն բացատրելու սկսայ, եւ եթէ առիթ տաս կը շարունակեմ: Մածկելիք չունիմ, եւ ծածկելու պատճառ չունիմ, մանաւանդ քեզմէ: Կ'ուզեմ որ ամէն ինչ գիտնաս, որպէսզի դիս աւելի լաւ ճանչնաս: Ասկէ ետք կրնաս որոշել եւ՝ վստահութիւն ունենալ կամ ոչ: Ատիկա քեզի կը վերաբերի այլեւս: Պատրա՞ստ ես: Եթէ իմ ճանչցած աղջիկն ես, անկեղծութիւնը դնահատելու քաջութիւն կ'ունենաս եւ անտեղի կերպով մարդ չես դատեր, մանաւանդ աղջիկ մը, դորս չես ճանչնար: Ուրեմն: Ես քառասունին հասած մարդ մըն եմ, եւ շատ ազատ կեանք մը ապրած եմ — ասիկա դէ՞թ դատողիք մը չէ, որովհետեւ իմացած կ'ըլլաս, եւ առիթով մը անձամբ յայտնած եմ քեզի յամենայն դէպս: Քեզմէ առաջ կեանքիս մէջ կ'իներ եւ աղջիկներ եղած են. երբ քեզ ճանչցայ երեսուն երկու տարեկան էի, իսկ դուն երեսայ մըն էիր տակաւին: Այդ տարիքին հասած մարդ մը, եթէ քնական է եւ մտային կամ հոգեբանական հիւանդութիւն չունի, անպայմանօրէն որոշ փորձառութիւններ ունեցած պիտի ըլլայ:

— Մեր խօսքը անցեալին մասին չէ:

— Ծարունակեմ : Երբ ես Հիլտան ճանչցայ, դուն կեանքիս մէջ փակուած էջ մըն էիր . իսկ էջը փակողը դուն էիր : Ծեօ՞ղ է : Յանցաւոր չես, դիտենք, նոյնիսկ զո՞ մըն ես : Բայց Հիլտան եւս յանցաւոր չէ, որովհետեւ տեղեակ իսկ չէ : Իսկ ես, ի՞նչ կրնայի ըրած ըլլալ : Այր մարդ եմ, Ֆիդիքական պահանջներ ունիմ, ինչպէս ամէն առողջ մարդ կ'ունենայ, եւ . . . պա՞րզ է : Կեանքի իրականութիւնը այս է, Ալպիական Մանուշակ, քաջ ըլլանք եւ ընդունինք : Ամշնալու բան չկայ ասոր մէջ, եւ ոչ ալ ծածկելու : Յանցանքս ի՞նչ է : Բնական մա՞րդ ըլլալ : Ի՞նչ կ'ուզէիր որ ընէի : Ուրիշներուն կրնէր կամ աղջիկնե՞րը դարպասէի, համոզումներուս դէ՞մ գործէի, թէ հանրատուններու յաճախորդ դառնայի : Իսկ ինչ կը վերաբերի Հիլտային, խարելու կամ խարուելու հարց չկայ . ոչ ես զինք դարպասած եմ, եւ ոչ ալ ինք զիս խողի բերած կամ խարած է : Ժամանակի ընթացքին եւ բնական կերպով աճած եւ կազմաւորուած յարաբերութիւն մըն է : Առանց փոխադարձ ակնկալութեանց կամ խոստումներու : Եւ այդ իմաստով դժբախտը, իրաւացիուածը ինքն է : Տե՛ս, դուն հաշիւ կը պահանջես, մինչդեռ ինք միտքէն իսկ չ'անցըներ այդ տեսակ բան մը :

— Այր մարդուն համար բնաւ տարբերութիւն չ'ըներ, դիտե՛մ : Աէր, անկեղծ զգացում : Եղած է, չէ եղած, նոյնն է :

— Աէրը, սիրոյ զգացումը բոլորովին տարբեր իրականութիւն մըն է, եւ Ֆիդիքականը՝ տարբեր :

— Քանի այդպէս է, զիս ճանչնալէդ ե՞տք ալ . . . ի՞նչ տեսակ սէր եղաւ ասիկա : Ես կ'ին չե՞մ, թէ այդ Հիլտա կոչուածը ինձմէ աւելի դեղեցիկ է :

— Սխալ : Քեզ Հիլտային հետ չեմ ուզեր բաղդատել, որովհետեւ քեզի հանդէպ զգացածս տարբեր է, իսկ իր հետ յարաբերութիւնս՝ այլ հարց : Զգացական բնոյթ չէ ունեցած, եւ մեր միջեւ սիրոյ խօսք չէ եղած երբեք : Եւ ճիշդ ատոր համար կը յարգեմ զինք : Քեզի հանդէպ զգացածս ալ՝ ինծի համար քիչ մը արտաստովոր, եւ մինչեւ այսօր անլուծելի մնացած հանելուկ մըն է : Ես քեզի սիրահարած չեմ, որովհետեւ նախ պատանի չեմ, եւ ամենէն կարելութե՞րը՝ խանութածքով այդ տեսակ մարդ չեմ : Քեզ իսկապէս կը սիրեմ, բայց ոչ թէ քու ըմբռնած կերպովդ : Եւ պէտք է զո՞ ըլլաս որ այդպէս է : Կը հասկնաս, թէ ինչ ըսել կ'ուզեմ : Մաքուր, անազարտ սէր մը, որ ինծի համար յայտնութիւն է՝ ի միջի այլոց : Բայց ըստ երեւոյթին կարելի է, այս տեսակ սէր գոյութիւն ունի : Եւ բարեբախտաբար : Կեանքիս մէջ շատ բան փոխած է, նոր իմաստ տուած անոր, հարստացուցած : Քեզ կը սիրեմ այնպէս ինչպէս պիտի սիրէի զա-

ւակս, օրինակի համար, եթէ ունենայի : Կամ ինչպէս կը սիրեմ Հայաստանը՝ առանց ակնկալութեան եւ նոյնիսկ տկամայ : Աէրը մարդոցմէ եւ անոնց փափաքներէն կամ կամեցողութենէն անկախ է :

— Ուրեմն ես քեզի համար մարդ չեմ, — մեղմացած խօսեցաւ Ալիս . — կ'ին չեմ :

— Եթէ կ'ուզես որ միայն կ'ինը տեսնեմ մէջդ, ինծի համար Ալպիական Մանուշակը ըլլալէ կը դադրիս : Ի՛մ Ալպիական Մանուշակս : Եւ կը դառնաս սեւէ կ'ին :

— Ի՞նչ եմ քեզի համար :

— Ալպիական Մանուշակն ես :

— Ի՞նչ կը նշանակէ ասիկա . բնաւ չեմ կրցած հասկնալ :

— Զի բացատրուիր : Գիտեմ, բայց չեմ կրնար բացատրել : Օր մը կը հասկնաս, առանց բացատրութեանս պէտք ունենալու, ինքնաբերաբար :

— Հիմա համոզուեցայ որ քանի մը մարդ ես դուն, — մլաւեց Ալիս, անակնկալօրէն բարեփոխուած տրամադրութեամբ : — Զարմանալի չէ որ մարդիկ քեզ չեն հասկնար ու հակասական կարծիքներ կը յայտնեն քու մասիդ :

— Օրինա՞կ, — զուարճացած հարցուց Գեղամ :

— Օ՞հ, ամէն մարդ : Ամենէն վտասակի բարեկամներդ նոյնիսկ : Սեղբակը, օրինակի համար :

— Հասկցուեցա՞ւ, — ափսոսանքով սուլեց զրոյզը, որովհետեւ ակնթարթի մը մէջ ամէն ինչ յստակացած էր յանկարծ : — Ինքն է քեզի Հիլտայի մասին խօսողը, կամ իմ մասին բամբասողը :

— Ի՞նչ գիտես :

— Զինք հետս Քաւ տարած եմ քանի մը անգամ :

— Այդ տղուն ձեւերը, խօսակցութիւնը առաջին օրէն չեմ հաւանած, եւ չեմ սխալած : Զղուելի երիտասարդ մըն է, եւ չեմ ուզեր որ մեզի դայ ասկէ ետք՝ թերթին կամ այլ պատճառով :

— Թերթը առայժմ պէտք է դադրեցնել, — Տարօնեան հաճոյքով չլիշեց այս իրականութիւնը : — Բայց չեմ հասկնար . ի՞նչ պատահեցաւ :

— Զիմանալդ աւելի լաւ է :

— Ինչպէս որ կ'ուզես, — Գեղամի մտածումները թերթին վրայ կեդրոնացած էին արդէն :

— Վերադառնանք . հիմա կը մտահոգուին :



Ձով եւ խաղաղ իրիկուն մըն էր, հաճելի՝ հոգ չէ թէ երկրին մէջ խաղաղութեան հետքն իսկ մնացած չըլլար: Արարական եւ եւրոպական թեթեւ երաժշտութեան սովորական աղմուկը կը հասնէր իրենց հարեւաններու տուներէն, ու հեռաւոր տեղէ մը թրքերէն եղանակի մը լալիան մեղեդին նոյնիսկ կը մաղցէր վեր, մինչեւ պատշգամ, ուր նստած՝ այրերը կը շարունակէին խմել: Ալիս բերկրանքով վերացած, հաճոյքով կը հետեւէր խօսակցութեան, անոնց անստիւր մտերմութեամբ հաղորդուելու ակնկալութեամբ կարծես: Արդարեւ վերջին շրջանին Գեղամն ու Ժաղը, մտերմացած էին ու հետաքրքրական, երբեմն աղմկայարոյց զոյգ մը կազմած: Ու դո՛հ էր ինք, երջանիկ, որովհետեւ սիրած մարդը տան հարազատ անդամ մը դարձած էր, որքան ալ վերապահ եւ ինքնամփոփ ըլլար ան:

Այս գոհունակութիւնը թէեւ կը տօգունէր, կը նսեմանար՝ ընդմիջումներով, ամէն անգամ որ յիշէր նախորդ օր պատահածը: Եւ այդ հոգեմիճակին մէջ, կը հեռանար, Փիղիքայէս հոն ըլլալով հանդերձ, ու չէր լսեր կամ տեսներ շուրջը խօսուածն ու կատարուածը: Ամէն Չորեքշաբթի օր, երբ շարաթաթերթը լոյս տեսնէր, Սեդրակ իրենց կու գար կէսօրէ ետք, թերթի առաքման աշխատանքներուն օգնելու: Երէկ եւս, ամէն անգամուան պէս եկաւ եւ սկսաւ իր սովորական շատախօսութեան եւ ակնարկութիւններուն, անտեղի կատակներուն, բամբասանքին, ու վերջաւորութեան՝ ինքնիրմէ զո՛հ եւ յղիացած ըստ երեւոյթին, ծալլուած թերթերը իրմէ ստացած ատեն, բոնեց զինք ուսերէն յանկարծ ու փորձեց համբուրել:

Պօզալի էր: Մանրամասնութիւնները բոլոր կը խուսաբէին իրմէ, ու միայն այդ պօզանքն էր որ կը ցնցէր զինք ամէն անգամ որ յիշէր պատահածը:

Ե.

Հոկտեմբեր ամիսը, Աթէնքի մէջ անցուց երդ ու խաղով: Կամ Հոկտեմբերը, ինք, այս քաղաքին յատուկ ցնծութեամբ անցաւ, եւ առիթ չտուաւ Մալբի Սարգիսեանին որ մտածէր, կեդրոնանար ու յիշէր, թէ ուր կը գտնուէր, ի՛նչ պայմաններու մէջ: Առաջին քանի մը օրերուն, երբ տակաւին քաղաքին եւ միջավայրին անծանօթ, փակուած կը մնար պանդոկի սենեակին մէջ, կը հետեւէր Լիբանանի լուրերուն եւ կը տաքնապէր: Թէ՛ յունական եւ թէ՛ օտար օրաթերթերը՝ առա-

ջին էջի վրայ պատուոյ սիւնակները յատկացուցած էին Լիբանանին, ու հետեւողականօրէն կը տեղեկագրէին օր ըստ օրէ աւելի լայն ծաւալ եւ տարողութիւն ստացող դէպքերուն մասին: Պէյրութ եղած ատեն այնքան իրազեկ չէր, որքան հոս, որովհետեւ թերթերուն մէջ անհաւատալի նկարներ տեսած էր — իրեն ծանօթ թաղամասերու եւ շէնքերու, շուկաներու քարուքանդ վիճակը, ծուխի եւ մուխի մէջ կորսուած տուներու եւ անոնց բնակիչներուն սարսափը — եւ անհաւատալի թուանշաններ կարդացած: Ամէն օր հարիւրաւոր մարդիկ կը մեռնէին, անմեղ քաղաքացիներ կ'առեւանդուէին կամ կ'անհետանային, եւ ամէն օր՝ մահ, սպանութիւն եւ փողոցներուն մէջ լքուած դիակներ:

Սեպտեմբերի վերջաւորութեան, օրեր տեւող հեւ ի հեւ վազքէ եւ շարշարանքէ ետք, հազիւ յաջողած էր հեռանալ, եւ ապահով զգալ վերստին այս օտար եւ մրափող քաղաքին մէջ: Մինչեւ այսօր կը յիշէր անցազրերու դրասենեակին առջեւ խճողուած բազմութիւնը — ծերունագարդ մարդիկ, կիներ, երեխաներ, եւ անշուշտ իրեն պէս երիտասարդներ — հրմշտուքը, կոխը, վէճերը, փոխադարձ սպառնալիքները, ու սարսափը՝ մարդոց դէմքերուն վրայ: Ատիկէ ետք՝ յունական հիւպատոսարանի մուտքին խուճապի մատնուած երկսեռ քաղաքացիներու այլանդակուած ու տագնապահար արտայայտութիւնները: Ասոնք բոլոր, իրեն նման, փախչողներն էին: Իսկ միւսնե՞րը, մնացողնե՞րը, որ երկրէն հեռանալու ոչ կարողութիւն ունէին, եւ ոչ ալ յոյս: Ետևարած էին բոլոր, չփոթած, ու տակաւին անկարող ըմբռնելու, թէ իրենց երկրին մէջ կը պատահէր այս ամբողջը: Եւ այդ իսկ պատճառով, թերեւս չէին յուսահատած, ու ոմանք՝ քաջարար կամ հեռատեսութեամբ, համբերող ըլլալ կը թելագրէին նոյնիսկ:

Ամիս մը անցած էր, եւ կացութիւնը Լիբանանի մէջ չէր բարեփոխուած ըստ երեւոյթին: Օրաթերթերուն նոյն կանոնաւորութեամբ կը հետեւէր անշուշտ. իսկ դրասենեակին մէջ իրենց առօրեայ խօսակցութեան առանցքը կը կազմէր, բնական է, Լիբանանը՝ իր վերջին եւ նորագոյն լուրերով: Սակայն շարաթներու ընթացքին սովորական վարժութեան մը վերածուած էր այս ամբողջը, եւ հաշտուած էին իրականութեան հետ, այնքան մը, որ ընդունած էին հոն կատարուածը: Կամ դէթ տարօրինակ չէր թուեր իրենց, նկատելով որ կոխները կը շարունակուէին եւ ոչինչ կը փոխուէր հոն: Զարմանալի էր, այո՛, բայց Մալբի ինք եւս նոյնը կը զգար եւ առաջուան պէս չէր մտահոգուեր: Մանաւանդ որ շաբաթը անգամ մը կը հե-

ուսմանը եւ կը խօսէր ծնողքին հետ, ու գիտէր, թէ ամէն ինչ կարգին էր՝ զէթ իրենց սան մէջ: Հիմա արդէն կրնային դուրս ելլել, անհրաժեշտ դնումները ընել, եւ շրջագայիլ նոյնիսկ երբեմն: Շուկան փակ կը մնար անշուշտ, եւ բնականաբար՝ հօրը վաճառատունը նսեւ: Ծնողքին միակ մտահոգութիւնը էր ու կը մնար Մուշկը, որ օրերով սունկն կը բացակայէր դարձեալ, ու ոչ ոք գիտէր, թէ ո՛ւր կ'անցընէր ժամանակը կամ ինչ կ'ընէր:

Հելենիս պանդոկի սպասման սրահը ակումբի վերածած էին: Երբեմն, ժամերով, հոն կը յամենային, զանազան սեղաններու շուրջ հաւաքուած, ու հոն կը ծրարէին իրենց արշաւանքները: Բառացիօրէն եւ առանց չափազանցութեան, արշաւանքներու կը վերածուէին իրենց պտոյտներն ու գիշերային թափառումները՝ ճաշարանէ ճաշարան: Աթենացիներուն, եւ մանաւանդ հոն ապրող օտարազգի հաւաքականութեան համար, առօրեայ կարեւոր գրազուամներէն մէկն էր տաւերնայի մը ընտրութիւնը՝ այդ օրուան ընթրիքին կամ ճաշին համար: Յունաստանի կեանքին եւ բարքերուն մաս կը կազմէր կենցաղային այս շտապանքը, եւ ամէն մարդ, զրեթէ առանց բացառութեան, կէսօրէ ետք կը հանդատանար, որպէսզի գիշերը կարենար վայելել:

Հիմա եւս, թաղուած սպասման դահլիճի բազկաթոռներէն մէկուն մէջ, հեռու կեդրոնական սեղաններու խճողումէն, Սալլի Սարգիսեան կը սպասէր կամ կ'երազէր: Իրիկուան ժամը ինն էր արդէն, եւ խումբը չէր հաւաքուած տակաւին: Իսկ էտկարը, որ դործով դուրս ելած էր, չէր վերադարձած, եւ ինք կը խտկար հետեւաբար՝ անգիտակցաբար խորատուգում մտածումներու մէջ: Էտկարը իրեն պաշտօնակից եղած էր առաջին օրէն, եւ ծնողները տեղեակ էին անշուշտ: Ժամանակի ընթացքին, թէեւ, յաջողած էր դուռ բարեկամական ծիրէն ներս պահել իրենց յարաբերութիւնը եւ հաւաստիացուցած հօրը, թէ մտահոգուելու պատճառ չունէր: Պարզօրէն խոստացած էր որ էտկարին հետ պիտի չամուսնանար, որովհետեւ հօրը վերջին խօսքը այս նիւթին շուրջ՝ պարտուած մարդու վերջին պայման մը եղած էր:

— Եթէ կ'ուզես անպայմանօրէն հետը ամուսնանալ, արդէլք չեմ ըլլար. բայց պէտք է գիտնաս որ համաձայն չեմ:

Մինչեւ այսօր չէր կրցած այս նախադասութեան միտք բանին հասկնալ: Հաշտութիւն էր, թէ սպառնալիք: Հայրը սխալալ չէր եղած երբեք, ու վստահ էր, թէ վերջաւորութեան պիտի ներէր իրեն, եթէ երբեք նմանօրինակ քայլ մը առնէր: Բայց ինքնիրեն պիտի

չկարենար ներել, որովհետեւ գիտէր, թէ հօրը կեանքին մեծազոյն վիրաւորանքը պատճառած պիտի ըլլար:

Սակայն մէկ ամիսէ ի վեր ամէն օր միասին էին հոս. ոչ միայն ցերեկը, աշխատանքի ժամերուն, այլ գրեթէ օրական քսան ժամ: Նոյն պանդոկին մէջ, ու դործնականօրէն՝ նոյն յարկին տակ: Փորձութիւնները բազմաթիւ էին, տկարանալու պատեհութիւնները՝ անսպառ: Էտկարը, որ դուստր եղած էր միշտ եւ տարիներու ընթացքին իրապաշտօրէն բնդուած էր իրենց յարաբերութեան խոչընդոտները, զգացական դարձած էր յանկարծ: Եւ փակուած, փոխադարձ հասկացողութեամբ եւ խաղաղօրէն լուծուած հարցը կը վերարժարծէր դարձեալ, լման մէկ տարի լուելէ ետք: Ձէր կրնար մեղադրել զինք, կամ նոյնիսկ այլպանել, որովհետեւ ինքն ալ կը տկարանար երբեմն ու կ'ըմբոստանար: Ի վերջոյ անոր հայ չըլլալը ոչ մէկ կերպով կը նուազեցնէր ունեցած արժանիքներն ու առաւելութիւնները: Ուշիմ, փայլուն, ուղղամիտ եւ պարկեշտ երիտասարդ մըն էր, որու միակ թերութիւնը զինք սիրած ըլլալն էր: Եւ ինչո՞ւ ուրանար, ուրիշ ոչ մէկ երիտասարդի հետ նոյնքան հանդիստ եւ հարազատ կը զգար: Վարժութիւն էր թերեւս, այո՛, բայց պատճառ մը պէտք է ունենար, վարժութիւնը կարելի դարձնող հիմ մը:

Այս ամբողջը մոռցուած էր արդէն ասկէ մինչեւ մէկ ամիս առաջ, ու երկուքն ալ յաջողած էին իշխել իրենց զգացումներուն վրայ ու բարեկամներ մնալ: Երանի բնաւ Աթէնք եկած չըլլար, հրաժարէր պաշտօնէն, ու ծնողքին հետ ապրէր Լիբանանի ներկայ դժոխքը, փոխանակ այս կացութեան մէջ գտնելու ինքզինք դարձեալ: Սակայն ինչպէ՞ս կրնար նախատեսած ըլլալ այս նոր բարդութիւնը: Անկարելի էր, պարզօրէն՝ անհանդուրժելի: Երթալիք տեղ ունենար, քաղաքին մէջ այլ ծանօթներ կամ ազգականներ ունենար, կրնար փոխուիլ թերեւս, մոռնալ, եւ էտկարին հետ այսքան յաճախ դուրս ելլելու հարկադրանքին տակ չըլլալ: Անհանդարտ եւ ինքնիրմէ դժգոհ, սիկառեթ մը վստեց — հոս գալէն ետք ծխելու սկսած էր նսեւ — եւ քննեց շուրջ բոլորը: Պէտք է այս մտածումները վանէր, չմտածէր, եւ զբաղուէր մը գտնէր, որպէսզի մոռնար: Անդրաբար բարձրացաւ տեղէն ու միացաւ խումբին, որ մեկնելու կը պատրաստուէր արդէն:

Լիբանանցիները հոս եւս կը շարունակէին իրենց սովորական կեանքը — ամէնօրեայ գիշերային խրախճանքներն ու պտոյտները: Նախ ճաշարան, ուր ժամերով կը յամենային սեղաններուն շուրջ, լիբանանեան գիշերները հոս փոխադրելու ենթադրատեղական անհրաժեշտութենէ մը մղուած թերեւս, յետոյ պառի մը մէջ քանի մը բա-

ժակ, եւ ապա՝ արքերիոյ պարելու համար: Յաճախ կը խօսէին Լիբանանի մասին, որովհետեւ կանոնաւորաբար կը հետեւէին լուրերուն, կը յիշէին մօտիկ անցեալը, հոն մնացած իրենց հարազատները, ու ցաւելով եւ անսոսալով հանդերձ, առաւելագոյնս կը փորձէին արժեքընել իրենց պարտադրուած այս արձակուրդը: Գաղթականներ ըլլալէ աւելի դրօսաշքիկներ էին վերջին հաշուով, եւ վճռովիներ երբ զիրենք զաղթական կոչէին այս երկրին մէջ: Մանաւանդ որ իրենք զիրենք բախտաւոր կը նկատէին, բազդատած իրենց երկրացիներուն հետ, որոնք ստիպուած էին մնալ հոն երկինքէն տեղացող փամփուռներու եւ ուսմբերու տարափին տակ: Եւ ուրախ էին ուրեմն, որքան ալ ցաւ զգային իրենց երկրին մէջ կատարուածին համար: Եւ այս դրօսաշքիկները կամ զաղթականները կը ներկայացնէին Լիբանանի զանազան խաւերն ու կրօնական խմբաւորումներն ու յարանուանութիւնները — մարոնիթ կամ օրթոտոքս քրիստոնեաներ, սիւնի կամ շիի իսլամներ, տիւրքիներ, եւ ինչու չէ՝ հայեր: Օտարութեան մէջ միասին էին դարձեալ ու տարակարծութիւններ չունէին. հաշտ էին, համերաշխ, այսինքն իսկական լիբանանցիներ, որոնք ազգային մոլեռանդութեամբ չէին թունաւորուած այլ երկրացիներու նման:

Առաւօտեան ժամը երկուքին խօսմբը, որ քանի մը ժամուան ընթացքին բազմապատկուած էր — յոյներ եւ ամերիկացիներ եւս միացած էին իրենց — ու հասած Սթար Տըքս, տարողնուելու սկսած էր արդէն, եւ Սալրի հիմա նստած էր դարձեալ էտկարին հետ ստերիոյ մէջ: Միւսները բոլոր կը պարէին, կատաղութեան, դազաթնակէտին հասած երաժշտութեան քմայքներուն յանձնուած, եւ իրենք մնացած էին առանձին: Անտեսանելի անկիւնէ մը հրաշքներ գործող լուսարձակը վը լուսաւորէր պարողները միայն, զանոնք վերածելով բազմագոյն ուրուականներու, մինչ իրենք մնացած էին խաւարին մէջ, ու պոռալով կը շարունակէին խօսիլ: Սալրի, խմբէքէն թէ անբնութենէն թմրած՝ չէր գիտեր, խօսելու նոյնիսկ ոյժ չունէր, բայց ստիպուած էր պոռալ ձայնը լսելի դարձնելու համար: Ըստ իրեն այս խօսակցութիւնը ամբողջ անիմաստ էր այլեւս. հետաքրքրական իսկ չէր, որովհետեւ սկսած էր խրտչիլ էտկարի զգացական զեղումներէն եւ յամառ հետապնդումէն: Բայց յոգնած էր կամ գիտով, եւ գիմաղբելու կարողութիւն չունէր այլեւս:

— Այսքան մոլեռանդ հայ ըլլալը չէի գիտեր, — էտկար պոռաց ճարահատ: — Սէրը ամէն ինչէ վեր է. ազգ, կրօնք, դադափար, քա-

ղաբականութիւն: Այս ի՞նչ տգիտութիւն է, ի՞նչ յետամնացութիւն:

— Մոլեռանդ չեմ բայց հայ եմ, — Սալրի պիտի նախընտրէր քնանալ: Այդ պահուն եւ իր այդ վիճակին մէջ, քունը ամէն ինչէ վեր էր, եւ ոչ թէ սէրը: Ինք եթէ շկարենար քնանալ, բնաւ չկարենար սիրել թերեւս, ոչ իսկ հասկնալ սիրոյ նշանակութիւնը: — Կրնայ ըլլալ, կրնայ ըլլալ որ յետամնացութիւն է, սակայն մեզի համար այսպէս է: Չես կրնար հասկնալ, այնքան ատեն որ հայ չես: Շատ զարմանալի է, այո՛, նոյնիսկ ընդլրեցողիչ, բայց ի՞նչ կրնանք ընել: Ես ալ չեմ հասկնար, կը ներես... պէ՞տք է այս մասին խօսինք հիմա:

— Առաջ այսպէս չէիր:

— Այսպէս էի, բայց չէի գիտեր:

— Ձիս կը սիրե՞ս, թէ ոչ:

— Չեմ գիտեր:

— Առաջ գիտէիր սակայն:

— Այո՛:

— Ի՞նչ փոխուեցաւ:

— Չձանձրացա՞ր, — մեղմօրէն խօսեցաւ Սալրի. — ամէն օր այս պատմութիւնը պէ՞տք է կրկնենք: Այս հարցը վաղուց լուծած, վերջացուցած էինք: Ի՞նչ պատահեցաւ նորէն:

— Հայ եթէ ըլլայի...:

— Please! Կ'աղաչեմ, — թախանձեց աղջիկը: — Չսկսինք դարձեալ: Ես ալ չեմ գիտեր այլեւս, չեմ գիտեր, չեմ գիտեր: Ամուսնութեան մասին չեմ ուզեր խօսիլ, չեմ ուզեր ամուսնանալ: Ինչո՞ւ չես ուզեր հասկնալ:

— Ո՛ր, ծնողքդ է որ համաձայն չէ: Ես քեզ կը ճանչնամ, գիտեմ: Անհասականութիւնդ ո՞ւր մնաց: Ազատ մտածող էիր առաջ, անկախ, ըմբոստ:

— Հիմա ալ անկախ եմ, բայց դուն չես ուզեր ընդունիլ ատկա, եւ որոշած ես կամքդ պարտադրել ինձի: Մոտքս համաձայն չեն, այո՛, բայց որոշողը ես եմ:

— Չեմ հաւատար:

— Ազատ ես:

— Իսկապէս փոխուած ես, — հեզեց էտկար:

— Ձէ՛ր նկատած: Մեծցած եմ, ծերացած, զգուած:

— Այսպէս ուրեմն:

— Ի՞նչ ըսել է այսպէս, — Սալրի հարցական նայեցաւ երիտասարդին ու ոչինչ տեսաւ մութին մէջ:

— Ես որորմութիւնը չեմ սիրեր, եւ աղաչելու վարժուած չեմ:

Յանցաւորը ես եմ արդէն... չեմ գիտեր, թէ ինչո՞ւ այսքան կը նը-
ւաստացնեմ ինքզինքս: Անկարելի է, անհաւատալի:

Բացառաբար Ղդային ու վերաւորելու, ցաւցնելու մտադրու-
թեամբ խօսեցաւ Կտկար, ու յետոյ դանդաղօրէն բարձրանալով տե-
ղէն եղրակացուց:

— Կը ցաւիմ: Տես որ չզղջաս միայն:

— Երեխայ մի ըլլար:

Սալբի Սարգիսեան չգոհանալով թէ եւ, երբ նկատեց որ իր տա-
րինքը բարեկամը իսկապէս կը մեկնէր: Ու յանցաւոր չզգայ երբեք,
որովհետեւ ինք զեր չունէր այս ամբողջին մէջ: Զղջա՞լ: Ինչո՞ւ պի-
տի զղջար, մանաւանդ քանի այսպէս քինասնդիր կրնար ըլլալ ան:
Ճիշդ է, թէ տարիներու ընթացքին վարժուած էր անոր մտեմու-
թեան, վարժուած էր գնահատել արժանիքները ու յարգել զինք, ու
նոյնիսկ սիրել զինք, ճիշդ է, բայց ըստ երեւոյթին զիրար չէին ճանչ-
նար տակաւին: Պիտի կարենա՞ր երբեւիցէ բացատրել անոր, թէ՛ չօրը
հանգէյ զգացածը բոլորովին տարբեր եւ նուիրական սէր մըն էր:
Թէ՛ որքան ալ ազատամիտ, անկախ եւ ըմբոստ ըլլար, չօրը խօսքը
օրէնք էր իրեն համար: Այս տեսակ անհեթեթ բան մը կրնա՞ր հասկը-
նալ: Անհաւանական էր: Ի վերջոյ Արամ Սարգիսեան անուշով հայր
մը չէր ունեցած ան, եւ ոչ ալ եղած էր անոր սիրելի, շփացած ազդի-
կը: Ինչպէ՞ս կրնար ըմբռնել ուրեմն:

Յուզուեցաւ յանկարծ եւ կեանքին մէջ առաջին անգամ ըլլա-
լով թերեւս՝ առանձին զգաց: Օտար երկրի մը, օտար քաղաքի մը
մէջ, անձանօթ մարդոցմով շրջապատուած բայց լքուած նաեւ: Ան-
տէր, առանձին հայ ազգիկ մը, որ քաջարար եւ որոշ ինքնագոհու-
թեամբ համարձակած էր բաժնուիլ ծնողքէն իր կեանքն ու պատաս-
խանատուութիւնները դիմազրակելու վճռականութեամբ: Որոշելը
չատ հեշտ եղած էր այն ատեն, բայց Աթէնք հասնելէ ետք, առաջին
օրն իսկ, երբ պանդուկի սենեակին մէջ դտած էր ինքզինք ի վերջոյ,
ամէն ինչ անբնական թուած էր: Իր հոս ըլլալը, այդ գորշ ու անհրա-
պօյր սենեակին ճնշիչ մթնոլորտը, ամերիկեան ընկերութեան մը մէջ
պատասխանատու պաշտօն մը ունենալն ու Յունաստան փոխադրուի-
լը, ու նոյնիսկ իր աղջիկ ըլլալը: Զարմանալի էր: Այր կամ կին ըլ-
լալու գիտակցութիւն կամ հարց չէր ունեցած մինչեւ այն ատեն, եւ
այլ մարդոց հաւասար նկատած էր ինքզինք: Մինչդեռ օտար հողի
վրայ ոտք դրած իր առաջին օրն իսկ անդրադարձած էր, թէ ինք կին
էր նաեւ, ոչ թէ միայն մարդ, եւ թէ անկախ չէր վերջին հաշուով:
Ու բնականաբար փնտռած էր պաշտօնակիցներուն ինքնախտահու-

թիւն ներշնչող մտերմութիւնը, ու մասամբ վերագտած էր հաւա-
սարահառութիւնը: Այդ հողեղիճակին եւ պայմաններուն մէջ էր որ
անգիտակցաբար քաջալերած էր Կտկարը եւ վերականգնած իրենց
նախկին յարաբերութիւնը: Բայց այսօ՞ր: Լաւագոյն լուծումը պիտի
ըլլար պաշտօնէն հրաժարիլ եւ Պէյրութ վերադառնալ:

— Ինչո՞ւ առանձին նստած ես, — կողքին կանգնեցաւ ամերի-
կացի Ֆրետը, որ երկու շաբթուան մէջ մտեմացած էր խումբի բո-
լոր անդամներուն հետ: Յազմանդամ, չէկ, կապոյտ աչքերով ու
միշտ ժպտուն երիտասարդ մըն էր: Բայց լուրջ էր ու ստիպախօս այս
հսկան, որ տարիներէ ի վեր բնակութիւն հաստատած էր Յունաս-
տանի մէջ ու սիրահարած երկրին, բաղձաթիւ ուրիշ ամերիկացիներ-
ու եւ անգլիացիներու նման:

— Միւսները կը պարեն, — փորձեց բացատրել ինք:

— Կ'ուզե՞ս պարել:

— Յոգնած եմ:

— Ինչպէս միշտ, — կատակեց ամերիկացին, միաժամանակ
տեղաւորուելով կողքին, տիւանի նմանող կաշեծածիկ նստարանին վը-
րայ: — Կտկարը ո՞ւր է, — հարցուց յետոյ:

— Քիչ առաջ գնաց:

— Խմիչք մը կ'առնե՞ս, — Ֆրետ նկատեց որ անտրամադիր էր
այս սեւաշեւայ հայուհին, որու անունը չէր կրցած սորվիլ եւ յիշել:

— Բաժակ մը ունիմ արդէն:

— Եթէ կ'ուզես ուրիշ տեղ մը կ'երթանք:

— Այս ժամէ՞ն ետք:

— Կ'ուզեմ աւելի լաւ ճանչնալ քեզ:

Սալբիի համար անսկիզբ մը չէր լսածը, եւ բնականաբար
չզարմացաւ: Առաջին օրէն նկատած էր, թէ Ֆրետ մասնաւոր կերպով
կը հետաքրքրուէր իրմով: Բայց եւ այնպէս հարցուց:

— Ինչո՞ւ:

— Պէտք է ըսել որ բաւական դժուար աղջիկ մըն ես:

— Դժուար: Դիւրին աղջիկը ինչպէ՞ս կ'ըլլայ:

— Առեղծուածի նման բան մըն ես, դէթ ինծի համար:

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա, — Սալբի իսկապէս հետաքրքր-
ուեցաւ, յուսալով որ կրնար փոխուիլ, կամ դրադիլ դէթ:

— Միւսներէն բոլորովին տարբեր ես:

— Աւելի ինքնատիղ խօսք մը չէ՞ր կրնար ըսել, — Սալբի յու-
սախար եղաւ: — Աղջիկ մը այս կարգի սուտեր ամէն օր կը լսէ:

Ամերիկացին բարձրաձայն խնդաց, ձեռքերը պարզած օդին

մէջ, եւ երկար պահ մը շիրքաւ ինքզինք զսպել: Ոչ մէկ կին զինք այս կերպով լռեցուցած էր: Անկեղծ, անմիջական եւ պարզ:

— Կենթադրեմ, — ըսաւ. — պատճառ մը կա՞յ որ ես նոյնը չըսեմ քեզի, երբ իրականութիւն է քու պարագայիդ, եւ ուրեմն իմ ըրածս սովորական շողոքորթութիւն չէր: Չափազանց համարձակ ու զուարթ աղջիկ մըն ես, բայց նաեւ շատ լուրջ ես եւ ինքնամփոփ: Շատ քաղաքավար ես եւ խոնարհ, բայց նաեւ՝ հպարտ: Ի՞նչ է գաղտնիքը:

— Կին եմ, մի մոռնար: Թէեւ ես ալ նոր անդրադարձայ ատոր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Առաջ որպէս կին չէի մտածեր, այլ որպէս մարդ: Հիմա կը նկատեմ որ տարբերութիւն մը կայ: Դուն, օրինակի համար, ինծի կարեւորութիւն կու տաս ոչ թէ որովհետեւ քեզի պէս մարդ եմ, այլ...:

— Դժգո՞հ ես, — ընդմիջեց Ֆրեա:

— Ձեմ գիտեր:

— Կը տեսնե՞ս: Ըսածս հաստատեցիր արդէն: Ուրիշ աղջիկներ, մինչդեռ, նախ կին են, եւ միայն կին:

— Ի՞նչ է տարբերութիւնը: Այր մարդիկ, ի միջի այլոց, ատիկա չէ՞ք նախընտրեր:

— Ոչ միշտ:

— Դո՞ւն:

— Անկեղծօրէն՝ մինչեւ այսօր կինը միայն տեսած եմ աղջիկներուն մէջ, անոնց մարմինը, գեղեցկութիւնը, յարուցած ցանկութիւնը, եւ Ֆրիդրիխի գրաւչութիւնը ընդհանրապէս:

— Իսկ այսօ՞ր:

— Լուրջ: Գիտեմ, թէ պիտի չհաւատաս, բայց իսկապէս կ'ուզեմ աւելի լաւ ճանչնալ քեզ: Ինծի համար հանելուկ մը դարձար... լրջօրէն կը համակրիմ քեզի:

— Որ ի՞նչ կը նշանակէ, — Սայրի յամառօրէն շարունակեց լակոնական թոնով մը խօսիլ:

— Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով սկսած եմ ամուսնութեան մասին մտածել:

— Եթէ լուրջ ըլլայիր, այս տեսակ առաջարկ մը պիտի չընէիր: Ձիս չես ճանչնար իսկ, անունս նոյնիսկ չես գիտեր. ո՞չ անցեալս, ոչ ընտանիքս... Ի՞նչ գիտես, թէ չեմ ամուսնացած արդէն:

— Ատոր վստահ եմ, — ժպտեցաւ Ֆրեա. — բաւական ծանօթութիւն կըրցած եմ քաղել պաշտօնակիցներէդ: Հայ ըլլալդ, օրինակի համար, Էտկարին հետ ունեցած յարաբերութիւնդ:

— Գաղտնիք մը չէ: Իսկ քանի գիտես...:

— Ատիկա արդեւք մը չէ: Քեզի համակրելու իրեն հետ ի՞նչ կապ ունի:

— Ինծի՛ հետ կապ ունի սակայն. իսկ ես, կը ներես, չեմ կըրնար ըսել որ կը համակրիմ քեզի:

— Հասկնալի է, բնական, — ամերիկացին անհանդիստ զգաց պահ մը: — Կը յուսամ որ զիս աւելի լաւ ճանչնալու առիթ կ'ունենաս:

— Ճի՛շդ է, ես ալ քե՛զ չեմ ճանչնար:

— Անշուշտ: Հաւանաբար սխալ կարծիք նոյնիսկ կազմած ես իմ մասին: Ամէն օր աղջկայ մը հետ նկատած պէտք է ըլլաս: Լիբանանցի աղջիկները սքանչելի են այդ իմաստով. ազատամիտ, ուրախ, կեանքն ու վայելքը սիրող: Եւ գեղեցիկ: Բազմաթիւ յոյն աղջիկներուն հետ... բազմաթիւ սխալ է: Հագուել գիտեն, շոգարուել, վայելցընել. արեւելեան իւրայատուկ դրաւչութիւն մը ունին որ իսկապէս հիանալի է: Իսկ ամենէն հետաքրքրականը՝ բոլորն ալ սահուն անդլերէն կը խօսին, մինչդեռ յոյները: Ի՞նչ է գաղտնիքը:

— Ասոնք բոլոր գարգացած աղջիկներ են, եւ Լիբանանի Յունաստանէն բոլորովին տարբեր է վերջին հաշուով: Լիբանանի պարտական իւրայատուկ է: Աշխարհի վրայ թերեւս միակ երկիրն է ուր տեղացիները օտար քանի մը լեզու կը խօսին եւ կը գործածեն՝ իրենց հարազատ լեզուին պէս: Անգլերէն չէ միայն. ֆրանսերէնը նոյնքան մը ընդհանրացած է:

— Ձարմանալի չէ՞: Երեւոյթ է իսկապէս: Ես քանի տարի է հոս եմ, ու հազիւ կ'ոտրտած յունարէն մը կը խօսիմ: Եւ իմ պարագայիս գործս կը պարտադրէ: Ստիպուած եմ լեզուն սորվիլ, ու դասընթացքներու հետեւած եմ:

— Ի՞նչ կ'աշխատիս, — աղջիկը բնականօրէն հետաքրքրուեցաւ:

— Ամերիկեան գեսպանատուն:

— Օ՛, լրտես ես այսինքն:

— Ո՛չ, ես պարզ պաշտօնեայ մըն եմ, — դահուսակութեամբ խնդաց Ֆրեա: Այս աղջկան անսեթեւեթ անկեղծութիւնը հմայիչ էր ուղղակի: — Լրտես ըլլալու համար աւելի բարձր պաշտօն պէտք է ունենալ: Ես հոս հաստատուելէ հտք զիմած եմ եւ յաջողած եմ որպէս պարզ քարտուղար պաշտօն մը սպահովել:

— Քանի՞ տարի է հոս ես:

— Հինգ տարի: Ընկերներով պտոյտի եկած էինք, ես մնացի: Առաջին օրէն երկրին սիրահարեցայ:

— Երանելի մարդիկ էք դուք ամերիկացիներդ: Ամէն ինչի կը սիրահարիք անմիջապէս:

Երաժշտութիւնը կամ աղմուկը ի վերջոյ լռեց, եւ պարողները վերադարձան եւ դրաւեցին իրենց աթոռները, Սալբի Սարգիսեանը ձերբազատելով Ֆրետին հետ խօսակցութիւնը շարունակելու հարկադրանքէն: Այս վերջինը, թէ եւ, առանց յուսահատելու փսփոսաց աղջկան ահանջին:

— Վաղը իրիկուն կը շարունակենք:

Երբ պանդոկ հասան Աթէնքի աշնանային անհրապոյր արեւածաղը սկսած էր լոյս մաղել երկինքէն: Սալբի Սարգիսեան ուժասպառ էր եւ գրեթէ ոտքի կենալու անկարող, բայց դո՛հ էր, որովհետեւ այդ օր Շարաթ էր, եւ ուրեմն կրնար ուղածին չափ քնանալ: Քնամով չըլլալով հանդերձ, անքնութեան չէր գիմանար երբեք, ու լաւագոյն սրբամաղբութեան մէջ խկ, յաճախ ինքզինք գրկելով, կը փութար անկողին՝ երբ յոգնած զգար:

Երբ աչքերը բացու հաղիւ ժամ մը անցած էր ու սենեակը ողողուած էր լոյսով: Պատուհանին վարագոյրը քաշեց եւ ինքզինք վերըստին նետեց մահճակալին վրայ, բայց ապարդիւն: Յոգնած էր ու Ֆիլիքապէս տկար կը դգար, անհանգիստ. պէտք է քնանար, որպէսզի կազդուրուէր, ու մանաւանդ մոռնար նախորդ օրը, էտկարին հետ ունեցած վէճը, ինչպէս նաեւ Ֆրետ կոչուած երանելին: Բայց քունը կը դաւաճանէր, եւ որքան ճիւղ ընէր այնքան աւելի կը սթափէր: Քիչ անց մտահոգուելու սկսաւ, եւ զգաց որ ջիղերուն չէր կրնար իշխել: Պարզօրէն ջղային էր, բայց ո՛չ կրնար կեդրոնանալ, եւ ոչ ալ մտածումներէն ձերբազատուիլ: Եթէ այսպէս շարունակուէր, անպայմանօրէն կը հիւանդանար, վստահ էր:

Գաղափարն իսկ անհանդուտացուց զինք, ու չկրցաւ հաւատալ, ընդունիլ, թէ այս ինքն էր: Եւ աւելի եւս ջղայնացաւ: Իրեն համար այս ամբողջը անկարելի, անհաւանական նորութիւն էր, կամ խելագարութիւն: Ինք այս վիճակին մէջ չէր կրնար ըլլալ: Ո՞վ էր ուրեմն այս նոր անձը իր մէջ: Նոր ա՞նձ: Ի՞նչ նոր անձ: Եթէ միայն կարենար քնանալ... այս տեսակ յիմար մտածումներ չէր ունենար: Ինքզինք լաւ կը ճանչնար, ու ոչինչ կրնար խախտել իր լաւատեսութիւնը: Մարդկային կեանքը իր բոլոր բարդութիւններով հանդերձ, պարզ ու գեղեցիկ իրականութիւն մըն էր — հաճելի, հետաքրքրական, եւ մանաւանդ՝ անխուսափելի: Եւ այդ իսկ պատճառով՝ բնական, իր դժուարութիւններուն իսկ անհրաժեշտութեամբ: Անցեալին՝ դժուարու-

թիւնները որպէս մղիչ ոյժ կը ծառայէին իրեն, որպէս խթան, եւ աւելի մճուակամ կը դարձնէին զինք ու կեանքը աւելի հետաքրքրական կ'ընծայէին: Իմաստ կու տային անոր եւ առօրեան կը լեցնէին բերկրանքով:

Հիմա կը հասկնար, թէ հայրը ինչի մասին կը խօսէր: Օտար երկրի մէջ առանձին ըլլալը այս էր ըստ երեւոյթին: Անկախ եւ ինքնիշխան էր ահաւաստիկ, բացարձակօրէն ազատ, եւ ուղածը կրնար ընել: Բայց ի՞նչ էր ուղածը: Կեանքին մէջ իտէպալ չէր ունեցած, որ կարենար այս հարցումին պատասխանել հիմա: Ապրիլ, վայելիլ, հաղուիլ ու շարուիլ, գնումներ ընել, նուէրներ տալ եւ ստանալ, ու վերջապէս՝ ուրախ ըլլալ: Որ կը նշանակէր այլ մարդոց նմանիլ, այսինքն անոնց ըրածը ընել, անոնց ունեցածը ունենալ: Հիմա այդ ամբողջը անխուսա կը թուէր, ու կը նախանձէր Մուշեղին, որ ամէն օր նորութիւն մը ունէր կեանքին մէջ, ամէն օր՝ նոր յայտնութիւն մը, նոր խանդավառութիւն, եւ բնականաբար՝ իմաստալից եւ բեղուն առօրեայ: Ի՞նչ էր ուղածը: Այս բոլորը ընելով եւ ունենալով հանդերձ, նոյնիսկ հոս Յունաստանի մէջ, ջուրէն դուրս նետուած ձուկի կը նմանէր: Եւ կը տաղնապէս — անհանգիստ էր, անհանդարտ, դժգոհ, առանձին եւ շուարած: Մինչդեռ ինք կ'ապրէր որ այս բարեղէպ տոխթը, պարտադրուած այս ազատութիւնը գերագոյն վայելք ընծայէր իրեն: Իսկապէս անկախ դարձնէր զինք, ու նոր հանգրուաններու կամ եղբակացութիւններու հասցնէր: Կեանքին նոր իմաստ տար, փոխէր, յեղաշրջէր նոյնիսկ: Բայց կը պատահէր ճիշդ՝ հակառակը: Փոխանակ ազատագրուելու, կաշկանդուած կը զգար, ու դժգոհ էր, դժգոհ, դժգոհ: Անկախ չէր ուրեմն, եւ անկախութիւնը իմաստ չունէր, կամ ինք սխալ հասկցած էր դայն: Պատրանք մը անուցած էր պարզօրէն: Անկախութիւնը էտկարին կամ այլ երիտասարդներու հետ սիրաբանիլ էր: Պիտի ուզէր որ այդպէս ըլլար, բայց չէր: Ինք ըզպացում չունէր, ցանկութիւններ չունէր: Անչուչա: Այդքա՞ն միայն: Յետո՞յ:

Էտկարը իսկապէս կը սիրէ՞ր, կամ սիրա՞ծ էր: Եթէ այս էր սէրը, բացառիկ, արտակարգ, խենթեանիք բան մը չէր: Բայց դարերու ընթացքին բիւրաւոր մարդիկ, թերեւս նոյնիսկ միլիոններ, անձնասպան եղած էին այս պատճառով: Բնական չէր: Կամ թերեւս ինք անբնական էր: Համակրելի եւ հակակրելի մարդիկ կային, ինչպէս նաեւ՝ լաւ եւ վէճ մարդիկ: Ծատ պարզ էր: Համակրելի մարդոց կը համակրիս, եւ կ'ուզես յաճախ ըլլալ անոնց հետ: Գերբնական կամ ողբերգական ոչինչ վար տար մէջ: Յամենայն դէպս իր քնանալը աւելի

կարեւոր էր հիմա : Լիրանանի մէջ մարդիկ կը սպաննուէին , իսկ ինք անձնական յոյզերով ու մտահոգութիւններով կլանուած էր : Անտրամարանական կեանք մըն էր , եւ աշխարհը՝ յիմարանոց : Շատ աւելի օդտակար դործ մը՝ կը կատարէր , եթէ ծնողքին հեռաձայնէր : Ընկալուէք վերցուց եւ պանդոկի հեռաձայնային կեղբոնէն խնդրեց որ Պէյրութ իրենց տան թիւր փորձեն : Եւ արդէն իսկ հանդարտեցաւ մասամբ : Չարմանալի էր , կեանքի սովորական ակնկալութիւններէն մէկը կը բաւէր որ աւելի բնական դպար եւ ինքզինք վերադառնէր : Հօրը կամ մօրը ձայնը լսելու , անոնց հետ խօսելու եւ իրեն ծանօթ աշխարհին հետ հաղորդակցութեան մէջ ըլլալու ակնկալութիւնը տրամադրութիւնը բարեփոխած էր արդէն :

Հեռաձայնը երբ հնչեց Սալբի կը մրափէր արդէն , բայց երկտայի մը պէս ուրախացաւ եւ պատասխանեց :

— Ես եմ , այո՛ , Սալբին : Լաւ չեմ լսեր , մամա՛ , ինչպէ՞ս էք : Ի՞նչ նորութիւն :

— Հանդիստ ենք , աղջիկս , լաւ որ հեռաձայնեցիր : Հայրդ շատ ընկճուած է , անտրամադիր , ջղային :

— Ինչո՞ւ : Ի՞նչ կայ որ :

— Մասնաւոր բան մը չկայ , գիտես . . . :

— Ո՛չ , մի ծածկեր , ինչ որ է , ըսէ՛ : Տո՛ւր , հայրս տուր ինձի :

— Համբերէ՛ , հիմա կը կանչեմ : Դուն ինչպէ՞ս ես , ի՞նչ կ'ընես , ինչպէ՞ս կ'անցընես ժամանակդ :

— Կ'աշխատիմ , կը պարտիմ , ես գիտե՞մ : Լաւ եմ , բայց միտքս դրադած է միշտ . մտահոգ եմ , մամա՛ , գիշերները չեմ կրնար քնանալ : Ամէն օր տեսակ մը լուր , երթալով աւելի դէչ կ'ըլլայ կոր , գիտեմ , ու միտքս հանդիստ չէ :

— Մասնաւոր բան մը չկայ ըսի : Կացութիւնը լաւ չէ , բայց փառք Աստուծոյ , ողջ ենք . ականջովդ կը լսես , չէ՞ : Շարաթը անդամ մը հետդ կը խօսինք . հիմա հետս կը խօսիս , չէ՞ . . . մտահոգուելու ի՞նչ պէտք ունիս : Դուն մեր մասին մի մտածեր . այսքանին ալ փառք . ուրիշներ ինչերէ՞ անցան : Մենք դոնէ ողջ առողջ մեր տան մէջ ենք , ու տակաւին հաց մը կ'ուտենք :

— Ճիշդ ի՞նչ պատահած է ,— Սալբի այլեւս համբերելու անկարող , գրեթէ ճշաց .— ինչո՞ւ դադանի կը պահես : Ձայնէդ , խօսելու եղանակէդ յայտնի է , եւ տակաւին դիս կը չարչարես : Պապան տուր ինձի :

— Հիմա , հիմա , հա՛ , եկաւ : Սալբին է :

— Այո՛ , հայրի՞կ , ինչպէ՞ս ես : Ի՞նչ է խնդիրը :

— Ի՞նչ խնդիր ,— Արամ Սարգիսեան հարցական նայեցաւ կնոջ , որ փոփսաց :

— Ես բան մը չըսի :

— Ճիշդ ի՞նչ պատահած է ,— պնդեց Սալբի .— վստահ եմ որ բան մը կայ : Ինչո՞ւ դադանի կը պահէք ինձմէ :

— Գաղանի պահելու հարց չկայ , եւ իրաւունք ալ ունիս գիտնալու :— Եւ փորձելով ձայնին բնական շեշտ մը տալ , հայրը աւելցուց .— վաճառատունը այրեցաւ : Ըլլալիք էր կ'երեւի , անխուսափելի էր , որովհետեւ շրջանը ամբողջ կրակի բերանն էր :

— Եթէ միայն այդ է ,— Սալբի ձայնը հանդարտ եւ ինքնավստահ հնչեց ընկալուչին մէջ ,— կարեւորութիւն չունի : Ըսածիդ պէս անխուսափելի էր թերեւս : Ինչ կարելի է ընել : Լաւ կ'ըլլայ որ օր առաջ հոտիկ հեռանաք այլեւս . հոս եկէք , մինչեւ որ խաղաղութիւնը վերահաստատուի :

— Մուշեղը դէմ է : Որոշած է հոս մնալ . . . տուն ալ եկած չունի արդէն :

— Խենթացե՞ր է , ի՞նչ է ,— աղջիկը չկրցաւ ինքզինք զսպել , ու յիշելով քոյրը , հարցուց յետոյ .— Շաքէն ինչպէ՞ս է , պատիկները :

— Անոնք փրկուեցան դոնէ : Նորայրը Բուէյթի մէջ դործ մը կարգադրեց , անցեալ շաբաթ մեկնեցան արդէն :

— Աւելի լաւ : Ի՞նչ ըսիր , հայրի՛կ :

— Մտածենք , աղջիկս , քանի օր է հանդարտ է քիչ մը : Թէ եւ իմաստ չունի , որովհետեւ ասիկա վերջ չունի , ոչ ալ լուծում :

— Անպայման : Քանի մը օր ետք վերստին կը հեռաձայնեմ . մինչ այդ պէտք եղած կարգադրութիւնները ըրէք : Թէ ոչ ես կու գամ , եւ բոնի կը հանեմ ձեզ հոնկէ :

— Դուն տեղդ ծանր նստէ ,— ժպտեցաւ հայրը բայց յուզուեցաւ :

— Ըսածս չմոռնաս , հայրի՛կ :

— Լաւ , լաւ , կը մտածենք :

— Մտածելու հարց չէ մնացած : Առայժմ ցտեսութիւն : Չմոռնամ , Մուշեղին փորձեցէք խօսք հասկցնել :

Զ.

Երթալ : Բայց ո՞ւր : Եւ ինչո՞ւ :

Վաճառատունը այրեցաւ , ճիշդ է . բայց ի՞նչ կարեւորութիւն

ունէր: Պատրաստուած էր արդէն, համոզուած, որովհետեւ դիտէր, թէ հերթը իրենց պիտի դար ի վերջոյ: Պէյրութի բառիտկայանը ամէն օր հաւատարմաբար կը հաղորդէր, թէ ո՛ր թաղամասը կամ շուկան հրկիզուած էր, ու երբեմն կու տար նոյնիսկ շէնքերուն ա- նունները: Իրենց տան բարձունքէն, որ Քանթարիի գաղաթն էր, կը հետեւէին ամէնօրեայ հրդեհներուն, կը դիտէին երկնակամարը ծած- կող ծուխը, ու ենթադրութիւններ կ'ընէին, փորձելով դուշակել, թէ ո՛ր շէնքը կամ շուկան կ'այրէր: Երկու օր այս շարաթ, լուռ ու զար- մանալի հանդարտութեամբ մը դիտած էր իրենց վաճառատան շէնքէն բարձրացող անվերջանալի ծուխը, եւ չէր խօսած: Այն ատեն իսկ վստահ էր, թէ այդ ծուխին մէկ մասը իր տարիներու աշխատանքն էր, վաստակը, զոր ուրիշներ այնքան հեշտութեամբ մոխրի կը վե- րածէին: Նոյեմբին չէր յայտնած, բայց նաեւ չէր կրցած հեռանալ քաղաքահայեաց պատուհանէն: Փճացողը անպահ էր, իր դրամա- գլուխին շնչին մէկ մասը, ու որքան ալ ցաւ կը պատճառէր ատոր դիտակցութիւնը, ինք աւելի տարուած էր պատահածին ցնորական կախարդանքովը: Դիւթուած էր կարծես, կամ հմայուած, ու կա- տարուածը տեսնելով ու հասկնալով հանդերձ, կը մնար անտար- բեր: Անբժշկանքի կերպով զո՞հ էր նոյնիսկ, որովհետեւ կը զգար, թէ ազատութիւնը կը վերադառնէր, եւ ուրեմն՝ կրնար ի վերջոյ որոշել եւ վահել կեանքին այս էջը:

Ինք չէր որոշած անշուշտ, այլ որոշուած պարտադրուած էր իրեն: Սակայն դարձեալ անիմաստ էր: Ի՞նչ կրնար ընել, ո՛ւր կրնար երթալ, եւ՝ ինչո՞ւ:

Հայ մարդը ո՞ւր կրնար երթալ: Ամէն տեղ, բայց ոչ մէկ տեղ: Ուր ալ երթար, նոյնն էր: Բոլոր անոնք, որոնք կը մեկնէին, պատ- րանքէ մը հալածական միայն՝ կը թափառէին երկրէ երկիր: Բնական է մարդիկ կը մտածէին իրենց եւ իրենց ընտանիքներուն կամ զաւակ- ներուն ապահովութեան մասին, որ հասկնալի էր, եւ անպայմանօ- րէն՝ արդարանալի: Ի վերջոյ անիմաստ կերպով կեանք վտանգելը քաջութիւն կամ հերոսութիւն չէր: Կուսակցութիւնները իրենց օր- կաններուն մէջ միտմիտ եւ օրինապահ խմբադիրներու կամ գրողնե- րու անկարելի թելադրանքներ ընել կու տային, Հայութիւնը առաջ- նորդելու թերեւս անկեղծ հաւատքով, բայց զեկալարները իրենք հեռացած էին արդէն՝ իւրաքանչիւրը համոզիչ պատճառաբանու- թեամբ մը կամ պատրուակով մը: Բայց իրականութեան մէջ բնագ- դական նոյն տրամաբանութենէն մղուած, հեռացած էին Լիբանա- նէն, հող չէ թէ շարունակէին ժողովուրդին ճիշդ հակառակը քարո-

ղել: Մտածումը կամ զաղափարը ճիշդ էր անշուշտ, եւ յամենայն դէպս ճիշդ ալ չըլլար՝ շարեաց փոքրագոյնն էր: Ի վերջոյ ի՞նչ խմաստ ունէր փախուստի դիմելը: Հոս առայժմ Ֆիդիքապէս վտան- գուած էին, այո՛, մինչ ասկէ դուրս ամէն տեղ եւ միշտ վտանգի են- թակայ էին: Եթէ զիրենք ընդունող ըլլար՝ նախ եւ առաջ: Անհա- ներ, անոնք որ միջոցներ ունէին, կը մեկնէին: Բայց լիբանահայու- թիւնը ամբողջ ո՛վ կ'ընդունէր: Ո՛չ իսկ Հայաստանը:

Ամէն մարդ ինքն իր մասին պէտք է մտածէր նախ եւ առաջ: Ժողովուրդին բրածն ալ ճիշդ այս էր. տուներուն մէջ երկրէն օր առաջ հեռանալու մասին կը խօսէին միայն: Բոլոր դրացիներուն խօ- սակցութեան նիւթը, միակ օրակարգը այս էր: Վաթսուն տարի ա- ռաջ այս բոլորը, կամ ասոնց ծնողները, հարկադրաբար լքած էին իրենց տունն ու տեղը, վաճառատունները, գործը, հարստութիւնը — որ ընդհանրապէս պայակնական օճախի մը ապահովութիւնն էր — իսկ այսօր ինքնաբերաբար իրենց ազատ կամքովը, կը լքէին դարձեալ ա՛յս «դրախտաւայրն» ալ, որ հարազատ հայրենիք մը եղած էր ի- րենց համար, եւ ուր վայելած էին ազատութիւն մը, որ հազար տարի զլացուած էր իրենց նախահայրերուն՝ իրենց իսկ երկրին մէջ: Ու խուճապի մատնուած էին դարձեալ, եւ այս անգամ իրենք կը քան- գէին իրենց շինածն ու տքնաջան աշխատանքով հաստատածը:

Արամ Սարգիսեան չէր ուզեր մեկնել թէեւ: Միջոցներ ունէր, դրամ, հարստութիւն, որ իր թոռներուն իսկ ապագան կրնար ա- պահովել: Բայց երթալիք տեղ չունէր: Բազմաթիւ երկիրներ կային անշուշտ, մանաւանդ նիւթական միջոցներ ունեցողներուն համար, ուր կրնար հաստատուել եւ վայելել իր վերջին տարիները: Քառա- սունհինդ տարուան իր արդար վաստակը կրնար փառաւորապէս վա- յելել եւ վրէժ լուծել կեանքէն, որ դառն եղած էր իրեն եւ իր սե- րնդակիցներուն համար: Վայելել: Բայց ինչպէ՞ս: Պարզօրէն ծի- ծաղելի էր: Վաթսունեթ տարեկան ըլլալէն ետք իր միակ վայելքը զաւակներուն երջանկութիւնն էր, անոնց ապագան, ապահովու- թիւնը, հանդիսքը, առողջութիւնը: Եւ այս երկրին մէջ, հոս, ուր հարազատ կը զգային՝ իրարմով, իրենց ազգակիցներով եւ երկրին ընծայած բարեքներով: Մինչդեռ այսօր իսկ իր զաւակներէն երկուքը կորանցուցած էր արդէն: Ուրիշ բառ չէր կրնար գործածել: Օտարու- թիւնը կորուստ էր, իսկ բաժանումը՝ անհարազատութեան սկիզբը, առաջին հանդրուանը: Ու մնացած էր իր խենթ Մուշեղով:

Սալբին առանձնութեան մէջ պէտք ունէր իրենց բնականաբար սկսած էր զգալ, զիտակցել: Եւ իր պարտականութիւնն էր հասնիլ

անոր, օգնել, որպէսզի զո՛ւ չերթար յուսահատութեան փորձութիւններուն: Կրնար երեւակայել, թէ ի՞նչ կ'ապրէր հոն, շրջապատուած ամէն կարգի զաղաններէ — առանձին եւ անփորձ աղջիկ մը՝ օտար քաղաքի մը մէջ: Բայց ինք Յունաստան ի՞նչ գործ ունէր, ի՞նչ կրնար ընել: Մինչեւ խաղաղութիւնը վերահաստատուի, ըսած էր: Ե՞րբ պիտի վերահաստատուէր խաղաղութիւնը: Եթէ յոյս կար, պէտք էր համբերել ուրեմն: Եւ այդ պարագային՝ Յունաստան փոխադրուելու ի՞նչ հարց: Պտոյտի համար թերեւս, քանի մը շարաթ, կամ առաւելագոյն քանի մը ամիս:

— Ժազն է, — սենեակ մտաւ նոյեմի: Ինք դրան զանգը չէր լսած նոյնիսկ:

— Հիմա կու գամ: Սուրճը դիր մինչ այդ:

Բախումները համեմատաբար մեղմացած պէտք է ըլլային, որ ժառ կրցած էր այս կողմ անցնիլ: Գաղափարը յոյս ներշնչեց իրեն, եւ խանդավառուած շտապեց դէպի հիւրասրահ:

— Բարի եկեր ես, Յակո՛բ, — ուրախութիւնը զգալի էր ձայնին մէջ: — Ինչպէ՞ս եկար:

— Բարեկամի մը հետ: Այս կողմ գործ ունէր. կէսօրին պիտի վերադառնանք:

— Ճամբաները ըսել կ'ուզեմ: Ապահով կրցա՞ք անցնիլ:

— Թանգարանի վողմէն եկանք, ներքին փողոցներէ: Երկու օր է հանդարտ է կ'երեւի:

— Լսեցիր անշուշտ, — Սարգիսեան բուն նիւթին անցաւ անմիջապէս:

— Ատոր համար եկայ արդէն:

— Լաւ ըրեր ես: Ես ալ կ'ուզէի քեզ տեսնել:

— Ի՞նչ պիտի ընէք, — Յակոբ Առաքելեան անդրադարձաւ որ հարցումը անտեղի էր:

— Ոչինչ: Ի՞նչ կրնամ ընել: Լսածիս համաձայն շուկան ամբողջ քարուքանդ վիճակի մէջ է: Առաժյմ ոչ մէկ յոյս, եւ կրնայ աւելի գէշ ըլլալ անշուշտ:

— Ինչպէ՞ս պատահած է, լուր ունի՞ք:

— Աստուած գիտէ: Ամէն տեսակ գրոյց կը շրջի... յստակ է որ դիտումնաւոր եղած է, թէ ոչ լման շէնքեր մէկ կամ երկու ուղմբով շէն այրիր: Ռուսներ կրնայ շէնքին վնասել, կրնայ փլել շէնքը, բայց ածուխի վերածել... անկարելի է: Եւ մէկ շէնք չէ, երկու չէ: Մէկուսն մէջ, ըսենք, կրնայ պատահամբ հրդեհ մը սկսիլ, բայց բոլո՞րը: Տրամաբանական չէ:

— Կրակի՞ տուած են այսինքն: Բայց ի՞նչ շահ ունին:

— Ատիկա միայն իրենք, ընողները գիտեն: Ամէն մարդու բերնին մէջ է. շուկաները բոլոր պարպուած են, այսինքն կողոպտուած: Կրակը հետք չի ձգեր. ամէն ինչ կը մաքրէ եւ աւելորդ կասկածի տեղ չի տար:

— Այս մարդիկը իրենց երկրին թշնամինե՞րն են, — ժայրարձրաձայն խորհրդածեց: — Կուր, պատերազմը ասոր համա՞ր է:

— Պատերազմ կոչուածը բացատրութիւն չունի: Այնպէս որ ի՞նչ իմաստ, բացատրութիւն կը փնտռես: Որո՞ւ խելքը կը հասնի: Կը կարծես որ իրենք իրենց ուզածը կամ ըրածը գիտե՞ն:

— Որո՞նք:

— Երկու կողմերն ալ:

— Պաղեստինցիները գէթ նպատակ մը ունին:

— Բայց իրենց ըրածը չեն գիտեր, — ջղայնացաւ Սարգիսեան. — եթէ գիտնային, այս կերպով չէին վարուեր: Վերջաւորութեան, ինչ ալ ըլլայ, գլխաւորաբար իրենք պիտի տուեն: Եթէ Լիբանանն ալ կորսնցնեն, ուրիշ արաբական ո՛չ մէկ երկրի մէջ կրնան այս դիւրութիւններն ու աղատութիւնը ունենալ: Իրենց նպատակը ինչպէ՞ս պիտի հետապնդեն այն ատեն:

— Ճարահատ մարդը ամէն միջոցի կը դիմէ:

— Յեղափոխութեան մը յաջողութիւնը կամ ձախողութիւնը ճիշդ ասկէ կախեալ է: Միտքն է որ պէտք է իշխէ, եւ ոչ թէ զգացումը, այս պարագային՝ յուսահատութիւնը: Համբերելով, տրամաբանելով եւ յարատեւելով կը շահին բոլոր յաղթանակները:

— Յեղափոխականները տրամաբանող մարդիկ չեն եղած սովորաբար: Շատ քաջ, յանդուգն, երբեմն նոյնիսկ խելացի, բայց նաեւ խենթ:

— Ճիշդ այս սխալ կարծիքն է որ պէտք է սրբազրուի: Ժողովուրդ մը կրնայ հերոսացնել իր յեղափոխականները, ամէն տեսակ բոմանտիկ եւ երեւակայական արժանիքներով օժտել զանոնք, սակայն իսկական յեղափոխականը նախ միտքի մարդ է, մտաւորական է, եթէ կ'ուզես: Կը մտածէ եւ յետոյ կը դործէ: Կամ աւելի ճիշդը՝ կը գործէ, որովհետեւ կը մտածէ: Այն որ չի մտածեր, չի կրնար ընդլղիլ, ըմբոստանալ, յեղափոխական դառնալ: Այլապէս կ'ըլլայ հասարակ արկածախնդիր կամ պարզ ոճրագործ մը, որմէ պէտք է զգուշանալ: Ամէն գէնք դործածող զինուոր չէ, ինչպէս ամէն զինեալ յեղափոխական չէ:

— Մեր պարագային այնքան շատ կը մտածենք, որ գործելու

ժամանակ չենք ունենար, — ժազ առանց անդրադառնալու խօսեցաւ, եւ ինք եւս զարմացաւ :

— Համաձայն չեմ : Մերինները մտածելու ժամանակ չունին . այնքան անկարեւոր գործերով զբաղած են, որ մտածելու առիթ չունին : Իսկ մանրութեանը կը զբաղին միայն անոնք, որոնք հանգիստ են, կուշտ եւ ապահով :

— Կը նշանակէ, թէ մենք ընդվզելու պատճառներ չունինք, քանի այնքան հանգիստ ենք :

— Ժողովուրդին պէտք է հարցնել ատիկա : Ի՞նչ հանգստութիւն է . . . շուարած, անաէք մարդիկ : Այս պայմաններուն մէջ, օրինակի համար, ո՛չ գիրենք առաջնորդող կայ, ոչ ուղղութիւն տուող, եւ ամէն մարդ զլուրը պահելու, պատասպարելու տեղ մը կը փնտռէ ու չի գտներ : Մարդիկ իրենց տունն ու տեղը, ընտանիքը, զաւակները սրաչապանելու հարկադրանքին տակ են, որովհետեւ երկրին մէջ անիշխանութիւն կը տիրէ, եւ այդ պաշտպանութիւնը չկայ : Եթէ կրնաս գլխուդ ճարին նայէ : Տէր կանգնող չկայ, խորհուրդ տուող չկայ, ո՛չ պատասխանատու մարմին մը, ոչ ալ կազմակերպուած աշխատանք, որպէսզի գիտնանք, թէ որո՞ւ պիտի դիմենք անհրաժեշտութեան պարագային : Եթէ հիմա, այս վայրկեանին հոս մտնեն եւ մեզ խոշտանգեն, կողոպտեն՝ ո՛չ վրնանք մենք մեզ պաշտպանել, եւ ոչ ալ կրնանք տեղ մը դիմել որ օգնութեան հասնին մեզի : Հանգիստ : Ո՞վ հանգիստ է : Նոյնիսկ ուղենք տեղ մը երթալ, հեռանալ՝ երթալիք տեղ չկայ : Ո՛ւր կրնաս երթալ :

— Մեկնողներ կան, — ըսաւ ժազ եւ յանցաւոր զգաց, որովհետեւ ինք եւս որոշած էր Ամերիկա հաստատուիլ :

— Փախուստ տուողներ կան, ճի՛շդ է : Անոնք որ միջոցներ ունին կամ ձեռով մը կը յաջողին երկրէն դուրս ելլել, իրենք զիրենք տեղ մը կը նետեն : Բայց լուծո՞ւմ է : Յետո՞յ : Ո՛ւր պիտի հաստատուին, ո՞վ կ'ընդունի զիրենք : Ստիպուած Լիբանան պիտի վերադառնան, ու հոս ալ ապահովութիւն չկայ, եւ վերջաւորութեան նոյն շուարած վիճակին մէջ պիտի գտնեն իրենք զիրենք : Ուրե՞մն : Հարցը հիմնական, արմատական լուծումի մը կը կարօտի :

Արամ Սարգիսեան թէեւ լոնց, սակայն բացայայտ էր որ կ'ուզէր շարունակել ու բանաձեւել միտքը, որ իրմէ խոյս կու տար ըստ երեւոյթին : Եւ կամ երկրնորանքի մատնուած էր : Եւ երբ երկար տեւեց լուծութիւնը, երիտասարդը հարցուց :

— Լուծումը ի՞նչ է, կը խորհիք, եթէ անշուշտ լուծում մը ունիք : Ձեր անձնական տեսակէտը, ըսել կ'ուզեմ, ի՞նչ է :

— Երկիր պէտք է ունենաս :

— Երկիր ունինք, բայց ի՞նչ օգուտ : Ո՞վ Հայաստան կ'երթայ, եթէ նոյնիսկ տանող ըլլայ :

— Պորհրդային Հայաստանի մասին չէ խօսքս :

— Օ՛ր, հետաքրքրական է . զարմանալիօրէն շատ մարդիկ սկսած են նոյն կերպով մտածել :

— Բնաւ զարմանալի չէ : Ճարահատ մարդոց մասին խօսեցար քիչ առաջ . մենք այսօր նոյնքան մը ճարահատ ենք, եւ բնականաբար տեղի մը պէտք է կառչինք : Մեր պարագային, կամայ թէ ակամայ, մեր մտածումները մեզ նոյն տեղը կ'առաջնորդեն : Եւ զարմանալի չէ, որովհետեւ միակ տրամաբանական, անխուսափելի պատասխանն է : Հայրը ուրիշ ի՞նչ լուծում ունի :

— Բայց կարելի՞ է, կը հաւատա՞ք, — ժազ ինքնիրեն ուղղեց հարցումը առաւելաբար . — յոյս ունի՞ք :

— Յոյս միշտ ունեցած եմ : Իսկ թէ կարեւոր է կամ ոչ . . . ինծի համար անկարելի բան չկայ : Կեանքի մէջ ամէն ինչ կարելի է : Միայն այն, որ կը փորձէ, կրնայ յաջողելու հաւանականութիւն ունենալ : Եթէ չփորձէ, կարելիութեան հարց չի կրնար ըլլալ անշուշտ : Ըսել կ'ուզեմ, թէ կարելիութիւնը դուռն կը ստեղծես միշտ :

— Կ'ուզեմ հաւատալ, բայց դժբախտաբար թերահաւատ դարձած եմ : Յաւով կը խոստովանիմ ասկիա, բայց իրականութիւն է : Հայութենէն յուսախար եմ . վստահութիւն չունիմ, ու չեմ խորհրդ որ հայ ժողովուրդը պէտք եղած դիտակցութիւնն ու ջիղը ունի այդ տեսակ զորք մը դրուի հանելու : Տեսած ենք, գիտենք : Մենք խօսելու մէջ վարպետ ենք միայն : Բեմերէն լաւ ճառ կը խօսինք, այդքան :

— Մասամբ իրաւունք ունիս, — ըսաւ երէցը . — այնքան միամիտ չեմ անշուշտ, եւ մեր ժողովուրդը ճանչնալու առիթ ունեցած եմ : Ըսածդ ճի՛շդ է, դժբախտաբար : Բայց ատիկա մեզի իրաւունք չի տար հարցը փակելով վճիռ արձակելու : Նախ դուռն քեզի հարց պիտի տաս, թէ դո՛ւն ինչ կրնաս ընել, ի՞նչ կ'ընես, եւ ատիկէ ետք միայն պիտի դատես : Մեր գլխաւոր թերութիւնը այսօր, եթէ անկեղծ կարծիքս կ'ուզես, այս է . միշտ կ'ակնկալինք որ ուրիշը նախաձեռնէ, ծրարէ, գործադրէ : Կարծես ուրիշներուն պատասխանատուութիւնը ըլլար միայն, եւ մեզի վերաբերող հարց մը չըլլար երբեք : Իսկ այդ ուրիշներն ալ ճի՛շդ մեզի պէս կը մտածեն, եւ իրենց կարգին ուրիշներէ կ'ակնկալեն : Ի վերջոյ իրենք ալ հայ են : Եւ այսպէս՝ ամենէն դիտակիցէն մինչեւ ամենայետին հայր : Բայց բան մը փոխուելու սկսած է ըստ երեւոյթին : Այսօրուան երիտասարդները

աւելի գործնական են, աւելի իրապաշտ, եւ պատասխանատուութիւնը իրենց վրայ առած են, փոխանակ ուրիշներէն ակնկալելու: Անցեալ շարժումն Վիեննայի եւ Բարիդի թուրք դեսպաններուն ահաբեկումը ուղղակի ցնցեց զիս, արթնացուց: Անդրադարձայ որ նոր սերունդ մը հասած է եւ Հայութիւնը սկսած է փոխուիլ թերեւս: Կրնա՞ս երեւակայել, ես նոյնիսկ, իմ տարիքիս, խանդավառուեցայ, եւ նոր շունչ եկաւ վրաս: Վաթուռն տորի ետք ի վերջոյ արժանապատուութիւնը վերադառնել զիտե՞ս, թէ ինչ կը նշանակէ: Զգացածս այս էր, ոչ աւելի, ոչ պակաս: Յանկարծ անդրադարձայ որ մենք ալ մարդ ենք, եւ եթէ կամքը ունենանք, կրնանք բան մը ընել, փոխել եւ մարդոց կարգին դասուիլ վերստին: Քեզի համար թերեւս զժուար ըլլայ ըմբռնել զգացածս, որովհետեւ մեր ապրածը չէք ապրած դուք, անապատներէն չէք անցած, վիղերնիդ ծուռ չէ եղած իրականութեան մէջ: Մինչդեռ մենք... յամենայն դէպս այսօր աւելի շունչ կայ վրաս, հակառակ մեր ներկայ պայմաններուն եւ Լիբանանի այս վիճակին:

— Կը խորհ՞րք որ նման արարքներէն բան մը դուրս կու գայ:

— Ատոր պատասխանը երիտասարդութիւնը պիտի տայ: Կրնայ այս ձեւը սխալ ըլլալ, ատիկա կարեւոր չէ. կարելի է ճիշդ ձեւը գտնել ի վերջոյ: Զիս հետաքրքրողը այն է որ բան մը փոխուած է եւ նոր գիտակցութիւն մը կայ: Ի՞նչ որ է, ինչպէ՞ս այս նիւթին մէջ մտանք: Ես ալ շուարած եմ եւ չեմ գիտեր, թէ ինչ պիտի ընեմ: Մինչ այդ պէտք է ապրիլ սակայն. որոշ գումար մը պատրաստած եմ արդէն, եւ եթէ յանձն կ'առնես, Շուշանիկին ամսականներն ալ քեզի կու տամ, որ իրեն փոխանցես: Կ'ըլլա՞յ:

— Ինչպէ՞ս որ կ'ուզէք:

— Միւսներունը կարգադրած եմ արդէն: Առայժմ ստիպուած ենք սպասել, մինչեւ որ կացութիւնը յստականայ:

— Ինչ կը վերաբերի ինձի, — ժազ որոշեց միտքը պարզել, — զիս կրնաք հրաժարած նկատել:

— Մանկական խօսքերու պէտք չկայ: Առայժմ ես այսպէս յարմար կը նկատեմ, եւ այսպէս ալ կ'ըլլայ: Եթէ գործը ամբողջովին քանդուի, այն ատեն կը մտածենք, եւ իւրաքանչիւրը իր իրաւունքը կը ստանայ:

— Ինչպէ՞ս է, — պաշտօնեան ժպիտը չկրցաւ զսպել, — կը հասկնամ: Իմ պարագայիս... ես որոշած եմ Ամերիկա մեկնիլ:

— Երբ ժամանակը գայ, կը խօսինք: — Պր. Սարգիսեան խօսելէն ետք միայն զարմանքը արտայայտեց: — Այս ի՞նչ նորութիւն է: Համբերէ՛՛ նայինք. ասիկա վերջ մը ունի անշուշտ:

— Որոշումս Լիբանանի գէպքերուն հետ կապ չունի երբեք: Ժամանակին զիմած էի արդէն, խնդիրներէն առաջ, թէեւ որոշ ծրարի մը շունչէի: Փորձ մըն էր, եւ պատասխանը դրական դուրս եկաւ: Անկեղծօրէն չէի յուսար որ ընթացք կու տան, եւ մանաւանդ՝ ոչ այսքան արագ:

— Ամերիկա ի՞նչ պիտի ընես:

— Չեմ գիտեր:

— Հոս հազիւ հաստատուեցար, տուն-տեղ եղար: Դուն քեզի առիթ, ժամանակ տուր: Հոս հանգիստ ես, ապահով, եւ աւելի լաւ կ'ըլլաս, եթէ քիչ մը համբերես: Ամերիկա ի՞նչ գործ ունիս: Մարդ կեանքը քառասուն անգամ չի կրնար սկսիլ, եւ այդ ալ ամէն ինչ իր ձեռքով քանդելէ ետք: Ամերիկայի ի՞նչն է որ կը քաշէ ձեզ՝ չեմ գիտեր:

— Ամերիկան դեր չունի ասոր մէջ: Ես ալ չեմ գիտեր. խառնուածքի հարց է կ'երեւի:

— Յակո՛ր, պատանի կամ նախկին երիտասարդը չես այլեւս: Ամուսնացած ես, զաւակներ ունիս, պատասխանատուութիւններ, ապագայ: Այս տարիքիդ պէտք է կարենաս որոշել այլեւս եւ տեղ մը տիտիկ ընել:

— Գիտեմ: Յաճախ մտածած եմ այս մասին, ու երբեմն ինքզինքս համոզած եմ նոյնիսկ. բայց երկար չի տեւեր: Երանի այդ մարդը ըլլայի, եւ կեանքը այդքան պարզ ըլլար ինձի համար:

— Կեանքդ դուն է որ կը բարդացնես:

— Տարակոյս չունիմ այդ մասին, — ժազի խոստովանութիւնը ինքնիրեն ուղղուած գանդատ էր: — Բայց ուզելով չեմ ըներ, ու կը փորձեմ միշտ արամբանել, դատողութիւնս դործածել. սակայն չեմ կրնար: Յանցաւորը ես չեմ. ներքին, թերեւս հոգեբանական բան մը կայ. մնայուն զժգոհութիւն մը, ատոր վստահ եմ: Ինչո՞ւ: Ես ալ չեմ գիտեր: Յուսամ օր մը...:

— Դեռ նոյն տղան ես, — ընդմիջեց Արամ Սարգիսեան, ներողամտաբար ժպտելով: — Այսքան տարի ետք, իսկապէս զարմանալի է: Կը ներես, բայց բնական չէ: Թէեւ երբեմն կը նախանձիմ քեզի: Երիտասարդութիւն. քու տարիքդ ունենայի, թերեւս ես ալ պիտի ուզէի նոյնը ընել, չես գիտեր: Թէեւ մեր երիտասարդութիւնը տարբեր էր. ժամանակը, պայմանները, մեր կեանքը, ամէն ինչ: Ասկէ երեսուն տարի առաջ պատերազմը նոր վերջացած էր տակաւին, եւ աշխարհը ի՞նչ վիճակի մէջ էր: Միայն երեսուն տարի, եւ ինչե՛ր փոխուած են. անհաւատալի է... պատմութեան ամբողջ ընթացքին

այսքան կարճ ժամանակամիջոցի մէջ այսպիսի բան չէ պատահած : Եւ այն ասեմ ճիշդ քու տարիքդ ուէնի, կրնաս երեւակայել : Բայց բոլորովին տարբեր, զըռչել եւ պահպանողական մարդիկ էինք :

— Ես այնքան ալ երիտասարդ չեմ : Ներկայ երիտասարդութիւնը Մուշեղի սերունդն է . եւ ասոնք իսկապէս տարբեր, անկախ են, ըմբոստ : Ես ալ զիրենք չեմ հասկնար, այնպէս որ . . . :

— Ձեմ զարմանար : Անոնք իրենք զիրենք նոյնիսկ չեն հասկընար : Լաւ որ յիշեցիր . Մուշեղը ձեր տունը հանդիպած ունի՞ :

— Երբեմն, շարաթը անգամ մը, երկու :

— Մասամբ դո՞ւ եմ որ տունը չէ այս շրջանին : Ձինք զսպելը անկարելի պիտի ըլլար : Միւս կողմը աւելի ապահով է դէթ, թէեւ մայրը կը մտահոգուի եւ ինծի հանդիսա չի տար : Երանի կարենայի զինք երկրէն հեռացնել շրջան մը : Այսօր Սալըին հեռաձայնեց եւ երբ վաճառատան մասին ըսի իրեն, պնդեց որ քովը երթանք . ինքն ալ ատանձին կը զգայ հաւանարար :

— Գաղտնար մըն է, եւ թերեւս յարմարագոյնը ձեզի համար : Հոս շատ ալ ապահով չէք կարծեմ : Եթէ կ'ուզէք ես Մուշեղին կը խօսիմ :

— Ծնորհակալ կ'ըլլամ : Քեզմէ խորհուրդ կ'ընդունի, վստահ եմ :

**

Մարդը փոխանակ ընկճուելու, աւելի գո՞հ է կարծես, ժապ Առաքելեան մտածեց, երբ դուրս կ'ելլէր Մարդիտեաններու շէնքէն : Կրնա՞ր այսքան անտարբեր ըլլալ : Սակայն անտարբեր չէր, այլ ընդհակառակն՝ որոշապէս գո՞հ եւ հանգստացած : Քաջութիւնն էր, թէ իրապաշտութիւն . եւ կամ թերեւս՝ խելագարութիւն : Մարդը թոյուցած էր արդեօք, ժպտեցաւ ակամայ, եւ քալեց կեղբոնական դրամատան ուղղութեամբ : Համրա պոզոտայի վրայ, ժամագործ Յարութին մօտ ժամադրուած էր բարեկամին հետ, եւ ժամանակ ունէր տակաւին : Կը նախընտրէր քալել, յամենայն դէպս, շրջանի կացութեան մասին գաղտնար մը կազմելու համար : Երկու շարաթ տունը փակուած մնալէ ետք, մարմինն ալ կը թարմանար դէթ, ու կը վերագտնէր ինքզինք :

Փողոցները կէսօրուան այս ժամուն իսկ ամայի էին, ու վախի մթնոլորտը զգալի էր ամէնուրեք : Պատահական անցորդներ կասկածանքով կը նայէին իրարու, մանաւանդ իրեն, որ ըստ երեւոյթի անձանօթ մըն էր իրենց համար այս շրջանին մէջ : Կամ արդեօ՞ք ինք

այդ տպաւորութիւնը կը կրէր : Հաւանական էր : Ականահարուած վաճառատան մը քովէն անցաւ, ու թէեւ սոսկում զգաց, սակայն փորձեց անտարբեր երեւիլ : Տեսարանը տխուր էր : Այս, տխուր : Թէ իր տիրութիւնն էր արդեօք : Բայց վաճառատունը ի՞նք տխուր էր, լքուած, ատանձին՝ ջախջախուած ապակեփեղկերով ու բաց դռներով : Հայաստանէն ասո՞ր համար դուրս եկար, հարցուց ինքնիրեն, եւ անդիտակցարար արագացուց քայլերը : Ի՞նչ կ'ընես հոս, մտածումը հետապնդեց զինք, ու որքան աճապարեց, այնքան աւելի կրկնուեցաւ հարցումը : Եւ ուղեց վայրկեան առաջ տուն հասնիլ : Բայց իր սեպհական տան մէջ ալ նոյն զգացումը, անդրադարձը կ'ունենար յաճախ, վերջին օրերուն : Ի՞նչ կ'ընէր հոս, այս երկրին մէջ :

Ինչո՞ւ եկած էր հոս, եւ ինչո՞ւ Ամերիկա կ'երթար : Մարդը իրաւունք չունէ՞ր : Ամերիկա ի՞նչ գործ ունէր : Բայց հոս եւս, հոս ի՞նչ գործ ունէր : Իր ծննդավայրն էր, ճիշդ է, ու սիրած էր այս երկիրը եւ ինքզինք հարազատ զգացած : Որպէս լիբանանցի՝ ստորագաս կամ դերազաս ըլլալու հարց չէր ունեցած, եւ այս փողոցներուն մէջ քալած էր բացարձակ ինքնավստահութեամբ : Այսօր ապահով չէր զգար սակայն, եւ առաջին անգամ ըլլալով թերեւս կ'անդրադառնար, թէ որպէս հայ՝ տեղացի չէր նկատուեր : Մարդուն պատմածները հաճելի չէին . խոնարհ եւ անպաշտպան հայ ընտանիքներու ատենը կողոպտուած էին, ընտանիքներու անդամները խոչտանդուած, եւ թշնամական, անարգական վերաբերմունք ցուցարեւուած էր անոնց հանդէպ : Որ իրեն համար անըմբռնելի էր : Միւս բոլոր լիբանանցիներուն նման առաջին օրէն, հաւասար իրաւունքներ վայելած էր, եւ առիթ չէր ունեցած իսկ տարբեր կամ դրսեցի, օտար զգալու : Մինչդեռ այսօր հայը անբաղձալի դրսեցի մը, օտար եւ թշնամի կը նկատուէր : Ինչո՞ւ : Ի՞նչ պատահած էր յանկարծ : Լիբանանի հայը ոչ մէկ կերպով դեր ունէր այս ամբողջ խելագարութեան մէջ : Ո՛չ ուղղակի եւ ոչ ալ անուղղակի կերպով : Ինչո՞ւ ուրեմն այս վերաբերմունքը : Կը նշանակէր, թէ անոր նկատմամբ մասնաւոր վերապահութիւն մը կար, միշտ եղած էր, թէեւ քողարկուած կերպով : Եւ այսօր առաջին առիթով խել, ի յայտ կու գար, ու պատրանաթափ կ'ընէր զինք :

Ժապ զգաց որ դժգոհ էր այս եզրակացութեան յանգած ըլլալուն համար, եւ փորձեց վանել իրմէ այս մտածումները : Այլապէս պիտի յուսահատէր դարձեալ եւ քանզի մասամբ բարեփոխուած արամազրութիւնը : Կեղբոնական Դրամատունէն անդին Համրայի մուտքին, որոշ կենդանութիւն մը զգալի էր, եւ կարծես մարդիկ ա-

ւելի ազատ կը շնչէին հոս: Ինք եւս շունչ մը քաշեց եւ դանդաղեցուց քայլերը: Ինչո՞ւ յուսահատէր: Ի վերջոյ ժամանակաւոր կացութիւն մըն էր ասիկա, եւ անպայմանօրէն լուծում մը պիտի ունենար՝ ուշ կամ կանուխ: Եւ ինք տազնապելու պատճառ շունչէր, քանի մօտ ասպազային պիտի մեկնէր արդէն: Ինչպէ՞ս կրնար այսքան անձնատէր ըլլալ սակայն. իր մեկնելով հարցը կը լուծուէ՞ր, իրականութիւն ըլլալէ կը դադարէ՞ր: Իսկ միւսնե՞րը, հարազատներն ու ազգականները, բարեկամները, եւ վերջապէս միւս բոլոր լիբանանցիները, որոնք մեկնելու միջոց կամ առիթ չունէին: Ինք բախտաւոր եղած էր, ու քանի մը ամիս ետք այս դժոխքէն փրկուած կ'ըլլար: Բայց միւսնե՞րը: Նախախնամութեան պէտք է վերադրէր իր բախտաւորութիւնը, թէ պարզ ճակատագրի: Նախախնամութիւնը ինչ սահմանած էր իրեն, հեղինական ժպիտ մը ուրուադուեցաւ դէմքին վրայ: Ի՞նչ նախախնամութիւն: Ինք ո՞վ էր, ինչ կը ներկայացնէր, որ ինքնիրեն այսքան կարեւորութիւն կու տար, եւ նախախնամութեան միջամտութիւնը կ'ուզէր տեսնել այս բոլորին մէջ: Պարզօրէն բախտաւոր էր, այդքան: Ինչպէս անցեալին, երբ որոշած էր Հայաստան ներգաղթել, եւ յետոյ Հայաստանէն դուրս գալու ատեն նոյնպէս: Իսկ ներկայիս, նոյն բախտի անիւն էր: Կրնա՞ր երբեւիցէ միտքէն անցընել, թէ այսքան հեշտութեամբ պիտի կարենար Ամերիկա փոխադրուել: Գաղտնիքը ի՞նչ էր:

Ընթացք տուած չըլլային, Միացեալ Նահանգներ գաղթելու հարց չէր ունենար, եւ միւս բոլորին նման ինքն ալ հաշտուած կ'ըլլար այս դժոխքին մէջ ապրելու գաղափարին հետ: Ի վերջոյ ժամանակաւոր դժոխք մըն էր, եւ ինչպէս ամէն լիբանանցի, ինք եւս կրնար դիմանալ, եթէ ողջ մնար անշուշտ: Իսկ եթէ պատահական կամ վրիպած գնդակի մը կեր դառնար, այդ ալ... բոլոր հարցերը կը լուծուէին: Բայց իրաւունք չունէր. գաւակներու եւ պատասխանատուութիւններու տէր էր: Իսկ եթէ կնկան կամ գաւակներուն փորձանք մը պատահէր: Սարսափելի էր: Կեանքը ամբողջ իրական դժոխքի մը կը վերածուէր այն ատեն: Պիտի նախընտրէր ինք մեռնիլ, քան այդ օրը տեսնել: Չափազանցելու պէտք չունիս, սաստեց ինքզինք, ու հետաքրքրութեամբ դիտեց շուրջը: Հոս, բուն Համրայի վրայ, ամէն ինչ բնական էր, ու վաճառատուները բաց էին սովորականին պէս: Որոշ խանութներու մէջ խճողում կար նոյնիսկ: Եւ դեռ ինք կը մտածէր վրիպած գնդակներու, փորձանքներու, մահուան եւ երեւակայական ողբերգութեան մը մասին: Պարզօրէն կ'երեւակայէր, ինքզինք արդարացնելու համար հաւանաբար: Այս ամբողջը

պատճառարանութիւն էր, ինքզինք խաբելու, համոզելու ճիշդ. արդէն որոշած էր եւ գիտէր, թէ պիտի դորձադրէր որոշածը: Եթէ Հայաստանէն արտագաղթելու արտօնութիւն տրուած չըլլար իրենց, այսօր հոս չէին ըլլար եւ այս պայմաններուն մէջ չէին գտնուեր: Միացեալ Նահանգներ գաղթելու հարց չէր ունենար, եւ ոչ ալ որոշելու խնդիր, տառապանք: Ուրիշներու կողմէ նմանօրինակ որոշում մը անելու ինչ իրաւունք ունէր: Ուրիշները իր կինն ու գաւակներն էին, այո՛, բայց առանձին եւ անկախ անհատներ էին ի վերջոյ: Նոյնիսկ Հայաստանէն ելած ատեն, ինքն էր որոշողը եւ գաւակներուն ապագան հիմնականօրէն փոփոխութեան ենթարկողը: Ինչ իրաւունք ունէր: Թող գերմանացի հօր գաւակ Արմէնը կամ Արմինը հայ մեծնար եւ հայ մնար: Անդամուան մը համար գէթ հայը օտար մը հայացուցած կ'ըլլար: Թերեւս պատմութեան ընթացքը կը փոխուէր, եւ հետաքրքրական նորութիւն մը կը մտնէր մեր կեանքէն ներս:

Սակայն պատմութիւնը վերջին հազար տարուան ընթացքին փոխուելու տրամադրութիւն ցոյց չէր տուած, ու Հայութիւնն ալ, չէր կրցած փոխել զայն: Հայերը այլ ժողովուրդներու փորձառութենէն եւ օգտապաշտութենէն անհրաժեշտ դասեր չէին կրցած քաղել, եւ կարծես վճռած էին մնալ աշխարհի իսկապէս քրիստոնեայ միակ ժողովուրդը: Իսկ շատ ալ հաւանական չէր որ հրաշք մը հազար տարի ետք յանկարծ յեղաշրջէր այս ժողովուրդը կամ անոր պատմութիւնը: Ի՞նչ պէտք էր ընել ուրեմն:

Ո՞վ նիւթած էր այս դաւը: Հայաստանէն՝ Լիբանան, ու հոսկէ ալ՝ Միացեալ Նահանգներ, ու յետո՞յ: Դէպի ո՞ւր: Հոնկէ ո՞ւր կրնար երթալ: Այս իր ողբերգութիւնը չէր միայն, այլ ամբողջ Հայութեան, որ իր երկրէն արտաքսուած էր ու յանձնուած այլ երկիրներու հողմերուն, որպէսզի փճանար, եւ անհետանար ժամանակի ընթացքին: Նոյն պատմութիւնն էր, որ կը կրկնուէր կամ կը շարունակուէր: Անցեալին՝ դանդուածային կերպով, իսկ ներկայիս՝ մաս առ մաս, հատուած առ հատուած, անհատ առ անհատ: Ու կ'երթային, վերագտնալու համար օր մը՝ հոս կամ այլուր, բայց ոչ մէկ մնայուն հասցէի:

Ժապ Առաքելեան այս գիտանլով հանդերձ, որոշած էր մեկնել:

Ե.

Նոյեմբերեան տեղատարափ անձրեւը լուացած ու մասամբ մաքրած էր փողոցները, որ ամիսներու ընթացքին ազրանոցներու

վերածուած էին: Բայց անձրեւը կը տեղար տակաւին, ու որոտում-
ները կը շարունակուէին, թաղեցիները շփոթի մատնելով: Յաճախ
դժուար կ'ըլլար որոտումի եւ պայթող սոււրբերու ձայնը զանազանել,
մանաւանդ երբ ձայնակցէին երկուքը, կատաղութեան զագաթնակչ-
տին հասած: Բնութիւնը աւելի կատաղած էր, մտածեց Գեղամ Տա-
րօնեան թէ մարդիկ: Եթէ կատաղութիւն չէր, բնութիւնը զայրացած
էր յամենայն դէպս, եւ իր ցասումը կը պոտար մարդկութեան: Այս-
քան մահ եւ ոճիր բնութեան համար եւս հանդուրժելի չէին ըստ
երեւոյթին: Այս նոյն թաղամասին մէջ ասկէ քանի մը օր առաջ, վաղ
արշալոյսին, Հիլտայի խոշտանդուած մարմինը գտնուած էր, ու
թաղեցիները չէին համարձակած անոր մօտենալ նոյնիսկ: Հիլտայի
բնակարանէն քանի մը քայլ անդին, նոյն փողոցին մէջ գտնուած էր
դիակը, զոր ոչ ոք ուզած էր վերցնել, ոչ իսկ շրջանի մէջ վխտացող
զինեակները, որոնք իրենց իշխանութիւնը հաստատած էին արդէն
այս թաղամասերուն մէջ: Յաջորդ առաւօտուն, թէեւ, անհետացած
էր դիակը, ու հետաքրքիր մարդիկ, որոնք քաջութիւնը ունեցած էին
հոնկէ անցնելու, այդ գեղանի կնկան սարսափազու մարմինը անգամ
մը եւս տեսնելու ակնկալութեամբ, յուսախար եղած էին: Բայց նաեւ
բաւարարուած — զարմանալի — հաստատած էին, թէ դիակը վեր-
ցրնելու փափկանկատութիւնը ունեցած էին կարգ մը մարդիկ:

Գեղամին պահած էր այդ քաջութիւնը, որովհետեւ նախորդ
օրը, երբ լսած էր փողոցին մէջ լքուած երիտասարդ կնկայ մը դիա-
կին մասին, ուրիշ մարդոց նման ինք եւս շտապած էր դէպի յիշեալ
վայրը, հետաքրքրութեան զոհացում տալու համար առաւելարար:
Շատ անգամ է մարդ արարածը, մեղադրած էր ինքզինք այն ատեն.
զգուելի ոճիր մը նոյնիսկ, իրեն սոսկում պատճառելով հանդերձ, իր
մէջ անգոստիկ հետաքրքրութիւն կը ստեղծէր, եւ ամէն կարգի պատ-
շաճութիւն եւ նկատում անտեսելով, կարելի բոլոր միջոցներուն կը
դիմէր՝ հետաքրքրութիւնը գոհացնելու համար: Յետոյ զղջացած էր
անշուշտ, եւ օրերէ ի վեր ահաւասիկ, չէր կրնար պատկերը ջնջել
միտքէն: Հիլտայի կանաչ, բարի աչքերը կը նայէին իրեն, երբ հա-
սած էր հոն, իսկ ինք ոչ մէկ կերպով կրցած էր օգտակար ըլլալ
անոր: Աւելի մօտեցած էր միայն, դիակին, զարմացնելով շուրջին-
ները, ու փորձած էր անոր կոպերը փակել աչքերուն վրայ, բայց
մարմինը ժամեր առաջ սառած էր արդէն: Ապա կարելի եղած չափով
ծածկած էր անոր կիսամերկ մարմինը, ու շուարած հեռացած էր
յետոյ, զբեթէ ուշակորոյս վիճակի մէջ:

Օրեր անցած էին, եւ տակաւին նոյն վիճակին մէջ էր: Կա-

նոնաւորարար դործի գացած էր ամէն օր ու կեդրոնացեալ կերպով
աշխատած էր, անտարբեր մնալով խմբապատան մէջ պատահած
անցուղարձերուն — զուարճախօսութեան, կատակներուն, զանազան
ճակատներէ հանող լուրերուն — բայց Հիլտայի աչքերը չէր կրցած,
չէր կրնար մոռնալ: Գիշերը նոյն էր, ու երբ կարենար քնանալ
նոյնիսկ այդ բարի, ներողամիտ աչքերը իր հետ էին միշտ: Բա-
խումներն ու սպանութիւնը կը շարունակուէին մինչ այդ, եւ ինք
դո՛ւ էր սր կրնար աշխատիլ դէթ: Ոմբադրատունը, բարեբախտա-
բար, մօտ էր իրենց տան, ու յաճախ քալելով կը բարձրանար մինչեւ
Համբա՝ ապաւինելով իր մամլոյ անցապիթին: Բոլոր թերթերու խմբ-
ագիրներուն եւ թղթակիցներուն տուած էին այս անցապիթին, ա-
նոնց չըջագայութիւնն ու ապահովութիւնը երաշխաւորելու մտահո-
ղութեամբ:

Ժամը հինգը անցած էր եւ ինք անձրեւին դադարուն կը սպա-
սէր տակաւին: Այս ընթացքով ոչ անձրեւը պիտի դադրէր եւ ոչ ալ
ինք խմբապատուն պիտի հասնէր, անդադարձաւ Գեղամ ու դժգո-
հութեամբ քալեց հիւրասենեակին մէջ:

— Ի՞նչ կեցեր ես տակաւին, — խօսեցաւ մայրը, որ սովորա-
կանին պէս գիշերանոցով էր: — Մթնցաւ արդէն, եւ այս ժամէն
ետք... շուները նոյնիսկ դուրս ելլելու կը վախնան:

— Հիմա: Սախալուած օթոյսով պիտի երթամ կարծեմ:

— Օր մը փորձանք պիտի բերես գլխուդ: Թերթին ալ, դործին
ալ... կեանքդ ամբողջ, գիշեր ցերեկ, փողոցները պիտի անցրնես:

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ, — ջղախնայաւ որդին. — գոնէ ես
կրնամ աշխատիլ դեռ: Ուրիշներ ոչ դործ ունին, ունեցողներն ալ
դործի չեն կրնար երթալ: Փառք պէտք է տանք: Ուրիշներու հետ
բաղդատած բախտաւոր ենք:

Պօսեցաւ եւ ուղղուեցաւ դէպի դուռ, որոշած ըլլալով ինքնա-
շարժով աշխատանքի երթալ: Կէս գիշերէն ետք առանձին ինքնաշար-
ժով տուն վերադառնալը վտանգաւոր էր, դիտէր, սակայն ասկէ
աւելի չէր կրնար սպասել: Իրենց թաղամասին մէջ զինեակները կը
ճանչնային զինք արդէն, ու մասնաւոր կերպով մտահոգուելու
պատճառ չունէր. բայց մինչեւ խմբապատուն կրնար քանի մը շրջ-
ուն զինեալ խումբերու հանդիպիլ, եւ ասոնք աւելի վտանգաւոր էին
անշուշտ: Յեղափոխութիւն էր, քաղաքացիական պատերա՞զմ, թէ
աւազակախումբերու թագաւորութիւն: Յեղափոխութեան եւ հայրե-
նիքի անունով ի՞նչ ոճիրներ կը գործուէին: Եթէ յեղափոխութիւնը
այս էր, մարդոց իսկապէս պէտք էր խղճալ. կամ աւելի ճիշդը՝

մարդկութեան վիճակը խղճալի էր: Ժողովուրդը սարսափի մատնուած էր, եւ գաղափար իսկ չունէր այլեւս, թէ ի՞նչ կը կատարուէր եւ ինչու: Որոշած էին զիրենք փրկել սակայն, ազատագրել կամ իրենցմէ խլուած իրաւունքները վերահաստատել, վերագործնել իրենց: Միծաղելի չէ՞ր: Գէթ այս երկրի բնակիչները որեւէ ատեն այնքան միամիտ չէին եղած, որ հաւատային իրաւունքներ ունենալուն: Ո՞ր երկրին մէջ ո՞ր մարդը իրաւունքներ ունէր: Թուղթի վրայ կամ զիրքերու մէջ արձանագրուած գեղեցիկ խօսքեր էին, եւ այդքան: Լիրանանի մէջ գէթ մարդիկ հաշտուած էին այս իրականութեան հետ, եւ լաւ կամ գէշ, ձեռով մը կ'ապրէին եւ դո՛ւ էին իրենց կեանքէն: Ոսկի միջինն էր: Որ կեանքի շատ աւելի իրապաշտ լմբռնուժ էր, քան բառերու ստեղծած պատրանքը:

Մարդ արարածը կրնար իսկապէս հրէշի վերածուիլ ուրեմն: Հիշտա նախատեսած էր կարծես կամ նախազգացած պատահելիքը եւ վերջաւորութեան դո՛ւ դարձած էր նոյն հրէշին: Եթէ ծրագրէր իսկ, սակէ աւելի համոզիչ փաստ մը չէր կրնար տալ իրեն: Աւելի փորձառու էր ուրեմն, թերեւս՝ աւելի իմաստուն: Բայց հակառակ իր պնդումին եւ թախանձանքին, անդրդուելի մնացած էր ու մերժած էր մեկնիլ կամ հեռանալ, ու միշտ կրկնած էր:

— Տունս հոս է: Ուրիշ տուն չունիմ, երթալիք տեղ ալ չունիմ: Մարդ իր տան մէջ միշտ աւելի ապահով է:

Բայց միայն ապահով չէր զգացած: Վերջին շարաթներուն պատշգամ դուրս գալու նոյնիսկ քաջութիւն չէր ունեցած: Եւ փողոցը իսկապէս վտանգաւոր էր, մանաւանդ իրեն նման օտար եւ ուշադրաւ կնկայ մը համար: Ամէն օր ինք պէտք եղած գնումները կը կատարէր, ու կը տանէր իրեն ինչ որ գտնէր — հաց, պտուղ, բանջարեղէն, պանիր, պահածոյ ուտեստեղէններ: Եթէ կարենար դուրս ելլել անշուշտ: Արդարեւ օրեր կ'ըլլային, երբ ցերեկը մարդիկ իրենց տուններուն մէջ իսկ կը պահուէրէին, փոխադրուելով սենեակէ սենեակ — բաղնիքէն խոհանոց, կամ ննջասենեակէն միջանցք, որ ամենէն ապահով վայրը կը նկատուէր տուններուն մէջ, որովհետեւ պաշտպանուած էր քանի մը պատով: Ու մինչեւ վերջին օրն իսկ հանդարտ էր ու խաղաղ, թէեւ մտահոգ: Վախնալու սկսած էր, եւ առանց չքմեղանքի խոստովանած էր իրեն: Ոչ թէ ուղմբերէն կամ փամփուշտներէն, այլ դանոնք արձակողներէն: Շարաթներու ընթացքին հետեւած էր անոնց օր ըստ օրէ անդսպելի դարձող վերարբմունքին, թաղեցիներու տուններէն ներս իրենք իրենց արտօնած ազատութեան, եւ սկսած էր շշուկներ լսել նաեւ:

— Դեռ ուշ չէ, — ըսած էր անոր, կը յիշէր: — Կրնաս առաջին առիթով մեկնիլ, քանի մը օրէն, անմիջապէս որ տոմսը կարգադրուի:

— Ձի կրնար աւելի երկար տեւել, — պատասխանած էր, — մեր թաղերուն մէջ ըլլալիքը եղաւ արդէն: Պանդոկները դրաւուեցան ու ճակարար հեռացաւ մեզմէ: Քանի մը օր եւս, եւ կրնանք ազատօրէն շարժիլ, դուրս ելլել: Արդէն ձմեռ է, կոուողները, իրենք ալ մարդ են, հանգիստի պէտք ունին:

Եւ նոյն օրն իսկ, նոյն գիշերը, հանդիստի պէտք ունեցող այդ տղաքը նոյն հանդիստը զլացան իրեն: Ով գիտէ ի՞նչ պատահած էր: Տան մէջ ոչ դրամ ունէր, ոչ սակեղէն, դո՛ւ հարեղէն, ոչ ինչ: Ձեռնունայն դուրս ելլելու զայրոյթն էր հաւանաբար, որ մղած էր զիրենք ոճիրը գործելու: Չարչարած էինք զինք վստահաբար, բռնաբարած, ու վերջաւորութեան զիսկը նետած դուրս: Ինչո՞ւ:

Յիմար հարցում: Կարծես այս ամբողջ կատարուածին մէջ տրամաբանութիւն կար: Բայց կարելիութիւնը նոյնիսկ... մարդ արարածը վերջին հաշուով, անմիջապէս որ պատեհութիւնը ընձայուէր իրեն կը վերագոռնար իր իսկութեան, գաղանային բնազդներուն: Քաղաքակրթութիւն, մշակոյթ, արուեստներ, փլիլիսոփայութիւն, կրօնք՝ ասոնք բոլոր հաճելի գրադումներ էին միտքով օժտուած գաղանին համար, որ բնականաբար ժամանցի պէտք ունէր, երբ սպաննելէն եւ աւերելէն յազեցած էր: Գաղափարը վրդովեց զինք, յուսահատութեան մասնեց, ու պահ մը ամէն ինչ անիմաստ թուեցաւ իրեն: Ո՞ւր կ'երթար: Եթէ սա օրաթերթը չհրատարակուէր, ի՞նչ պիտի փոխուէր աշխարհի վրայ, մանաւանդ Լիրանանի մէջ: Թերեւս օգտակար ըլլար նոյնիսկ: Ի վերջոյ ամէն օր նոյն սուտի եւ կեղծիքի դրանները դարձնելը ի՞նչ իմաստ ունէր, ի՞նչ նպատակի կը ծառայէր՝ եթէ ոչ նոյն գաղանին, որ պէտք ունէր այս կարգի թոյնի եւ թմրեցուցիչի: Թոյն՝ զանդուածները թմրեցնելու համար: Ինք իր շարաթաթերթի հրատարակութիւնը դադրեցուցած էր արդէն: Հարկադրուած էր: Այս պահուն եւ այս տրամադրութեան մէջ չէր զղջար, ընդհակառակն՝ գո՛հ էր, ու հիմա կ'անդրադառնար, թէ այս նոյն յուսահատութիւնն էր որ զինք մղած էր նմանօրինակ որոշումի մը: Ի վերջոյ ինք եւս իր հայերէն շարաթաթերթը որո՞ւ համար կը հրատարակէր: Գաղանային խորթակներ սնուցանող Սեղբակներո՞ւ, թէ մարդկութիւնը փրկելու մեծամտութիւնը ունեցող լուսնասնկերու համար: Տարիներ երազած էր, հնարաւոր բոլոր միջոցներուն դիմած, եւ ի վերջոյ արտօնազրի մը տի-

բացած էր: Բայց արդիւնքը... Հայկական իրականութիւն կոչուածը այն ատեն միայն ճանչցած էր: Սարսափելի էր: Ինք, որ կը յաւակնէր Միխիւղը լաւապէս ճանչնալ, այսքան տարի կոյր եղած էր ուրեմն, կամ՝ սոցէտ: Ոչ միայն երէց մտաւորականներն ու կուսակցական մամուլը, այլ իր իսկ աշխատակիցները նաեւ, հալածանքի արշաւ մը կազմակերպած էին թերթին դէմ եւ աներեւակայելի խաղեր սարքած: Ի՞նչ խաղ: Մրազբուած, գլխադիր սրիկայութիւն էր:

Բայց այս հոգեմիճակէն դուրս պէտք է վար. պէտք է կեղւէր դայն, նեւէր վրայէն: Հիլտայի աչքերը օրերէ ի վեր իրեն կ'ընկերակցէին՝ տունէն խմբադասուն, դարձեալ տուն, յետոյ անկողին — ղիշեր եւ ցերեկ: Աչքերը գոցէր կամ բանար, նոյնն էր. միշտ իր հետ էին, ներկայ, իրմէ ներս. անխուսափելի: Յնցումը կրցած էր հաւասարակշիւ եւ թօթափել վրայէն անոր ազդեցութիւնը: Բայց Հիլտայի աչքերէն չէր կրցած ձերբազատուիլ, համոզել զանոնք, խարել: Այդ քաղցր, ներողամիտ աչքերը:

Մեռած էր, վերջացած, եւ աչքերը չկային այլեւս: Ինչպէս չկար ան, որ իրեն պէս մարդ էր — շնչող, երազող էակ մը: Զարմանալիօրէն բարի եւ անմեղ մնացած ազջիկ մը, հակառակ ընտրած ասպարէզին: Անոր համար ամէն ինչ վերջ դրած էր, իսկ ինք կը յամառէր կենդանի պահել զայն իր երեւակայութեան մէջ: Ուրեմն գոյութիւն ունէր, եւ այսքան տաղնապելու պէտք չունէր վերջին հաշուով: Մարմինը սպաննած էին, այսինքն ոչնչացուցած, բայց անձ մը իր մարմինը չէր: Փաստ որ Հիլտա իր մէջ գոյութիւն ունէր: Ուրեմն: Յնորք էր:

Խմբադասուն հասած էր արդէն: Հինգ կամ վեց ժամ կրնար մասամբ մտնալ ինքզինք, եւ ուրեմն Հիլտան նաեւ: Թերեւս հրաշք մը կը պատահէր մինչ այդ եւ ինքզինք կը վերապտնէր:

Կէս ղիշերէն ետք պաշտօնակիցներէն երկուքին հետ նստած պատի մը մէջ, կը խմէր: Բանի օր է չէր կրցած խմել նոյնիսկ: Իրենց շրջանի գինեատուները վաղ էին բոլոր. յամենայն դէպս չէր յիշեր, թէ ի՞նչ բրած էր վերջին օրերուն: Համբայի յարակից փողոցներէն մէկուն մէջ պահուրտած աննշան բայց կոկիկ վայր մըն էր այս, որ կարծես խզուած արտաքին աշխարհէն, կը դործէր բնական կերպով: Զարմանալիօրէն մարդիկ կը կատակէին հոս, կը զուարճանային, ու կը խնդային նոյնիսկ: Երիտասարդ ազջիկներ՝ փոքր սրահը

լիցուցած էին իրենց քրքիչով, ներկաներուն ուշադրութիւնը կեղ-րոնացնելով իրենց վրայ: Իր ճանչցած Լիրանանը ա՛յս էր: Արար, ամերիկացի, Փրանսացի, իսլամ, քրիստոնեայ, հայ՝ նոյն ընտանիքի անդամները, կը շարունակէին իրենց սովորական կեանքը սողրիլ: Եւ հոս ո՛չ ոխ կար, ոչ ատելութիւն, եւ ոչ ալ կրօնական կամ քաղաքական տարակարծութիւն:

— Դուրսը պատահածէն լուր չունին կարծես, — խօսեցաւ Գեղամ, խօսքը ինքնիրեն ուղղելով առաւելաբար: — Երանի իրենց որ կրնան այսքան անտարբեր ըլլալ եւ կեանքը վայելել:

— Հոս ինչո՞ւ բերի քեզ, — ըսաւ Բիատ, պաշտօնակիցներէն աւելի երիտասարդը, որ իսլամ էր: — Կը փոխուիս քիչ մը ու թերեւս կը համոզուիս, թէ այնքան ալ յուսահատական չէ կացութիւնը:

Համակրելի եւ զուարթ երիտասարդ ըմն էր Բիատ, որ զրելու փորձեր կ'ընէր, եւ այդ պատճառով ալ հաւանաբար մասնաւոր համարում ունէր իրեն հանդէպ, իմացած ըլլալով որ հայ դրող մըն էր: Զանազան ամսագրերու մէջ հրատարակուած իր բանաստեղծութիւններէն ցոյց տուած էր իրեն ամիսներ առաջ, օր մը, ու երախտագիտութեամբ ընդունած էր կատարած զիտոգութիւնները: Հազուաքանակոր տարեկան, բարեկիրթ բայց ինքնավստահ հանելուկ մըն էր, ու սիրուած բոլոր պաշտօնակիցներուն կողմէ:

— Ծնորհակալ եմ, — ժպտեցաւ Գեղամ: Հետաքրքրական վայր մըն է, եւ կրնայ օգտակար ըլլալ: Մթնոլորտը հաճելի է, ու տեղն ալ՝ ինծի համար շատ յարմար. մեր տունէն հոս երկու քայլ ճամբայ է:

— Տէրը հայ է, — խանդավառուեցաւ Բիատ. — ընկերային եւ կատակասէր մարդ մըն է, ու բոլոր յաճախորդներուն հետ բարեկամի պէս կը վարուի, միասին կը խմէ, ու երբեմն յաճախորդներէն աւերի ինք կը ծախսէ: Ընդդ գործին մարդը. ի վերջոյ հայ է:

— Այս քաղաքին մէջ մարդ չկայ որ չես ճանչնար, — խօսեցաւ երէց պաշտօնակիցը:

— Վայրկեան մը, ձեզ ծանօթացնեմ, — ըսաւ Բիատ ու բարձրաձայն կանչեց: — Կարօ՛, հոս, այս կողմ: Ծատ դրազած կ'երեւիս այսօր:

— Ահլա՛ն, ահլա՛ն, — միջահասակ, քիչ մը ղիրուկ, լայն ճակատով եւ ուռած կողերով երիտասարդ մը մօտեցաւ իրենց սեղանին: — Կը ներէք, այսօր խճողուած է քիչ մը: Յայտնի է որ դեռ ողջ ես, — խօսքը Բիատին ուղղեց ապա, — թէեւ քեզ տեսած չունինք: Դո՞ւն ալ պահուրտեք ես:

— Ծանօթացի՛ր, — ընդմիջեց երիտասարդ պաշտօնակիցը. — ձեզմէ է: Գեղամ Տարօնեան, մեր երէց խմբավորը: Էմիլը կը ճանչնաս արդէն:

— Անկարելի՛ է, — Գեղամ շարունակեց արարերէն խօսիլ, թէ եւ զէմքը դարձուցած էր սրճարանատիրոջ, բացայայտ զարմացումով: — Այս ի՞նչ եղեր է քեզի. որքա՞ն փոխուեր ես, Խմբալի՛:

— Վա՛յ, — Կարօ այն ատեն միայն նայեցաւ նախկին դասընկերոջ, ու հայերէն խօսեցաւ. — այս ի՞նչ հաճելի անակնկալ է: Վա՛յ, Գեղամ, վա՛յ: Աս ի՞նչ կեանք է, պէ՛: Մարդ Աստուծոյ, դիտենք, հասկցանք որ կարելոր մարդ դարձած ես, բայց այսքանը շատ է:

— Շատ մի խօսիր եւ նստէ՛, — Գեղամ գոհունակութեամբ քաշեց սրճարանատիրոջ թեւէն: — Քեզ դուրսը տեսնէի, բնաւ պիտի չճանչնայի:

— Դուն չես փոխուած: Ի՞նչ է գաղտնիքը: Այս դորձը, անքուն գիշերները, խմիչքը, ի՞նչ գիտնամ: Իմ ալ կեանքս ասիկա է, ի՞նչ կարելի է ընել:

— Մի փորձեր դուն քեզ արդարացնել: Ո՞վ գիտէ ինչ Խմբալիւթիւն կ'ընես... քեզի չափ մենք ալ կը խմենք եւ անքուն կը մնանք: Գէթ ամուսնացա՞ր:

— Ինձի ո՞վ աղջիկ կու տայ: Խե՞նթ եմ:

— Անշո՛ւշա: Երբ ամէն օր աղջիկ մը...:

— Զէ՛, դուրպան, չէ՛. մեր երեսը նայող չկայ հիմա: Դուն ալ չես ամուսնացած, գիտեմ. յաճախ լուրերդ կ'առնեմ: Տղաքը հպարտութեամբ կը խօսին քու մասիդ. ես դրականութենէն բան չեմ հասկնար, գիտես: Բայց դրածներդ բոլոր կը կարդամ, կը հետեւիմ: Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ աղբային յողուածներէդ դատ, միւս բոլոր դրածներդ չեմ հասկնար:

— Ես՛, — բացականչեց Ռիտ, օգտուելով պաշտօնակիցին շիտթէն, — չըսես ծանօթ էք եղեր արդէն: Դուք, հայերդ, իսկապէս զարմանալի էք:

— Դասընկերներ եղած ենք, — Գեղամ բացատրեց յանդիմանական շեշտով մը: — Երկրորդական վարժարանի մէջ ամենէն մօտ ընկերս էր: Քսանհինգ տարի... դուն չէիր ծնած թերեւս այն ատեն: Այս երկիրը դրախտ էր այդ օրերուն. Լիբանանի լաւագոյն շրջանն էր: — Ի՞նչ է ձեր խմածը, — հետաքրքրուեցաւ Կարօ: — Վիզէ՛ն, — ձայն տուաւ յետոյ սպասարկող տղուն, — բաժակները նորոգէ՛. իմ խմիչքս ալ հոս, ինձի տուր:

— Հարստանալու ամենէն զիւրին ձեւը դուր ես, — կատակեց Տարօնեան: — Ջուր՝ կը ծախես, ու մարդիկ ալ ապուշի պէս կը դնեն:

— Աշխարհը ինձի ալ պարտական է: Իմ մեղքս ի՞նչ է. ես ապրելու իրաւունք չունի՞մ:

— Ապրելո՞ւ, թէ՛ հարստանալու:

— Ես չեմ հարստանար, — Կարոյի աչքերը ժպտեցան, — մի մտահոգուիր: Դրամը կը շահին ծախսելու համար, եւ փառք Աստուծոյ...:

— Վայելք չի պակսիր աշխարհի վրայ, — դասընկերը ամբողջացուց նախադասութիւնը: — Բայց ծերութեան հաշիւն ալ պէտք է ընես:

— Ես ծերանալու նպատակ չունիմ: Այս բոլոր սիրունիկները ի՞նչ բանի համար են: Մէկ բան դժուարիս կ'երթայ միայն, որ բոլորին չեմ կրնար հասնիլ: Որքան ալ փորձես, միշտ սիրտդ պիտի այրի որ քանիներ ձեռքդ պիտի չանցնին: Եւ աշխարհի վրայ այնքան կին կայ... երբեմն խենթութիւն կու գայ վրաս:

— Քառասուն տարեկան եղար. չե՞ս ամչնար: Դեռ չկշտացա՞ր: Դպրոցական օրերէդ...:

— Կշտանա՞լ, — ընդմիջեց Կարօ, — երբ այսքան համեղ պատաներ կան, ինչպէ՞ս կրնաս կշտանալ: Եւ յետոյ՝ կշտանալուն անօթեանալն ալ կայ:

— Մարդ պիտի չըլլաս, — խնդաց Գեղամ: — Քանի՞ տարի է քեզ չեմ տեսած. դեռ նոյն Խմբալիւն ես: Աշխարհը իրարու անցած է, իսկ դուն...:

— Ամէն մարդ իր կեանքը կ'ապրի: Այսօր, վաղը կրնայ փամփուշտ մը դալ եւ տանիլ գիւս: Աշխարհին ճիւղերուն է: Ո՛չ հիմա կրնաս հաշիւ պահանջել իրենցմէ, եւ ոչ ալ այն ատեն: Մեր մեղքը ի՞նչ է, մենք ի՞նչ կապ ունինք այս խենթութեան հետ: Աշխարհը իրարու անցած է... որո՞ւ ճիւղերուն: Մեր կարծիքը անող եղա՞ւ: Այնպէս որ, ի՞նչ ստիպուած ենք իրենց խաղերուն զոհ դառնալու: Իրենք իրենց հաշիւները ունին. մենք ալ մեր կեանքը ունինք:

Գեղամ ուղեց խօսիլ, առարկել, նոյնիսկ վիճիլ բայց անդրադարձաւ որ անտեղի ժամավաճառութիւն պիտի ըլլար: Կարօ Պահատուրեանը էր ինչ որ էր, եւ թերեւս պէտք է այսպէս ըլլար. աւելի բնական էր, ճիշդ: Եւ ինքն իրեն հետ անկեղծ էր գէթ: Եւ այդ իմաստով նախանձելի էր, որովհետեւ պարկեշտ էր ու քաջ եւ շատ աւելի պատուաւոր՝ քան բազմաթիւ այլ մարդիկ, որոնք քաջութիւնը չունէին իրենց համոզումներուն տէր կանգնելու: Այլ հարց, որ բոլոր-

լովին տարբեր մարդ մըն էր ան այսօր, եւ հասարակաց գրեթէ ոչինչ ունէին: Ժամանակը, կեանքն ու հետաքրքրութիւնները զիրենք հակադիր ուղիներով առաջնորդած էին, եւ իւրաքանչիւրը եղած էր այն, որ էր այսօր: Ինք՝ հաւաքական պատասխանատուութիւններով ինքզինք զստապարտած առանձին մարդ մը, իսկ երբեմնի դասընկերը՝ պարզ եւ իրապաշտ բայց նաեւ հասկեղբոն գծրախտ մը: Այո, իր պատեհապաշտութեամբ իսկ գծրախտ արարած ըմն էր Կարօ, որովհետեւ ինքզինք զրկած էր մարդկային կեանքի լաւագոյն եւ ամենէն ազնիւ զգացումներէն:

Նախանձեցաւ եւ դժաց անոր, բայց ուղեց անպայմանօրէն շարունակել խօսակցութիւնը, որովհետեւ դո՛ւ էր — նոյնիսկ ուրախ — որ հանդիպած էր անոր տուեալ պայմաններուն մէջ: Անկախ այս բոլորէն, յամենայն դէպս, նոյն կենտուրախ եւ ընկերասէր տղան էր, ու համակրելի՝ ինչպէս անցեալին: Անակնկալօրէն բարձրացող աղմուկը, մինչ այդ, ձերբազատեց զինք խօսելու պարտաւորութեանէն, ու դէմքը դարձուց ստուգելու, թէ ի՞նչ կը պատահէր: Եկրտեռ երիտասարդներու խումբը, որ քանի մը սեղան դրաւած էր, կ'երգէր կամ կը պոռար, եւ ուշադրութիւն կը պահանջէր կարծես:

— Անշուշտ որ չես ծերանար, — Գեղամ գրեթէ պոռաց ձայնը լսելի դարձնելու համար: — Ուրախ մարդը չի ծերանար, մանաւանդ երբ երիտասարդութեան հետ է գործը: Ամէ՞ն գիշեր այս տեսակ խրախճանք ունիս հոս:

— Ամէն գիշեր:

— Չրտե՛ս, սակէ ետք աւելի յաճախ կը տեսնես զիս:

— Յուսամ, — ըսաւ Կարօ, — դո՛ւն էս ալ կը փոխուիմ քիչ մը: Մարդու կարգ կ'անցնիմ, ու հին օրերը կը յիշեմ: Գիտե՛ս, կեանքիս լաւագոյն տարիներն էին. չես հաւատար, բայց կը փնտռեմ այդ օրերը: Դուն խօսածներուս կարեւորութիւն մի տար. երբեմն այս խենթանոցին մէջ այնքան առանձին կը զգամ, որ ամէն ինչ քանդելս կու գայ: Դուն բախտաւոր ես:

— Երանի ինձի:

— Ներողութիւն, վայրկեան մը, — ըսաւ Կարօ եւ շտապեց դէպի գրամարկղը, ուր մէ՛ծ մը սկսած էր զանձիչին եւ յաճախորդի մը միջեւ:

Տարօնեան հաճելի, մխիթարող տխրութիւն մը զգաց եւ հաստատեց որ արդար չէր եղած իր դատումին մէջ: Իրեն նման առանձին եւ շուարած հայ մըն ալ սա տղան էր, որ ցուցադրած ինքնալստահութեամբ հանդերձ, ուրախ չէր: Ըրածը ամբողջ դերասանութիւն

էր՝ թերեւս ինքզինք խարելու համար — խօսելու եղանակը, ցուցամոլութիւնը, շուայրօրէն ծախսելն ու ապրելը: Ինչպէ՞ս կարելի էր ուրախ ըլլալ: Անակնկալօրէն Հիլտան յիշեց դարձեալ, եւ ամէն ինչ անտրամարանական թուեցաւ: Պարզօրէն կարելի չէր: Ինք ողջ էր տակաւին, եւ սովորականին պէս գինետան մը մէջ կը խօսէր, մարդկային ձայներ կը լսէր, կը խնդար, կը մտածէր: Ինչպէ՞ս: Սրահին մէջ ալեկոծող երգն ու ծիծաղը զինք եւս կը խանդավառէին եւ հետաքրքրութեամբ կը հետեւէր կատարուածին: Արտակարգօրէն սիրուն ու պչրոտ աղջիկ մը փաթթուած էր կողքին նստած երիտասարդին ու կատաղութեամբ կը համբուրէր զայն, կը շոյշեր մազը, այտերը, աչքերը ու չէր յազնար: Մինչ երիտասարդը, անտարբեր, կը շարունակէր կատակել սեղանակիցներուն հետ: Իսկ ինք, Գեղամ Տարօնեանը, կը դիտէր այս բոլորը, եւ ուղեղը կ'արձանագրէր ամէն ինչ: Ասոնք կ'ապրէին տակաւին, կ'երգէին, կը զուարճանային, ցանկութիւններ ունէին, մինչ ուրիշներու համար ամէն ինչ վերջ գտած էր: Այսպէս անակնկալօրէն, առանց պատճառի եւ անարդարօրէն:

— Ես պէտք է մեկնիմ, — ըսաւ Բիատ. — ծնողքս կը մտահոգուին: Թէեւ պիտի ուզէի այս գիշերը հետդ իր լրումին հասցնել:

Գեղամ յանցաւոր զգաց յանկարծ եւ անդրադարձաւ որ անփափկանկատ գտնուած էր պաշտօնակիցներուն հանդէպ, ու հետեւարար ըսաւ.

— Կը ներէք որ պահ մը տարուեցայ, եւ սկսայ հայերէն խօսել Կարոյին հետ: Զարմանալի է. բայց թերեւս ալ անխուսափելի էր, որովհետեւ տարիներէ ի վեր չէի տեսած զինք, ու բնականաբար մենք մեզ մոռցանք:

— Ձեր իրաւունքն է, — անկեղծօրէն արտայայտուեցաւ երիտասարդը. — ներողութիւն խնդրելու ինչ կայ:

— Ձիս ալ տուն կը հասցնես ուրեմն, — ըսաւ Էմիլ եւ կանդանեցաւ ոտքի: Գեղամին տարեկից, ինքնամփոփ եւ սաւակախօս մարդ մըն էր: Ամուսնացած եւ զաւակներու հայր, սակայն խմբադրատան մէջ ամէն մարդ գիտէր, թէ անոր անասնձ եւ զեղեցիկ կիներ զինք այս կէս խելադար միճակին հասցուցած էր:

— Ես կ'ուզեմ քիչ մըն ալ տնտեսալ, — երէց խմբադիրը դարձաւ յետոյ Բիատին. — շնորհակալ եմ որ զիս հոս բերիր:

— Խնդրեմ: Անշուշտ, կը հասկնամ:

Պաշտօնակիցներուն մեկնելէն ետք Տարօնեան խորասուզուեցաւ մտածումներու մէջ, եւ զգաց որ հանդարտութիւն մը կը համակէր զինք: Միջավայրը, երաժշտութիւնը, երիտասարդութիւնն ու

մանաւանդ աղջիկներուն ուրախ եւ սոսոջ ծիծաղը թմբեցուցին զինք, եւ անդալարար անջատուեցաւ շրջապատէն ու մոռցաւ Կարօն նոյնիսկ: Օրերէ ի վեր այսքան հանդիստ չէր զգացած: Հաճելի մթնոլորտ մըն էր: Ուրիշներուն ուրախութիւնը զինք եւս կ'ուրախացնէր, կը մխիթարէր թերեւս, կամ ապահովութիւն կը ներշնչէր: Ծառաթներէ ի վեր չէր գրած, չէր կրցած գրել: Պարզօրէն հնարաւոր չէր եղած, շարունակուող կռիւնները քանդած էին եւ տրամադրութիւնը, եւ կեդրոնանալու կարողութիւնը: Այլ հարց որ քանդուած էր նաեւ Քասր ալ-Պահրը, ուր կ'աշխատէր սովորաբար: Եւ բնականաբար կորսնցուցած էր ինքնավստահութիւնը եւ սկսած էր անապահով զգալ: Իսկ ինք, երբ չկրնար գրել, կը դառնար ջղային, դիւրագրգիռ, եւ անշուշտ՝ յուսահատ: Կեանքը իմաստ ունենալէ կը դադրէր, եւ ուրեմն՝ ապահով չէր զգար: Որովհետեւ գրելէ դատ ուրիշ ոչինչ կրնար ընել. արհեստ մը նոյնիսկ չէր սորված, որ կարենար անոր ապաւինիլ ի պահանջել հարկին: Փորձառու լրագրող էր անշուշտ, բայց այս երկրէն դուրս արժէք չունէր իր փորձառութիւնը: Իսկ եթէ այսպէս շարունակուէր, այս թերթին ալ հրատարակութիւնը պիտի դադրէր, կամ գէթ ընդհատուէր, նկատելով որ աշխատելը — նոյնիսկ խճադատուն հասնելը — անկարելի կը դառնար օր ըստ օրէ: Ատկէ ետք... նախընտրելի էր չմտածել այդ մասին:

Կարեւորը, թէեւ, լրագրական գործը չէր, այլ իր գրելու անկարողութիւնը: Ինչո՞ւ չէր կրնար գրել, ի՞նչ պատահած էր իրեն: Հիշտայի մահը դեր չունէր ասոր մէջ, որովհետեւ շաբաթներէ ի վեր այս հոգեվիճակին մէջ էր: Պարզօրէն չէր կրնար գրել, եւ ամէն օր քիչ մը աւելի տագնապի կը մասնուէր: Գրելու անսպառ նիւթ ունեցած էր միշտ, եւ երբեւիցէ գրելու դժուարութիւն չէր ունեցած: Բայց շաբաթներէ ի վեր, ահաւաստիկ, չէր կրնար թուղթն ու գրիչը հաշտեցնել: Եթէ մարդը այս էր, անելի ճիշդը՝ եթէ մարդկային կեանքը այս էր, ինք որո՞ւ համար կը գրէր: Գրականութիւն, երաժշտութիւն, արուեստներ, մշակոյթ... ի՞նչ ինքնախաբէութիւն: Պատրանք էր, նոյնիսկ՝ մեծամտութիւն: Մարդիկ հետաքրքրուած չէին, որովհետեւ այլ զրազումներ ունէին: Եւ ըստ երեւոյթին միայն արուեստներու պէտք չունէին, նկատելով որ օգտակար չէին ըլլար իրենց: Մինչդեռ արուեստը պէտք է ազնուացնէր մարդը, բարձրացնէր զայն հասարակ գոյութեան արդմէն ու հասարակչոյժը անոր կեանքը: Իմաստ տար անոր եւ առաջնորդէր. մղէր մարդը դէպի բարին, արդարը, գեղեցիկն ու ճշմարիտը: Բայց պատահած էր ճիշդ հակառակը: Մարդկային միտքի եւ ստեղծագործութեան դարաւոր

ճիշդ խեղաթիւրած էին մարդիկ եւ ահաւոր, հրէշային գէնքեր դարձնած անկէ: Իմաստասէրը՝ ճշմարտութեան իր որոնումին մէջ, յանդած էր որոշ եղբակացութիւններու եւ բանաձեւած իր տեսակէտները, զորս դադափարախօսութիւններու վերածած էին ուրիշներ՝ յոռի եւ անմարդկային նպատակներ հետապնդելու համար: Եւ մարդիկ, միամըտաբար կամ չարութեամբ, հետեւած էին այս վերջիններուն եւ իւրացուցած անոնց այսպէս կոչուած վարդապետութիւնները: Իսկ արուեստագէտը շարունակած էր ստեղծագործել, հաւատալով որ մարդկութեան կը ծառայէր, կամ գէթ՝ գեղեցիկին, որ իր կարգին պէտք է նպաստէր մարդուն մէջ հոգեկան առաքինութիւններ մշակելու աշխատանքին: Գոբախտաբար, սակայն, արուեստագէտը ձախողած էր ցարդ իր առաքելութեան մէջ, ու երբեմն հալածուած էր նոյնիսկ իր միամտութեան պատճառով: Եւ ժամանակի ընթացքին, բնականաբար, արժանացած էր մարդոց քամահրանքին: Վնասակար կամ վտանգաւոր տարր նկատուած էր երբեմն, բայց աւելի յաճախ՝ միամիտ եւ ծիծաղելի արարած մը:

— Բարեկամներդ ո՞ւր են, — վերադարձաւ Կարօ երիտասարդ անզլուհիի մը հետ թեւանցուկ: — Ծանօթացիր, նախկին դասընկերներէս եւ մտերիմ բարեկամ մը, — անզլերէն խօսեցաւ եւ տուաւ անունը: — Գրող է, եւ կատարեալ անզլերէն դիտէ:

— Օ՛, հետաքրքրական է, — ըսաւ աղջիկը. — անզլերէն կը գրես:

— Ո՛ւ, հայերէն, — կոպտութեամբ պատասխանեց Գեղամ:

— Պէյրութի միակ անզլերէն օրաթերթի խմբագիրներէն է, — Կարօ փութաց միջամտել, անդրադառնալով որ աղջկան հարցումը ջղայնացուցած էր բարեկամը: — Քիչ մը կոշտ է, կը ներես, — ժպտեցաւ յետոյ. — հայ է, ինչ կրնանք ընել:

— Հասկնալի է, — անդիուհին եւս ժպտեցաւ: — Զարմանալի չէ, ոչ ալ անբնական: Գրողէ մը կարելի է ակնկալել՝ հայ ըլլալ կամ ոչ:

— Գրողներու մասին սխալ կարծիք ունիս, — Գեղամ փորձեց քաղաքավար շեշտ մը տալ ձայնին, ու ժպտելու ճիգ ըրաւ նոյնիսկ: — Իրաւ գրողը կամ արուեստագէտը շատ բնական մարդ մըն է:

— Գրողներ ճանչցած եմ, բայց բոլորն ալ ըսածիդ հակառակը հաստատած են իրենց վարմունքով եւ տարօրինակութիւններով: Պէտք է ըսել, թէեւ, որ բոլորն ալ հետաքրքրական մարդիկ են:

— Ամենէն քառակուսի մարդն իսկ կրնայ հետաքրքրական ըլլալ երբեմն:

— Սանտրան ալ զրող է, — բացատրեց Կարօ. — ասոր համար ուղեցի որ ծանօթանաք :

— Տարբերութիւն մը կ'այ, — ըսաւ աղջիկը, — ես թղթակից եմ, ոչ թէ արուեստագէտ : Կը գրեմ, այո՛, բայց գրածս գեղարուեստական գրականութիւն չէ :

— Ո՞ր թերթին կ'աշխատակցիս, — հետաքրքրուեցաւ Տարօնեան :

— Անգլիական քանի մը թերթերու համար կ'աշխատեմ՝ որպէս ազատ թղթակից : Քանի մը ամիս է որ հոս եմ. ինծի համար լաւագոյն փորձառութիւնն է :

Սանտրա Բարձրը մանր բայց սիրուն աչքեր ունէր, եւ իւրաքանչիւր ժպիտ մը, որ կը հմայէր առաջին տպաւորութեամբ : Լեցուն, հասուն շրթունքները ցանկայարոյց էին այնքան, որ կը քոտ համարյոնքու մասին մտածել կու տային անմիջապէս, ու Գեղամ եւս, երբ մօտէն դիտելու առիթ ունեցաւ, նոյն անհանդուարեանով մտածումը ունեցաւ : Չարմանալիօրէն շէկ չէր, այլ թուր, ու շագանակազոյն մազ ունէր սա աղջիկը, որ ձիու Ֆիզիքական գեղեցկութեամբ մարմին մը կը ցուցադրէր նեղ ու կարմիր շրջադեմսին մէջ : Չգալի էր որ գիտակցութիւնը ունէր իր գեղեցկութեան, ու մասնաւոր հաճոյքով կը հաստատէր ատիկա իր իւրաքանչիւր շարժումով եւ արտայայտութեամբ :

— Ինծի կը ներէք, — Կարօ կանգնեցաւ վերստին, — միւս հիւրերուն ալ պէտք է ուշադրութիւն դարձնեմ : — Ու դառնալով դասընկերով, հայերէն մը թմրեց. — աղջիկը չխրտչեցնես, իւրոտ պատառ է :

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա :

— Լաւագոյն յաճախորդներէս է :

— Չըսե՛ս, հարուստ է :

— Ձեմ գիտեր, բայց լաւ կը ծախսէ, ու... բարեկամ է :

Սքանչելի աղջիկ է :

— Ի՞նչ տեսակ բարեկամ, — լրջօրէն հարցուց Գեղամ :

— Ուղածիդ պէս, ամէն կերպով, — պատասխանեց Կարօ : —

Անձնական ոչինչ կայ անշուշտ :

— Սրիկայ ես :

— Անկեղծ : Կրնաս ազատ զգալ, — ըսաւ ու նահանջեց սրճարանատէրը :

— Ինչի՞ մասին էր այս ամբողջը, — Սանտրա հարցուց, քաղցր ժպիտը դէմքին :

— Քու մասիդ : Քեզ կը դովէր :

— Օ՛, ուրեմն այդպէս : Բաւական անկեղծ ես, պէտք է ըսել : Եւ համարձակ :

— Մեր յոսի սովորութիւններէն մէկն է. օտարներու ներկայութեան հայերէն կը խօսինք :

— Դուք դոնէ քանի մը լեզու կը խօսիք, — ըսաւ աղջիկը. — իսկ մենք ոչ միայն իրարու հետ մեր լեզուն կը զործածենք, այլ ուրիշներուն եւս կը պարտադրենք որ մեր հետ անգլերէն խօսին : Ես, օրինակի համար, եթէ արարեքէն դիտնայի, պիտի նախընտրէի տեղացիներուն հետ իրենց լեզուով հաղորդակցել : — Ու որոշ դոհու-նակութեամբ աւելցուց. — դասեր առնելու սկսած եմ արդէն :

— Եթէ այս երկրին մէջ որպէս թղթակից պիտի գործես, արարեքէն սորվիլէ անհրաժեշտ է :

— Եւ ինչպէ՞ս : Բայց շատ դժուար լեզու է :

— Աւելի հանդարտ երկիր մը չէ՞ր կրնար ընտրել, — բարձրաձայն մեծախօսեց Տարօնեան : Իրեն համար իսկապէս անբարձր էր, եւ անզգալաբար ուղղած էր հարցումը՝ հաւանաբար ինքիւրեն : — Այս կացութեան մէջ երբեք ապահով չէ, մանաւանդ աղջկայ մը համար : Քաջութիւն կը սրահանջէ :

— Ուղած փորձառութիւնս ունենալու լաւագոյն առիթն է : Այս ասպարէզը ընտրողը վտանգներէն պէտք չէ վախնայ. թէ ոչ այս գործը չի կրնար ընել : Այնպէս որ, քաջութեան հարց չկայ :

— Իսկ ինչո՞ւ այս ասպարէզը : Քեզի պէս երիտասարդ աղջիկ մը... :

— Նախասիրութեան հարց է, — ընդմիջեց Սանտրա. — փոքր տարիքէս երազս եղած է :

— Աւելի լաւ երազ մը չէ՞ր կրնար ունենալ :

— Դուն ինչո՞ւ կը գրես :

— Գրականութիւնը ասպարէզ մը չէ : Մեր լմբռնումով գրողը իր գրականութենէն ոչինչ կ'ակնկալէ : Եւ յամենայն դէպս, իսկական գրողը, որեւէ երկրի եւ ժամանակի մէջ, կը գրէ ո՛չ թէ ապրուստը ասպարէզելու համար, այլ պարզօրէն որովհետեւ չի կրնար չգրել : Ապրուստը շահելու համար ուսուցիչ կ'ըլլայ, խմբագիր կ'ըլլայ, հաշուապահ, պաշտօնեայ, խանութպան, բայց կը շարունակէ գրել՝ հոգ չէ թէ գրածը չկարենայ հրատարակել :

— Մեր մօտ, դժբախտաբար, այս բոլորը լմբռնելի չեն այլ-եւս : Ամէն ինչ հիմնուած է օգտապաշտ փիլիսոփայութեան մը վրայ, եթէ կարելի է փիլիսոփայութիւն կոչել այս տեսակ կեանքի ըմբռ-

նում մը: Նախկին իմաստով արուեստագէտներ, գրողներ, գաղափարի եւ միտքի ծառայող խնթեր մասններու վրայ կը համբուին:

— Կ'ընդունին իրականութիւնը, բայց դուն եւս խենթ կը կոչես իրաւ արուեստագէտը կամ համոզումի եւ սկզբունքի տէր մարդը:

— Ի՞նչ իմաստ ունի,— քաղցրութեամբ վերադաճութիւնը արտայայտեց անդլիուհին,— երբ մարդ դրածո չի կարդար:

— Արուեստի գործ մը առանձինն եւ անկախ գոյութիւն մը ունի, ու չ'երկնուի որպէսզի անպայմանօրէն գործածուի: Ատիկա օգտապաշտ մօտեցում է դարձեալ: Գեղեցիկը պէտք է վայելել, եթէ կ'ուզես այդ իմաստով մօտենալ հարցին, այդքան: Նկարիչի մը սրաստառը, օրինակի համար, կրնա՞ս կարդալ կամ գործածել: Եթէ իսկական արուեստի գործ է, ինքն իր մէջ կատարեալ եւ մեր զնահատանքէն անկախ իրականութիւն մըն է: Անոր գոյութիւնը զայն երկնող արուեստագէտէն իսկ անկախ է՝ արուեստի գործ մը ըլլալէն ետք, եւ նոյնիսկ ատկէ առաջ: Չմոռանա՞ք որ բանաստեղծութիւն մը գրուելէն առաջ, ինչպէս պատաստ մը նկարուելէն առաջ, գոյութիւն ունի արդէն: Արուեստագէտը որպէս միջնորդ կը ծառայէ միայն՝ զայն մեղի մատչելի դարձնելու համար: Ամէն ինչ տիեզերքին մաս կը կազմէ, այսինքն գոյութիւն ունի արդէն, եւ բանաստեղծութիւնն ալ, կամ նկարիչին պատաստը, գրուելէն կամ նկարուելէն առաջ միշտ եղած է, ու նոր չէ որ կը ստեղծադրուի: Եթէ գոյութիւն չունենար, արուեստագէտը պիտի չկարենար ստեղծել որովհետեւ արուեստագէտը աստուած մը չէ, որ ոչինչէն բան ստեղծէ: Աստուածներ չկան, ոչ ալ միակ Աստուած մը, որ ստեղծած է աշխարհը: Արարչագործութեան առասպելը շատ հետաքրքրական եւ՝ հաճելի պատմութիւն մըն է, եւ նպատակի մը ծառայած է անշուշտ, մանաւանդ անցեալին: Աշխարհը եւս, սակայն, տիեզերքին մաս կը կազմէ, եւ միշտ եղած է:

— Շատ յանդուգն տեսութիւն է: Ոչ թէ Աստուծոյ կամ արարչագործութեան մասին ըսածդ, այլ այն տեսակէտը, թէ արուեստի բոլոր ստեղծադրութիւնները երկնուելէն առաջ գոյութիւն ունեցած են: Այս կարգի տեսութիւն մը ո՞վ գիտէ ի՞նչ փոթորիկ կրնայ յառաջացնել: Աշխարհը գլխիվայր չըջելու պէս բան մըն է:

— Երբե՞ք: Շատ պարզ իրականութիւն մըն է: Արեւի լոյսին պէս յատակ, անհերքելի:

— Հետաքրքրական պիտի ըլլար գործերդ կարդալ,— Սանտրա անկեղծ փափաք մը արտայայտեց.— եթէ այսպէս ինքնատիպ մտա-

ծումներ ունիս, կրնամ երեւակայիլ թէ սրբան... ինչի՞ մասին կը գրես:

— Անտեղի հարցում է: Գրականութիւնը բանի մը մասին չէ: Առանձին գոյութիւն մը ունի ըսինք. նիւթը երկրորդական է: Կրնաս ամէն ինչի մասին գրել. կարեւորը՝ ինքն իր մէջ ամբողջական արուեստի գործ մը տալն է:

— Անշուշտ, հասկնալի է: Բայց ի՞նչ կը գրես. վէ՞պ, պատմուածք, բանաստեղծութիւն:

— Կարեւոր չէ: Վէպ ալ կը գրեմ, պատմուածք ալ. եւ եթէ սկսեք ըլլայ բանաստեղծութիւն ալ կը գրեմ. բայց դրածու ընդունուած սահմանումով ոչ վէպ է, ոչ պատմուածք: Ընդհանուր տարազումներ են ասոնք: Անշուշտ խօսքս սովորական վէպերու մասին չէ. պատմութիւն պատմող չեմ ես, թէեւ դրած վէպս կրնայ պատմութեան առանցք մը ունենալ, եւ սովորաբար կ'ունենայ: Բայց վէպը կամ պատմուածքը պատմուած պատմութիւնը չէ: Հետաքրքրական պատմութիւններ ամէն մարդ կը պատմէ, բայց ամէն մարդ գրող կամ արուեստագէտ չէ: Եւ ոչ ալ պատմածը՝ արուեստի գործ: Ներկայիս գրուած եւ հրատարակուած վէպերը — մեծամասնութիւնը դէթ — այս իմաստով՝ գրականութիւն չեն: Հետաքրքրական պատմութիւններ են, որ զանգուածներուն հաճելի ժամանցի միջոց մը զանելու փափաքին զոհացում կու տան: Եւ կը յաջողին այդ կերպով: Գրականութիւնը կամ արուեստը ասկէ աւելի բան մըն է. ամբողջութիւնն է, որ առանձինն կը կանգնի եւ իր կատարելութեանը մէջ գեղեցիկը կը վերստեղծէ: Ներողութիւն, ոչ թէ կը ստեղծէ. մեր սահմանափակ բառով թերքն է որ կը պարտադրէ բառին գործածութիւնը: Այլ՝ տիեզերական գեղեցիկութենէն մասնիկ մը մատչելի կը դարձնէ: Կրնայ սակիս գործին լոկ բովանդակութիւնը ըլլալ, կամ ձեւը երբեմն: Բայց աւելի յաճախ երկուքին ներդաշնակութիւնն է: Եւ ի վերջոյ՝ բովանդակութիւնը նիւթը չէ միայն, այլեւ ձեւը, որ ինքնին տիեզերական ճշմարտութեան մաս կը կազմէ: Այսինքն գոյութիւն ունի՝ զայն տեսնե՞ք կամ ոչ:

Գեղամ Տարօնեան անդրադարձաւ յանկարծ, թէ ասիկա բոլորովին տարբեր աշխարհ մըն էր, մինչ ինք հեռացած այս աշխարհէն, մոռցած էր պահ մը այս իրականութիւնը — սրճարանը, ազմկող Լորիտասարդները, պատերազմը, Հիլտան — եւ անճանատուր եղած իր միտքի թափառումներուն: Նայեցաւ դիմացը նստած սիրուն եւ անձանօթ աղջկան, որ նոյնպէս հեռացած էր ըստ երեւոյթին, եւ ամբողջ կացութիւնը տարօրինակ թուեցաւ իրեն: Կարելի՞ էր: Երկիրը

Ի՞նչ վիճակի մէջ, իսկ ինք... խելագարած էր արդեօք: Կրնա՞ր այսօր անտարբեր ըլլալ: Ինք, իր ճանչցած Գեղամը, կրնա՞ր այս նոյն անձը ըլլալ: Բայց թերեւս իր բուն անձը այս էր — անընկճելի, բայց նաեւ անտարբեր, անզգամ սա մարդը, որ ինքն էր: Սարսափելի էր: Որովհետեւ անզլիուհին մշուշոտ, դիտով աչքերով զինք կը դիտէր: Եւ որովհետեւ ինք կը զուարճանար հիմա, հաստատելով անոր տարուած կամ դիտուցած ըլլալը: Արդեօք դիտով էր, թէ պարզօրէն վերացած: Հարցուց:

— Խմածդ ի՞նչ էր:

— Ծին: Պէտք չէ ասկէ աւելի խմեմ, բայց շատ հաճելի է: Բնաւ չէի կրնար երեւակայել, որ այս քաղաքին եւ այս պայմաններուն մէջ նմանօրինակ զրոյց մը կրնայի ունենալ բոլորովին անծանօթ մարդու մը հետ: Զարմանալի է: Ինչպէ՞ս կ'ըլլայ որ ասկէ առաջ չեմ հանդիպած քեզի:

— Առաջին անգամն է որ հոս կու գամ, — ըսաւ Գեղամ եւ, ձեռքը բարձրացնելով, խմիչք ապսպրեց:

— Ինչո՞ւ անզլերէն չես դրեր, — Սանտրա Բալմըր ամբողջ իզականութիւնը խտացուց ձայնին մէջ. — կատարեալ, անթերի անզլերէն կը խօսիս:

— Որովհետեւ հայ դրող եմ:

— Այդքան պարզ: Սքանչելի է: Լման տարի մը եթէ մտածէի, այսքան պարզ եւ ճիշդ պատասխան մը պիտի չկարենայի գտնել:

— Եւ յետոյ՝ դրածս ո՞վ պիտի հրատարակէ: Արեւմուտքի մէջ գէթ վերջին տասը տարիներուն ըստը, իրաւ դրականութիւնը անտեսուած է, կ'անտեսուի: Պէտք չունին հաւանարար, կամ պահանջը չեն զգար, որ դարմանալի չէ: Ներկայ ընկերութիւնը այլ, բոլորովին նոր եւ նիւթապաշտ ըմբռնումներու ծնունդ է: Վաթսուներկան թուականներու երիտասարդական ընդվզումը նոյնիսկ ետակերտն պոսթիւմ էր. ինքզինք անիրաւուած նկատող բայց խորքին մէջ փճացած եւ անպատասխանատու սերունդի մը անձնասիրութեան արտայայտութիւնն էր: Եւ իրենք յանցաւոր չէին, որովհետեւ պայմանները փճացուցած էին զիրեւք — ճարտարարուեստական ընկերութիւն կոչուած նիւթապաշտ հրէշին ստեղծած պայմանները:

Սանտրա փորձեց կեդրոնանալ, մտածել, վերլուծել եւ հասկնալ ըսուածը, բայց հաճելի թմրութիւն մը յամառեցաւ ճօճել զինք ընդլայնող, ծաւալող միջոցի մը մէջ: Միջոց, որ սահմանելի չէր ու կը խուսափէր իրմէ, բայց որ ամէն վայրկեան քիչ մը աւելի իրական կը դառնար ու զինք կը տեղաւորէր յստակ եւ շօշափելի կէտի մը

վրայ եւ մարմին կու տար այս փորձառութեան, որ զղացական էր անպայման: Սա կոչու ու կոպիտ հայր, որ ինքնատիպ զաղափարներ կ'արտայայտէր, մէկ նախադասութեամբ ջրած էր վաթսուներկան շարժումը, որու հետեւորդներէն եղած էր ինք եւ իրեն նման բուրուր պատանիներ ամբողջ Եւրոպայի տարածքին: Գիտակցութեան նոր հասած պարմանուհի մըն էր այն ատեն — անփորձ, անմեղ եւ զաղափարապաշտ — ու հիմա, այս պահուն միայն կ'անդրադառնար, թէ ինք գէթ ընդվզելու պատճառ չունէր ու պարզօրէն քշուած էր հոսանքէն՝ լոկ միւսներուն, իր սերնդակիցներուն նմանելու նախանձախնդրութեամբ: Տեսակ մը դիտուութիւն էր, ճիշդ է, որմէ բարեբախտարար շուտ սթափած էր: Բայց սա տարօրինակ մարդը, որ միւս արեւելքցիներուն չէր նմաներ, ու կ'նամեծար ըլլալու ճիշդ չէր ընկեր երբեք... Ինչո՞ւ: Հետաքրքրական տիպար մըն էր յամենայն դէպս — անկախ, մտածող եւ տրամարանող հանելուկ մը, որ ինքզինք չէր խարեր եւ բառերը առանց ծամծմելու, իրականութիւնները կ'արտայայտէր այնպիսի պարզութեամբ մը, որ Սանտրա յայտնութիւններ ըրած ըլլալու գոհունակութիւնը կ'ապրէր: Իսկ ինք կը կարծէր, որ դրողներ ճանչցած էր ասկէ առաջ: Իսկական դրողը դիմացը նստող սա անպաճոյճ եւ գէղ մարդն էր հաւանարար:

Սպասեակը երբ խմիչքի բաժակները տեղաւորեց սեղանին վրայ, Սանտրա անօրինակ պապակով մը խմեց, ծամեց բարկ հեղուկը ու չյագեցաւ: Բայց պաղ, սառնորակ խմիչքը սթափեցուց զինք, եւ կըցաւ խօսիլ:

— Ի՞նչը քեզ այսքան ինքնախտահար կը դարձնէ:

— Ինքնախտահար: Կեանքը: Պարզ իրականութիւնները թերեւս, կամ իրականութիւնները ընդունելու վճռականութիւնս: Բնաւ չեմ կրցած ես զիս խարել:

— Երանելի մարդ ես:

— Օ՛, ո՛չ, — ծիծաղեցաւ Գեղամ. — աշխարհի ամենէն երջանիկ մարդոցմէ մէկն եմ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես: Կամ վրա՞ս կը խնդաս արդեօք: Հեղնանքը խառնուածքիդ հետ հաշտ չի կրնար ըլլալ:

— Մարդ հեղնելու սովորութիւն չունիմ. չեմ կրնար: Բայց ըսածս ճիշդ է: Ես զիս երջանիկ կը կնատեմ:

— Ինչպէ՞ս, — շփոթեցաւ անզլիուհին. — չեմ հասկնար:

— Շատ պարզ է: Ես զիս չեմ խարեր, եւ ուրեմն կեանքէն մասնաւոր, անկարելի ակնկալութիւններ չունիմ, որովհետեւ, իրապաշտ եմ նաեւ՝ նոյն պատճառով: Եւ անչուշտ միշտ ուզածս ըրած եմ, այ-

սինքն դրած եմ, եւ իմ նախընտրած, իմ հասկցած ձեռով դրակա-
նութիւն մշակած եմ: Դարձեալ առանց ակնկալութեան: Եւ բնական
է ես ինծի հետ հաշտ եղած եմ: Մարդ ասկէ աւելի ի՞նչ կրնայ ուզել:

— Դրամ, հաճոյք, կիրն, — ըսաւ Սանտրա եւ մտածեց թէ ի՞նչ-
չը իրեն ըսել տուաւ ասիկա:

— Վերջինէն սկսելով, — ժպիտը չկրցաւ զսպել Տարօնեան, —
կիրներու դէմ չեմ եղած երբեք: Հաճոյքներու տեսակները կան, եւ կը
խորհիմ որ իմ նախընտրած հաճոյքներս չեմ զլացած ես ինծի: Թէ՛
հոգեկան, եւ Ֆիդիքական: Իսկական, դերադոյն հաճոյքը, թէ եւ,
ինծի համար հոգեկանը եղած է միշտ: Իսկ դրամը կամ հարստու-
թիւնը զիս չէ հետաքրքրած մինչեւ այսօր: Նիւթին սէրը բնաւ չեմ
կրցած ըմբռնել:

— Պէտք է ըսել որ հարցերը շատ կը պարզացնեն: Կեանքի
հանդէպ այս կարգի վերաբերում մը քիչ մը անբնական կը թուի
ինծի: Ձե՞ս խորհիր: Կեանքը շատ աւելի հետաքրքրական է, խոր-
հուրդներով, զազտնիքներով լեցուն:

— Անպայման: Ես հակառակը չզննեցի: Բայց ասիկա չի
նշանակեր որ պէտք է իրականութիւնները իրենց պարզադոյն ձեւին
մէջ ընդունինք:

— Մտկայն կեանքը հետաքրքրական ըլլալէ կը դադրի այդ
կերպով: Այդ խորհուրդներուն վայելքէն կը զրկես դուն քեզ:

— Արդեօ՞ք: Կեանքը խորհուրդներով լեցուն է, այո՛, եւ
բարեբախտաբար: Որոհուրդները վայելել, իմ կարծիքովս, կեանքը
արուեստականօրէն խորհրդաւոր դարձնել չ'ենթադրեր:

— Աւելի հետաքրքրական կ'ըլլայ, — աղջիկը ըսաւ, լուրջ
դրոյց մը շարունակելու գոհունակութեամբ:

— Որոհուրդաւոր բաները չեմ սիրեր: Կը վախնամ:

— Վախնա՞լ: Իսկապէս միտքէ չանցած զազտութիւնը կ'ար-
տայայտես երբեմն: Այսքան ինքնապատահութիւն, եւ՝ վախ:

Գեղամ Տարօնեան տխրութեամբ զլուխը շարժեց, կամենալով
հաստատել անզլիւհիին ըսածը, մանաւանդ որ լրջօրէն մտահոգուե-
լու սկսած էր: Եթէ չէր վախնար իսկ այս պահուն, անպայմանօրէն
մտահոգ էր սակայն: Գիտէր, թէ այս զրոյցը ո՛ւր կրնար առաջնորդել
զիրենք, եւ եթէ ինքզինք կը ճանչնար, ինքնիրմէ պէտք է վախնար՝
նախ եւ առաջ: Որովհետեւ խօսակիցին մէջ կ'իներ տեսնելու սկսած
էր՝ քաջալերուած անոր ակնարկութիւններէն: Եւ չէր կրնար ներել
ինքնիրեն: Բայց աւելի՛ իր այս վիճակը, մարդկային ակարութիւնը
կամ շնութիւնը չէր կրնար ըմբռնել, կամ ընդունիլ թերեւս: Թէ եւ

քիչ առաջ այս խեղճ աղջկան՝ իրապաշտութեան եւ իրականութիւն-
ները ընդունելու առաւելութիւններուն մասին կը քարոզէր: Բայց
մարդ արարածը այսքան շուտ կրնայ մոռնալ: Կարելի՞ էր: Գեո
մինչեւ քանի մը ժամ առաջ Հիլտայի ողբերգութիւնը կը զիեցնէր,
մինչդեռ հիմա... ցանկութիւնը խլրտելու սկսած էր իր մէջ դար-
ձեալ: Հոգ չէ, թէ մարդիկ մեռնէին դուրսը: Յիշեց, թէ երկիրը
քաղաքացիական պատերազմի մը ծուլակին մէջ ինկած, զէպի կոր-
ծանում կը դիմէր: Իսկ ինք կէս զիշերէն ժամեր ետք կը յամենար
տակաւին զինետան մէջ, անձնատուր եղած օտար աղջկայ մը քմայք-
ներուն: Քմա՞յք: Աղջիկը դեր կամ յանցանք չունէր: Ինչ որ կը
պատահէր իր մէջ կը խմորուէր, ձեւ ու մարմին կը ստանար եւ կը
վերածուէր անբնական մտածումի, փորձութեան: Ենթադրածէն շատ
աւելի առողջ էր ուրեմն, այսինքն անողամ: Փաստ որ Ալիսը նոյն-
իսկ չէր յիշեր, ու կը սրբապղծէր անոր մաքուր, անմեղ սէրը:
Շուրջ երկու ամիսէ ի վեր չէր տեսած զինք, ու հակառակ անոր որ
յաճախ կը հեռաձայնէր ան, չէր մտածեր անոր մասին, կը մոռ-
նար, կ'անտեսէր:

— Բաւական ուչ է, — խօսեցաւ երկարատեւ լռութենէ մը
ետք: — Ես պէտք է շարժիմ: Կրնա՞մ քեզ տուն հասցնել:

— Ծնորհակալ կ'ըլլամ: Հոս, մօտակայ թաղի մը մէջ կը
բնակիմ: Առանձին պիտի չուզէի դուրս ելլել այս ուշ ժամուն:

Գեղամ հաշիւը փակեց, մինչ Սանտրա Բալմըր սրտատրոփ
սպասեց, եւ յետոյ միասին քալեցին զէպի դուրս: Կարօն անհետա-
ցած էր, ու դարձանալիօրէն երկուքն ալ դոհ մնացին այդ զուգարի-
պութենէն:

— Բաժակ մը առնելու տրամադրութիւն ունի՞ս, անզլիւհի
հարցուց, երբ կանգ առին սան առջեւ:

— Եթէ դուն տրամադրութիւն ունիս...:

— Բարձրանանք ուրեմն:

Հազիւ դուռը փակած, Սանտրա սեղմեց զինք հուժկու բազուկ-
ներուն մէջ, ճգմեց, ու զրեթէ զրկելով առաջնորդեց զինք ներս: Գե-
ղամ նոր միայն անդրադարձաւ, որ աղջիկը իրմէ աւելի հասակաւոր
էր, եւ աւելի ուժեղ:

Ը.

Երեխաները նոյնիսկ անբնականօրէն տխուր էին: Սեղա Առա-
քելեան ճամբորդութեան պայտուակները պատրաստած էր արդէն ու

կը սպասէր մեկնումի թուականին: Քանի մը անգամ յետաձգած էին իրենց մեկնումը՝ զանազան պատրուակներով, թէեւ ինք զիտէր, թէ իրականութեան մէջ ժաղի վճռականութիւնը խախտած էր, կամ կորսնցուցած էր նախկին ինքնավստահութիւնը: Ամիսներ առաջ առած էին իրենց վերջնական որոշումը, խորհրդակցելէ, սերտելէ եւ ծրագրելէ ետք, բայց երբ բոլոր գործողութիւններն ու ձեւակերպութիւնները աւարտած էին եւ ստացած Միացեալ Նահանգներ ներգաղթելու վիզաները, ժաղ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով թերեւս, երկրնորանքի եւ անորոշութեան պահեր սկսած էր ապրիլ: Ինք աւելի լաւ վիճակի մէջ չէր յամենայն դէպս, որովհետեւ ժամանակին Գերմանիա ապրած էր, եւ Արեւմուտքը մասնաւոր հմայք մը չունէր իրեն համար: Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մասին լաւ եւ վատ բազմաթիւ պատմութիւններ լսած էր, բայց հոն չէր գտնուած երբեք, եւ ուրեմն՝ յստակ գաղափար մը չէր կրնար կազմել: Եւ այդ իսկ պատճառով ինք մտավախութեան մէջ էր նոյնիսկ, մինչդեռ ամուսինը անորոշութեան մատնուած էր պարզօրէն: Եւ տան կարգն ու կանոնը խախտած էր բնականաբար: Գոյութեան առժամեայ, առկախ դրութիւն մըն էր: Ճաշերն իսկ կանոնաւորաբար չէր պատրաստեր, եւ այսպէս՝ կը քաջջուէին անիրական թուող կացութեան մը մէջ: Ամենէն դժուարը երեխաները զսպելն էր նմանօրինակ պայմաններու մէջ, որովհետեւ անոնք եւս կը զգային, թէ բնական վիճակ մը չէր ասիկա, եւ տիրող անկանոնութենէն օգտուելով, իրենց յատուկ անիշխանութիւն մը հաստատած էին տան մէջ:

Ո՞ր կ'երթային, եւ ինչո՞ւ: Ամերիկան ի՞նչ էր, ի՞նչի կը նմանէր: Աշխարհի ամենէն հարուստ երկիրը, անշուշտ, ուր կրնային սեպհական ինքնաշարժ ունենալ, հանգիստ եւ ապահով կեանք մը ապրիլ, եւ հարստանալ թերեւս: Բայց անձանօթ միջավայրի մը մէջ ինչպէ՞ս պիտի գասաւորէին իրենց կեանքը — երկրի լեզուն նոյնիսկ չէր զխտեր: Գարոցի մէջ սորված անգլերէնը վաղուց մոռցած էր, թէեւ աւելի մտահոգուած էր երեխաներով: Հայաստանէն, Արեւմտի, ուր արաբերէն լեզուն հազիւ սորվելու սկսած, հիմա ստիպուած էին անգլերէնի փոխել իրենց լեզուն: Եւ այս կերպով վերջնականապէս պիտի կորսնցնէին արաբերէնը, եւ թերեւս նոյնիսկ՝ հայերէնը: Երկիրը այս վիճակին մէջ չըլլար, ժաղ հաւանաբար պիտի չմտածէր հեռանալու մասին, նկատելով որ պաշտօնէն եւ կեանքէն ընդհանրապէս գոհ էր: Տունը լաւապէս կահաւորած էր, եւ խնայելու ճիւղ չէր բրած բնաւ: Շոտլանդի ծախսած էր ու մեծ գոհունակութեամբ վաճառած էր սեպհական տունը կամ բոյնը շինելու հաճոյքը: Երեխայի մը

պէս կ'ուրախանար, կը խանդավառուէր, ամենայնպէս մանրամասնութիւններով իսկ կը հետաքրքրուէր երբեմն, ու լուսթեան մէջ կը վայելէր յետոյ:

Մարզիտեաններուն վաճառատունը փճացած չըլլար, կամ զէթ խաղաղութիւնը վերահաստատուէր, այս որոշումին յանգամ պիտի չըլլային: Ամիսներ անցած էին, եւ թէեւ համեմատաբար երկիրը աւելի խաղաղ էր ներկայիս, Յունուարի կիսուն, սակայն մթնոլորտը կը մնար լարուած եւ յաճախակի բախումներ տեղի կ'ունենային: Նիւթապէս ապահով էին տակաւին, նկատելով որ Արամ Սարգիսեան կը շարունակէր բոլոր պաշտօնեաններուն ամսաթոշակները կանոնաւորաբար վճարել՝ հակառակ անոր որ վաճառատունը գոյութիւն չունէր այլեւս: Այս չէր կրնար երկար տեւել անշուշտ եւ մօտ օրէն իրենց եկամուտի աղբիւրը պիտի ցամքէր. իսկ տուեալ պայմաններուն մէջ նոր պաշտօնի մը մասին մտածելն իսկ միամիտ լուսատեսութիւն պիտի ենթադրէր: Բայց կեանքը կը շարունակուէր, եւ ընտանիքը պէտք է ապրէր: Ինչպէ՞ս: Ժաղի հպարտութիւնը շփի եւ սահման չէր ճանչնար, եւ անկարելի է որ յօժարէր այսպէս աղբուկի կեանք վարել, ինչպէս կը կոչէր իրենց կեցութեան ներկայ եղանակը:

— Ընթրիքը պատճառ է, — ժաղ մտաւ խոհանոց, ուր կինը ինքզինք մոռցած, աւելի կը խոկար, քան ճաշ կը պատրաստէր: — Ի՞նչ է, տեղքայի մէջ՞ կնք:

— Վերջերս պղտիկներէն աւելի անհամբեր եւ շատակեր դարձած ես:

— Այս օրերուն լաւագոյն գրադումն է: Երբ ոչ գործ ունիս, ոչ գրադում, ուրիշ ինչի՞ մասին կրնաս մտածել: Մինչ այդ ամէն մարդ անօթի է:

- Քանի այդպէս է, Ալիսը ինծի զրկէ:
- Ի՞նչ է պատրաստածդ, — հետաքրքրուեցաւ ամուսինը:
- Գործիդ կ'երթա՞ս, թէ... — սպտանաց Սեղա:
- Գործ չունիմ:
- Հիւրերը գրաղեցո՞ւր:
- Հի՞ւր: Ո՞վ է հիւրը. քո՞յրդ, թէ մայրդ: Կամ թերեւս երեխաները: Անոնք գրադում մը դտած են հիմա: Մուշեղը:
- Քիչ առաջ եկողը ի՞նքն էր:
- Այս ժամուն ուրիշ ո՞վ կրնայ գալ:
- Խեղճին վիճակը ի՞նչ պիտի ըլլայ մեր մեկնելէն ետք, — կինը բարձրաձայն խորհրդածեց:
- Հոգ մի ընէր: Այնպիսի հետաքրքրութիւններ ունի որ:

— Առանց քեզի ի՛նչ պիտի ընէ, ո՛ւր պիտի երթայ :

— Ուրիշ մը կը գտնէ, կամ՝ տարբեր գրադում մը :

— Ըսել կ'ուզես, թէ քեզ կը սիրէ, որովհետեւ զինք կը գրադոցրնե՞ս :

— Յայտնի եղաւ, — ժազ տնտնաց խոհանոցին մէջ. — նախանձեղու սկսած ես :

— Դուրս ելի՛ր :

Առաքելեան զէմքի ծամածուծութիւններ կեղծելով նահանջեց, թէեւ պիտի նախընտրէր խոհանոց մնալ եւ շաղակրատել : Չանձրանալու սկսած էր. ոչ թէ այս պահուն կամ այսօր միայն, այլ ընդհանրապէս : Քանի մը օրէն կը մեկնէին, ճիշդ է, եւ կեանքին այս էջն ալ կը փակուէր, ու քանի մը ամիս զէթ յարատեւ փոփոխութիւն կրնար ակնկալել : Նոր երկիր, նոր միջավայր, նախկին ծանօթներ եւ բարեկամներ, որոնք տարիներ առաջ Ամերիկա հաստատուած էին արդէն, ու վերջապէս՝ վազվզուք, աշխատանք եւ նոր կեանք մը : Մինչ այդ կը ձանձրանար սակայն, կամ թերեւս, կը տազնապէս : Կը վախնա՞ր : Հայաստան ներգաղթած ատեն այս տեսակ տազնապէս արարած : Ութը տարի առաջ էր ատիկա, իսկ հիմա, 1976-ի Յունուարին, կանխահասօրէն ծերացած էր հաւանաբար :

— Սեղան քեզ կ'ուզէ, — ըսաւ քենիին, երբ հիւրասենեակ մտաւ եւ յիշեց կնկան հրահանգը : — Մտողքէդ նոր լուր մը ունի՞ս, — հարցուց յետոյ Մուշեղին, որ Գեղամ Տարօնեանի զերբերէն մէկը դատած, կը թղթատէր գայն :

— Չեմ դիտեր : Երկու շաբաթ կ'ընէ որ միւս կողմ չեմ անցած, եւ անցնիմ ալ ի՛նչ իմաստ ունի : Նամակները քու հասցէիդ պիտի զրկէին. այդպէս համաձայնեցանք : Այնպէս որ... :

— Ամիսներէ ի վեր նամակարերը չեմ տեսած, — իր նախասիրած բազկաթոռին մէջ տեղաւորուեցաւ ժազ : — Մէկ ամիս եղա՞ւ երթալնուն :

— Ճիշդ երեք շաբաթ : Մէկ անգամ միայն հեռաձայնեցին, մեկնելէն քանի մը օր ետք, երբ տակաւին տունն էի : Լուր ունիս արդէն :

— Այո՛ : Ի՛նչ դիտես, թէ ատկէ ետք քանի՞ անգամ հեռաձայնեցին. տունը չեմ, որ իմանաս : Իրենք ալ տունը քեզի վստահեցան :

— Քանի մը օր հագիւ գիմացայ, — Մուշեղ զանգատեցաւ յանցաւոր թոնով մը : — Առանձնութիւնը տարիներու երազս էր. կը խորհէի որ կրնամ կեղրոնանալ, աշխատիլ եւ խաղաղութեան մէջ

կարդալ, սերտել : Ճիշդ հակառակ արդիւնքը տուաւ. ուղղակի ջղախին էի, անհանգիստ, դժգոհ :

— Ներկայ պայմաններուն մէջ զարմանալի չէ : Բայց տունը այդպէս պարտալ ձգելը որքա՞ն ճիշդ է : Լուր ունիս անշուշտ, որ տունը կը կողոպտուին, մանաւանդ երբ նկատեն որ բնակուած չեն :

— Ձեր մեկնելէն ետք կարծեմ կամայ, թէ ակամայ միւս կողմ պիտի անցնիմ արդէն : Թէեւ անտանելի պիտի ըլլայ, բայց ի՛նչ կրնամ ընել :

— Գեղամը կրնայ քեզի օգտակար ըլլալ : Վստահ եմ՝ ինքն ալ առանձին կը գլայ :

— Բայց իրեն մօտ չեմ եղած երբեք, ու չեմ ուզեր զինք խանդարել : Ի վերջոյ գրադած մարդ է. իր գործը ունի, գրական աշխատանքները... չեմ ուզեր արգելք ըլլալ :

— Շատ խոնարհ եւ հաճելի մարդ է, ու կրնայ շատ լաւ բարեկամ ըլլալ : Քեզմէ ալ կ'ախորժի, գիտե՛մ :

— Գրականութեան ծանօթ ես, — հետաքրքրուեցաւ Մուշեղ մանկական խանդավառութեամբ մը :

— Մասնաւոր կերպով գրականութեամբ չեմ հետաքրքրուած. իսկ հայ գրականութեան մասին բնաւ զաղափար չունիմ, թէեւ Հայաստան եղած շրջանին սկսած էի կարդալ :

— Բայց իր բոլոր գործերը ունիս հոս :

— Ատոնք Ալիսին կը պատկանին : Իրեն ծանօթանալէ ետք ուզեցի զաղափար մը կազմել, եւ ատոր համար ալ բերել տուի : Կարգալու սկսայ... անկեղծօրէն իմ գլուխէս վեր է քիչ մը : Պէտք է խոստովանիմ որ զարմացայ. ես չէի կարծեր որ այսքան լուրջ գրականութիւն ունինք, ատ ալ ճիշդ մեր քեթիին տակ :

— Ինձի համար ալ յայտնութիւն եղաւ : Անունը ծանօթ էր անշուշտ, ու թեր ու զէմ շատ բան լսած էի իր մասին : Հոս իրեն հանդիպելէս ետք ատ ի հետաքրքրութիւն զերբերէն քանի մը հատը կարգացի... աւելի իր ազգային եւ հրապարակագրական յօդուածներուն հետեւած էի վերջին տարիներուն, իսկ գրականութեան մասին զաղափար չունէի : Ուղղակի ցնցում ունեցայ : Նոյն մտածումները, նոյն համոզումները, խորութիւնը, ինքնատուրութիւնը, ու մանաւանդ՝ անկեղծութիւնը : Կը զգաս որ մարդը բարկացած է եւ ըսելիք ունի, եւ իր ուզած ձեւով կ'ըսէ՝ առանց ասոր կամ ատոր հաշիւ ներկայացնելու : Որո՞վհետեւ համոզումով կը զրէ, այնքան ինքնավստահ է որ՝ ինքնիրեն իսկ տուրք չի տար, կ'անտեսէ բոլոր նկատումները, եւ բնականաբար ճշմարտութիւնը միայն կ'արձանագրէ :

Որ եղալի երեւոյթ է: Քաջութիւն կը պահանջէ. առնուազն բարոյ-
յական քաջութիւն: Մարդը բարկացած է, այնքան սքանչելի կեր-
պով բարկացած, որ փափկանկատ չի կրնար ըլլալ՝ ոչ հանրային
գիւրազգածութեան կամ կեղծիքին, եւ ոչ ալ ինքնիրեն նկատմամբ:
Եւ կամ խենթ է: Մեր ներկայ իրականութիւնը կնատի առած, այս
տեսակ զրականութիւն մշակելու համար մարդ խենթ պէտք է ըլլայ:

— Հետաքրքրական է, — ըսաւ ժազ: — Յայտնի է որ շատ
պարկեշտ եւ ինքնավստահ մարդ է. ուղղամիտ, յանկեղծ, եւ պէտք
եղածէն աւելի խոնարհ թերեւս: Խենթութիւնը, չե՛մ գիտեր, —
խորհրդաւոր կերպով ժպտեցաւ. — ըսել կ'ուզես, թէ քեզի՞ կը նմանի:

— Երանի ես իր կէս խենթութիւնը կամ քաջութիւնը ունենա-
յի: Անորը սրբազան խենթութիւն է:

— Իրարու լեզուէն պէտք է հասկնաք ուրեմն: Հիմա կ'ըմբռո-
նեմ, թէ ինչու այդքան համակրեցաւ քեզի: Միայն Շուշանիկը քեզ
չի սիրեր. ի՞նչ է դադտնիքը:

— Սիրելը՝ կը սիրէ, — Մուշեղ խօսեցաւ անվրդով, գրեթէ
անտարբեր արտայայտութիւն մը դէմքին: — Գադտնիք մը պէտք է
ունենայ, ճիշդ է, պատճառ մը, բայց ես ալ չեմ հասկնար:

— Զինք տեսած ունի՞ս:

— Երբեմն: Հայրը շատ չոր մարդ է: Հակառակ ատոր կը հան-
դիպիմ իրենց: Երբ ուզեմ, կրնամ աներես ըլլալ, եւ շատ ալ հոգ չեմ
ըներ:

Առաքելեան կուշտ ու կուռ, բարձրաձայն խնդաց ու խանդա-
ղատանքով նայեցաւ սա տղուն, որ այնքա՞ն պարզ էր, բայց նաեւ՝
գործնական:

— Զյուսահատեցա՞ր դեռ, — հարցուց յետոյ:

— Որեւէ ատեն յոյս չէր տուած, որ յուսահատիմ, — երիտա-
սարդը ինք եւս խնդաց:

— Մինչեւ ե՞րբ այսպէս անորոշութեան մէջ պիտի մնաս: Այս
ի՞նչ տեսակ սիրահարութիւն է:

— Ձեմ սիրահարուած: Առաջին աղջիկն է ինձի համար, եւ
վերջինը հաւանաբար: Զինք իսկապէս կը սիրեմ, հոգ չէ թէ ինք
չկարենայ ըմբռնել իմ սիրելու եղանակս: Իրեն համար չնաշխարհիկ
արարած մըն եմ ես, գիտե՛մ: Եւ ատոր համար ալ կատակ կը թուի
իրեն, տեսակ մը հետաքրքրական փորձառութիւն:

— Եւ դուն ընդունած ես այս բոլորը, եւ չես վշտանար, չես
վերաւորուիր:

— Բայց անմեղ է, — իկստպէս դարձացաւ Մուշեղ. — ինչո՞ւ

պիտի վշտանամ: Ինք ի՞նչ յանցանք ունի:

— Դուն քե՛զ յանցաւոր կը կնատես ուրեմն:

— Ո՛չ, յանցաւոր ըլլալու հարց չկայ: Ձեմ ակնկալեր որ իրեն
պէս աղջիկ մը սէրս հասկնայ: Իրեն համար նորութիւն է: Այսօրուան
աղջիկներու ըմբռնումով եւ փորձառութեամբ այս տեսակ բան չի
պատահիր:

— Ուրեմն գիտես, կ'ընդունիս:

Մուշեղ չպատասխանեց: Իրականութեան մէջ հարցը զինք չէր
հետաքրքրեր իսկ այլեւս: Շուշանիկը կը սիրէր, այո՛, կը սիրէր, բայց
ի՞նչ իմաստ ունէր, երբ երկիրը այս վիճակին մէջ էր, ու Հայութիւ-
նը՝ բաժան-բաժան եւ անպաշտպան: Եթէ ժազը նոյնիսկ Ամերիկա
կը մեկնէր... ի՞նչ կարելի էր յուսալ այս ժողովուրդէն: Գուսան Սեղ-
րակի ձայնը, մինչ այդ, թախանձազին կ'աղերսէր, կը յիշեցնէր, թէ՛

...նա նեպից հանեց ատրնամակը,

Զուր տեղը տուեց ցահել հասակը:

Բոլոր հայ տուներէն ներս մտած էր ան, ու կ'երգէր, կ'ուրա-
խացնէր, կը խրախուսէր երբեմն, բայց կ'ընդվզէր յաճախ, եւ ան-
պայմանօրէն կը յուզէր, կը զինովցնէր՝ իր վարակիչ եւ անտաշ եր-
գով: Հայ տուներու մնայուն բնակիչը դարձած էր, ու կը խօսէր ե՛ւ
կրտսերին, եւ երէցին՝ մետասաներորդ ժամուն յայտնուած մարդա-
րէի մը պէս, ու մարդարէի մը միամտութեամբ: Ոչ ոք կը հասկնար
զինք սակայն, ինչպէս պատահած էր միշտ՝ բոլոր մարդարէներու պա-
րագային: Անհեթեթ, անկարելի կացութիւն էր: Անըմբռնելի: Կը
յուզուէին, կ'երգէին ու կը տատապէին, բայց ճիգ իսկ չէին ըներ ե-
պերելի այս վիճակէն դուրս գալու համար:

Բոլորը առանց բացառութեան մոլեռանդ հայեր էին, եւ իւրա-
քանչիւրը իր կերպով կը ճառէր հայրենասիրութեան մասին, կ'ընդ-
վզէր, կը դատապարտէր եւ հաշիւ կը պահանջէր միւս բոլոր հայերէն
եւ աշխարհէն ընդհանրապէս: Եւ այսքանով բաւարարուած, հաւա-
տաքննական անզիջողութեամբ կը հարցաքննէին իրարու հայրենասի-
րութիւնը եւ կը խօսէին զիրար՝ մտնալով էականը: Բուն իսկ հո-
ղը, երկիրը, եւ անոր վերատիրանալու անհրաժեշտութիւնը: Երբ այս-
պէս խօսէր Շուշանիկ, օրինակի համար, գրեթէ ապշահար, կը նայէր
իրեն ու յետոյ ակներեւ ձանձրոյթով, կը յորդորէր զինք, կը խրա-
տէր, ու կը թեւադրէր աւելի գործնական ըլլալ: Մինչդեռ իր կարծի-
քով Հայութիւնը վաղուց գործնական եւ իրապաշտ ըլլալէ դադրած
էր: Իրապաշտութիւնը կամ գործնական ըլլալը կը շփոթէին անձնա-

կան յաջողութեան հետ, եւ ինքնագոհ կեանք մը կը վարէին, ու կը խղճային այլ ժողովուրդներու, որոնք իրապաշտ չէին՝ ըստ իրենց: Նոյնիսկ Շուշանիկը: Տարբեր աշխարհի մը մէջ կ'սպրէր: Ազգային կամ կուսակցական դաստիարակութիւն ստացած, կրնար ժամերով վիճել Հայոց վերջին շրջանի պատմութեան եւ ազգապահպանումի մասին ու պաշտպանել հայկական դատի հետապնդումը: Բայց երբ խօսէր անոր խօսքը գործի վերածելու մասին, ներողամտաբար կը ժլուտէր ու կ'ըսէր, թէ շատ միամիտ էր:

— Ասկէ շարք մը ետք Ամերիկա կ'ըլլաք արդէն, — անզգալարար խօսեցաւ քիչ ետք:

Ժազ հարցական նայեցաւ երիտասարդ խօսակիցին, փորձելով կարգաւ անոր մտածումները: Բացայայտ էր որ այլ ոլորտի մէջ էր դարձեալ, եւ բոլորովին տարբեր մտորումներու անձնատուր:

— Այո՛, բայց ես ալ չեմ հաւատար: Խենթութիւն չէ՞. այս տարիքէս ետք ի՛նչ պիտի կարենամ ընել, սկսիլ օտար երկրի մը մէջ:

— Ամերիկայի մէջ անգործ չես մնար, ոչ մէկ կասկած այդ մասին. սակայն հարցը ատիկա չէ: Քեզի պէս անձ մը փնտտածը Հայաստանի մէջ չգտնելէ ետք, Ամերիկայի մէջ ընա՛ւ չի կրնար սպրիլ:

— Ի՛նչ դիտես, թէ բան մը կը փնտտեմ:

— Դո՞ւն: Քեզ չե՞մ ճանչնար:

— Ձեմ գիտեր, — լռելեան խոստովանեցաւ ժազ. — կը նախընտրեմ չմտածել այդ մասին: Եղածը եղած է: Առայժմ դէժ հոս ընելիք չունիմ, եւ ուրեմն այս ժամանակը կրնամ փորձ մը ընելու տրամադրել:

— Փո՞րձ: Ամբողջ ընտանիքով Միացեալ Նահանգներ փոխադրուելը փո՞րձ կը կոչես:

— Ի՛նչ կայ որ, — Առաքելեան ժպտելու ձախաւեր ճիգ մը ըրաւ. — հայր վարժուած է: Ներկայի Հայոց պատմութիւնը այս է: Ամէն օր տեղ մը:

— Ողբերգութիւնը այդ է արդէն:

— Դո՞ւն ի՛նչ պիտի ընես:

— Ես... հոս եմ: Կեանքս իմաստ մը ունի հոս, եւ գոհ եմ:

Կրնամ ծառայել, օգտակար ըլլալ:

— Էջմիածինէն լուր չկա՞յ:

— Ատիկա փակուած հարց է: Ժամանակին եթէ ըլլար, նշանակութիւն կ'ունենար. հիմա ուշ է արդէն:

— Ինչո՞ւ: Ի՛նչ փոխուեցաւ:

Մուշեղ ուղեց արտայայտուել, սարգել իր մտահոգութիւնները,

ըր, նպատակը, բայց չհամարձակեցաւ: Պիտի չհասկնար զինք եւ կենթադրէր, որ իր անտեղի խանդավառութիւններէն մէկն էր դարձեալ: Եւ իրաւունք չունէր յամենայն դէպս. խօսելու, արտայայտուելու իրաւունք չունէր: Մատնութիւն պիտի ըլլար, կամ դէժ մեծամըտութիւն:

— Թէ՛ վերջնականապէս որոշած ես ամուսնանալ, — կատակեց Առաքելեան, — եւ Շուշանիկի պատասխանին կը սպասես: Ինչո՞ւ պաշտօնապէս ձեռքը չես խնդրեր, — լրջացաւ յետոյ:

— Իմաստ չունի:

— Ի՞նչ տեսակ խօսք է ատիկա: Իսկապէս դարմանալի տղայ ես. դուն ալ չես գիտեր, թէ ի՛նչ կ'ուզես:

— Ամուսնանալու իրաւունք չունիմ:

— Դո՞ւն որոշեցիր, թէ ուրիշ մը առաւ այս որոշումը քեզի համար:

— Ընթրիքը պատրաստ է, — Ալիսի չքեղ հասակը յայտնուեցաւ հիրասենեակի մուտքին. — կրնաք ճաշարան անցնիլ: Խմիչք կ'ուզէ՞ք, — հարցուց խոհանոց վերադառնալէ առաջ:

— Անչո՛ւշա, — պատասխանեց ժազ եւ դարձաւ Մուշեղին. — այսօր բաժակ մը պէտք է առնես:

— Ինչպէս որ կ'ուզես: Եթէ գինովնամ, պատասխանատուն դուն ես, — ժպտեցաւ երիտասարդը: — Թէեւ՝ գինովնամ դէլ չ'ըլլար:

— Պատճա՞ռ:

Մուշեղ չկրցաւ պատասխանել դարձեալ եւ նախընտրեց լռել: Ճաշասենեակին մէջ Տիկ. Առաքելեան, մայրն ու երեխաները իրենց կը սպասէին: Ժազ հանդիսաւոր կերպով բաժակները լեցուց, քննեց շուրջը պահ մը ինքնամոռաց վիճակի մէջ, ու տակաւին ոտքի, բաժակը բարձրացուց եւ ըսաւ:

— Բարի եկած էք:

— Ես ալ կարծեցի որ բաժակաճառ պիտի խօսիս, — Սեղա, չարձձի արտայայտութիւն մը դէմքին, յաջողեցաւ աչքերը կկոցել միայն:

— Բաժակաճառը դո՞ւն պիտի խօսիս հիմա, — ամուսինը սպառնաց ու դրակեց իրեն վերապահուած աթոռը: — Ձեր կենաց:

— Եթէ դուն խօսիս, ես ալ կը խօսիմ: Կը խոստանամ:

Անակնկալ հրացանաձուլութիւնը, որ խլացուցիչ ազմուկով մը արձագանգեց տան մէջ, սրղողած արտայայտութիւններ նկարեց ներկաներու դէմքերուն վրայ, եւ լռութեան մատնեց զանոնք:

— Համ-հոտ պիտի չտան, — տանտէրը լռութիւնը խզեց քիչ

ևտք: — Ծիշդ սակէ ազատելու համար կ'արժէ հեռանալ այս երկրէն:

— Գացողը կը փրկուի, — ըսաւ աները, որ Թամարը կերակրելով զբազան էր: — Մեր վիճակը ինչ պիտի ըլլայ՝ Աստուած զիտէ:

— Գուք ալ կու գաք, — Ժազ փորձեց ապահովութիւն ներշնչել աներոջը: — Մենք հաստատուինք, յետոյ զիւրին է: Մէկ տարի չի տեւեր, ձեր թողթերն ալ կը վերջանան: Առաջուան պէս տարիներ սպասելու պէտք չկայ: Վերջերս Ամերիկեան կառավարութիւնը շատ թոյլատու եղած է, մանաւանդ հայերու նկատմամբ:

— Հա՛, մինչ այդ մեր հոգին եթէ չելլէ:

Առաքելեան յանցաւոր զգաց դարձեալ եւ ուզեց մխիթարական որեւէ խօսք արտայայտել, բայց անճրկեցաւ: Շարաթներէ ի վեր իր զլխաւոր մտահոգութիւններէն մէկն ալ այս եղած էր, նկատելով որ Տիկ. Օհանեան անըմբռնելի տաղնապի մը մատնուած էր: Թէեւ հասկնալի էր եւ անխուսափելի անոր հոգեկան այս վիճակը, որովհետեւ ամուսնոյն մահէն ետք անապահով զգացած էր միշտ եւ ինքզինք բեռ մը նկատած: Ալիսի ամուսնալուծումը, բնականսրար, աւելի եւս բարդացուցած էր երկուքին ալ կեանքը, ու որքան ալ Ժազ փորձած էր հարազատ տան մթնոլորտ մը ստեղծել բոլորին համար, Ամերիկա հաստատուելու իրենց որոշումը բոլորովին յուսալքած էր խեղճ կիներ: Եւ ինք կ'անդրադառնար անշուշտ, թէ ներկայ պայմաններուն մէջ անոնց նիւթական ապահովութիւնն իսկ վտանգուած էր: Ալիսի ուսուցչական համեստ ամսաթոշակը չէր կրնար զիրենք ապրեցնել, եթէ նոյնիսկ զարօցները վերաբացուէին եւ Ալիս ամսականները ստանալու սկսէր դարձեալ:

— Ինչո՞ւ հոգիներս պիտի ելլէ, — ուսուցչուհին, որ այդ պահուն մտած էր ճաշասենեակ, յատարարեց վիրաւորուած արժանապատուութեամբ: — Ամէն մարդ ինչպէս որ կ'ապրի, մենք ալ կ'ապրինք: Եթէ կ'ուզես դուն ալ Ամերիկա երթալ, ազատ ես:

— Գո՞ւն ինչ պիտի ընես, — սաստեց մայրը: — առանձին եւ անտէր կին մը: Այս պիտի կներուն վիճակը ինչ պիտի ըլլայ: Ատիկա միտքէդ վերցուր. վերջաւորութեան ուր որ ալ ապրինք, միասին պիտի ըլլանք:

— Պզտիկները անօթի չեն մնար, հոգ մի ըներ: Եւ ամէն մարդ ազատ է:

— Գուն ալ այդպէս կարծէ:

— Երբ Ժամանակը դայ կը մտածենք, — միջամտեց Ժազ: — հիմակուրնէ վիճելու պէտք չունիք: Մինչ այդ դուն ալ բաժակդ լեցուր

եւ նստէ՛ նայինք: Ներողութիւն, ես պէտք է սպասարկեմ այսօր: Ի՞նչ պիտի խմե՞ս: Օղի՞: Օ՞, հարցը լուրջ է այսօր:

Բաժակ մը պատրաստեց, մանաւոր հողածութեամբ ուշադրութիւն դարձնելով ջուրի եւ սառի համեմատութեան, եւ փոխանցեց զայն քննիին, որ առ ի շնորհակալութիւն ըսաւ:

— Զեւզէի:

— Շատ աղնիւ ես, կենացդ: Այդ տունն ալ կը ձգէք եւ հոս կը փոխադրուիք: Օղասուն եւ ընդարձակ տուն է, վարձն ալ՝ յարմար: Մինչեւ որ... Մուշե՛ղ, բաժակդ պարսպ է. սքանչելի: Իսկապէս հարցը լուրջ է այսօր: Շատ զինովի երես չունիս. վրաս կը խնդաս, հա՞:

— Զարմանալիօրէն խմելու տրամադրութիւն ունիմ այսօր:

— Յայտնի է: Ամէն մարդ խմելու տրամադրութիւն ունի:

— Այս ընթացքով դուն պիտի զինովնաս կարծեմ, — աղնարկեց Սեղա:

— Լաւ կ'ըլլայ որ զինովնանք: Ո՞վ զիտէ անգամն մըն ալ երբ այսպէս, այս տեսակ առիթ պիտի ունենանք:

— Մարդը իսկապէս հասունցեր է, — անբացատրելի կերպով գոհ եւ ուրախ, յայտարարեց կիներ:

— Մի սկսիր, կնի՛կ, թէ ոչ ձեռքէս չես ազատիր այսօր, եւ վերջաւորութեան դուն կը զինովնաս:

Մուշեղ Սարգիսեան շնախատեսուած ախորժակով շարունակեց խմել, ինքզինք զարմացնելով առաւելարար: Ոմիչքի բարերար ազդեցութիւնը այս էր ուրեմն, մտածեց, անջատուած արդէն շրջապատէն: Բարերա՞ր, հարցաքննեց ինքզինք յետոյ եւ ախամայ ժպտեցաւ: Վարժութիւնները այսպէ՞ս կը կազմուէին: Ամէն ինչ հաճելի կը թուէր, եւ ներկաները բոլոր՝ իրեն հարազատ, սիրելի մարդիկ: Արտա-կարգօրէն ուրախ էր, զրեթէ երջանիկ, ու հիմա վստահ էր, թէ չէր սխալած եւ իր ընտրած ուղին միակն էր իրեն համար: Վերջնական նը-պատակը, որ զինք կը կապէր, կը սերտացնէր այս եւ միւս բոլոր հայ ընտանիքներուն: Կեանքին իմաստ կու տար եւ կը զանազանէր զինք այլ մարդոցմէ: Ու հպարտ կը զգար. ինք, որ հպարտ չէր եղած երբեք: Այնքան մը, որ կը յուզուէր հիմա ու կը զգար, թէ կրնար լալ ուրախութենէն:

Հայութեան մանրանկարն էր այս ընտանիքը: Իր մթնոլորտով, սէրերով, մտահոգութիւններով, բաժանումներով, անորոշութեամբ եւ աղնակալութիւններով: Ընտանիք մը, սիրոյ բոյն մը, որ քայքայուելու դատապարտուած էր՝ ժամանակի ընթացքին: Մաս մը հոս, մաս մը Ամերիկայի կամ այլ երկիրներու մէջ — իրարմէ հեռու, բա-

ժան-բաժան, կտոր-կտոր, եւ առանձնութեան մէջ: Իրենց ընտանիքը լաւազոյն օրինակն էր. քոյրերէն իւրաքանչիւրը երկրի մը մէջ, ծնողքը՝ պարտադիր դրօսաշրջիկներ դարձած յառաջացած այս տարիքին: Երբեմնի չէն, կենսութեան եւ կենդանի տունը պարպուած էր՝ ե՛ւ բնակիչներէն, ե՛ւ կենդանութենէն: Ահաւոր տխրութիւն մը կը տիրէր հոն, ու պատերը նոյնիսկ կը դռռային, կ'արձագանդէին այդ տխրութեան ահարկու գանգատէն:

— Անկարելի է, — խօսեցաւ յակնարժ, եւ դգաց որ իր կամքէն անկախ էր խօսիլը այդ պահուն: Ինք չէր խօսողը, այլ իր մէջ յայտնուած նոր անձ մը, որ ըմբոստացած էր, նոյնիսկ զայրացած:

— Ի՞նչը անկարելի է, — ժպտ ու շաղրութեամբ քննեց կրտսեր Սարգիսեանը եւ նկատեց որ յուզուած էր ան, կամ թերեւս՝ հարբած:

— Այս վիճակը, Հայութեան վիճակը, ճակատագիրը, ողբերգութիւնը, սարկութիւնը: Թափառական այս կեանքը... մինչեւ ե՞րբ այսպէս բռնաներու պէս պիտի ապրինք եւ երկրէ երկիր քաջքուտինք: Ու մինչեւ ե՞րբ պիտի լուենք, հանդուրժենք այս անարդարութեան, պատմութեան ծուռ գատաստանին:

Կիներն ու երեխաները մտահոգ հետաքրքրութեամբ դիտեցին այս այլապէս զուսպ եւ քաղցրաբարոյ Մուշեղը, որ այլափոխուած էր հիմա սակայն, ու գիրենք չէր տեսներ հաւանաբար: Ուրիշ անձ մըն էր, անձանօթ մը — բոլորովին տարբեր իրենց ճանչցած եւ այնքան սիրելի երիտասարդէն — որ յուզուած էր վստահաբար, եւ՝ ինքզինք զսպելու անկարող: Տանտէրը հաստատեց որ անոր բաժակը պարպուած էր դարձեալ, եւ առանց տատամսելու վարեջուր առաջարկեց անոր, մինչ կ'ինը բողբոջէ:

— Խմելու վարժ չէ: Անպայման պիտի գինովցնե՞ս:

— Օգտակար կ'ըլլայ. կը լուայ, կը մաքրէ ներսը:

— Գինով չեմ, — իր բնական ձայնն ու փափկանկատութիւնը վերագտած, առարկեց Մուշեղ: — Ինչ կ'ուզես, լեցուր. կրնամ խմել, եւ կ'ուզե՞մ խմել: Ի վերջոյ եղակի օր մըն է ասիկա ինձի համար, կը ներէք: Եթէ գինովնամ իսկ, ներողամիտ եղէք... յուզուած եմ քիչ մը, յուզուեցայ, այո՛, ինչ կարելի է ընել: Հոս կրնամ խօսիլ, եւ պէտք է խօսիմ, որովհետեւ ասկէ աւելի չեմ կրնար դիմանալ այլեւս: Գիմանալիք բան չէ... կը ներէք, այսքան տառապանք, զրկանք տեսնել եւ դիմանալ անկարելի է:

— Տարող ի՞նչ է, — Եղիս Սահանեան հարցուց միամտաբար:

— Հայութիւնը: Այս խայտառակութիւնը, հալածանքը, անարգանքը: Ափսոս չէ՞ այս երեխաներուն. ասոնց ապագան ի՞նչ պիտի

ըլլայ, երկրէ երկիր, ամէն տեղ օտար, վիզերնին ծուռ: Ի՞նչ տեսակ կեանք պիտի ապրին, ի՞նչ պիտի ըլլան:

— Մեր կեանքը միշտ այսպէս եղած է, տղա՛ս:

— Ընչդ այդ է որ չեմ կրնար հասկնալ, ընդունիլ: Ինչո՞ւ այսպէս պէտք է ըլլայ, եւ մենք ինչո՞ւ պէտք է ընդունինք: Արժանապատուութիւն չունինք, զգացում չունինք: Մեռնիլը նախընտրելի է, քան թէ այս տեսակ անպատիւ կեանք մը ապրիլը: Մենք մարդոց կարգին դասուելու իրաւունք չունինք. այլարհի վրայ ոչ մէկ ժողովուրդ կ'ընդունի մեզի պարտադրուածը: Իսկ մենք լուռ ու մունջ, բերանիս փակած, խօսելու նոյնիսկ քաջութիւն չունինք:

Ալլիս, որ բնաւ չէր համակրած ունեւոր ընտանիքի մը փճացած այս դակիւն, զարմացած հետեւեցաւ անոր անակնկալ պոթիւմին, եւ անդրադարձաւ որ Պր. Գեղամի եւ Մուշեղի մտածումները նոյնն էին — դրեթէ նոյն բառերով արտայայտուած: Միակ տարբերութիւնը այն էր, որ Պր. Տարօնեան միշտ այսպէս կը խօսէր, կը փրփրէր երբեմն նոյնիսկ, բայց չէր յուզուեր երբեք: Մինչդեռ այս խնթը յուզումի կամ խմիչքի ազդեցութեան տակ էր որ... սակայն ի՞նչ էր տարբերութիւնը:

— Կարծես Պր. Գեղամն է խօսողը, — շարունակեց խորհրդածել, բայց լսելի ձայնով մը, տպաւորութիւնը միւսներուն փոխանցելու մտահոգութեամբ:

— Ընչդ է ըսածդ, — խոստովանեցաւ Մուշեղ. — ասոնք իր մտածումներն են առաւելաբար, եւ հիմա միայն կը հասկնամ, թէ ինչի մասին կը դրէ եւ կը խօսի այդ մարդը: Պէտք է խորապէս ապրիս, զգացած ըլլաս տառապանքը, որպէսզի թափանցես իր մտածումներու խորհուրդին կամ խորութեան, եւ ըմբռնես ըսածը: Ապրի՛ս իր տաղնապը եւ ընդվզիս:

— Եթէ կ'ուզես հեռաձայններ, թող դայ, — կատակեց Առաքելեան, ու նայեցաւ քենիին:

— Այս ժամո՞ւն:

— Գեղի պէս խնթ մըն ալ ան է, կու դայ:

— Հիմա գործի կ'ըլլայ, — ըսաւ Ալլիս, թեւի ժամացոյցին վրայ ժամը ստուգելով. — կէս զիշերէն առաջ չի կրնար տեղէն շարժիլ:

— Ժամը տասնմէկն է արդէն, — խանդավառուեցաւ Ժպտ, — եւ մենք ալ նստած ենք դեռ:

— Պէտք չկայ, — հակառակեցաւ քենին. — կէս զիշերէն ետք, այս օրերուն: Վտանգաւոր է:

- Կեանքի՞ն կը վախնաս, — քեռայրը հարցուց շարութեամբ :
- Անիկա գիշերաշրջիկ է արդէն :
- Անչուշտ կը վախնամ, — պատասխանեց ու շիկնեցաւ Ալիս :
- Այ պէտք է երթամ, — միջամտեց Մուշեղ, — եթէ չէք ուզեր որ իսկապէս գինովնամ : Թէ ոչ հաճոյքով պիտի ուզէի տեսնել զինք :

Թ.

- Այո՛, — ընկալուչը վերցուց Գեղամ, փորձելով գուշակել, թէ հեռաձայնողը ով կրնար ըլլալ առաւօտեան այդ վաղ ժամուն :
- Ես եմ :
- Օ՛, ինչ է, Ալպիական Մանուշակ : Լաւ որ ուրիշ մը չէր հեռաձայնողը :
- Ի՞նչ կ'ընես — հարցուց Ալիս :
- Կ'երազեմ :
- Ինչո՞ւ չես հանդիպիր :
- Պէնդին չկայ եւ ճամբաները ապահով չեն :
- Եթէ ուզես, կ'ընաս կարգադրել :
- Նայիմ, — յանցաւոր զգաց Գեղամ Տարօնեան : Գիտէր, թէ թերացած էր ու կը շարունակէր թերանալ կամ անտեսել սիրելի այս աղջիկը, որ տարիներ առաջուան պարմանուհին էր իրեն համար, հոգ չէ թէ երկու դաւակնելու մայր էր արդէն, եւ՝ հասուն կիին : — Այս շարաթ կը հանդիպիմ օր մը, — խոստացաւ յետոյ եւ հարցուց, — բան մը կա՞յ :
- Կ'ուզեմ քեզ տեսնել, այդ-բան :
- Ձերիններէն լուր մը կա՞յ. քրոջմէդ այսինքն :
- Լոս Անճելլոս հաստատուած են, եւ քեռայրս աշխատելու սկսած է արդէն : Ճիշդ ժամանակին պրծան. լաւ որ դացեր են :
- Ի՞նչ գործ է ըրածը :
- Մանրամասնութիւնները չեմ գիտեր. ընկերութեան մը մէջ պաշտօնեայ է կարծեմ, եւ ըստ երեւոյթին դո՛հ են : Տուն մը վարձած են արդէն եւ կահաւորելու սկսած :
- Այս քանիբնորդ տունն է, — ինքնիրեն խօսեցաւ Գեղամ :
- Ի՞նչ ըսիր :
- Մի՞տե՞նակը բոյն կը շինէ, բոյն կը շինէ եւ կ'երգէ :
- Առտու կանուխէն գինով ես :
- Երանի գինով ըլլայի :

- Տրամադրութիւնդ լաւ է սակայն, — շփոթի մատնուեցաւ Ալիս. — լաւ նշան է :
 - Անչուշտ : Բացարձակօրէն ազատ եմ այլեւս, եւ ժամանակս ուղածիս պէս կ'օգտագործեմ : Առտուքն մինչեւ իրիկուն լուրերուն կը հետեւիմ, յուսալով որ հրաշք մը կը պատահի եւ բան մը կը փոխուի այս աշխարհի վրայ :
 - Աւելի յստակ չե՞ս կրնար խօսիլ :
 - Թերթի հրատարակութիւնը դադարեցուցին :
 - Այսինքն անպո՞րծ ես հիմա : Ի՞նչ պիտի ընես :
 - Ձեմ գիտեր, — լրջացաւ Գեղամ. — այս պայմաններուն մէջ ի՞նչ կ'ընամ ընել : Ուսուցչութեան նոյնիսկ չեմ կրնար վերադառնալ. դպրոցները հաւանաբար փակուին վերստին, եւ եթէ նոյնիսկ չփակուին՝ Փետրուարի վերջաւորութեան ոչ մէկ դպրոց նոր ուսուցիչ կ'ընդունի :
 - Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը :
 - Արիւնայեղութիւն : Դո՛ւն ինչպէս կ'անցընես այս սքանչելի օրերը :
 - Երազելով :
 - Ձեռք տոնելո՞ւ սկսար :
 - Ո՛չ, իմ պարագայիս լուրջ է, — դանդաւեցաւ աշակերտուհին. — ուրիշ ի՞նչ կ'ընամ ընել : Շատ առանձին մնացի՞ք, բոլորս : Եթէ պատիկները չըլլային, չեմ գիտեր, թէ ինչ պիտի ընէինք. թերեւս շատ աւելի անտանելի ըլլար : Խեղճերը իրենք ալ կորսուած են կարծես :
 - Ուրիկ՞ կը հեռաձայնես, — Տարօնեան ուզեց նիւթը փոխել :
 - Վարի նպարտվածառին քովէն :
 - Այս ժամուն... քուն չունի՞ս դուն :
 - Ե՞րբ պիտի դաս, — Ալիս հարցուց փոխանակ պատասխանելու :
 - Ճիշդ չեմ գիտեր : Վաղը, կամ միւս օրը թերեւս :
 - Կը սպասեմ : Շատ մի խմեր, — Ալիս աւելցուց յետոյ, եւ ինք եւս զարմացաւ իր ըսածին :
 - Շնորհակալութիւն :
- Գեղամ Տարօնեան անակնկալօրէն բաւարարուած զգաց ու տրամադրութիւնը ամբողջովին փոխուեցաւ : Հաճելի, սանձարձակօրէն ծաւալող զգացում մը շոյեց ինքնասիրութիւնը, եւ անդրադարձաւ որ կրնար ինք եւս յուզուիլ : Փոքր նախադասութիւն մը, եւ մարդու մէջ կրնար յեղաշրջում պատահիլ : Այլ պայմաններու տակ, եւ մանաւանդ

եթէ ուրիշ մը ըլլար իրեն «մի խմեր» ըսողը, անխուսափելիօրէն դայ-
րացած պիտի ըլլար: Մինչդեռ Ալպիական Մանուշակէն գալով... իս-
կապէս խենթ էր աղջիկը: Այս դարուն եւ այս ժամանակաշրջանին կա-
րելի՞ էր այսքան անխառն եւ անանձնական սէր երեւակայել: Հազիւ
կարելի էր երեւակայել, ճիշդ է: Յարգ ոչինչ ակնկալած էր իրմէ,
ոչ իսկ փոխադարձ սէր պահանջած էր, ու բաւարարուած էր իր սի-
րած ըլլալու գիտակցութեամբ: Ինք, յամենայն դէպս, այս կարգի սէր
մը չէր կրնար ըմբռնել: Կամ թերեւս կ'ըմբռնէր, սակայն չէր կրնար
զգալ: Իրեն համար անձանօթ զգացում մըն էր, երբեմն թէ եւ՝ հրա-
պուրիչ: Պորհրգաւոր, ահ եւ երկիւզ պարտադրող զգացում մը, որմէ
զրկուած էր ինք: Եւ այդ իսկ պատճառով կը յարգէր Ալիսի զգացում-
ները եւ խանդաղատանքով կը վարուէր անոր հետ:

Բայց նոյնը չէր զգացած ինք, եւ մնացած էր անհաղորդ, նոյ-
նիսկ անտարբեր: Իր հասկցած ձեւով սիրած էր զինք թէ եւ, ինչպէս
պիտի սիրէր երեխայ մը, ու որպէս այդպիսին վարուած էր հետը:
Այդքանով դո՛հացած էր ան, առիթ տալով իրեն որ յամենար իր ան-
տարբերութեամբ եւ ամէն տեսակ ազատութիւն թոյլատրէր ինքնի-
րեն: Ուրիշ ոեւէ կին նմանօրինակ լրբութեան պիտի չհանդուրժէր բը-
նականաբար, եւ կեանքը երկրային գեհննի մը պիտի վերածէր անպայ-
մանօրէն: Իր վերաբերմունքը այլ կերպով չէր կրնար որակել յամե-
նայն դէպս. եթէ լրբութիւն չէր՝ անձնասիրութիւն էր անուուազն: Իսկ
ինք անձնասէր չէր, ու չէր կրնար ըլլալ: Ուրե՞մն: Ինքզինք նոյնիսկ
չէր ճանչնար այլեւս:

Իրական աշխարհը — շօշափելի, առարկայական — մարդու
ներաշխարհն էր: Արտաքին աշխարհը, որ այս դրուելի եւ թաց Փե-
տրուարն էր, անդորձութիւնը, ամայի փողոցները, կամ համա-
տարած վախը՝ գոյութիւն չունէր իրեն համար հիմա: Իր ներքին գո-
հունակութիւնը միայն իրական էր այս պահուն, եւ ատկէ անդին ու-
րիշ ոչինչ կար: Ինք նոյնիսկ գոյութիւն չունէր թերեւս: Որովհետեւ
բնական, հաւասարակշիռ մարդ մը այս դժոխքին մէջ ուրախ չէր կըր-
նար ըլլալ: Իսկ ինք ուրախ էր: Հրամեր ես: Եթէ կրնաս, մի՛ հաւա-
տար: Պեղազարելու սկսա՞ր արդէն: Թէ՛ ինքնապաշտպանութեան բը-
նազդական անզրպարձ էր լոկ ասիկա: Կրնան ուղածնուն չափ ուռմբ
արձակել, ու կրնայ երկինքէն մետաղեայ կրակ տեղալ եւ մահ սփռել
ամէնուրեք, բայց դուն ուրախ ես: Որովհետեւ սէրը աւելի զօրաւոր
է, աւելի ճշմարիտ եւ գեղեցիկ՝ որքան ալ դուն ըլլաս անհաղորդ: Կը
վերացնէ ան, կ'ազատագրէ եւ իմաստ կու տայ կեանքին: Այլապէս
այս տխուր ձմեռը գարուն պիտի չթուէր քեզի, եւ փողոցներուն մէջ

թափառելու արամազրութիւն պիտի չունենայիր:

Անպարանքի մէջ, դրեթէ խուճապի մատնուած, հազուեցաւ
եւ շտապեց դէպի դուրս: Ժամը եօթն էր արդէն: Քանի մը թաղ դէպի
վար, բաց դաշտին մէջ շրջուն բանջարափաճառներն ու պտղափաճառ-
ները խճողուած արդէն, իրենց պոռչառքով շրջակայ թաղերու բնա-
կիչները կը հրաւիրէին դուրս: Թաղեցիներէն ոմանք կանխած էին
այդ հրաւերը եւ արտակարգ հաճոյամոլութեամբ մը դորձի լծուած,
շրջելով կառքէ կառք, տաղաւարէ այլ տաղաւար՝ դիտելով, քննելով
եւ իրենց ափերուն շոյանքը տարածելով թարմ ու բուրսմնաւէտ
բանջարեղէններուն կամ պտուղներուն վրայ: Տարօնեան հմայուած
կամ մազնիոսացած, յամեցաւ՝ իւրաքանչիւր քայլափոխին կանգ առ-
նելով այս կամ այն խումբին կից, կողմնակի, վայելելով անոնց հե-
թանոս պաշտամունքը:

Կեանքը կը շարունակուէր ուրեմն: Սակարկութիւնը, վէճերը,
ցանկութեամբ բոցավառող աչքերը երիտասարդ կառապաններուն, ո-
րոնք շնական նայուածքներով կը հետեւէին կիներու ծեփեփուն շար-
ժումներուն ու կը կատակէին նոյնիսկ անոնց հետ: Ի՞նչ ահարկու ի-
րականութիւն էր: Պորհուրդ: Գոյութեան անհերքելի, բացարձակ
փաստը: Կեանքը կը շարունակուէր, եւ ինք հոս էր տակաւին. ներ-
կայ, կենդանի, անխուսափելի: Գոհ էր եւ երախտապարտ՝ այս ամ-
բողջին համար: Մարդ արարածը կրնար այնքա՞ն ժուժկալ ըլլալ իրա-
կանութեան մէջ, այնքա՞ն մեղմ ու բարի. եթէ միայն թոյլ տային,
որ վայելէր կեանքի մանր հաճոյքները: Բանջարանոցէն նոր քաղուած
վարունդի կամ լոլիկի բոյրը՝ օրինակի համար: Կամ՝ այս բոլորը զը-
նելու արարողութիւնը՝ առաւօտեան վաղ ժամերուն, աշխատանքի
սկսելէ առաջ:

Աներեւոյթ ձեռք մը կարծես սրբած, ջնջած էր ամպերը երկին-
քէն, մինչ Գեղամ կը թափառէր տակաւին ծովեղերեայ ճամբուն վրայ:
Կէսօր էր արդէն: Զմայլանքով դիտեց արեւի շողերը, որ պար բը-
նած էին խաղաղած ծովու կոհակներուն վրայ եւ ինք քաջալերուած
քաղց դէպի վեր, Ամերիկեան Համալսարան տանող նեղ խճուղիին
ուղղութեամբ: Բնութեան սիրահար չէր եղած երբեք, բայց այսօր
ուշադրութեան չվերպեցաւ յեղակարծ այս փոփոխութիւնը, որ կը
ներգործէր իր վրայ ու զինք եւս կը փոխէր: Վերջին քանի մը օրերուն
յուսահատութիւնը լքած էր զինք ի վերջոյ ու հիմա չէր դիտեր, թէ

որո՛ւ պէտք է շնորհակալ ըլլար — Աւպիտիկան Մանուշակի՞ն, թէ բը-
նութեան :

Կարօ սովորականին պէս օրաթերթերու տրցակ մը զիգած էր սեղաններէն մէկուն վրայ, ու նստած փողոց նայող լայնանիստ լուսամուտին կից, կը կարդար եւ արեւը կը վայելէր : Ամէն օր այս ժամուն գինեատունը ինք կը բանար, կարգի կը դնէր նախորդ գիշերուէն մնացած աթոռներու եւ սեղաններու իրարանցումը, եւ կը սպասէր ծանօթներու կամ բարեկամներու, որոնք կ'այցելէին իրեն հաւատարմօրէն եւ կը սպասէին իրենց կարգին, որպէսզի սուրճ հրամցնէր իրենց, ու շաղկերատէին ժամերով : Ասոնք յաճախորդներ կամ խմբիչքի քուրմեր չէին, նկատելով որ գինեատան դռները երեկոյեան միայն սրահստանապէս կը բացուէին : Ատկէ առաջ ոչ ոք կը համարձակէր խմբիչք ապսպրել :

— Ո՛ւր ես քանի օր է, — խօսեցաւ Կարօ, երբ տեսաւ զինք : — Ճիշդ հիմա քու մասիդ կը մտածէի :

Գեղամ Տարօնեան հարցական նայեցաւ բարեկամին եւ օրաթերթերէն մէկը վերցուց սեղանին վրայէն :

— Անհանգիստ էի, — ըսաւ յետոյ, — տունէն դուրս չեմ ելած :

— Օ՛, դուն ալ կը հիւանդանա՞ս եղեր :

— Հիւանդ չէի : Անհանգիստ. կամ ըսենք՝ անտրամադիր : Անձրեւն ալ առիթ չտուաւ արդէն :

— Նամակ մը ունիս, — Կարօ պահարան մը հանեց ծոցի զըրպանէն ու դոյն Գեղամին յանձնելէ առաջ աւելցուց. — Մանտրայէն է :

— Նամակ :

— Երէկ մեկնեցաւ : Գուն ալ քանի օր է մէջտեղ չկայիր :

— Անգլիա՞ վերադարձաւ այսինքն : Այսպէս անակկնալօրէ՞ն : Հետաքրքրական է. դեռ չարաթ մը առաջ . . . :

— Ասոնք այսպէս են. չեն բռնուիր : Մէյ մըն ալ տեսար կըրտակնին կը դարձնեն ու կը քալեն :

— Աստուած հետը, — ըսաւ Գեղամ ու պատուեց պահարանը :

— Խենթացա՞ր, — դասընկերը նամակը խլեց ձեռքէն : — Գոնէ կարդա՞ր քա՞ծը :

— Ինչը պիտի կարդամ : Մենք ի՞նչ տարտի մէջ ենք, իրենք . . . իրենց ճիւղերուն է աշխարհը : Ճիւղերէն դատ մտահոգութիւն չունին յամենայն դէպս :

— Իրաւ խենթ ես եղեր դուն : Մարդ այս տեսակ ապրանք ձեռքէն կը փախցնէ՞ :

— Ինչ կ'սուղես որ ընեմ : Բայց իրաւունք ունիս, ասոնց հետ

ուրիշ լեզու չես կրնար դորձածել : Անընդհատ պէտք է շինես, որ դո՛ւ մնան :

— Յայտնի է որ համը բերանը մնացեր է, — ժպտեցաւ Կարօ. — շատ ջղային էր, պէտք է ըսել : Ինչ ըրեր ես խեղճ աղջկան : Ամիսներէ ի վեր զինք կը ճանչնամ, բայց բնաւ այս վիճակին մէջ չէի տեսած : Գիտնայի որ վերջը այս պիտի ըլլար, չէի ծանօթացներ : Լաւազոյն յաճախորդներէս մէկը կ'օրանցուցի :

— Խեղճ : Թէ՛ զղջալու ուրիշ պատճառ մը ունիս :

— Ապերախտ ես, ինչ պիտի ըլլայ : Սա նամակը կարդա՛ նայինք : Մենք ալ բան մը կը սորվինք թերեւս : Ես իսկապէս ապուշ եմ եղեր :

— Կրնաս կարդալ : Ինձի համար նորութիւն մը չի կրնար ըլլալ մէջը :

Կարօ քաջալերուած բացաւ պահարանը եւ սեղանին վրայ իրարու միացուց նամակին երկու մասերը : Դէմքը պայծառացաւ յանկարծ եւ բացականչեց :

— Ես ալ կարծեցի որ պատերազմ պիտի յայտարարէ քեզի դէմ : Չըսե՛ս, աղջիկը քեզ Անգլիա կը հրաւիրէ կոր եղեր :

— Ի՞նչ առիթով :

— Քեզ սիրաշահելու համար կ'երեւի : Կամ քեզ ծուղակը ձգելու, — լիահագար խնդաց սրճարանատէրը : — Տես, որովհետեւ սկիզբը ներողութիւն կը խնդրէ կոր պատահածին համար : Ի՞նչ պատահեցաւ որ. չըլլա՞յ որ կնոջական խոզեր . . . :

— Տո՛ւր նայիմ սա նամակը, — ընդմիջեց Գեղամ. — այս տեղ-լիացի աղջիկները բոլորն ալ նոյնն են, հիւանդ : Կը կարծեն որ իրենց ունեցածը ուրիշ կիներ չունին : Գոնէ սկիզբէն ընե՛ն ատիկա, կը հաւատաս թերեւս, կամ կը տկարանաս : Մինչեւ կոկորդին մէջը մխրճուելէ ետք, յանկարծ ուղիւղարութեան կը սկսին :

— Ըսածս ճիշդ է ուրեմն : Քեզ ծուղակը ձգելու համար է ամբողջ : Չես կրնար մեղադրել :

Տարօնեան նամակը կարդալէ ետք, պատուեց եւ նետեց մօտակայ դամբիւղին մէջ : Նոյն յանկերդն էր : Ծարաթներէ ի վեր բերանացի ըսածը, քօղարկուած կերպով կը կրկնէր, աւելի դիւանադիտական լեզուով բնականաբար : Իսկապէս հիւանդ է աղջիկը, խորհեցաւ եւ ցաւ զգաց : Խելքը կամ բնատուր ուշիմութիւնը եթէ դորձածէր, այսքան ծիծաղելի կամ զգուշի պիտի չըլլար : Կատարեալ բոզի հոգեբանութիւն է : Բայց արժանի ես, Պր. գրապէ՛տ : Քեզի պէս անսկզբբունք, կնամօլ մարդու մը հետ պէտք է այսպէս վարուին, որ խելքդ

դիւրեւ զայ: Աղջիկը կը հմայես, ու յետոյ սովորականին պէս, նը-
ւազազոյն չտփով իսկ զգացում չես դնել վերաբերմունքիդ մէջ, որ
չվիրաւորուի գէթ: Եւ կ'ակնկալես որ սերահարի քեզի եւ գերիդ
դառնայ: Ստորագնահատելով, անշուշտ, անդլիական դարաւոր դի-
ւանագիտական ասանդութիւնը, որ տեսակ մը բողոթիւն է՝ վերջին
հաշուով:

— Գործդ ինչպէ՞ս է, — հարցուց քիչ ետք:

— Գանդատելու պատճառ չունիմ: Ինչո՞ւ կը հարցնես:

— Կացութիւնը լաւ չէ: Շրջող զրոյցներուն համաձայն մէկ օ-
րէն միւսը կրնայ բռնկիլ:

— Մեռանք այս զրոյցներէն, — դժգոհեցաւ Կարօ. — ասկէ ա-
ւելի գէշ չի կրնար ըլլալ:

— Յուսամ: Թէեւ մերինները թերթը փակեցին: Բան մը գի-
տեն կ'երեւի: Մեր մարդը բարձրագոյն մակարդակի վրայ կապեր ու-
նի, ե՛ւ հոս, ե՛ւ դուրսը, արտասահմանի մէջ:

— Լո՞ւրջ: Այսքան տարուան թերթ, չըսե՛ս... վա՛յ խըմպըլ
Կա՛րօ, վա՛յ. չեմ նկատած նոյնիսկ որ ձեր թերթը մէջտեղ չկայ: Լաւ,
դո՛ւն ինչ պիտի ընես:

— Ֆրանսա կամ Անգլիա չարաթաթերթ մը հրատարակելու նը-
պատակ ունին: Եթէ իրականանայ, ինծի պաշտօն խոստացած են ար-
դէն. շատ աւելի լաւ պայմաններով եւ վարձատրութեամբ:

— Զրե՛ս, հացիդ իւղ քսուեցաւ:

— Տասը տարի առաջ ըլլար, կը համկնամ: Չեմ կարծեր որ այս
երկրէն դուրս որեւէ տեղ կարենամ ապրիլ: —

— Կամ Սանտրալին հացին իւղ քսուեցաւ. — կատակեց Կարօ.
— ուզածը պիտի ըլլայ:

— Յամենայն դէպս շատ անհամ կացութիւն է: Աշխարհ տակ-
նուվրայ եղաւ, կեանքերնիս խանդարուեցաւ: Չկայ ընտանիք, որու
մէկ անդամը դոնէ հեռացած չըլլայ երկրէն: Երեւակայէ՛, որ եզ-
րայրներս նոյնիսկ Աւստրալիա դացին:

— Ի՞նչ կայ որ: Մերինները Ամերիկա են. ծնողքս, քոյրս. եղ-
բայրս, բոլորը: Եւ դո՛ս են:

— Քանի այնքան գոհ են, դուն ինչո՞ւ հոս ես:

Կը կատակէ՞ր, թէ կը քննադատէր, Գեղամ ինք եւս վստահ
չէր: Սակայն ինչպէ՞ս կրնար ուրիշները մեղադրել, երբ ինք նոյնիսկ
անորոշութեան մէջ էր, եւ անապահով կը զգար: Հայրն ու մայրը
չըլլային, հաւանաբար ինքն ալ մեկնելու մասին մտածէր: Ուրիշնե-
րուն շան քարոզ կը կարդար ուրեմն, սաստեց ինքզինք եւ նախընտրեց

լուի: Ոտքի կանգնեցաւ յետոյ եւ պատրասուեցաւ մեկնելու, մինչ
զատնկերը խօսեցաւ:

— Ձիւ խե՞նթ կարծեցիր: Այս դրամը ես ուրիշ ո՛ւր կրնամ
չահիլ, եւ այսքան դիւրին կերպով:

— Ամերիկա, — ջղայնացաւ միւսը եւ քալեց դէպի արտաքին
դուռը:

— Միամիտ մի ըլլար: Խեղճ մարդիկ միայն Ամերիկայի մէջ կը
փորձեն իրենց փրկութիւնը գտնել:

Թերեւս իրաւունք ունի, Գեղամ մտմտաց փողոցին մէջ: Գէթ
իրեն ծանօթ արտադաղթողները բոլոր խոնարհ եւ պարկեշտ մարդիկ
են. այսինքն խեղճեր, որոնք իրենց արդար վաստակովը միայն կրնան
սպրուստնին ճարել: Եւ ատոր համար իրենց կեանքին մինչեւ վեր-
ջին օրը պաշտօնեայ կամ դործաւոր կ'ըլլան ու կը մնան: Ժառ
քելեանը, եղբայրները, բոլորը: Նոյնիսկ ինք: Եւ ատոնք փրկութիւն
չունին: Ամէն տեղ, ամէն երկրի մէջ դատապարտուած են խեղճ մը-
նալու, երախտապարտ զղալու նոյնիսկ՝ իրենց շնորհուած ստրկու-
թեան համար: Սովետական Միութեան մէջ իսկ միայն աւազակները
ի պատուի են:

Տիկ. Ալին Պալեան, ծնեալ Օհանեան, առանձին նստած կը
ձանձրանար: Մայրը երեխաներուն հետ ժամ մը առաջ դուրս ելած
էր հաւանաբար իր հերթական այցելութիւններէն մէկը տալու համար:
Ամուսնոյն կենդանութեան, քսանչինդ եւ աւելի տարիներ տունը կա-
մաւոր փակուած մնալէ ետք, վերջին մէկ տարուան ընթացքին սկսած
էր նախկին դրախտը, որ իր տունն էր, բանտ նկատել: Մանաւանդ
այն նկուղը, ուր իր երիտասարդ լաւագոյն տարիները ապրած էր
զրկանքի բայց նաեւ ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ: Ու ներկայիս,
այս նոր տան մէջ եւս, զոր ժառանգած էին քրոջմէն անոնց Ամերիկա
մեկնելէն ետք, չէր կրնար հանդուրժել իր անակնկալօրէն յեղաշըր-
ջուած կեանքին: Եւ ինք ստիպուած էր առանձին ձանձրանալ ու երի-
տասարդութիւնը փճացնել՝ սպասելով: Ինչի՞ կը սպասէր սակայն:
Լաւ հարցում էր, անդրադարձաւ, եւ փորձեց չմտածել այդ մասին:

Քսանչինդ տարեկան էր: Երիտասարդ, առողջ, գեղեցիկ: Գի-
տէր: Ամուսնացած եւ ամուսնալուծուած, երկու խեղճացած զաւակ-
ներու մայր: Կեանքէն ի՛նչ կրնար ակնկալել, որ իր սպասելը իմաստ
ունենար: Երջանկութի՞ւն, ընտանեկան համերաշխ կեա՞նք, հարըս-

տուրքին, սէ՞ր: Ծիծաղելի էր: Ճիշդ է, ինքզինք երջանիկ վը նկատէր երբեմն, որովհետեւ կը սիրէր Պր. Գեղամը, որ իւրայայտուկ բայց իրեն համար անըմբռնելի կերպով կը սիրէր զինք: Տարօրինակ մարդ էր լուռ, հպարտ եւ դէպ: Դառնացած մարդ մը, որ իրեն հանդէպ մասնաւոր տկարութիւն ունէր, գիտէ՞ր: Սակայն միայն զի՛նք չէր նկատեր՝ որպէս կին: Եւ կ'իմանար անշուշտ, կը լսէր անոր ազրած ազատ կեանքին մասին — գինետուներու մէջ լուսացուցած զիշերները. պառի աղջիկները, Հիւլան, որ սպաննուած էր բարերախտաբար: Անհասկատացաւ ու յանցաւոր դրաց: Այլ կնկայ մը մահը ինչպէ՞ս կըրնար իրեն գոհունակութիւն պատճառել, հոգ չէ թէ իր սիրած մարդը իրմէ իլած ըլլար ժամանակին:

Պէտք է ամուսնանար, համոզուած էր այլեւս, կամ ինքզինք համոզած: Ուրիշ ելք չունէր, փրկութեան ուրիշ ո՛չ մէկ միջոց: Իր ըստացած ամսաթուղակով երկու զաւակ եւ մայր մը չէր կրնար ապրեցընել: Քանի մը ամիս եւս, եւ՛ պարտքերու մէջ թաղուած կ'ըլլար արդէն: Բայց նիւթական ապահովութեան համար ինչպէ՞ս ամուսնանար, եւ որո՞ւ հետ: Ամուսին որսալու աշխատանքի՞ն լծուէր: Ինչպէ՞ս: Մանաւանդ որ չէր ուզեր ամուսնանալ եւ նոյն դժոխքէն ներս մտնել դարձեալ: Իսկ ո՛ր յիմարը իրեն նման ամուսնալուծուած եւ երկու զաւակի տէր կին մը պիտի ուզէր ունենալ: Անկարելի էր: Այն մարդը, որ իր գեղեցկութիւնը նկատի ունենալով պիտի ուզէր ամուսնանալ հետը, պիտի չկարենար զաւակները սիրել: Մինչդեռ իր սիրած մարդը, որ Գրիգորն ու Թամարը այնքա՛ն կը սիրէր, եւ որ իր ամուսինը ըլլալու իրաւունք ունէր, տարբեր աշխարհի մը մէջ կ'ապրէր: Երեխայ մը ան էր, եւ վստահ էր, թէ այս մասին մտածելու քաջութիւն չունէր, եթէ նոյնիսկ անդրադարձած ըլլար, որ իր կեանքին միակ երազն էր հետը ամուսնանալ: Գաղափարը զուարճացուց զինք, եւ անզգալարար ժպտեցաւ:

— Դուն քեզի խնդալու սկսած ես, — Պր. Տարօնեան զիմացը կանգնած ու քմծիծաղ մը դէմքին, խօսեցաւ:

— Վա՛խս ինչ էր: — Պահ մը ենթադրեց որ կ'երազէր: — Ե՞րբ եկար, եւ ատ չէ ալ, ինչպէ՞ս ներս մտար:

— Դուրը բաց էր:

— Այսօր պիտի չգայիր:

— Յաջողեցայ պէնզին դտնել, եւ եկայ:

— Այս ժամո՞ւն: Կէս ժամէն գործի պէտք է ըլլաս:

— Թերթը փակուեցաւ ըսի, չէ՞: — Տարօնեան ըսաւ պարզօրէն:

— Առտու ըսիր, ճիշդ է: Սեւք մնացե՞ր է որ:

— Չազերդ ո՞ւր են:

— Մօրս հետ այցելութեան զացին: Ուրիշ բառ մը չե՞ս կրնար գործածել, — զանդատեցաւ Ալիս, թէ եւ առաջին անգամ չէր որ ձաղ կը կոչէր զաւակները: — Հաւու կը նմանի՞մ:

— Հայերէն լեզուի ամենէն սիրուն եւ փաղաքշական բառերէն մէկն է: Չե՞ս խորհիր:

— Գրագէտը դուն ես, ես չեմ: Բայց ամէն անգամ որ ձաղ կոչես զիրենք, տարօրինակ զգացում մը կ'ունենամ: Կարծես անպէտք, խրխլած ու գործը վերջացած կենդանի մը ըլլայի:

— Շատ զգայուն դարձած ես, — Գեղամ նկատեց, որ հոգեպէս ընկճուած էր ան: — Ի՞նչ է հարցը:

— Ոչինչ: Չեմ գիտեր: Քիչ մը ջղային եմ վերջերս, գիտե՛մ:

— Հասկնալի է: Եթէ ջղային չըլլայի՛ր, պիտի դարձանայի: Այս վիճակը, առանձնութիւնը... բայց դուն գէթ զաւակներդ ունիս:

— Աւելի դէ՛չ: Անոնց հոգը, պատասխանատուութիւնը, տան ապրուստը: Յուսահատելու սկսած եմ: Իմ աշխատանքովս եւ այս ջնջին ամսականով ինչպէ՞ս լման ընտանիքի մը ծախսերը պիտի հոգամ:

— Ամուսինդ երեսաներուն անդազինը չի՞ վճարեր:

— Գլուխը անցնի: Ես չուզեցի, չհետաքրքրուեցայ նոյնիսկ: Ինչո՞ւ չես նստիր:

— Նախ ինձի բաժակ մը տուր, յետոյ կը նստիմ:

Ալիս սգեւորուած կանգնեցաւ ոտքի, եւ անբացատրելի կերպով երախտապարտ զգաց: Այս լուռ ու անհաղորդ մարդուն պարզութիւնը միշտ հիացուցած էր զինք. ու հիմա ուրախ էր, ակնթարթի մը մէջ հոգեփոխուած, որովհետեւ տան հարազատ անդամի մը պէս խըմիչք կ'ուզէր իրմէ: Ու մտցած առտուան իր իսկ կատարած դիտողութիւնը, հարցուց:

— Ի՞նչ կ'ուզես խմել:

— Եթէ վիսքի չկայ, բերեմ:

— Այս տան տէրը քեզի պէս զինեմոլ էր, մի՛ մոռնար:

— Իմ մասին կրնաս ըսել ատիկա. բայց քեռայրիդ մասին՝ դիտենմոյ, չեմ գիտեր: Իրաւունք չունիս:

— Քեզի պէս խենթ մըն ալ ան է: Ահիսոս որ մեկնեցաւ... քեզ այնքան կը սիրէր:

— Լաւ է, այսօր բաւական լսելիք ունիմ կ'երեւի: Ասո՞ր համար կանչեցիր զիս: Աղջի՛կ, մայրս ինձի այս տեսակ դիտողութիւն չ'ըներ:

— Ես մայրդ չեմ, — սպառնական բայց պչրոտ մատ մը սաստեց Տարօնեանը, որ դուարձացած, սկսած էր խնդալ: — Թերեւս ինք չի կրնար. ես կրնամ, եւ իրաւունք ունիմ, կը հասկնամ:

— Մարդ իր ուսուցիչին հետ այսպէս կը խօսի:

— Առաջ էր ատիկա: Ուսուցչուհին ես եմ հիմա:

— Եթէ աշակերտներուդ հետ այսպէս կը վարուիս...

— Բոլորն ալ սիրահարած են ինձի, որովհետեւ ուսուցչութիւնը քեզմէ սորված եմ:

— Ես քեզի հայերէն լեզու կը դասուանդէի: Ոմիչքս մոռցար մինչ այդ:

Այլիսի բարեփոխուած տրամադրութիւնը ուրախացուց զինք: Միթիթարեց թերեւս: Տարօրինակ, հոգեկան բաւարարութիւն պատճառող զգացում մըն էր յամենայն դէպս: Եւ անդրադարձաւ յանկարծ, որ հանդիստ, հարազատ կը զգար այս տան մէջ. ինք, որ բոլոր տուներուն մէջ օտար կը զգար: Ա՞յս էր սէրը արդեօք: Հարազատութեան զգացում մը, անանձնական ուրախութիւնը, թէ՛ երկրորդ անձ մը ուրախացնելը:

— Լաւ որ այսօր եկար, — խոհանոցէն վերադարձաւ երբեմնի աշակերտուհին. — չես կրնար երեւակայել որքան անտրամադիր էի:

— Պատճա՞ռ:

— Բոլորովին առանձին մնացի: Առաջ, երբ քոյրս հոս էր, յաճախ միասին էինք, ու ժազը, գիտես, տան մէջ կենդանութիւն կը ըստեղծէր: Միթնոլորտ, բարեկամներ, հետաքրքրական խօսակցութիւններ, խմիչք, խրախճանք... ես գիտե՞մ:

— Ամէն մարդ առանձին է: Պօքս ներկայ պայմաններուն մասին չէ: Ընդհանրապէս: Առանձին անհատներ ենք, եւ որքան ալ լայն եւ հետաքրքրական շրջանակ ունենանք կամ կազմենք, առանձնութեան մէջ կ'ապրինք միշտ: Պիտի գիտնաս կեանքդ իմաստաւորել, լեցնել զայն, նպատակ մը հետապնդել: Կամ գէթ՝ կեանքի մէջ հոգեկան հաճոյքներու հետամուտ ըլլալ. արուեստ, գրականութիւն, երաժշտութիւն, ընկերային կամ հասարակական ծառայութիւն: Մարդիկ կան, որ ազգային դործի նուիրուելով կը ստեղծեն այդ հաճոյքը. կուսակցական կ'ըլլան, բանի մը կը հաւատան, կը ծառային: Ուսուցչական ասպարէզը, օրինակի համար, կրնայ գերազոյն բաւարարութիւնը տալ քեզի, եթէ կոչուած մը նկատես զայն:

— Ես ուսուցչութիւնը ընտրած եմ, որովհետեւ ստիպուած եմ: Ուրիշ ոչ մէկ դործ կրնամ ընել, բայց նկատելով որ պէտք է աշխատիմ...

— Ատիկա պատճառ մը չէ որ չնուիրուիս ընտրած ասպարէզիդ. մանաւանդ որ դուն ընտրած ես, որոշած, ու կ'ընես, թէ աշակերտներդ կը սիրեն քեզ: Որ կը նշանակէ, թէ լաւ ուսուցչուհի ես: Այսինքն խղճամիտ ես, պարտաճանաչ ու կը սիրես դործդ: Աշակերտները բընազդարար կը զգան ատիկա, եթէ նոյնիսկ երեխայ ըլլան, ու կը սիրեն կամ չեն սիրեր իրենց ուսուցիչները: Համաձա՞յն ես:

— Կ'ենթադրեմ որ ճիշդ է ըսածդ: Բայց ես նպատակ չունիմ այս դործին մէջ փոխուլ կամ փճանալու: Վերջաւորութեան պատաւած վարժուհի մը ըլլալու: Դպրոցին մէջ քանի մը օրինակ ունինք: Գաղտփարն իսկ կը յուսահատեցնէ զիս. սարսափ կ'ազդէ ուղղակի:

— Այդ պարագային տարրեր իտէալ մը պէտք է ունենաս, դանես... չեմ գիտեր, ստեղծես՝ եթէ պէտք է:

— Ամէն մարդ զրոյ կամ արուեստագէտ չի կրնար ըլլալ, — սիրութեամբ խօսեցաւ ուսուցչուհին: — Կամ՝ մտաւորական, ազգային գործիչ, յեղափոխական: Այդպիսի պատրանքներ չեմ կրնար ունենալ, որովհետեւ ինձի համար շատ ուշ է. զաւակներ ունիմ եւ... յամենայն դէպս չեմ հետաքրքրուած: Ես զիս կը ճանչնամ: Իմ միակ ցանկութիւնս, երազս լաւ կ'ին եւ մայր ըլլալն է. ընտանեկան երջանիկ կեանք ունենալ: Ուրիշ երազ չունիմ:

— Սքանչելի զաւակներ ունիս, եւ սքանչելի կ'ին ես:

Գեղամ Տարօնեան չկրցաւ շարունակել: Սքանչելի մայր ես, ուզած էր ըսել: Թէեւ գիտէր, թէ տիպար, անմասն կ'ին էր նաեւ: Բայց դժբախտ եղած էր ամուսնութեան մէջ եւ չէր կրցած երազած ընտանեկան կեանքը ունենալ: Իսկական վատնում էր: Լաւագոյն յատկութիւններով օժտուած հայ մայր մը զրկուած էր իր կեանքի միակ երազէն: Եւ այսօր, փոխանակ ընտանեկան երջանկութիւն կոչուածը վայելելու, յուսահատութեան մատնուած էր եւ կ'ապրէր զրկանքի մէջ: Արդար չէր: Եւ կրնար վտանգաւոր ըլլալ — վերջնականապէս սպաննել անոր մէջ բոլոր կարելի գեղեցկութիւնները: Երիտասարդ, զեղեցիկ կ'ին մը փորձութեան ենթակայ էր միշտ, մանաւանդ նմանօրինակ պայմաններու մէջ:

— Երեխաները չըլլային, թոցուցած կ'ըլլայի մինչեւ հիմա: Լաւ կ'ին ըլլալս որո՞ւ ինչ օգուտ ունի սակայն:

— Զաւակներուդ: Քեզի: Իսկ երբ ամուսնանաս...

— Ամուսնանա՞լ, — ընդմիջեց Ալիս: — Էշը, որ աւանակ մըն է, նոյն փոսին մէջ երկրորդ անգամ չ'իյնար: Եւ ես աւանակ չեմ:

— Բայց պէ՛տք է ամուսնանաս:

— Ինչո՞ւ: Որպէսզի զաւակնե՞րս դժբախտացնեմ:

— Երիտասարդ ես, — տրամաբանեց Գեղամ — իրաւունք չունիս դուն քեզ գրկելու, պատժելու:

— Ինչէ՞ն գրկել: Չարչարանքէ՞ն: Ամուսինի խենթ չեմ, եւ Ֆիզիքականը շատ ալ կարեւորութիւն չունի ինծի համար: Կը հասկնաս ինչ ըսել կ'ուզեմ:

— Այս տրամադրութեան մէջ եւ հակաճառելու սիրոյն, կըրնաս ըսել առիկա: Գուն բնութեան ենթակայ ես սակայն, եւ ոչ թէ բընութիւնը՝ քեզի: Իրապաշտ ըլլանք եւ մենք զմեզ չխաբենք:

— Ո՞ր յիմարը երկու գաւաղի տէր կնկայ մը հեռ կ'ամուսնանայ. առ ալ ամուսնալուծուած կ'իս:

Յաջորդող լուսթիւնը խոտովեց զիրենք: Գիտէին, թէ բուն նիւթէն կը խուսափէին եւ անկեղծօրէն չէին արտայայտեր իրենց մըտածումները: Երկու անձանթներ էին կարծես, լուսթեան մէջ ընդվզեցաւ Ալիս, եւ ինքզինք մեղադրեց աւելի: Ինչո՞ւ բարձրաձայն չէր բողբոջեր եւ յայտներ սա սիրելի բայց անզգամ մարդուն թէ իրմէ զատ մարդու հեռ պիտի չուզէր ամուսնանալ: Կարծես լուր չունէր, թէ զինք կը սիրէր եւ թէ իր միակ ուրախութիւնն էր այս սէրը: Տրամաբանական չէ՞ր: Ինչ կարեւորութիւն ունէր: Սէրը ե՞րբ տրամաբանական եղած էր կամ ենթարկուած անոր: Իտէալ, նպատակ... Ինչ իմաստ ունէր: Ինք իտէալի պէտք չունէր, որովհետեւ իր սէրը շատ աւելի կը լեցնէր կեանքը, իմաստ կու տար անոր: Յուսահատութեան պահեր կ'ապրէր երբեմն, ճիշդ է, բայց պատասխանատուն նոյն ինքն Պր. Գեղամն էր: Ինչո՞ւ իրականութիւնը չէր խոստովաներ: Անչուշտ որ առանձին կը զգար, եւ ինչպէ՞ս չզգար, երբ շարաթներով չէր տեսներ զինք:

— Յիմար մը կը գտնուի, — ի վերջոյ խօսեցաւ ուսուցիչը: — Եթէ համբերել գիտնաս:

— Մինչեւ ե՞րբ: — Ճիշդ լսած էր արդեօք, տազնապի մատնուեցաւ կինը. կամ արդեօք սխալ հասկցած էր անոր ըսածը:

— Չեմ գիտեր: Պէտք է համբերես, մինչեւ որ կացութիւնը բարելաւուի քիչ մը եւ կարենամ խելքս գլուխս հաւաքել: Պէտք է խոստովանիմ որ ամուսնանալու մասին չէի մտածած մինչեւ այս վայրկեանը:

Ալիս Օհանեան յաջողեցաւ զսպել յուզումը, բայց ինչպէ՞ս պիտի կարենար ուրախութիւնը զոպել: Անկարելի էր, անհաւատալի: Ինք եւս չէր մտածած այս մասին... ո՛չ, քաջութիւն չէր ունեցած յուսալու: Եւ հիմա պարզօրէն պապանձած էր, եւ չէր գիտեր, թէ ինչ պէտք է ըսէր: Եթէ խօսէր, կրնար ամբողջովին շփոթիլ եւ մատնել ներքին

խոտովքը: Բայց ինչո՞ւ ծածկէր զգացածը: Վերջաւորութեան ենթադրածէն աւելի անտեղի թուեցաւ ըսածը:

— Ինչի՞ մասին կը խօսիս:

— Սիրելը շատ եղաղի, գեղեցիկ փորձառութիւն մըն է: Բայց կը խորհի՞ս որ հետս կրնաս ապրիլ:

— Տարիներ ետք այս հարցումը պիտի հարցնէիր ինծի, — Ալիս փորձեց խնդալ բայց անզբաղարձաւ որ աչքերը խոնաւցած էին:

— Կը հարցնեմ, որովհետեւ զգացումներէդ տարուած, մէջս իսկական անձս չես տեսներ դուն, այլ քու ստեղծած պատկերը:

— Կը մոռնաս որ ամուսնացած կ'իսր ես եմ, իսկ դուն այս հարցերուն մէջ՝ անփորձ երեխայ մը: Իսկական անձդ ինձմէ աւելի լաւ ո՛վ կը ճանչնայ: Նախկին պարմանուհին չեմ, եւ ոչ ալ զգացածս՝ դպրոցական աշակերտուհի սիրահարութիւն:

— Յուսանք, — թերահաւատութեամբ խօսեցաւ Տարօնեան: — Թէեւ ես փոփոխութիւն նկատած չունիմ: Նոյն փորձանքն ես:

— Չեմ գիտեր, թերեւս: Հիմա իսկ չեմ հասկնար այս ամբողջը, եւ վստահ չեմ նոյնիսկ, թէ կ'ուզեմ կ'իսր ըլլալ: Քեզ որպէս ամուսինս չեմ երեւակայած երբեք: Տարօրինակ կը թուի... կը վախնամ:

— Ինչէ՞ն: Ինձմէ՞, թէ դուն քեզմէ:

— Կը վախնամ որ կը կորսնցնեմ քեզ:

— Չէի գիտեր, թէ նախապաշարումներ ունիս, — գուարճացած, կատակեց Գեղամ: — Քանի այդպէս է, ինծի բաժակ մը եւս կը լեցնե՞ս:

— Չես հասկնար, — Ալիս տեղէն շարժելու փորձ իսկ չըրաւ: — Ես ալ չեմ հասկնար կարծեմ:

Տարօնեան հարկադրուած, ինք վերցուց բաժակը եւ կանդնեցաւ ոտքի: Բայց փոխանակ ճաշասենեակ անցնելու, ուր սեղանին վըրայ մոռցուած էր խմիչքի շիշը, մօտեցաւ սիրած աղջկան — այո՛, նոյն փոքր աղջիկն էր իրեն համար — եւ ձեռքէն բռնած, բարձրացուց զայն ու համբուրեց աջ այտէն:

— Քալէ՛, — ըսաւ յետոյ ու բաժակը փոխանցեց անոր: — Ալ պիտական Մանուշակ, — կրցաւ շշնջալ միայն:

— Անկարելի է, — Ալիս զգաց որ մարմինը կ'այրէր ամբողջ, — անհաւատալի է: Չէի կարծեր որ... չեմ կրնար հաւատալ:

— Ինչ չէիր կարծեր:

— Կրնամ այսքան երջանիկ ըլլալ, բախտաւոր: — Եւ զրեթէ ուժաթափ, գլուխը հանդէպուց Տարօնեանի կուրծքին, ազատ արձակելով արցունքները: — Անկարելի է: Ես այսքան բախտաւոր չեմ կըրնար ըլլալ: Չեմ կրնար հաւատալ, անկարելի է:

Այդ դիչեր ուրախութիւնն ու յուզումը արթուն պահեցին Ալիսը մինչեւ լուսարաց : Առաւօտուն , երբ փորձեց անկողնէն ելլել , ուժասպառ էր եւ անհանգիստ :

Ժ.

Հայ ծնած էր սա Լիրանան կոչուած դրախտին մէջ , զոր մարդիկ որոշած էին դժոխքի վերածել : Քառասուն տարի վազած էր՝ մօրը դիրկէն մանկապարտէզ , մանկապարտէզէն նախակրթարան , ու հոնկէ՝ դարձեալ դպրոց , դպրոցներ՝ այլեւս որպէս ուսուցիչ : Այս ամբողջ միջոցին հալածած էր հայերէն , արարերէն , անգլերէն եւ ֆրանսերէն լեզուները , կամ հալածուած էր անոնցմէ : Պայքար մղած էր նաեւ իրագիտութեան , թուարանութեան , աշխարհագրութեան եւ պատմութեան դէմ , բայց չէր հարցաքննած ո՛չ ուսուցիչները եւ ոչ ալ ծնողները , որոնք պարտադրած էին իրեն այս խաչակրութիւնը ժամանակ մը ետք , երբ պատանեկան դպրոցումներ սկսած էին խլրտիլ իր մէջ , բնականաբար դասընկերուհիները հալածած էր , եւ անոնց հետ միասնաբար վրէժ լուծած էր բոլոր այս նիւթերէն , եւ դպրոցական օրերու տաժանքը հանդուրժելի դարձուցած :

Աւելի ուշ երազներ սկսած էր հալածել — զիրք , դրականութիւն , արուեստ , հայրենիք , ազգային դատ , Հայաստան : Ինչո՞ւ : Ինք եւս չէր գիտեր : Պատահած էր , եւ դժգոհ չէր յամենայն դէպս : Այլապէս կեանքը անտանելի պիտի ըլլար : Երբեւիցէ չէր մտածած այդ մասին , այլ միայն դիւահար մարդու մը նման վազած էր այս բոլորին ետեւէն եւ պահեր կրցած էր բռնել երբեմն , եւ այդքանով բաւարարուած : Բայց այդ եղակի պահերը վայելելու , անոնց շունչ եւ մարմին տալու ժամանակ չէր ունեցած , ու շարունակած էր վազել՝ բացարձակ անգիտակցութեան մէջ : Այսօր սակայն , երբ կանդ առած կը մտածէր այդ անսկիզբ եւ անվախճան արշաւին մասին , կանդբաղաւորաբար որ տեղ չէր հասած : Ո՞ւր էր : Ի՞նչ իրադրութեամբ էր մինչեւ այսօր , քառասուն տարի ետք : Փրած էր , խօսած էր ինքնիրեն եւ մարդոց հետ , ու երբեմն հրատարակած էր այդ մենախօսութիւնները — իրաւ դրականութիւնը մենախօսութիւն էր վերջին հաշուով — բայց դէինչ կրցած էր փոխել : Ոչինչ փոխուած էր : Ուրե՞մն : Քա-

ռասուն տարի վազած էր ու տեղ չէր հասած , մինչ ուրիշներ ամուսնացած էին , զաւակներ ունեցած , վայելած ու հարստացած երբեմն : Իսկ ինք : Երազ կը հալածէր տակաւին :

Ուսուցիչ եղած էր կամ խմբագիր , նոյնն էր : Այսօր անդործ էր : Տաղանակելու պատճառ շունչը թէւեւ , որովհետեւ քանի մը ամիս կրնար այս անդործութիւնը վայելել , եւ շրջանի մը համար դէժ կասեցնել այս անմիտ վազքը : Ու մտածել : Թէ՛ ինչ պատահած էր իրեն , հայուն , մարդուն եւ դրողին : Հայ ծնած էր ու հայկական դաստիարակութիւն ստացած՝ ժամանակաշրջանի մը , երբ Հայութիւնը , կամ ինչ որ մնացած էր անկէ , գրնով էր : Այսինքն շշմած՝ ստացած մահացու հարուածէն : Առաջին քսան տարիներուն չէր հարցաքննած այդ դաստիարակութիւնը կամ զայն իրեն եւ յաջորդ սերունդին ջամբողները : Եւ ուրեմն՝ եղած էր նոյնքան մոլեռանդ ու տուայտած պատրանքներով , մինչ կրաւորականութիւնն ու անտարբերութիւնը մաս կազմած էին իր կուլթեան : Միւս բոլոր հայերուն նման , որոնք իրարու կամ իրենք իրենց յոխորտալով հանդերձ , ստրկամտութիւնը ընտրած էին որպէս դէնք , եւ զայն կոչած՝ դիւանագիտութիւն : Հոսկէ , Լիրանան կոչուած այս դրախտէն սկսեալ մինչեւ ամերիկեան դրախտն ու մինչեւ Հայաստան : Ամէն տեղ , ամէն երկրի մէջ : Բայց ուրիշ , բոլորովին ասարբեր եղանակ մը երզած էին իրենք իրենց եւ իրենց զաւակներուն , եւ հիւսած Հայոց գերադասութեան առասպելը : Եւ ինչպէս կը պատահի սովորաբար , սկսած էին հաւատալ երեւակայութեան ծնունդ այս պատրանքին :

Ինք եւս մասնակցած էր բազմաձայն այս երզախումբին , մինչեւ որ բառերը իմաստ ունենալէ դադրած էին : Իր խօսածը կամ դրածը զինք նոյնիսկ չէր համոզեր այլեւս , եւ այն ատեն է որ սկսած էր հարցաքննել ինքզինք՝ նախ եւ առաջ : Արդարեւ դրուածը — իր եւ միւսներուն դրածը — իրականութեան չէր համապատասխաներ : Կարգացածը զաւեշտ մըն էր , տեսածն ու աղբածը՝ բոլորովին տարբեր . . . ոգրերգութիւն : Ընդվզած , եւ առանց շարամտութեան , սկսած էր ատկէ ետք խանգարել երգչախումբի համերգային ներդաշնակութիւնը : Ձէին ներած իրեն , բայց ինք շարունակած էր իր անուղղայ ընթացքը եւ արժանացած անոնց ուրացումին : Բարեբախտաբար բոլորը ուրացած էին զինք եւ արտաքսած հայկական դրախտէն , իրաւունք տալով իրեն ճշմարտութեան տաճարի մենակեացը դառնալու : Աւելի դո՛հ էր ու խաղաղ , եւ ինքնիրեն հետ հաշտ , բնականաբար : Առանձնութեան մէջ բիւրեղացած էին մտածումները եւ վերածուած համոզումներու : Այս յեղափոխութեան յաջորդած էր ազատագրումը ,

որ փրկած էր զինք, իսկապէս ազատազրած, ամէն կարգի փորձութենէ եւ ինքնախաբէութենէ: Վերածնած մարդ էր ատկէ ետք, թերեւ նոյնիսկ երջանիկ, հոգ չէ թէ ըլլար դառնացած եւ ինքզինք առանձնութեան դատապարտած ճգնաւոր մը: Մարդոցմէ չէ որ փախուստ տուած էր, այլ անոնց ինքնախաբէութենէն, տկարութենէն: Եւ զարմանալի կերպով — բայց ո՛չ, անխուսափելիօրէն — աւելի զօրաւոր զգացած էր, եւ ժամանակի ընթացքին ըմբռնած էր, թէ իր առանձնութեան մէջ էր իր զօրութեան դադտնիքը:

Սակայն սիրած էր մարդ արարածը եւ ազրած անոր հետ, փնտռած էր զայն ամէն տեղ, ու երբեմն գտած զիննտուներու մէջ: Անթիւ եւ անհամար բարեկամներ ունեցած էր եւ բաժնած անոնց ցաւերն ու տառապանքը՝ սակաւախօս մենակեաց մը ըլլալով հանդերձ: Ուրախացած էր նաեւ անոնց հետ, եւ մարդը ճանչցած էր իր մէջ: Ատկէ առաջ իր անձը եղած էր միայն, Գեղամ Տարօնեան անունով հայ մը, որ խուսափած էր օտարներէն: Այն ատեն չէր գիտեր, թէ մարդիկ հայ չեն: Թէեւ համարարանը աւարտած էր արդէն, պատմական եւ ընկերային նիւթերու մէջ բարձրագոյն գնահատանքի արժանանալով: Յետոյ սթափած էր լսի՛ ալ մարդոց նման:

Այսուհանդերձ վազըր շարունակուած էր, եւ ինքնազօրձ մեքենայի մը նման նոյն արարքները կրկնած էր ամէն օր, այսինքն՝ ինքզինք կրկնած: Խորքին մէջ կեանքն էր, որ կը կրկնէր ինքզինք՝ տարիները անդիտակցութեան երկար պահի մը վերածած: Տունէն դուրս կամ խմբագրատուն, եւ հոնկէ՝ սրճարան կամ զիննտուն — աշխատած էր, խմած էր ու գրած՝ անտեսելով ծնողք, հարազատներ եւ ազգականներ, որոնք զժգոհած էին բնականաբար եւ անկարելի մեղքեր վերադրած իրեն: Այլիսկան Մանուշակը նոյնիսկ լռելեան մեղադրած էր զինք, անհաւատարիմ եւ կնամոլ անձ մը նկատելով զինք հաւանաբար: Կնամոլ էր թերեւս բայց ոչ թէ անհաւատարիմ: Կին արարածին հմայքը բնութեան խորհուրդներէն մէկն էր անկասկած, եւ եթէ ինք կամենար իսկ, պիտի չկարենար հակադրուիլ անոր, ժխտել զայն: Եւ ինչո՞ւ ժխտէր: Փաստօրէն կեանքը հաւասարակշռած էին, եւ իր առանձնութիւնը հանդուրժելի դարձուցած:

Բայց սիրած էր Այլիսկան Մանուշակը, իսկապէս սիրած, ոչ թէ սովորական, զգացական սիրով մը, այլ իրեն իսկ անբժրանելի անանձնական նուիրումով մը, որ կապ չունէր կին արարածին հետ: Անոր սէրը սիրած էր թերեւս — այնքան երազային եւ անիրական — ու մենաշնորհ մը համարած էր զայն, բախտաւորութիւն: Որ ինքնախաբէութիւն ներշնչած էր իրեն, հարստացուցած էր զինք՝ եղա-

կի, անփոխարինելի հոգեկան խաղաղութեամբ: Իր ամենէն յուսահատ, ընկճուած պահերուն իսկ այդ սէրը ապահովութիւն պարզեւած էր իրեն ու պաշտպանած զինք իր բացարձակ գեղեցկութեամբը:

Ինական էր ուրեմն, որ ինք շաղարտէր այդ գեղեցկութիւնը ու գուրգուրար անոր վրայ: Չսրբապղծէր զայն: Այդ մասին խօսելու իսկ պէտք չէր ունեցած, ոչ իսկ Ալիսին, որ բացատրութիւն չէր պահանջած երբեւիցէ: Փոխադարձ բայց լուռ համաձայնութեամբ մը նուիրականացուցած էին իրենց այլապէս անտրամաբանական թուող գաշինքը, աւելի եւս գեղեցկացնելով զայն:

Ինք գէթ, սկզբնական շրջանին քանի մը անգամ ամուսնանալու կարելիութեան մասին մտածելով հանդերձ, բոլորովին անտեղի, ծիծաղելի նկատած էր գաղափարն իսկ: Այսօր թէեւ, դարձեալ փոխադարձ եւ լուռ համաձայնութեամբ, յանգած էին անխուսափելի եւ միակ եզրակացութեան:

Խնթացած էր: Քառասունէն ետք ինչպէ՞ս կրնար ամուսնանալ: Ծիչդ ժամանակը ընտրած էր: Երկիրը գահավէժ անկուծի մէջ, իսկ ինք՝ անդորձ: Ատկէ աւելի գործնական չէր կրնար ըլլալ: Ամուսնութեան մասին ի՞նչ գիտէր, կամ ի՞նչ էր ամուսնութիւնը: Մինչեւ այսօր ոչ պահանջը զգացած էր, եւ ոչ պարտաւորութիւն նկատած ատիկա: Առօրեայ մտահոգութիւններու եւ մանր տաղտուկներու մարդ չէր ինք, եւ այս տարիքէն ետք նորածին գրկելու պատրաստ չէր երբեք: Ծոր, խանձարուր, անքուն պիչերներ... օրօր, օրօր իմ հոգեկակ: Խնդաց: Թերեւս ալ հաճելի կ'ըլլար. գէթ փոփոխութիւն: Փոխանակ գրելու եւ ընթերցողները օրօրելու, իր երեխաները կ'օրօրէր: Աւելի օգտակար գործ մը կ'ընէր թերեւս: Ինչո՞ւ եւ որո՞ւ համար կը դրէր: Նոյն հարցումն էր: Հայութիւնը իր գրածին պէտք ունէ՞ր: Միայն գրականութեամբ չէր հետաքրքրուած այս ժողովուրդը: Առեւտուր, արհեստներ, բժշկութիւն, երկրաչափութիւն, դրամ, հաճոյք ու նոյնիսկ շոնդալից քաղաքական յօդուածներ: Կուսակցական պայքար: Խրախճանք, պարահանդէս... Նունէ՛, Նունէ՛, արի զիս... Հայկական դատ եւ պարահանդէս: Այս ալ արհեստ մըն էր: Ոչ թէ պարահանդէսը, այլ հայկական դատը պաշտպանելը: Մայիս 28, Նոյեմբեր 29 եւ... պարահանդէս: Եթէ կրնաս, մի հաւատար: Մշակույթի տէր ժողովուրդ է Հայութիւնը: Է՞, թէ՛ էր: Իրականութիւնը այն է որ հազարամեակ մը ամբողջ աշխարհի հեռաւոր եւ մոռցուած մէկ անկիւնին մէջ իր տառապանքը երգած էր միայն: Իր պարտութիւնը, տգիտութիւնը: Ասոր համար հայ երգը տխուր եղած է միշտ: Բայց երգած է: Որ զարմանալի է: Թէեւ անտաշ, եւ անժաղ, այս տխուր եւ պարտը-

լամ երգը հիմը կազմած է հայկական երաժշտութեան, որ մշակութային արտայայտութիւն է անպայմանօրէն: Մինչդեռ երէց դրոշմը իրեն ըսած էր վերջերս, թէ Հայութիւնը մշակոյթ երբեք չէ ունեցած: Ընդվզած էր: Բայց այս հաստատումը կատարողը դարավերջիկ երիտասարդ մը չէր, այլ Հայոց պատմութիւնը խորապէս ուսումնասիրած վաստակաւոր ուսուցիչ, որ սերունդներ դաստիարակած էր: Ուրեմն: Հայութիւնը մշակոյթի տէր է՞, թէ չէ: Բայց իր դրելը այս բոլորին հետ ի՞նչ կապ ունէր:

Ուղեղը իրեն չէր հպատակեր: Պիտի նախընտրէր շմտածել, եւ վայելել այս ազմուկը: Ով գրականութեան կամ մշակոյթի պէտք ունէր: Մարդիկ ապրելով գրադամ էին, ու հաճոյք կը հալածէին. ոչ թէ իրեն պէս՝ բառ, մտածում եւ երազ: Բաժակէն ումպ մը խմեց եւ փորձեց նկատել, տեսնել շուրջը պատահածը: Կէս դիւեր էր մօտաւորապէս, եւ նոյն դէմքերն էին, նոյն երկսեռ երիտասարդութիւնը պառլի մէջ — կատաղութիւնը գաղաթնակէտին հասցուցած, կը պարէին այս գիշեր: Պա՞ր էր, թէ կոխ: Կամ՝ հաւաքական եւ հրապարակային սիրարանութիւն: Ասոնք իրենց մարմիններով կը վրէժնէին, կը ստեղծագործէին, մինչ ինք նստած կը խոկար: Ներկայ մշակոյթը այս էր թերեւ: Ի վերջոյ մշակոյթը որեւէ ժամանակի մէջ մտայնութեան մը արտայայտութիւնն էր նաեւ: Եւ այս սերունդը այս կերպով կ'արտայայտէր իր ընդվզումը, որ եթէ մտայնութիւն մը չէր ներկայացներ, անգրադարձ մըն էր անպայմանօրէն: Կը հասկնա՞ր զիրենք: Պայման չէր: Իրենք ալ զինք չէին հասկնար: Դուրսը պատահածը, տիրող անիշխանութիւնը, անապահովութիւնը կը հասկնա՞ր միթէ: Հոն ալ, դուրսը, այլ երիտասարդներ ուրիշ պար մը կը պարէին եւ կ'արտայայտէին իրենց ընդվզումը՝ բոլորովին այլ կերպով: Այդ ալ մտայնութեան մը արտայայտութիւնն էր, կամ զէթ՝ անգրադարձ մը: Բայց ի՞նչ անգրադարձ: Մշակոյթ: Աւելի ճիշդ էր: Մշակոյթը ի՞նչ էր արդարեւ, եթէ ոչ տուեալ հաւաքականութեան մը՝ իր գոյութիւնը երկարաձգելու կամքը:

Երաժշտութիւնը լռեց յանկարծ եւ իշական սուր ճիշեր լսեց — պոռչուող, իրարանցում, այլայլած դէմքեր: Իր սեղանէն քիչ անդին երիտասարդուհի մը երեբաց, փորձեց կառչիլ իրի մը կամ մարդու մը, ստկայն պարապ պարկի մը պէս ծալուեցաւ ինքն իր վրայ եւ փոռեցաւ զետիւն: Ոչ ոք մօտեցաւ անոր: Զարմացած երբ կը պատրաստուէր հասնելու աղջկան, նկատեց զիմակաւոր զինեալները, որոնցմէ երկուքը գնդացիները իրենց ուղղած կը հսկէին, մինչ միւս երկուքը հերթով բայց շատ արագ կը խուզարկէին ներկաները: Գե-

ղամ անշարժացաւ եւ փորձեց կեղրոնանալ, ըմբռնել, թէ ի՞նչ կը կատարուէր: Կողոպո՞ււտ էր, թէ խուզարկութիւն: Այր մարդոց գըրպաններն ու դրամապանակները կը պարպէին վարժ եւ արագաչարժ ձեռքերով, ապա կը հաւաքէին ժամացոյցներն ու մատանիները ու թանկարժէք որեւէ իր: Կիներու պայուսակները, մինչդեռ, նոյն ուշադրութեան չէին արժանանար ու կ'անտեսուէին գրեթէ: Հետաքրքրութիւնը լարած, աւելի ուշադիր հետեւեցաւ անոնց շարժումներուն եւ նկատեց որ համբերութեամբ հանել կու տային սարսափահար աղջիկներու ապարանջաններն ու մանեակները եւ ուշադրաւ գոհունակութեամբ մը վըր լեցնէին թուղթէ տոպրակներու մէջ:

— Մարդ տեղէն չըստի — դուստ պահակներէն դանդաղահըր, զնդացիբոյ կիսարուորակ մը գծելով օդին մէջ — կը կրակեմ:

Բայց չկրակեց, ու Տարօնեան չկրցաւ դիտնալ, թէ ուշադրութիւն կը պահանջէր կամ կ'երեւակայէր խեղճ պատանին: Փաստօրէն իրմէ աւելի վախցած էր, ու ձեռքերուն դողը չէր կրնար զսպել:

Երբ հերթը հասաւ իրեն, ինքնարեւարար պարպեց բոլոր գըրպանները, որ դրամէ աւելի թուղթեր կը պարունակէին: Այցետուսեր, զանազան թղթիկներու վրայ առնուած նոթեր, փոքր հասցէագիրք մը՝ բոլոր զետեղեց սեղանին վրայ եւ ախամայ ժպտեցաւ: Յուստիսար պիտի ընէր խեղճերը:

— Ոտքի՛, — հրահանգեց աւաղակը:
— Ունեցածս ամբողջ այս է, — Գեղամ զգաց որ կը ջղայնանար:

Միւսը վերցուց դրամը սեղանին վրայէն, մինչ աչքերը կասկածանքով շափեցին զիմացինը, որ համարձակած էր առարկել, ու յետոյ կեղրոնացան անոր ձեռքերուն վրայ: Աւելի եւս յուսախար, հաւանարար ոսկեղէն շտեմեղուն համար, արհամարհանքով նայեցաւ զոհին եւ անցաւ յաջորդին:

Աւաղակախումբին խուճապահար մեկնումէն ետք իսկ վարակիչ լուրթիւն մը կը տիրէր զինետան մէջ ու երկար վայրկեաններ ետք միայն ներկաները սկսան իրարու հետ փոփոխալ, հողերանօրէն վախի ազդեցութեան ենթակայ տակաւին: Քիչ անց մանրամասնութիւններու կծիկը քակուեցաւ, եւ իւրաքանչիւրը իր խօսքը կ'ուղէր ըսել, իր կարծիքը յայտնել կամ բացատրել, թէ ինչպէս կարելի էր պատահածին առաջը առած ըլլալ, եթէ... այսպէս շարժէին կամ այնպէս վարուէին: Կարօ եւ քանի մը այլ երիտասարդներ մինչ այդ գրադամ էին ուշաթափուած աղջիկը հանդարտեցնելով, որ արդէն սթափած, կը մնար ջղապրկի վիճակի մէջ: Աւելի ուշ սկսան թուարանական հաշիւ-

ները, եւ ամէն մարդ կը փորձէր իր կորուստը զնահատել, բազմաթիւ միւսներուն հետ, բացականէն, հայհոյել ու կարծես խանդալատուած՝ վերանորոգ ախորժակով խմել:

— Մնտուկին մէջ դրամի հետք չեն ձգած սրիկաները, — Կարօ խնդալով աթոռ մը գրաւեց դասընկերոջ կողքին. — դոնէ մանրուքը չտոնէին:

— Մանրուքով մտահոգուած ես հիմա:

— Ինչպէ՞ս պիտի աշխատինք:

— Խեղճերուն կորսնցուցածը չի բաւեր, — ըսաւ Գեղամ, — գեր իրենցմէ դրամով պիտի գանձես:

— Իրաւունք ունիս: Այսօր ալ . . . ճիւղերու: Տղա՛ք, ուզածնուդ չափ խմեցէք, — Կարօ պոռայ յետոյ:

— Մնտուկին մէջ որքա՞ն կար:

— Հազարէն աւելի:

— Վաղը տարբերութիւնը կը հանես:

— Խնդիրը աստիկա չէ: Գործին վրայ կ'ազդէ. վաղը այս յաճախորդները շես տեսներ հոս, գէթ ոչ այս ժամուն: Եւ . . . եթէ այս սրիկաները վարժուին, շարաթը անգամ մը այցելութիւն կու տան մեզի: Ո՛չ, ապահովութիւն կայ, ոչ ալ իշխանութիւն: Ո՛վ կրնայ արգելք ըլլալ իրենց:

— Ոստիկանութեան պէտք է իմացնես:

— Իմացուցինք, յետո՞յ: Հեռաձայնեցի, հիմա կու գան եւ գըլուխ ցաւցնելու կը սկսին: Գիտե՞ս ոստիկանապետը ինչ ըսաւ ինծի՞ մինչեւ այս ժամը ինչո՞ւ բաց է եղեր պառը: Այս օրերուն . . . Ի՞նչ զիտնամ, օրերը գէշ են եղեր: Լուծեց հարցը: Կարծես չեմ գիտեր: Քեզմէ ի՞նչ առին:

— Ինչ որ ունէի: Յիտուն ոսկի մը պէտք է ըլլար կարծեմ: Շատ դժգոհ մնաց, — ժպտեցաւ Գեղամ:

— Եկատեցի: Աժան ազատեր ես: Սանկ-նանկ քսան հազար մը տարին, ոսկեղեններն ալ մէջը:

— Ես լման տարի մը պէտք է աշխատիմ, որ այդ գումարը շահիմ, եթէ գործ ունենամ անշուշտ:

— Բազմաթիւ տարբերութիւն հետ, լաւ կը շահիս:

— Իսկ բազմաթիւ քեզի հետ . . .:

— Մերը աւազակութիւն է, — Կարօ խոստովանեցաւ զօհունակութեամբ: — Գողը գողէն գողացաւ . . . Եալլա՛հ, բայց յաճախորդներուն մեղք է:

— Խիզ ունիս եղեր:

— Կատակը մէկըլի, այս երկրին զլխուն գալիք կայ:

— Առտու երգած երգը տարբեր էր, Գեղամ յիշեցուց բարեկամին:

— Առտուան ըսածս ալ ճիշդ է, հիմա ըսածս ալ: Ուրիշ երկրի մէջ ես այս տեսակ դրամ չեմ կրնար շահիլ. բայց այս կոցուցութիւնն ալ իրականութիւն է: Ինչ կ'ուզէ թող պատահի, ես հոս եմ: Տեղէն շարժող չկայ:

— Բարեբախտաբար:

— Շատ նեղը մնամ, կը գոցեմ: Տարիներ կրնամ դիմանալ: Աստիկա վերջ մը ունի անշուշտ:

*
**

Գեղամ Տարօնեան անրնականօրէն ուրախ էր: Անկողնին մէջ պառկած, գրեթէ կը ցնծար, անկարող այլեւս խնդուքը զսպելու: Առտուտեան ժամը երեքը կ'անցնէր արդէն, եւ ինք փոխանակ քնանալու, յիմարի նման կը խնդար: Խելագարութիւն: Այսքան անտարբեր եւ անզգամ կրնա՞ր ըլլալ: Կողոպտուած էր, անարգուած ու գայրացած, բայց հիմա կը խնդար ու չէր կրնար քնանալ: Թերեւս երեւոյթն էր, դաղափարը. անձնապէս ներկայ դա՞նուած էր, սկանտես եղած hold up կոչուածին, որ հետաքրքրական փորձառութիւն էր յամենայն դէպս: Լիբանանի մէջ եւս կարելի էր ուրեմն: Միայն Շիրակոյի եւ Նիւ Եորքի՞ մէջ պէտք էր նման գէպքեր պատահէին:

Բայց անտրամարանական էր: Իր անդրադարձը: Ինք արտափարզ փոփոխութիւններու ենթակայ — փաստօրէն նոր հանդրուան մը սկսած էր կեանքին մէջ — անգործ, հիասթափ եւ գրեթէ շուարած: Ինչպէ՞ս կրնար այսքան անտարբեր ըլլալ եւ յամենալ ինքնագոհութեամբ, երբ երկիրը կը քայքայուէր, կարգն ու կանոնը կը խախտէին, ու Հայութիւնը խուճապի մատնուած, պանդխտութեան ցուպը ձեռք ստած էր դաձեալ: Ինք ի՞նչ պիտի ընէր, ի՞նչ պէտք է ընէր: Անգործ չէր կրնար մնալ. պէտք է աշխատէր եւ տան ապրուստը հօգար: Այս պայմաններուն մէջ, սակայն, ո՛վ գործ կու տար իրեն: Միակ յոյսը Լոնտոնի մէջ հրատարակուելիք նոր շարաթաթերթն էր: Գեղամ Տարօնեան Լոնտոնի մէջ: Հետաքրքրական, ցնցիչ լուր մը կրնար ըլլալ: Ինք նոյնիսկ չէր հաւատար: Հոն, բացարձակ առանձնութեան մէջ, հետու հայկական կեանքէն եւ միջավայրէն, ինչպէ՞ս պիտի ապրիս: Որո՞ւ հետ պիտի խօսիս, կատակես. անգլիացիներո՞ւն: Կը տարակուսիմ: Ոչ դուն գիբերնք կը հասկնաս, ոչ ալ իրենք՝ քեզ: Աշխարհի

ամենէն անհաղորդ, պաղարիւն ժողովուրդը:

Գուն աւելի լաւ պտուղ մը չես: Ոչ ժպտիլ զխեւս, ոչ սիրել զխեւս, բայց կ'ակնկալես որ մարդիկ սիրեն քեզ: Եւ զարմանալիօրէն քեզ սիրողներ կան, թէեւ ցարդ չես ուզած մտածել այդ մասին, որպէսզի կարենաս հաւատալ եւ զնահատել իրականութիւնը: Ներողութիւն, այսօր սխալեցար եւ քանի մը քաղցր խօսք ըսիր խեղճ աղջկան: Եւ հիմա իսկ խոստումիդ գիտակցութիւնը չունիս: Ան պարզ ու բնական կ'ին մըն է, մինչդեռ դուն երազներ կը հալածես տակաւին, ու չես անդրադառնար իսկ, թէ քեզմէ մարդկային վերաբերմունք կ'ակնկալուի:

Բայց ինչպէ՞ս, ես ինչպէ՞ս ամուսին եւ հայր ըլլամ, երբ այդ տեսակ պահանջ չեմ դրար: Եւ շատ ուշ է, անիմաստ, անկարելի: Ծիծաղելի նոյնիսկ: Քառասուն տարի այդ մասին մտածելու առիթ չեմ ունեցած, կամ չեմ մտածած պարզօրէն, որովհետեւ... ի՛նչ: Այո՛, պահանջ չեմ դրացած, զաղափար չեմ ունեցած թէ ամուսնանալը անհրաժեշտ է: Ձէի զիտեր: Բայց ո՞վ ըսաւ որ է՛: Պէտք է քննամ: Քանի օր է չեմ գրած: Միայն գրելը կը փրկէ զիս: Բայց գրելու տեղ նոյնիսկ չունիմ այլեւս: Իսկ հնարաւորութիւն: Թէեւ պէտք է գրեմ, թէ ոչ... Գրելը աւելի կարեւոր է: Եթէ այսպէս շարունակուի, իսկապէս հաւասարակչութիւնս կը կորսնցնեմ, կամ կ'ամուսնանամ: Բանականութիւնս պահպանելու համար թերեւս: Ի՛նչ պատահած է ինձի:

Յուսահատութիւն:

Բառը զգաստացուց զինք, ու զսպանակէ մը արձակուած կարծես, ինքզինք գտաւ անկողնէն դուրս, ծովահայեաց պատուհանին դիմաց: Ոչինչ կըրցաւ տեսնել: Խաւարն ու լռութիւնը աւելի ճնշեցին վրան. մեքենականօրէն մօտեցաւ զրասեղանին եւ վառեց փոքր լոյսը, որ ակնթարթի մը մէջ պատուհանը վերածեց հայելիի: Իրեն անծանօթ մարդ մը տեսաւ հոն, նիհար, պեխաւոր ու ջգային: Այս ինք՞ն էր: Կանակը դարձուց անոր ու քաշեց աթոռը, տեղաւորուեցաւ զրասեղանին առջեւ եւ որոշեց գրել: Եղբայրներուն մեկնելէն ետք առանձին սենեակ մը ունեցած էր, եւ այդ պահուն միայն կ'անդրադառնար, թէ հոն կրնար աշխատիլ: Եթէ դուրսը տեղ չունէր այլեւս, իր սենեակը ունէր հիմա սակայն. եւ եթէ ցերեկին հնարաւոր չըլլար, գիշերը անպայմանօրէն կրնար գրել եւ վերջ տալ այս տառապանքին: Թէ՛ գրածը կը հրատարակուէր կամ ոչ, շատ ալ կարեւոր չէր: Իր պարտականութիւնն էր գրել՝ նախ եւ առաջ: Այլ պարտականութիւններ կամ պատասխանատուութիւններ երկրորդական էին իրեն համար, թէեւ

ցարդ չէր խուսափած ասոնցմէ եւս: Յուսահատելու իրաւունք չունէր պարզօրէն:

Հայութեան ապագան առեղծուածային հանելուկ մըն էր ներկայիս, նոյնիսկ Հայաստանի մէջ: Սփիւռքը դէթ մնայուն եւ անխուսափելի վտանգի ենթակայ էր, եթէ նոյնիսկ Լիբանանի մէջ աղէտ մը չպատահէր: Այս ընթացքով աշխարհի վրայ հայերէն կարդացող կըրնար չմնալ օր մը, բայց ինք չէր կրնար չգրել: Որպէս գրող իր միակ առաքելութիւնը գրելն էր — հայերէն կարդացող մնար կամ ոչ: Ե՛ւ որպէս մարդ, ե՛ւ որպէս հայ՝ գրող էր, եւ ուրեմն պէտք է շարունակէր գրել: Իր գոյութիւնը այդ կերպով միայն իմաստ ունէր, այդ կերպով ալ կ'արգարանար: Այլապէս կրնար եւ անձնատպան ըլլալ: Եթէ քաջութիւն ունենար անշուշտ: Բայց իրաւունք չունէր, որովհետեւ եթէ նոյնիսկ Հայութիւնը գոյութիւն ունենալէ դադարէր, հայ մը չափոյթը — զրականութիւն, երաժշտութիւն, քանդակագործութիւն, միտք, կեանքի ըմբռնում — պիտի մնար ու գոյատեւէր: Ի վերջոյ տիեզերական ճշմարտութեան անկործանելի մէկ մասնիկն էր: Ուրե՞մն:

Եւ գրեց:

Բայց Հայութիւնը ինչպէ՞ս կրնար գոյութիւն ունենալէ դադարիլ: Լեզուն կենդանի էր, բնազդը կենդանի էր, ինչպէս նաեւ մշակոյթն ու կոռազանութիւնը: Մոլութիւնները, առաքելութիւնները, տառապանքը, հալածանքը: Բայց նաեւ՝ աշխատասիրութիւնը, յամառութիւնը, եւ վերջապէս յոյսը, որ այդ շերտ մը հօզն էր, Հայաստան կոչուածը: Հայաստանը ո՞ր էր սակայն: Քարտէսի վրայ մնացածը, թէ Հայութեան մտածումներուն եւ յիշողութեան մէջ ամէն օր քիչ մը աւելի կոտտացող վիշտը: Կորսուածին, գրաւուածին վիշտը: Կամ այդ վիշտին ծնունդ տուող կորսուածը: Կորուստը՝ անկորնչելիին եւ անփոխարինելիին: Հակասական չէր: Թէեւ տակաւին գրաւուած եւ առժամապէս կորսուած կը համարուէր, սակայն Հայաստանը անկորնչելի էր: Հոն էր, նոյն բարձրաւանդակին վրայ, ուր չորս հազար տարի ապրած եւ տքնած էր հինաւուրց ժողովուրդ մը, որու միտքին մէջ կենդանի էր տակաւին եւ աւելի քան իրական:

Իսկ ի՛նչ կ'ընէ այդ ժողովուրդը այսօր: Այսինքն կորսնցուցածին վերատիրանայու համար ինչ կ'ընէ: Քանի մը երիտասարդներ սկսած են թուրք գիւնահագններ ահաբեկել, հաւանաբար ճարահատութեան մղուած: Վերջինը՝ սակէ երկու շաբաթ առաջ հոս, Պէյրութի մէջ: Մինչ ժողովուրդը Ատլանտեանի վրայ հսկայ կամուրջ մը նկատած, կարաւանները դէպի նոր Աշխարհ կ'առաջնորդէ: Նոր աշ-

խարհ մը, որ հինցած, նեխած է արդէն, բայց որ կը հմայէ տակաւին, կը մոլորեցնէ՝ նոյնիսկ զայն չտեսնողները: Մանաւանդ՝ չտեսնողները, որոնք առանց տեսնելու կը հաւատան, ինչպէս նախատեսած եւ ցանկացած է Նազովրեցի Յիսուսը, որու կը հետևի տակաւին այս ժողովուրդը երկու հազար տարի ետք:

Ու կ'երթան անոնք, կը մեկնին, ոչ միայն հայաստանամերձ այս երկիրներէն այլ նոյնինքն Հայաստանէն: Կը մեկնին հանդերձ քնտանեօք, հազարներով, բանիւ եւ գործով, գիտութեամբ եւ անգիտութեամբ, եւ ի՞նչ հեզմանք՝ նոյն վիշտէն մտրակուած: Իրենց նախահայրերուն երկիրը չեն մոռցած ու կը յիշեն զայն միշտ, կը կարօտնան անոր ու տիւ եւ գիշեր կը խօսին հայկական իրաւունքներու եւ դատին մասին: Կը խմեն, կը գինովնան, ճառ կը խօսին կամ կը լսեն, կը խանդավառուին կամ կը տխրին, ու վերջաւորութեան կը դադրեն՝ կամայ թէ ակամայ, գիտութեամբ կամ անգիտութեամբ: Մինչ քանի մը երիտասարդներ որոշած են թուրք դիւանագէտներ ահաբեկել:

Ձարմանալի է, չէ՞: Աշխարհը գէթ զարմացած է, ու մասամբ նաեւ՝ Հայութիւնը: Ուրեմն կարելի է: Բայց ո՛չ աշխարհը կ'ուզէ հաւատալ, եւ ոչ ալ Հայութիւնը, որովհետեւ կատարուածը անհեթեթ կը նկատեն: Ի վերջոյ հայկական հարց կոչուածը լուծած էին եւ բընականաբար՝ մոռցած զայն: Իսկ այսօր: Ձարդուածներուն թոռները՝ լուծուած համարուող բայց իրականութեան մէջ անլուծելի հարցը վերստին կ'արձարծէին: Ինչո՞ւ անլուծելի սակայն: Քաղաքական իրապաշտութիւնը այլ եզրակացութեան չի կրնար առաջնորդել: Արեւմտեան Հայաստանի մէջ հայեր չեն սպրիթ այսօր: Այս մէկ: Ըստ քաղաքական տրամաբանութեան եւ միջազգային օրէնքի, որոշ հոգամասի մը վրայ բնակող ժողովուրդը կը նկատուի այդ երկրին տէրը: Իսկ Թուրքիա վերակոչուած երկրի արեւելեան կէսին վրայ միայն թուրքեր եւ քիւրտեր կը բնակին: Ըստ թուրք պետութեան քիւրտերը լեռնարձակ թուրքեր են: Եւ ուրեմն: Թութակի պէս իրենց ըսածը կրկնելու պէտք կ'այ: Այս երկու: Թուրքիա Ատլանտեան Ուխտի անդամ է, բայց եւ այնպէս Սովետական Միութիւնը յարմար կը նկատէ անտեսել այս իրականութիւնը եւ մասնաւոր վերաբերմունք ցուցարիւթ թուրք պետութեան նկատմամբ: Որ քաղաքականօրէն հասկնալի է: Ո՛վ կրնայ մեղադրել: Հայաստանի Սովետական Մոցիալիտական Հանրապետութիւնը: Բայց ի՞նչ իմաստ ունի: Երեք: Հայոց նահապետը Հայկ, երբ որոշեց զէպի հիւսիս առաջնորդել իր տոհմը, չէր կրցած նախատեսել, թէ քսաներորդ դարու հզօրագոյն զէնքը նաւթը պիտի ըլլար: Այլապէս հարաւի դժօխքը պիտի նախընտրէր:

Այս երիտասարդները քանի մը ատրճանակով ու լեռնացած կամքով, բայց առանց նաւթի, ինչպէ՞ս պիտի լուծեն ներկայ ժամանակներու արդարագոյն դատը: Արդարութեան վստահելով: Կը մոռնան միթէ, որ իրենց հայրերը, նաեւ իրենք, քաղաքակրթուած աշխարհի արդարագաւառութեան զոհերն են: Մանաւանդ, որ աւելի քաղաքակրթուած է այդ աշխարհը՝ իր նորագոյն եւ հրէշային զէնքերով: Այս՝ հրէշային զէնքերու քաղաքակրթութիւն է ստիկա: Պիտի կարենա՞ն նոյն զէնքերուն տիրանալ: Եթէ յաջողին, նախ կը քաղաքակրթութիւն իրենք եւս, եւ յետոյ՝ հարցը Մեծերը կը լուծեն ինքնաբերաբար, եւ սիրայօժար կամքով: Արդարեւ հրէշը միայն հրէշի լեզուն կը հասկնայ: Առանց կարգին նաեւ Թուրքիան, որ — պէտք է խոստովանիլ — ոյժը կը յարգէ նոյնիսկ իր թշնամիին մէջ:

Ուրեմն կարելի է, եւ հարցը՝ լուծելի:

Գեղամ Տարօնեան բաւարարուած դիտեց ինքզինք պատուհանահայելիին մէջ եւ հաստատեց, թէ այդ պահուն հրէշի մը արտօժակներն ու ինքնավստահութիւնը ունէր: Բայց հայելիէն իրեն նայողը անծանօթ մըն էր դարձեալ: Ո՞վ էր սա մարդը: Ինք՝ ինքն էր, գիտէ՛ր: Իրեն ծանօթ այն անձը, որ տարիներու ընթացքին ինք եղած էր եւ սպրեցուցած իր մէջ անոր գիտակցութիւնը: Թէեւ պահեր եղած էին երբ անդրադարձած էր, թէ ինք ուրիշ մըն էր նաեւ, բազմաթիւ ուրիշներ, որ կը նշանակէր, թէ ինք կրնար իր անձը չըլլալ նաեւ: Բայց ընդհանրապէս հաշտ եղած էր այդ անձին հետ, այսինքն՝ քնացուցած զայն, եւ սպրած սովորական կեանք մը: Ի վերջոյ՝ ինք ըլլար կամ ոչ, իրեն ծանօթ էր սակայն: Մինչդեռ սա միւսը, որ կը քննէր հիմա զինք հայելիին անհունութենէն, բացարձակ անծանօթ մըն էր, որ կ'անհաստացնէր, կը վրդուէր իր ներաշխարհը: Ձարմանալին այն էր որ իր բոլոր բարեկամներն ու ազգականները Գեղամ Տարօնեան կը կոչէին զայն:

ԺԱ.

Երկրաչափ, առեւտրական, համալսարանի դասախօս, տպարանատէր, պաշտօնեայ, արհեստաւոր ու մաքսանենդ՝ բոլոր հաւատար մարդիկ էին այս սեղանին շուրջ: Մտերիմ բարեկամներ էին նաեւ խաղի ժամանակ կամ խաղէն ետք, ու կը կատակէին, կը զուարճանային՝ առանց կարեւորութիւն ընծայելու օր ըստ օրէ սաստկացող քաղաքացիական պատերազմին: Դասակարգեր չկային հոս, ոչ ալ

գոտակարգային խորութիւն կար: Հարուստ վաճառականն ու խոնարհ արհեստաւորը, երէցն ու կրտսերը, արարն ու հայր, քրիստոնեան եւ իսլամը խաղի սեղանին չուրջ — գիտակցարար կամ այլապէս — յաջողած էին իսկական ըկներվարական գրութիւն մը ստեղծել եւ խաղաղ գոյակցութիւն կոչուածը գործադրել: Իրենց համար կրօնական, յարանուանական, ազգային, քաղաքական կամ գաղափարաբանական տարբերութիւններ չկային, որովհետեւ եղբայրացած էին խաղի սեղանին շուրջ: Շահելը կամ մնասելը կարեւորութիւն չունէր, այլ միայն՝ խաղը: Այդ մթնոլորտին մէջ կ'սպրէին, կը շնչէին, կ'երարգէին ու վստահարար՝ նախանձելի ըլլալու աստիճան երջանիկ էին: Տարօրինակ, եզակի աշխարհ մըն էր իրենցը, ուր յանձնապաստան եւ ինքնագոհ կեանք մը կը վարէին:

Երկրորդ եւ երրորդ անգամ կողոպուտի ենթարկուելէ ետք, կարօ նահապետեան պառը վերածած էր խաղատունի: Մարտ 11-ի պետական հարուածէն ետք եւ անոր յաջորդող կռիւներուն որպէս հետեւանք գիշերային բոլոր վայրերը փակուած էին արդէն, նկատելով որ ապահովութիւնը ամբողջովին խախտած էր եւ կարելի չէր երեկոյեան ժամը եօթնէն ետք շրջադայել: Մայրաքաղաքը գրեթէ անդամալուծուած էր, ու որոշ շրջաններու մէջ նոյնիսկ ցերեկին խանութներն ու հաստատութիւնները փակ էին՝ մնալուն կերպով: Ներքին թաղերուն մէջ միայն, ճակատներէն հեռու շրջաններու մէջ, կարգ մը հաստատութիւններ կը բանային իրենց դռները օրական քանի մը ժամ՝ ըստ կացութեան եւ թաղամասէ թաղամաս փոխադրուող բախումներուն: Տուեալ պայմաններուն մէջ որեւէ կերպով մնալուն եկամուտի աղբիւր մը ապահովելու մտահոգութեամբ կարօ այս հանճարեղ միտքը յղացած էր, եւ արդիւնքէն գոհ էր: Ու հիմա հանգիստ էր նոյնիսկ եւ աւելի առողջ, որովհետեւ մինչեւ իրիկնամուտ նոյնքան մը եւ երբեմն նոյնիսկ նախկին շահածէն աւելի կը զբաղանէր ու պարտականութիւնը կատարած մարդու գոհունակութեամբ կը մեկնէր ամէն իրիկուն ժամը եօթնէն ալ առաջ:

Գեղամ Տարօնեան օրուան մեծ մասը հոս կ'անցընէր երկու ամիսէ ի վեր ու դրսեցի չէր նկատուեր այլեւս: Առաջին օրերուն խորթ եւ անհաշտ աչքերով զիտած էին զինք հաստատութեան նոր բայց մնալուն յաճախորդները, որոնք խաղին չմասնակցողներուն հետ վերապահութեամբ կը վերաբերէին սովորաբար: Ժամանակի ընթացքին, յետոյ, հաստատած էին, թէ անվնաս արարած մըն էր ան, եւ ձեւով մը՝ խումբին հաւատարիմ մէկ անդամը, թէեւ սեղանէն հեռու կը մնար միշտ ու ժամերով նստած կը խմէր երբեմնի պառլիմ առջեւ:

Տակաւին անգործ էր ու վերջնական պատասխանի մը կը սպասէր. վերստին պաշտօնի կոչուած էր որպէս Անգլիոյ մէջ հրատարակուելիք շարաթաթերթի խմբագրական կազմի անդամ, սակայն պաշտօնական հրաւերը չէր ստացած, որպէսզի անհրաժեշտ ձեւակերպութիւնները կարենար ամբողջացնել: Մինչ այդ այս զբաղումը գտած էր ու դպրոցական աշակերտի մը նման կանոնաւորաբար կը յաճախէր այս նոր դպրոցը, եւ ակնկալածէն շատ աւելի կը սորվէր:

Ռմբակոծումը սաստկացաւ յանկարծ եւ թղթախաղին մասնակցողները նոյնիսկ պահ մը ընդհատեցին իրենց կեդրոնացեալ աշխատանքը եւ հարցական քննեցին զիրար: Շարունակէի՞ն թէ ոչ: Արեւելեան Պէյրութէն արձակուած հրթիռները մօտակայ թաղերուն մէջ սկսած էին ինչպէս հաւանաբար: Այս կողմէն արձակուող այլազան, մեծ ու փոքր ուռմբերու ահեղնագոռ անցքը այնքան չէր խանդարեր զիրենք, որովհետեւ գիտէին, թէ հեռաւոր հասցէներու ուղղուած էին:

— Նպատակնին զէչ է այսօր, — խօսեցաւ կարօ, որ քիչ մը անդին նստած տասներորդ օրաթերթը կը կարդար հաւանաբար: — Ասկէ առաջ համալսարանի շրջանը չէին ուժակոծած:

— Հոս մենք ապահով ենք, — ըսաւ Վահան, երեսնամեայ, թուխ ու դանդաղահեր, բարձրահասակ երիտասարդը, որու տպարանը ամիսներէ ի վեր փակ էր: — Մեր վրայ հինգ-վեց յարկ կայ:

— Իսկ եթէ հաա մը ճիշդ փողոցին մէջ ինչա՞յ, — առարկեց Ալի, որ տպարանատիրոջ անբաժան շուքն էր: Վահանին տարեկից ու նոյնքան մը յաղթանդամ, անընդհատ պէտք է վիճէր բոլորին հետ: Կամ կատակէր՝ թղթախաղի ամենէն լուրջ ու կեդրոնացում պահանջող պահերուն խալ: — Այն ատեն հասակը կը չափեմ:

— Եթէ ողջ ըլլաս, — խնդաց Վիգէն Փափագեան, որ փողոցային ստահակ մը կը յիշեցնէր, թէեւ Ամերիկեան Համալսարանի տընտեսագիտական ամպլոնի լաւագոյն դասախօսն էր:

— Դուն քու մասիդ մտածէ, — ներողամտաբար հեղնեց Ալի — ուռմբը այս մարմինէն կը վախնայ — ձեռքով զարկաւ կուրծքին:

— Ճիշդ ատոր համար ամենէն առաջ քեզ կը դռնէ. ես դռնէ կարճ եմ եւ այնքան նիհար, որ ուռմբը զիս չի նկատեր նոյնիսկ: Մանաւանդ եթէ որոշեմ ետեւը պահուրտիլ:

Դասախօսին սրամտութիւնը ողջունուեցաւ միահամուռ ու բարձրաձայն խնդուքով ու պահ մը մոռցուեցաւ հրթիռներու տեղատարափը, որ աննախընթաց խուճապ մը ստեղծած էր դուրսը, փողոցին մէջ: Թաղեցիները բոլոր փողոց խուժած էին, փոխանակ իրենց

տուններուն մէջ պատասպարուելու, եւ կարգ մը կիներ ճշարու սկսած էին արդէն: Այս միջոցին խլացոնող պայթում մը ցնցեց ամբողջ թաղամասը, պատճառ դառնալով որ թաղեցիները վազեն աննպատակ կերպով եւ գանազան ուղղութիւններով:

— Այս մէկը շատ մօտ էր, — այլայլած խօսեցաւ Կարօ եւ սկըսաւ թերթերը հաւաքել: — Հոսկէ դուրս ելլենք, փորձանք մը չպատահած:

— Ո՞ւր, — թեւէն քաշեց Գեղամ. — դուրսը աւելի ապահո՞ւմ է կը խորհն: Հոս գտնէ մասամբ պաշտպանուած ենք:

— Մարդու վրայ խելք կը ձգե՞ն որ...:

— Ասկէ աւելի երկար չի կրնար տեւել: Բարերախտարար միջեւ հիմա հոս չիմկաւ հաս մը:

— Հոս հանգիստ եւ ապահով նստած էք, — Մուշեղ յայտնուեցաւ յանկարծ, ահնապիչ նայուածքով մը դիտելով շուրջ բոլորը: — Դուրսը աշխարհ տակն ու վրայ է: Վերջինը վարի անկիւնը պայթեցաւ:

— Դուն ո՞ւր էիր մինչ այդ, — հարցուց Գեղամ:

— Վերէն, Համբարյի կողմէն կու գայի: Տեսարանը սարսափելի էր... շրջակայ բոլոր շէնքերու ապակիները ջարդուփշուր, քսան ինքնաշարժէ աւելի ծակ-ծակ, վիրաւորներ, արիւն — մարդկային մարմնի կտորներ:

— Գացիր տեսա՞ր, — Կարօ խօսեցաւ անզգալարար. — Աստուած խելք տայ:

— Ըլլալիքը եղած էր արդէն: Իսկապէս սարսափելի էր սակայն: Դեռ չեմ կրնար հաւատալ:

— Նստէ, — կողքի աթոռը ցոյց տուաւ Տարօնեան, — այս տեսակ ատեն փողոցը ի՞նչ գործ ունիս:

— Երբ դուրս ելայ հանգարա էր: Տունը ձանձրացայ. ըսի գամ ձեզ տեսնեմ:

Շուրջ երկու ամիս առաջ Մուշեղ Սարգիսեան եկած եւ գտած էր զինք այս նոյն վայրին մէջ, եւ այդ թուականէն ի վեր շարաթր քանի մը անգամ կ'այցելէր իրեն, ու ժամերով կը խօսէր, երբեմն զինք ձանձրացնելու աստիճան: Համակրելի երիտասարդ մըն էր թէեւ, ու չիմ, հետաքրքիր եւ քիչ մը անհաւասարակչիտ. թերեւս: Կամ՝ շատ բարի եւ իտէալիստ:

— Առաջին իսկ առիթով պէտք է միւս կողմ անցնիմ, — շարունակեց Մուշեղ. — բայց հնարաւոր չէ. ճամբաները բոլոր գոց են: Հոս մնալու անիմաստ է այլեւս, նոյնիսկ վտանգաւոր:

— Միւս կողմ անցնիլը կամ մնալը ի՞նչ իմաստ ունի, ատ ալ կրնա՞ր ըսել ինձի: Ի՞նչ անյետաձգելի գործ ունիս, որ տուներնիւղ պարսպ պիտի ձգես եւ երթաս: Իսկ եթէ կեանքիդ կը վախնաս, հոն նուազ վտանգաւոր չէ: Բուն բախումները հոն է որ տեղի կ'ունենան, մանաւանդ վերջին շրջանին, ու հոն ալ հրթիռներ կը պայթին:

— Կեանքիս ի՞նչ պիտի վախնամ: Հոն դոնէ կրնամ օդտակար ըլլալ, ծառայել, հայկական թաղերու պաշտպանութեան մասնակցութիւնս բերել:

— Իսկ տո՞ւնը:

— Եթէ տունը կողոպտուի կամ դրաւուի, իմ ներկայութեանս ալ կրնան ընել ատիկա: Ես առանձին ի՞նչ կրնամ ընել: Ձիս կը տփեն, կը կապեն, կամ պարզօրէն դուրս կը նետեն: Եւ յետոյ, մեր տան պաշտպանութիւնը այնքան կարեւոր չէ, որքան հայկական թաղամասերու պաշտպանութիւնը:

— Անտարակոյս: Բայց ձեր տունը այս կողմն է, եւ հայու տուն է նոյնպէս. ինչպէս միւսները, արեւմտեան թաղամասերու հայոց տուներն ալ պաշտպանութեան պէտք ունին, եւ զրկուած են ատկէ: Գէթ իւրաքանչիւր ընտանիք իր տունը փրկէ նախ եւ առաջ:

— Ինչպէ՞ս:

— Տուները չլքելով:

— Կեանքի ապահովութիւն չկայ. ի՞նչ կրնան ընել:

— Այս կողմի հայկական շրջաններու պաշտպանութիւնն ալ պէտք էր կազմակերպել: Եթէ ժամանակին շարժած ըլլայինք եւ պէտք եղած միջոցներուն դիմած, ոչ ոք պիտի համարձակէր մեր տուները սրբապղծել:

— Համաձայն եմ: Բայց եղածը եղած է: Իմ հոս մնալովս կացութենէն ոչինչ պիտի փոխուի:

— Ինչո՞ւ դուն ալ Յունաստան չես երթար շրջան մը եւ ծնողքիդ միտքը հանդարտեցնելու գէթ: Մինչեւ որ երկիրը խաղաղի...:

— Անձնասիրութիւն պիտի ըլլայ ատիկա:

— Երեսայական խօսքերու պէտք չկայ, — սաստեց Տարօնեան: — Խելացի եւ գիտակից երիտասարդ ես. ինչպէս ըսիր, եղածը եղած է արդէն: Պուրճ Համուար դուն պիտի չփրկես ի վերջոյ. մինչդեռ դուն քեզ կրնաս փրկել, եւ ատիկա ազնիւ գործ մը կ'ըլլայ, իսկական ծառայութիւն՝ թէ ծնողքիդ եւ թէ ազգիդ համար:

— Բայց զիս դասալքութեան կ'ուզէք մղել: Կը զարմացնէք զիս. չեմ կրնար հաւատալ:

— Իսկ դուն զիս հիասթափ կ'ընես, — ջղայնացաւ Գեղամ. —

եւ ես չեմ կրնար հաւատալ որ քեզի պէս ուշիմ եւ զարգացած երիտասարդ մը կրնայ ինքզինք այսպէս խաբել: Սկզբունք եւ հաւատք ունենալը համոզում եւ քաջութիւն կը պահանջէ, ճիշդ է, բայց իրապաշտ ըլլալն ալ նոյնքան կարեւոր է: Որովհետեւ համոզում կամ հաւատք ունիս, պէտք է իրականութիւնները ընդունելու քաջութիւն ունենաս նաեւ, եթէ նոյնիսկ վարկարեկիչ թուի ատիկա քեզի: Հաւատքը կամ համոզումը միտք եւ տրամաբանութիւն կ'ենթադրէ: մինչդեռ դուն ճիշդ հակառակը կը փաստես այս ընթացքովդ: Անկարելի, անտրամաբանական եւ անիմաստ պատրանքներու անձանտուր ըլլալը՝ ոչ հաւատք է, եւ ոչ ալ քաջութիւն, այլ միայն ինքնախաբէութիւն, որ քեզի չի վայելեր:

Մուշեղ Սարգիսեան հնազանդ եւ խելօք աշակերտի մը վըր նմանէր այդ պահուն: Յայտնապէս կը մտածէր եւ անջատուած էր անմիջական շրջապատէն. ոչ քովի սեղանէն բարձրացող աղմուկը կը լսէր, եւ ոչ կողքին նստած մարդուն ջղայնացած ու խիստ արտայայտութիւնը կը տեսնէր: Ռումբերը լուծ էին մինչ այդ, եւ անդրադարձաւ որ դժգոհ էր, պատրանաթափ: Ինչէ՞ն: Վերահաստատուած խաղաղութեան, թէ Պր. Տարօնեանէն: Հաւանաբար ինքնիրմէ: Սա անժպիտ եւ կոշտ մարդուն բառերը խոցած էին զինք. բայց իրաւունք ունէր ան թերեւ: Ի վերջոյ ի՞նչ կ'ընէր ինք, եւ ինչ կրնար ընել:

— Հոս անգործ կը պտըտիս, — շարունակեց Տարօնեան, — եւ մօտ օրէն դատարկապորտ մը կրնաս ըլլալ: Ոչ դուն քեզի եւ ոչ ալ ուրիշներուն օւտակար կ'ըլլաս: Ամէն օր տեղ մը, ամէն օր մէկուն տունը. եւ կ'ուզես զիս համոզել որ մեծ դործ մը կ'ընես պարապսարապ թափառելով: Փոխանակ ժամանակը վատնելու, կրնաս երթալ եւ ուսումը շարունակել. այս տարիները չեն վերադառնար, եւ կեանքիդ մէջ անգամ մըն ալ չես տեսներ զանոնք: Իսկ երբ անդրադառնաս, շատ ուշ կ'ըլլայ:

— Ուսումս չեմ ուզեր շարունակել:

— Ինչո՞ւ:

— Համալսարանական վկայականներով չեմ հետաքրքրուած, ու պէտք ալ չունիմ: Առաջինը առի, եւ ի՞նչ փոխուեցաւ: Իսկ ուսումը կամ զարգացումը համալսարանը չէ որ պիտի տայ ինձի:

— Կեանքդ այսպէս վատնելու իրաւունք չունիս սակայն:

— Անպայման պէտք է ուսանի՞մ:

— Ինչ կ'ուզես ըրէ՞, բայց տարիներդ մի վատնես: Քանի ուսանիլը ժամավաճառութիւն կը նկատես, ասպարէզ մը ընտրէ եւ այդ ուղղութեամբ աշխատելու սկսէ՞: Այլապէս մասին մտածէ՞: Կղե-

բական կ'ուզես ըլլալ, եղի՛ր. կ'ուզես ծառայել՝ ծառայէ՛: Փողոցները չափչփելով ոչ ազգիդ եւ ոչ ալ մարդկութեան կրնաս ծառայել:

— Անկեղծօրէն շուարած եմ, — խոստովանեցաւ Մուշեղ: — Աւելի ճիշդը՝ փոփոխամիտ դարձած եմ: Գիտեմ: Հայրս իրաւունք ունի: Եւ չեմ կրնար մեղադրել զինք, որովհետեւ դիտեմ, թէ ինչ կ'ակնկալէ ինձմէ. ի վերջոյ իր միակ մասն զուսկն եմ: Բայց զիս չի հասկնար:

— Բնական է: Տարիներու անջրպետ մը կայ ձեր միջեւ, եւ հայրդ խառնուածքով բոլորովին տարբեր մարդ է հաւանաբար. պարզ, գործնական հայ մը, որ հայկական եղեռնի բոլոր դառնութիւնները ճաշակած է, ու հակառակ ատոր կեանքի մէջ յաջողած է ու նախանձելի դիրքի մը հասած:

— Ինք յաջողած է, ճիշդ է, եւ այդ յաջողութիւնը իր յաղթանակը եղած է, կեանքին իմաստ տուած: Բայց ես... իր կեանքը չեմ կրնար ապրիլ, չեմ կրնար կրկնել, եւ պէտք ալ չունիմ իրեն հետեւելու կամ նմանելու: Ես տարբեր հետաքրքրութիւններ ունիմ, տարբեր անհատ մըն եմ:

— Շատ բարի: Ինչո՞ւ ժամավաճառ կ'ըլլաս ուրեմն:

— Ձեմ խորհի՛ր որ ժամանակս կը վատնեմ: Ես կեանքի մէջ մէկ իտէլալ ունիմ հիմա:

— Ի՞նչ:

— Օր մը կ'իմանաք:

— Կը ներես, — անկեղծօրէն արտայայտուեցաւ Տարօնեան, — ես սխալած եմ ուրեմն:

**

Երեկոյեան ժամը հինգն էր, եւ Գեղամ խմիչքի առաջին բաժակը ասպարած էր արդէն: Վերջին շրջանին աւելի կանուխ կը սկսէր խմելու, նկատելով որ տուեալ պայմաններուն մէջ ժամը եօթին օրը իր աւարտին կը հասնէր: Թէեւ անհանդարտ եւ ջղային, մասամբ դոհ էր նաեւ, որովհետեւ ժամերով նստած այսպէս՝ կը խոկար կամ կ'երազէր թերեւ: Մտածումները բիւրեղացնելու եւ դասաւորելու կը ծառայէր անգործութեան այս շրջանը, որ պարտադրուած էր իրեն: Տարիներու ընթացքին հեւ ի հեւ վաղք մը եղած էր իր կեանքը. անսկիզբ եւ անվախճան արչաւ մը, որ մեքենայի վերածած էր զինք — նոյնիսկ միտքը: Անգործ ըլլալը բարեք մըն էր այս պարագային, կամ անհրաժեշտութիւն, ինչպէս ըսած էր Պղատոն՝ մտածող մար-

դուն համար: Անդրադ ըլլալով, եւ նկատելով որ անսպառ եւ անվերջանալի ժամեր ունէր տրամադրութեան տակ, նոր լուսարձակի տակ կրնար տեսնել ամէն ինչ: Կեանքը, մարդկութիւնը, ներկայ ժամանակը, ինքզինք — ցարդ կատարածը կամ իրագործածը:

Ոչ ընտանիք ունէր, ոչ զաւակ: Անպատասխանատու, եսակեղրոն մարդ մը, որ ժամանակին կարելոր մէկ մասը կ'անցընէր զինտուներու մէջ: Ինչո՞ւ: Ա՞յս էր հայ գրողին առաքելութիւնը: Ի՞նչ կ'ընէր՝ որպէս գրող: Գրելը իրմէ անկախ էր անշուշտ, եւ կապ չունէր նոյնիսկ իր հետ: Ինք, կամ գրողը իր մէջ, միջոց մըն էր պարզապէս, մինչդեռ գրականութիւնը առանձին եւ անկախ դոյութիւն մըն էր: Ինք իր անձն էր, եւ ոչ թէ գրողը, եւ այս անձն էր որ թերացած էր: Որպէս մարդ ոչնչութիւն մըն էր, եւ ոչինչ իրագործած էր. ոչ երազ ունէր, ոչ սէր, ընտանիք, զաւակ, երազ սէր, երազ, սէր, ուրախութիւն: Սարսափելի էր: Քառասուն տարեկանին վրիպանք մըն էր:

Եւ առանց խպնելու, մեծամիտ ինքնագոհութեամբ մը, Մուշեղին եւ բազմաթիւ այլ մարդոց կը քարոզէր ու կը պահանջէր անոնցմէ որ պատասխանատուութիւն ունենային — գիտակցութիւն, իտէալ, երազ, նպատակ — եւ ապագային մասին մտածէին, ծրագրէին զայն, եւ չթափառէին փողոցներու մէջ: Մինչդեռ ինք, գիշերաչրջիկ Գեղամը, միայն ինք պէտք ունէր այդ յորդորին ու նմանորինակ շան քարոզին:

Ալպիական Մանուշակը նոյնիսկ, այդ պարզ ու միամիտ աղջիկը, իր երբեմնի աշակերտուհին, զերծ չէր մնացած իր խրատականներէն, մինչդեռ ան՝ իր օրհնար եւ առաքինի կեանքով, աւելի իրաւունք ունէր զինք խրատելու, կրթելու թերեւս: Երկու ամիս կ'ընէր ահաւաստի որ չէր տեսած զայն դարձեալ — մայրաքաղաքի երկու մասերուն միջեւ երթուղարձը հիմնովին դադրած էր — ու տարտամօրէն կը յիշէր միայն երբեմն, թէ յոյս ներշնչած էր անոր, կեանք ու երջանկութիւն խոստացած էր: Ի՞նչ կ'ընէր արդեօք հիմա: Տան ծախսերը ինչպէ՞ս կը հոգար՝ երբ ոչ դպրոց մնացած էր, ոչ ամսաթոշակ: Համալսարաններն ու դպրոցները փակուած էին, այս անգամ վերջնականօրէն, ու հազարաւոր ուսուցիչներ զրկուած էին իրենց ընտանիքներուն ապրուստը հոգալու իրաւունքէն: Իսկ Ալիս այլ եկամուտ չունէր. ոչ խնայողութիւն, ոչ հարազատներ, որոնց կարենար զիմել: Տնաքանդ, մենախօսեց Գեղամ, ինչպէ՞ս կրնաս դուն հոս հանդարտօրէն խմել, երբ անոնք հաց իսկ չունին հաւանաբար:

Անպայմանօրէն պէտք է արեւելեան Պէյրութ անցնէր. վաղն

իսկ, եւ եթէ հարկ ըլլար՝ ամբողջ Լեռնալիբանանի շրջանը ընելով: Գէթ կարենար հեռաձայնել: Ալիս ինք կը հեռաձայնէր սովորաբար, բայց երկու շաբաթէ ի վեր հեռաձայնային ամբողջ ցանցը խանգարուած էր: Ի՞նչ պիտի ընէր: Արեւմտեան Պէյրութի որոշ թաղամասերէն իսկ անցնիլը վտանգաւոր էր, մինչ ինք Լիբանանի շրջանը ընելու ծրագիր կ'որոճար: Հերո՛ս: Ինքնիրմէ դժգոհ, չուրջը քննեց՝ իրեն ընկերացող հաւանական թեկնածու մը գտնելու յոյսով: Ներկաները բոլոր, խաղացողներն ու դիտողները, լարուած թղթախաղին կը հետեւէին, իրական այս աշխարհէն անջատուած եւ ինքնամոռաց վիճակի մէջ: Երանելի արարածներ, տխրեցաւ Տարօնեան, բայց նախանձեցաւ նաեւ անոնց:

— Խնդրի՛ր, — ձայն տուաւ դասըկներով, որ կողմնակի կանգնած, խաղը կը դիտէր նոյնպէս:

— Գլուխները տաքցեր են, — կարօ հեռացաւ սեղանէն ու հարցական նայեցաւ իրեն: — Բաւական հետաքրքրական ձեռք մըն է:

— Միւս կողմ անցնելու ամենէն ապահով միջոցը ինձ է, — հարցուց Տարօնեան, առանց կարեւորութիւն ընծայելու անոր ըսածին:

— Խենթացա՞ր:

— Ձեմ կատակեր:

— Գիտեմ, կատակ ընելու սովորութիւն չունիս: Ասոր համար խենթացած պէտք է ըլլաս: Միւս կողմը ի՞նչ դործ ունիս:

— Կարելոր է, պէտք է անպայման անցնիմ:

— Ձեմ դիտեր: Կրնանք հետաքրքրուիլ:

Յաջորդ առաւօտ, ճիշդ ժամը եօթնին, բախեց ժառ Առաքելեանի երբեմնի տան դուռը: Երեխայի մը նման ուրախ էր ու խանդավառ. ուրիշ երկրի մը մէջ գտնուելու նման փորձառութիւն մըն էր, եւ բնականաբար տարօրինակ կը զգար: Տակաւին չէր կրնար հաւատալ որ հոս էր, արեւելեան Պէյրութի մէջ, ուր ամէն ինչ զարմանալիօրէն նոյնն էր: Փողոցները, շէնքերը, խանութները, մարդիկ, բնութիւնը, զարնանային մեղմ ու հաճելի առաւօտը: Գուռը երբ բացուեցաւ երիտասարդ կինը ապշահար դիտեց զինք պահ մը, եւ անդրադառնալով որ թափանցիկ գիշերադէստ մը ունէր հագին, շփոթեցաւ ու քայլ մը ետ առաւ ննջասենեակ վերադառնալու մտադրութեամբ, բայց յետոյ ժպտեցաւ, շիկնեցաւ, մինչ արտայայտութիւնը ներդամտութիւնը հայցեց: Սակայն չկրցաւ խօսիլ եւ անորոշութեան մատնուած, կանգնած մնաց այդպէս դրան սեմին:

— Բարի լոյս, — կարճ ու կտրուկ ըսաւ Գեղամ եւ ուղղուե-

ցաւ դէպի հիւրասենեակ: — Ի՛նչ պապանձեցար մունջ հարսի պէս: — Որո՞ւ մտքէն կ'անցնէր: Վայրկեան մը, հիմա կու գամ վրաս բան մը հազուիմ:

— Երեխաները ո՞ւր են:

— Քնացած են դեռ:

Երբ առանձին մնաց, Գեղամ Տարօնեան զգաց որ անյարմար կացութեան մը մէջ Վը դառնուէր: Առաւօտեան այս վաղ ժամուն ի՞նչ կ'ընէր հոս: Ճիշդ է, թէ Ալպիական Մանուշակն էր, ու տունն ալ՝ անոր տունը, բայց ինք օտար մըն էր ի վերջոյ եւ իրաւունք չունէր ինքնիրեն այսքան ազատութիւն արտօնելու: Չափազանց փափկանկատ ու վերապահ եղած էր միշտ, ու խուսափած էր օտար տուներէ եւ այս կարգի այցելութիւններէ — մանաւանդ առանձին... կեանքին մէջ մարդու չէր այցելած, ոչ իսկ բարեկամներուն: Փորձեց ինքզինք արդարացնել, տրամարանել ու չիճացնել քիչ առաջուան սքանչելի տրամադրութիւնը: Շատ զգայուն դարձած էր, կամ իսկապէս կը շափազանցէր, որովհետեւ վստահ էր, թէ Ալիսին համար հաճելի անակնկալ մըն էր իր այցելութիւնը: Բայց այսքան կանո՞ւր:

— Ե՞րբ այս կողմ անցար, — հարցուց Ալիս, երբ հազուած ու սանտրուած հիւրասենեակ վերադարձաւ:

— Հիմա, քիչ առաջ:

— Ինչպէ՞ս: Խոհեմութիւն էր ըրածդ:

— Գժգո՞հ ես:

Ալպիական Մանուշակի մեղադրող բայց հրեշտակային արտայայտութիւնը յանդիմանեց զինք:

— Շա՛տ: Իրաւ որ նուազ ունիս եղեր, զարմանալի ես: Կամ բնաւ չես դար, կամ անկարելի եղած ատեն կը յայտնուիս: Եթէ բան մը պատահէ՛ր:

— Ես անմահ եմ:

Խնդացին: Ալիս հիացումով, կարօտով դիտեց սա բարդ բայց երեխայ մարդը, որ նստած դիմացը քաղցր ժպիտը կը ցուցադրէր իրեն: Այս ժպիտն էր որ հմայած էր զինք առաջին իսկ օրէն, երկար տարիներ առաջ: Եւ զարմանալիօրէն չէր փոխուած ան. ոչ ինք, եւ ոչ ալ ժպիտը:

— Բայց խենթութիւն է, — խօսեցաւ յետոյ: — Երէկ դժոխքի վերածուած էր աշխարհը. վիճակնիս տեսնէիր... կարկուտի պէս ուռմբ կը տեղար, ու մեռնողներուն թիւը...:

— Բայց ողջ ենք, — ընդմիջեց Գեղամ: — Երբ ժամը հասնի, մահը կու գայ քեզ կը դտնէ, եթէ նոյնիսկ պահուրտած ըլլաս: Իսկ

եթէ կարգը չէ եկած, մահին ետեւէն ալ վազես, կ'անտես քեզ: Այնպէս որ՝ պահուրտելու կամ վախնալու պատճառ չունինք. թէ ոչ կեանքի մէջ ոչինչ կրնանք ընել, իրադարձել, ապրիլ. այո՛, նոյնիսկ չենք կրնան ապրիլ: Ինչո՞ւ կը խնդաս:

— Պարզութեանդ, կամ միամտութեանդ: Հարցը մեռնի՞ն է միայն: Երանի ճիշդ ըլլար. կը մեռնիս ու վերջ... կ'ազատիս: Աւելի սարսափելի վտանգներ կան. օրինակ՝ վիրաւորուիլ, ձեռք մը կամ ոտք մը կորսնցնել եւ չմեռնիլ: Առեւանդուիլ, խոշտանդուիլ, անտեղի կերպով չարչարուիլ, անարդուիլ:

— Զիս ինչո՞ւ պիտի առեւանդեն: Ես ո՞վ եմ, ի՛նչ կը ներկայացնեմ իրենց համար:

— Առեւանդուողները բոլոր մեզի պէս անմեղ մարդիկ են, բայց կոյր ատելութեան, որի դոհեր են բոլորն ալ: Անհետացող հարիւրաւոր մարդոցմէ քանի՞ն բան մը կը ներկայացնեն, ինչպէս կ'ըսես, կամ ի՛նչ կապ ունին այս պատահածին հետ:

— Քաղաքագէտ դարձեր ես, — կատակեց ուսուցիչը: — Եթէ պատահի, ի՛նչ կարելի է ընել: Մինչ այդ, քանի որ ղ իմ եւ չեմ առեւանդուած, այս ժամուն սուրճ մը հաճոյքով կը խմեմ:

— Անմիջապէս: Նախաճաշի համար ի՛նչ կը նախընտրես:

— Խորոված դառնուկ:

— Լո՛ւրջ, — դժգոհակութեամբ հարցապնդեց Ալիս:

— Նախաճաշելու սովորութիւն չունիմ:

— Լաւ կ'ըլլայ որ փոխես այդ սովորութիւնը, որպէսզի վրադ դոյն դայ քիչ մը:

— Անմիջապէս ըսիր, եւ դեռ նստած կը խօսիս:

— Սուրճը կու գայ հիմա: Բաւական անհամբեր ես:

Եղիս Օհանեան հիւրասենեակ մտաւ այդ միջոցին, սուրճի ափսէն ձեռքին մէջ, եւ ակներեւ ուրախութեամբ խօսեցաւ:

— Բարի եկեր ես: Այս ի՞նչ աղուոր անակնկալ է:

Տարօնեան զարմացած նայեցաւ սա տառապած բայց տակաւին երիտասարդ մօր, որու խօսիլը չէր լսած գրեթէ իր սակաւաթիւ այցելութիւններուն ընթացքին, եւ քաջալերուած բտաւ:

— Երբեմն այս կարգի կատակներ կ'ընեմ:

— Կատա՞կ: Երանի ամէն օր ընես այս կատակը: Գոնէ ասոր երեսը կը խնդայ քիչ մը: Երբեմն շարաթներ կ'անցնին ու մարդ չենք տեսներ: Ի՛նչ օրերու մնացինք. ոչ աղբական, ոչ բարեկամ, բոլորովին առանձին մնացինք:

Ալիս Օհանեան ինք եւս զարմացած, ուշի ուշով դիտեց մայ-

ըր, ու թէ եւ դժգոհ, զգաց որ անոր անակնկալ փոփոխութիւնը կը զուարճացնէր զինք:

— Ուրիշ ըսելիք մնաց, — ըսաւ սակայն:

— Ես ըսածս զիտեմ: Պր. Գեղամը օտար չէ, եւ լաւ կ'ըլլայ որ գիտնայ: Թերեւս կարենայ քեզի խօսք հասկցնել, — ու դառնալով Տարօնեանին, Տիկ. Օհանեան շարունակեց. — ոչ կը խօսի, ոչ կը խնդայ. կարծես աշխարհին վերջը եկած է:

Ուսուցիչը հայեացքը սեւեռեց երբեմնի աշակերտուհիին վրայ, յօնքերը կիտեց, բայց յետոյ խնդաց:

— Ինչե՞ր կը լսեմ:

— Շատ կարեւորութիւն մի տար, — Ալիս փորձեց անտարբեր երեւիլ, բայց անակնկալօրէն յորդող արցունքները մատնեցին ներքին խռովքը:

— Կը տեսնէ՞ք, — աւելի ինքնավստահ խօսեցաւ մայրը եւ շտապեց հիւրասենեակէն դուրս:

— Ի՞նչ պատահեցաւ, — հարցուց Գեղամ:

— Կրակին վրայ բան մը կայ կ'երեւի:

— Մայրդ իրաւունք ունի յամենայն դէպս:

Ալիս չհամարձակեցաւ խօսիլ, որովհետեւ հաղիւ կրցած էր արցունքները զսպել, մինչ Պր. Տարօնեան շարունակեց:

— Որքան կը յիշեմ, զուարթ եւ ուրախ աղջիկ մըն էիր, կատարեալ փորձանք: Տխրութիւնը բնաւ չի վայլեր քեզի, կը տգեղցնէ նոյնիսկ:

— Ուրիշ մտահոգութիւն չունիմ արդէն, — իզական բնական պշտանքով ուսերը վեր քաշեց Ալիս, ներքնապէս բաւարարուած կարծես:

— Պատճառը ի՞նչ է:

— Ըսաւ, չէ՞: Մարդ չունինք այլեւս, հարազատ, մտերիմ, հայր, քոյր, ընտանիք: Կեանք է ասիկա: Պատերազմն ալ վրան աղ եւ պիպեր:

— Դպրոցը փակ է անշուշտ:

Պահ մը կասկածեցաւ որ վրան կը խնդար, բայց զարմանալիօրէն ինք հեզնեց յետոյ:

— Ո՛չ, ոււմբերու տակ դասերը կը շարունակենք:

— Լաւ է: Այս տեսակ հարցումի մը ճիշդ պատասխանը տուիր: Կը ներես, ես ալ կը սխալիմ երբեմն: Իսկ ամսականները:

— Ինչպէ՞ս պիտի վճարեն: Իրենք կրթաթուղաները պէտք է դանձեն, որ կարենան ամսականները տալ:

— Քրօջմէդ նոր լուր մը կա՞յ, — Գեղամ չհամարձակեցաւ բուն, հական հարցումը ուղղել:

— Նոր նամակ չենք ստացած: Այս տակնուվրայութեան մէջ նամակ ինչպէ՞ս պիտի հասնի: Գացին, աղատեցան. չէք կրնար երեւակայել որքան ուրախ եմ իրենց համար: Գոնէ իրենք փրկուեցան:

— Այդպէ՞ս ըսենք: Ներկայ պայմանները նկատի առած, թերեւս իրաւունք ունին. բայց լուծում չէ: Քեռայրդ շատ անհանդարտ խառնուածքի տէր մարդ է, ու չեմ խորհիր որ հոն կարենայ ապրիլ: Հայաստանէն վերադարձողը՝ Ամերիկայէն շատ աւելի շուտ հիասթափ կ'ըլլայ. մանաւանդ ժազի նման անձ մը, որ աշխարհը նեղ կը դտնէ: Զարմանալի չէ թէ եւ ի վերջոյ հայ է:

— Հոս ի՞նչ կայ:

— Մեզի համար՝ ամէն ինչ: Պայմանաւ որ երկիրը խաղաղի եւ ապրիլը կարելի ըլլայ: Թէ ոչ հայ չի մնար Լիբանանի մէջ. որ իսկական աղէտ մը կրնայ ըլլալ մեզի համար: Այն ատեն դուն ալ, ես ալ, բոլորս՝ ստիպուած փախուստ պիտի տանք, գէթ կեանքերնիս ապահովելու համար:

— Մօտ օրէն դուն ալ կ'երթաս, — ճակատագրին հետ հաշտուած մարդու դառնութեամբ դանդատեցաւ երիտասարդուհին, — եւ մենք կը մնանք հոս: Միջոց եւ դրամ ունեցողը միայն կրնայ փախչիլ: Միւսները բոլոր դատապարտուած են:

— Ես գործով պիտի մեկնիմ, եթէ կարենամ:

— Ի՞նչ է տարբերութիւնը: Հոս պիտի չըլլաք, մինչդեռ մենք պիտի շարունակենք դժոխքի մէջ ապրիլ:

Տարօնեան յանցաւոր զգաց եւ անդրադարձաւ դարձեալ, թէ թերացած էր ու կը թերանար տակաւին: Անձնասիրաբար ինքն իր մասին կը մտածէր միայն — իր ծրագրերը, իր կեանքը, պաշտօնը, եկամուտը — եւ այս այցելութիւնը ինքզինք արդարացնելու կամ խիղճը հանդարտեցնելու հոգեբանական ճիշդ մըն էր պարզօրէն: Այսուհանդերձ յաջողեցաւ խօսիլ ու ժպտիլ նոյնիսկ:

— Կը զարմացնես զիս: Այսքան յոռետես ըլլալդ չէի գիտեր: Քաջ եւ ինքնավստահ աղջիկ մըն էիր:

— Այո՛, պարզապէս կը վախնամ: Առաջ տարբեր էր. հիմա, չեմ գիտեր, պատասխանատուութիւնն է հաւանաբար: Երբեմն յուսահատութիւն կու գայ վրաս, ու կը կարծեմ որ աշխարհը պիտի փլի եւ ես տակը պիտի մնամ:

— Ինչպէս է, կը հասկնամ: Բայց այսքան յոռետես ըլլալու

պէտք չունիս: Նախ՝ այս կացութիւնը վերջ մը ունի: չի կրնար տարիներ շարունակուիլ:

— Կարելորդ դիմանալն է, — ընդմիջեց Ալիս:

— Կը դիմանաս, եթէ յոյսը չկորսնցնես: Թէ ոչ երկրի բնակչութիւնը ամբողջ անձնատպան պէտք է ըլլար: Բայց չեն ըլլար: Պատճառ մը պէտք է ունենան: Գիտեն, թէ վերջ մը ունի ասիկա, ու կը դիմանան, կ'աշխատին, կ'ապրին եւ իրենց առօրեայ կեանքը կը շարունակեն:

— Ամէն մարդ ընտանիք ունի, տուն, գործ, դրամ:

— Կարդ մը մարդիկ՝ այո՛: Բայց բազմաթիւ ուրիշներ ալ մեզի պէս անգործ են՝ նոյն այս դէպքերուն պատճառով: Սակայն չեն յուսահատած: Երիտասարդ մը կը ճանչնամ, հայ փաստաբան մը, որ իրենց թաղին մէջ հաւ ծախելու սկսած է ընտանիքին ապրուստը հոգալու համար:

— Ես հաւ չեմ կրնար ծախել, — առարկեց բայց խնդաց ուսուցչուհին:

— Պէտք չունիս: Ամսականներդ ներկայիս չես կրնար գանձել, ճիշդ է, բայց օր մը պիտի ստանաս: Մինչ այդ ակոսներդ պիտի սեղմես եւ ձեռով մը պիտի հաւասարակչոես տան ծախսերը:

Տարօնեան զբաղանէն փոքր ծրար մը հանեց եւ յանձնեց երիտասարդուհիին, որ անզգալարար առաւ զայն ու հարցական նայեցաւ՝ նախ ծրարին, յետոյ ուսուցիչին:

— Ի՞նչ է ասիկա:

— Դրամ, — խիստ թոնոյ մը խօսեցաւ Գեղամ եւ առիթ չտուաւ որ կինը առարկէր: — Մօտ օրէն հաւանարար մեկնիմ, եւ անգամ մըն ալ չեմ գիտեր, թէ երբ կրնամ տեսնել քեզ: Երթալէս ետք կանոնաւորաբար պէտք եղածը կը զրկեմ քեզի: Իսկ մինչ այդ այս գումարը գէթ քանի մը ամիս պէտք է տնտեսես:

— Ձեմ կրնար ընդունիլ:

— Կարծիքդ չուղեցի: Հիմա, եթէ նախաճաշ պիտի բերես, քանի այդ մասին խօսեցար քիչ առաջ, հատկանք: Ճաշի չեմ կրնար մնալ, որովհետեւ ժամը տասնին միւս կողմ անցնելու համար ժամագրուած եմ օրաթերթ փոխադրող շարժավարին հետ: Իր հետ եկայ, եւ իր հետ ալ պէտք է վերադառնամ:

— Բայց անկարելի է:

— Ի՞նչը, — խորամանկ ժպիտ մը դէմքին, հարցուց Գեղամ: — Ճաշի չեմ կրնար մնալ: Հարցէ՛ դուրս է:

— Այդ մասին չեմ կրնար պնդել: Դրամը... անկարելի է: Իրաւունք չունիս:

— Ալախիսկան Մանուշակ, — լրջացաւ ուսուցիչը. — այդ իրաւունքը դուն չէ որ կ'որոշես, այլ՝ ես: Միւրեւը նաեւ պատասխանատուութիւն է, զիջում. եթէ իսկապէս կը սիրես, պէտք է զիջիս երբեմն եւ խոնարհ ըլլաս: Ինչպէ՞ս կրնաս այս իրաւունքը զլանալ ինծի, չեմ հասկնար: Պէտք է խնդրե՞մ, աղաչե՞մ: Եթէ ես օգնութեան պէտք ունենայի, պիտի չօգնէի՞ր ինծի:

— Բայց ստիպուած չես, — յուզուեցաւ Ալիս, — դուն ալ պատասխանատուութիւններ ունիս, ծնողք ունիս, եւ իսկապէս անգործ ես:

— Անշուշտ որ ստիպուած եմ: Ներողութիւն, ստիպուած չեմ, բայց պատասխանատուութիւն ունիմ, ինչպէս դուն ըսիր: Միւրեւը պատասխանատուութիւն է նաեւ, համաձայն ես: Եւ եթէ չունենայի, պիտի չկարենայի տալ այս գումարը քեզի: Քանի կրնամ, կը նշանակէ թէ ունիմ: Եւ ուրեմն շտալու իրաւունք չունիմ:

— Չտալո՞ւ իրաւունք չունիս, — շփոթած, պահ մը մտածեց Ալիս Օհանեան: — Հետաքրքրական է: Բառերուն հետ խաղալ կը սիրես, գիտեմ, բայց անկեղծօրէն չհասկցայ:

— Շատ պարզ է: Իմ ունեցածս ինծի չի պատկանիր միայն:

— Որո՞ւ կը պատկանի:

— Բոլոր անոնց, որոնք պէտք ունին բայց իրենցմէ անկախ պատճառներով զրկուած են, եւ ուրեմն իրաւունք ունին ինծի չափ:

— Ձիս համոզելու համար կրնաս այս գեղեցիկ միտքերը արտայայտել, բայց ո՞վ կը հաւատայ:

— Դուն գէթ պէտք է հաւատաս, որովհետեւ ինծի համար համոզումի հարց է. սկզբունքի, եթէ կ'ուզես: Գեղեցիկ միտք կամ պարզ խօսք չէ միայն:

— Ոչ Գրիստոնէութիւնը, ոչ ալ Համայնավարութիւնը կրցաւ այս սկզբունքը զործադրել տալ մարդոց: Մարդկային հոգեբանութեան կը հակադրուի, եւ ուրեմն չի կրնար ճիշդ ըլլալ: Գործադրելի չէ գէթ, որովհետեւ կ'անտեսէ մարդ արարածին եսը, որ անհերքելի իրականութիւն մըն է:

— Վարդապետութիւնները կրնան զործադրելի չըլլալ, բայց ես ոչ որպէս քրիստոնեայ եւ ոչ ալ որպէս համայնավար կը խօսիմ հիմա: Ես իմ անձս գիտեմ, եւ իմ համոզումներս ունիմ:

— Վստահ եմ: Ըսածիդ կը հաւատամ ու գիտեմ, թէ անկեղծ

ևս, երբ այսպէս կիրքով կը խօսիս: Բայց ի՞նչ իմաստ ունի:

— Անպայման պէտք է իմաստ ունենայ: Մարդիկ յաճախ ան-
իմաստ արարքներ կը գործեն, եւ իրենք իսկ չեն կրնար բացատրել
իրենց ըրածը:

— Դուն կրնաս բացատրել:

— Պէտք չունիմ, թէ եւ բացատրեցի: Նախաճաշը ի՞նչ եղաւ:
Հետզ վիճելու չեկայ հոս: Հաւատաքննական հարցապնդո՞ւմ է, ինչ
է ասիկա:

Ալիս Օհանեան զժկամութեամբ կանդնեցաւ ու քալեց դէպի
խոհանոց: Ոչ թէ որովհետեւ զժգոհ էր կամ տեղի տուած: Մըրըրը,
որ ձեռքին մէջ էր տակաւին, մոռցած էր նոյնիսկ: Պարզօրէն չէր
ուզեր, չէր կրնար հեռանալ իր սիրած մարդէն, որու հանդէպ զգա-
ցածը ինք եւս չէր կրնար բացատրել:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ա.

Ժառ կամ Յակոբ Առաքելեան, որ Ամերիկա գալէն հոգ երկրորդ անուանափոխութիւն մը ունեցած էր եւ կոչուած ձէժ, հսկայ Պուլիֆ մը կը քշէր դէպի Լոս Անճելըս: Այսինքն՝ դէպի բուն Լոս Անճելըս, որ այդ անունով ճանչցուած բազմաթիւ գիւղաքաղաքներու եւ քաղաքներու կեդրոնն էր, հին քաղաքը, որու շուրջ հիւսուած էր այս փոքր քաղաքներու կծիկը: Ներկայ Լոս Անճելըսը, իր արբանեակներով, Լիբանանի տարածութիւնը ունէր գրեթէ, կամ՝ Խորհրդային Հայաստանի մէկ երրորդ տարածութիւնը: Մոնթեպելոյէն, ուր կը բնակէր, մինչև հին քաղաքի կեդրոնական հրապարակը առնուազն մէկ ժամ պէտք է քշէր, անցնելով զանազան քաղաքներէ, որոնք առանձին եւ կանաչ ուլասիսներու կը նմանէին: Գալիֆորնիա նահանգը, թէև, անսպաս մը չէր, այլ երկրային դրախտ մը, օտտուած բնութեան բոլոր բարիքներով եւ հրաշալիքներով: Անոր անսահման տարածութեան վրայ արձակուած անհամար կէտեր էին այս մարդարնակ ուլասիսները, որ իրարու շագկապուած էին ասֆալթապատ ճանապարհներու անփերջանալի ցանցով մը:

Գործածուած բայց իրականութեան մէջ տակաւին նոր ինքնաչարժ մըն էր Պուլիֆը, զոր գնած էր երկու հազար տոլարի: Վեց ամսուան ընթացքին կրցած էր բաւականաչափ խնայել եւ գնել այս հրաշալի հրէշը, որ հացէն աւելի անհրաժեշտ էր նմանօրինակ քաղաքներու մէջ: Աշխատելը գրեթէ անկարելի էր՝ առանց ինքնաչարժի: Հիմա գոհ էր յամենայն դէպս, թէև սրահեր կ'ըլլային, երբ թերահաւատութեամբ կը դիտէր ինքզինք փոքր հայելիին մէջ ու կը զարմանար: Այս հսկայ քաղաքի բնակիչներէն մէկն էր, եւ արդէն տուն մը ունէր դարձեալ, գործ ունէր, սեղսական իր օթոն կամ ֆարը, եւ զեռ ողջ էր, մինչ ուրիշներ կը մեռնէին Լիբանանի մէջ: Դէպի քաղաք, աշխատանքի իջնողը ինքն էր հիմա — հոս, ոչ թէ Պէյրութի կամ Երեւանի մէջ: Բայց ի՞նչ: Առանձին էր: Ահռելի, անտանելի կերպով առանձին: Տասը միլիոնէն աւելի բնակչութիւն ունեցող քա-

դաքի մը մէջ ոչնչութիւն մըն էր: Ծանօթներու հանդիպած էր — թէ՛ Լիրանանէն, թէ՛ Հայաստանէն — ու պաշտօնին բերումով բազմաթիւ այլ մարդոց ծանօթացած էր, սակայն չէր կրցած փարատել առանձնութեան զգացումը, որ բոլորովին նոր փորձառութիւն մըն էր իրեն համար: Երկրին օդն էր թերեւս, մթնոլորտը, միջավայրը, մարդոց կենցաղը, կամ յանձնապաստան կեանքը անոնց: Եւ կորսնցուցած էր ինքնութիւնը:

Ոչնչութիւն մըն էր: Ո՞վ կը ճանչնար զինք, ի՞նչ կը ներկայացնէր: Միլիոններ հաշուող այս քաղաքին մէջ հազիւ երեսուն կամ քառասուն մարդ կը ճանչնար. ստոնցմէ ոմանց համար պարզ անուն մըն էր, առաւելագոյն պարագային՝ պաշտօնը ներկայացնող անձ մը: Այլապէս ալ այս երկրին մէջ թիւ մը կամ թուանշան մը կը ներկայացնէր, եւ այդքան: Միլիոնաւոր միւս թուանշաններու կարգին թիւ մըն ալ ինքն էր, եւ ինչպէս միւսները՝ ինք եւս ինքնութիւն չունէր: Ինքը եւ իր ինքնութիւնը: Ծփոթ մըն էր ամբողջ: Ինչպէ՞ս վրնար ինքնութիւն ունենալ, երբ նման էր միւս բոլորին, եւ ոչ մէկ կերպով կը զանազանուէր անոնցմէ: Ապրելակերպով, առօրեայ միտքինակ կեանքով, հագուածքով, ինքնաշարժով եւ հեռուստատեսիլին առջեւ անցուցած ժամերով:

Բարեբախտաբար աշխատանքը ունէր — գրասենեակին մէջ անցուցած ժամերը, պաշտօնակիցները, եւ այս ճամբան, որ իր էութեան մաս կազմած էր: Վերջին շրջանին տունէն գրասենեակ երկարող ճամբուն վրայ, կամ ճամբորդութեան ընթացքին միայն կը հաստատէր կենդանութիւնը. այսինքն կ'ապրէր, որովհետեւ կրնար մտածել, յիշել ու երազել նոյնիսկ: Այո՛, երազել, եւ ուրեմն՝ յոյս ունենալ նաեւ: Որ վը նշանակէր՝ անձնատուր չըլլալ, չպարտուել եւ շարունակել իր պայքարը: Բառը խրտչեցուց զինք: Ի՞նչ պայքար: Ինչի՞ր կամ որո՞ւ դէմ կը պայքարէր: Կամ՝ ի՞նչ նպատակ կը հետապնդէր: Գիտէր, թէ՛ դժգոհ էր ու կ'ուզէր փնտռածը գտնել, ճշմարտութեան մը հասնել: Բայց ի՞նչ էր փնտռածը:

Ընդգծեցուցիչ էր: Հոս եւս օտար կը զգար, երկիրը սիրելով հանդերձ: Կարգն ու կանոնը, օրէնքները, ընծայուած դիւրութիւնները, հանդիստ կեանք մը ապրելու համար ստեղծուած պայմանները, բոլոր՝ հմայած էին զինք առաջին օրէն: Բայց օտար կը զգար եւ դիտէր, թէ՛ չէր կրնար պատկանիլ այս երկրին, եւ երկիրը՝ իրեն: Տարօինակ անբացատրելի զգացում էր, նկատելով որ քաղաքացիներու միջեւ խորութիւն չկար հոս, ու հարուստն ու աղքատը կը վայելէին նոյն քաղաքացիական իրաւունքները: Ճիշդ է, հարստու-

թիւնը անտրամաբանական, անմարդկային չափանիշերու հասցուցած էին հոս, ու չքաւորութիւնը նոյնքան մը անտրամաբանական էր եւ անըմբռնելի, սակայն բոլորն ալ կը վայելէին նոյն իրաւունքները: Իսկ ամենէն կարեւորը՝ աշխատող մարդու դրախտն էր Ամերիկան, ուր օրը օրին հանդիստ կեանք մը կրնայիր ապրել՝ պայմանաւ որ աշխատէր: Այդ իմաստով տարբեր չէր Մովետական Միութենէն, ուր նոյնպէս քաղաքացիէն կ'սկսկալուէր իր առօրեայ ապրուստը ապահովելով հետաքրքրուել միայն: Կեր, արբ եւ ուրախ լեր:

Բայց ինչպէ՞ս:

Գաղափարին հետ չէր կրցած հաշտուել հոն, եւ ընականաբար նոյնը պիտի պատահէր հոս: Հայաստանի մէջ դէ՛յք հայրենի հողի վրայ ըլլալու դիտակցութիւնը ունէր, որ մասամբ իմաստ կու տար կեանքին: Կը հաւասարակշռէր, կը մխիթարէր, եւ առիթ կու տար իրեն հպարտանալու երբեմն երկրին նուաճումներով: Եւ այս հակառակ տիրող ծայրայեղութիւններուն եւ կամայականութեանց: Ամերիկան այդ տեսակ իմաստ չէր կրնար տալ կեանքին, որովհետեւ իր երկիրը չէր, ու չէր կրնար ըլլալ: Թէեւ ոչ ոք կ'արզիլէր որ իր երկիրը ըլլար նաեւ: Իրմէ անկախ էր ատիկա — բարեբախտաբար կամ դժբախտաբար: Պարզօրէն հարազատ չէր զգար, ու չէր կրնար պատկանիլ մարդկային այս խառնարանին: Ամերիկան ոչ ոքի կը պատկանէր ի վերջոյ:

Սակայն այլ ընտրութիւն չունէր այլեւս, դէ՛յք ներկայիտ, որովհետեւ ասկէ անդին Խաղաղական Ուղիիանոսը կար միայն: Լիրանան չէր կրնար վերադառնալ. եւ իրաւունք չունէր յամենայն դէպս կրնն ու երեխաները կրակին բերանը նետելու դարձեալ: Եթէ կարենար աներն ու քենին բերել կու տար, դէ՛յք առժամապէս, եւ զանոնք կը փրկէր այդ դժոխքէն, ուր մնացած էին՝ անտէր եւ անպաշտպան: Իսկ ուրիշ երկիր... ո՞ւր: Եւրոպա՞: Բայց ինչո՞ւ, եւ ի՞նչ էր տարբերութիւնը:

Գրասենեակ մտած վայրկեանին սկսաւ ժպտիլ եւ քաղաքավարութեամբ բարեւել բոլոր ներկաներուն: Ժպտիլը պաշտօնին կարեւոր մէկ մասն էր, թէեւ դիտէր, թէ՛ ապահովադրական գործի գլխաւոր գաղանիքը մարդ համոզելն էր. այլ խօսքով՝ խաբելը: Կրնար չժպտիլ անշուշտ եւ կատարել գործը — բացատրել յաճախորդներուն, անհասկնալի եւ բարդ ծրագիրներ որպէս յարմարագոյն եւ շահարեք պայմանագրութիւն ներկայացնել — վստահելով իր բժախաղորդութեան, բայց նկատած էր որ ժպտելը բոլորին հպորագոյն զէնքն էր այս ասպարէզին մէջ: Իրեն բացատրելու պէտք չէին ունե-

ցած: Աշխատանքի սկսելէն երկու շաբաթ ետք ինքնաբերաբար տիրացած էր վաղտնիքին, եւ դերագանացած տարիներու փորձառութիւն ունեցող իր պաշտօնակիցները: Ձինք այլ մոլորակէ մը երկիր հասած չնաշխարհիկ արարած մը կը նկատէին, եւ հիասքանչ բացագանչութիւններով կը դիմաւորէին իր բոլոր արարքները: Պօսակցութիւնը, վարժունքը, յաճախորդներուն հետ յարաբերելու եւ գանձնք մշակելու եղանակը, դրած նամակներն ու տեղեկագրերը, գործածած անդրերէնը, եւ անշուշտ՝ անդուդական ժպիտը:

Առանձին սենեակ մը յատկացուցած էին իրեն ու տրամադրութեան տակ դրած էին քարտուղարուհի մը, որ քարտուղարութիւնը նեղէ աւելի, զինք խնամելու պաշտօն ստանձնած էր: Կամ ինքնիրեն տուած էր այդ պաշտօնը: Մասնաւոր գործ կամ պարտականութիւն չունէր արդէն, եւ ինքն ալ օրական հազիւ մէկ ժամուան աշխատանք կրնար տալ անոր — մեքենագործելիք տեղեկագրի մը կամ պարտանագրութիւն մը — նկատելով որ հրաշագործ հեռաձայնին կը վստահէր առաւելաբար: Այս քաղաքին եւ երկրին մէջ առանց հեռաձայնի ոչ մէկ գործ վարելի էր կատարել: Այլապէս լման օր մը պէտք է տրամադրէր հաւանական մէկ յաճախորդ կամ զոհ որսալու համար:

— Ինչպէ՞ս ես այս առաւօտ, — քարտուղարուհին հետեւեցաւ իրեն եւ բացաւ սենեակին վարագոյրները, զորս պոց կը պահէր իր բացակայութեան:

— Լաւ: Հեռաձայնող եղա՞ւ:

— Սերորը, բարեկամդ: Հանգիստ քնացա՞ր:

— Սովորականին պէս:

— Ես բնաւ չկորցայ քնանալ:

— Ի՞նչ կ'ուզէր, — Առաքելեան անտեսեց աղջկան ակնարկութիւնը, որ յանկերգի մը նման կը կրկնուէր ամէն առաւօտ:

— Ըսաւ որ հեռաձայնես իրեն: Սուրճդ հիմա՞ կ'ուզես, թէ աւելի ուշ:

— Եթէ բերես, շնորհակալ կ'ըլլամ:

Մարթա արտակարգ եռանդով մը վաղեց դուրս, ոստոստելով կամ պարելով կարծես, ու սենեակը ողողեց իր վարակիչ ուրախութեամբ: Ընթ դահուկութեամբ յօրանջեց բայց տխրեցաւ՝ դիտելով անոր գեղեցիկ մարմնին ծեփծեփումը: Գեղեցկութիւնը միշտ տխրեցուցած կամ յուզած էր զինք, եւ բնականաբար անտարբեր չէր կրնար մնալ հիմա եւս: Գիտէր, թէ օր ըստ օրէ կը տկարանար, եւ ամէն օր քիչ մը աւելի տեղի կու տար անոր անվհատ ու հետեւողական ճիգերուն ի տես: Աղջիկը պարզօրէն սիրահարած էր իրեն, եւ առիթ

չէր կորսնցներ սէրը արտայայտելու ուղղակի կամ անուղղակի կերպով: Բառեր կամ նախադասութիւններ չէր գործածեր, եւ պէտք ալ չունէր գործածելու, որովհետեւ մարմինը ամբողջ կը խօսէր — աչքերը, ձեռքերը, շարժումները — ու գուրգուրանքով շնչահեղձ կ'ընէր զինք:

Մարթայի վերադառնալուն չսպասեց. ընկալուչը վերցուց եւ ինք հեռաձայնեց Սերորին:

— Ի՞նչ կ'ուզես, կա՛րճ:

— Ակա, կարօտցանք: Օր մը նստինք միասին եւ հին օրերուն պէտք թէ՛ մը ընենք:

— Սրիկա՞յ, ես քեզի պէս կապիտալիստ չեմ, որ երկու ժամ քշելով քովք դամ: Գացիր աշխարհին միւս ծայրը պալատ մը գնիր եւ որ մարդ այցելութիւն չտայ քեզի:

— Լո՛ւրջ: Գիշեր մը սանկ աղուսը քէ՛յՖ մը ընենք:

— Կնիկդ առ եկուր. ուզած օրդ: Ես միշտ տունն եմ, ժամը վեցէն ետք անշուշտ:

— Վաղը իրիկուն: Յաջորդ օրը Կիրակի է: Ի՞նչ ըսիր:

— Եղաւ, — պատասխանեց Առաքելեան: — Քանի՞ միլիոնի տէր եղար:

— Սպասէ՛ նայինք, դեռ պարտքերու մէջ կը լողամ կոր: Բայց գործը լաւ է. այստեղի կիները ոսկեղէնի սիրահար են:

— Քեզի ալ այդպիսի կթան կովեր պէտք են արդէն:

— Ուրեմն վաղը կը տեսնուինք, — Սերոր լուռ անցաւ վերջին ակնարկութեան վրայէն: — Պէ՛յրութէն նոր լուր ունի՞ս:

— Այո՛, սկսած են մարդ ուտել եղեր:

— Տրամադրութիւնդ տեղն է, լաւ է: Ձերիններէն ի՞նչ լուր: Հայութիւնը ի՞նչ վիճակի մէջ է:

— Այդքան մտահոգուած ես, — խնդաց ժառ:

— Այսօր բան մը եղեր է քեզի: Յետսութիւն:

Այո՛, անդրադարձաւ Յակոբ, ժառ կամ ձէք Առաքելեան, արտակարգօրէն լաւ տրամադրութեան մէջ էր, թէ եւ մասնաւոր պատճառ չունէր այսպէս յիմարօրէն զուարճանալու: Թերեւս Մարթայի ներկայութիւնն էր, կամ աշնանային մեղմ օդը: Թանձր մշուշ մը չուրած էր ամբողջ քաղաքին վրայ եւ արդեւ կ'ըլլար արեւին, որ սովորաբար կը խանձէր քաղաքն ու քաղաքացիները: Կ'ըսէին, թէ մշուշ չէր ասիկա, այլ Լոս Անճելըսի նշանաւոր ամպը, որ գործարաններէն եւ ինքնաշարժներէն արձակուած ծուխի թանձրացած մարմինն էր՝ երկնակամարին վրայ: Կը նստէր հոն վերը ժամերով, եր-

բեմն օրերով, ու կը թունաւորէր ամէն ինչ — մարդ, կենդանի եւ բուսականութիւն՝ հաւասարապէս: Այլապէս շատ հաճելի եւ բարեխառն կլիմայ մը ունէր Գալիֆորնիա նահանգը, որ ամէն կերպով կը յիշեցնէր Լիբանանը: Մանաւանդ ներկայիս՝ իր հայկական գաղութով եւ թաղամասերով:

Վերջին տասը տարիներուն Միացեալ Նահանգներ հաստատուած հայերը, որոնք եկած էին առաւելաբար Լիբանանէն ու Հայաստանէն, մեծահամբաւ ու նշանաւոր Հոլիուուդը հայկական աւանի վերածած էին: Ամերիկայի Պուրճ Համմուտը, ինչպէս կոչած էին զայն արդէն:

— Ծաքարով, թէ առանց շաքարի, — Մարթա դրասեղանին վրայ տեղաւորեց ամերիկեան սուրճով լեցուն մեծ գաւաթը:

— Մէկ դգալ: Ծնորհակալ եմ:

— Զարմանալի մարդ ես: Ամէն օր նոր ձեւով մը կ'առնես սուրճը: Օր մը առանց շաքարի, օր մը երեք դգալ, օր մը մէկ. երբեմն կաթով, երբեմն...:

— Մարդ արարածը ամէն օր նոյնը չէ. յաճախ կը փոխուի, ինչպէս գիտես, երբեմն օրական բարձրութիւն անդամներ:

— Կրնայ պատահիլ: Ատոր համար ամէն օր տեսակ մը տրամադրութեամբ կու գաս գրասենեակ:

— Ես ալ մարդ եմ, — ձէք ժպիտը հազաւ վերստին:

— Բայց ես չեմ փոխուիր, — ամենայն անմեղութեամբ դանդաղեցաւ աղջիկը:

— Դուն միշտ ուրախ ես, ճիշդ է, ու կը նախանձիմ քեզի ատոր համար:

— Իրաւունք ունիս: Պատճառն ալ գիտեմ. շատ պարզ է: Որովհետեւ գործէս գոհ եմ, եւ հետզ աշխատիլը... հաճոյք կը պատճառէ ինձի:

— Ծնորհակալ եմ:

— Ո՛չ: Լուրջ կը խօսիմ:

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա, — Առաքելեան հարցուց, զգալով հանդերձ, թէ դժգոհ չէր լսածէն:

— Աշխարհի ամենէն երջանիկ աղջիկն եմ:

— Հետաքրքրական է: Ուրիշներ երջանկութեան ինչ ըլլալը չեն գիտեր: Յամենայն դէպս երանելի ես: Պատճառը ի՞նչ է:

— Յստակ է, չէ՞: Միշտ հետզ եմ. ուրիշ ի՞նչ պատճառ կրնամ ունենալ:

— Ես ամուսնացած մարդ եմ:

— Ի՞նչ կարեւորութիւն ունի: Ամուսնացած մարդ մը կարելի չէ՞ սիրել:

— Չեմ գիտեր, ըստ երեւոյթին կարելի է: Քու հարցումդ կը հաստատէ արդէն ատիկա:

Մարթա Միքման անդգալաբար նստեցաւ դրասեղանին կից դետեղուած բազկաթոռին մէջ ու վերացած, գրեթէ ինքնամոռաց վիճակի մէջ, դիտեց սա չնաշխարհիկ արարածը, որու իւրաքանչիւր խօսքը քիչ մը աւելի սիրելի կը դարձնէր զինք: Եւ փաստօրէն ուրախ էր, անմեղօրէն զուարթ, երջանիկ եւ անկարող՝ զիմացինին ներաշխարհէն ներս թափանցելու:

— Բայց ես չեմ կրնար քեզ սիրել, — հարկադրուած շարունակեց ձէք:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ իմաստ չունի, ճիշդ չէ, եւ ոչ ալ արդար: Կրկնապատիկ տարիքդ ունիմ գրեթէ:

— Այդ ամբողջը ինձի համար նշանակութիւն չունի: Կեանքի մէջ ոչ մէկ բան իմաստ ունի: Միայն այն որ կը պատահի, իրական է. եւ անձէն կախեալ է պատահածին մէջ իմաստ փնտտելը: Ես չեմ փնտտեր, որովհետեւ իրականութիւնները կ'ընդունիմ ու չեմ հարցաքններ դանձր:

Առաքելեան մասնաւոր, անյետաձգելի գործ կամ պարտականութիւններ չունէր ու գիտէր, թէ քարտուղարուհին նոյնպէս ազատ էր: Ապահովագրական ընկերութեան մը մէջ պաշտօն ունենալու առաւելութիւններէն մէկն ալ այս էր: Քեզ դրասեղանին կամ գրասենեակին կապող պարտականութիւններ չունիս. իսկ աշխատանքի ժամերը դուն կ'որոշես, նկատելով որ տրամադրած ժամերէդ աւելի ապահովագրած որսերուդ թիւը քեզ արժանի կը դարձնէ վարձատրութեան եւ գնահատանքի: Քանի մը հեռաձայնային հաղորդակցութիւն, եւ արդէն լման օրուան մը գործը կատարած կ'ըլլաս: Մինչ այդ կրնաս երազել, շողալիքատել, սիրաբանիլ, փողոցներուն մէջ սլքտալ կամ բարեկամներու այցելել, ուրիշներու աշխատանքին արդեւ ըլլալ, կամ նոյնիսկ մրափել: Ուրեմն կրնար յամենալ եւ այս խօսակցութիւնը շարունակել: Սովորաբար կը ձանձրանար արդէն եւ ախմախ կը խորասուզուէր մտորումներու մէջ, որ իր միօրինակ առօրեան աւելի անտանելի կը դարձնէին:

— Իրականութիւններ կան որ անբաղձալի արդիւնքներու կ'առաջնորդեն մեզ. — խօսեցաւ ի վերջոյ, միաժամանակ մտածելով,

թէ այս աղջիկը քաջալերելը կրնար լուրջ հետեւանքներ ունենալ եւ խախտել կեանքին անդորրը:

— Իրականութիւնները կ'ընդունիմ ըսի: Պատահելիքէն չենք կրնար խուսափել, եթէ նոյնիսկ փորձենք:

— Դուն աշխարհէն լուր չունիս եւ ամէն ինչ պարզ կը թուի քեզի բնական է: Երիտասարդ ես, գրեթէ պատանի, եւ յուսախարութիւններ չես ունեցած տակաւին: Չեմ ուզեր քեզ յուսախար ընել, բայց կեանքը իր տղեղ կողմերն ալ ունի. դժբախտութիւն, զրկանք, անօթութիւն, վատ եւ անձնասէր մարդիկ, պատերազմ, մահ եւ անարդարութիւն:

— Անշուշտ, — զմայլելի անտարբերութեամբ մը ուսերը ցնցեց Մարթա, — բայց ամէն ինչ իր ժամանակը ունի, ամէն ինչ կարգով: Երբ ուրախ եմ եւ երջանիկ, պատճառ չունիմ դժբախտութեան մասին մտածելու կամ ինքզինքս զրկելու:

— Դուն ուրախ ես, շատ բարի, իսկ մարդիկ ալ կան որ չեն: Ոմանք մտահոգութիւններ ունին, ուրիշներ՝ հիւանդութիւն, նիւթական դժուարութիւններ, ընտանիք ապրեցնելու պտտասխանատուութիւն:

— Դուն այսինքն:

— Նաեւ ես:

— Բայց հիւանդ չես, — յաղթական ժպտեցաւ Մարթա, — զորք ունիս եւ լաւ կը շահնաս: Իսկ ընտանիքդ... հաճոյք մը պէտք է ըլլայ: Գէթ քու պարադայիդ այդպէս է, գիտեմ:

— Ուրե՞մն: Ինչո՞ւ կ'ուզես տակնուվրայ ընել ամէն ինչ եւ զրկել զիս այդ հաճոյքէն:

— Երբե՞ք: Բայց դուն ալ ինծի իմ հաճոյքներս զլանալու իրաւունք չունիս: Քեզմէ աւելին չեմ պահանջեր:

— Ասկէ աւելի ի՞նչ պիտի պահանջես:

— Ձես կրնար արդիւլել որ քեզ սիրեմ, — լրջօրէն վիճեցաւ քարտուղարուհին: — Ատիկա քեզմէ կախեալ չէ, եւ քեզի չի վերաբերիր:

— Ի՞նչ խօսք: Սէրը ո՛չ կարելի է արդիւլել, եւ ոչ ալ պարտադրել: Բայց եթէ փոխադարձ չըլլայ, արժէք չունի:

— Ինծի համար ունի: Կարեւորը իմ զգացածս է:

— Սիրողը միշտ կ'ուզէ սիրուել նաեւ, — Առաքելեան փորձեց տրամարանել: — զլալով որ զինաթափ պիտի ընէր զինք չնախատեսուած այս փորձանքը: Ամերիկա ասո՞ր համար եկած էր:

— Բնական է: Սակայն չի կրնար զգացումներուն դաւաճա-

նել, սիրելէ դադրել, երբ սիրած մարդը նոյնը չի գտար իրեն հանդէպ: Կրնայ գաղափարին հետ հաշտուել, իրականութիւնը ընդունել եւ սիրել տակաւին: Ըսի, չէ՞, իրականութիւնները կ'ըզունիմ ես:

— Կրնաս զիս փորձութեան առաջնորդել:

— Ի՞նչ տեսակ փորձութիւն, — Մարթայի աչքերը կենդանացան յանկարծ:

— Մարդ եմ եւ կրնամ սխալ մեկնել ըսածդ, տկարանալ... Ի վերջոյ գեղեցիկ կ'իմ ես, ցանկայարոյց:

— Գիտեմ:

— Դիտումնաւոր կերպով կ'ընես այս ամբողջը ուրեմն: Այնքան ալ միամիտ չես եղեր:

— Միամիտ, — զարմացաւ աղջիկը: — Այս ամբողջը շատ բնական է ինծի համար: Անշուշտ որ գեղեցիկ ըլլալս գիտեմ. բայց ի՞նչ կ'ապ ունի:

— Ասկէ առաջ այր մարդոց հետ դործ ունեցած ես երբեւիցէ. ցանկութիւն կոչուածին մասին գաղափար ունի՞ս: Այր մարդը այդ իմաստով զղուելի է երբեմն:

— Որոչ չափով: Ձիս չի հետաքրքրեր ատիկա:

— Պէտք է հետաքրքրէ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես ալ այր մարդ եմ:

— Քեզ կը սիրեմ, այնպէս որ բոլորովին տարբեր է:

— Բայց ես նոյնը չեմ զգար:

— Կը զգաս: Այլապէս հետս պիտի չխօսէր այս մասին:

Ճէք չյուսահատեցաւ, թէեւ կը զգար որ աղջկան անկեղծութիւնը սկսած էր դժուարութեան մատնել զինք: Տրամաբանութիւնը օգտակար պիտի չըլլար, եզրակացուց, որովհետեւ բնութեան անաղարտ մտացած հրաշալիքներէն մէկն էր այս արարածը, որու միամտութիւնը այնքան վտանգաւոր կրնար ըլլալ՝ երկուքին ալ համար: Բայց ըսաւ:

— Կը սխալիս: Ձիս չես ճանչնար, ոչ ալ կ'իմս. եթէ ճանչնայիր, սխալած ըլլալդ դուն իսկ պիտի կարենայիր հաստատել: Աւելի ճիշդը՝ պիտի չսխալէիր: Շատ համերաշխ եւ ներդաշնակ զոյգ մըն ենք:

— Ձեմ կասկածիր: Կի՞նդ չեմ ճանչնար, ճիշդ է, եւ վստահ եմ, թէ սիրով էք. բայց քեզ կը ճանչնամ: Ինչո՞ւ այս մասին կը վիճինք:

— Վէճ չէ: Պէտք է զիրար հասկնանք եւ միանգամ ընդմիշտ

յստակացնենք հարցերը:

— Ի՞նչ հարց, — անվրդով եւ հանդիստ խօսեցաւ Մարթա: — Ոչ հարց, ոչ խնդիր ունինք: Ինձի համար ամէն ինչ յստակ է: Քեզ կը սիրեմ, եւ համոզուած եմ, թէ քեզմէ ոչինչ կրնամ ակնկալել իրաւունք չունիմ: Եւ չեմ ակնկալեր:

— Սուք է ատիկա, եւ դիտես, թէ ճիշդ չէ:

— Այո՛, սակայն ի՞նչ կրնամ ընել: Գիտեմ, թէ ակնկալութիւն ունենալու իրաւունք չունիմ, եւ չեմ ակնկալեր: Իրապաշտ ըլլալը յանցա՞նք է:

Քարաւարուհիին ինքնազատահաս, անբարոյնեկտրէն ուրախ արտայայտութեամբ մը դիտեց խօսակիցը եւ կանգնեցաւ ոտքի:

— Քեզի համար դժուար է ըմբռնել, — ըսաւ նախքան դրասնեակէն դուրս ելլելը: — Սուրճ մը եւս կ'ուզե՞ս, — հարցուց դուռը փակելէ առաջ:

— Ո՛չ, չնորհակալ եմ:

Առաքելեան պտուտակաւոր աթոռը դարձուց եւ տեսարանը դիտեց պատահանէն դուրս: Նորակառոյց այս շէնքի ութերորդ յարկէն երկինքը կրնար տեսնել միայն եւ քանի մը երկնասլաց այլ շէնքեր, որ հարուստ էին Լոս Անճելըսի մէջ: Նոյն ճնշիչ երկինքն էր: Քարաւար իր առօրեայ հեւքը կ'աղբէր վարը, թէ եւ ոչինչ կը տեսնէր այդ բարձրութեան, ու հազիւ կը լսէր հաղարաւոր սուրացող ինքնաչարժներու խուլ հոնդիւնը: Տարբեր աշխարհ մըն էր, անձանօթ բայց եղակի, նոր ու անհազորդ՝ գէթ իրեն համար: Եւ ինք օտար մըն էր ի վերջոյ, որքան ալ պաշտօնակիցները սիրէին եւ յարգէին զինք: Իր իսկ դրասնեակը խորթ էր իրեն, ու երբեմն կը քննէր ինքզինք այս ճոխութեան մէջ ու կը տարակուսէր, թէ ինքն էր պաշտօնավարողը այս հաստատութեան մէջ: Պէյրութ ալ դրասնեակ մը ունէր, աժդուած եւ աղքատիկ դրասեղանով մը եւ մերկ պատերով, որ ձմրան ամիսներուն իրենց խոնաւութիւնը կը տարածէին բոլոր իրերուն վրայ, թափանցելով մինչեւ սկիորներն ու ծուծը: Իսկ երեւան՝ այլ փորձառութիւն էր անշուշտ: Սակայն այստեղի անթերի սարքաւորումն ու դիւրութիւնները, կանոնաւորութիւնը, աշխատանքի հանդիստ պայմանները, հեռաձայնային եւ այլ կարգի բոլոր սպասարկութիւններուն անսխալականութիւնը՝ կեանքը անխրական կը դարձնէին: Անբնական, ընդվզեցուցիչ: Այնքան մը, որ կեանքը հետաքրքրական ըլլալէ դադարած էր հոս. անակնկալներ չկային — փոփոխութիւն, խանդարում, անկանոնութիւն, ջուրի կամ ելեկտրական հոսանքի տաղնապ: Մարդկային չէր:

Ի՞նչ կ'ընէր հոս, անդրադարձաւ յանկարծ, եւ ո՞վ էր այս Մարթա Միլման կոչուած անձանօթ պարմանուհին, որ այնքան մօտ եւ մտերիմ կը զգար ու դրոհելով, կոխկռտելով կը մտնէր իր կեանքէն ներս: Եւ անոր մտին ի՞նչ գիտէր իսկապէս: Ոչինչ: Բացարձակօրէն ոչինչ: Չէր իսկ գիտէր, թէ ընտանիք մը կամ հարազատներ ունէ՞ր: Ի՞նչ կ'ընէր, ինչպէ՞ս կ'անցընէր ժամանակը, ինչի՞ մասին կը մտածէր կամ կ'երազէր, կը կարգա՞ր, նպատակ կամ խոչալ մը ունէ՞ր կեանքի մէջ, թէ բանջարեղէնի պէս բուսած էր միայն ու բանջարեղէնի պէս ալ կը կանաչնար, կը հասուննար այս բարի արեւին տակ, մինչեւ որ ուռուէր կամ թոռմէր, եւ փճանար վերջաւորութեան կամ սպառէր:

Սակայն կը նախանձէր անոր: Արդեօ՞ք: Կը նախանձէր անոր անմիջականութեան, պարզութեան, ինքնազատահասութեան, անսեթեւեթ շարժումներուն ու նոյնիսկ՝ բնական եւ անկաշկանդ ծիծաղին: Ինք կը ժպտէր, այո, եւ ակամայ, մինչ ան կը ծիծաղէր, կը խայտար ու կա'պրէր: Պարզօրէն կ'ապրէր: Ամէն վայրկեան, առանց ընդմիջումի, քնացած ատեն, աշխատանքի ժամերուն: Վստահ էր, դիտէ՛ր: Կը տեսնէր, չէ՞, հո՛ս, իր աչքերուն առջեւ: Իսկ ինք... այնքա՞ն կարեւորութիւն կու տար ինքնիրեն, բազմած այս դրասեղանին ետին, եւ աշխարհին ճակատագիրը կ'որոշէր կարծես: Ու կեանքը կը վերածէր ողորդութեան: Ինչո՞ւ: Ի՞նչ պատահած էր իրեն: Ինչո՞ւ այսպէս փոխուած էր: Փոխանակ դո՛ս մնալու եւ վայելելու — ի վերջոյ ամէն Ամբրիկա ներգաղթող իրեն պէս բախտաւոր չէր եղած — կը կաշկանդէր ինքզինք եւ անտեղի մտահոգութիւններ կը հնարէր: Այո՛, պարզօրէն կը հնարէր, որովհետեւ մտահոգութիւն չունէր իրականութեան մէջ: Տուն, ընտանիք, դաւակ, սքանչելի կին մը ու հանդիստ եւ շահարեք գործ մը: Բայց զժգո՛հ էր: Կեանքէն ի՞նչ կ'ակնկալէր ի վերջոյ, կամ կ'ակնկալէ՞ր միթէ: Բնական պայմաններու մէջ Մարթայի մտերմութիւնն ու սէրը պէտք է ուրախացնէին զինք — գէ՛թ ուրախացնէին, եթէ կ'ուզէր անպայմանօրէն հաւատարիմ մնալ կնոջ: Եւ ինչ հաւատարմութեան հարց էր: Ամուսնանալին ի վեր ուրիշ կին չէր նկատած, ոչ թէ որովհետեւ հաւատարիմ չուն մըն էր կամ բառին մասնաւոր կարեւորութիւն կ'ընծայէր, այլ պարզ այն պատճառով որ Սեղան ամէն կերպով դո՛հացուցած էր զինք: Ե՛ւ հոգեպէս, եւ ֆիզիքապէս:

Տասը տարի առաջ իր ճանչցած ժաղը, զոր տարտամ կերպով կը յիշէր հիմա, Մարթայի նման ինքնամատոյց աղջիկ մը անկողին առաջնորդած կ'ըլլար արդէն: Ինքնամատոյց չէ, այլ պարզամիտ,

կամ միամիտ : Լիբանանցի երիտասարդին համար օտար բարեկամուհի մը — եւրոպացի կամ ամերիկացի — յաջողութեան չափանիշ էր, մանաւանդ եթէ կարենար անոր սիրտը շահիլ : Այդ իմաստով չափանիշ կտրած էր ինք եւ բացառիկ ժողովրդականութիւն վայելած, անտեսելով տեղական բարքերն ու բարոյական ըմբռնումները : Ինչ բարոյական : Այդ երանելի արարածներուն բարոյական ըմբռնումը բոլորովին տարբեր էր իրենցինէն, եւ աւելի նպատակալարմար՝ անշուշտ : Մարթայի պարսղային նոյնն էր հիմա, եւ բնաւ նշանակութիւն չունէր անոր համար իր ամուսնացած ըլլալը : Հաւանաբար չէր խսկ մտածած այդ մասին, եւ զարմանալի չէր ուրեմն որ բնական իրաւունք մը նկատէր զինք սիրելը, կամ զգացածը արտայայտելը : Սովայն ինք նոյն երիտասարդը չէր : Բարոյական ըմբռնումի հարց չէր — ինչ որ կը նշանակէր բարձր այս պարսղային : Ֆիզիքականէն եւ հոգեկանէն անդին, թերեւս անիմանալի, իրմէ անկախ, մարդկային ընդոճին մղում մըն էր՝ զէպի աւելի ճշմարիտ եւ մնայուն գոհունակութիւն ձգտող : Աւելի մարդը կը փնտռէր տուեալ անձի մը մէջ, քան անոր գեղեցկութիւնն ու զգացումները : Ինչ որ հիմնական էր անոր մէջ, անկործանելի, էական եւ մնայուն : Ճիշդ բառն էր : Մնայունը :

Խաղաղեցաւ յանկարծ, յաղթական քալեց սենեակին մէջ ու պահ մը տատամսելէ ետք, վերցուց սեւ կաշեկազմ պայուսակը եւ սուլելով յառաջացաւ դէպի դուռը, զոր դոց կը պահէր միշտ, հանդարտօրէն բացաւ դռնը, եւ քանի մը քայլ առնելէ ետք յարակից սենեակին մէջ, կանգ առաւ Մարթայի գրասեղանին առջեւ, եւ մակնիշտացած ժպիտը դէմքին, խօսեցաւ :

- Այս իրիկուն ազատ ես :
- Ինչո՞ւ, — աղջիկը ազնաւոր դիտեց զինք :
- Միասին ընթրենք :
- Ո՞ր ժամուն :
- Ութին ո՞ւր կ'ըլլաս :
- Տուն :
- Կու գամ կ'առնեմ քեզ :
- Հիմա՞ ուր կ'երթաս, — հարցուց Մարթա :
- Ժամադրութիւն մը ունիմ, — ստեց ձեռք :
- Կը սպասեմ :

Յակոր Առաքելեան կ'ուզէր վայրկեան առաջ տուն հասնիլ : Գրասենեակ հասնելուն հազիւ ժամ մը եղած էր, բայց կ'ուզէր անմիջապէս տուն վերադառնալ : Ինչո՞ւ : Փախո՞ւստ կու տար : Քար-

տուղարուհիին հետ ժամադրուելէ ետք տան ապահովութիւնը կը փնտռէր հաւանաբար : Բայց քչեց դէպի Սանթա Մոնիքա Պուլվարա, ուր ծանօթներու կրնար հանդիպիլ, եւ մոռնալ ինքզինք : Լիբանանէն հասած նորագոյն լուրերը անոնցմէ կը քաղէր սովորաբար :

Մարթա Միլման, թէեւ գոհ եւ յաղթական, ամբողջ օրը ջղային էր նաեւ : Գրասենեակին մէջ մասնաւոր աշխատանք ալ չունէր, որ գէթ գրադէր : Ամիսներ ետք, յանկարծ, ինչ հրաշք էր ասիկա : Ձէք այնքան անտարբեր եղած էր, բայց նաեւ այնքան բարեացակամ ու փափկանկատ — վստահ էր, զինք չվիրաւորելու համար միայն — ու յաջողած էր իրենց յարաբերութիւնը պահել սոսի բարեկամական ծիրէ ներս՝ քաղցրօրէն ու քնքնութեամբ վարուելով հանդերձ իր հետ : Տարօրինակ մարդ էր, լուրջ բայց նաեւ կատակասէր, հանդարտ, ինքնավստահ եւ հպարտ : Ուրիշ ոեւէ երիտասարդ վաղուց յանձնուած Վլադար ու պարզած պարտութեան զբօշակը : Իսկ այս քաղցր փորձանքը չէր նկատեր իսկ զինք ո՛ւնէ, կը նկատէր, բայց կարեւորութիւն չէր ընծայեր իրեն : Որ զինք վիրաւորելէ աւելի չփոթի կը մատնէր առաւելաբար : Ճիշդ է, ամուսնացած էր, եւ երջանիկ էր հաւանաբար, ինչպէս կը կրկնէր յաճախ, բայց ինչպէ՞ս կրնար անտարբեր մնալ երիտասարդ աղջկայ մը կողմէ իրեն ուղղուած այսքան բացայայտ ուշադրութեան նկատմամբ : Իրեն համար հանելուկի մը վերածուած էր անոր անտարբերութիւնը, թէեւ ինք ակնեղծօրէն Վլադարէր ձէքը, ու երիտասարդ մը գրաւելու սովորական խաղը չէ որ կը խաղար անոր հետ :

Իսկական հանելուկ, որովհետեւ ձէքի անտարբերութիւնը ռազմավարութիւն չէր. իրապէս չէր հետաքրքրուած իրմով : Պարզօրէն անընթացեալ էր : Թէեւ իր վարմունքը նոյնքան անբացատրելի էր. նոյնիսկ անարդարանալի : Ի վերջոյ ամուսնացած եւ խորհրդաւոր օտարական մըն էր սա մարդը, որ հինգ տարի Սովետական Միութիւն ապրելէ ետք, եկած եւ հաստատուած էր հոս : Վերջին տարիներուն հազարաւոր հայեր Սովետական իրենց հայրենիքը լքելով Լոս Անճելըս փոխադրուած էին, բայց անոնց երբեք չէր նմաներ ձէք : Նախ՝ անթերի անգլերէն կը խօսէր եւ կը գրէր, եւ միւս հայերուն նման վարանոտ եւ ինքնամփոփ չէր : Ընդհակառակն՝ թէեւ սակաւախօս, սակայն շատ ընկերային, ինքնավստահ եւ չափազանց սրամիտ մարդ մըն էր : Տասը ամսուան ընթացքին բնիկ ամերիկացիներէն աւելի իւրացուցած էր երկրին բարքերը եւ յարմարած այս մեծ քաղաքի պայմաններուն եւ կեանքին : Եւ ինք այս առեղծուածային հայուն սիրահարած էր, անտեսելով տարիքի տարբերութիւ-

նը, անոր ամուսնացած ըլլալը, նոյնիսկ՝ զաւակներ ունենալը:

Բայց ինք յանցաւոր չէր, որովհետեւ ամէն մարդ կը սիրահարէր անոր: Հաստատութեան մէջ բոլորը — երէց եւ կրտսեր, այր թէ՛ Կին — կը սիրէին զինք ու կը փնտռէին անոր մտերմութիւնը: Իսկ ինք բախտաւոր եղած էր, կամ ճակատագրականօրէն զատապարտուած էր, որովհետեւ բոլորին սիրելի ձէք Առաքելեանին անձնական քարտուղարուհին նշանակուած էր: Այո՛, զատապարտուած էր, եւ ինք դեր չունէր այս նախաինամական կարգադրութեան մէջ: Ինչպէ՞ս կրնար ամէն օր անոր հետ ըլլալ, միասին աշխատել, խորհրդակցել, կարծիք փոխանակել, խօսիլ, լսել անոր սրամիտ կատակները, զգալ ներկայութիւնը, շնչել ու հոտուրտալ զինք եւ... չսիրել: Ինչպէ՞ս: Եւ ինչո՞ւ պիտի չսիրէր: Ո՞վ կը սահմանէր կամ կ'որոշէր սէրը:

Իրիկուն ըլլար դէթ, որ կարենար դուրս ելլել այս բանտէն — ձէքի բացակայութեան զրասենեակը բանտ մըն էր — եւ ազատութիւնը վերագանէր: Անոր դերին դարձած էր, կամակատար ծառան, որքան ալ համարձակ ըլլար ու յաճախ վիճէր անոր հետ: Սակայն զոհ էր ու երջանիկ, այնքան ատեն որ ան ներկայ էր: Եւ հաճելի ստրկութիւն մըն էր ի վերջոյ, տեսակ մը մենաշնորհ, որ բաւարարութիւն կու տար իրեն ու կեանքը անընդմէջ խրախճանքի վը վերածէր: Գէթ օրական քանի մը ժամ, երբ ներկայ էր ան, միասին՝ այս բանտին մէջ: Այսօր այդ քանի մը ժամէն ալ զրկուեցաւ, թէեւ իրիկունը միասին պիտի ըլլային դարձեալ, եւ՝ բացարձակօրէն առանձին: Մինչեւ ժամը ութը ինչպէ՞ս պիտի կարենար համբերել, զիմանալ: Ի՞նչ պիտի խօսէր արդեօք, ի՞նչ պիտի ըսէր: Անպայմանօրէն պատճառ մը ունէր, նպատակ մը. յանկարծ, մէկ օրէն միւսը, անտեղի կերպով այսպիսի աննախընթաց քայլ մը չէր առնէր:

Ձէք, մինչ այդ, ոչ տուն գնաց, եւ ոչ ալ բարեկամներու հանդիպեցաւ Սանթա Մոնիքա Պուլփարտի վրայ: Հոնից ուղղուեցաւ դէպի Հոլիվուտ, ուր ամէն ինչ հայկական էր — խանութները, վրդպականները, ճաշարանները, ազմուկը, եռուզեռը, խօսակցութիւնը — եւ մտաւ հայէպցի Սեդրակի ճաշարանը: Առաւօտեան ժամը տասնմէկն էր դեռ, եւ Սեդրակ զբաղած էր ճաշերու պատրաստութեամբ: Գրաւեց պողոտային նայող սեղաններէն մէկը, սուրճ մը ապսպրեց սպասարկող ազջկան եւ ծոցատետրին մէջ փնտոցեց Ռազմիկի հեռա-

ձայնի համարը: Այո՛, համարը, զուարճացած անդրադարձաւ, որովհետեւ՝ Ռազմիկ ընդի երեւանցի էր — դէթ ծնած էր հոն — եւ զրեթէ նոյն շրջանին հասած էր Սմերիկա՝ ուղղակի Մոսկուայէն: Իրեն տարեկից, յաղթանդամ, թուխ ու գեղադէմ հայ մը, որու ծանօթացած էր այս նոյն ճաշարանին մէջ ու մտերմացած անոր հետ՝ առաջին հանդիպումին իսկ: Երեւանի Մանկավարժական Ինստիտուտի նախկին դասախօս, ներկայիս անդործ, թէեւ ամուսնացած ու երկու զաւակի հայր, դառնացած ու մենակեաց մարդ մըն էր: Բարեկամներ զրեթէ չունէր, ու տունէն հազուադէպօրէն դուրս կու գար: Գլխաւոր պատճառը անգլերէն չգիտնալն էր, սակայն զարմանալիօրէն կը խուսափէր նոյնիսկ հայաստանցիներէն: Լոս Անճելըս հասնելէն ի վեր ընտանիքին ապրուստը կը հոգար պետութեանէն ստացած շնչին կենսաթոշակով, բայց առանց յուսահատելու կը շարունակէր աշխատանքի դիմել պատահած մարդուն կամ հաստատութեան: Մինչ այդ կը հետեւէր անգլերէն լեզուի դիշերային դասընթացներու, եւ օրը կ'անցընէր իրեն համար անիմաստ եւ ծիծաղելի նախադասութիւններ կազմելով: Շնորհայի, լուս եւ երեսուն տարեկանին տակաւին ամօթխած կին մը ունէր, նազելին որ նոյնպէս կը հետեւէր անգլերէն լեզուի դասընթացներուն, եւ ըստ երեւոյթին շատ աւելի յաջողութեամբ կը յառաջդիմէր, Ռազմիկը զարմացնելով բնականաբար:

Հեռաձայնելէ ետք Առաքելեան, մասամբ խաղաղած, սպասեց երեւանցի բարեկամին: Գիտէր, թէ տունը փակուած կը ձանձրանար այդ ժամուն, իսկ ինք խօսակիցի մը պէտք ունէր, տասը միլիոն բնակչութիւն ունեցող այս քաղաքին մէջ: Երբեմն շարաքներով մարդու հետ զրուցելու առիթ չէր ունենար, ու կը զգար որ օր ըստ օրէ կը կղզիանար եւ ինքնիրեն հետ կուռելու կը սկսէր: Պաշտօնին բերումով բազմաթիւ մարդոց հետ կը խօսէր անշուշտ եւ կը կրկնէր նոյն անիմաստ նախադասութիւնները: Բարեւ, ինչպէ՞ս էք, շնորհակալ եմ, փառք Աստուծոյ, լաւ եմ, սիրով, հաճոյքով, չեմ մոռնար, անպայման: Տունը, Սեդրային եւ երեխաներուն հետ, նոյնպէս սահմանափակ բառամթերք մը կը գործածէր եւ այդքան: Իսկ Մարթան, որու ներկայութիւնը անխուսափելի էր զրասենեակին մէջ, մէկ նիւթ ունէր միայն: Իր սէրը: Եթէ այսպէս շարունակուէր, մօտ օրէն ինք եւս տափակ ամբերիկացի մը պիտի դառնար եւ ապրէր յանձնապատան, անհրապոյր կեանք մը: Գաղաքը ինքնին, իր բոլոր առաւելութիւններով, հրապոյր չունէր իրեն համար: Կրնար քառասուն տարի եւս այսպէս ապրիլ, յրիանալով ինքնագոհութեամբ, եւ...

ի՛նչ: Վասն ի՛նչի՞: Ի՛նչ իմաստ ունէր: Դժգո՛հ էր դարձեալ. բայց պէտք է դուրս դար այս հողեղի՛մակէն:

— Էմմոզլը՛ւ, — Սեղրակ խոհանոցէն դուրս ելած պահուն նկատեց զինք եւ ուղղութիւնը փոխելով մօտեցաւ իրեն. — Ի՞նչ է, այս ժամուն ո՛ր հովը փչեց: Պէյրութէն նոր լուր ունի՞ս:

Յիսուանը անց այս մարդը, որ շորցած ծառի մը կը նմանէր, Սուրիոյ Հալէպ քաղաքի համբաւաւոր մեքենադորձներէն էր, սա- կայն 1974-ին հանդերձ ընտանեօք Նիւ Եորք հասնելէ եւ ամիսներ անդորձ մնալէ ետք, ի վերջոյ հոս հաստատուած էր եւ երեսուն տարուան խնայողութիւնը ամբողջ մսխած էր այս ճաշարանին մէջ: Գէթ ինք այդպէս կ'ըսէր, ու կը դանդաղէր միշտ: Հակառակ ատոր ուրախ էր ընդհանրապէս, նկատելով որ լաւատես եւ համադամ ճա- շերու սիրահար այնթեպցի մըն էր, եւ ըստ երեւոյթին հաճոյքով փարած էր իր այս նոր ասպարէզին: Առաքելեան պատահամբ մտած էր անոր ճաշարանը օր մը, ամիսներ առաջ, եւ չէր զղջացած: Առա- ջին օրէն խօսած էին հին ծանօթներու պէս ու միասին խմած մին- չեւ ու չ գիշեր, ահամայ բաժնուելով վերջաւորութեան: Այդ առա- ջին օրն իսկ Էմմոզլու կոչած էր զինք եւ քսնիցս կրկնած:

— Այնթեպցիները բոլոր իրարու Էմմոզլու են, գիտես, չէ՞: Ամէն մարդու այս պատիւը չենք ըներ:

— Բայց ես այնթեպցի չեմ, — ամէն անգամ ալ կրկնած էր ինք իր կարգին:

— Անկարելի է: Անպայման այնթեպցի բան մը կայ մէջը:

Իսկ հիմա հարկադրուած խօսեցաւ ձէք:

— Նորութիւնները քու քովդ կ'ըլլան սովորաբար. օրական հարիւրաւոր մարդ կը տեսնես:

— Շատ գէշ է կ'ըսեն: Օրական հարարներով կը փախին եղեր, ատ ալ ի՛նչ ճամբաներով: Օղակայանը դոց, քաղաքը խարապա, փողոց ելլելը վտանգաւոր: Մէկ խօսքով՝ Հայութեան վիճակը վի- ճակ չէ հոն: Ձերիններէն լուր ունի՞ս գոնէ:

— Երկու ամիս է նամակ չենք ստացած:

— Քէյֆդ ինչպէ՞ս է, — ճաշարանատէրը հարցուց յետոյ: — Օղի մը կ'առնե՞ս:

— Կանուխ է: Օղի՞:

— Ատ ալ ուզածիդ պէս: Լիրանանէն, եւ Ձահլէի օղի: Բա- րեկամ մը, քեզմէ լաւ չըլլայ, բերաւ:

— Ուրեմն դեռ օղի ունին, եւ հետերնին ալ մինչեւ Ամերիկա կը բերեն: Եթէ կրնաս, հաւատա՛:

— Էմմոզլը՛ւ, ես քեզի դաւաթ մը բերեմ... դուն կ'ուզես հաւատա, կ'ուզես մի հաւատար:

— Ճաշին հետ, քանի այդպէս է:

— Հո՞ս պիտի ճաշես: Աչքիս, գլխուս վրայ: Այսօր սարմա կայ, ուզածիդ պէս:

— Մասնաւոր գործ չունիմ այսօր: Դրացիիդ Ռազմիկին հե- ուսձայնեցի. հիմա ուր որ է կու գայ: Միասին կը ճաշենք:

— Աստուած զրկեց քեզ: Չըսե՛ս, այսօր լաւ քէյֆ մը կ'ը- նենք: Ես ալ կը մտածէի որ այս օղին հարամ պիտի ըլլայ, եւ այդպէս ալ համ պիտի չառնէի խմածէս: Առանձին խմելը համ-հոտ չունի:

— Այս աղջկան ըսէ, ինձի սուրճ մը եւ թոզ բերէ, — Առա- քելեան խօսեցաւ, Սեղրակին խանդավառութիւնը զսպելու մտադրու- թեամբ:

— Ասոր նայէ՛, հոս սրճարա՞ն կարծեցիր: Գոնէ խմածդ ալ սուրճ ըլլայ: Այս լուացքի ջուրէն ի՛նչ համ կ'առնէք: Քեզի սուրճ չկայ այսօր այլեւս: Օղի՛: Մենք սկսինք, յետոյ բարեկամիդ հետ կը շարունակես: Մաշալլա՛հ, իմոզ է, հա՛:

— Հայաստանցի է:

— Մեղք է, պե՛, այս մարդուն: Ամէն տեսնելու սիրտս կտոր- կտոր կ'ըլլայ:

— Հրեշտակի պէս կին մը ունի, իսկ դաւակները...:

— Ատո՞ր տարտը ինչ է, որ երկիրը ձգեր է եւ իրեն անծանօթ աշխարհ մը նետեր է ինքզինք: Հայութեան վերջը ինչ պիտի ըլլայ, Էմմոզլը՛ւ:

— Գալիֆոնիան անկախ պետութիւն պիտի հռչակենք: Ինչ պիտի ըլլայ:

Սեղրակ բարձրաձայն խնդաց բայց ակներեւ դժգոհութեամբ աջ ձեռքով շփեց մազաղաթի վերածուած դէմքը: Ապա խօսեցաւ:

— Սուրիոյ, Լիրանանի մէջ ի՛նչ ըրինք, ի՛նչ եղանք, որ հոս բան մը կարենանք ընել: Սպասէ՛, սա օղին բերեմ ալ, քիչ մը խօ- սինք:

— Դուն ինչո՞ւ տուն, գործ, խանութ, ամէն ինչ քանդեցիր եկար, — հարցուց ձէք, երբ ճաշարանատէրը վերադարձաւ օղիի շիշը ձեռքին:

— Հոն վերջ չունինք:

— Ըսել կ'ուզես, թէ վերջերնիս հոս պիտի գայ:

— Հա՛, — ակամայ խնդաց Սեղրակ Եագճեան. — հոս մեր վերջը կը բերեն: Ոչ աղջիկդ հանգիստ կը ձգեն, ոչ տղադ: Մօ՛, ես

այս տարիքէն ետք կոտոշ տնկելո՞ւ պիտի սկսիմ... ատ ալ իմ դա-
ւակներուս: Այո, հոս ալ կը վերջանայ մեր պատմութիւնը: Երեք
տարի հազիւ եղաւ, եւ արդէն հայերէնը մոռցած են եւ հետո այս
խրագրերի լեզուն կը խօսին:

— Ստիպուած են:

— Ո՞վ կը ստիպէ, — ջղայնացաւ Եղաճեան, մինչ բաժակ-
ները կը լեցնէր մասնաւոր ուշադրութեամբ:

— Երկիրը: Երկու հարիւր քսան միլիոն ժողովուրդի մէջ կա-
թիլ մը ջուր ենք:

— Հոս ազատ երկիր է: Մարդ մարդու բան չի կրնար ստիպել:

— Իշուն պոչը հոն պահուած է արդէն: Աղատութիւնը կը
ստիպէ:

— Կենացդ: Մեզմերք մոռցանք. վա՛յ, խելքդ սիրեմ, Սեդ-
րա՛կ: Բարեկամդ եկաւ: Բարի եկար, հայրենակից:

Ռազմիկ Խանդաղեան կանգնած մնաց պահ մը, հետաքրքրու-
թեամբ դիտելով օդի ըստիկները, ու յետոյ հարցակա՛ն նայեցաւ
սեղանակիցներուն:

— Հա՛, Սեդրակ ջան, բարով տեսանք: Էս ժամին ի՛նչ խմելու
բան է սա: Երեւանցիներին մեղադրում էք, ու...:

— Հրամմէ՛, հայրենակից, — ընդմիջեց Սեդրակ, — նստէ,
նստէ՛, — եւ ինք վանդակեցաւ խանդավառուած. — երթամ քանի մը
պատառ ուտելիք բերեմ:

— Գո՞ւե՞լ ես, ինչ է, — Ռազմիկ խօսքը ուղղեց Առաքելեա-
նին: — Սրա՞ համար դանդահարեցիր:

— Գիժը դրացիդ է, սա այնթեպցին:

— Հոյակապ մարդ է, եւ սքանչելի հայ: Ա՛խր, այսպէս ազ-
նիւ հայեր լինեն, իսկ Հայը՝ այս վիճակին:

— Լիբանանեան օդի է: Կ՛ուզե՞ս փորձել:

Երեւանցին նայեցաւ ժամացոյցին, հաւաքեց ճակտին թա-
փած մազը մատներով եւ ըսաւ:

— Էս ժամին, չեմ հասկանում:

— Հայաստան առտու խմելու կը սկսին: — Ճէք լեցուց բա-
ժակ մը, եւ յետոյ իր բաժակը բարձրացնելով, խօսեցաւ. — բաժա-
կաճառի պէտք չկայ կարծեմ: Կենացդ:

— Հազար անուշ: Էդ անտէր բաժակաճառերը: Հետաքրքիր
խմիչք է: Չասացիր, ի՞նչ ես անում այստեղ վաղ առաւօտուանից:

— Կէսօր է արդէն: Զգուեցայ, — ըսաւ յետոյ Առաքելեան. —
կարգին մարդ տեսած չունիմ, ոչ ալ մարդու հետ խօսած:

— Զգուեցի՞ր: Ինչի՞ց ես զգուել:

— Չեմ գիտեր: Կեանքէս հաւանաբար: Միօրինակութենէն,
այս անմարդկայինն քաղաքէն, վաղքէն, աշխատանքէս, առանձնու-
թենէն:

— Առանձնութիւնի՞ց: Ա՛յ մարդ, դու աշխատում ես, փող ես
վաստակում, կարգին տուն ունես, ընտանիք, ծանօթներ, եւ երկրի
լեզուին տեղացիներից լաւ ես տիրապետել: Էլ ի՛նչ դանդատուելու
պատճառ ունես:

— Գանդատ չունիմ, բայց զգուեցայ:

— Դէ՛, ե՞ս ինչ անեմ:

— Ես քու վիճակիդ մէջ ըլլայի, քալելով Հայաստան կը վե-
րագառնայի:

— Նոյնիսկ մերոնք աշխատանքի չեն ընդունում ինձ:

— Որո՞նք այսինքն:

— Հայ թերթերի խմբագրութիւններում, վարժարաններում:
Վարխնում են: Ոնց որ ժողովրդի թշնամի լինէի, կամ մի վտանգաւոր
հրէշ: Երեւանում աշխատանքից զրկել էին ինձ, բայց մի կերպ ապ-
րում էինք:

— Երկու կողմերուն համար ալ կասկածելի մարդ ես անշուշտ:
Չեմ գարմանար:

— Ի՞նչ եմ արել, որ ինձնից կասկածեն: Երկիրը լքել եմ,
ճիշդ, բայց իմ կամքովը չեմ լքել. հեռացրել են ինձ, զրկելով քա-
ղաքացիութիւնից: Ցանկանամ էլ, չեմ կարող վերագառնալ:

Խանդաղեան չկրցաւ շարունակել, եւ մէկ ուժւով պարպեց
օդի բաժակը: Յուզուած էր դարձեալ: Հսկայ այս մարդը երեսայի
նման փխրուն սիրտ ունէր, եւ ամէն անգամ որ Հայաստանի խօսքը
ըլլար, հազիւ կրնար արցունքները դսպել: Պատմութիւնը ծանօթ էր
Առաքելեանին: Բնիկ երեւանցի, կամքին հակառակ հեռացուցած էին
զինք Հայաստանէն, որովհետեւ 1965 Ապրիլի դանդաղածային ցոյցե-
րուն իր մասնակցութիւնը բերած էր, անտեսելով պաշտօնն ու կու-
սակցական ըլլալը: Հետագային պաշտօնազրկուած էր նաեւ, նկա-
տելով որ համարձակած էր պաշտպանել ինքզինք եւ հազարաւոր ու-
սանողները, որ մասնակցած էին Յիսնամեակի աննախընթաց ցոյցե-
րուն: Ատկէ ետք, լման ութը տարի, առանց յուսահատելու եւ հե-
տեւողականօրէն պայքարած էր անտեսանելի այն մեքենային դէմ,
որ իշխանութիւն կը կոչուէր՝ իրաւունքները պաշտպանելու եւ վե-
րահաստատելու յոյսով: Բայց ապարդիւն: Վերջաւորութեան, իրմէ
փրկուելու համար, սովետական հպատակութենէն ալ զրկած էին զինք

եւ արտօնած որ արտազաղթելու դիմում կատարէր :

— Կ'ուզե՞ս վերադառնալ, — հետաքրքրուեցաւ ձէք :

— Ի հարկէ, — առանց վարանումի պատասխանեց Ռազմիկ :

— Դու չէի՞ր ցանկանայ :

— Անկեղծօրէն, ո՛չ : Բայց իմ պարագաս տարբեր է. նախ՝ ես երեւանցի չեմ, եւ ոչ իսկ միւս ներգաղթողներուն նման հայաստանցի կը սեպուիմ : Իրենց փորձառութիւնը չունեցայ, եւ բնականաբար հողին չեմ կապուած, որովհետեւ հինդ տարին բաւարար չէր ըստ երեւոյթին : Արմատ չունիմ հոն եւ, ինչպէ՞ս բացատրեմ, չեմ զգար որ այդ երկրին կը պատկանիմ :

— Իսկ ինչո՞ւ հեռացար :

— Մկսած եմ հաւատալ, որ Հայը իւրայայտուկ, անհանդարտ խառնուածք մը ունի. կամ ըսենք՝ շուարած է եւ ինքն ալ չի դիտեր, թէ ինչ կ'ուզէ : Պօսքս մեր մասին է անշուշտ, սփիւռքահայերուն, որոնք աշխարհի վրայ տեղ չունին : Ու ոչ մէկ տեղ հարազատ կամ ապահով կը զգան : Ինչպէս ես, օրինակի համար : Ուրիշ երկիր մը ընդունի զիս, այսօր իսկ կը հեռանամ հոսկէ :

— Որ դարձեալ դժգոհ լինես ի հարկէ :

— Հաւանաբար : Բայց իրականութիւնը այս է : Ոչ մէկ երկրի մէջ հարազատ չեմ զգացած, ու գիտեմ... ուր որ ալ երթամ նոյնը պիտի ըլլայ :

— Ուրե՞մն :

— Ո՛ւր եւ ինչպէ՞ս կրնայ հարազատ զգալ մարդ, — հարցուածը ինքնիրեն ուղղեց Առաքելեան :

— Իր սեպհական երկրում :

— Որ չունիմ, չունինք մենք :

— Բա՞, դուն հայ չե՞ս :

— Դուք, արեւելահայերդ, մեզմէ աւելի բախտաւոր էք : Արեւելեան Հայաստանը, այսինքն ձեր երկիրը, չէ կորսուած, գոյութիւն ունի, եւ դուք հոն կ'ապրիք տակաւին : Մինչդեռ մենք... :

— Մե՛ր երկիրը, ձեր երկիրը, — բորբոքեցաւ Պանդադեան : — Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է :

— Տարակոյս չունիմ : Հայաստանը՝ այո՛, բայց ոչ թէ ներկայ Հայաստանը միայն : Դուք մեր հետ չէք կրնար զգալ, չէք զգար, որովհետեւ ոչինչ կորսնցուցած էք :

— Մեղ հայ չես համարում... ոնց որ մի օտար ժողովուրդ լինենք : Կորուսար համայն Հայութեան վիշտ է պատճառում, իսկ

մեզ՝ առաւել եւս : Մեր աչքի առաջ է անտէր երկիրը. Անին, Արարատը, Հայաստանը ամբողջ :

— Ատո՞ր համար մոռցած էք դայն :

— Ձեներ մոռացել. բայց ի՛նչ կարող ենք անել : Դուք ի՞նչ էք անում : Սրա համար չէ՞ր որ էս սեւ օրին հասցրին ինձ :

— Որ ըսածս կը հաստատէ : Կը նշանակէ, թէ ձերինները չեն հետաքրքրուած եւ ուրացած են արդէն մեր իրաւունքները, Արեւմտեան Հայաստանը այսինքն :

— Յակո՞բ, դու մեր պայմանները դիտես, հինգ տարի ապրել ես Սոփետի երկրում եւ... ա՛խր, գոնէ դու չպիտի քննադատես : Պիտի հասկանաս մերոնց վիճակը :

— Ի՛նչ պիտի քննադատեմ : Այնքան միամիտ եմ վըր կարծես : Եւ չեմ ալ ակնկալեր որ զրազին մեր հարցով : Բայց իրականութիւնը կը մնայ այն, որ Արեւմտահայութիւնը մնացած է առանց երկրի, անտէր, անպաշտպան : Եւ յետոյ կը պահանջեն որ այս ժողովուրդը գլխուն ճարին չնայի, ինքզինք չպաշտպանէ, ապահովութիւն չիմտոէ : Ինչո՞ւ : Ի՛նչ իրաւունքով : Ու կը մոռնան որ երկիր կամ հող չունեցողը բռշայ կը դառնայ, թափառական զնչու, անիշխանական, անձնասէր :

— Դժբախտաբար ճիշդ է :

— Ինչո՞ւ այս մասին կը վիճինք, — յանկարծ բարձրաձայն մենախօսեց Առաքելեան. — ինչպէ՞ս այս նիւթին մէջ ինկանք դարձեալ :

— Ուրիշ նիւթ ունե՞նք :

— Անշուշտ : Կին, սէր, վայելք, գինի : Պմենք : Միայն հայը մարդկային ամէն վարդի զգացում, ապրում, հաճոյք, վայելք մոռցած՝ իր ողբերգութիւնը դրամազուլտի վերածած է, եւ միայն ատկէ հաճոյք կ'առնէ : Կարծես ուրիշ նիւթ չըլլար աշխարհի վրայ... շուրջներնիս ինչո՞ւ չենք նայիր. մարդ ըլլալէ դադրած ենք արդեօք այլ եւս մենք : Պմենք :

Ռազմիկ Պանդադեան մտահոգ նայեցաւ բարեկամին եւ բարձրացուց բաժակը :

— Յաւը տանեմ, Յակոբ ջան, խմենք, էլի՛, քո անուշ կենացը : Մաղ ըլլիս :

— Անուշ եղաւ :

— Էս օրին շատ է թունդ. իսկ մեր հարեւանը զաֆուսֆիմ մոռացաւ :

Սեղբակի կինը ձերբակալած էր զինք խոհանոցին մէջ :

Բ.

Մարդ կոչուածը տկար արարած մըն էր, կամ՝ անսրբագրելի հրէջ մը: Գինով շէր, սակայն անհող եւ անտարբեր, կը յամենար՝ կորսնցուցած ժամանակի եւ պատշաճութեան գիտակցութիւնը: Գիւշերուան ժամը տասն էր արդէն, բայց ձէք, ժառ կամ Յակոբ Առաքելեան տեղէն շարժելու տրամադրութիւն չունէր: Ընդէ է, կէսօրէ ետք հեռաձայնած էր տուն եւ յայտնած Սեղային, թէ պիտի ուշանար: Մտահոգուելու պատճառ չունենալով հանդերձ, իրաւունք չունէր այս խեղճ աղջկան աղնուութիւնը շահագործելու: Կաթողիկոսի մը պէս բազմած Մարթայի համեստ բայց կոկիկ յարկաբաժնի միակ բաղկաթուին մէջ, այնուամենայնիւ կը փորձէր կենդանին զսպել իր մէջ: Պիտի յաջողէ՞ր: Փորձութիւնը այնքան դերակշիռ էր, որ անդամալուծուած էր դրեթէ: Կը բաւէր որ նուազագոյն ճիշդ ընէր, եւ սա հոյակապ դադանիքին — որ Մարթայի գեղակերտ մարմինն էր — խորհուրդը կը լուծէր արդէն: Կրնար տեսնել, դիտել, հպիլ, զգալ ու վայելել զայն: Աղջիկը պատրաստ կը սպասէր, թէ եւ հանդարտ ու քաղցրօրէն կը խօսէր, ան ալ յամենալով իր կարգին, ու վստահ թէ ճիշդ պահը պիտի դար ու կատարուէր ամիսներով երազածը: Իրականանար այն, որ անկարելի թուած էր անոր: Կամ ինք կ'երեւակայէր: Բայց աչքերը զինք չէին խարեր. Մարթա երանութեան մէջ էր: Գոհ, զուարթ, անուշ ու ժպտուն:

Փորձութիւնը: Երկասարդ, դեղեցիկ կ'իւն մը, որ պատրաստ էր դիրկը նետուելու: Ո՛չ, Մարթա խեղապէս կը սիրէր զինք, որովհետեւ մեղրի պէս կը հալէր հիմա, ու մեղրի պէս ալ կը քաղցրանար: Ի՞նչ պիտի ընէր: Ինք նմանօրինակ զգացում մը չէր կրնար փոխադարձել, որովհետեւ... պարզօրէն ոչինչ կը զգար անոր հանդէպ: Բայց ցանկութիւնը, որ տարիներէ ի վեր հանդիման էր իր մէջ ու մոռցած զինք դրեթէ, բռնած էր կոկորդէն դարձեալ ու կը ցնցէր՝ զինք պատրանաթափ ընելու համար թերեւ: Կոկորդէն: Այո, որովհետեւ կ'այլէր հիմա, կը շարժարուէր, ու չէր կրնար հանդարտ նստիլ այլեւ: Ներս մտած պէտք չէ ըլլար, եւ դորձադրած պէտք է ըլլար իր բուն ծրարիքը: Ուզած էր Մարթային հետ խօսիլ դրասենեակէն դուրս, առանձնութեան մէջ, ու հանդարտօրէն բացատրել անոր, թէ վերջ պէտք է տար այս կատակերգութեան ու հանդիսութեանը զինք: Այս պահուն միայն կ'անդրադառնար, թէ յստակ ու լիակատար ծրարով մը չէր եկած հոս եւ դադարար իսկ չունէր,

թէ այս տեսակ պարտականութիւն մը ինչպէս կը կատարեն: Ու փոխանակ աղջիկը ճաշարան մը առաջնորդելու, ինչպէս ծրարած էր, ընդունած էր անոր առաջարկը կամ հրաւերը — առաւելարար յուսախար շքնելու համար զայն — եւ ինչպէս էր ծուղակին մէջ:

Փոքրիկ ճաշանոցանը, որ դետեղուած էր հիւրասենեակին մէկ անկիւնը, շքեղօրէն դարդարած Մարթա կը սպասէր իրեն կազմ ու պատրաստ: Ամէն ինչ կատարեալ էր: Խմելիքի տեսակները, սիրուն մոմակաշնորու վրայ հարստօրէն հսկող կարմիր մոմերը, որ կը ժպտէին իրեն շարութեամբ՝ ու նոյնիսկ խալիտարը: Ընթրած էին անշուշտ ու խօսած այլադան նիւթերու մասին, կատակած, բայց Առաքելեան չէր կրցած պարզել միտքը, դորձադրել մտադրածը: Զէր ուզած, ոչ թէ չէր կրցած: Կեղծիք պիտի ըլլար, ինքնախաբէութիւն, երբ կ'լանող հրեւն մը կը բոցավառէր իր մէջ այդ պահուն: Իսկ ինք կեղծիքը կ'ատէր:

Մարթա մինչ այդ համբերութեամբ կը սպասէր: Ընթրիքը աւարտած էին, ու լաւապէս խմած էր ձէք, բայց տակաւին ոչինչ խօսած էր: Խօսած էին, ճիշդ է, սակայն տարբեր նիւթերու մասին: Ինչո՞ւ ուզած էր միասին ընթրել, եթէ մասնաւոր նպատակ մը չունէր, ըսելիք մը: Կը փորձէր զինք, թէ կ'ուզէր շարժարել: Անտանելի ըլլալու չափ հարբա էր, ինքնավստահ եւ անտարբեր: Ուրիշ երկտասարդ մը ըլլար, այլ կերպ կը վարուէր հետը, բայց այս պարագային դարմանալիօրէն կաշկանդուած կը զգար: Համարձակութիւնը կորսնցուցած էր պարզօրէն, եւ խուճապի մատնուած դրեթէ: Գրասենեակին մէջ ազատօրէն կ'ըլ խօսէր, ակնարկութիւններ կ'ընէր ու կը վիճէր նոյնիսկ: Ի՞նչ էր գաղտնիքը, բացատրութիւնը:

— Թէ եւ հաճելի է, — ձէք ոտքի կանդնեցաւ յանկարծ, — բայց ուշ է: Կրնամ ժամերով նստիլ, քանի այսքան աղուոր անակընկալներ կրնաս ընել... եթէ միայն կարելի ըլլար:

— Բայց դեռ կանուխ է, — Մարթա տեղէն չկրցաւ շարժիլ, եւ ինք իսկ դարմացաւ: Չնախատեսուած յուսահատութիւն մը ճնշեց վրան եւ փճացուց քիչ առաջուան սքանչելի տրամադրութիւնը: — Վաղը Շարաթ է: Հաղիւ սկսած էինք խօսիլ:

- Պէտք է երթամ:
- Ո՛չ, պէտք է մնաս:
- Ինչո՞ւ, — Առաքելեան անշարժացաւ, դէմքին քմծիծաղ մը, որ ընկրկումը ծածկելու կը ծառայէր:
- Անհամ մըն ալ երբ պիտի տեսնեմ քեզ:
- Կը տեսնես: Ամէն օր:

— Ո՛չ, — աղջիկը վճռականօրէն քալեց եւ կանգնեցաւ սիրած մարդուն ճիշդ դիմացը ու համարձակութիւնը վերազտած, առաւ անոր ձեռքերը ամբողջ մէջ: — Քեզ ամէն օր չեմ տեսներ:

Մարթա յաճախ ձեռքերով կ'արտայայտէր զգացածը, եւ անզգարար անոնց կը դիմէր, երբ դժուարութեան մասնուէր: Բազմաթիւ առիթներով, անհրաժեշտութեան պարագային, կառչած էր կամ բռնած պաշտօնակիցին թուերէն, ձեռքերէն ու նոյնիսկ ուսերէն՝ միտքը պարզելու կամ մտածումը բանաձեւելու համար: Եւ Առաքելեան վարժուած էր արդէն անոր անկաշկանդ շարժուձեւերուն եւ ձեռքերուն լեզուին, առանց մասնաւոր ուշադրութիւն ընծայելու անոնց Ֆիզիքական կենդանութեան: Հիմա, սակայն, կենդանացան այդ վախ, վարդապետին ձեռքերը ու վերածուցան այրող աքցաններու:

— Թումաս առաքելային նման թերահաւատ ես, — ծաղրածուն, իր մէջ, պէտք է դերը խաղար անպայման: — Աչքերուդ չես հաւատար, այլ միայն ձեռքերուդ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, — վիրաւորուեցաւ աղջիկը:

— Ձիս ամէն օր չես տեսներ ըսիր:

— Երանի չտեսնեմ, շատ աւելի հեշտ կ'ըլլար:

Ու կանաչ, նշածեւ աչքերը աւելի եւս քաղցրացան, մինչ շրթները կամքին հակառակ նոր բառեր կազմեցին ու բարձրաձայն արտասանեցին զանոնք:

— Այդքան հակակրելի եմ քեզի համար, — ինք իսկ զարմացաւ, երբ լսեց իր ձայնը:

— Ընդհակառակը: Ամէն կերպով դրաւիչ, սիրուն եւ անդիմադրելի փորձանք մըն ես: Բայց նաեւ վտանգաւոր:

Լոկեց, մինչ անվերձանելի ժպիտ մը յամեցաւ ձէք Առաքելեանի դէմքին վրայ:

— Որովհետեւ քեզ կը սիրե՞մ, — Մարթա հարցուց, ներքնապէս բաւարարուած:

— Կը սիրե՞ս: Ձեմ գիտեր: Բայց վտանգաւոր ես: Իսկ եթէ իսկապէս կը սիրես, պէտք է զգուշանամ քեզմէ, եւ քեզ եւս զգուշացնեմ:

— Ինչո՞ւ:

— Իմաստ չունի:

— Սիրոյ իմաստը սիրելուն մէջ է: Որ նշանակութիւն չունի անշուշտ: Մեզմէ անկախ է: Անպայման պէտք է իմաստ ունենայ, արդի՞ւնք: Ձեմ ակնկալեր որ կեանքդ ինձի կապես... իրականու-

թեան մէջ ոչինչ կը պահանջեմ քեզմէ, որովհետեւ իրաւունք չունիմ: Գիտեմ, կը հասկնամ:

— Արդար չէ, ճի՛շտ չէ:

— Կ'ուզեմ որ նստիս, դէթ ժամ մը եւս:

Նստեցան: Կողք-կողքի, տիւանին վրայ: Մարթա երախտագիտութեամբ նայեցաւ ձէքի աչքերուն մէջ, մինչ ձեռքերը շարունակեցին խօսիլ՝ արտայայտելու համար ուրախութիւնը: Իսկ ինք ըսաւ:

— Կեանքի մէջ միակ արդարութիւնը սէրն է:

— Իսկ անարդարութի՞ւնը:

— Ձիս չի հետաքրքրեր:

— Կեանքի շատ սահմանափակ ըմբռնում է ատիկա: Անձնասիրութիւն՝ կարելի է ըսել:

— Եթէ սիրելը անձնասիրութիւն է, կը նախընտրեմ անձնասէր ըլլալ: Թէեւ սէրը ամենէն ազնիւ զգացումն է, անանձնական, բարի եւ գեղեցիկ:

— Այո՛, մինչեւ բարդութիւնները սկսին:

— Ոչ մէկ ակնկալութիւն ունիմ, ըսի: Միայն սիրելու իրաւունք. ատկէ աւելին չեմ պահանջեր:

— Այդ իրաւունքը ես չէ որ պիտի տամ քեզի: Դուն քեզի տուած ես արդէն:

— Անշուշտ, պայմանով որ դուն արդելք չըլլաս:

— Իսկ եթէ ե՞ս ակնկալութիւններ ունենամ, — հարցուց Առաքելեան:

Ամերիկոսին մեղմօրէն, բնական մղումով, համբուրեց երիտասարդը շրթներէն եւ միայն ատկէ ետք փաթթուեցաւ անոր: Սիրեց, զգուեց, շոյեց եւ ուրախացաւ:

— Հարցումիս չպատասխանեցիր:

— Ի՞նչ կրնաս ակնկալել: Ի՞նչ ունեմ որ ի՛նչ տամ քեզի:

— Դուն քեզ:

— Երանի: Հողուով եւ մարմնով քուկդ եմ արդէն, քեզի կը պատկանիմ: Ատկէ աւելի մեծ հաճոյք չես կրնար պատճառել ինձի:

— Եթէ նոյնիսկ ուզեմ հետդ պառկի՞լ:

— Կը խորհիս որ ես չե՞մ ուզեր, — Մարթա պարզօրէն ըսաւ:

— Մարդ իր սիրածին հետ չ'ուզե՞ր պառկիլ: Որպէսզի կարօտը առնէ, կ'շտանայ: Բայց ինձի համար այդքան կարեւոր չէ. Ֆիզիքական կարեւորութիւն չունի:

— Կը սխալիս: Երբեմն շատ կարեւոր է:

— Անշուշտ, բայց ես դէժ ատոր համար չեմ սիրեր քեզ :

— Սէր պիտի չըլլար զգացածդ, եթէ հակառակը ճիշդ ըլլար : Հասարակ ցանկութիւն :

— Զիրար կ'ամբողջացնեն, — լրջութեամբ վերլուծեց ազջիկը, — կամ անհրաժեշտ միութիւնը կը կազմեն :

Այս բոլորը ճիշդ ըլլալով հանդերձ, հաստատեց ձէք, իր մէջ միայն ցանկութիւնը իրական էր այդ պահուն : Թերեւս կ'ուզէր կամ կը փորձէր աւելի ազնիւ զգացումի մը պատրանքը ստեղծել ինքն իր մէջ, բայց ապարդիւն : Ինքզինք չէր կրնար խաբել : Նախկին երիտասարդը չէր, եւ փաստօրէն զգացական չէր եղած երբեք, որ այս տարիքին սիրահարուէր յանկարծ : Եւ իրականութեան մէջ աղջիկան զգացածը չէր կրնար ըմբռնել, որքան ալ փորձէր տրամաբանել, վերլուծել, եւ մանկ անոր մորթին մէջ : Իրեն անծանօթ ապրում մըն էր — անմատչելի բայց նաեւ բաղձալի, հետաքրքրական : Սեղային հանդէպ նոյնիսկ նմանօրինակ զգացում չէր ունեցած :

Մարթա կը համբուրէր զինք հիմա դարձեալ, մինչ ինք կը փորձէր համոզել ինքզինք, թէ բոլոր կիները նոյնն էին — Ֆրիդրիքականօրէն դէժ — եւ ունէին նոյն մարմինը, իրական նոյն դրաւչու-թիւնը, կուրծք, կոնք, զիստ, մերկութիւն : Թէեւ այս աղջիկը շատ աւելի երիտասարդ էր եւ թարմ քան իր կինը, օրինակի համար, ու շատ աւելի ցանկալարոյց բնականաբար : Ու դեղեցիկ : Զինք յուսահատեցնելու աստիճան : Այո՛, իր մէջ միայն ցանկութիւն կար : Բայց կինը կին էր, ստինքը՝ ստինք, եւ իրական մերկութիւնը նոյն դեղեցկութեան տաճարը : Գեղեցկութեան, թէ ցանկութիւններու ատրու-շան : Որ կ'այրէր զինք հիմա : Աւելի չկրցաւ դիմադրել, ու պարտուած՝ անձնատուր եղաւ : Մարթայի՞ն, թէ ցանկութեան : Կարեւոր չէր այլեւս : Բնական մարդ մըն էր այդ պահուն, առողջ, կեղանի, ու կենդանի մը նման կատգած : Ուղեղը կը զործէր տակաւին, այո՛, սակայն չէր ենթարկուեր իրեն, եւ անկախութիւնը վերագտած կ'արհամարհէր զինք, կը ձաղկէր նոյնիսկ : Հաւատարմութիւն, սէր — զաւակներուն եւ Սեղայի սէրը — ընտանեկան սրբութիւն, բարոյական, պատասխանատուութիւն, բոլոր՝ իմաստ ունենալէ դադարած էին : Կար այս աղջկան մարմինը միայն, հոյակապ մերկութիւնը անոր, որ ձեռքերուն մէջ աւելի եւս կը դեղեցկանար, կը մերկանար ու կը կատգէր :

Բայց Մարթայի վերացած արտայայտութիւնը սթափեցուց զինք : Կանաչ, նշաձեւ աչքերը այնքան խաղաղ էին, բայց նաեւ այնքան խուր, որ ձէք զարմացած, անզալարար խօսեցաւ :

— Ի՞նչ ունիս :

— Ձեմ կրնար հաւատալ :

— Ինչի՞ն, չե՛մ հասկնար :

— Երջանկութիւնը ա՛յս է արդեօք : Ձեւ կրնար պատկերացընել... այսքան խաղաղ ու դո՛հ չեմ եղած կեանքիս մէջ : Անկարելի է : Ու զարմանաս թերեւս, բայց կը վախնամ :

— Ինչէ՞ն :

— Նախազգացո՞ւմ, չեմ գիտեր : Կը զգամ որ այս երջանկութիւնը երկար պիտի չտեւէ. տարօրինակ է, բայց գրեթէ վստահ եմ, թէ պիտի կորսնցնեմ դայն :

— Ինչո՞ւ :

— Ձի կրնար իրական ըլլալ : Կարելի է : Ձեմ կրնար հաւատալ, որ ես եմ այս բախտաւոր անձը : Ամէն մարդու չի պատահիր ի վերջոյ, ամէն մարդ այսպէս բախտաւոր չ'ըլլար : Մանաւանդ ես :

Աղջիկը հանդարտեցնելու, կամ լռեցնելու, ախմայ ժպտեցաւ Առաքելեան, միակ կերպը դայն համբուրելն էր : Իրական սովորական ռազմավարութիւն էր, զիտէր, եւ պէտք չէ կարեւորութիւն բնծայէր անոր : Թէեւ Մարթա ամերիկացի էր, այսինքն բացարձակ անծանօթ մը, որու կեանքի ըմբռնումը իրենինէն տարբեր պէտք է ըլլար : Եւ ուրեմն՝ կրնար ռազմավարութիւն չըլլալ այս ամբողջը : Աւելի լաւ : Արդեօ՞ք : Բայց ինչպէ՞ս կարելի էր : Քսաներկու տարեկան ամերիկացի, զործնական եւ համարձակ աղջիկ մը ինչպէ՞ս կրնար քառասունին հասած ամուսնացած եւ դաւակներու տէր մարդ մը սիրել : Միթէ՞ կեանքի ըմբռնում կոչուածը այս էր — անոր կեանքի ըմբռնումը : Պարզ, անպաճոյճ, բարդութիւններէ զուրկ, ժուժկալ եւ միտմիտ : Ինչպէ՞ս կրնար այս տեսակ սէր մը կամ զրկանք մը բնորոշել : Սէ՞ր էր ստիկա, թէ պատիժ :

Յամենայն դէպս զգուեց դայն, համբուրեց, սիրեց, խկապէս սիրեց, այնպէս ինչպէս կը սիրէր իր երեխաները, ու յանցաւոր զգաց : Լոս Անձեւլըս կոչուած մարդակուլ քաղաքի սա փոքրիկ յարկարածինն մէջ ի՞նչ կ'ընէր ինք՝ պարզ ու միամիտ աղջկայ մը հետ : Զո՞ւլ կը խարէր : Մարթա՞ն, թէ ինքզինք : Անսկզբունք, անխիղճ հրէշ մըն էր — տարակոյս չունէր այլեւս — եւ պարզօրէն կը շահագործէր անփորձ ու միամիտ սա արարածը, որ կը սիրէր զինք : Այո՛, հաւատար կամ ոչ, ուղէր ընդունիլ կամ չքմեղանալ, ան կը սիրէր զինք : Անկեղծօրէն կը սիրէր : Մինչ ինք, անասելի լրբութեամբ մը, մոռցած, ուրացած էր իր բուն ծրագիրը, ու կը տուայտէր հեշտանքի

մէջ: Քարտուղարուհին յորդորելու, զգաստութեան կոչելու եկած էր հոս, եւ... փաստօրէն ինք զգաստութեան պէտք ունէր հիմա:

— Ե՞րբ պիտի տեսնեմ քեզ, — Մարթա հարցուց զարձեակ, երբ ձէք մեկնելու կը պատրաստուէր: Դէմքը երանութիւն կը շողարձակէր կարծես, եւ աչքերը կը ժպտէին երախտապիտութեամբ:

— Սոյրականին պէս: Պաշտօնակից ենք, մոռցա՞ր:

— Ո՛հ, դիտեմ: Ինչպէ՞ս կրնամ մոռնալ: Ատիկա քեզ տեսնել է. շարշարանք է, տառապանք:

— Ասկէ ետք պէտք չէ ըլլայ:

— Յուսամ: Աշխատանքի ժամերէն դուրս պէտք է քեզ տեսնեմ սակայն, հետո ըլլամ, ազատ շունչ քաշեմ, ապահով զգամ:

— Ապահով չզգալու պատճառ մը ունի՞ս, — ձէք Առաքելեան, հարցական արտայայտութիւն մը դէմքին, ուշի ուշով նայեցաւ աղջկան: — Եւ միշտ հետս ես: Օրուան կարեւորագոյն մասը հետդ կ'անցընեմ:

— Այս օրը մասնաւոր նշանակութիւն մը ունի ինձի համար: Նոր անձ մըն եմ կարծես, վերածնած, ու ներկայութեանդ ազատ կը զգամ, ապահով:

Երբեմնի ծաղրածուն լրջօրէն մտածեց, փորձելով ըմբռնել, հասկնալ աղջկան ըսածը, եւ թափանցել, մտնել անոր ներաշխարհէն ներս: Տարօրինակ արարած մըն է, եղբակացուց, բայց զժողոջեցաւ այս պատասխանէն, զոր ստացաւ ինքնիրմէ: Ի՛նչ կը զգար արդեօք ան, որ իր ներկայութեան ապահով կը զգար. բայց ինչ ըսել կ'ուզէր — իր ներկայութեան ապահով զգալ ի՞նչ կը նշանակէր: Արդեօ՞ք անգլերէն չէր հասկնար ինք, թէ աւելի խոր, աւելի հիմնական անջրպետ մը կար իրենց միջեւ: Լեզուներէն անդին, լեզուներէն վեր: Անապահով զգալու հարց մը եթէ կար, ինք պէտք է ըլլար զանգատողը, ոչ թէ Մարթա Միլման, որ այս երկրի հարազատ գաւակն էր, բնական մէկ մասնիկը անոր: Եւ ուրեմն՝ ապահով, ինքնիշխան, անկախ եւ ինքնապատահ: Մինչդեռ ինք... ուր որ երթար, դրսեցի մըն էր, օտարական մը, որու արտօնուած չէր հարազատ զգալ եւ պատկանիլ երկրի մը: Պարզօրէն չէին արտօներ:

Ապերախտութիւն պէտք է որակէր թէեւ իր այս զգացածը: Օտարականը ինքն էր, այո՛, եւ Մարթան՝ բնիկ ամերիկացին. բայց ան ամենայն անկեղծութեամբ, եւ առանց վերապահութեան, կը սիրէր զինք՝ անտեսելով ամէն կարգի պատուար եւ տարբերութիւն: Անոր համար պատուարներ չկային. իսկ տարբերութիւնը կամ խորա-

կանութիւնը ինք կը ստեղծէր՝ իր երեւակայութեան մէջ: Կամ պարզօրէն կը հնարէր: Հոգեբանական չէ՞ր: Զինք ստորագոյս չէին նկատեր. ընդհակառակն՝ հիացումով կը դրուատէին ու կը դնահատէին իր կարողութիւնները, լաւագոյն պայմաններն ու առանձնաշնորհումներ ընծայելով իրեն: Ու կը վայելէր քաղաքացիական նոյն իրաւունքները: Ուրե՞մն: Բարդոյթը իր մէջ էր, դիտէր:

— Ասկէ առաջ ազատ չէի՞ր, — խօսեցաւ ձէք ի վերջոյ:

— Անչո՛ւշտ, միշտ ազատ եղած եմ: Ոչ թէ այդ իմաստով: Այդ ազատութիւնը իմաստ չունի. ազատութիւն չէ վերջին հաշուով: Ատիկա մեր կեանքին մաս կազմող առօրեայ, ընդունուած իրաւունք մըն է, իրականութիւն մը՝ եթէ կ'ուզես: Ես ներքին, հոգեկան խաղաղութեան մասին կը խօսիմ. ես զիս վերադանելու, վերստին անձն ըլլալու մասին: Ասկէ առաջ այս տեսակ զգացում չեմ ունեցած. աւելի ինքնապատահ եմ կարծես, դիտակից եւ անձիս հետ հաշտ:

— Ըսել կ'ուզես, թէ մինչեւ հիմա իսկական անձդ չէիր, կամ չէիր ճանչնար զայն:

— Վստահ եմ, ըսածս շատ լաւ կը հասկնաս: Գոնէ քեզի բացատրելու պէտք չունիմ: Ես զիս կը ճանչնամ, անտարակոյս, բայց ասիկա նոր փորձառութիւն մըն է: Սքանչելի յայտնութիւն մը, որ զիս կ'ազատագրէ: Այո՛, կարծեմ ճիշդ այս է. ազատագրուած կը զգամ, այսինքն երջանիկ, ուրախ, խաղաղ, ինքնապատահ: Բոլոր վախերս փառատած են, անորոշութիւն չէ մնացած մէջս, եւ դիտեմ, թէ կեանքէն ինչ կ'ուզեմ: Իրականութեան մէջ՝ ոչինչ:

Աղջիկը բանաստեղծ է եղեր, ծաղրածուն զուարճացաւ ինքնիրեն, նախընտրելով լուել քան խանդարել անոր վերացած, հոգեզմայլ ճախրանքը: Բայց նաեւ մտահոգուեցաւ, որովհետեւ ենթադրածէն շատ աւելի լուրջ եւ խելացի աղջիկ մըն էր: Երիտասարդ ամերիկուհի մըն էր, ճիշդ է, եւ իր սերնդակիցներուն նման մոլորած — դէթ հայկական չափանիշերով — կանուխէն անկախութեան դրօշակը պարզելով եւ բաժնուելով ծնողներէն: Սակայն տարբեր էր նաեւ անոնցմէ՝ ըլլալով իսկապէս անկախ եւ անհատականութիւն ունեցող առեղծուած մը, որ կրնար իր կեանքը եւս բարդացնել: Ինչո՞ւ բարդացնել: Ըսածէն մեկնելով, այնքան ալ բարդ չէր անոր կեանքը: Ընդհակառակն՝ ինքն իր մէջ խաղաղ եւ ներդաշնակ, ինքնարաւ զոյութիւն մըն էր անորը: Իսկ աւելի ինք պէտք ունէր նմանօրինակ հոգեկան անդորրի մը:

— Հակասական չէ՞, — հարկադրուած, հարցուց յետոյ:

— Երբե՛ք: Կեանքէն բան մը չուզելու դիտնալը նոյնն է, չէ՞.

Թէ՛ գիտեմ ինչ կ'ուզեմ . այսինքն ոչինչ :

— Եթէ ուզես , կրնաս բաւական բարդ մտածումներով ինծի պէս անձ մը նոյնիսկ շփոթի մատնել :

— Շատ պարզ է , — միամտաբար փորձեց բացատրել Մարթա :
— Այսօր , հիմա գիտեմ , թէ մարդ երջանիկ ըլլալու համար իրականութեան մէջ ոչ մէկ բանի պէտք ունի :

— Քրիստոնէական վարդապետութեան հիմնական միտքն է , ինչպէս միւս բոլոր կրօնքներունը :

— Թերեւս , չեմ գիտեր : Կրօնական մասնաւոր դաստիարակութիւն չեմ ստացած , եւ այդ իմաստով հաւատացեալ մը չեմ նկատեր ինքզինքս . բայց գլացածս գիտեմ : Վստահ եմ :

— Երանելի ես , — լրջօրէն գիտել տուաւ Ճէք :

— Բայց պէտք է տեսնեմ քեզ , մի՛շտ :

Ի՞նչ ըսել ուզած էր , Մարթա Միլմանի միտքին մէջ հարցումը կրկնուեցաւ , մինչ ինք կը փորձէր երկարածուցել զգացած երանութիւնը : Քրիստոնէական վարդապետութեան հիմնական միտքը սիրոյ զաղափարն էր , մինչդեռ ինք այդ պահուն այլ մտածումներով տարուած էր : Աւաջին անգամ ըլլալով , եւ պատահամբ , կ'անդրադառնար որ մարդ նուազագոյնով իսկ կրնար գոհանալ , եւ իրականութեան մէջ շատ աւելի երջանիկ կը գգար այդ կերպով : Որովհետեւ գրեթէ ոչինչի պէտք ունէր որպէս մարդ ապրելու համար , բացի անհրաժեշտ եւ անխուսափելի սնունդէն : Մնացածը ամբողջ աւելորդ էր — տուն , սեպհականութիւն , բազմաթիւ եւ զանազան իրեր , ու նոյնիսկ հագուստ կոչուածը — եւ յաւելեալ տաղտուկ , անտեղի մտահոգութիւն : Ըսածը այս էր պարզօրէն : Անակնկալ յայտնութիւն մըն էր , ճիշդ է , եւ առանց մտածելու , առանց ճիզի յանգած էր այդ եղբայրացութեան : Եւ զոհ էր , ուրախ , որովհետեւ գիտէր , թէ հիմնովին պիտի փոխէր զինք այս յայտնատեսութիւնը :

Կամ արդեօ՞ք Ճէք այս փոփոխութեան կ'ակնարկէր : Ինչպէ՞ս կրնար կուսած ըլլալ : Մինչեւ կէս ժամ առաջ ինք նոյնիսկ չէր գիտեր , չէր անդրադարձած : Մինչ ան «երանելի ես» ըսած էր իրեն : Արդեօ՞ք : Յամենայն դէպս երջանիկ էր , եւ իսկապէս բախտաւոր : Ասկէ աւելի ի՞նչ կրնար ուզել , տենչալ : Ո՛չ հարստութիւն , ոչ փայլուն ապագայ , յաջողութիւն , ոչինչ : Փայլուն կամ այլապէս , ապագան ի՞նչ էր , ի՞նչ իմաստ ունէր : Կարելորդ հոգեկան զոհունա-

կութիւնն էր , որ ժամանակի կամ յաջողութեան հետ կապ չունէր երբեք : Կարելի էր բան չցանկալ երբեք . . . եւ ինչո՞ւ ցանկալ , ինչո՞ւ ձգտիլ որեւէ տեսակի վարձատրութեան , պաշտօնի , դիրքի , եւ վերջապէս՝ յաջողութեան : Որ ի՞նչ ըլլար : Յաջողութիւնը կրնա՞ր հոգեկան ներկայ խաղաղութիւնը պարզեւել իրեն : Կը կատկածէր :

Հայրը , օրինակի համար , իր հարազատ հայրը , յաջողած մարդ մը կը նկատուէր եւ փաստօրէն հարուստ էր : Բայց ինք գիտէր , թէ զժրախտ էր ան , հոգ չէ թէ շքանշաններ իրականութիւնը եւ համաձայն չըլլար իր բոլոր ըրածներուն , ապրելակերպին , անկախութեան եւ հասարակ քարտուղարուհի մը ըլլալուն : Ով գիտէ ի՞նչ պիտի մտածէր , ինչպէս պիտի զայրանար , երբ իմանար , թէ ամուսնացած եւ զաւակներու տէր հայ մը կը սիրէր : Բացարձակ անծանօթ մը , օտարական մը , իրենց չափանիշերով անքաղաքակիրթ եւ յետամնաց վայրենի մը : Թերեւս զաղափար իսկ չունէր , թէ ինչ էր կամ ո՞վ էր Հայր : Ինք եւս չէր գիտեր մինչեւ քանի մը ամիս առաջ , թէ եւ վերջին տարիներուն յաճախ կը լսէր հայոց մասին , մանաւանդ Լոս Անճելլոս հաստատուելէ ետք : Հետաքրքրական մարդիկ էին : Ընդհանրապէս բարեկեցիկ , երբեմն խեղճ , բայց ինքնամոլփի եւ ինքնիր պատեանին մէջ կճկուած հաւաքականութիւն մը կազմած էին հոս , արեւմտեան ափի մայրաքաղաքին մէջ : Բայց աշխատասէր եւ ճարպիկ արեւելքցիներ էին բոլոր , առանց բացառութեան , թէ եւ հիմնովին տարբեր Արեւելքէն ներգաղթած այլ ժողովուրդներու բեկորներէն :

Ճէքին ծանօթանալէ ետք միայն սկսած էր անոնցմով հետաքրքրուիլ , կարդալ , պրպտել եւ հարցումներ հարցնել՝ բարեկամներն ու շրջապատը զարմացնելու աստիճան : Բայց ամենէն աւելի ինք զարմացած էր վերջաւորութեան եւ համոզուած , թէ շատ սահմանափակ ուսում կը ստանային իրենք հոս՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ : Ոչ միայն Հայոց պատմութեան , այլեւ հարուստ եւ անհաւատալիօրէն զեղեցիկ եւ ամբողջական մշակոյթի մը զիւարը ըրած էր : Իրեն համար զիւտ էր , անկասկած : Մինչեւ ներկայ թուականը , երկրէ երկիր հալածական , անկարելի պայմաններու մէջ գիր եւ դրականութիւն կը մշակէին տակաւին՝ անլմբունելի յամառութեամբ մը : Ինչպէ՞ս կարելի էր : Ո՛չ երկիր ունէին , ոչ պետութիւն , բայց կը շարունակէին իրենց գիրն ու լեզուն պաշտպանել իրենց հետ ու կենդանի պահել զայն : Յաճախ՝ արժանանալով տեղացիներու արհամարհանքին : Պատմութեան մէջ եղալի երեւոյթ էր : Բնա՞զդ էր , թէ մարդկային առաքելութեան մը խոր գիտակցութիւնը : Բայց ինք համոզուած էր , թէ անոնք իրենց կատարածին գիտակցութիւնը

չունէին, որովհետեւ ձէքի նման Գարգացած հայ մը նոյնիսկ անտարբեր էր այս բոլորին նկատմամբ: Ու երբ առիթով մը հարցուցած էր անոր, թէ ինչո՞ւ հայերէն կը խօսէին, պարզօրէն պատասխանած էր:

— Որովհետեւ հայ ենք:

— Բայց հոս ամերիկացի էք այլեւս: Ամերիկա հաստատուած էք, եւ այս երկրի քաղաքացիներն էք, Ամերիկան է ձեր հայրենիքը:

— Ծիշդ է:

— Ուրե՞մն: Հայերէն լեզուն, հայկական դպրոցը ի՞նչ օգուտ ունին. պահպանելը ի՞նչ իմաստ ունի:

— Ամերիկացի ըլլալը հայ չըլլալ չի նշանակեր, — ժպտած էր ձէք ներողամտաբար:

— Բայց Հայաստան մը նոյնիսկ չունիք: Հունգարական ծագումով ամերիկացիներ, օրինակի համար, դէ՞թ Հոնդարիա մը ունին. երկիր, պետութիւն... Խտալացիները եւ լեհերը նոյնպէս:

— Կը սխալիս: Հայն ալ իր Հայաստանը ունի:

— Ո՞ւր: Ատրկա Սովետական Միութիւն է, ոչ թէ Հայաստան. ոչ առանձին պետութիւն ունիք, ոչ իշխանութիւն, ոչ իսկ պարզ ազգային իրաւունքներ:

— Հողը հայկական է եւ Հայութեան կը պատկանի. հոն ապրողներն ալ հայեր են:

— Ինչո՞ւ կը լքեն եւ կը հեռանան ուրե՞մն:

— Ազատ չե՞ն: Ո՞ր օրէնքը կը պարտադրէ որ մարդ իր երկրին մէջ ապրի միայն: Որպէս անհատ ամէն մարդ իրաւունք ունի իր նախընտրածը ընելու:

— Սովետական Միութեան մէջ: Կատակելու սքանչելի տրամադրութիւն ունիս: Պէտք է խոստովանիմ որ կը հիանամ, կը նախանձիմ նոյնիսկ այս կարողութեանդ:

— Ինչո՞ւ: Որովհետեւ դուն հոս նոյնը չե՞ս կրնար ընել: Թերեւս իրաւունք ունիս:

Ձէք չարանալու սկսած էր, բայց նաեւ անակնկալօրէն տխրած էր ու լրջացած: Վերջաւորութեան եզրակացուցած էր:

— Ազատութիւնը յարաբերական է: Ո՞չ, կը ներես. անիմաստ, ապուշ խօսք է ասիկա: Ես ալ չեմ գիտեր, թէ ո՞վ աւելի ազատ է ի վերջոյ: Իրե՞նք, թէ մենք:

**

— Ո՞ւր մնացիր, — Սեղա հարցուց, երբ կէս գիշերէն ետք

տուն մտաւ Ժազ:

— Ձեմ գիտեր:

— Ձե՞ս գիտեր: Խմած ես: Այո՛, բայց գիտովի երեւոյթ չունիս: Ի՞նչ պատահած է:

— Ձեմ գիտեր: Ո՞չ, խմած եմ, ճիշդ է, բայց գիտով չեմ:

Կինը մտահոգ եւ շուարած, նայեցաւ ամուսնոյն: Ձինք այս վիճակին մէջ չէր տեսած երբեք: Հայաստանի մէջ իսկ, երբ հիասթափութեան շրջան մը անցուցած էր, այսքան չէր ընկճուած: Կամ անտրամադիր չէր եղած: Բնական զուարթախոհութիւնը կրցած էր վառ պահել, ու դերասանութիւն ընելով հանդերձ երբեմն, այսպէս ընկճուած կամ պարտուած տուն չէր վերադարձած երբեք:

— Անօթի՞ ես, — հարցուց, խօսակցութիւնը կարենալ շարունակելու համար լո՛կ: Պէտք է խօսէր, ու խօսեցնէր ամուսինը, որ պէսզի հանգչեցնէր զայն, պատեանէն դուրս հանէր ու պարպել տար զինք թունաւորող ցաւը, որ լոութեան վերածուած էր:

— Ո՞չ, ընթրած եմ:

— Գեղամէն նամակ կայ:

— Գեղամէ՞ն, — Ժազ կօշիկները հանեց ու սրունքները տեղաւորեց հիւրասենեակի փոքր ու ցածրիկ սեղանին վրայ: — Հետաքրքրական է:

— Նամակը Անգլիայէն է: Հինգ ամիսէ ի վեր Լոնտոն է եղեր. հոն կ'աշխատի, բայց ըստ երեւոյթին դժգոհ է: Եւ վերադառնալու նպատակ ունի:

— Ձեմ դարձանար: Ո՞ւր պիտի վերադառնայ սակայն, — Առաքելեան աւելի ինքնիրեն ուղղեց հարցումը: Ինքզինք կը հարցաքննէր թերեւս: — Չըսե՛ս, զրոյներն ալ կձկեր են երկրէն: Իւրաքանչիւրս աշխարհին մէկ ծայրը. ոմանք Ամերիկա, ուրիշներ Անգլիա, Ֆրանսա, Յունաստան, Կիպրոս: Իմացածիս համաձայն Կիպրոս գաղթականի վերածուած է: Գէթ իրենք, Կիպրացիները աւելի լաւ վիճակի մէջ ըլլալի՞ն: Մեր վերջը պիտի բերեն կարծեմ:

— Որո՞նք:

— Մեծ պետութիւնները:

— Մեր, հայերո՞ւս այսինքն:

— Այո՛, ազնուամտալ տիկին:

Սեղա զոհունակութեամբ հաստատեց, թէ ամուսինը ինքզինք կը վերադառնէր, եւ ուրեմն ըսաւ:

— Մեր հաշիւը ընելու պէտք չունին նոյնիսկ. մեզ ո՞վ նկատի կ'առնէ՞ որ...:

— Ճիշդ այդ պատճառով պիտի ուզեն միանգամ ընդմիջտ փրկուիլ մեզմէ: Մանր, աւելորդ գլխու ցաւ չեն ուզեր: Անկարեւոր նկատուած գլխու ցաւը, զիտես, միշտ ջղայնութիւն կը պատճառէ:

— Բաւական վառ երեւակայութիւն ունիս, եւ կամ շատ կասկածամիտ ես:

— Երանի՛, երանի՛ ճիշդ ըլլայ ըսածդ, եւ ես սխալած ըլլամ: Բայց կարելի՞ է այդքան միամիտ ըլլալ: Յամենայն դէպս կարեւորը այն է որ այս վիճակին մէջ ենք այսօր, եւ չուարած ենք, կորսուած ու չենք զիտեր, թէ ի՛նչ կ'ընենք: Ինչպէս ես՝ օրինակի համար:

— Սկսածք դարձեալ:

Ժագ Առաքելեան շփոթած, քննեց տիկնոջ արտայայտութիւնը, բայց չկրցաւ վերձանել զայն:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Որդը սկսած է խլրտիլ մէջդ դարձեալ: Երբ այսպէս խօսելու սկսիս, կը վախնամ: Հազիւ մենք գմեղ դտանք, շունչ առինք եւ մարդու պէս ապրելու սկսանք: Տուն, տեղ, հանգիստ, ապահով դործ, ապահով կեանք:

— Մտահոգուելու պատճառ չունիս: Ասկէ անդին երթալիք տեղ չմնաց:

— Բայց դժգոհ ես, այսինքն՝ անհանգիստ, դժբախտ:

Փաստը այն էր որ Մարթայի քովէն կու դար: Ի՛նչ տեսակ դժբախտութիւն էր իրեն վիճակուածը: Տկարացած էր, պարտուած ու յանձնուած վերջաւորութեան: Այո՛, պարզօրէն անձնատուր եղած էր ու դաւաճանած կնկան եւ դաւակնեցողուն: Բայց հիմա քաջութիւն իսկ չունէր իրականութիւնը խոստովանելու, կամ գէթ պատահածը յայտնելու Սեղային, որ իրաւունք ունէր գիտնալու: Զարմանալիօրէն դոհ էր սակայն, եւ յողթական կը զգար: Բաւարարուած: Աղջիկը անկեղծօրէն կը սիրէր զինք վերջին հաշուով, եւ ասոր զիտակցութիւնը դոհունակութիւն կը պատճառէր իրեն, կը քրքրէր երիտասարդական անթեղուած կրակը իր մէջ: Տարիներէ ի վեր այսքան կենդանի չէր զգացած — առողջ, տաք ու կրքոտ: Մարմինը կ'այրէր տակաւին, եւ արդէն իսկ կը կարօտնար Մարթայի մարմնին, որ տաք էր այնքան, տաք ու հազորդական: Բայց ամօթխած ու ժպտուն: Մարտափելի էր:

Կը վախնար: Ինք, այսինքն Յակոբ, Ժագ կամ ձէք Առաքելեան, սկսած էր վախնալ: Ինքնիրմէ: Իր մէջ քնացող այն զաղանէն, որ տարիներ ետք կ'արթնար յանկարծ ու կը սպառնար իրեն: Ու

զիտէր, թէ չէր կրնար զսպել զայն եւ իշխել անոր վրայ — փորձաւարար զիտէր: Իր տկարութիւնները կը ճանչնար, կ'ընդունէր, ու վստահ էր, թէ հոս մնալու պարագային՝ Ֆիդիքական այդ հրէշին զերին պիտի դառնար: Մարթայի կամ իր մարմինին — նոյնն էր, նոյն սաղայնեւական մեքենան — որ միտք չունէր, ոչ սկզբունք, ոչ բարոյական:

— Նամակը ո՞ւր է, — հարցուց:

— Գրածը ամբողջ այս էր. քանի մը տող:

— Իսկապէս հետաքրքրական է: Մեղմէ աւելի փափկանկատ է եղեր... բայց հասցէն ուրիշ...:

— Այլիւր տուած պէտք է ըլլայ: Բաւական ատեն է նամակ չէ ստացած անկէ. կարծես մենք շատ լուր ունինք: Ի՞նչ պատահած է արդեօք:

— Ի՛նչ պիտի պատահի: Երկիրը աշխարհէն խզուած է, եւ բոլոր սպասարկութիւնները՝ խանդարուած: Արտաքին աշխարհի հետ կապ պահելու միջակ միջոցը ճամբորդի մը հետ նամակ զրկելն է: Դուրս ելլողներ կային, բայց հիմա շատ աւելի դժուարացած է: Երկիրը քարուքանդ վիճակի մէջ է, բաժնուած, եւ սահմանները՝ դոյ:

— Իսկ մենք հոս հանգիստ եւ ապահով կ'ապրինք, — Սեղա գրեթէ փսիսաց ու յետոյ աւելի բարձրաձայն ըսաւ: — Ես ասկէ աւելի չեմ կրնար գիտնալ. պէտք է քնանամ: Գիշեր բարի:

— Պղտիկները ինչպէ՞ս էին այսօր:

— Սովորականին պէս. անտանելի:

Համատարած լուրթիւն կը տիրէր: Քաղաքի այս շրջաններուն մէջ ցերեկին նոյնիսկ խաղաղութիւնը կ'իշխէր, կեանքը վերածելով հանդարտ ու վարակիչ հաճոյքի մը: Արեւին տակ մրափող միայրականի գեղեցիկ տուները, փողոցներուն երկու ափերուն վրայ իրարմէ հաւասարապէս բաժնուած, աւելի եւս կը շեշտէին այս հանդարտութիւնը, որ քուն կը բերէր յաճախ: Ժագ դուրս ելաւ խոհանոցի դուռէն եւ քալեց անամբձ պարտէզին մէջ: Աստղազարդ երկինք մը կը հսկէր բնութեան այս հրաշալիքին վրայ, սրափացնող զովութիւն մաղելով վերէն, որպէսզի լուացուէր, մաքրուէր ցերեկին ապակահամ մթնոլորտը:

Հոս՝ այսպէս: Հանդարտ, խաղաղ, զով: Ապահովութիւն: Ե՛ւ աշխատողին, եւ չաշխատողին համար: Անօթի մնալու կամ անտեղի եւ անժամանակ կերպով մեռնելու վտանգ չկար: Առատութիւն եւ... նոյնիսկ զեխութիւն: Օրէնք, կարգ ու կանոն, բայց նաեւ ոճիր: Հա-

կատուութիւններու երկիր: Բնութիւնը իր բարեքններէն ոչինչ զլացած էր. եւ այս շոյալութեան առաջնորդած էր տեղացիները: Բնական իրաւունք մը կը նկատէին այս ամբողջը այլեւս:

Իսկ հոն՝ զրկանք, անապահովութիւն, վտանգ: Մահ եւ աւեր: Նախկին դրախտը դժոխքի վերածուած էր: Ինչպէ՞ս: Ինչո՞ւ: Իշխանութիւն, օրէնք, կարգ ու կանոն՝ յիշատակներ էին: Եւ անշուշտ՝ նոյնպէս ոճիր, կողոպուտ, մարդասպանութիւն: Կարելի՞ էր:

Երկինքը՝ նոյն երկինքն էր: Աստղերը՝ նոյն աստղերը: Աշխարհը... կամ երկիր կոչուած մոլորակը՝ ծերացած բայց անտարբեր, նոյնն էր: Կարելի՞ էր: Հոս այսպէս: Իսկ լեռներ եւ ձորեր անդին, գետեր, ծովեր եւ ովկիանոսներ անդին տարբեր էր ամէն ինչ: Միթէ՞ ճիշդ էր սակայն: Ի վերջոյ նոյն երկինքն էր ու նոյն մոլորակը: Ինչպէ՞ս կրնար ինք հոս ըլլալ, իսկ անոնք՝ հոն: Ինք այս երկրին վրայ ունէր կին, զաւակ, պաշտօն, ապահովութիւն, հոմանունի: Զինք սիրող եւ ցանկացող երկրորդ կին մը, կիներ: Իսկ Ալիս Օհանեան անունով մանկամարդ այն կինը, որ իր քնին էր, ոչ ամուսին ունէր, ոչ պաշտօն, ոչ ապահովութիւն, եւ ոչ ալ սէր կամ սիրական: Միակ մարդը, զոր կը սիրէր, եւ որ զինք կը սիրէր հաւանաբար, իրմէ հազարաւոր մղոններ անդին, օտար երկրի մը մէջ, միտքն ու հոգին կը վաճառէր՝ վասն պատառ մը հացի: Ակամայ բայց դիտութեամբ:

Ինք ինչ կ'ընէր հոս վերջին հաշուով: Այս դրախտին կամ դժոխքին մէջ:

Գ.

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայ Աւետարանական Եկեղեցին Լոս Անճելըսի մէջ քանի մը սրահ ունի: Ամենէն ընդարձակն էր այս, ուր շուրջ հինգ հարիւր հայեր հաւաքուած, կը պատուէին Մովսէսական Հայաստանէն պաշտօնական այցելութեամբ հոն գլորտնող արուեստագէտներու խառն խումբը: Հոկտեմբերի վերջին Ծաբաթ օրն էր, հաճելի եւ զով իրիկուն մը, որ Լիբանանի վարուժը կը յիշեցնէր ներկաներէն ոմանց: Արդարեւ հանդիսականները նախկին լիբանահայեր էին առաւելաբար. կային նաեւ պարսկահայեր, ինչպէս նաեւ վերջին տարիներուն Հայաստանէն արտագաղթած հայաստանցիներ, որոնք երեսուն տարի առաջուան ներգաղթողներու

դաւակներն էին ընդհանրապէս: Կատարեալ խառնարան: Տիպիկ հայկական հանդիսութիւն մը, անդրադարձաւ Առաքելեան. երեկոյթ, որ լիբանանեան կնիք կը կրէր: Եւ կամ հայերը ամէն տեղ, ամէն երկրի եւ քաղաքի մէջ, նոյն անարբաղելի մարդիկն էին: Անփոփոխ, միօրինակ, նոյն կաղապարին արտադրութիւնը կարծես:

Ժաղ օրերով ընդդիմացած էր, մերժելով ներկայ գտնուիլ այս անիմաստ հաւաքոյթին, որ ըստ իրեն ոչ մէկ նպատակի կը ծառայէր: Այսօր, կէսօրէ ետք միայն, համակերպած էր ի վերջոյ, Սեղալին դո՛ւսցում տալու մտադրութեամբ: Ամերիկա դալէն ի վեր գործնականապէս տան մէջ բանտարկուած էր ան, եւ եթէ փափաքէր իսկ, չէր վրնար դուրս ելլել, նկատելով որ բարեկամուհիներ չունէր հոս, եւ ոչ ալ փոխադրութեան միջոց: Զայն դուրս հանելու առիթ մըն էր, օգտակար փոփոխութիւն մը: Բայց ինք կը ճանձրանար հիմա: Ոչինչ փոխուած էր թերեւս, եւ տասը տարի առաջ էր ասիկա — նոյն սրահը Պէյրութի մէջ, նոյն բեմը, դերակատարները — իսկ կողքին նստող երիտասարդ ու խանդավառ Հայ աղջիկ մըն էր, սիրուն ու շատախօս կին մը, որ ամուսնացած էր գերմանացի երիտասարդի մը հետ: Գերմանացիի մը լքուած կինը, որ զինք քաջքշելով բերած էր հոս, հայկական այս հանդիսութեան: Տասը տարի անցած էր արդեօք, եւ ինք ամուսնացած էր միթէ: Իսկ տասը տարուան ընթացքին ինչ պատահած էր իրեն: Փաստօրէն նոյն տեղն էր, նոյն սրահին մէջ:

Նայեցաւ շուրջը: Նոյն ծանօթ դէմքերը՝ Պէյրութէն եւ Երեւանէն: Կարճ Սերոբը, Ռազմիկ Խանդաղեանն ու տիկինը, բարեկամներ, ծանօթներ: Կուսակցական ջոջեր եւ ասոնց անխուսափելի հետեւորդները, որոնք արբանեակներու պէս կը հետապնդէին զանոնք: Ինչ փոխուած էր: Տասը տարուան ընթացքին՝ Լիբանանէն մինչեւ Հայաստան եւ Ամերիկա: Տասը, թէ քառասուն տարի: Թերեւս յիսուն: Ինք չէր կրնար յիշել անշուշտ:

Իեմին վրայ կարճահասակ մարդ մը կը պոսար դարձեալ: Զարմանալիօրէն կարճահասակ մարդիկ միայն ճառ կը խօսէին, ըսելիք ունենային կամ ոչ: Հոգեբանական էր արդեօք: Ոչ ոք կը հեռուէր անոր ըսածին բնականաբար, նկատելով որ ունկնդիրները աւելի հայաստանցի հիւրերով հետաքրքրուած էին եւ անհամբեր կը սպասէին անոնց բեմ բարձրանալուն: Իսկ մինչ այդ՝ զբաղած էին զիրար քննելով:

Առաքելեան զբաց որ կը թմրէր, եւ անհանգիստ դպաց: Նախորդ զիշերը Մարթային հետ կիսած էր դարձեալ, եւ առաւօտեան

ժամը մէկին տուն հասած: Այս երկրորդ անգամն էր, յաջորդական երկրորդ Ուրբաթը, որ աւանդութեան կարգ պիտի անցնէր ըստ երեւոթիւն: Կը զգար, գիտէր, թէ ինքնիրմէ դժգոհ էր, սակայն ոչինչ կրնար ընել, եւ մանաւանդ՝ ոչինչ կ'ընէր: Միշտ քնատ էր, նկատելով որ քունը խանդարուած էր եւ գիշերուան մեծ մասը երազելով կ'անցընէր: Նախընտրելի էր քնանալ, քան թէ քնացնէր արդարացնել, եւ մոռնալ այս ամբողջը: Բեմին վրայ պուստակ մարդը, Հայաստանէն եկած հիւրերը, բեմադրութիւնը, ամբոխավարութիւնը, կեղծիքը, զոր հայրենասիրութիւն կը կոչէին, ինքզինք, Մարթան, անոր սէրը եւ իր անձնասիրութիւնը, ու վերջապէս՝ այս տառապանքը: Փաստօրէն կը տառապէր եւ դժգոհ էր Յակոբ Առաքելեանէն, որ ըրածն ու փնտածը չէր գիտեր այլեւս:

Ի՞նչ էր հայրենասիրութիւն կոչուածը: Այս մարդիկը ինչո՞ւ հաւաքուած էին հոս: Պատճառ մը պէտք է ունենային: Միթարութիւն, ինքնախաբէութիւն: Ներքին պահանջ էր թերեւս, իրենցմէ անկախ, անհրաժեշտ փախուստ մը իրականութենէն: Նահանջի եւ պարտութեան իրականութենէն: Գիտէին, թէ դաւաճանած էին, որացած հայերնիք եւ անցեալ, պատմութիւն, իրաւունք եւ հող, եւ ընդունած պարտադրուած այս լուծումը: Ապահովութիւնը: Որ մասամբ գիրենք հաւասար կը դարձնէր այլ մարդոց: Նախընտրած էին այս մասնակի հաւասարութիւնը — ապրելու իրաւունքը — եւ մոռցած իրենց միւս բոլոր իրաւունքները: Երկիր ունենալու իրաւունքը, իրենց սեպհական հողին վրայ ապրելու իրաւունքը, իրենց կեանքին եւ ճակատագրին տէր ըլլալու տարրական անհրաժեշտութիւնը:

Ներկայ հայուն հայրենասիրութիւնը այս էր ուրեմն: Երկիր չունենալու եւ այս իրականութիւնը ընդունած ըլլալու գիտակցութիւնը քողարկելու հողերանախան հարկադրանքը: Իրենք գիրենք արդարացնելու համար պէտք է հայրենասիրութիւն խաղային եւ պուստակին իրարու, թէ հայրենասէր էին: Եւ այս կատարելով՝ իրենք իրենց իրաւունք կու տային գիրար հալածելու եւ հաւատաքննական արշաւ շրջապահեցնելու իրարու դէմ: Այս իմաստով՝ ճակատագրաց կերպով Հայութիւնը ուրացած հայեր շատ աւելի պատուաւոր մարդիկ էին:

Ժողովուրդ մը ամբողջ այս վիճակին ինչպէ՞ս հասցուցած էին — ո՞վ հասցուցած էր: Ինչպէ՞ս կրցած էին ստրկացնել միլիոնաւոր այս խլեակները, որ իրենց երկրէն դուրս աշխարհի վրայ տեղ չունէին վերջին հաշուով: Ոչ ոք կ'ընդունէր գիրենք, ոչ ոք կը ճանչնար՝ որպէս համահաւասար իրաւունքներու տէր մարդիկ: Անոնց

առաջարկուածն ու տրուածը անարդական ողորմութիւն էր միայն: Այլապէս վաղուց ձուլուած պիտի ըլլային: Եթէ տարբեր, նուաստ կամ ստորագաս չնկատէին գիրենք:

Գաղափարը անհանդուատացուց, վրդովեց գիրենք: Այս գրացումը իր էութեան մաս կազմած էր, իր հետ աճած — գիտէր — բայց այսքան յստակ կերպով չէր կրցած բնորոշել զայն, տեսնել, հասկընալ, եւ վերլուծել ինքզինք: Ճանչնալ: Որպէսզի քակէր հանդուցներու կծիկը, լուծէր դադանիքը, որ տարիներու ընթացքին խախտած էր իր կեանքին հաւասարակշռութիւնը: Ամերիկան եւս չէր կրնար փրկել գիրենք, վստահ էր հիմա: Ձէր կրնար փոխել, վերականգնել, հաւասարակշռել գիրենք: Երկիրները դէր, յանցանք չունէին: Իր մէջ էր տաղնապը — իրմէ ներս գործադ, բայց իրմէ անկախ գրութիւն մը:

Որք մըն էր ի վերջոյ, եւ որքի հողերանութիւն էր իրը: Ի մօրէ եւ ի հօրէ որք, ճիշդ է, բայց նաեւ՝ որք որպէս մարդ: Շատ վաղ տարիքէն, ծնած իսկ օրէն: Ոչ թէ Յակոբ Առաքելեանը ինք, որպէս անհատ, այլ հայ մարդը, որ կենդանի էր իր մէջ՝ իր բոլոր բարոյսիքներով եւ թերութիւններով: Առաւելութիւններով նաեւ: Բայց այս առաւելութիւնները փրկած ու զանազանած էին գիրենք որպէս սոսկական անհատ միայն. իսկ հայը մնացած էր որք — զրկուած, անիրաւուած մարդ մը, որ իր ենթագիտակիցին մէջ չէր կրնար ընդունիլ իրեն պարտադրուած անարդարութիւնը: Եւ անպայմանօրէն պիտի պոթկար օր մը, պիտի ըմբոստանար. կ'անդարաւոնար, կը գիտակցէր հիմա, թէ այս էր ըլլալիքը վերջաւորութեան: Ամերիկան կամ Լիբանանը ի՞նչ դէր ունէր ասոր մէջ: Նոյնիսկ՝ խեղճ ու միտուճար Սովետական Հայաստանը:

Ինչո՞ւ կը շարունակուէր այս դերասանութիւնը ուրեմն: Ինչո՞ւ կը շարունակէին Հայաստանէն՝ հեղինակութիւն եւ լիազորութիւն չունեցող պատուիրակութիւններ, աւտոմատ խումբեր ու միամիտ բանաստեղծներ ուղարկել արտասահման: Հայաստանը փրկելը, թէ անոր տառապանքը երկարաձգելու համար: Սանդախտներով, թէ յուզելու համար: Եւ ինչո՞ւ խանդալաւել, երբ ոչինչ կըրնային տալ անոր — ոչ իսկ յոյս: Մինչդեռ այս Հայութեան երկիր մը պէտք էր, հող, հայրենիք: Իր հողը, շօշափելի, առարկայական երկիր մը քարտէշի վրայ, եւ ոչ թէ դադափարի մը պատրանքը: Սփիւռքահայութիւնը հայրենիքի մը պէտք ունէր, այս՝, բայց աւելի պէտք ունէր իրական երկրի մը, որ ոտքին տակ հող ու քար ըլլար, եւ ոչ թէ՝ միտքին մէջ պատրանք կամ ցնորք: Այսօր կը հասկնար,

կ'ըմբռնէր Գեղամ Տարօնեանի ըսածը:

Բեմին վրայ խօսողը հայաստանցի մըն էր հիմա. երիտասարդ, ինքնալստահ մեքենայ մը, որ արագահարուածի նման բառեր կ'արձակէր բայց կը ժպտէր՝ փոխանակ պոռալու: Այո՛, գէթ չէր պոռար այս մարդը: Առաքելեան ուշադրութեամբ հետեւեցաւ անոր հեղասահ նախադասութիւններուն, բայց յուսախաբ, անդրադարձաւ որ նոյն յանկերգը կը կրկնուէր: Դարեր ետք վերականգնած Հայաստանը միակ փրկութիւնն էր, Հայութեան միակ յոյսը, միակ հայրենիքը, որ ոչինչ կը խոստանար սակայն: Այլ կը պահանջէր, պայմաններ կը դնէր, կը հրահանգէր ու կը սաստէր նոյնիսկ: Որովհետեւ՝ թէեւ հօր ու բարգաւաճ, պէտք ունէր իր բոլոր զաւակներուն զոհողութեան եւ անսակարկ նուիրումին: Որովհետեւ հայրենիքը աւելի կարեւոր էր ու գերադաս, քան ուրիշ անհատ, կամ սրբէ գաղութ: Կը բաւէր որ հայրենիքը տէր կը կանգնէր իրենց, ինչպէս Լիբանանի մէջ վերջին շրջանին, եւ ամէն տեղ:

Ժառ յիշեց յետոյ, ճանչցաւ այս երիտասարդ ու համակրելի արձակադիրը, որու հանդիպած էր անգամ մը հանդուցեալ Վաղարշակ Նորենցի տան մէջ: Ինք այն ատեն տակաւին նոր հայրենադարձ, եւ բնականաբար խանդավառ ու գինով, միամիտ ու քիչ մը բոժանտիկ փափաք մը արտայայտած էր հոն: Սօսած էր Կիրզախի գերեզմանատան մէջ թաղուած հօրեղբորը մասին ու նկարագրած այն օրը, երբ առջին անգամ տեսած էր Արարատը հոնկէ, եւ ինքնիրեն խոստացած՝ հօրը աճիւնները եւս փոխադրել եւ թաղել հոն, Արարատի հովանիին ներքեւ: Եւ այս ինքնալստահ մեքենան, որ կը խօսէր հիմա բեմին վրայ, նոյնքան մը անտարբեր՝ ըսած էր իրեն:

— Մենք ձեր մեռեալներին պէտք չունենք:

Շատ պարզ եւ իրաւացի անդրադարձ մը թուած էր իրեն այդ պատասխանը այն ատեն եւ բնականաբար լսած էր ու նոյնիսկ մեղադրած ինքզինք: Ի՛ վերջոյ գիտակից, պատասխանատու եւ իրմէ շատ աւելի իրապաշտ ու գործնական — թէեւ իրեն տարեկից — դրող մըն էր ան, որ խկական գործով կը ծառայէր երկրին եւ անոր ծաղկումին: Ոչ թէ իրեն պէս՝ խօսքով եւ զգացական արտայայտութիւններով եւ պոռոտախօսութեամբ:

Ժամանակի ընթացքին, սակայն, այդ նախադասութիւնը բարդոյթի վերածուած էր իր մէջ — բարդացած, անհամեմատ տարողութիւն ստացած, եւ վիրաւորած էր զինք: Ոչ թէ զինք անձնապէս, այլ ձագկած էր այն միտքը, որ խոսացած էր իր արտայայտած զգացական կամ բովանդակի ցանկութեան մէջ: Այդ միտքը միայն իրեն

յատուկ չէր վերջին հաշուով, այլ ամբողջ ժողովուրդի մը, որ գերեզման նոյնիսկ չունէր: Ժողովուրդի մը գերեզմանը իր երկիրը չէ՞ր միթէ, ապրելու համար յաւերժութեան մէջ եւ յաւերժացնելու հողը, որ անփոփոխ եւ մնայուն միակ տուեալն էր: Անհերքելի միակ ճշմարտութիւնը:

Իրեն նման հայ մը — նոյն սա երիտասարդը, որ ինքզինք երկրին տէրը կը նկատէր եւ որպէս այդպիսին՝ կը ներկայացնէր մտայնութիւն մը — յայտարարած էր իրեն, թէ ինք, այսինքն ժողովուրդ մը ամբողջ այդ երկրին մէջ մեռնելու նոյնիսկ իրաւունք չունէր: Ձէր ուզած հաւատալ, համոզուել, ընդունել, բայց բազմիցս եւ հետեւողականօրէն կրկնած էին իրեն ու յիշեցուցած այս դատն իրականութիւնը: Եւ այսօր գիտէր, թէ ինչու չէր կրցած ապրել հոն: Ձէր ուզած: Մինչդեռ իր դոյութեան վերադառնալու յոյսով, իր խկութիւնը վերահաստատելու հաւատքով ներգաղթած էր ինք:

Ձախողած էր սակայն: Յուսախաբ կամ հիասթափ ըլլալու հարց չէր իրը: Պարզօրէն ձախողած էր, եւ որպէս հետեւանք՝ մատուցած էր իրեն համար անխմանալի մտացած իրականութեան մը: Թէ՛ իր փնտռածը հողէն եւ անոր նիւթական դոյութեան վեր ու բարձր, աւելի անխոցելի, անբեկանելի, անհերքելի ճշմարտութիւն մըն էր: Իսկական դոյութեան ճշմարտութիւնը, որ հարազատութեան զգացում էր նախ եւ առաջ: Ընդունուած եւ պատկանած ըլլալու գիտակցութիւնը:

— Մի քնանար, — Սեղա զգուշութեամբ զպաւ թեւին, մինչ աչքերը զպատուութեան կոչեցինք զինք:

— Դուրսը կը սպասեմ, — ըսաւ ամուսինը եւ ակնթարթի մը մէջ անյայտացաւ սրահի դիւաւոր մուտքէն, ուր դուռին ճիշդ մօտ տեղ դրաւած էին՝ ուշացած ըլլալով:

Նախադաւիթէն դուրս եկաւ եւ սկսաւ ճեմել բացօդեայ շքր-ջափակին մէջ, ուր երիտասարդները բարձրաձայն կը խօսէին, կամ կը վիճէին՝ չէր գիտեր: Իրիկուան ժամը տասն էր արդէն, զոհունակութեամբ ստուգեց ժառ ու սիկառեթ մը վառեց: Հինգ կամ տասը վայրկեան եւս, եւ կը փրկուէր: Երեկոյթը աւարտին հասած էր գրեթէ, բարեբախտաբար, եւ ուրեմն՝ սպասելու պէտք չունէր իրականութեան մէջ: Ծանօթ դէմք մը փնտռեցին աչքերը, բայց նոյն երիտասարդները միայն տեսան: Պէտք է խօսէր սակայն, խօսակից մը գտնէր, որպէսզի թօթափէր վրայէն առանձնութեան այս անակնկալ զգացումը:

Հայրենասիրութիւն, հող, հայրենիք, երկիր, պատկանելիու-

թիւն, Հայաստան, սէր, կին, զաւակ, Հայրենիք, Հայաստան, սէր, կին, զաւակ, եւ իր ինքնութեան որոնումը: Ինչո՞ւ: Ինչ կը պատահէր իրեն: Սկսած էր խելագարի՞ւլ արդեօք: Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեծագոյն քաղաքներէն մէկուն, Լոս Անճելըս կոչուած սա դրախտին մէջ, ուր Հայկ Նահապետի հազարաւոր տարիներ առաջուան թափառումներէն ետք անոր յաջորդներէն ոմանք եկած եւ կայք հաստատած էին, ի՞նչ կը փնտռէր ինք տակաւին: Բայց այդ հարցը լուծած էր արդէն: Ուրե՞մն: Ինչպէ՞ս պէտք է բացատրէր այս դժգոհութիւնը: Ներքին խռովքը, փոթորիկը, սր չէր խաղաղեր, բայց որ անիմաստ էր նաեւ: Այլեւս անիմաստ էր, այս, այսինքն անտրամաբանական, անարդարանալի: Եթէ ինք էր այն իրապաշտ մարդը, որ Յակոբ Առաքելեան կը կոչուէր, իրականութիւնը վաղուց ընդունած պէտք է ըլլար: Եւ ինքզինք համոզէր, թէ օտարութեան մէջ պէտք էր ապրէր մինչեւ մահը: Պէտք է ընդունէր այս եւս, եւ երջանկութիւնը դարպասէր, փոխանակ հարածուելու անվերադարձ անցեալի մը ուրուականներէն: Իրապաշտութիւնը այս կը պահանջէր:

— Գանի մը վայրկեան եւս չէի՞ր կրնար համբերել,— Սեդա կրանդինցաւ հողքին, ուշադրութեամբ դիտելով շուրջը: — Գիտե՞ս, հրաշալի բնութիւն է ասիկա. իսկապէս նախանձեղի են այստեղացիները:

— Դուն անոնցմէ մէկն ես ներկայիս:

— Այո՛: Ձեմ դիտեր: Թերեւս զարմանաս, սակայն մինչեւ այսօր տարբերութիւն մը չեմ գտնացած դեռ, ու երբեմն չեմ անդբազանսար նոյնիսկ որ հոս եմ: Կը հաւատա՞ս: Գաղափար իսկ չունիմ, թէ երկիրը ինչի կը նմանի:

Առաքելեան անակնկալօրէն սթափած, խանդաղատանքով բայց հետաքրքիր, նայեցաւ տիկնոջ եւ հաստատեց, թէ առանձին կը զգար ան: Թէեւ այդ պահուն զոհ էր — նկատեց — եւ մասամբ նոյնիսկ վերացած, խանդավառ:

— Գիտեմ, — ըսաւ, — դիտե՛մ. եւ յանցաւորը ես եմ: Որովհետեւ զուրս չենք ելլեր, բարեկամներ վամ ազդականներ չունինք, փոփոխութիւն չկայ մեր կեանքին մէջ: Ես կ'աշխատիմ, ճիշդ է, եւ մարդոց ծանօթանալու առիթ ունիմ. բայց դուն... Պէյրութ մարդ կը տեսնէիր դոնէ, բարեկամուհիներ ունէիր, դրացուհիներ, որոնց հետ կրնայիր խօսիլ, կատակել, սուրճ խմել ու շաղակրատել երբեմն: Եւ մեր կեանքը տարբեր էր հոն վերջին հաշուով, աւելի հետաքրքրական, մարդկային:

— Անչուշա, բայց դանդաղած չունիմ: Եւ զոհ եմ իրականութեան մէջ, որովհետեւ հանդիստ ենք, ապահով, եւ ապագայով մտահոգուելու պէտք չունինք: Մնացածը՝ Պէյրութ եղած է կամ հոս, նոյնն է. տունը տուն է՝ ամէն երկրի մէջ. տարբեր չի կրնար ըլլալ: Կարեւորը ապահովութիւնն է:

— Միտ՞ի՛ն, — ամուսինը չկրցաւ վերապահութիւն չարտայայտել: — Ի՞նչ իրարանցում է ասիկա, — սրահի մուտքին բարձրացող ազմուկը ուշադրութիւնը զրուակց: Բացօդեայ շրջափակը խճողուած էր արդէն, եւ յստակ կերպով կարելի չէր տեսնել նախագաւիթին տակ պատահածը:

— Եթէ կ'ուզես որ այդ ակնոցդ ջարդուիչուը ըլլայ, — երկտասարդ ու լիբը ձայն մը գոռաց յանկարծ: — Սրբիկայ շուն:

— Շունը դուն ես, — հանդարտօրէն պատասխանեց միջահասակ ու ներկայանալի մարդ մը, որ առանձին էր ըստ երեւոյթի: — Լիբանանի մէջ ձեր ըրածը չէ՞ր բաւեր, որ հիմա ալ...:

— Ես քու դասդ կու տամ հիմա, — զաղաղած երկտասարդը խոսացաւ միջահասակ մարդուն վրայ, մինչ քանի մը այլ երկտասարդներ կը փորձէին զսպել առաջինը ու հեռացնել միւսը, որ կը յամառէր անշարժ մնալ:

— Ամօթ է, տղա՛ք, — միջամտեց ճաղատ ու տխուր արտայայտութեամբ երէցը, որ քիչ առաջ, կը խօսէր երկտասարդներուն հետ: — Վազդէ՛ն, — ձայնը բարձրացուց յետոյ. — հեռացիր հոսկէ նայիմ, որո՞ւ հետ կը խօսիմ:

— Այս ի՞նչ դաստիարակութիւն է, եղբայր, — պոռաց ակնոցաւոր ու միջահասակ մարդը, ձայնը լսելի դարձնելու համար: — Ձեր օրացոյցները պիտի ծախէք, ծախեցէ՛ք. բայց զօրո՞վ: Այսքան ալ լրբութիւն կ'ըլլա՞յ:

— Հայրենակից, — դիմեց անոր երէցը, — կը ներես. բան մըն էր եղաւ: Վերջ տանք, կը խնդրեմ: Ամօթ է, բոլորի՛ս: Դուն որպէս երէց եւ խելահաս մարդ, աւելի ներողամիտ պէտք է ըլլաս:

Երբ փոթորիկը խաղաղեցաւ, քիչ ետք, Ժաղ նկատեց Ռազմիկ Սանդաղեանը, որ կողմնակի կանդնած, զարմացած կը դիտէր տեսարանը: Ինքնաբերաբար ուղղուեցաւ դէպի հայաստանցի բարեկամը, ակնարկով մը թելադրելով Սեդային որ հետեւի իրեն: Ձեռքը նազելի Սանդաղեանին երկարելով, խօսքը ուղղեց անոր աժդահայ ամուսինին:

— Ի՞նչ է, հիացած կը դիտես:

— Հա, Յակոբ ջան, բարի երեկոյ: Հիանալո՞ւ, թէ ցաւելու

բան է սա : Չեմ հասկանում , էս մարդկանց հասկանալու չեմ երբեք :
Հա' , ո՞նց էք , Սեդա ջան : Երեխաները . . . :

— Բարի իրիկուն , — Սերոբ յայտնուեցաւ յանկարծ :

— Բարեւ , կա'րճ . Ի՞նչ է , դուն այս տեսակ հանդիպումներու
կու դա՞ս եղեր : Ժամանակիդ մեղք չէ՞ : Մանթայնիմ : Նոր կապի-
տալիստ Սերոբ Շուշանեան . ոսկիի վաճառական , գոհարավաճառ ,
մաքսանենդ եւ ազգային դործիչ : Ռազմիկ Խանգաղեան , մանկավար-
ժութեան նախկին դասախօս բայց ներկայիս անդործ , հայրենիքի եւ
ժողովուրդի թշնամի , Հայաստանէն արտաքսուած նաջիտնալիստ ,
եւ տիկինը Նազելին , նոյնպէս մանկավարժ :

Սեդա Առաքելեան , զուարճացած բայց մտահոգ , ուշի ուշով
քննեց ամուսինը , վստահ ըլլալով որ արտակարգօրէն զուարթ բայց
վստանդաւոր տրամադրութեան մէջ էր ան դարձեալ : Խանգաղեան
Ռազմիկ նոյնքան մը դարմացած էր բայց քաղաքավարութեամբ կը
ժպտէր , բացառաբար խօսքի տաղնապի մատնուած :

— Հայաստանէ՞ն էք , — խօսեցաւ Սերոբ . — ուրախ եմ : —
Մեզի երթանք բաժակ մը առնենք , — դարձաւ յետոյ երբեմնի բա-
րեկամին :

— Երթանք , — վճռականօրէն պատասխանեց Առաքելեան . —
ես ձեզ կը հասցնեմ յետոյ , — խօսքը ուղղեց Ռազմիկին :

Յարմարագոյն լուծումն էր , ուղեղը արագօրէն դործեց : Այդ
ժամուն եւ նմանօրինակ տրամադրութեան մէջ նախընտրելի էր ան-
միջապէս տուն չվերադառնալ : Յաջորդ օրը կիրակի էր , եւ տունը
փակուած պիտի մնար արդէն . իսկ գիշերը . . . ակամայ հսկումի դա-
տապարտուած էր : Ժամանակէ մը ի վեր իր զիշերները չլուսցող ,
վերջ չունեցող զարհուրանքի վերածուած էին : Պարզօրէն չէր կըր-
նար քնանալ բայց նաեւ չէր կրնար օգտագործել այդ ժամերը : Ոչ
կրնար կարգալ , ոչ կրնար աշխատիլ , ծրագրել , դասաւորել մտա-
ծումները , եւ ձեռքադատուիլ վերջին շրջանի իր անդոհանքէն :

Տուն չէր , այլ ապարանք : Ոչ թէ Լոս Անճելլոսի տախտակա-
չէն բայց սիրուն ու կոկիկ , հանդստաւէտ տուներէն մէկը , այլ քա-
րաչէն հսկայ ու շքեղ զդեակ մը դրեթէ : Դարավերջիկ դղեակ մը ,
արդիական բոլոր յարմարութիւններով , սեպհական աւազանով եւ
ընդարձակ , պճնագարդուած պարտէզով մը , որ զիշերուան այդ ժա-
մուն իսկ կը պսպղար ու կը լուսաւորէր ամբողջ շրջապատը : Պեմբը-
լի Հիլզը՝ միջազգային համբաւի տիրացած սինեմայի աստղերու
եւ ընդհանրապէս առանձնաշնորհեալ դասակարգի մը թաղամասն էր :

Ի՞նչ թաղամաս : Առանձին շրջան մըն էր , քաղաք մը , ուր ապրելը
երազ մըն էր :

Եւ իր ճանչցած կարճ Սերոբը , որ ասկէ քանի մը տարի ա-
ռաջ միայն վերջնականապէս հաստատուած էր հոս , այս երազ քա-
ղաքի բնակիչներէն էր : Իսկ այս շրջանին մէջ բնակելու համար կալ-
ւածատէր պէտք էր ըլլալ . իմացած էր ժառ , եւ ուրեմն հարցուց :

— Քանի՞ զնեցիր այս բանտը :

Սերոբ զրազած էր զիրենք հիւրասիրելով , բայց առանց վերա-
պահութեան եւ որոշ գոհունակութեամբ պատասխանեց :

— Կէս միլիոն :

— Քանի մը տարուան մէջ այսքան դրամ ինչպէ՞ս կըրցար գող-
նալ :

— Մասնավճարով :

— Գողութի՞ւնն ալ մասնավճարով է հոս :

— Ամէն ինչ , — Շուշանեան ինք եւս կատակեց : — Այնքան
ատեն որ ասկոսը կը վճարես եւ կը կողոպտուիս , այսինքն ասիթ
կու տաս որ . . . :

— Շատ ալ կողոպտուող տեսակէն չես :

— Հող մի ըներ , ակա' , ամէն ինչ հաշիւով է : Տալուն առնելն
ալ կայ :

— Վստահ եմ , — ըսաւ Առաքելեան , — դուն եթէ տասը չառ-
նես , մէկ չես տար :

— Հանդիստ ձեզ մարդը , — սաստեց Սեդա :

— Ի՞նչ պիտի խմէք , — Սերոբ հարցումը ուղղեց ընդհա-
նուրին , յայտնապէս գոհ խօսակցութենէն : Ընկերոջ ակնարկու-
թիւնը փոխանակ զինք վիրաւորելու , ինքնասիրութիւնը շոյած էր
ըստ երեւոյթին :

— Ի՞նչ ունիս , — հետաքրքրուեցաւ ժառ :

— Բացի օղիէն ուղած խմիչքդ կրնամ տալ :

— Հարցը իսկապէս լրջացուցած ես :

— Շաքէն տունը չէ՞ , — փափկանկատութեամբ հարցուց Սե-
դա , բայց յետոյ զղջաց : Գիտէր , թէ Սերոբի տիկինը կը խուսափէր
ամուսնոյն բարեկամներէն եւ կարելի եղած չափով հեռու կը մնար
անոնց շրջանակէն :

— Եղբօրը տունն է այսօր :

Եղբայրը Միջին Արեւելքի նշանաւոր գոհարավաճառներէն էր
— վստահամբաւ բայց նաեւ սիրուած : Խորհրդաւոր մարդ մը , ո-
րու մասին կը լսէին յաճախ բայց սակաւաթիւ մարդիկ միայն ան-

ճամբը կը ճանչնային դինք կամ կը հանդիպէին անոր: Առաքելեանները, օրինակի համար, տեղեակ իսկ չէին, թէ Լոս Անճելլոսի մէջ եւս տուն մը ունէր ան:

— Երանելի մարդ ես, — ըսաւ Ժառ: — քոյր մը եւս ունենար, ես կ'առնէի:

— Տիկնոջը ներկայութեան մի խօսիր գոնէ: Ի՞նչ պիտի խմես:

— Վիսքի: Վտակա ունի՞ս:

— Անշուշտ:

— Ռազմիկին վտակա մը տուր ուրեմն: Իսկ տիկիններն ալ... իրենք կրնան որոշել:

— Ձեզ որ ամէն մարդ իր ուզածը խմէ:

— Ոչինչ, — վերջապէս խօսեցաւ Սանդաղեան, — Յակոբին կարելի է վստահել: Ամերիկեան վտական վատը չի:

— Ռուսական ստալիչնայա ունիմ, եթէ կ'ուզես:

— Հա՞: Անպայման:

— Ձերեկի պարտուայ մըն է, ըսի քեզի, — Յակոբ շարունակեց, հեռահեռ շեշտուող խանդավառութեամբ: — Սմենք կենացդ, կա՛րճ:

— Բարի եկեր էք: Ձեր կենացը:

— Եկէք խմենք Սերորի օճախի կենացը, — Ռազմիկ կանգնեցաւ ոտքի եւ սպասեց որ բաժակը լեցուի:

— Մարդուն վտական լեցուր որ կարենանք խմել:

— Հա՛, մէկ վայրկեան: Մարդու շունչ չես տար որ: Այսօր տրամադրութիւնդ տեղն է, լաւ է:

— Տրամադրութիւնս ինչո՞ւ լաւ պիտի չըլլայ: Այսօր հայ ժողովուրդը փրկեցինք դարձեալ: Մերինները չէին բաւեր կարծես. հիմա ալ հաշտատանցիները:

— Կրնամ հարցում մը հարցնել, — Սերոր դարձաւ Սանդաղեանին. — այս ձեր մարդիկը անկե՞ղծ են, թէ եղածը շառլաղանուրիւն է միայն:

— Ձեն կարող անկեղծ չլինել:

— Քանի այդպէս է, ինչո՞ւ գործնական քայլ մը չեն առներ եւ խկապէս օգնել Սփիւռքին:

— Սփիւռքը օգնութեան պէտք չունի, — Ժառ պատասխանեց, անահնկալօրէն լրջացած: Իրենք մեզի պէտք ունին, ամէ՛ն կերպով:

— Ճիշդ է, — հաստատեց Ռազմիկ, — եթէ Սփիւռքը չլինէր, մանաւանդ վերջին տարիներին, Հայաստանի վիճակը աւելի վատ կը լինէր:

— Այս ամբողջ դերասանութիւնը ի՞նչ բանի համար է ուրեմն, — Շուշանեան ակամայ խնդաց, թեւերը պարզած օդին մէջ:

— Մշակութային Կապի գործն է դա: Ուզում են մի բան անել, բայց չգիտեն ինչ:

— Մափրիչութիւնը մեր դիտուն վրայ պիտի սորվին այսինքն, — Սերորի աչքերուն մէջ թերահաւատութեան շփոթը կար:

— Պէ՞տք է բան մը ընեն անպայման:

— Երեւի, — բացայայտօրէն Ռազմիկ չէր ուզեր կարծիք յայտնել:

— Իրենք ալ մեզի պէս չուարած են, — Ժառ փորձեց կացութիւնը փրկել: — Կ'ուզեն բան մը ընել. մեզի՞ համար, իրենց համար... ո՛վ գիտէ: Բայց չեն դիտեր, թէ ի՞նչ պէտք է ընեն.

Ռազմիկի բաժը ճիշդ է: Մշակութային Կապի Կոմիտէութիւնը հիմնողները իրենք ալ չեն դիտեր հաւանաբար:

— Գո՞րծ եղաւ ասիկա: Ձե՞ն խորհիր որ կրնան վնասակար ըլլալ մեզի մեր սպրած երկիրներուն մէջ, մանաւանդ Ամերիկայի պէս տեղ մը:

— Ի՞նչ վնասակար պիտի ըլլան, — Առաքելեան շարունակեց, ինք եւս շփոթի մասնուած. — կը կարծես որ ամերիկեան կառավարութիւնը այդքան մտահոգուած կամ հետաքրքրուած է մեզմով:

Իրենց համար գոյութիւն չունինք մենք: Եւ ամէն տեղ նոյնն է: Այնպէս որ, մենք մեր դիտուն ճարին պէտք է նայինք:

— Դժգոհելու պատճառ չունինք կարծեմ, — Սեղա առարկեց յանկարծ:

— Գիտեմ, դիտե՛մ, — ներողամտաբար ժպտեցաւ ամուսինը: — Ամենէն աւելի ինք պէտք է դժգոհ ըլլայ, բայց կը ծածկէ ամէն ինչ: Ինչո՞ւ: Կը վախնայ որ հոս ալ հանդիսա չեմ ձգեր զինք: Երթալիք տեղ չմնաց սակայն:

— Ո՞ւր պիտի երթաս, — միամտաբար հարցուց գոհարավաճառը: — Ասկէ լաւ երկի՞ր պիտի գտնես:

— Երկիրը սքանչելի է, խօսք չունինք, բայց մեզի համար չէ: Մենք հոս ապագայ չունինք:

— Միայն հո՛ս ապագայ ունինք: Արարական երկիրներէն մեզի յոյս չկայ այլեւս: Եթէ Լիբանանը նոյնիսկ... ակա, գոնէ դուն մի խօսիր: Լիբանանի մէջ քիչ մը ազատութիւն ունէինք, ատ ալ կորսնցուցինք: Ամերիկայէն դատ ուրիշ ոչ մէկ տեղ անգամ մըն ալ այդ ազատութիւնը կ'ունենանք:

— Մեռնելու, փճանալու, այսինքն անհետանալու ազատու-

թիւն: Եթէ կը կարծես որ հարստանալով ապագայ կ'ունենանք հոս, վա՛յ մեզի: Նախ ամէն մարդ չի կրնար հարստանալ. քու պարագայիդ... Ամերիկան չէ որ քեզ հարստացուց. կրնաս հիմա խի ուրիշ որեւէ երկիր փոխադրուիլ եւ շարունակել գործդ: Դրամագլուխ ունենալէ ետք զիւրին է: Եւ ի՞նչ պիտի ընեմ հարստութիւնը, երբ ամենէն կարեւորը չկայ:

— Ի՞նչն է ամենէն կարեւորը, — Սերոբ հարցուց լրջօրէն հետաքրքրուած:

— Ազգային գործիչը դուն ես, եւ ինծի կը հարցնես: Ի՞նչ տեսակ կուսակցական ես դուն:

— Կուսակցութիւնը ի՞նչ մտաւ ասոր մէջ:

— Ժողովուրդին շան քարոզ կարգալ գիտէք միայն. եւ յետոյ ալ ձեր քարոզածին ճիշդ հակառակը կ'ընէք: Հայաստան, հայկական դատ՝ ասոնք բոլոր պարագայ խօսքեր են կ'երեւի. իմաստ կամ կարեւորութիւն չունին՝ դէթ ձեզի համար: Մեզի պէս խեղճերը կը թիւնու կը ծառայեն միայն... միշտ փերէն, բարձրէն նայած էք ժողովուրդին արդէն, դուք ձեզ աւելի բարձր դասելով անշուշտ: Եւ առանց ամ չնալու կը հարցնես, թէ ի՞նչն է հականը:

— Այսքան ազգայնամոլ ըլլալդ չէի գիտեր, ահա՛, եւ ուրախ եմ սակայն:

— Հետաքրքրական է, — Ժազ մէկ ումպով պարպեց բաժակը — ազգայնամոլը ես կը դառնամ յանկարծ, որովհետեւ մատու վէճքին վրայ կը դնեմ: Իմ ըսածս պարզ իրականութիւն մըն է, որմէ կ'ուզէք փախուստ տալ. կամ չհասկնալ կը ձեւացնէք ու կը շարունակէք ժողովուրդին վրայ խնդալ սակայն: Պոռալ, կանչել, սպանալ:

— Ես կուսակցական եղած եմ, այո՛, բայց կուսակցութիւնները չեմ ներկայացներ: Իրենց անունով խօսելու իրաւունք չունիմ, սակայն կրնամ սաքանը ըսել, որ իրենք մեզմէ աւելի լաւ գիտեն, թէ ի՞նչ պէտք է ընեն եւ ե՛րբ: Դուքսէն, առանց մասնակցութիւն բերելու կամ նուազագոյն գոհողութիւնը ընելու, զիւրին է նետելու ընել, քննադատել եւ անկարելի բաներ պահանջել:

— Ի՞նչն պոչը հոն պահուած է արդէն: Պարտութեան դրօշակը պարզած էք, եւ առանց խպնելու կը յայտարարէք, թէ անկարելի բան մըն է մեր պահանջածը: Ինչո՞ւ, կրնա՞ս ըսել ինծի: Որովհետեւ ճիշդ, աշխատանք, յոգնութիւն եւ գոհողութիւն կը պահանջէ: Բայց գոհողութեան մասին ինծի քարոզելու չես քաշուիր:

Որպէս կուսակցական՝ ի՞նչ է քու կամ ձեր կատարած գոհողութիւնը: Հարստանա՞լ:

— Մասունցիի գլուխդ տաքցաւ նորէն:

— Պատիւ ունիմ:

— Ձե՞ս ամ չնար, — կատակեց ու բարութեամբ ժպտեցաւ Շուշանեան Սերոբ: — Ուրեմն դուն ալ, որպէս Մասունցի, դուն քեզ աւելի բարձր կը դասես:

— Ես կուսակցական չեմ որ ամ չնամ: Եթէ ինծի կրնաս այս տեսակ հեղինական խօսք մը ըսել, ալ ուրիշներուն ով գիտէ ինչե՛ր կ'ըսես: Մասունցին ամ չնալու պատճառ չունի, եւ շատ բնական է որ Մասուն, այսինքն Արեւմտեան Հայաստան վերադառնալու մասին մտածէ. մինչդեռ դուք, բոլոր կուսակցականներդ, ամ չնալու պատճառներ ունի՛ք... որովհետեւ տակաւին այս թուականին կուսակցականներ էք: Ես չէ որ հաւատքս ուրացած, փառքի կամ հարստութեան ետեւէն կը վազեմ:

— Յակոբ ջան, — սրդողած միջամտեց Խանդավեան. — ցաւդ տանեմ, Սերոբն ի՞նչ յանցաւոր է որ նրան ես ձեռք առել: — Ու կացութիւնը փրկելու մտադրութեամբ կատակեց. — Զսպի՛ր կատարութիւնդ, Սասնայ ծո՛ւռ:

— Հոգ մի ըներ, — հանդարտօրէն խօսեցաւ Առաքելեան, — զիս նոր չէ որ պիտի ճանչնայ: Եւ գիտէ, թէ ըսածս ճիշդ է:

— Հա՛, վնաս չունի, Պր. Խանդավեան, ասիկա մեր սովորական խօսակցութիւնն է: — Յետոյ դառնալով Առաքելեանին, Սերոբ ըսաւ. — Եթէ խօսքդ իմ մասին է, իրաւունք ունիս: Բայց ես ո՞վ եմ եւ ի՞նչ կը ներկայացնեմ: Ես իմ կեանքս ունիմ, իմ երազներս, ապագաս: Ի՞նչ կ'ուզես որ ընեմ. չաշխատի՞մ, չհարստանա՞մ: Ինչո՞ւ, երբ կրնամ յաջողիլ: Պիտի ուզե՞ս որ հայ մը, ամէն հայ յաջողի եւ պատիւ բերէ իր ժողովուրդին:

— Այո՛, պայմանաւ որ չմոռնաք Հայութիւնը ձեր յաջողութեան կամ հարստութեան մէջ:

— Խմենք Հայութեան կենացը, — առաջարկեց Ռազմիկ, գրեթէ հմայուած:

— Մենք մեր կենացը խմելէ զատ բան ըրած չունինք արդէն, — բաժակը բարձրացուց Ժազ: — Խմենք: Թերեւս խմելով կը փրկենք Հայութիւնն ալ, Հայաստանն ալ: Ի՞նչ երանելի մարդիկ ենք. Հայաստանէն հազարաւոր մղոններ հեռու այս դրախտին մէջ հանգիստ ու երջանիկ, կ'երազենք, կը խանդալատուինք, կը յուզուինք, կը վիճինք ու ոչինչ կ'ընենք: Կը ներէք, ես իմ մասին է որ կը խօ-

սիմ ալլեւա... որովհետեւ ես ալ հայ եմ, եւ բոլոր հայերուն պէս՝
խօսքէն անդին չեմ անցնիր:

— Ի՞նչ կարող ենք անել, — խօսեցաւ Նազելի Պանդազեան,
որ մինչ այդ լուռ կը հետեւէր խօսակցութեան: Մեզմ ու սակաւա-
խօս, հրեշտակային բարի նայուածքով սա սիրուն կինը, որ Առա-
քելեանը արդարացնելու յոյսով կ'ուզէր հարցոյ՞մը՝ առաւելարար
ինքնիրեն:

— Կրնանք խօսքը դործի վերածել:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, — Սերորն էր. — աւելի յստակ չխօ-
սի՞ս: Միտքդ պարզէ, յստակացուր:

— Ժամանակը հասած է որ Հայութիւնը զէնքի դիմէ՝ ինքզինք
եւ իր երկիրը ազատագրելու համար:

— Ինչպէ՞ս: — Սերորն էր դարձեալ:

— Ատիկա քու զեկտվարներուդ պիտի հարցնես: Կազմակեր-
պուած ոյժը իրենք են. միջոցները եւ դրամ ունին, կապեր, շար-
քային երիտասարդութիւն, որ զէնքի դիմելու պատրաստ է: Կը բաւէ
որ հրահանգ, արտօնութիւն տրուի իրենց:

— Դուն քեզ դուրս ձգեցիր սակայն:

— Ես պատրաստ եմ հիմա իսկ շարժելու: Նոյնիսկ՝ այս տա-
րիքիս զէնք վերցնելու:

— Ինչո՞ւ Գաղտնի Բանակին չես միանար:

— Նպատակ ունիմ, եթէ իրենց հետքը գտնեմ: Եւ առաջին
դործս պիտի ըլլայ Լիբանան վերադառնալ:

Սեղա ապշահար դիտեց ամուսինը, որ իր կարգին զինք կը
քննէր հիմա: Արդարեւ, զարմացած արտայայտութիւն մը զէմքին,
Ժազ կը փորձէր ինքզինք դտնել՝ կնոջ աչքերուն մէջ: Ո՞ւր էր,
ի՞նչ կ'ընէր հոս, ի՞նչ կ'ըսէր: Արտայայտած միտքը իրեն համար
ալ յայտնութիւն էր. փաստօրէն այդ մասին չէր մտածած իսկ:

Կիրակի առաւօտուն սովորականէն աւելի կանուխ արթնցաւ:
Հաղիւ հինգ կամ վեց Ժամ քնացած էր, եւ մարմինը հանգիստի
պէտք ունէր տակաւին: Բարեբախտաբար, եւ զարմանալիօրէն, քնա-
ցած էր սակայն. խմիչքի ազդեցութիւնն էր թերեւս, կամ վերջին
օրերու անքնութիւնը: Կիրակի առտուան Ժամը իննին իր տան մէջ
անկողնի վրէժն էր, աւելորդ ներկայութիւն մը: Սովորաբար մին-
չեւ կէսօր կը քնանար, նկատելով որ շարժալիքի այս սուրբ օրը

շարժուան ամենէն տաղտալիք օրը դարձած էր իրեն համար: Տունէն
դուրս չէր կրնար ելլել, որովհետեւ կատարելիք դործ կամ երթալիք
տեղ չունէր: Երեխաներուն յատկացուած պտոյտի Ժամերը նոյնիսկ
տաղտուկի վերածուած էին. մինչդեռ անցեալին կիրակնօրեայ այդ
պտոյտը հաճոյք մըն էր նաեւ, պարտականութիւն ըլլալով հանդերձ:
Իսկ ներկայիս, այո՛, տաղտուկ միայն, անհրապոյր վարժութիւն:

Հիւրասենեակին մէջ նաեւ առանձին էր: Պատուհանէն դուրս
նայեցաւ եւ հաստատեց որ Արմէնն ու Նայիրին կը խաղային պար-
տէզին մէջ: Սեղան խոհանոց պէտք է ըլլար ուրեմն: Այս հսկայ
քաղաքին մէջ կինը եւ երկու դաւակ ունէր միայն. — ուրիշ ոչ ոք:
Չաւահները դուրսն էին. իսկ կի՞նը: Բնազգային մղումով կամ ան-
զիտակից վարժութեամբ, մտաւ խոհանոց Սեղան տեսնելու համար.
Հատուակելու, թէ ներկայ էր ան, եւ կեանքը կը շարունակուէր բնա-
կան կերպով: Գիշերազգեստով էր տակաւին, նախաճաշի պատրաս-
տութեամբ դրաղած, մինչդեռ ինք հաղուած էր արդէն: Սեղա դար-
ձաւ իրեն, եւ՝

— Օ՛, մարդուն մէկը ոտքի է արդէն, եւ հաղուած: Ո՞ւր
այսպէս: Բայց ինչո՞ւ չես քնանար. այսօր Կիրակի է:

Ժազ Առաքելեան կինը դրկելու, սեղմելու անբացատրելի պա-
հանջ դրաց, եւ առանց այլեւայլի յառաջացաւ ու բարձրացուց զայն
վեր, մէջքը սեղմած երկու ձեռքերուն միջեւ: Մինչ Սեղա դարձա-
ցած բայց դո՛ւ կը նայէր ճիշդ աչքերուն մէջ այդ բարձրութենէն,
ինք հաղիւ կրցաւ փափօալ:

— Բարի լոյս:

— Ձիւ վար կը դնե՞ս:

— Դժգո՞հ ես:

— Ո՞չ, բայց աշխարհ մը դործ ունիմ:

— Ես ալ դործ ունիմ:

— Ի՞նչ դործ, — Սեղա հարցուց միամտաբար:

— Կ'ուզեմ հետդ խաղալ:

— Մանկապարտէզ: Մարդուն խենթութիւնը բոներ է նորէն:
Վար դիր ըսի: Ես խաղալի՞ք եմ:

— Չաւահներու մայրն ես: Եփացած մայր մը:

— Հա՛, խաղալիքներդ դուրսն են. դնա իրենց հետ խաղա, —
մլուեց այդ սրահուն իսկապէս չփացած մայր-երեխան:

— Սուրճ պիտի ընե՞ս:

— Այսօր ալ դուն պատրաստէ սուրճը եւ հրամցուր ինձի,
քանի այնքան խաղալու սիրտ ունիս:

— Հրամանքդ, — Ժապ սեղմեց կինը թեւերուն մէջ, ցաւցնելու աստիճան, եւ ասկէ ետք միայն ազատ արձակեց զայն: — Տուր նայինք, սուրճը, շաքարը, սրճամանը:

— Գուրս, դո՛ւրս ելիր հոսկէ: Սուրճը ի՛նք պիտի եփէ եղեր: Ցաւցուցիր, դիտե՛ս:

Ընդարձակ, լուսաւոր եւ կոկիկ տուն մըն էր: Վարձքը ստացած ամսաթուղակին ճիշդ մէկ շորքորդն էր, սակայն ժապ դո՛հ էր, որովհետեւ բաղդատած ուրիշներու հետ, նուազ կը վճարէր, մանաւանդ եթէ նկատի ունենար ասն ատակութիւնները: Ընդարձակ հիւրասենեակ մը, երեք ննջասենեակ, խոհանոց, ճաշարան, պարտէզ եւ՝ խաղաղութիւնը անշուշտ: Անկախութիւնը նաեւ: Սեղալի ճաշակն ու բծախնդրութիւնը տունը հարստացուցած էին, ճոխացուցած՝ երբեմն անշմարելի հպումներով: Ամէն կերպով արդիական եւ հանդստակտ բնակավայրի մը վերածած էր զայն, մասնաւոր պուրգուրանքով եւ հոգածութեամբ զբաղելով յետին մանրամասնութիւններով իսկ: Կահաւորումն ու գնումները բոլոր մասնավճարով կատարած էին բնականաբար, բայց շատ աւելի նպաստաւոր պայմաններով եւ դիւրութեամբ՝ քան Պէյրութի մէջ: Աշխատաւոր կամ աշխատող մարդու զբախտը այս երկիրն էր ի վերջոյ, իր բոլոր անսպասելիութիւններով հանդերձ:

Հիւրասենեակին մէջ տնտնաց, յամեցաւ եւ վերջաւորութեան ընկղմեցաւ իր նախասիրած բաղկաթոռին մէջ, ուրկէ կրնար դիտել արտաքին շրջապատը մէկ կողմէն եւ հետեւիլ երեխաներու շարագործութեանց պարտէզին մէջ՝ միւս պատուհանէն: Իր շքեղ բանտն էր այս հիւրասրահը, ուր կ'անցընէր ժամանակին մեծ մասը, երբ տունը կը դռնուէր: Այս նոյն բաղկաթոռին մէջ ժամերով նստած կը կարգար, ու կ'աշխատէր նոյնիսկ երբեմն, երբ անյետաճգելի կամ կարեւոր տեղեկագիր մը ունենար պատրաստելիք: Իր կեանքն էր, իր բանտը, տունը, զբախտը, ուր կ'ըլլէր, կ'երազէր, կ'ապրէր եւ կ'ուրախանար՝ կնկան եւ զաւակներուն հետ: Ուրիշ ցանկութիւն չունէր արդէն: Աւելին ակնկալել կամ ցանկալ՝ յիմարութիւն պիտի ըլլար: Ազահութիւն: Որ դժբախտութեան կրնար առաջնորդել միայն: Ու դո՛հ էր, երջանիկ:

Բայց նաեւ անհանդարտ էր, խռոված՝ ինքնիրմէ եւ աշխարհէն: Գժդոհելու պատճառներ չունէր եւ ինքզինք բախտաւոր կը համարէր, դէժ ներկայիս, որովհետեւ դժուարութիւններու չէր բախած հոս ու հասնելէն շարաթ մը ետք արդէն բացառիկ վարձատրութեամբ պաշտօնի կոչուած էր: Շրջանակ չունէր, ճիշդ է — հազիւ

քանի մը բարեկամ կամ ծանօթ — սակայն թշնամիներ ալ չունէր: Ոչ բարդութիւն, ոչ դժուարութիւն, ոչ տաղնապ, հիւանդութիւն, մահ — ոչինչ: Ասկէ աւելի ի՛նչ կ'ուզէր: Հազուադէպօրէն մարդիկ այսքան բախտաւոր կ'ըլլային. նոյնիսկ ինք՝ անցեալին: Աստուծո՛ք փորձա՞նք կ'ուզես, բարձրաճայն հարցուց ինքնիրեն: Այո, անմեղ ու միամիտ ազլիկ մը խաբելը դիւրին է: Իսկ հետեւանքե՞րը: Ենթադրենք որ ան բարի եւ անիրոճ, կամ ամբրիկացի յիմար մըն է — իր համոզումով անկախ եւ ազատ, լայնախոհ եւ ազատագրուած կին մը, որ հաւատար իրաւունքներ կը վայելէր — իսկ դո՛ւն: Փորձառութի՞ւնդ, սկզբունքե՞րդ, կեանքի քո՛ւ ըմբռնումդ... այսքան չո՛ւտ իւրացուցիր անոնց կենցաղն ու բարքերը՝ ոտնակոխելով ընտանեկան յարկիդ սրբութիւնը, որ այնքան թանկազին էր քեզի համար: Սեղային նման դեղեցիկ, երիտասարդ, թարմ, ցանկալարոյց ու նուիրուած, հաւատարիմ կին ունենալ, եւ...:

— Ե՞րբ պիտի երթանք, — Սեղա սուրճի գաւաթը փոխանցեց իրեն:

— Ո՞ւր, — սթափեցաւ Ժապ:

— Պէյրութ: Լիրանան:

Առաքելեան լիահագազ սկսաւ խնդալ ու հազիւ յաջողեցաւ գաւաթը տեղաւորել փոքր սեղանին վրայ: Քանի մը վայրկեան ետք միայն կրցաւ խօսիլ:

— Սքանչելի, հոյակապ: — Հազայ: — Ամենակարող ես, անյողթահարելի, աննման, խորամանկ, ինքնալստահ, սատանայ, կին՝ վերջապէս:

— Չչարունակե՞ս:

— Հետզ գլուխ ելլելը անկարելի է:

— Դերերը մի շրջեր: Ի՞նչ ըրի կամ ըսի որ ներշնչուեցար դարձեալ եւ կինը տեսելու սկսար մէջս յանկարծ: Ես ալ կը կարծէի որ կին ըլլալս մոռցեր ես: Ուրախ եմ:

— Ուրախ ես, հա՞:

— Անշո՛ւշտ — կինը պէրանքով ժպտեցաւ ու յաղթական նայեհաւ ամուսինին: Թէեւ փստահ չէր տակաւին, թէ ինչի կ'ակնարկէր ան:

— Ուրեմն վրաս կը խնդաս:

— Ո՛չ, շատ լուրջ եմ:

— Այսինքն կ'ուզե՞ս Լիրանան վերադառնալ, — հարցուց Ժապ:

— Եթէ դուն կ'ուզես, անշո՛ւշտ:

— Ինձմէ անկախ. պահ մը մոռցիր զիս: Դո՛ւն, անձնապէս, այդ տեսակ փափաք ունի՞ս:

— Անկեղծօրէն, այո՛: Հոս ինչպէ՞ս պիտի ապրիմ ես: Առանձին, շարքերով տան մէջ փակուած, ոչ հարազատ, ոչ ազգական, բարեկամ, ոչ ինչ: Եւ վերջ շունի. այս երկրին մէջ կեանքը այսպէս է: Տարիներու ընթացքին թերեւս քանի մը բարեկամ ունեանք. յետո՞յ:

— Բայց Լիրանանի վիճակը... եւ սխալ է, չէ՞, զործնականին մէջ սխալ է:

— Գիտեմ, — համակերպեցաւ Սեդա:

— Երէկուան ըսածս պատահական խօսք մըն էր. վիճարանութեան ժամանակ անկարելի, անհաւանական խօսքեր կ'ըսենք երբեմն:

— Բայց խորքին մէջ իրական, ճիշդ: Եթէ ես քեզ կը ճանչնամ, ըսածդ հիմ մը ունի: Պատահաբար կրնաս արտայայտած ըլլալ զայն, սակայն ներքին, հոգեկան պահանջի մը արդիւնք պէտք է ըլլայ. անպարտան: Հոգ չէ թէ հակաճառելու սիրոյն կը վիճէիր երէկ:

— Ի՞նչ պէտք է ընել, — ամուսինը հարցումը ինքնիրեն ուղղեց թերեւս:

— Առայժմ ոչինչ: Ծառ կանուխ է՝ որոշելու համար: Թերեւս կը վարժուինք, բան մը կը փոխուի, չեմ գիտեր... այս ամբողջը քանդել վերստին:

— Սիրելիական բանակը Լիրանան մտած է եւ կոխները դադրած են իբր թէ:

— Հարցը դեռ շատ ջուր կը վերցնէ: Մնողքէս երկու ամիս է լուր չկայ: Եթէ իսկապէս խաղաղած ըլլար, անպարտան նամակ մը կը ստանայինք:

— Համբերէ՛ նայինք. քանի մը օրուան պատմութիւն է ըսածս: Կարդ եւ կանոն վերահաստատելը ամիսներ կրնայ տուել:

— Մինչ այդ կրնանք սպասել ուրեմն, — եղբակացուց Սեդա, յայտնապէս ընկճուած:

— Եթէ պիտի վերադառնանք, ժամանակ պէտք չէ կորսնցընենք: Կրնայ շատ ուշ ըլլալ յետոյ:

— Ինչո՞ւ: Կը վախնաս որ Լիրանանի մէջ տեղ չի՞ մնար մեզի համար:

— Կարեւորը օր առջ հոսիէ հեռանալն է:

— Երբեմն իսկապէս չեմ հասկնար քեզ: Երեւակայէ՛, այսօր քան տարի ետք... իսկ ես կը կարծէի որ ճանչցած եմ քեզ: Ինչո՞ւ:

այս անապարանքը յանկարծ: Պատճառ մը պէտք է ունենաս:

Առաքելեան չզատասխանեց: Ի՛նչ իմաստ ունէր: Երբեւիցէ պիտի կարենա՞ր բացատրել այս սիրելի աղջկան, թէ ինք եւս չէր գիտեր կամ հասկնար, այլ միայն կը դպար, կը տաղնապէր ու կը տասապէր անշուշտ: Ինչո՞ւ: Փոփոխամիտ էր թերեւս, կամ անկայուն նկարագիր ունէր — ինքնախտահութեան կամ յարասուութեան պակաս: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակէր երկրէ երկիր թափառիլ, մինչեւ ո՞ր տարիքը. իսկ զաւակները կը մեծնային, եւ այս ընթացքով անոնց ապագան ալ կրնար քանդել եւ անարմատ խրեակներու վերածել զանոնք: Մարդկային նուազագոյն ապահովութիւնն իսկ զլանալ անոնց ու նոյն ճակատագրին դատապարտել զանոնք: Պանդխտութեան ցուպը կտակել անմեղ արարածներու, որոնք այլ մարդոց հաւասար ըլլալու ամէն իրաւունք ունէին: Անձնասիրութիւն չէ՞ր: Բարբարոս, հրէշային անտարբերութիւն:

Ու պիտի կարենա՞ր բացատրել, խոստովանիլ կնկան, թէ կը վախնար, որովհետեւ երկրորդ կին մը մուտք գործած էր իր կեանքէն ներս: Անմեղ արարած մըն ալ ան, որ իր անձնասիրութեան զոհ կրնար դառնալ նոյնպէս. բայց որ յիմար կամ յամառ էր նաեւ, ու գիտակցաբար յանձն առած էր զոհել ամէն ինչ — ապաղայ, երջանկութիւն, ընտանեկան կեանք, ամուսնանալու եւ զաւակ ունենալու իրաւունք: Ու եթէ ան կրնար ինքն իր ապագան եւ երջանկութիւնը զոհել, ի՞նչ երաշխիք ունէր որ իրենց ալ կեանքը պիտի չխորտակէր, չխախտէր ընտանեկան յարկին ներդաշնակութիւնն ու խաղաղութիւնը:

Ամուսնացած մարդ մը, որ կինը կը սիրէր, կրնար խոստովանիլ անոր, թէ երիտասարդ աղջկայ մը գերին դարձած էր: Թէ՛ տկարացած էր ու չէր կրնար հակակշռի տակ պահել ձէք Առաքելեան կոչուած սա երրորդ անձը, որ ինք էր:

— Երթամ նախաճաշը պատրաստեմ, — Սեդայի ձայնը խոցեց զինք:

Դ.

Ներկաները բոլոր պաշտօնակիցներն էին, եւ անոնց տիկինները: Ապահովագրութեան ընկերութեան Լոս Անձելլիսի Ընդհանուր Տնօրէնը ընթրիքի հրաւիրած էր զիրենք, եւ Առաքելեան զոհ էր որ այս առիթը կ'ընծայուէր իրեն՝ Սեդան պաշտօնակիցներուն ծանօ-

Թացնելու: Ընկերութեան տարեկան համադումարի աւարտին հրաւերն էր այս, որ աւանդութեան կարգ անցած էր ըստ երեւոյթին: Շուրջ քսան զոյգ, անկուշտ դադաններու նման լսփելէ ետք իրենց հրամցուածը, կը շարունակէին իմել հիմա ճաշատրահին յարակից ընդարձակ եւ բացօդեայ պատշգամին վրայ: Ապակեպատ վանդակ մըն էր աւելի որ, ըստ յարմարութեան, որպէս հիւրասրահ նաեւ կը ծառայէր: Այս եղանակին, թէեւ, առկախ պարտէզի մը կը նմանէր ու տախտակեայ սանդղամատերով կը միանար բուն պարտէզին, որ անտառի կը վերածուէր գիշերուան խաւարին մէջ: Երկյարկանի շէնքը, արդարեւ, եղբրուած էր անսահման ու մշտադաւար ծառերով հարուստ ու ծածկուած անարածութեամբ մը, որ կը ձուլուէր, կը կորսուէր մերձակայ կանաչ անապատին մէջ: Ընդհանուր Տնօրէնի տունն էր այս, կամ պարակը, ըստ տեղական բացատրութեան:

Ժառ, որ նոյնպէս գինով էր գրեթէ, ինչպէս բոլոր պաշտօնակիցները, ցուցամատով շտկեց ակնոցը քիթին վրայ ու բացակայ արտայայտութեամբ մը փնտոեց Սեդան: Քիչ առաջ նկատած էր զինք, շրջապատուած ամերիկացի այլազան տարիքի այրերով, որ իր ճանչցած բարեկիրթ ու ժպտուն պաշտօնակիցներն էին: Հիմա թէեւ բոլորն ալ, շատախօս եւ անպսակի, կնամեծար ու յեղեղուկ այրերու վերածուած էին ու կը դարպասէին իրարու կրները: Կը դարպասէին միայն: Կը սիրարանէին իսկ արդէն, քաջալերուած կրներուն նոյնքան մը անկաշկանդ ու սիրալիր վերարեբմունքէն: Համայնական դրութիւն, մտածեց Առաքելեան եւ անդալարար ժպտեցաւ. իսկական հաւասարութիւնը այս էր:

— Ինչո՞ւ կը ժպտիս, — հարցուց մարած ու մելամաղձոտ աչքերով, բարձրահասակ ու գիրուկ, բայց սիրուն կինը, որ ձերբակալած էր զինք քառորդ ժամէ ի վեր մօտաւորապէս: Չէր իսկ գիտեր, թէ որո՞ւ տիկինն էր:

— Գինով եմ, կարծեմ:

— Նախընտրելի չէ՞:

— Ինչո՞ւ:

— Երբեմն պէտք է գինովնալ, առօրեայէն դուրս ելլել, քանդել շղթաները եւ ազատութիւն տալ անձիդ:

— Ես այդ տեսակ հարց չունիմ: Կենթադրեմ որ պէտք եղածին չափ ազատ եմ:

— Վստահ ես, — խորհրդաւոր ու քաղցր ժպիտ մը՝ մարած աչքերով տիկինէն:

— Վստահ:

— Կրնա՞ս փաստել:

— Ինչպէ՞ս: — Առաքելեանի ուշադրութիւնը այլ տեղ էր տակաւին:

— Չե՞ս նկատեր: Ամէն մարդ կը վայելէ, իսկ դուն ժամավաճառ կ'ըլլաս միայն:

— Քու կարծիքովդ ի՞նչ պէտք է ընեմ:

— Ամուսինս տիկնոջը հետ է եւ խելքը թոցուցեր է կարծեմ: Պէտք է ըսել որ Սի... ի՞նչ էր անունը, Սեդան, — երգեց պաշտօնակիցին տիկինը, — արեւելեան վայրի գեղեցկութիւն մը ունի, եւ չեմ զարմանար որ այդ մարդիկ հմայուին անով:

Բայց ո՞ր պաշտօնակիցին կինն էր այս երանելին, որու աչքերը մեղսակից մը կը փնտոէին հիմա:

— Ո՞վ է ամուսինդ:

— Բիչըբար, գիտե՞ս: Դերասանութիւն ընելու պէտք չունիս:

— Օ՞, Տիգր: Ես Տիգրան կը կոչեմ զինք:

— Այո՛, ճիշդ ինքը, լուր ունիմ: Եթէ կարենայ, այս գիշեր իսկ կնկանդ հետ կը պառկի:

— Ինչո՞ւ ինձի կ'ըսես, — ժառ յոգնած զրաց: — Կրնա՞նք տեղ մը նստիլ:

— Անշուշտ: Հոն, ծառերուն տակ նստարան մը կայ, եթէ քաշելու ոյժ ունիս. — խանդավառուեցաւ Տիգ. Հոֆման: — Որո՞ւ պիտի ըսեմ: Ամուսինը չե՞ս:

— Սեդային վրայ դատահութիւն ունիմ:

— Հաւանարար: Դուք, արեւելքցիներդ մեզմէ տարբեր էք անշուշտ: Բայց ատիկա կարեւոր չէ: Ես ալ իմ իրաւունքներս ունիմ:

— Ինձմէ հաշի՞ւ կը պահանջես:

— Դուն յանցանք չունիս, բնական է, բայց աւելի հետաքրքրական կ'ըլլայ, իսկական յաղթանակ մը, եթէ դուն ըլլաս վրէժ լուծողը:

— Վրէժ լուծելու պատճառ չունիմ... որմէ՞ վրէժ պիտի լուծեմ ի միջի այլոց:

Տեղաւորուեցան նստարանին վրայ: Կողք-կողքի, իրարու շատ մօտ:

— Իմ վրէժս պիտի լուծես, — բացատրեց կինը: — Արդար է, չէ՞: Իրաւունք չունի՞մ:

— Ես չեմ կրնար որոշել ատիկա: Եւ յետոյ, չի կրնար բան մը պատահած ըլլալ:

— Կարեւոր չէ: Անպայման պիտի փորձէ, յաջողի կամ ոչ:

Ի՞նչ է տարբերութիւնը: Նպատակը այդ է, չէ՞:

— Ձեմ գիտեր:

— Ես իմ մարդս կը ճանչնամ, հաւատա՛:

— Իսկ ինք քեզ կը ճանչնա՞յ, — հեղինակը կար Առաքելեանի ձայնին մէջ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Կը կասկածի՞, թէ դուն ալ կրնաս նոյնը ընել:

— Հաւանաբար: Բայց չի հետաքրքրուիր իսկ իրեն համար կարեւորութիւն չունի:

— Քեզի՞ համար... բայց դուն կը նախանձիս, ճիշդ է, եւ կ'ուզես վրէժ լուծել: Մի՞շտ այսպէս եղած է ձեր ամուսնական կեանքը:

— Առաջին օրէն: Ես ալ մարդ եմ: Ինք ինչո՞ւ պիտի ընէ, եւ ես պիտի չընեմ:

— Ինչո՞ւ ամուսնացած էք ուրեմն:

— Ի՞նչ կապ ունի, — ծիծաղեցաւ Տիկ. Հոֆման: — Դուք ձեր Ֆրիդրիխան պահանջներուն դո՛հացում տալո՞ւ համար կ'ամուսնանաք:

Ժապ եւս ծիծաղեցաւ յակամայ, անդրադառնալով որ կողքին նստող պարզամիտ թուող սա կիներ տրամաբանութեան փոքր խաղով մը, հեշտութեամբ շրջած էր պատկերը եւ իրե՛նց ընտանեկան կեանքի գեղեցկութիւնը պարպած էր ամբողջ իր իմաստէն: Ու կենցաղափարութիւնը պարտադրեց որ խօսէր:

— Հետաքրքրական հարցում է: Այս մասին չէի մտածած երբեք: Դո՞ւք ինչու կ'ամուսնանաք:

— Առանձին ապրելէն աւելի լաւ է:

— Ինձի համար նորութիւն է, կը ներես, եւ քիչ մը անըմբռնելի: Բայց տեսակէտ մըն է, այդքանը կրնամ ըմբռնել, կամ ընդունիլ դէժ:

— Լաւ է, համաձայն ենք ուրեմն:

— Ուզածդ ճիշդ ի՞նչ է, կրնա՞ս ըսել, — հայր փորձեց իր հայկական կոչութիւնը գործի լծել, խօսակիցը խրաչեցնելու յոյսով:

— Հետս պէտք է պառկիս, — Տիկ. Հոֆման զինք խրաչեցուց մինչդեռ:

— Ինչո՞ւ: Անունդ նոյնիսկ չեմ գիտեր. եւ... այդպէ՞ս. այնքան դիւրի՞ն է կը խորհիս:

— Ըէյն: Ես քու անունդ գիտեմ. այնպէս որ...:

Ըէյն Հոֆման փաթթուեցաւ իրեն, ու մինչ ժապ կը փորձէր պատահածին տարողութիւնը չափել կամ ըմբռնել, կիներ քաջալերւած սկսաւ կատաղի կերպով համբուրել շրթունքները, այտերը, ախանջները, ծոծրակը: Ու թերեւս անդրադարձէն դժգոհ, փառահեղ մարմնով ծածկեց, ողողեց Առաքելեանի վախէն պրկուած մարմինը, եւ անխմանալի բառեր փսփսաց տկանջին, կամ հոտուրաց — վտահ չէր այլեւս:

Կիներ խենթ է, որոչեց ժապ, եւ ըսաւ:

— Առանձին չենք, եթէ չես նկատած:

— Ներս մտնենք, — շնչաց ըէյն:

— Ո՞ւր ներս:

— Բազմաթիւ սենեակներ կան. կրնանք սենեակներէն մէկուն մէջ առանձնանալ:

— Ձե՞ս խորհիր որ անխմաստ կ'ըլլայ: Տիգը ինչպէ՞ս լուր պիտի ունենայ, — սկսաւ գուարճանալ նախկին ծաղրածուն: — Ձէ՞ որ...:

— Անիկա զրադած է հիմա, — անհամբերութեամբ ընդմիջեց երանելի Տիգի երանելի կողակիցը:

— Ընչդ ատոր համար իմաստ չունի: Պէտք է նկատէ, չէ՞. կասկածի, իրադեկ դառնայ:

— Ձիս չի հետաքրքրեր այլեւս:

— Բայց զի՞ս կը հետաքրքրէ:

— Լո՞ւրջ, — ուրախացաւ ըէյն Հոֆման:

— Սեղան իր հետ է ըսիր:

— Ընչդ է, պէտք է վրէժ լուծենք. երկուքս ալ:

— Անշուշտ:

— Քիչ առաջ դէմ էիր, — սթափեցաւ կիներ յանկարծ, — ինչո՞ւ միտքդ փոխեցիր:

— Ես ալ մարդ եմ. ես ալ արժանապատուութիւն ունիմ: Մի մոռնար որ արեւելքցի եմ:

— Ինչպէ՞ս պէտք է ընենք:

— Այնպէս մը ընենք, որ ամէն մարդ նկատէ:

Բարեբախտաբար Սեղան նկատած չունի, ինքզինք միտքարելու փորձ մը ըրաւ ժապ. կէս ժամէ ի վեր զինք չէր տեսած յամենայն դէպս: Անհետացած էր: Ո՞ւր: Թերեւս օգնութեան պէտք ունէր: Այս գայլերու վտահակին մէջ զինք առանձին, անպաշտպան ձգելու իրաւունք չունէր: Կրնար վախնալ, անպահճով դգալ, կամ հիասթափ ըլլալ առնուազն: Անդերէն ճոռողելու սկսած էր, ճիշդ

է, սակայն առաջին անգամն էր որ ամբողջովին անդլիախօս չըջանա-
կի մէջ կը գտնուէր, եւ կրնար դժուարութեան մատնուիլ: Թէեւ հա-
մարձակ էր եւ բաւական ինքնաւստահ, զինք զարմացնելու աստի-
ճան երբեմն: Իսկ եթէ իսկապէս այդ սրիկայ Տիգրի ճանկերուն մէջ
էր... կասկածը մտահոգութեան վերածուեցաւ, անհանդատացուց
զինք:

— Վրա՞ս կը խնդաս, — երկար լուռութենէ մը ետք խօսեցաւ
կողքին նստած ինքնամատոյց կինը:

— Ներս անցնինք:

Տիգրի. Հոֆման հնազանդ երեխայի մը նման եւ ուրախութեամբ
հետեւեցաւ Առաքելեանին, որ կինը կը փնտռէր հիմա: Պէտք է
դտնէր զինք եւ օգնէր, անհրաժեշտ եթէ ըլլար, եւ կամ հայցէր անոր
օգնութիւնը՝ այս փորձանքէն փրկուելու համար: Ապակեպատ
պատշգամին վրայ երեք կամ չորս բարձրաձայն կը խօսէին կամ
կը վիճէին տակաւին: Միւսները բոլոր անհետացած էին, եւ ըստ
երեւոյթին զանազան սենեակներու մէջ առանձնացած, ինչպէս նա-
խատեսած էր ձէյն: Փորձառութեամբ դիտէր հաւանարար — իրենց
համար անսովոր չէր թերեւս: Բայց Սեղան, Սեղա՞ն եւս: Կարելի՞
էր: Յանցաւոր զգաց յետոյ, ամչցաւ՝ այդ նուագագոյն կասկածն իսկ
ունենալուն համար:

Սեղա Առաքելեան ճիշդ այդ պահուն կը գուարձանար ու կը
վայելէր այս նոր փորձառութիւնը, որ զինք հաճելի անակնկալի մը
առջեւ դրած էր: Տարիներէ ի վեր այսքան ուշադրութեան չէր ար-
ժանացած, չէր շրջապատուած: Ժազի պաշտօնակիցները բոլոր, ա-
ռանց բացառութեան, նոյնիսկ կիները, անօրինակ խանդաղատանքով
մը, տեսակ մը երկիւղածութեամբ կը վարուէինն հետը, ու չէին
կրնար ծածկել իրենց հիացումը: Իւրաքանչիւրը խօսք մը ունէր,
արտայայտութիւն մը, քաղցր ու քնքուշ ժպիտ մը՝ զինք գոհ ձգե-
լու, ուրախացնելու համար: Հազար կտոր կ'ըլլային պարզօրէն:
Ժազի աչքերը տեսնէին միայն. ո՛վ դիտէ ի՞նչ չնաշխարհիկ կատակ-
ներ պիտի ընէր, քաջքէր զինք:

Ընդհանուր Տնօրէնը առաջարկած էր ազարակի բաժինը
պտըտցնել զիրենք, եւ ինքնագոհութեամբ կը խօսէր հիմա, կը բա-
ցատէր, մինչ խումբը ամբողջ կը գուարձանար՝ կողմնակի կատակ-
ներով եւ սրամտութիւններով: Ազարակէն աւելի՝ իրարմով հե-
տաքրքրուած էին. կը սեղմրտէին զիրար, կը սիրուըտէին, առանց
զինք մոռնալու անշուշտ: Իրարմով սրազամ ըլլալով հանդերձ բոլորն
ալ, առանց բացառութեան, իր հետ եւս կը փորձէին սիրաբանիլ,

ակնարկութիւններ ընել, փաղաքական խօսքեր յղել իրեն՝ ուղղա-
կի կամ անուղղակի կերպով: Այսպէս՝ զրեթէ կէս ժամէ ի վեր:
Սկիզբը անհանդուտացած էր, վախցած էր նոյնիսկ, բայց յետոյ,
ինքզինք վերադատած, այս ամբողջը վերադրած էր իրենց բնական,
կենցաղային ազատամտութեան: Տարօրինակ մարդիկ էին, կամ հա-
փահաս երեխաներ, որոնց վարմունքը կը զարմացնէր զինք:

— Ազատ էք, կրնաք վերադառնալ, — յայտարարեց Ընդհա-
նուր Տնօրէնը՝ հրահանգ տալու վարժ մարդու առողջանութեամբ, եւ
ինք եւս խնդաց, զո՛հ իր կատակէն: — Եղածը այս էր:

— Քալենք, — Սեղայի թեւէն քաշեց Բիշրրտ Հոֆման, որ
կ'ընկերակցէր իրեն: Միջահասակ, նիհար ու շատախօս բայց սրա-
միտ մարդ մըն էր: Երեսունհինգ տարեկան պէտք է ըլլար, թէեւ
պատանեկան շարժուձեւեր ունէր, ու զարմանալիօրէն թուի էր ու
գեղադէմ:

— Բաւական ուշ է: Զարմանալի է, ժամանակը որքան արագ
կ'անցնի երբեմն:

— Կը նշանակէ, թէ հաճելի իրիկուն մըն էր քեզի համար:
Բախտաւոր մարդ է ձէքը, որ քեզի պէս կին մը ունի:

— Շնորհակալ եմ: — Քաղաքավար բայց ջղային ժպիտ մը
Սեղային կողմէ:

— Մեր կիները միշտ դժուր են: Կրնա՞ս երեւակայել. ինչ ալ
ընես, չես կրնար գոհացնել զիրենք:

— Ոչ միայն ձեր կիները... ես ալ կին եմ, գիտեմ:

— Պատասխանդ լաւագոյն փաստն է որ ուրիշ կիներու չես
նմանիր:

Սեղա մտահոգուած գննեց շուրջը բայց խաղաղեցաւ, երբ
նկատեց որ խումբի միւս անդամները կը հետեւէին իրենց: Թէեւ
չափազանց կնամեծար ու փափկանկատ, սակայն սկսած էր նեղել
զինք այս մարդը՝ իր հետեւողական եւ լորձնաշուրթն գովատանք-
ներով ու շոգոքորութեամբ: Քայլերը արագացուց վայրկեան ա-
ռաջ չէնք վերադառնալու մտադրութեամբ, թէեւ Հոֆման յամառօ-
րէն կառչած էր թեւին:

— Աւելի յաճախ պէտք է հանդիպինք, — շարունակեց անվր-
դով ուղեկիցը: — Վստահ եմ, թէ շատ հաճելի ժամանակ կ'անցը-
նենք միասին, մանաւանդ որ ձէքը ճիշդ ուղածիս պէս սրամիտ ու
պատրաստարան մարդ է. տափակ չէ, մէկ խօսքով: Զինք շատ կը
հաւնիմ:

— Գիտեմ, սակայն շատ ընկերային արարած մը չէ, եւ մար-

զոցմէ կը խուսափի սովորաբար, — եզակի գոհունակութեամբ մը ստեց Սեղա :

— Բայց արդար չէ : Քեզի սէս կին ունենալ եւ տունը փակուած պահել զայն :

— Այր մարդոց անձնասիրութիւնը, — ներքուստ խնդաց չարացած հայուհին : Զրադելու, խօսակիցը չարչարելու անգուպելի պահանջ զգաց բայց զգուշացաւ :

— Արգար չէ, — կրկնեց Տիգ. — ես կը կազմակերպեմ, հոգ մը ընեմ :

— Հասանք : Եւ ահաւաստի ժաղը, որ կորսուած կինը կը փնտռէ անշուշտ :

Ճէյն Հոֆման, որ զիրենք նկատած էր, Առաքելեանը զրկեց ուսերէն եւ դարձուց զէպի մօտեցող զոյգը, խորամանկօրէն դիտեց զինք պահ մը, բայց նկատելով որ ան դարմացած զինք կը դիտէր, բարձրաձայն բացականչեց :

— Կորսուած էին, դանուեցան : — Ապա ժաղին միայն լսելի ձայնով մը թմբկաց. — մի մոռնար ըսածս : Այս անգամ ազատեցար :

— Զրսի՞ քեզի, — Սեղա խօսեցաւ, երբ միացան զոյգերը. — կինը փնտռելու ելած է : — Եւ սպասելով որ շրջագայող խումբին միւս անդամները հասնին իրենց, որպէսզի ամուսինը նկատէր զանոնք, աւելցուց : — Շատ հետաքրքրական էր :

— Ի՞նչը, — ժաղ շունչ մը քաշեց :

— Ազարակը :

— Տիկինդ պիտի առեւանդէին, — կատակեց Տիգ. — ես փրկեցի, եւ ապահով կը յանձնեմ քեզի :

— Շատ ազնիւ ես : — Քմբիծաղ՝ Առաքելեանի գէմքին վրայ : — Առ ի գնահատութիւն ես ալ քու կինդ կը վերադարձնեմ քեզի :

— Կը տեսնե՞ս, — Ճէյն ընդզիլ կեղծեց. — մեզ վաճառելի սպրանքի վերածեցին դարձեալ : Կիներու սղատագրումը ե՞րբ իրականութիւն պիտի դառնայ, որպէսզի ասոնց դասը տանք :

— Մե՞զ ով պիտի ազատագրէ, — խնդաց ամուսինը : — Հաղարաւոր տարիներէ ի վեր գերի վարած էք մեզ, ստրուկի վերածած ուղղակի :

— Դո՛ւն գէթ այդ օրը պիտի չտեսնես, սիրելի՛ս, որովհետեւ ազատութեանդ արժէքը չես կրցած զնահատել երբեք : Ունեցածիդ արժէքը չես գիտեր :

Միասնաբար յառաջացան ու տախտակեայ սանդուղներէն բարձրանալով մտան հիւրասրահ, ուր հրախրեալներէն ոմանք մեկ-

նելու սկսած էին արդէն : Ժաղ, որ կեանքին մէջ այսքան չէր ձանձրացած, զուարթութիւնը վերադրած արտասանեց :

— Տո՛ւն, քաղցր տուն : Ի՞նչ է կարծիքդ, սիրելի՛ս :

Ինքնաշարժին մէջ Սեղա ինքզինք չկրցաւ զսպել այլեւս, եւ երբ ազարակէն դուրս ելան ու մտան դիտաւոր ճանաքարհ, խօսեցաւ :

— Սիրելի՛ս, հա՞ : Ներշնչուեցա՞ր յանկարծ :

— Փառք տուր Աստուծոյ որ այս մէկ բառով փրկուեցանք : Քիչ մըն ալ մնայինք, ճիշդ իրենց սէս վարուելու պիտի սկսէի :

— Ինչո՞ւ : Հաճելի փոփոխութիւն էր. եւ լաւ մարդիկ են, բոլորն ալ : Իրենց խօսելու եղանակն է. մեզի դարմանալի կը թուի, բայց իրենց համար բնական է : Եւ աւելի մարդկային է, յամենայն դէպս :

— Այո՛, այնքան մը, որ այդ բոլոր բառերը իմաստ ունենալէ դադրած են իրենց համար : Կեղծիքով կեղծիք : Իմաստէ պարպուած առօրեայ, հասարակ արտայայտութիւններ :

— Հաճելի է թէ եւ :

— Եթէ կ'ուզես մենք ալ իրենց սէս խօսինք ասկէ ետք :

— Գէշ չ'ըլլար :

— Իրենց սէս ալ ապրինք, — շարունակեց ժաղ : — Սիրելիս ըսելով ուրիշի կնկան կամ ամուսինին փաթթուինք, համբուրենք... :

— Այդ աստիճանին հասա՞ք արդէն, — ընդմիջեց Սեղա, մութին մէջ փորձելով ամուսնոյն արտայայտութիւնը տեսնել : Կը կատակէ՞ր, թէ ջղայնացած էր : Կամ արդեօ՞ք իրեն կ'ականարկէր :

— Քիչ մըն ալ ուշանայիր, զիս կարգի դրած կ'ըլլար արդէն, կամ հերթի անցուցած :

— Ո՞վ : Կի՞նը : Ամուսինը աւելի շնորհքով է եղեր, չըսե՛ս :

— Եւ աւելի խորամանկ անշուշտ, դիւանագէտ : Կինը պարզօրէն խենթ է, կամ ապուշ :

— Ի՞նչ ըրաւ որ :

— Կ'ուզե՞ս դիտնալ : — Ժաղ տատամեցաւ, բայց յետոյ որոշեց խօսիլ : — Ամէն ճիշդ ըրաւ որ սենեակի մը մէջ առանձնանայ հետս :

— Ի՞նչ ընելու համար, — միամտաբար հարցուց կինը :

— Առանձին սենեակի մը մէջ ինչ կ'ընեն, սիրելի՛ս :

— Ինչ ապո՞ւշ եմ, — Սեղա բացականչեց եւ սկսաւ խնդալ : — Անմիջապէս մեկնինք, հեռանանք այս երկրէն, — աւելցուց յետոյ :

Խնդալու հերթը ամուսինին էր: Սեղայի պարզութիւնը միշտ հմայած էր զինք, երբեմն նոյնիսկ՝ մտահոգած: Անհաւատալի էր, անկարելի: Այնքա՛ն պարզութեամբ, առանց երկար-բարակ մտածելու կամ վերլուծելու արտայայտած էր զգացածը, որ կարելի էր հիանալ միայն: Եւ խնդալ բնականաբար:

— Միտքը պղտորեցաւ, հա՞ն:

— Պատանի կամ նորելուկ երիտասարդներ ըլլան, կը հասկընամ: Ամուսնացած, մեղի տարեկից մարդիկ բոլոր, ուրիշ հետաքրքրութիւն չունի՞ն:

— Առանց կեանքը այս է: Գործ, յարատեւ վազք դրամի ետեւէն. եւ սեռային շնութիւն:

— Ինչո՞ւ այդպէս կ'ըսես, — դանդատեցաւ կինը. — արդար չէ: Սեռը կեանքին մաս կը կազմէ: Մենք նոյնը չե՞նք ըներ:

— Ո՛չ, սիրելի՛ս, մերը շնութիւն չէ: Մերը բնական պահանջներու մարդու պէս գոհացում տալ է, եւ ոչ թէ պատահած մարդը կամ կինը անկողիններու մէջ մերկացնելու մտասեւեռում:

— Ամերիկա գալէջ ետք հայերէնը փոխանակ կորսնցնելու, սկսած ես գրաբար խօսիլ:

— Այո՛, Ամերիկա գալէս ետք միայն սկսայ հայերէն թերթ կարդալ: Բաժանորդագրութիւնները դուն ըրած ես, մի մոռնար:

— Պատճառ մը պէտք է ունենան, — բուն նիւթին վերադարձաւ Սեղա:

— Որովհետեւ մտահոգութիւն չունին, տաղնասղներ կամ հիմնական հարցեր չունին: Ամէն ինչ տրուած է իրենց. կեանքերնին ապահովուած, ապագանին նոյնպէս: Անգործութեան հատուցում, հանգստեան թոշակ, հարուստ եւ ընդարձակ երկիր: Ոչ հայկական դատ ունին, ոչ ամերիկեան դատ: Հողային հարց չունին, հայրենիքի գիտակցութիւն իսկ չունին: Ի՛նչ կ'ակնկալես որ ըլլայ: Բան մը պէտք է ընեն ի վերջոյ. թէ ոչ կեանքը համ-հոտ չ'ունենար:

— Ուրիշ գրադում, հաճոյք չկա՞յ աշխարհի վրայ:

— Օրինակ մը կրնա՞ս տալ: Փորձելով անշուշտ դուն քեզ իրենց պայմաններուն մէջ դնել: Պիտի սեպես որ ամէն կարգի ապահովութիւն ունի եւ ոչ մէկ մտահոգութիւն կամ հարց:

— Մենք ալ իրե՞նց պիտի նմանինք ժամանակի ընթացքին, — անդրադարձը բարձրաձայն արտայայտեց Սեղա:

— Եթէ հոս մ'անք՝ անպայման: Իսկ մեր գաւակները... կըրնաս վստահ ըլլալ:

— Նախընտրելի է անձնասպան ըլլալ:

— Մերը անձնասպանութիւն է արդէն. կամ աւելի ճիշդը՝ ազդասպանութիւն: — Առաքելեան յորանջեց եւ յետոյ պոռաց: — Օ՛Ք, դիտե՛ս ինչ. այս անգամ իսկապէս շուարած եմ:

— Ուշադրութիւն, — ճշաց կինը. — քիչ մնացած էր որ զարնէր, դիտե՛ս: — Իրենց ճիշդ մօտէն, հակառակ ուղղութեամբ ինքնաշարժ մը սուրաց, վերջին պահուն միայն շեղելով դէպի աջ:

— Որոշած էիր անձնասպան ըլլալ, — ժառ սթափեցաւ եւ իր իսկ վախը փարատելու համար փորձեց կատակել:

— Ուրած ստե՛նս, այո՛. ոչ, թէ այսպէս յիմար արկածի մը զոհ երթալ:

— Քեզմէ վախ չկայ ուրեմն, լաւ է: Անձնասպանութիւնն ալ յիմարութիւն է ի վերջոյ:

— Երեւակայէ՛, այդ խեղճ պատիկներուն վիճակը ի՞նչ պիտի ըլլար: Անտէր, առանձին՝ այս խենթանոցին մէջ: Ո՛չ, հոս չեմ ուզեր ապրիլ:

— Ուրախ եմ: Բայց կրնա՞ս ըսել, թէ ո՛ւր պիտի հաստատուինք, ապրինք կամ մեռնինք՝ մարդու պէս:

— Լիրանան: Քու գաղափարդ չէ՞. ուրիշ ո՛ւր կրնանք երթալ: Ուրիշ ոչ մէկ տեղ կ'ընդունին մեզ:

— Հոն ալ նոյնն է վերջին հաշուով: Մեզ օտար կը նկատեն ու ծուռ աչքով կը նային արդէն. եւ օր մը չէ օր մը, երբ յարմար առիթը դա՛նեն, դուրս կը դնեն երկրէն: Ով որ ալ իշխէ հոն վերջաւորութեան. բոլորին համար ալ դրսեցի ենք:

— Բայց հոն գոնէ մեղի յատուկ կեանք մը ունինք. հայկական մթնոլորտ, թերթ, զրականութիւն, թատրոն, դպրոցներ, հայերէն լեզու:

— Ինչ որ ալ ըլլայ, մեր երկիրը չէ: Դրախտ ալ տանին մեզ՝ օտար պիտի գրանք: Մարդ միայն իր տան մէջ հանդիստ կը զգայ. երկիրն ալ նոյնն է:

— Ի՞նչ ընենք: Մեռնի՞նք այսինքն՝ ոտովհետեւ երկիր չունինք:

— Հայութիւնը Հայաստանէն վտարողը իր ըրածը գիտէր: Նպատակնին այդ չէ՞ր արդէն: Իսկ երբ Հայութիւնը փճանայ, այսինքն մեռնի, բնականաբար կրնան Հայաստանին տիրանալ: Ներկայիս զրուած են միայն, եւ տէրը չեն, իրենք շատ լաւ գիտեն ատիկա:

— Ի՛նչ աշխարհ է, — Սեղային էր յորանջելու կարգը: — Այս հսկայ մոլորակը մարդկութեան նեղ կու գայ: Իրարու միս կը

յօշոտեն, իրարմէ հող կը խլեն, ու յետոյ պարասպ եւ անմշակ, անտէր կը ձգեն այդ հողերը: Ինչո՞ւ:

— Քաղաքակրթութիւն, սիրելի՛ս, քաղաքակրթուած աշխարհը այս է:

— Կը բաւէ՛:

— Ներողութիւն:

Սեղա որոշեց քնննալ: Պալիքին լայն ու հանդստաւէտ նստաբանին մէջ աւելի եւս խորասուզուեցաւ, գլուխը քաշեց ուսերուն մէջ թռչունի մը պէս, ու քիչ անց սկսած էր մշիկ-մշիկ մրափել արդէն:

*
**

Նոյեմբերի առաջին շաբաթն էր, եւ օրը՝ Կիրակի դարձեալ: Տարօրինակ երկիր եւ տարօրինակ կլիմայ: Մինչ հիւսիսային, եւ արեւելեան ափի նահանգները կը սրսփային, իրենք երկրորդ դարնան մը վախճուողը կը յղփանային հոս: Մեղմ ու բարի արեւ մըն էր այս ափերու արեւը, որ միապաղաղ ու հանդարտ անտարբերութեամբ մը կը յօրանջէր ու կը յամենար օրերով, երբեմն շաբաթներով: Իսկ ժառ Առաքելեան կը ձանձրանար ու կը սպասէր: Ամերիկացի մըն ալ ինք էր արդէն ու կ'սպրէր նոյն միօրինակ կեանքը: Գործ ունէր, բաւարար եկամուտ, ապահովութիւն, հանգիստ կեանք, տուն, ընտանիք, զաւակ, հոմանուհի: Հոմանուհի՞: Ամէն ինչ ունէր յամենայն դէպս, ու կը ձանձրանար, կը զղուէր: Երէկ քաջարար տեղացիներուն մասին կը խօսէր, կը դատապարտէր, կը քննադատէր ու կը խղճար անոնց, անգիտանալով թերեւս որ անոնցմէ մէկն էր արդէն եւ ամէն կերպով կը նմանէր անոնց: Կեանքը իմաստէ պարպուած էր, այսինքն համ-հոտ շունէր, ինչպէս բնորոշած էր Սեղային. կերպով մը պէտք է իմաստ տար անոր, փոփոխութիւն մտցնէր անկէ ներս: Բայց կրնա՞ր անոնց ըրածը ընել — այսինքն աշխատիլ ու հաճոյքի հետամուտ ըլլալ միայն: Կեանքի նպատակը այժմ էր — իտէյալը, երջանկութիւնը: Սակայն անբան, անիմաստ դոյութիւն մը կրնա՞ր երջանկութեան առաջնորդել: Կամ արդեօ՞ք հակառակը ճիշդ էր: Թերեւս զրկանքն էր, տառապանքը՝ երջանկութեան բանալին: Այսինքն երջանիկ ըլլալու համար պէտք էր դժբախտ ըլլալ. չունենալ այս բոլորը, որպէսզի կեանքը մնայուն եւ յարատեւ ձգտում ըլլար, երազի մը կամ չունեցածին մատչելու տենչ: Հակասական չէ՞ր սակայն: Ինչպէ՞ս կարելի էր դժբախտ ըլլալով երջանիկ ըլլալ:

— Պապի, պտոյտի պիտի չերթա՞նք այսօր, — Արմէն հեւասպառ ներս մտաւ ու կանգնեցաւ դիմացը:

— Անշուշտ, — հայրը նայեցաւ ժամացոյցին. — ո՞ւր կ'ուղէք երթալ այսօր:

Կէսօր էր արդէն, ու թէեւ հաղուած էր ու պատրաստ կը սպասէր, նախորդ գիշերուան խմելքը կը շարունակէր պատժել զինք: Մարմինը հաշիւ ու հանգիստ կը պահանջէր իրմէ, իսկ զաւակները՝ պտոյտ:

— Լեռ, — պատասխանեց Արմէն:

— Լե՞ռ, — զարմացաւ:

— Գերեզմանոցի լեռը, ուր անտառներ կան:

— Այդքան հեռո՞ւ: Նայիրին փոքր է. ինչպէ՞ս լեռ պիտի բարձրանայ:

— Կը գրկես, եթէ յոգնի:

— Հա՞: — Ոնդաց: — Զի՞ս ով պիտի գրկէ:

Տղան շփոթած նայեցաւ իրեն:

— Լա՛ւ, — յանցաւոր զգաց Առաքելեան. — դնա՛ մօրդ ըսէ: Նայիրին ո՞ւր է:

Մայր ու աղջիկ մտան հիւրասենեակ:

— Ասոնք որոշած են մինչեւ դիմացի դադաթը հանել զիս, — ըսաւ ամուսինը: — Դուն ալ կ'ընկերակցի՞ս մեզի:

— Աշխարհ մը ճամբայ է, եւ ճաշը պէտք է պատրաստեմ: Բայց պղտիկները մինչեւ լերան դադաթը ինչպէ՞ս պիտի բարձրանան:

— Քալելով երթալ կարելի չէ արդէն. օթոյով կէս ժամուան ճամբայ է, եւ ընաւ նպատակ չունիմ այդքան տեղ քալելու: Սրճարաններուն հասնելէ հոք խնդիր չէ: Ի՞նչ ըսիր:

— Եթէ յոգնած կը զգաս, մի երթաք, — Սեղա նկատեց որ ժող փախուստի միջոց կը փնտռէր, կամ գէթ կ'ուղէր երեխաներուն հսկողութիւնը իրեն վստահել: — Գալ Կիրակի կ'երթանք, հա՞, ձագուկ:

— Ո՛չ, այսօր օդը յարմար է: Պղտիկներուն ծրագրերը մի խանդարեր: Գնացի՛նք:

— Ուշադրութիւն ըրէ՛, — զղուշացուց կինը, — եւ մի ուշանաք: Ճաշը երկուքին պատրաստ կ'ըլլայ:

Ճնշող տեսարան էր, թէեւ դեղեցիկ: Այս բարձրութենէն քաղաքը անիրական կը թուէր — կ'երկարէր, կա տարածուէր բոլոր

ուղղութիւններով ու կը միանար հորիզոնին, ուրկէ անդին Լոս Ան-
ձելըսն էր նոյնպէս, գիտէր: Տեսարանը Երեւանի համայնապատ-
կերը կը յիշեցնէր իրեն միշտ՝ զխուռած «Արազիլ»էն: Սակայն այս
քաղաքը սահման չունէր. ոչ կը սկսէր, եւ ոչ ալ կը վերջանար:
Տասը Երեւան էր թերեւս, թէեւ ոչ նոյնքան տպաւորիչ: Երեխաները
կ'առաջնորդէին զինք հիմա — եւ ինք սիրալոյսով կը հետեւէր ա-
նոնց ու կը պատասխանէր բոլոր հարցումներուն: Բայց ինքնիրեն
հետ էր աւելի, իր մտորումներուն հետ եւ չէր գիտեր ինչու՝ ա-
ռանձին կը զգար դարձեալ:

Ինքնաշարժին յարմար եւ ապահով տեղ մը դտած էր փոքր
սրճարանէն դուրս, ծառերու շուքին տակ, ու հիմա դանդաղօրէն կը
բարձրանային լեռն ի վեր: Լեռ մը չէր անշուշտ քաղաքին իշխող այս
բարձունքը, սակայն բնական հրաշալի գեղեցկութեամբ օժտուած
անկիւն մըն էր՝ իր անձեռնմխելի մնացած անտառներով ու վայրի
գեղեցկութեամբ: Պատահմամբ կամ ծրագրուած կերպով — վստահ
չէր — անտեսուած շրջան մըն էր, որ գերծ մնացած էր քաղաքա-
կրթուած մարդու կործանարար միջամտութենէն, եւ բնականաբար
պահպանած էր իր նախնականութիւնը: Առաքելեան երախտապարտ
ու գոհ զբաց որ մարդիկ խնայած էին այս շրջանին, եւ առիթ ըն-
ծայած իրեն որ վերադառնար բնութեան ու վայելէր զայն երբեմն
հոս: Առաջին անգամ չէ որ կը գտնուէր այս անտառներուն մէջ, ու
միշտ ալ ննջարկուած էր նոյն հոգեցունց տպաւորութեան, զոր չէր
կրցած մեկնել երբեք: Լեռնային այս շրջանը տարօրինակ կերպով
կը ներգործէր իր վրայ, կը տխրեցնէր թերեւս, բայց նաեւ հոգեկան
բաւարարութիւն կ'ընծայէր իրեն: Ու յաճախ կը վերադառնար ա-
նոր, սովորաբար առանձին, երբ ներքին խոտիքը հանդարտեցնելու
պահանջ զգար կամ ուզէր մեկուսանալ եւ խոկալ: Ոչ ոք կը խան-
գարէր զինք այս մենաստանին մէջ:

Օր ըստ օրէ մենակեաց եւ սակաւախօս կը դառնար, թէեւ
գրասենեակին մէջ կը շարունակէր խօսիլ, կատակել, ու մանաւանդ
ժպտիլ: Իր գլխաւոր հմայքն էր, կամ զէնքը — յաջողութեան
զաղանիքը: Այդ մարդը, գրասենեակի ձէքը, տարբեր անձ մըն էր
այլեւս, եւ ինք նոյնիսկ հիացումով կը զիտէր երբեմն անոր վարուե-
լակերպն ու տարած յաղթանակները: Նմանօրինակ առիթներով կը
նախանձէր ամերիկացի ձէքին, որ հանելուկ մըն էր իրեն համար,
ինչպէս նաեւ՝ ամերիկացիներուն ընդհանրապէս: Երջանի՞կ էին թի՞
ոչ, վստահ չէր, ու գիտնալով հանդերձ, թէ չէր կրնար ու չէր ու-
զեր անոնց նմանիլ, կը նախանձէր այդ մարդուն, որ արդէն իսկ

յարմարած էր եւ անոնցմէ մէկը կը նկատուէր: Կը սիրէին զինք,
կը յարգէին, եւ ամերիկացիներու յատուկ պարզամտութեամբ, չէին
ծածկեր իրենց հիացումը. այլ ընդհակառակն՝ կը քաջալերէին զինք
եւ հնարաւոր բոլոր առիթները կ'ընծայէին, որպէսզի նորանոր յա-
ջողութիւններ արձանագրէ: Իսկ ինք, կը նախանձէր, ճիշդ է, բայց
օտար կը զգար նաեւ, որովհետեւ զիրար չէին ճանչնար այլեւս, եւ
բնականաբար կը դառնար մենակեաց եւ սակաւախօս:

Այդ մարդը նախկին ծաղրածուն էր թերեւս: Իսկ ի՞նչ: Լի-
բանանէն Հայաստան ու յետոյ՝ Հայաստանէն ալ Ամերիկա, եօթ-
ութը տարուան այս երկար ուղեւորութեան ընթացքին, փոխուած էր
օր ըստ օրէ եւ դարձած անձանաչելի: Սեղան նոյնիսկ երբեմն, չփո-
թած եւ մտահոգ, թէեւ ծածուկ եւ խորհրդապահաբար, կը փնտռէր
առաջին տարիներուն ճանչցած իր ժաղը եւ չէր գտնէր զայն: Բայց
չէր վանդատեր ու լուրթեամբ կը հանդուրժէր իր յեղակարծ վերի-
վայրումներուն եւ անակնկալ որոշումներուն: Իսկ հոս՝ վստահ էր
ինք, ան կը զգար, որ կը հեռանար իրմէ, կը կորսուէր: Եւ կը
տազնայէր, բնական է, բայց չէր արտայայտուէր: Չարմասնի չէր,
ուրեմն, որ ուզէր Լիբանան վերադառնալ: Կը վախնար հաւանաբար,
եւ իրաւացի կերպով: Իրմէ աւելի կը նախազգար թերեւս, թէ այս
երկիրն մէջ ահաւոր վտանգ մը կը սպառնար իրենց: Ընտանեկան
բոյնը քանդելու վտանգը:

Իսկ ի՞նչ կ'ընէր ինք: Ակամայ բայց նաեւ գիտակցաբար՝ քան-
դուծի հոլովոյթը կ'արագացնէր: Կը պայքարէր, ճիշդ է, կ'ընդլզէր
յաճախ ու կը դատաւարտէր ինքզինք, սակայն դէմ չէր կրնար
զնեւ հոսանքին, ու կը դահաւիթէր, գիտէր: Ինք նոյնիսկ, մա-
նաւանդ ինք՝ Յակոբ Առաքելեանը: Օր ըստ օրէ շեշտուող առանձ-
նութեան զգացումը այս գիտակցութեան հետեւանքը չէ՞ր միթէ: Եւ
եթէ կարելի ըլլար, եթէ չամչնար, այսօր իսկ կը վերադառնար Լի-
բանան:

Այնքան ունայնամիտ դարձած էր, եւ այնքան տկար, որ պար-
զօրէն կ'ամչնար: Կը վախնար նոյնիսկ, հանրային կարծիքէ՛ն կը
վախնար: Մարդիկ ի՞նչ պիտի մտածէին, ինչե՛ր պիտի վերազրէին
իրեն: Փոփոխամիտ, անկայուն նկարագրի տէր մարդ: Եւ ճիշդ չէ՞ր
արդեօք: Աստուծմէ ի՞նչ կ'ուզէր դեռ: Հանդիտա եւ անվտանգ կեանք,
յաջողութիւն եւ փայլուն ապագայի մը հեռանկարը, նրթական ա-
պահովութիւն եւ աշխարհի հզօրագոյն երկրին քաղաքացի ըլլալու
իրաւունքը: Ծիծաղելի չէ՞ր: Այո՛, ասկէ աւելի ի՞նչ կ'ուզէր:

Չէր գիտեր: Պարզապէս չէր գիտեր, թէ ի՞նչ կ'ուզէր, կամ

ինչ կը փնտռէր այս աշխարհի վրայ: Ո՛չ, թերեւս ալ դիտէր: Որովհետեւ պահեր եղած էին, երբ անակնկալ յատկատեսութեամբ մը ամէն ինչ այնքան պարզ թուած էր իրեն: Անդրադարձած էր, թէ փնտռածը ամբողջ իր ինքնութեան ճանաչումն էր: Ոչ թէ անձին, այլ իր դոյութեան, որ իր անձէն բոլորովին տարբեր իրականութիւն մըն էր: Պիտի կարենա՞ր մատչել այդ ճանաչումին: Պիտի կարենա՞ր ճանչնալ, հաստատել իր ինքնութիւնը: Այսինքն՝ վերադառնալ իր դոյութեան ճշմարտութեան:

Բայց այս իրադրո՞ծելու համար՝ առաջին քայլը Լիբանան վերադարձը պէտք է ըլլար:

Քաջութիւն պիտի ունենա՞ր նմանօրինակ քայլ մը առնելու:

Ե.

Վեց ամիսէ ի վեր Անգլիա կը դանուէր բայց ոչ մէկ հայու հանդիպած էր: Նախընտրած էր չհանդիպիլ, կամ հետու մնալ հայկական փոքր շրջանակէն, որ կազմուած էր առաւելաբար Կիպրոսէն, Լիբանանէն եւ Պարսկաստանէն հոս փոխադրուած հայերէ: Թէեւ մայրաքաղաքի հայկական ճաշարանը, որու բացումը կատարուած էր շուրջ երկու տարի առաջ, իր նախընտրած վայրերէն մէկն էր Լոնտոնի մէջ, եւ շարաթը անգամ մը դէթ հոն կ'ընթերէր: Չորրջ — որ թարգմանի եկեղեցի — փողոցի վրայ, քաղաքի կեդրոնական եւ ամենաբանուկ շրջաններէն մէկուն մէջ, այս ճաշարանը Հայութեան հետ պահպանած իր միակ կապն էր: Միակողմանի կապ մը, որովհետեւ ոչ ոք կը ճանչնար զինք հոն: Ծաբաթը անգամ մը, քանի մը ժամ, հայերէն խօսակցութիւն լսելը անհրաժեշտութիւն էր իրեն համար ըստ երեւոյթին, ինչպէս նաեւ՝ արեւելեան ճաշերու բոլոր ըմբոշխնելը: Այլապէս պատճառ չունէր հոն այցելելու, մանաւանդ այսպէս կանոնաւորաբար:

Նոյեմբերեան ցուրտ իրիկուն մըն էր Լոնտոնի մէջ — անտանելի, զգուշի այս կլիման — եւ սովորականին պէս կը խմէր, բայց չէր դիտեր նոյնիսկ, թէ ո՛ւր: Ժամերէ ի վեր կը շրջէր Սանտրա Բարձրի հետ, եւ այս հինգերորդ կամ վեցերորդ քսնն էր, ուր մտած էին: Անգլիական տարօրինակ սովորութիւն մըն էր հաւանաբար — անկասկած — խմելու այս եղանակը. եւ ինք դժգոհ էր քնականարար: Հարկ երկու բաժակ խմած, Սանտրա զինք քաջբռնելով կը փոխադրէր յաջորդ զինետունը, եւ այսպէս շարունակա-

բար: Մինչդեռ ինք խօսելու նոյնիսկ տրամադրութիւն չունէր, եւ սկսած էր ջղայնանալ արդէն: Սակայն արտասովոր համբերութեամբ մը կը հեռուէր անոր, յուսալով հարբիլ թերեւս:

Աղջիկը դիմացը կանգնած, կը փորձէր որեւէ նիւթով հետաքրքրել զինք, եւ առանց յուսահատելու կը շարունակէր շաղակրատել ինքնագործ մեքենայի մը պէս, մինչ ինք կը մնար լուռ եւ անտարբեր: Կեանքի փոքր հաճոյքները, մտածեց Տարօնեան: Այս պահը, Սանտրայի անխուսափելի ներկայութիւնը, միասին ըլլալու վարժութիւնը, առօրեայ սովորական խօսակցութիւնները: Ամիսներու ընթացքին կազմուած վարժութեան հաճոյքներն էին ասոնք: Անմարդկային այս քաղաքին մէջ առանց աղջկան թերեւս չկարենար սպրիլ: Իր միակ ծանօթն էր, միակ բարեկամը, ի բաց առեւալ պաշտօնակիցները, որոնք բարեկամներ չէին անշուշտ:

Անգլիացին տարօրինակ արարած մըն է: Երկրին կլիմային նման պաղ եւ անհաղորդ, եսակեդրոն եւ այլամերժ կենդանի մը, որ մարդկայինէն աւելի սոսկ կենդանական հաճոյքներու հետամուտ է: Այրն ու կինը՝ հաւասարապէս: Բարեկամութիւն, մտերմութիւն, զգացում, սէր՝ ասոնք բոլոր յարմար առիթներով օգտագործելի բաներ էին իրենց համար: Ոչ աւելի, ոչ պակաս: Եւ շուրջօրէն կը դործածէին այս բաները, ետսիրաբար վարուելով հանդերձ իրարու հետ: Ինչպէ՞ս կարելի էր բարեկամանալ կամ մտերմանալ այս կարգի արարածներու հետ: Սանտրան, որու ծանօթացած էր Պէյրութ արտակարգ պաթմաններու մէջ, բացառութիւն մը չէր: Պաշտօնին բերումով բազմաթիւ երկիրներ շրջած, եւ այդ իսկ պատճառով այլ ժողովուրդներու կենցաղին եւ մտայնութեանց ծանօթ, համեմատաբար աւելի լայնախոհ էր անշուշտ, եւ որոշ չափով՝ մարդամօտ: Աւելի ընկերային, կամ նուազ՝ եսակեդրոն: Սակայն անգլիացի էր նոյնպէս, եւ ունէր անառարկելիօրէն անգլիական բարքեր, հետաքրքրութիւն, եւ մոլութիւններ: Որոնցմէ մէկն էր իր մարմնին պաշտամունքը:

Այդ իմաստով Սանտրա Բարձրը ոսկի միջինը կը ներկայացնէր: Անգլիուհի մը, որու հետ կրնար խօսիլ նաեւ երբեմն, եւ մարդկային յարաբերութիւն մշակել: Այլապէս այս վեց ամիսներուն ընթացքին սպրած պիտի ըլլար բացարձակ առանձնութեան եւ կղզիացումի մէջ: Ծրագրուած կերպով հետու մնացած էր հայկական շրջանակէն, որովհետեւ անդրեւէն վէպ մը սկսած էր գրել Անգլիա հասնելէն անմիջապէս ետք — այդպէս, պատահմամբ, առանց իսկ մտածած ըլլալու այդ մասին — եւ անհրաժեշտ նկատած էր հայերէն չխօսիլ եւ

չկարգալ: Անդլիոյ մէջ, յամենայն դէպս, նախընտրելի էր անգլիացիներուն հետ յարաբերիլ՝ օր առաջ տեղական բարքերը իւրացնելու եւ յարմարելու համար: Այսօր զիտէր, թէ իր պարագային դէժ ճիշդ հակառակը պատահած էր: Անոնց բարքերուն ծանօթանալով չճամ էր, ու փոխանակ յարմարելու, մեկուսացած կեանք մը կ'ապրէր:

Վէպը աւարտած էր քանի մը շաբաթ առաջ եւ Սանտրայի յանձնարարութեամբ փոտահած էր զայն գործակալի մը, որ անգլիոն հին բազմաթիւ արբանեակներէն մէկն էր ըստ երեւոյթին: Բարեկամուհին, չկարենալով համբերել, հեռաձայնած էր իրեն այս առաւօտ եւ յայտնած, թէ կրահամ յաջողած էր վէպը ներկայացնել զժողովարհած եւ անուանի հրատարակիչի մը, որ յանձն առած էր հրատարակել զայն: Գեղամ զարմացած էր աւելի, քան խանդավառուած, եւ թերահաւատութեամբ ընկալած էր լուրը: Այսքան հեշտ չէր կրնար ըլլալ օտար հեղինակի մը գրական առաջին երկը Անգլիոյ մէջ հրատարակիչի մը ընդունել տալը: Եւ չէր սխալած: Երեկոյեան, երբ հանդիպած էին, Սանտրա այլ մանրամասնութիւններ հազարգած էր իրեն զիրքի հրատարակութեան շուրջ: Գործը վաճառելի եւ շահաբեր դարձնելու համար որոշ փոփոխութիւններ կը պահանջուէին իրմէ, եւ առաջարկած էին նոյնիսկ՝ իրենք կատարել այդ փոփոխութիւնները վէպին մէջ, եթէ վստահէր իրենց մասնագիտական փորձառութեան: Ինք բնականաբար մերժած էր:

Ազգիկը փորձած էր համոզել զինք, բացատրութիւններ տալ եւ հասկննել իրեն պարզօրէն, թէ հրատարակչական տունը բացարձակ եւ անփոփոխ իրաւունք կը համարէին փոփոխութիւններ թելադրել ու պահանջելը՝ չարկ եղած պարագային: Ու ջգայնացած էր նոյնիսկ վերջաւորութեան, անդրադառնալով որ անդրդուելի կը մնար ինք, մերժելով իսկ խօսիլ այդ մասին: Փորձութիւնը, թէ եւ, անտարակելիօրէն վտանգաւոր էր: Փաստ որ տկարութեան պահեր կ'ունենար ու կը մեղադրէր ինքզինք հիմա, լուրթեան մէջ: Մեծամտութիւն չէ՞ր արդեօք իր անդիջողութիւնը, կամ՝ սպիտութեան հետեւանք: Ի՞նչ դիտէր հրատարակչական գործի մասին, ի՞նչ փորձառութիւն ունէր: Ո՞վ էր ինք, ի՞նչ կը ներկայացնէր որպէս հայ դրող, որու գրած անգլերէն առաջին զիրքը հրատարակութեան սլոտի արժանանար անգլիական հրատարակչական տան մը կողմէ: Մերժելու իրաւունք ունէ՞ր: Երա՞զ էր, թէ իրականութիւն:

Բայց հայ դրողը կը ծառանար յետոյ, կ'ընդլզէր, ու կը պախարակէր զինք: Դո՞ւն ես Գեղամ Տարօնեանը, որ ստրիներ շա-

բունակ հետեւողականօրէն եւ գիտակցաբար դէպ եւ զարտուղի դրականութիւն մը մշակած էր եւ պարտադրած այդ գրականութիւնը: Ինքզինք զրկելով, պատժելով, հալածանքի ենթարկելով:

— Այսքան յամառ ըլլալու չէի զիտեր, — ըսաւ ազգիկը յանկարծ, ինքզինք ընդմիջելով: Տարբեր նիւթի մը մասին կը խօսէր արդարեւ:

Վերջին նախադասութիւնը յաջողեցաւ Տարօնեանի ուշադրութիւնը գրաւել եւ անդրադարձ ստեղծել անոր մէջ: Ի վերջոյ խօսեցաւ:

— Կը պաւիմ: Շատ երախտապարտ եմ քեզի, եւ անկեղծօրէն կը զնահատեմ ըրածդ, բայց անկարելի բան մըն է լինձմէ պահանջուածը:

— Մարդիկը խանդալառ են գործովդ, այնքան մը որ կ'ուզեն օր առաջ պայմանագրութիւնը ստորագրել, իսկ դուն... ծիծաղելի է: Կը ներես:

— Ես գրող եմ, ոչ թէ վաճառական: Իմ իրենց յանձնածս վաճառքի ապրանք չէ, այլ գրական գործ: Գրականութիւն, արուեստ:

— Բայց զիրքը կը հրատարակեն ծախելու համար: Այլապէս ինչո՞ւ սլոտի հրատարակեն, ի՞նչ շահ ունին: Տրամարանական չէ:

— Անչուտ: Իրենց գործն է: Սակայն նախընտրելի է որ գրական գործ, իսկական գրականութիւն ներկայացնեն հանրութեան եւ ծախեն՝ քանի այս գործին մէջ են:

— Գժբախտաբար լուրջ գրականութիւնը չուկայ շունի: Շահաբեր չէ:

— Եթէ ուզեն, ճիշդ ընեն, չուկայ կը ստեղծեն: Իրենցմէ կախալ է: Հրատարակիչները իրենք են, եւ այդ չուկան մշակելն ու պատրաստելը իրենց մասնագիտութիւնն է: Եթէ ուզեն, կ'ընեն: Մի փորձեր զիս համոզել, որովհետեւ որոշ չափով զաղափար ունիմ իրենց տխրահոյս զերին մասին: Ասոնք օդ նոյնիսկ կրնան ծախել եւ դրամ շահիլ, սակայն անկուշտ աւագակներ ըլլալով, չեն գոհանար եւ կ'ուզեն անպայմանօրէն հարստութիւն գիլլել: Դիւրին միջոցը գտած են: Ուրիշ որեւէ գործի կամ առեւտրական ձեռնարկի մէջ մարդկային տկարութիւնները այսքան գիւրութեամբ օգտագործելի չեն: Հասարակ կօշիկ մը արտադրելն ու ծախելը նոյնիսկ շատ աւելի զժուար է, որովհետեւ ստիպուած են որակը նկատի ունենալ եւ լուսագոյնը արտադրելու ձգտիլ, որպէսզի կարենան այլ արտագրութեանց հետ մրցիլ: Այս պարագային ժողովուրդը շահագործելի

դո՛ւ չէ՛. կօշիկ մը ունենալու պահանջը տարրական անհրաժեշտութեան մը արդիւնք է առաւելարար, եւ մարդկային տկարութիւնները դեր չեն կրնան ունենալ անոր սպասման մէջ: Մինչդեռ գիրքի պարագային, կը բաւէ որ քանի մը գոեհիկ նախադասութիւն կամ բառ դորձածես, սեռային յարաբերութեան վերաբերեալ գրգռիչ եւ թաց պատկերներ նկարագրես, եւ արդէն վաճառելի ապրանք արտադրած կ'ըլլաս եւ առանց դժուարութեան ձեռքդ կ'երկարես մարդոց քսակին մէջ ու կը պարպես զայն:

— Կարեւորը յաջողիլն է:

— Հարց է, թէ ի՞նչի մէջ, — Գեղամի ձայնը մեզմ էր բայց վճռական: — Յաջողութիւնը զիս չի հետաքրքրեր, մանաւանդ եթէ գրականութիւնը զոհելու պիտի պիտի յաջողիմ: Վաճառելի բայց գրական արժէքէ զուրկ գիրք մը հրատարակելը յաջողութիւն չեմ նկատեր:

— Ինչո՞ւ գրական արժէքէ զուրկ: Քանի մը փոփոխութիւն մտցնելով գիրքը գրական արժէք ունենալէ պիտի դադրե՞: Կրնայ նոյնիսկ օգտակար ըլլալ: Մի մոռնար որ իրենք աւելի փորձառու են, եւ գիտեն, թէ ինչ կ'ընեն: Գիրք հրատարակելը իրենց մասնագիտութիւնն է:

— Իսկ գրելը՝ իմ: Գրողը ես եմ, ոչ թէ իրենք: Թող իւրաքանչիւրը իր գործը ընէ: Ես գրած եմ, իրենք ալ թող հրատարակեն:

— Այս կը փաստէ, թէ հրատարակչական գործի մասին դադար փար չունիս: Քեզմէ պահանջուածը ոչինչ է, բաղդատած ուրիշներուն հետ: Գիրք մը մինչեւ լոյս տեսնէ ի՞նչ փոփոխութիւններու կ'ենթարկուի: Գրողը անսխալական չէ վերջին հաշուով, եւ ոչ ալ սատուած մը:

— Իսկական արուեստագէտը կատարեալին կը ձգտի, որովհետեւ ինք շատ աւելի դժուարահաս չ'որպէս արուեստագէտ, եւ գործ մը աւարտած չի կրնար նկատել մինչեւ՝ որ լիովին բաւարարէ զինք այդ գործը: Այլապէս արուեստագէտ չէ: Եթէ տաղանդ ունի եւ արուեստին կը ծառայէ, հրատարակիչէն եւ քննադատէն առաջ ինք կը ձգտի կատարեալին եւ կ'ընէ իր կարելին:

— Ուրախ եմ որ վերջին ճշգրտմը դուն ըրիր, — Սանտրայի գէմքը պայծառացաւ: — Կ'ընէ միայն կարելին, որ կրնայ թերի ըլլալ:

— Եթէ արուեստագէտ է, այդ կարելին առաւելագոյնը կը պարփակէ իր մէջ: Ատկէ աւելին ոչ ոք կրնայ իրագործել տուեալ գործի մը պարագային: Ուրիշներ, եթէ փորձեն միջամտել, գործին

հաւասարակշռութիւնը կը խախտեն, կը ձեւազեղծեն, կը փճացնեն անոր գեղեցկութիւնը: Իսկական արուեստագէտի եւ արուեստի մասին է մեր խօսքը, չմոռնանք:

— Փաստուած իրականութիւն է, սակայն, որ բազմաթիւ գործեր չահած են նմանօրինակ միջամտութիւններէ, ինչպէս օրինակ՝ Թովմաս Ուոլֆի պարագային:

— Անկասկած: Երիտասարդները, տաղանդաւոր խոստումները, ինչպէս կը կոչեն գիրքնք, պէտք ունին այդ առաջնորդութեան, օգնութեան, դասաւանդութեան՝ եթէ կ'ուզես: Նկարիչը, քանդակագործը կամ երաժիշտը տարիներ դասընթացներու կը հետեւի, արուեստի դադանիքներուն տիրանալու համար: Տաղանդը չի բաւեր: Տաղանդը ունեցողը պէտք է արհեստը սորվի, արհեստը ըսի, այո՛, որպէսզի արուեստին կարենայ մատչիլ: Գրողի պարագային նոյնն է: Երբ տակաւին արուեստագէտը չէ կազմաւորուած, չէ հասունցած երիտասարդ ու խոստումնալից գրողին մէջ, վարպետի մը իմաստուն առաջնորդութիւնը անպարմանօրէն օգտակար կ'ըլլայ իրեն:

— Ձեռ կրնա՞ր դուն քեզ այդ երիտասարդներուն կարգին դասել այս պարագային եւ օգտուիլ ընծայուած արուիթէն: Ձեռ գիտեր, թէ ինչ կը նշանակէ հրատարակութեան արժանանալը հոս, մանաւանդ օտարի մը համար:

Գեղամ, անտրամադիր եւ յոյնած, խուզարկող նայուածքով մը քննեց չըջապատը, ազատ սեղան մը դանելու յոյսով: Ժամերէ ի վեր ոտքի էին, ու հոս եւս կանգնած կը խմէին, խճողուած գինետան մէջ պատի մը տակ սեղմուած: Ծարժելու նոյնիսկ հնարաւորութիւն չկար, իսկ այս վիճակին մէջ խօսիլը մասնաւոր ճիգ կը պահանջէր: Ձիրար լսելու համար պէտք էր պոռային, բայց այս եւս հնարամտութիւն կ'ենթադրէր՝ նախ ուրիշները չխանդարելու եւ մանաւանդ՝ զիրար լորձունքով չլուարու համար: Եւ ուրեմն պոռաց:

— Բաժակդ վերջացուցի՞ր: Ուրիշ, աւելի խաղաղ տեղ մը գտնենք:

— Ասկէ աւելի չեմ ուզեր խմել:

— Հայկական ճաշարան կ'երթանք:

— Դարձեա՞լ: Անտանիի գիներ ունին, թէեւ ճաշերը փառաւոր են:

— Ծարաթը անգամ մը կարելի է: Մօտ օրէն պիտի հարըստանամ, մի մոռնար:

— Այս ընթացքով հաւանական է որ անօթի մնաս օր մը: Եթէ

չարունակես յամսոխլ:

— Բալինք:

Երբ ճաշարան հասան, սառած էին գրեթէ: Հինգ վայրկեան տեւած էր՝ զիննատունէն ճաշարան իրենց արշաւը, սակայն կը գողային արդէն: Գեղամ խոհանոցին մօտ սեղան մը ընտրեց եւ գոհունակութեամբ զիտեց շուրջ-ընդունը: Գրաւուած սեղաններ կային, բայց սովորական խճողումը չկար: Թէեւ ժամը ինը կ'անցնէր, եւ շաբաթավերջ էր մանաւանդ: Յուրտն էր հաւանաբար, մտածեց Տարօնեան, եւ զգաց որ մարմինը տաքնալու սկսած էր: Քիչ ետք, երբ սպասակը ներկայացաւ, ճաշերուն հետ օղի ապսպրեց, զարմացնելով սեւաշեայ հայ երիտասարդը, որ ըսաւ:

— Շատ զօրաւոր խմիչք է, եւ սուղ:

— Գիտեմ, — հայերէն խօսեցաւ Գեղամ:

— Հա՞յ էք:

— Ի՞նչ կը խորհիս: Ես՝ այո՛: Օրիորդը տեղացի է:

— Այսքան ատեն է ինչո՞ւ չէիք ըսեր:

— Ատի՛թ չէր եղած:

— Շատ ուրախ եմ, — իսկապէս խանդավառուեցաւ երիտասարդը:

— Ի՞նչ կ'ընես հոս, — զարմացած, հետաքրքրուեցաւ Տարօնեան: — Դուք գէթ հայերու կը հանդիպիք այս վայրին մէջ:

— Կ'ուսանիմ: Այո՛, բայց անակնկալ է: Միշտ կ'ասկած մը ունէի որ մեր կողմերէն էք:

— Ձեռ սխալած: Ձեր կողմերէն եմ, եւ հայ: Իսկ դուն լիբանանցի ես, վստահ եմ:

— Անշուշտ: Օրիորդն ալ օղի պիտի խմէ:

— Թող խմէ: Գինացիներէք զինք, ի՞նչ կ'ըսես:

Երիտասարդը բարձրաձայն խնդաց ու հետացաւ:

— Հա՞յ է, — հարցուց Սանտրա:

— Ի՞նչ կ'անկնկալիիր որ ըլլար:

— Ձարմանալի է, առաջին անգամն է որ հայերէն կը խօսիս հոս: Ի՞նչ պատահեցաւ:

— Գիրքը գրուած եւ վերջացած է արդէն:

— Օ՛, չըսե՞ս: Շատ գաղտնապահ մարդ ես:

— Եւ կամ՝ ըստ քեզի չէ վերջացած:

— Ատիկա դուն որոշած ես արդէն: Սակայն զարմանալին այն է որ քեզի պէս խելացի մարդ մը կ'ընայ այսքան անգործնական ըլլալ: Ներկայացած առիթէն չօգտուիլ: Ճիշդ հինգ ամիս յամսօրէն

աշխատած ես, դուն քեզ ամէն ինչէ զրկելով, եւ հիմա վարձատրութիւնը կը մերժես: Ձեմ հասկնար: Արդար իրաւունքդ է: Ենթացքներ որ փոռասէր չես եւ յաջողութիւնը չի հետաքրքրեր քեզ, ինչպէս ըսիր. իսկ դրամը: Կը ճանչնամ զբողներ, որոնց երազը տարիներու ընթացքին այս եղած է, բայց չեն յաջողած: Իսկ դուն, հազիւ Անգլիա հասած, հինգ ամսուան մէջ փառաւոր զերք մը կը գրես, կը վերջացնես ու հրատարակիչ մը կը գտնես, եւ... քու փոռասիրութիւնը հպարտութիւնդ է: Քեզի գոհունակութիւն կը սրտճառէ կ'ըրեսի այսպէս հպարտ եւ անդի՛նող ըլլալը: Ինչո՞ւ անգլերէն զերք կը գրես, քանի երկրի հրատարակչական ընդունուած պարմաններուն պիտի չենթարկուիս, այսինքն պիտի մերժես զիրքը հրատարակել: Չափազանցութիւն չէ՞:

— Գրողի մը համար Անգլիա գտնուած միջոցին անգլերէն գրելը շատ բնական երեւոյթ է կը խորհիմ: Նոյնիսկ անխուսափելի: Ուրիշ ի՞նչ կ'ընայի ընել:

— Բայց դուն հայ գրող ես, եւ քեզի համար շատ աւելի բնական պիտի ըլլար հայերէն գրել, մանաւանդ որ նիւթդ ալ հայկական է:

— Իրաւ գրողը իր գիտցածին մասին միայն կը գրէ: Առայժմ գիտցածս այս է. ձեր կամ ձեր կեանքին մասին ոչինչ գիտեմ, բացի զիրքերու եւ թերթերու մէջ կարդացածէս: Կարեւորը նիւթն է, յամենայն դէպս, իսկ նիւթը համամարդկային է: Որեւէ նիւթ: Այս պարագային հայկական է՝ այն իմաստով որ հայկական կեանքէ առնուած է եւ տիպարները հայեր են: Այդքան: Անգլերէն գրելս պատահականութեան հարց է: Ըսի, չէ՞, Անգլիա ապրած շրջանիս ինծի համար բնական էր անգլերէն գրելը:

— Անգլիացի գրողը, թէեւ, կամ Ֆրանսացին, գերմանացին, ամերիկացին՝ իր հայրենիքէն դուրս, այլ երկիրներ գտնուած ատեն, տուեալ երկրի մը լեզուն չի գործածեր: Կը շարունակէ իր մայրենի լեզուով գրականութիւն մշակել:

— Պէտք չունի, — նիւթով կլանուած էր արդէն Գեղամ, եւ ինքզինք մոռցած: — Եւ յետոյ, նախ այդ երկրի լեզուն պէտք է գիտնայ: Ես, նկատելով որ անգլերէն սորված եմ ժամանակին եւ կ'ընամ զոչացուցիչ կերպով գործածել զայն, փորձ մը ըրած եմ:

— Ի՞նչ փորձ: Մեր վրայ խնդալու պէս բան մըն է այս քու փորձդ: Անգլերէն լեզուն դուն հետքած ես կարծես. այնպիսի ազատութեամբ մը կը գործածես զայն, եւ այնպիսի ճշգրտութեամբ՝ որ ես գէթ հիացած եմ: Պարզօրէն անհաւատալի է:

— Դժուար չէ: Ըստ երեւոյթին կարելի է: Չեմ մտածած իսկ այդ մասին, եւ իրականութեան մէջ ըրածս, կատարած փորձս, անմեղ կատակ մըն էր: Տեսակ մը ինքնաքննութիւն՝ եթէ կ'ուզես:

— Կատա՞կ, — բացականչեց Սանտրա: — Իսկապէս մեծամիտ ես. ոչ թէ ժխտական իմաստով: Ինքնավստահութիւնդ քու գործիւնդ է, վստահ եմ, եւ սլարդօրէն հիանալի է: Նախանձելի ես: Ամէն ինչ այնքան հեշտ կը թուի քեզի, որ այս փորձ կոչածդ կրնայ կատակ մը ըլլալ քեզի համար. չեմ գարմանար:

— Չեմ գիտեր, — մըթմըթաց Տարօնեան, անակնկալօրէն ընկճուած. — ըսածդ սխալ է, կ'ենթադրեմ: Ինքնավստահ եմ, անշուշտ, որովհետեւ կարողութիւններուս գիտակցութիւնը ունիմ: Գրականութիւնը գաղտնիքներ չունի ինծի համար, եւ գիտեմ, թէ ներկայ դարու քանի մը հարիւր լաւագոյն գրողներէն մէկն եմ, հող չէ թէ գրականութիւնս ծանօթ չըլլայ աշխարհին: Փոքր եւ անտեսուած ժողովուրդի մը գրականութիւնը աշխարհին ծանօթացնելը գրեթէ անկարելի դործ է: Միշտ այսպէս եղած է, եւ այսպէս ալ պիտի մնայ: Յաւալի է, եւ մարդկութեան համար՝ կորուստ մը: Մեր գրականութիւնը, օրինակի համար, այնպիսի գանձեր ունի, որ երբեմն իսկապէս կ'սխալուի: Որովհետեւ իրաւ գրականութիւնը ազգային չի կրնար ըլլալ, եւ ուրեմն մատչելի պէտք է ըլլայ ամբողջ մարդկութեան: Բայց լեզուները, դժբախտաբար, պատուարներ կը ստեղծեն, եւ... ինծի նման «ինքնավստահ» արարած մը կը շփոթի եւ կատակներ ընելու կը սկսի: Ճարահատութեան նշան է կարծեմ: Կեանքը իր իմաստը կը կորսնցնէ յանկարծ, եւ կ'անդրադառնաս որ ամէն ինչ ունայն է, ամէն ինչ՝ վատնում: Եւ կը ցաւիս, որովհետեւ մարդկութիւնը այս վիճակին մէջ պէտք չէ ըլլար: Կեանքէն մեր ուղածը ի՞նչ է, եւ մենք ի՞նչ կ'ընենք: Արեւմտեան քաղաքակրթութեան վերջը ա՞յս պիտի ըլլար: Մարդկութիւնը անել անկրնադարձի մը առջեւ է, պիտի կարենա՞նք ըմբռնել այսքանը: Կը խօսինք աշխարհին եւ մարդկութեան սպառնացող հիւլէական վտանգին մասին, բայց կը շարունակենք նոյն սխալները գործել: Գաղափարական կամ քաղաքական անհանդուրժողութիւնը մարդ արարածը ստրուկի վերածած է եւ կը գործածէ զայն ամենէն յոռի կերպերով: Այո, որպէս գանցառելի նիւթ կը գործածէ մարդը՝ լսկ քաղաքական եւ խորքին մէջ մարդկութեան վնասակար նպատակներ իրագործելու համար: Սակայն բոլորն ալ, առանց բացառութեան, եւ երկու հակադիր ճակատները գլխաւորաբար, այսինքն երկու մեծերը, մարդկային իրաւանց պաշտպան կը հանդիսանան, եւ որպէս

թէ կը պաշտպանեն մեզ: Մինչդեռ միայն կը բռնանան մեր վրայ, եւ իրենք կ'որոշեն հարիւրաւոր միլիոններ հաշուող մարդոց կեանքն ու ճակատագիրը: Եւ ի՞նչ ճակատագիր: Մահ, զրկանք, սով, աւեր, փոքր երկիրներու պարտադրուած պատերազմներ: Ընդգեցուցիչ չէ՞: Ինչպէ՞ս կարելի է լսել եւ ընդունիլ այս ամբողջը. ընդունիլ՝ պարտադրուած անձնապանութիւնը: Վերաւորական չէ՞: Ես դէթ չեմ կրնար հասկնալ այլեւս: Անհատ մարդուն կրաւորականութիւնը, ըսել կ'ուզեմ. չեմ կրնար ըմբռնել: Նախընտրելի չէ՞ դէմ դնել, չենթարկուել ու փրկուելու փորձ մը ընել, քանի մահուան վճիռ արձակուած է արդէն մեզի դէմ: Ի՞նչ է տարբերութիւնը: Մահը մահ է, զրկանքը՝ զրկանք: Եթէ հակադրուիս, մերժես բռնութիւնը՝ բան մը փոխելու յոյս կրնաս ունենալ դէթ: Կորսնցնելիք չունինք կարծեմ: Ասկէ աւելի ի՞նչ կրնանք կորսնցնել: Իմ կեանքս ի՞նչ իմաստ ունի, օրինակի համար. ի՞նչ կ'ընեմ, եւ ի՞նչ կրնամ ակնկալել աշխարհէ մը, ուր տեղ չունիմ: Կատա՞կ: Անշուշտ, որովհետեւ ամէն ինչ կատակի վերածուած է, դէթ ինծի համար: Ողբերգական կատակի մը, որ կը դառնացնէ: Երջանկութիւնը երազ մըն է: Յոյսը՝ միայն յոյս, որ ցարգ յուսախար ըրած է մեզ: Ինչո՞ւ կ'սպրինք ուրեմն:

Սանտրա Բարձր կարեկցանքով բայց նաեւ գուարճացած նախեցաւ սա այսպէս սաւակախօս մարդուն, որ ամբողջ ներաշխարհը կը բանար իրեն յանկարծ՝ ամիսներով զինք չարչարելէ ետք: Պէ՛տք էր, իրենց առաջին հանդիպումին միայն, այսպէս սզատօրէն խօսած էր, բայց առաւելաբար իր գրական եւ գեղարուեստական ըմբռնումներուն մասին: Այն ատեն իսկ շքեցուցած էր զինք իր իւրաքանչիւր եւ արտասովոր գաղափարներով, ինչպէս նաեւ խօսած անթերի անվերջնով: Անմիջապէս մտերմացած էին, իսկ ինք սիրահարուած էր պարզապէս: Ոչ մէկ այլ մարդ առաջին հանդիպումէն անմիջապէս ետք յաջողած էր զինք անկողին առաջնորդել, մինչդեռ այս փորձանքը նուաճած էր զինք նոյն գիշերն իսկ: Իրեն յատուկ եղանակով մը դարձեալ — հմայիչ խօսքերով եւ ընդգեցնող անտարբերութեամբ: Յետոյ, ժամանակի ընթացքին, համոզուած էր որ իսկապէս անտարբեր էր ան եւ թէ ուղղափառութիւն չէր անոր կատարածը: Իր անկողինին մէջ գրկաբաց հիւրասիրուելը բնական իրաւունք մը կը նկատէր հաւանաբար, եւ նուազագոյն չափով իսկ պարտաւորութիւն չէր ընդուներ: Դերասանութիւն ընելու նոյնիսկ հարկ չէր գդար, թէեւ զիմացինը երախտապարտ դարձնելու չափ փափկանկատ էր եւ քաղաքավար: Ոչ մէկ անտեղի կամ վիրաւորա-

կան ակնարկութիւն, կենցաղավարական ոչ մէկ խախտում կամ թիւրիմացութիւն: Բայց միշտ՝ զուսպ եւ հաւասարակչիւ, ինքնավստահ եւ անհաղորդ, ներամփոփ եւ սակաւխօս: Պորհրդաւոր կոչուելու չափ: Եւ ինք այս ամբողջը վերադրած էր անոր անձնատիրութեան, եւ վերջաւորութեան սկսած էր իրական սաղմավարութեան դիմել՝ զայն գիտակցութեան բերելու մտադրութեամբ: Նուաճելու, ընկճելու յոյսով: Այսօր կ'ըմբռնէր, թէ սխալած էր, եւ իր կնիքական լրբութիւնը ծառայած էր ինքզինք վարկաբեկելու միայն: Ենթադրածէն աւելի բարդ բայց հաւասարակչիւ, կայուն եւ ուղղամիտ խառնուածք ունէր մարդը, եւ իրեն յատուկ խառնաչփոթ ներաշխարհ մը: Ուստի մեղմօրէն խօսեցաւ:

— Շատ խիստ ես դուն քեզի հանդէպ, եւ ընդհանրապէս՝ յոռետես: Չէի գիտեր:

— Օղի խմած ես Պէյրութ, — ըսաւ Գեղամ, մինչ բաժակները կը լեցնէր, — եւ թերեւս կարօտցած:

— Անդամ մը փորձեցի, հաճելի էր: Ինծի յարմար խմիչք չէ սակայն. ուղղակի գլխուս զարկաւ այն ստեն: Կ'արժէ փորձ մը եւս ընել թէ եւ:

— Յոռետես: Երբեք: Ես ինձմէ դժգոհ եմ սովորաբար, ճիշդ է, բայց ոչ թէ կեանքէն կամ գոյութենէս: Աշխարհը կրնայ աւելի լաւ վայր մը ըլլալ, եթէ մենք, այսինքն մարդիկ, կամք ունենանք: Աշխարհը ինչ յանցանք ունի: Բնութեան հրաշալիքները ո՞վ կրնայ ուրանալ: Տեսարաններու կամ բնական գեղեցկութեան մասին չէ խօսքս, այլ տիեզերական կատարելութեան, գաղտնիքներուն, հաւասարակշռութեան: Այս հաւասարակշռութեան, տիեզերքին մաս կազմելու գիտակցութիւնը, գոյութիւն ունենալը ինքնին պէտք է երջանկացնէ մեզ: Ի՞նչ առանձնաշնորհում է, դիտե՞ս, ի՞նչ բախտաւորութիւն: Բայց մենք ի՞նչ կ'ընենք: Փոխանակ այս բոլորը վայելելու, աշխարհը կը տգեղցնենք մեր ներկայութեամբ, կը քանդենք, կը սպաննենք ու կը դժբախտացնենք մենք զմեզ: Փոխանակ սիրոյ հաճոյքը վայելելու, ստելութեամբ կը թունաւորենք մեր կեանքը եւ դժոխքի կը վերածենք զայն: Եւ յետոյ կը դժգոհինք, բնական է: Ասոր մէջ յոռետեսութիւնը դեր չունի:

— Շատ բարի, բայց դուն քեզ մեղադրելու ի՞նչ պէտք ունիս այս բոլորին համար. դժգոհելու՝ մանաւանդ դուն քեզմէ:

— Ես ալ մարդ եմ, եւ ուրեմն ես ալ դեր եւ պատասխանատուութիւն ունիմ: Իսկ դժգոհ եմ, որովհետեւ չեմ կրցած, չեմ կրնար բան մը փոխել, մարդոց աչքերը բանալ, որ տեսնեն իրական-

նութիւնը: Ինչպէ՞ս պէտք է ընել: Այս բոլորին մասին խօսելը, զրեւը սքանչելի է, ճիշդ է եւ կարեւոր, սակայն միակ ձեւը չէ ըստ երեւոյթին: Հազարաւոր տարիներ ետք մարդկութիւնը չէ փոխուած, ու կը շարունակէ նոյն յիմարութիւնները գործել, կրկնել: Պարուած ըլլալու զգացում է թերեւս իմս, դժգոհութիւնս այսինքն:

— Գրելը բաւարար չէ անշուշտ, — Սանտրայի համար խօսակցութիւնը հետաքրքրական սկսած էր դառնալ: Անհանդարտ, հանդիսատէս չունեցող միտքի տէր մարդ էր գիմացինը, որ կը վարակէր, կը պարտադրէր խօսակցին իր անհանդաժանութիւնը: — Գործնական քայլեր պէտք է առնել, լուծումներ առաջարկել եւ գործադրել զանոնք:

— Եւ ի՞նչպէս նոյն ծուղակին մէջ, — առանց յաւակնութեան խնդաց Գեղամ: — Կ'ուզես որ յեղափոխութիւն մը սկսինք: Յեղափոխութիւնները չէ՞ն որ մարդկութիւնը այս վիճակին հասցուցին, դէ՞թ վերջին դարերուն: Ազատագրութիւն, ժողովրդավարութիւն, ընկերավարութիւն, համայնավարութիւն, ընկերային եւ անտեսական հաւասարութիւն կամ անկախութիւն: Այս բոլորը անհրաժեշտ էին թերեւս, սակայն ճիշդ հակառակ արդիւնքը տուին. փոխանակ օգտակար ըլլալու, վնասակար եղան եւ մարդկութիւնը աւելի դժբախտացուցին: Նոր միտք մը, պարզ, մարդկային, գործադրելի լուծում մը, որ արիւնայեղութեան չառաջնորդէ: Ազատութեան եւ արդարութեան անունով մարդը չընտարարէ, չստրկացնէ:

— Ի՞նչ օրինակի համար: Գաղափար մը կրնա՞ս տալ, տեսակէտ մը: Նոր տեսութիւն մը թերեւս:

— Եթէ գիտնայի, այս վիճակին մէջ չէի ըլլար, եւ կեանքը կը վայելէի թերեւս: Տարիներու ընթացքին այս հարցումին մէկ եւ նոյն պատասխանը կրցած եմ տալ: Ազատագրել մարդկութիւնը քաղաքականութիւն կոչուած չարիքէն: Բոլոր ժամանակներու մեծագոյն սուտը, կեղծիքը, զոր որպէս գիտութիւն եւ փրկութեան միջոց կ'ընկերացած են միամիտ եւ խեղճ մարդոց: Այսինքն ժողովրդային զանդուածներուն, որոնք առանց հարցաքննութեան ընդունած են անոր պարտադրած շղթաները:

— Ինչպէ՞ս:

— Պարզապէս ըսել մարդոց, թէ քաղաքականութիւնն է իրենց դժբախտութեան բուն պատճառը: Արթնցնել զիրենք, որպէսզի պահ մը միայն մտածեն եւ իրենք որոշեն, թէ իրականութեան մէջ քաղաքականութեան պէտք չունին՝ ապրելու համար: Զարմանալի է որ մարդիկ չեն մտածած այս մասին եւ չեն անդադարձած երբեք,

թէ անհեթեթ եւ անհիմն պատրանք մըն է իրենց կամակատար կերպով իւրացուցածը, դոր ընդունած են որպէս անհերքելի, անփոխարինելի ճշմարտութիւն: Մարդկութեան գլխաւոր թերութիւնը չմտածելու այս ծուլութիւնն է:

— Այդքան պո՞րզ:

— Դուն փորձէ՛ մտածել պահ մը հիմա: Ձե՞ս խորհիր որ ճիշդ է ըսածս:

— Անկեղծօրէն, այս մասին չեմ մտածած երբեք: Ի՞նչ կրնամ ընել:

— Կը տեսնե՞ս: Դուն իսկ կ'ընդունիս, որ միտքէդ չես անցուցած: Այսքան պարզ հարց մը չես ուղղած դուն քեզի: Բայց մտածէ, հիմա՛, եւ պիտի անդրադառնաս որ ճիշդ է ըսածս: Շատ պարզ է, այո՛, գրեթէ անհաւատալի:

— Եւ, ի՞նչ պիտի ըլլայ յետոյ, — Սանտրա հաճոյքով ընկալեց բարեկամին խանդավառութիւնը: Երեխայի մը նման կ'ուրախանար, եւ հանգիստ չէր կրնար նստիլ գրեթէ:

— Երբ մարդիկ իրենց հաղարամեայ քունէն արթնան, բանան իրենց աչքերը, պիտի տեսնեն իշխանին մերկութիւնը: Եւ բնականաբար, տրամաբանօրէն պիտի մերժեն քաղաքականութիւն կոչուածը, պիտի չարտօնեն իրենց կառավարութիւններուն որ քաղաքականութեամբ զբաղին: Այսինքն՝ պիտի չուզեն ուրիշ երկիրներու կեանքին եւ գործերուն միջամուխ ըլլալ, որովհետեւ պէտք չունին՝ բնական եւ ինքնաբեր կեանք մը սպրեւելու համար: Հանգիստ, խաղաղ, երջանիկ կեանք մը, որ չի կրնար պատերազմներու առաջնորդել: Պատերազմը ինչի՞ արդիւնք է վերջին հաշուով, եթէ ոչ քաղաքական մարդոց անպիտոութեան: Իրենց երկրացիներուն, ինչպէս նաեւ ուրիշ երկիրներու եւ անոնց բնակչութեանց վրայ իշխելու, անոնց իրենց կամքը պարտադրելու հիւանդագին իղձ: Այս ամբողջը կ'ընեն անշուշտ իրենց երկրին, իրենց ժողովուրդին անունով. որպէս թէ անոնց իրաւունքները կը պաշտպանեն, դոյութիւնն ու շահերը կ'ապահովեն... եւ խղճի ամենայն հանդարտութեամբ զանոնք ճակատ կը զրկեն՝ հայրենիքը պաշտպանելու համար: Հայրենիքներ, որ պաշտպանութեան պէտք պիտի չունենային, վտանգուած պիտի չըլլային, եթէ այս տիրահաշակ մարդիկը քաղաքականութիւն չխաղային: Այսինքն՝ եթէ դրացի կամ հեռուոր երկիրներուն իրենց կամքը պարտադրելու հրէշային պահանջը չզղային: Ասոնցմէ ոմանք, այս հրէշներէն ոմանք ըսել կ'ուզեմ, արհեստավարժ մարդիկ են, եւ պարզօրէն իրենց ասպարէզին մէջ սորվածը կը գոր-

ծաղրեն: Կրնան իրենք ի ծնէ կամ խառնուածքով արիւնարբու հրէշներ չըլլալ, բայց որովհետեւ քաղաքական ասպարէզը ընտրած են որպէս գործ, իրենցմէ ակնկալուածը կ'ընեն: Քաղաքականութիւն կոչուած շահարեր ու փառք եւ պատիւ ապահովող գործը այս կը պահանջէ ի վերջոյ, եւ իւրաքանչիւրը նախանձախնդրութիւնը ունի իր գործը լաւադոյն եւ արժանաւոր կերպով կատարելու:

— Այս բոլոր ըսածներուդ լուրջ կերպով կը հաւատա՞ս:

— Գիտեմ, թէ միամիտ, ծիծաղելի կը հնչէ. բայց իրականութիւն է: Ծիշդ է այսինքն. եթէ լրջօրէն մտածես, այնքան պարզ իրականութիւն է, որ կրնաս միայն գարմանալ... եւ ընդլղիլ, բնական է:

— Մարդիկ սուրբեր չեն սակայն: Ամէն մարդու մէջ հրէշ մը կայ. շարութիւնը մեր էութեան մաս կը կազմէ, եւ անպայմանօրէն կերպ մը կը գտնէ մեզմէ իւրաքանչիւրին մէջ յայտնուելով աւեր գործելու, ուրիշներուն վնասակար ըլլալու:

— Գժբախտաբար: Բայց կը մնայ անձնական նեղ ծիրէ ներս: Մանր բարդութիւններ եւ ատելութիւններ կը ստեղծէ, անհաստական ողբերգութիւններ կ'ընայ պատճառել: Այդքան: Իսկ նմանօրինակ շարութիւններ, որ անխուսափելի են եւ բնական, համամարդկային տարողութեամբ աղէտ չեն կրնար պատճառել: Բիւր միլիոններով մարդոց մահուան պատճառ չեն դառնար, երկիրներ հիմնադատակ չեն քանդեր, եւ ոչ ալ մարդկութեան դոյութեան կը սպառնան:

— Կը նախանձիմ քեզի, գիտե՞ս, — աղջիկը ժպտեցաւ ինքնամոռաց վիճակի մէջ:

— Կը նախանձի՞ս: Ինչո՞ւ:

— Այնքան միամիտ ես, հակառակ բարդ խառնուածքիդ եւ իմացական յանդգնութեանդ:

— Միամիտ մարդոց չեն նախանձիր, այլ կը գլխան: Բայց ես միամիտ չեմ, ոչ ալ պարզամիտ: Ծճմարտութիւնը այնքան պարզ է, որ զայն ընդունելը անհեթեթ կը թուի երբեմն. իսկ նոյն այդ ճշմարտութիւնը ընդունողը՝ ոչ թէ միամիտ, այլ բթամիտ նոյնիսկ կը համարուի յաճախ: Կը խնդաս: Ձե՞ս հաւատար: Ասոր համար խենթութեւ կարգին կը դատեն զինք:

— Խենթ ըլլալուդ վստահ չեմ: Բայց սարօրինակ՝ անպայման: Երեխայի նման բան մը:

— Շնորհակալ եմ, — Գեղամ աչքերը կ'իցեց, մանկուշակ արտայայտութիւն մը տալով դէմքին: — Ինչո՞ւ չես խմեր: Կենացդ:

— Շատ զօրաւոր խմիչք է: Ձիս թմրեցուց արդէն:

— Կերակուրին եւ ներսի ջերմութեան բարեբար ազդեցութիւնն է: Եթէ թմրած ես, մտահոգուելու պէտք չունիս. կը նշանակէ, թէ մարմինդ կըրցած է զիմադրել եւ կանոնաւորաբար կը դործէ: Այլապէս զինովցած կ'ըլլայիր մինչեւ հիմա:

— Երանի, — Սանտրա քաջալերուած խմեց: — Կենացդ: Եթէ զինովնամ, ստիպուած ես զիս տուն հասցնել:

— Յարկարածի նս աւելի մօտ է:

— Օ՛ր, այս ի՛նչ հրաշք է: Ի՞նչ պատահեցաւ յանկարծ:

— Ազատ եմ այլեւս:

Անգլիոն հին շփոթած, բացատրութիւն պահանջող նայուածք մը սեւեռեց բարեկամին վրայ:

— Դիրքը աւարտած ըլլալով, — փորձեց միտքը պարզել Տարօնեան, — ազատութիւնս վերագտած եմ:

— Անկարելի է, — սթափեցաւ աղջիկը: — Լո՞ւրջ ես: Ձեմ կընար հաւատալ: Ձիս սպաւորելու պէտք չունիս, զիտե՞ս:

— Կեղբոնացած մնալու եւ լարուած կերպով աշխատելու անհրաժեշտութիւնն է իմ պարագայիս:

— Ուրեմն չես վշտացած:

— Վշտանալու ժամանակ ունենայի, թերեւս: Իդական քմահաճոյքը, թէեւ, բնական երեւոյթ մը կը նկատեմ, եւ ուրեմն, — խնդայ Գեղամ: — Անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ որ կըցար զիս ջղայնացնել այն ատեն:

— Բայց չես վշտացած:

— Եթէ քեզի դոհունակութիւն կը պատճառէ, կամ եթէ անպայման կ'ուզես հաստատել, թէ կըրցած ես վերաւորել զիս, վշտանամ:

— Հետդ խօսիլ անկարելի է: Աստուած իմ, հեզանքդ անտանելի է: Ինչո՞ւ այսքան հպարտ ես:

— Կատակելու իրաւունք չունի՞մ: Բայց դուն է որ դպրոցական աղջկայ խաղեր կը խաղաս, մոռնալով որ երկուքս ալ հասուն, չափահաս մարդիկ ենք:

Սանտրա, յուզուած կամ ջղային, մէկ ումպով պարպեց բաժակը, դէմքը ծամածոնեց, այդ միջոցին քննելով խօսակիցը, եւ ըսաւ:

— Իսկ դո՞ւն: Այնպէս կը վարուիս, որ կարծես դոյութիւն չունիմ, զգացում չունիմ: Ճիշդ կ'ընես զգացնելու որ ինձի պէտք չունիս, եւ ամէն վայրկեան կը փորձես հաստատել եւ վերահաստատել ասիկա:

— Ըսածս հաստատեցիր պարզօրէն: Ձեզած բաներ կ'երեւակայես եւ անտեղի վերադրումներ կ'ընես: Բարեկամներու միջեւ, մարդկային յարաբերութեան մէջ, այդ տեսակ առեւտուր չ'ըլլար:

— Թերեւս չես անդրադառնար նոյնիսկ, թէ աղջիկ մը Քիզի քականէն դուրս որոշ անկախութիւններ կընայ ունենալ: Քիչ մը զրացում, սէր, դուրգութեանք: Գոնէ ուշադրութիւն:

— Քալե՞նք, — Տարօնեան կանգնեցաւ: — Պէտք էր նկատած ըլլայիր մինչեւ հիմա, որ ես այդ տեսակ զգացումներ արտայայտելու ատակ չեմ: Ուսանուածքի հարց է: Քեզի համար կընայ բնական ըլլալ սիրած անձիդ արտայայտել, զգացնել այդ բոլորը. ես չեմ կընար նոյնը ընել: Տարօրինակ, անբնական կը թուի ինձի:

Սանտրա Բալմըր սպասեց որ Գեղամ վերարկուն ձեռքէն առնէր եւ օգնէր իրեն, որ հագուի. բայց նկատելով որ ան չէր իսկ անդրադարձած թէ ինչ կ'անկախուէր իրմէ, ճարահաստ գլուխը օրօրեց, ակամայ ժպտեցաւ ու մշտեց զայն:

— Կ'օգնե՞ս ինձի:

— Ո՞ւր կ'ուզես կրթալ, — Տարօնեան անզգալաբար վերցուց վերարկուն:

— Տուն: Խմիչք ունիմ, մի մտահոգուիր:

Լիրանանցի հայը, որ վեց ամիսէ ի վեր կը դռնուէր Անգլիա, այդ առաւօտ միայն, պտոկած բարեկամութիւն անկողինին մէջ, առիթ ունեցաւ Անգլիոյ եւ անգլիացիներուն մասին մտածելու: Նախ՝ անօրինակ խեղճութիւնը: Տունը, որու մասին խօսած էր Սանտրա, մայրաքաղաքի ծայրագոյն թաղամասերէն մէկուն մէջ, անհրապոյր եւ հնամեայ շէնքի մը ստորերկրեայ յարկարաժինն էր: Աւելի ճիշդը՝ խոնաւ եւ մզլոտած սենեակ մը, յարակից խահանոցով մը, ուր երկու անձ դժուարութեամբ կընային իրարու քով կենալ: Յետոյ՝ անտեղի եւ անխաղաղ կեանքն ու առանձնութիւնը: Տասը տարի առաջ ծնողքէն բաժնուած, լքելով ծննդավայր Երբքը, ուր հայրը կառավարական համեստ պաշտօնեայ մըն էր, հաստատուած էր Լոնտոն՝ ազատ եւ անկախ ապրելու եւ սեպհական կեանքը կերտելու համար: Եւ հիմա, տարիներ հտք, հպարտ էր որ առանձին յարկարաժին մը ունէր: Ինչպէս նաեւ՝ պատասխանատու պաշտօն, որպէս շրջուն եւ ազատ լրագրող:

Այս էր Անգլիան, եւ ասոնք՝ Բրիտանական Կայսրութեան ե-

բանելի հպատակները, որոնք տաք կերակուրի մասին դադարաբար չունէին: Ներկայ սերունդը գէթ: Բայց հպարտ էին եւ այլամերժ, կենսասէր ու կրքոտ, հաճոյամոլ, կատաղի: Պատասխանատուութիւններ չէին ընդուներ եւ կ'ապրէին միայն իրենք իրենց եւ վայելքի համար: Կիները՝ այրերէն աւելի: Իսկ անդլիուսէին... անդապելի, աննման, անկողինին մէջ տաք ու վայրագ էզ մըն էր — անձնասէր եւ անյաղուրդ, բայց երբեմն նաեւ քմահաճ: Անլմբոնելի կերպով քմահաճ: Կամ թերեւս հիւանդ, ցաւազար:

Գեղամ Տարօնեանի համար յայտնութիւն էր: Այսօր կրնար յայտարարել, թէ դարձացած էր, եւ արդէն կը ճանչնար անդլիւսին: Կամ գէթ՝ անդլիուսին:

Հիմա որ լրիւ արթնցած էր, նախորդ գիշերը մաս առ մաս, պատկեր առ պատկեր կը վերադառնար իրեն, կը յատկանար ու կը թարմանար յիշողութեան մէջ: Երեւակայութիւնը գրգռելու աստիճան, եւ շփոթի մատնելով զինք բնականաբար: Սանտրա լաւագոյն տրամադրութեամբ հիւրասիրած էր զինք, պնդելով որ շարունակէին խմել այս սառնարանին մէջ, ուր ելեկտրական փոքր վառարան մը աւելի գոյ կը պատճառէր իրեն քան կը տաքցնէր: Եւ այնքա՛ն խանդավառ էր ան, շաղակրատ ու պերճախօս այդ ժամուն, որ ինք յանցաւոր դրացած էր նոյնիսկ եւ մեղադրած ինքզինք: Ինչպէ՞ս կըրցած էր ուրախութիւնն ու հաճոյքը զլանալ այս աղջկան, որու աչքերն ու մարմինը նոյնիսկ կ'աղաչէին: Նստած կողքին, մահճակալին վրայ ան սկսած էր շոյել ձեռքերը, գոլուել ու համբուրել դանոնք՝ մայրական, հրեշտակային խանդաղատանքով: Իսկ ինք ձանձրոյթով սպասած էր որ վերջ գտնէր այդ արարողութիւնը, որպէսզի կարենային պառկել եւ տաքնալ: Անոր մարմինին փաթթուելով պառկելու փափաքը անհամբեր դարձուցած էր զինք, եւ բնականաբար պառկած էր անկողինին վրայ, նախ ինք, եւ յետոյ ծածկած էր ինքզինք շքեղ այդ մարմինով, որ ինքնաբերաբար փոռուած էր իր վրայ եւ զինք շնչահեղձ ըրած էր գրեթէ:

— Անկողին մտնենք, — հազիւ կըրցած էր խօսիլ քիչ ետք, եւ ան սկսած էր հանուիլ անմիջապէս, առանց չքմեղանքի կամ աճպարարութեան:

Ինք եւս մերկացած էր, գողզողալով, կափկափելով, ու հազիւ բրդեայ վերմակին ջերմութիւնը զգացած մերկ մարմինին վրայ, փաթթուած էր անոր ու փնտռած ստինքներուն թաւիչը՝ իր պապական շրթունքներով:

— No! — լսած էր յանկարծ: — Խելօք պիտի մնաս:

— Տաքնալու միակ կերպն է, — խօսած էր ինք, աղաբարութիւնը իզական պշտանքի վերադրելով:

— Ոչ, չեմ ուզեր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Այսպէս քով-քովի պառկելը նախընտրելի է. առանց շարութեան:

— Եթէ կրնաս գիմանալ, ի՞նչ խօսք: Ես...:

— Աւելի հաճելի է, — սառնօրէն ընդմիջած էր Սանտրա:

— Հաճելի՞: Պատիժ է ասիկա: Դուն քե՞զ կ'ուզես պատժել, թէ զիս:

— Դուն է որ կ'երեւակայես հիմա եւ անտեղի վերադրուածներ կ'ընես:

— Ուրեմն կ'ուզես փաստել, թէ ինձի պէտք չունիս, — անդապելի խնդուք մը բարձրացած էր կողորդէն վեր ու պայթած անկողինին մէջ, — ինչպէս բոլոր քիչ առաջ: Ինձի վերադրածդ հիմա դուն կը փորձես ընել: Իսկապէս խենթ ես եղեր:

— Ինչո՞ւ կը խնդաս:

— Ծիչդ է, ըստ քեզի պէտք է լամ, պոռամ, աղաչեմ, ջղայնանամ:

— Կը խնդրեմ, սխալ մի հասկնար զիս:

— Այսքան հիւանդ ըլլալդ չէի գիտեր, — զայն վերաբերելու մտադրութեամբ խօսած էր ու յետոյ զղջացած: Բայց եւ այնպէս կռնակը դարձուցած էր անոր, որոշած ըլլալով քնանալ գէթ, եթէ կարենար անշուշտ:

Տուեալ պարմաններուն մէջ ուրիշ ոչինչ ունէր ընելիք: Ոչ կրնար մեկնիլ եւ այդ հաճոյքը շնորհել կողքին պառկած շնաշխարհիկ արարածին, եւ ոչ ալ կրնար անտարբեր ձեւանալով խօսիլ կամ կատակել: Թէեւ կատակելու սքանչելի տրամադրութեան մէջ էր այդ պահուն: Բարեբախտաբար ակնկալածէն շատ աւելի առաջ յաջողած էր քնանալ:

Սանտրա գլուխը վերմակին տակ թաղած, անշարժ եւ անզայ, կը ննջէր տակաւին: Կամ արդեօ՞ք նոր ծրարիւրներ կը մշակէր: Ինք, յամենայն դէպս, անկողինին մէջ դոյզն շարժում մը նոյնիսկ ընելէ կը զդուշանար: Պէ՞տք է արթնցնէր զայն, թէ այս պատիժը երկարաձւեկով սպասէր անխուսափելիին: Բայց ի՞նչ պիտի պատահէր: Հիմա հետաքրքրութիւնն էր որ զինք գամուած կը պահէր անոր կողքին: Մինչ այդ կրնար մտածել եւ որոշել, թէ ի՞նչ պիտի ընէր այս ծուղակէն դուրս գալէ ետք: Եթէ այս էր Անդլիան, հոս մնալու պէտք

չունէր, մանաւանդ որ Լիբանան խաղաղած էր: Բայց ինք Անգլիա հաստատուելու նպատակով շէք եկած արդէն, եւ ուրեմն... ինչո՞ւ կը տաքնապէր: Ճիշդ ծովէն դուրս նետուած ձուկի կը նմանէր, եւ այս երկրին օդը հաւանական է որ խեղդէր զինք մօտ օրէն: Ինք իր ծովը կ'ուզէր: Ոչ թէ Միջերկրականը, այլ լիբանանեան կեանքի ծովը — փոթորկալի, պղտոր, վտանգաւոր — ուր աւելի ապահով կը զգար՝ իրեն նմանող բազմադէլ այլ ձուկերու լարիւրինթոսին մէջ: Մարդ արարածը զարմանալի կենդանի մըն էր, անկասկած:

— Արթո՞ւն ես արդէն, — Սանտրա գլուխը հանած վերմակին տակէն, զինք կը զխտէր: — Ժամը քանի՞ է: Ես զրեթէ չեմ քնացած:

— Վեցը կ'անցնի, — Գեղամ նստեցաւ անկողինին մէջ եւ սկսաւ հագուել:

— Օ՛ր, կանուխ է եղեր: Քանի մը ժամ եւս կրնամ քնանալ: Բայց... ինչո՞ւ կը հագուելիս:

— Սառելու նպատակ չունիմ:

— Անկողինէն դուրս անշուշտ կը սառիս:

— Հինգ ժամ անշարժ պառկելը չափանիշ է ինձի համար: Ասկէ աւելին կարողութեան վեր է:

— Այս ժամուն ի՞նչ պիտի ընես սակայն: Գեռ մութ է, եւ այսօր գործ չունիս:

— Պէյրութ լոյսը վաղուց ծագած է, եւ ամէն մարդ զուրսը կ'ըլլայ այս ժամուն:

— Հոս Պէյրութ չէ, եւ փողոցները մարդ չկայ:

— Նոյնն է, — Տարօնեան օտքի, տափատը կը կոճկէր արդէն: — Ես լիբանանցի եմ. այնպէս որ... պէտք է դուրս ելլեմ, եւ քալեմ քիչ մը:

— Վշտացած ես դարձեալ: Ճիշդը խօսէ՛:

— Ուրիշ իտէալ չունի՞ս կեանքի մէջ:

— Ի՞նչ իտէալ, — չփոթած, հարցուց Սանտրա:

— Զիս վշտացնել փորձելէ վատ:

— Զեմ ուղեր որ այսպէս քէնոտած հեռանա քովէս: Կ'ուզեմ որ հասկնաս զիս:

— Կրնաս վստահ ըլլալ:

— Որ չե՞ս վշտացած:

— Ո՛չ: Որ հասկցած եմ քեզ: Խենթ ըլլալը:

— Բայց չե՞ս վշտացած:

— Քեզմէ կախեալ է, — պատասխանեց Գեղամ եւ ուղղուե-

ցաւ դէպի դուռը: — Քանի այսքան կարեւոր է քեզի համար, վշտանամ:

— Իրաւունք չունիս, — աղջիկը մէկ ստուամով, եւ բոլորովին մերկ, կանգնած էր կողքին: — Պէտք է հասկնաս զիս, ըսի: Գուն համաձայն պիտի ըլլայի՞ր որ չամուսնացած սեռային յարաբերութիւն ունենայի հետդ, երբ վստահ չեմ, թէ քեզ կը սիրեմ կամ ոչ:

— Պէյրութ ինչո՞ւ նոյն հարցումը...:

— Այն ատեն տարբեր էր, — Սանտրա կանխեց չփոթահար դրողը, որ ինքզինք հողերան նկատած էր միշտ: — Անծանօթներ էինք, մանաւանդ առաջին օրերուն:

— Սքանչելի է: Նախընտրելի է որ անծանօթներ մնանք: Բայց խկասպէս հետաքրքրական է:

— Զիս չես սիրեր ուրեմն:

— Ոչ քու հասկցած կերպովդ, — Գեղամ Տարօնեան խուճապի մատնուած, վայրկեան առաջ կ'ուզէր դուրս ելլել այլեւս:

— Իրաւունք ունիմ եղեր:

Ես ալ իրաւունքներ ունիմ, Գեղամ մտածեց դուրս ելլելէ ետք, եւ ազատ շունչ մը քաշեց:

Օր առաջ պէտք է Պէյրութ վերադառնար: Երկընտրանքը մէկ զիջերուան մէջ փարստած էր, եւ ատոր համար շնորհակալ պէտք է ըլլար միայն Սանտրա Բալմըրին:

Զ.

Արամ Մարգիսեան տան պատշգամին վրայ կանգնած, Դեկտեմբերեան յապաղած ու յամեցող արեւը կը վայելէր: Գարնանային նոյն օդը կը շարունակուէր տակաւին շարաթներէ ի վեր, մայրաքաղաքի աւերակներուն առթած սահմուկեցուցիչ տպաւորութիւնը մեղմացնելու համար կարծես: Վարը, փողոցին մէջ, ինքնաշարժներու ածխացած կմախքները կը միայն կարծես տակաւին ջերմացնող արեւին տակ, ու կ'ընկճէին զինք: Երկու օր առաջ միայն կրցած էին տուն վերադառնալ, հակառակ անոր որ Նոյեմբերի սկիզբը հասած էին Պէյրութ, ի՞նչ ուրախութեամբ եւ ակնկալութիւններով:

Իր սեպհական տունը մտնելու համար բացարձակ անծանօթներու ստիպուած էր զխմել, սունկի պէս նոր բուսած կուսակցապե-

տերու կամ գեկափարներու աղերսել, բազմաթիւ միջնորդներ կա-
շտուել, եւ վերջաւորութեան՝ տունը գրաւողներուն հատուցում մճա-
րել: Տասը հազար լիւր. սկիխ՝ շարաթներ թախանձելէ եւ սակարկելէ
ետք: Կեանքին վերջաւորութեան, յիսուն տարի բարեխղճօրէն աշ-
խատելէ եւ տքնելէ ետք, տունը կորսնցուցած էր դարձեալ, ինչպէս
անցեալին ճնողքը՝ իրենցը, ճննդավայրին մէջ: Ինք գէթ կրցած էր
վերադառնալ, ու հող չէ թէ գժուարութեամբ, կաշառքով եւ հա-
տուցումով, ախրացած էր իր տան վերստին: Հող չէ թէ՛ կողոպ-
տուած ու սրբապղծուած տուն մը յանձնած էին իրեն: Կահ-կարա-
սինքնէն սկսեալ, մինչեւ գաւակներուն զգեստներն ու նկարները
անհետացած էին: Անոնց մանկութենէն, երիտասարդութենէն կամ
կեանքէն ընդհանրապէս՝ յիշատակ չէր մնացած:

Բայց ի՞նչ պիտի ընէր յիշատակը: Զաւակները՝ կորսնցնելէ
ետք, յիշատակը վէրքերը պիտի արիւնէր միայն: Մալրին իր իսկ
գիտակցութեամբ ամուսնացուցած էր ամերիկացիի մը հետ Աթէնք
կոչուած անիծեալ քաղաքին մէջ, ու զայն ճամբած էր Ամերիկա:
Վերադառնալէն ի վեր չէր տեսած Մուշեղը, եւ տեղեակ չէր նոյ-
նիսկ, թէ ուր կը գտնուէր, եթէ ողջ էր տակաւին: Ինչո՞ւ կ'ապրէր,
կամ, իրաւունք ունէ՞ր ապրելու: Ինք, Արամ Սարգիսեանը, որ ու-
րիշներուն խորհուրդ տուած էր միշտ՝ ինքն իր օրինակը ի մտի ու-
նենալով ընկանարար, ի՞նչ պատասխան պիտի տար անոնց: Օտար
երկրի մը մէջ կալուածներ ունէր, գրամ, հարստութիւն, եւ ահաւոր
անորոշութիւն մը: Որո՞ւ պիտի մնային այս բոլորը: Զաւակնե-
րո՞ւն, Հայութեա՞ն, թէ՛ մարդակերպ զաղաններու: Օտար երկիրնե-
րու մէջ Հայուն արդար վաստակը նոյնիսկ իրեն չէր պատկաներ: Եւ
սակայն չաշխատէ՞ր, իր եւ գաւակներուն ապագան ապահովելու ճիգ
չընէ՞ր: Բայց ի՞նչ ապագայ էր, ի՞նչ պատրանք: Տասը տարի եւս,
եւ արդէն՝ ամէն ինչ վերջացած կ'ըլլար իրեն համար: Եթէ տասը
տարի ապրէր անշուշտ: Այս վախճանին արժանանալով պիտի ծա-
ռայէր իր զոհողութիւնն ու լման կեանք մը խլած տքնաջան աշ-
խատանքը:

Առանձնութեան զգացումը՝ այլ հարց: Մարդոց, բարեկամ-
ներու երեւելու քաջութիւն չունէր: Իրենք չուզէին նոյնիսկ հար-
ցումը, կամ՝ որպէսզի՛ չուզէին, ինք պարտաւոր կը զգար յայտ-
ներու անոնց, թէ աղջիկը ամերիկացիի մը հետ ամուսնացած էր:
Դառնութիւնը ամբքելու կամ միթիթարութիւն հայցելու համար թե-
րեւ: Անձրեւէն փախած ատեն կարկուտի բռնուած էր: Հաղիւ էս-
կար կոչուած ողորմելիէն փրկուած, Ֆրէտ անունով երանելիի մը

յայտնութիւնը ըրած էր Մալրի, եւ անդրդուելի մնացած էր իր ո-
րոշումին վրայ: Համալսարանի բարիքները ասոնք էին ըստ երեւոյ-
թին — ազատամտութիւն, համամարդկային դադարներ, լայնա-
խոհութիւն, ազգայնականութեան կապանքներէն ձերբազատում —
եւ բոլոր իր գլխուն պայթած էին: Կեանքին վերջաւորութեան իր
իսկ գաւակներուն կողմէ նկատուած էր նեղմիտ եւ ազգայնամոլ:
Մալրին՝ այսպէս. իսկ Մուշեղը... առաջին օրէն խելագար էր ար-
զէն: Մե՞ղք գործած էր՝ գաւակներուն համալսարանական ուսում
տալ ուղելով:

Ապրիլը պարզօրէն տաժանք դարձած էր իրեն համար: Ասկէ
ետք ոչ երազ ունէր, ոչ իտէալ, եւ ոչ իսկ կեանքի մէջ բան մը իրա-
գործած ըլլալու բաւարարութիւնը, որպէսզի վերջին տարիները կա-
րենար խաղաղօրէն հաւասարակուել եւ ծերութիւնը հանդուրժելի
դարձնել: Այս պայմաններուն մէջ գէթ գործը պահպանուած ըլլար,
կարենար աշխատիլ եւ օրերը լեցնել: Ընչո՞ք էր, կեանքի մէջ ուրիշ
ոչինչ մնացած էր. պէտք էր օրերը ժամանակով լեցնել, որպէսզի
մոռնար ինքզինք, մտահոգութիւնները, յուսախարութիւնը, դատ-
նութիւնը, եւ նոյնիսկ՝ գաւակները:

Տասը տարի ինչպէ՞ս պիտի ապրէր այլապէս: Տասը տարի:
Տարին՝ տասներկու ամիս: Ամիսը՝ երեսուն օր. եւ օրը՝ քսանչորս
ժամ: Կրնար խենթանալ: Որովհետեւ՝ անձնապաշտ ըլլալու քաջու-
թիւն չունէր: Իսկ տասը տարի, օրական քսանչորս ժամ, այս տա-
ռապանքը չէր կրնար կրել: Կը մերժէր: Իսկ եթէ՞ ասելի երկար
ապրէր:

— Դա մա՛րդ, — նոյեմի պատշգամ դուրս եկաւ: — Չե՞ս լսեր:
Գիտցիր ս'ի կայ ներսը:

Սարգիսեան երախտագիտութեամբ ընկալեց ախիսն ձայնը, որ
սթափեցուցած էր զինք, վանելով յոսի մտածումները, բայց դժգո-
հեցաւ նաեւ: Մարդ հիւրասիրելու կամ ընդունելու տրամադրու-
թիւն չունէր, մանաւանդ առաւօտեան այս ժամուն,

— Ժագն է, — կինը շարունակեց, ամուսնոյն գէմքին վրայ
ուրախ արտայայտութիւն մը տեսնելու ակնկալութեամբ: — Բնաւ
չէ փոխուած:

— Մե՞ր ժողը: Յակո՞բը այսինքն:

— Այո, այո՛: Ի՞նչ սառեցար:

— Այդ խենթը հոս ի՞նչ գործ ունի, — Արամ Սարգիսեանի
մոռյալ գէմքը պայծառացաւ: Գրեթէ անհամբեր, երիտասարդական
խանդավառութեամբ շտապեց զէպի հիւրասրահ, որ երբեմնի ճոխ եւ

հարուստ կահաւորումէն զրկուած, արձագանգ կու տար: — Այս ի՞նչ անակնկալ է զարձեալ, — խօսեցաւ եւ անզգալարար բազուկներուն մէջ սեղմեց երիտասարդը:

Առաքելեան թէ եւ դո՛ւ այս սիրալիր, հայրական ընդունելութենէն, անհանդիստ զգաց սակայն ու չկրցաւ ծածկել զարմանքը: Մարդուն աչքերուն մէջ արցունք կար:

— Այս կողմերէն կ'անցնէի, — պատասխանեց անմիջապէս, կացութիւնը փրկելու համար, — ու ենթադրելով որ տունը կ'ըլլաք, հանդիպիմ ըսի:

— Լաւ ըրեր ես: Ամերիկայէն ե՞րբ եկար ըսել կ'ուզեմ, եւ ինչո՞ւ: Յուսամ մնալու, հոս վերահաստատուելու նպատակով եկած ես:

— Ճիշդ շարաթ մը եղաւ: Անկեղծօրէն, շուարած եմ: Տարեկան արձակուրդս օգտագործելով, գամ, ստուգեմ ըսի: Բայց վիճակը վիճակ չէ: Բուն նպատակս ատիկա էր... ես ալ չեմ գիտեր այլեւս. որոշելը դժուար պիտի ըլլայ, թէ եւ որոշած էինք: Բարեբախտարար այս անգամ աւելի խոհեմ գտնուեցայ եւ ընտանիքը հետս չբերի:

— Տիկինդ համաձայն է ըսել կ'ուզես:

— Սեղան, անշո՛ւշտ: Ինձմէ աւելի ինք կ'ուզէ վերադառնալ այս անգամ:

— Ինչի՞ կը սպասես ուրեմն, — Սարգիսեան դո՛ւնակութիւնը արտայայտեց, առանց վերապահութեան: — Ճաշասենեակ անցնինք. հոս նստելու տեղ չկայ, փոքր Ատուծոյ:

— Նոյն սխալը չեմ ուզեր գործել:

— Իրաւունք ունիս, բայց մեզի համար այս երկրէն լաւ տեղ չկայ: Եւ կամ՝ Հայաստան:

— Հայաստան մեր հարցը չի կրնար լուծել, եւ լաւ որ այդպէս է թերեւս: Ես փորձեցի ժամանակին. չեղաւ: Սահմանափակ թիւով մարդիկ, ընտանիքներ կրնան ընդունիլ, կ'ընդունին մինչեւ այսօր: Բայց լուծում չէ: Հայութիւնը քանի մը ընտանիք չէ: Հազարաւոր ընտանիքներ՝ երկրէ երկիր թափառական: Եղիպտոսէն, Սիրիայէն, Իրաքէն, Պարսկաստանէն, Լիբանանէն... Ամերիկա պէտք է տեսնէք. չտեսնուած խառնարան է: Եւ հոն ապագայ չունին. պիտի կորսուին, պիտի փճանան, թէ՛ որպէս հայ, եւ թէ՛ որպէս մարդ: Պէտք է հոն ապրիք, որպէսզի ըմբռնէք:

— Վստահ եմ. հոն ապրելու պէտք չունիմ որ գիտնամ: Լաւագոյն երկիրը Լիբանանն է մեզի համար:

— Այս վիճակի՞ն մէջ, — Ժազ խօսեցաւ թերահաւատութեամբ: — Եւ մինչեւ ե՞րբ:

— Նոյնիսկ այս վիճակին մէջ: Աւելի լաւ տեղ մը կրնա՞ս գտնել: Ամերիկայէն եկողը դուն ես, եւ... ինչ կրնամ ըսել: Ո՛ւր երթանք: Մինչեւ երբը ի՞նչ կարեւորութիւն ունի, այնքան ստեն որ մեր դոյութիւնը կրնանք սպահել եւ հայ մնալ:

— Ասկէ ետք կասկածելի է. երկար չի կրնար տեւել: Յետո՞յ: Տասը կամ քսան տարի ետք, նոյն դժուարութեան առջեւ պիտի զբոսնենք մենք մեզ: Այն ատեն ինչ պիտի ընենք:

— Ճիշդ է: Բայց նախընտրելի է այս քսան տարուան ապահովութիւնը ունենալ ներկայիս, քանի դեռ կայ, կը տեւէ: Այդքան ժամանակ յետաձգած կ'ըլլանք դոնէ վտանգը: Ժամանակ չահելու խընդիր է նաեւ վերջապէս:

— Բայց մինչեւ ե՞րբ, — Առաքելեան կրկնեց հարցումը եւ անմիջապէս զղջաց: Ձայնը իր կամքէն անկախ հեղանական շեշտ մը ստացած էր, որ իրեն իսկ հաճելի չթուեցաւ: Եւ հարկադրուած, նիւթը փոխելու փորձ մը ըրաւ: — Այս մասին որքան ալ խօսինք, արդիւնքի մը պիտի չյանդիմք: Ձուր ծեծելու պէս բան մըն է: Երիտասարդներէ՞ն ինչ լուր. Մուշեղէ՞ն, Սալբիէ՞ն:

— Մուշեղէ՞ն: Մուշեղը գալիս ի վեր չեմ տեսած: Ճիշդ վեց շարաթ եղաւ մեր վերադառնալուն, եւ մինչեւ այսօր հետքը չեմ կրցած գտնել:

— Ինչպէ՞ս. չեմ հասկնար:

— Աշխարհը տակնուվրայ ըրինք, հարցուցինք, հետաքրքրուեցանք, որքան որ կարելի էր, բայց ապարդիւն: Ծուշանիկին նոյնիսկ լուր զրկեցի. աղջիկը եկաւ, ու պատմածին համաձայն, ասկէ երեք կամ չորս ամիս առաջ տեսած է զինք անգամ մը: Ատիկա վերջին հանդիպումը եղած է:

— Տունը չէ՞ր ըսել կ'ուզէք, — Ժազ հետախուզող հայեացք մը պտըտցուց շուրջը: — տունը ձգած եւ հեռացած է: Այն ատեն զգուշացուցի զինք: Մեր մեկնելէն առաջ, վերջին շրջանին, յաճախ կը հանդիպէր մեզի:

— Ոչ ուղեց մեր հետ գալ, եւ ոչ ալ հոս մնացած է կ'երեւի: Տունը, ի՞նչ որ է. հոս ըլլար նոյնիսկ, չեմ խորհիր որ կարենար փրկել: Լաւ որ հոս չէ եղած. ա՛յլ գիտէ ինչ կը պատահէր, ու գլուխն ալ վրայ կու տար: Բայց ինք ո՞ւր է:

— Տունը կողոպտած են:

— Միայն կողոպտած: Գրաւած էին: Մարդիկը առանց հա-

տուցում ստանալու չյանձնեցին մեզի մեր սեպհական տունը: Լա է, չէ՞: Նոր, երկու օր առաջ միայն կրցանք տուն մտնել:

— Այդ ամբողջ միջոցին ո՞ւր մնացիք:

— Պանդոկ: Ի՞նչ օրեր էին: Դուռը նոյնիսկ չուղեցին բանալ, մեզ ներս ընդունել, երբ իմացան որ տան տէրերն ենք: Սպառնացին, հայհոյեցին, ի՞նչ կ'ուզես դեռ... վռնակցին. հրելով, հրմշտկելով դուրս դրին մեզ: Նոյեմբին վիճակը տեսնելիք. մինչեւ հիմա դադարիս հետ չէ հաշտուած: Ուղղակի հիւանդ է, ջղային, եւ ար սուտաստի մէջ կ'ապրի: Եկնքին մէջ գրաւուած յարկաբաժիններ կան տակաւին: Զարմանալի չէ: Ինչ մեզքս պահեմ, ես ալ կը վախճամ երբեմն:

— Այս շրջանը վախցնելիք է, պէտք է ըսել,— ժազ հաստատեց, յիշելով իր իսկ կրած տպաւորութիւնը քիչ առաջ, երբ մօտեցած էր թաղամասին: — Անձանօթ, կասկածելի մարդիկ, զինեալներ...:

— Այսքանին ալ փառք տանք: Հիմա մենք նոր տուն կահաւորելու պիտի սկսինք, կրնա՞նք երեւակայել: Պատուաքաղէն սկսեալ մինչեւ անկողին, մահճակալ, ստոնարան: Բան չեն ձգած:

— Չէք խորհիր որ քիչ մը համբերէք աւելի լաւ կ'ըլլայ: Չէք դիտեր, այս հարցը դեռ շատ ջուր կը վերցնէ:

— Միժեռնակը բոյն կը շինէ,— Սարգիսեան մանկունակ ինքնագոհութեամբ արտասանեց: — Եւ պէ՛տք է շինէ: Հայու խառնուածք է, հայու ճակատագիր. բայց պէտք է շինենք եւ տեղի շտանք, չյուտահատինք: Թէ ոչ կը պարտուինք, այն ատեն կը կորսընցնենք ամէն ինչ:

— Դէմ չեմ: Սակայն, կը ներէք, ստիպուած նոյն հարցումը պիտի հարցնեմ: Մինչեւ ե՞րբ: Եւ ինչո՞ւ օտար հողի վրայ:

— Ուրիշ ի՞նչ կրնանք ընել:

Առաքելեան նախընտրեց դառնութիւնը ծամել, կուլ տալ ըսելիքը, քան վիրաւորել այս յարգելի մարդը, որ ամբողջ սերունդ մը կը ներկայացնէր: Մտայնութիւնը սերունդի մը, որ ընդունած էր պարտութիւնը եւ հաշտուած՝ որպէս իրաւադրկուած մարդ ապրելու դադարաւորին հետ: Յախտեանս յաւիտենից: Ու չզանգատի երբեք, չընդվզի, չըմբոստանալ: Հայուն պարտադրուած դարաւոր լուծն էր, անէ՛ծքը, սարկամտութիւնը: Բայց մինչեւ ե՞րբ: Դարձեալ նոյն հարցումը: Հայը մարդկային արժանապատուութիւն չունէ՞ր, պիտի չունենա՞ր այլեւս: Եւ եթէ չունենար, ինչպէ՞ս պիտի ապրէր: Այս հողերանութեամբ միայն ստրուկ կրնային մնալ եւ ենթարկուիլ ա-

ւելի վատ հալածանքի, արժանանալով մարդկութեան անարգանքին: Այս չէ՞ր պատահածը արդէն:

— Հող մի ընէր,— շարունակեց Մարգը,— այս ալ կ'անցնի: Բանդուածը վերստին կը շինենք: Այրուած վաճառատուները կը վերահաստատենք, կողոպտուած եւ սրբապղծուած տուները կը վերահանդնենք, եւ իրենցմէ աւելի լաւ կ'ըլլանք դարձեալ:

— Կը հիանամ ձեր քաջութեան:

— Այս տարիքին անհրաժեշտութեան խնդիր է, ոչ թէ քաջութեան: Ամբողջ կեանք մը աշխատել էտք, երբ առանձին մնաս, դուն քեզ մոռնալու, վախճ փարատելու համար կ'ուզես ժամանակը լեցնել, զբաղիլ:

— Ինչո՞ւ առանձին: Ասկէ երկու տարի առաջ կ'ուզէիք հանդրատանալ, դորձէն հրաժարիլ:

— Առանձին չե՞մ: Մուշեղի պարագան՝ այսպէս: Առեւանդուած է, սպաննուած է. ո՞վ դիտէ: Հազարներով անմեղ երիտասարդներ փճացան վերջին մէկ տարուան ընթացքին. ոմանք անհետացան պարզօրէն ու ոչ ոք դիտէ, թէ ի՞նչ պատահած է անոնց: Ուրիշներու դիակները գտնուեցան գէթ: Իսկ մերինը... ո՞ւր է: Եթէ ողջ ըլլար, մինչեւ հիմա վերադարձած կ'ըլլար անպայման:

— Ո՞վ ըսաւ որ առեւանդուած է:

— Ուրիշ ի՞նչ կրնայ պատահած ըլլալ: Ո՞ւր է, չկայ: Էջմիածին չէ, զիտե՛մ. հետաքրքրուեցայ: Երանի դացած ըլլար. կը փրկուէր: Պատերազմը ամէն ինչ խանդարեց, եւ այդ ծրագիրն ալ ջուրը ինկաւ:

— Անկարելի է,— ժազի միտքը մերժեց ընդունել:

— Իսկ Սալբին ալ ամերիկացիի մը հետ ամուսնացաւ,— Արամ Սարգիսեանի ձայնը մատնեց ներքին խոտիքը,— եւ Ամերիկա դնաց: Չի՞ր բաւեր:

— Ամերիկահա՞մ, թէ...:

— Երանի: Ոչ ծագումը զիտենք, ոչ անցեալը, ոչ պարագաները: Իոյրոզի անձանօթ աւազակ մը:

— Աւագա՞կ,— երիտասարդին անդրադարձը զգաստացուց երէցի, որ փորձեց անմիջապէս սրբազրել ըսածը:

— Պարզապէս գողցաւ աղջիկս: Եւ մինչեւ այսօր չեմ գիտեր, թէ ո՞վ է, ինչացո՞ւ է: Թէեւ դուն ալ ամերիկացի ես,— կատակելու տխուր ճիւղ մը ըրաւ յետոյ: — Դուն հոս ես, բարեբախտաբար, եւ պէտք է քու մասիդ մտածենք: Յուսամ հոս կը մնաս եւ գործը կը ստանձնես վերստին:

— Որոշելու համար դեռ շատ կանուխ է: Ընտանիքս հոն է, իսկ այստեղ ալ՝ անորոշ կացութիւն է: Աներոջս պարագան տարբեր խնդիր:

— Ի՞նչ խնդիր:

— Քեներս ասկէ երկու ամիս առաջ վրիպած փամփուշտի մը զոհ պացած է: Մենք լուր չունէինք անշուշտ. Սեդային մինչեւ հիմա չեմ կրցած տեղեկացնել, եւ շուարած եմ: Ձըլլալիք վիճակ է: Նախ չես կրնար հաւատալ. այնքան երիտասարդ, գեղեցիկ, առողջ, հրեշտակի պէս կին մըն էր: Բայց անբախտ էր. ամուսնութիւնը արդէն ձախող, դժբախտ ամուսնութիւն մըն էր՝ թէ իրեն, թէ զաւակներուն համար: Ամուսինը թէեւ խելացի, սակայն յիմար մը դուրս եկաւ ու զաւակներով նոյնիսկ չհետաքրքրուեցաւ, երբ բաժնուեցան:

— Ես գանդատելու իրատունք չունիմ ուրեմն: Կեանքի մէջ ի՞նչ դժբախտութիւններ կան եղեր: Լա՛ւ, երեխաները ո՛ւր են հիմա:

— Աներոջս քով: Կինը հաւասարակշռութիւնը կորսնցուցած է դրեթէ, եւ յոյսը կտրած՝ ամէն ինչէ: Իսկ պզտիկներուն վիճակը ուղղակի խղճալի է: Մարդու սիրտը կտոր-կտոր կ'ըլլայ: Եթէ ինձի պէս անձ մը շուարած է, ալ կրնաք երեւակայել:

— Հետո՞ չես կրնար տանիլ անշուշտ, — Սարգիսեան բարձրաձայն խորհրդածեց:

— Ինչպէ՞ս տանիմ: Օրինական այնպիսի՞ դժուարութիւններ կան: Նախ իմ զաւակներս չեն, եւ յետոյ՝ մենք վերադառնալու նպատակ ունինք արդէն:

— Լաւագոյնն ալ ատիկա է կարծեմ: Հոս գոնէ կրնաս իրենց տէր ըլլալ:

— Հա՛, բայց մինչ այդ զիրենք այս վիճակին մէջ չեմ կրնար ձգել:

— Ձեւ մը կըլլա՞ր գտնենք, կըլլա՞ր խորհիւնք, կըլլա՞ր կարգադրենք: Եթէ պէտք ըլլայ, հոս կըլլա՞ր բերենք զիրենք: Գուն օր առաջ միայն, առանց ժամանակ կորսնցնելու, քուկիներդ բերելու նայէ:

Ժառ Առաքելեան յուզուեցաւ եւ անհանդիստ զգաց: Ձգացական չէր եղած երբեք, բայց Մարդուն ազնուութիւնը անտանելի կերպով կը յուզէր զինք հիմա, ու թէեւ կ'ուզէր խօսիլ, առարկել, բայց չէր համարձակեր: Յուզումը վանելու մտադրութեամբ կանգնեցաւ ոտքի, ու ձեռքերը զրպաններուն մէջ, քալեց ճաշասենեակին մէջ:

— Ո՛ւր, — հարցուց Սարգիսեան:

— Երթամ: Մինչեւ միւս կողմ հասնիմ կէսօր կ'ըլլայ:

— Ի՞նչ ըսիր: Պատասխան չտուիր:

— Կը մտածենք, ինչպէս ըսիք:

— Մտածելու պէտք չկայ: Մտածեցինք, վերջացաւ: Ըսածիս պէս ալ կ'ընես: Մեզի համար ալ փոփոխութիւն կ'ըլլայ, օգտակար:

— Առայժմ ցտեսութիւն:

— Չմոռնա՛ս, — Մարդուն ձայնին մէջ սաստ կար: — Կը սպասեմ: Եւ ժամանակ մի կորսնցնիր. իսկ մինչ այդ հանդիպէ: Ամէն օր:

*
**

Ուրա՞խ էր, թէ՛ տխուր: Մարդուն քաջութիւնը իսկապէս կը հիացնէր զինք: Կեանքի մէջ դրեթէ ամէն ինչ կորսնցուցած — վաճառատուն, բնակարան, զաւակ — չէր ընկճուեր սակայն: Նիւթական սպահնովութիւն ունէր, ճիշդ է, բայց իր հարստութեամբ չէր հետաքրքրուած իսկ: Վստահարար դրամը կեանքին մէջ ոչինչ կը փոխէր. զաւակները չէր կրնար վերադարձնել իրեն, կեանքին անակնկալ վերիվայրուածը չէր կրնար հաւասարակշռել, միտթարել զինք — երջանկացնել: Ապահովութիւն նոյնիսկ չունէր՝ նիւթական սպահնովութիւն ունենալով հանդերձ: Հակասական չէ՞ր:

Պարտուած ըլլալով հանդերձ՝ տեղի չէր տար տակաւին: Պարտութիւնը վաղուց ընդունած — այն օրէն երբ հաշտուած էր գաղթական մնալու գաղափարին հետ — կը շարունակէր անըմբռնելի լաւատեսութեամբ մը պայքարիլ: Պայքարի՞լ: Կատարածին դիտակցութիւնը ունէ՞ր արդեօք:

Լաւատեսութիւն էր այս, թէ իրատեսութիւն:

Այս զարմանալի արարածն էր Հայը արդեօք:

Խորամանկ՝ բայց միամիտ, յամառ՝ բայց ապիկար. քաջ բայց նաեւ՝ յարմարող, անողնայար:

Ինչպէ՞ս կրնար լաւատես ըլլալ, երբ իր միակ որդին անհետացած էր կամ առեւանդուած ըստ իրեն, ու կեանքի մէջ ոչ մէկ կրազ ունէր այլեւս:

Այս տարիքէն ետք կ'ուզէր նոր դործի սկսիլ: Կարծես ոչինչ պատահած ըլլար սա անիծեալ դրախտին մէջ: Իրատեսութիւն էր: Բայց իրապաշտ մարդը ինչպէ՞ս կրնար չտեսնել, չըմբռնել հոս կատարուածը: Երկիր մը ամբողջ աւերել, հաստատուած կարգերը հիմերէն խախտել, եւ տակաւին միամտարար կանչիլ գոյութիւն չունեցող յոյսի մը:

Իրատեսութիւն էր այս:

Թերեւս՝ ինքնախաբէութիւն:

Արդարեւ Հայը ինքնախարէութեամբ կ'ապրէր — հոս եւ ամէն տեղ: Նոյնիսկ Հայաստանի մէջ, ուր հողը ունէր միայն՝ որպէս երաշխիք: Ուրիշ ոչինչ:

Բայց հողը, ժողովուրդի մը գոյութեան նախապայտան ըլլալով հանդերձ, չէր կրնար գոյութիւն ունենալ առանց մարդուն: Առանց անոր կամքին, երազներուն, աշխատանքին, գոհողութեան:

Իսկ Հայը լաւատեսութեամբ եւ յամառօրէն, կը շարունակէր օտար հողի վրայ պալատներ կառուցել, անասական հրաշքներ դործել եւ նպաստել միայն օտար երկիրներուն, արմատ արձակելով հոն բնականաբար: Եւ հակառակ օտար, օտար նկատուիլ միշտ — ամէն տեղ եւ ամէն երկրի մէջ:

Լիբանան գտնուէր կամ Ամերիկա, նոյնն էր: Այս ասիերուն վրայ աւելի պիտի դիմանար, անտարակոյս. այսինքն պիտի երկարաձգէր հողեւորքը, եւ ուրեմն նաեւ՝ շարշարանքն ու ստապանքը: Անարդանքը:

Ինք որոշած էր վերադառնալ, ու հիմա ինքնիրեն հարց կու տար, թէ ինչո՞ւ: Նախ ինչո՞ւ մեկնած էր: Եւ հիմա՞ ինչո՞ւ կը վերադառնար: Ու մինչեւ ե՞րբ պիտի շարունակէր այս անիմաստ, աննպատակ փախուստը իրականութենէն: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուէր այս ինքնախարէութիւնը:

Մինչեւ ե՞րբ:

Հարցումը ինքնիրեն պէտք է ուզուէր նաեւ:

Այո՛, այսօր գիտէր, թէ ի՛նչ էր այդ իրականութիւնը: Գիտէր, թէ ի՛նչ էր փնտռածը՝ վաղ տարիքէն սկսեալ: Բայց կը շարունակէր փախուստ սալ ու խարել ինքզինք, քնացնել:

Հիմա կը հասկնար, թէ ինչու դառնացած էր Գեղամ Տարօնեան կոչուած այդ լուռ ու սակաւախօս մարդը, որ կը մերժէր ինքզինք խարել: Կը մերժէր տուն ու կայք հաստատել, խաղաղիլ, հաշտուիլ այս իրականութեան հետ, եւ սպրիլ՝ ամէն մարդու պէս:

Ու կը նախանձէր անոր, որովհետեւ ազատ եւ անկաշկանդ ողի էր ան՝ որքան ալ տառապէր ու սլատժէր ինքզինք: Իսկապէս ազատ՝ իր առանձնութեան մէջ: Ազատ՝ ոչ թէ բառին սովորական իմաստով, այլ ներքնապէս, ինքն իր մէջ: Ոչ ոք կրնար դողնալ անկէ ազատութիւնը, որովհետեւ չէին կրնար խարել զինք, ինչպէս ինք չէր խարել ինքզինք: Ու թէեւ դառնացած, հաշտ էր ան ինքնիրեն հետ, եւ այդ իսկ պատճառով՝ խաղաղ, դոհ ու նոյնիսկ երջանիկ:

Եւ ասկէ՞ անոր գորութիւնը: Տխուր բայց ինքնավստահ ժպիտք: Մեղմ ու լայնախոհ բայց նաեւ հաստատակամ նկարագիրը:

Քանի մը օր առաջ հանդիպած էր իրենց, Անգլիայէն վերադարձած օրն իսկ, ու մտած էր տունէն ներս նոյն ժպիտք դէմքին, հանդարտ ու համբերող, սպասելով որ Ալիսը յայտնուէր ու դիմաւորէր զինք: Մինչ այդ խօսած էր իր հետ ակներեւ գոհունակութեամբ, արտայայտած ուրախութիւնն ու դարմանքը, եւ անդուստ կրեխայի մը խանդավառութեամբ սկսած էր պատմել իր ծրագիրներուն մասին: Յայտնած էր իրեն, թէ վերջնականապէս վերադարձած էր Անգլիայէն, եւ թէ կը մտադրէր իր սեպհական շարաթաթերթը հրատարակել վերստին:

— Տնեցիները հոս չե՞ն, — հարցուցած էր յանկարծ, նկատելով ի վերջոյ որ առանձին էր ինք տան մէջ:

— Ոչ:

Ու չէր կրցած տեղն ու տեղը, այդ պահուն իսկ, պարզ հարցումի մը պարզօրէն պատասխանել: Գծուարութեան մատնուած էր, անձրկած, եւ սկսեալ՝ պապանձած:

— Ի՞նչ է հարցը, — հետաքրքրուած էր Գեղամ:

— Ի՛նչ հարց:

— Բան մը կը ծածկես: Այս ամբողջ կացութիւնը անբնական է: անեցիներուն բացակայութիւնը, քու առանձին հոս ըլլալը: Ի՞նչ կայ:

— Աներս կրեխաները դուրս հանեց քիչ առաջ: Ամբողջ օրը տունը փակուած էին:

— Ալիսը ո՞ւր է:

— Չկայ, — անդրադարձած էր որ արեւելահայ բացատրութիւնը գործածած էր:

— Այսինքն, — յայտնապէս շիտթած, Գեղամի նայուածքը կախում էր իր շրթներէն, միաժամանակ պրպտելով դէմքին արտայայտութիւնը: — Չեմ հասկնար: Կը ներես, եթէ...:

— Ո՛չ, երբեք: Ուրախ եմ որ եկար. ինծի համար ալ փոփոխութիւն է... շուարած մնացեր եմ: Ալիսը, դժբախտաբար, ասկէ երկու ամիս առաջ արկած մը ունեցած է եւ տեղն ու տեղը...:

— Ի՞նչ արկած:

— Վրիպած փամփուշտ:

Արտայայտութիւնը չէր փոխուած, կամ թերեւս ստոած էր դէմքին վրայ, ու թերահաւատութեամբ խօսած էր երկարատեւ լուսթենէ մը ետք:

— Սպաննուած է ըսել կ'ուզես:

— Այո՛: Մէկ կապար, եւ ճիշդ սիրտէն: Հո՛ս, այս սենեակին մէջ:

— Ի՞նչ արդարութիւն է, — հեղնական ժպիտ մը երեւցած էր Գեղամի աչքերուն մէջ: — Ինձի խմելոք մը կրնա՞ս տալ, — ըսած էր յետոյ: — Թերեւս խելքս դուրսս դայ: Հեմ կրնար հաւատալ: Անկարելի է... բայց ինչո՞ւ Ալիսը: Երկու ամիս առաջ ըսիր, երբ ամէն ինչ գրեթէ վերջացած էր: Ձդուելի չէ՞: Այսքանը շատ է կարծեմ:

— Ի՞նչ կը նախընտրես:

— Որեւէ տեսակի թոյն: Որպէսզի կարենամ մտածել, մարսել այս ամբողջը: Անկարելի է, — կրկնած էր յետոյ:

Թէեւ կանուխ էր, սակայն որոշած էր ինք եւս խմել, ու խոհանոցէն վերադարձած էր երկու բաժակ վիսքիով:

— Մենք ալ որոշած էինք հա հոս դալ, — խօսակցութիւնը շարունակելու համար, փորձած էր բացատրել ինք:

— Որոշումդ փոխելու պատճառ չունիս:

— Այո՛, բայց կացութիւնը բոլորովին փոխուեցաւ մեզի համար: Հարց է, թէ Սեդայի անդրադարձը ինչ պիտի ըլլայ:

— Տիկինդ լուր չունի՞ տակաւին:

— Ես հոս գալէս ետք իմացայ: Սեղճ մայրը ապուշ կտրած է, եւ չես գիտեր ինչու յարմար նկատած է լուր շտալ մեզի:

— Երեխաները ի՞նչ պիտի ըլլան:

— Մերիններուն հետ կը մեծնան: Ատիկա ամենէն դիւրին մասն է...

— Իսկ իրենց հա՞յրը, — ընդմիջած էր Գեղամ:

— Ձէ հետաքրքրուած նոյնիսկ, հակառակ անոր որ լուր ունեցած է:

— Աւելի լաւ: Ընտանեկան յիմար բարդութիւններ չէք ունենար գէթ: Կը ներես, — Տարօնեան ինքն իր խօսքը ընդմիջած էր յանկարծ: — Ես բաժակ մը եւս առնեմ եւ քալեմ: Ո՛չ, յետոյ կը հանդիպիմ: Շատ պիտի փափաքէի հետդ նստիլ այս իրիկուն, բայց պէտք է կեդրոնանամ, մտածեմ եւ ինքզինքս վերագտնեմ: Կ'ըլլայ, գիտեմ, բայց ժամանակ կ'ուղէ: Ասկէ առաջ այս մասին չենք խօսած, բայց վստահ եմ, թէ Ալիսի գողտրիկ սիրոյն մասին վաղափար ունիս: Շատ անգութ գտնուած եմ իրեն հանդէպ, բայց ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Աշխարհի վրայ միակ կ'իկնը, զոր սիրած եմ ինքն էր... եւ ինք սորվեցուցած էր ինձի ատիկա, կեանքիս մեծագոյն եւ ամենէն նուիրական հարստութիւնը պարզեւած ինձի: Ինչպէ՞ս կրնայի այլ կերպ վարուիլ իր հետ: Սրբապղծութիւն պիտի

ըլլար ինձի համար: Թէեւ այսօր կ'անդրադառնամ որ զրկած եմ զինք, կեանքին միակ հաւանական երջանկութիւնը անձնասիրաբար զլացած եմ իրեն: Բայց ճշմարիտ սէրը, թէեւ գեղեցիկ, ողբերգական է անպայմանօրէն: Եւ ասիկա բացատրութիւն պիտի չըլլար: Միշտ այսպէս եղած է, եւ ողբերգականօրէն վերջացած՝ ընդհանրապէս: Ըճմարիտ սէրը, ըսել կ'ուզեմ: Այս պատիժին արժանի եմ՝ յամենայն դէպս:

Եւ առանց առիթ տալու որ խօսէր, երկրորդ բաժակը մէկ շունչով պարագած էր, ու քալած տունէն դուրս՝ ճիշդ այնպէս ինչպէս մտած էր: Հանդարտ եւ ինքնավստահ, բայց նաեւ՝ ընկճուած ու մտամոլոր:

Է.

Հեռաձայնը հնչեց Սարգիսեաններու մերկացած տան մէջ, ուր շուկն իսկ արձագանգ կու տար այլեւս:

Դեկտեմբերի վերջին շաբաթն էր եւ Արամ Սարգիսեան անորոշութեան մատնուած, կը սպասէր տակաւին: Ինչի՞: Վստահ չէր. սակայն գիտէր, թէ հոգեբանօրէն սպասման վիճակի մէջ էր, եւ ուրեմն՝ չէր կրնար գործնական որոշում մը առնելով ներկայ կեանքին ընթացքը փոխել: Տունը նոյնիսկ կը մնար նոյն վիճակին մէջ — ամենէն տարրական պիտոյքներէն իսկ զրկուած — հակառակ անոր որ ցուրտը սկսած էր անհանգստացնել զիրենք: Ձմեռը անակնկալօրէն վերադարձած էր, Դեկտեմբերի վերջաւորութեան, յաւերժական գարունի մը պատրանքը սպաննելով քմահաճօրէն: Իսկ այս հսկայ բայց դատարկ տունը ցուրտին դէմ պաշտպանելը հնարաւոր չէր պարզօրէն: Ամէն տեսակի վառելանիւթի տազնապ կար երկրին մէջ, եւ ասոր առնիթեր նաեւ՝ ելեկտրական հոսանքի անկանոնութիւնը: Ճաշասենեակը, տուեալ պայմաններուն մէջ, դարձած էր տան կեդրոնական առանցքը, ուր կ'անցընէին օրուան մեծ մասը, ծուարած ելեկտրական փոքր ջերմացուցիչի մը շուրջ:

Սարգիսեան դժկամութեամբ բարձրացաւ տեղէն — սոֆա մը եւ երկու աթոռ ամսամապէս տեղ դրաւած էին հոս, հին ու խարխիւած սեղանի մը կողքին — եւ վերցուց հեռաձայնին ընկալուչը:

— Այո՛, ո՞վ է խօսողը:

— Պր. Սարգիսեանն է, — առնական ձայն մը հարցուց, անտեսելով իր հարցումը:

— Այո՛, հրամմեցէք:
 — Կրնա՞նք դալ եւ ձեզ տեսնել վայրկեան մը:
 — Ո՞վ է խօսողը, — Աբամ Սարգիսեան կրկնեց հարցումը, զբալի կերպով դժգոհ:
 — Չէք ճանչնար:
 — Ի՞նչ կ'ուզէք: Եւ... եթէ չեմ ճանչնար, հեռաձայնին թիւը ինչպէ՞ս ունիք:
 — Մուշեղը տուած էր:
 — Տուած էր, — սթափեցաւ Մուշեղի հայրը, փորձելով նախադասութեան չարտասանուած մասը դուշակել: — Ե՞րբ, եւ ինք ո՞ւր է հիմա:
 — Կը խօսինք: Ճիշդ ատոր համար կ'ուզենք ձեզի հանդիպիլ: Եթէ կարելի է, այսօր:
 — Միրով: Կ'ուզե՞նք ըսիր: Մէկ անձէ աւելի՞ այսինքն: Մուշեղի ընկերներն էք:
 — Անշուշտ:
 — Կրնաք հիմա իսկ դալ:
 — Ծնորհակալութիւն: Կէս ժամ ետք ձեր մօտ կ'ըլլանք:
 Բայց ինք անհամբեր էր: Կէս ժամ ինչպէ՞ս պիտի կարենար սպասել: Ձմեռնային կիսամութ ու ճնշող յետմիջօրէ մըն էր, եւ ինք տունը առանձին էր դարձեալ: Անտանելի, զզուելի առանձնութիւն մը՝ Նոյեմբին տունը ըլլար կամ ոչ: Բարեբախտաբար այս երիտասարդը — ով որ էր — Մուշեղէն լուր մը ունէր անշուշտ. այլապէս ինչո՞ւ պիտի հեռաձայնէր: Սակայն ձայնը, խօսելու եղանակը, այնքան խորհրդաւոր էր, որ աւելի մտահոգ էր հիմա՝ քան խաղաղած: Ընկերները: Որո՞նք էին այս ընկերները, եւ ի՞նչ դիտէին Մուշեղի մասին: Արդեօ՞ք սխալած էր իր ենաթղթութիւններուն մէջ եւ անտեղի կերպով տաղնապած: Հաւանաբար ան ինքզինք մոռցած դարձեալ, եւ սովորականին պէս անփոյթ, նոր յայտնութիւն մը ըրած՝ իրեն յատուկ մոբեռանդութեամբ մխրճուած էր անոր մէջ:
 Գաղափարը հանդարտեցուց զինք մասամբ եւ մղեց դէպի պատշգամ, ուրիշ կրնար փողոցը տեսնել: Բայց հագլս հինգ վայրկեան անցած էր: Վերադարձաւ ճաշասենեակ եւ սիկառետ մը վառեց, ու երբ հազարու սկսաւ՝ անդրադարձաւ կատարածին: Չարմանալի էր, մտածեց, վարժութիւնները մարդոց մէջ չեն մեռնիր ուրեմն: Տասնհինգ տարիէ ի վեր չէր ծխած: Յամենայն դէպս շարունակեց ծխել եւ զգաց որ բաւարարութիւն կը ստանար: Աւելի հանդարտ էր դէթ հիմա, եւ նոյնիսկ՝ լաւատես: Անկարելի էր որ Մու-

շեղը անեւանդուած ըլլար. ինք երեւակայած էր պարզօրէն: Բարեկամ մը, ծանօթ մը անպայմանօրէն իմացած կ'ըլլար եւ լուրը կը տարածուէր. դադանի չէր մնար:
 Իսկ եթէ այլևս մը պատահած էր: Թերեւս արկած մը. երիտասարդական խենթութիւն մը — Մուշեղէն կ'ակնկալուէր: Իմացածին համաձայն քաղաքացիական պատերազմի ամենէն բուռն եւ վտանգաւոր ամիսները Պուրճ Համֆուտ մնացած էր եւ մասնակցած հայկական թաղամասերու պաշտպանութեան: Որ բնաւ զարմանալի չէր, եթէ զաւակը իր ճանչցած յիմարն էր: Ինք հպարտ էր յամենայն դէպս — յիմար կամ ոչ — եւ հոգեպէս բաւարարուած: Իւրաքանչիւր հայ երիտասարդի պարտականութիւնն էր, եւ ինք դո՛ւ էր որ զաւակը չէր թերացած եւ գործնականօրէն կատարած էր պարտականութիւնը: Թէեւ խառնուածքով եւ դաստիարակութեամբ՝ բրնձնութեան չէր հաւատար. ու դէմ էր զէնքի կամ բիրտ ոյժի գործածութեան: Այլ հարց, որ Ֆիզիքական կազմուածքով դիւրաբեկ էր ու նուրբ՝ մանկութենէն ի վեր: Նաեւ՝ վախկոտ: Բայց մարդկային հողերանութեան բարդութիւններն ու մարդ արարածին ներաշխարհին զաղտնիքները ո՛վ կրցած էր լուծել, ո՛վ կրցած էր թափանցել անոնցմէ ներս:
 Չէր կրնար սպաննուած ըլլալ թէեւ: Նահատակուած սղոց անունները յայտարարուած էին ժամանակին, եւ Մուշեղի պարագային բացառութիւն մը ընելու պատճառ ջունէին: Ի՞նչ պատահած էր ուրեմն, եւ ո՞ւր անհետացած էր ազան: Որո՞նք էին այս ընկերները, զորս չէր ճանչնար եղեր: Մուշեղի բոլոր ընկերներն ու ընկերուհիները, բարեկամները, ծանօթ էին իրեն: Գաղտնիքներ չէր ունեցած երբեք, եւ ամենէն մտահոգիչ շրջանին իսկ, երբ հիբրիներու ցանցին մէջ ինկած էր, բոլոր այդ չնաշխարհիկ արարածները տուն բերած էր իր հետ, առանց վարանումի կամ վերապահութեան: Ի՞նչ ընկերներ էին ասոնք, եւ ի՞նչ խորհրդաւոր դադանիք էր ասիկա:
 Գարձեալ քալեց դէպի պատշգամ, նայեցաւ դուրս, ու նոյն սովորական, անփոփոխ պատկերը տեսաւ փողոցին մէջ: Նոյեմբին տունը ըլլար, աւելի հանդուրժելի պիտի թուէր այս երկարաձգուող շարձարանքը: Կրնար հետը խօսիլ, խորհրդակցիլ, կարծիք փոխանակել... ան աւելի մտահոգ էր իրականութեան մէջ, եւ այս հանդիպումին պէտք է ներկայ դնուէր, որպէսզի բուռն աղբիւրէն իմանար պէտք եղածը — ինչ որ էր: Թէեւ իրենց Պէյրութ վերադառնալէն ի վեր կը փորձէր զուարթ երեւիլ, սակայն չափազանց դիւրազրկու դարձած էր ան — անհանդուրժելի ըլլալու աստիճան — եւ

յաճախ կը վրձէր իր հետ : Իրենց երբեմնի համերաշխ եւ ներդաշնակ կեանքը, որ օրինակի կարգ անցած էր տարիներու ընթացքին, հիմնադրատակ քայքայուած էր՝ զիրենք լարելով իրարու դէմ : Յառաջացած այս տարիքին, յանկարծ, կինը սկսած էր հակադրուիլ իրեն զրեթէ ամէն հարցի մէջ, եւ հրահանգներ արձակել :

Եւ ինք, Արսմ Սարգիսեանը, խեղճացած էր, զիտէր, եւ ամէն օր քիչ մը աւելի անզի կու տար, կը նահանջէր ու կը քաշուէր պատհանին մէջ, պարզօրէն նոյեմին չլշտացնելու համար : Եւ առանձին էր. կամ՝ առանձին մնացած էր աշխարհի վրայ : Այնքան մը, որ տունէն դուրս չէր ուզեր ելլել, ոչ իսկ մարդ ընդունիլ տան մէջ : Այսպէս՝ մինչ ինք այս բանտին մէջ փակուած կը մնար, ան դռնէ դուռ կը շրջէր օրն ի բուն, մոռցած զինք, պարտականութիւնները, եւ՝ ընտանեկան յարկը ընդհանրապէս :

Ինչո՞ւ կ'ապրէր այլեւս :

Հարցումը յաճախանքի վերածուած էր ու հանդիստ չէր տար իրեն : Գերմարդկային ճիգ կ'ընէր այս հոգեվրձակէն դուրս գալու յոյսով, բայց օր ըստ օրէ աւելի կը մխրճուէր անոր մէջ, եւ անօրինակ սարսափի մը անձնատուր կ'ըլլար՝ ինքզինք ատելու աստիճան : Կեանքը անիմաստ դարձած էր պարզապէս : Զգուելի, անհանդուրժելի, իսկական դժոխք : Ու կը վախնար, ճիշդ է, եւ զիջերները չէր կրնար քննալ :

Զանգը սթափեցուց զինք : Շտապեց դէպի արտաքին դուռը, ու երբ բացու գոյն, շուրջ քառասունհինգ տարեկան, միջահասակ բայց զեղադէմ մարդ մը տեսաւ դիմացը : Ապա նկատեց կողքին կանգնած երիտասարդը, որ նոյնքան մը ներկայանալի էր, թէեւ՝ նուազ համակրելի : Անհանդիստ, ուշագրաւ ըլլալու չափ ջղային պատանի մը, որու անխնամ եւ արատօրէն անձամ մօրուքը կասկածելի երեւոյթ մը կու տար անոր :

— Պր. Սարգիսեան, — խօսեցաւ երէցը :

— Այո՛, հրամմեցէք :

Ճաշասենեակ առաջնորդեց զիրենք եւ, ինքզինք վերադառնալով, համբերութեամբ սպասեց, մինչ անոնք չփոթած նայեցան շուրջերնին՝ տան մեկրութեամբ սքանչացած կարծես :

— Կը ներէք, — բացատրեց Արամ Սարգիսեան, — տունը այս վիճակին մէջ գտանք. բայց բարեբախտաբար կըրցանք... :

— Գրաւուած էր, — ընդմիջեց երիտասարդը :

Գլուխով հաստատական պատասխան տուաւ տանտէրը, եւ ա-

թոնները մօտեցուց սոֆային, որու վրայ նստեցաւ ինք : Եւ անհանդիստ զգաց :

— Կրնա՞նք ազատօրէն խօսիլ, — երէցը հարցուց :

— Տունը մարդ չկայ, եւ չեմ խորհիր որ մեզ խանգարող ըլլայ :

— Լաւ ուրեմն : Զենք ուզեր ձեր ժամանակը առնել, մասնաւոր ուր միւս կողմ պէտք է անցնինք դեռ : — Մարդը լուց պահ մը, յայտնապէս վարանուով մատնուած յանկարծ, ու յետոյ շարունակեց սակայն : — Ասկէ շատ առաջ պէտք էր տայինք այս այցելութիւնը ձեզի, բայց կարելի չեղաւ : Դուք ալ գրադած էիք արդէն, եւ մտահոգ՝ բնական է : Գիտենք, թէ դժուար էր ձեզի համար, ինչպէս մեզի համար դժուար էր... Մուշեղը մեզի նոյնքան մը սիրելի էր, եւ՝ անփոխարինելի կորուստ մը :

— Զբոսիք, թէ ո՞վ էք կամ ի՞նչպէս կը ճանչնաք Մուշեղը. — Սարգիսեան անակնկալօրէն եւ անբացատրելի կերպով խաղաղած, խօսեցաւ իր սովորական ինքնավստահութեամբ : — Որո՞ւ կողմէն, ինչ հանգամանքով կը խօսիք : Կը խնդրեմ որ պարզօրէն ըսէք ձեր ըսելիքը. հոգ մի ընէք, անակնկալ մը պիտի չըլլայ... Ես իմ գաւազս կը ճանչնամ, եւ նախազգացումը ունիմ արդէն որ հաճելի բան մը պիտի չլսեմ :

— Մուշեղը մեր լաւագոյն, ամենէն նուիրուած մարտիկներէն էր, — քաջալիրուած, շարունակեց այցելուներէն երէցը :

— Մարտիկներէ՞ն : Ճիշդ ի՞նչ պատահած է : Պատերազմի ժամանակ սպաննուեցա՞ւ ըսել կ'ուզէք :

— Շատ աւելի պատուարեր մահ մը ունեցաւ : Թաղային պաշտպանութեան մասնակցած էր, այո՛, բայց աւելի նուիրական առաքելութիւն մը կատարած ատեն նահատակուեցաւ :

Բացատրութիւնը, թէեւ անորոշ, յայտնութիւն մը չէր : Շարափներու ընթացքին՝ զուկին մահուան լուրը առնելու հաւանականութիւնը, այդ մասին մտածելը, նմանօրինակ վախճանի մը կարելիութիւնը՝ հոգեպէս պատրաստած էին զինք արդէն : Իրականութեան հետ հաշտուած էր մասամբ, ընդունած էր զայն — զարմանալի յայտնատեսութեամբ մը զիտէր արդէն, թէ Մուշեղ մեռած էր : Ու հիմա հանդարտ էր, նոյնիսկ բաւարարուած, որովհետեւ նախատեսութիւնը հաստատուած էր :

— Ի՞նչ առաքելութիւն, — զրեթէ անտարբեր, խօսեցաւ ի վերջոյ. — չեմ հասկնար :

— Վերջին գործողութիւնը պատրաստած ատեն արկած մը ունեցաւ :

— Ի՞նչ գործողութիւն : Աւելի յստակ չխօսի՞ք : Կը ներես , — Արամ Սարգիսեան խօսքը ուղղեց երէց խօսակիցին , — բան հասկցած չունիմ :

— Մուշեղ կարեւոր քանի մը գործողութիւն յաջողցուց , մէկը միւսէն աւելի հերոսական , եւ սքանչելի գործ կատարեց : Տասը ամսուան մէջ մեր ամենէն խիզախ տղոցմէ մէկը դարձած էր : Փորձառու , քաջ բայց խոնարհ :

— Այս նոր դադանի կազմակերպութեան անդամ էր այսինքն : Մուշեղը ահարեկչական գործերո՞ւ կը մասնակցէր ըսել կ'ուզես :

— Մեր լաւագոյն յեղափոխական տղոցմէն էր :

— Ի՞նչ արկած էր ունեցածը :

— Պատրաստած սումբը ձեռքին մէջ պայթեցաւ :

— Ուր : Հո՞ն :

— Ինչ կարեւորութիւն ունի հիմա : Գործին ապահովութիւնը կը պահանջէ որ դադանի մնայ ներկայիս :

— Իսկ մարմի՞նը : Ուր թաղուած է . գերեզման մը ունի՞ր դէ՞թ :

— Անշո՛ւշա : Երբ ժամանակը դայ , կ'իմանաք :

— Մօրը ինչպէ՞ս պիտի յայտնեմ , — հայրը ինքնիրեն ուղղեց հարցումը աւելի : — Ի՞նչ բացատրութիւն պիտի տամ :

— Մենք կը խօսինք , եթէ կ'ուզէք :

— Նախընտրելի է որ չիմանայ թերեւս : Գէթ ներկայիս :

— Ինչպէս որ կ'ուզէք :

— Լաւագոյնն է կարծեմ : — Սարգիսեան շուրջինները մոռցած , ինքնիրեն կը խօսէր այլեւս : — Թէեւ դադափարին հետ հաշտուած է , սակայն յոյս ունի տակաւին . յոյս ունի որ տղան կը վերադառնայ օր մը : Ապագային հաւանաբար աւելի զիւրին կ'ըլլայ , եւ կրնայ միխթարուած զգալ թերեւս , երբ ձեր գոհողութիւնները սկսին արդիւնք տալ : Կը մաղթեմ որ արդիւնք տան եւ յաջողիք . . . ուրիշ ի՞նչ կրնամ ըսել : Իր գաւկին այդ նպատակին համար գոհուիլը իմաստ մը կ'ունենայ այն ատեն , եւ աւելի զիւրին կ'ըլլայ : Ձեմ զիտեր : Մայր է , եւ մօր մը համար . . . :

Ձկրցաւ շարունակել : Ի՞նչ կը խօսէր , եւ՝ որո՞ւ : Իր հարազատ գաւկին մահուան դոյժը հաղորդած էին իրեն , եւ ինք պառաւի մը պէս կը շողակրատէր : Իր ըմբոստ բայց բարի ու միամիտ Մուշեղը չկար այլեւս : Մեռած էր այսինքն , իսկապէս մեռած , վերջացած : Եւ ի՞նչ մահ : Ճակատագրի՞րն էր , թէ խառնուածքը : Պատանի

տարիքէն անհանդարտ , անհանդիստ , կորուած բայց մնայուն կերպով որոնումի մէջ — ինքզինք գտնելու , ճանչնալու համար թերեւս : Եւ վերջաւորութեան . . . հոգեկան անդորրը դառած էր արդեօք : Վրդոված , անհանդարտ հոգին կրցած էր խաղաղեցնել : Փնտռածը դառած էր ի վերջոյ : Կեանքի մէջ նպատակ մը ունեցած էր , ու ծառայած էր անոր , նուիրուած : Այսինքն՝ իմաստ տուած իր կեանքին , վերստեղծած դայն : Եւ՝ նուաճած երջանկութիւնը հաւանաբար :

Իրաւ , իմաստալից կեանքը այս չէ՞ր : Մեռած էր , այս , Ֆիլիքսապէս փճացած , բայց անպայմանօրէն ապրած էր : Եւ ապրիլը՝ իմաստով բեղմնաւորած էր , բաղմապատկած , ղեղեցկացուցած : Իսկական ստեղծագործութիւնը այս էր վերջին հաշուով — կեանքը վերստեղծելու կարողութիւնը : Եւ Մուշեղ յաջողած էր , նուաճած էր մահը այլ խօսքով , ու ոչ թէ մեռած : Եւ ուրեմն՝ անոր մահը միակ տրամաբանական վախճանն էր : Ապրելու միակ կերպը : Վստահ էր , թէ ան յանգած էր այս եղբակացութեան , եւ հասած այս նոյն դիտակցութեան , ու խաղաղօրէն դիմաւորած մահը : Առանց վախի : Ոչ անպայմանօրէն քաջութեամբ , բայց վստահաբար առանց վախի :

Մինչդեռ ինք , այս տարիքին , սարսափի մէջ կ'ապրէր : Կեանքէն նոյնքան կը վախնար , որքան մահէն : Որովհետեւ ընկիւք չունէր այլեւս : Իսկ նախքան այս , լման վաթսուս տարի վատնած էր միայն , առանց անդրադառնալու , թէ անիմաստ , աննպատակ կեանքը բուն մահն իսկ է :

— Ձէք կրնար երեւակայել , թէ մեզ որքա՞ն կը քաջութեամբ ձեր այս խօսքերով , — համբերութեամբ սպասելէ ետք խօսեցաւ մարդը , որու անունը նոյնիսկ չէր զիտեր տակաւին : — Շատ շնորհակալ ենք , Պր . Սարգիսեան , եւ ուրախ որ ձեզի ծանօթանալու առիթը ունեցանք : Կրնաք վստահ ըլլալ , ու կը յուսանք որ ձեզ յուսաբար չենք ընկր : Եթէ արտօնէք , կ'ուզենք մեկնիլ հիմա : Վերստին կը հանդիպինք եւ անորայման կապ կը պահենք :

— Իայց ձեր անունները նոյնիսկ չեմ զիտեր :

— Խնդիր չէ : Նախընտրելի է որ այսպէս ալ ըլլայ՝ նոյնիսկ ձեր ապահովութեան համար : Յետո՞ւթիւն :

Ակնթարթ մը տեւած էր անոնց դուռէն դուրս սպրդիլը : Անշուով մեկնած էին՝ զինք լքելով ինր վիշտին հետ առանձին : Վի՞շտ էր , թէ յուսահատութիւն : Մուշեղը մեռած էր — զիտէր արդէն — բայց անոր մահը , անփոխարինելի կորուստ մը ըլլալով հանդերձ ,

վիշտ չէր պատճառեր իրեն: Չաւկի մը մահը ծնողքին համար կեանքի յոռեղոյն պատիժն էր, մեծագոյն ողբերգութիւնը: Յաւը անդարմանելի էր, կը զգար, կը գիտակցէր արդէն. բայց զարմանալիօրէն խաղաղ էր հիմա, եւ թերեւս՝ հպարտ: Իր յուսահատութիւնն էր որ կը տանջէր զինք առաւելաբար — կեանքը վատնած ըլլալու գիտակցութիւնը, վախը, սարսափը: Չախողած էր, պարզօրէն ձախողած էր եւ հիմա ոչ էր այլեւս: Ծիշդ յիմար կոյսերուն կը նմանէր, եւ ստացած էր արժանի պատիժը:

Այս երիտասարդները իրմէ շատ աւելի իմաստուն էին, աւելի գիտակից եւ պատասխանատու: Երջանիկ: Եւ ուրեմն՝ ինքնավստահ, անվախ, որովհետեւ կորսնցնելիք ոչինչ ունէին: Եւ բնականաբար յուսահատելու պատճառ չունէին. ընդհակառակն՝ լաւատես էին ու խանդավառ, թէեւ միամտացած՝ իրենց հաւատքով, նուիրումով: Բայց եւ այնպէս անոնք յաղթական էին, որովհետեւ նուաճած էին կեանքը, մինչդեռ ինք պարտուած էր ու կորսնցուցած ամէն ինչ: Հարստութիւն, ապագայ — ի՞նչ ապագայ — ապահովութիւն, երիտասարդութիւն, կեանք, յոյս: Ամէն ինչ: Իսկ անոնք ունէին այս բոլորը. ե՛ւ յոյս, ե՛ւ կեանք, երիտասարդութիւն, ապագայ, երազ որ շատ աւելի իրական էր քան իր ունայն եւ անիմաստ կեանքը: Եւ երջանիկ էին:

Հաւատք ունէին արդարեւ:

Եւ ուրեմն՝ անոնց կեանքը յղի էր, բեղմնաւորուած, հարուստ:

Ու մտածել որ ամբողջ կեանքին ընթացքին ինք ապաւինած էր իր հարստութեան: Ծիծաղելի չէ՞ր: Նուաստացուցիչ: Տխուր էր յամենայն դէպս:

Ինչի՞, որո՞ւ կը ծառայէր իր հարստութիւնը: Ոչ իսկ իրեն: Այս տղաքը աւելի հարուստ էին վերջին հաշուով, խկապէս հարուստ, եւ կը նախանձէր անոնց: Ինք անսպառ դրամ եւ կալուածներ ունէր, իսկ անոնք՝ երազ: Իտէալ, որ շատ աւելի շօշափելի իրականութիւն էր, քան իր ոսկին կամ արծաթը: Անոնց երազը հրաշքներ կը գործէր, կը վերստեղծէր կեանքը ու քայլ առ քայլ կը մօտեցընէր զիրենք ճշմարտութեան: Մինչդեռ դրամը հեռացուցած էր զինք նոյն ճշմարտութենէն, նսեմացնելով էականը, մարդկայինը, որ ապրելու արժանապատուութիւն էր նախ եւ առաջ:

Այլ մարդոց հաւասար նկատուելու նախանձանդրութիւն:

Երկիր եւ հայրենիք ունենալու իրաւունք:

Եւ մանաւանդ՝ այդ իրաւունքը պաշտպանելու գիտակցութիւն: Կամք: Հաւատք:

Ի՞նչ կ'ընէր այս աշխարհի օտար եւ անհիւրընկալ փողոցներուն մէջ, ուր որք մը եղած էր, որք մը նկատուած էր միշտ ու մտացած մինչեւ այսօր: Որք՝ հողերանութեամբ, իրաւունքներով եւ արժանապատուութեամբ: Ի՞նչ կ'ընէր այս աշխարհին վրայ՝ սրազն մարդ եւ հայ: Մարդ՝ որ անիրաւուած էր, եւ հայ՝ որ անտուն էր բոլոր երկիրներուն մէջ, ամէն տեղ տուն եւ կալուած ունենալով հանդերձ:

Եւ ո՞վ էր ինք:

Ժողովուրդ մը ամբողջ:

Հայութիւնը, կամ հայ մարդը, որու վիզը ծուռ էր միշտ — տխուր, ընկճուած, համակերպող, բարի, աշխատասէր բայց խեղճ:

Գաղափարը ընդվզեցուց զինք: Այս տղաքը բարոստանալու իրաւունք չունէի՞ն: Ամենէն ճիշդ եւ արդար գործը կը կատարէին, եւ կը զոհէին իրենց կեանքը: Որովհետեւ առանց արժանապատուութեան կեանքը մահ էր: Կը նախընտրէին մեռնիլ ուրեմն, խկապէ՛ս մեռնիլ, քան ընդունիլ մահը կենդանութեան մէջ: Արդարութիւնը այս կը սրահանջէր — ունենալ եւ վայելել նոյն իրաւունքները եւ հաւասար նկատուիլ միւս բոլոր մարդոց: Եւ մերժել ստրկութիւնը, որ ամենէն նուաստացուցիչ, զգուելի մահն էր:

Նախընտրելի էր մեռնիլ, յամենայն դէպս, քան իրեն սրէս սարսափի մէջ ապրիլ: Եւ ինչո՞ւ ընդունիլ այս անարդանքը: Ի՞նչ փաստելու կամ փրկելու համար: Մուշեղի ընտրութիւնը աւելի ճիշդ չէ՞ր: Առաջին օրէն մերժեց կեղծիքը, սուտը, ինքնախարէութիւնը — ստրկամտութիւնը, այլ խօսքով — եւ ապրեցաւ ու մեռաւ մարդավայել կերպով: Ծակատը բաց, հպարտ, հանդարտ խեղճով, ու ոչ թէ՛ վիզը ծուռ եւ խեղճ: Անոր ընտրած ուղին ճիշդ էր, այո՛, փաստ որ զինք նոյնիսկ կ'ազատագրէր այսօր, հող չէ թէ յապաղումով:

Չաւակը կորսնցուցած էր: Բայց նաեւ՝ վերագրած էր զայն: Կամ աւելի ճիշդը՝ ան վերագրած էր զինք: Փրկած էր, վերակենդանացուցած եւ վերագարծուցած իրեն արժանապատուութիւնը: Գէթ՝ գիտակցութիւնը անոր:

Երեխայ չէր, ոչ ալ երիտասարդ, սակայն համոզուած էր հիմա՝ թէ պատրաստ էր միանալու այս տղոց ու ծառայելու նոյն գաղափարին: Տարիքը արդէլք մը չէր. երիտասարդ չէր, այո՛, բայց ինքն ալ իրեն յատուկ եզանակով մը կրնար մասնակցութիւնը բերել նուիրական այս գործին: Իւրաքանչիւր հայ — երեխային սկսեալ մինչեւ ամենայետին խրխլած ծերունին կամ պառաւը — կրնար կերպով մը ծառայել: Իւրաքանչիւրը իր կարողութեան կամ ոյժին հա-

մածայն: Միամտութիւն չէր, ոչ ալ անտեղի խանդավառութիւն: Համոզուած էր: Միակ կերպն էր, միակ լուծումը:

Հայը, դժբախտաբար, ուրիշ ընտրութիւն չունէր: Այլ ընտրութիւն չէին ձգած ու հասցուցած էին զինք ճարահատ այս վիճակին: Միայն զէնքով կայ հայուն փրկութիւն, ահամայ ժպտեցաւ, յիշելով հին այս երգին բառերը: Չարմանալի էր: Ինք զէնքի, արիւնայեղութեան եւ պատերազմներու դէմ եղած էր միշտ, բայց հիմա — թերեւս շատ ուշ — կ'ըմբռնէր այդ բառերուն պատգամը: Հայութեան համար ալ թերեւս ուշ էր բայց, ինչպէս առածը կ'ըսէր, աւելի լաւ է ուշ քան երբեք: Ի վերջոյ կորսնցնելիք չունէին: Հայը ամէն ինչ կորսնցուցած էր արդէն — հող, երկիր, կեանք, արժանապատուութիւն: Անհերքելի ճշմարտութիւն էր ուրեմն, թէ Մահ իմացեալ ամառուարին է:

Նախընտրելի էր զիտակցաբար եւ մարդավայել արժանապատուութեամբ մեռնիլ, քան հանդուրժել վատ եւ ստորին կեանքի մը, որ կենդանութեան մէջ մահ էր: Մինչդեռ զիտակից մահը յաղթանակ մըն էր, եւ դէթ կրնար յոյս ներշնչել՝ ոչնչացնելով, վերջ զներկով անպատիւ կեանքին, զոր անատունները նոյնիսկ կը մերժէին:

Վերջին տարիները խաղաղութեան մէջ կ'ապրէր դէթ, ու թէեւ յարազուժով, կը նուաճէր կեանքը ի վերջոյ եւ իմաստ կու տար անոր: Կը վերածնէր ու կ'ապրէր որպէս մարդ — բաց ճակատով, հանդարտ խիղճով, եւ ոչ թէ՛ վրդը ծուռ: Ու կը քալէր փողոցներուն մէջ, աշխարհի բոլոր փողոցներուն մէջ, ճակատաբաց եւ ինքնապատահ: Առանց ամօնալու — թօթափած վրայէն ստորակայութիւնը — կ'ապրէր՝ որպէս հաւասար իրաւունքներու տէր մարդ:

Բայց Մուշեղի ընկերները ո՛չ անուն տուած էին իրեն, եւ ոչ հասցէ:

Ինչպէ՞ս պիտի գտնէր զիրենք:

Յունուար 1981 — Մարտ 1982

Վ Ե Ր Զ

Գին՝
Արտասահման

50 Լ. Ռսկի
20 Տոլար

ApI
Zh-50

17.

Հեղինակին հասցեն՝

KEVORK AJEMIAN

Help Bookshop

Jeanne d'Arc Street

Beirut - Lebanon